ՅՈՒԹԱԳԱՏՈՒՄ

Հ. Յ.

ԴԱԼՆԱԿՅՈՒԹԵԱՆ

1890 - 1950

ՅՈԲԵԱՓԱՏՈՒՄ

Հ. Յ.

ԴԱՉԵ՛ԱԿՅՈՒՐԹԵԱՆ

1890 - 1950

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Հ. Յ. Դ. ԲԻՒՐՈՅԻ

ԲՈՍՏՈՆ
«ՀԱՅՐԵՆԻՔ»-Ի ՏՊԱՐԱՆ
1950

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Հ. Յ. Դ. ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄՆԻ ԽՕՍՔԸ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ,

Ընկերնե՛ր, բարեկամնե՛ր, համակիրնե՛ր,

1890-ին, վաթսուն տարի առաջ, հայ կեանքի արիւնոտ արգանդին աշխարհ եկաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Խաւար դարերը անթիւ վէրքեր կուտակած էին մեր ժողովուրդի հոգիին ու մարմնին վրայ:

Հզօրները իրենց միջեւ բաժնած էին մեր հողը:

Արհաւիրքները կոտորակած էին մեր ժողովուրդը:

Կրօնքները յարանուանական գիծով բաժանման նոր վիհ մը փորած էին մեր մէջ:

Եւ, ի լրումն այս բոլորի, պատմական դէպքերու բերումով, ամենին յետամնաց, ամենին թարբարոս ցեղերը մեծազանգուած բազմութիւններով խմբուած էին մեր հողերու վրայ եւ գրեթէ ամէն կողմէ պաշարած մեր ժողովուրդը:

Մեր երկրի ո՛չ քաղաքական պայմանները, ո՛չ տրնտեսական, եւ ոչ ալ մեր ժողովուրդի բարոյական վիճակը փրկութեան յոյս կը ներշնչէին:

Միայն ատոյգ մահը աչք առնելով, միայն կանխապէս ամէն զոհողութեան յօժարելով կարող էր նոր ուխտաւորը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոտք դնել Հայ Ազատագրական Շարժման արիւնոտ ճանապարհին վրայ:

Մարդկային պատմութեան վերջին վաթսունամեակը լի է դարերու կշիռ ունեցող դէպքերով:

Դարերու կշիռ ունեցող դէպքերով լի է նաեւ հայ կեանքը:

Ու լի է նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը:

1890-ին այս կողմ, վաթսուն տարիներու ձիգ տարածքին, եղած չէ հայութեան ճակատագրին կապուած քիչ-շատ արժէք ունեցող դէպք մը, որուն մէջ իր դերը ունեցած չըլլայ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Ան կա՛մ ինք հեղինակած ու վարած է այդ դէպքերը եւ կամ, եթէ հեղինակած ու վարած չէ, միշտ ներկայ գտնուած է այդ դէպքերուն եւ միշտ իր բաժին մասնակցութիւնը բերած անոնց:

Գրել հայ ժողովուրդի վերջին վաթսուն տարիներու պատմութիւնը՝ այս գրեթէ պիտի նշանակէր գրել Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը:

Գրել Հ.Յ. Դաշնակցութեան վաթսունամեայ պատմութիւնը՝ նոյն ձեւով գրեթէ պիտի նշանակէր գրել այդ ժամանակաշրջանի Հայոց պատմութիւնը:

Այսքան սերտօրէն եւ այսքան գործօն կերպով Դաշնակցութիւնը միաձուլուած ու շաղախուած է իր ժողովուրդի պատմութեան, անոր կեանքին ու ճակատագրին:

Վաթսուն տարիներ շարունակ անընդհատաբար գործելով, յաճախ առանցքը կազմելով ամենէն արիւնոտ պարներու, մերթ յաղթական ու մերթ պարտուելով, Դաշնակցութիւնը կրնար նաեւ սխալիլ:

Հայ կեանքի ապագայ պատմիչը իր արդար իրաւունքին մէջ պիտի ըլլայ՝ Դաշնակցութեան սխալները ալ մատնանշելով:

Սակայն, ո՛չ ոք երբեք պիտի կրնայ ըսել, թէ Դաշնակցութիւնը որեւէ առեն, պայքարի ամենէն դժնդակ պայմաններու տակ իսկ, երբ ստոյգ մահը ծառացած է իր դէմ, լքած է իր դիրքերը՝ միանակ ձգելով հայ ժողովուրդը:

Ո՛չ ոք ու երբեք պիտի կրնայ ըսել, թէ Դաշնակցութիւնը որեւէ առեն խուսափած է որեւէ զոհողութիւնէ, երբ ա՛յդ պահանջած է իրմէ Հայրենիքի շահը:

Առանց համեստութեան ու ճշմարտութեան դէմ մեղանչած ըլլալու, այսօր, Դաշնակցութեան վաթսունամեայ յորելեանին, բաց ճակատով ու բարձրաձայն կրնանք վկայել, թէ՝ ո՛չ մէկը քաղաքական կուսակցութեանց մէջ— ո՛չ միայն հայ, այլ եւ օտար—այնքան

գաղափարականուէր ու հայրենականուէր, այնքան քաջ ու խիզախ եղած է իր պայքարին մէջ, որքան Դաշնակցութիւնը:

Ամենազգի քաղաքական հոսանքներու մէջ եւ ո՛չ մէկը յանուն իր դաւանանքի այնքան առատաբար արիւն թափած է, որքան Դաշնակցութիւնը:

Անոնցմէ եւ ո՛չ մէկը այնքան մեծ թիւով ուխտեալ մահակիրներ ունեցած է իր շարքերուն մէջ, որքան Դաշնակցութիւնը:

Եւ այդ խակ պատճառով անոնցմէ եւ ո՛չ մէկը այնքան մեծագործութիւններ ցուցադրած է եւ այնքան շատ զոհեր տուած, որքան Դաշնակցութիւնը:

Այս ծով–արիւնը անխորտակելի գահ մը կերտած է Դաշնակցութեան համար հայ ժողովուրդի հոգիին մէջ:

Այս ծով–արիւնը արիութեան պսակ մը հիւսած է մեր ժողովուրդի գլխուն:

Այս ծով–արիւնը բարձր նկարագիր կերտած է տակաւին երէկ կորացած ու խեղճ հայ մարդու մէջ:

Քաջութիւն, հայրենասիրութիւն, անձնազոհութիւն, պարկեշտութիւն, հաւատարմութիւն, ընկերասիրութիւն, ազնուութիւն, ճշմարտախօսութիւն եւայլն եւայլն,— այս բարձր ու առաքինի գիծերը առաւելաբար Դաշնակցութի՛ւնը ստեղծեց հայ մարդու մէջ իր վաթսունամեայ ազատագրական շրջանի ամենէն յանդուգն, ամենէն անձնուէր, ճշմարտօրէն հերիւթային դրուագներով:

Վաթսուն տարի մաքառելով՝ ան ստեղծեց հոգեկան հարստութիւն մը, ճշմարիտ գանձ մը, ստեղծեց այս բարձր ու առաքինի յատկութեանց խտացումը հանդիսացող դաշնակցականութիւնը, շատ աւելի զօրաւոր ու տոկուն ոյժ մը, քան թերեւս ինքը Դաշնակցութիւնը:

Ան տուաւ հայութեան ազգային բիւրեղացած խտալ մը եւ ազգային դրօշ — Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան:

1890–ին մինչեւ այսօր վաթսուն տարիներ անցած են:

Եւ այսօր, փոթորկայոյզ այս օրերուն ալ, Դաշնակցութիւնը նոյնքան ամուր է իր հաւատքին մէջ, նոյնքան խանդաւառ՝ իր շարքերով, նոյնքան կուռ՝ իր կազմակերպութեամբ, որքան վաթսուն տարիներու ընթացքին:

Ու նաեւ այսօր, հակառակ իր հալածական վիճա-

կին, իր գաղափարներով եւ ժողովուրդի մէջ վայելած հմայքով, ան վերատին տիրական ոյժն է, որ բովանդակութիւն եւ մղում կուտայ հայ կեանքին:

Հայաստանի հայութիւնը կը շարունակէ ոգեւորուիլ իր գաղափարներով: Իբրեւ մտայնութիւն, ան կ'իշխէ հայրենի երկրին մէջ:

Գաղթաշխարհի հայութիւնը կ'ապրի ու կը գործէ առաւելաբար ի՛ր շունչին տակ:

Եւ խորհրդային բանտերն ու աֆսորավայրերը առաւելաբար ի՛ր ուխտեալներով են լեցուն:

Հայ կեանքը այսօր ստորաբաժանուած է Դաշնակցութեա՛ն դրօշով —

Կա՛մ հայրենի երկրին տիրակա՛ծ օտարին հետ՝ Դաշնակցութեան դէմ, եւ կամ Դաշնակցութեան հետ՝ այդ օտարին դէմ:

Կա՛մ ազատութեան եւ ազգային անկախութեան ախոյեանները, կամ բռնատիրութեան օտարամոլ խըլեակարկուները:

Ազգային–քաղաքական գիծով այլ բաժանում չկայ հայ կեանքին մէջ:

Եւ այդ պատճառով ալիքա՛ն կատաղի, ալիքան թունոտ եւ ալիքան ատելավառ կիրք կայ այն պայքարին մէջ, որ մեր հայրենիքի զոյգ հատուածներուն տիրացած օտար ուժերը կը տածեն Դաշնակցութեան դէմ:

Սակայն, այս ատելութիւնը, այս մշտաբորբոք ու կատաղի պայքարը միաժամանակ անուտ վկայութիւն մըն է այն ուժի մասին, որ կը ներկայացնէ Դաշնակցութիւնը:

Բոլոր քաղաքական հոսանքներու մէջ, գործակից թէ հակառակորդ, Հ. Յ. Դաշնակցութիւնը իրեն հաւասակից ո՛չ ոք ունի:

Իրեն հետ ծնած բոլոր հոսանքները, ըլլա՛յ Թուրքիոյ, ըլլա՛յ Ռուսիոյ մէջ, կա՛մ մեռած են ընդմիշտ եւ կամ եթէ կ'ապրին, դադրած են ազդու ու կենդանի ոյժ մը ըլլալէ:

Վաթսուն տարիներու ահեղ փոթորիկներու մէջ անվթար պահելով— ու գրեթէ նոյնը պահելով— իր հոգեկան, բարոյական ու քաղաքական գանձը՝ դաւանանք, դրօշ, անուն, կազմակերպական կառոյց, գինանշան եւ այլն, Դաշնակցութիւնն այսօր ալ չի է անսահման կորովով՝ նոր տասնամեակներ թեւակոխելու համար:

Ան նաեւ այսօր կը մնայ ամենեն յուսատու բազուկը հայ ժողովուրդի եւ ամենեն հաւատարիմ պահակը հայ երկրի:

Ո՞ւր որոնել բացատրութիւնը այս հմայիչ երեւոյթին, եթէ ոչ Դաշնակցութեան անմեռ գաղափարներուն, Դաշնակցութեան պատմակշիռ գործերուն եւ Դաշնակցութեան ողջ թէ մեռած գաղափարակիրներուն մէջ, որոնք արժանի դրոշակիրները հանդիսացան իրենց փառաւոր Կուսակցութեան:

Հայ ժողովո՛ւրդ, ընկերնե՛ր, բարեկամնե՛ր եւ համակիրնե՛ր, այս հանդիսաւոր պահուն, երբ մենք մեր փառաւոր պատմութեան վաթսունամեայ յոբելեանը կը տօնենք, Հ. Յ. Դաշնակցութեան Գերագոյն Մարմինը բարոյական պարտք կը զգայ երկիւղածօրեն իր գլուխը խոնարհելու յիշատակին առջեւ այն բիւր-բիւրաւոր անուանի թէ անանուն, ծանօթ թէ անծանօթ, թաղուած թէ անթաղ նահատակներուն, որոնք փառքի մեծագոյն բաժինն ունին Դաշնակցութեան յոբելեանին մէջ:

Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինը, այս նուիրական պահուն, յանուն Դաշնակցութեան իր ջերմ ողջոյնները կը յղէ բոլոր անոնց, որոնք թրքական թէ բոլշեւիկեան բանտերուն, արգելարաններուն եւ աքսորավայրերուն մէջ, հակառակ բոլոր հալածանքներուն եւ անմարդկային տառապանքներուն, մոլեռանդաբար կը պահեն իրենց հաւատարմութիւնը Դաշնակցութեան անբիծ եւ արիւնոտ դրօշին:

Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինը իր ողջոյնները կը յղէ նաեւ Դաշնակցութեան բոլոր Մարմիններուն, բոլոր ընկերներուն, բարեկամներուն եւ համակիրներուն, որոնք այսօր, աշխարհի բոլոր մասերուն մէջ, ձեռք-ձեռքի, հաւատքով ու զոհողութեամբ խմբուած հայրենի երկրի ազատագրութեան նուիրական դատին շուրջ, իրենց պայքարը կը տանին:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, քու երակներուն ծով-արիւն թափուեցաւ, քեզի պարգեւելու համար փառքերուն մեծագոյնը՝ քու սեփական Դրօշը:

Քու մեծ ու դարաւոր Իտեալը — Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստան — ծնաւ վաթսունամեայ դիւցազնամարտի մը, որուն զուգանմանը՝ իր տարողութեամբն եւ իր զոհերու քանակովը՝ չունի եւ ո՛չ մէկ ժողովուրդ:

Այսօր, Հ. Յ. Դաշնակցութիւնը, վաթսունամեայ յոբելեանի այս նուիրական պահուն, յաւէտ պաշտելի

Եռագոյնի եւ Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի մեծ գաղափարականի պաշտպանութիւնը Քեզի յանձնելով՝ Դաշնակցութիւնը լի է հաւատով, որ յանուն դարաւոր Երազիդ պիտի շարունակես պայքարդ ու ալ աւելի պիտի ամրացնես ազգային ճակատդ՝ վաթսուն տարիներու անլուր զոհողութիւններդ վերջնական յաղթանակով պսակելու համար:

Այս պայքարիդ մէջ Դաշնակցութիւնը միշտ Քեզ հետ պիտի ըլլայ, եւ զոհուողներուն մէջ Դաշնակցականները միշտ առաջինները պիտի ըլլան:

Այս հաւատով, այս հանդիսաւոր պահուն, Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմինը ձեզի բոլորիդ հետ միասին կը գոչէ.

Կեցցէ՛ Հայ Ժողովուրդը.

Կեցցէ՛ Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանը.

Կեցցէ՛ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

1 Հոկտ. 1950

Հ. Յ. Դ. ԲԻՒՐՕ

Հ. Յ. Դ. ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Քսան տարի առաջ, 1930–ին, երբ լրացաւ Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակը, կուսակցութեան կենտրոնական պաշտօնաթերթ «Դրօշակ»ը, Հոկտեմբեր ամսի համարում, հրատարակեց մի խմբագրական, որ այսօր, վաթսունամեակի առթիւ եւս, կարելի է կրկնել առանց մի բառ փոխելու: Եւ որովհետեւ «Դրօշակ»ն այլեւս չի կարող արտայայտուել, մենք առաջ ենք բերում այդ խմբագրականը ամբողջութեամբ, որպէս խտացուած եւ ճշգրիտ ներկայացում Հ. Յ. Դաշնակցութեան Էութեան՝ վաթսունամեակի առթիւ:

Վերջին քանի մը դարերու հայոց պատմութեան մեծագոյն երեւոյթը կարելի է համարել Հ. Յ. Դաշնակցութեան քառասուն տարուան գոյութիւնը: Հայ ազգի քաղաքակրթութեան եւ քաղաքական կեանքի մէջ, քաղաքական կուսակցութեան մը քառասուն տարուան տեւական գործունէութիւնը բացառիկ երեւոյթ է, պատմական նշանակութիւն ունեցող մեծագործութիւն մը, որ իր մէջ կ՚ամփոփէ հայ ժողովուրդի վերջին կէս դարու ամբողջ պատմութիւնը:

Ու երբ, այսօր, յեղափոխական պատկառելի կազմակերպութիւնը իր քառասնամեակը կը բոլորէ, փոթորկալի ու յարաշարժ կեանքէ մը յետոյ, ազատամարտի անհաւասար ու դժնդակ գօտեմարտներէն անցած, երբեմն յաղթական, երբեմն պարտուած ու արիւնլուայ, իր ամրակուռ պարիսպներուն վրայ նորէն տասնեակ հազար ուխտեալներ ու համակիրներ, ազատագրութեան սրբազան դրօշին քով կեցած, երիտասարդ ու թարմ բանակ մը կը կազմեն՝ դալիք լուսապայծառ արշալոյսներուն ի խնդիր:

Հաւատաւորներու այս կազմ ու պատրաստ բանակը խտացած կամքն է հայ ժողովուրդին ու ժառանգորդը քառասուն տարիներու ճիգին, վերելքին, զոհողութիւններուն ու բարոյական անդին հարստութեան։ Այս դրօշակիրները, երբ ետ կը դառնան դիտելու անցեալը, անոնց աչքերուն առջեւ իրենց յառաջապահ բանակները, սրբազան ուխտի հարիւր հազարի արի մարտիկներ, յայտնի ու անյայտ շիրիմներէն, անտառի պէս կը ցցուին սպառազէն, անմահութեան իրաւունքով մեզ հետ միասին ներկայանալու հայոց պատմութեան դատաստանին։

Ու ահա մե՛նք՝ պահակ քառասուն տարուան ճանապարհի եզրին, նոր ճանապարհներու եւ նոր հորիզոններու ակնկառոյց, եւ ահա անո՛նք, որ մեռան, բայց չկորան, արձանացած Հայաստանի բարձրաբերձ լեռներու կատարին, երբեմն պահապան հայ տնանկ մշակին, երբեմն շանթահար՝ դահիճին ու դաւաճանին, երբեմն արիւնոտ դաշտերուն մէջ խիզախ զօտեմարտիկ, երբեմն կախաղանի բարձունքէն լայն աչքերով մեզ յառած ու միշտ ազատութեան դրօշը ձեռքին, մինչեւ որ արի ու անյայտ յեղափոխական զինուորը դայ՝ դրօշակը ստանալու դալիք մարտերուն համար։

Քառասուն տարին այսպէս, հորիզոնէ հորիզոն կը լեռնայ մեր դէմ, ու մենք մեր յեղափոխական ու ազատագրական դրօշը կը խոնարհեցնենք ազատամարտի այս հսկայ զօրանցքին առջեւ։ Ու կ՚ուզենք, որ հայ ժողովուրդը հոգեկան յուզումով, մօր մը հպարտութեամբ եւ զորովով՝ ետ դառնայ դիտելու իր միակ ու հարազատ զաւակը, որ քառասուն տարի քառասուն հազարներով ճղակոտոր եղաւ՝ իր մօր հարազատ կաթին հաւատարիմ մնալու համար։

Այսպիսի հարազատութեամբ, առանց մեր աչքերու լոյսը պղտորելու, հանենք մեր գլխարկները ու մեծ երկիւղածութեամբ մտնենք քառասուն տարուան տաճարէն ներս՝ հայկական յեղափոխութեան արժէքը կշռելու։

* * *

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը հրամայական անհրաժեշտութիւն մըն էր 1890–ին։ Հայ ժողովուրդի տնտեսական եւ քաղաքական պայմաններն անհանդուրժելի էին բառին ամենալայն իմաստով։ Իսկ 90–ական թուականներուն ասիական բարբարոսութիւնը կրկնապատիկ թափ կը ստանար՝ շնորհիւ Սուլթան Համիտի վարչաձեւին։ Առարկայական այս պայմաններէն զատ, երբ նկատի առնենք այդ օրերը նախորդող քառասուն տարուան քաղաքական եւ մշակութային վերածնունդի ճիգերը, հայ ժողովուրդի զարթնումը եւ քաղաքական յոյ-

ներն ու յոյզերը, պարզ պիտի ըլլան մեզ հայութեան դիւրաբորբոք ու խիստ զգայուն հոգեկան վիճակը եւ ըմբոստ տրամադրութիւնները։ Առարկայական եւ հոգեբանական այս երկու վիճակները կուգային իրար լրացնելու եւ ստեղծելու թանձրացեալ քաղաքական մթնոլորտ մը, որ 80-ական թուականներէն մինչեւ 1890-ը, երկունքի եւ վերանորոգման շրջան մը բոլորելէն յետոյ, ծնունդ կուտար հզօր կազմակերպութեան մը՝ այս մթնոլորտի իղձերն ու բաղձանքներն իրացնելու։

Դաշնակցութեան երեւումը ոչ միայն վաղաժամ չէր, այլ նոյնիսկ ուշացած էր։ 19-րդ դարու կէսէն սկսած՝ հայ ժողովուրդի ներքին-ազգային եւ արտաքին-քաղաքական ապրումներն ու շարժումները ճակատագրական փուլերէ անցած էին եւ յանգած Բերլինի 61-րդ յօդուածին։ Այդ փոթորկալի ժամանակաշրջանին, հայ ժողովուրդը չէր կրցած կեանքի կոչել զօրաւոր քաղաքական կազմակերպութիւն մը՝ ազգային կենսական խնդիրները տիրական ու աշխուրջ վարելու համար։

Վերածնութեան առաջին սերունդները, այդ պայմաններու մէջ, իրենց գերագոյն տուրքը տուած էին։ Բերլինի դաշնագրով, հայ կեանքի ղեկավար սերունդի մէկ մասը կը հիասթափէր, իսկ միւս մասը, որոշ ոգեւորութեամբ, ապագային կը կապէր իր յոյսերը, սակայն, նոր նշանաբանով մը։ Սեփական ուժի եւ զէնքի անհրաժեշտութիւնը տիրական կերպով կը հնչէր բոլորի ականջին։ Բայց 80-ական թուականներու ղեկավարները հրապարակ նետուած այս մտածումը կեանքի մէջ իրացնելու ոչ կորովը, ոչ պատրաստութիւնը եւ ոչ ալ կոչումն ունէին։ Անոնց դերը վերջացած էր։

Ու ահա, 1880-էն մինչեւ 1890, աւելի իրապաշտ, աւելի յեղափոխական եւ աւելի խիզախ երիտասարդութիւն մը հասակ կ՚առնէր հայութեան երկու հատուածներուն մէջ, գրեթէ միեւնոյն ժամանակ, հետզհետէ կ՚իւրացնէր ազգային ազատագրութեան գաղափարը եւ կը դիմէր զէնքի՝ նետուելով անհաւասար կռուի թատերաբեմը։ Հին սերունդը կամաց-կամաց տեղի կուտար։ Երիտասարդ յեղափոխականներու խմբակները, նոր ուխտի գործիչները եւ Հայաստանի խորքերուն մէջ արդէն կռուի ձեռնարկող մարտիկներն իրարու կը կապուէին, մտքերու փոխանակութիւն կ՚ունենային ու, երկար խորհրդակցութիւններէն յետոյ, գործօն բոլոր ուժերը մէկ նպատակի շուրջ կը համախմբէին՝ մարմին տալով հայութեան հաւաքական կամքին, որ 1890-ի ամառը վերջնականապէս հրապարակ կուգար «ՀԱՅ ԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» անունով՝ առաջին իսկ օրէն տիրական ելոյթով մը։

Հ. Յ. Դաշնակցութիւնը հէնց սկզբէն կը դառնար հայու-

թեան ցրուած կամքերու կեդրոնաձիգ քաղաքական ոյժը եւ, շատ կարճ ժամանակի մը ընթացքին, իր կազմակերպական ցանցը կը տարածէր հայկական բոլոր կեդրոններու մէջ՝ չեղեալ համարելով հայութիւնը հատուածներու բաժնող սահմանները եւ կրօնական տարբերութիւնները, համազգային նկարագիր մը տալով նորաստեղծ յեղափոխական կուսակցութեան:

Հայ ժողովուրդն իրարու օղակող այս նոր ու կենսաբար հոսանքը, թէեւ մեծ դժուարութիւններու բախելով, կը վարակէր հայ մտաւորականութիւնն ու երիտասարդութիւնը, ու այդ նոր շունչին տակ՝ հետզհետէ հայ ժողովուրդը իր կրօնական համայնքի աստիճանէն կը բարձրացնէր ազգային հաւաքականութեան գաղափարին: Ազգային անհատականութիւնը յարութիւն կ՝առնէր յեղափոխական կազմակերպութեան կուռ ողնաշարին շուրջ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը հայ ազգային հին եւ անթեղուած կրակէն նկարագիր առնելով՝ իր կազմակերպուած նկարագիրը կը փոխանցէր ժողովուրդին՝ անոր ազնիւ ու արի հակումները կեանքի կոչելով:

Դառնալով հայ ժողովուրդի կամքի կեդրոնը՝ ան ձեւակերպեց իր նպատակը՝ անորոշ ու անձեւ քաղաքական իղձերը որոշ յայտարարի տակ առնելով: Դաշնակցութիւնը իր առաջին կոչով կը յայտարարէր բոլորին, որ ինքը հրապարակ եկած է ազատագրել հայ ժողովուրդը քաղաքական եւ տնտեսական ճնշումներէն: Համազգային ու համամարդկային այս նպատակներու իրագործման համար Դաշնակցութիւնն արմատ ձգեց ամենէն առաջ ու բացառաբար հայ աշխատաւորական հոծ զանգուածներուն մէջ, խորացաւ եւ ուռճացաւ հոն ու միշտ մնաց հայ դեմոկրատիայի կուսակցութիւնը եւ գրեթէ միս մինակ հայ աշխատաւորութեան հետ՝ կրողը հանդիսացաւ հայ ազգի քաղաքական ձգտումներուն:

Դաշնակցութեան ճիւղարձակումով՝ հետզհետէ փտած կեղեւները ճաթռտելով վար թափեցան, ու Դաշնակցութեան տիրական դէմքը անհանդուրժող ամբոխ մը հանեց իր դէմ՝ ծնունդ տալով հակադաշնակցական շատ ապերախտ արշաւի մը, որ քառասուն տարի անընդհատ ոռնաց ու գալարուեցաւ հայոց ազատագրութեան դժնդակ քայլերուն: Ու այդ ապերախտ գործին մէջ միացան հայ ապազգայնացած հարուստը, յետադիմականը, դաւաճանը, կղերը եւ ձախ հովերէ տարուած ու մեր իրականութենէ կտրուած խմբակները, որոնք օտար միջավայրէն եւ երազներէն կ՝առնէին իրենց անունը:

Դաշնակցութիւնը զօտեմարտի կ՝ելլէր մեր դարաւոր թշնամու դէմ՝ ահռելի փոթորիկներու մատնելով եւ, սակայն, իր ուժի կէսը կը սպառէր ներքին ճակատին վրայ, ուր ամէն կողմէ

թունաւոր սլաք մը կուղար անձնուէր մարտիկի կուրծքին։ Ողբերգական է այս կողմէն հայոց պատմութեան քառասուն տարուան տեսարանը։

Բայց եւ այնպէս, Դաշնակցութիւնը այս երկու ճակատի վրայ տարած դժնդակ պայքարի ընթացքին, ոչ միայն բաղմութիւններն իրարու զօդելով՝ ազգի հաւաքականութիւնը կերտեց, այլեւ զայն կապեց ՀԱՅՐԵՆԻՔԻ դաղափարին, յարատեւ ու յամառ կռիւներով, սահմանի այս կողմն ու այն կողմը. արմկահարեց իր շրջապատը՝ տեղ բանալու համար անհայրենիք ժողովուրդին ու տառնեակ տարիներու քայլ առ քայլ նուաճումներով հայրենիքի շրջագիծը ուրուագծեց, ԱԶԳՆ ու ՀԱՅՐԵՆԻՔԸ միաձուլեց։

Քաղաքական ազատութիւնը, առաջին օրերուն, որպէս նախադուռ, բարեենթրոգումներու շուրջ կը դեգերէր՝ հետզհետէ հասնելու համար ինքնավարութեան դաղափարին ու ապա, աւելի ձեւակերպուելով, հայրենիքի հողային սահմանները շրջանակներու մէջ կ՚առնէր եւ ֆեդերացիայի որոշակի պահանջով հրապարակ կուդար՝ իրեն դէմ հանելով աջ ու ձախ խմբակները, որոնք կը ժխտէին հողային ինքնավարութեան կարելիութիւնը։ Ազատագրութեան ամբողջ տեւողութեան, հակառակորդ ու ձեռընպահ բաղմութեան մէջ, Դաշնակցութիւնը յաւէտ արթուն ու հաւատարիմ պահակը մնաց հայ ազգի եւ հայրենիքի քաղաքական ուխտին, մինչեւ, վերջապէս, մշուշապատ ու անյուսալի օր մը, հայրենի հողին վրայ, հայ ազգային անկախ պետութեան չէնքը բարձրացաւ՝ ՄԻԱՅԵԱԼ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ վերջնական ու ձեւակերպուած ազգային–քաղաքական նպատակը յանձնելով հայ ժողովուրդին

Երբ այսօր ազգային ըմբռնումը ընդհանուր է ու Հայրենիքի դաղափարը բոլորի սեփականութիւնը, պէտք է դիտնալ, որ այդ յատակութիւնը քառասուն տարուան աննկուն աշխատանքի պտուղն է։ Ու ե՛րբ այսօր, նոյնիսկ մեր անկախութեան կորուստէն յետոյ, հայ ժողովուրդը ՀԱՅՐԵՆԻՔ ՄԸ ունի, պէտք է գիտնալ, որ անկորնչելի գիւտն է Հ. Յ. Դաշնակցութեան երեսուն տարուան արեան դնի։

Դաշնակցութիւնը 28 տարի անընդհատ պահակ կայնեցաւ հայ ժողովուրդի երկունքին, եւ երբ նորածին անկախութիւնը աշխարհ եկաւ, իր ամենէն ընտիր զաւակները զոհեց անոր պաշտպանութեան համար։ Այսօր, բռնութեան անարդ լուծին տակ իր հայրենիքին մէջ եւ ցրուած ու տարադիր աշխարհի ամէն կողմ, Դաշնակցութիւնը իր քառասնամեակի լրումին՝ կը յայտարարէ ամբողջ հայութեան, որ նոյն անձնազոհութեամբ եւ յեղափոխական արիութեամբ՝ աննահանջ պահակը կը մնայ իր կերտած ազ-

գին ու հայրենիքին՝ այն բովանդակ բարոյական ու ֆիզիքական ուժով, որ ինքն ունի, այսո՛ր, քառասուն տարուան դրօշին շուրջը բոլորած։

Պահակի այս հոգեբանութիւնը ժառանգութիւնն է քառասուն տարուան մարտական այն ոգիին, որ Դաշնակցութիւնը կերտեց՝ ստրկացած ու փոշիացած ժողովուրդին հոգին այլափոխելով։ Հայ ժողովուրդի ազատագրութիւնը կը պահանջէր երկաթէ բազուկ, քարէ հոգի, անվեհեր կամք։ Դարերու ստրկութենէն յետոյ, Դաշնակցութիւը յանդգնութիւնն ունեցաւ ծնունդ տալու Արաբոյին, Գէորգ Զաւուշին, Դումանին, Սերոբ Աղբիւրին, Անդրանիկին եւ բազմահազար աննման մարտիկներուն, որոնք իրենց գեղջկական տարազին մէջ՝ զրահաւորուած Վահան Մամիկոնեաններուն յարութիւն տուին...

Անհաւատ ու անարի հակառակորդները տասնեակ տարիներու ընթացքին տեսան մարտական վերելքը, բայց դարձեալ մնացին անհաւատ ու անարի։ Լեռներու կածաններուն մէջ, քառասուն տարի առաջ մինակ թափառող Արաբօն շուտով կռուի դուրս եկաւ հինգ Արաբօներով։ Հնգեակը բարձրացաւ տասնեակի, տասնեակը հարիւրեակի ու հազարեակի, որպէսզի Ֆիտայիներու աննման սերունդի անունով՝ Դաշնակցութիւնը կոչուէր հայոց ՄԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ, որպէսզի մարտական փոքրաթիւ այդ խումբերը, 25 տարի յետոյ, միջուկը կազմէին հայ կամաւորական գունդերուն՝ հազարաւոր մարտիկներ ռազմաճակատ հանելու Ֆիտայական տասնեակի փոխարէն։ Ու, վերջապէս, հայ կամաւորական գունդերը կորիզը պիտի դառնային հայոց ազգային բանակին՝ անկախ հայրենիքի պաշտպանութեան համար զէնքի կոչելով տասնեակ հազարներ, որոնք կռուեցան յանուն հայ ժողովուրդի ազատութեան։

Ծուռ բերան հակառակորդը մնաց իր թունոտ ատելութեան մէջ։ Վատաբանեց, երբ Դաշնակցութիւնը յաղթեց ու հարիւր հազարաւոր ժողովուրդի գոյութիւնը փրկեց։ Անիծեց ու հայհոյեց, երբ պարտուեցաւ ու մահացու վէրքեր ստացաւ։

Կ՚ուզէ՞ք գիտնալ գաղտնիքը Դաշնակցութեան յարատեւ ու յարաճուն ուժին եւ բացատրութիւնը հակադաշնակցական բոլոր հոսանքներու տկարութեան։ Քննեցէ՛ք անոնց ծագումը ու պիտի տեսնէք, որ անոնք նպատակ չունին, որ հեռուէն ու մօտէն ընդդրկէր հայ ժողովուրդի տնտեսական եւ քաղաքական հիմնական պահանջները։ Քննեցէ՛ք անոնց բովանդակ գործունէութիւնը ու դուք պիտի տեսնէք, թէ հակադաշնակցական ապերախտ պարտականութենէն զատ՝ որեւէ պարտականութիւն կատարած չեն հայ քաղաքական իրականութեան մէջ։

Ու պատմութիւնը ուրիշ բան չէր կրնար արձանագրել քառա-

սուն տարուան էջերուն մէջ, բացի այն մահացու դատավճիռէն, որ անխուսափելիօրէն պիտի երթայ հակադաշնակցականներու հասցէին՝ ըսելու, թէ անոնք արմատ չբռնեցին հայ իրականութեան մէջ։

Այսօր տակաւին, հայ բոլշեւիկները, որոնք տարիներէ ի վեր հայ հայրենիքի բռնատէրերը կը հանդիսանան, ամուր դատած կը մնան մեր հայրենիքի պատերուն՝ միայն ռուսական սուիններով։

Հայ ժողովուրդը, հակառակ բոլոր փոթորիկներուն եւ անհաշիւ դժբախտութիւններուն, ջերմօրէն կապուած մնաց Հ. Յ. Դաշնակցութեան։ Որովհետեւ՝ ամէն անգամ, իր ահռելի պարտութիւններու եւ զգլխիչ յաղթանակներու օրերուն, երբ պէտք ունեցաւ իր պաշտպանութեան կամ հպարտութեան դրօշը բարձրացնելու, իրեն հետ գտաւ Դաշնակցութիւնը միշտ կազմ ու պատրաստ, յառաջապահի դերին մէջ։ Իսկ հակադաշնակցականները միշտ մնացին հեռուն, հեռու զոհողութիւններէ, հեռու պատասխանատուութենէ՝ միշտ հակառակ ճակատի վրայ։

Այսօր տակաւին հայ ազգի քաղաքական եւ տնտեսական ապատագրութեան ձեւակերպուած նպատակը կը մնայ միակը, որ ուղիղ պատասխան կուտայ հայ ժողովուրդի ազգային-քաղաքական իղձերուն ու կը համապատասխանէ անոր ընկերային եւ տընտեսական հրամայական պահանջներուն։

Հ. Յ. Դաշնակցութիւնը, քառասնամեայ փորձառութեամբ գինուած, կարծրացած իր անշեղ հաւատքին եւ կորովին մէջ, այսօր դարձեալ ազգային ամբողջական ազատագրութեան իտէալին միակ կրողը կը հանդիսանայ։ Ան կը ձգտի միացնել եւ ամբողջացնել հայ հայրենիքը, հաւաքել հայ ցրուած ժողովուրդը ազգային անկախ պետութեան սահմաններուն մէջ եւ հաւաքական ճիգերով կերտել անոր քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը։

Ու քառասուն տարի յետոյ, իր պայքարի եւ յեղափոխութեան այս ճանապարհին վրայ, Դաշնակցութիւնը կը մնայ մըշտապէս ու բացառապէս հայ աշխատաւոր զանգուածներուն հետ միս-մինակ՝ արտայայտելով հայ ազգի ողջ էութիւնը, թէ՛ բարոյապէս, թէ՛ ֆիզիքապէս։

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՋ

Գրեց՝ Գ. ԳԻԻԶԱԼԵԱՆ

I

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

16–րդ դարի սկզբներից Օսմանեան Կայսրութիւնը դնում էր իր առաջ ասիական նպատակներ։ Սուլթան Սէլիմը գրաւում է արաբական երկիրները, ապա պարսութեան է մատնում Շահ–Իսմայիլին՝ գրաւելով ամբողջ Հայաստանը։ Այնուհետեւ, մինչեւ 17–րդ դարի կէսերը, երկու մահմեդական պետութիւնները՝ Օսմանեան Կայսրութիւնն ու Պարսկաստանը տեւական պատերազմների մէջ էին, որոնք տեղի էին ունենում Հայաստանի հողի վրայ եւ նրա պատճառով։ Անընդհատ պատերազմների հետեւանքով Հայկական Աշխարհը աւերուեց եւ բնակչութիւնը պակասեց առնուազն կիսով։ Հայութեան ծանր հարուած տուեց, մասնաւորապէս, պարսից պատմութեան մեծագոյն դէմքերից մէկը՝ Շահ–Աբասը՝ 17–րդ դարի սկզբին։ Իր հայրենիքի տնտեսական վերաշինութեան համար նա Արարատեան Դաշտի եւ հեռու ու մօտիկ գաւառների հայ բնակչութիւնը փոխադրեց Պարսկաստանի խորքերը, որով նպաստեց Հայաստանի ապահայացման։ Արեւելեան կամ Հիւսիսային Հայաստանը, աւերակ ու ամայի, շուտով լեցուեց թուրք–թաթարական ցեղերով, որոնք կազմեցին բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը։ Արեւմտեան Հայաստանում հայերի տեղը բռնեցին լեռներից իջնող քրդերը՝ մեծամասնութիւն դառնալով Վանի, Բիթլիսի եւ Տարօնի շրջաններում։ Այս ձեւով, անուղղակի կերպով, Շահ–Աբասը նպաստեց թուրանականութեան հզօրացման եւ արտակարգօրէն թուլացրեց հայ

տարբը։ Թէ՛ Պարսկաստանի եւ թէ՛ Հայութեան գալիք պատմութեան համար այս փաստը ունեցաւ լուրջ քաղաքական հետեւանք։

Պարսկա–Օսմանեան մրցութիւնը վերջացաւ 1639 թուին, երբ երկու կողմերի համաձայնութեամբ գծուեց բաժանման նոր սահման։ Հայաստանը բաժանուեց երկու մահմեդական պետութիւնների միջեւ, եւ պատմութեան մէջ առաջին անգամ կայուն ձեւով ստեղծուեց Օսմանեան Հայաստան։ Նա աւելի ընդարձակ էր, տարածուն, քան Պարսկահայաստանը։ Երկու պետութիւնների սահմանն անցնում էր Արեւմտեան Ախուրեանի ափերով, մինչեւ Արաքս գետը, ապա Արաքսի ափերով հասնում էր մինչեւ Կողբի աղահանքերը, յետոյ իջնում էր հարաւ՝ Հայկական պարը՝ մինչեւ Մասիս. այստեղից էլ Զագրոշեան լեռնաշղթայով հասնում էր մինչեւ Միջագետքի սահմանները։ Այս գիծը շատ երկար ժամանակ, մինչեւ Ռուսների Պարսկահայաստանում երեւալը, մընաց որպէս երկու պետութիւնների սահման՝ ենթարկուելով շատ քիչ փոփոխութիւնների։ 1829 թ. Սեպտեմբեր 2–ին կնքուեց Ադրիանապոլսի դաշինքը, որի զօրութեամբ ռուսները Օսմանեան կայսրութիւնից ձեռք բերին Արեւմտեան Այսրկովկասի մի քանի շրջանները եւ հայկական երկու գաւառները՝ Ախալցխան ու Ախալքալաքը։ Աւելի ուշ, 1878 թ. Բերլինի վեհաժողովի որոշումով, Ռուսաստանը Թուրքիայից ստացաւ Կարսը եւ Բաթումը։ Օսմանեան Հայաստանի մնացած հողերը մինչեւ վերջ մնացին Թուրքիայի տիրապետութեան տակ, նոյնիսկ որոշ յաւելումներով կատարուած Ռուսաստանի հաշուին. Թուրքիան բոլշեւիկներից յետ ստացաւ Սուրմալուն, Կարսն ու Արդահանը 1918 եւ 1921 թուականներին։

Հայաստանի մեծագոյն մասը Օսմանեան գերիշխանութեան տակ էր. սակայն, ինքը՝ Թուրքը այդ վայրերում բնակչութիւն չունէր. աւելի ուշ միայն, 19–րդ դարում, Թուրք տարրը սկսեց ստուարանալ քաղաքներում։ Թուրքի հայրենիքը Փոքր Ասիան էր. այստեղից էր նա ծաւալւում դէպի արեւելք եւ արեւմուտք։ Սկիզբը նրա հայեացքն ուղղուած էր արեւմուտք՝ Բալկանեան թերակղզին, որը գրաւելուց յետոյ՝ դարձաւ եւրոպական պետութիւն։ Աւելի ուշ՝ նրա կայսրութիւնը ամբողջացաւ Մերձաւոր Արեւելքում՝ իր մէջ առնելով արաբական եւ հայկական աշխարհները։ Հայութիւնը միայն քաղաքականօրէն կայսրութեան մէջ էր, իսկ նրա անմիջական հարեւանը քիւրդն էր, որ հարաւի եւ հարաւ–արեւելքի լեռներից ստիճանաբար իջնում էր հայոց դաշտերը, բարձրանում հայկական լեռնալանջերը, հաստատւում Սասունի մէջ, Մուշի դաշտում, Վանի նահանգում, Արարատի

շուրջը, Ալաշկերտում։ Քուրդերն այնքան մեծ ուժ էին կազմում Տարօնում, որ Մուշի Ս. Կարապետ վանքի վանահայրը՝ Յովհան վարդապետը 18-րդ դարում իր ազատագրական ծրագիրների իրականացման համար՝ մեկնակէտ ունէր հայ-քրդական գործակցութիւնը եւ նոյնիսկ վանքի հասոյթները այդ նպատակի համար եւ կամովին տրամադրում էր քուրդ աշիրէթներին։

15-րդ դարից արդէն մենք նկատում ենք քուրդ աշիրէթների պարբերական դաղթաշարժ դէպի Սասունի եւ Խոյթի լեռները։ Նրանց մի մասն էլ անցնելով դէպի արեւելք՝ հաստատւում է Վասպուրականի լեռնագաւառներում։ Քրդական տարրը բաւական ուժեղ էր, լաւ զինուած, ընդարձակ երկրի եւ որոշ քաղաքական կազմակերպութեան տէր, որի հետեւանքով Սուլթան Սէլիմը հաշուի էր առնում նրան։ Նա քուրդ ցեղապետների հետ դաշինք էր կնքում, յարգում նրանց աւատական իրաւունքներն ու անկախութիւնը։ Օսմանեան հովանու տակ քրդերը պահեցին իրենց ժառանգական իշխանութիւնները, զինական ուժը, տեղական իրաւունքներն ու սովորութիւնները եւ այս բոլորի փոխարէն կայսրութեան հանդէպ պիտի կատարէին միայն զինուորական պարտականութիւններ եւ Խալիֆային տարեկան «նուէրներ» պիտի մատուցանէին։ Այսպիսով՝ Հայաստանի սահմաններում եւ նրա հողերի մէկ մասի վրայ ստեղծուեց քրդական ինքնավար շրջան։ Շատ հայ «իշխաններ» մտան այս եւ այն քուրդ ցեղապետի հովանու տակ, որով թէպէտ ազատուեցին ուրիշների ոտնձգութիւններից, բայց եւ նպաստեցին, որ քրդերը քայլ առ քայլ գրաւեն հայկական հողերը։ Հայերը չունէին քրդական ցեղերի ոչ ընկերային կազմը, ոչ էլ ոյժը, ուստի չկարողացան ձեռք բերել նրանց ինքնավարութեան նման իրաւունք, իսկ այստեղ կամ այնտեղ մնացած կիսանկախ լեռնիշխանութիւնները ընկան քրդական հզօր պետերի հովանաւորութեան տակ եւ այս միջոցով միայն ապահովեցին իրենց գոյութիւնը։ Դրանից առաջ հայերը ճանաչուել էին կայսրութեան մէջ որպէս կրօնական միութիւն որոշ իրաւունքներով, բայց այդ բոլորը անկարող էր ապահովել նրանց ֆիզիկական գոյութիւնը, կեանքի եւ գոյքի անձեռնմխելիութիւնը։ Մինչ քուրդը կազմակերպւում էր, կայսրութեան արեւելեան մասերում դառնում էր միակ զինուած եւ ինքնավար հասարակութիւնը, հայութիւնը մնում էր անկազմակերպ, ցրուած եւ անզէն ու անպաշտպան։

Այսպէս, ուրեմն, 17-րդ դարի 30-ական թուականների վերջին կազմաւորուեց Օսմանեան Հայաստանը, 19-րդ դարի 20-ական թուերի վախճանին ստեղծուեց պատմութեան մէջ առաջին անգամ Ռուսահայաստանը։ 1828 թ. Փետրուարի 10-ին ռուսնե-

րի եւ պարսիկների մէջ կնքուեց Թուրքմէնչայի նշանաւոր դաշինքը, որով Ռուսաստանը ձեռք էր բերում Երեւանի եւ Նախիջեւանի խանութիւնները: Մի քանի տարի առաջ, 1813-ին, նոյն Ռուսաստանը Պարսկաստանին պարտադրել էր Գիւլիստանի դաշինքը, որի զօրութեամբ նա «սեփականացնում» էր Ղարաբաղի եւ Գանձակի խանութիւնները: Ադրիանապոլսի դաշինքով ռուսները օսմանցիներից բռնագրաւեցին Արեւմտեան Այսրկովկասի մի քանի ծովամերձ շրջանները եւ հայկական երկու հողամասեր՝ Ախալցխա ու Ախալքալաք: 1878 թ. Բերլինի վեհաժողովը Ռուսաստանին թողեց Կարսը, Արդահանն ու Բաթումը: Ռուսաստանի այս գրաւումները վաղուց մշակուած ծրագրի եւ քաղաքական նպատակների հետեւանքներ էին: Այդ ծրագրի իրականացման վրայ աշխատել էր ռուս պետական գործիչների մի քանի սերունդ: Նա կապւում էր Ռուսաստանի արեւելեան քաղաքականութեան հետ, իրրեւ նրա մէկ դրուագը: Այս բռնագրաւումների հետեւանքով էր, որ ստեղծուեց Ռուսահայաստան:

Թուրքմէնչայի դաշինքը մէկ դարձակէտ էր հայոց նորագոյն պատմութեան մէջ: Վերջանում էր մեր պատմութեան պարսկական շրջանը, որի միայն վերջին մասը տեւեց աւելի քան երեք հարիւր տարի: Այս պատմաշրջանը մենք կոչում ենք խանական՝ ի նկատի ունենալով նրա ընկերային եւ քաղաքական կառուցուածքը, որ շատ ընդհանուր գծեր ունէր միջնադարեան աւատականութեան հետ՝ միայն շեշտուած արեւելեան բնոյթով: Հայոց հասարակութեան մեծագոյն մասը երեք դարից աւելի ապրեց խանական միջավայրում, իր կազմից շատ բան կորցրեց, ինչպէս եւ իր բարոյական նկարագրից: Նոյն խանական միջավայրում եւ նրա դէմ սաղմնաւորուեց հայոց յեղափոխութիւնը՝ սկիզբը որպէս դիւանագիտական շարժում, ապա որպէս քաղաքական միտք եւ ծրագիր եւ յետոյ որպէս ազատագրական-յեղափոխական ապըստամբութիւն: Թուրքմէնչայի դաշինքով վերջ էր գտնում նաեւ հայոց ազատագրական պայքարի մէկ նշանաւոր գլուխը, որ հետապնդում էր պայծառ նպատակ՝ Պարսկահայաստանի անկախութիւնը Ռուսաստանի օժանդակութեամբ եւ նրա հովանու տակ: Բայց նա վերջանում էր մեր հայրենիքի մէկ մասի՝ Պարսկահայաստանի կցումով Ռուսաստանին եւ հայոց քաղաքական ձգտումների խորտակումով: Անհրաժեշտ էր երկար ժամանակ, դաղարի եւ հանգստի մի տեւական շրջան, մինչեւ որ վերանորոգուած հայութիւնը նոր ճիգեր անէր ինքնորոշուելու եւ ազատագրուելու:

Նախորդ դարի երեսնական թուականներին, երբ Ռուսաստանը հաստատւում էր մեր հայրենիքի մի մասում, Երեւանի, Նա-

խիջեւանի, Գանձակի, Ղարաբաղի խանութիւնները զուրկ էին հոծ հայ բնակչութիւնից: Այնտեղ մեծամասնութիւն էին կազմում թաթարները՝ իրենց զանազան ցեղերով: Թաթարների եւ քրդերի զանգուածօրէն Հայաստանում հաստատուելը մեր հայրենիքում առաջացրել էր երկու հասարակութիւն՝ տարբեր ծագումով, տարբեր պատմական անցեալով, կրօնով, կենցաղով, լեզուով, մշակոյթով, ընկերային կազմով եւ քաղաքական տենչերով: Մեր նորագոյն պատմութիւնը՝ այս երկու հասարակութեան՝ հայի եւ թուրք-թաթար-քրդի մի անվերջանալի ու յամառ պայքար էր յանուն հողի, հայրենիքի: Այս պայքարը, որ սկսուեց 13-րդ դարից թուրանական ժողովուրդների ներխուժումով ու զօրանալով, վերջացաւ 20-րդ դարի սկզբին հայութեան պարտութեամբ եւ նրա մէկ մասի բնաջնջումով: Այսպէս եղաւ, որովհետեւ թուրքը թուով գերակշիռ էր, պետականօրէն կազմակերպուած, զինուած էր լաւագոյն եւ հետապնդում էր պայծառ քաղաքական նպատակ: Սկիզբը մրցակից, յետոյ գործակից քուրդն էլ եղաւ նրա աջակիցը: Հայը զուրկ էր այս բոլոր միջոցներից, մենակ էր իր պայքարի մէջ, առանց դաշնակցի: Ի զուր է եւ պատմականօրէն սխալ է մեր վերջին 60-70 տարիների տեղահանութիւնների եւ կոտորածների պատճառները որոնել հայոց ազատագրական-յեղափոխական շարժումների մէջ: Ո՛չ, դրանց արմատները շատ աւելի խորն են թաղուած: Դրանք մեր պատմութեան դժբախտ ժառանգութեան հետեւանքն են, իսկ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՃԻԳՆ Է ԱԶԱՏԱԳՐՈՒԵԼՈՒ ՄԵՐ ԱՆՑԵԱԼԻ ԴԱԺԱՆ, ԿՈՐԾԱՆԻՉ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԻՑ:

Թուրք-թաթարի եւ քուրդի գոյութիւնը հայկական հողերի վրայ կերպարանափոխում էր Հայաստանի ազգային դիմագիծը, Հայաստանը դադարում էր հայի փաստական հայրենիքը լինելուց: Մեր վերածնութեան դէմքերից Խ. Աբովեանը, օրինակ, Օսմանեան Հայաստանի փոխարէն գործ էր ածում Քրդստան անունը, որպէս ցուցահանում ազգագրական այն յեղաշրջումի, որ տեղի էր ունեցել վերջին դարերում: Քրդերի թուական եւ քաղաքական կշիռը ուժեղանում էր Օսմանեան Հայաստանում, իսկ նոր կազմուած Ռուսահայաստանում թաթարներն էին մեծամասնութիւն կազմում իրենց կալուածատէր ղեկավար դասի գլխաւորութեամբ: 1831 թ. մի վիճակագրութեան համաձայն Երեւանի, Նախիջեւանի եւ Օրդուբատի շրջաններում բնիկ հայութեան թիւը հասնում էր ընդամէնը 25,151 անձի, մինչդեռ նոյն վայրերի մահմեդականների թիւը հասնում էր 75,020-ի: Ցարաբերութիւնը նոյնն էր, եթէ ոչ աւելի աննպաստ, գրեթէ ամէն տեղ, միւս

խանութիւնների մէջ։ Այս փաստի մասին իրենց զեկուցումների մէջ յիշատակում էին նաեւ ռուս զօրավարները, մասնաւորապէս Պասկեւիչը։

Այսպիսով՝ հերթական խնդիր էր դառնում մեր պատմական հայրենիքը հայերով լցնելու պահանջը։ Հայկական հողերը պէտք էր դարձնել իրօք Հայաստան. Հայաստանը վերստին հայացնել։ Առանց այս քայլի չէր կարելի երազել մշակութային եւ քաղաքական հայութիւն ստեղծելու մասին։ Ներսէս Աշտարակեցին ջանաց նոր կազմուած Ռուսական Հայաստանը հայացնել Պարսկաստանից բերուած գաղթականներով։ Նա չէր ուզում, որ Օսմանեան Հայաստանից գաղթ տեղի ունենար՝ գտնելով, որ հայը դեռ ապագայ ունի այնտեղ։ Գալիք քաղաքական նպատակների համար հայը պէտք է մնար իր հողերի վրայ։ Բայց այդպէս չեղաւ. աւելի քան 60,000 թրքահայեր անցան ռուսների գրաւած վայրերը։ Այս բոլորի հետեւանքով, 30-ական թուերի վերջերին, Այսրկովկասում հայերի թիւը հասաւ 300,000-ի։ Բայց եւ այնպէս՝ հայերը նորից մնում էին որպէս փոքրամասնութիւն վրացիների եւ թաթարների համեմատութեամբ։ Եւ այս փոքրամասնութիւնն էլ համախմբուած չէր մէկ վայրում՝ բուն հայկական հողերի վրայ, այլ ցրուած էր ամբողջ Այսրկովկասում։ 1886 թ. վիճակագրութեամբ Այսրկովկասի բնակչութեան ընդհանուր թիւը հասնում էր 4,702,392-ի, որից միայն 939,131-ն էր հայ, այսինքն՝ մօտ 20%-ը եւ այն էլ ցանուցիր ամէն կողմ։ Գրեթէ փոքրամասնութիւն էր հայութիւնը եւ իր հայրենի գաւառներում։ 1897 թ. վիճակագրութեան համաձայն Այսրկովկասում ապրում էր 1,086,980 հայ, մի թիւ, որ դոյութիւն ունեցող վիճակը այնքան էլ չէր փոխում յօգուտ հայերի։ Այսպիսի աննպաստ պայմանների մէջ էր հայութեան կառուցման գործը Ռուսական Հայաստանում։ Աւելի վատթար էր կացութիւնը Օսմանեան Հայաստանում.

Ամբողջ 19րդ դարում հայերի թիւը ոչ միայն յաւելում չունեցաւ Օսմանեան Հայաստանում, այլ պակասեց, մանաւանդ, դարի երկրորդ կիսին։ Ընդհակառակը, քուրդը աստիճանաբար տեղ դրաւեց հայկական աշխարհում եւ թուական առաւելութիւն ձեռք բերեց։ Միւս կողմից՝ աճում էր թրքական տարրը քաղաքներում եւ նրանց շրջակայքում։ Հայաստանումն էին տեղաւորւում նաեւ դրսից եկող գաղթականները՝ մուհաջիրները Բալկաններից եւ Կովկասից։ Դրա հետեւանքով՝ 70-80-ական թուերին հայութիւնը ոչ մէկ տեղ այլեւս մեծամասնութիւն չէր կազմում. բազմացող մահմեդական ցեղերի ու ժողովուրդների մէջ նրա քանակը պակասում էր։ Բնական աճի տեսակէտից հայութիւնը գուցէ

առաջին տեղը գրաւէր, բայց քաղաքական գործօններ եւ կառավարութեան ձեռք առած արհեստական միջոցների հետեւանքով հայութեան թիւը աստիճանաբար նուազում էր։ Բացի այդ, Օսմանեան Հայաստանի հայութեան թիւը պակաս էր ցոյց տալիս իշխանութիւնը իր քաղաքական նպատակների համար։ Այսպէս, 1880 թուին, Ապէտին փաշան, պատասխանելով վեց պետութիւնների դեսպանների ծանուցագրին, աւելացնում էր «Վանի, Դիարբէքիրի, Պիթլիսի, Էրզրումի եւ Սվազի հայ բնակիչների պաշտօնական մարդահամարը հետեւեալ արդիւնքն է տուել։ Այս վերջինների թիւը բարձրանում է հարիւրին 17-ի, միւս ոչ-իսլամ հասարակութեանցը՝ հարիւրին 4-ի, իսկ մահմեդական բնակիչներինը՝ հարիւրին 79-ի»։ Ի հարկէ, այս «վիճակագրական» թուերը շինծու էին ու կեղծ՝ արուած միայն այն նպատակով, որ Բերլինի վեհաժողովի թուրքիայի վրայ դրուած յանձնարարութիւնները Հայաստանում չգործադրուին։

Հայոց թուի մասին վիճակագրութիւններ էր հրատարակում, Հայկական Հարցի կապակցութեամբ, նաեւ Կ. Պոլսի Պատրիարքարանը, բայց նա էլ հեռու էր իրական վիճակը ներկայացնելուց, թէեւ աւելի մօտ էր ճշմարտութեան, քան կառավարութեանը։ Պատրիարքարանի տուեալներով Օսմանեան իշխանութեան տակ ապրող հայերի թիւը 1882-ին հասնում էր 2,660,000-ի։ Սրանցից բուն հայկական նահանգներում ապրում էին՝ Վանի, վիլայէթում 400,000, Սվազի՝ 280,00, Խարբերդի՝ 270,000, Բիթլիսի՝ 250,000, Դիարբէքիրի՝ 150,000, Էրզրումի՝ 280,000։ Մնացած մասը ցրուած էր կայսրութեան ուրիշ վայրերում։ Դժբախտաբար, մենք չունենք տեղեկութիւններ այդ վիլայէթների ոչ-հայ բնակչութեան թուի մասին, որպէսզի համեմատելով՝ կարողանանք որոշել հայութեան տոկոսը։ Բերլինի Վեհաժողովին Հայոց Պատրիարքարանը իր պատուիրակների միջոցով հայերի թիւը կայսրութեան մէջ հասցնում էր մինչեւ 3,000,000, որից Օսմանեան Հայաստանի, այսինքն՝ Էրզրումի, Վանի, Դիարբէքիրի վիլայէթների մէջ՝ 1,300,000 մարդ։ Դժուար է ասել, թէ որքան այս թուերը մօտ էին իսկութեան։ Անվիճելի է, սակայն, այն, որ 19-րդ դարի երկրորդ կիսին, տիրող դաժան պայմանների հետեւանքով, հայերի թիւը աստիճանաբար նուազում էր։ Հայաստանի ռուսական բաժնում նկատւում էր զգալի թուական վերելք, թէեւ այդ վերելքը ոչ մէկ տեղ հայերին քանակային գերազանցութիւն չտուեց. Օսմանեան Հայաստանում, ընդհակառակը, հայութեան թիւը պակասում էր, որի պատճառով նա ամէն տեղ մնաց փոքրամասնութեան մէջ։

Թուրք-թաթարի եւ քուրդի տիրապետութիւնը ոչ միայն

կերպարանափոխեց Հայաստանի ազգային դիմագիծը, այլեւ հիմնովին յեղաշրջեց հայութեան ընկերային կազմը: Հայ ժողովուրդը կորցրեց իր վարիչ եւ ռազմիկ դասերը: Երբեմնի հզօր ազնուականութեան՝ «տանուտէրական» դասի տէր երկիրը վերածուեց գիւղացիների, հովիւների, արհեստաւորների, մանր առեւտրականների, խոնարհ ծաղումով կղերի հայրենիքի: Քաղաքական եւ ռազմական մեծ աւանդութիւններ ունեցող հայոց նախարարութեան վերջին շառաւիղները՝ Սիւնեաց եւ Ղարաբաղի մելիքները թաթար ցեղերի տեւական հարուածների տակ՝ քայքայում էին նիւթապէս եւ փոշիանում քաղաքականապէս: Եւ այս այն պահուն, երբ թուրքը, թաթարն ու պարսիկը իշխանութեան տէրն էին, զինուած էին եւ պահել էին իրենց ղեկավար դասը յանձին բէկերի, խաների, փաշաների, շէյխերի ու թոռունների:

Թրքահայութեան դժբախտութիւնն այն էր, որ նրա հարեւանն էր քուրդը՝ վաչկատուն, լեռնաբնակ, ցեղական բնազդներով ապրող ժողովուրդ: 19-րդ դարի հայոց պատմութեան մէկ մեծ գլուխը նուիրուած պէտք է լինի հայ-քրդական յարաբերութեան: Հայութեան շահերի, ապահովութեան տեսակէտից էականը քրդութեան կենցաղն էր, նրա վաչկատուն, քոչուորական կեանքը: «Որպէս խաշնարած եւ հովիւ ժողովուրդ, գրում էր Բաֆֆին ութսունական թուականներին, քրդերը միշտ այսօր չսովորեցին հաստատաբնակ կեանքին: Նրանց հայրենիքը այնտեղ է, որտեղ նրանց անասունների համար արօտ կայ: Այս պատճառով ամբողջ տարի գաղթում են մի երկրից դէպի միւսը»... Զանազան վայրերից քուրդը գարնան եւ ամրան բարձրանում էր հայկական լեռները եւ ձմեռը գաղթում աւելի տաք երկիրներ... «Տիգրիսի արեւելեան ափունքի դաշտավայրերը կամ Միջագետքի անապատի տափարակները»*): Քրդերի թափառաշրջիկ կեանքից Օսմանեան հայութիւնը աւերւում էր, թալանւում եւ տնտեսապէս քայքայւում: Ստեղծւում էր վաչկատունի եւ նստակեացի յարաբերութեանց լարումը: Եւ, անկասկած, հայ-քրդական թշնամական յարաբերութիւնների պատճառը սկիզբը առաւելապէս քրդերի այդ կենցաղի մէջ պէտք է որոնել:

Միաժամանակ քրդութեան մէջ եւս առաջանում էր դասային շերտաւորում. ցեղապետը դառնում էր աւատատէր, ազատ քուրդ բնակչութեան մէկ մասը վեր էր ածւում ճորտութեան: Քուրդ ցեղապետը՝ կալուածատէր, անհաշիւ հօտերի, շարժական անբաւ հարստութեան տէր: Նա զինուած էր, շրջապատուած թոռուններով՝ սեպուհներով, ամէն վայրկեան պատրաստ աւերելու եւ ա-

*) «Տանկահայք», Վիեննա, 1913 թ., էջ 120–21:

ւարելու։ Նրա աշխատանքը կռիւն էր, յարձակումը, աւաղակութիւնը, յափշտակութիւնն ու կողոպուտը։ Բայց այս երեւոյթը հայ-քրդական յարաբերութեան մէկ դէմքն էր միայն՝ կապուած քրդական ցեղերի քոչուորական-վաչկատուն կենցաղի հետ։ Կար եւ երկրորդը։ Քրդական բազմաթիւ ցեղեր հաստատուում էին Հայաստանում. փոխանակ ամէն ձմեռ դէպի հարաւ եւ քրդական երկիրները չուելու, նրանք նախընտրում էին մնալ Հայկական Լեռնաշխարհում, ապաստան գտնել հայկական գիւղերի մէջ։ Այսպիսով նրանք աստիճանաբար տեղաւորուեցին Սասունում, Խոյթի մէջ, իջան մինչեւ Վանի շրջակայքը, հասան Արաղայի դաշտը եւ մինչեւ Մասիսի ստորոտները։ Տեղաւորման, նոր հողերի վրայ հաստատուելու այս գործողութիւնը սկսուել էր շատ վաղուց, բայց 19-րդ դարում դարձաւ ծաւալուն եւ զանգուածային, շնորհիւ Թուրք կառավարութեան քաջալերութեան։ Շատ հայկական գիւղեր ստիպուած էին իրենց մէջ ընդունել քուրդ բնակչութիւն։ Հայկական գիւղերում նստած Թոռունները դարձան գիւղի տէրեր, սեփականացրին հայերի հողերը, զրկեցին հայ գիւղացուն աղատութիւնից եւ ապահովութիւնից։ Այս երեւոյթը հետեւանք էր մի կողմից այն իրողութեան, որ 19-րդ դարի առաջին կէսերին, Օսմանեան կառավարութեան ոյժն ու հեղինակութիւնը այլեւս չէր զգացւում կայսրութեան արեւելեան նահանգներում, որով քրդութեան մէջ առաջացած վերնախաւը ազատ հնարաւորութիւն էր գտնում դասային գերիշխանութիւնը հաստատելու Հայաստանի գիւղական բնակչութեան վրայ, տէր դառնալու նրա անձին եւ հողին։ Այս երեւոյթը նոր փուլի մէջ էր մտցնում հայ-քրդական յարաբերութիւնները։ Հայաստանում ստեղծւում էր օտար՝ քուրդ ծագումով մի դաս, որի անմիջական շահագործման առարկան հայն էր ու հայութիւնը։

Քրդութիւնը, նրա բարձր խաւը, աւատատէրը, նախորդ դարի առաջին կիսին, այնքան զօրացաւ, որ նոյնիսկ ապստամբուեց Օսմանեան պետութեան դէմ «Անկախ Քուրդիստան» ստեղծելու նպատակով, որի ընկերային բովանդակութիւնը պիտի լինէր՝ հայ, քուրդ, ասորի գիւղացիութեան տնտեսական շահագործումը բարձր խաւի, ազնուական քրդութեան կողմից։ Բարձր. Դուռը երկար դբաղուեց քուրդի ռազմական ուժը խորտակելու հարցով։ Քրդական ապստամբութիւնը ծաւալուեց Մուշի, Բիթլիսի, Վանի, Բայազէտի, Դիարբէքիրի, Սղերդի շրջաններում։ Այս արդէն ապացոյց էր, որ քրդական «ազատագրական» շարժումների յենարանը քրդացման ուղին բռնած հայկական նահանգներն էին։ Քանի տարի անհրաժեշտ եղաւ Թուրք իշխանութեան այս ապըստամբութիւնը ճնշելու համար։ Ամբողջ 19-րդ դարի առաջին կի-

սին մրցումն էր տեղի ունենում Թուրքի եւ քրդի միջեւ այն հարցի շուրջ, թէ ո՞ւմ պիտի մնան հայկական նահանգները՝ աւատատէր քուրդի՞ն, թէ քաղաքական կենտրոնացման ձգտող սուլթանին: Այս պայքարի մէջ հայութիւնը ոչ խօսք ունէր, ոչ էլ որեւէ դեր, թէպէտ ունէր իր համակրանքը: Հայերը չմիացան քրդերին՝ հակառակ քուրդ ղեկավարների թափած բոլոր ջանքերին: Շատ տեղերում նրանք նոյնիսկ օգնում էին Թուրքերին՝ յատկապէս հայ քաղքենի դասը, արհեստաւորութիւնն ու առեւտրականները: Հայերի այս դիրքն հասկանալի էր: Քուրդն էր, որ քայքայում էր հայութիւնը իր բոլոր խաւերով: Քուրդը անիշխանութեան սերմանող ոյժն էր. նա չէր ճանաչում օրէնք եւ իրաւունք. օրէնքը իր քմահաճոյքն էր, աւարն ու աւերը՝ իր նպատակը: Նրա դինուած ուժի, հարստահարութեան դէմ հայը զրկուած էր պաշտպանութեան միջոցներից: Քրդի առաջացրած անապահովութեան, անկարգութեան, անիշխանութեան դէմ Թուրքը, որոշ չափով, հանդիսանում էր կարգի եւ օրէնքի ներկայացուցիչ: Հայերի՝ Օսմանեան գահին հաւատարիմ մնալը, այս ժամանակաշրջանում, մեծ նշանակութիւն ունեցաւ հետագային, աւելի ուշ, 70–80-ական թուերին երկու ժողովուրդների փոխյարաբերութեան խնդրում: Իրենց ապստամբութեան անյաջողութեան պատճառներից մէկն էլ քուրդերը համարեցին հայերին:

Քրդական ապստամբութեան ճնշումից յետոյ, 1856 թուին, կայսերական վարչութիւնը եւ զինուորական ոյժը ամրացան արեւելեան նահանգներում: Թուրքիայի քաղաքական կշիռը մեծացաւ: Նա շարունակեց հալածել, գլխատել անիշխանական, հակապետական տարրերը՝ քուրդ ղեկավարներին, մասամբ էլ այն փոքրաթիւ հայ խմբերին, որոնք միացել էին քրդերին: Միաժամանակ նա փորձեց բաւարարել հայերին՝ չնորհելով նրանց կրօնա-կրթական որոշ արտօնութիւններ, յանձին Ազգ. Սահմանադրութեան, որ մի տեսակ ինքնավարութիւն էր: Այս ինքնավարութիւնը ապաերկրային էր, կապուած էր ազգային-կրօնական պատկանելիութեան հետ եւ ոչ թէ որոշ երկրամասի: Ընդհակառակը, նոյն այդ օրերին նա անողոք պայքար էր մղում երկրային ինքնավարութիւնների դէմ Զէյթունի եւ Սասունի մէջ: Հայոց երկու ինքնավար շրջանների դէմ մղուած այս պայքարը շարունակութիւնն էր հալածանքների քրդական շարժումների դէմ: Օսմանեան Կայսրութիւնը մեծ ճիգերով փորձում էր դառնալ կենտրոնաձիգ միապետութիւն:

Թէպէտ քուրդ աշխարհիկ ղեկավարութիւնը ծանր հարուած կրեց եւ երկար ժամանակով ստիպուած եղաւ լքել քաղաքական ասպարէզը, նրան, սակայն, փոխարինեց քուրդ շէյխը՝ հոգեւոր

պետը, որ շատ շուտով հզօր ոյժ դարձաւ։ Քուրդը չդադարեցրեց գայքարը Թուրքի դէմ, բայց աւելի լարուեց Հայութեան դէմ։ Հայութեան կացութիւնը այժմ աւելի ծանրացաւ, որովհետեւ նա ընկաւ երկու իշխանութեան տակ՝ Թուրք-պետական եւ քրդական, որոնց դաժանութիւնը այժմ աւելի զգալի դարձաւ, քան թէ դարի առաջին կէսին։ 1824 թ. Օսմանեան Կայսրութիւնը փորձեց հողային բարենորոգումներ մտցնել կայսրութեան մէջ՝ նպատակ դնելով ջնջել զանազան միջոցներով առաջ եկած խոշոր կալուածատիրութիւնը եւ դրանով քայքայել հակապետական ուժերի նիւթական հիմքերը։ Այս բարեփոխութիւնը, սակայն, Հայաստանում չկիրառուեց։ Ապստամբութիւնից յետոյ՝ փորձ եղաւ դինաթափ անելու քրդերին, բայց այս էլ ամբողջութեամբ չիրագործուեց, որովհետեւ պետական շրջանակներում տիրում էր այն կարծիքը, թէ՝ «քրդերը միշտ պատրաստ զօրք են մեզ համար»։ Դարի երկրորդ կիսին, 60-ական թուերի վերջերից սկսած, քուրդ եւ Թուրք հակամարտութիւնը մեղմանում է, փոխադարձ ատելութիւնը թուլանում, եւ երկուսը իրարու մօտենում եւ գործակցում են։ Նրանց երկուսին էլ մտահոգում էր Հայութիւնը։

Թէ Հայաստանի հայ գիւղացիութիւնը ինչ կացութեան մէջ էր քուրդ իշխողների հովանու տակ, երեւում է 70-90-ական թուականներին արուած բազմաթիւ հրատարակութիւններից ու վկայութիւններից։ Հայ մամուլը լայնօրէն տեղ էր տալիս «երկրից» եկած թղթակցութիւններին. եւրոպացի ճամբորդները անհաշիւ փաստեր էին յիշում հայերի ճորտական վիճակի մասին. Կ. Պոլսի Պատրիարքարանը 1876-ին հրատարակեց իր «Տեղեկագիրք գաւառական հարստահարութեանց»ը։ Այս բոլոր պաշտօնական եւ անպաշտօն փաստաթղթերը միաբերան վկայում էին, որ քուրդ աւատատէրի հովանու տակ գտնուող հայ գիւղացիութեան մեծագոյն մասը զրկուել էր անձնական ազատութիւնից, անձեռնմխելիութիւնից, կորցրել էր իր հողը, տէրը չէր իր շարժական հարստութեան։ Նա քուրդ իշխողների հանդէպ ունէր աւատական կարգին յատուկ բոլոր պարտաւորութիւնները՝ հողային, հարկային, անձնական ծառայութեան, կոռ եւ բէգարի եւ զինուորական։ Աւատատէրի ընտանիքում աշխատում էին նաեւ հայ կանայք։ «Քուրդ կամ թուրք բէկերը, աղաները կամ դէրէբէյները գիւղացուն շահագործում էին, յափշտակում. նրանից վերցնում էին այնքան, որքան իրենք էին ցանկանում։ Գիւղացին ֆէոդալի համար կոռ ու բէկար էր կատարում, տղամարդիկ նրա համար տներ, բերդեր եւ ճանապարհներ էին կառուցանում, իսկ կանայք տնային աշխատանք կատարում։ Արեւմտեան Հայաստանի որոշ մասերում, մասնաւորապէս Մուշի, Բիթլիսի եւ Վանի գաւառնե-

բում, հայ գիւղացիութիւնը գտնուում էր ճորտական վիճակում», *գրում է սովետահայ պատմագէտ Մ. Ներսէսեանը իր շատ հետաքրքրական մէկ յօդուածում՝* «Հայաստանի տնտեսական ու քաղաքական դրութիւնը 1860–1880 թ. թ.»*): *Մենք տեսնում ենք, որ* 19-*րդ դարում հայ գիւղացու իրաւական կացութիւնը եւ նիւթական վիճակը շատ մօտիկ էր միջնադարեան Եւրոպայի ճորտական պայմաններին՝ միայն այն տարբերութեամբ, որ Եւրոպայում գիւղացիութեան կացութիւնը աստիճանաբար բարւոքուեց, ընդհակառակը, Հայաստանում* 19-*րդ դարի երկրորդ կիսին հայ աշխատաւոր գիւղացիութեան դրութիւնը աւելի վատթարացաւ: Դրա պատճառը պէտք է որոնել այն բանի մէջ, որ դարի առաջին կիսում քուրդը դեռ նոր էր նստում հայկական հողերի վրայ, նա միայն աւերում էր, աւարում եւ դերում, մինչդեռ երկրորդ կիսում արդէն հաստատուել էր հայ գիւղերում, զէնքով եւ իշխանութեամբ տիրացել էր հայ հողին եւ անձին, դարձել էր հայ մարդու տէրն ու հովանաւորը՝ հասցնելով նրան հողազուրկ եւ իրաւազուրկ ճորտի վիճակին, որ զրկուած էր շարժուելու, տեղափոխուելու եւ իր ունեցածը ժառանգելու իրաւունքից: Դրա վրայ աւելանում էր եւ այն, որ Թուրք իշխանութիւնն էլ հետապնդում էր հայի թուլացման՝ իր քաղաքական նպատակների համար: Բայց հենց այդ ժամանակներում,* 70-*ական թուերին, քրդական հարստահարութիւնները աւելի ուժգին թափ ստացան՝ Թուրք իշխանութեան եթէ ոչ անմիջական գործակցութեամբ, գոնէ լռելեայն համաձայնութեամբ: Հայ գիւղացիութեան կացութեան մասին բաւական է յիշել մէկ փաստ՝ հաղորդուած լաւատեղեակ աշխատակցից Կ. Պոլսի «Մասիս»ին,* 1872 *թուին.* «Մերազնեայ դաս մը ժողովուրդ, *գրում է աշխատակիցը*, որ ի Բռնաշէն, ի Խուբ, ի Սասուն, ի Շատախ գաւառներ քրդերու հետ խառն կ'ապրին: Նոցա գլխաւորներուն, որ խաֆիր կը կոչուին, ճորտ լինելով՝ ամենադառն կենցաղ վիճակուած է... Այս մարդակեր, գազան խաֆիրները ինքնագլուխ եւ ապստամբ վիճակի մէջ լինելով՝ իրենց ճորտ հայերը՝ կանամբ եւ որդւովք, շարժական եւ անշարժ կալուածներով՝ իրարու ծախու սովորութիւն ունին եւ երբ իրարու դէմ կատղին կամ թշնամանան, իւրաքանչիւրն իրենց հպատակ հայերուն բռնութեամբ առաջին ձգելով՝ իրարու սահման կ'ասպատակեն, կը վիրաւորեն, կ'սպանեն ու կը վերադառնան տեղերնին: Գերիի տէր խաֆիրները երբ մարդ ծնանին, ճորտի տունէն կառամբ եւ ոչխարով աչ-

---

*) «Տեղեկագիր Հայկ. Գիտ. Ակադեմիայի», 1946 թ. թիւ 10, էջ 42:

ֆալուսի պիտի գան, աղային զգեստցու պիտի տանին··· Երբ պատանեկութեան հասնին, զէնֆ պիտի պատրաստեն անոր··· եթէ մեռած էլ պատահի՝ ոչխար, իւղ, պանիր տանելով կը մխիթարեն զխափիրները: Բայց ընդհանուր ազգութեան նախատինքն այն կէտն է, որ նահապետացն հայոց պարկեշտութեան առագաստի յոյսը եւ սրբութեան բողի ներքեւ սնուած աղջիկներ այսօր հոլանի եղած, խափիրներու տան մէջ իբրեւ հարս, օրերով ձաւարը, կորկոտը շինելու, լաթը լուանալու, կարկտելու սպասարկութիւն կ'ընեն լոին արտասուելով եւ անոնց կլկլալի արտերը բաղհանելու շարաթներով կ'աշխատին՝ մերկ անձամբ եւ բորիկ ոտամբ արեւակեր եւ տօթահար եղած»: *Այս տողերի մէջ յիշուած կան հայ գիւղացու բոլոր պարտաւորութիւնները քուրդ խափիրի հանդէպ՝ եւ պարտաւորիչ սովորութիւն դարձած նուիրատուութիւն, եւ անձնական ծառայութիւն՝ կանանց եւ տղամարդկանց ե'ւ դինուորական օժանդակութիւն, այսինքն՝ այն ամէնը, ինչ որ փաստօրէն հային ճորտական կացութեան մէջ էր դրել քուրդ-աւատատիրոջ հանդէպ: Հայ գիւղացին իր եկամուտի մի դդալի մասը տալիս էր խափիրին, բացի սովորութեամբ սրբագործուած նուէրները: Այս նոյն թղթակցութեան մէջ թուարկւում են հետեւեալ բնատուրքերը, որ գիւղացին պարտաւորւում էր տալ իր տիրոջը. ամէն մէկ ընտանիք տալիս էր* «եօթը բեռ ցորեն, մէկ պանար, հինգ ոչխար, երկու լիտր իւղ, երկու օխայ ծխախոտ, մէկ լիտր չորթան, չորս լիտր աղ, մէկ շալուար, մէկ զոյգ զանգապան, մէկ զոյգ գուլպայ, մէկ զոյգ խոնջան, մէկ զոյգ գոգնոցի ժապաւէն, երկու ունկի վառօդ, երկու ունկի կապար··· երկու շերեփ, երեսուն գդալ, չորս հաւ, երկու աքաղաղ··· 1243 դուրուշ ըստակ»···

Այս թուարկումը ոչ միայն ցուցահանում է հայ աշխատաւոր գիւղացութեան նիւթական պարտաւորութիւնների չափը, այլեւ երեւան է բերում տիրապետող տնտեսութեան բնոյթը: Հայաստանը գերազանցապէս երկրագործական եւ անասնապահական երկիր էր եւ այնտեղ իշխողը բնատնտեսութիւնն էր, գերդաստանային տնտեսութիւնը: «Ընտանիքը» գերդաստանն էր՝ բազմաթիւ սերունդներ մէկ յարկի տակ հաւաքող եւ տնտեսութիւն ստեղծող: 19-րդ դարում Օսմանեան Հայաստանի բոլոր կողմերում կարելի էր հանդիպել այդպիսի բազմանդամ գերդաստանների, որ այնքան իրական եւ գունագեղ նկարագրել է Րաֆֆին «Խենթ»ի մէջ: Աւատական այս պարտաւորութիւնները միայն Սասունի եւ Խութի շրջանի հայերին յատուկ չէին, այլ ընդհանուր երեւոյթ էին կազմում՝ համատարած Արեւմտեան Հայաստանի բոլոր գաւառներում: Այդ մասին վկայում են ժամա-

նակի լաւագոյն դէմքերը՝ Ներսէս եպ. Վարժապետեան, Խրիմեան Հայրիկ, Գար. եպ. Սրուանձտեանց, Պօղոս վրդ. Նաթանեան, Աղգային Ժողովի ատենագրութիւնները, օտարներից Լինչը, Մակ-Կոլը, Պրէսանսէն, Լիխուտինը, Դիլոնը, Գրինը եւայլն: Այդ մասին առատ նիւթ կայ հաւաքուած նաեւ Հայաստանի Պետական Ձեռագրատան մէջ, ինչպէս եւ Գիւտ քահ. Աղանեանի «Դիւան Հայոց Պատմութեան» 13-րդ հատորում:

1890 թուին, մի խումբ արեւմտահայերի կողմից Մակար կաթողիկոսին գրուած նամակում հայերի կացութիւնը պատկերացուում էր այսպէս. «Ոչ մարդկային լեզուն եւ ոչ ալ նորա գրիչը չեն կարող նկարագրել այն բազմատեսակ ծանր դժբախտութիւնը, որ կրած ենք եւ կը կրենք: Մեր հայրենի հողի վրայ մեր կեանքը խաղալիք է դարձած մեր իշխողներու ձեռքին. մեր կեանքը անապահով դրութեանց մատնուած է, մեր ընտանիքը ամօթաբեր բռնութեանց, մեր զաւակները զոհ են դարձած կոպիտ ուժի, մեր դառն քրտինքով վաստակած հացը մեզնէ կորզելու, մեր զաւակները սովամահ կոտորելու ենթարկուած են, մեր եկեղեցիները կը սրբապղծուին եւ հրոյ ճարակ կը լինին, մեր սրբութիւնները կ'անարգուին եւ մեր հաւատը կը հայհոյուի եւ հոգեւորականութիւնը ենթարկուած է հինգերորդ դարում տեղի ունեցած բոլոր տառապանաց»*): Այս էր ահա հայի կացութիւնը Օսմանեան Հայաստանում բովանդակ 19-րդ դարի ընթացքին: Նա չունէր կեանքի եւ գոյքի ապահովութիւն, զուրկ էր ամէն իրաւունքից. կորցրել էր ամէն ազատութիւն: Մի տաղանդաւոր, ստեղծագործող եւ մշակոյթի մեծ ժառանգութեան տէր ժողովուրդ՝ հսկայ վայրէջք էր ունեցել եւ ապրում էր որպէս ճորտ՝ բարբարոսի բնազդով օժտուած քուրդի հարեւանութեամբ եւ օրէնք ու կարգ ոտնակոխ անող թուրքի գերիշխանութեան տակ: Այս փաստը մեր պատմութեան ամենէն դժբախտ երեւոյթներից մէկն էր: Թուրքը եւ քուրդը կասեցրել էին մեր պատմութեան բնական հոլովոյթը, պատնէշ կանգնել մեր մտաւոր եւ հոգեկան թռիչքի, մեր ստեղծագործական կարողութեան առջեւ:

Միխիթարական չէր հայ զանգուածի վիճակը նաեւ Ռուսահայաստանում: Ինչպէս Օսմանեան Հայաստանում, ռուսական բաժնում էլ հայութեան մեծագոյն մասը ապրում էր գիւղերում, որպէս երկրագործ՝ կապուած իր հողին եւ ջրին: Գիւղական հասոյթով ապրում էին նաեւ հայ փոքրաթիւ ազնուականներն ու կալուածատէրերը: Հայ գիւղացու եւ արտօնեալ դասի թիւը 80-ա-

---

*) «Տեղեկագիր Հայկ. Գիտ. Ակադեմիայի», 1946 թ. թիւ 10, էջ 52:

կան թուականներին հասնում էր 753,344-ի։ Գիւղական այս բնակչութիւնը ապրում էր կալուածատէրերի եւ վանքերի հողերի վրայ, այսինքն՝ գիւղացիութեան 30%-ը։ Եթէ ի նկատի ունենանք, որ նրա վրայ ծանրանում էր թաթար արտօնեալ դասի, մասամբ էլ վրաց սնանկացող ազնուականութեան տնտեսական եւ քաղաքական լուծը, ապա պատկերն ըստ ամենայնի պարզ կը լինի։ Հայ գիւղացիութեան չչափելի մի մասն էլ ապրում էր պետական հողերի վրայ. հետեւապէս՝ ազատ էր կալուածատէրերի ճնշումներից եւ բազմատեսակ հարստահարութիւններից։ Բայց այստեղ էլ ենթակայ էր ռուս ոստիկանական եւ անբարոյական ու կաշառակեր պաշտօնէութեան քմահաճոյքին։ Սրանք էլ, Օսմանեան պաշտօնէութեան նման, ռուս ժողովրդի վատթարագոյն տարրն էին եւ հաստատուել էին Այսրկովկասում բացառապէս տեղական ժողովուրդների հաշուին ապրելու, հարստանալու եւ հարստահարելու նպատակով։ Այս շահամոլ եւ պորտաբոյծ տարրն էր ռուսական ազդեցութեան եւ «մշակոյթի» տարածիչը։

Պարսկա-տաճկական աւատական կարգերից ազատուած հայ գիւղացիութիւնը աւելի քան կէս դար մնաց հայ, թաթար եւ վրացի աւատատէրերի իշխանութեան տակ։ Մէկ աւատական կարգը փոխարինուեց ուրիշով, թէեւ որոշ տարբերութիւն կար նրանց միջեւ։ Ռուսահայաստանում աւատական կարգն ապրում էր իր անկման եւ փոխանցման շրջանը։ Ազաները, բէկերը, խաները զրկուել էին վարչական, դատական եւ զինուորական իրաւունքներից, բայց պահել էին դեռ իրենց կալուածները եւ նրանց հետ կապուած մի քանի արտօնութիւններ։ Պետական իշխանութեան ձեռքն այստեղ աւելի էր զգացուում, բայց նա, շատ յաճախ, ծառայում էր արտօնեալ դասի շահերին, գործակցում էր թուրք, թաթար, վրացի բարձր դասի հետ ու ծանր կեղեքման ենթարկում հայ գիւղացուն եւ, ընդհանրապէս, թշնամական դիրք բռնում հայութեան բոլոր դասերի հանդէպ։

Բայց հայ գիւղացին Կովկասում լուռ ու մունջ չտարաւ իրեն դէմ հանած հարստահարութիւնները, այլ խնդրագրերով, բողոքներով յիշեցրեց բարձրագոյն իշխանութեան իր դժնդակ կացութեան մասին։ Նա մեղադրեց աւատատէրերին, պետական պաշտօնեաներին, նոյնիսկ շատ տեղերում զէնքի դիմեց նրանց դէմ։ Ճորտատիրական կարգի դէմ եղող այս շարժումները տեղի էին ունենում գլխաւորապէս Սիւնեաց աշխարհում, Ղազախի գաւառում, Նոր Բայազէտի գիւղացիութեան մէջ։ Այսպէս՝ Ղազախի գիւղացիները խնդրում էին ազատել իրենց «թուրք աղալարներից, որոնք պարսիկների արշաւանքի ժամանակ կողոպտում էին հայերին, իսկ այժմ կառավարում են նրանց»։ 1837 թ. Վայոց

Զորի գիւղացիութիւնը դանգատւում էր, որ «իրենք Պարսկաստանից գաղթելու օրից ադֆատութեան եւ չֆաւորութեան մէջ են ընկել միայն այն ենշումների հետեւանքով, որ նրանց պատճառում է Մահմեդ-Սադրխ բէկը»: Իսկ Քաւառի բնակիչները, զայրացած ու ըմբոստացած, յայտարարում էին. «Մենք չենք ուզում մելիքներ, տանուտէրներ եւ շրջանապետներ եւ նոյնիսկ կառավարութիւն»: Այս եւ տասնեակներով նման շարժումների մասին տեղեկագրում էր բարձրագոյն իշխանութեան իշխան Բէհբուտովը, որ եկել էր տեղն ու տեղը քննելու «Հայկական Մարզի» գիւղացիութեան դրութիւնը:

Նման բողոքներին եւ ըմբոստացումներին վերջ տալու եւ նոր տնտեսական ձեւերի առաջ ուղիները հարթելու նպատակով՝ կառավարութիւնը փորձում է լուծել գիւղացիական հարցը 1870 թ. Մայիսի 14 օրէնքով, որ, սակայն, իսպառ չոչնչացրեց կալուածատիրութիւնը, չվերացրեց նրա հետ կապուած աւատական-նիւթական արտօնութիւնները, չփոխանցեց յօգուտ գիւղացու կալուածական հողերը, չստեղծեց մանր գիւղացիական սեփականութիւն: 1882 թ. կառավարութեան միջամտութիւնն էլ մեծ դրական հետեւանքներ չունեցաւ: Ճիշդ է, կալուածատիրական հողերի մէկ մասը յանձնւում էր գիւղացիութեան, սակայն, այդ արւում էր այնպիսի բարձր գնով, որ գիւղացին անկարող էր վճարել եւ տէր դառնալ մի կտոր հողի: Եւ, ընդհանրապէս, հողային հարցը ամբողջ Այսրկովկասում չլուծուեց մինչեւ յեղափոխութիւն:

Մի հարց եւս հետաքրքրական է հայոց հասարակութեան կառուցուածքը եւ նրա արժէքը հասկանալու համար՝ ի՞նչ թիւ էր կազմում Ռուսահայաստանի ազնուական դասը: 1897 թ. վիճակագրութեամբ Այսրկովկասի մէջ հայ կալուածատէրերի թիւը հասնում էր 8511-ի, մինչ թուրք-թաթար ազնուականութեանը՝ 43,020-ի: Այս զոյգ թուերի համեմատութիւնը բաւական է կըշռելու համար թուրք-թաթար եւ հայ երկու հասարակութեանց որակը, արժէքն ու դերը: Հայ ազնուականութեան ստուար մեծամասնութիւնը կենտրոնանում էր քաղաքներում, մինչ թաթարականը՝ մնում էր կապուած իր կալուածներին, դառնում էր թաթար-թուրք դանդուածների ղեկավարը, այս պատճառով էլ նրա ենշումն ու շահագործումը աւելի էր զգալի գիւղացիութեան վրայ: Հայ ազնուական դասը կտրուելով հայկական հողից՝ կըտրում էր իր կապերը նաեւ հայութիւնից: Նա չէր ապրում համահայկական շահերով, չէր դառնում հայութեան քաղաքական ղեկավարը: Նա լծւում էր ռուսական սայլին, ձեռք էր բերում բարձր պաշտօններ եւ առաջնակարգ դիրք բանակում: Այս բոլո-

րի հետեւանքը եղաւ այն, որ 19–րդ դարի կէսերից վերսկսուող ռուսահայ ազգային–գաղափարական եւ յեղափոխական շարժումների մէջ հայ ազնուական դասը որեւէ դեր չունեցաւ, ինչպէս եւ հայոց յեղափոխութեան մէջ, մինչ Թուրք–Թաթարական, ինչպէս եւ վրաց ազգային շարժումների գլուխը կանգնեցին կալուածատէր–ազնուականները: Հայ ազնուականը չունեցաւ իր նախնիքների առաքինութիւնները, զուրկ մնաց քաղաքական ոգորումներից եւ հայրենիքի գաղափարից:

II
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ

19–րդ դարի երկրորդ կիսին Օսմանեան կայսրութեան քաղաքական տագնապը աւելի է սաստկանում. կայսրութեան վարիչները ընդունակ չեղան լուծելու իրենց առաջ դրուած խնդիրները: Կայսրութիւնը ազգերի պետութիւն էր. նրա իշխանութեան տակ ապրում էին սլաւոն ժողովուրդները, արաբները, յոյները, ռումանացիք, հայերը, քրդերը... Սրանք բոլորը զէնքի ուժով էին գրաւուած եւ զէնքի ուժով պահւում էին կայսրութեան մէջ: Զուտ էին ոչինչ ընդհանուր տիրող ցեղի հետ՝ ոչ պատմական անցեալ, ոչ մշակոյթ, ոչ լեզու, ոչ էլ իրաւունք եւ օրէնք: Այդ ազգերն ապրում էին մէկ ընդարձակ տան մէջ, որ կոչւում էր Օսմանեան պետութիւն, բայց անհաղորդ էին իրար, խորթ եւ թշնամի: Կայսրութեան դժբախտութիւնն այն էր, որ Թուրքը, իշխող ազգը, գրաւիչ ոչինչ ունէր հպատակների համար՝ ոչ իր կառուցած վարչութիւնը, ոչ իր մշակոյթը, ոչ լեզուն: Ինքն էլ փոքրամասնութիւն էր ընդարձակ պետութեան սահմաններում: Նա չէր կարող եւ չեղաւ առանցքը կայսրութեան մէջ ապրող ազգերի հաւաքման: Ազգերն ու ցեղերը ապրեցին կողք–կողքի՝ իւրանչիւրը իր հոգսերով, իր ներքին գործերով: Կայսրութիւնը առնում էր նրանցից ինչ որ լաւ էր, կարող, պիտանի եւ ընդունակ եւ գործադրում իր գոյութեան տեւականացման համար: Ոմանք մատակարարում էին զօրք, ոմանք ուժեղացնում էին նրան առեւտուրի եւ արդիւնաբերութեան մէջ, ջանում էին տնտեսապէս բարձրացնել կայսրութիւնը: Ոմանք ծառայում էին նրան արհեստների եւ արուեստների մէջ: Ոմանք էլ իրենց վարչական կարողութիւնները նուիրում էին նրա վերանորոգման: Օսմ. կայսրութիւնը ստեղծուեց ու զարգացաւ իր մէջ ապրող բոլոր ազգերի ճիգերով եւ ամենից քիչ թուրքի աշխատանքով: Նրա կառուցման, մեծացման վրայ աշխատեցին հպատակ ազգերը եւ բռնի ու կամաւոր թրքացածները: Ինքը՝ Թուրքը մնաց զինուոր, բանակի վարիչ՝

միշտ զէնքը ձեռքին հսկայ պետութիւնը պահելու համար։ Կայսրութեան պահպանումը դարձաւ Թուրքի միակ մտահոգութիւնը։ Եւ այս պահպանումն էլ նա չհասկացաւ որպէս ազգերի իրաւահաւասարութիւն՝ մարդու եւ քաղաքացու իրաւունքների գործադրումով։ Ընդհակառակն, Թուրքը շատ հեռու էր այս մտքից։ Կար եւ մի այլ կարեւոր պատճառ Օսմանեան Կայսրութեան Թուլութեան։ Դարերի ընթացքում նրա հասարակական կազմը մեծ փոփոխութիւն չկրեց յարմարուելով նոր պայմաններին. 19–րդ դարում էլ մնաց նոյնը, ինչ որ էր 16–17–րդ դարերում։ Նա կազմուած էր միահեծան արքունիքից, մոլեռանդ կղերից, կալուածատէր, աւատատէր ընչաքաղց փաշաներից, զօրք ու զօրականներից եւ անբարոյացած, կաշառակեր պաշտօնեաներից։ Սրանք ստեղծագործող ուժեր չէին, այլ սպառող ու վատնող։ Բազմացեղ, բարդ կառոյց ունեցող պետութիւն զարգացնելը նրանց կարողութիւնից վեր էր։

Ճիշդ է, Օսմանեան Կայսրութեան վարիչները չէին կարող չհասկանալ, որ ընկերային նման կազմով եւ պետական նման մեքենայով յարատեւել եւ իրենց գոյութիւնը պահել չէին կարող. այստեղից էլ՝ բարենորոգութեան բազմաթիւ փորձերը։ 19–րդ դարի Օսմ. Կայսրութեան պատմութիւնը բարենորոգութիւնների պատմութիւն է իբրեւ հետեւանք ներքին եւ արտաքին պայմանների։ Պէտք էր նոր սկզբունքների վրայ վերակառուցել բազմալեզու, բազմակրօն պետութիւնը. պէտք էր աւելի սերտ կապերով միացնել ազգերին ու ցեղերին կայսրութեան հետ։ 1839–ի Խաթը Շերիֆը, 1856–ի Խաթը–Հիւմայիւնը, 1876–ի Միդհատեան Սահմանադրութիւնը, 1908 թ. յեղափոխութիւնն ու Սահմանադրութեան հռչակումը փորձեր էին նոր ուղիների վրայ գնելու կայսրութիւնը։ Նրանք աւետում էին ազգերի ու ժողովուրդների նոյնիրաւութիւն, իրաւահաւասարութիւն, ապահովում էին խղճի, կրօնների ազատութիւնը եւ անձի եւ ստացուածքի անձեռնմխելիութիւնը, բոլոր ժողովուրդների հաւասարութիւն դատարանի եւ օրէնքի առաջ։ Բարենորոգութեան պիտի ենթարկուէր ամբողջ պետական մեքենան՝ վարչութիւն, զինուորագրութեան ձեւ, հարկաբաշխում, հողային հարց։ Ստեղծուելու էր ազատ, նոյնիրաւ Օսմանեան քաղաքացիների հասարակութիւն։ Կայսրութիւնը բռնելու էր եւրոպական ազգերի քաղաքական հոլովոյթի ուղին։ Բայց բարենորոգումների այս բոլոր փորձերը անցան ի դուր։ Զյաջողեցին, որովհետեւ Թուրք հասարակութիւնը ինքը հնամենի էր, չունէր իր մէջ այն ուժերը, որոնք նեցուկ կարողանային լինել իշխանութեան, կենսականօրէն շահագրգռուած լինէին պետական բարենորոգումներով։ Զկար եւ հասունացած,

գիտակից քաղքենի դաս, առեւտրական–արդիւնաբերական բուրժուազի եւ լուսամիտ մտաւորականութիւն: Թուրքը, որի ձեռքում էր գտնւում պետութեան ղեկը, տգէտ, մոլեռանդ կղերի, կաշառակեր եւ հայրենասիրութիւնից զուրկ պաշտօնեաների, հետրզհետէ ուազմունակութիւնը կորցնող զինուորականութեան եւ ախտի ու տգիտութեան մէջ թաւալուող կալուածատէրերի ու խաւարամիտ գիւղացիների հասարակութիւն էր: Սրանք ոչ միայն բարենորոգութիւնների պահանջը չէին զգում, այլեւ խստօրէն հակառակ էին:

Բարենորոգումները պետական ղեկավարութեան համար նպատակ չէին, այլ միջոց միայն արտաքին միջամտութիւններից ազատուելու, նոր միջամտութիւնների առիթներ չստեղծելու, որպէսզի մեծ պետութիւնները պատճառ բռնելով Օսմանեան ղեկավարների պետութիւնը կառավարելու անընդունակութիւնը՝ չանհանգստացնէին իրենց. «Բարեկարգութեան բոլոր փորձերը կը բխէին գլխաւորապէս Օսմ. Կայսրութեան ամբողջականութիւնը պահպանելու եւ աստիճանական անդամահատումի ու վերջնական անկումի առաջը առնելու մտահոգութենէն, ոչ թէ արդիական, յառաջադէմ, բոլոր բաղկացուցիչ տարրերուն համար ընդունելի պետութիւն եւ կարգ առաջացնելու հոգէն: Թուրք ժողովրդի հոգիին խորթ էր ամէն արմատական յեղաշրջում եւ խորթ մնաց մինչեւ վերջը: Թրքական բնազդին անհարազատ էր քրիստոնեայի հետ հաւասարութեան գետնի վրայ կենցաղ ստեղծել ու չստեղծեց», ճիշդ կերպով բնորոշում է Ա. Կեսար՝ «Հայկական հարցը 19–րդ դարուն» յօդուածում*): Խնդիրն, ի հարկէ, վերաբերում էր ոչ «թրքական բնազդին», ոչ «թուրք մտայնութեան», այլ ընկերային հոլովոյթի այն աստիճանին, որի վրայ գտնւում էր կայսրութեան վարիչ ազգը՝ Թուրքը, որ իր մէջ չունէր բարենորոգութիւն ցանկացող, յեղաշրջող ուժեր: Այստեղից էլ՝ «հին մտայնութիւնը» եւ «թրքական բնազդի» տեւականութիւնը:

Միաժամանակ, բարենորոգումների այս անյաջող փորձերի հետ, զարգանում էր մի ուրիշ երեւոյթ. հպատակ ազգերը, մանաւանդ քրիստոնեաները, ջանում էին ազատագրուել թրքական լուծից, անջատուել Օսմանեան կայսրութիւնից: Անջատման այս շարժումը սկսուեց Բալկանեան սլաւներից եւ յոյներից: Ազատագրուեցին Յունաստանը, Սերբիան: Աւելի ուշ նրանք պիտի պայքարէին իրենց հողերի ամբողջացման համար: Եգիպտոսը բռնեց ինքնավար գոյութեան ուղին, որ հետագային նրան պիտի հասցնէր լիակատար անկախութեան: Ռումանիան դարձաւ սկիզբը

*) «ՎԷմ», 1938, ԻԴ, էջ 7:

ինքնավար երկիր, ապա՝ միանդամայն անկախ պետութիւն։ Անկախութիւնների եւ անջատման այս գործողութիւնը ապացոյց էր, որ հպատակները վստահութիւն չունէին Օսմանեան պետութեան վերակառուցման փորձերի վրայ։ Ազատագրութեան նոյն փաստերի թուին է պատկանում նաեւ Հայոց Ազգային Սահմանադրութեան հրատարակութիւնը, որ մէկ անկատար փորձ էր հայերին բաւարարելու։ Նոյն բնոյթն ունէր նաեւ քրդական ապըստամբութիւնը, թէեւ սրա ղեկավար ուժերը հիմնովին տարբեր էին քրիստոնեայ ազգերի մէջ գործող ուժերից։

Եթէ համապետական չափանիշով բարենորոգութիւնները ունեցան անյաջող վախճան, բուն Հայաստանում նրանք բնաւ արձագանգ չգտան եւ նուազագոյն չափով իսկ չկիրառուեցին։ Ընդհակառակը, բարենորոգումների անյաջողութիւնը եւ Բալկանեան ժողովուրդների ազատագրութիւնը նորանոր, դժուար ու ծանր պայմաններ ստեղծեցին հայութեան համար։ Թուրք ղեկավար շրջաններում արմատացաւ այն միտքը, թէ կայսրութիւնը բարենորոգումների միջոցով անկարելի է փրկել, քանի նրա սահմաններում գոյութիւն ունեն ոչ–թուրք մեծամասնութիւն կազմող ժողովուրդներ։ Միաժամանակ Բալկաններում տեղի ունեցող ապստամբութիւնները եւ օտար միջամտութեամբ ձեռք բերուած ազգային անկախութիւնները, Օսմանեան կայսրութեան վարիչներին բերին այն համոզման, որ կայսրութեան ապագան Փոքր Ասիայի մէջ է, ուր թուրքը կազմում է բնակչութեան մեծամասնութիւնը։ Այստեղից՝ եւ նոր վերաբերում դէպի հայութիւնը։

Պատմական այս դէպքերի ազդեցութեան տակ, 1868 թուին, թուրք հասարակութեան մէջ ծնունդ է առնում «Իթթիհատ» քաղաքական կուսակցութիւնը, որի շուրջ համախմբւում են թուրք մտաւորականութիւնը եւ պետական գործիչներ։ «Իթթիհատը» հետապնդում էր Օսմանեան կայսրութեան պահպանումը, թուրքի գերադասութեան ապահովումը։ Նրա քաղաքական ծրագիրն էր՝ կայսրութիւնը թուրքերի համար։ Այս ծրագրի հիմքով էլ մշակուեց նոր գաղափարախօսութիւն, որի հոլովոյթի երկու փուլերն են՝ համիսլամութիւնը եւ համաթրքութիւնը։ Եւ այս նոր քաղաքականութիւնն ու նոր գաղափարախօսութիւնը ամենէն դաժան ու քայքայիչ ձեւով գործադրուեցին հայութեան վերաբերմամբ։

Հայ հասարակական գործիչներից շատերը չհասկացան Օսմանեան թուրքերի հետապնդած նպատակները. նրանք կարծում էին, որ հարստահարութիւնները արդիւնք են միայն ապիկար ու անբարեխիղճ պաշտօնէութեան եւ բարբարոս քրդութեան։ «Բա-

բեխնամ» իշխանութիւնը դեր չունէր եւ պատասխանատու չէր։ Հայոց հասարակական հոսանքների մէկ թեւը չափազանց նուիրուած էր Օսմանեան պետութեան եւ նրա վարիչներից էր սպասում հայութեան բախտի տնօրինութիւնը։ Բայց շուտով սրանք էլ համոզուեցին, որ թրքութիւնը իր բոլոր խաւերով ու քաղաքական վարիչներով հետապնդում է շատ որոշ նպատակ՝ թուլացնել, իսպառ ոչնչացնել հայութիւնը իր պատմական հայրենիքում։ Այս նպատակով, 19-րդ դարի կէսերից սկսած, մեծ քայլեր էին արւում Հայաստանը թրքացնելու համար. քաղաքները լցւում էին թուրքերով, ստեղծւում էր թուրք դիւղացիութիւն, Բալկաններից եկող դաղթականներին եւ Կովկասից դաղթող չէրքէզներին տեղաւորում էին հայկական հողերի վրայ, պետական պաշտօնեաների թիւը աւելացւում էր, զօրք ու զինուոր, ոստիկանութիւն էին լեցնում Հայաստանի քաղաքներն ու դիւղերը։ Սրանցից շատերը ներելի եւ աններելի միջոցներով հարստանում էին, դառնում մնայուն բնակիչ՝ դրաւելով քրիստոնեաների կալուածները։ Եթէ Օսմանեան Հայաստանը դարի առաջին կիսին բրդանում էր, երկրորդ կիսին նա սկսում էր թրքանալ, թէպէտ դանդաղօրէն։ Թրքացման այս դործողութիւնը ուղղուած էր արեւմուտքից արեւելք եւ 19-րդ դարի վերջին դեռ եւս իր մէջ չէր առել բովանդակ Հայաստանը։

Պատմական իրաղարձութեանց հետեւանքով հայութեան հայրենիքը կենսական արժէք էր ստանում թուրքի եւ կայսրութեան ապագայի տեսակէտից։ Հայաստանի համար այժմ պիտի պայքարէին երեք ուժեր — նրա բաղաքական տէրը՝ թուրքը, նրա պատմական տէրը՝ հայը, նրա իրական տէրը՝ քուրդը։ Թուրքը Հայաստանը համարում էր իր հայրենիքի անբաժան մասնիկը, առանց որի իր տիրապետութիւնը Փոքր Ասիայում իսկ կը վտանդուէր։ Քուրդը տարբեր ձեւով Հայաստանը դարձնում էր քրդական երկիր։ Վերածնուող հայը իր պատմական հայրենիքը աշխատում էր վերապահել իրեն եւ այնտեղ տեւականացնել ու կառուցանել իր ապագան։ Եթէ դարի առաջին կիսին Հայաստանին տիրելու համար պայքարում էին թուրքը եւ քուրդը, երկրորդ կիսին մրցողների շարքում աւելացել էր եւ երկրի բնիկ տէրը՝ հայը։ Այս է իմաստը 19-րդ դարի վերջին կատարուած բաղաքական մեծ դէպքերի՝ Հայկական Հարցի եւ հայ հասարակական գործիչների ու մտաւորականութեան հետապնդած նպատակների։ Բայց որպէսզի այս պայքարը յաջողութեամբ տարուէր, հայութիւնն ինքը պէտք է վերակառուցուէր, հոգեկան յեղաշրջման ենթարկուէր։ 50-80 թուերը իրօք այդ վերակառուցման շրջանը եղան՝ պայծառ ազգային ինքնաճանաչութեամբ օժտուած հա-

յութիւն ստեղծելու համար։ Վերստեղծման այս գործը տեղի էր ունենում, որպէս հակազդեցութիւն պետութեան քայքայիչ քաղաքականութեան։ Ճիշդ է, 80-ական թուերին էլ շատերը այն համոզումին էին, որ հայութեան ապագան Թուրքիոյ մէջ է, բայց եւ տեսնում էին, որ հայութիւնը այնտեղ դանդաղօրէն սպառւում է, փոքրանում է որպէս քանակ, դիմադրկւում է որպէս որակ. հայ հայրենիքը կորցնում է ազգային-հայկական նկարագիրը, թրքանում եւ քրդանում է։ Ո՞րն էր այն միջոցը, այն ոյժը, որ պիտի փրկէր հայութիւնը եւ հայ երկիրը նորէն դարձնէր հայոց հայրենիք, Հայաստան։

Տեսանք արդէն, որ 70-ական թուականներից սկսած հայ գիւղացիութեան կացութիւնը Օսմանեան պետութեան մէջ խիստ ծանրացաւ։ Նախ՝ նիւթապէս. հարկերը կրկնապատկւում են ու եռապատկւում։ Պետութեան ծախքերն աւելանում են. պատերազմը, բանակը, պաշտօնէութիւնը, արտաքին փոխառութիւնների հատուցումները, պալատը արտակարգօրէն մեծ դրամ են պահանջում։ Դրամի հայթայթումը մեծ մասամբ ընկնում է քրիստոնեայ բնակչութեան վրայ։ Բալկանեան ժողովուրդների ինքնավարութեամբ կամ անջատումով հարկատուների շրջանը սեղմւում է. այժմ Փոքր Ասիայում եւ Հայաստանում ապրողները պիտի վճարէին նրանց փոխարէն էլ։ 1835-1860 թուերին երկրագործական բերքերից հարկ առնում էին միայն ցորենից եւ գարուց, այժմ հարկի են ենթարկւում գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերն ու բոլոր անասունները, բոլոր հանքերը։ Գանձւում են ճանապարհի տուրքեր, մենաշնորհի՝ մոնոպոլի տուրքեր։ Զինուորական տուրքերը կրկնապատկւում են. տուրք առնում են նաեւ զինուորական տարիքին չհասածներից եւ զինուորական տարիքը վաղուց անցածներից. շատ յաճախ՝ մեռածներից էլ։ Ամէն տեսակ կենդանիների տուրքերը քսան տարուայ ընթացքին եռապատկւում են։ Բաւական չէ, որ տուրքերը արտակարգ չափի են հասնում, այլեւ աւելի խիստ, դաժան ձեւով են հաւաքւում։ Հարկերի մեծ մասը տրւում է կապալառուներին, որոնք պաշտօնեաների ու զինուորների օժանդակութեամբ անխղճօրէն շահագործում են գիւղացիներին։ Հարկատուն կապալառուի եւ պաշտօնեայի հանդէպ ոչ մէկ պաշտպան չունի։ Իր կեանքը, դոյքը, տարեկան հասոյթը վաշխառուների, կապալառուների ձեռքին է, կախուած է նրանց քմահաճոյքից։ 1895-ին, Տալւորիկի եւ Սասունի ու շրջակայքի բնակչութեան ներկայացուցիչները մի ընդարձակ զեկուցում են ներկայացնում «առ բարձր ֆնիչս եւրոպական մեծ պետութեանց», որի մէջ յիշում են հետեւեալ հարկերը, որ այդ աղքատ, լեռնային վայրերից իշխանութիւնը հա-

ւաքում էր. գլխահարկ, հողային հարկ, թէմէթու, ոչխարի տուրք, ինթիդալ, բնակարանաց հարկ, կրթական տուրք, ճանապարհաց, կամուրջների տուրք, ննջեցելոց գոյից տուրք, տասանորդի տուրք:

Տասանորդի՝ աշարի տուրքի տակ հասկացւում էր ցորենի, գարու եւ ընդհանրապէս հացահատիկների, այգիների եւ զանազան արմտիքներից եւ խոտից գանձած տուրքը: Երբեմն տասանորդը իջնում է մէկ եօթներորդի, իսկ շատ յաճախ «խեղճ գիւղացիին հետ կիսովին կը բաժնեն»: «Այս ամէն զրկանքները թէեւ օրինաց հակառակ են եւ ժողովուրդը կը բողոքէ կառավարութեան, սակայն, դատաւորներ պաշտպան եւ շահակից են միւլթէզիմին, ուստի եւ անլսելի կը մնայ բողոքն, եւ խեղճ գիւղացին ձեռք ծոցը դրած՝ յուսահատ տուն կը դառնայ»*):

Բայց աւելի ծանր է հարկերի եւ տուրքերի հաւաքման ձեւը. բերենք մի օրինակ միայն նոյն փաստաթղթից. «Կառավարութիւն յատուկ ոստիկաններ ունի, զորս կը գործածէ տրոց հաւաքման: Ամբողջ տարին անոնք գիւղերու մէջ փոփոխակի կը շրջեն ձիով. իրենց ուտելիքը պէտք է լինի մսեղէն, իւղեղէն, կաթնեղէն եւ համադամ խորտիկներ. ձիոց ալ՝ գարի, խոտ, յարդ, եւ մէկ ոստիկանի ծառայութեան համար ալ երկու մարդ՝ մէկն իրեն եւ միւսն ալ ձիուն... Երբ գիւղի մէջ մուտ կը գործեն, իրր մեծ բռնաւոր կը վարուին ժողովրդեան հետ. մինչ կէս գիշեր տնէ տուն հաւաքելով մարդիկ կը բանտարկեն իրենց իջեւանի ախոռի մէջ, ապա՝ մէկիկ մէկիկ կանչելով, տուրք տուողներ ծեծելով՝ կ'արձակեն, իսկ մնացեալ անկարողներն չուանով մը սեան կը կապեն պինդ եւ մերկացնելով կամ հանդերձներով՝ կժով ջուր կը լեցնեն գլխուն եւ կը ծեծեն, նրագ գլխու վրայ վառ կը դնեն՝ պահանջելով, որ անշարժ մնայ մինչեւ առաւօտ... Ոմանց ալ անասնոց եւ կենդանեաց աղբերով բերանին եւ երեսին կ'ածեն, այլեւայլ չարչարանքներ կուտան, մինչեւ որ մարդ կը պարտաւորուի կամ իր անասունը եւ կամ իր ստացուածքը կիսագնով՝ 100 դուրուշի բանը 20–30 դուրուշի վաճառել այն մսավաճառին, որ հետերնին կը տանին շահակից լինելու համար»... *Այս դրութիւնը բացառութիւն չէր, յատուկ չէր միայն Սասունի եւ Տարօնի հայութեան, այլ ընդհանուր երեւոյթ էր՝ համատարած ամբողջ Օսմանեան Հայաստանում:*

Եւ ոչ միայն պետութիւնն էր հարստահարում հայ գիւղացուն՝ կապալառուների, «աշար գնողների», միւլթէզիմների, պաշտօնեաների, ոստիկանների ու վաշխառուների միջոցով, այլեւ

---

*) «Դրօշակ», 1912 թ., էջ 252:

քուրդը իր գեկավար, աւատատէր վերնախաւով։ Նա եւս փորձում էր իր իշխանութեան նիւթական հիմքերը կանոնաւորել, պատահական եւ անկանոն բերքահաւաքումը, աւատական պարտաւորութիւնները վերածել մնայուն եւ կնոնաւոր ստացող հարկերի։ Գիւղացին այժմ հարկ էր վճարում թէ՛ պետութեան եւ թէ՛ քուրդ աւատատէրերին, անձնական ծառայութիւնները մատուցանում էր երկուսին էլ, որով սպառում էին նրա աշխատանքի օրերը։ Առանց որեւէ վարձատրութեան նա պարտաւոր էր աշխատել ճանապարհներ, կամուրջներ, տներ, զօրանոցներ կառուցանելու համար։ Քուրդին տրուելիք դրամը, բերքը առնում էր նոյն, երբեմն աւելի խիստ, դաժանութեամբ, ինչ որ իշխանութեանը։ «Քուրդ աշիրէթներու ապրուստը ամբողջովին հայոց վրայ է. անոր համար ցերեկ ատեն կուգան բան մը կը պահանջեն՝ կամ ցորեն կամ անասուն, եթէ խեղճը առ աղքատութեան չկարողանայ գոհացնել զինքը, գիշեր մարագ, խոտի դէզ կամ ցորենի բարդոցներ կ'այրեն. այս երկիւղէն թշուառ ժողովուրդը կը պարտաւորուի իր ամէն պահանջքը լեցնել»*)...

Այս բոլորի՝ ծանր հարկերի, դաժան տուրքահաւաքման, տեւական կեանքի եւ գոյքի անապահովութեան հետեւանքով քայքայւում, կործանւում են հայ գիւղացու ընտանիքն ու տնտեսութիւնը։ Գերդաստանի անդամներից շատերը՝ կենսունակն ու աշխատունակը լքում են տունն ու տեղը եւ դիմում պանդխտութեան։ Նոյն տեղեկագիրը յիշում է, որ Սասունի, Տալուորիկի ամէն գիւղ 30–50 ընտանիք պանդուխտներ ունի։ Գաղթածների տուրքերն էլ իրենց բոլոր ձեւերով բարդւում են գիւղում մնացածների վրայ։ Բնական է, որ այսպիսի պայմաններում ապրող հայ գիւղացին պիտի տառապէր աղքատութեան եւ տգիտութեան մէջ՝ առանց որեւէ տեղից յոյսի նշոյլ տեսնելու։ «Օսմանեան դատարանք հայու վերաբերեալ եւ ոչ մի դատ արդարութեամբ չեն վճռել, այլ ստոր պաշտօնեայէն սկսեալ մինչեւ ամենամեծն՝ կաշառքով գործ կը տեսնեն եւ արդարութիւնը անոր կը գոհեն։ Դատարանք քուրդի վկայութիւն հայի դէմ անմիջապէս կ'ընդունին, իսկ հայի վկայութիւն սնոտի պատճառով կը մերժեն, եւ քուրդն անմեղ կը հռչակուի»...

Օսմանեան Հայաստանում, 70–80 թուականներին, հայ գիւղացին ապրում էր քայքայման, անկման մի շրջան, որ ոչ միայն նրա տնտեսական փչացումն էր, այլ եւ հայոց հայրենիքի կորուստը եւ հայ ժողովրդի աստիճանական մահացումը։ *Հայութիւնը ցրւում էր, փախչում իր հայրե-*

---

*) «Դրօշակ», 1912, էջ 252–53։

նիքից, գաղթում էր Կ. Պոլիս, ծովափնեայ քաղաքները, Կովկաս, Բալկանները, Պարսկաստան, աւելի ուշ՝ հեռաւոր Ամերիկա: Եւ եթէ ի նկատի ունենանք, որ հայութեան մեծագոյն մասը գիւղացիութիւնն էր՝ հայ հայրենիքի պահողը, ապա պարզ կը լինի, թէ ինչ ահաւոր հարուած էր հասնում հայութեան եւ Հայաստանի վերակառուցման գործին: «Հայի ապագան Տաճկաստանումն է, ասում են կարնատեսները: Մենք չենք հասկանում, թէ ինչ ապագայ կարող է լինել մի երկրում, ուր կեանքի եւ կայքի ապահովութիւն չկայ» *դառնութեամբ գրում էր* Բաֆֆին: *Վերլուծելով հայոց հասարակութեան կառուցուածքը՝ Բաֆֆին գտնում էր, որ նա ունի վաճառականների եւ* «հողագործ մշակների» *դաս: Սպանիչ խօսքերով որակում է նա հայ վաճառականներին, որոք չունին ոչ անձնական եւ ոչ հասարակական արժանապատուութիւն:* «Մնում է մշակ դասը, որ հասարակութեան գլխաւոր ուժն է կազմում. նա իր հայրենի երկրում հանգստութիւն եւ ապրուստ չգտնելով՝ իր կեանքը նոյնպէս պանդխտութեան մէջն է անցկացնում եւ նրա ամուր ձեռքերը, որ հայրենի հողը պէտք է մշակէին, մեծ քաղաքներում զբաղուում են ստոր ծառայական պարապմունքներով: Եւ մշակը, արդար երկրագործը, ժողովրդի պարէնը հայթայթողը դառնում է համալ, բեռնակիր, գրաստ»*):

Պանդխտութեան եւ հայրենի հողի կորստի մասին խօսում են ժամանակի գրեթէ բոլոր հայ հրապարակագիրներն ու հասարակական գործիչները, ամբողջ հայոց մամուլը, վէպն ու բանաստեղծութիւնը: Դեռ 60-ական թուերի սկզբներից գաղթականութեան հարցի վրայ ուշադրութիւն էր դարձրել մեր մեծագոյն հրապարակախօսը՝ Մ. Նալբանդեանը. «Ազգը, *գրում էր նա*, օր ըստ օրէ թողնում է իր երկիրները եւ կենտրոնանում է քաղաքներում: Աղքատութիւնը ստիպում է նրան թողնել իւր տունը, իւր ընտանիքը, իւր ամուսինը, իւր զաւակները եւ գնալ Պոլիս եւ այլ քաղաք՝ աղքատութիւնից ազատուելու համար: Բայց այս տեղերում եւս նրա հանդէպ դուրս է գալիս էապէս նոյն աղքատութիւնը»*): *Նոյն պանդխտութեան աւերիչ հետքերի մասին խօսում են նաեւ* Խրիմեանը, Սրուանձտեանը *եւ ուրիշներ: Գաղթը դառնում էր հասարակական չարիք, որի պատճառը տնտեսական լինելուց առաջ քաղաքական էր: Տեսանք արդէն, թէ ինչ դիւային նպատակներով թուրք իշխանութիւնը Հայաստանում հաստա-*

---

*) «Տաճկահայք», էջ 82–83:

**) Մ. Նալբանդեան, «Երկերի Լիակատար ժողովածու», 1940, Երեւան, հատոր Գ., էջ 68:



տեց Կովկասեան չէրքէզներին եւ Բալկանեան դաղթականներին։ Օսմանեան քաղաքական ղեկավարները նրանց միջոցով հետապնդում էին Հայաստանի թրքացման ծրագիրը։ Միեւնոյն նպատակով կազմուեցին եւ քրդական Համիտիէ զօրամասերը, որոնք, իբր թէ, սահմանների պաշտպանութեան էին սահմանուած, բայց փաստօրէն կոչուած էին պատուհասելու հայութիւնը։ Քուրդն ու թուրքը սերմանում էին ընդհանուր անիշխանութիւն, որ սպանիչ էր գլխաւորապէս հայութեան համար։ Անիշխանութիւնը դառնում էր քաղաքական միջոց՝ հայութիւնը փոշիացնելու։

Մինչեւ 60-ական թուականները Հայաստանի դանդաղ մասերում դեռ գոյութիւն ունէր գիւղացիական մասնաւոր հողատիրութիւն, որ ազատ էր քրդական աւատատէրերի իշխանու-

թիւնից եւ հարկատու էր միայն պետութեան։ Բայց յետոյ, տեւական եւ համատարած անիշխանութեան հետեւանքով, ազատ գիւղացիութիւնը սկսեց կորցնել ե՛ւ իր հողը ե՛ւ անձնական ազատութիւնը։ Քրդական իշխող դասը եւ թուրք պաշտօնէութիւնը գրաւեցին նրա հողերը, որով աստիճանաբար չափազանց նուազեց այս կարգի հողատիրութիւնն ու գիւղացիութիւնը։ Պարբերական հողազրկման հետեւանքով ստեղծուեց հողազուրկների մի դաս, որի միակ հարստութիւնը իր երկու ձեռքերն էին։ Այդ դասն էլ, շատ յաճախ, պանդխտութեան էր դիմում, կամ քուրդ ու թուրք կալուածատէրերի տներում ծառայ մտնում։ «Իրաւականօրէն ազատ եւ սեփականատէր համարուող գիւղացին մշտապէս ենթակայ էր անլուր ճնշումների, հալածանքների եւ հետապնդումների։ Ամէն մի փիչ թէ շատ ուժեղ բէկ, աղա կամ թոռուն կարող էր առանց դժուարութեան խլել գիւղացիների հողը, տունը եւ կայքը։ 1870-ական թուականներին, երբ քրդական վերնախաւը իր օր աւուր աճող տնտեսական պահանջները բաւարարելու համար սկսեց մեծ կուտակումներ կատարել, արեւմտահայ գիւղացիութեան հողերի բռնագրաւումը ստացաւ մասսայական կերպարանք», *խոստովանում է սովետահայ պատմագէտը**)։

Այսպիսի պայմաններում էր ապրում հայ ժողովրդի մեծագոյն մասը 19-*րդ դարի երկրորդ կիսին։ Քուրդն ու թուրքը միացել էին՝ հայութեան դէմ կազմելով պայքարի ընդհանուր ճակատ։ Անհնար էր այս հակադրութիւնը լուծել խաղաղ ճանապարհով՝ համաձայնութեամբ։ Դրա համար պէտք էր մէկ բան, որ* թուրքն ու քուրդը ճանաչէին հային որպէս իր հողի տէր, տային նրան կեանքի եւ գոյքի ապահովութիւն, երաշխաւորէին նրա գոյութեան տարրական պայմանները, ստեղծէին մի միջավայր, ուր հայը կարողանար անկաշկանդ զարգանալ եւ գործօն դեր խաղալ իր բախտի տնօրինման մէջ։ Հայի համար այս կենսական պայմանները անկարող էին ստեղծել թուրքը եւ քուրդը- այդ պատճառով ծագեց Հայկական Հարցը։

III

ԻՐԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Արդ՝ ի՞նչ էր անում հայութիւնը իր գոյութեան, իրաւունքների, իր հողի եւ ազատութեան համար։ Եթէ թուրքն ու քուրդը

---

*) «Տեղեկագիր Հայկ. Գիտ. Ակադեմիայի», 1940, թիւ 10, էջ 45։

քայքայում եւ ոչնչացնում էին հայութիւնը, ապա փրկութեան եւ վերակառուցման ի՞նչ միջոցների էր դիմում հայ ղեկավարութիւնը: Այդ հարցի նկատմամբ հայ հասարակական միտքը մատնանշում էր երկու ուղի: Մէկը մշակւում էր բուն երկրից դուրս գտնուող հայութեան շրջաններում, միւսը՝ Հայաստանում ապրող ղեկավարութեան մէջ: Կայսրութեան ծովափնեայ քաղաքներում, յատկապէս Կ. Պոլսում հայերը մեծ թիւ էին կազմում եւ ապրում էին հաւաքական-ազգային հարցերով: Նրանք գտնւում էին, համեմատաբար, աւելի ապահով պայմանների մէջ. նիւթապէս բարգաւաճ էին, առերեւոյթ եւրոպականացած, գործնական մարդիկ էին, հաղորդակցութեան մէջ էին Արեւմուտքի հետ եւ մեծ արհամարհանք ունէին այն գաղթականների հանդէպ, որոնք փախչում էին «երկրից» եւ լցւում ծովափնեայ քաղաքները: Գաղթականութեան հարցը նրանց համար քաղաքական հարց չէր. նրանք բաւականանում էին շնչին բարեգործութեամբ օգնելով նրանց: Հայ առեւտրական այս շրջանակից էր, որ 19-րդ դարի կէսերին առաջացաւ մտաւորականների մի ստուար խաւ, որ ձգտում էր տեղ գրաւել հասարակական կեանքում: Նրա գործի ասպարէզը շատ նեղ էր եւ ոչ էլ հուշակ կամ անուն ապահովող: Հայոց միջավայրը գործ եւ դիրք չէր տալիս բոլորին, ուստի նրանցից շատերը իրենց կարողութիւնները ի սպաս էին բերում Օսմանեան Կայսրութեան՝ դառնալով նրա շինարարական գործի վարիչներ եւ քաղաքական խորհրդատուներ: «Թուրքահայ բանկային կապիտալի հետ կապուած այս սերնդի միջից էր հենց, որ Սուլթան Մէջիդի ժամանակներից ի վեր ասպարէզ ելան պոլսահայ դիւանագէտներ, ճարտարապետներ, փաստաբաններ, վաճառականներ: Սէրվիչէնից եւ Օտեանից զատ յայտնի դարձան նրանց համախոհները՝ Տատեան, Պալեան, Ռուսինեան, Երամեան եւայլն: Երամեանն ազդեցութիւն ունէր Սուլթան Ազիզի պալատում, Սէրվիչէնը եւ Գր. Աղաթօնը Ալի եւ Ֆուատ փաշաների բարեկամներն էին: Հանրածանօթ է, վերջապէս, Օտեանի եւ Միդհատի մտերմութիւնը»*)

Սրանք եւ սրանց գործակիցները եղան 60-ական թուերին Ազգային Սահմանադրութեան մշակողները, որի աղբիւրն էր 1856-ի Խաթը Հիւմայիւնը: Նա խոստանում էր քրիստոնեայ ազգերի առանձնանշորհումները վերամշակել, «սահմանել ժամանակի եւ քաղաքակրթութեան պահանջած բարենորոգումները»: Կ. Պոլսի մտաւորականութիւնը եռանդով գործի լծուեց եւ հա-

---

*) Մ. Նալբանդեան, «Անտիպ Երկեր», էջ 413. Ա. Ցովհաննիսեանի մեկնութեամբը:

սարակական բուռն ու երկար պայքարից, զանազան նախագծեր մշակելուց եւ վերամշակելուց յետոյ, ամբողջացրեց 1863 թուի Ազգային Սահմանադրութիւն, որով հայութիւնը դառնում էր ուրոյն կրօնական համայնք Օսմանեան պետութեան սահմաններում: Ըստ էութեան, Սահմանադրութեամբ փաստօրէն գոյութիւն ունեցող իրաւասութիւնները եւ կազմակերպութիւնները օրինական ձեւ էին ստանում: Հայ համայնքը ստանում էր եկեղեցական-վարչական, կրթական, բարեգործական եւ կալուածային իրաւունքներ: Նա ինքն էր վարում իր ներքին կեանքին վերաբերող գործերը, որոնք քաղաքական-պետական բնոյթ չէին կրում: Ըստ այսմ հայը դառնում էր ենթակայ երկու իշխանութեան. պետութեան հպատակն էր եւ ունէր նրա հանդէպ այն բոլոր պարտաւորութիւնները՝ ինչ որ ամէն հպատակ. հայ կրօնական համայնքի անդամ էր, որի իրաւասութիւնները որոշուած էին Ազգ. Սահմանադրութեամբ: Այս կրօնա-ազգային միութեան փաստացի ղեկավարութիւնը անցաւ Կ. Պոլսի հայ բուրժուազիայի ձեռքը: Սահմանադրութեան «հիմնական սկզբունքները» «ազգի» բոլոր անդամների իրաւահաւասարութիւն՝ նրանց իրաւունքների եւ պարտականութիւնների մասին լոկ վերացական դաղափարներ էին՝ քաղած Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան դաղափարների շտեմարանից: Նրանց միջոցով Պոլսի բուրժուական մտաւորականութիւնը իր ձեռքն էր առնում ազգային հասատութիւնները՝ եկեղեցական վարչութիւն, դպրոց, մշակոյթ: «Ազգը» Պոլսի հայութեան հարուստ դասն էր: Հայաստանի եւ դաւառաբնակ հայութիւնը երկար ժամանակ անհաղորդակից մընաց Սահմանադրութեան ընծայած բարիքներին:

Կայսրութեան ղեկավարները կարծում էին, թէ Ազգային Սահմանադրութեան յայտարարումով բաւարարած կը լինեն հայ հասարակութեան պահանջներին եւ, հետեւաբար, հայ-թուրք յարաբերութիւնները կ՚ընթանան գոհացուցիչ ձեւով: Եւ, յիրաւի, Սահմանադրութիւնը մշակող Պոլսի հայ մտաւորականութիւնը աւելի մեծ պահանջներ չունէր: Սահմանադրութեամբ նա լուծուած էր համարում հայութեան վերաբերող բոլոր հարցերը: Մոռացւում էր, սակայն, որ հայ ժողովուրդը կարիք ունէր ապահովութեան, հողի, ջուրի, որի տէրը այլեւս ինքը չէր. որ հայը որպէս անձ, բարոյական արարած դիմում էր դէպի կորուստ, դառնում էր ճորտ: Անտեսւում էր, որ Հայկական Հարցը ամենից առաջ քաղաքական եւ ընկերային հարց էր, որ Սահմանադրութեան ընծայած միջոցներով լուծել անկարելի էր: Կ. Պոլսի հայ քաղքենին այսպիսի հարցեր չէր դնում, որովհետեւ նման հարցադրութիւնը պիտի առաջնորդէր ուրիշ գործելակեր-

պի, որին աննրդունակ էին Սահմանադրութեան հեղինակները։

Սէրվիչէնը, այս հոսանքի ամենէն փայլուն դէմքերից մէկը, մտահոգուած էր հայոց ազգային եւ համապետական շահերի համաձայնութեան խնդրով. «Մենք պաշտօն ունինք, ասում էր նա, ոչ միայն ի նախնեաց մեզի աւանդած կրօնքս պաշտպանել, այլեւ ամէն պարագայի մէջ բոլոր խնդիրները միեւնոյն նպատակին ծառայել տալ, այն է՝ ազգային ոգու զարգացումը..., համաձայնեցնել մեր գործը բարեխնամ տէրութեան հանդէպ ունեցած ազգային պարտաւորութիւններուս հետ՝ օտար միջամտութիւն չընդունելով»... Սէրվիչէնը եւ իր գործակիցները զգում էին իրենց Օսմանեան քաղաքացի, «ամենահաւատարիմ եւ հանդարտ ու օգտակար հպատակներն էին Օսմանեան տէրութեան»։ Աւելի մեծ պահանջներ, քան ազգային- եկեղեցական ինքնավարութիւնը, կարող էր վտանգաւոր լինել պոլսահայ մտաւորականութեան դիրքին, մանաւանդ 70-ական թուերից սկսած, երբ կառավարութիւնը ջանում էր յոյներին եւ հայերին հեռացնել պետական պաշտօններից եւ փոխարինել թուրքերով։

«Օտար միջամտութիւնը» շատ աւելի պարզ եւ չչափելի է դառնում 10–15 տարի յետոյ, երբ Ռուսաստանը հարուածում է Օսմանեան պետութեան սահմանները։ Այդ օրերին էլ թէ՛ Ազգային ժողովը եւ թէ՛ Օսմանեան պարլամենտի հայ ներկայացուցիչները իրարու հետ մրցման էին ելել հայերի հաւատարմութիւնը ցուցահանելու համար։ «Եթէ այսօր Թուրքիոյ մէջ կը տեսնենք հայ ազգը, որ կը պահէ իր կրօնը, իր եկեղեցին, իր լեզուն, իր պատմութիւնը եւ աւանդութիւնը... նոյն բարեխնամ տէրութեան շնորհաց արդիւնքն է»։ Հարստահարութիւններ կան, այո՛, բայց նրանք կատարւում են «բարեխնամ տէրութեան կամաց հակառակ», շեշտում էր Ներսէս Վարժապետեանը։ Ուստի եւ հայութեան յոյսը Օսմանեան իշխանութիւնն է, հայութիւնը ոչ մէկ միջամտութեան, դրսից որեւէ երաշխաւորութեան կարիք չունի։ «Հայը նոյնիսկ իր ազգային շահերը պաշտպանած կ'ըլլայ, վասընզի Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը, պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է»։ Եւ այս բոլորը ասւում էր այն ժամանակ, երբ հայ ժողովրդի ողնաշարը խորտակւում էր իր դարաւոր հայրենիքում, երբ Հայաստանի ժողովուրդը կորցնում էր իր տունն ու տեղը, հողը, պատիւն ու կեանքը։

Պոլսահայ քաղքենիի այս մտայնութիւնը մի քիչ փոխուեց դէպքերի ազդեցութեան տակ, բայց, մանաւանդ, Հայաստանի կացութեան ծանօթանալու հետեւանքով, թէեւ նրա ղեկավարու-

թեան մէկ զգալի մասը մինչեւ վերջ էլ մնաց օրինականութեան սահմաններում՝ հաւատարիմ հպատակ Օսմանեան պետութեան: Նոյնիսկ պոլսահայ մեծ դէմքերից շատերը չէին հաւատում հայութեան վերածնութեան: Այսպէս, 1856-ին, Գ. Օտեանը գրում էր Խրիմեանին եւ համոզում նրան վերադառնալ Կ. Պոլիս. «Մի՛ սուտ յոյսերով պատիր քեզ, մի՛, զաւակ դու սիրասուն հայրենեաց, նոր փիւնիկ անոր մոխիրներուն մէջէն դուրս ելած... Հոս, հոյակապ պալատները... վարպետ ձեռքերու տակ կը բարձրանան ահաւասիկ. թո՛ղ այդ մոխիրները, դարձիր, հոս եկուր, որ բեհեզ եւ ծիրանի տեսնես քո աչուիդ»*):

Բայց ամենքը այսպէս չէին մտածում: Նրանք ովքեր ապրել ու գործել էին Հայաստանում եւ ծանօթ էին գաւառներում կատարուող դէպքերին, շատ լաւ հասկանում էին, որ Ազգային Սահմանադրութիւնը պակասաւոր գործիք է՝ անբաւարար հայութեան 'բախտը բարելաւելու: Սահմանադրութիւնը նոյնիսկ անկարելի էր կիրառել Հայաստանում, ուր հալածանքի ենթակայ էին և՛ եկեղեցին և՛ դպրոցը և՛ ուսուցիչն ու ուսանողը, ուր արգելուած էր հայերէն գիրքը: Սրուանձտեանցը, որ գործում էր ժողովրդի մէջ՝ Վասպուրականում եւ Տարօնում, հեգնում էր Սահմանադրութիւնը եւ նրա վարիչներին, «փափուկ ազգասէր» որակումն էր տալիս նրանց. «Ի՞նչ սահմանադրութիւն, ի՞նչ թաղական խորհուրդ, ի՞նչ ազգային ժողով, ի՞նչ առաջնորդ: Պսակը՝ շէխերու հրամանով կը լինի, քահանայից իշխան սոքա են ու վարիչ: Սոքա են երկրի առաջնորդ, դատաւոր եւայլն»**):

Սահմանադրութիւնը շատ առաւելութիւն էր պարունակում, բայց ունէր մէկ հիմնական պակասութիւն. նա անզօր էր հայի անձը եւ գոյքը ապահովել քուրդի եւ թուրքի բռնութիւններից. չէր կարող հային նոյնիսկ սրանց եւ հաւասար դարձնել քրդին եւ թուրքին. անկարող էր քուրդին զինաթափ անել կամ հայի ձեռքն էլ զէնք տալ. ի վիճակի չէր անբարոյական եւ ստոր հակումների տէր թուրք պաշտօնեային հեռացնել պաշտօնից եւ հային տալ իր երկրի վարչութեան դեկը: Ուստի եւ զարմանալի չէ, որ հայկական գաւառների ղեկավարութեան մէջ ամրացել էր այն մտայնութիւնը, որ հայութեան ապագան Սահմանադրութեան տրամադրած միջոցներով ապահովել անկարելի է: Սահմանադրութիւնը ապա-քաղաքական հայութեան մտայնութեան ծնունդն էր, մինչ հայկական հարցը հնարաւոր էր լուծել միայն քաղաքական միջոցառումներով:

---

*) «Դիւան Հայոց Պատմութեան», հատոր ԺԳ., էջ 53:

**) «Արծուիկ Տարօնոյ», 1864 թ., թիւ 1:

1867 թ. Խրիմեանը գրի է առնում իր «Բարենորոգութեան Ծրագիրը», որ ոչ միայն իրենն էր, այլեւ դաւառում գործող մըտաւորականներին ու հանրային գործիչներին, բոլոր նրանց, ովքեր նրա հետ միասին աշխատել էին Հայաստանում եւ լաւագէս գիտէին նրա պահանջները: Խրիմեանը դաւառական գործիչ էր. նրան խորթ էր Կ. Պոլիսը: Իր կեանքի մեծ մասը նա անցրել էր Վանում, Վարագայ վանքում, Մուշում: Տեւական շրջան մէջ էր եղել հայի, թուրքի, քուրդի՝ ժողովրդի բոլոր խաւերի հետ, ուստի եւ նրա առաջադրած բարենորոգումների ծրագիրը արժանի է առանձին ուշադրութեան: Խրիմեանի համար հայկական հարցը «Գիւղական ժողովրդի» հարց էր, հիմնականում «հայի եւ քրդի» յարաբերութեան խնդիր էր: Սակայն, նրանց մէջ մըխըրճուել էր մի երրորդ ոյժ, որ ոյժ էր տալիս մէկին եւ թուլացնում միւսին: Այդ երրորդ ոյժը Օսմանեան պետութիւնն էր: Խրիմեանը դեռ 1867-ին, շատ շատերի նման, հաւատում էր, որ կայսրութեան կենտրոնական իշխանութիւնը «բարեխնամ է», «արդար». տեղական՝ դաւառական իշխանութիւնն է պատասխանատու հարստահարութիւնների համար: Տեղական կառավարութիւնն է ստեղծում անիշխանութիւն եւ առաջ քաշում քրդերին «ընդդէմ տէրութեան կամաց եւ օրինաց»: Արդ՝ եթէ այս է կացութիւնը, ի՞նչ պէտք է անել Հայաստանի «գիւղական ժողովրդի» դրութիւնը բարելաւելու համար: Ինչպէ՞ս պէտք է լուծուի հայ-քրդական հարցը, որ բաւարարի հայութեան եւ միաժամանակ պետութեան շահերին ծառայի: Ըստ Խրիմեանի ընկերային ուսմունքի՝ գիւղն ու գիւղացին են հիմքը պետութեան, նրան պահողը եւ հարստացնողը: «Եթէ հողագործի խոփն ակօսի մէջ դադրի, անշուշտ զինուորի զէնքն իր պատեանի մէջ կը մնայ... երկրագործի խրճիթը եթէ փլչի, ձայնը կը հասնի մինչեւ տէրութեան պալատ: Արդ՝ ինչպէ՞ս կարելի է թոյլ տալ, որ հուրդի աւերածու ձեռքը հողագործի տունը քանդէ եւ պալատի սիւները խախտէ»*): Բայց Օսմանեան Հայաստանում այդ ամէնը թոյլատրւում էր, որովհետեւ ոճրագործ քաղաքական նպատակները աւելի դերադաս էին, քան ժողովրդի պետութեան նիւթական բարգաւաճումը: Խրիմեանը, սակայն, դեռ հաւատում էր, որ «բարեխնամ» պետութիւնը՝ ժամանակը եկած պիտի համարի այդ կացութեան վերջ տալու: Ի՞նչպէս:

Ըստ Խրիմեանի, նախ՝ էականը հրդութեան կենցաղի յեղաշրջումն էր. քուրդը պէտք է հրաժարուի իր վաչկատուն, թափա-

*) Խրիմեան Հայրիկ, «Ամբողջական Երկեր», 1929, Նիւ Եորք, էջ 857:



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ական կեանքից, որ այնքա՜ն աւեր ու տնտեսական քայքայում էր պատճառում երկրին եւ սրում նստակեացի ու վաչկատունի յարաբերութիւնները։ Մանաւանդ որ վաչկատունը տէր էր դարձել իր ուղիների վրայ ընկած հայկական գիւղերի, նստել նրանց մէջ եւ հարստահարում էր հայ բնակիչներին։ Քուրդը իր ընկերային կացութիւնը պէտք է փոխի՝ խաչնարած եւ քոչուորական կեանքից անցնելով նստակեաց կեանքի՝ երկրագործութեան։ Սրա մէջ էր հայ-քրդական հարցի լուծումը։ «Քուրդերը իրենց արդի անորոշ եւ անսահման դրութենէն հանելով, յատուկ սեփական հող եւ երկիր որոշել իրենց բնակութեան համար նոյն իրաւամբ եւ օրինօք, ինչպէս գիւղացի ժողովրդոց համար արդէն սահմանած է տէրութեան օրէնք»*)։ *Ուրեմն, քուրդը պէտք է ստանայ իր հողը. քրդութիւնը պէտք է ի մի հաւաքուի, եւ այս ոչ միայն քրիստոնեայ հայերից հեռու պահելու, այլեւ դիւրութեամբ նրանց կառավարելու համար։ Բայց Խրիմեանի պահանջը միայն այս չէ։ Նա առաջադրում է երկու հարց եւս. մէկը կապւում է հայ հողի, միւսը հայի ապահովութեան հետ։ Քուրդը գրաւել է հայկական գիւղերը, ղէնքը ձեռքին իշխում է անզէն*

*) Անդ, էջ 858։

հայի վրայ, յափշտակել է նրա հողը, տունը, «անիրաւութեամբ հողի տէր եղած է»։ Այս երեւոյթը համատարած է Հայաստանում. ստեղծուել է այնտեղ երկու հասարակութիւն, որոնցից մէկը ապրում է միւսի հաշուին։ Գիւղատէր եւ հողատէր «այս թռուցիները եւ սոսկական ֆիւրդերը», «այս մասնաւոր տուները պէտք է բառնալ այն ամէն գիւղերէն, ուր կը գտնուին եւ խառնել զիրենք իրենց ցեղերուն հետ եւ այս միջոցով նախ այդ գիւղերը կ'ազատուին նոցա անմիջական եւ վերահաս բռնութենէն»։

Խրիմեանը այսպիսով շօշափում է շատ կարեւոր մի խնդիր, այսպէս ասած՝ Հայկական Հարցի ընկերային բովանդակութիւնը. քուրդ աւատապետութիւնը պէտք է վերջանայ. հայի անձն ու հողը պէտք է ազատագրուին։ Բայց այս եւս քիչ է. անհրաժեշտ է, որ քուրդը բոլորովին անվտանգ դառնայ. քրդական իշխող վերնախաւը անպայման անջատելով եւ բաժանելով իր իսկ ազգակից՝ քրդական զանգուածներից, կենտրոնացնելով մէկ տեղ եւ վարժեցնելով նոր աշխատանքի ու նոր կեանքի։ «Ոչինչ դժուարութիւն չկայ այս փոքրաթիւ մասին համար պէտք եղած կարգադրութիւն առնել, դաշտային եւ լեռնական կեանքէն հանել զիրենք եւ տեղափոխել քաղաքներու մէջ»։ Ուրեմն, Խրիմեանը առաջարկում է քրդութեան ընկերային կեանքը ենթարկել մի մեծ յեղաշրջման։ Այդ վիրաբուժական գործողութիւնը երկու դէմք ունի. նախ՝ քուրդ հասարակութիւնից անջատել, մեկուսացնել նրա վարիչ, ռազմունակ, բայց նաեւ կեղեքիչ եւ քայքայող վերնախաւը, որով ազատագրուած կը լինի նաեւ քուրդ աշխատաւոր զանգուածը, որ նոյնպէս ենթակայ է իր «թռուցիների» հարստահարութեան։ Երկրորդ՝ մեկուսացրած քուրդ ազնուականութեան ձեռքից առնել զէնքը եւ տալ նրան արհեստաւորի գործիքներ եւ գիւղացու բահն ու բրիչը, արօրն ու գութանը։ Թէ՛ աշխատանքի այս յեղաշրջումը, թէ՛ սեփական ցեղակից զանգուածներից կտրուած լինելը որոշ ժամանակից յետոյ իրենց յեղափոխիչ դերը կը կատարեն եւ քուրդից դուրս կը բերեն կենսունակ, աշխատասէր մի նոր հասարակութիւն։ Խրիմեանը նոյնիսկ գիտէ, թէ ինչ միջոցներով պիտի կատարուի այս բանը։ Նա առաջարկում է քրդերին «Վանայ սահմանէն Կարին բերել, Կարնոյ եւ Մշոյ սահմանէն ի Վան տանել»։ Այս տեղափոխութեան ժամանակ կը կտրուին կամ կը թուլանան ցեղակցական եւ տեղակցական կապերը քրդութեան մէջ եւ նոր միջավայրում նրանք կը դառնան անվտանգ։ Ըստ Խրիմեանի, նոյնիսկ կարելի է վերաշինել «հին եւ աւերակ Մանազկերտ քաղաքը եւ այնտեղ բնակեցնել թռուցիներին՝ տալով նրանց տուն ու հող»։ Իսկ ինչ վերաբերում է քուրդ զանգուածներին, նրանց պէտք է կենտրո-

նացնել որոշ վայրերում՝ ստեղծելով քրդական համախմբումներ։ Այստեղ էլ նոյն անվստահութիւնը քուրդի հանդէպ. որպէսզի այս քրդութիւնն էլ որեւէ վտանգ չսպառնայ հայութեան եւ վտանգաւոր չլինի պետութեան համար, Խրիմեանը պահանջում է քրդութեան ամբողջական, համատարած զինաթափութիւնը. «Մինչեւ քրդերու զէնքերը իրենց ձեռքէն չառնուին, անհնարին է, որ նոքա զիջանին երկրագործութեան մանը բռնել եւ սուրին տեղը երկաթի խոփն ընդունին»։

Թուրք իշխանաւորներից շատերը պնդում էին, որ քուրդը, որպէս զինեալ ոյժ, անհրաժեշտ է պետութեան պաշտպանութեան համար։ Խրիմեանը «անստոյգ կարծիք» է համարում այդ։ Արեւելեան պատերազմի ժամանակ «այս կարծեցեալ քաջ շահատակներ, տէրութեան բանակին առաւել խոչընդոտներ եղան կուռոյ ասպարէզին մէջ նոքա իրենց աւարը կ'որոնէին եւ միանգամայն եւս ի փախուստ կը դառնային թնդանօթների ձայնէն»։ Խրիմեանը փորձում է քրդական հարցը լուծել ոչ միայն հայկական, այլեւ համապետական շահերը ի նկատի ունենալով, գտնում է, որ քուրդը վտանգաւոր եւ վնասակար է թէ՛ խաղաղութեան եւ թէ՛ պատերազմի ժամանակ։ Քրդութիւնը որպէս քանակ եւ հաւաքականութիւն պէտք է պահել, բայց որպէս որակ անհրաժեշտ է վերացնել. քուրդը չպէտք է մնայ որպէս իշխող, զէնքը ձեռքին, անիշխանութիւն սերմանող տարը։ Սրա համար քուրդ զանգուածներին, զինաթափ անելուց յետոյ, պէտք է հող տալ, նստակեաց դարձնել։ Ի մի հաւաքուած եւ նստակեցութեան անցնող քրդերի վրայ դեռ երկար ժամանակ անհրաժեշտ պիտի լինի պետական վերահսկողութիւն, որովհետեւ նրանց մէջ հին աւատատէրը եւ վաշկատունի բնազդը կարող է արթնանալ։ Ուստի կարեւոր է նրանց ապրած վայրերում, «յարմար դիրքերու վրայ» մի քանի փոքր զօրանոցներ հաստատել։ Մէկը Ապաղայի դաշտում, երկու զօրանոց էլ Վանի եւ Մուշի հարաւային կողմերը։

Բայց ո՞վ պիտի կատարի ընկերային այս յեղաշրջումը։ Խրիմեանը պատասխանում է՝ Օսմանեան Կայսերական կառավարութիւնը, որովհետեւ նա առաջնորդուելու է միայն պետական շահերով, իսկ քրդի ընկերային կազմը եւ աշխատանքը դէմ են պետական շահերին։

Այդ նոյն ժամանակ, ռուսահայութեան մեծագոյն դէմքերից մէկը՝ Րաֆֆին իր դրական եւ հրապարակախօսական ամբողջ կարողութիւնները ծառայեցնում էր Օսմանեան հայութեան ազատագրական գործին։ Ոչ միայն նա, այլեւ ամբողջ ռուսահայ մամուլը, յառաջադէմ մտաւորականութիւնը զբաղուած էր հայկական հարցի քննութեամբ։ Այդ հարցը հերթական էր. մնացած

խնդիրները յետ էին մղուած։ Ռուսահայութիւնը ինքն ունէր հրատապ հարցեր՝ հողային-գիւղացիական, դպրոցական, դրամատիրութեան սրարշաւ զարգացման հետեւանքով ստեղծուած բանուորական խնդիր, ռուսացման վտանգ, հալածանք հայ մշակոյթի եւ մտաւորականութեան դէմ, ռուս գիւղացիների տեղաւորում հայկական հողերի վրայ, սակաւահողութիւն, գիւղացու արտագաղթ դէպի Այսրկովկասի առեւտրա-արդիւնաբերական կենտրոնները — կարեւոր ու հրատապ նոր հարցեր, որոնց վրայ միտք պիտի յոգնեցնէր հայ մտաւորականը եւ հանրային գործիչը։ 40–50-ական թուականներից սկսած ստեղծւում էր Ռուսահայ Հարց, որի դոյութիւնը զգում էին արդէն Խ. Աբովեանը, Ներսէս Աշտարակեցին, Ստ. Նազարեանը եւ ուրիշներ, որոնք խանդավառ ռուսասէրներ էին, թէեւ աստիճանաբար հայկական պահանջները հակադրելու էին ռուսական քաղաքականութեան։ Այդ ամէնը, սակայն, յետին դծի վրայ անցաւ, երբ հրապարակ եկաւ Թրքահայութեան ազատագրութեան հարցը։

Բաֆֆին երկու ծրագիր ունի Հայկական Հարցի լուծման։ Մէկը, նուազագոյնը՝ Հայոց Հարցի լուծումը Օսմանեան Կայսրութեան սահմաններում։ Դա ժամանակաւոր մի կարգադրութիւն է՝ կապուած հայութեան ուժերի անկազմակերպ եւ անբաւարար վիճակի հետ։ Երբ հայը կը մեծանայ քանակով ու որակով, իր Հարցը կը լծուի Օսմանեան Կայսրութեան սահմաններից դուրս՝ ստեղծելով ազատ ու անկախ Հայաստան։ 1876 թ. Բաֆֆին գրում է իր «Ի՞նչ վերանորոգութիւններ են պէտք Տաճկական Հայաստանին» յօդուածը*), որի մէջ մշակում էր իր նուազագոյն ծրագիրը։ Ըստ այդ ծրագրի, Հայկական Հարցը ամենից առաջ եւ ամենից շատ հողային հարց է, բուն, պատմական Հայաստանի հողերի վրայ ապրող ժողովուրդի հողազրկման եւ քայքայման հարց։ Միւս հարցերը՝ հարստահարութիւն, հալածանք ժամանակաւոր, անցողիկ երեւոյթներ են՝ կապուած քրդութեան կենցաղի եւ թուրք պաշտօնէութեան ապիկարութեան, կայսրութեան հնամենի վարչութեան հետ։ «Ինչ վերաբերում է մուլթէզիմների-կապալառուների հարստահարութիւններին — հարկերի ծանրութեանը, որոնցով կողոպտւում է մշակ դասը, ինչ որ վերաբերում է զանազան բռնակալների եւ դէրէբէգիների կեղեքումներին, մենք համարում ենք այդ բոլորը ժամանակաւոր անկարգութիւններ, որոնցից ազատ չեն մնում նոյնիսկ մահմեդականները եւ որոնք Թուրքիայի ընդհանուր բարեկարգումների ժամանակ միայն

*) «Տաճկահայք», 1913, Վիեննա։

կարող են կարգի եւ օրինաւորութեան մէջ դրուել»։ Մնայունը

Հայկական Հարցի մէջ հողն է ու ժողովուրդը։ Եթէ լուծուի առաջինը, մասամբ կը լուծուի նաեւ երկրորդը։ Տաճկաստանում սեփականութեան անապահովութիւնը եւ, հետեւապէս, ապրուստի դժուարութիւնը կայանում է գլխաւորապէս այն բանի մէջ, որ հայը հող չունի, այս պատճառով նա կեանքի հաստատուն հիմք չունի»։ Եւ այսպէս է, որովհետեւ մահմեդական օրէնքը հողի միակ տէր ճանաչում է իշխողին՝ Սուլթանին, որպէս Աստուծոյ ներկայացուցչի. երկրագործը միայն վարձակալ է։ Ընդհերը միայն այս չէ, այլ եւ այն, որ այս իրաւական դրութիւնը պետութիւնը օգտագործում է իր քաղաքական նպատակների համար. հողային հարցը սերտօրէն կապւում է իշխանութեան այն վերաբերումին հետ, որ թուրք ղեկավարութիւնը մշակել էր հայութեան հանդէպ։ Հայը պէտք է դառնայ իր մի կտոր հողի տէրը. նրա հողատիրական իրաւունքը պէտք է լինի հաստատ եւ մնայուն. «Հային իր հայրենի երկրի հետ կապելու համար, գաղթականութիւնը դադրեցնելու համար միակ եւ ամենակարեւոր միջոցն է նրան իրաւունք տալ ազատ կալուածատէր լինելու, որ նա որպէս սեփականութիւն իր հողն ունենայ եւ նրանից ամէն կերպով օգտուելու իրաւունք ստանայ... Նա չպիտի լինի վարձակալ, այլ հողը պիտի լինի նրա համար մի հաստատուն ժառանգութիւն, որ անցնում է սերնդից սերունդ, որ նա կարող է գնել, վաճառել, գրաւ դնել, մի խօսքով՝ վարուել նրա հետ որպէս իրեն պատկանող սեփականութեան հետ»։ Հողային հարցի այսպիսի լուծումը սանձ կը դնէ կառավարութեան եւ նրա պաշտօնեաների բերանին, նրանք իրաւապէս անկարող կը լինեն իրենց քմահաճոյքի համաձայն հողային բռնագրաւումների եւ հողը ուրիշին յանձնելու խնդիրներ յարուցանել։ Բաֆֆին՝ հողի մասնաւոր սեփականութեան սկզբունքը պաշտպանում է, որպէս նուազագոյն ծրագիր Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող հայութեան համար։ Այս պահանջը իւրայատուկ հողային ապահովութեան խնդիր է։ Հեռաւոր ապագայում ստեղծուելիք ազատ եւ անկախ Հայաստանում մասնաւոր սեփականութեան խնդիրը տեղի է տալու աւելի բարձր սկզբունքի՝ համայնական սեփականութեան առաջ։ Արդ՝ տուեալ պայմաններում «եթէ նա (Պատրիարքարանը) ցանկանում է, որ հայը արմատ ձգէ Հայաստանի հողի վրայ, պէտք է նրա տէրը լինի, պէտք է նրանից ծծէ իր սնունդը, ինչպէս մանուկը մօր ստինքներից»։

Հողի հետ կայ նաեւ ժողովրդի՝ հայութեան ապահովութեան հարցը։ Պատմական իրադարձութեանց հետեւանքով հայն ապրում է «զանազան վայրենի ցեղերի» հետ, որոնց հարեւանութիւնը եւ զինուած լինելը մի դժբախտութիւն է հայութեան համար։



ՐԱՖՖԻ

կայսրութիւնը անկարող երեւաց սանձահարելու քրդերին։ Թուրքը անիշխանութիւն սերմանող տարր է, հայը՝ այդ անիշխանութիւնից տուժողը։ Ըստ Ռաֆֆիի, միայն մէկ միջոց կայ այս կացութիւնը վերացնելու՝ թոյլ տալ, որ հայն էլ զինուի եւ իր ինքնապաշտպանութիւնը իր ձեռքն առնի. «Հայերին պէտք է թոյլ տուած, որ իրանք իրենց պաշտպանեն եւ այդ այլ կերպ լինել կարող չէ, բայց միայն իրաւունք տալ, որ հայերը զէնք կրեն, որպէս իրենց դրացի ազգերը»։ *Այս պահանջը՝* զինուած հայութեան ստեղծումը, *Ռաֆֆին պատճառաբանում է նրանով, որ Թուրքիա անընդունակ է իր հպատակների անձը եւ գոյքը ապահովելու, ապա՝* «Թուրքիան բնակեցրած է այնպիսի ցեղերով, որոնք

իրար հետ մշտապէս կռուում են, որոնք միմեանց հետ մրցում են սրով միայն: Ի՞նչով կարող է ընդդիմանալ նրանց անզէն հայը», *Թրքական կառավարութիւնը ոչ միայն չէ կարող, այլեւ չի ուզում քրդերին զինաթափ անել: Ցանձինս քրդերի նա տեսնում է իր լաւագոյն զինուորներին, որոնց կարող է գործածել հայերին կեղեքելու, թուլացնելու, որպէս որակ եւ քանակ անվնաս դարձնելու համար: Հային մի բան է մնում՝* «ինքն իր գլուխը պահպանել»: *Եւ դա հնարաւոր է միայն այն ժամանակ,* «երբ նա զէնք կրելու իրաւունք կ'ունենայ»: *Պէտք է ստեղծել* «հայկական միլիցիա», *հայկական նահանգներում, որ պաշտպանէ հայութիւնը:*

Կայ լուծելիք եւ մի երրորդ խնդիր, որ Բաֆֆին բանաձեւում է, որպէս «իրաւունքի անպաշտպանութիւն»: *Հայը մահմեդականի հետ նոյնիրաւ չէ. նա երկրորդական հպատակ է, զրեթէ օրէնքից դուրս: Եւ այդպէս է, որովհետեւ տիրապետողը իր առօրեայ կեանքի բոլոր յարաբերութիւնները կարգաւորում է* «Շարիաթի օրէնքով»: *Հայը այդ օրէնքին չի ենթարկւում, որպէս ոչ-մահմեդական: Օսմանեան կայսրութեան դժբախտութիւնն այն էր, որ նա չկարողացաւ ստեղծել նոյնիրաւ եւ հաւասար քաղաքացիների հասարակութիւն: Սրա համար պետութիւն եւ կրօն խստօրէն պիտի բաժանուէին իրարից, մշակուէին նոր օրէնքներ՝ աշխարհիկ հիմունքներով՝ միանգամայն ազատ մահմեդական կրօնի թելադրած օրէնքներից: Թուրքիան փորձեց բարենորոգումների միջոցով ստեղծել նոյնիրաւ հասարակութիւն, բայց չյաջողեց:* «Ուրիշ կերպ անկարելի է, քանի որ այդ օրէնքը (Շէրիաթ) իր մէջ ունի շատ սկզբունքներ, որ հակառակ են հաւասարութեան գաղափարին, որ խտրութիւն են դնում այն բոլոր ազգերի վերաբերութեամբ, որոնք չեն պատկանում իսլամին: Եթէ մինչեւ այսօր Սուլթանների հրատարակած բոլոր խաթթիները եւ ֆերմանները մնացել են անգործադրելի, պատճառը Շէրիաթի զօրեղ ընդդիմութիւնն է եւ ոչ այլ ինչ»: *Հայերը չեն կարող յեղաշրջել կայսրութեան իրաւական-քաղաքական կազմակերպութիւնը, այլ պէտք է ջանան եղած իրաւական առանձնաշնորհումներից լաւագոյն օգտուել: Հայերը ձեռք են բերել* Սահմանադրութիւն, *որ պէտք է յարմարեցնել, ընդարձակել եւ գործադրել հաւաքական հայութեան գոյութեան եւ պաշտպանութեան համար: Սահմանադրութիւնը պակասաւոր է.* «Հայոց ազգային Սահմանադրութիւնը ունի աւելի կրօնական բնաւորութիւն, նա չի անցնում բուն ազգային գործերի սահմաններից, որպիսին են՝ դպրոց, եկեղեցի եւայլն»: *Իսկ այս բոլորը անբաւարար միջոցներ են հայի հողը ազատագրելու, նրա կեանքն ու գոյքը ապահովելու համար: Արդ՝ ի՞նչ է պահանջում Բաֆֆին: Նա խոստովանում է,*

որ անկարելի է թուրքերից նոր բան պահանջել. պէտք է եղածը, մէկ անգամ ձեռք բերածը ամրողջացնել, լրացնել. «Պէտք է պահանջել, որ լրացնեն, կատարելագործեն այն արտօնութիւնները, ինչ որ մի անգամ շնորհուած է հայերին, թէեւ անկատար կերպով»: Իսկ եղածը պէտք է լրացուի «քաղաքական իրաւունքներով»: Նորոգուած, լրացուած Սահմանադրութիւնը պէտք է ընդգրկէ «հայերի թէ՛ եկեղեցական, թէ՛ քաղաքական եւ թէ՛ քրէական բոլոր գործերը»: Եւ որովհետեւ հայերն աւելի պատրաստուած են, աւելի փորձառու, քան ուրիշները, ուստի «իրենց գործերն իրենց մէջ իրենց ձեռքով կը վճռէին»: Այս պահանջը, ինչ անունով էլ որ յայտնի լինի, տեղական ինքնավարութեան պահանջ է, միայն Օսմանեան իշխանութիւնը չիրաւունքներ՝ Բաֆֆին կոչում է՝ Սահմանադրութեան ընդլայնում: Տեսանք, որ Բաֆֆին պահանջում էր հայերի զինումը, տեղական միլիցիայի ստեղծումը, այժմ նրա վրայ աւելացնում է դատական-քրէական հարցերի հայերին յանձնումը: Անշուշտ, Սահմանադրութեան ընդլայնումը պիտի արտայայտուի նաեւ հարկերի խնդրում: Քանի որ հայերը որոշ նիւթական պարտաւորութիւններ ունէին ըստ Սահմանադրութեան, այժմ նրա գործերի յաւելումով՝ նորանոր տուրքերի հարց կը ծագի. «Ընդարձակելով հայոց ազգային սահմանադրութեան սահմանափակ շրջանը նոր իրաւունքներով եւ տարածելով բոլոր հայաբնակ գաւառները, այդ բաւական կը լինէր հայերին հնար տալ իրենց գործերն իրենց ձեռքով վճռելու»...

Բաֆֆիի այսպիսի լուծումն ապացոյց է միայն մի բանի, որ Հայկական Հարցը կարելի է լուծել միայն ինքնավարութեամբ, որ ասել է, թէ նա քաղաքական հարց է: Սահմանադրութեան ընդլայնումն այն իմաստով՝ ինչ իմաստով որ դնում էր Բաֆֆին՝ յանգում էր ինքնավար Հայաստանի ստեղծման՝ սեփական վարչութեամբ, դատարաններով, հարկային դրութեամբ, երկրապահ բանակով: Բնական է, որ այս պահանջների գործադրութեան ժամանակ պիտի որոշուէին նաեւ «բոլոր հայաբնակ գաւառների» սահմանները:

Բաֆֆին այս պահանջը անում էր այն ժամանակ, երբ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանը պատրաստւում էր հայկական պահանջները ներկայացնելու Միջազգային դիւանագիտութեան: Նա ջանում էր արտայայտիչը լինելու հայութեան բոլոր խաւերի բաղձանքներին: Այդ պարզ երեւում էր, թէկուզ, այն բանից, որ հայութեան բոլոր դասերը անվերապահօրէն պաշտպան էին Օսմանեան Կայսրութեան ամրողջականութեան եւ Հայկական Հարցի լուծումը ենթադրում էին կայսրութեան սահմաններում մի-

այն։ Ներսէս Վարժապետեանը իր նշանաւոր առենախօսութեան մէջ Ազգային ժողովի առաջ, 1878 թ. Յուլիսի 21-ին, այսպէս էր բանաձեւում հայերի եւ Օսմանեան կայսրութեան յարաբերութիւնը. «Հայոց վարչութիւն Հայաստանի մէջ՝ առանց քաղաքական փառասիրութեան, զոր երբեք չենք ունեցած եւ չենք կրնար ունենալ, մեր Վեհափառ Սուլթանի հովանաւորութեանը եւ վեհապետական իշխանութեանը ներքեւ»։ Ներսէս Վարժապետեանը եւ նրա հետ Կ. Պոլսի ազգային գործերի ղեկավարները մեծ վստահութիւն ունէին «Նորին Վեհափառութեան» եւ նրա կառավարութեան հանդէպ. նրանք իրենց զգում էին Օսմանեան քաղաքացիներ։ Բայց այդ Օսմանեան քաղաքացին նաեւ հայ էր, հայոց ազգութեան անդամ։ Նա պարտաւոր էր նաեւ հայութեան մարդկային տարրական իրաւունքները պաշտպանել։ «Այսօր հասարակ եղած ճշմարտութիւն մըն է պաշտօնատարաց յոռութիւնը, այնպէս զի նոյնիսկ Բ. Դուռը եւ երկրին Վեհապետը քանիցս հռչակեցին զայն։ Արդ՝ ճշմարիտ չէ ըսել մասնաւորապէս Հայաստանի համար, թէ հայ ժողովրդեան պատուհասը քուրդերն են միայն ու չէրքէզները, այլ պատուհաս մըն ալ անարժան պաշտօնատարներն են։ Այս պաշտօնատարաց մէջ Հայաստանի մէկ ծայրէն միւսը գրեթէ եւ ոչ մէկ հայ պաշտօնատար կայ»։ Ն. Վարժապետեանն էլ, Խրիմեանի պէս, հայկական գաւառների հարստահարութեանց մէջ չի տեսնում քաղաքական ծրագիր, այլ միայն գաւառական մեծ ու փոքր պաշտօնէութեան անձնակալմի բարոյական դիմադիմի աղճատում եւ կաշառակերութիւն։ Ուստի, նա էլ Հայկական Հարցի իբր միակ միջոց առաջարկում էր Հայաստանի վարչական ապակենտրոնացում՝ Օսմանեան կայսրութեան սահմաններում։ Հայոց Պատրիարքը իր այս պահանջին տալով պատմական եւ ազգային հիմնաւորում՝ արդար է համարում, որ ինքնավարութեան նոյն սկզբունքը գործադրուի ամբողջ կայսրութեան մէջ։ Այդ կը լինի կանխարգել միջոց անջատողական միտումների դէմ։ Կայսրութիւնը կը դառնայ վարչականօրէն ինքնավար մասերի մի միութիւն, որ անպատճառ կ'ուժեղացնէ կայսերական պետութիւնը. «Որոշել այն գաւառները, որոնք մէկ-մէկ ազգային յիշատակաց կենտրոններ են եւ որք ի հնումն ազգի մը հայրենիքը կազմելով՝ դեռ այսօր բնակութեան տեղի են մնացած նոյն ազգին անհատներուն գոնէ մեծ մասին, ուր, վերջապէս, քրիստոնեայք եւ անոնց վարչութիւնը յանձնել այն ազգէն քրիստոնեայ պաշտօնատարաց՝ անփոփոխ եւ անվթար պահելով Վեհ. Կայսեր Վեհապետական իշխանութիւնը»։ Իր այս պահանջը բոլոր քրիստոնեայ ազգերի համար է. նրանց թւում՝ եւ Հայաստանի։ Միայն այս ձեւով կարելի կը լինի փրկել կայսրութիւնը եւ

միայն այս միջոցով կարելի կը լինի լուծել Հայկական Հարցը։ Այսպիսով միայն կը միատեղուին հայկական եւ կայսրութեան շահերը եւ իրական արժէք կը ստանայ Օսմանեան քաղաքացու զգացումն ու դիմաշրջումը։ Հենց այս տեսակէտից է, որ հայ ղեկավարները դէմ էին Բալկանեան ազգերի՝ բոսնիացիների, բուլգարների հարցի լուծման կայսրութիւնից դուրս եւ մասնակի համաձայնութեամբ։ Սրանց «արդիւնքը պիտի ըլլար, մանաւանդ, դառնացում մեր վիճակին, զի տուրքերն աւելի մեր վերայ պիտի ծանրանային, ինչպէս նաեւ այն տարերքն, որոնցով կը բաղկանայ յոռին այս երկրին կառավարութեան մէջ»։ Հայերն զգում էին, որ եթէ Բալկանեան ազգերը բռնեն անջատման ուղին, ապա Օսմանեան իշխանութեան ծանր թաթը իրենց վրայ պէտք է իջնէր։ Ուստի եւ հակառակ էին կայսրութեան անդամահատման։ «Աստուած մի արասցէ» գոչում էր Ն. Վարժապետեանը։ Անջատման մասին խնդիր չյարուցանել, որեւէ ձեւով կայսրութեան պառակտման հարց չդնել՝ խորհուրդ էր տալիս հայերին նաեւ Աւստրօ-Հունգարական կայսրութեան Լոնդոնի դեսպանը։ Նա ասում էր Խրիմեանին. «Հայերը, յոյները եւ կաթոլիկները աղօթք պէտք է ընեն Աստուծոյ, որ Սուլթանը Կ. Պոլիս մնայ, որովհետեւ եթէ նա Ասիա անցնի, այսինքն՝ եթէ Եւրոպական Թուրքիան բոլորովին կորցնէ, այն ժամանակ անոր ատելութիւնը պիտի ծանրանայ Ասիոյ քրիստոնեաներու վրայ»։

Բերլինի Վեհաժողովին հայերը ներկայացրին իրենց պահանջները ճիշդ այն սահմաններում եւ այն ձեւով, ինչպէս մշակել էր Կ. Պոլսի ղեկավարութիւնը։ Նրանք միաժամանակ ճշդել էին ինքնավար Հայաստանի սահմանները, որի վարչական բաժանումից դուրս էին հանել ոչ-հայկական հողամասերը։ Ստեղծել էին մի նոր միաւոր Էրզրումի, Վանի, Դիարբէքիրի վիլայէթներից, որտեղ հայութիւնը կազմում էր մեծամասնութիւն։ Բայց այս ձեւով կազմած հայկական ինքնավար հողամասերի մէջ էլ մնում էր զգալի փոքրամասնութիւն քուրդերի եւ թուրքերի, որոնց իրաւունքները ապահովւում էին օրէնքով։ Ինքնավար Հայաստանի վարչութեան գլուխը կանգնած էր լինելու հայ ծագումով մի կուսակալ, որ պիտի նշանակէր Բ. Դուռը՝ «երաշխաւոր պետութեանց համաձայնութեամբ»։ Վարչապէս ապակենտրոնացած Հայաստանը պիտի ունենար իր դատարանը, հարկային դրութիւնը, զինուած ոյժը՝ միլիցիան երկրի ապահովութեան եւ կարգի պահպանութեան համար։ Կուսակալին օժանդակելու էին «գործակալութիւնները»։

Այս ծրագրով ներկայացան հայ պատուիրակները Բերլինի Վեհաժողովին։ Հայութիւնը, մասնաւորապէս Կ. Պոլսի ղեկավա-

րութիւնը սպասում էր, որ մեծ պետութիւնները ընդառաջ կը գնան հայերի այսքան համեստ պահանջներին։ Բայց այդպէս չեղաւ։ Եւրոպայի քաղաքական ղեկավարները խմբագրեցին հայութեան համար ոչինչ չխոստացող եւ ոչինչ չպարտաւորեցնող 61–րդ յօդուածը։ Հայերը վերադարձան յուսախաբ։ Ոչինչ չըստանալով Եւրոպայից՝ շահեցին կայսրութեան անվստահութիւնը եւ դարձան թուրքերի համար այն տարրը, որ պետութեան ներքին գործերի մէջ օտարին միջամուխ էր դարձնում։ Միւս կողմից՝ Օսմանեան Կայսրութիւնը մէկ քայլ էլ նահանջեց Բալկաններում՝ Ռումանիայում, Բուլգարիայում։ Եւ այս պարտութեանց ու կորուստների ազդեցութեան տակ թուրք ազգայնամոլ մտածողութիւնը բռնեց վտանգաւոր մի ուղի՝ չովէն, այլամերժ, հակաքրիստոնեայ, որի արտայայտութիւնը աւելի վտանգաւոր պիտի դառնար հայոց լեռնաշխարհում մեկուսացած հայութեան համար։ Բերլինի Վեհաժողովից յետոյ է, որ աւելի ամրանում է թուրք եւ քուրդ գործակցութիւնը. թուրքը զինում է քրդին, առաջ է քաշում շէյխերին, գրգռում է նրանց մոլեռանդութիւնը հայերի դէմ, Հայաստան է ուղարկում Բալկաններից եկած գաղթականներին, հալածում եւ աքսորում է աչքի ընկնող հայ գործիչներին։ Մեծ դէպքերի խոր ազդեցութեան տակ սկսում է կազմակերպուել թուրք զանգուածը՝ հողատէր, զինուորական, պաշտօնեայ, որպէս քաղաքական միութիւն, որ իր անունն է ստանում համիսլամութեան ջատագով մոլեռանդ հոգեւորականներից եւ համաթուրանական գաղափարներով տոգորուած մտաւորականութիւնից, որոնք նրա առաջ բաց են անում գործի եւ պայքարի մի լայնարձակ դաշտ։ Ի՞նչ պիտի անէր հայութիւնը, ի՞նչ միջոցների պիտի դիմէր իր գոյութիւնը ապահովելու համար։ Բերլինի Վեհաժողովի 61–րդ յօդուածը, ճիշդ է, մի անսպասելի եւ յուսախաբ անող բան էր հայութեան համար, սակայն, ամենքը գտնում էին, որ նրանով սկսւում է Հայկական Հարցի մէկ նոր շրջան։ Մինչեւ այդ «հայոց խնդիր կար տասն եւ աւելի տարիներէ ի վեր», բայց նա հայի եւ Օսմանեան պետութեան միջեւ լուծուելիք ներքին հարց էր։ Այժմ, Վեհաժողովից յետոյ, հայութիւնը դառնում էր իրաւատէր. Հայկական Հարցը դադարելով Թուրքիայի ներքին հարց լինելուց՝ վերածւում էր միջազգային հարցի։ Հայութիւնը իրաւասու էր նոր պահանջներ անելու կամ իր ունեցած իրաւունքները նոր եղանակով պաշտպանելու։

61–րդ յօդուածը, ինչ ձեւով էլ գնահատուելու լինի, հայութեան կողմից ընդունուեց, իբր նուաճում։ Նախ՝ նա պիտի դառնար խթան աւելի հետաքրքրուելու Հայաստանով։ Հայաստանը մինչ այն մոռացուած աշխարհ էր, այժմ պիտի գտնուէր հայի



ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

մոքի կենտրոնում. Հայութիւնը պիտի ապրէր, յուզուէր, գործէր Օսմանեան Հայաստանի եւ այնտեղ ապրող հայ ժողովուրդի համար: «Դէպի երկիր, դէպի ժողովուրդ» *կոչը դառնում էր հայ ղեկավարութեան նշանաբանը:* «Այսպիսի գործեր ոչ մէկ օրուան մէջ, ոչ մէկ մարդու ձեռքով կրնան կատարուել, *յայտարարում էր Ն. Վարժապետեանը:* Պատրաստուինք մեր ապագային: Նախ չկենանք հոս. Հայաստան երթանք: Հայաստան դրկենք, ինչ որ ունինք ազգին մէջ իր բանիրուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր, եկեղեցասէր: Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ: Հայաստան երթան մեր արուեստագէտներ, վանառականներ: Հայաստան երթան այնքան դժբախտ պանդուխտներ: Ոչ եւս պիտի ըլլայ հոն սով, սրածութիւն, ոչ եւս հարստահարութիւն, ոչ եւս կենաց եւ ընչից եւ պատուոյ առեւանգութիւն, ոչ եւս աշխատութեան խափանում: Ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին, գործարաններ պիտի կառուցուին»...: *յայտարարում էր Ն. Վարժապետեան իր նշանաւոր ճառում: Սա արդէն ամբողջական ծրագիր էր Հայաստանի վերաշինութեան, որի իրականացումը տեղի պիտի ունենար բովանդակ հայութեան ճիգերով: Մի գործօն չարժում, որի նպատակն էր ստեղծել* բարձրորակ, մշա-

կութայինն հարուստ հայութիւն։ Մեր պարտութիւնը միջազգային դիւանագիտութեան առաջ մասամբ պայմանաւորուած էր նրանով, որ մինչեւ այդ գոյութիւն չունէր ինքնաճանաչ, միակամ եւ ուժեղ հայութիւն։

Գրեթէ նոյն տեսակէտն ունէր նաեւ Գ. վրդ. Սրուանձտեանը, մէկը, որ լաւապէս ծանօթ էր Հայաստանի իրական պայմաններին. նա էլ յուսախաբուած էր Վեհաժողովից եւ Եւրոպայի հետ յոյս կապելը համարում էր անիմաստ։ Հայը պէտք է լինի ինքնագործ եւ կենտրոնացած Հայաստանում։ Փոխանակ Եւրոպայի վրայ յոյս դնելու, հայը պէտք է սիրի իր հայրենիքը, գուրգուրայ նրա վրայ։ Հայութեան մեծագոյն չարիքը այն է, որ նա լքել ու զիջել է իր երկիրը քուրդին, թուրքին։ Աչքից ու մտքից հեռու ու մոռացուած այդ «անծանօթ աշխարհը» պէտք է դարձնել հայրենիք։ «Այնտեղ է մեր ապագան», խրատում է Սրուանձտեանը. «Փափագելի է, որ մեր դրամատէրերը իրենց ուշքը դարձնէին Հայաստանի մէջ հողեր գնելու... Նրանք մեծ ազդեցութիւն պիտի ունենային տեղական կառավարիչներուն, թուրք եւ քուրդ պէյերուն վրայ, իբրեւ օրէնսգէտ, քաղաքագէտ մարդիկ... Պէտք է օրէնսգէտներ եւ բժիշկներ երթան հոն. ասնուն երկու դասուն ալ մեծ ասպարէզ կայ Հայաստանի մէջ, որոնցով կը պաշտպանուէին գոյից եւ կենաց զոհեր։ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋՆ Է ԲՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ, ԵՒ ՄԵՆՔ ԲԵՐԼԻՆԻ ՄԷՋ Կ'ՈՐՈՆԵՆՔ ԶԱՅՆ»։

Այդ նոյն ժամանակներում Ռուսահայաստանումն էլ զգաստութեան եւ գործի հրաւէր են լսում։ «Մեղու Հայաստանի»ի մէջ Օսմանեան հայութեան եւ Հայկական Հարցի մասին յաճախ խօսում էր «Հայ Նարոդնիկ» Յովսէփ Տէր-Մովսիսեանը, որի գաղափարական դիմագիծը նոր է անյայտութիւնից դուրս հանւում։ Տաճկահայերին, ասում է նա, պակասում է «ազատասիրութիւնը»։ Այդ պատճառով հայը Հայաստանից գաղթում է։ Եւ այդ հեռեւանք է ոչ թէ տնտեսական պատճառների, այլ որովհետեւ հայը «ազատութիւնը» պահել, նրա համար կռիւ մղել չի սիրում։ Հայերը «չեն վստահում իրենց բազկի վրայ, զուրկ են ինքնապաշտպանութեան զգացումից։ Ուրեմն պէտք է նախ տաճկահայաստանցու մէջ զարգացնել այդ զգացմունքը»։ Յովսէփ Տէր-Մովսիսեանը պահանջում է հայութեան հոգեկան յեղաշրջում։ Հայի մէջ մարդը պէտք է վերածնուի, պէտք է դառնայ պատուազգաց, իրաւունակ եւ իր անձն ու գոյքը խիզախօրէն պաշտպանող մարդ. ստրուկ հայը պէտք է տեղ տայ արի հային։ Բայց այս մեծ հոգեփոխութիւնը դրսից կատարուել չի կարող։ Խիզախ, անձնուէր մարդիկ պէտք է գնան «ի Հայաստան»։ Կ. Պոլսի ու Թիֆլիզի հայ մտաւորականներն ու գործիչները չեն կարող հայու-

թեան բախտի մէջ մի բան փոխել, եթէ չկենտրոնանան Հայաստանում. նրանք «չեն կարող հայաստանցու վրայ ազդել այնպէս, որպէս կարող էր ազդել Էրզրում բնակուող եւ աշխատող մի փոքրիկ ազգասէր խումբ, կամ այնտեղ հրատարակուող մի ազգային լրագիր: Պոլիսն ու Թիֆլիզը կատարեցին իրենց պատմական դերը հայոց խնդրի զարգացման մէջ. այժմ նրանք տեղ պիտի տան Վանին, Էրզրումին, ինչպէս մի ժամանակ Վենետիկը, Վիեննան եւ Մոսկվան տեղ տուին այլոց»:

Յովսէփ Տէր-Մովսիսեանն էլ, Վարժապետեանի պէս, համոզուած է, որ Բերլինի Վեհաժողովը նպաստաւոր պայմաններ է ստեղծել, որպէսզի մտաւորականն ու հասարակական գործիչները կենտրոնանային Հայաստանում: Դաշնագրի 61-րդ յօդուածը խոստանում էր «կեանքի ապահովութիւն»: Նա էլ հաւատում է, որ Հայաստանում շատ բան պիտի փոխուի, ուստի «Ինչո՞ւ հայութեան համար աշխատողն պէտք է Հայաստանից դուրս ներգործէ, երբ այդ աշխատանքն աւելի արդիւնաւոր կարող է լինել նոյնիսկ Հայաստանի ծոցումն»: Հայ նարոդնիկը մեծ դեր է վերագրում խաղաղ մշակութային աշխատանքին հայութեան հոգեկան յեղաշրջման մէջ: Յատկապէս դպրոցը մեծ դեր ունի կատարելիք: Իրաւազուրկ եւ ճնշուած ազգերի մէջ դպրոցը ստանում է քաղաքական արժէք, նա յեղափոխական գաղափարների տարածիչ է եւ ազատութեան զգացումներ դարբնող: «Տանկահայոց ուսումնարանների գլխաւոր պարտքերից մէկն եւս պիտի լինի քարոզել եւ հասկացնել մարդկային պարտքերը եւ իրաւունքները, մեռցնել հայ գիւղացոց ստրկական ոգին եւ դրա փոխարէն զարթնեցնել նրա մէջ ազատութեան եւ ինքնապաշտպանութեան զգացումները, որ հարկաւոր եղած ժամանակը հայ գիւղացին կարողանայ իրեն պաշտպանել»*):

Ութսունական թուականների սկզբներից մի ուժեղ շարժում է սկսւում հայութեան մէջ յօգուտ Օսմանեան Հայաստանի տընտեսական, մտաւոր վերածնութեան եւ հոգեկան յեղաշրջման: Այս վերածնութիւնը կապւում էր կրթական գործի եւ ընդհանրապէս մշակութային վերելքի եւ տնտեսութեան բարձրացման հետ: Բայց ամենէն էականը՝ նա տեղի պիտի ունենար հայութեան բոլոր կենդանի, բարձրորակ ուժերի համախմբումով Հայաստանում: Ազգահաւաքման եւ ազատագրական այս գործը հայութիւնը հակադրում էր նոյն ժամանակներում թուրք ազգութեան մէջ ծնունդ առած շարժման, որ խարսխւում էր նախ՝ համիսլամու-

---

*) Հայ Նադորնիկ Յովս. Տէր-Մովսիսեան. «Գիտական Աշխատութիւններ», 1946, Երեւան, հատ. 23, էջ 71-79:

թեան եւ քիչ յետոյ՝ համաթուրանականութեան վրայ։ 80-ական թուերից սկսած այս երկու ազգային շարժումները իրենց ներհակ նպատակներով կանգնում են դէմ դիմաց։

Բայց մեր գծած հայոց ընկերային-քաղաքական հոսանքը մէկն էր միայն հայութեան մէջ եղածներից։ Հայութեան լաւագոյն ներկայացուցիչները հաւատում էին, որ Բերլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածը դէթ նուազագոյն չափով կը նպաստէ հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան ապահովութեան եւ մշակութային-տնտեսական վերականգման։ Ճիշդ է, հայերը չստացան վարչական ինքնավարութիւն, սակայն, նրանք յոյս չէին կորցրել մօտաւոր ապագայում ձեռք բերելու։ «Իսկ ինքնավարութիւնը այսպէս թէ այնպէս, վաղ թէ ուշ, եւրոպական դիւանագիտութեան ազդեցութեան տակ, թէ վեհափառ Սուլթանի շնորհիւ, կամ թէ, վերջապէս, արեան գնով՝ կը ստանանք, անպատճառ կը ստանանք», մարգարէանում էր նոյն Յովսէփ Տէր-Մովսիսեանը։

Հենց այդ «արեան գնով» ազատութիւնը ձեռք բերելու մասին էին քարոզում 19-րդ դարի երկրորդ կիսի ամենէն ինքնատիպ եւ ազդեցիկ երկու դէմքերը՝ Խրիմեան Հայրիկ եւ Րաֆֆի։ Մենք տեսանք արդէն նրանց պարզած նուազագոյն ծրագիրը հայութեան ազատագրութեան համար, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հայութեան պահպանութիւնը, կեանքի ու գոյքի ապահովութիւնը եւ մշակութային անկաշկանդ զարգացումը Օսմանեան Կայսրութեան սահմաններում։ Սակայն, Բերլինի Վեհաժողովի մէջ կրած պարտութիւնը հարկադրում էր նրանց նոր ուղիներ որոնել Հայաստանի եւ հայ ժողովրդի ազատութեան համար։ Եւ այդ ուղիները չէին տեղաւորուում Օսմանեան Կայսրութեան մէջ. Հայկական Հարցի լուծումը այժմ նրանք որոնում են կայսրութիւնից դուրս։ Նրանք դէմ չեն Սրուանձտեանի, Վարժապետեանի, Յ. Տէր-Մովսիսեանի ազգահաւաքման գործին ու մշակութային աշխատանքին. ընդհակառակը, Խրիմեանը ինքը առաջին մեծ ռահվիրաներից էր այդ ուղղութեամբ, իսկ Րաֆֆիի հերոսները մէկ-մէկ վերածնիչներ են, հոգեկան յեղաշրջման քարոզիչներ եւ մշակութային-տնտեսական լաւագոյն ապագայ աւետող մարգարէներ։ Հարցը, սակայն, այն է, թէ նրանց գործի մէջ խաղաղ մշակութային աշխատանքը միայն նախապատրաստութիւն է դալիք մեծ յեղափոխութեան համար։ Րաֆֆին եւ Խրիմեանը երկու հակադիր աշխարհահայեցողութեան տէր մարդիկ էին, բայց Հայկական Հարցի Ի կատմամբ նրանք, ի վերջոյ, մշակեցին ընդհանուր տեսակէտ՝ Հայոց Հարցը քաղաքական հարց է եւ պէտք է լուծուի միայն ազգային-քաղաքական յեղափոխութեամբ։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Գրեց՝ Ս. ՎՐԱՑԵԱՆ

I

ՀԱՅ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Ամէն զաղափարական շարժում ունենում է իր նախակարապետները, որոնք պատրաստում են հողը իրենց յաջորդների համար։ Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ ոչնչից չստեղծուեց։ Նրա արմատները գալիս են շատ հեռուներից՝ հայ ժողովրդի ազատագրական տենչերից, իրար յաջորդող սերունդների մտորումներից եւ մաքառումներից։

Հ. Յ. Դաշնակցութեան մերձաւոր նախորդներն էին 19-րդ դարու լուսաւորիչները եւ ազատութեան քարոզիչները, որոնք զինուած եւրոպական գիտութեամբ ու յեղափոխական զաղափարներով, ազդուած ու ներշնչուած հայ իրականութիւնից՝ հարթեցին ազգային լուսաւորութեան, յառաջադիմութեան եւ ազատագրական շարժման ուղիները — Դորպատի ու «Հիւսիսափայլ»ի սերունդը, Պոլսի Ազգային Սահմանադրութեան հիմնադիրներն ու Վարագի եւ Ս. Կարապետի արծիւները, Մխիթարեան մենաստանի սանները — Արովեան ու Նազարեան, Նալբանդեան ու Դամատ Բաթիպա, Ալիշան ու Խրիմեան իրենց հետեւորդներով։ Այնուհետեւ՝ մշակական ու մեղուական հոսանքների զօտեմարտը Կովկասում, Գր. Արծրունի ու, մանաւանդ, Բաֆֆի։ Լուսաւորեալների եւ խաւարամիտների պայքարը Պոլսում, Երեւանեան ժողովի ու Պատրիարքարանի ծոցում կամ մամուլի էջերից։ 1877-78 թ. ռուս-թրքական պատերազմի եւ Բերլինի Վեհա-

ժողովի առաջ բերած շարժումները, ութսունական թուականնե-
րի գաղափարական խմորումներն ու յեղափոխական խմբակցու-
թիւնները Թուրքիայի եւ Ռուսաստանի զանազան կենտրոննե-
րում, մինչեւ արմենականութիւն ու հնչակեանութիւն, որոնք
փորձեցին գործի վերածել յեղափոխական տրամադրութիւնն-
ը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, հիմնուելով նախորդների կատա-
ր ած աշխատանքի վրայ եւ մեկնակէտ ունենալով հայ իրականու-
թիւնը, ջանաց համադրել եւ գործօն շարժման վերածել ազգային
յեղափոխութեան գաղափարը: Մինչեւ «Հնչակ»ի երեւան գալը
ծնունդ առած խմբակցութիւնների դերը եղաւ գերազանցապէս
բարոգչական: Հնչակեանութիւնը առաւելաբար զբաղուեցաւ ցու-
ցական գործունէութեամբ: Հ. Յ. Դաշնակցութիւնը, համադրե-
լով իր նախորդների գաղափարներն ու գործելակերպը, դարձաւ
յեղափոխական կենդանի գործի մարմնացում: Նրա ձգտումն էր,
ելակէտ ունենալով «Ցաճկահայաստանի միանգամայն սարսափելի
դրութիւնը» եւ նպատակ դնելով «ազատել ժողովրդին այդ ան-
տանելի դրութիւնից»՝ ձեռք բերելով «ապագայ ազատ Հայաս-
տանում ժողովրդական-ռամկավարական կառավարութիւն», մի-
ացնել ու ճուլել իր ծոցում յեղափոխական բոլոր ուժերը: Եւ ար-
դէն իր սկզբնական անունն էլ ա՛յդ էր ցոյց տալիս՝ Հայ Յեղափո-
խականների Դաշնակցութիւն: Գոյութիւն ունեցող բոլոր յեղա-
փոխական ուժերի միութիւն մէկ ընդհանուր դրօշակի տակ:

Ի՞նչ պայմաններում եւ ինչպէ՞ս ծնունդ առաւ Հ. Յ. Դաշ-
նակցութիւնը, ովքե՞ր էին նրա հոգեւոր ծնողները, նրա հիմնա-
դիրները:

Յիշեցինք արդէն, որ անցեալ դարի ութսունական թուական-
ները ազգային ազատագրական-յեղափոխական խմորումների
շրջան եղան հայ կեանքում: Բերլինի 61-րդ յօդուածը, որքան եւ
անզոհացուցիչ ու անհամապատասխան հայութեան ակնկալու-
թիւններին, մեծ տպաւորութիւն գործեց հայ մտաւորականու-
թեան եւ երիտասարդութեան մտքերի վրայ: Ընդհանուր կար-
ծիքը այն էր, որ եթէ Հայաստանը Բուլգարիայի բախտին չար-
ժանացաւ, ազատութիւն չստացաւ, պատճառը այն էր, որ հայ
ժողովուրդը չէր պատրաստուած, ազատութեան համար արիւն
չէր թափած, որպէսզի Եւրոպան օգնէր նրան: Բերլինի Վեհաժո-
ղովին յանուն հայ ազգի ներկայացրած բողոքում Խրիմեան Հայ-
րիկը որոշ կերպով արտայայտել էր այդ միտքը. «Հայերը հաս-
կացան, թէ խաբուել են, թէ նրանց իրաւունքները չեն ճանաչ-
ուել, որովհետեւ խաղաղասէր են եղել... Հայ պատուիրակու-
թիւնը պիտի վերադառնայ Արեւելք՝ իր հետ տանելով այդ դասը:

Բայց այնուամենայնիւ՝ նա յայտնում է, որ հայ ժողովուրդը երբեք չպիտի դադարի աղաղակ բարձրացնելուց, մինչեւ որ Եւրոպան նրա պահանջներին արդար գոհացում չտայ»։

«Աղաղակը են եղել», աղաղակ չեն բարձրացրել, յոյս են դրել միայն իրենց քրիստոնէական հաւատի եւ քրիստոնեայ Եւրոպայի մարդասիրութեան վրայ,— Բերլինի Վեհաժողովը, սակայն, հասկացրեց հայերին, որ ազատութիւն ստանալու համար ազգերը պէտք է գործով ցոյց տան, թէ արժանի են ազատութեան։ Դառն էր դասը, բայց պէտք էր այդ դասից հանել տրամաբանական եզրակացութիւնը, մշակել ազգային քաղաքականութեան նոր ուղեգիծ, բռնել այն ճանապարհը, որով պէտք է ընթանար հայութիւնը վերջնական ազատութեան հասնելու համար։ Խրիմեան Հայրիկն, Բաֆֆին, Ներսէս Վարժապետեանը ցոյց տուին այդ ճանապարհը։

Պատրիարք Ներսէս Վարժապետեանը, որպէս պաշտօնական ներկայացուցիչ հայ ժողովրդի, Բերլինի Վեհաժողովի արդիւնքների մասին Երեւի. ժողովում խօսած իր պատմական ճառում, յստակ կերպով ձեւակերպեց հայութեան վարելիք հետագայ քաղաքականութիւնը։ Նրան մեղադրում էին ոմանք, թէ սխալ էին ազգի կողմից կատարուած քայլերը Սան Ստեֆանոյում ու Բերլինում, «ինչո՞ւ սկսանք, եթէ պիտի չյաջողէինք»։ Վարժապետեանը պատասխանում է վրդովումով. «Ո՞ր ազգ կրցած է յանկարծակի կերպով իր բաղձանացն ի կատար հասնիլ». «Օր մը յաջողելու համար ա՛յս օրէն սկսելու էր. եւ զի եթէ ապահով կերպով գիտնայի ալ առաջուց, թէ պիտի չյաջողիմ բնաւ, դարձեալ պիտի սկսէի»։

Ու ցասումով շարունակում է իր խօսքը. «Ըսէ՛ք, պիտի ներէի՞ք ինձ, որ այնպիսի պարագայի մէջ, ուր Թուրքիոյ քրիստոնեայ ժողովրդոց բախտը պիտի վճռուէր, ձեր պատրիարքը անհոգ կենար. ըսէ՛ք, պիտի ներէի՞ն ինձ մեր նախնեաց հոգիք՝ Հայկէն մինչեւ վերջին մեր Լեւոն, Լուսաւորիչէն մինչեւ վերջին Ներսէս, եթէ խոչ ու խութ առ ոտն հարկանելով՝ մինչեւ Եւրոպա չհասցունէի ազգին աղաղակը»։

Բնական է, որ ա՛յն օրերին Հայոց Պատրիարքը չէր կարող «մինչեւ Եւրոպա չհասցնել ազգին աղաղակը»։ Պատմական անհրաժեշտութիւն էր Ներսէս Վարժապետեանի քայլը։ Երբ Օսմանեան Կայսրութեան կառուցուածքը ճարճատում էր իր հիմքից, երբ հայութեան կեանքը Սուլթանի տիրապետութեան տակ դարձել էր այլեւս անհանդուրժելի, երբ, միւս կողմից, Թուրքիայի բոլոր քրիստոնեայ ազգերը ազատութիւն էին ձեռք բերում, երբ մեծ պետութիւնները պատրաստւում էին Թուրքիայի ճակատա-

գրի մասին լուրջ կարգադրութիւններ անելու, այդպիսի պայմաններում անհնար էր Հայոց Պատրիարքի եւ ողջ հայութեան համար «անհոգ կենալ» եւ «մինչեւ Եւրոպա չհասցնել ազգին աղաղակը»։

Բացի այդ, Վարժապետեանը յոռետես էլ չէր։ Անշուշտ, Բերլինը չարդարացրեց ազգի յոյսերը, բայց եւ բոլորովին անօգուտ չանցաւ. 61-րդ յօդուածը, իր թերութիւններով հանդերձ, մի մուրհակ էր, որ Եւրոպան տալիս էր հայերին։ Ճիշդ է, մուրհակի վրայ ոչ վճարուելիք դումարն էր նշանակուած որոշ կերպով, ոչ էլ ժամկէտը, բայց, վերջապէս, մուրհակ էր, որով Հայկական Հարցը դրուում էր միջազգային դիւանագիտութեան սեղանի վրայ։ Վարժապետեանը մեծ կարեւորութիւն էր տալիս այն փաստին, որ «առաջին անգամ հայ ազգին անունն անցաւ հանդիսաւոր դաշնագրութեանց մէջ», որով «հայոց ապագային սերմունքը դրուեցան»։ Եւ այս միայն Վարժապետեանի համոզումը չէր. սակաւ բացառութեամբ, ամբողջ ազգը այդպէս էր ղղում ու մտածում։ «Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը հայ ժողովրդի առջեւ բաց էր անում վարդագոյն յոյսերի ընդարձակ հեռանկարներ» (Բրիստափոր)։ Յոռետես լինելու պատճառ չկար։ Անհրաժեշտ էր աւելի մեծ եռանդով եւ ծրագրուած ձեւով շարունակել սկսուած աշխատանքը։

Նոյն ճառում Վարժապետեանը պարզում է եւ ազգի հետագայ անելիքը, որ ամբողջ մի ծրագիր էր յաջորդ սերունդների համար.—

«Տեա՛ք երեսփոխանք, մենք յարատեւինք մեր սկսած գործին մէջ։ Այսպիսի գործ ո՛չ մէկ օրուան մէջ, ոչ մէկ մարդու ձեռքով կրնայ կատարուիլ։ Պատրաստուինք մեր ապագային։ Նախ՝ չկենանք հոս, Հայաստա՛ն երթանք. Հայաստա՛ն ղրկենք՝ ինչ որ ունինք ազգին մէջ բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր, եկեղեցասէր. Հայաստա՛ն երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ. Հայաստա՛ն երթան այնքան դժբախտ պանդուխներ. ո՛չ եւս պիտի ըլլայ հոն սով, սրածութիւն, ո՛չ եւս հարստահարութիւն, ո՛չ եւս կենաց եւ ընչից եւ պատուոյ առեւանդութիւն։ Ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին, գործարաններ պիտի կառուցուին. Անգլիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն, ընկերութիւններ՝ ամէն քաղաք եւ գիւղ դպրոցներ հաստատելու համար. Հնդկաստանէն, Հայաստանէն, Անգլիայէն, Թուրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն ու մինչեւ Պարսկաստանէն միանան, ձեռք-ձեռքի տան բոլոր հայերը»։

Հայաստանի տնտեսական-մշակութային վերաշինութեան

ծրագիր էր այս, իբրեւ նախապայման քաղաքական ազատութեան։ Ներսէս Վարժապետեանը հայ ժողովրդի սրտից էր խօսում. խտացուած ու հատու խօսքերով արտայայտում էր այն գաղափարը, որ ամուր տեղ էր գտել ժամանակի բոլոր դիտակից հայերի մտքում։ Եւ Երեսի. Ժողովը ձայների ճնշող մեծամասնութեամբ վստահութիւն յայտնեց իր Պատրիարքին, թէ նա «վարուած է ազգին շահուց համեմատ»։

«Զկենանք հոս, Հայաստա՛ն երթանք» — Վարժապետեանը փաստօրէն կրկնում էր Խրիմեան Հայրիկի «դէպի գաւառ» կոչը։ Իբրեւ գաւառի հարստահարուած ժողովրդի ապրումների եւ իղձերի արտայայտիչ, Խրիմեանը, սակայն, չէր բաւականանում միայն մշակութային-տնտեսական ծրագրով։ Այդ ինքն ըստ ինքեան հասկանալի եւ կարեւոր էր, բայց ցաւի հիմնական դարմանը չէր։ Բերլինը նրան ուրիշ բան էր սովորեցրել, թէեւ Բերլինից առաջ էլ արդէն նա եկել էր այդ համոզման — ինքնապաշտպանութեան եւ զինուած պայքարի անհրաժեշտութեան։ «Ցուլի եղջիւրներ» պէտք է ունենաս, քարոզում էր նա հայ ժողովրդին, «չերթաս՝ ուրիշների տունը վարձկան չդառնաս». մնա՛ քո սեփական հողի վրայ, ուրիշ հողդ արդար քրտինքով եւ՝ վարժըւիր զէնք գործածել կեանքդ, դոյքդ եւ պատիւդ պաշտպանելու համար։ «Քանի որ անզէն, անեղջիւր, անասպար կ՝ապրիք, խրատում էր նա իր «Հայոց ողջ մնացած որդիներին», դուք պիտի կոտորուիք ... Դուք մարդ էք, ձեռք ու բազուկ ունէք։ Մի՞թէ դուք ցանկալի ազատութիւնը առանց զոհի եւ արեան ձրի ստանալ կ՝ուզէք»։

Բերլինը աւելի եւս ամրապնդեց նրան այս կարծիքի մէջ։ Նա Պոլիս վերադարձաւ այն համոզումով, որ «առանց զոհի եւ արեան» կարելի չէ ստանալ «ցանկալի ազատութիւնը»։ Եւ իր այս համոզումը յայտարարեց Մայր Եկեղեցու բեմից՝ սրտատրոփ իր խօսքին սպասող խուռնամբոխ բազմութեան իր հռչակաւոր քարոզով։ Այդ քարոզի հարազատ բնագիրը գոյութիւն չունի, դժբախտաբար, բայց ականատեսների յիշողութեան մէջ մնացել է հետեւեալ ձեւով.—

«Օրհնեա՛լ ժողովուրդ հայոց։ Հիմա դուք ամենքնիդ ալ ականջնիդ սրած՝ անհամբեր եւ սրտատրոփ կը սպասէք, թէ արդեօք Հայրիկ ի՞նչ աւետիս բերած է ձեզ Բերլինի Վեհաժողովէն եւ թէ ի՞նչ պիտի ըսէ 61-րդ յօդուածի մասին, որ աշխարհի հզօր տէրութիւնք չնորհեցին մեր հայաբնակ գաւառներուն։ Ինչ որ ըսեմ՝ լաւ մտիկ ըրէք, ըսածներուն իմաստը լաւ ըմբռնեցէք։

«Գիտէք, որ մենք Ներսէս Պատրիարքի եւ Ազգային Ժողովոյ

որոշմամբ իրր պատգամաւոր գացինք Բերլին Հայկական Դատը մեծ պետութեանց Վեհաժողովին ներկայացնելու համար։ Շատ մեծ յոյս ունէինք, որ Վեհաժողովը աշխարհին խաղաղութիւն, իսկ փոքր եւ ճնշեալ ազգաց, ի թիւս որոց նաեւ մեր ազգին, ազատութիւն պիտի շնորհէ։ Վեհաժողովը բացուեցաւ. աշխարհի մեծ պետութեանց քաղաքագէտ պատգամաւորները շարուեցան կանանչ սեղաններուն բոլորտիք, իսկ փոքր եւ ճնշեալ ազգաց պատգամաւորներս Վեհաժողովէն դուրս կը սպասէինք։ Վեհաժողովին մէջտեղը, կանաչ սփռոցով ծածկուած սեղանի մը վրայ, դրուած էր մեծ կաթսայ մը հարիսա, ուրկից բաժին պիտի ստանային աշխարհիս մեծ ու փոքր ազգերն ու տէրութիւնք։ Ժողովականներէն ոմանք կը քաշէին Արեւելք, ոմանք կը քաշէին Արեւմուտք եւ այսպէս երկար վիճաբանելէ յետոյ, սկսան կարգաւ, մի առ մի, ներս կանչել փոքր ազգաց պատգամաւորները։ Նախ՝ Պուլկար ներս մտաւ. ապա Սերբիացին, Ղարադաղցին, որոնց կողերէն կախուած սուրերու չաքուչուքոցը գրաւեց ժողովականներու ուշադրութիւնը։ Բաւական խօսելէ յետոյ, այս երեք պատգամաւորները քաշեցին իրենց սուրերը եւ իրրեւ երկաթեայ շերեփ խոթելով հարիսայի կաթսային մէջ՝ իրենց բաժին հարիսան առին եւ հպարտ ու համարձակ հեռացան։ Կարգն եկաւ հայոց պատգամաւորին. ես մօտեցայ եւ Ազգային Ժողովին կողմէ ձեռքս տրուած աղերսաթուղթը ներկայացուցի եւ աղաչեցի, որ իմ ամանս ալ լնուն հարիսա։ Յայնժամ կաթսային դլուխ սպասող մեծաւորներ հարցուցին ինձ. «Ո՞ւր է քո երկաթեայ շերեփը։ Ցիրաւի, հոս հարիսա կը բաժնուի, բայց երկաթեայ շերեփ չունեցողն չէ կարող անոր մօտենալ։ Զայս իմացիր եւ եթէ մօտ ատենէն այս հարիսան կրկին բաժնուի, առանց երկաթեայ շերեփի չգաս, դի պարապ յետ կը դառնաս»։ Է՛հ, սիրելի ժողովուրդ հայոց, ես կրնայի՞ հարիսայի կաթսային մէջ խոթել իմ թուղթէ շերեփը, որ պիտի թրջուէր եւ հոն մնար։ Հոն, ուր զէնքն է խօսող, ուր սուրեր կը շողշողան, հոն ի՞նչ գործ ունին խնդիրք եւ աղերսաթուղթք։

«Եւ, յիրաւի, տեսայ, որ Ղարադաղցուն, Պուլկարին եւ այլոց պատուիրակներուն քով կային քանի մը քաջեր, որոց կողերէն կախուած սուրերէն արիւն կը վազէր, Յայնժամ դարձուցի երեսս եւ իրր թէ կը փնտռէի իմ զէյթունցի, սասունցի, շատախցի եւ այլ լեռնցի եւ դաշտեցի քաջերս, բայց ո՞ւր էին, ժողովուրդ հայոց, ըսէ՛ք, ո՞ւր էին այդ քաջերը. պէտք չէ՞ր, որ անոնցմէ մէկ–երկու հոգի ալ իմ քովս դտնուէին, որ անոնց արիւնոտ սուրերը Վեհաժողովի քաղաքագէտներուն ցուցնելով՝ գոչէի. «Տեսէ՛ք, ահա՛ իմ երկաթեայ շերեփները, հո՛ս են, պատրա՛ստ...

«Ժողովո՛ւրդ հայոց, անշուշտ, լաւ հասկցաք, թէ զէնքը ինչ

կրնար գործել եւ կը գործէ։ Ուրեմն, սիրելի եւ օրհնեալ հայաստանցիներ, դաւառացիներ՝ եր հայրենիք վերադառնալու լինիք, ձեր բարեկամաց եւ ազգականաց, իբր պարգեւ, մէկ-մէկ զէնք տարէք, զէ՛նք առէք եւ դարձեալ զէնք։ Ժողովո՛ւրդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրայ դիր, քո խելքին եւ բազուկին ուժ տուր. մարդ ինքիրմէն պէտք է աշխատի, որ փրկուի. Իսրայէ՛լ, դու փրկեսցես զքեզ»։

Կրկնում ենք, որ Հայրիկի այս պատմական քարոզի բուն բնագիրը գոյութիւն չունի. կան ժամանակակից անձերի զանազան վերյիշումներ, որոնք բոլորն էլ հիմնականում իրարից չեն տարբերւում. Հայրիկը յորդոր էր կարդում ժողովրդին զինուել եւ, ինչպէս պիտի ասէր Գամառ Քաթիպան, պատրաստուել «արիւն վոթելու», որովհետեւ «առանց զոհի եւ արեան» անհնար էր ձեռք բերել «ցանկալի ազատութիւնը»։ «Երկաթէ շերեփ»ի պատմութիւնը այնուհետեւ պիտի դառնար քաղաքական իմաստութեան եւ ոգեւորութեան աղբիւր ազատատենչ սերունդների համար։

Եթէ Ներսէս Վարժապետեանը ազգահաւաքման եւ խաղաղ շինարարութեան ուղին էր ցոյց տալիս հայութեան եւ դիւանագիտական միջոցներով յոյս ունէր հասնել Հայաստանի ազատութեան, Խրիմեան Հայրիը չմերժելով այդ քաղաքականութիւնը՝ անհրաժեշտ էր համարում դրա վրայ աւելացնել նաեւ «երկաթէ շերեփը», հրաւէր էր կարդում հայ ժողովրդին հետեւելու Բալկանեան ազգերի օրինակին, որոնք զէնքի ուժով ստացել էին անկախութիւն։ Եթէ առաջ էլ Վասպուրականի Արծիւը, երկրի ներքին պայմաններից խրատուած, «առանց զոհի եւ արեան» փրկութիւն չէր տեսնում հայութեան համար, այժմ, Եւրոպան ճանաչելուց եւ քաղաքական աշխարհին ու դիւանագիտական բարքերին մօտից ծանօթանալուց յետոյ, աւելի եւս ամրացել էր այդ համոզման մէջ։ Որպէսզի Եւրոպան քեզ օգնէ, դու պէտք է ստիպես, որ օգնէ, պէտք է շահադրդռես Եւրոպային քեզ օգնելու։ Իսկ այդ հնարաւոր է միայն այն դէպքում, երբ դու հաշուի առնելիք արժէք ներկայացնես։ Մեծ պետութիւնների համար կարեւոր են ոյժը եւ շահը։Հայը պէտք է դադարէ աղերսող ժողովուրդ լինելուց. աղերսաթուղթերը արժէք չունին։ Զինուի՛ր «երկաթէ շերեփով», եւ պայքարիր քո իրաւունքների համար։ Պատրա՛ստ եղիր, որ «եթէ մօտ ատենէն հարիսան նորէն բաժնուի, առանց երկաթեայ շերեփի չգաս»։

Սա պարզ հրաւէր էր յեղափոխութեան։ Եւ յեղափոխութեան ոգին արդէն սաւառնում էր օդում։ Այն՝ ինչ որ Վարժապետեանն

ու Խրիմեանը քարոզում էին, իբրեւ ընդհանուր գաղափար, Բաֆ-
ֆին հետզհետէ վերածեց գործնական ծրագրի իր յեղափոխական
յափշտակիչ վէպերով, որոնք անջնջելի կնիք դրին ժամանակակից
սերնդի մտքերի վրայ: 1878 թ. Մայիսից սկսեց հրատարակուել
«Մշակ»ում նրա «Զալալէդդին»ը՝ անօրինակ խանդավառութիւն
առաջ բերելով երիտասարդութեան մէջ: Աւելի ցնցող էր նոյն
«Մշակ»ում հրատարակուած «Խենթ»ի թողած տպաւորութիւնը:
Մի քանի տարի յետոյ, լոյս տեսաւ նրա յեղափոխական-ծրագրա-
յին մեծ վէպը՝ «Կայծեր»:

Այս եւ միւս գործերում Բաֆֆին կենդանի գործի է վերածում
այն՝ ինչ որ Խրիմեանն ու Վարժապետեանը քարոզում էին, իբ-
րեւ ընդհանուր սկզբունք: Նրա հերոսները երեւակայական անձեր
էին, բայց շուտով պիտի երեւէին կեանքում, իբրեւ կենդանի է-
ակներ: Նա իր սուր բնազդով նախատեսեց մօտալուտ ապագան:
Նրա գաղափարները 61-րդ յօդուածից ծնունդ առած եւ Արծրու-
նու մշակական դարբնոցում կոփուած ազատական գաղափարներն
էին, որոնց գործադրութեան համար ծրագիրներ էր առաջար-
կում: Քարոզի ժամանակը անցած էր համարում Բաֆֆին: Պէտք
էր կենդանի գործ: Եւ նրա հերոսները գործի մարդիկ էին: Նրա
հայրենասիրութիւնը դուրս էր գալիս նախորդների վերացական,
տեսական հայրենասիրութեան սահմաններից: Բաֆֆիի հայրե-
նասէրը կեանքի չարիքների դէմ կուրծք տուող, յաճախ, դաժան
միջոցներով մաքառող, ակն ընդ ականի վարդապետութեան հե-
տեւող, հարատահարիչ ու բռնացող թշնամու դէմ զէնքով պայ-
քարող հերոս է: «Զինեալ հայրենասիրութիւն», ըստ Ն. Ադոնցի:
Զինեալ հայրենասիրութիւն եւ զինեալ ազատամարտ յանուն
հայրենիքի փրկութեան — ա՛յս էր Բաֆֆիի դաւանանքը: Մի
ռազմակոչ, որ մինչեւ այդ խորթ է եղել հայի հոգուն:

Բաֆֆին խորապէս ուսումնասիրել էր հայկական իրականու-
թիւնը, ինչպէս նաեւ հայոց անցեալը: Նա իր երկերում մատնա-
նշեց բոլոր այն չարիքները, որոնք պատճառ էին հայ ժողովրդի
դժբախտութեանց: Միայն օտար տիրապետութեան լուծը թօ-
թափելով, նրա կարծիքով, չարիքը չէր վերանայ. անհրաժեշտ
էր նոյնպիսի եռանդով պայքար մղել եւ ներքին չարիքների դէմ
— մտաւոր յետամնացութիւն, կղերի եւ վաշխառուների հասցրած
վնասները, ազգային անմիաբանութիւն, կրօնական անհանդուր-
ժողութիւն, տգիտութեան եւ սարկամտութեան ոգի, անիշխա-
նութիւն եւ շահամոլութիւն ազգային հաստատութիւնների մէջ:
Այս բոլորի դէմ էլ անհրաժեշտ էր կռուել արմատական միջոցնե-
րով: Յեղափոխութիւն թուրք բռնակալութեան դէմ, բայց յեղա-

փոխութիւն նաեւ ազգային ներքին շարիքների դէմ՝ միացեալ, լուսամիտ եւ ազատ ազգութիւն ստեղծելու համար։

Բաֆֆին իր մարգարէական տեսողութեամբ նախագծեց այն ամէնը, որ մօտիկ ապագայում տեղի պիտի ունենար։ Իր երեւակայած «աւազակ» յեղափոխականներն ու հայդուկային խմբերը, իր Սահրատներն ու Խենթերը, Սաքօներն ու Կարօները, Աւօներն ու Ասլանները շուտով երեւան պիտի գային Հայոց լեռներում, յանձին Արաբօների, Ցունօների, Քեռիների, Շամիլների, Գէորգ Զաւուշների, Արխանեանների, իբրեւ կենդանի գործողներ, ի վերջոյ, կազմելու համար Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան մարտական ու մտաւորական ասպետների զօրագունդը։

Գաղափարական այս խմորումները, մտքի եւ զգացմունքների անօրինակ խռովքը, հայրենասիրական բուռն եռուզեռը, որ յաջորդեց Բերլինի Վեհաժողովին, շուտով վերածուեց իրական գործի՝ Վարժապետեանի եւ Խրիմեանի ու Բաֆֆիի ցոյց տուած երկու ուղղութիւններով։ Մի կողմից՝ ծայր տուեց տարերային մի շարժում հայ հասարակութեան մէջ դաւառաբնակ հայութեան կրթական-տնտեսական մակարդակը բարձրացնելու համար։ Իրար յետեւից սկսեցին հիմնուել ընկերութիւններ, որոնց նպատակն էր դպրոցներ բանալ դաւառներում։ 1880-ին, երեք մեծ ընկերութիւնների միաձուլումով, կազմուեց հռչակաւոր Միացեալ ընկերութիւնը, որ այնքան մեծ դեր կատարեց ապագային։ Ընկերութիւնների կողմից դաւառ անցան երիտասարդ մտաւորական ուժեր՝ նուիրուելու համար ժողովրդի լուսաւորութեան գործին։ Դրանց մէջ առանձնապէս նշանաւոր եղան Մկրտիչ Փորթուգալեանը, որ 1878-ին հիմնեց Վանի Վարժապետանոցը. Մըկրտիչ Սարեանը մի խումբ գաղափարական ուսուցիչներով, իբրեւ Միացեալի դպրոցների ընդհանուր տեսուչ։ Միաժամանակ Կովկասից էլ սկսուեց նմանօրինակ մի շարժում՝ «Դէպի Երկիր», երիտասարդ մտաւորականների հոսանք դէպի Թրքահայաստան՝ ժողովրդի լուսաւորութեան գործին ծառայելու կամ երկրի պայմանները ուսումնասիրելու նպատակով։

Կրթական աշխատանքին զուգընթաց՝ այս «առաքեալները» նաեւ հայրենասիրական սերմեր էին ցանում ժողովրդի մէջ, ազգային-քաղաքական դաստիարակութիւն էին տալիս, զարգացնում էին ժողովրդի մէջ ինքնապաշտպանութեան եւ ազդովին, կազմակերպուած ու համերաշխ, «երկաթէ չերեփով» գործելու գիտակցութիւնը։ Մտքի լուսաւորութիւնը, կրթական գործը նրանց համար նախապայման էր միայն հետագայ ազատագրական մարտերի համար։ Ազատամարտը անխուսափելի էր եւ անհրաժեշտ։ Այս գիտակցութիւնը ընդհանուր էր եւ տիրական ութսունական



Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

թուականների սերնդի մէջ։ Նոյնիսկ պահպանողական տարրերը համոզուած էին, որ Հայոց փրկութիւնը զէնքից է կախուած։

«Հայոց ազգի անմիտ երկչոտութիւնը մինչեւ այն աստիճան հասած է, զրում էր 1878–ին Պոլսի «Փունջ»ում Այվազեան վարդապետը, որ իւր թշուառ վիճակին վրայ նշան անգամ չի յայտներ։ Երբեմն իր յոյսերը Սահմանադրութեան վրայ դրած էր, այսօր ալ իւր բոլոր ակնկալութեանց կեդրոն ըրած է դպրոցները եւ կը սպասէ, որ դպրոցներէն գտնէ ազատութիւն։ Բայց մի՞թէ դպրոցին մէջ կը սորվի հայն արիւնռուշտ քիւրտին թուրը ջախջախել... Պաշտպանե՛լ պէտք է ազգութիւնը ինչ միջոցով ալ ըլլայ, եթէ բարոյական ազդեցութեամբ, եթէ բռնութեամբ, եթէ յեղափոխութեամբ, միայն թէ հայրենիքը փրկուի»։

Այվազեան վարդ.–ի պէս մտածողները, ի հարկէ, սխալւում էին։ Կրթական–դպրոցական շարժումը զուտ մշակութային երեւոյթ չէր, այլեւ ազգային–քաղաքական բովանդակութիւն ունէր։ Փորթուգալեաններն ու Սարեանները միայն ուսուցիչներ չէին. դպրոցը նրանց համար միջոց էր նաեւ հայ ժողովուրդը պատրաս-

տելու ազատագրական պայքարի համար։ Եւ Թուրքը այդ շուտով ըմբռնեց՝ շտապելով հեռացնել նրանց գործունէութեան ասպարէզից, բանտարկելով եւ աքսորելով։

Զուր էր դանդատը եւ այն մասին, թէ հայը միայն «դպրոցներէն կը սպասէր գտնել ազատութիւն»։ Ոչ միայն «բարոյականութեամբ», «յեղափոխութեամբ» էլ սկսել էին արդէն գործել հայերը։ Եթէ չհաշուենք 1872–ին Վասպուրականում ծնունդ առած «Միութիւն ի Փրկութիւն» գաղտնի ընկերութիւնը «Մահ կամ Ազատութիւն» նշանաբանով, որի մասին, դժբախտաբար, շատ քիչ տեղեկութիւն է մնացել հայ ազատագրական շարժման պատմութեան մէջ, 1880–ին, Կարինում արդէն գործում էր «Պաշտպան Հայրենեաց Գաղտնի Ընկերութիւն Բարձր Հայոց» կազմակերպութիւնը, որ նպատակ էր դրել զէնքի ուժով ձեռք բերել Հայաստանի ազատութիւնը։ Ընկերութիւնը կազմուած էր, մեծ մասամբ, արհեստաւոր ու առեւտրական խոնարհ տարրերից. հետեւորդներ ունէր եւ Դաշտի գիւղերում։ Անդամները բաժանուած էին տասնեակների՝ խմբապետների ղեկավարութեան տակ։ Անդամավճար էր հաւաքւում։ Գաղտնի ժողովներ էին գումարւում։ Թռուցիկներ էին հրատարակւում։ Խումբերը ունէին զէնքեր եւ ամէն անդամ պարտաւոր էր զինավարժութեամբ պարապել։ Ընկերութիւնը յարաբերութիւններ էր հաստատել Կովկասի գործիչների եւ Խրիմեան Հայրիկի հետ, որ այդ միջոցին Վանումն էր։

1882 թ. Նոյեմբերին, պատահական մի դէպքի հետեւանքով, Գաղտնի Ընկերութեան գոյութիւնը յայտնի դարձաւ Թուրք իշխանութեան։ Տեղի ունեցան խուզարկութիւններ եւ 76 հոգի ձերբակալուեցան, որոնցից 57 հոգի դատարանի յանձնուեցան 1883–ին՝ Սուլթանի իշխանութեան դէմ յեղափոխութիւն պատրաստելու եւ Հայաստանը Թուրքիայից անջատելու ամբաստանութեամբ։ Դատախազը բոլորի համար մահապատիժ պահանջեց։ 40 հոգի դատապարտուեցին 5–15 տարի բանտարկութեան։ Մնացածները անպարտ արձակուեցին։

Առաջին քաղաքական դատն էր այս, որ հայերը ունեցան Թուրքահայաստանում։

Միեւնոյն տարիներին, Խրիմեանի եւ Փորթուգալեանի դաստիարակած սերունդը հիմք է դնում հայրենասիրական գաղտնի կազմակերպութեան Վանում, որ նախապէս յեղափոխական բնոյթ ունէր, աշխատում էր նախապատրաստել ժողովրդին զինուած պայքարի համար, զէնք էր ներմուծում Երկիր, հայդուկային խմբեր էր կազմում եւ հաւատում էր ընդհանուր ապստամբութեան։ 1885 թուականից յետոյ, երբ Մ. Փորթուգալեանը Մար-

սէյլում հիմնեց «Արմենիա» չափաւոր–ազատական թերթը, Վանի այս կազմակերպութիւնը յարեց նրա ուղղութեան՝ իւրացնելով «Արմենական» անունը՝ ապագային, 1908–ին, ձուլուելու համար նորաստեղծ Սահմանադիր–Ռամկավար քաղքենի–պահպանողական կուսակցութեան հետ։ Արմենականութիւնը, հակառակ թափուած ճիգերի, լայն տարածում չգտաւ եւ Վասպուրականի սահմաններից դրեթէ դուրս չեկաւ՝ մնալով, իբրեւ Վանի տեղական կազմակերպութիւն։ Իր դերը եղաւ աւելի քարոզչական։ Նախ քան «Հնչակ»ի եւ «Դրօշակ»ի երեւան գալը, Փորթուգալեանի «Արմենիա»ն որոշ ազդեցութիւն ունեցաւ ազատագրական մտքերի արծարծման տեսակէտից։ Ոմանք Փորթուգալեանի «Արմենիա»ն նմանեցնում են ռուս յեղափոխութեան ռահվիրայ Գերցէնի «Կոլոկոլ»ին (Զանգ»), որ սխալ է, ի հարկէ։ Ոչ Փորթուգալեանը Գերցէն էր, ոչ էլ «Արմենիա»ն՝ «Կոլոկոլ», որի հնչած ահազանգը ցնցեց ժամանակի ռուս մտաւորականութեան ու երիտասարդութեան մտքերն ու հոգիները։

Բարձր Հայքով ու Վասպուրականով չսահմանափակուեցին, անշուշտ, յեղափոխական խմորումները։ Հայկ. ուրիշ կենտրոններում էլ ծնունդ առին նոյնանման գաղտնի խմբեր միևնոյն նպատակներով — կազմակերպուած եւ զինուած պայքարով նուաճելու Հայաստանի ազատութիւնը։ Պոլիս, Մուշ, Սեբաստիա, Կիլիկիա եւ այլ վայրերում հայ հանրային միտքը, առաւել կամ նուազ չափով ազդուած էր ժամանակի ազդասիրական–ազատագրական խմորումներից։

Նոյն երեւոյթը տեսնում ենք եւ սահմանի միւս կողմը՝ ռուսահայութեան մէջ։ Այստեղ եւս յեղափոխական խմորումները նկատւում են համարեա բոլոր հայաբնակ վայրերում։ Այսպէս, ութսունական թուականների սկզբին, Երեւանում, գոյութիւն ունէր մի գաղտնի ընկերութիւն, որի նպատակն էր դրամ հաւաքել եւ զէնք ու գործիչ ուղարկել Թրքահայաստան՝ ապստամբութեան միջոցով ազատելու համար Հայաստանը թրքական լծից։ Այս ընկերութեան կողմից էր, որ Երկիր անցան հետագային յեղափոխական ռահվիրայի հռչակ ստացած Զաքին (Բագրատ վարդ. Թաւաքալեանը), ինչպէս եւ Դարալագեազցի Տէր–Գրիգորը։ Երեւանի ընկերութիւնը մի քանի տարուայ կեանք ունեցաւ եւ, ի վերջոյ, նրա անդամները — Վ. Եղիազարեան, Տ. Վարդանեան, Թ. Մհերեան եւ ուրիշներ ձերբակալուեցին եւ աքսորուեցին Ռուսաստանի զանազան կողմերը։

Նոյն ժամանակները Ղարաբաղի կենտրոն Շուշիում գործում էր դպրոցական աշակերտներից եւ գործակատարներից կազմուած «Ոյժ» հայրենասիրական գաղտնի ընկերութիւնը, որի նպատակն

էր նոյնպէս դրամով եւ զէնքով օգնել Հայաստանի ազատութեան «սուրբ գործին»։

Գաղտնի ընկերութիւններ կային եւ Բազում ու Կովկասի ուրիշ հայաշատ վայրերում, բայց յեղափոխական խմբումների կենտրոն էին, մասնաւորապէս, Թիֆլիսը, Մոսկուան ու Պետերբուրգը։ Վերջին երկու քաղաքների հայ ուսանողութիւնը կազմում էր յեղափոխական շարժման թթխմորը՝ առաջինը՝ համամարդկային-ընկերվարական հակումներով, վերջինը՝ զուտ ազգային դեռնի վրայ։

Քրիստափորը և Զաւարեանը իրենց յուշերում*) պատմում են, որ արդէն 80-ական թուականների առաջին տարիներին Թիֆլիսում գոյութիւն ունէին գաղտնի խմբակներ, բաղկացած գլխաւորապէս թրքահայ պանդուխտ մշակներից կամ դպրոցական աշակերտներից, որոնք պատրաստւում էին յեղափոխական գործունէութեան։ Քրիստափորը գրում է. «83 թուականի ամառը Թիֆլիսում գոյութիւն ունէր բաւական ամուր եւ գործունեայ մի խումբ։ Բացի երկսեռ երիտասարդութեան ինքնաղարգացման խմբակների ղեկավարութիւնից, այդ խումբը հրատարակում էր խմորատիպ թռուցիկ թերթեր։ Ես յիշում եմ մի շարք այդպիսի թռուցիկներ Նալբանդեանից, Գամառ Քաթիպայից եւ Բաֆֆիից առնուած մակագրութիւններով — «Ամենայն տեղ մահը մի է»։ «Մեր Հայրենիք, թշուառ անտէր», «Հիմի՞ էլ լռենք», «Արդեօք դալո՞ւ է մի օր, ժամանակ» — որոնց մէջ տաք կերպով արծարծւում էր թրքահայկական հարցը եւ միութեան կոչ էր արւում։ Սարքւում էին ժողովներ, որոնց մէջ, միացեալ խմբակների առջեւ, կարդացւում էին մշակուած շարադրութիւններ գերազանցապէս հայ կեանքից, պատմութիւնից եւ գործօն հետաքրքրութիւն ցոյց տալով դէպի թրքահայկական հարցը՝ ընկերներ էր ուղարկում Թուրքիա ուսումնասիրելու երկիրն ու յեղափոխական պրոպագանդը։

«Այս խմբից ոմանք, յաջորդ տարի, փոխադրուեցին Մոսկուա եւ մասնակցեցին «Հայրենասէրների Միութիւն» կազմակերպութեան, որ հիմնուել էր 1882-ին թրքահայ Դատի արծարծման եւ պաշտպանութեան համար։ Կազմակերպութեան անդամները ամենքը Մոսկուայի բարձրագոյն դպրոցների ուսանողներ էին՝ տոգորուած հայ հայրենասիրական եւ ռուս արմատական-յեղափոխական գաղափարներով։ «Հայրենասէրների Միութիւնը» հաստատեց առաջին հայկական գաղտնի տպարանը, ուր տպւում էին

*) «Վաթսունամեակ» ժողովածու, հրատ. Հ. Յ. Դ. Ամեր. կեդր. կոմիտէի, 1950, Պոսթըն։

նրա թռուցիկները, եւ առաջին յեղափոխական հայերէն թերթը՝ «Ազատութեան Աւետաբեր»։

«Հայրենասէրների Միութիւնը» արդար իրաւունքով կարող է համարուել Հ. Յ. Դաշնակցութեան նախակարապետը։ Անկախ նրանից, որ նրա անդամներից ոմանք պիտի մտնէին Դաշնակցութեան շարքերը, իր ջատագոված գաղափարներով «Հայր. Միութեան» թերթը շատ բաներով յիշեցնում է Հ. Յ. Դաշնակցութեան Մանիֆէստը եւ «Դրօշակ»ի առաջին համարները։ Այսպէս, «Ազատութեան Աւետաբեր»ի առաջին համարի խմբագրականում կարդում ենք.—

«Հայաստանի բազմաչարչար ժողովրդի դարեւոր վիշտը եւ նրա ազատութեան գաղափարը սկիզբն եւ կեանք տուին «Հայրենասէրների Միութեան»։ Սկսելով իր յեղափոխական գործունէութիւնը՝ «Հայր. Միութիւնը» պարտք է համարում պարզել այն հիմնաւոր գաղափարները, որոնք կազմում են նրա գոյութեան հոգին...։

«Հայրենասէրների Միութեան» պատգամներից մէկն է ազգերի համերաշխութիւնը... Մենք քարոզում ենք սերտ համերաշխութիւն Հայաստանում բնակուող ազգերի մէջ... Մենք հաւասարաչափ յարգում ենք իւրաքանչիւր ազգի լեզուն, կրօնը եւ անկախութիւնը, եթէ միայն նա չէ ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դնում ուրիշների կանոնաւոր զարգացման...

«Ժողովուրդի ազատութեան հիմնաքարն է նրա տնտեսական անկախութիւնը։ Ուստի «Հայր. Միութիւնը» աշխատելու է, որ երկիրը, հողը իր բնական հարստութիւններով եւ աշխատանքի գործիքները դառնան աշխատաւորների, բանուորների սեփականութիւն։ Եթէ Հայաստանի աշխատող, արդիւնաբերով ուժերը՝ երկրագործը, արհեստաւորը, մշակը տնտեսապէս հարստահարուելու են, «Հայր. Միութեան» աչքում ոչ մի քաղաքական ազատութիւն, միտք եւ նշանակութիւն չունի...

«Մենք թշնամի ենք ներկայ առանձնական, բաժան-բաժան կազմակերպութեան, որտեղ տկարը անօգնական է, իսկ ուժեղը՝ հարստահարող եւ անգութ։ Մենք քարոզում ենք ընկերական միաբանութիւն, որտեղ ընդհանուրը հոգում է իւրաքանչիւրի համար, իսկ իւրաքանչիւրը՝ ընդհանուրի համար։ Ահա ինչու բոլոր մասնաւոր կալուածատէրերի եւ պետութեան ձեռքի հողերը պէտք է անցնեն համայնքների ձեռքը. համայնքը միակ սեփականատէրն է, միակ ապառողն է, որովհետեւ նա միակ աշխատող, արդիւնաբերողն է։ Միեւնոյն ժամանակ, համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պէտք

է կազմուի ընդհանուր քաղաքական դաշնակցութիւն, ֆեդերացիա»:

Ռուս հասարակական մտքի զարգացման պատմութեան ծանօթ մէկը կարող է դիւրութեամբ տեսնել, թէ «Հայր. Միութեան» դաղափարախօսները ի՞նչ ակունքներից էին ստացել իրենց մտաւոր սնունդն ու ներշնչումը: «Ազատ. Աւետաբեր»ը, շատ անդամ, նոյնիսկ բառացի կրկնում էր ռուս ընկերվարական Նարոդնիկների մտքերն ու խօսքերը: Մասնաւորապէս ուշադրաւ է «Ազատ. Աւետաբեր»ի կարծիքը համայնքի դերի մասին, որ ռուսական ինքնայատուկ «միր»ը հայկական ծառի վրայ պատուաստելու փորձ էր: Այս միտքը որոշ չափով մտել է եւ Դաշնակցութեան ծրագրի մէջ, թէեւ համայնական կարգը ընդհանուր երեւոյթ չէր Հայաստանում: Այդեգործական շրջաններում, օրինակ, հողի համայնատիրութիւնը անծանօթ էր եւ անհնարին:

«Գալով հայկական քաղաքական հարցին՝ «Ազատ. Աւետաբեր»ը Հայաստանի «բոլոր չարիքների սկզբնական պատճառը» համարում է «Թիւրքիայի բարբարոս կառավարութիւնը». «նա ինքն է ամենամեծ հարստահարողը, աւազակը, որի հովանաւորութեան տակ ապրում եւ գործում են մնացեալ փոքր ասպատակողները եւ արիւն ծծողները»: Հետեւաբար, «Հայրենասէրների Միութիւնը» մահացու պատերազմ է յայտարարում Թիւրքիայի կառավարութեան դէմ»:

Կռիւը արդէն սկսուած է: «Հաւատով եւ անվեհեր չարունակենք սկսուած գործը: Թո՛ղ գիտնականը նուիրէ իր մտաւոր ուժերը, թո՛ղ ունեցողը չխնայէ իր ոսկին, երիտասարդը զոհ բերէ հայրենիքի ազատութեան համար իր անձը, իսկ հայ ծնողները թող պատրաստեն իրենց որդկերանցից հայրենիքի ապագայ պաշտպաններ»:

Նոյն այս հրաւէրը ապագային պիտի կարդանք Հ. Յ. Դաշնակցութեան Մանիֆէստի մէջ:

«Հայրենասէրների Միութիւնը» հապիւ չորս տարուայ կեանք ունեցաւ: 1886-ի ամառը նրա անդամները, աւարտելով իրենց ուսման ընթացքը, վերադարձան Կովկաս: «Ազատ. Աւետաբեր»ի տպարանն էլ (այսինքն՝ տառերը) փոխադրուեց Թիֆլիս, ուր մի ժամանակ դաղտնի խմբերի կողմից օգտագործուելուց յետոյ, անցաւ նորաստեղծ Հ. Յ. Դաշնակցութեան: Այդ տպարանի մասին էր դրում Քրիստափորը, թէ 1887-ին «իմ մի փորձը ընկ. Ստեփան Զօրեանի (Ռոստոմի) հետ Թիֆլիսում հիմնելու դաղտնի տպարան յաջողութիւն չունեցաւ նիւթական միջոցների պակասութեան պատճառով: Միջոցներ հարկաւոր էին ոչ թէ տառեր գնելու համար — տառերը մենք ժառանգել էինք «Ազատ. Աւե-

տարբեր»ի հիմնադիրներից,— այլ որպէսզի պահենք բնակարանը եւ մի ընկերոջ, որին տեղաւորել էինք այդ բնակարանում աշխատանքի համար: Այդ ամէնը մենք փորձեցինք անել անձնական միջոցներով, բայց մեր միջոցները բաւական չեղան. մենք ապրում էինք մասնաւոր կոպեկանոց դասերով»:

«Հայրենասէրների Միութիւնը» իր թռուցիկներով ու թերթով կամ անդամների անձնական քարոզչութեամբ, անկասկած, կարեւոր դեր կատարեց ռուսահայ մտաւորական երիտասարդութեան աշխարհահայեացքի մշակման, հայրենասիրական զգացմունքների հրահրման եւ, մասնաւորապէս, Մոսկուայի հայ ուսանողական ընկերային-քաղաքական դաստիարակութեան տեսակէտից:

Բոլորովին այլ ուղղութեամբ էր ընթանում Պետերբուրգի հայ ուսանողութիւնը, որ նոյնպէս անտարբեր չէր դէպի Հայ Դատը եւ հայ ազատագրական հարցերը: Այստեղ, սակայն, տիրապետում էր առաւելապէս ազգային տրամադրութիւնը եւ մշակութային աշխատանքի նախասիրութիւնը: Մինչ մոսկուացիները եռանդով մասնակցում էին ռուս յեղափոխական շարժումներին, անյաղ կարդում, ուսումնասիրում ու ոգեւորւում էին ռուս արմատական հեղինակների երկերով, տարուած էին համամարդկային-ընկերային գաղափարներով եւ «Նարոդնայա Վոլեա» յեղափոխական- ընկերվարական կազմակերպութեան գործունէութեամբ, Պետերբուրգի ուսանողութիւնը զբաղուած էր զուտ հայկական խնդիրներով: Այստեղ էր, որ հրատարակուեց յեղափոխական բնոյթ կրող ժողովրդական գրքոյկների շարքը՝ լայնօրէն տարածուելով ժողովրդական խաւերի մէջ եւ մեծապէս նպաստելով հայ երիտասարդութեան ազգային-հայրենասիրական զարթօնքին:

Բնականաբար, Պետերբուրգում էլ կային անհատներ, որոնք համամիտ էին Մոսկուայի ընկերվարական գաղափարներով տոգորուած ուսանողներին, ինչպէս Մոսկուայում էլ կային համակիրներ Պետերբուրգի «ազգասէրներին»: Բաժանումը աշխարհագրականից աւելի գաղափարական գծով էր ընթանում — մնալ առանձնացած զուտ ազգային սահմաններո՞ւմ, թէ՞ ազգային դատը ներդաշնակել համամարդկային յառաջադիմական գաղափարների եւ շարժումների հետ: Վերջին ուղղութիւնը անհրաժեշտօրէն թելադրում էր ընկերվարական սկզբունքների որդեգրումը, որ այնպէ՛ս խրատեցնում էր ազգասէրներին: «Կոսմոպոլիտ» ու «չովինիստ», աշխարհաքաղաքացի եւ ազգայնամոլ՝ նախատական որակումներ էին մէկը միւսի հասցէին: Բայց խորունկ բաժանում դեռ չկար նրանց միջեւ. նրանք հայրենասիրական

միեւնոյն ընտանիքի զաւակներ էին եւ ունէին միեւնոյն մտաբեւեռումը — Հայաստանի ազատութիւնը Թրքական լծից։

Ութսունական թուականների վերջերը առանձին ոգեւորութեան տարիներ եղան կովկասահայ երիտասարդութեան համար։ Երկրից հետզհետէ լուրեր էին հասնում մի կողմից թրքական վայրագութիւնների, միւս կողմից հայկական ընդվզումների մասին։ Այստեղ եւ այնտեղ երեւան էին գալիս անհատ հերոսներ կամ «հայդուկային խմբեր», որոնք ահ ու սարսափ էին ազդում կառավարական պաշտօնեաների, թուրք ու քիւրդ կեղեքիչների եւ հայ դաւաճանների վրայ։ Դիւցազնական Աբաբօն, Ցունօն, Տէրսիմի Քեռին, Արմտանի Գալուստ Արխանեանը, Զաթօ ու Շէրօ, ախալցխացի Շամիլի «աւազակախումբը»—Շատախից մինչեւ Օլթի, ամէն կողմ ինքնաբերաբար դաժան կռիւ էր յայտարարուած թուրք բռնակալ իշխանութեան, ամէն ազգի գիշատիչ կեղեքիչների դէմ։ Հայոց լեռները թնդում էին «ստրուկի բողոքը» պոռթկացնող հայդուկների սխրագործութիւններից, որոնց արձագանգները ցնծութիւն էին պատճառում նաեւ սահմանի միւս կողմը՝ կովկասահայութեան սրտերին։ Նրանք, այդ հայդուկները, այն մրրկահաւերն էին, որոնք Մեծ փոթորիկն էին աւետում Հայոց Աշխարհին։ Եւ մօտեցող փոթորիկների որոտը հմայում, պայքարի դաշտ էր մղում ըմբոստ եւ ազատատենչ, հայրենասիրութեան կրակով բոցավառ անձնուէր հոգիներին։ Մի տարերային շարժում էր սկսուած երթալ-գոհուելու յեղափոխական մարտերի հրդեհում։ Երիտասարդութիւնը՝ մի կողմից Երկրից հասնող լուրերի ազդեցութեան տակ, միւս կողմից ներշնչուած Բաֆֆիի վէպերով՝ միջոց էր փնտրում անցնելու սահմանը, յաճախ, առանց իմանալու, թէ ինչ է սպասում իրեն եւ կամ՝ ի՞նչ է անելու այնտեղ։

Մէկ օրինակ միայն — Վարդան Գոլոշեանը։ Թիֆլիսցի մտաւորական ու բարեկեցիկ ընտանիքի զաւակ, դեռ պատանի հասակում, ներշնչուած հայրենասիրական զգացմունքով, նա ձգել էր ծնողական յարկը եւ անցել Սալմաստ ու Վասպուրական՝ յեղափոխական գործունէութեան համար։ Վերադառնալով Թիֆլիս, Երկրից բերած լուրերով յեղափոխական շրջանների համար, նա 1889 թ. դարնան, վերջնականապէս թողնելով հարազատներին, մի ընկերոջ՝ վանեցի Ադրիպասեանի հետ, Սալմաստի վրայով, ուղեւորուեց դէպի Վասպուրական եւ Ճանապարհին, Զուխ Գեադուկի մօտ, հանդիպելով թուրք ոստիկաններին, նահատակուեց։ Ադրիպասեանին յաջողուեց ազատուել։

Քիչ չեն եղել նման նահատակներ, բայց Գոլոշեանի եղերական մահը առանձնապէս ուժեղ տպաւորութիւն գործեց հասա-

բակութեան մտքերի վրայ։ Ցուցիչ էր այն նամակը, որ նա Սալ-մաստի Հաֆթվան գիւղից ուղարկել էր հօրը.— «Պատանեկութեան հասակումս, ասում էր այդ նամակում, մեր հասարակական ասպարէզում փայլում էր Բաֆֆին։ Այդ համակրելի մարդու նշանաւոր գործունէութիւնը զեկավարում էր մի մեծ գաղափար — Հայաստանի ազատութեան գաղափարը։ «Մշակ»ի մէջ եւ յետոյ առանձին տպուած նրա վէպերը ես կարդացի։ Այդ հեղինակի ընթերցանութիւնը ներշնչեց մէջս մի վառ ու աղնիւ սէր դէպի ազգ ու հայրենիք, դէպի տառապեալ հայութիւնը։ Ես վճռեցի մինչեւ մահս գործել հայրենիքի փրկութեան համար, նրա բարօրութիւնը իմ երջանկութիւնս համարել։ Եւ այդ վճիռը չէր այն վաղանցուկ կրքերից մէկը, որ քամու պէս ծնւում ու կորչում է. ո՛չ, նա աւելի խոր արմատ ունէր։ Ես զգում եմ, որ առանց հայրենիքի ես ոչինչ եմ, որ անկարելի է ինձ մի այլ նպատակի ծառայել։ Ես տեսայ մեր հայրենիքի թշուառ կացութիւնը, նրա ժողովրդի անտանելի դրութիւնը. ես այդ երկրի, այդ ժողովրդի մէջ ապրեցի, եւ իմ վճիռս աւելի եւս հաստատուն եւ անքակտելի եղաւ։ Այս գաղափարն էր, որ փախցրեց ինձ տնից...

«Ես չգիտեմ, թէ որքան կը յաջողուի մեր նպատակը. գուցէ մենք կ՝ընկնենք շուտով եւ շատ շուտով։ Բայց մեր անկումը պիտի այլոց գրգռէ, եւ մենք շատերին օրինակ կը լինենք մեր գործունէութեամբ։

«Համոզուած եղէք, հա՛յր իմ... Թուրքիան պիտի ընկնի եւ տառապեալ Հայաստանը ոտի պիտի կանգնէ. դա մի ճակատագրական գաղափար է, մի իդէալ, որի անկասկածելի իրականանալը մօտիկ ապագայում տեսնելու է հայութիւնը»։

Նոյն 1889 թուականին պատահեց մի ուրիշ դէպք, որ մեծ յուզում առաջ բերեց ամենուրեք հայկական շրջաններում. Գիւլիզարի առեւանգումը Մուսա բէյի ձեռքով։ Ամէն կողմից բարձրացած բողոքի հետեւանքով, որ արձագանգ գտաւ եւ եւրոպական մամուլում, Սուլթանը ստիպուած եղաւ Մուսա բէյին դատի յանձնել Պոլսում։ Դատարանը թէեւ դատապարտեց, բայց Մուսա բէյը շուտով ազատ արձակուեց՝ շարունակելու համար շահատակութիւնները հայերի դէմ։

Նոյն թուականին տեղի ունեցաւ վարդենիսցի Մարդար վարժապետի ընդհարումը քիւրդ հրոսակների հետ, որ նոյնպէս լայն արձագանգ գտաւ եւ յուզում առաջ բերեց հայկական շրջաններում։

Այս եւ համանման ուրիշ բազմաթիւ դէպքերը չէին կարող չխռովել առանց այն էլ հասարակական գրգռուած մտքերը։ Կովկասի հայութիւնը առանձնապէս իր սրտին մօտ էր առնում թըր-

քահայ եղբայրների տառապանքները, եւ ամէն կողմից պահանջ էր դրւում յեղափոխական գործի ձեռնարկելու։ Մանաւանդ որ բարենրոգումների խնդիրն էլ ձգձգւում էր, եւ Արդուլ Համիդը անպատիժ սաստկացնում էր հայաջինջ քաղաքականութիւնը։

Հրապարակի վրայ չկար մի հեղինակաւոր կազմակերպութիւն, որ իր ձեռքը առնէր Թրքահայոց ինքնապաշտպանութեան եւ ազատագրական պայքարի ղեկավարութիւնը։ Փորթուգալեանը իր «Արմենիա»յով անզօր էր այդ դերը կատարելու։ 1887 թ. կազմուած Հնչակեան կուսակցութիւնը իր օտարամուտ խորթ գաղափարներով եւ վստահութիւն չներշնչող ղեկավարութեամբ հող չէր գտնում Կովկասում։ Հրամայական պահանջ էր մի նոր կազմակերպութիւն կեանքի կոչելու, որ միացնէր ու համադրէր բոլոր հայրենասէր ու յեղափոխական ուժերը ազգային ընդհանուր ծրագրի եւ գործունէութեան շուրջ։ Այս գիտակցութիւնը դառնում էր տիրական հասարակական բոլոր խաւերի մէջ։

1889-ին, Թիֆլիսում, ծնունդ առաւ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութիւնը, որ նպատակ էր դնում միացնել մինչեւ այդ գոյութիւն ունեցող բոլոր յեղափոխական խմբերը՝ Թրքահայաստանի քաղաքական եւ տնտես. ազատագրութեան համար։ Այդ կազմակերպութեան կորիզը կազմում էր «Դրօշակ» խումբը, որի մէջ կամ շուրջը համախմբուած էր Թիֆլիսի յեղափոխական ընտրանին։ «Դրօշակ»ի եւ ուրիշ խմբերի միութիւնից ստեղծուած «Երիտասարդ Հայաստան»ի անդամ էին կամ համակիր Քրիստափոր Միքայէլեանը, Սիմոն Զաւարեանը, Աւ. Սահակեանը, Յովհ. Իւսուֆեանը, Նիկ. Մատինեանը, Յովսէփ Արղութեանը, Մարտ. Շաթիրեանը, Տիգրան Օքոնեանը, Արամ Նազարէթեանը, Յակ. Քոչարեանը, Արշ. Թադէոսեանը, Սաթենիկ եւ Նատալիա Մատինեան քոյրերը, Վարդան Գոլոշեանի քոյրը՝ Դարիան, Ս. Զաւարեանի քոյրը՝ Մարօն եւ ուրիշներ, որոնք կապուած էին միմեանց հետ գաղափարի եւ անձնական մտերմութեան կապերով։ Ամենքը՝ մտաւոր հարուստ պաշարով եւ փայլուն ձիրքերով օժտուած երիտասարդներ, շատերը թրծուած «Նարոդնայա Վոլեա»-յի եւ Գր. Արծրունիի «Մշակ»ի գաղափարական մթնոլորտում։

«Երիտասարդ Հայաստան»ի առաջին գործը եղաւ մարդիկ ուղարկել Թրքահայաստանի զանազան շրջանները ուսումնասիրելու եւ նոր նիւթեր բերելու Երկրի պայմանների, ժողովրդի վիճակի ու տրամադրութեան եւ յեղափոխական գործունէութեան հնարաւորութիւնների մասին։ Երկիր գնացողների մէջ էր եւ ապագայ Խանասորի Իշխանը՝ Յովսէփ Արղութեանը։ Ինչպէս նաեւ Մ. Մարգարեանը եւ Արշ. Բարխուդարեանը՝ վերջինս Մոսկուայի

ուսանողների կողմից։ Նոր կազմակերպութեան հիմնադիրները, ոչ յօրինակ Հնչակեան կուսակցութեան հիմնադիրների, պահանջ էին զգում լայն ու ճշգրիտ տեղեկութիւններ ունենալ այն երկրի մասին, որի համար պատրաստում էին յեղափոխական գործունէութեան ծրագիր մշակել ու կազմակերպութիւն ստեղծել։

Հազիւ «Երիտասարդ Հայաստանը» կազմակերպուած եւ գործի անցած էր, երբ 1890 թ. Յունիսին տեղի ունեցաւ Կարինի «Մեծ Դէպքը», որին յաջորդեց Գում Գափուի ցոյցը։ Այդ ցոյցերը անսահման ոգեւորութիւն առաջ բերին հայկական բոլոր շրջաններում, բայց, մանաւանդ, երիտասարդութեան մէջ։ «Շարժուեցին, յուզուեցին ու խառնուեցին ամենքը, դրում է այդ առթիւ Քր. Միքայէլեանը, համարելով ազատութիւնը բոլորովին մօտ եւ կարծես վախենալով, որ իրենք չեն ընկնի վաղուայ ազատութեան պսակով պսակուածների շարքը. տէրտէր, վաճառական, մտաւորական, բանուոր կամ գիւղացի՝ հասարակութեան բոլոր խաւերը պահանջ զգացին լայն կազմակերպուած կուսի Թուրքիայի դէմ, եւ «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութեան կողքին, 1890 Օգոստոսին,*) սկսուեց կազմակերպուել մի նոր գաղտնի կոմիտէ»։

Վերջին շարժման նախաձեռնութիւնը պատկանում էր Պետերբուրգի ուսանողութեան՝ Կոստանդին Խատիսեանի գլխաւորութեամբ։ 1890 թ. սկզբները Ռուսաստանի բարձրագոյն դպրոցներում տեղի էին ունեցել ուսանողական խռովայոյզ ցոյցեր։ Բազմաթիւ ուսանողներ ձերբակալուել եւ աքսորուել էին։ Համալսարանների մի մասը փակուել էր, եւ ուսանողութիւնը ցրուել տները՝ իրենց հետ տանելով բողոքի եւ ըմբոստութեան տրամադրութիւն ցարական բռնակալութեան դէմ։

1890-ի գարնան Թիֆլիս հաւաքուել էին մեծ թուով հայ ուսանողներ, որոնք ըստ գաղափարի, խառնուածքի եւ հակումների բաժանուել էին երկու հատուածի. մի կողմ՝ ազգասէրները, այսպէս կոչուած՝ «չովինիստները», որոնք կենտրոնացել էին «Սեւերնիկ Նոմերա» պանդոկում, միւս կողմ՝ արմատական յեղափոխական-ընկերվարականները, որոնց հաւաքավայրն էր «Իւժնիյէ Նոմերա» հիւրանոցը, ուր միաժամանակ գտնուում էր եւ «Երիտ. Հայաստան»ի կեդրոնը։ Հիւրանոցների անուններով կոչւում էին եւ երկու հատուածները «Սեւերնիյէ Նոմերա», այսինքն՝ «Հիւ-

*) Ժամանակի վերաբերմամբ Քրիստափորի յիշողութիւնը դաւանանել է. Օգոստոսին Հ. Յ. Դաշնակցութիւնը կազմուած էր։ «Մի նոր գաղտնի կոմիտէի» կազմութիւնը սկսուած պէտք է լինի Մայիս-Յունիսին։

սիսային Պանդոկ»ի եւ «Իւժնիյէ Նոմերա»՝ «Հարաւային Պանդոկ»ի խմբեր։ Պարզութեան համար այդպէս էլ անուանենք՝ «Հիւսիսային» եւ «Հարաւային»։

«Հիւսիսային»ները գոհ չէին «Հարաւային»ների արմատական-ընկերվարական դաղափարներից։ Նրանց առաջնորդ Կոստ. Խատիսեանը՝ հարուստ ընտանիքի եւ բարձրաստիճան պետական պաշտօնեայի զաւակ, թէ՛ իր ընկերային դիրքով, թէ՛ դաղափարներով ու հակումներով, շատ հեռու էր աշխատաւորական ապրումներից եւ ընկերվարական դաւանանքից։ Միւս կողմից, խառնուածքով եռանդուն, արագ ու կտրուկ գործելակերպի սիրահար՝ գոհ չէր «Երիտասարդ Հայաստան»ի ղեկավարների դանդաղութիւնից։ Եւ զարմանալի չէ, որ «Հիւսիսային»ները ձեռնարկել էին «Երիտ. Հայաստան»ի կողքին նոր «դաղտնի կոմիտէ»ի կազմակերպութեան։ «Սկզբում, ասում է Քրիստափորը, նա (դաղտնի կոմիտէն) հակում ունէր խմբուելու Արծրունիի շուրջը, բայց վերջինս շուտով հրաժարուեց գործօն աշխատանքից»։

«Մշակ»ի խմբագիր Գրիգոր Արծրունին, առհասարակ, մեծ հեղինակութիւն էր վայելում ազատամիտ շրջաններում։ Նա իրեն համարում էր յառաջադիմական երիտասարդութեան ղեկավար ու հովանաւոր։ Քր. Միքայէլեանն ու Ս. Զաւարեանը յարգում էին նրան եւ կարեւոր հարցերում դիմում էին նրա խորհրդին։ Մասնաւորապէս Թրքահայկական խնդրում Գր. Արծրունին իր «Մշակ»ով շատ կարեւոր դեր կատարեց, թէեւ նրա հետապնդած նպատակը՝ Թրքահայաստանի կցումը Ռուսաստանին՝ համակրանք չէր վայելում շատերի կողմից։ Մի ժամանակ Արծրունին նոյնիսկ ունէր իր առանձին «խումբը», որ յատկապէս զբաղւում էր Թրքահայկական հարցով, բայց երբ իմացաւ, որ ռուս կառավարութիւնը համաձայն չէ, որ ռուսահայերը զբաղուեն Թրքահայոց խնդրով, վերջ տուեց իր խմբի գոյութեան։ Այժմս էլ, երբ հասարակական միտքը զրգռուած էր եւ ամէն կողմից ցանկութիւն էր յայտնւում, որ Արծրունին անցնէ շարժման գլուխը, նա վճռական կերպով մերժեց՝ չկամենալով զոհել «Մշակ»ը «անորոշ» գործի համար։ Եւ ըստ էութեան էլ մշակականութիւնը արդէն լրացրել էր իր առաքելութիւնը. հասարակական նոր դաղափարներ, նոր ապրում ու պահանջներ էին առաջ եկել, նոր սերունդ, որին չէր կարող այլեւս գոհացնել Արծրունին իր քաղքենի ազատամտութեամբ։ Հարկաւոր էին նոր մարդիկ ժամանակի նոր պահանջներին բաւարարութիւն տալու համար։

Բայց ո՞ւր էին նոր մարդիկ։ Ո՞ւր էր այն հզօր իմացականութիւնը, որ կարողանար ազդել եւ մէկ յայտարարի բերել տարա-

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մերժ մտքերը։ Ո՞ւր էր այն ուժեղ բազուկը, որ սանձէր կենտրոնախոյս ուժերը, զսպէր կրքերն ու նախասիրութիւնները։ Այն պողպատէ կամքը, որ տիրական ուժով վարէր նոր ստեղծուելիք կազմակերպութիւնը։ Տարակարծութիւններն ու վէճերը «հիւսիսային»ների եւ «հարաւային»ների եւ, ընդհանրապէս, զանազան խմբակների միջեւ կարող էին լուծուել եւ համերաշխ ու կենդանի գործի վերածուել միայն հեղինակաւոր եւ կորովի անձի միջամտութեամբ։ Այդ մէկը գտնուեց, յանձին Քրիստափոր Միքայէլեանի։

Քրիստափորը իր անկեղծ եւ անսահման հաւատով դէպի նոր գործը, հզօր իմացականութեամբ, կուռ տրամաբանութեամբ ու

հուժկու կամքով, ծով լայնախոհութեամբ ու մարդոց հոգիները գերելու ուժով կարողացաւ հաշտեցնել ու միացնել այլազան հասանքներն ու ձգտումները եւ հիմքը դնել մի մեծ կազմակերպութեան մեծ գործի համար։

Պատմութիւնը, դժբաղտաբար, զրկել է մեզ բոլոր մանրամասնութիւններից. ոչ արձանագրութիւններ են մնացել, ոչ հիմնադիր ժողովների անդամների անուանացանկը, ոչ էլ յուշեր այդ օրերի դէպքերի մասին։ Յայտնի է միայն, որ բազմաթիւ ժողովներ են գումարուել, որոնց մասնակցել են Հիւսիսային եւ Հարաւային պանդոկների հատուածներից զատ ուրիշ խմբակների ներկայացուցիչներ եւս, անհատ դէմքեր ու Երկրից եկած գործիչներ։ Վերջին ժողովներին մասնակցել են եւ Հնչակեան ներկայացուցիչները յանձին Ռ. Խան-Ազատի եւ Հմ. Խուշպուլեանի։

Այդ ժողովներում տեղի են ունեցել երկարատեւ եւ բուռն վէճեր։ Հիմնական հարցի՝ Թրքահայաստանի ազատագրութեան շուրջ, ի հարկէ, լուրջ տարակարծութիւն չէր կարող լինել. ամենքը հաւաքուել էին այդ «սուրբ գործի» համար։ Տեսակէտների տարբերութիւններ կային ազատ Հայաստանի մասին. ոմանք բաւականանում էին Ներսէս Վարժապետեանի ծրագրով՝ վեց նահանգների ինքնավարութիւն եւրոպական հակակշռի տակ. ընկերային-տնտեսական հարցերից նրանք խուսափում էին։ Ուրիշներ, ինչպէս, օրինակ, Հնչակեանները դնում էին Հայաստանի անկախութեան պահանջ՝ ընկերվարական վարչաձեւով։

Ընկերվարութեան հարցը կարեւոր տեղ էր գրաւում Դաշնակցութեան հիմնադիր ժողովներում, որոնց մէջ կենտրոնական դեր էին կատարում «Հայրենասէրների Միութեան» եւ «Երիտասարդ Հայաստան»ի ընկերվարական դաղափարներով տոգորուած անդամները։ Քրիստափորը ինքը, իբրեւ «Նարոդնայա Վոլեա»յի անդամ, համոզուած ընկերվարական էր։ Հաւատացեալ ընկերվարական էր նմանապէս եւ Ս. Զաւարեանը, հիմնադիր ժողովների ամենագործօն անդամներից մէկը։ Հասկանալի է, ուրեմն, որ ընկերվարութեան հարցի շուրջ սուր տարակարծութիւններ եւ բուռն վէճեր տեղի պիտի ունեային։

Կարծիքների լուրջ տարակարծութիւններ կային եւ կազմակերպական ձեւի մասին. ի՞նչ հիմքերի վրայ դնել նոր կազմակերպութիւնը։ Հնչակեան կուսակցութիւնը որդեգրել էր խիստ կենտրոնացման սկզբունք։ Նոյնպիսի կենտրոնացման սկզբունքի վրայ հիմնուած էր եւ մարտական «Նարոդնայա Վոլեա»ն, նաեւ ուրիշ օտար յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք օրինակ պիտի հանդիսանային եւ հայ յեղափոխականների համար։ Բայց ժողովականներից ոմանք, մասնաւորապէս Ս. Զաւարեանը,

առարկում էին կենտրոնացման նպատակայարմարութեան դէմ հայկական իրայատուկ պայմաններում։ Հայութիւնը ցրուած էր անծայրածիր տարածութիւնների վրայ եւ տարբեր քաղաքական միջավայրերում։ Անհնար էր երեւակայել մի կենտրոնացած ղեկավար մարմին, որ ի վիճակի լինէր այդպիսի պայմաններում ճեռընհասօրէն վարել կազմակերպութեան գործերը։ Հայկական պայմաններին, ինչպէս անցեալ պատմութիւնն էլ է հաստատում, աւելի յարմար էր ապակենտրոնացման սկզբունքը՝ տեղական լայն նախաձեռնութեան իրաւունքներով։

Կային, անշուշտ, եւ ուրիշ հարցեր, սկզբունքային թէ գործնական, որոնք քննութեան եւ վէճերի առարկայ են եղել։ Այսպէս, հէնց ժողովների ընթացքին առաջ եկաւ Կուկունեան արշաւանքի խնդիրը, որ նոյնպէս չէր կարող չղրաղեցնել ժողովականների ուշադրութիւնը։

Դիւրին չէր նման եւ ուրիշ տարամերժ հարցերը հաշտեցնել եւ մի յայտարարի բերել։ Ճիշդ է, ժողովներին մասնակցողները ամենքը տոգորուած էին փոխադարձ հասկացողութեան եւ համաձայնութեան ոգիով, բայց եթէ չլինէր Քրիստափոր Միքայէլեանը, դժուար պիտի լինէր միաձոյլ եւ կուռ կազմակերպութիւն ստեղծել։ Քրիստափորը, անհաշտելին հաշտեցնելու իր բացառիկ կարողութեամբ, իր անձնական հմայքով ու հեղինակութեամբ հարթեց բոլոր խոչընդոտները։ Նա էր ժողովների տիրական ոգին եւ մղիչ ոյժը։ Նա իր կազմակերպական հանճարով կարողացաւ հաշտեցնել իրար բախող բոլոր սուր տեսակէտները, համադրել ու ներդաշնակել բոլոր հակամարտ անհատականութիւնները եւ նոյնիսկ Հնչակեան ներկայացուցիչների համաձայնութիւնը ապահովել մտնելու հիմնուելիք նոր կազմակերպութեան մէջ։ Այսպիսով ծնունդ առաւ մի նոր կուսակցութիւն, որ իր մէջ համախմբում, միաձուլում էր մինչեւ այդ գոյութիւն ունեցող գրեթէ բոլոր յեղափոխական խմբերն ու կազմակերպութիւնները, Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն անունով։

Ճիշդ ո՞ր ամսին եւ ո՞ր օրը տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը, ստոյգ յայտնի չէ։ Քրիստափորի յուշերից դատելով պատմական այդ դէպքը տեղի ունեցած պէտք է լինի 1890 թ. Օգոստոսին։ Ըստ Ռոստոմի՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնը տեղի է ունեցել Յուլիս ամսին։ Կուկունեան արշաւանքի պատմութիւնից երեւում է, որ Օգոստոսին Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն կազմուած էր եւ անցել էր գործունէութեան։

Նոր կազմակերպութիւնը՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը հիմնւում էր բոլորի կողմից յօժար կամքով ընդունուած ընդհանուր սկզբ-

բունքների վրայ՝ միաձայնութեամբ։ Մշակուած ծրագիր եւ կազմակերպական կանոններ դեռ չունէր. այդ պարտականութիւնը դրուեց ապագայում գումարուելիք Ընդհանուր Ժողովի վրայ։ Նոր կազմակերպութիւնը որդեգրեց կազմակերպական կենտրոնացման դրութիւնը եւ ընտրեց կենտրոնական Վարչութիւն, որ հետագային աւելի «Կենտրոն» անունով յայտնի դարձաւ։ Հ. Յ. Դաշնակցութեան առաջին կենտրոնական Վարչութեան անդամներ ընտրուեցին Քրիստափոր Միքայէլեանը, Սիմոն Զաւարեանը, բժ. Յովհաննէս Լորիս-Մելիքեանը, Աբրահամ Դաստակեանը եւ Լեւոն Սարգսեանը։

Հիմնադրութիւնից անմիջապէս յետոյ, Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը հասարակութեան ուղղած Մանիֆէստով՝ (հրովարտակ) յայտարարեց նոր կուսակցութեան ստեղծումը եւ պարզեց նրա որդեգրած նպատակները։ Այդ Մանիֆէստում ասուած էր, ի միջի այլոց.—

«Հայե՛ր, այսօր հայոց հարցը նոր շրջանի մէջ է մտնում։ Դարերից ի վեր ստրուկ Թուրքահայաստանը ազատութիւն է պահանջում...

«...Հայոց հարցի վճռի յետաձգուելը այլեւս անկարելի է։ Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին, առաջին հարցը, որ պէտք է զբաղեցնէ ամէն մի լուրջ հայրենասէրի, այդ՝ բոլոր յեղափոխական ուժերի միութեան եւ Դաշնակցութեան հարցն է։

«Այդ յեղափոխական գաղափարի դրօշակակիրն է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը», որ սորանով դիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել մի դրօշակի տակ։

«Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը թէեւ նոր է հանդէս գալիս, իբրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է, խմբերի, որոնք նոյնիսկ հայ ժողովրդի ձգտումների ծնունդ են։ «Դաշնակցութիւնը» ձգտելու է միացնել բոլոր ուժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները։ Նպատակ դնելով Թուրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը՝ «Դաշնակցութիւնը» մտել է այն կռուի մէջ, որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ՝ ուխտելով մինչեւ վերջին արեան կաթիլը կռուել հայրենիքի ազատութեան համար։

«Միանանք ամենքս ժողովրդի հետ, որ բարձրացրել է ազատութեան դրօշակը. նա, ով երես կը դարձնի ժողովրդից եւ չի հետեւի նրան, նա այդ ժողովրդի հակառակորդն է, նրա թշնամին է»...

Ապա Մանիֆէստը սրտառուչ կոչ է ուղղում հայութեան բոլոր խաւերին.—

«Եղբայրնե՛ր, միանանք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ։

«Եւ դո՛ւք, երիտասարդներ, միշտ եւ ամէն տեղ վսեմ դաղափարների պաշտպաններ, միացէք ժողովրդի հետ։

«Եւ դո՛ւք ծերունիներ, ոգեւորեցէք ձեր որդոց եւ օգնեցէք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ։

«Եւ դո՛ւք, հարուստներ, բաց արէք ձեր քսակները՝ զէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ։

«Եւ դո՛ւ, հայ կին, ոգի ներշնչիր գործի մէջ։

«Եւ դո՛ւ, հայ հոգեւորական, օրհնիր ազատութեան զինուորներին...

«Սպասելու ժամանակ չէ...

«Համախմբուենք, հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք ազատութեան սուրբ գործը»։

Մանիֆէստը, հարազատ արտայայտութիւնն էր հիմնադիր ժողովներում իշխող մտայնութեան եւ այն սկզբունքների, որոնց շուրջ համաձայնութեան էին եկել ու միացել բոլոր «գործող խմբերը»։ Նոր հիմնուած կուսակցութեան նպատակն էր, ուրեմն, «Թուրքաց–Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը»։ Այս լայն բանաձեւումով գոհացում էին ստանում բոլոր հոսանքները եւ անհատները։ Եւ միայն նման բանաձեւի շուրջ հնարաւոր էր միացնել «բոլոր հայերին»՝ առանց դասակարգի եւ ընկերային դաւանանքների խտրութեան։ Առաջնակարգ եւ գերագոյն նպատակը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների համար հայրենիքի ազատութիւնն էր. միւս բոլոր հարցերը ստորադաս եւ ապագայի խնդիրներ էին։ Հայ անողոք իրականութեան հրամայական թելադրանքն էր այս՝ ճիշդ ըմբռնուած Հայկական Ազատամարտի ռահվիրաների կողմից։

Հակառակ Հնչակեան կուսակցութեան հիմնադիրների, որոնք յեղափոխական գործի ձեռնարկելիս առաջնորդւում էին առաւելապէս Եւրոպայի առաջաւոր երկրների արմատական գաղափարներով եւ ընկերային շարժումների թելադրանքներով, Հ. Յ. Դաշնակցութիւնը կերտողները մեկնում էին բացառաբար հայկական ազգային պայմաններից։ Նրանք յեղափոխական գործի ձեռնարկելուց առաջ, հանգամանօրէն ուսումնասիրել էին Թրքահայաստանի ազգագրական, տնտեսական եւ քաղաքական պայմանները, հաշուի էին առել ժողովրդի վիճակն ու տրամադրութիւնները, ազատագրական շարժման առարկայական հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ իրենցից առաջ տեղի ունեցած յեղափոխական գործերը, եւ այդ բոլոր տուեալների հիմքերի վրայ

կառուցել նոր կուսակցութեան շէնքը։ Որով, ուրեմն, Հ. Յ. Դաշնակցութիւնը ծնունդ էր առնում հայկական ուրոյն միջավայրից, հարազատ էր հայ ժողովրդի ազգային տարերքին, նրա տենչերին ու ձգտումներին, նրա խառնուածքին ու ոգուն։ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ համադրւում էին հայութեան ազատագրական տենչերն ու մաքառումները, հայ ազգի գերագոյն նպատակը։

Մշակուած եւ ձեւակերպուած ծրագրով հրապարակ չեկաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, այլ սոսկ սկզբունքային ընդհանուր յայտարարութեամբ։ Դաշնակցութիւնը կեանք էր մտնում ազգային գործի համար եւ ոչ թէ դաւանաբանական հարցեր հետապնդելու նպատակով։ Հետագային, դէպքերի ազդեցութեան տակ, նա պիտի զբաղուէր եւ ընկերային ու դաղափարաբանական խնդիրներով, պիտի մշակէր ու բիւրեղացնէր սեփական աշխարհահայեացք, պիտի ունենար ուրոյն ծրագիր եւ հարուստ գրականութիւն. առ այժմ նրա միակ մտահոգութիւնը յեղափոխական պայքարն էր՝ հայրենիքի ազատութիւնը թուրք բռնակալութիւնից։ Ըստ Ակադ. Ն. Մառի բնորոշման, «հայրենասէրների գործի միութիւն» էր նորածին Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Կենդանի գործի դրօշակի տակ դաշնակցում էին հայ յեղափոխական ուժերը՝ կազմելով «վաղուց գործող խմբերի միութիւն», իբրեւ «հայ ժողովրդի ձգտումների ծնունդ»։ Կամ, ըստ «Դրօշակ»ի առաջին համար խմբագրականի՝ իբրեւ «հայ ազգի բողոքի եւ վրէժխնդրութեան ոգի»։

II

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՐԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

ՔՐԻՍՏԱՓՈՐ

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան մասին խօսելիս, սովորաբար, յիշւում է Երբորդութեան անունը՝ Քրիստափոր, Զաւարեան, Ռոստոմ, որպէս հիմնադիրներ կուսակցութեան։ Բառական իմաստով այս, ի հարկէ, ճիշդ չէ։ Ռոստոմը, օրինակ, Դաշնակցութեան հիմնադիր ժողովներին անդամ չի մասնակցել։ Բայց, ըստ էութեան, գլխաւորապէս նրանց մտքի, հոգու եւ կամքի արդիւնք է Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ իր դաղափարներով, կայմակերպական ձեւով, անդերազանցելի հայրենասիրութեամբ, անձնուիրութեամբ ու զոհաբերութեան ոգիով։ Իրենց իմացականութեան ուժով եւ անձնական կեանքի եւ գործի օրինակով Քրիստափոր, Զաւարեան, Ռոստոմ անդուգական եր-

բորդութիւնը կերտեցին, անհասանելի բարձրութեան հասցրին եւ հզօր կազմակերպութեան վերածեցին Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ կէս դարից աւելի անընդհատ իր գաղափարներով ու հերոսական գործերով, իր մտաւորական ու ռազմիկ շքեղ դէմքերով ճոխացրեց հայոց նորագոյն պատմութիւնը: Եւ այսօր էլ տակաւին ազատատենչ հայութիւնը սպրում ու ոգեւորւում է նրանց սերմանած գաղափարներով, նրանց կռած ու կոփած կազմակերպական սկզբունքներով, նրանց անձնուէր կեանքի օրինակով, նրանց տենչերով ու ոգիով:

Որպէս անհատականութիւններ երեքը այնքա՜ն տարբեր էին իրարից: Քրիստափորը՝ մտքով ու հոգիով խորունկ ովկիանոսի պէս, խոհերով ու զգացումներով՝ զուսպ ու հանդարտ խաղաղ եղանակին եւ բուռն ու մոլեգին՝ փոթորկի օրերին: Մարմնով տկար, բայց զարմանալի կերպով տոկուն եւ աշխատունակ: Մտքով եւ կամքով՝ հուժկու, շատ կարգացած եւ մտաւոր ճոխ պաշարի տէր, մանաւանդ, ընկերային հարցերում: Միտքը՝ բաց ամէն մի նոր գաղափարի առջեւ: Սակաւախօս, բայց խօսքով ազդու: Պարզ ու դիւրահաղորդ մարդկային յարաբերութիւնների մէջ: Անանձնական, համեստ եւ սակաւապէտ անհատական կեանքում: Աննկուն սկզբունքային եւ բարոյական խնդիրներում: Կեանքի եւ մարդկանց հանդէպ՝ լաւատես ու լայնամիտ: Օժտուած կազմակերպական բացառիկ տաղանդով եւ շրջապատի մըտքերի ու հոգիների վրայ ազդելու արտասովոր կարողութեամբ: «Մարդակերտ»՝ ասում էին նրա մասին:

Ամենքը, ով բախտ է ունեցել անձամբ ճանաչելու Քրիստափորին, միաբերան հիացումով են խօսում նրա մասին: «Շատ լաւ կարողանում էր թափանցել մարդկանց ներքին աշխարհը, ասում է, օրինակ, նրա մտերիմներից մէկը՝ Մարտին Շաթիրեանը, եւ ընտրում էր բացառաբար բարոյապէս անբասիր մարդիկ եւ, երբ պատահում էր այդպիսի մարդկանց, ուղղակի գերում էր բառի բուն իմաստով, եւ այդ գերութիւնը հաճելի էր գերուածին:

«Սիստեմատիկ մտածող եւ գործող մարդ էր: Արդեօք գիտակցաբա՞ր մտածում ու հաշւում էր նախապէս իր անելիքն ու ասելիքը, թէ՞ կատարում էր ներշնչումով, իբրեւ մի տաղանդ, դժուարանում եմ ասել: Կարծեմ՝ աւելի ճիշդը վերջինն էր: Նրա ազդեցութիւնը իր շրջապատի վրայ այն աստիճան տիրական ու գօրեղ էր, որ չեմ յիշում մի դէպք, որ նա որոշած լինէր, թէ այս ինչ մէկը պէտք է այս ինչ գործը կատարէ, եւ չկատարէր: Նրա կարգադրութիւնները կատարում էին, իբրեւ անողոք բռնաւորի հրամաններ, բայց անօրինակ հաճութեամբ...

«Միշտ հաւասարակշռուած, միշտ հանդիստ, միշտ անմոռաց

ժպիտը երեսին։ Զափազանց ուշադիր ու ներողամիտ դէպի հակառակորդներն անգամ, ուստի ամենքը սիրում ու յարգում էին նրան»։

Քրիստափորի տարիների գործակից Մ. Վարանդեանը այսպէս է բնորոշում նրան.— «Պատկառելի գլուխ մը փրոֆեսորի, պետական մարդու. երկայն մօրուքով, դալուկ դէմքով ու խիստ իմացական արտայայտութեամբ. նայուածքը՝ աւելի խորհողի, քան յեղափոխական գործիչի — լուրջ, հանդիսաւոր, ինքնավստահութեան եւ արժանապատուութեան դրոշմը ճակտին. խորունկ ու խոհուն աչքեր, որ մեղմիւ կը պսպղային ակնոցի ետեւը եւ կը թափանցէին հոգւոյն մէջ. նիհար, թուլակազմ մարմին մը, փոքր ինչ դանդաղաշարժ, քիչ խօսող, կուռ տրամաբանող, ընդհանրապէս պաղ, զուսպ, հաւասարակշռուած. ներսը, սակայն, հրաբուխ, աղնիւ կիրքի խորանդունդ ծով մը, որ շարունակ կ'ալեկոծուէր ու դէպի գործ կը մղէր»։

Վիպասան Շիրվանզադէն այսպէս է պատկերացնում Քրիստափորին՝ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան օրերին.— «Ես չեմ տեսել կեանքումս մի ուրիշը, որ կարողանար իր շուրջն ստեղծել այնքան համակրանք, որքան այդ մարդը (Քրիստափորը)։

«Միջահասակ, ի ծննդենէ կաղ, դունատ դէմքով, նօսր, պարզ, շագանակագոյն միրուքով, խոշոր խելացի աչքերով — ահա Միքայէլեանը այն ժամանակ, երբ ես ճանաչեցի նրան... Միշտ խոհուն, միշտ հանդիստ, բայց եւ միշտ բարեհամբոյր։ Բաւական էր, որ նա իր սեւ յօնքերը բարձրացնելով ակնոցների տակից՝ նայէր հանդիպողին ժպտուն դէմքով, եւ արդէն մարդն յաղթուած էր... Շատ քիչ էր պատահում, որ Քրիստափորը կորցընէր իր սովորական անդորրութիւնը, բայց երբ զրգռւում էր, անյաղթելի էր իր բուռն զգացմունքների մէջ»։

Մի խօսքով՝ բնութիւնը Քրիստափորին ստեղծել էր ղեկավար եւ առաջնորդ լինելու համար։

Քրիստափոր Միքայէլեանը պատմական Գողթն գաւառից էր՝ ծնուած 1859 թ. Հոկտ. 18-ին, Վերին Ագուլիս մեծ գիւղում։ Վաղ հասակից որբացած՝ նա, ինչպէս ինքն էր ասում յետոյ, «տրտում մանկութիւն է ունեցել»։ Տկար կազմով, կաղ, բայց ուշիմ ու խոհուն, արտակարգ ընդունակութիւններով օժտուած տղայ էր։ Նախնական կրթութիւնը ստանալով ծննդավայրում, 1874-ին յաջողում է անցնել Թիֆլիս եւ երկու տարի նախապատրաստուելուց յետոյ, ընդունւում է Ուսուցչական ճեմարանը, որ աւարտում է 1880-ին, առաջին կարգի մրցանակով։

Բացի սովորական դասերից, ճեմարանում Քրիստափորը

անյաղ կարկում է, գլխաւորապէս ընկերային, հոգեբանական ու մանկավարժական գրականութիւն։ Նրա մտքի վրայ ուժեղ տպաւորութիւն է գործում Ռ. Օուէնի ընկերային վարդապետութիւնը, ինչպէս եւ ռուս նարոդնիկ-ընկերվարական հեղինակները՝ Չերնիշեւսկի, Դոբրոլիւբով, Լավրով, Միխայլովսկի, որոնք իշխում էին ժամանակի երիտասարդութեան մտքերի վրայ։ Միաժամանակ՝ Քրիստափորը մասնակցում է եւ աշակերտական ինքնազարգացման խմբակներին, որոնց մէջ գործօն ու ղեկավար դեր է կատարում՝ շնորհիւ իր բնական ձիրքերի եւ գիտական պատրաստութեան։

Ճեմարանը աւարտելուց յետոյ, Քրիստափորը մի քանի տարի ուսուցչութիւն արաւ ծննդավայր Ադուլիսի ծխական դպրոցում, իսկ ամառուայ արձակուրդները անց էր կացնում Թիֆլիսում։ Նա արդէն կազմակերպուած անհատականութիւն էր։ Մտել էր յեղափոխական շրջանակների մէջ։ Անդամ էր «Նարոդնայա Վոլեա» մարտական կազմակերպութեան։ Հայ ազգային հարցերը ճեմարանում նրան դեռ չէին զբաղեցնում. ապրում ու ոգեւորւում էր համառուսական գաղափարներով ու շարժումներով, ինչպէս ժամանակի երիտասարդութեան մեծ մասը։ Ինքը Քրիստափորը այսպէս է ներկայացնում իր յուշերում ժամանակակից երիտասարդութեան տրամադրութիւնները.—

«Թիֆլիսի միջնակարգ դպրոցների այլացեղ երիտասարդութիւնը, աղդուած մի կողմից Ռուսաստանի կենտրոնների յեղափոխական կռուի փաստերից եւ միւս կողմից եկուոր պրոպագանդիստներից ու գաղտնի գրականութիւնից, շարժուեց ու անյագօրէն նուիրուեց ինքնազարգացման եւ պատրաստութեան՝ յեղափոխական-հասարակական գործունէութեան համար։ Երիտասարդութեան իդէալների բնոյթը որոշում էր մենակ «Նարոդնայա Վոլեա» կուսակցութիւնը, որ այն ժամանակ իշխում էր կովկասեան երիտասարդութեան բոլոր զգայուն ու գիտակից տարրերի մտքերի վրայ։ Միջազգային ընկերվարութիւնն էր այդ իդէալը, որ պահանջում էր անվերապահ ու անձնազոհ կռիւ կեանքի հին ձեւերի դէմ։ Մասնակի, տեղական, ազգային կամ զուտ քաղաքական բնոյթ կրող եւ ո՛չ մի հարց ոչ ոքի միտք չէր դալիս։ Ռուսը, հայը, վրացին իրարու միացած՝ ընդհանուր աշխարհաքաղաքացիական իդէալի հանդէպ՝ ճանաչում էին մէկ նպատակ՝ կռուի միեւնոյն միջոցներով։ Նոյն այդ ուղղութիւնն էր նկատւում եւ ինքնազարգացման բոլոր խմբակներում աշակերտութեան մէջ»։

Այս մտավիճակը, սակայն, երկար չի տեւում։ Ռուս կառավարութեան այլամերժ քաղաքականութիւնը, օտար ցեղերը ռու-

սացնելու ձգտումը, կենտրոնից ուղարկուող ռուս պաշտօնեաների արհամարհական վերաբերումը դէպի բնիկ ժողովուրդներն ու տեղական պահանջները հետզհետէ ստիպում են կովկասեան երիտասարդութեան հետաքրքրուել նաեւ սեփական ազգային հարցերով: Հայկական մտքերի յեղաշրջման տեսակէտից առանձնապէս մեծ դեր կատարեց ռուս կառավարութեան 1885 թ. Մարտին արձակած հրամանը, որով փակուեցին գրեթէ բոլոր՝ 400 հայկական դպրոցները եւ 20,000 աշակերտ-աշակերտուհիներ իրենց դասատուներով փողոց նետուեցին: «Հարուածը չափազանց խիստ էր ու վայրենի, որպէսզի նրա ծանրութիւնը չըզգար բովանդակ հայ հասարակութիւնն ու ժողովուրդը», գրում է այդ մասին Քրիստափորը: Ռուս կառավարութիւնն այլեւս անվստահելի տարր էր նկատում հայերին եւ միջոցների էր դիմում ձուլելու համար նրանց ռուսների հետ:

Քրիստափորի մտաւոր վերածնութեան համար վճռական նշանակութիւն ունեցան այն մի քանի տարիները, որ նա, ճեմարանը աւարտելուց յետոյ, անցկացրեց հայրենի գիւղում, իբրեւ ուսուցիչ: Նա մօտից շփուեց գիւղացիութեան հետ, իր աչքերով տեսաւ, թէ ի՞նչ աւերներ է գործում ցարական բռնապետութիւնը, ի՞նչ անիրաւութիւնների ու զրկանքների է ենթարկուած հայ ժողովուրդը միայն այն պատճառով, որ հայ է: Տեսաւ ռուս գաւառական պաշտօնեաների շահատակութիւնները: Եւ, բնականաբար, խորապէս ազդուեց:

1881-ի ամառը Թիֆլիս վերադառնալով՝ Քրիստափորը իր ընկերների առջեւ դնում է տեղական ազգային հարցով զբաղուելու անհրաժեշտութիւնը. «Ես առաջինը լինելով, գրում է նա իր յուշերում, հարց դրի ընկերներ Դաստակեանին եւ Ռցխըլաձէին, թէ անհրաժեշտ է առանձին ժողովուրդների կեանքի թանձրացեալ պայմաններին համապատասխան կազմակերպութիւններ ստեղծել, որոնք միայն ի վիճակի կը լինեն թափանցելու հարազատ զանգուածների մէջ»: Եւ չափազանց ուրախանում է, երբ մի տարի յետոյ իր ցանկութիւնը դառնում է իրականութիւն: «1882-ին, գրում է նա, երբ ես գիւղումն էի, ստացայ ընկ. Դաստակեանից մի նամակ (առաջին անգամ՝ հայերէն), որով նա հաղորդում էր, թէ Թիֆլիսի կոմիտէն բաժանուել է առանձին ազգային խմբակների, եւ հայկական խմբակի դերը այդ նամակում բացատրուում էր հետեւեալ խօսքերով. «Մեր այս կազմակերպութիւնը ամբողջովին իր գործունէութիւնը կը նուիրէ անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին»:

«Այս նոր ուղղութիւնը», բացատրում է Քրիստափորը, արդիւնք էր ռուս-թրքական պատերազմի հետեւանքով հայերի մէջ

առաջ եկած խմբումների եւ Ալեքսանդր Բ. Ցարի սպանութեան յաջորդած յետաշրջական քաղաքականութեան։

1884–ի աշնան, երբ ուսուցչական պաշտօնով փոխադրւում է Թիֆլիս, Քրիստափորը մեծ եռանդով նուիրւում է հայ ազգային խմբակների կազմակերպութեան եւ նրանց քաղաքական–յեղափոխական դաստիարակութեան գործին՝ միեւնոյն ժամանակ չխզելով յարաբերութիւնները ռուսական շրջանակներից եւ մընալով «Նարոդնայա Վոլեա» կազմակերպութեան մէջ։ Նա կազմակերպում ու ղեկավարում է խմբակներ Թրքահայ պանդուխտներից, Ուսուցչական ճեմարանի ուսանողներից, պետական միջնակարգ դպրոցների աշակերտներից։ Այս խմբակների նպատակն էր արդէն հայ ազգային դատի պաշտպանութիւնը։

Երբ 1885–ի Մարտին, ցարական հրամանով փակուեցին հայկական դպրոցները, միայն այս խմբակներից լսուեց բողոքի ձայն. բաց թողնուեց մի թռուցիկ Քրիստափորի եւ Գ. Միրզոյեանի կողմից կազմուած, որով կոչ էր ուղղւում հայ հասարակութեան՝ դիմադրել կառավարական ոտնձգութիւններին եւ ազգային կրթութեան գործը շարունակել ընտանիքներում։

1885 թ. աշնանից մինչեւ 1887 թ. ամառը Քրիստափորը անցկացրեց Մոսկուայում, իբրեւ ազատ ունկնդիր ուսանող, ինչպէս ինքն է ասում՝ «նուիրելով բացառապէս տեսական զբաղումներին»։ Այդտեղ մտերմանում է նաեւ Ս. Զաւարեանի եւ Պետրովկայի հայ ուսանողների հետ։

Մոսկուայում, այդ ժամանակ, հայ ուսանողութիւնը ապրում էր եռուն հասարակական կեանքով։ Ուսանողութիւնը բաժանուած էր երկու հոսանքների. «Մէկը մերն էր, գրում է Քրիստափորը իր յուշերում, որ առանց բնաւ դադարելու հետաքրքրուել հարազատ ժողովրդի կեանքով ու գրականութեամբ՝ ձգտում էր որքան կարելի է շատ գիտելիքներ ձեռք բերել հասարակագիտութիւնից... Միւս հատուածը, որ մեզ կոսմոպոլիտ անունն էր տալիս, ոչինչ չէր ուզում գիտենալ, բացի հայերէն լեզուի, հայոց պատմութեան, աշխարհագրութեան եւ գրականութեան ուսումնասիրութիւնից, որի համար, իր հերթին, չովինիստների խումբ անունն էր ստացել մեզանից»։ Քրիստափորը կենտրոնական դէմք էր առաջին հատուածում, բայց ընկերական մօտիկ յարաբերութիւններ էր պահում եւ վերջինների հետ։ Միեւնոյն ժամանակ, լրջօրէն աշխատում էր հարստացնելու իր մտաւոր պաշարը՝ հետեւելով, յատկապէս, հասարակական գիտութիւններին։

Գիտական նոր պաշարով զինուած, 1887–ի ամառը, Քրիստափորը վերադառնում է Թիֆլիս, ուր իր կազմած խմբակները

քայքայուել էին, եւ եռանդով ձեռնարկում է վերակազմութեան աշխատանքի։ «Հարկաւոր էր, գրում է նա, կազմակերպական գործը սկսել հենց սկզբից եւ նախապատրաստական բնոյթ կրող այսպիսի աշխատանքների մէջ էին անցնում մեր օրերը։ Իմ մի փորձը ընկ. Ստեփան Զօրեանի (Ռոստոմի) հետ Թիֆլիսում հիմնելու գաղտնի տպարան յաջողութիւն չունեցաւ նիւթական միջոցների պակասութեան պատճառով։ Միջոցներ հարկաւոր էին ոչ թէ տառեր գնելու համար — տառերը մենք ժառանգել էինք «Ազատութեան Աւետարեր»ի հիմնադիրներից — այլ որպէսզի պահէինք բնակարան եւ մի ընկերոջ, որին տեղաւորել էինք այդ բնակարանում աշխատանքի համար։ Այդ ամէնը մենք փորձեցինք անել անձնական միջոցներով, բայց մեր միջոցները բաւական չեղան. մենք ապրում էինք մասնաւոր, կոպէկանոց դասերով»։

Հակառակ նիւթական աննպաստ պայմանների, Քրիստափորը, առանց վհատելու, շարունակում է յեղափոխական կազմակերպական եւ դաստիարակչական աշխատանքը՝ իր շուրջը ունենալով, իբրեւ գործակից, մի շարք գաղափարական երիտասարդ մտաւորականներ։ Նրա անմիջական ազդեցութեան տակ էր, որ 1889-ին ստեղծուեց «Երիտասարդ Հայաստան» կազմակերպութիւնը անջատ խմբակները միացնելու համար։

1890-ին հիմնուեց Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Նախորդ դլխում արդէն տեսանք Քրիստափորի կատարած դերը այդ գործում. նա՛ հաշտեցրեց ու միացրեց բոլոր հակամարտ ուժերը մի հիմնական գաղափարի շուրջ եւ միասնական մէկ կազմակերպութեան մէջ։ Նրա հանճարին ենք պարտական մեծապէս, որ հայ ժողովուրդը ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Եւ այնուհետեւ Քրիստափորի կեանքը նոյնացաւ Հ. Յ. Դաշնակցութեան կեանքի հետ։

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, Քրիստափորը նորակազմ կուսակցութեան կենտրոնական Վարչութեան անդամ է եւ դլխաւոր ղեկավար դէմքը։ Թիֆլիսում, սակայն, նրան երկար չեն թողնում. 1891 թ. գարնան նա ձերբակալւում է եւ աքսորւում Բեսարաբիա՝ Քիշինեւ։ Նոյն վիճակին են ենթարկւում նաեւ Ս. Զաւարեանը, Յովս. Արղութեանը եւ ուրիշներ։ Ցարական իշխանութիւնը ընդհանուր հալածանք էր սկսել հայ յեղափոխականների դէմ՝ հակառակ, որ սրանք միայն թըրքահայկական հարցով էին զբաղուած եւ ռուսական ներքին խնդիրներին չէին միջամտում։

Աքսորավայրում էլ Քրիստափորը հանդիստ չմնաց եւ շարունակեց յեղափոխական աշխատանքը։ Ի միջի այլոց, գաղտնի անցաւ Ռումանիա եւ կազմակերպեց «Դրօշակ»ի 3-րդ համարի հրատարակութիւնը։ Աքսորի ժամանակաշրջանը՝ մէկ տարին

լրանալուց յետոյ, 1892-ի ամառը, վերադարձաւ աքսորից եւ մասնակցեց Հ. Յ. Դ. առաջին Ընդհանուր Ժողովին: Այդ Ժողովում հաստատուեց կուսակցութեան ծրագիրը, որի հեղինակներից մէկն էր Քրիստափորը: Նոյն Ժողովում փոխուեց եւ Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական ձեւը՝ ապակենտրոնացման սկզբունքով եւ ընտրուեց անդրանիկ Բիւրօն: Քրիստափորն ու Զաւարեանը գործօն անդամներ էին նորընտիր Բիւրոյի:

Մինչեւ երկրորդ Ընդհ. Ժողով, 1898-ին, Քրիստափորը մնում է Թիֆլիսում, որպէս ոգին եւ գլխաւոր մղիչ ոյժը Հ. Յ. Դաշնակցութեան՝ անմիջական գործակից ունենալով Ս. Զաւարեանին: 1895 թ. Հոկտեմբերին նա մի անգամ էլ ձերբակալուեց եւ վեց ամիս Բաքուում բանտարկուած պահուելուց յետոյ, 1896 թ. Մարտ 23-ին ազատ արձակուեց 2000 ռուբլի գրաւականով եւ Թիֆլիսից չհեռանալու պայմանով: Նրա ջանքերով եւ անմիջական ղեկավարութեամբ գլուխ եկաւ Խանասորի արշաւանքը, ժամանակի մեծագոյն յեղափոխական դէպքը:

Երկրորդ Ընդհ. Ժողովում որոշւում է առանձին ոյժ տալ եւրոպական պրոպագանդին եւ «Դրօշակ»ի խմբագրութեան յանձնել այդ գործը: Որոշւում է նաեւ, որ Քրիստափորը անցնի եւրոպական պրոպագանդի ու «Դրօշակ»ի խմբագրութեան գլուխը: Աւելի յարմար կարգադրութիւն, ի հարկէ, կարելի չէր երեւակայել:

1898 թ. աշնանը Քրիստափորը մեկնում է Ժընեւ եւ անցնում իր նոր առաքելութեան: Եւ սկսւում է գործունէութեան մի փայլուն շրջան: «Դրօշակ»ի շուրջ համախմբւում են երիտասարդ տաղանդաւոր ուժեր՝ Լ. Ակնունի, Ա. Ահարոնեան (Ղարիբ), Սիամանթօ, Մ. Վարանդեան, Յոնան Դաւթեան, Սարգիս Մինասեան (Արամ Աշոտ) եւ ուրիշներ: Երկրից՝ կարեւոր թղթակիցներ: Քրիստափորի խմբագրած «Դրօշակ»ները այսօր էլ հիացում են պատճառում իրենց լուրջ ու բաղմակողմանի բովանդակութեամբ. Ակնունիի «Կովկասեան Խարրիկներ»ը՝ օրինակ, կամ Սարգիս Մինասեանի «Թիւրքիոյ Շուրջը», Մ. Վարանդեանի պատմա-ընկերաբանական տեսութիւնները, Ղարիբի յեղափոխական պատմուածքները, Սիամանթոյի հոյակապ դիւցազներգութիւնը:

Քրիստափորը ինքն էլ մի շարք ուժեղ խմբագրականներ ու յօդուածներ գրեց, որոնք այսօր էլ դեռ չեն կորցրել իրենց թարմութիւնը: Ամփոփուած «Յեղափոխական Մտքեր» հատորի մէջ՝ նրանք ներկայ սերնդի համար էլ դաստիարակութեան ու ներշնչումի անսպառ աղբիւր են: Նրա «Պատմական Զարիք» եւ «Հայ-Քրտական Յարաբերութիւնները» (1901 թ.) յօդուածները, «Կով-

կասահայ Տաղնապը» (1903 թ.) եւ «Ամբոխային Տրամաբանութիւնը» (1899 թ.) դասական գործեր են՝ չքեղ էջեր հայ յեղափոխական գրականութեան:

Քրիստափորի անմիջական շնչի տակ համախմբուեց ու կազմակերպուեց եւ արտասահմանի հայ ուսանողութիւնը՝ «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը», որ նշանակալից դեր կատարեց Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան մէջ:

1899-ին, Քրիստափորի ջանքերով կազմակերպուեց դիմումը հայերի կողմից Լահէի Խաղաղութեան Վեհաժողովին: Միաժամանակ, Եւրոպայի զանազան կենտրոններում, կազմակերպուեցին հայասիրական կոմիտէներ ականաւոր դէմքերից եւ տեղի ունեցան հրապարակային ժողովներ, դասախօսութիւններ ու խորհրդարանական աղմկայոյզ հարցապնդումներ ի նպաստ Հայկական Դատի:

Վերջապէս, 1900 Նոյեմբերին, սկսուեց հրատարակուել Ֆրանսերէն «Փրօ Արմենիա»ն հայկական պրոպագանդի օրգանը, Պիէր Քիյեարի խմբագրութեամբ եւ Անատոլ Ֆրանսի, Քլէմանսոյի, Դընի Կոշէնի, Պրէսանսէի եւ Ժան Ժորէսի մասնակցութեամբ, իբրեւ խմբագրութեան անդամ: Թերթի քարտուղարութիւնը վարում էր երիտասարդ ընկերվարական Ժան Լոնդէն: Քրիստափորի թափած ջանքերի արդիւնքն էր այդ: Թէ ինչքան ոգեւորուած էր նա այդ ձեռնարկով, երեւում է «Փրօ Արմենիա»-յի խմբագրութեան ուղղած նրա մի նամակից, առաջին համարի լոյս տեսնելու առթիւ. «Մենք, գրում էր նա, համարեա հարբած էինք թերթը ստանալու առաջին օրերը: Մեր ուրախութիւնն այնքան մեծ է եղել, որ թերթը ձեռքներս առնելով առաջին անգամ՝ համբուրել ենք համարը»...

Քրիստափորը գլխաւորեց նաեւ ահարկու «Փոթորիկ»ը, որ 1901-ից սկսած, մի քանի տարի, սարսափի տակ պահեց հայ մեծահարուստներին, որոնք պարտաւորուած եղան խոշոր գումարներ տրամադրելու հայ աղատագրական գործին:

Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհ. Ժողովից յետոյ, 1904-ին, Քրիստափորը թողեց «Դրօշակ»ի խմբագրութիւնը եւ նետուեց նոր փոթորիկի մէջ: Վաղուց նրան տանջում էր մի սուր միտք — վերցնել մէջտեղից այն Զարիքը, որ պատուհաս էր դարձել հայ ժողովրդի գլխին. մահով պատժել Սուլթան Աբդուլ Համիդին: Այդ առաջարկը բերեց նա Ընդհ. Ժողովին, որի վաւերացումից յետոյ՝ ինքը անցաւ գործի գլուխը: Կազմեց մահափորձի ծրագիր, ընտրեց գործակիցներ, անձամբ մտաւ Պոլիս հրեայ Սամուէլ Ֆայն ծածկանունով եւ կատարեց նախապատրաստական աշխա-

տանքները. Կարմիր Սուլթանը օդը պիտի հանուէր դժոխային մեքենայով Սէլամլըքի հանդէսի միջոցին։

Ճակատագիրը, սակայն, այլ կերպ տնօրինեց. 1905 թ. Մարտ 17-ին, Սոֆիայի մօտ, Վիտոշի բարձունքին, ռումբի փորձի միջոցին, Քրիստափորը նահատակուեց իր գործակից Վռամշապուհ Քէնդիրեանի հետ միասին...

Քրիստափորը մեռաւ առանց նպատակին հասնելու, բայց իր գաղափարներն ու ոգին շարունակեցին ապրիլ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, իբրեւ ներշնչումի եւ ոգեւորութեան աղբիւր հայրենիքի ազատութեան համար մարտնչող սերունդների աչքին։

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ

Իր հոգեկան կառոյցով, իր նկարագրով ու խառնուածքով, իր ողջ էութեամբ Քրիստափորի հակապատկերն էր Սիմոն Զաւարեանը։ Առաջինը հանդարտ ու հաւասարակշիռ, մտքին ու կամքին ունկնդիր, լայնախոհ ու ներողամիտ, լաւատես աշխարհի ու մարդկանց հանդէպ, Զաւարեանը՝ համակ ջիղ ու կիրք, ըմբոստ եւ ալեծուփ մի ոգի։ Մտքով հզօր, բայց սիրտը աւելի տիրական իր մէջը։ Ճգնաւոր՝ անհատական կեանքում։ Բծախնդիր եւ պահանջկոտ իր անձի հանդէպ եւ դաժան լինելու աստիճան խստապահանջ դէպի ուրիշները։ Անիշխանական երեւնալու չափ ծայրայեղ գաղափարներով եւ, յաճախ անհանդուրժող ուրիշների հանդէպ։ Անդուսպ եւ խարազանող սխալ կարծած հասարակական գործերն ու բարքերը քննադատելիս։ Եւ միեւնոյն ժամանակ՝ զարմանալի կերպով մարդկային, ընկերական, ջերմ ու մտերիմ անհատական յարաբերութիւնների մէջ։ Իր փոքրահասակ, նիհար ու վտիտ մարմնում ազնուական մեծ սիրտ, բարձր իմացականութիւն, ասպետական ոգի, հուժկու կամք, բուռն զգայնութիւն եւ հզօր կիրք էր համադրուած։ Մտաւոր զարգացումով գիտնականի հակումներ ունէր եւ ոգիով՝ մարգարէ էր։ Միեւնոյն ժամանակ՝ գործի մարդ, հողի եւ աշխատանքի երկրպագու։ Բարոյական եզակի անհատականութիւն՝ դաւանանքով եւ անձնական ապրումներով։ Ինչ չափով որ իրեն էր չափում՝ նոյն չափանիշով նա մօտենում էր եւ ուրիշներին։ Զաւարեանի համար միջին ճանապարհներ գոյութիւն չունէին։ Մի զգացում, սակայն, տիրական էր եւ մշանջենական նրա մէջ — հաւատարիմ ու յարատեւ սէրը դէպի մարդկութիւնը, առհասարակ, եւ դէպի հայ ժողովուրդը՝ ի մասնաւորի։ Այդ զգացումին էլ նուիրեց նա իր բովանդակ կեանքը։ Նա ամէն տուեալ ունէր նուիրուելու գիտութեան եւ փայլուն գիրքեր գրաւելու կեանքի ասպարէզում, բայց այդ նրան չհրապուրեց։ Ունկնդիր հարազատ

ՍԻՄՈՆ ԶԱՒԱՐԵԱՆ

ժողովրդի սրտակեղէք կանչին՝ նա անվարան նետուեց յեղափոխութեան գոռ փոթորիկների գիրկը, ի վերջոյ, զոհելով իր անձը, որպէսզի ապրին հայրենիքն ու ազգը։

Սիմոն Զաւարեանը ծնուել էր 1866 թ. լեռնային եւ անտառոտ Լոռու Այգեհատ գիւղում, այնտեղ, ուր Խենթ Դեբետը աղմկայոյզ սլացքով կրծում է ժայռերի կուրծքը եւ վեհապանծ Լալուարը գրոյց է անում երկնքի հետ։ Այգեհատ գիւղի բնակիչները դրեթէ ամենքը հին ազնուական տոհմերից էին սերած։ Ազնուական էր եւ Զաւարեան ընտանիքը։ Տարրական կրթութիւնը գիւղում ստանալուց յետոյ, Սիմոնը, հազիւ 7–8 տարեկան տարուում է Թիֆլիս, ուր նախապատրաստուելով՝ մտնում է պետական ռէալական դպրոցը եւ յաջողութեամբ աւարտում։ Այստեղ մեկնում է Մոսկուա, ուր մտնում է նշանաւոր «Պետրովկա» Գիւղատնտեսական ճեմարանը, որ աւարտում է 1890–ին առաջին կարգի մրցանակով։ Նրան առաջարկում են մնալ ճեմարանում, իբրեւ դասախօս՝ ապագային դրաւելու համար փրոֆեսորութեան ամբիոն, բայց նա չի համաձայնւում եւ վերադառնում է Կովկաս։

Ութսունական թուականները թէ՛ համառուսական եւ թէ՛

հայ իրականութեան մէջ նշանաւոր էին նրանով, որ Ալեքսանդր Բ. ցարի սպանութիւնից յետոյ, 1881-ին, Ռուսաստանը թեւակոխում էր յետաշրջական-բռնակալական մռայլ մի շրջան: Վերջ էր տրւում Ալեքսանդր Բ.-ի բարենորոգչական քայլերին, որ պիտի պսակուէին Լորիս-Մելիքովի մշակած չափաւոր Սահմանադրութեամբ: Ալեքսանդր Երրորդի խաւարակուռ վարչաձեւը հաշուեյարդարի ենթարկեց իր նախորդի ազատական ձեռնարկները, կատաղի պայքար սկսեց արմատական մտաւորականութեան եւ, յատկապէս, «Նարոդնայա Վոլեա» մարտական կազմակերպութեան դէմ: Կտրուկ միջոցներ ձեռք առաւ սանձահարելու համար ուսանողութիւնը՝ կառավարական խիստ հակակշռի տակ դնելով բարձրագոյն դպրոցները: Մի խօսքով՝ Կայսրութեան բովանդակ տարածութեան վրայ հաստատուեց Ալեքսանդր Գ.-Պոբեդոնոսցեւի դաժան իշխանութիւնը:

Ալեքսանդր Երրորդի օրով հիմնովին փոխուեց քաղաքականութիւնը նաեւ օտար, ոչ-ռուս ցեղերի վերաբերմամբ: Ռուսացումը որդեգրուեց, իբրեւ պետական սկզբունք, ուղղափառ ռուս եկեղեցին՝ օտար ազգերը ձուլելու միջոց: Այս քաղաքականութիւնը ուղղուեց եւ հայերի դէմ, որոնք 1877-78 թ. ռուս-թրքական պատերազմի հետեւանքով վարդագոյն յոյսեր էին տածում, թէ մօտ է Թրքահայաստանի ազատութիւնը՝ ռուսական աջակցութեամբ: Ալեքսանդր Երրորդը կտրուկ կերպով վերջ տուեց այդ յոյսերին՝ հալածանք սկսելով հայ հայրենասէրների դէմ:

Ահա այդ շրջանում, աշակերտական, ապա ուսանողական աթոռների վրայ, մշակւում էր Զաւարեանի միտքն ու հասարակական-բարոյական նկարագիրը: Իր յուշերում պատկերացրել է նա այդ ժամանակաշրջանը եւ իր ու իրեն հասակակից սերնդի ապրումները: Թիֆլիսում արդէն, նա մտնում է աշակերտական ինքնազարգացման խմբակների եւ «Նարոդնայա Վոլեա»յի շրջանակի մէջ եւ եռանդուն մասնակցութիւն ունենում երիտասարդական շարժումների մէջ՝ թէ՛ միջազգային եւ թէ՛, մանաւանդ, հայկական խմբակներում: Նրա վրայ ուժեղ տպաւորութիւն են գործում Բաֆֆիի վէպերը եւ Արծրունիի հրապարակագրութիւնը, ինչպէս նաեւ ժամանակի ռուս արմատական հեղինակները: Մինչ Բրիստափորը Թիֆլիսի իր դպրոցական տարիները անցկացրեց, կարելի է ասել, բացառապէս ռուսական մթնոլորտում, Զաւարեանի աշակերտութիւնը անցաւ առաւելապէս հայկական միջավայրում:

«Մեր խումբը, գրում է Զաւարեանը իր յուշերում, կազմուած էր բացառապէս հայերից. խմբի մէջ, որոշ նպատակով, մտցրել էին երկու հոգի Ներսիսեան դպրոցից: Ղեկավարները

նպատակ ունէին ներսիսեանցիների միջոցով մեզ հայերէն սովորեցնել, ծանօթացնել հայոց պատմութեան... Աւելորդ է ասել, որ հայ դրականութեան մէջ Գամառ Քաթիպայի հետ միասին առաջին պատուաւոր տեղն էր բռնում Րաֆֆին: Մեր մտքի, մեր հոգու խորքում, Չերնիշեւսկու, Նիկրասովի, Պերովսկայեայի կողքին, քայլ առ քայլ սկսեցին տեղ գրաւել Նալբանդեանը, Րաֆֆին, Կարօն ու Ասլանը»:

Երբ Մոսկուա տեղափոխուեց, Զաւարեանը արդէն տոգորուած էր հայկական ազգասիրական գաղափարներով ու զգացումներով: Ուսանողութեան շրջանում եւս նա, գործելով հանդերձ «Նարոդնայա Վոլեա»յի եւ ընդհանուր-համառուսական միջավայրում, շարունակեց կենդանի կերպով հետաքրքրուել եւ ըզբաղուել հայկական հարցերով: Մոսկուայի հայ ուսանողութիւնը այդ ժամանակ եռուզեռի մէջ էր: Այնտեղ էին Ռոստոմը, Աւ. Սահակեանը (Հայր Աբրահամ), Մ. Շաթիրեանը, Յակ. Քոչարեանը, Տէր-Գրիգորեան եղբայրները, Գ. Միրզոյեանը, Քրիստափորը եւ ուրիշներ, որոնք տարուած էին հայրենասիրական գաղափարներով եւ անմիջական յարաբերութիւնների մէջ էին Թիֆլիսի մտաւորականութեան ու երիտասարդական խմբակների հետ: Զաւարեանը առաջին շարքերում էր թէ՛ ռուս եւ թէ՛ հայ երիտասարդական շարժումների մէջ:

Ձեմարանը աւարտելուց յետոյ, 1890-ի ամառը, Զաւարեանը վերադարձաւ Թիֆլիս: Այստեղ արդէն նախապատրաստւում էր Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութիւնը: Զաւարեանը գործօն մասնակցութիւն ունեցաւ հիմնադիր ժողովներում եւ ընտրուեց Հ. Յ. Դաշնակցութեան առաջին ղեկավար մարմնի՝ Կենտրոնական Վարչութեան անդամ:

Հիմնադիր ժողովից յետոյ, Հ. Յ. Դ. Կենտրոնի որոշումով, գործիչ ուժերը ցրուեցին զանազան շրջաններ: Զաւարեանը, Յովսէփ Արղութեանի հետ, անցաւ Տրապիզոն ազգային վարժարանի տնօրէնի պաշտօնով: Այդ օրերին Տրապիզոնում էր գտնւում Հնչակեան Երկրի Վարչութիւնը, որ նոյնպէս միացած էր համարւում Հ. Յ. Դաշնակցութեան: Տրապիզոնում եկաւ, ուսուցչական պաշտօնով, եւ Յ. Իւսուֆեանը: Այս երեքը՝ միանալով Հնչակեան Վարչութեան անդամների հետ՝ պիտի կազմէին Հ. Յ. Դաշնակցութեան Երկրի Վարչութիւնը: Տրապիզոնում, սակայն, նա երկար չկարողացաւ մնալ. մի քանի ամիս անցած թուրք կառավարութիւնը ձերբակալեց Զաւարեանին ու Արղութեանին, որպէս յեղափոխականների, եւ Զաւարեանին յանձնեց դատարանի: Դատի միջոցին Զաւարեանը մի յանդուգն պաշտպանողական ճառ արտասանեց՝ խարազանելով Սուլթանի նեխած վարչաձեւը: Հե-

տեւանքը եղաւ չորս տարուայ բերդարգելութեան դատավճիռ։ Քիչ յետոյ, սակայն, ռուսական դեսպանի միջամտութեամբ, Զաւարեանն ու Արղութեանը փոխադրուեցին Ռուսաստան եւ ռուս կառավարութեան կողմից աքսորուեցին Բեսարաբիա, ուր աքսորուած էր նաեւ Քրիստափորը։ Այստեղ, Քրիստափորը, Զաւարեանը եւ Արղութեանը երեքով աշխատեցին նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի նախագծի պատրաստութեան վրայ։

Աքսորից վերադառնալուց յետոյ, 1892–ին, Զաւարեանը մասնակցեց Հ. Յ. Դաշնակցութեան առաջին Ընդհանուր Ժողովին եւ Քրիստափորի ու Ռոստոմի հետ մշակեց կուսակցութեան ծրագիր–կանոնագիրը։ Ինչպէս յայտնի է, այդ Ժողովում որոշուեց եւ Դաշնակցութեան կազմակերպական վերջնական ձեւը՝ ապակենտրոնացում, որի գլխաւոր պաշտպաններից էին Զաւարեանը եւ Յոնան Դաւթեանը։ Զաւարեանը եղաւ նաեւ, Քրիստափորի հետ, Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի մեկնաբանողը «Դրօշակ»ի առաջին համարներում։

Եւ այնուհետեւ, մինչեւ 1902թ., Զաւարեանը մնաց Թիֆլիսում, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ եւ կուսակցութեան գլխաւոր ղեկավար ուժերից մէկը։ Առաւելապէս նրա վրայ էին ծանրացած Բիւրոյի գործավարութիւնն ու թղթակցութիւնը, եւ նա արտասովոր եռանդով ու նուիրումով կատարում էր այդ պարտականութիւնը։ Պաշտօնով պետական գիւղատնտես, որպէս այդպիսին, յաճախ, ճամբորդութիւններ էր կատարում Կովկասի զանազան կողմերը։ Այդ ճամբորդութիւնները օգտագործում էր եւ կուսակցական գործերի համար։ Միեւնոյն ժամանակ, ուսումնասիրում էր երկրի տնտեսական պայմանները։ Իր յօդուածները ռուս եւ հայկական մամուլում, ինչպէս նաեւ ռուսերէն առանձին հատորները դասական տեղ են գրաւում կովկասագիտական գրականութեան մէջ։ Յատկապէս արժէքաւոր է նրա «Մի փորձ Երեւանի եւ Կարսի նահանգների հացաբեր շրջանների գիւղատնտեսութեան հետազօտութեան» ընտուար հատորը։ Նա մանրակրկիտ ու բարեխիղճ ուսումնասիրող էր եւ բազմակողմանի ու հիմնական ծանօթութիւններ ունէր Կովկասի եւ Հայաստանի գիւղական պայմանների եւ ժողովրդական տնտեսութեան մասին։

Մինչեւ 1902 թ., Զաւարեանը Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական դէմքն էր Կովկասում, մանաւանդ 1898–ից յետոյ, երբ Քրիստափորը մեկնեց արտասահման։ Նա, իբրեւ ղեկավար, մասնակցեց բոլոր կարեւոր ժողովներին եւ բոլոր կարեւոր ձեռնարկներին։ Բնական է՝ նրա գործունէութիւնը չէր կարող չնկատուել կառավարութեան կողմից. նա ենթարկուեց խուզար–

կութիւնների եւ ձերբակալութիւնների, բայց միշտ մնաց իր դիրքում։

1902–ի գարնանը, երբ Քրիստափորը «Փոթորիկ»ի գործերով մեկնել էր Ռուսաստան, նրա տեղը Ժընեւ անցաւ Զաւարեանը, իբրեւ «Դրօշակ»ի խմբագրութեան անդամ՝ Ակնունիի եւ Վարանդեանի հետ։ Եւ մէկուկէս տարուց աւելի վարեց «Դրօշակ»ի խմբագրութիւնը եւ կուսակցութեան արտասահմանի գործերը, մինչեւ որ 1903–ի ամառը Քրիստափորը վերադարձաւ Ժընեւ։ «Ժընեւում, գրում է Վարանդեանը, Զաւարեանը ամենայն բարեխղճութեամբ կը կատարէր իր խմբագրական եւ բիւրոյական պարտականութիւնները։ Կը գրէր, կը թղթակցէր մարմիններու հետ, չէր խուսափեր ոչ մի սեւ աշխատանքէ, թերթի եւ գրքերի առաքումներն անդամ, յաճախ, իր ձեռքով կը կատարէր եւ միանգամայն, վայրկեաններու ապշեցուցիչ խնայողութեամբ մը, կը հետեւէր համալսարանական ամէն տեսակ դասախօսութիւնների, կը հետեւէր պատանեկան եռանդով ու անդադար կը կարդար, նոթեր կ'առնէր, կ'ուսումնասիրէր»։

Երրորդ Ընդհանուր Ժողովից յետոյ, որ դումարուեցաւ 1904–ին, Սոֆիայի մէջ, կուսակցութեան որոշումով, Զաւարեանը անցաւ Կիլիկիա Խանասորի Վարդանի հետ։ Ընդհ. Ժողովը որոշել էր ուժեղ կազմակերպութիւն առաջ բերել եւ գործունէութեան վայր դարձնել նաեւ Կիլիկիան։ Այնտեղ եւս, Վարդանի պատմելով, Զաւարեանը մեծ եռանդով լծուեց գործի. «Սիմոնը անչափ ոգեւորուած էր. բնաւ չէր հանգստանում. անվերջ աշխատում էր։ Ուր էլ լինէր, իսկոյն բարեկամների, ընկերների մի շրջան կը կազմէր. կը մտնէր բոլոր խաւերի մէջ, այնքա՜ն մատչելի էր։ Ուր էլ լինէր, բոլոր տեղերի հետ կապեր կը պահպանէր եւ ամէն վայրից տեղեկութիւն կ'ունենար։ Թղթակցութեան մէջ անսովոր եռանդ ունէր»։ Զաւարեանին յաջողւում է ամրապնդել Հ. Յ. Դաշնակցութիւնը Կիլիկիայում եւ Լիբանանում՝ կապելով կուսակցութեան հետ երիտասարդ ուժերը, որոնք հետագային կարեւոր դեր կատարեցին ազգային կեանքում։

Կուսակցական աշխատանքից դուրս՝ Զաւարեանին հետաքրքրում էր Կիլիկիան, որպէս երկիր, իր ժողովուրդով ու տնտեսական պայմաններով։ Նա ուսումնասիրում եւ մեծաքանակ նիւթ է հաւաքում, մանաւանդ, երկրի տնտեսական եւ ազգագրական վիճակի մասին։

Երբ 1905–ի սկիզբը պայթեցին հայ–թաթարական ընդհարումները, եւ Վարդանը ստիպուած՝ փութով վերադարձաւ Կովկաս, Զաւարեանը յանձնեց նրան մի շարք իրեր Ժընեւ տանելու համար։ Վարդանը պատմում է. «Սիմոնը պաշտող, սիրահար էր

հայկական բնութեան, նրա օդի, հողի, լեռների ու ջրերի... Զէյթունի մէջէն անցնող Ճիհան գետի ջրից լեցրել էր մի չիշ եւ պահել, որպէս սրբութիւն: Մերսինի թէ Թարսուսի բանտարկեալներին այցելելով, ստացել էր նրանցից, իբրեւ յիշատակ, նրանց ձեռքի աշխատանք վեց փայտէ դդալներ: Մի ինչ որ լեռից մի կտոր քար էր վերցրել եւ մի քանի ուրիշ մանր-մունր բաներ՝ բոլորն էլ Կիլիկեան յիշատակներ: Ցանձնեց ինձ, որ բերեմ «Դրոշակ»ի թանգարանի համար»:

Զաւարեանը ինքն էլ երկար չկարողացաւ մնալ Կիլիկայում: Ռուսաստանի յեղափոխական դէպքերը հարկադրեցին նրան վերադառնալ Կովկաս, ուր նորից նետուեց կուսակցական աշխատանքի մէջ, որպէս Բիւրոյի անդամ, «Յառաջ» օրաթերթի խմբագիրներից մէկը, իբրեւ ղեկավար դէմք Հ. Յ. Դաշնակցութեան: 1906-ին նախագահ ընտրուեց Էջմիածնի Ազգային Կենտրոնական Ժողովի, որի մէջ Հ. Յ. Դաշնակցութեան գլխաւոր բեմախօսն էր: Մասնակցեց Հ. Յ. Դաշնակցութեան Զորրորդ Ընդհ. Ժողովին Վիէննայում: Գլխաւորեց Հ. Յ. Դաշնակցութեան Պատուիրակութիւնը Խրիմեան Հայրիկի յուղարկաւորութեան ժամանակ:

1908-ին, Օսմանեան Սահմանադրութեան հռչակումից յետոյ, երբ Կովկասում ծայր տուին հալածանքները Դաշնակցականների դէմ, Զաւարեանը անցաւ Պոլիս, ուր գործեց, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար ուժերից մէկը: Ատանայի կոտորածից յետոյ, 1909-ին, անձամբ գնաց Կիլիկիա տեղն ու տեղը ստուգելու համար թրքական վայրագութիւնների չափն ու պատճառները: Եւ ապա, մինչեւ 1911 թ. մնաց Մշում, իբրեւ Տարօնի ազգային դպրոցների ընդհանուր տեսուչ, իրեն պէս մի ուրիշ դաղափարապաշտ սուրբի՝ բժ. Յ. Զաւրեանի հետ միասին:

1911 թ. ամառը Զաւարեանը մասնակցեց Հ. Յ. Դ. Վեցերորդ Ընդհ. Ժողովին, Պոլսում: Թէ՛ Ընդհ. Ժողովում, թէ՛ դուրսը նա բարոյական մեծ հեղինակութիւն էր: «Ամենքը, վկայում է Վարանդեանը, կը խոնարհէին անոր բարոյական անձնաւորութեան առջեւ, որ Դաշնակցութեան խիղճը կը կեդրոնացնէր իր մէջ»:

Ընդհանուր Ժողովից յետոյ, Զաւարեանը մնաց Պոլսում, որպէս Բիւրոյի անդամ, եւ ապրում էր Եսայեան Վարժարանի ուսուցչական պաշտօնից ստացած համեստ ռոճիկով՝ դպրոցից դուրս իր ամբողջ ժամանակն ու եռանդը նուիրելով կուսակցութեան եւ հասարակական գործունէութեան: Եւ մի օր, 1913 թ. Հոկտ. 15/28-ին, իր բնակարանից «Ազատամարտ»ի խմբագրա-

տունը գնալիս, Աշխատանքի Տան առջև, ընկաւ ուշաթափ՝ փչելով վերջին շունչը։

Պոլիսն ու Թիֆլիսը, ուր տարուեց նրա աճիւնը Խոջիվանքի գերեզմանոցում թաղելու համար, արտասովոր յուղարկաւորութիւն կատարեցին։ Բերայի Երրորդութեան եկեղեցում, Զաւարեանի դագաղի առջև դամբանականներ խօսեցին Ա. Ահարոնեանը, Գ. Խաժակը, Դանիէլ Վարուժանը, Մշոյ Գեղամը։ Եւ ամենքը լացին, երբ Շահ-Մուրատեանը երգեց «Խաւարեալ Գիշեր»ի ողբը եւ Կոմիտասը՝ «Ի վերին Երուսաղէմը»...

Ռ Ո Ս Տ Ո Մ

Տարբեր կարգի անհատականութիւն էր Ռոստոմը։ Ոչ Քրիստափորի մտքի անմիջական ոյժն ու հմայքը ունէր նա, ոչ էլ Զաւարեանի բուռն խառնուածքը։ Արտաքինով հակապատկերն էր երկսի։ Միջահասակ, ամուր կազմուածքով, առողջ, ուժեղ։ Լայն ուսերի վրայ՝ սոկրատեան գլուխ։ Իմացական լայն ճակատ՝ վրշտի կամ զայրոյթի պահերին ծածկուած խորունկ կնճիռներով։ Սեւ մօրուքն ու գլխի գանգուր մազերը՝ ցրիւ ու խառնափնթոր։ Թաւ յօնքերի տակ՝ խոհուն ու խօսուն աչքեր, յաճախ, զուարթ ու հեգնական։ Ժպիտը՝ անմոռանալի։ Անմոռանալի՝ եւ ցասումը։ Հաղուստը՝ պարզ ու համեստ։ Պարզ ու համեստ՝ եւ իր շարժուձեւը, վերաբերումը դէպի մարդիկ։

Առաջին տպաւորութիւնը Ռոստոմից — սովորակա՛ն մարդ։ Երեւոյթը՝ սովորական։ Խօսքը՝ անպաճոյճ եւ հասարակ։ Հետաքրքրութեան նիւթը՝ առօրեայ, գործնական հարցեր։ Ճառախօս չէր. աւելի ձեռքերն էին խօսում, քան լեզուն։ Որեւէ տեղ երբեք առաջին շարքերում կարելի չէր տեսնել նրան. ուրիշներին էր առաջ քշում, ինքը մնում էր ստուերի մէջ, շատերի հետ։ Անձնական հետաքրքրութիւն չունէր, ինչպէս չունեցաւ եւ անձնական կեանք։ Միշտ գործի վրայ էր, եւ Ռոստոմի համար կարեւոր ու անկարեւոր գործեր չկային. գործեր միայն կային, որոնց վրայ անխնայ թափում էր իր ոյժն ու եռանդը։ Միշտ շարժման մէջ էր. Ռուսաստան, Թուրքիա, Պարսկաստան, Եւրոպայի զանազան երկրներ, Հայաստանի քաղաք ու գիւղ — Ռոստոմը ամէն տեղ էր, ուր կուսակցութիւնը անհրաժեշտ էր գտնում իր ներկայութիւնը։ Եւ միշտ կեանքով լի, լաւատես ու գործունեայ։ «Ցեղափոխութիւնը, ասում էր Ռոստոմը, նախ գործ է, յետոյ՝ գաղափար — ա՛յս է ճշմարտութիւնը։ Աւելի ճիշդ՝ յեղափոխութիւնը գործ է գաղափարի համար»։ Եւ մինչեւ մահ հաւատարիմ մնաց այս սկզբունքին։



ՌՈՍՏՈՄ

Որոշ չափով նաեւ իր բնագիտական մասնագիտութիւնն էր, թերեւս, պատճառ, որ Ռոստոմը ունէր դրական, չասելու համար նիւթապաշտ միտք: Նրան «մարքսիստ» էին կոչում կուսակցութեան մէջ եւ, անշուշտ, ոչ առանց իրաւունքի: Դաշնակցութեան

առաջին ծրագրի մարքսիստական տարրերը Ռոստոմից էին գալիս դլխաւորապէս։

Շատ կարդացող չէր, բայց ինչ որ կարդում էր՝ իւրացընում էր հիմնովին։ Իր սիրած հեղինակներն էին Ռաբլէ, Սերվանտէս, Գոգոլ։ Վերջինիս «Տարաս Բուլբա»ն գիտէր գրեթէ գոց։ Տարասից շատ բան կար եւ Ռոստոմի մէջ։

Քրիստափոր եւ Զաւարեան չեշտուած անհատականութիւններ էին որոշ մարզերում. Ռոստոմի մէջ համադրուած էին երկսի կարողութիւններն էլ։ Նա ունէր մտաւորական բարձր յատկութիւններ, զօրաւոր եւ յարատեւ կամք, օժտուած էր կազմակերպական-վարչական ընդունակութիւններով։ Անհունօրէն նուիրուած էր հայ ժողովրդի դատին։ Մարդկային էր եւ յաշխարհէ։ Քրիստափորից եւ Զաւարեանից երկար ապրեց, աւելի գործեց եւ իր մտքի ու գործի դրոշմը աւելի տեսանելի է Հ. Յ. Դաշնակցութեան վրայ։ Եթէ Քրիստափորը եղաւ Հ. Յ. Դաշնակցութեան միտքն ու կամքը, եւ Զաւարեանը՝ նրա սիրտն ու խիղճը, Ռոստոմը ե՛ւ միտք էր, ե՛ւ կամք եւ խիղճ՝ Դաշնակցութիւնը ինքը իր բովանդակ էութեամբ։

Ռոստոմն եւս գողթնեցի էր՝ Քրիստափորի հայրենակից։ Ծնուած էր Ցղնա գիւղում, 1867 թ. Յունուար 18-ին, բուն անունով՝ Ստեփան Զօրեան։ Ուրեմն, Քրիստափորից 8 տարիով փոքր էր եւ գրեթէ հասակակից Զաւարեանին։ Նահապետական ունեւոր ընտանիքի զաւակ էր եւ մանկութիւնը անցկացրեց գիւղում, գեղեցիկ բնութեան ծոցում, զուտ հայկական միջավայրում։ Գիւղի ծխական դպրոցում, փոքր հասակից երեւան բերեց առանձին սէր դէպի հայերէն լեզուն ու պատմութիւնը, ինչպէս նաեւ եկեղեցական երգեցողութիւնը։ Սիրում էր, լաւ տրամադրութեան մէջ, գրաբար կտորներ արտասանել եւ շարականներ երգել։ Հակառակ որ երաժշտական կրթութիւն չունէր, ոչ էլ երգելու ընդունակութիւն, ուր որ լինէր՝ փորձում էր երգեցիկ խմբեր կազմել եւ ազգային ու ժողովրդական կամ յեղափոխական երգեր սովորեցնել։

Գիւղական դպրոցը չաւարտած՝ ծնողները տանում են պատանի Ստեփանին Թիֆլիս, ուր նա, Բէգլարեան մասնաւոր դպրոցում նախապատրաստուելուց յետոյ, 1882-ին, մտնում է պետական ռէալական դպրոցը, որ աւարտում է 1886-ին։ Ռէալական դպրոցի ընդունակ աշակերտներից է լինում եւ առանձնապէս աչքի է ընկնում բնագիտական եւ մաթեմատիկական առարկաների մէջ։ Եւ արդէն դպրոցական նստարանի վրայ՝ սկսում է հետաքրքրուել հասարակական խնդիրներով եւ գործօն մասնակցութիւն է ունենում աշակերտական ինքնազարգացման խմբակների

մէջ։ Նրա դպրոցական ընկերները վկայում են, որ հանդարտ ու խոհուն տղայ էր. չէր սիրում մասնակցել խաղերին. շատ կարդում էր եւ շատ մտածում։ Ընկերները նրա անունը դրել էին Քոթոթ՝ քոթոթի նմանուղղ կազմուածքի պատճառով. այդ անունը մնաց վրան մինչեւ վերջ։ Քրիստափորի եւ Զաւարեանի պէս նա եւս դրաւուեց ռուս յեղափոխական ու մտաւոր շարժումներով, բայց հայկականութիւնը իր մէջ աւելի զօրաւոր էր։

Ռէալական դպրոցը աւարտելուց յետոյ, նա, նոյն տարին իսկ, մտաւ Նովո-Ալեքսանդրեան Գիւղատնտեսական ճեմարանը, Վարշաւայի մօտ, ուր, սակայն, երկար չմնաց. ուսանողական խռովութեան մասնակցելու պատճառով ձերբակալուեց եւ ոստիկանի հսկողութեան տակ աքսորուեց ծննդավայրը՝ Ցղնա՝ զբաղուելով ուրիշ դպրոց մտնելու իրաւունքից։ Ցղնայում Ռոստոմը ճարեց Աբրահամեան անունով մի անցագիր, մեկնեց Թիֆլիս եւ մտաւ յեղափոխական խմբակների մէջ։ Քրիստափորի յուշերից տեսնում ենք, որ, 1887-ին, նա փորձում է դաղտնի տպարան պահել Թիֆլիսում, Քրիստափորի հետ, որ, սակայն, նիւթական միջոցների բացակայութեան պատճառով, չի յաջողւում։

Թիֆլիսից Ռոստոմը անցնում է Բաքու, ուր Աբրահամեան անունով քննութիւն է տալիս ռէալական դպրոցում եւ 1889-ին մտնում է Մոսկուայի Պետրովսկայա Գիւղատնտեսական ճեմարանը, ուր ուսանում էին Ս. Զաւարեանը, Ա. Սահակեանը եւ ուրիշներ, որոնք յետոյ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր կամ ղեկավար ուժերը դարձան։ Ռոստոմը մեծ եռանդով մասնակցում է հայ եւ ռուս ուսանողական շարժումներին։ Եւ 1890-ին, ուսանողական ցոյցի ժամանակ, ձերբակալւում եւ նորից աքսորւում է ծննդավայր։ Աքսորի ժամանակը զուգադիպում է Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր ժողովներին, որով Ռոստոմը անմիջական բաժին չի ունենում Դաշնակցութեան կազմակերպութեան գործում։

Երբ Ռոստոմը Թիֆլիս հասաւ, Հ. Յ. Դաշնակցութիւնը արդէն կազմակերպուած էր։ Նա ամբողջ էութեամբ նետւում է գործի մէջ եւ դառնում է Կեդրոնական Վարչութեան աջ բազուկը, իբրեւ մտերիմ գործակից Քրիստափորի եւ Զաւարեանի։ «Նա վարչութեան մէջ չէր, վկայում է Մ. Շաթիրեանը, բայց ամենից գործունեայ անդամն էր դարձել մեր կազմակերպութեան։ Խմբեր կազմել, թռուցիկներ հրատարակել, գինավարժութեան գործը վարել — բոլորը նրա վրայ էր ընկած»։

Հիմնադիր ժողովից անմիջապէս վերջը, տեղի ունեցաւ գործօն ուժերի բաժանում շրջանների վրայ. Զաւարեանը, Արղութեանը եւ Յ. Իւսուֆեանը նշանակուեցին Տրապիզոն, Արամ Արամ-

եանն ու Տ. Օքոնեանը՝ Կարին, Պեսոն՝ Վան, Յովնան Դաւթեանը մի խումբ ընկերներով՝ Թաւրիզ։ Ռոստոմն եւս մեկնում է Թաւրիզ, ուսուցչական պաշտօնով, ուր մնում է մէկ տարի՝ զբաղուելով դլխաւորապէս Դաշնակցութեան գործերով։

Վերադառնալով Թիֆլիս՝ նա մասնակցում է Հ. Յ. Դ. Առաջին Ընդհ. Ժողովին, 1892–ին, ուր հաստատւում է Դաշնակցութեան ծրագիրը։ Ռոստոմը, Քրիստափորի եւ Զաւարեանի հետ, Ժողովի մղիչ ոգին է հանդիսանում եւ ծրագրի հեղինակներից մէկը. նրա գրչին է պատկանում ծրագրի ներածական մասը, որ աւելացուեց ծրագրին Ընդհ. Ժողովից յետոյ՝ վաւերացուելով յաջորդ՝ Երկրորդ Ընդհ. Ժողովում։

1893–ի սկիզբը, Բիւրոյի որոշումով, Ռոստոմը անցնում է Ռումանիա կազմակերպելու համար «Դրօշակ»ի հրատարակութիւնը, սակայն, քաղաքական պայմանները թոյլ չէին տալիս Ռումանիայում հրատարակել «Դրօշակ»ը։ Նա Քրիստափորի թողած տառերը փոխադրում է Ժընեւ, ուր եւ հաստատւում է «Դրօշակ»ի խմբագրութիւնը՝ Ռոստոմի ղեկավարութեան տակ։ Նա ե՛ւ խմբագիր է, ե՛ւ գրաշար եւ ամէն ինչ, եւ միաժամանակ վարում է կուսակցական թղթակցութիւնը։ Խմբագրատունն ու գրաշարանոցը նրա ուսանողական համեստ սենեակն էր։ Միեւնոյն ժամանակ դասախօսութիւններ էր լսում համալսարանում՝ բնագիտութիւնից եւ ընկերային գիտութիւններից։ Գործօն մասնակցութիւն էր բերում տեղական հայ ուսանողական կեանքին։ Իրեն աջակից էին ուսանող Սիմոն Շեխեանը, որ ինքնանկան թուականների Դաշնակցական աչքի ընկնող գործիչներից էր, Օր. Լիզա Մելիք–Շահնազարեանը՝ իր ապագայ կեանքի ընկերը եւ Ժընեւ գտնուող մի քանի ուսանող– ուսանողուհիներ։

Ժընեւը, սակայն, բաւարարութիւն չէր տալիս Ռոստոմի եռուն եւ յարաշարժ բնաւորութեան։ Նա երկար մէկ տեղ նստող եւ խաղաղ աշխատանքին նուիրուող մարդ չէր։ Նրա հոգին ձգտում էր կենդանի գործի ասպարէզ, երկիր, ժողովրդի մէջ, ուստի բազմաթիւ անգամներ խնդրում է Բիւրոյի ընկերներից ազատել իրեն «Դրօշակ»ի խմբագրութիւնից։ «Ես խեղդւում եմ այստեղ, օդ չկայ», գրում էր նա իր նամակներից մէկում։ Եւ, ի վերջոյ, յաջողեց «ազատուել» Ժընեւից. 1895–ին, պարսկական անցագրով, իբրեւ «սամովարի վաճառական», Տրապիզոնի վրայով, մեկնեց Կարին։ Ճանապարհին, Պոլսի նաւահանգստում, նաւի վրայ, տեսնուեց Յ. Իւսուֆեանի հետ, որ Բիւրոյի ներկայացուցիչն էր Պոլսում։ Տրապիզոնում մի օր մնաց ընկերների հետ՝ յանձնելով նրանց հետը բերած ատրճանակները։ Կարինում հրաւիրուեց ուսուցիչ ազգային վարժարանի եւ նուիրուեց կուսակ–

ցական աշխատանքների տեղական ընկերների եւ Ղարա-Մելիքի հետ, որ այդ օրերին Կարնում էր։

Ռոստոմը նոր էր հասած Կարին, երբ սկսուեցին հայկական շրջանների ընդհանուր կոտորածները։ Նրա ջանքերով երիտասարդներից կազմուեցին ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք, Կարինի կոտորածի օրը, դիմադրեցին ջարդարարներին, որի շնորհիւ կոտորածը, համեմատաբար, լայն ծաւալ չստացաւ։ Շուտով, սակայն, ձերբակալուեց եւ, իբրեւ պարսկահպատակ, Ղարա Մելիքի հետ միասին աքսորուեց Պարսկաստան։ Թէ՛ Կարնից եւ թէ՛ Թուրք-պարսկական սահմանագլխից Ռոստոմը հետաքրքրական թղթակցութիւններ ուղարկեց «Դրօշակ»ին։

Պարսկաստանից Ռոստոմը անցաւ Թիֆլիս, ուր մի առ ժամանակ զբաղուեց Կովկասեան կուսակցական գործերով։ 1898-ին մասնակցեց Հ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովին, ուր, ի միջի այլոց, որոշուեց «կապեր հաստատել մակեդոնացիներու, յոյներու եւ ուրիշներու հետ»՝ թրքական բռնակալութեան դէմ ընդհանուր ճակատ ստեղծելու նպատակով։ Ռոստոմը առանձնապէս հետաքրքրուած էր գործակցութեան գաղափարով մակեդոնացիների հետ եւ ոգեւորութեամբ փարեց այդ գործին։ Յաջորդ տարիները նա անցկացրեց Բալկաններում՝ հետապնդելով հայ-մակեդոնական գործակցութեան ծրագիրը։ Կովկասում ամուսնացել էր Օր. Լիզա Մելիք-Շահնազարեանի հետ. կնոջ հետ միասին նա Ֆիլիպպէում մասնաւոր դպրոց հաստատեց, որպէսզի հնարաւորութիւն ունենար ապրելու Բուլգարիայում։ Այդ դպրոցը դարձաւ մի տեսակ հնոց նոր սերունդը Դաշնակցական գաղափարներով թրծելու։

1902-ին Ռոստոմը վերադարձաւ Կովկաս եւ երբ 1903-ին, ցարական կառավարութիւնը ձեռք դրեց հայ ազգային-եկեղեցական կալուածների վրայ, եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոտքի հանեց հայութիւնը ի պաշտպանութիւն ազգային իրաւունքների, Ռոստոմը դարձաւ այդ շարժման ոգին։ Յանուն Հ. Յ. Դաշնակցութեան նա այցելեց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկին, Էջմիածնում՝ յայտնելով նրան կուսակցութեան կամքը, որ մերժէ գործադրել ցարի հրահանգը։ Խրիմեան Հայրիկի համար, անշուշտ, մեծ նշանակութիւն ունեցաւ Դաշնակցութեան աջակցութիւնը ազգային իրաւունքների պաշտպանութեան գործում։

Եւ այնուհետեւ Ռոստոմը անընդհատ շրջում էր գաւառից գաւառ՝ տեղական ուժերի հետ կազմակերպելով եւ ղեկավարելով համազգային դիմադրութիւնը ընդդէմ ռուս բռնապետութեան ոտնձգութիւնների։ Նա ամէն տեղ էր եւ բոլորի հետ, ոգեւորում ու պայքարի էր մղում ժողովրդական զանգուածները։

Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպած դիմադրութեան շնորհիւ, ցարական կառավարութիւնը, ի վերջոյ, դիմեց անփառունակ նահանջի՝ յետս կոչելով հայկական կալուածների գրաւման հրամանը։

1904-ին Ռոստոմը մասնակցեց Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհ. Ժողովին, Սոֆիայում, որտեղ գլխաւոր հարցերն էին Թրքահայաստանի յեղափոխական ձեռնարկները, Կովկասի ինքնապաշտպանութիւնը եւ Սուլթանի մահափորձը։ Ռոստոմը համաձայն չէր Սուլթանի մահափորձի ձեռնարկին. մանաւանդ, հակառակ էր, որ Քրիստափորը զբաղուի այդ գործով։ Քրիստափորի մահից յետոյ, երբ արդէն սկսուած էին հայ-թաթարական ընդհարումները, նա վերադարձաւ Կովկաս եւ անցաւ ինքնապաշտպանութեան գործի գլուխը։ Կռիւների ամբողջ տեւողութեան ընթացքին նա շրջում էր վտանգուած վայրերը եւ Վարդանի, Նիկոլ Դումանի, Արմէն Գարոյի, Ա. Գիւլխանդանեանի եւ ուրիշ զեկավար դէմքերի հետ վարում դիմադրութիւնը մահմեդական հորդաների եւ կառավարական շահատակութիւնների դէմ։ Հ. Յ. Դաշնակցութեան շնորհիւ հայ ժողովուրդը այս պայքարից էլ դուրս եկաւ յաղթանակով։ Ռոստոմը այդ պայքարի ոգին ու մղիչ ոյժն էր՝ ըստ սովորութեան միշտ եւ ամէն տեղ մնալով ստուերի մէջ։

Ռուսաստանի 1905 թ. յեղափոխութեան եւ Կովկասեան ինքնապաշտպանութեան հետեւանքով առաջ եկած «երիտասարդ դաշնակցականների» եւ «միհրանական» շարժումները, այլեւ Թրքահայ-ռուսահայ դատերի եւ ընկերվարական-հակաընկերվարական հարցերը մի պահ վրդովեցին Հ. Յ. Դաշնակցութեան ներքին անդորրութիւնը՝ սպառնալով նրա միասնականութեան։ Հ. Յ. Դ. Զորրորդ Ընդհ. Ժողովը, Վիէննայում, 1907 թ. գարնանը, կոչուած էր հաշուեյարդարի ենթարկելու այդ խնդիրները։ Եւ Ռոստոմը, իր բարոյական անսահման հեղինակութեամբ ու խոհականութեամբ նախախնամական դեր կատարեց այդ հարցերի լուծման մէջ։ Առաւելապէս Ռոստոմին ենք պարտական, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը այդ Ժողովից դուրս եկաւ միակամ, համերաշխ եւ աւելի ուժեղ։ Ռոստոմի պնդումի վրայ էր նաեւ, որ Ընդհ. Ժողովը իւրացրեց Պարսկաստանի ազատագրական շարժման մասնակցելու առաջարկը։

Ընդհ. Ժողովից յետոյ, Ռոստոմը անցաւ Բուլգարիա Հ. Յ. Դ. Զինուորական Վարժարանի գործով, որ հաստատուած էր գլխաւորապէս իր ջանքերով։ Ապա՝ ներկայ եղաւ Ընկերվարական Միջազգային Համագումարին, Շտուտգարտում, ուր Հ. Յ. Դաշնակցութիւնը ընդունուեց Ընկերվարական Միջազգայնակա-

նի անդամ։ Այնտեղից անցաւ Կովկաս ու Թաւրիզ, որպէս ղեկավար Պարսկաստանի յեղափոխական կռիւների՝ Նիկոլ Դումանի եւ Քեռիի հետ։

Թաւրիզի ռուսների կողմից գրաւուելուց յետոյ, 1909–ին, Ռոստոմը Նիկոլ Դումանի հետ անցաւ Թուրքիա։ Նոյն տարուայ ամառը մասնակցեց Հ. Յ. Դ. Հինդերորդ Ընդհ. Ժողովին, Վառնայում եւ միաժամանակ, որպէս Բիւրոյի անդամ գործելով Պոլսում, 1910–ին, իբրեւ անդամ Հ. Յ. Դ. Բիւրոյի Հայաստանի հատուածի եւ որպէս Ազգային վարժարանների ընդհանուր տեսուչ, հաստատուեց Կարնում, ուր մնաց մինչեւ 1914 թ. ամառը, յաջորդաբար մասնակցելով նաեւ Հ. Յ. Դ. Վեցերորդ, Եօթներորդ եւ Ութերորդ Ընդհ. Ժողովներին։ Ռոստոմի ներկայութիւնը Կարինում, կարելի է ասել, յեղաշրջեց այդ քաղաքի ազգային կեանքը։

Հ. Յ. Դ. Ութերորդ Ընդհ. Ժողովը, 1914 թ. ամառը, որոշեց Ռոստոմին մէկ տարուայ «հանգիստ» տալ Ժընեւում՝ պարտք դնելով նրա վրայ, որ գրէ նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը։ Բայց ի՞նչ հանգիստ կարող էր ունենալ պատերազմի եւ Մեծ Եղեռնի արհաւրալից օրերին։ Արտասահմանում էլ նա հանգիստ ու հոգեկան անդորրութիւն չտեսաւ։ Գերադոյն ճիգ թափեց ամոքելու համար հայութեան տառապանքները, բայց ի՞նչ կարող էր անել աշխարհասասան պատերազմի խօլական մրրիկների մէջ։

1915–ին, Սկանտինաւիայի վրայով, Ռոստոմը անցաւ Կովկաս։ Հայութիւնը այստեղ գերագոյն յոյսերի եւ տագնապի օրեր էր ապրում։ Մի կողմից՝ կամաւորական շարժումն ու ռուս քաղաքականութեան նենգութիւնները։ Միւս կողմից՝ տեղահանութեանց ու ջարդերի զարհուրելի լուրերը Թուրքիայից։ Ճընշուած սրտով Ռոստոմը նետուեց դէպքերի մէջ, իբրեւ ղեկավար դէմք Դաշնակցութեան։ Նրա ներկայութիւնը նոր թափ ու ոգեւորութիւն ներշնչեց նաեւ տեղական ուժերին։ Այնուհետեւ նրան տեսնում ենք ամէն տեղ եւ բոլոր գործերի մէջ — Ազգ. Բիւրո, կամաւորական շարժում, գաղթականներին օգնող կազմակերպութիւնների մէջ, արեւմտահայերի գործերում, քաղաքական ձեռնարկներում, կուսակցական ասպարէզում։ Նա ճաշակեց ցարական նենգ քաղաքականութեան բոլոր դառնութիւնները, տեսաւ Թրքահայաստանի ամայացումը եւ հոգեպէս տառապեց, առանց ցոյց տալու ուրիշներին իր ներքին խռովքը։

1917ի ռուսական յեղափոխութիւնը չխանդավառեց Ռոստոմին. նա բնազդօրէն սարսափում էր ռուսական զօրութեան անժամանակ փլուզումից։ Հակառակ դրան, ստիպուած էր մասնակցել

յեղափոխական շարժումներին, իբրեւ Դաշնակցական շարքերի հեղինակաւոր առաջնորդը։ Ռոստոմը գործում էր անյոգնում. խօսում էր հրապարակային ժողովներում, Դաշնակցութիւնն էր ներկայացնում յեղափոխական խորհրդակցութիւնների ու մարմինների մէջ. ներկայ էր լինում համակովկասեան կազմակերպութիւնների ժողովներին. ճամբորդում էր գաւառները, թրքահայկական նուաճուած վայրերը, ռազմաճակատ։ Կարինը դրաւուելուց յետոյ՝ շտապեց այնտեղ՝ տեսնելու եւ ողբալու համար այդ չէն եւ քաղցր յիշատակներով լեցուն քաղաքի կործանումը։

Իբրեւ Դաշնակցութեան առաջին ներկայացուցիչը, Ռոստոմը ընտրուեց Համառուսական Սահմանադիր Ժողովի անդամ եւ 1917-ի աշնանը մեկնեց Պետրոգրատ, ուր, տեղական Հայկական Կոմիտէի գործակցութեամբ, յաջողեց հայկական պահանջներն եւս մտցնել ժամանակաւոր Կառավարութեան հաշտութեան պայմանների մէջ։ Ապա անցաւ Ստոկհոլմ, ներկայացնելու համար Հ. Յ. Դաշնակցութիւնը, գումարուելիք Ընկերվարական Միջազգային Համաժողովին։ Այստեղ եւս, Կազմակերպիչ Մարմնում, ընդունել տուեց Հայկական Հարցը, իբրեւ պատերազմի նպատակներից մէկը։

Երբ վերադարձաւ Ռուսաստան, իշխանութիւնը արդէն անցել էր բոլշեւիկների ձեռքը, եւ ողջ երկիրը բռնուած էր քաղաքացիական պատերազմի հրդեհով։ Ռազմաճակատը արագ կերպով քայքայւում էր։ Յարաբերութիւնները Կովկասի հետ կտրուած էին։ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, Լենինի գլխաւորութեամբ, պատրաստւում էր հաշտութեան դաշնագիր կնքել Գերմանիայի եւ սրա դինակից պետութիւնների հետ։ Ռոստոմը, Պետրոգրատի եւ Մոսկուայի հայ գործիչների հետ միասին աշխատեց կապեր հաստատել Խորհրդային իշխանութեան հետ եւ Թրքահայաստանի ազատութեան պահանջն էլ մտցնել խաղաղութեան ռուսական պայմանների մէջ։ Եւ որոշ խոստումներ ստացաւ էլ, բայց Բրեստ-Լիտովսկում բոլշեւիկները ոչ միայն Թրքահայաստանից ձեռք քաշեցին, այլ Ռուսահայաստանի մի մասն էլ դիջեցին Թուրքերին։

Ռուսաստանի դանդաղան վայրերում գերման-աւստրիական ճակատից մեկնած բազմաթիւ հայ զինուորներ էին հաւաքուած, որոնք ձգտում էին հայրենիք՝ Կովկաս վերադառնալ, բայց Խորհրդային իշխանութիւնը արգելք էր հանդիսանում։ Միւս կողմից, Բագուն, մերժելով Անդրկովկասեան Սէյմի իշխանութիւնը, Լենինի կողմից նշանակուած Անդրկովկասեան Կոմիսար Ստ. Շահումեանի եւ Հայոց Ազգային Խորհրդի գլխաւորութեամբ։ ուժեր էր համախմբում Թուրք-ադրբէջանեան ոպառնալիքի դէմ։

Ռոստոմը եւ ուրիշ Դշնակցական գործիչներ, ինչպէս բժ. Յ. Զաւրեանը, Լիպ. Նազարեանը, կարողացան համոզել Խորհրդային իշխանութեան, որ արտօնեց հայ սպաներին ու զինուորներին զէնքով եւ ռազմամթերքով անցնել Բագու։ Քիչ յետոյ, Ռոստոմն ինքն եւս մեկնեց Բագու եւ մինչեւ վերջ մնաց այնտեղ, իբրեւ Բագուի Հերոսամարտի ղեկավար ոգին։

Բագուի ողբերգական անկումից յետոյ, Ռոստոմը բազմահազար հայերի հետ մեկնեց Պարսկաստան, ուր մի կողմից ջանաց ապահովել դաղթականութեան օգնութեան գործը՝ ազգային մարմինների ու պարսիկ եւ անգլիական իշխանութիւնների օժանդակութեամբ, միւս կողմից յարաբերութեան մէջ մտաւ Եւրոպայի եւ Ամերիկայի ազգային ու քաղաքական կազմակերպութիւնների հետ՝ Հայաստանին օգնութիւն փութացնելու համար։ Հակառակ ընդհանուր յուսալքութեան, Ռոստոմը երբեք չընկճուեց եւ միշտ մնաց լաւատես ու կորովի։

Ընդհանուր զինադադարից յետոյ, 1918 թ. Նոյեմբերին, երբ ճանապարհները բացուեցին, Ռոստոմը շտապեց վերադառնալ Կովկաս։ Հայաստանը այլեւս անկախ հանրապետութիւն էր։ Նոր յոյսեր ու նոր հեռանկարներ էին բացւում հայութեան առջեւ։ Բայց Թիֆլիսում նրան սպասում էր սարսափելի մի հարուած. Վրաստանը, իր մտերիմ ընկեր Նոյ Ժորդանիայի գլխաւորութեամբ, պատերազմի մէջ էր Հայաստանի հետ, եւ Թիֆլիսի հայ բնակչութիւնը խուժադուժ հալածանքի առարկայ՝ վրացիների կողմից։ Ռոստոմը գերադոյն ճիգ թափեց վերջ տալու այդ անիմաստ, անպատիւ արիւնհեղութեան։ Անձամբ դիմեց Ժորդանիային։ Բախեց ամէն դուռ, մինչեւ որ անգլիացիների միջամտութեամբ պատերազմը վերջ գտաւ։ Իր կեանքում հազիւ թէ Ռոստոմը երբեւիցէ այդքան տառապած լինէր, որքան այդ օրերին։

Դիշեր ու ցերեկ Ռոստոմը հանգիստ չունէր։ Անվերջ ոտքի վրայ էր, ժողովների եւ խորհրդակցութիւնների մէջ, ձմեռուայ ցրտին, մի թեթեւ վերարկուով ու ծակ կօշիկներով, անփոյթ դէպի իր առողջութիւնը, անտես առնելով ընկերների թախանձանքը՝ խնայելու իր անձը։ Ու մի դիշեր էլ, ժողովից ուշ վերադառնալով տուն, անկողին ընկաւ ու այլեւս ոտքի չելաւ. պարզուեց, որ վարակուած էր բծաւոր տիֆով։ Քիչ անցած՝ տիֆը վերածուեց թոքերի բորբոքման։ Բժշկական դիտութիւնն անզօր էր այլեւս օգնելու։ Եւ 1919 թ. Յունուար 19-ի դիշերը, Ռոստոմը յաւիտենապէս փակեց աչքերը։ Մեծ սիրտը, որ յոգնել չգիտէր, կանգ առաւ։ Ռոստոմը մեռաւ անկախ Հայաստանը չտեսած...

III

ՄԻԻՍ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Որքան եւ մեծ լինէր հիմնադիր Երրորդութեան հմայքն ու դէրը, Հ. Յ. Դաշնակցութիւնը բացառապէս նրանց ձեռակերտը չէր, ի հարկէ: Մտքով եւ կամքով ուժեղ, հայրենասիրական գաղափարներով տոգորուած երիտասարդների մի ամբողջ հոյլ մասնրկցեց Հ. Յ. Դաշնակցութեան յղացման ու կերտումին եւ նրա հետագայ մեծագործութեան: Նրանցից ոմանք, կարճատեւ ոգեւորութիւնից յետոյ, մի կողմ քաշուեցին՝ լքելով յեղափոխութեան փշոտ ասպարէզը: Ուրիշներ, մինչեւ մահ, հաւատարիմ մնացին իրենց ուխտին:

Առաջինների շարքում՝ ամենափայլուն դէմքը Կոստանդին Խատիսեանն էր, Հայաստանի Հանրապետութեան ապագայ վարչապետ Աղ. Խատիսեանի երէց եղբայրը: Պետերբուրգի ուսանողական խմբակի ոգին էր նա՝ քիմիագէտ-ճարտարագէտ, բաղում շնորհքներով եւ հասարակական ուժեղ խառնուածքով օժտուած, եռանդուն, համարձակ, պերճաբան, հայութեամբ հպարտ, հայրենասէր ու յեղափոխական հովերով ներշնչուած, չեշտուած անհատականութեան տէր մի երիտասարդ: Հակառակ էր ընկերվարութեան եւ զուտ ազգային նպատակներից դուրս ուրիշ ձգտումներ չէր ուզում ընդունել: Տեւական կազմակերպուած պայքարի էլ հակամէտ չէր. անհրաժեշտ էր համարում անմիջապէս դիմել մարտական՝ ռմբային գործողութիւնների եւ հաւատում էր, թէ արագ եւ ցնցող հարուածներով կարելի կը լինէր քայքայել թրքական փտած վարչաձեւը եւ ձեռք բերել Հայաստանի ազատութիւն:

Կոստ. Խատիսեանը Հիւսիսային Պանդոկի խմբի պետն էր եւ աշխատում էր սեփական կազմակերպութիւն ստեղծել: Հիմնադիր ժողովներում նա գլխաւորում էր ազգայնական հատուածը: Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը, այնպէս, ինչպէս դուրս եկաւ հիմնադիր ժողովներից, նրա սրտովը չէր: Դաշնակցութեան ստեղծումից յետոյ էլ նա երկար չմնաց կուսակցութեան մէջ, ստեղծեց իր «Ֆրակցիան», որ մի տեսակ կուսակցութիւն էր Կուսակցութեան մէջ, եւ չուտով դուրս եկաւ Դաշնակցութիւնից ու հաստատուեց Բաղուում՝ հրաժարուելով յեղափոխական գործունէութիւնից:

Կեանքը ցոյց տուեց, որ Կ. Խատիսեանը խաղաղ ու մշակութային գործերի մարդ էր: Բաղուում նա լայն ազդեցութիւն ձեռք բերեց նաւթարդիւնաբերական շրջաններում եւ իր նիւթական միջոցներն ու տաղանդը չխնայեց նաեւ հայ ժողովրդից: Նա մեծ

եռանդով մասնակցում էր ազգային գործերին։ Նրա նախաձեռնութեամբ ստեղծուեց Հայոց Կուլտուրական Միութիւնը, որ աչքի ընկնող դեր կատարեց Կովկասահայութեան մշակութային-տնտեսական զարգացման մէջ։ Դաշնակցութիւնից դուրս էր եւ չէր բաժանում նրա ընկերային նպատակները, բայց ազգային հարցերում մնաց միշտ Դաշնակցութեան կողքին՝ մտերիմ յարաբերութիւններ պահելով վերջինիս ղեկավարների հետ։

Տարբեր խմորից ստեղծուած մարդ էր Աբրահամ Դաստակեանը եւ տարբեր ձիրքերով օժտուած, բայց սա էլ հետեւեց Կ. Խատիսեանի օրինակին։ Ուսանողութեան շրջանին աչքի զարնող եւ յոյսեր ներշնչող երիտասարդ ոյժ էր, Քրիստափորի մտերիմ ընկեր եւ գործակից։ Մոսկուայի խմբակից էր եւ հիմնադիր ժողովներում գործօն դեր կատարեց՝ հետեւելով Քրիստափորի ուղեգծին։ Ընտրուեց Կենտրոնական Վարչութեան անդամ։ Յեղափոխական ասպարէզը, սակայն, նրան երկար չհրապուրեց։ Շուտով նա էլ հեռացաւ Բաղու, թօթափեց իր վրայից յեղափոխական հովերը եւ ծառայութեան մտաւ Մամոնային։ Դիրք եւ հարստութիւն ձեռք բերեց նաւթաշխարհում եւ ապրեց անձնական հաճոյքի համար։ Պահեց բարեկամական յարաբերութիւնները Դաշնակցութեան հետ, երբեմն նիւթապէս էլ օգնեց, բայց հասարակական մեծ արժէք չունեցաւ։ Հայաստանի Հանրապետութեան շրջանին, կորցնելով Բաղուի հարստութիւնը, անցաւ Երեւան. կառավարութեան կողմից որոշ յանձնարարութիւն ստացաւ արտասահմանում, բայց չարդարացրեց իր վրայ դրուած յոյսերը։

Միեւնոյն խմորից էր եւ Պետերբուրգի խմբակից Արշակ Պարոնեանը, որ նոյնպէս որոշ բաժին ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութեան գործում։ Սա եւս տարուեց Բաղուի հրապոյրով՝ հարստութիւն եւ դիրք ստեղծելով նաւթարդիւնաբերական շրջանում։ Դաշնակցութեան մէջ չմնաց, բայց մինչեւ Բաղուի անկումը եւ այնուհետեւ էլ արտասահմանում իրեն միշտ մօտ զգաց Դաշնակցութեան՝ անձնական մտերիմ յարաբերութիւն պահելով Դաշնակցական, մանաւանդ, հին սերնդի գործիչների հետ, երբեմն էլ աջակցելով Դաշնակցութեան ձեռնարկներին։

Բժ. Թադ. Զաքարեան՝ նմանապէս Պետերբուրգի խմբակից։ Հիմնադիրների շրջանակում էր՝ ազնիւ եւ խոհական նկարագրի տէր հայրենասէր մի անձնաւորութիւն։ Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, այլեւս յեղափոխական դեր չկատարեց։ Գաւառական ժողովրդական բժիշկ էր, միշտ հաւատարիմ մնաց իր սկզբունքներին եւ ջերմ բարեկամ Դաշնակցութեան։

Տիգրան Ստեփանեան, աչքի ընկնող երիտասարդ ճարտարագէտ։ Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, Կենտրոնի կողմից ուղարկուեց Պարսկաստան, իբրեւ գործիչ, բայց շուտով քաշուեց յեղափոխական գործի ասպարէզից։



ՄԱՐՏԻՆ ՇԱԹԻՐԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան մէջ առանձնապէս մեծ բաժին ունեցաւ Մոսկուայի ուսանողութիւնը։ Քրիստափորից, Զաւարեանից եւ Ռոստոմից յետոյ անմիջապէս պէտք է յիշել Մարտին Շաթիրեանի անունը, որ մտերիմ յարաբերութիւնների մէջ էր Երրորդութեան հետ եւ գործօն դեր կատարեց նոր հիմնուած կուսակցութեան առաջին տարիների կեանքում։

Մարտին Շաթիրեանը Ալեքսանդրապոլցի էր՝ ծնուած 1867-ին։ Աւարտել էր Բագուի ռէալական դպրոցը, ապա Մոսկուայի Գիւղատնտեսական Ճեմարանը, ուր մտերմացել էր Զաւարեանի, Ռոստոմի եւ Աւ. Սահակեանի հետ։ Հետագային մտերիմ յարաբերութիւններ էր մշակել նաեւ Քրիստափորի հետ։ Հետաքրքրուած էր հայ ազգային խմորումներով՝ միաժամանակ մասնակցութիւն բերելով եւ ռուս ուսանողական ու յեղափոխական շարժումներին։

1890–ին տեղի ունեցած ուսանողական խռովայոյզ ցոյցերում ու դասադուլներում Շաթիրեանն էլ բանտարկուեց եւ աքսորուեց Կովկաս։ Թիֆլիսում մի քանի օր Մետեխի բանտում պահուելուց յետոյ, ազատ արձակուեց ոստիկանական հսկողութեան տակ եւ հաստատուեց «Հարաւային Պանդոկ»ում (Իւժնիէ Նոմերա), որ քիչ յետոյ պիտի դառնար Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների ժամադրավայրը։ Այստեղ Շաթիրեանը մտաւ «Երիտասարդ Հայաստան»ի շրջանակի մէջ, որին անդամակցում էին եւ Յովս. Արղութեանը, Նիկ. Մատինեանը, սրա երկու քոյրերը՝ Նատալիան ու Սաթենիկը, Երուանդ Թադիանոսեանը, Արշակ Թադէոսեանը, Տիգրան Օքոնեանը եւ ուրիշներ, որոնք նուիրուած էին Թրքահայաստանի ազատութեան գործին։

Հետզհետէ Թիֆլիս հաւաքուեցան աքսորական կամ արձակուրդի եկած ուրիշ ուսանողներ եւս՝ Կոստ. Խատիսեան, Ա. Դաստակեան, Յակ. Քոչարեան, Ա. Սահակեան, Ստ. Թադիանոսեան, Արշակ Պարոնեան եւ ուրիշներ։ Մի մասը Կ. Խատիսեանի գլխաւորութեամբ տեղաւորուեց «Հիւսիսային Պանդոկ»ում։

Ըստ Շաթիրեանի վկայութեան, առանձնապէս բուռն գործունէութիւն էր ցոյց տալիս Խատիսեանի խմբակը, որ հովանաւորում էր Կուկունեանին եւ աջակցում նրան կազմակերպելու արշաւանքը դէպի Թուրքիա։ Երկու պանդոկների խմբերի եւ Քրիստափորի ջանքերով ծնունդ առաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Մարտին Շաթիրեանը նորաստեղծ Կեդրոնի կողմից ուղարկուում է Ալեքսանդրապոլի եւ Կարսի շրջանները Դաշնակցական խմբեր կազմելու եւ Կուկունեանի արշաւանքին աջակցելու համար։ Երկու քաղաքներում էլ նա հիմնում է խմբեր, որոնք Դաշնակցութեան առաջին կազմակերպութիւններն են դառնում։ Ալեքսանդրապոլի խմբի մէջ էին Թադէոս Խզմալեանը, Ենովք Գէոնջեանը, Տէր-Աբրահամեան քահանան (Նոտաչի), Աւետիք Ղարիբեանը եւ Վաղարշակ Ժամկոչեանը, որոնք հետագային Ալեքսանդրապոլի շրջանի կարեւոր ուժերը եղան։ Կարսի առաջին խմբի անդամներն էին՝ Արշակ Քոթանջեանը, Սեդրակ Գրիգորեանը, Համազասպ Նորհատեանը եւ Թադէոս Շէկ-Յովսէփեանը, որոնցից Հ. Նորհատեանը վերջը դարձաւ Դաշնակցութեան ականաւոր դէմքերից մէկը։

Կեդրոնի հրահանգով Շաթիրեանը հաստատուում է Կարսում, որ յեղափոխական գործունէութեան կարեւոր կենտրոններից մէկը պիտի լինէր, որպէս յարաբերութեան կէտ զէնքի ու ռազմամթերքի փոխադրութեան։ Շաթիրեանը ուսուցչութեան պաշտօն է ստանում հայկական դպրոցում եւ միեւնոյն ժամանակ զբաղ-

ւում է Դաշնակցութեան գործերով։ Մասնակցում է Կուկունեան խմբի արշաւանքի կազմակերպութեան եւ արշաւանքից յետոյ՝ բանտարկեալների հոգատարութեան։ Արշաւանքին յաջորդում են ձերբակալութիւններ Կարսում եւ Ալեքսանդրապոլում։ Բանտարկութեան սպառնալիքից խուսափելու համար՝ Շաթիրեանը, գաղտնի, Ախալքալաքի վրայով, անցնում է Թիֆլիս։ Քրիստափորն ու Զաւարեանն էլ բանտարկուած եւ աքսորուած էին Քիշինեւ։ Կեդրոնական Վարչութիւնը գրեթէ կազմալոյծ վիճակի մէջ էր։Որոշւում է Մ. Շաթիրեանին եւ Արշ. Թաղէոսեանին էլ մտցնել Կեդրոնի մէջ, որի կողմից Շաթիրեանը ուղարկւում է Հիւս. Կովկաս, ուր մնում է մինչեւ 1892 թ. գարունը։ Այցելում է Դերբենտ, Պետրովսկ, Թեմիր-խան-Շուրա, Եկատերինոդար, Նովորոսիյսկ՝ ամէն տեղ կապեր հաստատելով որոշ անհատների հետ՝ հետագային կոմիտէներ կազմելու նպատակով։

1892-ին, Շաթիրեանը, Կենտրոնի հրահանգով, հաստատւում է Բաթումում՝ Պոլսի եւ Տրապիզոնի հետ յարաբերութիւններ պահելու եւ Արտանուշի վրայով զէնք ու խմբեր մտցնելու համար Երկիր։ Բաթումում մնում է մինչեւ 1898 թ., ուր կազմում է նաեւ առաջին Դաշնակցական կոմիտէն։

1898-ին Շաթիրեանը տեղափոխւում է Բաղու եւ այլեւս կուսակցական գործերով չի զբաղւում։ Ամբողջովին նուիրւում է անհատական կեանքին եւ նիւթական ապահով դիրք ստեղծում իրեն համար։ Շարունակում է, սակայն, գործօն դեր խաղալ ազգային-հասարակական կեանքում։ Մնում է Դաշնակցութիւնից դուրս, բայց միշտ Դաշնացկութեան կողքին՝ նիւթապէս աջակցելով Դաշնակցական ձեռնարկներին։ 1916-ին, անձնական ծախսով, հրատարակեց «Հայ Կամաւորների Ալբոմ»ը, որից գոյացած հասոյթը յատկացուեց սպանուած եւ հաշմանդամ կամաւորների ընտանիքներին։ Հայաստանի Հանրապետութեան օրերին, 1920-ին, վարեց ելեւմտական նախարարի օգնականի պաշտօնը։ Փետրուարեան ապստամբութիւնից յետոյ, տարագրուեց Թաւրիզ։

Տարագրութեան մէջ էլ Շաթիրեանը շարունակեց հասարակական գործունէութիւնը, որպէս Թեմական Պատգամ. Ժողովի եւ Թեմական Խորհրդի անդամ եւ ուրիշ ասպարէզներում։ Սկսեց նաեւ աշխատակցել հայ մամուլին եւ Տարագիր ծածկանունով լոյս ընծայեց մի շարք յօդուածներ եւ վէպ ու թատերգութիւններ, ինչպէս «Արշակ Սառիկեան» վէպը, «Մարի Ալմոյեան»՝ «Ռոքսելանս» թատերախաղերը եւ արժէքաւոր յուշեր՝ գրի առնուած Նիկ. Աղբալեանի ձեռքով։

Շաթիրեանը մեռաւ 1940 թ. Օգոստ. 10-ին, Թաւրիզում։

Հիմնադիրներից եւ Դաշնակցութեան առաջին շրջանի փայ-

լուն ուժերից էր նաեւ Յակոբ Քոչարեանը։ Երեւանցի, ծնուած 1865-ին։ Պետական Գիմնազիայում միջնակարգ կրթութիւնը ստանալուց յետոյ, առաջնակարգ մրցանակով աւարտեց Մոսկուայի համալսարանի պատմա-լեզուաբանական բաժինը։ Համալսարանի տեսչութիւնը ուզում էր նրան պահել դպրոցում՝ պատրաստելու համար ուսուցչապետութեան, բայց երիտասարդ Քոչարեանը՝ տարուած հայրենասիրական-յեղափոխական հովերով, Զաւարեանի պէս, մերժեց առաջարկը եւ վերադարձաւ Կովկաս։ Մտերիմ յարաբերութիւնների մէջ էր Դաշնակցութեան հիմնադիրների հետ եւ ինքն էլ էր մասնակցել հիմնադրութեան աշխատանքներին։ Մի քանի տարի ուսուցչութիւն անելուց յետոյ, պաշտօն ստացաւ Ալ. Մանթաշեանի մօտ եւ ամբողջապէս նուիրուեց հասարակական գործունէութեան։



ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ

Բաղմակողմանի զարգացման տէր, հմուտ մի քանի լեզուի, մեղմ ու քաղցրաբարոյ՝ Քոչարեանը ընդունուած եւ սիրուած էր բոլոր շրջաններում։ Ամէն դուռ բաց էր նրա առջեւ։ Հասարակական քիչ կազմակերպութիւն կամ ձեռնարկ կար, որին նա մասնակից չլինէր։ Դպրոցական հոդաբարձու, անդամ Գրողների ու Թատերասէրների Միութեանց, Բարեգործական ու Հրատարակչական Ընկերութիւնների, Դաշնակցական մարմինների, մամուլի աշխատակից, Թատերախաղերի թարգմանիչ, Ազգային Բիւրոյի քարտուղար — Քոչարեանը ամէն տեղ էր եւ ամէն գործի մէջ։ Երկար տարիներ եղաւ Հայաստանի Հանրապետութեան Փարիզի պատուիրակութեան քարտուղար։ Ապա, բժ. Ս. Կամսարականի խորհրդով ու երաշխաւորութեամբ, վերադարձաւ Հայաստան, ուր մի ժամանակ պաշտօնավարեց Պետական Կարմիր Խաչի հասարութեան մէջ։ Մեռաւ Երեւանում 1933 թ. Յունիս 3-ին։

Մոսկուայի Գիւղատնտեսական Ճեմարանի ուսանող Աւետիք Սահակեանը — Հայր Աբրահամ — ստոյգ յայտնի չէ՝ մասնակցե՞լ է արդեօք հիմնադիր ժողովներին, բայց նոյնպէս Հ. Յ. Դաշնակցութեան կերտողներից էր։

Հայր Աբրահամը Զալալ Օղլիից էր՝ հայրենակից Ս. Զաւարեանի։ Ծնուել էր 1865-ին։ Միջնակարգ կրթութիւնը ստացել

էր Թիֆլիսում, ապա աւարտել Մոսկուայի Գիւղատնտեսական Ճեմարանը։ Աշակերտական տարիներից արդէն յեղափոխական խմբակների մէջ էր։ Մոսկուայում, Զաւարեանի, Ռոստոմի, Շաթիրեանի եւ միւսների հետ մասնակցում էր ուսանողական շարժումներին։

ԱՒԵՏԻՔ ՍԱՀԱԿԵԱՆ

Ճեմարանը աւարտելուց յետոյ Աւ. Սահակեանը մտաւ պետական ծառայութեան մէջ, իբրեւ գիւղատնտես, եւ հետզհետէ աչքի ընկնող դիրք գրաւեց Կովկասում։ Եղաւ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան անդամ, հիմնադիր եւ նախագահ Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան եւ «Գիւղատնտես» թեր-

թի խմբագիր։ Պետական եւ հայկական ազգային–հասարակական կազմակերպութիւնների եւ մարմինների անդամ, Էջմիածնի Ազգային Ժողովի փոխ–նախագահ, 1906–ին։ Իր մասնագիտութեան մէջ լայն հեղինակութիւն էր վայելում։ Սահակեան անունով կոչուեցաւ հացահատիկներին վնասող իր գտած մանրէն, որին հակազդող դարմանն էլ ինքը գտաւ։

Հ. Յ. Դաշնակցութեան մէջ էր առաջին իսկ օրերից՝ գործակից Քրիստափորի ու Զաւարեանի։ Մասնակցեց Հ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովին, ուր ընտրուեց Բիւրոյի անդամ։ Այնուհետեւ, մինչեւ կեանքի վերջը, մնաց Դաշնակցութեան ղեկավար դիրքերում։ Լրջախոհ, հասուն մտքի եւ հանրային խառնուածքի տէր՝ նա լայն համակրանք էր վայելում կուսակցութեան մէջ եւ դուրսը՝ հասարակական շրջաններում։

Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ցարական կառավարութեան բացած հալածանքների շրջանին ձերբակալուեց եւ մի քանի տարի պահուեց բանտում։ Դատավարութիւնից դուրս եկաւ անպարտ եւ շարունակեց գործունէութիւնը Դաշնակցութեան մէջ։ Եղաւ Ազգ. Բիւրոյի, ապա՝ Ազգ. Խորհրդի անդամ։ Անդրկովկասեան Սէյմի եւ կառավարութեան անդամ։ Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ Խորհրդի, յետոյ՝ Խորհրդարանի նախագահ։ Յայտնի է իր պատմական ճառը՝ արտասանած Խորհրդի բացման նիստում։

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Աւ. Սահակեանն էլ բանտարկուեց բոլշեւիկների կողմից եւ ազատուեց շնորհիւ Փետրուարեան ապստամբութեան։ Հայաստանի երկրորդ խորհրդայնացման առթիւ անցաւ Պարսկաստան։ Այնտեղից՝ Լիբանան, ուր եւ վախճանուեց 1933–ին՝ ճաշակելով տարագրութեան բոլոր դառնութիւնները։

Մոսկուայի խմբակից էր Լեւոն Սարգսեանը, որ 1889–ին ուղեւորութիւն կատարեց դէպի Թրքահայաստան եւ վերադառնալով՝ տպաւորութիւնները հրատարակեց առանձին գրքոյկով։ Լեւոն Սարգսեանը Գողթնեցի էր՝ Քրիստափորի ու Ռոստոմի հայրենակից։ Զարգացած եւ գործունեայ երիտասարդներից էր համարւում։ Գաղափարներով ու հակումներով աւելի մօտ էր Պետրոգրատի խմբակին։ Բնաւորութեամբ՝ ինքնահաւան ու մեծամիտ։ Հիմնադիր ժողովներում Հիւսիսային Պանդոկի թեւին էր պատկանում։ Ընտրուեց Կենտրոնական Վարչութեան անդամ, բայց առանձին գործունէութիւն չունեցաւ Դաշնակցութեան մէջ։ Հետագային հեռացաւ Դաշնակցութիւնից եւ անցաւ կոյր եւ անհաշտ հակառակորդների շարքը։

Հ. Յ. Դաշնակցութիւնը նախապատրաստողներից էր եւ

Մոսկուայի Գիւղատնտեսական Ճեմարանի ուսանող, Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ վարչապետ Յ. Քաջազնունու երէց եղբայրը՝ Վարդգէս Քաջազնունին: Մի համեստ եւ հայ ժողովրդին նուիրուած գործիչ, Հայաստանի Հանրապետութեան լաւագոյն դիւղատնտեսներից մէկը, որ թէեւ երկար չմնաց Դաշնակցութեան շարքերում, բայց մինչեւ մահ եղաւ Դաշնակցութեան հաւատարիմ՝ դաղափարակից բարեկամ եւ գործակից:

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան եւ առաջին տարիների գործունէութեան շրջանում աչքի ընկած դէմքերից էր եւ բժ. Յովհաննէս Լորիս-Մելիքեանը, որի բնակարանում տեղի ունեցաւ հիմնադիր ժողովների եւ Կեդրոնական Վարչութեան նիստերի մի մասը:

Բժ. Լորիս-Մելիքեանը, միջնակարգ կրթութիւնը ստանալով պետական Գիմնազիայում՝ 1889-ին աւարտել էր Փարիզի բժշկական վարժարանը եւ բժշկութիւն էր անում Թիֆլիսում: Թէ՛ Գիմանզիայում եղած ժամանակ եւ թէ՛ Փարիզում նա հետաքրքրւում էր հասարակական հարցերով՝ մասնակցելով արմատական-յեղափոխական խմբակների գործունէութեան: Ծանօթութիւնների լայն շրջանակ ունէր հայ, ռուս եւ ֆրանսացի ազատամիտ մտաւորականութեան մէջ: Որպէս ազգական Ալեքսանդր Երկրորդի թագաւորութեան վերջին տարիների Ռուսաստանի վարչապետ Լորիս-Մելիքովի, որ աշխատեց սահմանադրական կարգեր մտցնել Ռուսաստանում, բժ. Լորիս-Մելիքեանը խիստ նախանձախնդիր էր իր անուան եւ սպասում էր, որ բացառիկ դիրք տրուի իրեն հայ կեանքում: Հաւատում էր, որ դիւանագիտութեան միջոցով պիտի ազատուէր Հայաստանը, եւ դիւանագիտութեան մէջ առանձին դեր էր վերապահուած իրեն:

1890-ին, Լորիս-Մելիքեանը մասնակցեց Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր ժողովներին եւ ընտրուեց Կենտրոնական Վարչութեան անդամ: Մի քանի տարի յետոյ՝ նա տեղափոխուեց Փարիզ, որտեղից, Զարիֆեան անունով, գործակցում էր «Դրօշակ»ի խմբագրութեան: Ի միջի այլոց, զբաղուեց Բանկ Օթոմանի տղաների փոխադրութեան գործով: 1900-ին, Քրիստափորի հրաւէրով, մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան եւրոպական պրոպագանդի գործի մէջ, եղաւ «Փրօ Ամենիա»յի հիմնադիրներից մէկը, գործակցեց Ժորէսին, Քլէմանսոյին, Անատոլ Ֆրանսին եւ ուրիշ հայասէրներին, կազմակերպեց հայասիրական խորհրդաժողովներ ու միտինգներ Եւրոպայի զանազան կենտրոններում: 1905-6 թուականներին տարակարծութիւններ ունեցաւ գործակից ընկերների հետ եւ քաշուեց ասպարէզից դառնացած՝ հեռանալով նաեւ հայ կեանքից: 1906-8 թուականներին գործակցեց

ռուս յայտնի գիտնական եւ հանրային գործիչ Մակսիմ Կովալեւսկուն Պետերբուրգում։ 1908–ին ընդունուեց Փարիզի Պաստէորեան Կառառը, իբրեւ աշխատակից։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բժշկի պաշտօն վարեց Ֆրանսական բանակում։ 1919–ին, Քլէմանսոյի յանձնարարութեամբ, ճամբորդութիւն կատարեց Ռուսաստան եւ Կովկաս, այցելեց նաեւ Հայաստան, որից յետոյ գրեց "La Revolution Russe et les Nouvelles Republique Transcaucasienne" աշատու եւ կրքոտ գիրքը։ Մեռաւ Փարիզում, բոլորովին լքուած իր հայրենակիցներից։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻՍՍՈՒՖԵԱՆ

Հիմնադիրների շարքում պէտք է դասուի եւ Յովհաննէս Իսսուֆեանը — Մելիք, Տ. Վահանեան — թէեւ փաստ չկայ հիմ. ժողովների մասնակցելուն։ Իսսուֆեան ընտանիքը Նոր–Բայազէտցի էր, բայց Յովհաննէսը ծնուել էր Երեւանում վաթ-

սունական թուականներին։ Ճիշդ ծննդեան տարին մեզ յայտնի չէ։

Ութսունական թուականների ազգասիրական զգացումներով տոգորուած գաղափարական երիտասարդներից էր Իւսուֆեանը։ Աւարտելով Ներսիսեան դպրոցը՝ նա ստանձնեց Թելաւի երկսեռ ծխական դպրոցի աւագ ուսուցչի պաշտօնը, ապա՝ պաշտօնավարեց զանազան դպրոցներում՝ միաժամանակ գործօն աշխատանք կատարելով եւ հայրենասիրական-յեղափոխական խմբակներում։ Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ՝ Իւսուֆեանը Տրապիզոնում է Զաւարեանի եւ Արղութեանի հետ։ Զաւարեանի աքսորից յետոյ՝ դպրոցի տնօրէն եւ կուսակցական մարմնի անդամ, որոշ ժամանակ Ս. Զաւարեանի հետ։ 1892-ի վերջերը, Բիւրոյի որոշումով, անցաւ Պոլիս, իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ եւ իրական հիմնադիրը եղաւ Պոլսի Դաշնակցութեան՝ կուսակցութեան մէջ քաշելով ու պատրաստելով Ա. Վռամեանի, Բարգէն Սիւնիի, Վարդէսի պէս կարող յեղափոխական գործիչներ։

Պոլսից յետոյ, կարճ ժամանակ մնալով Ժընեւում, «Դրօշակ»ի խմբագրութեան մէջ, 1896-ին Իւսուֆեանը, Վահանեան անունով, անցաւ Ամերիկա, ուր մնաց երկու տարի եւ, կարելի է ասել, ստեղծողը եղաւ Ամերիկայի Դաշնակցութեան։ 1898-ին մասնակցեց Հ. Յ. Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովին, Թիֆլիսում, եւ 1905 թ. յեղափոխութիւնից յետոյ ընտրուեց Նոր Բայազէտի քաղաքագլուխ։ Դաշնակցութեան դէմ ծայր տուած հալածանքների հետեւանքով անցաւ Զուիցերիա եւ երկարատեւ հիւանդութիւնից յետոյ, Ֆեռաւ Լոզանում։ Մասնաւորապէս, առաջին տասնամեակում շատ մեծ եղաւ Յ. Իւսուֆեանի դերը Հ. Յ. Դաշնակցութեան կեանքում։

Յայտնի է, որ հիմնադիր ժողովներին չի մասնակցել, բայց Հ. Յ. Դաշնակցութեան նախապատրաստութեան եւ հետագայ գործունէութեան մէջ աչքառու դեր է կատարել եւ Մարտիրոս Մարգարեանը — Կարմրաքշիկ, Սափօ։ 1885-ին, իբրեւ Ս. Կարապետի ուխտաւոր, նա Տարօն է անցնում Մկ. Ղազարեանի եւ Ա. Բարխուտարեանի հետ, ծանօթանում է Աբարոյի, Ղարախանեան վարդապետի հետ եւ Երկրի վիճակի մասին տեղեկութիւններ է բերում Թիֆլիս։ Նոյն նպատակով, 1889-ին, Յովս. Արղութեանի հետ, «Երիտասարդ Հայաստան»ի կողմից, մեկնեց Թրքահայաստան եւ վերադառնալով՝ աչքի ընկնող տեղ ունեցաւ Դաշնակցութեան շարքերում, ի վերջոյ, 1905-ին, փոխարինելով Քրիստափորին, Սուլթանի մահափորձի կազմակերպութեան մէջ։ Զեռնարկի անյաջողութիւնը վերագրուեց նրա

գործած սխալների, որի համար դատուելով Ընդհ. Ժողովի կողմից՝ հեռացուեց կուսակցութիւնից։ Դառնացած իր դէմ արձակուած վճռից՝ նա քաշուեց հասարակական գործունէութեան ասպարէզից, երկար տարիներ մնաց կուսակցութիւնից դուրս, թէեւ դժգոհ ու քննադատող, բայց, սրտի խորքում, համակիր Դաշնակցութեան։ Մեռաւ տարագրութեան մէջ, Ռումանիայում։

Ամենայն իրաւամբ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների շարքում պէտք է դասուի եւ Ղազախեցի բանուոր Մեխակը, Ռոստոմի աջ բազուկը յեղափոխական գաղտնի խմբակների գործունէութեան մէջ։ Նա էր, որ 1885–ին, դպրոցների փակման առթիւ Քրիստափորի գրած բողոքի թռուցիկը գիշերով փակցրեց Թիֆլիսի տների պատերին եւ ցրեց ժողովրդի մէջ։ Պէտք էր տեսնել Ռոստոմի հրճուանքը, երբ 1917–ին, ցարական դահի խորտակումից յետոյ, Հ. Յ. Դաշնակցութեան ազատ Ռայոնական ժողովում, ողջագուրուեց տարիների բեռը ուսերին, բայց դեռ աշխոյժը պահած իր վաղեմի յեղափոխական ընկերոջ հետ։ Մեխակը Դաշնակցութեան նուիրուած այն խոնարհ դէմքերից էր, որոնց համար կուսակցութիւնը ամէն ինչ էր։ Ափսո՜ս որ նրանց կեանքն ու գործունէութիւնը, մեծ մասամբ, մնում են անյայտութեան մէջ, այլապէս՝ ի՜նչ դաստիարակիչ օրինակ նոր սերունդների համար։

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների անուանացանկում կարեւոր տեղ է գրաւում Յովսէփ Արղութեանը — Երուանդ, Տաշօ, Իշխան։ Ճիշդ է, հիմնադիր ժողովներին նա էլ չի մասնակցել — Երկիր էր ուղարկուած «Երիտասարդ Հայաստան»ի կողմից, բայց թէ՛ նախապատրաստական շրջանում եւ թէ՛ հիմնադրութիւնից անմիջապէս վերջը ու այնուհետեւ, Դաշնակցութեան բովանդակ կեանքում, նա միշտ գտնուել է առաջաւոր դիրքերում։

Արղութեանը Ս. Զաւարեանի հայրենակից էր։ Ծնուել էր 1863–ին, Լոռիի Սանահին գիւղում։ Նախնական կրթութիւնը ծննդավայրում ստանալուց յետոյ, 1878–ին մտել էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը եւ աւարտել 1884–ին։ Այնուհետեւ հինգ տարի, ուսուցչութիւն էր արել Զալալ Օղլիի, Սուրամի եւ Թիֆլիսի Մէյդանի Սուրբ Գէորգ եկեղեցու ծխական դպրոցներում։ Միեւնոյն ժամանակ յեղափոխական շրջանակների մէջ էր, մասնակցում էր Թրքահայկական հարցով զբաղուող խմբերի աշխատանքներին եւ հիմնադիր անդամ էր «Երիտասարդ Հայաստան»ի կազմակերպութեան, որի կողմից 1889–ին, Սուրբ Կարապետի ուխտաւորի դիմակի տակ, անցաւ Բարձր Հայք, Տարօն եւ այլուր՝

ԻՇԽԱՆ ՑՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ

Երկրի պայմանները եւ յեղափոխական գործունէութեան հնարաւորութիւնները ուսումնասիրելու նպատակով։

Հ. Ց. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, Արղութեանը վերադարձաւ Երկրից, երբ Դաշնակցութիւնը արդէն կազմուած եւ գործի էր անցած։ Կենտրոնական Վարչութեան յանձնարարութեամբ նա մի պահ զբաղուեց Կուկունեանի խմբի մէջ ծագած թիւրիմացութիւնները հարթելով, ապա Զաւարեանի հետ անցաւ Տրապիզոն ուսուցչական պաշտօնով եւ որպէս Տրապիզոնի կոմիտէի անդամ, ուր, սակայն, երկար չկարողացաւ մնալ. թուրք կառավարութիւնը նրան էլ Զաւարեանի հետ բանտարկեց եւ յանձնեց ռուս հիւպատոսին։ Զաւարեանը բանտարկուած, իսկ Արղութեանը ազատ, ոստիկանական հսկողութեան տակ, փոխադրուեցին Թիֆլիս, որտեղից աքսորուեցին Բեսարաբիայի Քիշինեւ քաղաքը՝ Զաւարեանը մէկ տարով, իսկ Արղութեանը՝ 6 ամսով։ Քիշինեւ աքսորուած էր եւ Քրիստափորը։ Այստեղ Քրիստափորը, Զաւարեանը եւ Արղութեանը շարունակեցին զբաղուել Դաշնակցութեան գործով եւ, ի միջի այլոց, պատրաստեցին կուսակցութեան ծրագրի նախագիծը։

Մասնակցելով Առաջին Ընդհ. Ժողովին, 1892-ին, Ժողովից յետոյ, Արղութեանը, մի խումբ Դաշնակցական գործիչների հետ — Ցոնան Դաւթեան, Նիկոլ-Դուման, Օր. Սաթենիկ Մատինեան (Ծաղիկ) եւ ուրիշներ — մեկնեց Թաւրիզ ուսուցչական պաշտօնով, բայց առաւելապէս զբաղւում էր յեղափոխական գործունէութեամբ։ Երկու տարի ուսուցչութիւն անելուց յետոյ, 1894-ին, անցաւ Վասպուրական, Պետոյի մօտ, ուր անցկացրեց ձմեռը։ 1895-ի գարնան վերադարձաւ Ատրպատական եւ ամբողջովին նուիրուեց Դաշնակցութեան գործին։ 1897-ին, եղաւ Խանասորի արշաւանքի հրամանատարի օգնական։ Արշաւանքից յետոյ, Թրքական հիւպատոսի պահանջով, ձերբակալուեց Սալմաստում եւ երկու ամսից աւելի խիստ բանտարկութեան ենթարկուելով, իբրեւ ռուսահպատակ, յանձնուեց ռուս հիւպատոսին։ Փոխադրուելով Թիֆլիս՝ մօտ մէկ ու կէս տարի բանտարկուած մնաց Մետեխի բանտում, որից յետոյ, 1898 թ. Օգոստոսին, վարչական կարգով աքսորուեց Հաշտարխան, առանց Կովկաս վերադառնալու իրաւունքի։

Հաշտարխանում էլ Արղութեանին հանգիստ չթողին։ Կովկասի կառավարչապետը յատուկ գիմում արաւ ներքին գործոց նախարարին՝ յայտնելով, թէ «Իշխան Արղութեան-Երկայնաբազուկի գործունէութիւնը առանձնապէս վնասակար է հայ ազգաբնակութեան մէջ», հետեւաբար ցանկալի է, որ նրան «բնակութեան վայր յատկացուի Կովկասից հեռու գտնուող նահանգներից

մէկը, ուր չկայ հայ բնակչութիւն»։ Ներքին գործոց նախարարութեան խորհուրդը քննելով այդ դիմումը՝ որոշեց Արղութեանին Հաշտարխանից աքսորել Վոլոգդայի նահանգը, ոստիկանութեան անմիջական հսկողութեան տակ, երեք տարի ժամանակով՝ հաշուելով 1898 թ. Նոյեմբեր 27-ից։

1899-ին, Վոլոգդայից Արղութեանը դաղտնի կերպով անցաւ Մոսկուա, ուր ամուսնացաւ Օր. Սաթենիկ Մատինեանի հետ ու միասին վերադարձան աքսորավայր։ 1902-ին, աքսորի ժամանակը լրացնելով՝ տեղափոխուեց Թիֆլիս եւ պաշտօնի մտաւ քաղաքային վարչութեան մէջ, ապա փոխադրուեց պաշտօնով «Նադեժդա» ընկերութեան մէջ։ Կովկասի կառավարչապետ Գոլիցինի մահափորձի առթիւ նորից բանտարկուեց վեց ամսով եւ բանտից ազատուելուց յետոյ մասնակցեց եկեղեցական կալուածների պաշտպանութեան գործին։ Հայ-թաթարական կռիւների ժամանակ եղաւ հաշտարար յանձնախմբի անդամ։

1905-ի վերջերը Արղութեանը տեղափոխուեց Երեւան «Նադեժդա» ընկերութեան ներկայացուցչի պաշտօնով եւ այնտեղ էլ եռանդով շարունակեց հասարակական-կուսակցական գործունէութիւնը։ Նշանակուեց հայ-թաթարական հաշտարար յանձնախմբի անդամ։ Եղաւ Երեւանի Թեմական Դպրոցի հոգաբարձու, կուսակցական վարիչ մարմինների անդամ եւայլն։

1908-ին, Կովկասում եւ ամբողջ Ռուսաստանում սկսուեցին խիստ հալածանքներ Դաշնակցութեան դէմ։ 1909-ի սկիզբը, շատերի հետ, ձերբակալուեց եւ Արղութեանը ու փոխադրուեց Թիֆլիսի բանտը։ Այնտեղից՝ Ռոստովի, ապա՝ Նովոչերկասկի բանտը։ Մի տարի յետոյ, ազատ արձակուեց դրամական երաշխաւորութեամբ, բայց նոյնպէս դրամական երաշխաւորութեամբ ազատուած Ա. Ահարոնեանի, Գ. Խաժակի եւ Աւ. Իսահակեանի արտասահման անցնելուց յետոյ, նորից բանտարկուեց եւ բանտում պահուեց մինչեւ Հ. Յ. Դաշնակցութեան մեծ դատաւարութիւնը, 1912-ին, որից յետոյ անպարտ արձակուեց։

Բանտից ազատուելով՝ Արղութեանը պաշտօն ստացաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ եւ անայլայլ շարունակեց հանրային-կուսակցական աշխատանքը։ 1914-15-ին նա Ազգային Բիւրոյի եւ Հայ Կամաւորական Գնդերի Կարգադրիչ Մարմնի անդամ էր։ 1915-ին՝ 7-րդ Կամաւորական գնդի հրամանատար։ Կամաւորական գնդերի լուծումից յետոյ՝ շարունակեց գործել Թիֆլիսի ազգային ու Դաշնակցական մարմինների մէջ։ Ռուսական յեղափոխութիւնից յետոյ եղաւ Ռուսահայ Ազգային Համագումարի, ապա՝ Վրահայոց Խորհրդի անդամ։ 1918-ին, Ազգային Խորհրդի կողմից ուղարկուեց Ղարաբաղ՝ Ղարաբաղի գործերով։

1919–ին ընտրուեց Հայաստանի Խորհրդարանի անդամ եւ, կարճ ժամանակով՝ Խորհրդարանի փոխ–նախագահ։ Նոյն թուականին նշանակուեց Հայաստանի դեսպան Թեհրան եւ այդ պաշտօնի վրայ մնաց մինչեւ 1922 թ.։ Մեռաւ տարագրութեան մէջ, Փարիզում, 1925 թ.։

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների համաստեղութեան



ՄԷՋԵՐԸ ԸՆԴԱՅՈՒՄ, ՕՐ. ՍԱԹԵՆԻԿ ՄԱՏԻՆԵԱՆ ԸՆԿ. ԹԱՀԻՐՅԱՆ ՀԱՅՈՒՆԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

մէջ իր տեղը ունի եւ Օր. Սաթենիկ Մատինեանը — Ծաղիկ՝ Յովսէփ Արղութեանի ապագայ կինը։ Առհասարակ, ամբողջ Մա–

տինեան ընտանիքը, կարելի է ասել, այս կամ այն ձեւով, մասնակից էր Դաշնակցութեան հիմնադրութեան:

Զարմանալի եւ իր ժամանակի համար բացառիկ երեւոյթ էր Մատինեան ընտանիքը: Սաթենիկի հայրը եօթանասնական թուականներին պետական պաշտօնեայ էր Ղարաբաղում, ապա ծառայում էր Թիֆլիսի Առեւտրական Դրամատան մէջ՝ լուսամիտ եւ ազգասիրական դաղափարներով տոգորուած մի մարդ: Մայրը տիպար հայ կին էր՝ նուիրուած ընտանիքին եւ զաւակներին: Սաթենիկի եղբայրը, Նիկոլը եւրոպական կրթութիւն ստացած մի երիտասարդ, Թիֆլիսի Ֆրանսական հիւպատոսարանի թարգմանի պաշտօն էր կատարում: Զորս քոյրերը՝ Նատալիա, Սաթենիկ, Լուսիկ եւ Սիրանոյշ բարձր կրթութիւն ստացած աղջիկներ էին: Եւ ամենքը գտնուում էին ժամանակի հայրենասիրական խմբակների մէջ: Մատինեանների տունը հաւաքավայր էր երիտասարդութեան համար: Քոյրերը անդամակցում էին երիտասարդական «Դրօշակ» խմբին: Նիկոլը «Երիտասարդ Հայաստան»ի կազմակերպողներից էր, մտերիմ յարաբերութեան մէջ Քրիստափորի, Զաւարեանի, Ռոստոմի եւ Դաշնակցութեան միւս հիմնադիրներից շատերի հետ:

Սաթենիկը ծնուած էր Ղարաբաղում, 1874 թ., Սեպտ. 25-ին: 9 տարեկան հասակին մտել էր Թիֆլիսի առաջին իգական Գիմնազիոնը, բայց հիւանդութեան պատճառով, առանց աւարտելու, դուրս էր եկել 6-րդ դասարանից: Ցետոյ ձեռք էր բերել ժողովրդական դպրոցների վարժուհու վկայական: Իր ժամանակը եւ եռանդը, սակայն, նա նուիրել էր յեղափոխական գործին՝ հայրենասիրական խմբակների մէջ: 1892-ին Արղութեանի, Ցանան Դաւթեանի, Դումանի եւ միւս ընկերների հետ անցաւ Թաւրիզ, ուսուցչութեան պաշտօնով. միաժամանակ կանանց խմբերի կազմակերպիչ էր եւ Դաշնակցական կոմիտէի անդամ: Մինչեւ 1897 թ. մնաց Ատրպատականում եւ եռանդուն գործունէութիւն ունեցաւ Թաւրիզի եւ Սալմաստի Դաշնակցութեան կազմակերպութեան մէջ: Խանասորի արշաւանքից յետոյ վերադարձաւ Թիֆլիս, ուր շարունակեց աշխատել Դաշնակցութեան մէջ: 1899-ին, Մոսկուայում, ամուսնացաւ Յովսէփ Արղութեանի հետ, եւ այնուհետեւ, մինչեւ մահ, բաժանեց ամուսնու կեանքն ու գործը: Մեռաւ Փարիզում, 1930 թ. Դեկտ. 12-ին:

Սաթենիկի հետ պէտք է յիշել եւ նրա քրոջ՝ Նատալիա Մատինեանի անունը, որ նոյնպէս հիմնադիրների շրջանակում էր: Մասնագիտութեամբ մանկաբարձուհի՝ կամքի տէր եւ եռանդուն

ՆԱՏԱԼԻԱ ՄԱՏԻՆԵԱՆ

աղջիկ էր։ Թէ՛ հիմնադրութեան օրերին եւ թէ՛ նրանից յետոյ Նատալիան նուիրումով գործակցեց Դաշնակցութեան ղեկավարներին եւ կատարեց պատասխանատու յանձնարարութիւններ։ Իր կեանքի վերջին շրջանի մասին տեղեկութիւն չունինք, դժբախտաբար։

Սաթենիկի եւ Նատալիայի եղբայրը՝ Նիկոլ Մատինեանը՝ կուսակցական անունով Վահան, ինչպէս յիշել ենք արդէն, «Երիտասարդ Հայաստան»ի կազմակերպիչներից էր, եռանդուն անդամ ժամանակի յեղափոխական խմբակների եւ գործօն դերակատար Դաշնակցութեան հիմնադրութեան մէջ։ Դժբախտաբար, Ն. Մատինեանի կեանքի եւ գործունէութեան մասին էլ քիչ տեղեկութիւն է մնացել։ Ցուցամոլութիւնից խորշող, լռիկ-մնջիկ գործող եւ իր անունը սուսերի մէջ պահող մարդ էր։ Զէր սիրում իր անձի մասին խօսեցնել։ Ծայր աստիճանի գաղտնապահ էր ու համեստ։ Այդ պատճառով իր մասին քիչ նիւթ է մնացել։

ՆԻԿ. ՄԱՏԻՆԵԱՆ

Յայտնի է միայն, որ նա մտերիմ յարաբերութիւնների մէջ էր Քրիստափորի, Զաւարեանի եւ Ռոստոմի հետ։ Դաշնակցութեան առաջին տարիներին, Կեդրոնական Վարչութեան, ապա Բիւրոյի մօտիկ գործակիցներից էր։ Իրրեւ ֆրանսական հիւպատոսարանի թարգման՝ Թիֆլիսի օտար շրջանների հետ լայն շփում եւ դրա շնորհիւ գործունէութեան ընդարձակ ասպարէզ ունէր։

Ն. Մատինեանի գործունէութեան շրջանը միայն Թիֆլիսով

չէր սահմանափակուած։ Բիւրոյի յանձնարարութեամբ նա գաւառներն էր շրջում՝ կազմակերպական գործերով՝ Ալեքսանդրապոլ, Բաթում եւ այլուր։ Ենթարկուեց ոստիկանական հետապնդման ու բանտարկութեան։ Իր բնակարանը մի քանի անգամ մանրակրկիտ կերպով խուզարկուեց։ Ի վերջոյ՝ ստիպուած եղաւ անցնել արտասահման, ուր մասնակցեց պատասխանատու ընկերների խորհրդաժողովին Վառնայում, 1897-ին, որից յետոյ, իբրեւ գործիչ, մտաւ Զմիւռնիա, բայց երկար չկարողացաւ մնալ ոստիկանական հետապնդումների հետեւանքով։ Շարունակեց կուսակցական աշխատանքը զանազան վայրերում եւ Երրորդ Ընդհ. Ժողովից յետոյ՝ վերադարձաւ Կովկաս։ Այստեղ եւս գործօն մասնակցութիւն ունեցաւ կուսակցական եւ հասարակական կեանքում։ Ռուսաստանի առաջին յեղափոխութիւնից յետոյ, գրախանութ հիմնեց Թիֆլիսում, որ ծառայում էր Դաշնակցական հրատարակութիւնների տարածման։ Կամաւորական եւ յաջորդող դէպքերի ժամանակ Թիֆլիսի կազմակերպութեան եւ ազգային մարմինների մէջ եռանդուն աշխատանք էր կատարում։ Խորհրդայնացումից յետոյ էլ մնաց նոյն անյողդողդ հաւատաւոր Դաշնակցականը։ Ի՞նչ եղաւ իր ճակատագիրը, հալածուե՞ց իր գաղափարների համար, ո՞ղջ է դեռ — ոչինչ յայտնի չէ մեզ։

«Երիտասարդ Հայաստան»ի անդամներից էր, հիմնադիրների եւ ապա Կենտրոնի ու Բիւրոների սերտ գործակից՝ անտառագէտ Արշակ Թադէոսեանը, ինչպէս եւ իր կինը՝ Վարդան Գոլոշեանի քոյրը, Դարիան, որոնք նոյնպէս բաժին ունեն Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան գործում։ Արշակ Թադէոսեանը, Լակլակ ծածկանունով, աջակցում էր Քրիստափորին եւ Զաւարեանին բիւրոյական գործերի եւ թղթակցութիւնների մէջ։ Այնուհետեւ էլ, միշտ մնաց գործօն դերում իբրեւ Դաշնակցութեան ղեկավար մարմինների անդամ կամ ներկայացուցիչ ազգային մարմինների մէջ։ Հայաստանի Հանրապետութեան օրով վարեց Գիւղատնտեսութեան նախարարութեան անտառային բաժնի վարիչի պաշտօնը։ Յայտնի չէ, թէ ի՞նչ եղաւ խորհրդայնացումից յետոյ։

Թէեւ հիմնադիր ժողովներին չի մասնակցել, բայց Դաշնակցութեան նախապատրաստութեան մէջ կարեւոր դեր է կատարել եւ Բագրատ վարդ. Թաւաքալեանը՝ Զաքֆի՝ մի ինքնատիպ եւ խորհրդաւոր դէմք հայ յեղափոխական շարժման մէջ։

Բուն անունը Ալեքսանդր Թաւաքալեան էր, Դերբենտի շրջանային կառավարչի որդի։ Ծնուած էր 1850-ին։ Ուսած Թիֆլիսի եւ Բաղուի դպրոցներում։ Ապա՝ Պետերբուրգի զինուորական դպրոցի ուսանող։ Բարձրահասակ, թիկնեղ, խոշոր ու թափանցիկ, խոհուն աչքերով, համակրելի դէմքով երիտասարդ էր։

Քաղցրաբարոյ, հաճոյակատար, զոհաբերող, բնաւորութեամբ խիզախ՝ օժտուած էր ամէն տուեալներով փայլուն աշխարհիկ կեանք ունենալու համար: Եւ, սակայն, նրան էլ հմայում է հայրենիքի սէրը:

Ազդուած Բաֆֆիի վէպերից եւ ժամանակի տրամադրութիւններից՝ Թաւաքալեանը 1879-ին թողնում է դպրոցը եւ 1880-ին, Զաքրի ծածկանունով, անցնում է Թրքահայաստան՝ Վան, ուր երկու տարի ուսուցչութիւն է անում Վանի Խարակոնիս գիւղում: Ապա ճամբորդում է Տարօն՝ Ս. Կարապետ եւ ուրիշ վայրեր: Ի վերջոյ, հաստատւում է Ալաշկերտի Ուշքիլիսայի Ս. Յովհաննու վանքում: Այստեղ զբաղում է կրթական գործով, գիւղացիներին սովորեցնում է երկրագործութեան նոր ձեւերը, ծառեր է տնկում վանքի շրջապատում եւ կասկածուելով թուրք իշխանութիւններից՝ հեռանում է Կովկաս, երեք տարի ուսուցչութիւն է անում Իգդիրում: 1889-ին նորից վերադառնում է Ուշքիլիսայի վանքը: Ձեռնադրւում է վարդապետ՝ այն յոյսով, որ հոգեւորականի սքեմի տակ աղատ կը լինի թուրք կառավարութեան հալածանքներից, բայց նորից կասկածի է ենթարկւում եւ վերջնականապէս հեռանում է Ալաշկերտից:

Կովկասում մտնում է Դաշնակցութեան շարքերը եւ Առաջին Ընդհ. ժողովից յետոյ, 1892-ին, Իշխանի, Յ. Դաւթեանի, Նիկոլ Դումանի հետ մեկնում է Պարսկաստան, իբրեւ Դերիկի վանքի վանահայր եւ Հ. Յ. Դ. Ատրպատականի Կենտր. Կոմիտէի անդամ: 1894-ին, Խրիմեան Հայրիկը կանչում է նրան Էջմիածին եւ իրաւունք չի տալիս վերադառնալու նախկին տեղը, որ մեծ վիշտ ու դառնութիւն է պատճառում նրան: Նա այլեւս զրկւում է սիրած գործով զբաղուելու հնարաւորութիւնից: Յաջորդաբար, վարչական պաշտօններ է վարում Կարսում, Ալեքսանդրապոլում, Գանձակում եւ Էջմիածնում: Մեռաւ Բագուում 1902-ին:

ՏԻԳ. ՕՔՈՆԵԱՆ

Այլապէս խորհրդաւոր դէմք էր Տիգրան Օքոնեանը — Շամիլ: Փառտ չունինք պնդելու, թէ նա մասնակցել է հիմնադիր ժողովներում, բայց այդ օրերին նա Թիֆլիսում էր դտնւում: Յայտնի է, որ Դաշնակցութեան կազմութիւնից անմիջապէս յետոյ, նա արդէն Կարինում էր, իբրեւ Դաշնակցական գործիչ եւ կոմիտէի անդամ Արամեանի եւ Յարէթ Նշկեանի հետ:

Տիգրան Օքոնեանը ծնուած էր 1868 թ. Ախալցխայում: Իր ման

կութեան եւ պատանեկութեան մասին տեղեկութիւններ չունինք։ 1886–87 թուականներին նա հաշուապահի պաշտօն էր վարում Կարսում, մի վաճառականի մօտ։ Աշխոյժ եւ կենսուրախ երիտասարդ էր։ Աչքի էր զարնում ջերմ ընկերական բնաւորութեամբ եւ բուռն հետաքրքրութեամբ դէպի ազգային–հասարակական խնդիրները։ Ցափշտակուած էր Բաֆֆիի հերոսներով եւ Երկրից հասնող «աւազակ–հայդուկների» խիզախ գործերի լուրերով։ 1888–89–ին նա Թիֆլիսում է, նոյնպէս հաշուապահի պաշտօնով վաճառականի մօտ։ Այստեղ նա մտնում է յեղափոխական խմբակների մէջ, հաւաքում է իր շուրջ10–15 յանդուգն երիտասարդ եւ նրանց գլուխն անցած՝ «աւազակութիւն» է անում Օլթիի թրքական շրջանում։ Նրա խմբումն էին՝ ախալցխացի Վարդանը, որ հետագային դարձաւ Արաբոյի խմբի քաջերից մէկը, Օլթեցի Մեխանը՝ յայտնի «Հայ» անունով եւ ուրիշներ։ Օքոնեանը խմբի պետն է՝ հռչակաւոր աւազակապետ Շամիլը, որ երկաթէ բազուկով վարում է խմբի անհանդարտ անդամներին։ Շամիլի խումբը սարսափ է ազդում բռնաւորների եւ կեղեքիչների վրայ եւ իր խնամքի ու պաշտպանութեան տակ է առնում ճնշուած հայ գիւղացիներին։ Վաշխառուներից եւ հարուստներից խլած թալանը բաժանում է չքաւորներին, ամէն կերպ օգնում է նրանց։ Շամիլի հռչակը տարածւում է ամէն կողմ։ Նա առաջինը եղաւ, որ իր խմբով Կովկասից անցաւ սահմանը եւ իր «աւազակային» գործունէութիւնը տարածեց Թուրքիայի սահմանամերձ շրջանների վրայ։

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, նա որոշ ժամանակ գործեց Կարինում, իբրեւ Հ. Յ. Դ. կոմիտէի անդամ Արամ Արամեանի հետ։ Երկուսն էլ միեւնոյն խմորից էին՝ խիզախ, յանդուգն, նուիրուած ու մոլեռանդ յեղափոխականներ եւ հմուտ կազմակերպիչներ։ Նրանց ջանքերով կազմակերպուեց Կարինի երիտասարդութիւնը Դաշնակցութեան դրօշի տակ։ «Համարձակներ» անունն էին կրում Արամեանի եւ Օքոնեանի երիտասարդ ընկերները։

Արամեանի եւ Օքոնեանի գործունէութեան դէմ դուրս եկաւ «Պաշտպան Հայրենեաց»ի նախկին անդամներից Յաչ. Կերէկեանը, որ սուր խօսքերով, հրապարակով քննադատում եւ վարկաբեկում էր նրանց։ Հետեւանքը լինում Կերէկեանի ահաբեկումը Արամեանի ձեռքով, Կարինի կոմիտէի որոշումով։ Հ.Յ.Դ. կենտրոնը մի թռուցիկով դատապարտեց այդ գործը։ Իբրեւ փոխվրէժ, Կերէկեանի եղբայրը սպանեց Օքոնեանին Թիֆլիսում։ Այս տաղանդաւոր կազմակերպիչի եւ անձնազոհ յեղափոխականի մահը մեծ կորուստ էր Դաշնակցութեան համար։ Երկրորդ Ընդհ. Ժո-

ղովը, յատուկ որոշումով, յեռս կոչեց Կենտրոնի վճիռը՝ վերականգնելով Օքոնեանի վարկը ընկերների եւ հասարակութեան աչքին։



ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆ

Փառտ չկայ հաստատող, որ Արամ Արամեանն էլ — Աշոտ, Թաթուլ — մասնակցել է հիմնադիր ժողովներին, բայց, լայն առումով, նրան էլ պէտք է դնել Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների շարքում։ Նա այդ օրերին գտնւում էր Թիֆլիսում՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը կերտողների շրջանակում եւ առաջին Դաշնակցականներից մէկը եղաւ։

Արամ Արամեանը կարնեցի էր, ծնուած 1870-ին։ Աւարտել էր Սանասարեան վարժարանը եւ առաջնորդարանում քարտուղարի պաշտօն էր վարում։ Վառվռուն, անվախ եւ անձնազոհ երիտասարդ էր՝ դպրոցական հասակից խանդավառուած Բաֆֆիի հերոսներով ու հայրենասիրական գաղափարներով։ Կարինի երիտա-

սարդութեան մէջ նա մեծ հմայք էր վայելում։ Որոշ յարաբերութիւններ ունէր եւ կովկասահայ մտաւորականութեան եւ ըմբոստ տարրերի հետ։ 1890–ի ամառը գտնւում էր Թիֆլիսում, եւ Հ. Յ. Դաշնակցութեան կազմութիւնից անմիջապէս յետոյ, նրան տեսնում ենք Կարինում, իբրեւ Դաշնակցութեան կոմիտէի անդամ։ 1891 թ. Օգոստոսին, կոմիտէի որոշումով, Արամեանի ձեռքով ահաբեկւում է Յաչ. Կերէկեանը։ Դաշնակցութեան Կենտրոնը առանձին թռուցիկով դատապարտեց Կերէկեանի սպանութիւնը։ Այդ պատճառով Արամեանը հեռացաւ Կարինից եւ մի տարի աստանդական կեանք վարելուց յետոյ, 1892։ին, մասնակցեց Առաջին Ընդհ. Ժողովին, ուր բուռն կերպով պաշտպանեց անհատական ահաբեկումների սկզբունքը՝ պայմանով, որ ահաբեկիչը, գործը կատարելուց յետոյ չփախչի, այլ մնայ եւ յայտարարէ, թէ ինքն է սպանողը, որպէսզի ժողովուրդը ղերծ մնայ պատասխանատուութիւնից։ Այս առաջարկը, սակայն, մերժուեց Ժողովից, եւ Արամեանը մինչեւ 1894 թ. հեռու մնաց կուսակցական գործերից։

1894–ին, Հ. Յ. Դ. Բիւրոյի որոշումով եւ Ալեքսանդրապոլի ու Կարսի կոմիտէների աջակցութեամբ, Արամ Արամեանը եւ Հրայր — Դժոխքը, հայդուկային խմբի հետ, մտան Երկիր՝ Բասենի շրջանը՝ նպատակ ունենալով կազմակերպել ու գինել ժողովուրդը ինքնապաշտպանութեան եւ յեղափոխական ձեռնարկների համար։ 1896 թ. Յուլիս 2–ին, Արամեանն ու Հրայրը ձերբակալուեցին Քէոփրի–Քէոյ գիւղում եւ տեղափոխուեցին Կարինի բանտը, որտեղից Հրայրը ազատուեց, իսկ Արամեանը, մատնութեան վրայ, խոստովանուեց, թէ ինքն է եղել Կերէկեանին սպանողը։ Բանտում անհնարին չարչարանքների ենթարկուեց, բայց առանց ընկճուելու, աներկիւղ պահեց յեղափոխական կորովը եւ համարձակ կեցուածքը թուրք իշխանութեանց հանդէպ։ Դատարանը նրան կախաղանի վճիռ տուեց, որից յետոյ Երեք տարի մնաց բանտում, որտեղից գրած է յեղափոխական շունչով խանդավառ նամակներ դրսի ընկերներին։ Կախաղան հանուեց 1899 թ. Օգոստ. 9–ին, Կարինի Գէոլ–Բաշի հրապարակում։ Նրա վերջին խօսքն էր կախաղանից՝ «Կեցցէ՛ յեղափոխութիւնը»։

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան կամ դէթ նրա առաջին օրերի գործունէութեան հետ որոշ կապ է ունեցել եւ Աստուածատուր Վաչեանցը։ Ծնուած 1863 թ. Սեպտ. 25–ին, Մեղրիում, Վաչեանցը իր կրթութիւնը ստացել էր Շուշիի քաղաքային եւ Բաղուի ռէալական դպրոցներում։ 1889–ին աւարտել էր Պետերբուրգի Լեռնային ճեմարանը եւ կարճ ժամանակ հայրենի

գիւղում ուսուցչութիւն անելուց յետոյ, հաստատուել էր Բագուում:

1890 թ. ամառը Բագու է գալիս Կոստ. Խատիսեանը յեղափոխական գործի համար դրամ եւ գործիչներ գտնելու նպատակով: Նա յաջողում է մի խումբ երիտասարդների, որոնց թւում եւ Աստ. Վաչեանցին, համոզել, որ անցնին Թիֆլիս նուիրուելու յեղափոխութեան: Նշանաւոր նաւթարդիւնաբեր Առաքել ապէր Մատուրեանն էլ Խատիսեանին այդ նպատակի համար խոստանում է 10,000 ռուբլի՝ անմիջապէս վճարելով 2000 ռուբլի: Այդ դրամով Խատիսեանը Թիֆլիս է տանում իր հետ Աստ. Վաչեանցին, Եր. Թաղիանոսեանին, գինեգործ Խարազեանին, ինժ. Ալ. Նազարեանին եւ ուրիշներին: Վաչեանցը, Թաղիանոսեանը եւ Նազարեանը յարում են Հարաւային Պանկոդի խմբակին, միւսները՝ Հիւսիսային Պանդոկին. ըստ երեւոյթին՝ մասնակից են լինում հիմնադիր ժողովներին:

Դաշնակցութեան կազմութիւնից յետոյ՝ ամբողջ ձմեռ, Բագուից եկածները մնում են Թիֆլիսում: 1891-ի սկիզբները Կ. Խատիսեանը Վաչեանցին եւ Նազարեանին ուղարկում է Բագու, որպէսզի Մատուրեանից ստանան մնացած 8,000 ռուբլին: Վերջինս, սակայն, մերժում է վճարել՝ առարկելով, թէ ինքը նման խոստում չի տուել: Վաչեանցը այլեւս չի վերադառնում Թիֆլիս եւ հաստատուում է Բագուում: Իր ընկերակիցներն էլ հետզհետէ հեռանում են յեղափոխական գործից, ինչպէս եւ ինքը Խատիսեանը: Վաչեանցը հետագային Բագուի հայկական կեանքում աչքի զարնող դեր կատարեց եւ ընդհանուրի յարգանքն էր վայելում: Մասնաւորապէս արժանի է գնահատութեան նրա մատուցած ծառայութիւնը հայ ժողովրդի կրթական գործին: Նրա ջանքերով եւ նիւթական զոհողութեամբ հիմնուեցին ժողովրդական դպրոցներ դաւառում: Նրա յատկացրած թոշակով բարձրագոյն կրթութիւն ստացան բազմաթիւ հայ մտաւորականներ, ինչպէս Աւ. Ահարոնեանը, Ստ. Շահումեանը, Արամ Զաբրդը եւ ուրիշներ: Վաչեանցը միշտ բարեկամ մնաց Դաշնակցութեան եւ այսօր էլ մնում է, Փարիզում, տարագրութեան մէջ՝ վայելելով ամենքի սէրն ու յարգանքը:

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների շարքերում էր եւ Յովհաննէս Սաղաթէլեանը՝ ազգայնական հակումներով եւ չափաւոր գաղափարներով մի մտաւորական: Արարատցի էր: Մասնագիտութեամբ՝ իրաւաբան: Մասնակցեց հիմնադիր ժողովներին: Դաշնակցութեան մէջ գործօն յեղափոխական դեր չկատարեց. աւելի խաղաղ մշակութային հակումների տէր անձ էր: Մի ժամանակ վարեց Էջմիածնի Գէորգեան ճեմարանի տեսչի պաշտօ-

նը։ Զբաղուեց փաստաբանութեամբ։ Քաջ ծանօթ էր կովկասեան եւ հայկական իրականութեան։ 1905 թ. յեղափոխութիւնից յետոյ ընտրուեց Պետական Դումայի անդամ։ Հայաստանի Հանրապետութեան կողմից դեսպան եղաւ Կամաւորական Բանակի մօտ։ Դաշնակցութեան կազմի մէջ չէր թէեւ, բայց համոզումներով եւ գործունէութեան շրջանակով Դաշնակցական էր։

Իբրեւ Գր. Արծրունիի ներկայացուցիչ, Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպութեան սկզբնական շրջանին, կարճ ժամանակով, ժողովներին ներկայ եղաւ եւ խաչատուր Մալումեանը — Է.



Է. ԱԿՆՈՒՆԻ

Ակնունի։ Մալումեանը գտնուում էր Արծրունիի աղդեցութեան տակ, իսկ Արծրունին համամիտ չէր նոր կուսակցութեան կազմութեան։

Խաչատուր Մալումեանը ծնուել էր Մեղրի գիւղում 1863 թ., Սեպտ. 7-ին։ Իր նախնական կրթութիւնը ստացել էր ծննդավայրում։ Ապա, 1878-ին մտել էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը եւ 1883 թ. Յունիսին աւարտել «գերազանց վարուք», ինչպէս ասուած է նրա աւարտական վկայականում։ Առանձնապէս ընդունակ էր լեզուների, մատեմատիկական գիտութիւնների եւ պատմական ու գրական առարկաների մէջ։

Միջնակարգ կրթութիւնը լրացնելուց յետոյ, նիւթական պատճառներով անկարող բարձրագոյն ուսման հետեւելու, Մալումեանը աշխատանք է ստանում «Մշակ»ի խմբագրութեան մէջ, ուր յայտնաբերում է հրապարակագրի շնորհք ու խմբագրական-վարչական կարողութիւն եւ շուտով դառնում է խմբագրութեան քարտուղար, Գր. Արծրունիի դաղափարների ջերմ պաշտպան եւ նրա աջ բազուկը։ Որպէս Արծրունիի «աչք եւ ականջ», նա որոշ դեր խաղաց նախնական բանակցութիւնների ընթացքին Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան առթիւ։

Մինչեւ Գր. Արծրունու մահը՝ Մալումեանը մտերիմ կապերով կապուած էր «Մշակ»ի եւ նրա խմբագրի հետ։ Արծրունիի մահից յետոյ նրա բնական յաջորդը «Մշակ»ում պէտք է լինէր Մալումեանը, բայց կառավարութիւնը մերժեց ճանաչել նրա իրաւունքը, եւ «Մշակ»ը անցաւ անտաղանդ մարդկանց ձեռքը։ Մալումեանը մեկնեց Ժընեւ իր ուսումը կատարելագործելու նպատակով։ 1898-ի վերջերը «Դրօշակ»ի խմբագրութեան գլուխն անցնելով՝ Քրիստափորը ապահովեց նրա աշխատակցութիւնն եւս, եւ Մալումեանը սկսեց գրել «Կովկասեան Խարրիկներ» նշանաւոր յօդուածաշարքը՝ Է. Ակնունի ստորագրութեամբ։ Այնուհետեւ Խ. Մալումեանը մտաւ Դաշնակցութեան մէջ եւ փայլուն տեղ գրաւեց Դաշնակցական հրապարակագիրների, քարոզիչների եւ հանրային-քաղաքական գործիչների շարքում։ Շուտով դարձաւ Քրիստափորի գլխաւոր աջակիցներից մէկը «Դրօշակ»ի խմբագրութեան մէջ եւ հայկական պրոպագանդի ասպարէզում։ Եռանդուն մասնակցութիւն ունեցաւ Հ. Յ. Դ. Զորբորդ Ընդհ. Ժողովին, Վիէննայում, որից յետոյ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ և մեծ չափով Ակնունիի թափած ջանքերի շնորհիւ ու նրա մասնակցութեամբ գումարուեց Օսմանեան յեղափոխական եւ ընդդիմադիր կազմակերպութիւնների խորհրդաժողովը Փարիզում, որ նախապատրաստեց Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը։ Սահմանադրութիւնից յետոյ, Ակնունին դարձաւ

ամենէն ժողովրդական գործիչներից մէկը Պոլսում, իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ, պերճախօս հռետոր, սուր հրապարակագիր ու վարպետ քաղաքագէտ արտաքին յարաբերութիւնների մէջ։ 1910–11–ին քարոզչական ուղեւորութիւն ունեցաւ դէպի Ամերիկա, ապա՝ Եգիպտոս, Լիբանան, Զմիւռնիա, ուր ամէն տեղ անօրինակ խանդավառութիւն առաջ բերեց։ Մասնակցեց Սահմանադրութիւնից յետոյ գումարուած բոլոր Ընդհ. ժողովներին, եւ Կարնոյ 8–րդ Ընդհ. ժողովից յետոյ, 1914–ին, ոստիկանական հսկողութեան տակ հեռացուեց Պոլիս, ուր եւ զոհ գնաց ապրիլեան Մեծ Եղեռնին։

Այսքանով, ի հարկէ, չի սպառւում Հ. Յ. Դաշնակցութիւնը յղացողների ու կերտողների, նրա հիմնադիրների ցանկը։ Անշուշտ, եղել են եւ ուրիշ անհատներ, որոնք այս կամ այն ձեւով բաժին են ունեցել Հայկական Մեծ Կազմակերպութեան յղացման եւ կառուցման գործում։ Տարբեր ընկերային խաւերից ելած, մտաւոր տարբեր զարգացման տէր, շատերը բարձրագոյն կրթաբաններում ուսած, ոմանք ուսուցիչ, գործակատար, արհեստաւոր ու բանուոր՝ նրանք բոլորը տոգորուած էին միեւնոյն գաղափարով, ձգտում էին միեւնոյն նպատակի, ներշնչուած էին միեւնոյն ոգով — «Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն»։ Եւ այդ ոգով ու նպատակով անսասան հիմքերի վրայ հաստատեցին Հ. Յ. Դաշնակցութեան հոյակապ շէնքը։

Եթէ Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձաւ հայոց ամենամեծ եւ հզօրագոյն կուսակցութիւնը, ամենէն ժողովրդականը, որ խորունկ արմատներ ձգեց հայկական զանգուածների մէջ, եղաւ միսը մսից եւ արիւնը արիւնից հայ ժողովրդի եւ իր հերոսներով ու մեծագործութիւններով զարդարեց հայոց պատմութեան էջերը, եթէ այնքա՜ն ահաւոր փոթորիկներից յետոյ՝ Դաշնակցութիւնը մնաց անսասան, հաստատմատ կաղնիի պէս կանգուն եւ կէս դարից աւելի անխախտ պահեց իր ղեկավար դիրքը հայութեան կեանքում, գաղտնիքը նրա հիմնադիրների եւ ղեկավարների գաղափարական ոյժի եւ անձնուիրութեան մէջ պէտք է փնտռել։

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մեծ մասը, կարծես նախախնամութեան սահմանումով, պատմական առաքելութեան համար ստեղծուած անհատներ էին։ Բազմակողմանի զարգացած, լուսամիտ, բարձր նկարագրի ու բարոյականութեան տէր, խորապէս ուսումնասիրած հայութեան, ինչպէս նաեւ համամարդկային կեանքի անցեալ ու ժամանակակից պայմանները, անանձնական սիրով նուիրուած հայ ժողովրդին, պատրաստ զոհուելու ազգային ազատութեան սեղանի վրայ, իրատես ու գործնական՝

նրանք չհրապուրուեցան վերացական կամ հայկական միջավայրին անհարազատ գաղափարներով, որքան եւ յափշտակիչ եւ իրենց սրտին մօտ լինէին նրանք, այլ զուտ հայկական պայմանների վրայ հիմնեցին նորակերտ կուսակցութեան շէնքը, հայ իրականութիւնից առին այդ շէնքի ատաղձը եւ իրենք եղան նրա որմնադիրներն ու կառուցանողները: Իր առաւելութիւններով ու պակասութիւններով Հ. Յ. Դաշնակցութիւնը հայկական միջավայրի ու հայկական պայմանների ծնունդ էր: Այդ եղաւ պատճառը, որ հայ ժողովրդի զգայուն ու գաղափարական լայն խաւերը այնպէս սիրով ու նուիրումով փարեցին նրան:

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրները, մեծ մասով, նաեւ իրենց կեանքով ու գործով օրինակ ծառայեցին ժողովրդին: Նրանք թիկունքում չմնացին հանգստաւէտ դիրքերի վրայ, այլ անձնազոհութեամբ նետուեցին արկածալից ու վտանգաւոր կեանքի ասպարէզ, յեղափոխական փոթորիկների մէջ, յաճախ, կուրծք տալով անխուսափելի մահուան, եւ ժողովուրդը հետեւեց նրանց հաւատով ու վստահութեամբ՝ արտադրելով իր ծոցից անհաշիւ հերոսներ ու հերոսական գործեր:

Հ. Յ. Դաշնակցութեան ոյժն ու մեծութիւնը, անսահման ժողովրդականութիւնն ու համայքը հաստատուած են նրա գաղափարապաշտ եւ անձնուէր հիմնադիրների ոյժի եւ մեծութեան վրայ: Եւ քանի այդ ոգին կենդանի է, կենդանի կը մնայ եւ Դաշնակցութիւնը:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՁԵՒԻ ՀԻՄՆԱՒՈՐՈՒՄԸ

Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական պաշտօնաթերթ «Դրօշակ»ի առաջին եւ երկրորդ համարները լոյս տեսան Թիֆլիսում, 1891 թ.: Առաջինը Մայիս ամսին, երկրորդը՝ Սեպտեմբերին: Երրորդ թիւը լոյս տեսաւ Ռումանիայում, 1892 թ.: Չորրորդ թիւը լոյս տեսաւ Ժընեւում, 1893 թ. Մարտին: Այնուհետեւ, մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի տարիները, «Դրօշակ»-ը հրատարակուեց Ժընեւում:

«Դրօշակ»ը, առաջին իսկ համարից սկսած՝ նուիրում է մի շարք խմբագրականներ եւ յօդուածներ պարզելու համար Հ. Յ. Դաշնակցութեան հիմնական սկզբունքները՝ նպատակը, կազմակերպական ձեւն ու գործելակերպը: Այդ գրուածքների հեղինակներն են Քրիստափորը, Զաւարեանը եւ Ռոստոմը, բացի առաջին խմբագրականից:

Կէս դարից աւելի է անցել այդ օրից, բայց Դաշնակցութեան հիմնադիրների յայտնած մտքերից ու պարզած տեսութիւններից շատերը թարմ ու կենսունակ են այսօր եւս: Նրանք վկայում են, թէ մտաւոր ինչ լուրջ պատրաստութիւն եւ որքան խոր ծանօթութիւն ունէին նրանք ժամանակակից հայ իրականութեան մասին:

Այսօր, երբ մեր կուսակցութիւնը, վաթսուն տարիների ճանապարհ է կտրել, ամփոփումի եւ ինքնաքննահատման այս օրերում, արժէ, յետադարձ մի հայեացքով, իրենց իսկ խօսքով, ներկայացնել այն գաղափարներն ու յեղափոխական գործի տեսութիւնները, որոնց վրայ մեր մեծ երրորդութիւնը հիմնեց Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Ո՞վ է հեղինակը «Դրօշակ»-ի առաջին համարի առաջնորդող

յոդուածի։ Ըստ Շիրվանզադէի, որ իր յուշերում ասում է, թէ, Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, մօտ մի տարի, ինքը եղել է Դաշնակցական եւ «Դրօշակ»-ի խմբագրական յանձնախմբի անդամ, «Դրօշակ»-ի առաջին համարի խմբագրականը գրել է Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Աղ. Մելիք-Ալլահվերդեանը։ Բժ. Ց. Լորիս-Մելիքեանը, որ Դաշնակցութեան հիմնադիրներից էր, իրեն է վերագրում այդ պատիւը։ Մ. Վարանդեանը, իր «Պատմութիւն Հ. Ց. Դաշնակցութեան» մէջ, պնդում է, թէ Քրիստափորն է հեղինակը այդ խմբագրականի։ Սակայն, ով էլ եղած լինի հեղինակը, անկարելի է, որ տպագրութեան յանձնուելուց առաջ Քրիստափորի եւ Զաւարեանի քննութիւնից անցած չլինի։ Թերեւս՝ եւ ամբողջ Կենտրոնի։

«Դրօշակ»-ի անդրանիկ խմբագրականը նախ քննադատութեան է ենթարկում Դաշնակցութիւնից առաջ ծնունդ առած հայ քաղաքական կազմակերպութիւնները՝ Արմենականութիւնն եւ Հնչակեանութիւնը եւ միաժամանակ պարզում ու պաշտպանում է իր առաջադրած սկզբունքներն ու քաղաքական ձգտումները։

«Ներկայումս գոյութիւն ունեցող օրգանները, գրում է «Դրօշակ»-ը, որոնք նոյնպէս նուիրուած են հայկական խնդրի լուծման, մեր կարծիքով ամբողջապէս չեն իրականացնում այն պայմանները, որ ապահովացնում են կանոնաւոր կռիւը։ «Դրօշակ»-ը հանդէս է գալիս իբրեւ մի կազմակերպութիւն, որ ունի որոշ միջոցներ իր նպատակին հասնելու համար։

«Դրօշակ»-ը մի կողմից չի կարող բոլորովին համերաշխ լինել նրանց հետ, որոնք ուզում են միայն քաղաքագիտութեան (դիպլոմատիայի) միջոցով հասնել իրանց նպատակին, որովհետեւ բացառապէս դիպլոմատիան ոչինչ չի անիլ զրկուած մարդասիրութիւնից։ Մեր նիւթապաշտ դարում դիպլոմատները ղեկավարում են սեփական շահերով եւ աւելի ուժեղի իրաւունքներով։ «Եւրոպան չկայ, ասաց Նորերումս Կալնոկին, եւ մինչեւ հայկական հոգը չշաղախուի արիւնով, թո՛ղ գիտնան հայերը, որ ոչինչ չեն ստանայ»։

«Միւս կողմից «Դրօշակ»-ը չի կարող համերաշխ լինել նրանց հետ, որոնք նպատակ են դնում իրականացնել այն հասարակական կազմակերպութիւնը, որի համար այժմ կարելի է մաքառել միայն Արեւմտեան Եւրոպայում, որովհետեւ քանի որ Տաճկաստանը չունի բոլորովին դործարանական արդիւնաբերութիւն եւ խոշոր ինդուստրիայի զարդացում, անբնական է այդ տեսակ խնդիրներ յարուցանելը։ Այն երկրում, ուր դերակշռում է երկրա-

գործութիւնը եւ նահապետական կուլտուրան, խօսք չի կարող լինել Արեւմտեան Եւրոպայի սոցիալիզմի մասին, ուր կուլտուրան անհամեմատ աւելի բարձր է եւ տիրապետում են որոշ սոցիալական պայմաններ։ Տնտեսական խնդիրներ չօշափելիս պէտք է ղեկավարուել երկրի կուլտուրայով եւ նրա ազգային, պատմական առանձնայատկութիւններով. նամանաւանդ որ մեր ազգի գիտակցութեան մէջ պահպանուել են այնպիսի հողատիրական ձեւեր, որ ուրիշ նպաստաւոր պայմաններում կը լինէին նրա բարօրութեան գլխաւոր գրաւականը, այն է՝ հողը պատկանում է մշակողին։ Իսկ հողային հարցը մեր ամենագլխաւոր հարցն է։

«Դրօշակ»-ը պէտք է պաշտպանէ առհասարակ այն բոլոր պայմանները, որոնք նպաստում են ժողովրդի ընդհանուր բարօրութեան, քաղաքական եւ տնտեսական կողմից։ Հեռացնելով այն պայմանները, որ խեղդում են հայ ազգը, մենք ուզում ենք տալ նրան միջոց վերածնուելու եւ ընդունելու քաղաքակրթութիւնը եւ մինչեւ անգամ տարածել իր շուրջը։ Ղեկավարուելով այս բարձր բարոյական սկզբունքներով, որ Եւրոպայի առաջնակարգ գործիչների իդէալն է կազմում, մենք պէտք է միշտ պաշտպան հանդիսանանք դարերով ճնշուած ժողովրդին. իւրաքանչիւր հարց վճռելիս պէտք է ուշադրութեան առնենք լրջութեամբ բոլոր հանգամանքների զուգադրութիւնը (կոմբինացիան) եւ թշնամու դէմ կռուելիս պէտք է լինենք անխնայ, ինչպէս որ նա մեզ չի խնայում։ Մենք խորհուրդ ենք տալու գործադրել բոլոր միջոցները, որ վերջնականապէս քայքայենք Թուրքիայի անբարոյականացած պետական կազմակերպութիւնը (օրգանիզմը)։ Բացի դրանից՝ «Դրօշակ»-ը, իբրեւ «Հ. Յ. Դաշնակցութեան» օրգան, պէտք է պատասխանի այն բոլոր հարցերին, որ կը ծագեն այդ կազմակերպութեան գործիչների մէջ թէ կռուի րոպէում եւ թէ գործունէութեան հետագայ ընթացքներում (մոմենտ)։

«Եղած տարբերութիւնները, սակայն, արգելք չեն, որ «Դրօշակ»-ը համերաշխօրէն գործի միւս հոսանքների հետ. «Որչափ եւ զանազանուենք ուղղութեամբ նրանցից, այնուամենայնիւ մենք ուզում ենք նրանց հետ ընկերական յարաբերութեան մէջ լինել, որովհետեւ բոլորս էլ կռւում ենք մի ընդհանուր թշնամու դէմ»։

Ապա «Դրօշակ»-ը անցնում է «հայկական խնդրի լուծման այն ճանապարհին, որ մենք ենք ընդունում»։

Մանրամասն պատկերացնում է Թուրքիայի վիճակը, նրա յաբաճուն անկումը, տնտեսական անանկութիւնը. տաճկահայերի «միանգամայն անտանելի վիճակը» — «կատարեալ անապահովութիւն կեանքի եւ գործի, անվերջանալի աւարառութիւններ քիւրտ եւ չէրքէզ հրոսակների, աւազակային անխղճութեան հասցրած

հարստահարութիւն պաշտօնեաների կողմից, սկսած վալիից մինչեւ վերջին միւդիրը, նրանց անընդունակութիւնը, դժգոհութիւնը եւ կաշառակերութիւնը, անարդարութիւն դատարանում, անասելի հարկեր եւ զեղծումներ հարկահաւաքների եւ վաշխառուների, զեղծումներ բարձրագոյն իշխանութեան կողմից, հալածանք կրօնի, ազգութեան, վերջապէս սանձարձակ բռնութիւն դպրոցների, եկեղեցիների, խօսելու, գրելու դէմ, մի բռնութիւն, որը հազարաւոր անմեղներ փթեցնում է բանտերում, տանջում Արաբիայի եւ Աֆրիկայի խորքերում, զցում պանդխտութեան գիրկը, տանում դէպի կրօնափոխութիւն. ահա այն դժոխքը, որ կոչւում է Թուրքա-Հայաստան, ահա այն դժոխքը, որի բոլոր սարսափանքները յայտնի են ամբողջ ազգին, ամբողջ աշխարհին ...»

«Դրօշակ»ը ապա անցնում է հայկական պահանջներին:

Այդ պահանջները ներկայացուած են այն տեղեկագրի մէջ, որ «անմոռանալի եւ մեծ հայրենասէր պատրիարք Ներսէսը» յատուկ պատուիրակութեան միջոցով ներկայացրեց Բերլինի վեհաժողովին: «Դրօշակ»-ը հենց նոյն համարում մէջ է բերում մանրամասնօրէն այդ տեղեկագիրը. «որովհետեւ մեր այժմեան պահանջների գլխաւոր կէտերը մնում են մօտաւորապէս միեւնոյնը»:

Վերյիշենք այստեղ Ներսէս պատր. Վարժապետեանի ծրագրի հիմնական կէտերը.

Ըստ այդ ծրագրի, Տաճկա-Հայաստանը պիտի կազմէր մի ամբողջութիւն, որի մէջ մտնելու էին հետեւեալ հողամասերը. Կարինի եւ Վանի վիլայէթները (մէջը հաշուելով եւ Բաղէշի ու Մուշի սանջակները), Տիգրանակերտի վիլայէթի հիւսիսային մասը, այսինքն՝ Խարբերդի սանջակի արեւելեան մասը, Արդահա սանջակը եւ Սղերտի սանջակի հիւսիսային մասը, ինչպէս նաեւ առեւտրական յարաբերութիւնները թեթեւացնելու համար՝ Բիզէ նաւահանգիստը Բաթումի եւ Տրապիզոնի միջեւ:

Այս երկրամասը կառավարուելու էր մեծ պետութիւնների համաձայնութեամբ Բ. Դրան կողմից նշանակուած հայ ընդհանուր-նահանգապետով, որ նստելու էր Կարինում: Ընդհանուր-նահանգապետը ունենալու էր գործադիր իշխանութեան բոլոր իրաւունքները, հսկելու էր երկրի կարգի եւ հանրային ապահովութեան վրայ, հաւաքելու էր հարկերը եւ նշանակելու էր պաշտօնեաներ ու դատաւորներ: Իր պաշտօնը լինելու էր հինգ տարով. Բ. Դուռը կարող էր նրան պաշտօնանկ անել միայն պետութիւնների համաձայնութեամբ:

Ընդհանուր- նահանգապետի նախագահութեան տակ գործելու էր կեդրոնական Վարչութեան Խորհուրդը հետեւեալ

անդամներից. 1. Ելեմտական վարիչ, 2. Հանրային շինութիւնների վարիչ, 3. Իրաւագէտ խորհրդական, 4. Հանրային զօրքի հրամանատար 5. Հայոց դպրոցների տեսուչ 6. Մահմեական դպրոցների տեսուչ։

Երկրի ընդհանուր հարկերի 20%-ը յանձնուելու էր կենտրոնական կառավարութեան, իսկ 80%-ը ծախսուելու էր տեղական պէտքերի վրայ։

Սովորական դատարաններից զատ գոյութիւն պիտի ունենային մահմետական դատարաններ Շէրիի օրէնքով։ Այս դատարանների գլխաւոր պետը պիտի նշանակուէր Սուլթանից։ Մահմետականի եւ քրիստոնեայի միջեւ ծագելիք գործերը պիտի քննուէին սովորական դատարաններում։ Պէտք է մշակուէին քաղաքական եւ քրէական օրէնքներ՝ համաձայն Եւրոպական օրէնսդրութեան սկզբունքների։

Կրօնի եւ խղճի կատարեալ ազատութիւն։ Կրօնական հիմնարկութիւնները եւ հոգեւորականութեան պահելը պիտի կազմէր ամէն մի համայնքի պարտականութիւն։

Երկրի ապահովութիւնը պահպանուելու էր ժանդարմներով եւ տեղական միլիցիայով։ Ժանդարմերիան ենթարկուելու էր ընդհանուր-նահանգապետին։ Միլիցիան գտնուելու էր զօրքի ընդհանուր հրամանատարի իշխանութեան տակ։

Երկաստիճան ընտրական ձեւով ամբողջ երկրի համար ընտրուելու էր Ընդհանուր Խորհուրդ, որ տարեկան մէկ անդամ ընդհ.-նահանգապետի կողմից նիստի պիտի հրաւիրուէր եւ ընդհ.-նահանգապետի նախագահութեան տակ պիտի քննէր ու հակակշռէր երկրի ելեմուտքը եւ հարկերի բաժանումը։ Ընդհանուր-նահանգապետը պարտաւոր պիտի լինէր խորհուրդին ներկայացնել տարեկան ելեմուտքի հաշիւը։ Ընդհ.-նահանգապետը եւ ընդհանուր խորհուրդը փոխադարձ համաձայնութեամբ 5 տարին մի անգամ պիտի որոշէին Բ. Դրան հասանելիք գումարը։

Մեծ պետութիւնները մէկ տարով պիտի նշանակէին միջազգային մի մասնաժողով այս ծրագրի իրագործման վրայ հսկելու համար։ Ծրագիրը գործադրութեան պիտի դրուէր ստորագրուելուց յետոյ երեք ամսուայ ընթացքում։

Բայց այս համեստ պահանջներն էլ չընդունուեցին։ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածն էլ մնաց մեռած տառ։

«Անցան տարիներ, զանազան մասնաժողովներ եւ խոստումներ արաւ Սուլթանը, որոնց նպատակն էր քնեցնել խնդիրը եւ մոռացութեան տալ 61-րդ յօդուածը։ Երբ անողոք մահը խլեց աղէից հայրենասէր պատրիարքին, աւելի եւս դժուարացաւ հայոց

հարցի լուծումը, մանաւանդ որ նրա մահից յետոյ Պոլսի պատրիարքներից եւ ոչ մէկը չկարողացաւ շարունակել իրանց արժանաւոր նախորդի սկսածը: Քանիցս անգամ Անգլիան եւ Եւրոպական ուրիշ պետութիւնները յիշեցրել են Բ. Դրան նրա պարտաւորութիւնները Եւրոպայի առաջ 61-րդ յօդուածի վերաբերմամբ. քանիցս անգամ Պոլսի հայոց պատրիարքները դիմել են Սուլթանին խնդրելով նրա ամենաողորմած ուշադրութիւնը իր հաւատարիմ ու աշխատասէր հպատակ ժողովրդի վրայ, բայց Բ. Դրան պատասխանը միշտ եղել է, թէ հայերը գոհ են իրենց վիճակից, թէ նրանք փառաբանում են Աստծուն, որ շնորհել է իրանց թիւրք կառավարութեան նման մի «ողորմած» կառավարութիւն եւ այդ՝ այն ժամանակ, երբ հայերի գանգատների աղաղակը երկինք էր հասնում, երբ Մուսա-Բէյի չարագործութիւնները ամբողջ լուսաւոր աշխարհին էին ապշեցնում, երբ Հայաստանի բոլոր կողմերում ամենաքստմնելի բարբարոսութիւններ եւ ոճրագործութիւններ էին կատարւում տասնիններորդ դարու քաղաքակիրթ Եւրոպայի աչքի առաջ»:

Սուլթանը մի կողմից խոստումներ է տալիս եւ քնացնում Եւրոպայի ուշադրութիւնը, իսկ միւս կողմից «զինաւորուած խմբեր է կազմում քիւրտ ու չէրքէզ վայրի եւ աւազակաբարոյ տեղերից», «նորանոր ծանր հարկեր է դնում. նա մինչեւ անգամ աշխատում է սահմանափակել հայերին հող դնելու իրաւունքը այն նահանգներում, որոնք դարերից ի վեր կազմել են նրանց հայրենիքը: Ամենայն օր նոր հալածանքներ, խուզարկութիւններ, բանտարկութիւններ ու աքսորներ: Ամէն յոյս կտրած ժողովուրդն աղքատութեան ու բռնութեան երեսից դունդադունդ թողնում է իր դժբախտ հայրենիքը եւ դիմում պանդխտութեան եւ գաղթականութեան ու այսպիսով ամայանում է Հայաստանը, մեր նախնեաց արիւնով շաղաղուած հայրենիքը»:

Ո՞րն է ելքը այս դրութիւնից, ի՞նչպէս իրականութիւն դարձնել Վարժապետեանի ծրագիրը:

«Այսպէս է եղել հայերի դրութիւնը Տաճկա-Հայաստանում ամբողջ դարերի ընթացքում եւ այսպէս էլ կը մնայ, եթէ մենք մեր յոյսը դնենք տաճկաց կառավարութեան սեփական բարեհաճութեան կամ եւրոպական դիպլոմատիայի վրայ: Լինեն պատճառները պետական, ցեղական թէ կրօնական՝ այդ միեւնոյնն է. փաստը նրանումն է, որ Տաճկաստանը անընդունակ է ինքը որեւէ վերանորոգում մտցնելու եւ, ինչպէս մեզ ուսուցանում է ուրիշ փոքր ազգերի պատմական փորձը, միայն զէնքով կարելի է ստիպել նրան իրագործել մեր արդար պահանջները: Հայերը ուզում

են ազատուել մի քայքայուող տէրութիւնից, որ տարածում է իր շուրջը մահ եւ ապականութիւն: Ազատութիւն ձեռք բերելով՝ հայ ազգն ուզում է քաղաքակիրթ կեանք եւ իր բազմակողմանի ընդունակութիւնների զարգացում: Հայերը ոգեւորուելով մարդասիրութեամբ, եղբայրութեամբ ու կրօնի անխտրութեամբ՝ կը ստեղծեն մարդկային զարգացման այնպիսի պայմաններ, որոնց մէջ կարող են զարգանալ թէ մահմեդական եւ թէ քրիստոնեայ ժողովուրդները:

«Մեր կռիւը տաճկաց կառավարութեան դէմ ոչ միայն ազգային կռիւ է, այլ եւ եւրոպական քաղաքակրթութեան եւ մարդկային իրաւունքների կռիւ՝ յօգուտ ամբողջ մարդկութեան եւ կուլտուրայի»:

«Ուրեմն, տաճկահայերի կողմից միանգամայն անօգուտ եւ մինչեւ անգամ վտանգաւոր է յոյս դնել օտարի վրայ եւ սպասել, թէ թիւրքաց կառավարութիւնը ինքը իր կամքով բարենորոգումներ կը շնորհի հայերին: Ցանկացած վիճակը ձեռք բերելու համար մեզ մնում է միայն դիմել այն միջոցին, որին դիմել են մեզանից առաջ միեւնոյն հանգամանքների մէջ գտնուող ուրիշ մեզ նման քրիստոնեայ ազգերը: Այդ միջոցը ժողովրդական ապստամբութիւնն է: Ուրիշ ելք չկայ:

«Ահա այսպիսի հանգամանքների արդասիք էր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը». նրա գոյութիւնը հիմնուած է տաճկահայերի այն դիտակցութեան վրայ, որ այլեւս անկարելի է տանել այդպիսի ամօթալի վիճակ եւ սարսափելի դրութիւն:

«Դաշնակցութիւնը մի քանի անձանց հայրենասիրական ձգտումների արհեստական պտուղը չէ, այլ ամբողջ ազգի հասունացած ինքնաճանաչութեան, կամքի ու վճռի արտայայտութիւն:

«Նա՝ Հայ ազգի բողոքի եւ վրէժխնդրութեան ոգին է: Ա՛յս է նրա սկզբունքն ու նպատակը»:

Այստեղ, կարելի է ասել, թէեւ սաղմնային ձեւով, արտայայտուած է Հ. Յ. Դաշնակցութեան բովանդակ էութիւնը, բացի մէկ կէտից, որ շատ շուտով սրբագրուեց. Վարժապետեանի ծրագիրը չէր կարող գոհացնել Դաշնակցականներին: Դաշնակցութեան պահանջները թէ ծաւալով եւ թէ ոգիով, հիմնովին տարբերուում էին Վարժապետեանի բարենորոգումների ծրագրից:

Եւ «Դրօշակ»-ը հենց յաջորդ՝ երկրորդ համարում շտապում է ուղղել այս վրիպակը. «խմբագրութեան կողմից» մի ազդով նա յայտարարում է.

«Դրօշակ»-ի անցեալ համարում մենք գրել էինք, որ մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյնն են, ինչ որ յայտնուած են Ներսէս պատրիարքի ծրագրում:

«Որովհետեւ այդ բառերը տեղիք են տուել թիւրիմացութեան, մենք կարեւոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, եթէ Սուլթանը իր բարի կամքով մտցնի Տաճկական-Հայաստանում Ներսէս Պատրիարքի ծրագրում պահանջուած բարենորոգութիւնները, որ շատ անհաւանական է: Սուլթանը իւր վարմունքով օրէցօր աւելի է համոզում ամենքին, որ Տաճկական Հայաստանի համար ապստամբութիւնից դուրս փրկութիւն չկայ»:

Այս բացատրութիւնը գոհացուցիչ չէր, ի հարկէ: Անգամ եթէ Սուլթանը «իր բարի կամքով» էլ բարենորոգումներ մտցնէր, Դաշնակցութիւնը չէր բաւականանալու Ներսէս Պատրիարքի ծրագրով, որը շատ հեռու էր ժողովրդապետական սկզբունքներից, էլ չենք խօսում ընկերային ու տնտեսական հարցերի մասին, որոնք բացակայում էին ծրագրում:

Առհասարակ, պէտք է ասել, որ «Դրօշակ»-ի առաջին համարը յաջող կազմուած չէր եւ խոցելի կողմեր ունէր: Ուստի եւ զարմանալի չէ, որ Հնչակեանները օգտուելով՝ անողոք քննադատութեան ենթարկեցին նրան: Նա չէր բաւարարում եւ Դաշնակցական պատասխանատու գործիչներից շատերին:

Երկրորդ համարն էլ, որ լոյս տեսաւ 1891 թ. Սեպտեմբերին, զերծ չէր թերութիւններից: Մի խմբագրական, մի «ներքին տեսութիւն», մի «նամակ Պարսկաստանից» եւ մի արտաքին տեսութիւն» — ահա նրա ամբողջ բովանդակութիւնը:

Խմբագրականը խօսում է յեղափոխութեան պայմանների մասին: Յաջողութեան համար անհրաժեշտ է երկու պայման. նախ՝ որ ժողովուրդը հասկանայ յեղափոխութեան արժէքը եւ մասնակցի մղուող կռուին. երկրորդ՝ որ ընտրուած միջոցները համապատասխանեն «ներկայ իրականութեան եւ պատմական բոպէի պահանջած պայմաններին»:

«Առաջին պայմանը, բարեբախտաբար, մեզնում կայ. հայ ժողովուրդը արդէն ապացուցեց, որ հասկանում է տաճկական անարդ լծից ազատուելու անհրաժեշտութիւնը, եթէ դրա համար պէտք լինի զոհել նոյն իսկ իւր ստացուածքն ու կեանքը: Հայ ժողովուրդն այդ ապացուցեց մասային ցոյցերով Կարինում ու Պոլսում եւ մի շարք անհատական ու խմբովին յեղափոխական ձեռնարկութիւններով»:

Նոյնը չի կարելի ասել մտաւորականութեան մասին. նա գիտակցութեամբ ու զոհաբերութեան ոգիով ժողովրդից յետ է եւ «միայն արձագանգ տուեց ժողովրդի պատերազմական կոչին, որ

լսուեց անակնկալ կերպով»։ Նա նախաձեռնող չեղաւ, այլ հետեւող, բայց «Դրօշակ»-ը դրանից էլ գոհ է.

«Ի՞նչ պէտք է անէր այն ինտելիգենցիան, որ ճանաչում է իւր պատմական կոչումը՝ — ծառայել ժողովրդի — աշխատաւոր մասսայի շահերին։ Նա պէտք է շտապէր ժողովրդի կոչին, նա պէտք է դնար իւր գիտութեան պաշարով աջակցելու ժողովրդին այդ դժուար բռնէում եւ կազմակերպելու ա՛յն կռիւը, որ սկսում էր ժողովուրդը դարաւոր ճնշման ու անարդարութեան դէմ։ Եւ ինտելիգենցիան յետ չմնաց ժողովրդից, հետեւեց նրան»։

Ճիշդ է, «բաղումք են կոչեցեալք, բայց սակաւք ընտրեալք», եւ, ի հարկէ, «բոլոր ինտելիգենտ գործիչները մինչեւ վերջը չեն հասցնի գործը, շատերը գուցէ կանգ առնեն կէս ճանապարհին, կամ հենց ճանապարհի սկզբին, — բայց այդ ոչինչ. այն ժողովուրդը, որ հասել է կռուի անհրաժեշտութեան գիտակցութեանը եւ կարողացել է իւր վրայ առնել այդ կռուի որքան ծանր եւ նոյնքան փայլուն նախաձեռնութիւնը, կը կարողանայ իւր միջից դուրս բերել իրար յետեւից նորանոր ինտելիգենտ ուժեր, որոնք ընդունակ կը լինեն վճռել յեղափոխական շրջանի (էպոխա) խնդիրները»։

Երկրորդ պայմանին անցնելով «ամենից առաջ պէտք է ի նկատի ունենալ, որ մեր կռիւը ժողովրդի կռիւ է նրա դարաւոր բռնակալների դէմ։ Իբրեւ ժողովրդական կռիւ, նա չի կարող կանոնաւոր զօրքերի վարած պատերազմի ձեւ ունենալ. ի հարկէ, եթէ մի արտակարգ դէպք չպատահի։ Մտախաբութիւն է երեւակայել, թէ Տաճկական-Հայաստանում կամ սահմաններում կարելի է պատրաստել ու կազմակերպել մարտնչող գնդեր, նոյն իսկ ամբողջ զօրք, որ մի օր յառաջ կը խաղայ՝ վճռական ճակատամարտ տալու եւ այդպիսով կը սկսի եւ կը վերջացնի հայրենիքի ազատութեան գործը։

«Ո՛չ, հայ ժողովրդի կռիւը պէտք է պարտիզանական կռիւ լինի. մենք մեր այժմեան դրութեան մէջ ուրիշ կերպ կռուել չենք կարող. կանոնաւոր պատերազմ, իսկական ճակատամարտներ անհնար են մեզ համար։ Ա՛յդ է թելադրում մեզ առողջ դատողութիւնը եւ այդ է սովորեցնում մեզ նոյն իսկ ուրիշ ազգերի — բուլղարների, իտալացիների, յոյների պատմական օրինակը։ Այդպէս պէտք է կռուենք եւ մենք, գոնէ մինչեւ այն ժամանակ, երբ պարտիզանական կռուի ջոկ-ջոկ ալիքներ միախառնուելով՝ կը կազմեն ժողովրդական ապստամբութեան յորդահոս հեղեղ, որ կը սրբի կը տանի իւր հետ Հայաստանի երեսից ստրկութեան, աղքատութեան, անարդարութեան դարաւոր կնիքը ...

«Այդ պարտիզանական պատերազմի նախաձեռնողները կը լի-

նեն ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ, որոնք միայն ձեւ են փնտրում արտայայտելու իրանց հրաշալի զգացմունքները, ուժերն ու ընդունակութիւնները։

«Այդ ձեւը — հրոսակային (հայդուկային, աւազակային), խմբերի կուիւը — կը թելադրեն ժողովրդին եւ կը ժողովրդականացնեն՝ յեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչները։

«Շատ մեծ դեր են խաղացել հրոսակային խմբերն այս դարում ազատուած մանր ազգութիւնների պատմութեան մէջ։ Այդպիս մեծ դեր կարող են եւ պէտք է խաղան նրանք նաեւ մեզ համար։ Ախոյեան հանդիսանալով ամէն տեսակ բռնաւորների դէմ՝ սկսած սատրապ աստիճանաւորներից, մինչեւ քիւրտ աւազակը մի կողմից եւ արիւնարբու հարկահանի ու վաշխառուի դէմ միւս կողմից, այդ խմբերը՝ ապագայ պատմութեան կենդանի դրօշակներ կը լինեն։ Պարտիզանական յարձակումներ գործելով բռնաւորների վրայ, պաշտպանելով ճնշուածներին, նրանք կ՝ելեկտրականացնեն ժողովրդի միտքն ու զգացմունքը, կռուի կենդանի օրինակներ կը տան ժողովրդին եւ այդպէս մասամբ գաղափարական կերպով, մասամբ իրականապէս կը ժողովեն իրանց շուրջը եւ կը կազմակերպեն կռուելու փոքր ի շատէ ընդունակ բոլոր տարրերը։

«Այդ ուժերը կանոնաւոր կերպով կազմակերպելու եւ ամբողջ Հայաստանում այդ խմբերի միջեւ մի ընդհանուր կապ հաստատելու համար օգնութեան կը հասնի ինտելիգենցիան, որ գլխաւորապէս պէտք է զբաղուի հէնց յեղափոխական ուժերի կազմակերպութեամբ։ Ապստամբութեան գաղափարը քարոզելու նա պէտք չի ունենայ։ Տաճկաստանի այժմեան կառավարութեան ձեւը ամենալաւ քարոզիչն է այդ գաղափարի։ Ինտելիգենցիան միայն պէտք է որոշի յեղափոխական գրական իդէալները եւ կազմակերպի եղած յեղափոխական ոյժերը։

«Երբ այդ կազմակերպութիւնը գլուխ գայ, այնուհետեւ կը հեշտանայ ժողովրդին զէնք մատակարարելը եւ ինքն իրան կը վճռուի, թէ ընթացիկ կռուի եւ թէ ապստամբական շրջանի բոլոր միջոցների հարցը։

«Իսկ այդպիսի միջոցներ փնտրելու կարեւորութիւն չկայ.— յեղափոխական տեխնիկայի մէջ այդ հարցը վաղուց վճռուած է։ Մենք անյարմար ենք համարում կանգնել այդ հարցի վրայ։

«Յեղափոխական հարուստ տեխնիկայով զինուած գաղտնի կազմակերպութեան տարածումն ու զարգացումը, բնականաբար, առաջ կը բերի աւելի յաճախ կրկնուող խմբային ցոյցեր տաճկական բռնակալութեան դէմ, որոնք մի կողմից կը դաստիարակեն ժողովրդի յեղափոխական ոգին, միւս կողմից կը քայքայեն տաճկաց տէրութեան առանց այն էլ խախուտ կազմը։

«Եւ երբ որ յեղափոխութեան պարտիզանական կռուի ալիքները կ'ողողեն ամբողջ Տաճկական-Հայաստանը, երբ որ նրանք անվերանորոգելի ճեղքեր կը բանան տաճիկ տէրութեան խախուտ շինուածքի մէջ, երբ որ, վերջապէս, Եւրոպան կը տեսնի, որ Տաճկաստանի խաղաղութիւնն սպառնալի կերպով խռովուած է երկու անհաշտ՝ մինչ արեան վերջին կաթիլը մաքառելու վճռած թշնամիների կռուով, երբ որ նա կը տեսնի, որ Տաճկաստանում իւր գործ դրած դրամագլուխները վնասւում են եւ կորչելու վտանգի են ենթարկւում եւ որ Ասիական Տաճկաստանում յեղափոխական չհանդչող կայծը բոցավառուելով՝ կարող է եւրոպական զարհուրելի հրդեհի պատճառ դառնալ, այն ժամանակ կը դայ վճռական րոպէն, եւ ամբողջ ժողովուրդը, իբրեւ մի մարդ, մի հոգի, ուր կը կանգնի եւ զէնքի ուժով ձեռք կը բերի իւր մարդկային իրաւունքները, ա՛յն իրաւունքները, որ այսքան դար անխիղճ կերպով ոտնակոխ են արել տաճիկներն ու քրդերը:

«Տաճիկ կառավարութիւնը չի կարող խեղդել յեղափոխութիւնը ո՛չ նրա առաջին շրջանում, ո՛չ էլ վերջինում: Ապակենտրոնացման (դեցենտրալիզացիա) ու տեղական ինքնուրոյն նախաձեռնութեան վրայ հիմնուած յեղափոխական կազմակերպութիւնը, իբրեւ հարիւր գլխանի վիշապ, կը գործէ ամէն տեղ եւ ամէն տեսակ ձեւերով ու հնարքներով: Նա կը մտցնի իւր աւերիչ զէնքը թէ՛ քաղաք եւ թ'է գիւղ, թէ՛ կաշառակեր աստիճանաւորների եւ թէ արիւնարբու վաշխառուների շրջանը, մի խօսքով՝ նա սրով ու հրով կը ջնջէ ժողովուրդի բոլոր թշնամիներին ու բռնակալներին: Ի հարկէ, արիւնահեղ փորձեր եւս կը լինեն յեղափոխական վիշապին սպանելու, բայց ի զո՞ւր — մի կտրուած գլխի տեղ կը բռնեն հարիւրաւոր գլուխներ, մի կալանաւորուած ու ջարդուած խմբի տեղ՝ յարութիւն առած ու ինքնագործունեայ ժողովուրդն առաջ կը բերի հարիւրաւոր նոր խմբեր: Շատ արիւն կը թափուի, շատ աչքեր կ'արտասուին, բայց միթէ այժմ քի՞չ արիւն ու արտասուք են ողողում Հայաստանի հովիտները, եւ, վերջապէս, ի՞նչ արած, որ այժմեան մարդկութիւնն առանց արիւնային վարձատրութիւն ստանալու ազատութիւն չէ տալիս ոչ ոքի: Եւ մեր ժողովուրդը կը վճարի այդ վարձը, այդ պարտքը՝ ողեւորուած այն մտքով, որ վիճակն արդէն գցուած է եւ յաղթութիւնը ի'ւրն է լինելու, եւ միայն ի'ւրը»:

«Դրօշակ»ի երրորդ համարը հրատարակւում է Ռումանիայի Գալաց քաղաքում: Այդ համարի (1892, Փետր.) ընդարձակ խմբագրականը — ութը սիւնակից աւելի — գրուած է Զաւարեանի եւ

Քրիստափորի կողմից *) եւ նպատակ ունի «համառօտապէս հիմնաւորել ընդհանուր ձեւով բերուած սկզբունքները եւ առաջ բերել մեր այն պահանջները, որ ձեռք պիտի բերուին ապստամբութեան նանապարհով»։

Այստեղ պարզաբանում, հիմնաւորում, լայնացնում ու խորացնում են այն սկզբունքները, որոնք շօշափւում էին «Դրօշակ»ի առաջին երկու համարների խմբագրականներում։ Սա մի փորձ է ընկերաբանական գիտական պատուանդաններ դնելու Դաշնակցութեան գաղափարախօսութեան տակ։ Եւ մենք տեսնում ենք, որ Դաշնակցութեան հիմնադիրները ամբողջապէս մեկնում են ընկերվարական հասկացողութիւններից՝ այդ հասկացողութիւնները համաձայնեցնելով հայ իրականութեան, որ շատ տարբեր էր քաղաքակիրթ աշխարհի իրականութիւնից։

«Պատմութիւնը մեզ ուսուցանում է, գրում է «Դրօշակ»ը, թէ ամէն մի հասարակական դրութիւն, հետեւանքը լինելով նախընթաց պայմանների, միեւնոյն ժամանակ պատճառ է այն ապագայի, որը երեւան է գալու վաղը։

«Ինչպէս ներկայիս մէջ կարող ենք դտնել անցեալի բոլոր գըլխաւոր եւ ապրելու արժանի կողմերը, նոյնպէս կարող ենք ասել, որ ապագայ կազմակերպութեան բոլոր տարրերը կարող են զարդանալ միայն ներկայից։ Հետեւաբար, այս կամ այն հասարակական հաստատութիւնները իրականացնելու համար բաւական չէ ունենալ կամք, նոյնիսկ կարողութիւն ձեւելու հասարակական կազմակերպութիւնը այս կամ այն մոդելից (բնական թէ իդէալական)։ դորա համար անհրաժեշտ է, իբրեւ հիմք, վերցնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին՝ նաեւ ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան»։

Եւ օրինակ բերելով գերման ընկերվարական կուսակցութեան եւ Բրիւսելի միջազգային ընկերվարական համագումարի իրատես ու գործնական ըմբռնումները՝ յայտնում է, որ Դաշնակցութիւնը ստիպուած է իր «ուժերը կենտրոնացնել ներկայ հանդամանքների

---

*) Պէտք է ասել, որ «Դրօշակ»ում յօդուածները հրատարակւում էին առանց հեղինակի անունը դնելու։ Այստեղ մենք հեղինակների անունը յիշում ենք՝ օգտուելով Հ. Յ. Դ. Դիւանի նիւթերից, որովհետեւ որքան էլ յօդուածները կուսակցութեան ընդհանուր կարծիքն են արտայայտում, պատմական տեսակէտից, հետաքրքրական է իմանալ նաեւ, թէ որի գրչին են պատկանում նրանք։

վրայ։ Ինչպէս հեռաւոր անցեալին, նոյնպէս եւ իդէալական ապագային մենք տալիս են երկրորդական նշանակութիւն։

«Ամէն մի օր Հայաստանի այս կամ այն անկիւնում կատարւում են սպանութիւններ, բռնի կրօնափոխութիւններ եւ ուրիշ հազար ու մի տեսակ բարբարոսութիւններ։ Ի հարկէ, այս բոլորի մէջ կառավարութիւնը ունեցել է մեծ դեր, սակայն անկարելի է անուշադիր լինել եւ դէպի միւս պատճառները»։

Որո՞նք են այդ պատճառները։

«Քիւրդ ազգաբնակչութեան մեծ մասը բաժանուած լինելով ցեղերի՝ դեռ եւս պարապում է խաշնարածութեամբ, վարում է կիսաթափառական կեանք։ Նրա ձգտումները, բարոյական սկզբունքները բոլորովին տարբերւում են այն վարք ու բարքից, որոնք առաջ են գալիս եւ զարգանում, երբ մարդս սկսում է պարապել հողագործութեամբ, որոշ տեղում մշտական բնակութիւն է հաստատում, ենթարկւում է հասարակական կեանքի պահանջներին։ Բայց եթէ քիւրդը, իբրեւ բարոյական հիմք, ընդունում է ցեղի շահերը, վրէժխնդրութիւնն եւ քաջութիւնը, եթէ նա չի հասկանում անձի սրբութիւնը, արհամարհանքով է վերաբերւում դէպի հողագործական ծանր աշխատանքը, դէպի այն բոլորը, ինչ բխում է աշխատանքի, քրտինքի դաղափարից,— խաղաղ մշակ հայն իր կացութեան վէմն ու տաճարը կառուցանում է աշխատանքի վրայ, ղեկավարւում է ազգային շահերով եւ ընդունում է այն բոլոր կապերի ու պարտականութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք հետեւանք են աւելի բարդ հասարակական պայմանների։

«Այսպիսով սկսում է մրցումն, պատերազմ երկու տարբեր շրջանների պատկանող ժողովուրդների մէջ։ Կասկած չկայ, որ ապագայում ցեղական սկզբունքը պիտի ոչնչանայ։ Ինչպէս որսորդութեան շրջանից մարդս դիմեց խաշնարածութեան, նոյնպէս անհրաժեշտ է ներկայումս, որ քիւրտը դառնայ հաստատաբնակ, դիմէ հողագործութեանը։ Մինչեւ այս պատմական բարեշրջութիւնը չկատարուի, խաղաղութիւնը չի հաստատուի, չի էլ կարող հաստատուել Հայաստանում։ Սպանութիւնները եւ աւազակութիւնները թէեւ կը մեղմանան, բայց կը պահեն իրենց քրոնիկական բնաւորութիւնը։ Հասկանալի է դառնում, որ քաղաքակրթութեան շահերը պահանջում էին ոյժ տալ հողագործի ձգտումներին, ապահովել նրա կեանքը, կայքը, աշխատանքը եւ խստիւ հետեւիլ օրինապանցներին։ Այդպէս վարուելով, կառավարութիւնը կատարած կը լինէր իր պարտքը եւ աշիրէթների քայքայման հետ միասին կ՝ապահովէր լուսաւորութեան տարածումը։

Այո՛, «Մեր կռիւը տաճիկ կառավարութեան դէմ ո՛չ միայն ազգային կռիւ է, այլեւ եւրոպական քաղաքակրթութեան ու մարդկային իրաւունքների դատ» (Դրօշակ» No. 1)։

«Անցնենք մեր կեանքի միւս դլխաւոր պայմաններին. Հայաստանը նուաճող մահմետական սուլթանները ու զօրապետերը չհաստատեցին տիրած երկրում ժողովրդի համար փոքր ի շատէ ապահով դրութիւն, չստեղծեցին այն ամենատարրական պայմանները, որոնք անհրաժեշտ են ժողովրդի բազմանալու, զարգանալու համար։ Նուաճած ազգերի ստրկութիւնը պահպանելու համար ամբողջ ուղղափառ տարրը ստացաւ մի զինուորական իշխող դասակարգի տիպար։ Դարերի ընթացքում ուղղափառ տաճիկը արհամարհանքով էր վերաբերւում դէպի գեաւուր հայը, պատիւ ու պարծանք էր համարում ճնշել, կողոպտել, անպատուել գեաւուրին։ Միաժամանակ մահմետական պաշտօնեան ոչ միայն անտարբեր է եղել դէպի քրիստոնեաների շահը, այլեւ անիրաւաբար միշտ մեղադրել, զրպարտել, բանտարկել, ամէն կերպ ճնշել-վնասել է հային։ Այդպիսով, չնայելով, որ հաւասարութիւնը յայտարարուած էր կեանքի ամենադլխաւոր սկզբունքներից մէկը, տաճկի մոլեռանդութիւնը զրկեց հային եւ այս նահապետական առաւելութիւնից։

«Իրաւունք չունենալով զէնք եւս կրելու, որ հարկաւոր դէպքում կարողանար գոնէ ինքը իրեն պաշտպանել, հայը ակամայ պիտի ընկնէր այս կամ այն քրտի կամ բէգի հովանաւորութեան տակ, պիտի գնէր իր ապահովութիւնը այս կամ այն վարձատրութեամբ։ Այդ կապը թէեւ ստիպողական չէր կառավարութեան կողմից, բայց լինելով անհրաժեշտ հետեւանք ժամանակակից պայմանների՝ օծուեցաւ զանազան սովորութիւններով եւ ստացաւ յայտնի գոյն, որը իր բացասական կողմերով նմանում է ինչպէս եւրոպական միջնադարեան սիստեմին, նոյնպէս եւ հայ նախարարականին, որը իրենք՝ տաճիկները, Հայաստանը նուաճելիս, հայ ժողովրդի աջակցութեամբ, ջնջեցին յանուն հաւասարութեան։ Այդպիսով այն ճնշման վրայ, որը հետեւանք էր թափառական խաշնարած կեանքի, աւելացաւ մի ուրիշը. ազգաբնակութեան մի մասին իշխումը միւսի վրայ։ Այդ անիրաւութիւնն էլ ոչնչացնելու համար պէտք էր կառավարութիւն, որը սակայն չկար։

«Չկար, ասում ենք, որովհետեւ Պոլսոյ ամիրաների հիմնած կազմակերպութիւնը ստեղծուած էր միայն դրացի ազգերի հետ մրցելու, քրիստոնեաների ստրկութիւնը պահպանելու ու հարուստ դասակարգի շահերին ծառայելու համար։ Հարկաւ, այդ

կառավարչական մեքենան չթեթեւացրեց ժողովուրդի որեւէ ցաւը, դարման չարեց նրա վէրքերին։ Ոչ Սուլթան Մէջիտի թանզիմաթը, ոչ էլ սահմանադրութիւնը չչեղեցին ժողովրդի կեանքը ճնշման ճանապարհից։ Աշխատող տարրը, ենթարկելով զանազան սահմանափակումների, մտցնելով նորա կեանքի մէջ աւելի «կարգ կանոն» եւ միաժամանակ կառավարութեան ղեկը, շնորհիւ ցենզի, յանձնելով հարուստ դասակարգին՝ այս «կարգադրութիւնները» աւելի նպաստեցին նախկին չորբաճիների սերնդին հարստահարել աշխատող ամբոխը։ Նախկին եւ նոր դրութեան մէջ զանազանութիւնը նրանում էր, որ հարստահարութիւնը ստացաւ աւելի կանոնաւոր ձեւ։ Այսպէս՝ կառավարութեան եկամուտը ապահովցնելու համար էֆէնդիները եւ պաշտօնեաները ստեղծել են մի այնպիսի սխեմա, որով հարկերի ծանրութիւնը ընկնում է գիւղացու եւ աղքատ արհեստաւորի վրայ. թող մէկը միւսից հարուստ լինի տասը, հազար անգամ, փոյթ չէ. դոքա պիտի վճարեն համարեա թէ հաւասար. վաշխառուական դրամագլուխը եւ այն բոլոր ձեռնարկութիւնները, որոնք իրենց տէրերին մեծ գումարներ են տալիս, վճարում են համեմատաբար չնչին բան։ Հարկերի մեծ մասը, լինելով կողմնակի, կենսական մթերքների վրայ, ընկնում է հաւասար ծանրութեամբ աղքատ մշակի եւ հարուստ բէգի վրայ։ Ցիշե՞նք արդեօք զինուորական տուրքի մասին, որը վերջին ժամանակներս հասել է ամէն մի քրիստոնեայ տղամարդից՝ 38 դահեկանի։ Ասե՞նք արդեօք քրդերի, Պոլսոյ բնակիչների, մոլլաների, քահանաների մասին, որոնք թեթեւցրած լինելով հարկերից՝ այդպիսով իրենց բեռը ձգում էին էլի աշխատաւոր դասի վրայ։

«Վերջապէս, ժողովուրդը աւելի հաստատ կերպով հարստահարելու համար կառավարութիւնը ստեղծել է տեսակ-տեսակ մոնոպոլիաներ (ծխախոտի, աղի, երկաթուղիների, հանքերի), որոնց նպատակն է մշակի դրպանից հանել իր աշխատանքի մի մասը եւ յանձնել եւրոպացի կամ տեղացի դրամատէրերին։

«Ժամանակի ընթացքին կառավարութեան յիշեալ հարստահարութիւնների վերայ աւելացաւ եւ մի ուրիշը, ոչ այնքան նկատելի, սակայն նոյնքան զզուելի։ Դա զանազան վաշխառուների, էֆէնդիների, բէգերի հարստահարութիւնն է։ Ցնայելով, որ մահմեդականների տեսակէտից տոկոսը հալալ չի համարւում, պնդելով, որ հոդը պատկանում է մշակողին, որ ամէն մարդ ազատ եւ հաւասար է միւսին, հարուստները՝ օգտուելով ամբոխի անտանելի դրութիւնից՝ դարձրին նոցա իրենց հլու հպատակ։ Հայաստանում կարելի է մատնացոյց անել ամբողջ գիւղեր, որոնք այս էֆէնդու կամ այն բէգի սեփականութիւնն են դառել։

«Հասկանալի է, որ այս անտանելի պայմանները այսօր զգացուում են ամենածանր հետեւանքներով։ Ժողովրդի աղքատութիւնը օրէցօր սաստկանում է, եւ նեղ դրութիւնից դուրս գալու համար նա ստիպուած է աւելի եւ աւելի մեծացնել գաղթականութիւնը իր հետ կապուած թշուառ հետեւանքներով։ Հոսանքը այնքան մեծ է, որ Հայաստանում կարելի է գտնել շատ աւաններ, որոնց բնակիչները կիսով չափ կամ ամբողջովին գաղթած են հեռաւոր երկիրներ։ Սկսելով հայերից եւ յոյներից՝ պանդխտութիւնը վերջերս արմատ է ձգել այն աստիճանի, որ ժողովրդի աճումը նկատելի կերպով թուլացել է, եթէ դադրած չէ արդէն մի քանի գաւառներում։ Այսպէս քանի գնայ, այս ընթացքը աւելի ոյժ պիտի ստանայ, որովհետեւ տուրքերը շատացնելով, կառավարութիւնը ոչ մի միջոցների չի դիմում երկրի արդիւնաբերութիւնը բարձրացնելու համար։

«Հաղորդակցութեան եւ, հետեւապէս, երկրագործական մթերքների արտահանութեան հարցը, որն ունի կենսական նշանակութիւն հողագործ հայ ժողովրդի համար, մնացել է բաց՝ չնայելով ճանապարհաւորքի ծանրութեանը։ Զանազան պատահական չարիքներից (աշար, երաշտ, կարկուտ եւայլն), ժողովրդի ապահովութեան խնդիր չկայ կարծես տաճիկ կառավարութեան համար։ Այն «երկրագործական սնդուկը», որը այդպիսի հանգամանքներում պիտի օգնութեան գար ժողովրդին, զանազան ձեւականութիւնների պատճառով, ծառայում է միայն վաշխառուների շահերին, իսկ ժողովուրդը նրա գոյութեան մասին գաղափար անգամ չունի։ Նոյնն է եւ պարտադիր ուսման օրէնքը. դրա համար վերցուած տուրքը ծախսւում է գլխաւորապէս մի քանի միջնակարգ դպրոցների վրայ, ուր յաճախում են միայն քաղաքացի հարուստ մահմեդականների որդիքը։ Զպիտի մոռանանք եւ այն, որ այս վերջին երկու տուրքերի (ուսումնական եւ երկրագործական սնդուկի) մեծ մասը ծախսւում է բոլորովին տարբեր հիմնարկութիւնների վրայ։

«Վերջապէս, հարկաւոր է յիշել եւ մի երեւոյթ կառավարութեան ներքին քաղաքականութեան մէջ, այն է՝ քրիստոնեայ աղգաբնակութիւնը նուազեցնելու եւ, եթէ կարելի է, նոյն իսկ ջնջելու գիտակցական ձգտումը։ Քրիստոնեաների աննշան թիւը համեմատաբար այլազգիների թուի հետ, ի հարկէ, կառավարութեան ձեռքում կը լինի ամենաուժեղ մի միջոց վերանորոգումներ պահանջող ամէն տեսակ ձայների դէմ կռուելու համար։

«Այդպիսով, այս համառօտ ընդհանուր տեսութիւնից պարզ-

ւում է, որ տաճկահայ ժողովրդի դրութիւնը միանգամայն սարսափելի է շատ կողմերից։

«Ազատել ժողովրդին այդ անտանելի դրութիւնից, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թոյլ տան նորան մտնել ընդհանուր մարդկութեան զարգացման շաւիղի մէջ՝ կարելի է միայն յեղափոխութեամբ, կարելի է միայն միաժամանակեայ փոփոխութիւններով Հայաստանում տիրող բաղմատեսակ պայմանների։

«Հիմնելով մեր նպատակը եւ պահանջները այդ Մայ-Հայաստանում իշխող դրութեան վերայ, մենք չպիտի անուշադիր լինենք նոյնպէս դէպի ուրիշ ազգերի օրինակները։

«Ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը հազարաւոր տարիների ընթացքում ցոյց է տալիս մեզ, որ յանձնել ամբողջ ժողովրդի բախտը մի դասակարգի, որը իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, ֆիզիքական եւ նիւթական ուժի, կամ թէ չէ նոյնիսկ ուսման վրայ, տալ կառավարութեան ղեկը որեւէ դասակարգի, կը նշանակէ ստեղծել ճնշում այդ դասակարգից, զրկել ժողովուրդը ծառայող այդ փոքրիկ մասի եւ միաժամանակ անբարոյականացնել իշխող պոլիտիկաններին։

«Դորա համար զուգընթացաբար հասարակական կեանքի ալիքը թուլացնելով առանձին անհատի դաղանական ձգտումները եւ պակասեցնելով նիւթական անհաւասարութեան հետ անխախտ կապուած ճնշումը՝ տանում է մեզ դէպի եղբայրական սկզբունքները, դէպի ընկերական, համայնական հաստատութիւնները։

«Արդարութեան ամենագլխաւոր պահանջը, թէ ամէն մարդ իր քրտինքով պիտի աշխատի կերած հացը, թէ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտուելու, — տարածւում է աւելի եւ աւելի։ Դեմոկրատիայի յաղթութիւնը այնպիսի հսկայական քայլերով է առաջ գնում, որ շատ ժամանակ չանցած հասարակութեան ղեկավարող տարրը զանազան առանձնշնորհումների տեղ լինելու է աշխատանքը, իբրեւ ընդհանուր բարօրութեան միակ միջոց։

«Ա. Ահա այս է պատճառը, որ հայ յեղափոխականները, միշտ դէմ լինելով որեւէ առանձնաշնորհումների, կը զարգացնեն ու կ՚ընդարձակեն դարերի ընթացքում հայութեան մէջ տեղի ունեցած ու խորը արմատ ձգած ընտրողական սկզբունքը։ Ապագայ ազատ Հայաստանում իշխող ռամկավարական-սահմանադրութիւնը, ծառայելով ընդհանրութեան շահերին, պիտի հաստատուած լինի ամէն հասակաւոր բնակիչի հաւասար ընտրողական իրաւունքի վրայ, առանց որեւէ ցենզի. իսկ այդ շահերը իրականապէս պաշտպանելու համար, ընտրողական սկզբունքը կառա-

վարական բովանդակ գործողութիւններից սկսած դէպի առաւել նեղ գաւառականը ու համայնականը պիտի ստանայ առաւելագոյն լայն ծաւալ։

«Այսպիսի սահմանադրութեան վերայ հիմնուած կառավարութիւնը, անշուշտ, կը հաստատէ.

«1.— Անձի եւ կայքի ապահովութիւն ամենախիստ միջոցներով։

«2.— Տարբեր ազգութիւնների ու դաւանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ։

«3.— Ազատութիւն խօսքի, մամուլի եւ այլ՝ ռամկավարական երկրներում ընդունուած արտօնութիւնների։

«Բ. Նոյնքան մեծ, եթէ ոչ աւելի, նշանակութիւն ունի հայութեան վերածնման համար դիւղացու ազատութիւնը ներկայ աղքատ դրութիւնից։ Որպէսզի ժողովուրդը ոչ միայն խօսքով, այլ եւ իրականապէս օգտուի ձեռք բերած ազատութիւնից, որպէսզի նա մինչեւ անգամ կարողանայ պահպանել իր ազատութիւնը եւ ոչ թէ շուտով կրկին զրկուի դրանից, հենց առաջին քայլերում ժողովրդի ներկայ թշուառ դրութեանը օգնելու համար մենք անհրաժեշտ ենք համարուր.

«1.— Տալ չունեցողին հող եւ համաձայն դարերից ի վեր գոյութիւն ունեցող նոյն իսկ տաճկական սովորական ու դրական օրէնքի իմաստին որոշ կերպով ապահովել մշակողին հողից օգտուելու կարելիութիւնը։

«2.— Ամէն տեսակ տուրքերի ենթարկուող բոլոր դնահատումը պիտի կատարուի առանց ցենզի ընտրուած չինական եւ թաղական ժողովներում, որոնք պէտք է առաջնորդուին հայութեան մէջ խորը խրամատ ձգած եւ եւրոպական յառաջադիմող հարկահանութիւնց չի տարբերուող «կարողութեան» «համբայական» սկզբունքով։

«3.— Ոչնչացնել զինուորական տուրքը՝ հաստատելով տեղի եւ ժամանակի պահանջներին համաձայն զինուորագրութիւն։

«Գ. Հայաստանը յառաջադիմութեան ճանապարհի վրայ դնելու համար անհրաժեշտ են նաեւ.

«1.— Ամէն կերպ նպաստել ժողովրդի զարգացման ու ուսմանը։

«2.— Զարգացնել ժողովրդի արդիւնաբերութիւնը, մտցնել վերջինին մէջ նոր ձեւեր, լայնացնել արտահանման միջոցներ եւ այլն։

«3.— Այժ տալ դիւղացու համայնական սկզբունքներին՝ զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւններն ու ձեւերը, որոնք

ծագել են Հայաստանի հողի վրայ, տեղական ու պատմական հանգամանքների ազդեցութեան տակ, լայնացնել այդ հիմնարկութիւնների սահմանը գիւղից, թաղից սկսած մինչեւ գաւառը, մինչեւ ամբողջ տէրութիւնը եւ այսպիսով միանգամայն ապահովել համայնքի ամէն մի անդամին բնութեան եւ ընթացիկ կեանքի պատահական հարուածներից»:

Եթէ համեմատելու լինենք այս յօդուածում արծարծուած մտքերն ու գործնական առաջադրութիւնները Դաշնակցութեան առաջին ծրագրի հետ, պիտի տեսնենք, որ ծրագրի գրեթէ բոլոր հիմնական սկզբունքներն ու կէտերը ներկայացուած են այստեղ: Եւ զարմանալի էլ չէ թնաւ, որովհետեւ միեւնոյն մարդիկ են եղել եւ ծրագրի գլխաւոր հեղինակները:

«Դրօշակ»-ի թիւ 5 եւ 6-ում (1893 Նոյեմբեր, 1894 Յունուար) Զաւարեանը եւ Քրիստափորը հրատարակում են «Այր ու Բեն» վերնագրով երկու խմբագրական յօդուածներ, որոնց մէջ սկսում են (բայց չեն վերջացնում) պարզել «հասարակական խնդիրների» այր ու բենը, որով, դժբախտաբար, մեղանում քիչ են հետաքրքրւում: «Այո՛, յեղափոխական այրուբենը գտնուած, ընդունուած չէ մեր զանազան գործիչների կողմից», որոնք կարծում են, թէ «հայը եւ Հայաստանը մի բացառութիւն են, որ դուրս պիտի համարուին համամարդկային ընդհանուր օրէնքների ազդեցութիւնից: Հայ-յեղափոխականը չի ուզում որեւէ առընչութիւն ունենալ մարդկային պատմութեան հետ»:

«Որո՞նք են հասարակական այրուբենի տարրերը:

Առաջին տառը ազատութիւնն է, «Հայ ժողովուրդը ազատութիւն է ուզում, — այս ամենքի համար պարզ է. եւ այս խօսքը միակ տառն է, միակ այրն է, որի անհրաժեշտութիւնն ընդհանուրի կողմից ընդունուած պէտք է համարել»:

«Բայց ի՞նչ է նշանակում ազատութիւն. ի՞նչ է հասկանում մեր ժողովուրդը ազատութիւն բառը արտասանելիս:

«Շատերը կասեն. քաղաքական ազատութիւն, ազգային անկախութիւն, հայկական կառավարութիւն տաճկականի տեղ»:

Սակայն, այս պայմանը «բովանդակո՞ւմ է արդեօք իր մէջ ժողովրդի բոլոր իղձերը, գաղափարները, նրա բոլոր պահանջները ազատ գրութիւնից: Ազատութեան ձգտելով արդեօք մեր ժողովուրդն ուզում է միմիայն իր ազգային ինքնասիրութեա՞նը բաւականութիւն տալ, թէ այդ գրութեան հետ, անշուշտ, կապում է առհասարակ իր կեցութեան ընդհանուր բարեփոխութիւնը»:

Հարկաւ, վերջինը, «Մենք չենք հերքում առաջին մոտիւի նշանակութիւնը, բայց հակառակ ենք այն հայեացքներին, որոնք

ժողովրդի դրութեան բարեփոխումն անպայման կապում են մի-միայն նրա անկախութեան հետ, համարելով այդ բարեփոխումը ինքն ըստ ինքեան հասկանալի, բնական, անհրաժեշտ հետեւանք անկախութեան»: Մեր ժողովուրդն էլ «ազատութիւն է կամենում ոչ թէ լոկ ազգային ինքնասիրութիւնից դրդուած, այլ գլխաւորապէս իր առօրեայ կեանքը մաշող, ճնշող հանգամանքների ազդեցութեան ներքոյ»:

«Խօսեցրէ՛ք Հեքքեարիի, Մանազկերտի, Սասնոյ մի մասի հային, որը յայտնի է իր տեղում Ֆլահ (ստրուկ) անուան տակ: Դա պատկանում է այս կամ այն քիւրտ աղային, որը հարստահարում է նրան ուզածին պէս, ծախում է նրան ուրիշին 10–20–30 լիրայով եւ միեւնոյն ժամանակ հովանաւորում է հայ վաշխառուի եւ միւս քիւրտ աղաների դէմ, այդ հայը, որ տարին մի երկու անգամ հազիւ է տեսնում տէրութեան պաշտօնեայ, դժուար թէ հետաքրքրուի հայկական օրէնսդիր ժողովով կամ ազգային ազատ մամուլով. նրա համար, ի հարկէ, աւելի բնական է ազատութեան տակ հասկանալ Ֆլահի դրութիւնից դուրս գալը, Ֆէոդալ բէգի կամայականութիւնից անկախ լինելը եւ այլն»:

Նոյնը եւ Կարնոյ դաշտի, Փոքր Հայաստանի, Վասպուրականի ժողովուրդը, որին ճնշում է «հարկերի չափազանց ծանրութիւնը եւ վաշխառուների կողոպտումները՝ վարչական կազմակերպութեան փտածութեան հետ միասին: Հարկային բարեփոխումները, հողի եւ նրանից ստացուած արդիւնքների ապահովութիւնը զանազան էֆէնդիների ճանկերից,— ահա այն պայմանները, որ առաջնակարգ տեղ են բռնում այս հայերի կեանքում»:

Իսկ «Ալաշկերտի հայը իր չքաւորութեան մէջ, ազատութիւնից աւելի կ՝ուզենար խաղաղ դրացի: Թէ որքան նշանաւոր է նրա համար այս պայմանը, այդ պարզ է նրանից, որ գիտնալով հանդերձ, որ ազգ. անկախութիւնը Ռուսաստանի սահմաններում հայերի համար կատարեալ ցնորք է. գիտնալով, որ ազգային ինքնասիրութիւնը պահանջում է հաստատ լինել իր ազգային կրօնին, այսուամենայնիւ իւր անհանգիստ դրացիից — քրդից — ազատուելու համար՝ նա այսօր պատրաստ է ամբողջ դաւառներով Ռուսաստան դաղթել եւ, եթէ պահանջուի, նաեւ ռուսադաւանութիւն ընդունել»:

«Վերջապէս, խօսեցրէ՛ք հայ գիւղացուն, հայ արհեստաւորին, վաճառականին կամ հայ ինտելիգենտին, ընդհանուր եղրակացութիւնը բոլոր լսածներից կը լինի՝ ազատութիւն ցանկալով՝ հայ ժողովուրդը ձգտում է այնպիսի դրութեան, որ ազատուած լինի ինչպէս մահմեդականներից հալածուողի իր անարդ դրութիւնից, ինչպէս օրէնքի առաջ եղած անհաւասարութիւնից, նոյ-

պէս եւ հարկերի ծանրութիւնից, քրդերի եւ պաշտօնեաների յափշտակութիւններից, բէգերի եւ վաշխառուների իշխանութիւնից, հողին վերաբերեալ զեղծումներից, իր յուսահատ չքաւորութիւնից, իր աստանդական մուրացկանի դրութիւնից եւ այլն»:

Եւ հարց է առաջ գալիս. «Ի՞նչ կարգեր կարող են ապահովել այդ պահանջները»:

Դժբախտաբար, այս հարցի պատասխանը ուղղակի չի տրուած: Հ. Յ. Դ. Դիւանի մնացած գրագրութիւններից երեւում է, որ Քրիստափորը պատրաստելիս է եղել այդ հարցի մասին մի յօդուած, բայց հանգամանքները թոյլ չեն տուել լրացնելու: «Այբ ու Բեն»-ի երկրորդ մասը («Դրօշակ», թիւ 6.) նուիրուած է Մ. Փորթուգալեանի «Արմենիա»-յի քննադատութեան:

«Արմենիա»-ն, «ինչպէս ինքը վաղուց յայտարարել է, դադարել է յեղափոխական կազմակերպութեան, յեղափոխական կենդանի գործի օրգան լինելուց, որն այժմ զրաղուած է աւելի փողի եւ ուրիշ տեսակ վիճակախաղեր կազմելով իր բաժանորդների համար», — «հանդերձ իր յեղափոխական երեմիականներով, այդ թերթը հասել է բարոյական մահուան, իր նիւթականն ապահովելու միակ եւ թշուառ խնդրին: Առաջ նա «Հայրենասիրաց Միութեան» օրգանն էր. «Արմենիա»-յի համար առաջնակարգ տեղ էին բռնում Թիւրքիայում տիրող վարչական-քաղաքական թերութիւնները: Վերացնել այդ թերութիւնները, եւ հայի լացը բախտաւոր ժպտի, հայի թշուառ կենցաղը կատարեալ անդորրութեան պիտի վերափոխուին»:

Բայց «վարչական բարեփոխումներ» պահանջն էլ յայտնի չէ, թէ ի՞նչ է նշանակում: «Ենթադրենք, թէ դիւթական մի շարժուածքով Թիւրքիայում իրականացաւ ներկայ ժամանակներիս համար առաջնակարգ մի եւրոպական վարչական դրութիւն, ի՞նչ կը լինենք մենք դատած դրանով: Ի հարկէ, շատ բան, բայց ոչ այն բոլորը, ինչ հարկաւոր է ժողովրդին, ոչ այն դրութիւնը, որի անունով միայն մենք ձեռներս սրտներիս վրայ դրած, առանց մեր խղճի առաջ ամաչելու, կարող լինէինք բարձրաձայն գոչել ժողովրդին, «Հա՛յ ժողովուրդ, ոտ դիր յեղափոխութեան դժոխային ուղին, կռուի՛ր, մեռի՛ր, զոհի՛ր որդիքդ ու ունեցածդ, եւ երբ կը ստանաս այդ վարչական դրութիւնը, դու բախտաւոր կը լինես անպատճառ» ...

Ապա բերում են մի շարք օրինակներ: Այսպէս.—

«Պարսիկ գիւղացին անկախ է, իր երկրում նա քաղաքականապէս իշխող է, բայց ապահո՞վ է նրա կացութիւնը, ազա՞տ է

նա։— ո՛չ, նա ստրուկ է եւ աղքատ։ Ռումանիան ազատ է։ Նրա քաղաքական կարգերն առնուած են նոր սահմանադրական մոդելներից, բայց ի՞նչ է նրա գիւղացու դրութիւնը, եթէ ոչ կատարեալ ճորտութիւն։ բոլոր աշխատաւոր, բայց մեծ մասամբ անհող գիւղացիք իրականապէս պատկանում են մի քանի հազար հողատէր ազնուականների։ Իտալական ժողովուրդը, որ դեռ երեկ թոթափեց իր վրայից Աւստրիայի լուծը եւ ձեռք բերեց քաղաքական ազատութիւն, ներկայումս հեծում է դառն աղքատութեան տակ։ Եւ Սիցիլիան, այն Սիցիլիան, որ իտալական ապստամբութեան յենարանն էր կազմում, որ համարձակ բարձրացրեց ապստամբութեան դրօշակն օտար կառավարութեան դէմ, հենց այս բոպէիս զէնքը ձեռքին կուում է իր սեփական, իր արիւնով ստեղծուած կառավարութեան դէմ»... Նոյնը նաեւ Ռուսաստանում եւ շատ ուրիշ երկրներում։ «Եւրոպան իր քաղաքական կազմակերպութիւններով այսօր բարձր է ուրիշ երկրներից», բայց «այդ կազմակերպութիւններն անկարող են ապահովել ժողովրդի բարեկեցութիւնը եւ, հետեւաբար իրենց տիպով դեռ շատ եւ շատ ստոր պիտի համարուին»։

Այստեղից պարզ հետեւում է, որ միայն վարչական բարեփոխութիւնները կամ երկրի անկախութիւնը բաւական չեն, որպէսզի մեր ժողովուրդը անկախ համարուի եւ անկաշկանդ զարգանայ։ քաղաքական ազատութեան հետ միասին անհրաժեշտ է եւ տնտեսական ազատութիւն, հողից օգտուելու եւ աշխատանքի իրաւունք։

«Այր ու Բեն»-ի շարունակութիւնը գրել է Ռոստոմը («Դրօշակ» թիւ 7, 1894, Մարտ)՝ նիւթ ունենալով Հնչակեան կուսակցութիւնը եւ նրա պաշտօնաթերթ «Հնչակ»-ը։

«Հնչակեան խումբը, գրում է Ռոստոմը, ասպարէզ դուրս եկաւ իբր սոցիալիստ-յեղափոխական։ Նա հենց սկզբից յայտարարեց, որ ինքը չի բաւականանալու միայն ռամկավարական ազգային անկախութեամբ, այլ նրա նպատակն է սոցիալիզմը։ Բայց թէ ի՞նչ բան է սոցիալիզմը, ինչպէ՞ս կարող է նա իրականանալ, դրա մասին չէր կարելի ոչ մի որոշ գաղափար կազմել «Հնչակ»-ի տուած յօդուածներից, չէր կարելի, որովհետեւ հենց ինքը, «Հնչակ»-ի խմբագրութիւնը, որոշ գաղափար չունէր նրա մասին եւ չունի մինչեւ այսօր էլ։

«Հայեացքների քաոս, խառնաշփոթութիւն եւ ինքնուրոյնութեան կատարեալ բացակայութիւն — ահա թէ ինչ կարելի է նկատել «Հնչակ»-ի տեսական հայեացքների մէջ»։ Այդ քաոսը մնում է եւ այժմ, 7 տարուայ գոյութիւնից յետոյ էլ։

«Հնչակ»-ը առաջ իրեն հրատարակեց սոցիալիստ-յեղափոխական. վերջերումս աւելացրել է եւ երկու ուրիշ կոչումներ. մարքսիստ եւ սոցիալ-դեմոկրատ, բայց դրանից դրութիւնը բնաւ չփոխուեց:

«Հնչակ»-ը մի ժամանակ վճռականապէս պնդում էր, որ հայկական ուրոյն պայմաններում հայ ժողովուրդը կարող է խուսափել դրամատիրութեան չարիքներից, կրկնում էր Նարոդնիկների տեսակէտը թէ՝ սոցիալիզմ պէտք է հաստատել գիւղի համայնական դրութեան վրայ, իսկ այժմ պնդում է, որ դրամատիրութեան մուտքը Հայաստան անխուսափելի է, հայ ժողովուրդը պիտի անցնի դրամատիրութեան բովով, հայ աշխատաւորը անխուսափելիօրէն պիտի դառնայ բանուոր — եւ սրանից բխող մարքսիստական բոլոր հետեւանքները»:

Ռոստոմը կծու խօսքերով ծաղրում է Հնչակեաններին, հեգնում է, բռնում նրանց հակասութիւնների մէջ. «ինչո՞ւ համար էք ձեր փայտէ դրշով Կ. Մարքսի մեծ անունը մրոտում»:

«Այր ու Բեն»-ի յաջորդ յօդուածում «Դրօշակ», թիւ 8, 1884, Մայիս) Ռոստոմը շատ սուր, սպանիչ քննադատութեան ենթարկում «Հնչակ»-ի սոցիալիզմն ու դասակարգային ըմբռնումները: «Հնչակ»-ը, գրում է նա, իր կուսակցութեան նպատակը ներկայացնում է այսպէս.—

«Բացադրել աշխատաւոր ընդհանրութեանն իր պատմական դերը, իր սոցիալական-քաղաքական խնդիրներն ու շահերը, զարգացնել նրա դասակարգային գիտակցութիւնը, լուսաբանել ու որոշել նրան իր քաղաքական իւրաքանչիւր պահանջը եւ այսպիսով դարձնել կողմնակից նրան իր շահերի համապատասխան յեղափոխութեան, պատրաստել նրա այդ անելիք յեղափոխութիւնը եւ պրոպագանդայի ու ագիտացիայի հետ միաժամանակ համախմբել ու կազմակերպել նրա ուժերը մէկ ընդհանուր կազմակերպութեան մէջ ընդհանուր յեղափոխութեան համար — ահա հայ սոցիալիստի, հայ յեղափոխականի բռնելիք ընթացքն ու աշխատութիւնները»: Հայ սոցիալիստները «կազմակերպում են ապագայի դիմադրական կուսակցութիւնը», եւ «աշխատաւոր ընդհանրութիւն» ասելով «Հնչակ»-ը հասկանում է միայն բանուոր, պրոլետար դասակարգը:

Ի պատասխան այս բացադրութեան «Դրօշակ»-ը հարց է տալիս. «իսկ ի՞նչ դիրք պէտք է բռնի հայ սոցիալիստը, իբրեւ սոցիալիստ, դէպի ներկայումս գոյութիւն ունեցող աշխատաւոր ընդհանրութեան ամենաէական մասը, դէպի գիւղական դասակարգը: Սոցիալիստական զէնքը դրա ձեռքն է՞լ պէտք է տալ, թէ միմիայն սաղմի ձեռքը»:

«Հնչակ»–ը այս հարցին պատասխան չունի, որովհետեւ նա կորցրել է գլուխը մարքսիստական լաբիւրինթոսի մէջ: Երէկ նա գիտէր, որովհետեւ իր գոյութեան սկզբի շրջանում ձգտում էր ընկերվարութիւնը Հայաստանում հաստատել գիւղական համայնքի հիման վրայ, իսկ այժմ կրկնում է ռուս մարքսիստների խօսքերը թէ «գիւղացի ժողովուրդը իր տնտեսական տարբեր պայմանների չնորհիւ ընդունակ չէ իւրացնելու սոցիալիզմի գաղափարները»:

«Դրօշակ»–ը հարց է տալիս. բայց ի՞նչ անել, երբ Հայաստանում բանուոր գոյութիւն չունի, երբ Հայաստանի ժողովրդի ճնշիչ մեծամասնութիւնը «գիւղացի ժողովուրդն» է, ինչպէ՞ս մղել Հայաստանում դասակարգային պայքար, ինչպէ՞ս, ի՞նչ տարբից կազմակերպել «ապագայի դիմադրական կուսակցութիւն»: Ու վերլուծելով հայ իրականութեան պայմանները, ցոյց է տալիս, թէ որքան անհեթեթ են «Հնչակ»–ի տեսակէտները:

— «Հնչակ»ը միշտ կրկնում է, թէ հայութիւնը բաժանւում է երկու դասակարգի՝ հայ պրոլետարիատի, հայ բուրժուա դասակարգի, որ հայ գիւղացին թողնում է հողը եւ գնում է արդիւնաբերական քաղաքները եւ դառնում «վարձկան բանուոր» եւ այլն: Ի՞նչ նշանակութիւն ունին այստեղ ամէն մի քայլափոխում կրկնուող հայութիւն, հայ բանուոր, հայ բուրժուա խօսքերը, ի՞նչ արժէք ունին դրանք սոցիալիստի համար. եթէ հայ գիւղացին թողնում է հողը, եթէ հայ դարբինը թողնում է իր մուրճը, նա չի մնում իր մայրենի երկրում, նա գաղթում է օտար երկրներ, գնում է Պոլիս, Ռուսաստան, Յունաստան, Ռումանիա, Ամերիկա, Աւստրալիա ... եւ այնտեղ միայն, Հայաստանից դուրս, նա կարողանում է դառնալ «վարձկան բանուոր»: Վերադարձաւ իր երկիրը՝ նա դադարում է բանուոր լինելուց, նա նոյն հողագործն է, նոյն արհեստաւորը: Եւ եթէ նա կարող է «դիմադրական կուսակցութիւն» կազմել, դա այն երկրներում կարող է անել, որտեղ ինքը բանուոր է: Իսկ թէ ի՞նչպէս Ամերիկայի, Յունաստանի, մինչեւ իսկ Պոլսի բանուորներից «Հնչակ»–ը պէտք է «ապագայի դիմադրական կուսակցութիւն» ստեղծի Հայաստանի համար, այդ միայն Աստուած գիտէ»:

«Կրկնում ենք, այստեղ ուշադրութեան պէտք է առնել ոչ թէ հայը, հայութիւնը, հայ բանուորը, հայ բուրժուան, այլ այն երկիրը, որի համար ձգտում կայ քաղաքական ազատութիւն ձեռք բերել. ուշադրութեան պէտք է առնել նոյն երկրի տնտեսական պայմանները, նրա մէջ գոյութիւն ունեցող բուրժուային, բան-

ուորին, լինին դոքա հայ, թիւրք, նասրանի, այդ փոյթ չէ սոցիալիստի համար»։

Հայեացքների տարբերութիւնը ակներեւ է։ Ակներեւ է նաեւ այն, որ մինչ «Հնչակ»-ը խարխափում է վերացականութեան ոլորտներում, «Դրօշակ»-ը ամուր կանգնած է հայ իրականութեան հողի վրայ, մեկնում է կեանքից եւ ոչ թէ բնաղանցական տեսութիւնից։

Այսպէս գոյութիւն ունեցող քաղաքական հոսանքների գաղափարները վերլուծելուց ու մերժելուց յետոյ, «Դրօշակ»-ը ասում է եւ իր դրական խօսքը, ձեւակերպում է իր նպատակներն ու գործելակերպը։ Եւ այս նպատակով, 1894 թ. Օգոստոս եւ Սեպտեմբեր (թիւ 10 եւ 11) համարներում, առաջնորդողի փոխարէն «Մեր ծրագիրը» վերնագրով հրատարակում է Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը՝ կազմուած 1892 թ. ամառը, Ընդհանուր Ժողովում։

Այդ ծրագրի ներածական մասը գրել էր, Ընդհ. Ժողովից յետոյ, Ռոստոմը, եւ առանց Ընդհ. Ժողովի քննութեան բովից անցնելու՝ կցուել էր ծրագրին՝ յաջորդ՝ երկրորդ Ընդհ. Ժողովից վաւերացնելու պայմանով։

Ծրագրի հրատարակութեամբ լրանում է «Դրօշակ»-ի սկզբունքային-գաղափարաբանական պարզաբանութիւնների աշխատանքը։ Ծրագրում յստակ կերպով ներկայացուած էին բոլոր այն սկզբունքները, որոնց վրայ հաստատւում էին Հ. Յ. Դաշնակցութեան ընկերային փիլիսոփայութիւնը, քաղաքական ու տնտեսական պահանջները եւ կազմակերպական ձեւի ու գործելակերպի հիմքերը։ Մի քանի խօսք էլ պէտք է ասել Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպական դրութեան մասին։

Ինչպէս յայտնի է, Հիմնադիր Ժողովներում որդեգրուել էր կենտրոնացման սկզբունքը։ Մեղ յայտնի չէ, թէ այդ Ժողովներում ինչ մտքեր են արծարծուել հիմնուելիք կուսակցութեան կազմակերպական ձեւի մասին, բայց կարելի է ենթադրել, որ այդ հարցի շուրջ էլ սուր վէճեր են տեղի ունեցել։ Ս. Զաւարեանը, օրինակ, որ Ժողովներում մեծ դեր է կատարել, համոզուած չատագով էր ապակենտրոնացման։

Կենտրոնական վարչութեան երկու տարուայ փորձը գործնական կերպով ցոյց տուեց, որ կենտրոնացումը նպատակայարմար չէ մեր իրականութեան համար։ Եւ 1892 թ. Ապրիլին, Յոնան Դաւթեանը, Տիգրան Օքոնեանը եւ ուրիշներ, մի թռուցիկով Ընդհ. Ժողովի պահանջը ներկայացնելով, առանձնապէս կանգ են առնում ապակենտրոնացման սկզբունքը իւրացնելու անհրաժեշտութեան վրայ։ Յայտնի է, որ առաջին Ընդհանուր Ժողովում

Զաւարեանը եւ Ց. Դաւթեանը բուռն կերպով պաշտպանել են այդ սկզբունքը, եւ Ընդհ. Ժողովի ընդունած կազմակերպական կանոնները, դլխաւորապէս, նրանց մտքի պտուղն են։ Հ. Ց. Դ. Կենտր. Դիւանում պահուած հաստատուն տեղեկութիւններից երեւում է, որ Զաւարեանը մեծ ջանք է թափել Հ. Ց. Դաշնակցութեան կազմակերպութիւնը տպակենտրոնացման դրութեան վրայ հաստատելու համար։

Աւելացնենք նաեւ, որ թէ՛ տպակենտրոնացման սկզբունքը եւ թէ կուսակցութեան Դաշնակցութիւն անունը քաղաքական նշանակութեամբ չեն առնուած, այլ զուտ կազմակերպական իմաստով։ Դաշնակցութիւն անունը խորհրդանշում էր գոյութիւն ունեցող յեղափոխական խմբերի միութիւն։ Բայց քաղաքական առումով էլ դաշնակցութիւնը— (ֆէդէրացիա) — խորթ չէր կուսակցութեան հիմնադիրներին։ Թրքահայաստանի ինքնավարութեան պահանջը, տաղմնային վիճակում, իրօք, դաշնակցային սկզբունքից էր բխում։ Ստիճանաբար այդ ուղղութեամբ էլ զարգացաւ Դաշնակցութեան քաղաքական մտածողութիւնը՝ յանդելով Օսմանեան պետութեան եւ Ռուսաստանի դաշնակցային կազմակերպութեան պահանջին։ Եւ վերջը՝ անկախութեան։

Այս ամենի վրայ եթէ աւելացնենք եւ անդրանիկ ծրագիրը, դրանով կը լրանայ Հ. Ց. Դաշնակցութեան առաջին շրջանի դաղափարական բիւրեղացումը։ Դաշնակցութիւնը այլեւս աշխարհահայեացքով, ընկերային–քաղաքական սկզբունքներով, կազմակերպական ձեւով ու գործելակերպով յստակ կերպով ձեւաւորուած, ինքնուրոյն եւ որոշ դիմագծի տէր կուսակցութիւն էր, որ հաստատուն քայլերով մուտք էր գործում հայ կեանքի ասպարէզը՝ իրեն վերապահուած պատմական մեծ առաքելութիւնը կատարելու վճռական կամքով։

Հ. Յ. Դ. ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

(ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 60–ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

Գրեց՝ Վ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

I

ՄԻ ՔԱՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Քաղաքական կուսակցութիւնները սովորաբար աշխարհ են գալիս՝ կանխապէս մշակելով ու հրապարակելով իրենց Ծրագիրն ու Կանոնագիրը եւ ապա, ըստ այս զոյգ կռուանների, ստեղծելով իրենց Կազմակերպութիւնը։

Հիմնովին տարբեր ձեւով աշխարհ եկաւ Հ. Դ. Դաշնակցութիւնը։

Դաշնակցութիւն *չկար տակաւին, երբ* Դաշնակցականներ *կային արդէն։*

Ծրագիր *ու* Կանոնագիր *չունէինք տակաւին, մինչ* Կուսակցութիւն *կար արդէն եւ իր* Կազմը *գործում էր թէ՛ հայրենի երկրում եւ թէ նրանից դուրս։*

Որոշակի անուն *չունէինք, մինչ պաշտօնական* օրգան *էինք հրատարակում եւ ամէնքը ճանաչում էին մեզ։*

Այսպէս էր Դաշնակցութեան բովանդակ կեանքը. իր ծնունդը, անունը, դաւանանքը, կազմակերպական ուրոյն ձեւը, դրօշը, կնիքը, զինանշանը, օրդանը, Դերազոյն Ժողովներն ու Վարիչ Մարմինները,— այս ամէնը լի են ուշագրաւ եւ անիմանալի պատմութիւններով։

Ստոյգ է միայն մէկ բան։

Դաշնակցութիւնը ԳՈՐԾԻՑ ծնաւ, ձեւաւորուեց ԳՈՐԾԻ մէջ եւ եղաւ ու մնաց գերազանցաբար ԳՈՐԾԻ Կուսակցութիւն:

Իր ինքնատպութիւնն ու ազգային նկարագիրը ամենէն առաջ արտայայտուեց ա՛յս կէտի մէջ:

Ռուս յեղափոխական աշխարհը, որի հզօր կնիքը կայ Դաշնակցութեան վրայ, մոլեռանդ սիրահարը մնաց խօսքի, մինչ Դաշնակցութիւնը՝ Գործի:

Երկու յուշ միայն՝ այս կարեւորագոյն պարագան առանձնաբար ընդգծած լինելու համար:

«Ժընեւ էի, ռուս յեղափոխականների մի ժողովում»,— ասաւ մի օր աննման Վարպետը մեր Կուսակցութեան՝ Ռոստոմը՝ իր իմաստուն եւ հեգնախառն ժպիտը դէմքին. «վէճ կար այն մասին, թէ ահաբեկում պէ՞տք է կատարել թէ ոչ. վիճեցին մինչեւ ուշ գիշեր. ես լուռ էի. երբ ժողովը փակուեց՝ երիտասարդներից մի քանի հոգի ինձ միացան՝ մինչեւ տուն ինձ ուղեկցելու համար. սրանք նոյն կրքոտ վէճը շարունակեցին նաեւ ճանապարհին, մինչեւ իմ տունը. ես դարձեալ լուռ էի. երբ մեր տան դուռը հասանք, սրանցից մէկը, որ նոր նշմարած էր իմ լռութիւնը, յանկարծ դարձաւ ու ասաւ.

«— Ընկ. Ռոստոմ, դուք լուռ մնացիք ամբողջ ժամանակ, մենք ձեզ չլսեցինք. հետաքրքրական է դիտնալ նաեւ ձե՛ր կարծիքը. պատմա-փիլիսոփայօրէն ու քաղաքականապէս ահաբեկումը ձեզ համար անգառնալիօրէն ճշտուած սկզբո՞ւնք է արդեօք»:

«Այս հարցնողը,— նկատեց Ռոստոմը,— ճանաչում էր մեզ եւ մեծ կարծիք ունէր Դաշնակցութեան մասին: Ես դարձայ եւ ասի.— «Եթէ Դաշնակցութիւնը այդքան խօսի՝ նա գործ չի կատարի»: Եւ ընդհանուր ծիծաղի մէջ մենք բաժանուեցինք իրարից»:

Միւս յուշը դարձեալ կապուած է իր անուան:

Որքան յիշում եմ՝ 1907-ին էր. մի քանի օրով հիւր էր Բագուում՝ այնտեղից Վիեննա՝ Ընդհ. ժողովին մեկնելու համար: Օգտուելով առիթից՝ ընկերները խնդրեցին, որ մեր անղուգական մարտավարը մի զրոյց ունենայ մեզ հետ Դաշնակցութեան գործելակերպի մասին: Հաւաքոյթը տեղի ունեցաւ Բագուի ծանօթ ընկերներից բժ. Գր. Սաղեանի բնակարանում: Ռոստոմը, միշտ նոյն հեգնախառն եւ իմաստուն ժպիտը դէմքին, իր զրոյցը բացաւ հետեւեալ նախադասութեամբ.

— «Այնքան շատ գործով տարուեցինք, որ խօսելն իսկ մոռացանք»:

Այս երկու դէպքը պատմեցինք լոկ ասելու համար, որ դիւ-

բին չէ գծել ծնունդն ու կեանքը Դաշնակցութեան որդեգրած գաղափարաբանութեան։

Այս դժուարին ու երախտաշատ գործը կը կատարեն հետագային՝ աւելի խաղաղ պայմանների մէջ եւ շատ աւելի հմուտ ու ձեռնհաս գրիչներ։

Մերը — կարճ խօսք է միայն, Դաշնակցութեան 60-ամեակի առիթով։

Դաշնակցութեան գաղափարաբանութեան պատկերը կարելի է գծել՝ հիմ առնելով հետեւեալ աղբիւրները.

1.— Դաշնակցութեան դաւանագրերը.

2.— Իր «Կանոն»ները.

3.— Ընդհանուր, Ռայոնական ժողովների եւ խորհուրդների «Որոշումներ»ը.

4.— Դաշնակցութեան գործերը.

5.— Իր մամուլը.

6.— Գրականութիւնը.

7.— Իր դէմքերը՝ վարիչ թէ խոնարհ.

8.— Սրանցից աւանդ մնացած յուշերը։

9.— Օտար յեղափոխական ուժերի ազդեցութիւնը՝ խօսքով թէ գործով։

Միայն այս աղբիւրները լրիւ *սպառելով՝ կարելի կը լինի, ինչպէս ասացինք, գծել ամբողջական պատկերը Դաշնակցութեան գաղափարաբանութեան։*

Սպառելով լրիւ, *բայց ոչ* անջատաբար։

Որովհետեւ բոլոր *աղբիւրների* զուգահեռ *ուսումնասիրութեամբ միայն, այդ աղբիւրները տեւաբար բաղդատելով, ստուգելով ու լրացնելով, թերեւս կարելի դառնայ ճշմարտութեան հասնել։*

Առնենք մեր անդրանիկ դաւանագիրը, որ ծանօթ է «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութեան Ծրագիր» *անուան տակ։*

Արեւելեան բարբառով հրատարակուած այս Ծրագրի Ա. էջի վրայ հետեւեալ յաւելուածական մատնանշումները կան,— Թիւ 5, ՎԻԵՆՆԱ, Հ. Յ. Դաշնակցութեան ազատ տպարան, 1894 (*էջի վրայ «արեւելեան բարբառ»ի մասին խօսք չկայ*)։

Արեւմտեան բարբառով հրատարակուած նոյն Ծրագրի Ա. էջի վրայ կան հետեւեալ մատնանշումները,— Թիւ 8, (արեւմտեան

բարբառով), ՎԻԵՆՆԱ, Հ. Ց. Դաշնակցութեան ազատ տպարան*):

Իսկանը այստեղ վայրը չէ. գիտենք, որ Ծրագիրը Վիեննա տպուած չէ, ուր մենք որեւէ տպարան չունէինք:

Կարեւորը հետեւեալն է:

«Արեւմտեան բարբառով» հրատարակուածի վրայ գրուած է՝ թիւ 8, մինչ «արեւելեան»ով հրատարակուածի վրայ՝ թիւ 5: Այս նշանակում է, որ «արեւելեան»ը իր հրատարակութեամբ նախորդած է «արեւմտեան»ին: Արդ, ինչո՞ւ «արեւելեան»ի վրայ թուական կայ՝ 1894, մինչ «արեւմտեան»ի վրայ՝ չկայ: Այս հարցումը դառնում է չափազանց էական, երբ նկատի առնենք Ծրագրի («արեւմտեան») Ա. էջի վրայ տպուած նորաստեղծ կուսակցութեան լրիւ անունը,— «Հայ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութիւն»: 1894-ին որտեղի՞ց եկաւ «ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ» բառը, երբ այդ թուականին մենք ոչ թէ «ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութիւն» էինք, այլ «ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ Դաշնակցութիւն»:

Մի քիչ կանգ առնենք այս «մանրամասնութեան» վրայ:

Ինչպէս ասացինք, «Դաշնակցական»ները (հայ յեղափոխականները) կային՝ տակաւին Դաշնակցութիւնը չծնած: Այս յեղափոխական խմբերն ու միութիւնները իրենց Սահմանադիր ժողովը գումարեցին Թիֆլիս, 1890-ի ամրան: Իր անդրանիկ «Մանիֆեստ»-թռուցիկով (լոյս տեսած հաւանաբար 1890-ի Սեպտ.-ին) նորաստեղծ կազմակերպութիւնը յայտարարում էր.

«Հայ ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ Դաշնակցութիւնը, թէեւ նոր է հանդէս գալիս իբրեւ կազմակերպութիւն, բայց նա վաղուց գործող խմբերի միութիւնն է, խմբերի, որոնք նոյնիսկ հայ ժողովուրդի ձգտումների ծնունդ են: Դաշնակցութիւնը ձգտելու է միացնել բոլոր ուժերը, կապելով իր հետ բոլոր կենտրոնները՝ ընդունակ դնելով Թուրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը»:

---

*) Արեւմտեան» բարբառով հրատարակուած Ծրագրի վերջին էջի վրայ կայ այս 8 հրատարակութեանց ցանկը, մինչ «արեւելեան»ի վրայ՝ չկայ. առ ի հետաքրքրութիւն տանք այդ ցանկը,— 1) Ապստամբական Ոգի, 2) Յեղափոխական կեանքից, 3) Գաղտնի Տպարան, 4) Գիտական Սոցիալիզմ (Ֆր. Էնգելս), 5) Հայ Յեղ. Դաշնակցութեան Ծրագիր («Յեղ.»ը այստեղ... սրդուած է.— Վ. Ն.), 6) Կուկունեանի խմբի Արշաւանքը, 7) Կարնոյ Ցիշատակին (կոտորածից առաջ, Կարնոյ կոտորածը, Յովհաննէս Կորկոտեան եւ Զինագործ քահանայ), 8) Հայ Յեղ. Դաշնակցութեան Ծրագիր, արեւմտեան բարբառով («Յեղ.»ը... նորէն սղուած.— Վ. Ն.):

Այս «Մանիֆեստ»ից շուրջ 8–9 ամիս յետոյ՝ 1891–ի Մայիսին՝ լոյս տեսաւ նորածին Կազմակերպութեան պաշտօնական օրգանը՝ «Դրօշակ»ը, որի Ա. էջի վրայ, ճիշտ անուան տակը, հետեւեալը կայ,— «Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿ. Դաշնակցութեան» Օրգան:

«Յեղափոխակ.» բառ չկայ. ՍՂԱԿԷՏՈՎ յապաւուած են բուն բառի — Յեղափոխականների — վերջին երեք վանկերը:

Այսպէս շարունակուեց մինչեւ «Դրօշակ»ի 1897 Յունուար 5–ի թիւը. միայն այդ թուականից այս կողմ, 1897 Փետրուարից սկսելով, խորհրդաւոր սղակէտը չկայ. այդ «աննշան» կէտի վերացումով մենք աննկատ դարձանք... «Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութիւն»:

Եւ այսպէս — ոչ միայն «Դրօշակ»–ի մէջ:

Տարիներ շարունակ, տարբեր վայրերում ու տարբեր ժողովների մէջ (առէք 1896–ի Կովկասեան Ռայոնական ժողովը), մենք յամառում ենք յորջորջուել «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»:

Ու երբ այս է ստոյգ իրողութիւնը, այլեւս ի՞նչպէս ըմբռնել իրրեւ թէ 1894–ին տպագրութեամբ լոյս տեսած Ծրագրի Ա. էջի վրայ եղած «ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ» բառը (առանց որեւէ սղակէտի ու յապաւումի):

Կայ շատ աւելի ուշագրաւը:

Մեր անդրանիկ Ծրագիրը 21 էջ ունի «արեւելահայերէն»ով. Ծրագրին անծանօթ են շատ ուշ գործածութեան դրուած «առաւելագոյն» (maximum) եւ «նուազագոյն» (minimum) բառերը. անծանօթ են Ծրագրին նաեւ «ընդհանուր տեսութիւն», «ներածութիւն» եւ այլ այս կարգի բառերը, որոնք նոյնպէս ընտանի դարձան մեզ շատ ուշ թուականի:

Յարդ մեր գիտցածն ու մեր ունեցած տեղեկութիւնները մեր անդրանիկ Ծրագրի մասին մեզ իրաւունք են տալիս — անշուշտ զգուշութեամբ ու վերապահանքներով — վկայելու հետեւեալը.

1.— Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան Սահմանադիր ժողովը գումարուեց Թիֆլիս, 1890–ին:

2.— Նորաստեղծ Կազմակերպութեան անդրանիկ Ընդհանուր ժողովը (առանց «Սահմանադիր»ը նկատի առնելու) տեղի ունեցաւ նոյն քաղաքում, 1892–ին:

3.— Իր անդրանիկ Ծրագիրը տպագրութեամբ լոյս տեսաւ 1894–ին (ինչպէս ասացինք... Վիեննա, ազատ տպարան):

Սակայն, 1894–ին լոյս տեսածը՝ 1892–ի ժողովից ընդունուած Ծրագիրը չէ. աւելի որոշ՝ այն չէ՛՝ իր ամբողջութեանը մէջ:

Տարաբախտաբար, գրաւոր ու ատենագրական ո՛չ մէկ հետք ո՛չ մեր Սահմանադիրից եւ ոչ էլ անդրանիկ Ընդհանուր ժողովից:

Բարեբախտ դիպուածով Հ. Ց. Դ. Մայր Դիւանում (թ. 1598 թղթածրարի մէջ) մնացած են երեք օրինակ (երկուսը՝ խմորատիպ, իսկ մէկը՝ ձեռագիր ընդօրինակութիւն) այն սեղմ Ծրագրից, որ ընդունած է 1892-ի Ընդհանուր ժողովը եւ որ հետագային, աննշան փոփոխութիւններով, մաս կազմած է մեր բուն — եւ աւելի ընդարձակ — Ծրագրին (1894-ի):

Իր ժլատ յուշերի մէջ Ռոստոմը պատմում է, որ 1892-ի ժողովը «ունէր խորհրդակցական բնաւորութիւն, առաւել՝ մտքերի փոխանակութիւն. այդ պատճառով բոլոր այն հարցերը, որ դրուում էին, ենթարկուում էին վիճաբանութեան մինչեւ այն ժամանակ, երբ բոլորն էլ համաձայնուում էին հարցի այս կամ այն վերջնական ձեւակերպման վրայ. Ո՛Չ ՄԻ ՀԱՐՑ ՉԻ ԵՆԹԱՐԿՈՒԵԼ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ (ընդգծուած՝ Ռոստոմից.— Ն.). բոլորը ընդունուել են միաձայն հաւանութեամբ»*):

Այս ժողովն է ահա, որ «մտքերի փոխանակութեան» կարգով, բայց եւ միաձայնաբար համաձայնութեան գալով բոլոր հարցերի շուրջ, ընդունած է մեր Մայր Դիւանի թ. 1598 թղթածրարում պահուած խմորատիպ Ծրագիրը:

Սակայն, այս խմորատիպը մեր ամբողջական Ծրագիրը չէ. նա 1894-ի տպագիր Ծրագրի արեւմտահայ հրատարակութեան մէջ բռնում է 17–24 էջերը, իսկ արեւելահայ հրատարակութեան մէջ՝ 15–21 էջերը:

Եւ մեր բուն Ծրագիրն էլ ճիշտ այս վեց ու կէս էջերն են. Ծրագրի սկզբնական մասը, որին պիտի անդրադառնանք աւելի ուշ, տարբեր ձեւով մտած է մեր գաւառագրի մէջ:

Այս 6½ էջերը ստորաբաժանուած են հետեւեալ դլուխների տակ,— «ՆՊԱՏԱԿ», «ՄԻՋՈՑՆԵՐ» եւ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ»:

Քիչ վերն ասացինք, որ, «յեղափոխական» բառի կապակցութեամբ շատ աւելի ուշադրաւը կայ մեր այս Ծրագրի մէջ:

Ահա այդ ուշադրաւը:

Մեր բուն Ծրագրի մէջ, այն 6½ էջերի վրայ, որոնց մասին խօսեցինք, ուր անգամ յիշատակուած է Դաշնակցութեան անունը (մինչ Ծրագրի ներածական բաժնի մէջ, սկզբնական 15 էջերի վրայ, յիշատակուած չէ ոչ իսկ մէկ անգամ):

«Արեւելահայերէն»ով հրատարակուած Ծրագրի մէջ, որի Ա. էջի վրայ թուական կայ—1894—այդ ուր անդամից երկուսը յիշատակուած է հետեւեալ ձեւով,— «Հ. Ց. Դաշնակցութիւն», միւս

---

*) ՌՈՍՏՈՄ — «Առաջին քայլերը», «Դիւան Հ. Ց. Դաշնակցութեան», հ. Ա., 1934, Պոսթըն, էջ 91:

վեցը՝ իրենց մէջ «Հ. Ց.» գրերը չունեն, այդ վէցի մէջ կայ միայն անունը՝ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»։

Այդպէս չէ «արեւմտահայերէն»ով հրատարակուած Ծրագրի մէջ, որի Ա. էջի վրայ թուական չկայ։

Այս վերջին Ծրագրում ուր անգամից վեցի մէջ, նմանողութեամբ «արեւելահայերէն»ի, կայ միայն անունը՝ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»։

Հիմնական տարբերութիւնը միւս երկսի մէջ է։

Այդտեղ, փոխանակ «Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» (ինչպէս որ «արեւելահայերէն»ի մէջ է), գրուած է — «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» (մէկ անգամ՝ «ՆՊԱՏԱԿ», իսկ մէկ անգամ էլ՝ «ՄԻՋՈՑՆԵՐ» գլուխների տակ)։

Ասացինք, որ «արեւելահայերէն»ով լոյս ընծայուած մեր Ծրագիրը «Դրօշակ»ի թուով 5-րդ հրատարակութիւնն է, մինչ «արեւմտահայերէն»ով լոյս ընծայուածը՝ թուով 8-րդ։

Այլ խօսքով՝ երկրորդը յաջորդած է առաջինին՝ պարզապէս նրա ընդօրինակութիւնը լինելով։

Արդ՝ 1894-ին մենք տակաւին « Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութիւն» չէինք. այդ թուականին մենք կա՛մ «Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ Դաշնակցութիւն» էինք եւ կամ «Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿ. Դաշնակցութիւն». ուստի եւ այդ թուականին «արեւելահայերէն»ով լոյս ընծայուած Ծրագրի մէջ մենք եղած ենք «Հ. Ց. Դաշնակցութիւն». «Ց.» գրից յետոյ գալիքը մնում է անորոշ։

Երբ այս է իրողութիւնը, «արեւմտահայերէն»ով լոյս ընծայուած Ծրագրի մէջ ի՞նչպէս կարող է «Ց.» գիրը բացուել եւ դառնալ... «ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ»։

Ո՞րտեղից եկաւ այս էական բառը, երբ նա մեր անդրանիկ Ծրագրում բացակայում է խպառ։

Պարզ չէ՞ միթէ, որ հետագայ գրչի վերախմբագրման արդասիք է այս փոփոխութիւնը։

Այսքան երկարօրէն կանգ առինք այս մէկ դէպքի վրայ — մինչ այս կարգի առեղծուածներով լի է մեր պատմութիւնը — միայն ցոյց տալու համար այն դժուարութիւնները, որ կապուած են մեր դաղափարաբանութեան լուսաբանումի հարցին։

Ահա մեր դաւանանքին կապուած մէկ ուրիշ կէտ եւս, որի կշիռը բառին ճշմարիտ առումով բացառիկ է։

Մեր Ծրագրի «խմորատիպ»ը չունի Ծրագրին կցուած այն ընդարձակ ներածական բաժինը, որ ունի մեր տպագիր Ծրագիրը։ «Արեւելահայ» հրատարակութեան մէջ այս բաժինը բռնում է Ծրագրի 1-15-րդ էջերը, իսկ «արեւմտահայ» հրատարակութեան մէջ՝ 3-17-րդ էջերը։

Ստուգապէս նշտուած է, որ այս բաժինը — արտակարգօրէն

էական մեր գաղափարաբանութեան համար — մտած է մեր Ծրագրի մէջ, առանց կանխապէս Ընդհ. Ժողովից քննուած եւ վաւերացուած լինելու:

*Այս բաժնի կազմութիւնը Ընդհ. Ժողովը յանձնարարած է մի Յանձնախմբի, որին անդամակցում էին Սիմոնը, Քրիստափորը եւ Ռոստոմը, սակայն բուն կազմողը իրականին մէջ եղած է Ռոստոմը**):

Ծրագրի վերջում կան հետեւեալ ուշագրաւ տողերը.

«Ներկայացնելով ներկայ Ծրագիրը, մենք ուրախութեամբ կ'ընդունենք դրա վերաբերեալ բոլոր նկատողութիւններն ապագայ Ընդհանուր Ժողովին ներկայացնելու համար»:

Այս Ժողովը, ինչպէս յայտնի է, գումարուեց Թիֆլիսում, 1898-*ին*:

Դաշնակցութեան Երկրորդ *Ընդհ. Ժողովը պիտի կատարէր վերաքննութիւնը մի Ծրագրի, որ իր ամբողջութեան մէջ քննուած եւ ընդունուած չէր իր* Առաջին *Ընդհ. Ժողովում...*

Սեղմ տողերի մէջ վերակրկնենք այն, ինչ որ ասացինք մինչեւ հիմա.

1.— Մինչեւ 1890-ը հայ կեանքում անջատաբար գործում էին զանազան յեղափոխական խմբակներ եւ միութիւններ:

2.— 1890-ին այս անջատ խմբերը հրաւիրեցին իրենց Սահմանադիր Ժողովը եւ այնտեղ հիմնադրեցին «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»ը:

3.— Այս «Դաշնակցութիւն»ը 1892-ին գումարեց իր Առաջին Ընդհ. Ժողովը, ուր «մտքերի փոխանակութեան» կարգով ընդունուեցին հետագային հրատարակուած Ծրագրի միայն վերջին 6½ էջերը:

4.— Ծրագրի ներածական բաժինը, որին անտեղեակ մնաց Ընդհանուր Ժողովը, հետագային կազմեց մի Յանձնախումբ, որին անդամակցում էին Սիմոնը, Քրիստափորն ու Ռոստոմը:

5.— Այս Ծրագիրը իր ամբողջութեանը մէջ «արեւելահայ» լեզուով հրատարակուեց միայն 1894-ին:

6.— Միայն 1898-ին, Դաշնակցութեան կազմութիւնից ութ տարի յետոյ, մեր Երկրորդ Ընդհ. Ժողովում, պաշտօնապէս վաւերացուեց մեր Ծրագիրը:

Այս շրջանին, աննկատ եւ անաղմուկ, մենք մեր անունով ու մեր էութեամբ անցանք հետեւեալ երեք գլխաւոր հանգրուաններից.

---

*) Այս մասին մանրամասները տե՛ս *մեր* յօդուածում — «*Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ*» («Հայրենիք», 1924, Փետր., էջ 77–86):

1.— Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ Դաշնակցութիւն.
2.— Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿ. Դաշնակցութիւն.
3.— Հայ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ Դաշնակցութիւն:

Ինչ որ գծեցինք, բուն պատկերն է Դաշնակցութեան, որին հետաքրքրում էր առաւելաբար գործը, *բայց երբեք* խօսքը:

Հայրենի երկրի կարիքներից ու կենդանի գործից իր ծագումն առնելով՝ այդ կարիքների բաւարարման ճանապարհին Դաշնակցութիւնը, աստիճան առ աստիճան, բիւրեղանում ու ձեւաւորւում էր.

«Երկարամեայ դառն փորձառութեամբ զինուած,— 1892-ի *ժողովի առիթով նկատում էր Ռոստոմը*,— ժողովի անդամներն անողոք քննադատութեան ենթարկելով անցեալի գործունէութեան ձեւը եւ ուղղութիւնը, կենսական փորձերի հիման վրայ գծեցին այն ճանապարհը, որի վրայ այժմ կանգնած է Դաշնակցութիւնը»*):

Այս «կենսական փորձ»երը հիմ առնելով՝ Ռոստոմը իր նոյն գրութեանը մէջ, որ, ըստ «Դիւան»ի, գրուած պիտի լինի «1890-ական թուականների կէսերին, Հ. Յ. Դ. Առաջին (1892) *եւ Երկրորդ* (1898) *Ընդհ. ժողովների արանքում»***), նկատում է.*

«... Յեղափոխութիւնը կանգ չի առնի ոչ մի խորտակիչ ուժի առաջ, քանի գոյութիւն ունեն կեանքի տանջանքները,— նա միայն կը փոխի իր ՁԵՒԸ, յարմարուելով նոր պայմաններին, եւ երբեք իր ԷՈՒԹԻՒՆԸ»***):

Մեր Վարպետի մատնանշած իրողութիւնը անվիճելի դառնալով Դաշնակցութեան նկատմամբ, ի՞նչպէս բնորոշել, այնուամենայնիւ, այդ նոյն Դաշնակցութեան թէ՛ անփոփոխ դաւանանքի «էութիւն»ը եւ թէ փոփոխուող գործի «ձեւ»ը:

Օրինակ, մեր անդրանիկ Ծրագրի ներածական բաժինը, որի բուն հեղինակն է ինքը Ռոստոմը, հարապա՞տ էր արդեօք մեր Առաջին Ընդհ. ժողովի (1892-ի) *ամբողջական կազմին:*

Իր աշխարհահայեացքով եւ իր պատմա-փիլիսոփայական ըմբռնումներով 1890-ի *մարքսիստ Ռոստոմը արտայայտի՞չն էր արդեօք այն ժողովի, որի յանձնարարութեամբ գրում էր մեր անդրանիկ Ծրագրի ընդհանուր տեսութիւնը:*

«Ձեւ» եւ «էութիւն» բառերը — ընդգծուած են Ռոստոմի կողմից:

---

*) ՌՈՍՏՈՄ — «Առաջին քայլեր», «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հ. Ա., 1934, Պոսթըն, էջ 91:

**) Անդ, էջ 89:

***) Անդ, էջ 91:

Ոչ Քրիստափորի յուշերը*), ոչ Սիմոնի**), ոչ Շաթիրեանի***) եւ ոչ էլ մեր միւս յուշագրողների վկայութիւնները, ինչպէս նաեւ մեր հիմնադիրներին նուիրուած մենագրութիւնները մեզ դիւրութիւն չեն տալիս այս հարցումին դրապէս պատասխանելու։

Հաւանաբար զգալի տարբերութիւններ կային աշխարհահայեցողութեանը մէջ այն յեղափոխականների, որոնք՝ հայրենասիրաբար դաշնակցելով՝ 1890-ին հիմնադրեցին մեր Կուսակցութիւնը։

Նրանց բոլորին միացնողը հիմնական նպատակն էր — Թըրքահայաստանի ազատագրումը։ Այս նպատակի բաղդատմամբ միւս բոլոր հարցերը ստորադաս արժէք ունէին։

Այս մի քանի լուսաբանութիւնները տալուց յետոյ՝ դառնանք մեր բուն դաւանագրերին։

Թուով չորս են մեր դաւանագրերը.

1.— ԾՐԱԳԻՐ (ընդունուած 1892-ի Առաջին Ընդհ. Ժողովի կողմից եւ հրատարակուած 1894-ին)։

2.— ՆԱԽԱԳԻԾ (ընդունուած 1905-ի Հ. Յ. Դ. Խորհուրդի կողմից եւ հրատարակուած 1906-ին, ժընեւ, Հ. Յ. Դ. Արեւմըտեան Բիւրոյի կողմից)։

3.— ԾՐԱԳԻՐ (ընդունուած 1907-ի Զորրորդ Ընդհ. Ժողովի կողմից, հրատարակուած հաւանաբար 1908-ին)։

4.— «ՆՈՒԱՍԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ» (կատարուած 1919-ի աշնան Երեւանում գումարուած Իններորդ Ընդհ. Ժողովի կողմից)։

Մեր դաւանագրերի ամբողջական վերլուծումով պիտի չզբաղուենք. այս սեղմ գրութեանը մէջ թեթեւակի կանգ պիտի առնենք միայն հետեւեալ մի քանի հիմնական գաղափարների վրայ.

Ա.— ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ.
Բ.— ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ.
Գ.— ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ.
Դ.— ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ.
Ե.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ (Federation).
Զ.— ԱՆՀԱՏ ԵՒ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

---

*) Գ. Միքայէլեան — «Բեկորներ իմ յուշերից», Վաքսուն-ամեակ», հրատ. Հ. Յ. Դ. Ամեր. կեդր. Կոմ.-ի, 1950։

**) «Հայրենիք», բացառիկ թիւ (թ. 2), 1914։

***) Ն. ՀԱՆԳՈՅՑ — «Հայոց Հասարակական Շարժումների Պատմութիւնից», «Հայրենիք», 1923, Մարտ (էջ 27-38) եւ Ապ-

րիլ (էջ 50–66)· տե՛ս Մ· Շաթիրեանի «Ինքնակենսագրութիւն»ը նաեւ «Ցուս·»ի 1940 Սեպտ· 28, 30 եւ Օգոստ· 5 թուերի մէջ:

Է·— ԱԶԱՏՈՒԹԻՒՆ·

Ը·— ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԻՐԱՒԱՔԵԻ (*ապակենտրոնացում*):

Այս կէտերի հարեւանցի լուսաբանումով գէթ որոշ չափով գծուած կը լինի Դաշնակցութեան գաղափարաբանական պատկերը:

II

ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան հակառակորդները, Կուսակցութեան 60-ամեայ կեանքի ընթացքին, իր դէմ դէզերով յօդուածնե՛ր, թռուցիկնե՛ր, դրքոյկնե՛ր ու մենագրութիւննե՛ր հրապարակած են:

«Ձախ»ից քննադատողները իրենց ճիգերի գերագոյնը փորձած են ապացուցանելու համար, թէ Դաշնակցութիւնը իր անդրանիկ Ծրագրով ընկերվար չէ, իսկ իր հետագայ դաւանագրերով — «Նախագիծ»ով ու 1907-ի Ծրագրով — միայն ձախող փորձ կատարած է ընկերվար դառնալու:

«Աջ»ից քննադատողները զտարիւն ընկերվարութիւն տեսած են մեր անդրանիկ Ծրագրի մէջ եւ այդ ընկերվարութեան խորացումը՝ մեր հետագայ դաւանագրերի մէջ:

Սակայն ընդհանուր էր այն կարծիքը, մէկ թէ միւս թեւի համար, թէ սկզբնապէս՝ մեր անդրանիկ Ծրագրով՝ մենք աւելի «աջ» էինք, մինչ հետագային՝ մեր նոր դաւանագրերով՝ մենք աւելի «ձախ» դարձանք:

Արդար լինելու համար պիտի խոստովանենք, որ ընդհանուր առումով այս կարծիքը կար նաեւ Դաշնակցութեան մէջ· նաեւ մեր շարքերում շատեր այն համոզումին էին, թէ առաւելաբար «Նախագիծ»ով ու 1907-ի Ծրագրով մենք որոշակի քայլ առինք դէպի «ձախ», դէպի ընկերվարութիւնը, եւ վերջնապէս որդեգրեցինք այդ վարդապետութիւնը:

Հիմնովին սխալ:

Եթէ դաւանագրերով բնորոշել պէտք է մեզ՝ ապա մենք «ձախ» էինք ու «աջ» դարձանք եւ ոչ թէ «աջ» էինք ու «ձախ» եղանք:

Ասացինք արդէն, որ մեր անդրանիկ Ծրագրի ներածական մասը գրուած է Ռոստոմի կողմից:

Անդրադառնալով այս կէտին՝ սրանից 26 տարիներ առաջ նկատում էինք·

«... Թերեւս միայն մարքսիստ Ռոստոմին վայել էր գրել այն

կս–բոլշեւիկեան ներածութիւնը, որ ունի մեր անդրանիկ Ծրագիրը»*):

Եւ արդար էր այս դիտողութիւնը: Մեր անդրանիկ Ծրագրի ընդհանուր տեսութեան վրայ կայ անջնջելի կնիքը այն լաւատեսութեան, որ մարքսեան վարդապետութիւնը ունէր ընկերվարութեան մօտալուտ յաղթանակի մասին:

Անդրադառնալով այս կէտին՝ մեր 60–ամեայ Կուսակցութեան անդրանիկ աւետարանը, աւելի քան կէս դար առաջ, հաւատաւոր շունչով աւետում էր մեզ.

«Մենք շատ լաւ տեսնում ենք, թէ ինչպէս իշխող դասակարգերն ընկնում են աւելի եւ աւելի թէ՛ ֆիզիքապէս եւ թէ բարոյապէս, ինչպէս ԱՇԽԱՏԱՆՔԸ (*ընդգծումը՝ Ծրագրի մէջ.— Ն.*) հետզհետէ ձեռք է ձգում իր իրաւունքները, ինչպէս կեղեքուող տարրը հսկայական քայլերով մօտենում է իր վերջնական յաղթութեան: Եւ նա կը հասնի կատարեալ յաղթութեան, երբ կը վերնան ամէն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները եւ արդիւնքը կը դառնան աշխատաւորի կատարեալ սեփականութիւն, ԵՐԲ ՄԱՐԴՈՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԸ ՓՈԽԱՐԻՆԷ ԻՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ» (*ընդգծումները մեզանից.— Ն. Վ.***):

Տեսութեան եզրափակիչ տողերի մէջ անդրադառնալով «երկրի հարստութեան տէր բուրժուազիայի» *եւ* «օրուայ հացի կարօտ պրոլետարիայի» *անողոք պայքարին՝ Ծրագիրը ահազանգում էր.*

«Տնտեսական այդ չարիքի, տնտեսապէս կեղեքող դասի դէմ էլ մենք կը կռուենք այժմ: Մենք գործ կը դնենք ամէն միջոց պահպանելու գոյութիւն ունեցող համայնական սկզբունքները, մենք կ'աշխատենք տարածել համայնական սեփականատիրութիւնը, համայնական աշխատանքը, որպէսզի աւելի պատրաստ գտնուենք անցնելու այն հասարակական կազմակերպութեան, որն այսօր–էգուց կը հաստատուի տնտեսապէս աւելի զարգացած երկրներում ՊՐՈԼԵՏԱՐԻԱՅԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՄԲ» (*ընդգծումները՝ Ծրագրի մէջ.— Ն.*)***):

Այս տողերի մէջ կան, ի հարկէ, շփոթ հասկացողութիւններ ու չբիւրեղացած մտքեր, կան հետքերը այն ուսմունքի, որ ռուս անդրանիկ յեղափոխականները յօրինած էին ռուսական «համայնք»ի՝ օբշչինայի շուրջ (մի ուսմունք, որին հաղորդ էր նաեւ մեր Նալբանդեանը), սակայն ընդհանուր առումով մի՞թէ տեսանելի չէ այն գերակշիռ ազդեցութիւնը, որ ներգործած է մեր անդրա-

---

*) Տե՛ս մեր «Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ», «Հայրենիք», 1924, Փետր., էջ 78–79:

**) ԾՐԱԳԻՐ, 1894թ էջ 1–2:

***) Անդ, էջ 13–14:

բանիկ դաւանագրի վրայ մարքսեան վարդապետութիւնը իր ամենաձախ ըմբռնումով. խորհել, թէ «այսօր–էգուց պրոլետարիայի յեղափոխութեամբ» *տնտեսապէս աւելի զարգացած երկրներում* «մարդկանց կառավարութեան կը փոխարինէ իրերի կառավարութիւնը»՝ *այս նշանակում է տառը–տառին կրկնել ա՛յն, ինչ ասում էին ամենէն ձախ՝ անհող ու ցնորատես՝ մարքսիստները**):

Անուանի Ռուդոլֆ Հիլֆերդինգի մի արժէքաւոր գրութեանը դառնալով՝ ռուս ընկերվարներից (*հակաբոլշեւիկ*) *Բ. Նիկոլաեւսկիյ նկատում է.*

«Հին կնճիռը, ա՛յն, թէ Ի՛ՆՉ ՃԱՄԲԱՆԵՐ ԿԸ ՏԱՆԵՆ ԴԷՊԻ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ, անցեալին ճնճարկուած է շատ պարզունակ ձեւով. այն միտքը, թէ դրամատիրական հասարակութեան զարգացումը «բնականաւորապէս» (immanent) պիտի յանգի այդ հասարակութեան փոխարինումին ընկերվար հասարակութեամբ՝ ընդհանուր տեղիք էր կառուցումների մէջ թէ՛ ընկերվար շարժման տեսաբանների եւ թէ գործնապէս աշխատողների, առանձնաբար այսպէս կոչուած «մարքսեան» բանակում (որ հեռու էր մի՛շտ մարքսեան լինելուց ըստ էութեան)։ Ընկերվարները համոզուած էին, որ նիշտ իրենք են անվիճելի ժառանգորդները հին, դրամատիրական աշխարհի։ Զարգացման գիծը դէպի «ապագայի լուսաշող թագաւորութիւնը» մեզ բոլորիս պատկերանում էր, բառին լրիւ առումով, «ուղիղ, ինչպէս նետը», այնպէս ինչպէս հարթ ու լայն նամբան Իւան Ակսակովի մօտ։ Եւ այս ըմբռնումը նախանշտում էր մեր ռազմավարութիւնն ու մեր գործելակերպը։ Այն հին խօսքը, թէ «պատմութիւնը մեզ համար է աշխատում», իշխում էր մեր բոլորիս գիտակցութեանը վրայ։ Մենք հաստատապէս համոզուած էինք, թէ ինչ սայթաքումներ ու սխալներ էլ գործելու լինենք՝ ժառանգութիւնը մեր ձեռքերից չի խուսափի։ Չի կարող խուսափել։ Ապագան մե՛զ է պատկանում,— միայն եւ բացառաբար մեզ»**)։

Այս լաւատեսութիւնն է, ընկերվար յաղթանակի այս մարքսեան ըմբռնումը, որ լրիւ իշխում է նաեւ մեր անդրանիկ դաւանագրի ներածական բաժնում։

---

*) Մեր դաւանագրերի վերագնահատումը տե՛ս *մեր* յօդուածի մէջ՝ «*Ընկերվար վարդապետութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը*», «Հայրենիք», 1923, Յունուար (էջ 34–42) եւ Փետր. (էջ 51–62)։

**) Բ. ՆԻԿՈԼԱԵՎՍԿԻՅ — «*Ռ. Հիլֆերդինգի տեսաբանական կտակը*», «Սոցիալիստիչեսկիյ վեստնիկ», Նիւ Եորք, 3 Փետր. 1947, թիւ 1–2։

Անցողակի նկատենք, որ ընդհանուր առումով այս լաւատեսութիւնը շարունակեց իշխել դրեթէ մինչեւ մեր օրերը. ընկերվար բանակում յստակ ոչինչ կար այն մասին, թէ երբ «այսօրէգուց պրոլետարիայի յեղափոխութիւնը» լինի, ի՞նչ ձեւով «մարդկանց կառավարութեան պիտի փոխարինէ իրերի կառավարութիւնը»...

Ու թերեւս այստեղ է թագնուած ռուս — ու մեր — երկրին վիճակուած այսօրուան ողբերգութեան հիմնական պատճառը:

Հոկտեմբերեան փոթորիկների հոտը առնելով՝ 1917-*ի Օգոստ.-ին Լենինը սկսեց գրել իր ծանօթ աշխատութիւնը՝* «ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ (Մարքսեան վարդապետութիւնը պետութեան մասին եւ բանուորութեան առաջադրանքները յեղափոխութեան մէջ)»: *Ու երբ այս աշխատութեան 7-րդ գլուխը պիտի գրէր —* «1905-ի եւ 1917-ի ռուս յեղափոխութեանց փորձը» — *ճիշտ այդ օրերին սկսւում է Ռուսիոյ քաղաքական տագնապը, որ պիտի վերջանար Հոկտեմբերեան յեղաշրջումով. այս իրողութեան առջեւ իր աշխատութիւնը ընդհատելով՝ գրքոյկի «Վերջաբան»-ի մէջ* 1917 *Նոյ.* 30 *թուականով Լենինը նկատում էր.*

«Հաճելի ու օգտակար է «յեղափոխութեան փորձը» կատարել, բան նրա մասին գրել»:*)

Այս հաճելի՛ «փորձ»ը շարունակւում է մինչեւ այսօր՝ ի դէն անհամար զոհերի, անլուր տառապանքների եւ անօրինակ հալածանքների...

Բայց դառնանք մեր նիւթին:

«Նախագիծ»*ը մեզ ընկերվարութիւն չբերաւ. այդ վարդապետութեամբ լրիւ յագեցած էր մեր անդրանիկ դաւանագիրը:*

Ճիշտ հակառակը. «Նախագիծ»ը ամենէն առաջ զգալապէս մեղմեց մեր «ձախ» ըմբռնումը ընկերվարութեան մասին՝ մեզ ազատագրելով այն անհող լաւատեսութիւնից, որ մարքսեան դպրոցը կապած էր ընկերվարութեան յաղթանակին:

Երկու հակընդդէմ աշխարհների՝ «սոցիալիզմ»-ի եւ «կապիտալիզմ»-ի մասին խօսելով՝ «Նախագիծ»ը վկայում էր.

«Սոցիալիստական շարժումը իր էութեամբ ՄԻԱԶԱԳԱՑԻՆ է (*ընդգծումը՝ «Նախագիծ»-ի մէջ.— Ն.*): Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրեւ միեւնոյն կապիտալիզմի զոհեր, իբրեւ դառն նակատագրի եղբայրակիցներ, միանում են, ձեռք ձեռքի տալիս եւ, գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ յաղթանակի վրայ՝ դիմում են կազմակերպուած պայքարի ճանապարհով դէպի մի սոցիալական կազմակերպութիւն, ուր չպիտի լինեն

---

*) Վ. Ի. ԼԵՆԻՆ — «*Երկեր*», հ. 25-րդ, Մոսկուա, 1949, էջ 462:

կեղեքողներ ու կեղեքուողներ, իշխողներ ու հպատակներ, ուր արդիւնաբերութեան միջոցները, դրամագլուխը պիտի լինի ՀԱՄԱՅՆԱԿԱՆ (*ընդգծումը՝ «Նախագիծ»ի մէջ.— Ն.*), ուր աշխատանքը, քաղաքակրթութիւնը եւ նիւթական վայելքները հաւասարապէս բաժին պիտի լինեն իւրաքանչիւրին»*):

Դառնալով մեր կեանքին՝ «Նախագիծ»ը, շատ աւելի զգաստ ու չափաւոր բառերով, վկայագրում է.

«Տնտեսական անհաւասարութեան ուժի դէմ եւս Հ. Ց. Դաշնակցութիւնը, հաւատարիմ իր աւանդական ոգուն, իբրեւ էապէս ժողովրդական կուսակցութիւն, պիտի մաքառէ բոլոր պատշաճ միջոցներով: Քաղաքական եւ տնտեսական խնդիրներում՝ նա աշխատաւոր ընդհանրութեան տեսակէտի ու շահերի պաշտպան կը կանգնի եւ միաժամանակ կը դաստիարակէ նրան սոցիալիստական իդէալների ոգով, կը պատրաստէ նրան քաղաքական եւ սոցիալական մեծ պայքարի համար»**):

Այս տողերը գրուած են մեր անդրանիկ դաւանագրի հրապարակումից ընդամէնը երկու տասնամեակ վերջ...

Այս 20–22 տարիները բաւական եղան յայտնապէս զգաստ դարձնելու համար մի կուսակցութիւն, որ արդար իրաւունքով իրեն «էապէս ժողովրդական կուսակցութիւն» անունն է տալիս: Այլեւս խօսք չկայ այն մասին, որ «այսօր–էգուց պրոլետարիայի յեղափոխութեամբ... մարդկանց կառավարութիւնը պիտի փոխարինուի իրերի կառավարութեամբ». խօսքը այն մասին է, որ «ՊԱՏՇԱՃ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ» Դաշնակցութիւնը պիտի պաշտպանի աշխատաւոր ժողովրդի շահերը՝ նրան «ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՎ» ընկերվար իդէալների ոգով եւ «ՊԱՏՐԱՍՏԵԼՈՎ» նրան դալիք քաղաքական եւ ընկերային մեծ պայքարի համար...

Այստեղ չէր, սակայն, այն էական փոփոխութիւնը, որ մեզ բերաւ «Նախագիծ»ը:

1904 Յունուար 31–ին Սոֆիայում գումարուած մեր Երրորդ Ընդհ. Ժողովը իր որոշումների մէջ՝ «ԿՈՎԿԱՍ» խորագրի տակ՝ ունի հետեւեալը.

«Հ. Ց. Դաշնակցութիւնը՝ ընդունելով հանդերձ, թէ իր հիմնարկութեան նպատակը եղած է եւ այսօր ալ է Օսմանեան Հայաստանի պատմական դատը, ճանչցուած եւ վաւերացուած միջազգային դաշնագրերով, չի կրնար, սակայն, անտես ընել հայ ժողովրդի մարդկային իրաւունքների բռնաբարումի ծանր դէպքերը, որոնք վերջերս տեղի են ունեցած եւ սկսած են յանախել

---

*) «ՆԱԽԱԳԻԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ», 1906, ժընեւ, էջ 8–9:

**) Անդ, էջ 12:

Թիւրքիայէն դուրս եւս, սկզբունքով ընդունեց պաշտպանել այդ կարգի իրաւունքները, Տակտիկին վերապահելով որոշել՝ ինչ չափերով կատարել ինքնապաշտպանութեան այդ գործը:

«Ներկայիս Դաշնակցութիւնը իր վրայ առնելով Կովկասահայ տարրի ինքնապաշտպանութեան գործը, որոշեց յանձնել այդ՝ Կովկասի Պատասխանատու Մարմնին, որ՝ պահելով իր «Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէ» անունը՝ պիտի շարունակէ գործել «Դաշնակցութեան» պաշտօնական անուան տակ:

«Ժողովը Կովկասի վերաբերմամբ ընդունեց բերանացի եւ գրաւոր պրոպագանդի, տեռորի, ժողովրդական ցոյցերու եւ զինուած դիմադրութեան տակտիկը՝ մնալով պաշտպանողական հոդի վրայ»*):

Գալով զուտ տնտեսական-աշխատաւորական պայքարին՝ Ընդհ. Ժողովը որոշում էր.

«Դաշնակցական բանուորական խմբերը, այն գործարաններու սահմաններուն մէջ, ուր անոնք կ'աշխատին, կը մասնակցին բոլոր բանուորական գործադուլներուն եւ շարժումներուն՝ երբ անոնք կապուած են բանուորներու ընդհանուր վիճակին հետ այդ գործադուլներու մէջ. իսկ ինչ կը վերաբերի գործարանական կեանքէն դուրս ցոյցերուն, որոնք կրնան առաջարկուիլ ուրիշ կուսակցութիւններու կողմէն, բայց որոնց առիթներն ու նպատակը կրնան տարբեր ըլլալ, իւրաքանչիւր դէպքի համար մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը կը վճռէ Պատասխանատու Մարմինը:

«Այս ընդհանուր սահմաններու մէջ Կովկասի Պատասխանատու Մարմինը կը մշակէ իր տակտիկի մանրամասն ծրագիրը Կովկասի Շրջանական Ժողովի մէջ»**):

Երրորդ Ընդհ. Ժողովի այս որոշումը երկնքից արձակուած անակնկալ որոտ չէր:

Կեանքի երկաթեայ հարկադրանքի տակ Դաշնակցութիւնը ընդարձակում էր իր գործունէութեան սահմանները:

*Ընդհ. Ժողովից յետոյ, 1904 Դեկտ.-ին՝ Փարիզում եւ 1905ի Ապրիլին՝ Ժընեւում, Դաշնակցութիւնը մասնակցեց ռուս յեղափոխական կուսակցութեանց խորհրդաժողովներին եւ նրանց հետ կազմեց ծանօթ «ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆ»ը***):*

---

*) «ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳԸՐՈՒԹԻՒՆՆԵՐԷ», 1905, Ժընեւ, էջ 26–27:

**) Անդ, էջ 27:

***) Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ — «Յեղափոխական Դաշն», 1905, Ժընեւ:

Համատարած խռովք ու եռուզեռ էր Կովկասի մէջ։

Քաղաքական այս նոր ու հիմնովին յեղաշրջուած պայմանների մէջ է ահա, որ ընդունուեց «ՆԱԽԱԳԻԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ» անունով ծանօթ մեր երկրորդ դաւանագիրը)։*

1905 Յունիսին այս «Նախագիծ»ը հրատարակութեան տալով՝ Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրօն նրան կցած էր հետեւեալ ազդը՝ «ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ» խորագրի տակ։

Այդ ազդարարութեան բացառիկ արժէքը նկատի առնելով մեր դաւանագրերի զարգացման պատմութեանը մէջ՝ տանք այն ամբողջութեամբ.

«Հ. Յ. Դաշնակցութեան Գ.րդ Ընդհ. Ժողովը՝ կայացած 1904-ի սկզբին, ընդունելով մեր Կազմակերպութեան մասնակցութեան անհրաժեշտութիւնը Կովկասեան յեղափոխական կռուի մէջ, որոշեց այդ վարել առայժմ ինքնապաշտպանութեան հողի վրայ։

«Ներկայ 1905 թ. դումարուած Հ. Յ. Դ. Խորհուրդը, նկատելով՝

«1.— Որ վերջին Ընդհանուր Ժողովից յետոյ Ռուսաստանի եւ մասնաւորապէս Կովկասի յեղափոխական շարժումները ստացել են անսպասելի լայն ծաւալ.

«2.— Որ բռնապետութիւնը արտաքին թշնամու եւ յեղափոխական ու ընդդիմադիր տարրերի հարուածների տակ զգալապէս թուլացել է.

«3.— Որ համայն Ռուսաստանի քաղաքական փոփոխութիւնների սկզբում Կովկասը պէտք է բարձրացնէ իր ձայնը.

«4.— Որ ներկայ պատմական բոպէի ստիպողականութիւնը թոյլ չէ տալիս սպասել նոր Ընդհ. Ժողովին՝ Կովկասեան գործունէութեան ծրագիրը մշակելու եւ հաստատելու համար.

«5.— Որ, բացի այդ, Կովկասեան գործունէութեան որոշակի ծրագիրը անհրաժեշտ է կռուի ներկայ պայմաններում, համաձայնութեան գալու համար միւս գործող կուսակցութիւնների հետ.

«Որոշեց՝

«Կովկասեան շարժման հարցում ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ շրջանից անցնել բուն ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ (*ընդգծումները՝ բնագրի մէջ.— Ն.*) գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական Ժողովում արտայայտուած տրամադրու-

---

*) Որքան մենք գիտենք, Հ. Յ. Դ. Խորհուրդի կողմից «*Նախագիծ*»ը ընդունուած է մէկ ձայնի առաւելութեամբ եւ այդ ձայնը պատկանում էր ... բանաստեղծ Յովհ. Թումանեանին։

թեան*), ուղարկել կովկասեան դաշնակցական մարմիններին, ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հաստատումը յառաջիկայ Ընդհանուր Ժողովին:

*«Հրատարակելով ներկայ Նախագիծը, առաջարկում ենք դաշնակցական մարմիններին եւ ընկերներին ուղարկել մեզ իրենց դիտողութիւնները, որպէսզի Ընդհանուր Ժողովը՝ վերջնական վաւերացում տալու համար, ունենայ իր ձեռքի տակ բոլոր տեսակէտների արտայայտութիւնը»**):*

Դժուար չէ նշել այն փոփոխութիւնները, որ «Նախագիծ»ը՝ իբրեւ նոր դաւանագիր՝ բերում էր մեր Կուսակցութեան:

Այդ փոփոխութիւնները մենք պիտի սեղմէինք հետեւեալ կէտերի մէջ.

1.— «Նախագիծ»ը չափաւորում էր այն «ձախ» ըմբռնումը, որ մենք ունէինք ընկերվարութեան մասին:

2.— Չափաւորելով մէկտեղ՝ նա մեզ լծում էր տնտեսական-աշխատաւորական պայքարի ռուսապատկան Հայաստանի մէջ, երբ մենք մինչ այդ միայն քաղաքական պայքար ունէինք թրքապատկան Հայաստանի մէջ:

3.— Քանակապէս ու երկրօրէն մեր գործունէութեան սահմանները ընդարձակելով՝ որակապէս մեզ դարձնում էր մէ՛կ Դատի, մէ՛կ ու ամբողջական ժողովրդի եւ մէ՛կ ու միացեալ Հայրենիքի պաշտպան:

Տարիներ առաջ այս նոյն հարցին դառնալով՝ նկատում էինք.

«1905ի Կովկասեան «Նախագիծ»ը ոչ միայն ընդարձակեց հայ մեծ քաղաքական կազմակերպութեան գործունէութեան գետինը, այդ թուից սկսած Դաշնակցութիւնը ոչ միայն փոխուեց, մեծացաւ ու ծաւալուեց ՔԱՆԱԿՈՎ՝ իր գործի շրջանակների մէջ առնելով նաեւ ռուսական ՀԱՅԱՍՏԱՆԸ, այլեւ փոխուեց ՈՐԱԿՈՎ: ԹՐՔԱՀԱՅ դատը փոխարինուեց ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ դատով, իսկ համահայկական դատը Կովկասի մէջ Է՛լ աւելի շերտաւորուեց եւ դարձաւ հայ աշխատաւոր ժողովրդի դատ: Այսպիսով, թերեւս անկատ իրեն իսկ՝ Դաշնակցութեան համար, նրա պայքարի գերադաս քաղաքական շեշտը կորցրեց իր վաղեմի փայլն ու թափը:

---

*) Այս ժողովի ատենագրութիւնները մեր տրամադրութեան տակ, տարաբախտաբար, չունենք:

**) «ՆԱԽԱԳԻԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ», 2-րդ տպագր., 1906, ժընեւ, էջ 2:

«Տարիներն ի զուր չէին անցել Դաշնակցութեան առաջաւոր դէմքերի համար: Անդրանիկ համագումարից մինչեւ «ՆԱԽԱԳԻԾ»ը տեւող շրջանին ընդարձակուել էին Դաշնակցութեան քաղաքական մտքի հորիզոնները, թրքահայութեան փոխարէն նրա մըտածողութեան մէջ ցցուել էր ողջ հայութիւնը, իսկ Թրքահայաստանի փոխարէն՝ ամբողջական Հայաստանը: Նա դարձել էր ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ կուսակցութիւն: Նրա համար այլեւս ռուսահայ նահանգներն էլ Հայաստանի հողեր էին: Ծաւալւում էր Դաշնակցութիւնը՝ անկատելիօրէն դարբնելով հայ հողի եւ հայ ժողովրդի ամբողջականութեան գաղափարը»*):

Իր անդրանիկ դաւանագրի մէջ կատարուած այս փոփոխութիւններով Դաշնակցութիւնը ներկայացաւ իր Գերագոյն Ատեանին՝ Վիեննայի մէջ 1907-ին գումարուած Չորրորդ Ընդհանուր Ժողովին:

Առարկումի արժանի չէ այն խօսքը, թէ ընկերվար Կուսակցութիւն չէինք մինչեւ այդ ժողովը եւ ընկերվար դարձանք — ոչ միայն «Նախագիծ»ով, այլ եւ պաշտօնական Ծրագրով—այդ ժողովում եւ այդ ժողովից յետոյ:

Սակայն, իրողութիւն է, որ այս մարզում, զուտ ընկերվար վարդապետութեան սահմանների մէջ, երկու փոփոխութիւն կատարուեց մեզ հետ.

Առաջին՝ *ընկերվարութեան նախնական՝ «ձախ» ըմբռնումը, որ տիրապետող է մեր անդրանիկ դաւանագրի մէջ, պաշտօնապէս իր տեղը զիջեց ընկերվարութեան աւելի չափաւոր ըմբռնումին:*

Երկրորդ՝ *Ծրագիրը պաշտօնապէս նուիրագործեց մեր տընտեսական-աշխատաւորական գործունէութիւնը, մասնաւորաբար Կովկասի մէջ:*

Առանձնաբար առաջին կէտին դառնալով՝ անհրաժեշտ է նըկատել, որ փոփոխութիւնը (ընկերվարութեան ըմբռնումի մէջ) բացառաբար մեր ստեղծագործ մտքի արդասիքը չէր. ընկերվար աշխարհի մէջ մի շարք պայծառ դէմքեր թէ՛ Արեւմուտքում եւ թէ Ռուսիոյ մէջ — Լաւրով, Միխայլովսկիյ, Ժորես եւ ուրիշներ — վաղուց արդէն ձեռնարկած էին մարքսեան վարդապետութեան հիմնական վերաքննութեան. այս ռեւիզիոնին ձեռնարկած էին նաեւ որոշ թեւեր բուն իսկ մարքսեան բանակի մէջ, լինի՛ Արեւմուտքում, լինի՛ Ռուսիոյ մէջ. այն օրերին, երբ Վիեննայի մէջ մեր Ընդհ. Ժողովն էր տեղի ունենում, ընկերվար աշխարհի հետաքրքրութեան առանցքն էր կազմում այդ աշխարհի կարկա-

---

*) Տե՛ս արդէն յիշատակուած *մեր* յօդուածը՝ «*Հայ անկախութեան գաղափարը մերձաւոր անցեալի մէջ*», էջ 83:

ռուն դէմքերից մէկը՝ գերման սոցիալ-դեմոկրատ Բերնշտայնը, որ գլխաւորում էր գերման ռեւիզիոնիզմը՝ *մարքսեան վարդապետութեան ամբողջական վերաքննութիւնը:*

Զուր չէինք անցած այն ճամբան — թէ՛ դաւանագրերով ու թէ վարիչներով — որ երկարում էր 1894*-ից մինչեւ* 1907 *թուականը:*

Մարքսեան վարդապետութեան միայն աղօտ հետքերը կան մեր 1907*-ի դաւանագրի վրայ. Ռոստոմը, որի գերակշիռ մասնակցութիւնը կայ նաեւ Վիեննայի Ծրագրի «Ընդհանուր Տեսութեան» մշակմանը մէջ, բնաւ այն Ռոստոմը չէ, որ յօրինած է մեր անդրանիկ դաւանագրի այդ նոյն բաժինը:* 1907*-ին մենք տարբեր ընկերվարներ ենք, ճիշտ է, աւելի չափաւոր, սակայն միաժամանակ նաեւ աւելի խոր ու իրատես.*

«Այն խոր դժգոհութիւնները,— *կրկին դառնանք մեր* 1924*-ի գրութեան,*— որ Կուսակցութեան շարքերում առաջացան «Նախագիծ»ն ու Վիեննայի Ծրագիրը ընդունելու հետեւանքով, ուղղուած էին ոչ թէ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ դէմ, ինչպէս ընդունուած է՝ փաստերը խեղաթիւրելով՝ կրկնել, այլ միայն եւ բացառապէս այն ակնբախ, անվիճելի ու անառարկելի շեղումի դէմ, որ թոյլ տուաւ իրեն Դաշնակցութիւնը՝ թրքահայոց քաղաքական հարցը փոխարինելով համահայկական դատով»*):

*Մենք հնարաւորութիւն չունենք Վիեննայի Ծրագրում ձեւաւորուած մեր ընկերվար վարդապետութեան մասը քննութեամբ զբաղուելու այստեղ. այդ մասին լայնօրէն արտայայտուած ենք մի անգամ արդէն յիշատակուած մեր մի այլ յօդուածի մէջ**): Սակայն, աւելորդ չենք դտնում այստեղ յիշատակելու գոնէ եզրափակիչ տողերը* 1907*-ի Ծրագրի «Ընդհանուր Տեսութեան»:*

Ամփոփ տողերի մէջ այն ճամբան դծելով, որ մարդկութիւնը առաջնորդում է դէպի ընկերվար հասարակակարգը, Ծրագիրը լի հաւատքով ազդարարում էր.

«Բոլոր տանջուածներու եւ հալածուածներու ընկերվար իտէալը չի ներկայանար մեզ իբրեւ անհող, անխարիսխ ցնորք մը, այլ իրագործելի հնարաւորութիւն մը, որովհետեւ ան կը թխի ոչ միայն իրերու առարկայական, տարերային ընթացքէն, այլ կը թելադրուի հրամայաբար պատմութիւնը առաջ շարժող զանգուածներու եւ անհատներու կամքէն, խիղճէն ու բանականութենէն:

«Պատմութեան ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ եւ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ (*ընդգծումները՝ Ծրագրի մէջ.— Ն.*) ստեղծագործող ուժերու դաշ-

---

*) «Հայրենիք», 1924, Փետր., էջ 85:

**) «*Ընկերվար վարդապետութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը*», «Հայրենիք», 1923-ի Յունուարի եւ Փետրուարի թուերը:

նադրութեան մէջն է գրաւականը այն անտարակուսելի յաղթանակին, զոր պիտի տանի աշխատաւոր մարդկութիւնը թէ՛ բնութեան կոյր ուժերուն եւ թէ հասարակութեան մէջ դարերով տիրող ստրկութեան եւ անարդարութեան դէմ»*):

Առաջին անգամը լինելով՝ մեր դաւանագրի մէջ մատնանշուում է այսքան յստակ ձեւակերպումով — եւ ընդգծուած բառերով — այն դերը, որ վերապահուած է պատմութեան թէ՛ առարկայական ու թէ ենթակայական ստեղծարար ուժերին՝ նրանց դաշն գործունէութեամբ ընկերվարութեան յաղթանակը ապահովելու համար:

Մեր այս Ծրագիրը, լոկ բառերի փոփոխութեամբ, նոյնն է մնում մինչեւ այսօր, բացառութեամբ անկախութեան պահանջի, որին պիտի անդրադառնանք առանձին:

Դաշնակցութեան յաջորդ Ընդհ. Ժողովները, մասնաւորաբար 10-ը, ուր մինչեւ իսկ յատուկ Ցանձնախումբ ընտրուեց այս նպատակով, փորձեր կատարեցին վերանայելու մեր Ծրագիրը, սակայն, այս փորձերը, դէպքերի ու պայմանների հարկադրանքի տակ, անցան ապարդիւն:

Եւ այսօր, Դաշնակցութեան 60-ամեակին, մենք հայ ժողովրդին ներկայանում ենք մեր Զորրորդ Ընդհ. Ժողովի «Ընդհանուր Տեսութեամբ»:

Այդ դաւանագիրը կարող է վերախմբագրուել, սակայն նա իր էութեանը մէջ չի կարող փոխուել:

Դաշնակցութիւնը աշխարհ եկաւ իբրեւ ընկերվար Կուսակցութիւն, գործեց իբրեւ ընկերվար Կուսակցութիւն եւ պիտի շարունակի ապրել ու գործել իբրեւ ընկերվար Կուսակցութիւն:

III

ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ

Ի՞նչ ձեւաւորում ունէր Դաշնակցութեան քաղաքական պահանջը իր դաւանագրերի մէջ:

Մեր անդրանիկ Ծրագրի մէջ երեք անգամ որոշակի խօսք կայ մեր քաղաքական պահանջի մասին.

1.— «ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ստանալ» (*Ծրագրի ներածական բաժնում, էջ 9*):

2.— «ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ձեռք բերել... քաղաքական ազատութիւն» (*Ծրագիր, «ՆՊԱՏԱԿ» գլխի տակ, էջ 15*):

3.— «Ապագայ ԱԶԱՏ Հայաստանում» հաստատել... «ժողո-

---

*) «ԾՐԱԳԻՐ», Ժընեւ, 1928, էջ 19:

վրդական–ռամկավարական կառավարութիւն» (Ծրագիր, «ՆՊԱՏԱԿ» դլխի տակ, էջ 15)։

Ընդգծումները մե՛նք կատարեցինք։

Ի՞նչպէս ըմբռնել այս բառերը,— «ինքնավարութիւն», «Տաճկահայաստան» (ուր ժողովուրդը ձեռք բերած է «քաղաքական ազատութիւն»), «ազատ Հայաստան»...

Այս բառերի տակ, ճիշտ է, որոշակի պահանջ չկայ անկախ Հայաստանի մասին, բայց մի՞թէ որոշակի բացասումն կայ այդ պահանջի։

Մեր անդրանիկ դաւանագրի քաղաքական շփոթ պահանջները մի՞թէ չեն գալիս մատնելու ահաւորութիւնը այն պայմանների, որոնց տակ ապրում էր մեր հայրենիքը։

Ճամբան հարթել հայրենիքի լիակատար անկախութեան՝ կա՛մ մէկ անգամից (եթէ հնար է այդ) եւ կամ աստիճան առ աստիճան (եթէ մէկ անգամից հնարաւոր չէ այդ),— ահա այն հասարակաց նպատակը, որ 1890–ին մէկ ընդհանուր ուխտի եւ «դաշնակցութեան» մէջ համախմբեց Հայ Յեղափոխականներին։

Եւ այս ուխտը այնքան նուիրական ու հաստատուն եղաւ, որ ուխտակիցները՝ կնքուած «դաշն»ի անունով՝ Դաշնակցական կոչուեցին, իսկ աւելի ուշ էլ՝ Դաշնակցութիւն անունը տուին իրենց Կազմակերպութեան։

Էականը բառերը չէին — «ինքնավարութիւն», «քաղաքական ազատութիւն Տաճկահայաստանում», «ազատ Հայաստան» — այլ գործը, այն պայքարը, որին եկած էին լծուելու Հայ Յեղափոխականները՝ իրենց Աշխարհի դժոխային պայմանները բարեփոխելու համար։

Անկախութեան պահանջը որեւէ նորոյթ չունէր իր մէջ. մեր անդրանիկ դաւանագրի առաքեալները «ազատ Հայաստան» ասելու փոխարէն՝ ամենայն դիւրութեամբ կարող էին «անկախ Հայաստան» ասել։

Իրենցից առաջ այդ պահանջը Հնչակեանները դրած էին արդէն՝ 1888–ին «Հնչակ»ում հրապարակած (եւ թէ առանձին գրքոյկով լոյս ընծայած) իրենց Ծրագրի մէջ։

Սակայն, նոյն շփոթը կար նաեւ Հնչակեանների մօտ։

Ահա այս վերջինների առաջադրած պահանջները 1888–ի անդրանիկ դաւանագրով, ուր իրենք իրենց հետեւեալ յորջորջումներն են տալիս՝ «սոցիալիստ–ռամկավարական», «հայ յեղափոխական», «հնչակեան».

1.— «Կուսակցութեան մօտակայ նպատակն է — կռիւ մղել՝ միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարի-

ցելու հանրային ռամկավարական սահմանադրական կարգերով...»*):

Այս պահանջը վերաբերում է բովանդակ Թուրքիոյ. ահա բացառաբար Հայաստանի վերաբերող պահանջը.

2.— «Հայ ժողովրդի ու Հայաստանի նակատագիրը միանգամից ընդմիշտ պէտք է զատուէ թիւրքական կայսրութեան նակատագրից, ըստ որում պատմական պահանջ ու անհրաժեշտութիւն է ներկայացնում — Հայ ազգային անկախութիւնը, որն էլ այդպիսով կազմում է մօտակայ նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»**):

Ահա նաեւ «Արեւելքի»ին վերաբերող պահանջը.

3.— «Հնչակեան Կուսակցութեան ամենաջերմ իղձն է — Ընդհանուր անկախ Դաշնակցութիւն, նման Շուէյցարիայի դրութեան, բոլոր փոքր ազգերի Արեւելքում, երբ դրանցից մնացածներն էլ ազատուած կը լինեն թիւրքական լծից»***):

Ինչպէս տեսնում էք, հակասութիւններով լի այս դաւանագրի մէջ միաժամանակ ամէ՛ն բան կայ. 1888 թուի «սոցիալիստ-ռամկավարականը» ե՛ւ միապետական կարգեր է տապալում Թուրքիոյ մէջ (այնտեղ ռամկավարական-սահմանադրական կարգեր հաստատելու համար), ե՛ւ զատում է այս երկրից Հայաստանը (այնտեղ «հայ ազգային անկախութիւն» հիմնադրելու համար), ե՛ւ միացնում է Արեւելքի բոլոր ազգերին («ընդհանուր անկախ դաշնակցութիւն» կերտելու առաջադրութեամբ)...

Եւ ուշագրաւն այն է, որ երկու կուսակցութեանց — Դաշնակցական եւ Հնչակեան — այն բոլոր բանակցութիւնների մէջ, որ նրանք մղել են իրենց գործունէութեան սկզբնական տարիներին, երբեք վէճ չկայ քաղաքական այս տարբեր պահանջների շուրջ. կողմերը գիտէին, որ իրենք տարբեր բառեր գործածելով — «ինքնավարութիւն», «ազատութիւն», «անկախութիւն» եւ այլն — խորքին մէջ նոյն բանն են ասում:

Հանրածանօթ է այն բացառիկ դերը Հայ Ազատագրական Շարժման մէջ — թէ՛ ընդհարնապէս հայ կեանքում եւ թէ մասնաւորաբար մեր Կուսակցութեան մէջ — որ վիճակուեց Քրիստափոր Միքայէլեանին:

Նոյն դերը վիճակուեց նաեւ իր միակ գրքոյկին — «ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐԸ» — որ եղաւ ու մնաց մեր վերջին 60-ամեա-

---

*) «ԾՐԱԳԻՐ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ», 3-րդ հրատ., Լոնդոն, 1897, էջ 5:

**) Անդ, էջ 9:

***) Անդ, էջ 12:

կի հրապարակագրական ճիգերի ամենէն փայլուն վաստակը. մի գրքոյկ, որի հիմնական դաղափարները մենք շարունակում ենք որոճալ դեռ մինչեւ այսօր եւ որ, այդ իսկ պատճառով, մի երկրորդ դաւանագրի հանդամանք առաւ մեզ համար:

Փորձենք մեր այս անպաշտօն դաւանագրի օժանդակութեամբ պարզել, թէ ի՛նչպէս էր ըմբռնում Քրիստափորը մեր քաղաքական պահանջը՝ Կուսակցութեան պաշտօնական դաւանագրի մէջ:

Տակաւին 1894*-ի մեր անդրանիկ Ծրագիրը չհրապարակուած,* «Փետրուար, 1892» *թուականով, ստորագրութեանցը տակ* Ս. Զաւարեանի *եւ* Քր. Միքայէլեանի, «*Դրօշակ*»*ի* 1892 *թուի մէջ, լոյս է տեսնում* «ԹԻՒ 3 ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ»:

Այդ Խմբագրականում զոյգ հիմնադիրները հանդամանօրէն խօսում են «ապագայ ԱԶԱՏ Հայաստանի ռամկավարական Սահմանադրութեան» *մասին:*

Արդ, ի՞նչ էին հասկանում մեր հիմնադիրները՝ «ազատ Հայաստան» *ասելով:*

Իր հանրածանօթ «ԱՄԲՈԽԱՑԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ» *մէջ Քրիստափորը գրում էր.*

«Մեր դատը վաղուց է հայերիս համար սոսկալի մի վէրքի նշանակութիւն ստացել: Շնորհիւ թուրք կառավարութեան կատարեալ կուրութեան՝ նա նոյն վէրքի նշանակութիւնն է ստացել Թուրքիայի համար եւս: Թէ՛ մենք եւ թէ Թուրքիան ընտրել ենք այդ վէրքի դէմ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ միջոց (*թէ՛ այս եւ թէ հետագայ բոլոր ընդգծումները՝ Քրիստափորինն են.— Ն.*). մենք դիմել ենք՝ յեղափոխութեան, Թուրքիան՝ մեզ կոտորելու միջոցին: Մեզ մնում է, ուրեմն, երկուսից մէկը — կա՛մ սեփական ձեռքով թաղել մեր դատը, կամ թէ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ մեր կռիւը ԱՃՆՔԱՆ, որ նա՝ թուրքերի դէմ մինչեւ այժմ ուղղուած դժգոհութիւնների, պաշտօնական բողոքների եւ թղթի սպառնալիքների շրջանը անցնելով, վերջապէս, մի ՎԷՐՔ ԴԱՌՆԱՑ նաեւ այն ազգութիւնների ու պետութիւնների համար, որոնք կապ ունեն Թուրքիայի ու մեր հարցի հետ: Այն օրը, երբ նրանք եւս կը համոզուեն, որ այդ վէրքի դէմ պէտք է դիմել ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ, մեր դատը ապահովուած կը լինի. այդ օրը կը լինի եւ մեր աջողութեան օրը»*):

Իսկ թէ Քրիստափորը ի՛նչ էր հասկանում՝ «վիրաբուժութեամբ» *հայ ժողովրդին* «աջողութեան օր» *ապահովել, այդ երեւում է նրա նոյն գրուածքի հետեւեալ տողերից.*

---

*) Ք. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ — «*Յեղափոխականի Մտքերը*», 1931, Աթէնք, էջ 71:

«Բուլղարները ապստամբուել են 1828, 1837, 1841, 1862, 1867, 1868, 1872 եւ 1876 թուերին. ուրեմն, շարժումը տեւել է 50 տարի, ունենալով 44 տարուայ ընթացքում անընդհատ անաջողութիւն: Յոյները ապստամբուել են 1770, 1798, 1801, 1812, 1820–29 թուերին. ազատութիւն գտան 1829–1830 թուին, այսինքն՝ 60 տարուց յետոյ, շատ անգամ տեղի տալով զարհուրելի կոտորածների եւ ամբողջ Պելոպոնէսի ու Մորէայի կատարեալ աւերման...: Այսօրուայ Ազատ Կրէտէն, որ իր կռիւը սկսեց դեռ Յունաստանի հետ միասին, ապստամբուել է աւելի քան տասն անգամ՝ պաշտպանելով իր դատը ամբողջ 128 տարի: Սերբերը կըռուել են 40 տարու չափ եւ նախ քան ազատուելը՝ պարտութիւններ են կրել շատ անգամ: Ռումանական շարժումը, նոյնպէս արիւնով ներկուած, տեւել է ոչ պակաս 100 տարուց: Բոսնիա եւ Հերցոգովինա կռուել են 1630 թուից մինչեւ 1870–ը. Իրլանդիան 600 տարի է չէ ընկճուում իր ազատութեան տենչանքների մէջ՝ չնայած իր միլիոնաւոր զոհերին: Դեռ երէկ մարտնչող, հերոսական Կուբան միմիայն մեր դարում երեք խոշոր ապստամբութիւններ է ունեցել՝ միմիայն վերջին ապստամբութեան ժամանակ 200 հազար զոհ տալով: Իտալական յեղափոխութիւնը 60 տարի պահանջեց յաղթանակը տանելու համար»*):

Պարզ չէ՞ միթէ, թէ «ազատ Հայաստան»ի առաքեալը ի՛նչպէս էր հասկանում «վիրաբուժութիւն»ը եւ ի՛նչ էր պատկերացնում իրեն՝ «աջողութեան օր» ասելով...

Վառ երազները փոթորկում էին իր հոգին շատ աւելի խորերից:

Կախարդը Հայ Ազատագրական Շարժման ոչ միայն Տաճկահայաստանի անկախութիւնն էր տենչում, այլ եւ երազում էր ամբողջացած — *ազատ ու անկախ — տեսնել հայ հողը:*

Իր հրեղէն գրչով պատգամում էր նա.

«Պատռե՛լ է հարկաւոր քարտէսների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով գծուած սահմանները, ջնջե՛լ է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատեւ են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կռուելու անսասան ՎՃՌՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ եւ կապուած, ՄԻԱՑԱԾ է դարե-

---

*) Անդ, էջ 66–67:

բով սնուած ու պահպանուած ընդհանուր բնազդների ու զգացմունքների առողջ զարկերակով»*)։

Մեր դարաւոր երազը Քրիստափորների հոգում տեղ գտած էր այսքան յստակ ու վառ գոյներով, սակայն նա մշուշոտ ձեւ առած էր մեր անդրանիկ դաւանագրի մէջ։

Մեր հետագայ դաւանագրերը աստիճան առ աստիճան գծեցին դէպի այս երազը տանող մեր ճամբան։

Այդ ճամբաներից մէկը — Ֆեդերասիոնն էր, դաշնակցային հիմերով թէ՛ Թուրքիոյ եւ թէ Ռուսիոյ վերակերտումը։

1900-*ին գրի առած իր ծանօթ յօդուածի մէջ — «ՄԻՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ» — Քրիստափորը՝ իր խօսքը Թուրքերին ուղղելով՝ յայտնում էր.*

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը — որի անունից միայն, ի հարկէ, մենք իրաւունք ունենք խօսելու — ընդհանրացընելով Տաճկահայաստանի վերաբերեալ իր ծրագիրը, կարող է առաջարկել համայն Տաճկաստանի մի կազմակերպութիւն, որը — միւս հաւասար պայմաններում — անշուշտ, ընդունակ է միացընել բոլորին։ Դա ՖԵԴԵՐԱՏԻՒ (դաշնակցական) ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆ կազմակերպութիւնն է...»**)։

Եւ իր նոյն յօդուածում Քրիստափորը բացատրում էր, թէ այս «ֆեդերատիւ»-ին ինչո՛ւ արդելք չէ «ազգերի անկախութեան» *արդար պահանջը****)։

Այս «ֆեդերատիւ»ը, սակայն, մեր դաւանագրին մաս կազմեց տարբեր երկնակամարի տակ։

Հակառակ այն իրողութեան, որ աշխարհ եկած էինք Թրքահայ Դատի համար, մեր քաղաքական պահանջը, պատմութեան հեգնանքով, քիչ-շատ որոշակի կերպարանք առաւ Անդրկովկասի մէջ, ռուսապատկան Հայաստանի համար։

«Նախագիծ»*ով որդեգրած լինելով «կովկասեան գործունէութիւն»ը՝ Դաշնակցութիւնը հետեւեալ պահանջն էր առաջադրում Անդրկովկասի համար.*

«1.— Դաշնակցական ռամկավար հանրապետութիւն Անդրկովկասի համար...»

«3.— Անդրկովկասը կազմում է ազատ Ռուսաստանի անբաժան մասը...»։

---

*) Անդ, էջ 122–123։

**) Անդ, էջ 101։

***) Անդ, էջ 104։

«5·— Անդրկովկասի Դաշնակցութիւնը ունի իր կենտրոնական պարլամենտը Թիֆլիսում...»*):

Չկայ ոչ իսկ անունը Հայաստանի· *խօսքը բացառաբար* Անդրկովկասի *մասին է, որի կազմի մէջ էր մտնում նաեւ մեր հայրենիքի ռուսապատկան հատուածը:*

«Նախագիծ»*ի օրերին, սրանից* 44–45 *տարիներ առաջ, կարելի չէր Ռուսիոյ մէջ խօսել ոչ միայն* անկախ Ռուսահայաստանի, *այլ անգամ* անկախ՝ *Ռուսիայից անջատ ու բաժան՝* Անդրկովկասի *մասին: Կարելի չէր նաեւ այն պատճառով, որ վրացի սոցիալ-դեմոկրատները, որոնց դերը այնքան դերակշիռ էր Համառուսական Սոցիալ-Դեմոկրատիայի մէջ, վճռաբար դէմ էին ազգային ամէն անկախութեան՝ Ռուսիոյ կոտորակումը անհաշտ դտնելով Մարքսիզմի թէ քաղաքական ուղղութեան եւ թէ պատմա-փիլիսոփայական աշխարհահայեացքի հետ: «Նախագիծ»ով ձեւաւորուած պահանջն իսկ — հանրապետական Անդրկովկասը դաշնակցային հիմերով կապուած Ռուսաստանին — քաղաքական խիզախ քայլ էր Դաշնակցութեան համար:*

Այս ֆեդերասիոնը *հարթեց ճանապարհը այն միւս* ֆեդերասիոնի *համար, որ քիչ աւելի ուշ՝ Վիեննայի մէջ՝ Դաշնակցութիւնը պաշտօնապէս պիտի որդեգրէր Թրքապատկան Հայաստանի նկատմամբ:*

Ահա այն քաղաքական պահանջը, որ Զորբորդ Ընդհանուր Ժողովը (1907-*ի*) *քուէարկեց Հայաստանի զոյգ հատուածների համար.*

«Ղեկավար ունենալով ընկերվարական սկզբունքները եւ կանգնած մեր բնակած վայրերու իրական ու հասունցած պէտքերուն վրայ՝ կուսակցութիւնը կ'առաջադրէ հետեւեալ նուազագոյն պահանջները·—

«1·— ԹՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ՝ քաղաքական-տնտեսական ազատութիւն, հիմնուած տեղական լայն ինքնավարութեան եւ դաշնակցական կապերու վրայ, Օսմանեան պետութեան սահմաններուն մէջ»:

«5·— ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ռամկավար հանրապետութիւնը կը կազմէ Ռուսաստանի դաշնակցական հանրապետութեան անբաժան մասը, կապուած անոր հետ պետական ինքնապաշտպանութեան, դրամական սիստեմի, մաքսի եւ արտաքին քաղաքականութեան խնդիրներով»**):

---

*) «ՆԱԽԱԳԻԾ ԿՈՎԿ· ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ», 1906, ԺԸՆԵ, էջ 13:

**) «ԾՐԱԳԻՐ», 1908, էջ 18–19:

Աննկատ, դէպք առ դէպք, բաժան-բաժան Հայ Դատը ամբողջանում էր Դաշնակցութեան դաւանագրի մէջ, աւելի ուշ, պատեհ վայրկեանին, ՄԻԱՑԵԱԼ, ԱԶԱՏ եւ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ կերպարանքով աշխարհ դալու համար:

Այս վերջինը եղաւ շատ աւելի ուշ, 1919-ին, Երեւանի մէջ գումարուած Դաշնակցութեան Իններորդ Ընդհանուր Ժողովում:

Կուսակցութեան Գերագոյն Ատեանի անդրանիկ հաւաքոյթն էր այս՝ հրաւիրուած անկախ հայրենիքի մայրաքաղաքում:

1907-ից մինչև 1919 թուականը դարերի կշիռ ունեցող պատմական անցքեր էին տեղի ունեցած մեր հայրենիքում: Բոլորած էինք 1908-ի Թրքական Սահմանադրութիւնը, Ադանայի կոտորածը, առաջին մեծ պատերազմը, տեսած էինք Ապրիլեան Եղեռնը, անցած էինք ռուսական զոյդ յեղափոխութիւնների ուրագաններից եւ օրհասական պայքարի մէջ, արիւնոտ ռազմաճակատների վրայ, Բագուից մինչեւ Ղարաքիլիսէ, Բաշ-Ապարան ու Սարդարապատ, կերտած էինք մեծագոյն փառքը վերջին դարերի մեր պատմութեան՝ Մայիս 28-ը:

Երեւանի պատմական Ժողովին մասնակցում էին 80 հոգի, 61-ը՝ վճռական ձայնով, իսկ 19՝ խորհրդակցական:

61 իրաւասու ձայները փաստօրէն ներկայացնում էին ոչ միայն մեր միացեալ հայրենիքը, այլեւ բովանդակ հայութիւնը՝ Երկրի եւ Գաղթաշխարհի:

Ուշագրաւ է, որ 61 իրաւասու ձայներից միայն 18-ը (30%) պատկանում էր իրացած Հայաստանին (Արեւելեան Բիւրօ, Երկրի Կենդր. Կոմիտէ, Երեւան, Ալեքսանդրապոլ, Կարս, Զանգեզուր, Հայաստանի Խորհրդարանի Դաշնակցական Խմբակցութիւն, Հ. Յ. Դ. Երեւանի Ներկայացուցչական Խորհուրդ, Հ. Յ. Դ. Ուս. Միութիւն եւ Հ. Յ. Դ. Աշակ. Միութիւն). ձայներից 14-ը (23%) պատկանում էր կա՛մ վիճելի եւ կամ Հայաստանից բաժան շրջաններին (Հայաստանի Բիւրօ, Շուշի, Վան, Կարին-Բասէն, Մուշ, Հարք-Ապահունիք եւ Բաղրեւանդ). իսկ մնացեալ 29 ձայները (47%) պատկանում էին «Միացեալ»ի սահմաններից դուրս գտնուած վայրերին (Պոլսոյ Հայաստանի Բիւրոյի հատուած, Բագու, Գանձակ, Թիֆլիս, Բաթում, Սուխում, Սոչի, Սեբաստիա, Կիլիկիա, Իզմիր, Պոլիս, Եգիպտոս, Բալքաններ, Ամերիկա, Թեհրան):

Իր այս կազմով Ժողովը, որ ներկայացնում էր համայն հայութիւնը իր բոլոր հատուածներով ու բնակավայրերով, միաձայնաբար քուէարկեց հետեւեալը.

«Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 9-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ, ՀԱՆԴԻՍԱՒՈՐԱՊԷՍ ՆՈՒԻՐԱԳՈՐԾԵԼՈՎ ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍ-

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԻՍՆԱՓ · ՀԱՅՆԻ ՎԵՐԵՎ · Ն · Ց · Հ

ՏԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՄԲՈՂՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՁԳՏԵԼՈՎ ԲՈԼՈՐ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ (ԴԵՄՈԿՐԱՏԻԿ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱՅ, ՈՐՈՇԵՑ՝

«Ա.— ՁԵՂԵԱԼ ՀԱՄԱՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՒԱՁԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ։

«Բ.— Ամբողջական Ծրագրի վերաքննութիւնը յետաձգւում է յաջորդ Ընդհ. Ժողովին»։

Այս որոշումը, «ՆՈՒԱՁԱԳՈՅՆ ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ» խորագրի տակ, տեղ գտաւ Ժողովի պաշտօնական գրքոյկի մէջ)։*

Նոյն «ՈՐՈՇՈՒՄ»ը, զատ տպագրութեամբ, կցուեց Զորրորդ Ընդհ. Ժողովի կողմից որդեգրուած մեր Ծրագրին, որի «վերաքննութիւն»ը յետաձգուած էր։

1924-ին Փարիզում գումարուած յաջորդ՝ 10-րդ Ընդհ. Ժողովը, այդ «վերաքննութիւն»ը չկատարելով հանդերձ, անկախութեան վերաբերող 9-րդի «ՈՐՈՇՈՒՄ»ը յատուկ խմբագրութեամբ միաձուլեց Ծրագրին։

Ահա այդ հատուածը.

«Առաջնորդուած ընկերվարական սկզբունքներէ, ձգտելով ստեղծել անկախ եւ ազատ հայրենիք եւ նկատի ունենալով մեր բնակած վայրերու իրական ու հասունացած պէտքերը, Կուսակցութիւնը կ'առաջադրէ հետեւեալ պահանջները.

«1.— ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, ՈՐՈՒՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՊԻՏԻ ՄԻԱՆԱՆ ՌՈՒՍԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԹՐՔԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ»**)։

Յաջորդ չորս Ընդհ. Ժողովները — 1929-ի (Փարիզ), 1933-ի (Փարիզ), 1938-ի (Գահիրէ) եւ 1947-ի (Գահիրէ) — նոյնութեամբ պահեցին այս Ծրագիրը։

Եւ այսօր, 1950-ին, 60-ամեայ Դաշնակցութիւնը հայ հանրութեան ներկայանում է իր այս դաւանագրով, ուր միացեալ Հայաստանի անկախութեան գաղափարը գտած է իր հաստատուն տեղը։

Աւելորդ չէ, այնուամենայնիւ, նկատել, իբրեւ մէկ յատկորոշ արտայայտութիւնը ալեկոծ հայ կեանքի, որ անկախութեան պահանջը որոշակի բառերով տեղ գտաւ մեր Ծրագրի մէջ ոչ թէ փաստից առաջ, այլ փաստից յետոյ։

---

*) «ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ Հ. Յ. Դ. 9-ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ», 1920, Երեւան, էջ 4-5։

**) «ԾՐԱԳԻՐ», 1928, Ժընեւ, էջ 20։

Իններորդ Ընդհ. Ժողովի «ՈՐՈՇՈՒՄ»ով «անկախական» *դարձանք, երբ անկախ էինք արդէն եւ երբ այդ «ՈՐՈՇՈՒՄ»ը քուէարկում էինք* անկախ *Հայաստանի մայրաքաղաքի մէջ...*

IV

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ (DEMOCRATIE)

Մեր դաւանագրերի մէջ ժլատաբար մշակուած հարցերից մէկն է:

Մեր անդրանիկ Ծրագիրը յայտնում է, որ իրեն նպատակ դրած է «ապագայ ազատ Հայաստանում» հաստատել «ժողովրդական–ռամկավարական կառավարութիւն», որ «հաստատուած պիտի լինի ամէն հասակաւոր բնակչի ընտրողական իրաւունքի վրայ, առանց որեւէ ցենզի». *Ծրագիրը միաժամանակ դնում է հետեւեալ պահանջները,—* «ազգութիւնների եւ դաւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առաջ» *եւ* «ազատութիւն խօսքի, մամուլի եւ ժողովների» (էջ 15–16):

Նոյնքան ժլատ է նաեւ մեր երկրորդ դաւանագիրը՝ «Նախագիծ»*ը:*

Իր ներածական բաժնում այս վերջինը յայտնում է.

«Լինելով բացարձակ հակառակորդ ամէն տեսակ առանձնաշնորհումների, ազգայնական ամէն տեսակ գերիշխանութեան ու ճնշումների, Դաշնակցութիւնը համոզուած է, որ միմիայն այդպիսի ռամկավարական կազմակերպութեան մէջ՝ կովկասեան այլատարբ, այլակրօն եւ այլաբարբառ ժողովուրդները կարող են ապահովուած տեսնել իրենց ուրոյն, ազատ ու անարգել առաջադիմութիւնն ու բարգաւաճումը» (էջ 5):

Այս ընդհանուր սկզբունքները արծարծելուց յետոյ՝ «Նախագիծ»ը՝ «ԲԱՂԱԲԱԿԱՆ» գլխի տակ՝ դնում է մի շարք ծանօթ ու ընդհանրացած ժողովրդավար պահանջներ,— ընտրական բառանդամ իրաւունք («ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի»), «անհատի եւ բնակարանի անձեռնմխելիութիւն», «մամուլի, խօսքի, գումարումների, բանուորական սինդիկատների եւ գործադուլների կատարեալ ազատութիւն», «պետական եկեղեցի»ի բացասում *եւայլն* (էջ 13–14):

Դաշնակցութեան ժողովրդավար սկզբունքներն ու պահանջները շատ աւելի մշակուած ձեւով ներկայացուած են Չորրորդ Ընդհ. Ժողովի կողմից որդեգրուած Ծրագրի մէջ, որ շարունակում է մեր դաւանագիրը մնալ մինչեւ այսօր:

«ԲԱՂԱԲԱԿԱՆ» գլխի տակ Ծրագիրը յայտնում է.

«Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւն, կը ձգտի պաշտպանել հայ աշխատաւոր զանգուածներուն բովանդակ շահերը, թէ՛ տնտեսական-դասակարգային, թէ՛ մարդկային-քաղաքական եւ թէ ազգային-զարգացական, նպատակ ունենալով ժողովուրդին ձեռքը տալ կառավարութեան դեկը եւ արդի միապետական եւ դրամատիրական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ ու արդիւնաբերութեան միջոցներու համայնացումով» (էջ 18)։

Այս ներածական տողերից յետոյ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ»ին դառնալով, թէ՛ Թուրքիոյ եւ թէ Ռուսիոյ համար, Ծրագիրը, ի միջի այլոց, հետեւեալ պահանջներն է դնում,— «Ազատութիւն խօսքի, մամուլի, խղճի, ժողովներու, միութիւններու եւ գործադուլներու», «Եկեղեցիի բաժանումը պետութենէն։ Կրօնքը անհատական խղճի գործ է», «Ազգերու ինքնորոշման իրաւունք։ Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու ու կրօնական համայնքներու։ Ոչնչացում դասակարգային բոլոր առանձնաշնորհումներու», «Անձեռնմխելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան», «Ազատութիւն տեղափոխութեան։ Բարձում անցագրերու» *եւայլն* (էջ 20)։

Ինչպէս ընթերցողը տեսաւ, մեր ժողովրդավար դաւանանքի խորացումին եւ ընդլայնումին մէջ դուր անցած չէ այն ճամբան, որ երկարում է մեր անդրանիկ դաւանագրից մինչեւ 1904-ի մեր Ծրագիրը։

Այսպէս լինելով մէկտեղ՝ մեր ժողովրդավար դաւանանքը, անդամ մեր ամենավերջին Ծրագրի մէջ, մեզ ներկայանում է անմշակ վիճակում. անմշակ՝ թէ՛ Ծրագրի «Ընդհանուր Տեսութեան» մէջ եւ թէ «Քաղաքական» բաժնում։ Ինչպէս ասացինք, Իններորդ Ընդհ. ժողովի բաղձանքը մնաց անկատար. 1919-ից այս կողմ մեր Ծրագիրը չվերաքննուեց ու չվերամշակուեց. եթէ պայմանները մեզ արգելք չլինէին եւ այս վերամշակումը կատարուէր, վստահ ենք, որ Դաշնակցութեան 60-ամեայ յոբելեանին մենք պիտի ներկայանայինք մի դաւանագրով, ուր ժողովրդավարութիւնը իրեն աւելի վայել տեղ պիտի գրաւէր։

Առիթից օգտուելով՝ աւելորդ չենք նկատում այս մասին դէթ մի քանի տող գրի առնել այստեղ, թո՛ղ թէ հարեւանցի ձեւով։

Բոլշեւիզմը իր ահաւոր բռնութեամբ եւ իր վայրագ դիկտատուրայով ծանր մտահոգութեանց առիթ դրաւ մասնաւորաբար ընկերվար աշխարհը։ Մինչեւ Հոկտեմբերեան յեղաշրջումը Ռուսիոյ մէջ՝ համատարած էր այն կարծիքը, թէ ճամբան դէպի ընկերվարութիւնը անցնում է ժողովրդավարութեան միջից. այս վերջինը նկատւում էր նախապայման ընկերվարութեան յաղթա-

նակի համար. երբ տակաւին իշխանաւոր չէր՝ այս կարծիքին էր... անգամ Լենինը.

«Ով ուզում է ընկերվարութեան հասնել մի այլ ճանապարհով,— *ուսուցանում էր նա*,— քան քաղաքական ժողովրդավարութիւնն է, նա անխուսափելիօրէն պիտի յանգի արտադրոց եւ յետադէմ եզրակացութեանց թէ՛ տնտեսական, թէ՛ քաղաքական իմաստով»*):

Սակայն իշխանութեան տիրանալով՝ Լենինը փոխեց իր այս կարծիքը. «քաղաքական ժողովրդավարութեան» մէջ նա ոչ թէ իրեն աջակից, այլ իրեն հակառակորդ ուժ տեսաւ եւ փորձեց «ընկերվարութեան» հասնել՝ արտադրոց *եւ* յետադէմ *միջոցներով...*

Տասնամեակներ շարունակ իշխանութեան գլուխ մնալով՝ Բոլշեւիզմը այն համոզումին եկաւ, թէ միայն բռնութեամբ, արիւնով ու սրածումներով, միայն մի խումբ *մարդոց անսանձ դիկտատուրայով եւ* ժողովրդավարութեան *փոշիացումով կարելի է «ընկերվար» հասարակարգ հաստատել մեր մոլորակի վրայ։ Նոյն Լենինը, որ խարդախաբար խօսում էր «ժողովրդավարութեան» անունից, աւելի ուշ սկսեց հեգնել* «զտարիւն ժողովրդավարութիւնը», *այսինքն* հաւասարութեան *եւ* ազատութեան *սկզբունքները՝ թշնամի դասակարգերի նկատմամբ անթոյլատրելի դտնելով այդ սկզբունքների գործադրութիւնը. համայնավարութեան առաջնորդը* «ամենէն բթամիտ մանր քաղքենին» *էր տեսնում այն մարդու մէջ որ խօսում է* «ժողովրդի կամքի անունից»**):

Արդար իրաւունքով Լոյդ Ջորջը նկատում էր 1923*-ին.*

«Մեր օրերի հակաժողովրդավար շարժումը սկսուած է ոչ թէ Իտալիոյ, այլ Ռուսիոյ մէջ։ Մեր ժամանակների առաջին մեծ փաշիստը ոչ թէ Մուսոլինին է, այլ Լենինը։ Նա՛ եղաւ առաջինը, որ ժողովրդավար պետութեան մէջ ընտրական իրաւակարգը փոխարինեց ուժով»***):

Բոլշեւիզմը տիպար ֆաշական կազմակերպութիւն դարձաւ՝ շատ աւելի դաժան ու վայրագ բնոյթով. Խորհրդային «ժողովրդավարութեան» մէջ բուն «քուէ»ն—սուինն է, այն ազդու զէնքը, որով համայնավար «սեղմ խմբակ»ը վարում է աշխարհի Մէկ-

---

*) ԼԵՆԻՆ — «12 *տարուան մէջ*», 1908, Պետերբուրգ։

**) Մ. ՎԻՇՆԵԱԿ — «*Պարլամենտը, Խորհուրդները, Կորպորացիաները*», «Սովր. Զապինսկի», գիրք LV, 1934, Փարիզ, էջ 351։

***) Անդ, էջ 34)։

վեցերորդի ճակատագիրը՝ ձեւին ու խորքին մէջ խաթարելով ու չարափոխելով ընկերվար մեծ վարդապետութիւնը։

Կայ մի այլ, ոչ նուազ կարեւոր պարագայ։

Բոլշեւիզմը Ռուսիոյ մէջ ծնաւ, սակայն Ռուսիոյ մէջ չմընաց. նա այսօր իր ճիւղաւորումներն ունի աշխարհի դրեթէ բոլոր մասերի մէջ եւ վաղը, անգամ իր պարտութեան դէպքում, նա պիտի չարունակի վրդովել աշխատաւոր մարդկութեան կեանքը։

Այս բոլոր պարագաները նկատի առնելով՝ անհրաժեշտ է մեր դաւանաբրի մէջ յստակ բառերով սահմանել ժողովրդավարութեան տեղն ու դերը այն պայքարի մէջ, որ մենք մղում ենք ընկերվար վարդապետութեան յաղթանակը ապահովելու համար։

Ընկերվար վարդապետութիւնը իր խորքին մէջ ապադասակարգային ու գերդասակարգային ուսմունք է. աշխատաւոր մարդկութեան դատը պաշտպանելով մէկտեղ՝ նա ձգտում է բովանդակ մարդկութեան ամբողջական ազատագրութեան յաղթանակին։

Այդ է պատճառը, որ անգամ մեր այս չփոթ օրերին, հակառակ Բոլշեւիզմի գործած դաղափարական աւերածութեանց, ժողովրդավարութիւնը ընկերվարականանում է եւ ընկերվարութիւնը՝ ժողովրդականանաում. այս երկու լոյս դաղափարների հետեւորդները ատոիճան առ ատոիճան դալիս եւ վերջնապէս միաձուլւում են մէկ ընդհանուր ընտանիքի մէջ։

Ինչպէս որ ճշմարիտ ընկերվարը չի կարող ժողովրդավար չլինել, այդպէս նաեւ ճշմարիտ ժողովրդավարը չի կարող ընկերվարութիւնը դրժել։

Այս երկու վարդապետութեանց միջեւ եղած տարբերութիւնը որակական չէ, այլ քանակական։

Դեմոկրատիզմը երբեք դէմ չէ ազգային հարստութեան աղբիւր հանդիսացող արտադրական միջոցների համայնացման (այլ դէմ է միայն այդ սկզբունքի գործադրութեան չափին), իր հերթին ընկերվարութիւնը երբեք դէմ չէ անհատական նախաձեռնութեան (այլ դէմ է միայն այդ նախաձեռնութեան սանձարձակ ազատութեան)։

Անգամ Բոլշեւիզմը երկչոտ ճիգեր է անում — թո՛ղ թէ մի «Սահմանադրութեան» մէջ, որ միայն թղթի արժէք ունի — մի կողմից՝ սեփականութեան հանրայնացումը չափաւորելու, իսկ, միւս կողմից՝ անհատական սեփականազրկումը որոշ սահմանների մէջ դնելու եւ անհատի նախաձեռնութեան առջեւ մի որոշ մարզ բաց ձգելու։

Աւելի քան քառորդ դար առաջ այս առիթով նկատում էինք.

«Դեմոկրատիզմն ու ընկերվարությունը այնքան սերտ ու անքակտելի կապերով կապված են իրար հետ, որ անկարելի է նրանց բաժանել՝ առանց մէկի կամ միւսի էությունը փոխելու:

«Դեմոկրատիզմն ու ընկերվարությունը ո՛չ թէ հակառակ՝ այլ միեւնոյն նպատակին տանող, ո՛չ թէ տարբեր՝ այլ նոյն ուղղությամբ ընկած ճանապարհի տարբեր կայանները յատկանշող ուսմունքներ են, որոնք լծակցում են միեւնոյն պայքարի մէջ եւ փոխադարձաբար լրացնում ու աջակցում իրար»*):

Ընկերվարների մէջ իր ամենէն անհաշտ հակառակորդներին տեսնելով՝ Բոլշեւիզմը յամառ դաժանությամբ ամենէն առաջ նախ նրանց է սրածում:

Բոլշեւիզմը զգում է եւ գիտէ, որ հաշտություն չի կարող լինել իր եւ Ընկերվարության միջեւ:

Խոր է այն վիհը, որ բացուած է այսօր այս երկու վարդապետությանց միջեւ:

Մեր վարդապետության հիմը ժողովրդապետությունն *է, իսկ իշխելու ձեւը՝* ժողովրդավարությունը (*լիակատար հաւասարության եւ ազատության մէջ*), *մինչդեռ Բոլշեւիզմի վարդապետական հիմը* «աշխատաւորապետությունն» *է, իսկ իշխելու ձեւը՝* «աշխատավարությունը» (*անհաւասարության մէջ եւ բռնության տակ*):

Համայնավար դաւանանքը «ընտրեալ»ների դաւանանք է, իսկ համայնավար կարգերը՝ «ընտրեալ»ների կարգեր են, ուր իրաւատէր է ամբողջի միայն մէկ մասը եւ իրաւազուրկ՝ մնացեալ մասը.

«Եթէ ամբողջից պիտի պոկուի մի ՄԱՍՆԻԿԸ միայն,— *դրում էինք սրանից քառորդ դար առաջ*,— եւ այս մասնիկն է, որ պիտի դառնայ մարդկային ոգորումների ՄԻԱԿ առանցքը, ապա ըստ էության, մեր գերագոյն իդէալի տեսակէտից, միեւնոյն է, թէ այդ մասնիկը բաղկացած կը լինի Նիցչէի «գերմարդկանցի՞ց», Պղատոնի «քչաթիւ ընտրեալների՞ց», Բէնտամի «ամենաշատ երջանկության տիրացած ամենէն շատ թիւ կազմող անհատների՞ց», թէ՞ ռուս համայնավարության «բանուորա-գիւղացիներից»: Էականն այստեղ այն է, որ խաթարուած է ԱՄԲՈՂՋԻ՛ գաղափարը, որ եղծուած է մարդկության ԱՄԲՈՂՋԱԿԱ՛Ն ազատագրության իդէալը եւ այս վեհագոյն գաղափարները փոխարին-

---

*) Տե՛ս *մեր* «ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ», 1924, Գահիրէ, էջ 28:

ուած են ՄԱՍՆԱԿԻ գաղափարներով, որոնք ծառայում են ՄԱՍ-ՆԱԿԻ խմբակցութեան կամ դասակարգի շահերին»*):

ՄԱՍՆԱԿԻ այս անհանձ տիրակալութիւնից է ծնունդ առնում այն գաղանային դիկտատուրան, *որ Բոլշեւիզմը հաստատեց Ռուսիոյ մէջ.*

«Բանուորութեան դիկտատուրան,— *ուսուցանում էր Լենինը*,— յամառ պայքար է, արիւնոտ եւ անարիւն, բռնի եւ խաղաղ, զինուորական եւ տնտեսական, դաստիարակչական եւ վարչական, ընդդէմ հին հասարակութեան ուժերի եւ աւանդութիւնների»**):

Իր հերթին Ստալինը՝ Լենինի մտքերը կրկնելով՝ վկայագրում է.

«Բանուորութեան դիկտատուրան օրէնքով չսահմանափակուած եւ բռնութեան կոթնած տիրակալութիւնն է բանուորութեան՝ բուրժուազիայի վրայ, մի տիրակալութիւն, ուր բանուորութիւնը վայելում է համակրանքն ու աջակցութիւնը աշխատաւոր ու շահագործուող զանգուածների»***):

Եւ որովհետեւ այս է «բանուորական դիկտատուրա»ն, ուստի Լենինը յստակ բառերով ու անվարան խոստովանում էր.

«ՊԱՐԶ Է՝ ԱՑՆՏԵՂ, ՈՒՐ ԿԱՑ ՃՆՇՈՒՄ, ԿԱՑ ԲՌՆՈՒԹԻՒՆ, ԱՑՆՏԵՂ ՉԿԱՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, ՉԿԱՑ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ»****):

Ինդիրը այստեղ իշխանապետութեան խորքի *մասին չէ, այլ* ձեւի:

Ընկերվար մարդկութիւնը միշտ պիտի ձգտի, ընդհանուր ձայնատուութեան պայմաններում, հաւասարութեան եւ ազատութեան մէջ, տիրանալու այս կամ այն երկրի բովանդակ *իշխանութեան:*

Սա նոյնպէս կը լինի «դիկտատուրա», առանց, սակայն, դեմոկրատիայի հիմերը խախտելու:

Ի. Միութեան մէջ այս դեմոկրատիան չկայ, այլ կայ «գերդեմոկրատիա», *որովհետեւ Ի. Միութեան մէջ, ինչպէս որ Լենինը պիտի ասէր, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ չկայ, այլ կան ՃՆՇՈՒՄ եւ ԲՌՆՈՒԹԻՒՆ:*

---

*) Տե՛ս *մեր* «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԻՆ», 1925, Գահիրէ, էջ 109:

**) Ի. ՍՏԱԼԻՆ — «*Լենինիզմի Հարցերը*», 11-րդ հրատր., 1945, էջ 28:

***) Անդ, էջ 30:

****) Վ. *ԼԵՆԻՆ* — «*Երկեր*», հ. 25-րդ, Մոսկուա, 1949, էջ 433:

Մեր դաւանագրի մէջ այս գաղափարները իրենց յստակ ձեւաւորումը պէտք է ունենան. ամբողջական ժողովրդավարութիւնը — քաղաքական եւ ընկերային — անբաժան մասը պէտք է կազմի մեր ընկերվար դաւանանքի։

Մենք պայքարում ենք ոչ թէ մէկ ճնշում փոխարինելու համար մէկ այլ ճնշումով եւ մէկ անհաւասարութիւն՝ մէկ այլ անհաւասարութեամբ, այլ պայքարում ենք ամէ՛ն ճնշում եւ ամէ՛ն անհաւասարութիւն վերացնելու համար.

«Դաշնակցութիւնը ձգտում է մի այնպիսի կարգերի,— *դրում էինք մենք*,— ուր շահագործումը (որեւէ ձեւի) այլեւս տեղ չունի, ուր անհատներն ու հաւաքականութիւնները (ամէնքն անխտիր) ապրում են զարգացման ազատ եւ հաւասար պայմաններում...

«Եթէ Դաշնակցութեան հարազատած ընկերվար մեծ վարդապետութիւնը դէմ լինէր այս նուիրական սկզբունքներին, Դաշնակցութիւնը ոչ միայն ընկերվարական չէր լինի, այլ իր ամբողջ հասակով կը ծառանար այդ ուսմունքի դէմ»*)։

Ընկերվարութեան հիմը նիւթը *չէ միայն — բարգաւաճ լինել ու հաւասարապէս վայելել. կայ նաեւ* հոգին *— ազատ ու նոյնիրաւ լինել՝ մարդուն մէջ արարչագործը միշտ կենդանի պահելու համար։*

Ժողովրդավարութիւնը *իր մեծ նպատակն է բերում այս բարձր նպատակին.* քանի, *որ իր մէջ խորհրդաւորում է ազատ մարդը, իբրեւ ինքնարժէք ու հաւասարժէք մի մեծութիւն, դադարում է պարզ* թեքնիք *լինելուց (ճնշելու եւ բռնանալու համար, ինչպէս որ Լենինը պիտի ասէր) եւ դառնում է քաղաքական հիմը մեր ազատ կեանքի։*

V

ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

*Մենք զատ ենք տեսնում այս երկուսը, մինչ խորքին մէջ անբաժան են նրանք եւ կազմում են մի միաձոյլ ամբողջութիւն։ Ազգը՝ շարժուն (ու ոգեղինացած) հայրենիքն է, մինչ հայրենիքը՝ անշարժ (ու նիւթականացած) ազգը**)։ Առանց ազգի՝ հայրենիք*

---

*) Տե՛ս *մեր* «Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ԼԻԿԻԴԱՑԻԱՆ (*Բոլշեւիզմի սնանկութեան առիթով*)», 1924, Գահիրէ, էջ 75։

**) Մենք փոխն ի փոխ գործ ենք ածում *ազգ* ու *ազգութիւն* բառերը. որոշ է տարբերութիւնը. *ազգութիւնը* հոգե-բարոյական այն ինքնատիպ շաղախն է, որի կրողը հանդիսանում է *ազգը*։

չկայ, ինչպէս որ առանց հայրենիքի՝ ազգ չկայ. անհայրենիք ժողովուրդը non sens է եւ ոչ աւելին. մի ժողովուրդ, որ ոչ միայն իր ոտքերի տակ, այլ եւ իր հոգում առյաւէտ կորցրած է հայրենիքը՝ դատապրատուած է աստիճանական նեխումի ու անդարձ մահուան. ու մի հայրենիք, որ առմիշտ կորցրած է իր ժողովուրդը՝ կորցրած է իր հոգին եւ դարձած անդէմ մի տարածք: Նոյնն են ազգն ու հայրենիքը, ինչ որ մարդու մէջ մարմինն ու հոգին. առանց հոգու՝ նեխած դիակ է մարդու մարմինը (որ հող էր ու հող պիտի դառնայ), առանց մարմնի՝ անիմանալի մի էութիւն է մարդու հոգին (որ մեզ համար չկար մինչեւ ենթակայի ծնունդը, ու մեզ համար պիտի չլինի նաեւ նրա մահից յետոյ): Սին խօսք է կիրխգոֆների այն տեսութիւնը, թէ կան — ու կարող են լինել — «մշակութային» ազգեր, ինչպէս հին հելլէններն էին, ինչպէս են հայերն ու հրեաները. այս «մշակոյթ»ը այն չափով ազգ պահեց հելլէններին, հայերին ու հրեաներին, ինչ չափով այդ ազգերը ողջ պահեցին իրենց հոգում հայրենիքը՝ բուն ստեղծիչը այդ «մշակոյթ»ի: Դասական դարձած էր հրեայի օրինակը՝ ազգութեան կերպաւորումի ու յարատեւումի մէջ հայրենիքի դերը ուրանալու համար: Գիտութիւնն իր բոլոր ճիւղերով «թափառական հրեայ»ի ոտքերի տակ հայրենի «հող» երբեք չտեսաւ, ուստի եւ կոյր եղաւ. այդ «հող»ը նա չտեսաւ նաեւ նրա հոգում: Չտեսաւ «ԼԱՑԻ ՊԱՏ»ը — Սողոմոնի տաճարից ժառանգ մնացած լերկ ու անշուք մի քարակոյտ, որ դուրդուրանքով հրեան պահում էր իր հոգում՝ այդ «ՊԱՏ»ի մէջ յաւերժական հայրենիքը տեսնելով, այդ «ՊԱՏի համար դարերով արցունք ու արիւն քամելով եւ այդ «Պատ»ի հետքերով ու վառ տենչանքով իր հայրենիքը երազելով: Հաղարամեակներ վերջ — վկայ ենք ամէնքս — «թափառական հրեան՝ իր տունը դարձաւ, «վախկոտ» էր՝ արիացաւ, «նիւթապաշտ» էր՝ հոգապաշտ դարձաւ, եւ անպատմելի քաջութեամբ ու խոյանքով վերագրաւեց իր հայրենիքը եւ վերակերտեց իր երազած Իսրայէլի պետութիւնը:

Մի կտոր հողն իսկ, թող թէ իբրեւ լերկ քարակոյտ, որ ապրում է մի ժողովրդի հոգում՝ իբրեւ կենդանի հայրենիք, նրան կարող է յարատեւաբար, հաղարամեակներ շարունակ, անդամ աստանդական վիճակում, ազգ պահել ու հաղարամեակներ վերջ կրկին իր տունը բերել:

Այսքան մեծ է կախարդանքը հայրենի հողի:

«Որովհետեւ ի՞նչ են, վերջապէս, Ազգն ու Հայրենիքը,— վերստին վկայ կանչենք մենք մեզ,— ոչ իբրեւ նիւթ՝ իբրեւ հող ու մարմին, այլ իբրեւ ՈԳԻ,— եթէ ոչ բառին բարձրագոյն առումով մէկ անմեռ ու ստեղծարար ԳԱՂԱՓԱՐ, մէկ յաւերժա-

կեաց ու բեղմնաւոր իդէալ, որ յարատեւաբար, պատմութեան խորագոյն խորերէն, դարեր անընդհատ ու դարեր յաջորդաբար, ստեղծագործելով, կը պահէ միշտ ցեղայնօրէն իր ինքնատիպ ՁԵՒԸ, միշտ, ժամանակի ոգիին ու պայմաններուն ունկնդիր, իր ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ փոխելով»*):

Այս դաղափարները — Ազգ ու Հայրենիք — իրենց արժանի ձեւաւորումը չունեն մեր դաւանագրերի մէջ:

Մասնաւորաբար անդրանիկ դաշնակցականները, որոնք հիմնադրեցին մեր Կուսակցութիւնը, դրեթէ ԼՌՈՒԹԵԱՄԲ են անցնում այս դաղափարների վրայից:

Եւ ինչո՞ւ խօսել, քանի որ — պարզ չէ՞ միթէ — նրանք աշխարհ եկած էին Հայութեա՛ն ծառայելու եւ նրա համար Հայրենի՛ք վերագրաւելու:

Ազգութեան *ու* Հայրենիքի *մասին խօսք չկայ, սակայն երկարօրէն խօսք կայ...* ընկերվարութեան *մասին: Որովհետեւ միայն* ընկերվար *լինելով՝ կարելի էր ճշմարտօրէն ծառայել հարազատ ժողովրդին: Պէտք չէ մոռանալ, որ տակաւին երէկ՝* 1890-*ի սեմին՝ մեր հիմնադիրներից Քրիստափորն ու Սիմոնը «կոսմոպոլիտ»ներ էին, բառին ազնուագոյն առումով* աշխարհաքաղաքացի, *իսկ Ռոստոմը՝* մարքսիստ *էր, խորքին մէջ նոյնպէս «կոսմոպոլիտ». այս «աշխարհաքաղաքացի»ները Հայութեան եւ Հայրենիքին դարձած էին՝ իրենց ընկերվար դաւանանքի մէջ միշտ անխախտ մնալով. եթէ ուրիշ՝* այլազգի *«կոսմոպոլիտ»ներ մե՛ղ դային՝ հայ ժողովրդին ծառայելու համար, մեր հիմնադիրները թերեւս չարունակէին իրենց կեանքը միջազգային կազմակերպութեանց մէջ՝ ընդհանուր մարդկութեան ընկերվար դատին ծառայելու համար: Այդպէս չեղաւ սակայն. լքուած տեսնելով իրենց ժողովուրդին՝ մեր առաքեալները մեղ դարձան:*

Եւ դարձան՝ ծառայութեան ուխտով՝ զրկուածի՛ն, *ընդդէմ ամէն կարգի* հարստահարիչների: *Այս է տիրակալող դաղափարը մեր անդրանիկ դաւանագրի մէջ: Այսքան ձախ էր նա. այսքան անպահանջ՝* հայրենիքի *եւ* ազգութեան *դաղափարների անդամ թեթեւակի հիմնաւորումին մէջ:*

Մարդկային պատմութեան ուրուագիծը տալով՝ վաղնջական օրերից մինչեւ Ծրագրի կազմութեան օրերը՝ մեր անդրանիկ դաւանագիրը իր ներածական բաժնում՝ «ԿԱԶՄԱԾ 1892 Թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ» *խորագրի տակ՝ գրում է.*

«Այն ժամանակից, երբ մարդկութիւնը ոտ է դրել քաղաքա-

---

*) Տե՛ս *մեր* «ԲՈԼՇԵՒԻԶՄԸ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ», 1949, Գահիրէ, էջ 103:

կրթութեան ուղիի վրայ, այն ժամանակից, երբ նա սկսել է ունենալ իր պատմութիւնը, մենք տեսնում ենք ամէն տեղ եւ ամէն ժամանակ իշխողներ ու տանջուողներ: Տառապեալների լաց ու կոծի, աշխատաւորների ծանր տնքոցի հետ միասին ամէն տեղից մեր ականջին են հասնում ձրիակեր իշխողների ցնծական աղաղակները: Այսպէս է եղել անցեալում, այսպէս է այժմ, սակայն այդպէս չի լինի ապագայում,— մենք հաւատացած ենք դրանում»:

Շարունակութեան մէջ «աշխատանք»ի յարաճուն յաղթանակի մասին խօսելով՝ Ծրագիրը վառ հաւատքով եզրափակում է.

«Եւ ան (*կեղեքուող տարրը*) կը հասնի կատարեալ յաղթութեան, երբ կը վերանան ամէն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները եւ արդիւնքը կը դառնան աշխատաւորի կատարեալ սեփականութիւն, երբ մարդկանց կառավարութեան կը փոխարինէ իրերի կառավարութիւնը»*):

Ինչպէս տեսնում էք, մեր անդրանիկ դաւանագրի համար պատմութիւնը այլ բան չէ՝ քան դասակարգերի *պայքար. ուրիշ՝* դասակարգայինից *տարբեր պայքարներ չկան. մեր դաւանագիրը մարդկային պատմութեան երկարաձիգ ճանապարհին լսում է միայն* «աշխատաւորի ծանր տնքոց»*ը, նա այլ «տնքոց» չի լսում. որովհետեւ մեր դաւանագիրը մարդկային պատմութեան մէջ միայն* «աշխատաւոր»ներ *ու* «կեղեքող»ներ *է տեսնում, նա այդ պատմութեան մէջ* ազգեր *ու* հայրենիքներ, ազգային *ու* հայրենական *պայքարներ չի տեսնում եւ* ազգերի *ու* հայրենիքների *«տնքոց»ը չի լսում:*

Մեր խօսքը Հայաստանի *ու* Հայութեան *մասին չէ. սա* մասնակի *խնդիր է. մեր խօսքը մեր դաւանագրի* ընդհանուր տեսութեան *մասին է, այն մասին, թէ նա ինչպէս է տեսնում* ընդհանրապէս մարդկային պատմութիւնը, *նրա դարաւոր քաղաքակրթական ընթացքը:*

Պատկերը աւելի մխիթարական չէ մեր երկրորդ դաւանագրում՝ «Նախագիծ»*ի մէջ:*

Նաեւ այստեղ, պատմա-փիլիսոփայօրէն մարդկային քաղաքակրթութեան ընթացքը դիտելով, մեր նոր դաւանագիրը վերջստին միայն դասակարգային *պայքարներ է նշմարում:*

Մի տեղ միայն «ազգ»ի եւ «հայրենիք»ի մասին խօսելով՝ «Նախագիծ»*ը յայտնում է.*

«Միապետական ֆէոդալիզմն ընկաւ, բայց նրա տեղ բարձրացաւ մի այլ դասակարգ, փողատէր դասակարգը — ԲՈՒՐ-

---

*) «ԾՐԱԳԻՐ», 1894, էջ 1–2:

ԺՈՒԱԶԻԱՆ: Կեղեքման մենաշնորհը վայրենի, բիրտ ուժից անցաւ աւելի քաղաքակիրթ ուժին — ԿԱՊԻՏԱԼԻՆ:

«Եւ առաջ եկան արեւմտեան հասարակութիւնների մէջ երկու բանակներ — բուրժուազիա եւ պրոլետարիատ (գործաւոր դասակարգ) — որոնք, թէեւ միացած ազգի, հայրենիքի ընդհանուր շահերով, բայց միեւնոյն ժամանակ տոգորուած էին տնտեսական շահերի հակառակութեամբ: Մինը նրանցից՝ տէր արդիւնագործութեան միջոցների — հողի, դրամի, մեքենաների, միւսը՝ զուրկ սեփականութիւնից: Հակամարտութիւնը երկու դասակարգերի միջեւ միշտ աւելի եւ աւելի բորբոքուեց, շնորհիւ օր աւուր առաջդիմող արդիւնագործութեան»*):

«Նախագիծ»ը «ազգ»ն ու «հայրենիք»ը յիշած է ոչ թէ բուն իսկ ազգի ու հայրենիքի մասին խօսելու համար, այլ նրանց յիշատակութեամբ է՛լ աւելի ընդգծելու համար սաստկութիւնը այն տնտեսական պայքարի, որ մղւում է «բուրժուազիա»յի եւ «պրոլետարիատ»ի միջեւ: Այս երկուսը՝ «բուրժուազիա»ն եւ պրոլետարիատ»ը, ըստ «Նախագիծ»ի, տնտեսական շահերով միշտ ներհակ են իրարու, մինչ «ազգ»ի եւ «հայրենիք»ի շահերով՝ միշտ միացած: «Նախագիծ»ը չի ընդունում, որ «պրոլետարիատ»ը եւ «բուրժուազիա»ն կարող են նաեւ նոյնանալ իրենց շահերով (օրինակ՝ բարգաւաճանքի հարցին մէջ որեւէ արդիւնաբերական ձեռնարկի, դրամատէրը այն պատճառով՝ որ այդ ձեռնարկը ինք այսօր ունի, իսկ բանուորութիւնը այն ակնկալութեամբ՝ որ նոյն ձեռնարկը ինք վաղը պիտի ունենայ). չի ընդունում «Նախագիծ»ը նաեւ այն, որ երկու բանակները իրենց շահերով կարող են նաեւ բաժանուել «ազգ»ի եւ «հայրենիք»ի հարցերի մէջ (օրինակ)՝ «բուրժուազիա»ն թեր լինելով մի որեւէ պատերազմի, իսկ «պրոլետարիատ»ը՝ դէմ):

Ուշադրաւ է սակայն, որ «Նախագիծ»ը՝ «ազգ»ի ու «հայրենիք»ի շահերով «բուրժուազիա»ն եւ «պրոլետարիատ»ը նոյնացընելով մէկտեղ, նրանց բաժանում է իրարից, երբ խնդիրը դառնում է միջազգային չափանիշով բանուորական ընդհանուր գրոհի շուրջ ընդդէմ դրամատիրութեան:

Երկու հակընդդէմ ուժերի — «սոցիալիզմ» եւ «կապիտալիզմ» — կազմաւորման պատկերը դնելով՝ «Նախագիծ»ը եզրափակում է.

«Սոցիալիստական շարժումը իր էութեամբ ՄԻԱԶԱԳԱՑԻՆ է: Բոլոր երկրների աշխատաւոր տարրերը, իբրեւ միեւնոյն կապիտալիզմի զոհեր, իբրեւ դառն ճակատագրի եղբայրակիցներ, մի-

*) «Նախագիծ», էջ 6:

անում են, ձեռ ձեռի տալիս եւ՝ գիտակ իրենց բարձր առաքելութեան, վստահ յաղթանակի վրայ՝ դիմում են կազմակերպուած պայքարի ճանապարհով դէպի մի սոցիալական կազմակերպութիւն, ուր չպիտի լինեն կեղեքողներ ու կեղեքուողներ, իշխողներ ու հպատակներ, ուր արդիւնաբերութեան միջոցները, դրամագլուխը պիտի լինի ՀԱՄԱՑՆԱԿԱՆ, ուր աշխատանքը, բաղաքակրթութիւնը եւ նիւթական վայելքները հաւասարապէս բաժին պիտի լինեն իւրաքանչիւրին»*):

Ինչպէս տեսնում էք, դիւրութեամբ «ազգ»երն ու «հայրենիք»ները փոշիացան. զուտ տնտեսական *դեռնի վրայ ամենազգի «կեղեքուող»ները եղբայրանում եւ միանում են ամենազգի «կեղեքող»ների դէմ՝ ընդհանուր գրոհով ապագայի արդար «սոցիալական կազմակերպութիւն»ը ստեղծելու համար...*

Այս գրոհի մէջ ազգային *եւ* հայրենական *ազդակները որեւէ դեր չեն խաղում...*

Այս տեսակէտով զգալի փոփոխութիւն կայ մեր վերջին — գործող — դաւանագրի եւ նախորդների միջեւ:

Վիեննայի (1907) *Ընդհ. ժողովը, որի մշակած Ծրագիրը իւրացուած է մեր յաջորդ Ընդհ. ժողովների կողմից, իր* «Ընդհանուր Տեսութեան» *մէջ, առաջին անգամը լինելով՝ առանձնաբար անդրադառնում է* ազգային *ազդակին:*

Հարցի կարեւորութիւնը նկատի առնելով՝ հարկադրուած ենք մի քիչ ընդարձակ մէջբերումներ կատարել:

Ընկերվար շարժման միջազգային բնոյթը մատնանշելուց յետոյ, ուր ամենազգի աշխատաւորները «կը միանան համաշխարհային հզօր եղբայրակցութեան մը մէջ», *Ծրագիրը յայտարարում է.*

«Դասակարգային պայքարը կը բարդանայ մասնաւորապէս այն երկիրներուն մէջ, ուր գերիշխող ազգութեան ներկայացուցիչները, իրենց ձեռքն առնելով պետական եւ ընկերային բոլոր հաստատութիւնները, կը ճնշեն տկար ազգերը եւ առհասարակ փոքրամասնութիւն կազմող միութիւնները:

«Զրկուելով ընկերային եւ պետական կեանքին գործօն մասնակցութեան հնարաւորութենէն, տուժելով թէ՛ նիւթապէս եւ թէ մշակութապէս, այդ տկար միութիւնները ետ կը մնան յառաջդիմութեան ճամբուն վրայ եւ այդպիսով կը դանդաղի համամարդկային զարգացման հետ աշխատաւորին ընկերվարական ազատագրումը, քանի որ այդպիսով խոչընդոտ կը դրուի, մէկ կողմէն՝ դասակարգային հակամարտութեան զարգացումին՝ ճնշուած ազ-

*) Անդ, էջ 8–9:

գութիւններուն մէջ, միւս կողմէն՝ ճնշող ու ճնշուող ազգերուն պատկանող աշխատաւոր դասակարգերուն համերաշխութեանը»:

Արտակարգօրէն ուշագրաւ է այս քաղուածքը:

Ուշագրաւ նախ այն պատճառով, որ ազգային ազդակը այս քաղուածքի մէջ նկատի առնուած չէ տնտեսականից անկախաբար, *իբրեւ մէկ* ինքնարժէք *երեւոյթ, այլ առնուած է* կապակցաբար *տնտեսականի եւ դիտուած «աշխատաւոր»ի տնտեսական շահերի լոյսի տակ: Իսկանն այստեղ «ընկերվարութիւն»ն է, որի նկատմամբ իբրեւ* ածանցական *մի արժէք է հանդիսանում ազգային ազդակը:*

Երկրորդ՝ ազգային ազդակը նկատի առնուած է «փոքրամասնութեան» *կերպարանքով,* միեւնոյն *պետութեան սահմանների մէջ: Քաղուածքի մէջ* ազգերը *հրապարակ չեն գալիս իրենց լրիւ կերպարանքով, իբրեւ* ինքնարժէք *եւ* հաւասարարժէք *մեծութիւններ, որոնցից ոմանք* (*եւ կամ շատերը*) *կարող են քանակապէս* փոքր *լինել* (*եւ չլինել նոյն պետութեան սահմաններում*), *առանց որակապէս* «փոքրամասնութիւն» *լինելու* (*եւ միշտ այս կամ այն պետութեան սահմանների մէջ գտնուելու*): «Փոքրամասնութիւն» *բառը գործածելով՝ քաղուածքը միայն ձեւապէս մատնանշում է* քանակը, *մինչ խորքին մէջ նկատի ունի* որակը՝ *տուեալ* «փոքրամասնութիւն»*ը պատկերացնելով իրեն ոչ իբրեւ լրիւ — եւ անկախ — ազգ՝ իր բոլոր ազգային ատորոգելիներով, այլ իբրեւ ազգային մի թերի միաւոր, որ որակապէս զուրկ է մի շարք ատորոգելիներից, յատուկ՝* «մեծամասնութիւն» *կազմող ազգերին:*

Միայն իր եղրափակիչ տողերի մէջ այս կաշկանդումներից ազատուելով եւ «փոքրամասնութեան» ու «մեծամասնութեան» խնդիրներ չյարուցանելով, այլ բուն ազգերին դառնալով՝ Ծրագիրը յայտարարում է.

«Փափաքելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահմանները ու ԻՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԶԳԵՐՈՒ ՄԻՋԵՒ, *ձգտելով հանդերձ կազմակերպել ՄԻԿ, ՆԵՐԴԱՇՆԱԿ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆ ՄԸ* (*բոլոր ընդգծումները՝ Ծրագրինն են.— Ն.*), այսօրուան կտոր-կտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհին տեղ,— ընկերվարութեան իրագործումը չի պահանջեր արդի ուրոյն ազգային միութիւններուն իսպառ ձուլումը, միութիւններ, որոնք իրենց պատմականօրէն ժառանգած բեղմնաւոր մասնայատկութիւններով կարող են միայն ճոխացնել ապագայ ընկերվար մարդկութիւնը»*):

---

*) ԾՐԱԳԻՐ, 1918, ԺԸՆԵ, էջ 16–17:

Ահա եւ ամբողջը...

Այլեւս ո՛չ մէկ խօսք ազգերի *մասին:*

Ո՛չ մէկ խօսք նաեւ հայրենիքի *մասին:*

Այս առիթով, տարիներ առաջ, նկատում էինք մենք.

«Այսպէ՛ ուրեմն:

«Հ. Ց. Դաշնակցութիւնը պաշտպան է հանդիսանում ազգային ուրոյն գոյութեան, որովհետեւ ընկերվարութիւնը ՉԻ ՊԱՀԱՆՋՈՒՄ (ի՞նչ սարսափելի բան...) նրանց ԻՍՊԱՌ ձուլումը:

«Այս նշանակում է, որ ընկերվարութիւնը իսպառ ՉՊԱՀԱՆՋԵԼՈՎ հանդերձ, մի չափով, այնուամենայնիւ, ՊԱՀԱՆՋՈՒՄ է ազգութեանց ձուլումը, եւ ապա, որ ամենէն գլխաւորն է, Ծրագրի բանաձեւումից այն տպաւորութիւնն է ստացւում, որ Դաշնակցութիւնը դէմ չէ ազգութեանց ուրոյն գոյութեան սոսկ այն պատճառով, որ ընկերվարութիւնը այդ պահանջը ՉԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ, այս ասել է միաժամանակ, որ եթէ մէկ օր ընկերվարութիւնը այդպիսի պահանջ առաջադրէր, ապա Դաշնակցութիւնը այդ պահանջին առջեւ տեղի պիտի տար (կամ կարող է տեղի տալ)»*):

Այս նոյնը մենք նկատում էինք Հայրենիքի *կապակցութեամբ, Նրա մասին յատուկ յիշատակութիւնը անհրաժեշտ գտնելով մեր դաւանագրի ոչ թէ այսպէս կոչուած* «Նուազագոյն», *այլ* «Առաւելագոյն» *բաժնի մէջ:*

Պարզ էր մեր դատումի եղանակը:

Ընկերվարութիւնը տարբեր բան չէ, քան մարմնաւորումը մի հասարակակարգի, *որ, ինչպէս ամէն հասարակակարգ, այսօր կայ, մինչ վաղը կարող է չլինել:*

Հասարակակարգերը անմեռ երեւոյթներ չեն. նրանք դալիս եւ անցնում են:

Այլ է Ազգի եւ Հայրենիքի պարագան:

Այս արժէքները դալիս են մարդկային պատմութեան խանձարուրից եւ ապրում ու ստեղծագործում են յաւերժութեան համար:

Եթէ դասակարգումի խնդիր կայ, ապա ստորադասը, Ազգի եւ Հայրենիքի բաղդատմամբ, Ընկերվարութի՛ւնն է եւ ոչ թէ ընդհակառակը:

Այսպէս ըմբռնելով հանդերձ՝ գրում էինք մենք.

---

*) Տե՛ս *մեր՝* «ՀԱՑԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ (Տեսական հիմնաւորման թռուցիկ ակնարկ)», 1924, ժընեւ, էջ 36:

«Ոչ թէ ընկերվարութիւնն է, որ, ձգտելով հանդերձ կազմակերպել մէկ, ներդաշնակ, ամբողջական մարդկութիւն այսօրուան կտոր-կտոր, բաժան-բաժան ու հակամարտ աշխարհի տեղ, չի պահանջում ազգային միութիւնների իսպառ ձուլումը եւ այդ պատճառով միայն ազգութեանց պահպանումը դառնում է մեր նպատակներից մէկը եւ ամօթխածօրէն տեղ գրաւում Ծրագրի առաւելագոյն բաժնում, այլ ազգութի՛ւնն է, որ, ձգտելով մարդկային համակենցաղի աւելի՛ փարթամ, աւելի՛ նոխ, աւելի՛ վեհ ձեւերի, որդեգրում եւ դաւանում է ընկերվար ուսմունքը, իբրեւ դէպի այդ նպատակը տանող մէկ վարդապետութիւն»*):

Այս նոյնը ճիշտ է նաեւ Հայրենիքների նկատմամբ:

Մենք նա՛խ Ազգի եւ Հայրենիքի հետ ենք եւ ապա այս կամ այն հասարակակարգի:

Եթէ ընկերվարութիւնը դէմ լինէր մեր յիշատակած երկու յաւերժական արժէքներին, մենք անվարան դէմ պիտի լինէինք ընկերվարութեան եւ մեր բովանդակ հասակով պիտի ծառանայինք ու պայքարէինք իր դէմ:

60 *տարիների ընթացքին այս դաղափարները այսպէս ըմբռնեցինք մենք, այսպէս ապրեցինք եւ այսպէս գործեցինք:*

Ինչո՞ւ, սակայն, այս նոյն դաղափարները այսպէս չձեւակերպեցինք մեր դաւանագրերի մէջ:

Այստեղ, այս ակամայ զանցառումին մէջ, տեսնել պէտք է հետքերը այն անուրանալի ազդեցութեան, որ ազգամերժ *ու* հայրենամերժ *Մարքսիզմը ունէր բովանդակ ընկերվար աշխարհի ու նաեւ մեր վրայ:*

Քրիստափորի եղերական մահուան առիթով, «Դրօշակ»ը, «ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ» խորագրին տակ, իր 1905 Ապրիլի խմբագրականով, ի միջի այլոց, գրում էր.

«Նա ՍՈՑԻԱԼԻՍՏ էր իր աշխարհայեցութեամբ, իր զգացումներով ու տեմպերամենտով, իր ամբողջ կեանքով, բայց նա ե՛ւ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ էր բառիս ամենավեհ նշանակութեամբ (*ընդգծումները՝ «Դրօշակ»ինն են.— Ն.*): Նրա հեռաւոր իդէալն էր՝ սոցիալիստական կազմակերպութիւնը համայնական սկզբունքների, ազգերի եղբայրութեան խարիսխի վրայ. նա մինչեւ անգամ ընդնշմարում էր ապագայի մառախուղի մէջ մի այնպիսի դրութիւն, ուր ԻՍՊԱՌ ԶՆԶՈՒԱԾ ԿԸ ԼԻՆԵՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, բայց նա եւ գիտէր միաժամանակ, որ իւրաքանչիւր մարդ-քաղաքացի պի-

---

*) Անդ, էջ 42:

տի աշխատէ իր հարազատ միջավայրում, պիտի ձգտէ իր սեփական ազգը բարձրացնելու»*):

Վերջին ընդդիմները մե՛նք կատարեցինք:

«Դրօշակ»ի տողերի մէջ լսւում է խուլ ձայնը այն «կոսմոպոլիտիզմ»ի, որի աւազանից անցած էր Մեծ Նահատակը, անցած էին իր գործակիցներն ու իր անդրանիկ աշակերտները:

Մենք, սակայն, այն բարեբախտութիւնն ունեցանք, որ գոնէ մեր ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԻ *մէջ Մարքսիզմից չաղդուեցինք. չաղդուեցինք նաեւ մեր* մամուլի *ու* գրականութեան *մէջ, հակառակ այն կատաղի պայքարին, որ տարւում էր մեր դէմ: Մեր թերացումը միայն մեր դաւանագրերի մէջ էր, մի պարագայ, որ օր առաջ անհրաժեշտաբար սրբագրել պէտք է: Մանաւանդ այժմ, երբ Մարքսիզմից պոկուած մի հզօր ու ծաւալուն թեւ՝ Բոլշեւիզմը՝ իրեն «ընկերվար» կոչելով՝ վարդապետօրէն ուրանում է Ազգն ու Հայրենիքը եւ իր ընթացիկ քաղաքականութեամբ ու վախճանական ձգտումով նախապատրաստում նրանց աստիճանական* ԶՈՒԼՈՒՄՆ *ու վերջնական* ՓՈՇԻԱՑՈՒՄԸ՝ *մարդկային բոլոր լեզուները* ՄԷԿ ԼԵԶՈՒՈՎ *եւ բոլոր հայրենիքները* ՄԷԿ ԱՇԽԱՐՀՈՎ *փոխարինելու համար:*

1929 *Մարտ* 18 *թուականով, «*ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԼԵՆԻՆԻԶՄԸ*» խորագրի տակ, Ստալին, խօսելով դալիք պայքարների այն շրջանի մասին, երբ բանուորութիւնը իր դիկտատուրան պիտի հաստատի բովանդակ աշխարհում, գրում է.*

«Այդ շրջանին, երբ համաշխարհային ընկերվար տնտեսաձեւը բաւականաչափ կ'ամրանայ եւ ընկերվարութիւնը կենցաղ կը դառնայ ժողովրդների համար, այդ շրջանին... ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԵՆ ՄԵՌՆԵԼ՝ ԻՐԵՆՑ ՏԵՂԸ ԶԻՋԵԼՈՎ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԷԿ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒ»**):

Մի այլ առիթով, 1930 *Յունիս* 27*-ին, իր այն զեկուցմանը մէջ, որ յանուն Կենտր. Կոմիտէի ներկայացնում էր Համամիութենական Կոմկուսի* 16*-րդ Համագումարին, Ստալին, խօսելով ազգութեանց մասին, հանդիսաւորապէս վկայում էր.*

---

*) «Դրօշակ»-ը իր 3-րդ համարի խմբագրականում (Փետր. 1892) անցողաբար հետեւեալ մատնանշումն է անում. *«Կասկած չկայ, որ ապագայում ցեղական սկզբունքը պիտի ոչնչանայ»:* «Հ. Յ. Դ. ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿ», 1890–1950, *կազմեց* Ս. Վրացեան, *Պոսթըն*, 1950, *էջ* 72):

**) Ի. Վ. ՍՏԱԼԻՆ — *«Երկեր»*, հ. 11-րդ, Մոսկուա, 1949, էջ 349:

«Երբ բանուորութեան դիկտատուրան յաղթանակած է միայն մէկ երկրում, այդ պարագային անհրաժեշտ է առաւել ծաղկումը ձեւով ազգային ու բովանդակութեամբ ընկերվար մշակոյթների, ՀԵՏԱԳԱՑԻՆ ԱՑԴ ՄՇԱԿՈՑԹՆԵՐԸ ԶՈՒԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԷԿ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԵՐՎԱՐ — ԸՆԿԵՐՎԱՐ ԹԷ՛ ՁԵՒՈՎ ՈՒ ԹԷ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ — ՄՇԱԿՈՑԹԻ ՄԷՋ, ՄԷԿ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՈՒՈՎ՝ երբ բանուորութիւնը յաղթանակած կը լինի ամբողջ աշխարհում եւ ընկերվարութիւնը դարձած կը լինի կենցաղ»*):

Ստալինից աւելի առաջ, իր ուսուցիչը՝ Լենին՝ նոյն հարցին դառնալով՝ «ԸՆԿԵՐՎԱՐ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱԶԳՈՒԹԵԱՆՑ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ» խորագրի տակ, գրում էր.

«Ընկերվարութեան նպատակն է վերջ տալ ոչ միայն մարդկութեան կոտորակումին մանր պետութեանց վրայ եւ ազգերի ամէն կարգի կղզիացումին միմեանցից, իր նպատակն է ոչ միայն ազգերի մերձեցումը, այլ եւ նրանց ՁՈՒԼՈՒՄԸ»**):

Կարելի է այս կարգի քաղուածքների շարանը անվերջ երկարել, սակայն իմաստ չունի. նոր քաղուածքները քանակապէս պիտի շատանան՝ որակապէս սկզբունքը միշտ նոյնը պահելով:

Բոլշեւիզմի քարոզած «ընկերվրութեան նպատակն է — ասա՛ եւ կրկնի՛ր — ազգերի եւ հայրենիքների խպառ ՁՈՒԼՈՒՄՆ ու ԱՆՀԵՏԱՑՈՒՄԸ:

Օդի մէջ նետուած քարոզ չէ այս, այլ նախածրագրուած ու ծաւալուն աշխատանքով հետապնդուող մի վառ նպատակ: Մենք այստեղ անկարող ենք մինչեւ իսկ ուրուագիծը տալ այդ աշխատանքի. վաւերագրենք միայն, որ Խորհրդային Միութիւնը իր անհուն միջոցները — նիւթական, մտաւոր ու բարոյական — տրամադրած է նաեւ այս նպատակին:

Այսօր Խորհրդային լեզուաբանների համար, երկրի բարձրագոյն վարժարաններում եւ գիտական բոլոր հաստատութեանց մէջ, պարտադիր է լեզուական այն ուսմունքը, որ Մառական *անունն է կրում.*

«Լեզուները,— *ուսուցանում էր Մառը,*— բազմալեզուականութիւնից ընթանում են դէպի միալեզուականութիւն:

«Ապագայի միակ լեզուի կազմութեան այս ընթացքը համաշ-

---

*) Ի. Վ. ՍՏԱԼԻՆ — «*Լենինիզմի Հարցերը*», 10–րդ հրատր., 1936, Մոսկուա, էջ 426–427:

**) Վ. ԼԵՆԻՆ — «*Երկեր*», 4–րդ հրատր., հ. 22–րդ, Մոսկուա, 1948, էջ 135:

խարհային է· նրանից չի կարող փրկուել եւ ո՛չ մէկ ազգութիւն՝ մեծապետականը ոչ աւելի, քան տկարուժեղը»*):

Այս «ընթացք»ը հիմնաւորելով՝ Մառը գրում էր·

«Ինչպէս որ մարդկութիւնը իր աշխատաւոր զանգուածների ստեղծագործ ճիգերով ընթանում է տնայնագործական, իրարից անջատ հանրայնութեան ու տնտեսութեան ձեւերից դէպի միակ ու ընդհանուր համաշխարհային հանրայնութիւն, այդ նոյն ձեւով նաեւ լեզուն նախնական բազմազանութիւնից վիթխարի քայլերով ընթանում է դէպի միակ ու ընդհանուր համաշխարհային լեզու**):

Մառը յորդորում էր անյապաղ իսկ աշխատանքներ տանել «ի շահ նախապատրաստումի մարդկային այդ միակ եւ ընդհանուր լեզուի, որ անխուսափելի հայցարկումն է (postulat) համաշխարհային քաղաքակրթական ընթացքի»***):

Այս մի քանի տողը այստեղ արձանագրեցինք լոկ ընդհանուր տպաւորութիւն տուած լինելու համար այսօր Ն· Միւթեան մէջ տիրակալող լեզուական դպրոցի մասին:

Հանրապարտադիր հանգամանք առած է այս դպրոցը, որովհետեւ մառական «լեզուաբանութիւն»ը նոյնացած է «ստալինաբանութեան» հետ, նոյնացած է Բոլշեւիզմի հետ·

«Ակադեմական Մառը այն կարծիքին է,— *միասնաբար գրուած մի յօդուածում վկայում են երկու համայնավար լեզուաբաններ,*— որ ԱՊԱԳԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ ՊԷՏՔ Է ՁՈՒԼՈՒԵՆ ՄԻԱԿ ու ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՄԷՋ, եւ այս կէտում Մառը հարազատած է այն ծանօթ դրոյթը, որ այնքան սպառիչ լիակատարութեամբ ու յստակութեամբ պարզած է ընկ· Ստալինը իր նշանաւոր գործի մէջ՝ «ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԼԵՆԻՆԻԶՄԸ»:****)

Անորոշ ոչինչ չկայ այստեղ· բոլոր կէտերը «ի»երի վրայ դրուած են այն վերաբերումի մէջ, որ Բոլշեւիզմը ունի ազգերի,

---

*) Վ· Ա· ՄԻԽԱՆԿՈՎԱ — *«Նիկոլայ Եակովլեւիչ Մառ»* (*Ակնարկ իր կեանքի եւ գիտական գործունէութեան մասին*), 1948, Մոսկուա, էջ 309:

**) Անդ, էջ 342:

***) Անդ, էջ 289:

****) Վ· Ն· ՆԻԿՈԼՍԿԻՑ եւ Ն· Ֆ· ԵԱԿՈՎԼԵՒ — *«Ն· Մառի ուսմունքի հիմնական դրոյթները լեզուի մասին»*, «Իմաստասիրութեան Հարցեր», Մոսկուա, 1949, թիւ 1, էջ 283:

հայրենիքների, լեզուների եւ ազգային մշակոյթների հանդէպ՝ նրանց բոլորին դէպի ընդհանուր ԶՈՒԼՈՒՄ առաջնորդելով։*)

Խորհրդային քաղաքականութիւնը ազգային հարցում այս նպատակն է հետապնդում։

Ու թողէք տարօրինակ չգայ երբ ասենք, որ ազգային մշակոյթների հանդէպ Բոլշեւիզմի սնուցած «գուրգուրանք»ի մէջ շատ աւելի մեծ վտանգ կայ, քան այդ մշակոյթների հանդէպ նրա քողարկուած թշնամանքի մէջ։

Գուրգուրալո՛վ ու քնացնելո՛վ է, որ Բոլշեւիզմը ազգերն առաջնորդում է դէպի այլասերում, այսօր՝ մի մշակոյթով, որ «ընկերվար» (ապազգային) է միայն «բովանդակութեամբ», իսկ վաղը մի այլ մշակոյթով՝ որ «ընկերվար» (ապազգային) պիտի լինի նաեւ «ձեւով»...

Եթէ Բոլշեւիզմը մինչեւ իսկ նոյնացած չլինէր իր արիւնոտ դիկտատուրային, եթէ նա մինչեւ իսկ ղերծ լինէր իր բոլոր արատներից, միայն իր այս վերաբերումը ազգութեանց եւ հայրենիքների հանդէպ բաւական պիտի լինէր, որպէսզի մենք մեր բովանդակ հասակով ծառանայինք իր վարդապետած «ընկերվարութեան» դէմ։

Մեր դաւանագրի մէջ իրենց պատուաւոր տեղը պէտք է գրտ-

---

*) Ինչպէս յայտնի է, Ստալին 1950ի ամրան անակնկալաբար ասպարէզ իջաւ Մառի դէմ, «Պրաւդա»յի էջերում նրա դէմ երկու յօդուած հրապարակելով, առաջինը՝ պաշտօնաթերթի 1950 Յունիս 20ի թւով («ՄԱՐՔՍԻԶՄԻ ԴԻՐՔԸ ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ»), իսկ երկրորդը՝ նոյն պաշտօնաթերթի 1950 Յունիս 29ի թւով («ԼԵԶՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»)։

Այս յօդուածները միաժամանակ լոյս տեսան նաեւ զատ գրքոյկներով։

Նկատել պէտք է սակայն, որ այս գրուքիւններից թէ՛ մէկը եւ թէ միւսը եւ ո՛չ մէկ կէտում չեն ժխտում ստալինեան (ու մառական) այն միւս «դրոյթ»ը, թէ մենք ընթանում ենք— ու պէտք է որ ընթանանք — դէպի Մէ՛կ մարդկութիւն, Մէ՛կ մշակոյթ ու Մէ՛կ լեզու։

Իսկ մեզ շահագրգռողն էլ տուեալ պարագային ճիշտ այս կէտն է։

Ստալինի հակամառական «ելոյթ»ի պատճառները ուրիշ տեղ են...։

Այս մասին, սակայն, ուրիշ առիթով։

նեն, իբրեւ յաւիտենական եւ անմեռ արժէքներ, Ազգն ու Հայրենիքը:

Ցստակ պէտք է լինի մեր ձեւակերպումը նաեւ Ընկերվարութեան մասին:

Մենք ընկերվար ենք ոչ միայն այն պատճառով, որ Ընկերվարութիւնը մեզ խոստանում է մի հասարակակարգ աւելի՛ արդար, աւելի՛ յառաջադէմ ու լուսաւոր քան մենք ունենք, այլ եւ այն պատճառով, որ նա մեզ խոստանում է ազատ եւ անկախ կեանք՝ յաւերժութեան սահմանուած ազգերի եւ հայրենիքների համար:

VI

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ (FEDERATION)

Իր տեղում ասացինք արդէն, որ պետական այս ձեւը գրեթէ անծանօթ է մեր անդրանիկ դաւանագրին. պատահաբար այնտեղ գործածուած «ինքնավարութիւն» բառը ստոյգ — եւ սպառիչ — ՝ի՛կայութիւն չէ՛ այն մասին, թէ դաւանագրի հեղինակները նախածրագրած էին դաշնակցային հիմերով վերակերտել Թուրքիան՝ նրա սահմաններում հայ ժողովրդին «ազատ Հայաստան» ապահովելու համար:

Թրքական դաժան կարգերի մէջ բարեփոխութիւն եւ տանելի կեանք պահանջելով իր ժողովրդի համար՝ Քրիստափորը իր ծանօթ յօդուածի մէջ — «ՄԻՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ» — գրուած 1900-ին, հետեւեալ ուշագրաւ յայտարարութիւնն էր անում.

«Թուրքե՛ր, մենք չենք ձգտում ոչ հայ թագաւորութեան վերականգման, ոչ թէկուզ 100 մարդուց միայն բաղկացած ռեւէ ազգութեան սպառնող (?.— Ն.) գերիշխանութեան, ոչ էլ անպատեհառ ձեր պետութիւնից անջատուելուն»*):

«Զենք»ի այսքան յստակ ձեւակերպումը տալով՝ «ենք»ի նոյնքան յստակ ձեւակերպումը Քրիստափորը չունի. իր յօդուածի մէջ դրական ձեւով եւ յստակ ու որոշակի բառերով Թուրք պետութեան վերակերտումի նոր հիմերը չկան:

Ապակենտրոնացման ճանապարհի վրայ մենք առաջին անգամ ոտք դրինք «Նախագիծ»ով, եւ դրինք Կովկասի մէջ: Աւելի ուշ այս սկզբունքը պաշտօնապէս որդեգրեցինք 1907-ի Ընդհ. Ժողո—

---

*) ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ — «Յեղափոխականի Մտքերը», 1931, Աթէնք, էջ 31:

*վում՝ Հայաստանի երկու հատուածների նկատմամբ, թէ՛ թըրքապատկան եւ թէ ռուսապատկան**)։*

Մեր նպատակը այս մասին խօսելը չէ, սակայն։

Այս վերյիշումն անելով՝ մենք պիտի ուզէինք պատասխանել հետեւեալ երկու հարցումներին.

Ա.— 1919-ին Հայաստանի անկախութեան գաղափարը որդեգրելով՝ մենք իսպառ հրաժարա՞ծ ենք դաշնակցային սկզբունքից։

Բ.— Այս երկու սկզբունքները՝ անկախութիւն եւ դաշնակցութիւն՝ ներքինաբար իրարու հա՞շտ են թէ ներհակ։

Անկախութեան յատկանիշը ընդունուած է տեսնել տուեալ ազգի գերիշխանութեան, *նրա* suzerainetéի *մէջ։*

Նա՛ է անկախ՝ ով գերիշխան *է։*

Սակայն, ի՞նչպէս ճշտել գերիշխանութեան սահմանները. ի՞նչպէս սահմանել պետական այս բացառիկ յատկանիշի էութիւնը։ Կար ժամանակ, երբ պետական իրաւունքի գիտակները խորհում էին, թէ գերիշխանութիւնը կարելի է բաժանել մասերի, ինչպէս որ բաժանում են հողը, ազգաբնակութիւնը, պետութեան պատկանող այս կամ այն նիւթական հարստութիւնը։ Սակայն, մարդկային խուզարկու միտքը ի վերջոյ եկաւ այն եզրակացութեան, որ գերիշխանութիւնը պետական կեանքի մէջ պաշտօնարար (fonctionnaire) *հանդամանք ունի՝ անչափելի բնոյթով, ուստի եւ բաժանելի չէ։*

Մեր հմուտներից անմոռանալի Ա. Շահխաթունեանը այս առիթով նկատում էր.

«Բայց ի՞նչպէս կարելի է բաժանել ֆունկցիաները, ո՞ւրտեղ է այն կոնկրետ մոմենտը ֆունկցիաների շրջանում, որով կարելի լինէր մաթեմատիկական ճշտութեամբ բաժանել. ֆունկցիան սուբստրատ չէ. նա գաղափարական հասկացողութիւն է, վերացական իրերի հետ գործ ունի, հետեւաբար՝ գերիշխանութիւնը (սուվերենիտետ), որ պետական ֆունցիաների հիմնաւորումն էր համարւում, չի կարող բաժանուել...»*)։

**) Վիեննայից մեկնելով եւ Պոլիս գալով՝ Զաւարեանը մի հրապարակային հաւաքոյթի մէջ խանդավառօրէն խօսում էր *ապակենտրոնացումի* մասին՝ նրա մէջ տեսնելով բովանդակ Թուրքիոյ փրկութեան բանալին (տե՛ս 1908-ին «Ազատամարտ»ի հրատարակութեամբ լոյս տեսած «ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ» խորագրով իր գրքոյկը)։

*) Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ — *«Ֆեդերալիզմ եւ Դեմոկրատիզմ»*, 1907, Թիֆլիզ, էջ 17։

Աւելի խորացնելով իր պրպտումները՝ անուանի պետակա-նագէտը՝ Իէլլինեկ՝ եկաւ այն եզրակացութեան, որ դերիշխանու-թիւնը պետութեան յատկանիշը, նրա նախապայմանը չէ։

Աւստրիացի հռչակաւոր գիտունը անկախութեան իբրեւ conditio sine qua non *դտաւ մի աւելի բարձր եւ աւելի ստոյգ յատկանիշ, քան դերիշխանութիւնն է։*

«Իէլլինեկը եկաւ այն եզրակացութեան,— *նկատում է Ա. Շահխաթունին*,— թէ պետութիւն լինելու համար հարկաւոր է, որ ՊԵՏԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ ԲԽԵՆ ՔՈ ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆ-ՔԻՑ՝ ՕՏԱՐԻՑ ՍՏԱՑԱԾ ԵՒ ՕՏԱՐԻ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿԱՑ ԶԼԻՆԵՆ»*)։

Վերջին ընդգծումները մե՛նք կատարեցինք։

Իէլլինեկի բնորոշումը, մեր համոզումով, բուն իսկ դերիշ-խանութեան իսկական սահմանումն է։

Անդրադառնալով այս հարցին՝ նկատում էինք մենք։

«Մի ժողովուրդ տուեալ վայրկեանին անկախ է, երբ, նախ՝ ԴՐՍԻ աշխարհի հանդէպ այդ ժողովուրդը Ի՛ՆՔՆ է նշտում իր անկախութեան ձեւը, չափն ու սահմանը եւ ոչ ուրիշը։ Եւ, երկ-րորդ՝ անկախ է մի ժողովուրդ, երբ նա, ազատագրուելով ԴՐՍԻ միջամտութիւնից, իր երկրի ՆԵՐՍԸ նշտում է իր անկախութեան ձեւը, չափն ու սահմանը ի՛ր իսկ ժողովրդի ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾԱ-ՄԱՍՆՈՒԹԵԱՆ կամքով։

«Այսպիսով, անկախութեան պահանջը, լինելով իրբեւ մէկ ԲԱՑԱՐՁԱԿ ու անվերաբաժնելի սկզբունք, իրականութեան մէջ կեանք է առնում յարաբերական բնոյթ կրող ձեւերով եւ միջոց-ներով»*)։

Անկախութեան գաղափարը ունի իր ձեւն ու բովանդակու-թիւնը։ *սրանցից առաջինը* տեւական *է ու* անփոփոխ, *մինչ երկ-րարդը՝* ժամանակաւոր *է ու* փոփոխական։ *Որոշ, քարացած ու անփոփոխելի, ստորոգելիներով նախասահմանուած* բովանդա-կութիւն *չունի անկախութեան գաղափարը։ Ազգաժողովն ու «ՄԱԿ»ը ստեղծելով՝ ազգերը իրենց երկրների անկախութիւնը չհարուածեցին, եւ կամ նոյն ազգերը եթէ վաղը Եւրոպայի (կամ համայն աշխարհի) Միացեալ Նահանգները ստեղծեն՝ իրենց եր-կիրների անկախութիւնը վերստին պիտի չհարուածեն։ Ձեւը պա-հելով՝ նրանք ժամանակի համապատասխան փոփոխութիւնները*

---

*) Անդ, էջ 17։

*) Տե՛ս *մեր՝* «ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ», 1924, Գահիրէ, էջ 22։

պիտի մտցնեն անկախութեան գաղափարի բովանդակութեան *մէջ։*

Իբրեւ ձեւ՝ Շէյքսպիրի Համլետը անմեռ է ու անփոփոխ, սակայն նա անփոփոխ չէ իբրեւ բովանդակութիւն։ *դարերի ճանապարհին տարբեր աչքեր նրա մէջ տարբեր իմաստ են տեսնում։ Իբրեւ ձեւ՝ միշտ նոյնն է եգիպտական Սֆինքսը, սակայն նա միշտ նոյնը չէ իբրեւ* բովանդակութիւն։ *դալիք դարերն էլ տարբեր խորհուրդ պիտի տեսնեն նրա մէջ, քան մենք տեսած ենք մինչեւ այսօր։*

Նոյնն է նաեւ անկախութեան նկատմամբ։

Թարգմանը հանդիսանալով Դաշնակցութեան դաւանանքի՝ աւելի քան քառորդ դար առաջ գրում էինք մենք.

«Ինչպէս անվերաբերելի է ազատութեան սկզբունքը (խօսելու, գրելու, դաւանելու, հաւաքուելու, շարժուելու եւն։ եւն։) անհատի համար՝ պետութեան մէջ, նոյնպէս անվերաբերելի է անկախութեան սկզբունքը (ազատօրէն, անկախաբար եւ ազգովին ապրելու, զարգանալու, ստեղծագործելու եւն։) ազգութեան համար՝ համամարդկային մեծ ընտանիքի մէջ։

«Որովհետեւ ազգութիւնը ոչ միայն իրաւունքների օբ'եկտ է (ազգութեան պատկանող անհատների համար), այլեւ իրաւունքների սուբ'եկտ (մնացեալ ազգերի եւ համայն մարդկութեան հանդէպ)։

«Ազգութիւնն իբրեւ մարդկային հաւաքականութիւնը յատկանշող մէկ ուրոյն ձեւ, հանդէս է գալիս ազգերի գոյութեան մրցադաշտում իբրեւ մէկ, անբաժան եւ լրիւ ամբողջութիւն, հրապարակ է իջնում իբրեւ փիզիքական անձ՝ իր անվերաբերելի պահանջով։

«Անկախութիւնը — ազգերի անկապտելի իրաւունքն է, ընդանց անվերաբերելի ու նուիրական սեփականութիւնը։

«Անկախութիւնը ազգ–սուբ'եկտի ազատութեան միակ ձեւն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը։

«Ու քանի որ անկախութեան սկզբունքը ազգութեան մէկ այսքան կարեւոր յատկանիշն է — երբ'ք փոփոխուող ու մշտապէս ապրող։ քանի որ ազատութեան սկզբունքը մէկն է մարդկութեան յարատեւ նպատակներից, եղել է ու պիտի մնայ, ուստի նաեւ անկախութեան սկզբունքը, իբրեւ ազգ–սուբ'եկտի ազատութիւնը մարմնաւորող միակ ու անխաբար ձեւը, պիտի մնայ ազգութեան նպատակների աշխարհում»*)։

---

*) Տե՛ս *մեր* «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ», 1924, ժընեւ, էջ 44–45։

Սակայն, դաշնակցութիւնը (federation) *ժխտումն չէ՛ անկախութեան գաղափարի. դաշնակցութիւնը խորթ չէ՛ անկախութեան սկզբունքին, այլ հարազատ է նրան. դաշնակցութիւնը մէկն է անկախութեան գաղափարին բովանդակութիւն եւ կեանք տուող ձեւերից. նախապայման է միայն, որ այդ դաշնակցութիւնը տուեալ ժողովուրդը ի՛նքը իւրացնի* ազատօրէն *եւ ի՛նքը ազատօրէն նրա չափն ու սահմանը ճշտէ թէ՛* ներքինաբար *եւ թէ* դրսի *աշխարհի հանդէպ:*

Անկախական–դաշնակցային *կերպարանքով տեսնելով մեր քարոզած գաղափարը՝ մեր նոյն գրքոյկի մէջ գրում էինք.*

«ԱՆԿԱԽԱԿԱՆ այն իմաստով, որ ամէն մէկ ազգութեան լիակատար քաղաքական ազատութիւնը պիտի նկատուի իբրեւ ա՛յդ ազգի (եւ ոչ ուրիշի) անբռնադատելի իրաւունքն ու անվերաբերելի սեփականութիւնը, որի տէրն ու դատաւորը ինքն է եւ ոչ ուրիշը, եւ ԴԱՇՆԱԿՑԱՑԻՆ նիշտ այն ընբռնումով, որ ազգերը մէկ, ներդաշնակ եւ ամբողջական մարդկութիւն կազմելու համար՝ հանդէս պիտի գան իբրեւ հաւասարարժէք եւ իրաւահաւասար ազատ միութիւններ եւ իրենց ազատ կամքով ու ԴԱՇՆԱԿՑԱՑԻՆ հիմերի վրայ տեղաւորուեն համամարդկային մեծ գերդաստանի մէջ»**):

Պիտի ուզէինք տալ այստեղ ամբողջութեամբ այն հատուածը, որով անմոռանալի Խաժակը փակում էր իր հանրածանօթ արժէքաւոր աշխատութիւնը՝ «ԴԷՊԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ».

«Մարդկային կուլտուրայի զարգացումը կրկնակի ճանապարհով արագ առաջ է ընթանում. կենտրոնացման ուղին տանում է դէպի ընդհանուր շահերի ամբողջացում, դէպի պետութիւնների խոշորացում եւ ընդլայնում. մինչեւ որ բոլոր մարդկութիւնը կ'ամփոփուի մի ամբողջութեան մէջ, կը կազմէ մի եւ միակ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ունենալով այնպիսի ընդհանուր օրէնքներ, որոնք յատուկ են բոլոր–բոլոր մարդ–ապրածներին՝ առանց բացառութեան: Իսկ, միւս կողմից՝ յարաճուն դիֆֆերենցիացիան, մշտագոյ բազմազանութիւնը կը թափանցէ ներս, կը շերտաւորէ, կը տարբերէ իրարից բազմազան պայմաններում ապրող բազմապիսի խմբակներն ու հասարակութիւնները: Մարդկային կուլտուրան ձգտում է յղկել, միօրինակութեան վերածել բնական պայմանները, իսկ բնութիւնը, յաւիտենական իր ըմբոստ կորովով, դիմադրում է կուլտուրայի այդ կրծող ուժին: Կենտրոնացման ուժին հակադիր՝ յարատեւում է ապակենտրոնացման ուժը, հակոտնեայ շարժումը: Մէկը հետե-

---

**) Անդ, էջ 45:

ում եւ յաղթանակում է այն ամէնի մէջ, ինչ որ համամարդկային է, ինչ որ կազմում է բոլոր մարդկանց էութեան մէջ ԸՆԴՀԱՆՈՒՐԸ, իսկ միւսը շեշտում է անհատների ու հասարակութիւնների ՏԱՐԲԵՐԱԿԱՆ մասը, նրանց զանազանակերպութիւնները»։

Այս զուգահեռ շարժումների դալիք ընթացքը գծելով՝ Խաժակը նկատում էր.

«Այդ կրկնակի շարժումը — կենտրոնացում եւ ապակենտրոնացում — գոյութիւն են ունեցել դարերից ի վեր, այժմ էլ կան եւ պիտի լինեն յաւէտ, քանի որ կայ կեանքի նշոյլ երկրագնդի վրայ, քանի դեռ Սպենսերի ասած էվոլիւցիայումն ենք ապրում եւ ոչ դիսոլիւցիայի, քայքայման շրջանում, որին յաջորդելու է համաշխարհային մահը երկրագնդի վրայ։

«Եւ այդ յարատեւ կրկնակի շարժումը մեզ տանում է դէպի համամարդկային Ֆեդերացիա, դէպի աշխատաւոր համայն մարդկութեան եղբայրական դաշնակցութիւն»*)։

Ֆեդերացիայի մէջ՝ անկախութիւն եւ անկախութեան մէջ՝ Ֆեդերացիա,— այս է մարդկային պատմութեան զուգահեռ եւ ներդաշնակ ընթացքը։

Այս սկզբունքները դաւանագրի մէջ դիւրին էր ձեւակերպել մինչեւ 1917 *թուականը, երբ Բոլշեւիզմը Ռուսիոյ մէջ տակաւին տիրացած չէր իշխանութեան. սակայն, այդ թուականից այս կողմ, այս աշխատանքը չափազանց դժուարացած է։ Բոլշեւիզմը՝ լոկ* բառեր *փոխ առնելով մեզանից (ինքնավարութիւն, դաշնակցութիւն, անկախութիւն), սակայն այդ բառերին համապատասխանող գաղափարները խարդախելով ու եղծելով՝ յաճախ յաջողում է չփոթ ստեղծել քաղաքական աշխարհի մէջ։ Երրորդ Միջազգայնականի երրեմնի վարիչը՝ Զինովիեւ՝ նոր ոչինչ չէր ասում, երբ* 1918 *Յունուար* 14*-ին, Խորհուրդների Համառուսական Համագումարի մէջ՝ յայտարարում էր.*

«Մենք միշտ պայքարած ենք ֆեդերասիոնի դէմ կուսակցական կազմակերպութեան մէջ։ Մենք կենտրոնացման կողմնակիցներ ենք...։ Մարգարէ լինելու պէտք չկայ նախատեսելու համար, որ պետութեանց դաշնակցութիւնը իր տեղը պիտի զիջի բանուորութեան հետապնդած կենտրոնացեալ միութեան»**)։

Հին է ու վարդապետօրէն հիմնաւորուած ընդհանրապէս մարքսիստների եւ առանձնաբար ռուս սոցիալ-դեմոկրատների

---

*) Գ. ԽԱԺԱԿ — «*Դէպի Ֆեդերացիա*», 1907, Թիֆլիս, էջ 371։

**) Մ. ՎԻՇՆԵԱԿ — «*Հայրենիքի մէջ*» («Սովր. Զապիսկի», գիրք VI, 1921, Փարիզ, էջ 260։

այն խօսքը թէ՝ «բանուորութիւնը գործ չունի ֆեդերացիայի հետ»*):

Բոլշեւիզմը որոշեց այս նպատակին հասնել, այսինքն «գործ չունենալ ֆեդերացիայի հետ»՝ բառը պահելով եւ գաղափարը թաղելով:

Քանի դիկտատուրան իր ծայրակէտին հասած չէր ու քանի դեռ կարելիութիւն կար համայնավար վարդապետութիւնը քիչ-շատ ազատօրէն քարոզելու Խ. Միութեան մէջ, այս ճշմարտութիւնները չէին քողարկում իրենք իսկ բոլշեւիկները:

Խորհրդային իրաւագէտներից Պլետնեով, խօսելով Խորհրդային «անկախ» հանրապետութեանց մասին, նկատում էր.

«Մեր անկախ հանրապետութիւնները իրենց իրաւասութեամբ շատ քիչ են տարբերւում նախայեղափոխական շրջանի տեղավարական հաստատութեանց իրաւասութիւնից»:

Նոյն Պլետնեովը վկայում էր միաժամանակ, որ «բոլոր անկախ հանրապետութիւններն ու ազգային-ինքնավար միաւորները երկրօրէն կազմում են շարունակութիւնը մէկ ու միացեալ ՌՍՖՍՌի, այսինքն ռուսական պետութեան»**):

Մի այլ գրիչ՝ Կ. Արխիպով՝ նոյն հարցը քննարկելով՝ խոստովանում էր.

«Իրաւատախտակին միջեւ մեր երկրի շրջանների եւ նահանգների, Հայաստանի, Եակուբիայի (մի յետամնաց ու հեռաւոր շրջան Սիբիրի մէջ.— Ն.) եւ այլ հանրապետութեանց՝ տարբերութիւն գրեթէ չկայ եւ կամ եթէ կայ՝ այդ տարբերութիւնը 1923-ին իսպառ հարթուած էր»***):

Այսքան անձեռնհաս ու անիրաւասու գտնելով Խորհրդային Հանրապետութիւնները՝ մի այլ գրիչ՝ Ա. Տուրուբիներ՝ նկատում էր.

«Այս իսկ հիմունքով հարկ է ընդունել, որ Վրաստանը, Հայաստանը եւ Ազրբէյջանը չեն կարող նկատուել իբրեւ ինքնավար հանրապետութիւններ»****):

Սակայն, ինչո՞ւ ծանրաբեռնել նիւթը այս կարգի քաղուածք-

---

*) Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ — «Ֆեդերալիզմ եւ Դեմոկրատիզմ», 1907, Թիֆլիզ, էջ 94:

**) «ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ԿԵԱՆՔ», 1922, գիրք Ա., էջ 16-30:

***) Կ. ԱՐԽԻՊՈՎ—«Խորհրդային ինքնավար շրջանները եւ հանրապետութիւնները», 1924, Մոսկուա, էջ 60:

****) Ա. ՏՈՒՐՈՒԲԻՆԵՐ—«Ակնարկ՝ Խ. Միութեան պետական կառոյցի շուրջ,» 1925, Մոսկուա, էջ 51:

ներով. առէք Խ. Հանրապետութեանց գործող Սահմանադրութիւնը:

Խ. Միութիւնը 58 նախարարութիւն ունի, 36–ը՝ համամիութենական, իսկ 22–ը՝ միութենական*):

Այս 58–ի դիմաց մեր «անկախ» հայրենիքը միայն հետեւեալ վեց նախարարութիւններն ունի,— 1) Աւտոմոբիլային տրանսպորտի, 2) Լուսաւորութեան, 3) Կոմունալ տնտեսութեան, 4) Ջրային տնտեսութեան, 5) Սոցիալական ապահովութեան եւ 6) Տեղական արդիւնաբերութեան**):

«Նախարարութեանց» այս թշուառ ցանկը բաւական է վկայելու համար, թէ ի՞նչ ծաւալ, ի՞նչ խորութիւն ունի մեր երկրի «անկախութիւն»ը:

Արդար չէր Պլետնեով. ցարական շրջանի տեղավարութիւնները շատ աւելի լայն իրաւասութիւններ ունէին, քան ունեն այսօրուան Խորհրդային Հանրապետութիւնները:

Ո՞ւր է դաղտնիքը. ի՞նչպէս կը լինի, որ Խ. Միութեան մէջ «անկախ հանրապետութիւն»ը աւելի քիչ ձեռնհասութիւն ունի, քան ունէր ցարական շրջանի տեղավարութիւնը. ի՞նչպէս կը լինի, որ՝ իբրեւ «դաշնակցային» (Ֆեդերատիւ) կապ՝ ցարական շրջանի նահանգապետութիւնները աւելի իրաւասու միաւորներ էին՝ շատ աւելի ինքնավար ու ինքնօրէն, քան Խ. Միութեան դաշնակցային «անկախ» պետութիւնները:

«Պրաւդա» իր 1949 Օգոստ. 14 խմբագրականով նկատում էր.

«Խորհրդային իրաւակարգի կենսական հիմունքը — fաղաfականութիւնն է»:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՉ ԻՐԱՒՈՒՆՔԸ:

«Իրաւունք»ը որեւէ դեր չունի իրաւա՛կան հիմ ունեցող բոլոր կառոյցների մէջ՝ ինքնավարութիւն, դաշնակցութիւն, անկախութիւն եւա՛յլն:

Նիւթը չծանրաբեռնելու համար՝ միայն մի երկու քաղուածք հարցին հմուտ մի հեղինակից.

Երկհատոր «ՀԱՅԱՍՏԱՆ»ի հեղինակը՝ Բ. Բորեան՝ «Ազգութեան ինքնորոշման իրաւունքը եւ պետութեան գերիշխանութիւնը» խորագրի տակ՝ նկատում է.

«... Ազգային հարցը ոչ թէ իրաւական, այլ fաղաfական հարց է եւ այդ իսկ պատճառով կարելի չէ այդ հարցը ներխցել իրաւագիտութեան անձուկ շրջանակների մէջ: Այդ հարցը՝ միջազգային fաղաfականութեան եւ բանուորական յեղափոխու-

*) «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ», 1947, Մոսկուա, էջ 22–24:

**) «ՀՍՍՌ Կոնստիտուցիա», 1947, Երեւան, էջ 16:

թեան հարց է, իրաւագիտութիւնը ի վիճակի չէ նրան պատասխանելու: Այդ նոյն ձեւով նաեւ ազգութեան, ժողովրդի ու պետութեան գերիշխանութեան հարցը ոչ թէ իրաւական, այլ քաղաքա՛ն հարց է, նա զէնք է դասակարգերի մղած պայքարի մէջ եւ միջոց՝ դասակարգային տիրակալութեան եւ դասակարգային նպատակի հասնելու համար»:

Իր խօսքի շարունակութեան մէջ այն միտքը արծարծելով, թէ որեւէ ազգի ինքնորոշման հիմնական ազդակը, եւ ճշտումի հիմը այդ ազգի գերիշխանութեան ատիճանի եւ նրա պետական դոյութեան՝ նախապայմանաւորուած են միայն եւ բացառաբար տուեալ վայրկեանի «քաղաքական եւ տնտեսական պայմաններով», Բորեանը նկատում է.

«Ո՛չ թէ ազգութիւնը եւ ոչ թէ ազգային գիտակցութիւնն են հանդիսանում ազդակները ազգութեանց ինքնորոշման իրաւունքի լուծման մէջ, այլ նրանց տնտեսական վիճակն ու քաղաքական կացութիւնը, եւ միայն տուեալ միջազգային դիրքով ու նրա ունեցած նշանակութեամբ քաղաքականութեան մէջ նախորոշւում է այդ ազգի քաղաքական եւ իրաւական կազմակերպման ու ինքնակազմակերպման իրաւունքը»*):

Ինչպէս տեսնում էք, հիմը բոլոր հարցերի — ինքնավարութիւն, դաշնակցութիւն, անկախութիւն, գերիշխանութիւն եւն. — արմատապէս տարբեր է:

Մի ազգ, որ ինքնորոշման բոլո՛ր տուեալները ունի, կարող է եւ չինքնորոշուել (հակառակ իր կամքի), ու մի ազգ, որ ինքնորոշման եւ ո՛չ մէկ տուեալ ունի, կարող է «ինքնորոշուել» (դարձեալ հակառակ իր կամքի):

Որովհետեւ այս հարցերի մէջ էականը տուեալ ազգի իրաւունքը *չէ՛, այլ նրա* միջազգային *կշիռը, այդ ազգի «ինքնորոշման» սահմանուած դերը քաղաքականութեան մէջ, այն ծառայութիւնը, որ տուեալ ազգը իր «ինքնորոշման իրաւունք»ով կարող է բերել* «դասակարգային տիրակալութեան եւ դասակարգային նպատակների» *հասնելու համար...*

Խորհրդային ականաւոր իրաւագէտներից պրոֆ. Ռայսներ՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ուկրայնայի «ինքնորոշման» մասին խօսելով եւ «ինքնորոշում» բառը հեգնաբար ԶԱԿԵՐՏԵԼՈՎ՝ նը-կատում էր.

«Կարելի չէ պնդել, թէ ազգային գիտակցութիւնը խաղացած է առաջին եւ հիմնական դերը Ուկրայնայի, Վրաստանի եւ Հա-

---

*) Բ. ԲՈՐԵԱՆ — «*Հայաստան (Միջազգային դիւանագիտութիւնը եւ Խ. Միութիւնը)*», հ. Բ., 1929, Մոսկուա, էջ 380:

յաստանի «ինքնորոշման» մէջ. ընդհանրական. որոշիչ դերը այդ հարցում խաղացած են տնտեսական պայմանները»*):

Ռայոնների այս յայտարարութեանը դառնալով՝ Բորեանը — անհետ կորսուածներից — մեկնաբանում է.

«Ձակերտուած «ինքնորոշումը» ընկ. Ռայոնների մօտ, ըստ երեւոյթին, բացասական բնոյթ ունի. իր ըմբռնումով՝ ազգերը, ըստ երեւոյթին, չեն ինքնորոշւում, այլ նրանց «ինքնորոշում են»**):

Եւ ճիշտը այս է. Ա. Միութեան մէջ, միշտ ունկնդիր միայն եւ բացառաբար քաղաքականութե՛ն *թելադրանքին — բայց երբե՛ք* Իրաւունքի — *ազգերին կա՛մ «ինքնորոշում» եւ կամ նը-բանց «չեն ինքնորոշում»...*

Իր հերթին նաեւ ինք՝ Բորեան՝ հարցը ճիշտ նոյն ձեւով ըմ-բռնելով՝ նկատում է.

«Մի բան անկասկած է. գերիշխանութիւնը միշտ քաղաքական զէնք եղած է դասակարգային պայքարի մէջ ի խնդիր պետական իշխանութեան, ի խնդիր այս կամ այն (*քաղաքական–դասակար-գային.—Ն.*) նպատակի իրագործման***):

Այս նախադրեալը հիմ առնելով ու մեզ առարկելով՝ հեղինա-կը նկատում է.

«Այս իսկ պատճառով բնական է, երբ աջից ու ձախից Հա-յաստանի համայնավարներին մեղադրում են այն բանում, թէ խորհրդային Հայաստանը գերիշխան պետութիւն չէ, ու երբ մի-աժամանակ դաշնակցական «տեսաբան» Նաւասարդեանը ազգու-թեան հիմը տեսնում է անկախութեան մէջ, յայտարարելով իր՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ» գրքոյկի 43–45 էջերի վրայ (տե՛ս Ա. ՄԵԱՍՆԻԿԵԱՆԻ՝ «Հայ քաղաքական կուսակցութիւն-ները գաղթաշխահում», 59), թէ «անկախութիւնը — ազ-գերի անկապտելի իրաւունքն է, նրանց անվերաբաժնելի ու նուի-րական սեփականութիւնը», թէ «անկախութիւնը — ազգ–սուր-եկտի ազատութեան միակ ձեւն է, անկաշկանդ ապրելու եւ ստեղծագործելու միակ միջոցը», թէ «ազգայնօրէն ազատ ապ-րելու իրաւունքը տարածել պէտք է ազգային ամբողջականու-թեան վրայ ինչպէս հայրենիքի մէջ, այդպէս նաեւ հայրենիքից դուրս»:

Իր խօսքի շարունակութեանը մէջ այս նախադրեալները մեր-

---

*) *Մ.* ՌԱՑՄՆԵՐ — *«Բուրժուազիայի պետութիւնը եւ* ՌՍՖՍՌ», 1923, Մոսկուա, էջ, 381:

**) *Տե՛ս Բորեանի «Հայաստան»ը, հ. Բ., էջ* 380:

***) ԲՈՐԵԱՆ — *«Հայաստան»*, հ. Բ., էջ 366:

ժելով՝ հեղինակը «անկախութեան» համար բաւական է գտնում, մասնաւորաբար Հայաստանի նկատմամբ, ապահովել հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեան պաշտպանութիւնը եւ երաշխաւորել հայ երկրի տնտեսական զարգացումը)...*

Սակայն, այս իսկ ճշմարիտ չէ:

Ռուսիոյ Կոմուն. Կուսակցութեան 12-րդ Համագումարում կենտրոնի տնտեսական շահերը պաշտպանելով ընդդէմ ծայրամասերի, Ստալին, իր 1923 Ապր. 25-ի խօսքի մէջ, յայտարարում էր.

«... Պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական հիմքն ամենից առաջ եւ գլխաւորապէս կենտրոնական, արդիւնաբերական շրջաններն են, եւ ոչ թէ ծայրամասերը, որոնք գիւղացիական երկիրներ են: Եթէ մենք չափազանցութեան մէջ ընկնենք յօգուտ գիւղացիական ծայրամասերի ի վնաս պրոլետարական շրջանների, ապա պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կարող է ճեղք առաջ գալ»**):

Պարզ է Ստալինի խօսքի իմաստը:

Եթէ մի երկրի տնտեսական վերելքին զօրավիգ լինելով՝ կարող է «ճեղք առաջ գալ դիկտատուրայի սիստեմում», ապա պէտք չէ զօրավիգ լինել:

Եթէ մի ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը պաշտպանելով՝ «ճեղք»ի սպառնալիք կայ, ապա պէտք չէ պաշտպանել...

Եւ Ստալին իր ունկնդիրներից այս ճշմարտութիւնը բնաւ չէր թաքցնում:

Իր նոյն խօսքի մէջ Ստալին անվարան վկայում էր.

«Մեզ համար, որպէս կոմունիստների, պարզ է, որ մեր ամբողջ աշխատանքի հիմքը բանուորների իշխանութիւնն ամրապնդելու աշխատանքն է, եւ միայն դրանից յետոյ է մեր առջեւ ծառանում միւս հարցը, շատ կարեւոր, բայց առաջինին ենթակայ մի հարց — ազգային հարցը»:

Իր այս միտքը խորացնելով ու հիմնաւորելով՝ համայնավար աշխարհի առաջին «տեսաբան»ը վկայում էր.

«Հարկաւոր է յիշել, որ բացի ժողովրդների ինքնորոշման իրաւունքից կայ նաեւ բանուոր դասակարգի՝ իր իշխանութիւնն ամրապնդելու իրաւունքը, եւ այս վերջին իրաւունքին է ենթարկուած ինքնորոշման իրաւունքը: Դէպքեր են լինում, երբ ինքնորոշման իրաւունքը հակասութեան մէջ է մտնում մի ուրիշ, աւելի բարձր իրաւունքի հետ,— իշխանութեան գլուխ անցած բան-

---

*) Անդ, էջ 366-367:

**) Ի. ՍՏԱԼԻՆ — «Երկեր», հ. 5-րդ, 1948, Երեւան, էջ 294:

ուոր դասակարգի կողմից իր իշխանությունն ամրապնդելու իրաւունքի հետ: Այսպիսի դէպքերում,— այս ուղղակի պէտք է ասել,— ինքնորոշման իրաւունքը չի կարող եւ չպէտք է խոչընդոտ հանդիսանայ բանուոր դասակարգի կողմից իր դիկտատուրայի իրաւունքն իրականացնելու գործին: Առաջինը պէտք է տեղի տայ երկրորդի առաջ*):

Ազգային հարցի «տեսակարար կշիռ»ի մասին ամէն թիւրիմացութիւն իր ունկնդիրների մօտ փարատած լինելու համար՝ Ստալինը վկայակոչում էր իր ուսուցչին՝ Լենինին.

«Ինքնորոշման վերաբերեալ յօդուածում քննարկելով Մարքսի նամակն ազգային հարցի մասին, ընկ. Լենինն այսպիսի հետեւութիւն է անում.

«ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑ»Ի ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՔՍԻ ՀԱՄԱՐ ԿԱՍԿԱԾԻ ԵՆԹԱԿԱՑ ՉԷ»:

«Այստեղ ընդամէնը երկու տող է, բայց նրանք վճռում են ամէն ինչ: Ահա այս պէտք է ականջի օղ դարձնեն չափից դուրս եռանդոտ մեր մի քանի ընկերները»**):

«Օղ» պէտք է դարձնենք նաեւ մենք:

Ազգութեանց չռայլուած բոլոր «խոստում»ները, ազգերին տրուած բոլոր «իրաւունք»ները տարբեր բան չեն, քան քաղաքական մթին ու դաւալից օրօր՝ ազգերին քնացնելու եւ քուն վիճակում նրանց դէպի ձուլում ու անհետացում առաջնորդելու համար:

Մեր դաւանագրի մէջ, հիմնովին հակառակը լինելով բոլշեւիկեան դաւանագրին, յստակ ձեւակերպութեամբ տեղ պէտք է գտնեն հետեւեալ մտքերը.

Ա.— Ազգը բացարձակ արժէք լինելով՝ ազգային հարցը չի կարող որեւէ հարցի բաղդատմամբ ստորադաս նշանակութիւն ունենալ:

Բ.— Ազգային հարցի հիմունքը ոչ թէ քաղաքականութիւնն է, այլ Իրաւունքը. այդ հարցը ոչ թէ գործելակերպի խնդիր է, այլ սկզբունքի:

Գ.— Ֆեդերասիոնը ազգային անկախութեան կիրառումի ձեւերից մէկը լինելով՝ իբրեւ այդպիսին տեղ պէտք է գրաւի մեր դաւանագրի մէջ:

---

*) Անդ, էջ 293–294:

**) Անդ, էջ 295:

XII

ԱՆՀԱՏԸ

Երկու մեծ գաղափարներ — անհատ *եւ* հաւաքականութիւն — *գունաւորում են մարդկային քաղաքակրթական պատմութեան զրեթէ բովանդակ ընթացքը։ Այս գաղափարները երբեք հաշտ չեղան իրարու, նրանք իրարու միշտ ներհակ մնացին՝ տեւաբար տեղի տալով բուռն ու կատաղի հակամարտութեանց։ Մարդկային պատմութեան մէջ մե՛րթ* անհատը *եղաւ հանրային իդէալի առանցքը (անհատը իր լրիւ, բազմակողմանի ու ազատ զարգացումով), մերթ՝* հաւաքականութիւնը *(կա՛մ հատուածական եւ կամ համամարդկային ու ընդհանրական բնոյթով)։ Այս վերջինը՝* հաւաքականութիւն (collectif)՝ *իր ձեւերը փոխելով* — հասարակութիւն, դասակարգ, եկեղեցի, պետութիւն *եւ այլն — իր էութեանը մէջ երբեք չէր փոխուում։ Նա միշտ պահանջում էր* անհատից *բոլորանուէր նուիրում ու զոհաբերութիւն, իր՝* հաւաքականութեան *լրիւ եւ ամբողջական յաղթանակը ապահովելու համար։ Անդամ քրիստոնէական* Կրօնքը, *որ* Մարդուն *աստուածային կերպարանքը տուաւ եւ նրա մէջ* — իւրաքանչիւրին անխնայ — *Աստծուն ճանաչելու եւ Աստծուն նմանուելու յատկութիւնը դրաւ (նմանուելու ոչ միայն բարութեամբ, այլ եւ ազատասէրութեամբ ու արարչագործ ուժով), այդ* Կրօնքն *իսկ, հետագային հաւաքական կազմակերպ ուժի՝* Եկեղեցու *կերպարանքը առնելով՝ փորձեց խպաւ հրաժարուել* անհատի *գաղափարից եւ ամենքից ամէն զոհողութիւն պահանջել միայն եւ բացառաբար* հաւաքականութիւնը *խորհրդաւորող* Եկեղեցու *համար։ Եւ աննկատ՝ Եկեղեցին ազատագրման ղէնքից կեղեքման ղէնք դարձաւ. 17-րդ դարում, օրինակ, կաթոլիկութեան տեսաբանները այն սկզբունքն էին քարոզում, թէ Աստուած առանձին* անհատներ *չի ճանաչում, այլ միայն ընդունում եւ ճանաչում է* հաւաքականութիւնը—non singulos homines, sed societatem.*)

Նոյնքան պահանջկոտ եղան՝ անվերապահ ու բարցաձակ՝ նաեւ այն դպրոցները, որոնց հանրային իդէալի առանցքը՝ անհատն *էր կազմում։*

Եւ սրանցից իւրաքանչիւրը—անհատ թէ հաւաքականութիւն— *իր յաղթանակի մէջ էր տեսնում մարդկային յառաջդիմութեան գրաւականը։*

Եւ այսպէս տեսնելով մարդկային պատմութեան ներքին

---

*) Ի. ՀԵՍՍԷՆ — «*Հանրային իդէալի որոնումը*», 2-րդ հրատար., 1922, Բերլին, էջ 16։

խորհուրդը՝ ի՛ր յաղթանակի համար հակառակորդ կողմից պահանջում էր ամէ՛ն զոհողութիւն։

«Մարդը հասարակական կենդանի է»,— այսքան ճիշտ սահմանած էր Արիստոտելը մարդու էութիւնը։

«Հասարակական կենդանի»ն տեսնելով մարդու մէջ՝ գերման իմաստասէրը՝ Բեորնէ՝ սրամտաբար նկատում էր,— "Viles kann der Mensch entbehren, nur den Menschen nicht" — Մարդը կարող է հրաժարուել ամէն բանից, բայց միայն ոչ մարդուց։

Այս հրաժարումը անկարելի լինելով՝ մարդու մէջ «հասարակական»ը հարկադրուած է իր նմաններից կազմուած «հասարակութեան» որոշ զիջումներ անելու՝ մարդոց ընկերային ու հաւաքական կեանքը կարելի դարձնելու համար։

Սակայն, այս զիջումները բանական չատանալով ու դիզուելով՝ նոր որակ են դառնում և Հոբսի մեծ վիշապի՝ Leviathan-ի կերպարանքը տալիս նորաստեղծ հաւաքականութեան։

Եւ կամ, ընդհակառակն, յանուն անհատի ամէն զիջումից հրաժարուելով՝ մարդուն նոր ու հակահասարակական որակ ու յատկութիւն են տալիս, նրան դարձնում Ռոբինզոն եւ առանձնակի վիճակի մէջ տեղափոխում մի ամայի կղզի։ Այս «Ռոբինզոն»ը «գերմարդ» իսկ դառնալով՝ իր ոգորումների ամենէն բուռն վայրկեանին Նիցշէի բերանով դառնում է իր հետեւորդներին եւ ասում նրանց — «Մտածումը անձնասպանութեան մասին մխիթարանքի հզօր միջոց է· այդ մտածումով միայն մէկ ծանր գիշեր չէ ,որ կարող ես բարեյաջող լուսացնել»։

Ծայրայեղութեան տանելով զոյգ դաղափարները՝ անհատապաշտները մարդն են հակադրում մարդկութեան, մինչ հակառակորդները՝ մարդկութիւնը մարդուն։

Հին Սպարտան յանուն հաւաքականութեան Տայգէտեան ժայռից վար էր նետում տկարածին մանուկներին, անբուժելի հիւանդներին ու անկարող ծերերին· այսօրուան «քաղաքակիրթ» մարդկութիւնը այս բոլորին գուրգուրանքով պահում ու խնամում է, սակայն, յանուն հաւաքականութեան, միլիոններով կըրակների մէջ է նետում երիտասարդ ու քաջառողջ կեանքեր··· Իսկ այսօր, ջրածին ռումբի դարաշրջանին, խօսւում է այլեւս մարդկութեան փրկութեանը մասին··· մարդկութի՛նը զոհաբերելով։

Այս ակամայ շեղումը կատարեցինք՝ աւելի յստակ դարձնելու համար խորութիւնը այն հակընդդէմ կարծիքների, որ մատնանշուած հարցերի շուրջ կայ ընկերվարութեան երկու խոշոր թեւերի միջեւ՝ մարքսիստ եւ ոչ-մարքսիստ։

Ճշմարտութեան դէմ մեղանչում պիտի չլինէր վկայել, որ

հաւասարականութեան վարդապետներից եւ ո՛չ մէկը — Պղատոնից ու Օգոստինոսից մինչեւ Հեկել, Ֆէյէրբախ ու Կոնտ — այն ծայրայեղութեան չտարաւ իր ուսմունքը, ինչ ծայրայեղութեան որ տարաւ Մարքսը՝ բացառաբար հասարակութեան մէջ տեսնելով — բայց երբեք նաեւ անհատի — յառաջդիմութեան մղիչ ազդակը:

Այս ազդակը միայն հասարակութեան մէջ տեսնելով՝ Մարքսը ամենքից եւ ամէն զոհողութիւն պահանջեց բացառաբար այս հասարակութեան համար, որի դատը, ըստ մարքսիզմի, վարում է բանուոր դասակարգը:

Միայն այս հասարակութեան ներքին կատարելագործումով պիտի փրկուէր անհատը. նա փրկութեան ուրիշ ելք չունէր:

Հետեւեալ սեղմ կէտերի մէջ կարելի է ամփոփել մարքսեան վարդապետութիւնը, նրա աշխարհայեցողութիւնը.

Ա.— Ամէն բան կերպաւորում է տնտեսական ազդակը, եւ հասարակութեան մէջ եղած ընկերային փոխյարաբերութեանց պատկերը արտացոլումն է այն միւս պատկերի, որ կայ տնտեսութեան արտադրական ուժերի աշխարհում:

Բ.— Եւ, հետեւաբար, ոչ թէ մարդու գիտակցութիւնն է որոշում նրա հասարակական կեցութիւնը, այլ այս վերջինն է որոշում նրա գիտակցութիւնը:

Գ.— Իսկ այս նշանակում է, որ այս որոշումի մէջ դեր են խաղում ոչ թէ գաղափարները, այլ միայն փաստերը:

Դ.— Գաղափարները, մարդկութեան բովանդակ հոգեկան կեանքը՝ լեզու, գիր, մշակոյթ, երգ, նուագ, կրօն, իրաւունք, արուեստ, ընտանեկան յարաբերութիւններ, բարոյական հասկացողութիւններ, նաշակ, ըմբռնում, հայեացքներ եւ այլն, այս բոլորը ինքնուրոյն արժէքներ չեն բնաւ, այլ տրուած ու նախապայմանաւորուած են տուեալ վայրում իշխող ուժերի կացութեամբ եւ այդ ուժերի զարգացման աստիճանաչափով. այս ամէնը կազմում են «վերնաշէնք»ը այն «հիմնաշէնք»ի, որ կոչւում է տնտեսութիւն:

Ե.— Գաղափարները դեր չկատարելով՝ պատմութեան մէջ ինքնուրոյն դեր չեն կատարում նաեւ գաղափարակիրները, իբրեւ անհատներ:

Զ.— Այս դերը կատարում են միայն զանգուածները. իսկ դրամատիրութեան դարաշրջանին այս դերը կատարում է բանուոր դասակարգը, պատմութեան առաջմղիչ ազդակը, այն ոյժը, որ կոչուած է մեռնող դասակարգի ձեռքից իշխանութիւնը խլելու եւ ընկերվար հիմերով նոր հասարակարգ կերտելու:

Անցողակի նկատենք, որ, անհատի դերը ուրանալով, մարքսիզմը ուրանում ու զրժում էր եւ ահաբեկման արժէքը:

Մեր դաւանաղրերից ո՛չ անդրանիկ Ծրագրի եւ ոչ էլ «Նախագիծ»ի մէջ քննութեան ենթակայ հարցի մասին ոչինչ չկայ։ Սակայն, մի կողմնակի փաստ անուղղակի ձեւով դալիս է վկայելու, թէ Ծրագիրը ի՞նչ մեծ կարեւորութիւն էր տալիս անհատին։ Դէմ դնալով Մարքսիզմին, որի ազդեցութիւնը անուրանալի է մեր հիմնադիրների վրայ, այս վերջինները նորաստեղծ կազմակերպութեան կռուի միջոցների մէջ առանձնաբար յիշատակում են ահաբեկումը.

«8.— Կռիւ մղել եւ տեռորի ենթարկել կառավարչական մարդկանց, մատնիչներին, դաւանանքներին, վաշխառուներին եւ ամէն տեսակ հարստահարիչներին»*)։

Մեր առաքեալները եթէ մարքսիստօրէ՛ն դատէին եւ անհատի դերը ուրանային պատմութեան մէջ՝ իրենց կռուի միջոցների մէջ այսքան լայնարձակ տեղ ահաբեկման երբեք պիտի չտային։

Կայ աւելի ուշագրաւը։

Այս կարեւոր կէտում յստակ կերպով արտայայտուած է Դաշնակցութեան ինքնատպութիւնը, նրա ազգային ստեղծագործ միտքը։

Պատմա-փիլիսոփայօրէն անհատի դերը պատմութեան մէջ ընդունում էր նաեւ ռուս յեղափոխական ահազդեցիկ կազմակերպութիւնը՝ «Նարոդնայա Վոլիա»ն («Ժողովրդական Կամք»), եւ առ այդ սկզբունքով ընդունում էր նաեւ ահաբեկումը. սակայն «Ն. Վոլիա»ն ընդունում էր դերը միայն մեծ անհատների, ուստի եւ կողմնակից էր բացառաբար մեծ ահաբեկումների. թեր էր պայքարի այս սուր զէնքը գործադրելու միայն խոշոր դէմքերի նկատմամբ։

Այսպէս չդատեց Դաշնակցութիւնը. նա անհատը չդասդասեց խմբերի՝ խոշոր, միջին ու փոքր. իւրաքանչիւրին իր տեղը վերապահելով հանրային կեանքի մէջ՝ նա իւրաքանչիւրին նաեւ որոշ դեր վերապահեց այդ կեանքում. եւ առ այդ ահաբեկումը կիրառելի նկատեց նաեւ փոքր դէմքերի նկատմամբ՝ վաշխառուներ, գիւղական հարստահարիչներ, ոստիկանական հասարակ լրտեսներ ու մատնիչներ, վարձկաններ ու դաւաճաններ։ Այս «փոքր ահաբեկում»ը, որ, ի դէպ, այնքան լայնօրէն գործադրեց Դաշնակցութիւնը բնաջխարհում, մասնաւորաբար իր գործունէութեան սկզբնական տարիներին, անծանօթ էր Ռուս Յեղափոխութեան։ Միայն հետագային, տարիներ յետոյ, ռուս Սոցիալիստ-Յեղափոխականները այս «փոքր ահաբեկում»ը իւրացրին մեզանից։

---

*) «ԾՐԱԳԻՐ», 1894, Վիեննա, էջ 18։

Ասացինք, որ մեր առաջի երկու դաւանագրերի մէջ անհատի *մասին որոշակի ոչինչ չկայ. սակայն, ահա «Դրօշակ»ի* 1892 *թուականի թիւ* 3-*րդ Խմբագրականը, ուր, խօսելով «Դաշնակցութեան յեղափոխութեան գործունէութեան գլխաւոր սկզբունքներ»ի մասին՝ «Դրօշակ»ը մատնանշում է* «ԱՆՁԻ սրբութիւնը», *միաժամանակ «ԱՆՁ» բառը ընդգծելով. «Դրօշակ»ի այս ըմբռնումը «անձի սրբութեան» մասին՝ ըմբռնումն էր նաեւ Դաշնակցութեան, առանց, սակայն, մեր սկզբնական դաւանագրերի մէջ տեղ գտնելու:*

Այս մասին որոշակի խօսք կայ միայն մեր վերջին դաւանագրի մէջ, ընդունուած 1907-*ին, Վիեննայի Զորրորդ Ընդհանուր ժողովում:*

Այդտեղ, «Ընդհանուր Տեսութեան» *մէջ, ասուած է հետեւեալը.*

«Ընկերվարութիւնը կը հարթէ ճամբան անհատին··· դէպի ԱԶԱՏ, ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ եւ ՆԵՐԴԱՇՆԱԿ զարգացումը. ան հրապարակ կը հանէ այն բոլոր դրական ուժերը, որոնք պահուած կը մնան այլեւայլ ձեւերով արտայայտուող ճնշումներու տակ»*):

Մեր կողմից ընդգծուած բառերի մէջ — ԱԶԱՏ, ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ եւ ՆԵՐԴԱՇՆԱԿ — կայ արձագանգը այն բեղուն ու երախտաշատ աշխատանքի, որ ընկերվարութեա՛ն (ոչ մարքսիստ) պայծառ ու մեծ դէմքերը՝ Լաւրովները, Միխայլովսկիներն ու Ժոռեսները տարած էին՝ իր կատարելութեան հասած անհատը *իրենց հանրային դաւանանքի կիզակէտը դարձնելով:*

Այս հարցերին նուիրուած իր ուշադրաւ գիտական աշխատութեան մէջ պրոֆ. Նովգորոդցեւը նկատում է.

«Անհատ» հասկացողութիւնից հաւասարապէս սկիզբ են առնում թէ՛ անհատի պահանջները՝ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ եւ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ նկատմամբ եւ թէ իր պարտականութիւնները՝ ՆԵՐԴԱՇՆԱԿ եւ ՄԻ լինելու ուրիշների հետ: Եւ որովհետեւ այս միութիւնից, իբրեւ գաղափար, չի կարող դուրս մնալ եւ ո՛չ մէկ անձ, այլ նրանց բոլորի մէջ պէտք է ճանաչուեն նոյն իրաւունքները հաւասարութեան եւ ազատութեան նկատմամբ, ապա այստեղից ինքնին բխում է այն, որ հանրային իդէալը տարբեր բան չէ, քայց եթէ ԲՈԼՈՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ՝ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԻՄԵՐՈՎ: Պահանջելով, որ անհատը յարգուի ՄԻՇՏ եւ ԱՄԵՆՈՒՐ, մենք այս պահանջը պէտք է դնենք անխտրաբար բոլորի նկատմամբ, առանց որեւէ սահմանափակումի ու տարբերութեան: Ընդհանրական միութիւնից ոչ

---

*) «ԾՐԱԳԻՐ», 1908, էջ 16–17:

ոչ դուրս պէտք չէ մնայ: Անհատի բացարձակ սկզբունքը պարտադրօրէն մեզ բերում է ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ, ՀԱՄԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ գաղափարին» (*բոլոր ընդգծումները՝ հեղինակինն են.— Ն.*):

Մի այլ տեղ կրկին նոյն հարցին դառնալով՝ հեղինակը նը-կատում է.

«Նոյն արմատից բխելով եւ նոյն նպատակին ձգտելով՝ չընդունե՞լ արդեօք, որ հանրային յառաջադիմութիւնն ու անհատական կատարելագործումը, սրանք երկուսն էլ տարբեր երեսներն են միեւնոյն երեւոյթի, սրանք ներքնաբար նոյնանում են ըստ էութեան եւ ձգտում տեւական ներդաշնակութեան: Արդեօք կարելի չէ՞ ասել, հետեւելով Վլադ. Սոլովեովի, որ «հասարակութիւնը — լրացուած կամ ընդարձակուած անհատն է, իսկ անհատը — սեղմուած կամ ինքնամփոփուած հասարակութիւնը»*):

Բոլոր պայմանների տակ պատմութեան այս երկու մղիչ աղդակները — անհատ *եւ* հաւասարակշռութիւն — *իրենց ընթացքի մէջ եթէ մինչեւ իսկ տեւաբար ընդհարուում են, իրենց վախճանական նպատակի եւ բացարձակ իդէալի մէջ* — ազատ եւ իրաւահաւասար անհատներ՝ ազատ եւ եղբայրական հաւասարակշռութեան մէջ — *նոյնանում են:*

Դաշնակցութեան պատմա-փիլիսոփայական աշխարհահայեացքի հիմը մնում է անհատը, *սակայն իբրեւ բարեկա՛մ եւ ոչ թշնամի ոյժ* հաւասարակշռութեան:

Միայն անհատի *ներքին կատարելագործումով — լրիւ եւ ամբողջական — պիտի ստեղծուի այն ներդաշնակութիւնը* անհատի *եւ* հաւասարակշռութեան *միջեւ, որ երաշխ է կազմում ընկերվար մարդկութեան:*

Այս դաղափարները յստակ ձեւակերպումով տեղ պէտք է գտնեն վերաքննութեան ենթարկող մեր նոր դաւանադրի մէջ:

Այն վեց կէտերը, որոնց մէջ սեղմ ձեւակերպումով քիչ վերը տուինք մարքսեան վարդապետութեան աշխարհահայեցողութիւնը, մեր նկատմամբ պիտի ձեւակերպէինք այսպէս.

Ա.— Ամէն բան միայն տնտեսական ազդակը չէ կերպաւորում. մարդկային պատմութեան մէջ կան եւ ուրիշ առաջնորդիչ ազդակներ:

Բ.— Եւ, հետեւաբար, այս ազդակները իրար վրայ ներգործելով՝ մերթ հասարակական կեցութիւնն է որոշում գիտակցու-

---

*) Պ. ՆՈՎԳՈՐՈԴՑԵՒ — «*Հասարակական իդէալի մասին*», հրատ. 3-րդ, 1921, Բերլին, էջ 72:

**) *Անդ*, էջ 114:

թիւնը եւ մերթ գիտակցութիւնը՝ հասարակական կեցութիւնը:

Գ.— Իսկ այս նշանակում է, որ այս որոշման մէջ դեր են խաղում ոչ միայն փաստերը, այլ ե՛ւ գաղափարները:

Դ.— Այլ խօսքով՝ մարդկութեան հզօր, գունեղ ու ստեղծագործ հոգեկան կեանքը կարող է նաեւ «հիմնաշէնք» դառնալ ու նախասահմանել պատմութեան ընթացքը:

Ե.— Գաղափարների դերը չուրանալով պատմութեան մէջ՝ կարելի չէ ուրանալ դերը նաեւ գաղափարակիրների, իբրեւ անհատների:

Զ.— Այս հիմունքով՝ պատմութեան մղիչ ազդակը միայն զանգուածները չեն. իսկ դրամատիրութեան դարաշրջանին՝ միայն բանուոր դասակարգը չէ. ընկերվար հասարակարգի կերտումին մէջ իրենց դերն ունեն թէ՛ աշխատաւոր մարդկութիւնը, թէ՛ յառաջադէմ մտաւորականութիւնը եւ թէ Մարդկութեան հզօր ու պայծառ դէմքերը:

Գալիք պայքարների մէջ Բոլշեւիզմին վերապահուած այլասերիչ դերը նկատի առնելով՝ մեր դաւանագրի մէջ բացառիկ ուժգնութեամբ պէտք է ընդգծուի մասնաւորաբար անհատի *արժէքը:*

Ո՛չ մէկ վարդապետութիւն, մէջը հաշուելով նաեւ հին ուղղափառ — ու զանգուածապաշտ — Մարքսիզմը, այնպէս չտրորեց ու չփոշիացրեց անհատը, *ինչպէս ռուսական Բոլշեւիզմը:*

Ինչպէս եւ ո՛չ մէկ վարդապետութիւն, մէջը հաշուելով նաեւ «գերմարդ»ու տիրակալութիւնը աւետարանող ուսմունքը, այնքան չաստուածացրեց անհատը, *որքան Բոլշեւիզմը:*

Ճիշտ է, այս աստուածացումը առ այժմ եղաւ միայն երկու մարդու նկատմամբ, նախ՝ Լենինի (աւելի համեստ սահմանների մէջ), ապա՝ Ստալինի (առանց որեւէ սահմանի):

Այս նախընթացը մեզ դալիս է ասելու, որ հետագային նոյն աստուածացումը կարող է լինել նաեւ այլ անհատների նկատմամբ:

Սակայն, որոշ անհատների նկատմամբ եղած այս բացառութիւնը *ոչ միայն չի հերքում ընդհանուր սկզբունքը, այլ, ինչպէս ամէն* բացառութիւն, *ընդհակառակն, է՛լ աւելի հիմնաւորում ու ամրապնդում է ընդհանուր սկզբունքը:*

Բոլշեւիզմի համար անհատը *ոչի՛նչ է,* անհատը *փոշի է. Բոլշեւիզմի համար* ասունը *շատ աւելի նուազ արժէք ունի, քան* ոչասունը:

1789-ի *Օգոստ.-ին յեղափոխական Ֆրանսայի Ազգային Ժողովը հրապարակեց իր հռչակաւոր ուխտագիրը՝* «Մարդու եւ Քաղաքացիի Իրաւունքների Յայտարարագիր»*ը:*

Նմանողութեամբ Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան՝ Խորհուրդների 3-րդ Համառուսական Համագումարը 1918-ի Յունուարին հրապարակեց իր ուխտադիրը, որ կրում է հետեւեալ խորագիրը՝ «Աշխատաւոր եւ կեղեքուող ժողովուրդի Իրաւունքների Յայտարարագիր»*):

Պատահական չէ երկու Յայտարարագրերի միջեւ եղած այս տարբերութիւնը. «մարդ»ն *ու* «քաղաքացի»ն *Հոկտեմբերեան յեղջման հեղինակների համար գոյութիւն չունեն. նրա համար գոյութիւն ունի միայն* զանգուածը... *Ոչ իսկ* մարդկութիւնը, *այլ նրա միայն մի* մասը...

1789-ի *Յեղափոխութեան ուխտագրի — թէ՛ նրա կարճ նախամուտի եւ թէ* 17 *յօդուածների — իմաստը մեկնաբանելով խորհրդային իրաւագէտներից Ռ. Աւերբուխ «Մ. Խ. Հանրագիտարան»ի մէջ նկատում է.*

«Յայտարարագրի հիմը կազմող դեկավար սկզբունքները — ժողովրդապետութեան եւ անհատական ազատութեան գաղափարը — առնուած են Մոնթեսքիոյի եւ Ռուսոյի ուսմունքից...: Յայտարարագրի նախամուտի մէջ ասւում է, որ միակ պատճառը հանրային աղէտների եւ կառավարութեան վատթարացման՝ մոռացումն է մարդու բնական, անկապտելի եւ սրբազան իրաւունքների»**):

Բոլշեւիզմի համար այս ամէնը «քաղքենի նախապաշարում»-ներ են. համայնավար «Յայտարարագիր»ը ո՛չ անհատ է ընդունում եւ ոչ էլ անհատի «բնական, անկապտելի եւ սրբազան իրաւունքներ»...

Տարիների ընթացքին այս ուրացումը խորացաւ ու հասաւ ահաւոր չափերի:

1935 *Մայիս 4-ին ողջոյնի խօսք ուղղելով Կարմիր Բանակի Կաճառի աւարտականներին՝ Ստալինը, ի միջի այլոց, նրանց հետեւեալ յուշն էր պատմում իր կեանքից.*

---

*) «Մեծ Խորհրդային Հանրագիտարան»ը իր 20-րդ հատորի մէջ (էջ 93) վկայում է, որ այս «Յայտարարագիր»ը գրած է Լենինը. 1931-ի այս վկայութիւնը չարափոխելով Վրշինսկին իր վերջին գործի մէջ՝ *«Խորհրդային Պետական Իրաւունքը»* (երկու տարի առաջ անգլիերէն թարգմանութեամբ լոյս տեսած Հիւս. Ամերիկայի մէջ)՝ յայտնում է, որ «Յայտարարագիր»ը գրած են Լենինը եւ... ՍՏԱԼԻՆԸ: Մեկնաբանութիւնները, կարծում ենք, աւելորդ են:

**) «ՄԵԾ ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ», հ. 20րդ, Մոսկուա, 1931, էջ 94:

«Ցիշում եմ մի դէպք իմ կեանքից, Սիբիրում, ուր ես աքսորի մէջ էի: Գարնան էր, գետերի յորդումի օրերին: Շուրջ 30 հոգի գետ գացած էին՝ իր փրփրած ալիքներից քշուած փայտեղէնը որսալու: Իրիկնադէմին սրանք գիւղ դարձան, բայց առանց մէկի: Այն հարցումին, թէ ո՞ւր է երեսուներորդը, նրանք անխռով պատասխանեցին, թէ երեսուներորդը «մնաց այնտեղ»: Իմ այն հարցումին՝ «այդ ի՞նչպէս... մնա՛ց», նրանք նոյն անտարբերութեամբ պատասխանեցին՝ «հարցաքննելիք ի՞նչ կայ այստեղ, ընշանակում է... խեղդուե՛ց»: Ճիշտ այդ վայրկեանին նրանցից մէկը անապարանքի մէջ էր՝ յայտնելով, որ «ուշացանք գնալ ու ջուր տալ զամբիկին»: Իմ այն յանդիմանանքին, թէ իրենք անասունին աւելի են մեղքանում, քան մարդոց, նրանցից մէկը բոլորի հաւանութեանը մէջ պատասխանեց,— «մարդոց... մեղքանա՞լ. մարդոց ի՞նչ պիտի մեղքանանք. մենք միշտ մարդիկ կակարող ենք շինել. իսկ մատակ ձի՞... է՛հ, եթէ կարող ես, շինիր մէկ հատ (*ընդհանուր կենդանութիւն դահլիճի մէջ*)»: Ահա մի գիծ, թերեւս աննշան, սակայն չափազանց բնորոշ: Ինձ թւում է, որ մեր վարիչներից ոմանց անտարբեր վերաբերումը դէպի մարդիկ, դէպի անձնակազմերը, նրանց անկարողութիւնը մարդոց գնահատելու, այս ամէնը մէկ վերապրուկն է այն արտառոց վերաբերումին դէպի մարդիկ, որի արձագանգը ես ձեզ բերի հեռաւոր Սիբիրի իմ կեանքից»*):

Իր ահաւոր ու արիւնոտ մականին տակ բոլորին աբոբելով ու բոլորին իրաւապէս «անասուն» ու «զամբիկ» դարձնելով՝ յաղթական մենակալը յորդորում էր իր ունկնդիրներին՝ երկոտանի «զամբիկ»ների մէջ «մարդ» տեսնել եւ ոչ «մատակ» ձի»...

Զանել այնպէս, որպէսզի Խորհրդային քաղաքացին, ապրելով հանդերձ «ընկերվար դրախտ»ում եւ վայելելով մէկտեղ անսահման հոդածութիւնը «հայր» Ստալինի, իրեն չզգայ ցարերի իշխանութեան տակ, աքսորի մէջ, հեռաւոր Սիբիրում...

Արդար էին միամիտ սիբիրցիները. Բոլշեւիզմը եկաւ վկայելու, որ մատակ ձի իսկապէս որ կարելի չէ արարչագործել, սակայն «երկոտանի զամբիկ»ներ... շինել կարելի է:

Ու կարելի է... «յեղափոխականօրէն» յղանալո՛վ ու բոլշեւիկօրէն հրամանագրելո՛վ:

Խորհրդային գրողներից Իլիա Էրենբուրգ մի պատմուածք ունի՝ «ՈՒՍԿՈՄԶԵԼ» արտառոց խորագրով. ռուսերէն երեք բառերի — «կատարելագործուած համայնավար մարդ» — առաջին

---

*) Ի. ՍՏԱԼԻՆ — «*Լենինիզմի Հարցերը*», 11-րդ հրատր., 1945, Մոսկուա, էջ 491:

վանկերը առնելով՝ հեղինակը յօրինած է իր բառը՝ «ՈՒՍԿՈՄ-ՋԵԼ». հայերէն պիտի ասէինք՝ «ԿԱՏՀԱՄԱՐԴ»։

Իր շուրջը եւ իր հպատակների մէջ միայն «ԿԱՏՀԱՄԱՐԴ»ը տեսնելով՝ Ստալին, 1924-ին, Սվերդլովի անուան համալսարանում տուած իր դասախօսութիւններից մէկում, նկատում էր.

«Որի՞ն ծանօթ չէ «յեղափոխական» յօրինողութեան, «յեղափոխական» պլանային ստեղծագործութեան այն հիւանդութիւնը, որի միակ աղբիւրն է հաւատը դէպի հրամանագիրը. այն համոզումը, թէ հրամանագրով կարելի է ամէ՛ն բան սարքել, ամէն բան վերափոխել։ Իլիա Էրենբուրգը իր «ՈՒՍԿՈՄՋԵԼ»ի մէջ տուած է պատկերը այս հիւանդութիւնից բռնուած «բոլշեւիկ»ի, որը իրեն նպատակ դրած է տալ ուրուագիծը իդէալօրէն կատարելագործուած մարդու եւ... «խեղդուած» է իր այդ «աշխատանք»ի մէջ։ Պատմուածքի մէջ մեծ չափազանցութիւն կայ, բայց որ հեղինակը ճիշտ նշմարած է հիւանդութիւնը, այդ անկասկած է»։*)

Ինչպէս որ անկասկած է եւ ա՛յն, որ Բոլշեւիզմը մարդկային բովանդակ պատմութեանը անծանօթ իր անօրինակ դաժանութեամբ շուրջ երկու հարիւր միլիոն մարդոց «ՈՒՍԿՈՄՋԵԼ»ների կերպարանքը տուաւ, որոնք, ի պատասխան մարդկային իրենց բոլո՛ր իրաւունքների ու բոլո՛ր սրբութիւնների ուրացման ու փոշիացման, սովահար ու դողահար, օրն ի բուն օրհներդ են ձօնում բռնաւորի հասցէին եւ սպանիական ժողովրդի հին ու անմեռ փառաբանանքը կրկնում՝ Vivan les cadenes—կեցցե՛ն շղթաները։

Այս «ՈՒՍԿՈՄՋԵԼ»ներից այսօր Ի. Միութեան մէջ վախ չկայ այլեւս, ուստի եւ մտահոգութիւն չկայ նրանց իրաւունքների մասին. վախն ու մտահոգութիւնը բուն զամբիկների *եւ* անասունների *շուրջն է...*

Ստալինի աշակերտն ու գործակիցը՝ Անաստաս Միկոյեան՝ լաւածանօթ իր ուսուցչի խոհերին ու մտածումներին, խօսելով խոզերի մասին, խրատում էր իր ունկնդիրներին.

«Խոզը պահանջկոտ կենդանի է, եւ նա հերքած է բոլոր քաղքենի նախապաշարումները այն մասին, թէ ինք՝ ամենէն աղտոտ կենդանին է, կարող է հանդուրժել ու տանել այն ամէնը, ինչ որ կատարւում է իրեն հետ, թէ կարելի է իրեն հետ վարուել ազատօրէն... խոզավարի։ Խոզը ապացուցած է, որ ինք՝ մշակութա-

---

*) Ի. ՍՏԱԼԻՆ — *«Երկեր»*, հ. 6-րդ, Մոսկուա, 1948, էջ 186–187։

յին կենդանի է, եւ առ այդ պահանջում է ամենէն մարդկային, ամենէն մշակութային վերաբերումը իր հանդէպ»*)։

Այսպէս պահանջում են Խ. Միութեան խողերը միայն, բայց ոչ նաեւ «ՈՒՍԿՈՄՁԵԼ»ները...

Բոլշեւիզմը գալիս է մեզ հրամայաբար թելադրելու, որպէսզի մենք անհատը՝ *իր ազատութեան, անկապտելի իրաւունքների եւ անկաշկանդ զարգացումի մէջ՝ մեր դաւանագրի գահակալը դարձնենք՝ նոր «ԿԱՏՀԱՄԱՐԴ»երի վերերեւումը կանխելու համար։*

VIII

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Մեր երեք դաւանագրերից եւ ոչ մէկի մէջ զատ գլուխի տակ ազատութեան *մասին ոչինչ չկայ։*

Մեր անդրանիկ Ծրագիրը իր ներածական բաժնում յորդորում է Թուրքիոյ մէջ «ոչնչացնել ներկայ միապետական բռնակալ ռեժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխութիւն, աշխատանքի ապահովութիւն, խղճի, խօսքի ու համոզմունքի ազատութիւն» (էջ 9)։ *Քաղաքական եւ ընկերային ժողովրդավարութեան նոյն պահանջները, աւելի մանրամասնաբար,* 11 *կէտերի մէջ, կրկնուած են Ծրագրի «ՆՊԱՏԱԿ» գլխի տակ* (էջ 15–17)։

«Նախագիծ»ը եւս աւելի մշակուած ձեւով կրկնում է նոյն պահանջները, առանց ազատութեան *մասին առանձնաբար որեւէ խօսք ասելու։*

Մեր դործող Ծրագիրը (1907–ի) *անցողակի յիշատակում է «երրորդ դասակարգի՝ բուրժուազիի» մասին՝ յայտնելով, որ նա* «յանուն ազատութեան» *ասպարէզ իջաւ աւատականութեան դէմ, սակայն, հետագային իր իսկ նշանաբանները —* «ազատութիւն, հաւասարութիւն եւ եղբայրութիւն» — *չարաշահեց՝ իր «դրաւած դիրքերը ամրապնդելու համար»* (էջ 5–6)։ *Ծրագիրը յայտարարում է, որ միայն ընկերվարութեան յաղթական դրօշի տակ կարելի պիտի դառնայ ընթանալ* «դէպի իսկական թագաւորութիւնը ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան» (էջ 17)։

Եթէ Բոլշեւիզմի 33–ամեայ տիրակալութեան անջնջելի փորձը չլինէր Ռուսիոյ մէջ, մենք զատ խորագրի տակ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» հարցին պիտի չանդրադառնայինք. սակայն, այս փորձը

---

*) ՎԻԿՏՈՐ ՁԵՐՆՈՎ — *«Հնգամեակի առաջադրանքները եւ դարի առաջադրանքները»* («Զա Սվաբոդու», Նիւ Եորք, 1946, Թիւ 17, էջ 80)։

հրամայական անհրաժեշտութիւն է դարձնում մեր անդրադարձը։

Մեծագոյն զոհը խորհրդային կարգերի տակ, որ յօշոտուեց, խաչուեց, ողջակիզուեց եւ ընկաւ ճշմարիտ նահատակի մահով, եղաւ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ։

Չկայ մի ոճիր, որ գործադրուած չլինի ի՛ր անունից. չկայ մի ուրացում, որ քողարկուած չլինի ի՛ր անուան տակ. չկայ մի անարգանք, որին ի՛նք թիրախ դարձած չլինի։

Բոլշեւիզմը եկաւ վկայելու, որ ոչի՛նչ են մեր աշխարհի բոլոր բարիքները, եթէ երբեք խաչուած է ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ։

Եկաւ մարդկութեան ականջին, իբրեւ ահազանգ, հնչեցնելու այն ճշմարտութիւնը, թէ ակնաղբիւրը քաղաքակրթական բո՛լոր վաստակների ու բո՛լոր առաքինութեանց ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ է։

Եթէ անգամ ճիշտ լինէր բոլշեւիկեան այն հաւատումը, թէ Ա. Մխիթեան մէջ «ընկերվար դրախտ» ստեղծուած է, վերստին այդ «դրախտ»ը պէտք է թաղուէր մարդկութեան անէծքի տակ, որովհետեւ այնտեղ՝ այդ «դրախտ»ի մէջ՝ խեղդիչ խաւար է, այդ «դրախտ»ի մէջ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ձայնը առմիշտ մեռած է։

Կար ժամանակ, երբ մարդիկ խորհում էին, թէ զրկանքների ու կեղեքումների մէջ ամենէն սարսափելին տնտեսականն է։

Հաղար անգամ ո՛չ։

Մեղ թւում է, որ այդպէս չէ մինչեւ իսկ ոչ-ասուններին համար. ազատութեան կարօտը կայ նաեւ վանդակների ու կենդանական արգելարանների մէջ։

Սակայն, բոլոր պայմանների տակ այդպէս չէ ասունների՛ համար, այդպէս չէ մարդոց համար։

Եթէ մինչեւ Բոլշեւիզմի երեւումը մեր մոլորակի վրայ կարելի էր ասել՝ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ եւ բանիւն Աստուծոյ»՝ այս «բան»ի մէջ տեսնելով բուն Ազատութիւնը, ապա Բոլշեւիզմի երեւումից յետոյ յեղաշրջել պէտք է հին իմաստութիւնը եւ անվարան յայտարարել՝ մարդը ապրում է ոչ միայն Ազատութեամբ, այլ եւ Հացով։

Մարդկային գոյութեան հիմը, նախապայմանը նրա ստեղծագործ կեանքի՝ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ է։

Ուր այս ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ չկայ, այնտեղ ոչինչ չկայ։

Ուր այս ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ երաշխաւորուած չէ, այնտեղ ոչի՛նչ երաշխաւորուած է։

Ակնաղբիւրը մարդկային որեւէ յառաջադէմ ճիգի, որի նպատակը բարեկարգումն է մեր երկրային կեանքի, պէտք է ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ լինի, այս ճիգը պէտք է ընթանայ ու պտղաբերի

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ հունով եւ իր յաղթանակը տօնի ԱԶԱՏՈՒԹԵԱՆ հովանիի տակ։

Այնտեղ, ուր որեւէ *բռնութիւն կայ, այնտեղ լոյս ու սիրելի ոչինչ չկայ։*

Այնտեղ, ուր ամէ՛ն *բռնութեան դէմ ծառացում ու պայքար չկայ, այնտեղ մարած է, ուրեմն, քաղաքակրթութեան եւ յառաջդիմութեան ձայնը, եւ այնտեղ յաղթանակած են, ուրեմն, պատմութեան մթին ու խաւար ոյժերը։*

Խօսելով Դաշնակցութեան որդեգրած դաւանանքի ոգու եւ էութեան մասին՝ աւելի քան քառորդ դար առաջ գրում էինք մենք.

«... Պայքար ամէն կարգի բռնութեան դէմ, անկախ միանգամայն այն բանից, թէ ադ բռնութիւնը որտեղի՞ց է գալիս արդեօք եւ որի՞ դէմ է ուղղուած,— մտնում է Դաշնակցութեան յեղափոխական-ընկերվարական պարտականութիւնների մէջ։

«Կա՞յ բռնութիւն որեւէ ազգութեան դէմ, իբրեւ այդպիսին,— ուրեմն պէտք է մէկտեղել ուժերը եւ բովանդակ հասակով ծառանալ այդ բռնութեան դէմ։

«Հալածուա՞ծ է որեւէ համայնք սոսկ այն պատճառով, որ իր խղճի հարցը նա տնօրինում է ա՛յս եւ ոչ մէկ այլ աղօթատան մէջ,— ուրեմն վերջ պէտք է տալ ամէն անտարբերութեան եւ հարուածներն ուղղել ա՛յդ հալածանքի դէմ։

«Դա՞ւ է նիւթուած որեւէ հաւաքականութեան փիզիքական գոյութեանը դէմ,— ուրեմն առանց վարանումի շտկել պէտք է նակատը եւ ընկերվարութեան յեղափոխական դրօշակի տակ արշաւանք բանալ այդ դաւադրութեան դէմ։

«Փակա՞նք կայ դրուած բերանների վրայ· արգիլուա՞ծ է սրգա՛տ խօսքը, ազա՛տ հաւաքոյթը· զրկուա՞ծ է բազմութիւնը իր անկապտելի սեփականութիւնը եղող այդ իրաւունքներից յանուն որեւէ սկզբունքի,— ուրեմն վերջնականօրէն համոզուած պէտք է լինել, պէտք է հաւատալ առանց ամենափոքր վարանումի, երբեք կասկած պէտք չէ ունենալ, որ ընկերվարութեան իմաստին, նրա ոգուն, նրա բովանդակ էութեանը հակասող բռնութիւն է տեղի ունենում։

«Ուրեմն, եթէ ճշմարիտ յեղափոխականներ ու ընկերվարականներ էք դուք, ապա պէտք է հաւաքէք ձեր ուժերը, պարզէք պայքարի դրօշը եւ մահացու հարուածը տաք հմայիչ խօսքերի տակ քողարկուած այդ վատագոյն ուժին։

«Որովհետեւ, մի անգամ էլ կրկնենք, ընկերվարութիւնը դէմ է մարդկային անկապտելի սեփականութիւնը եղող քաղաքացիական ազատութիւնների դէմ նիւթած հալածանքին, նա թշնամի է

կեղեքման բոլոր ձեւերին, նա իր հիմի մէջ ժխտում է անհաւասարութեան որեւէ սկզբունք, նա ձգտում է մէկ այնպիսի հասարակակարգի, ուր ներդաշնակօրէն զուգորդուած են ինքնարժէք եւ հաւասարարժէք անհատի եւ հաւասարութեան, մէկի եւ ամենի, մէկ ազգի եւ համայն մարդկութեան փոխադարձ շահերն ու ձգտումները»*):

Դեռ հին հռոմայեցիք էին ասում, թէ «կրկնութիւնը իմաստութեան մայրն է». ընդարձակ մէջբերում արինք՝ այս իմաստութեան աւուրք տուած լինելու համար. կրկնեցինք ամենէն պարզ ճշմարտութիւնները, որովհետեւ ոչինչ այնքան աւելի պէտք ունի կրկնութեան, որքան այն, թէ 2 անգամ 2 հաւասար է 4-ի:

Ճիշդ արինք Ազատութեան էութիւնը *բնորոշելու, որովհետեւ տակաւին այն հին ու անդարձ օրերին, երբ պատմութեան արդանդից աշխարհ եկած չէր բոլշեւիկեան ճիւաղը, Լիթռէի հին բառարանում,* ազատութեան *դիմաց* 24 *մեկնութիւն կար. իսկ այսօր, երբ Բոլշեւիզմը յայտարարում է, թէ* Ազատութիւնը *բոլոր երկրներից փախած եւ ապաստան գտած է միայն* Խորհրդային Աշխարհում, 24 *մեկնութիւնները այլեւս շատ քիչ են դալիս բոլշեւիկեան «ազատութեան» խորհուրդը տալու համար**): Այս գործը մեծապէս պիտի դիւրանար, եթէ երբեք Բոլշեւիզմը խիղախէր իրենից անբաժան մէկ հատիկ բառ միայն նաեւ* Ազատութեան *կցել. յօժարէր ասել՝* Խորհրդայի՛ն *ազատութիւն, ինչպէս որ ասում է՝* Խորհրդայի՛ն *դրականութիւն,* Խորհրդայի՛ն *նուագ,* Խորհրդայի՛ն *երգ,* Խորհրդայի՛ն *արուեստ,* Խորհրդայի՛ն *հայրենասիրութիւն,* Խորհրդայի՛ն *մարդ,* Խորհրդայի՛ն *կարդեր: Այս քաջութիւնը Բոլշեւիզմին պակասում է սակայն: Իր բովանդակ մերկութեամբ մեր առջեւ չցցուելու համար՝ նա զգուշանում եւ* ԽՈՐՀՐԴԱՅԻՆ *բառը իր վարդապետած «ազատութեան» չի կցում...*

Շատ վաղ Ցիկերոն իր անմեռ խօսքի մէջ փորձած է կանխադուշակել էութիւնը Խորհրդային *«ազատութեան».*

«Եթէ ես իմ յօդուածների մէջ չդպչեմ ո՛չ իշխանութեանց, ո՛չ կրօնի, ո՛չ քաղաքականութեան, ո՛չ բարոյականի, ո՛չ պաշտօնատար անձանց, ո՛չ հասարակութեան, ո՛չ անհատների, ո-

---

*) Տե՛ս *մեր* «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ», 1924, էջ 27–28:

**) Ինչպէս որ նաեւ *ընկերվարութեան* մասին եղած 100-ից աւելի մեկնութիւնները քիչ են գալիս բոլշեւիկեան «ընկերվարութեան» իմաստը տալու համար...

բոնք կապուած են որեւէ գործի, այդ պարագային ես ազատօրէն կարող եմ գրել ամէ՛ն բանի մասին, բայց միայն հսկողութեանը տակ երկու–երեք գրաքննիչների»:

Խորհրդային Աշխարհին պակասում է ազատութիւնը *անգամ ա՛յս սահմանների մէջ, որովհետեւ անթիւները*, ա՛յս *ձեւով իսկ խօսելով, գրելով ու գործելով, վերատին իրենց գտան կառափնատի առջեւ. նրանք միայն մահուան առջեւ զգաստացան ու տեսան, որ Խորհրդային Աշխարհում անքաւելի յանցանք է ոչ միայն այն, ինչ որ արտօնուած չէ իշխանութեան կողմից, այլ, յաճախ, անքաւելի յանցանք է նաեւ այն, ինչ որ արտօնուած է. այս արտօնուածը (այսօր), երբ վաղը յանցանք նկատուի, նրա դէմ երէկ «մեղանչողը» (թող թէ Իշխանութեանց գիտութեամբ) երբեք զերծ պիտի չմնայ պատուհասումից. այս է ներքին սարսափից բռնուած բոլշեւիկեան բռնակալութեան բարոյականը, նրա ըմբռնումը «ազատութեան» մասին:*

Ի՞նչպէս ապահովել նրա յօշոտումը Բռնութեան *կողմից:*

Ազգերի ճանակը *չի լուծում այս կնճիռը, որ իր խորքին մէջ* ոչնչակ *է բացառաբար: Որովհետեւ կայ ոչ միայն* փոքրամասնութեան բռնի տիրակալութիւնը մեծամասնութեան վրայ, այլ կայ *նաեւ* մեծամասնութեան *բռնատիրութիւնը* փոքրամասնութեան *վրայ:* Նաեւ մեծամասնութիւնը, *որ տոգորուած չէ ինքնասահմանափակման գերագոյն առաքինութեամբ, ձգտում ունի իր իշխանութիւնը* բռնութեամբ *ամենքի վրայ տարածելու:*

Անուանի պետականագէտը՝ Իէլլինեկ, աւելի քան կէս դար առաջ, 1898*–ին*, փոքրամասնութեան *պաշտպանութեանը նուիրուած իր մենագրութիւնը աւարտելով* "Das Recht der Minoritaten" — *նկատում էր.*

«Ցաւերժական պայքարը իշխանութեան (imperium) *եւ* ազատութեան (libertas) միջեւ պիտի շարունակուի նաեւ 20–րդ դարու ժողովրդավար հասարակութեան մէջ: Ամբարտակները, որոնք տակաւին ցցուած են մնում մեծամասնութեան ամենազօր կամքի առջեւ, հաւանաբար, պիտի խորտակուեն: Սակայն, այն ժամանակ, այս խորտակումին իրր հետեւանք, քաղաքակիրթ մարդկութեան կեանքում ծայր պիտի տայ մի ահաւոր տագնապ»*):

Իէլլինեկ իր մենագրութիւնը փակում էր յայտարարելով, որ «ՄԻԱՑՆ փոքրամասնութեանց իրաւունքների ճանաչումը ի

---

*) «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՆՃԻՌՆԵՐ» (ժողովածու), 1922, Փարիզ, էջ 35:

վիճակի է ապահովագրելու հասարակութիւնը հոգեկան եւ բարոյական մանրացման ու վայրենացման դէմ»*)...

Ժողովրդավար երկրներում ազատութիւն *այնտեղ կայ միայն, ուր ազատ է* փոքրամասնութիւնը, *ուր պաշտպանուած է* փոքրամասնութեա՛ն *ազատութիւնը: Բռնութիւնը երբեք չի դադարում բռնութիւն լինելուց, երբ նա գործւում է* շատերի *կողմից* քչերի *վրայ:* Ազատութիւնը *թեւատարած իշխում է այն ժամանակ միայն, երբ ազատ են այս* քչերը, *երբ նրանց իրաւունքները արհամարհուած ու տրորուած չեն* մեծամասնութեան *կողմից:*

Գոհունակութեամբ արձանագրենք այստեղ, որ ժողովրդավար մարդկութիւնը տեւաբար փորձեր է կատարում այս նպատակին հասնել կարենալու համար:

Սակայն, հիւանդագին կերպարանք է առնում կնճիռը, երբ խօսքը փոքրամասնութեա՛ն *բռնատիրութեանը մասին է* մեծամասնութեան *վրայ. առաւել եւս, երբ խօսքը ոչ իսկ* փոքրամասնութեան *մասին է, այլ մէկ «սեղմ խմբակ»ի, ոճիրներով միաձուլուած մէկ վոքրաթիւ* քիֆի՝ *ամբո՛ղջ երկրի ու բովանդա՛կ ժողովրդի վրայ, ինչպէս որ այդ տեղի է ունենում այսօր Թ. Միութեան մէջ:*

Եւ որովհետեւ իրաւական *ու* քաղաքական *երաշխիքներ չկան այս Զարիքի դէմ, ուստի պայքարի* բարոյական *պարտադրանքները — իրենց* բացարձակ *ձեւի մէջ եւ անխտրաբար* ամենքի *համար — պէտք է հասցնել իրենց* առաւելագոյն *չափին: Բոլոր նրանք, որոնք ուխտած են հաւատարիմ մնալ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ, դաւանագրով յօժար պէտք է լինեն ամէն զոհողութեան՝ բռնութեան ջախջախումը ապահովելու համար:*

Մեր դաւանագիրը պէտք է բացուի հաւատարմութեան ուխտով ԱԶԱՏՈՒԹԵԱՆ հանդէպ:

Նպատակը բոլոր նպատակների մէջ պէտք է լինի նախ մարդը Մա՛րդ *պահել:*

Իսկ այս կարելի է այն ժամանակ միայն, երբ Մարդը ազատ *է, այլապէս ամենէն կատարելատիպ «ՈՒՍԿՈՄԶԵԼ»ն իսկ վերջատին ՍՏՐՈՒԿ է, վատթարագոյնը բոլոր ստրուկների մէջ:*

«Մա՛րդ — հպարտ է հնչում այս խօսքը», *մի տեղ նկատում է Գորկին:*

«Բոլոր կոչումներից սրբազնագոյնն է — Մա՛րդ», *ասում է բանաստեղծը:*

Մեր սրբութիւն սրբոցը այս ՄԱՐԴԸ պէտք է լինի:

Այլ խօսքով՝ մեր սրբութիւն սրբոցը ԱԶԱՏՈՒԹԻՒՆ պէտք է լինի:

---

*) Անդ, էջ 52:

IX

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան ինքնատիպ ու ստեղծագործ ոգին արտայայտուեց մասնաւորաբար այս հարցում։

Անուրանալի է, որ մեր կուսակցական կազմակերպութեան *վրայ կայ ռուսական Ազատագրական Շարժման կնիքը։*

1863*-ին ռուս անջատ յեղափոխական խմբակները եկան քովքովի,— ինչպէս որ աւելի ուշ,* 1890*-ին, պիտի անէր Դաշնակցութիւնը — եւ հիմնադրեցին* «Զեմլիա ի Վոլիա» (*Հող եւ Ազատութիւն*) *կազմակերպութիւնը։ «Զեմլեվոլցիները» ընկերվարներ էին, սակայն ընկերվարութիւնը հեռաւոր նպատակ էր իրենց համար։ Նորաստեղծ կազմակերպութիւնը իր անդրանիկ թռուցիկով՝* «Հող ու Ազատութիւն էր պահանջում, Հող — որ ստացուածքն է բոլոր նրանց, որոնք նրա վրայ աշխատում են եւ Ազատութիւն, որ մարդոց անկապտելի իրաւունքն է՝ իրենց գործերը իրենց ձեռքերով վարելու»։

«Զեմլիա ի Վոլիա»*ն իր նպատակին պիտի հասնէր* յեղափոխութեամբ, *ուր դաշնակցած են* մտաւորականութիւնն *ու* ժողովուրդը։ *Յեղափոխական պայքարի մէջ հզօրագոյն զէնքը պիտի լինէր* ահաբեկումը։ *Այս զէնքի բացառիկ կարեւորութիւնը նկատի առնելով՝ աւելի ուշ Կազմակերպութիւնը մի առանձին մարմին (Ֆրակցիա) ստեղծեց՝ բացառաբար ահաբեկման գործը վարելու համար։ Այս անջատ մարմինը հետագային բոլորովին զատուեց եւ* 1879*-ին* «Նարոդնայա Վոլիա» (*Ժողովրդական Կամք*) *անունով նոր մի Կազմակերպութիւն ստեղծեց՝ երկրի վարիչ դէմքերի նկատմամբ գործադրուած* տեւական *ահաբեկումներով միապետական կարգերը ցնցելու եւ ժողովուրդը ապստամբութեան մղելու համար։ Մի շարք ձախող փորձերից յետոյ, այս Կազմակերպութիւնը յաջողեց, ի միջի այլոց,* 1881 *Մարտ* 1*-ին ահաբեկման ենթարկել ցար Աղեքսանդր Բ.-ին։ Ներքին մի շարք պատճառներով* 1885*-ին քայքայուեց* «Նարոդնայա Վոլիա»*ն։ Պաշտօնական այս կազմալուծումից ընդամէնը չորս տարի վերջ՝* 1889*-ին (այլ խօսքով՝ Դաշնակցութեան հիմնադրումից մէկ տարի առաջ) նախկին Նարոդովոլցիներից մի քանի հոգի ձեռնարկեցին հրատարակութեանը իրենց գաղտնի օրգանի՝* «Ազատ Ռուսաստան»*ի, որի էջերից յայտարարում էին.*

«Այժմ Ռուսիոյ մէջ չկայ ու չի կարող լինել ուրիշ որեւէ առաջադրանք, քաղաքականից բացի»։— «Ընկերվար պահանջները անկարող են գիւղացիներին եւ բանուորներին խմբել յեղափոխական գործի շուրջ»։— «70-ական եւ 80-ական թուականների յե-

դափոխականները անկարող եղան գիւղացիների եւ բանուորների մէջ ոչի՛նչ ստեղծել, որ քիչ–շատ լուրջ ուժի բնոյթը ունենար՝ կառավարութեան դէմ կռուելու համար, ու նաեւ յառաջիկային — մեր խորին համոզումն է այս — կարելի պիտի չլինի ոչինչ անել, քանի տակաւին մենք տիրացած չենք անձեռնմխելիութեանը մեր անձնական իրաւունքների. աւելին՝ քանի տակաւին մենք այդ իրաւունքները ապահոված չենք»։— «Անկեղծ, ազնիւ, ընկերական միութիւնը ընդդիմադիր բոլոր ուժերի — օրուան հրամայական պահանջն է։ Վաղուց հասած է ժամանակը վերջ տալու համար բոլոր բաժանումներին — «Մենք» եւ «Դուք», «ազատական»ներ՝ ոմանք եւ «յեղափոխականներ»ներ՝ այլք. ԱՅԺՄ մենք բոլորս ազատականներ ենք, ԱՅԺՄ մենք բոլորս յեղափոխականներ ենք, ո՛չ ոք մեր մէջ իրաւունք ունի հրաժարուելու ազատական եւ յեղափոխական լինելու պարտականութիւնից եւ պատուից»*)։

Այս կոչից մէկ տարի վերջ, դրեթէ նոյն խօսքերով ու «ազատ Հայաստան»ի պահանջով, հրապարակ պիտի գային հայ կեանքի անջատ յեղափոխական խմբերը՝ «Մենք»երն ու «Դուք»երը, եւ հիմնադրէին իրենց Միութիւնը՝ Յեղափոխականների Դաշնակցութիւնը։

«Ազատ Ռուսաստան»ի *քարոզիչները իրենց նպատակին հասան աւելի ուշ,* 1896–*ին, այդ թուականին հրապարակելով՝* «Սոցիալիստ–Յեղափոխականների Միութեան Ծրագրի հիմնական պահանջները», *իսկ յաջորդ տարին՝* 1897–*ին՝ Վորոնեժի մէջ դումարելով իրենց անդրանիկ Համագումարը, ուր «Միութիւն»ը պաշտօնապէս* Կուսակցութեան *վերածուեց՝ իբր օրգան ունենալով* «Յեղափոխական Ռուսաստան»ը (*նախկին «Ազատ»ի փոխարէն*)**)։

Ընկերվարութեան միւս թեւը՝ Ռուսական Սոցիալ–Դեմոկրատիան՝ կազմակերպչական *գծով որեւէ անդրադարձ չունեցաւ մեր վրայ. նախնական համեստ ճիգերից յետոյ, որոնց ծայրը հասնում է մինչեւ* 1884 *թուականը, ռուս մարքսիստները քայլ առ քայլ ձեւաւորուելով, միայն* 1897–*ի Մարտին, իբրեւ* սոցիալ–դեմոկրատներ, *կարողացան Մինսկ քաղաքում իրենց անդրանիկ Ընդհ. ժողովը դումարել՝ մասնակցութեամբ ընդամէնը* 9 *պատ-*

---

*) «ՍՈՑԻԱԼԻՍՏ–ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆԵՐ», 1912, թիւ 4, էջ 16·17։

**) Անդ, էջ 61–70։

դամաւորների*)։ Մարքսիզմի ազդեցութիւնը զուտ տեսաբանական էր։ «ԿԱՊԻՏԱԼ»ի Ա. հատորը, որ ռուսերէն թարգմանութեամբ լոյս տեսաւ 1870-ին, իր կնիքը դրաւ բոլոր ընկերվարականների մտածողութեան վրայ։ Սակայն, ո՛չ քաղաքական դծով, այլ զերազանցապէս տնտեսական. մասնաւորապէս «յաւելեալ արժէքի» տեսութիւնը բոլոր ընկերվար թեւերի հանրային դաւանանքի մէջ, իբրեւ այդ դաւանանքի մէկ անբաժան մասը**)։

Մենք անկարող ենք մանր քննութեամբ ցոյց տալ այստեղ նմանութեան այն կէտերը, որ կան մեր բուն ԾՐԱԳՐԻ — «ՆՊԱՏԱԿ», «ՄԻՋՈՑՆԵՐ», «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ» — եւ ռուս յեղափոխական հոսանքների միջեւ։ Նմանութեան կէտերը անուրանալի են, սակայն։ Այն հիմնական տարբերութեամբ, որ Դաշնակցութիւնը նոյնութեամբ ոչինչ երբեք ընդօրինակած չէ, այլ ինչ որ ասած է՝ միշտ ներդաշնակած է հայ կեանքի պայմաններին, իր փոխառումները միշտ հայացրած է հոգիով։

Դառնանք մեր կազմակերպութեան։

Բոլոր քաղաքական հոսանքների համար կուսակցութիւնը խորհրդաւորում է իրենց դաւանանքը (եւ դառնում նպատակ), մինչ կազմակերպութիւնը նկատւում է իբրեւ այդ նպատակին տանող մի ճանք (եւ դառնում միջոց)։

Եւ դուրդուրանքն ու մեծարանքը բոլորի մօտ առաւելաբար «նպատակ»ի հանդէպ է (կուսակցութիւն), բայց ոչ՝ «միջոց»ի (կազմակերպութիւն)։

Ու թերեւս նաեւ այդ է պատճառը, որ քաղաքական հոսանքներից շատերը թէեւ ծնւում են խանդավառ, սակայն ապրում են հիւանդկախ եւ մեռնում անշուք։

Կազմակերպութիւնը բացառիկ արժէք ստացաւ Դաշնակցութեան կեանքի մէջ, նա միաձուլուեց կուսակցութեան եւ մաս կազմեց նրա դաւանանքին։

Նաեւ կազմակերպութեան անվթար պահպանումը դարձաւ նպատակ։

Այսօր մեր կազմակերպութիւնը ինքնին, իբրեւ յօրինուածք

---

*) «ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄԿՈՒՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ», 1925, Մոսկուա, էջ 22։

**) Սոցիալիստ-Յեղափոխականների օրգանը՝ «Բանուորական Բանբեր» (Պետերբուրգ)՝ «Սոց.- Յեղ.»ներին հակադրելով Սոցիալ-Դեմոկրատներին՝ գրում էր.— «Մենք — ընկերվար-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆ ենք, նրանք — ընկերվար-ԲԱՐԵՇՐԱԿԱՆՆԵՐ (տե՛ս «Սոց.-Ռեւոլիւցիոներ»ի յիշատակուած թիւը, էջ 37)։

ու ստեղծագործութիւն, խոր ուսումնասիրութեան արժանի մի երեւոյթ է։

Ու դժուար է ճշտել, թէ մեր զոյգ կռուաններից — Կուսակցութիւն եւ Կազմակերպութիւն — ո՞ր մէկը աւելի տոկուն եւ ուժեղ է արդեօք, Կուսակցութի՞ւնը (իբրեւ... «նպատակ»), թէ՞ Կազմակերպութիւնը (իբրեւ... «միջոց»)։ Դժուար է, որովհետեւ, ինչպէս ասացինք, այս երկու կռուանները անդառնալիօրէն — լրիւ եւ ամբողջութեամբ — միաձուլուած, միաշաղախուած ու միաղօղուած են իրարու։ Դաշնակցականի համար մեղանչել Կազմակերպութեան դէմ, նոյնն է թէ մեղանչել Կուսակցութեան դէմ։ Որովհետեւ գերագոյն եւ անվերաքննելի «նպատակ» է նաեւ Կազմակերպութիւնը, ուստանց որի ոչի՛նչ կարելի է անել, ոչի՛նչ կարելի է հետապնդել։

Այս ըմբռնումը բարք դառնալով, միս ու արիւն դառնալով տասնամեակների ընթացքին՝ ստեղծած են այսօրուան այն հոյակապ Կառոյցը, որ իր նախընթացն ու նմանակը չունի ոչ միայն հայ, այլ եւ օտար ազգերի կեանքում։

Հայութիւնը աշխարհացրիւ կեանք ունի. իր կազմակերպական ցանցով աշխարհացրիւ պատկեր ունի նաեւ Դաշնակցութիւնը, սակայն իրարու օղակուած այս ցանցը գործում է այնպէս, ինչպէս որ պիտի գործէր մի տիպար պետութեան կարգապահ մեքենայ սեփական երկրի մէջ։

Այս հոյակապ Կառոյցը խստօրէն կենտրոնացած է՝ իբրեւ իրաւունք եւ լայնօրէն ապակենտրոնացած՝ իբրեւ պարտականութիւն։

Սխալ է այն խօսքը, թէ մենք «ապակենտրոնական»ներ ենք իրաւունքի՛ առումով։

Մեր անդրանիկ դաւանագիրը, «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ» գրքոյկի տակ, յստակ բառերով սահմանում է հետեւեալը.

«Դաշնակցութիւն»ն անցեալի փորձից համոզուեց, որ յեղափոխական գործում չի կարող լինել իրաւունքի եւ պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան եւ բաւարարութեան խնդիր։ Ահա այս հիման վրայ Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովն ընդունեց կազմակերպութեան մէջ մտցնել ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ սկզբունքը, որն աւելի է համապատասխանում ընկերական, բարոյական յեղափոխական գործին եւ որն անցեալում կիսով չափ գործադրուել էր։ Այս սկզբունքով գործող կոմիտէներին կապում, միացնում է Ընդհանուր Ժողովը»*)...

Ասուած է աւելի քան յստակ, պարզ ու մեկին բառերով.

---

*) «ԾՐԱԳԻՐ», 1894, էջ 18–19։

Ա.— Դաշնակցութեան յեղափոխական գործում ԻՐԱՒՈՒՆՔԻ եւ ՊԱՀԱՆՋԻ խնդիր չկայ:

Բ.— Կայ միայն ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ եւ ԲԱՐՈՅԱԿԱԿԱՆ ԲԱՒԱՐԱՐՈՒԹԵԱՆ խնդիր:

Գ.— Այս հիմունքով, այսինքն՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ եւ ԲԱՒԱՐԱՐՈՒԹԵԱՆ գծով, Դաշնակցութիւնը որդեգրում է ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ սկզբունքը:

Դ.— Որովհետեւ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ու ԲԱՒԱՐԱՐՈՒԹԵԱՆ խնդրում՝ ապակենտրոնացումը աւելի է համապատասխանում ԸՆԿԵՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ գործին:

Զուր ճիգ պիտի լինէր տարբեր մեկնաբանութիւն տալ այս հատուածին, քան տալիս է Ծրագիրը:

ԻՐԱՒՈՒՆՔԻ մասին խօսք կայ բացասակա՛ն *իմաստով՝ բայց ոչ* դրական, մերժմա՛ն *իմաստով՝ բայց ոչ* հաստատման:

Թիւր կարծիքները ծագում առին այնտեղից, որ «կենտրոնական»ներ էին Հնչակեանները, իսկ նրանք «կենտրոնական»ներ էին ԻՐԱՒՈՒՆՔԻ՛ առումով, մի բան, որ նրանց կործանման պատճառներից մէկը հանդիսացաւ: Ու թերեւս այդ է պատճառը, որ սկզբնպէս «կենտրոնական» ոգիով գործող Դաշնակցականները այնքան շուտ հրաժեշտ առին այդ սկզբունքից եւ արմատօրէն ու վերջնապէս փարեցին «ապակենտրոնացման», ուր միայն ԶՈՀՂՈՒԹԵԱՆ խնդիր կայ, իսկ ԻՐԱՒՈՒՆՔԻ — երբե՛ք):*

Ու մեզ թւում է, որ այստե՛ղ պէտք է որոնել գաղտնիքը այն առեղծուածի, թէ այդ ի՞նչպէս եղաւ, որ հայ կեանքի դժոխային պայմաններում հասակ նետեց մի ամբակուռ կազմակերպութիւն, ապրեց ու գործեց ահաւոր փոթորիկների մէջ ու մնաց կանգուն մինչեւ այսօր. մի կազմակերպութիւն, ուր տիրում է երկաթեայ զինուորական կարգապահութիւն եւ ուր իշխող ստեղծագործ ոգին, վճռական կամքը եւ յեղափոխական աւիւնը միշտ մնացին կենդանի՝ հիացում պատճառելով անգամ իր հակառակորդներին:

Այսպէս եղաւ, որովհետեւ Դաշնակցական «ապակենտրոնացման» հիմը միշտ ԶՈՀԱՖԵՐՈՒՄԻ ոգին մնաց:

Ահագնագոռոզ «Նարոդնայա Վոլիա»յի քայքայման պատ-

---

*) Այս ուշագրաւ հարցին *մենք* նուիրած ենք մի համեստ մենագրութիւն, որ կը յուսանք զատ հրատարակութեամբ լոյս ընծայել Դաշնակցութեան 60-ամեակին. այնտեղ, այդ մենագրութեան մէջ, մեր անցեալից փաստեր քաղելով, ջանացած ենք հիմնաւորել մեր մեկնութիւնը «ապակենտրոնացման» մասին:

ճառներին դառնալով՝ իր վարիչ դէմքերից Սիբիրեակ, աւելի քան կէս դար առաջ, նկատում էր.

«Նարոդնայա Վոլիա»ն դադարեց յեղափոխական կազմակերպութիւն լինելուց, որի գլխաւոր ոյժը միշտ խանդավառութեան եւ հաւատքի մէջ է»:

Նա դարձաւ, ըստ Սիբիրեակի, մի «քաղաքական կուսակցութիւն», ձգտելով՝

«Մտցնել յեղափոխական պայքարի փոքրկալի իրադարձութեանց մէջ սկզբունքները ռազմագիտութեան, որ հաշուառման է ենթարկում ամէն քայլ եւ ընդհանուր դեկավարման ենթարկում շարժումները բոլոր ջոկատների: «Նարոդնայա Վոլիա»յի խստօրէն կենտրոնացեալ կազմակերպութիւնը յաջողած էր այդ ջոկատների մէջ սպանել յեղափոխական ընդունակութիւնը անկախաբար դէպքերը կշռադատելու, յաջողած էր սպանել յեղափոխական նախաձեռնութեան ոգին»*):

Ու երբ իր ջոկատների «ամէն քայլը» հաշուառման ենթարկող կենտրոնը ոստիկանական հալածանքների զոհ դարձաւ, նախաձեռնութեան ոգիից զուրկ այդ ջոկատները քայքայուեցին ինքնին:

«Նարոդնայա Վոլիա»ն աւելի հալածանքներ չտեսաւ, քան տեսաւ Դաշնակցութիւնը. սակայն, Դաշնակցութիւնը այս քայքայումը երբեք չունեցաւ, որովհետեւ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ու ԶՈՀԱԲԵՐՈՒՄԻ վարժ իր «ապակենտրոն» ջոկատները միշտ վառ պահեցին իրենց ՀԱՒԱՏՔԸ, ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ, իրենց ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ:

Մեր անդրանիկ Ծրագրի մէջ, «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ» գլուխի տակ, իրականին մէջ մեր Կանոնագիրն է:

Այդ Կանոնագիրը բաղկացած է ընդամէնը ԵՕԹԸ յօդուածներից:

Այս ԵՕԹԸ յօդուածներով մենք կարողացանք ստեղծել քաղաքական աշխարհի ամենէն կուռ, կարգապահ ու հաւատաւոր բանակներից մէկը:

Մի բանակ, որ 60 տարի վարեց Հայոց Աշխարհի ալեկոծ կեանքը եւ յաւերժութեան սահմանուած մի փառահեղ պատմութիւն կերտեց:

X

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Դաշնակցութեան 60-ամեակի առիթով, շատ սեղմ տողերի մէջ, թեթեւակի մի քանի յիշեցում արինք գաղափարաբանական

---

*) «ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆՆԵՐ», 1912, թիւ 4, էջ 17:

այն հսկայ հարստութեան մասին, որ Դաշնակցութեան կողմից ժառանգութիւն պիտի մնայ հայ հասարակական մտքի պատմութեան։

Ցիշեցման ձեւով իսկ մենք նիւթը բնաւ չսպառեցինք։ Մենք նախ բնաւ չխօսեցինք հայ քաղաքական մտքի այն թեւի մասին, որ ընկած է Դաշնակցութիւնից դէպի աջ։ Իբրեւ գաղափարաբանութիւն՝ իսպառ ամուլ եղաւ այդ թեւը. լինի՛ բուն հայրենիքի մէջ՝ Կովկաս թէ Թրքահայաստան, լինի՛ Գաղթաշխարհի մէջ, այդ թեւը միայն ատել գիտցաւ մեզ ու միայն ատելութիւն սերմանեց մեր շուրջ։

Տարիներ առաջ Եգիպտոսի մեր պաշտօնաթերթը՝ «Ցուսաբեր»՝ դիմելով մեր այդ հակառակորդներին, իր 1930 Մայիս 10-ի խմբագրականով, հարցնում էր.

« Ո՞րն է, կամ ի՞նչ է անունն այն գործին, զոր Դաշնակցութիւնը կարող է կատարել՝ առանց իր հակառակորդի ընդդիմութեան եւ կամ անոր ծանր նախատինքներուն հանդիպելու։

«Դպրո՞ցը, գրականութի՞ւնը, գրական հանդէ՞սը, նուիրահաւաքութի՞ւնը ի նպաստ գաղթականի. ո՞ր մէկը այս գործերէն կարող է հակառակորդի քաջալերանքին արժանանալ, փոխանակ անոր թշնամանքին հանդիպելու»։

«Ցուս.»ին պատասխանելով՝ Եգիպտոսի ռամկավար պաշտօնաթերթը՝ «Արեւ»՝ իր 1930 Մայիս 31-ի թուով, «ՊԱՅՔԱՐԻՆ ԼՈՒԹԻՆԸ» խորագրի տակ՝ հետեւեալն էր յայտարարում.

«Մենք կ'ըսենք — արդարեւ քաջալերանքի արժանի են ձեր յիշատակած գործերը, եթէ դուք չէք կատարողը... : Մեր քաջալերանքին չի կրնար արժանանալ Դաշնակցական դպրոցը, Դաշնակցական «Համազգային»ը, կամ Դաշնակցական կեղծ Կարմիր խաչը»...։

Եւ ոչ էլ — ուզում էր ասել իր բազմակէտով — ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ...

Այս էր իր մղած պայքարի էութիւնը...

Էականն այն չէ, թէ Ի՞ՆՉ է կատարւում հայ կեանքում (լա՞ւ թէ զէշ գործ), էականն այն է, թէ Ո՞Վ է կատարում այդ գործը. ու եթէ կատարողը ՄԵՆՔ ենք, այդ միակ հիմունքով հակառակորդը ԴԷՄ է այդ գործին...

Մեր թուցիկ ակնարկի մէջ այս թեւի մղած անպտուղ պայքարին մենք բնաւ չանդրադարձանք։

Սակայն մենք նաեւ ձախից եկող բոլոր հարուածների մասին պարզ ակնարկութիւն իսկ չարինք։

Մենք չխօսեցինք, օրինակ, հողային հարցի մասին, որի դէ-

ը այնքան մեծ էր հայ կեանքում եւ որի շուրջ այնքան շատ մելան սպառուած է բեր եւ մեր հակառակորդների միջեւ։

Տասնամեակներ շարունակ ռուս էս-էրների (որ ասել է՝ նաեւ Դաշնակցութեան) հողային ծրագրի դէմ պայքարելով՝ Բոլշեւիզմը Հոկտեմբերեան յեղաշրջումին մի անօրինակ շանթած գործեց եւ իր հակառակորդից գողացաւ ու իւրացրեց այդ ծրագիրը.

«... ԱՌԱՆՑ ՈՐԵՒԷ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱՊԷՍ ԸՆԴՈՒՆԵՑԻՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ», հպարտանքով խոստովանում էր Լենինը*)։

Այլ առիթով իր նոյն արարքի մասին վկայում էր նոյն Լենինը.

«Վերցրինք էս-էրներից այդ ծրագիրը, նախ նրա համար՝ որ յաղթենք նրանց, երկրորդ նրա համար՝ որ փորձառաբար հէնց իրենք գիւղացիները նրա անպէտքութեան մէջ համոզուեն»**)...

«Անպէ՛տք» ծրագիրներ գործադրելով՝ Բոլշեւիզմը «պիտանի՛» գործեր էր կատարում...

Զանդրադարձանք մենք մարքսեան տեսութեան հիմնական դրոյթին՝ «արտադրութեան կենտրոնացման», որ իր վաւերացումը չգտաւ գիւղատնտեսութեան մէջ (լրիւ՝ ոչ իսկ արդիւնաբերական աշխարհում)։

Զխօսեցինք նոյն տեսութեան նաեւ այն միւս դրոյթի մասին, որ նախատեսում էր բանուորութեան յարաճուն չքաւորութիւնը՝ դրամատիրութեան ստիճանական ճոխացումին ու բարգաւաճանքին զուգահեռ. այս ընթացքի վախճանական ելքն է, ըստ Մարքսիզմի, որ յաղթանակով պիտի պսակէր բանուորութեան մղած պայքարը՝ իշխանութիւնն ու հարստութիւնը կեղեքողներից փոխանցելով կեղեքուողներին...

Մարքսիզմի մարգարէացումը չարդարացաւ նաեւ այս հարցում։

Ըստ Մարքսիզմի՝ ընկերվար հասարակակարգի մէջ պետութիւնը ստիճանաբար հաշուեյարդարի պիտի ենթարկուէր. մինչ մենք վկայ ենք, որ պետութիւնը երբեք այնքան ահարկու ու համապարփակ ուժ ունեցած չէ, որքան նա այսօր ունի Խորհրդային Աշխարհում, «ընկերվար» կարգերի տակ...

Ըստ Մարքսիզմի՝ ընկերվար յեղաշրջումը պիտի սկսէր արդիւնաբերօրէն ամենէն զարգացած երկիրներում, մինչ նա ծայր

---

*) Ն. ԼԵՆԻՆ — «Զախութեան» երեխայական հիւանդութիւնը կոմունիզմի մէջ», Թիֆլիս, 1921, էջ 67–68։

**) «ՌԵՒՈԼԻՒՑԻՈՆՆԱՑԱ ՌՈՍԻԱ», 1923, Բերլին, p. 28–29, էջ 8 (Ձերնովի յօդուածը)։

տուաւ տնտեսօրէն ամենէն յետամնաց ու խաւար աշխարհներից մէկում՝ ցարական Ռուսիոյ մէջ...

Մեծ է թիւը այս կարգի հարցերի, որոնք մեզ բաժանում են մեր հակառակորդներից, սակայն մենք պարզ յիշատակութեամբ իսկ չանդրադարձանք նրանց:

Պարզ հրամանագրով, հակառակ Մարքսիզմի բոլոր հիմունքներին, «ընկերվարութիւն» հաստատելով երկրագործ, չքաւոր ու աւեր Ռուսիոյ մէջ՝ Ստալինը պատգամում էր.

«Չի բացառւում կարելիութիւնը, որ հէնց Ռուսաստա՛նը կարող է լինել այն երկիրը, որը կը հարթի ճանապարհը դէպի ընկերվարութիւն...: Մէկդի պէտք է նետել այն մաշած հասկացողութիւնը, թէ միայն Եւրոպան մեզ կարող է ճանապարհ ցոյց տալ: Կայ հրամանական (dogmatique) Մարքսիզմ եւ կայ ստեղծագործ Մարքսիզմ: Ես կեցած եմ այս վերջին գետնի վրայ»*):

«Ստեղծագործ»ը իւրացնելով եւ աստիճան առ աստիճան «դոգմատիկ»ը ուրանալով՝ աւելի ուշ նոյն Ստալինը յայտարարում էր.

«Ի՞նչ բան է Մարքսիզմը: Մարքսիզմը գիտութիւն է: Կարո՞ղ է Մարքսիզմը մնալ ու զարգանալ իբրեւ գիտութիւն, եթէ երբեք նա չճոխանոյ բանուորութեան դասակարգային պայքարի նոր փորձով, եթէ նա այդ փորձը չմարսի մարքսեան վարդապետութեան տեսակէտից եւ մարքսեան մեթոդի տեսանկիւնի տակ: Պարզ է, որ չի կարող: Այստեղից պարզ չէ՞ նաեւ, որ Մարքսիզմը պահանջում է նոր փորձի հաշուառման հիմունքով հին տարազների (formule) բարելաւումն ու հարստացումը՝ միշտ պահելով մարքսեան տեսակէտը, նրա մեթոդը»**):

Այսպէս էր պատասխանում Ստալինը 1926 Դեկտ. 7-ի իր ընդարձակ զեկուցմանը մէջ կուսակցական ընդդիմադիրներին, որոնք յայտարարում էին, թէ մարքսեան վարդապետութեան ուրացումն է տեղի ունենում Կոմկուսի մէջ.

«« Եթէ Լենինը,— *ընդդիմադիրներին առարկում էր Ստալինը*,—աշխարհակալ պատերազմի նախասեմին յայտարարում էր, թէ ֆեդերասիոնը պետական կառոյցի անընդունելի ձեւ է, իսկ 1917-ին, հաշուի առնելով բանուորութեան մղած պայքարի նոր փորձը, վերանայում էր այս տեսակէտը, փոխում իր կարծիքը ու յայտարարում, թէ դէպի ընկերվարութիւնը տանող փոխանցման շրջանին ֆեդերասիոնը պետական կառոյցի ամենէն նպա-

---

*) Ի. ՍՏԱԼԻՆ — «*Երկեր*», հ. 3-րդ, 1947, Մոսկուա, էջ 186-187:

**) Ի. ՍՏԱԼԻՆ — «*Երկեր*», հ. 9-րդ,

տակայարմար ձեւն է, մի՞թէ այս նշանակում է, որ Լենինը տարուած էր «վերաքննչականութեամբ» (révisionisme)՝ *լինի՛* իր անձի, լինի՛ լենինիզմի նկատմամբ»*) :

Ըստ Ստալինի, այս կարգի բոլոր «վերանայում»ների, «փոփոխութեանց» ու նահանջների մէջ «վերաքննչականութիւն» չկայ, այլ կայ միայն... մարքսեա՛ն «ստեղծագործութիւն» :

«Վերաքննչականութիւն» չկայ մինչեւ իսկ այն ժամանակ, երբ Լենինի եւ Ստալինի ղեկավարութեանը ու շունչին տակ սնած ու մեծացած համայնավար տեսաբանները յայտարարում են մեզ.

«Բոլշեւիկ կուսակցութեան պատմութիւնը եւ ի խնդիր ընկերվարութեան կոմկուսի մղած պայքարի փորձը, ինչպէս ընկ. Ստալինը ցոյց տուաւ, մեզ գալիս են ուսուցանելու, որ կուսակցութիւնը, իբրեւ ղեկավար ոյժը բանուոր դասակարգի, կազմակերպիչն ու վարիչ բազուկը ընկերվար յեղափոխութեան եւ բանուորական դիկտատուրայի, կարող է իր այդ դերը կատարել այն պարագային միայն, երբ նա տիրապետած է յեղափոխական տեսութեան, երբ նա գիտէ տառը տարբերել էութիւնից, գիտէ այդ տեսութիւնը նոխացնել յեղափոխական շարժման նոր փորձով, առանց բնաւ կանգ առնելու երբեմնապէս ծագող անհրաժեշտութեանը առջեւ՝ փոխարինել — տեսութեան էութիւնից մեկնելով— այդ տեսութեան մի քանի դրոյթներն ու եզրակացութիւնները, որոնք արդէն հինցած են, նոր դրոյթներով ու եզրակացութիւններով, որոնք համապատասխանում են պատմական նոր իրադրութեան»**) :

Այստեղ նոյնպէս «վերաքննչականութիւն» չկայ, այլ կայ միայն... մարքսեա՛ն «ստեղծագործութիւն» (*եւ կամ.. «ստեղծագո՛րծ մարքսականութիւն»*) :

Անցած են այն հին ու երանելի օրերը, երբ Լենինները կարող էին յայտարարել.

«Մարքսեան իմաստասիրութեան մէջ, որ ձուլուած է միակտուր պողպատից, կարելի չէ հանել ոչ մէկ հիմնական նախադրեալ, ոչ մէկ հիմնական մաս, առանց առարկայական ճշմարտութեան դէմ մեղանչելու, առանց քաղքենի–յետադիմական սուտի գիրկը նետուելու»***) :

---

*) Անդ, էջ 99:

**) Դ. Ն. ԶԵՍՆՈԿՈՎ — *«Ի. Վ. Ստալինը բոլշեւիկեան կուսակցութեան մասին»* («Պատմութեան Հարցեր», 1949, թիւ 2, Մոսկուա, էջ 61) :

***) Վ. Ի. ԼԵՆԻՆ—*«Երկեր»*, ի. 14–րդ, 1947, Մոսկուա, էջ 312:

Այս «միակտուր պողպատ»ից այսօր ոչի՛նչ մնացած է. նրա բոլո՛ր «նախադրեալ»ները հիմն ի վեր յեղաշրջուելով՝ Բոլշեւիզմը նետած են ամենէն յետադէմ, ամենէն անարգ ստերի գիրկը:

Աւետարանական հանգանակի կշիռ ունի այն խոր իմաստութիւնը, թէ «խօսքը առանց գործի՝ մեռած է». *այսինքն մեռած է այն խօսքը, որին չի հետեւում* համապատասխան *գործը (եւ կամ հետեւում է մի գործ, որ չի* համապատասխանում *քարոզուած խօսքին):*

Սակայն նոյնքան ճիշտ է եւ այն, թէ «գործը առանց խօսքի— մեռած է». *այսինքն մեռած է այն գործը, որին չի հետեւում* համապատասխան *խօսքը (եւ կամ հետեւում է մի խօսք, որ չի* համապատասխանում *կատարուած գործին):*

Ասել, թէ ազգային մշակոյթը ծաղկում է Խորհրդային Իշխանութեան տակ, երբ գիտենք, որ գաղափարաբանօրէն Բոլշեւիզմը դէպի ձուլում է առաջնորդում ազգերը, այս նշանակում է ՄԵՌԱԾ *գործ կատարել, նշանակում է ստել թէ ծաղկում է:*

Ասել, թէ հայրենիքները անկախ են Խորհրդային Իշխանութեան տակ, թէ նրանք ազատ են ու ինքնօրէն, երբ գիտենք, որ գաղափարաբանօրէն Բոլշեւիզմը դէպի փոշիացում է առաջնորդում հայրենիքները, այս նշանակում է ՄԵՌԱԾ *գործ կատարել, նշանակում է ստել թէ անկախ են:*

Ասել, թէ Խ. Միութեան մէջ ընկերվար կարգեր հաստատուած են եւ այնտեղ այլեւս կեղեքում ու յաւելեալ աշխատանքի իւրացում չկայ, երբ գիտենք, որ Բոլշեւիզմը դէպք առ դէպք այս իւրացումը ահաւոր չափերի է հասցնում, այս նշանակում է ՄԵՌԱԾ *գործ կատարել, նշանակում է ստել թէ ընկերվարութիւն է կառուցւում:*

Եւ այսպէս՝ կեանքի բոլո՛ր *մարզերում:*

Խ. Հայաստանի անդրանիկ Սահմանադրութեամբ (ընդունուած 1922 *Փետր. 2–ին) եւ վերանայուած երկրորդ* (1926 *Մայիս* 20–*ի) Սահմանադրութեամբ, յայտարարւում էր հետեւեալը.*

«ՑՕԴՈՒԱԾ 5 (*Հատուած Ա.*).— Եկեղեցին անջատւում է պետութիւնից՝ վերածուելով մասնաւոր համայնքի, եւ դպրոցը՝ եկեղեցուց. բոլոր քաղաքացիներին իրաւունք է տրւում ազատօրէն վարելու ԿՐՕՆԱԿԱՆ (*ընդգծումը՝ մերն է.— Ն.*) եւ հակակրօնական պրոպագանդա»*):

Խ. Հայաստանի ամենավերջին (ստալինեան) Սահմանադրու-

---

*) «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ (1920–1925, *Հինգ Տարի*)», հր. ժողկոմխորհի, 1926, Երեւան, էջ 443–444:

թիւնը մարդկային խղճին վերաբերող այս հարցը տնօրինում է հետեւեալ ձեւով.

«ՅՕԴՈՒԱԾ 99.— Քաղաքացիների համար խղճի ազատութիւն ապահովելու նպատակով եկեղեցին Հայկական Ս. Ս. Ռեսպուբլիկայում անջատուած է պետութիւնից եւ դպրոցը՝ եկեղեցուց: Կրօնական պաշտամունքների կատարման ազատութիւնը եւ ՀԱԿԱԿՐՕՆԱԿԱՆ (*ընդգծումը՝ մերն է.— Ն.*) պրոպագանդայի ազատութիւնը ճանաչւում է բոլոր քաղաքացիների համար»*):

Իրաւակարգի փրկութիւնը բռնութեան խորացման ու խըստացման մէջ տեսնելով՝ 1936-ի ստալինեան Սահմանադրութիւնը ՋՆՋՈՒՄ էր կրօնական քարոզչութեան այն ազատութիւնը, որ նախորդ Սահմանադրութիւնները ապահոված էին խորհրդային քաղաքացուն:

Այս ազատութիւնը ՋՆՋԵԼՈՎ՝ միաժամանակ յայտարարում էր, որ նախկին «ժողովրդավար» կարգերը ստալինեան Սահմանադրութեամբ փոխարինւում են... «ԳԵՐԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ» կարգերով...

*Նոյն (ստալինեան) Սահմանադրութեան 101-րդ յօդուածով գոյութեան իրաւունք տրւում է ՄԻԱՑՆ եւ ԲԱՑԱՌԱԲԱՐ «Համամիութենական Կոմունիստական (բոլշեւիկների) Պարտիա»-յին**), երբ նախորդ Սահմանադրութիւնները այդ տրդելքն ու սահմանափակումը չունէին***):*

Այս ազատութիւնը ՋՆՋԵԼՈՎ մէկտեղ՝ յայտարարւում է, որ Խորհրդային քաղաքացու իրաւունքները՝ երէկի բաղդատմամբ՝ այսօր շատ աւելի ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ են...

Ս. Միութիւնը այն աշխարհն է, ուր իշխանաւորի ո՛չ խօսքն է համապատասխանում գործին եւ ոչ գործը՝ խօսքին. ուր իշխանաւորը միաժամանակ ստում է թէ՛ խօսքով ու թէ գործով՝ զանգուածների հոգում սպանելով է՛ւ մէկի արժէքը, է՛ւ միւսի:

Ակնարկելով Համամիութենական Կոմկուսի Կենտր. Կոմիտէի 1946 Օգոստ. 14-ի որոշման (քաղաքականութեան *մասին*)՝ *խորհրդային գրիչներից Վ. Վ. Նիկոլաեւ նկատում է.*

---

*) «Հ. Ս. Ս. ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱ», 1947, Երեւան, էջ 24:

**) Անդ, էջ 25:

***) Ի դէպ, այս յօդուածով «անկախ» Հայաստանի բոլշեւիկը կարող է անդամագրուել միայն ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ «պարտիա»-յին, բայց ոչ Հայաստանի. այս հիմնական ու որոշիչ հարցում ո՛չ «ֆեդերացիա» կայ եւ ոչ էլ, ի հարկէ, «անկախութիւն»...

«Բացառիկ յստակութեամբ ու խորութեամբ բոլշեւիկեան քաղաքականութեան վիթխարի դերը արտայայտուած է ստալինեան դրոյթի մէջ այն մասին, թէ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՐԳԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ է»*):

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ է՝ միշտ յարափոփոխ, բայց ո՛չ ՍԿԶԲՈՒՆՔԸ, ո՛չ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ, ո՛չ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, որոնք անփոփոխ պէտք է մնային, բայց որոնցից այսօր ոչինչ մնացած է Խորհրդային Աշխարհում...

Դաշնակցութեան 60-ամեակին երբեք ներելի չէ որեւէ պոռոտ խօսք իր հասցէին:

Այս յստակ դիտակցութեամբ՝ այստեղ՝ մեր եղրափակիչ խօսքին մէջ՝ պիտի ուզէինք մի քանի ճշմարտութիւններ արձանագրել իր մասին, ջանալով, որքան մարդկօրէն հնարաւոր է այդ, չչափազանցել մեր ըմբռնումը երեւոյթների մասին.

Ա.— Հ. Յ. Դաշնակցութիւնը ամենէն հին կուսակցութիւնն է այն երկու երկրներում՝ Թուրքիոյ եւ Ռուսիոյ մէջ, ուր նա իր դատը հետապնդեց: Որքան մենք գիտենք, նա ամենէն հին կուսակցութիւնն է բովանդակ քաղաքական աշխարհում:

Բ.— Նա ամենէն հինն է ոչ իբրեւ անուն ու յիշատակ, այլ իբրեւ ազդուրէն ապրող ու գործող քաղաքական կենսառոյգ, լի թափով ու աւիւնով, մէկ ոյժ:

Գ.— 60 տարի ապրելով ու տենդագինօրէն գործելով՝ Դաշնակցութիւնը հիմին մէջ նոյնը պահեց իր անունը, դաւանանքը, իր կազմակերպական կառոյցը, դրօշը, այն բոլոր ստորագելիները, որ յատուկ են մի կենդանի եւ առողջ կուսակցութեան:

Դ.— Դաշնակցութեան վարդապետած գաղափարները՝ ազգ եւ հայրենիք, անկախութիւն եւ դաշնակցութիւն, ընկերային եւ քաղաքական ժողովրդավարութիւն, աշխատաւորական ընկերվարութիւն եւ ընկերվար միջազգայնութիւն, անհատ եւ հաւասարութիւն՝ յաղթանակած գաղափարներ են այսօր:

Ե.— Օտարին կոթնած այն ոյժը, որ այսօր իշխում է մեր երկրում, գաղափարաբանօրէն պարտուած է վերջնապէս· իրը չեն այն գաղափարները — ազգ, հայրենիք, անկախութիւն, ժողովրդավարութիւն եւ այլն—որ այսօր քարոզում է Բոլշեւիզմը՝ միաժամանակ ու նենգօրէն նրանց դէմ գործելով:

Ահա թէ ինչու այսօր, իր 60-ամեայ յոբելեանին, ձեւապէս

---

*) Վ. Վ. ՆԻԿՈԼԱԵՒ — *«Ի. Վ. Ստալինը բոլշեւիկեան կուսակցութեան քաղաքականութեան մասին՝ իբրեւ խորհրդային իրաւակարգի կենսական հիմունքի»* («Իմաստասիրութեան Հարցեր», 1949, թիւ 2, Մոսկուա, էջ 66):

թէեւ պարտուած, փաստօրէն ճշմարիտ յաղթականը ինքն է՝ իր ժողովուրդին ու հայրենիքին միաձուլուած Դաշնակցութիւնը:

Իր յաղթանակի լաւագոյն ապացոյցը — այն դիրքը, որ նա այսօր գրաւում է հայ կեանքում:

Վերստին իր գաղափարներն են իշխում թէ՛ դուրսը եւ թէ ընտանիքի մէջ:

Պայքարող եւ ազատատենչ հայութիւնը նորէն ու դարձեալ ապրում եւ գործում է ի՛ր գաղափարական ղեկավարութեանը տակ:

Դաշնակցութիւնը նաեւ այսօր հանդիսանում է վարիչ բաղուկը հայ կեանքի:

Եւ այս դիրքը նա գրաւում է՝ իբր զէնք, իբր բանակ, իբր իշխանութիւն եւ հարստութիւն իր տրամադրութեան տակ ունենալով միայն եւ բացառաբար իր ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ:

Այս գաղափարների ուժը ամենէն լաւ կերպով դիտէ բռնաւորը, այն իշխանութիւնը, որ իշխում է հայրենի աշխարհում:

Մեր երկրի առաջին վարիչը՝ Աղասի Խանջեան՝ մտերմիկ կրոյցի մէջ, 1936-ին, ասում էր իր ընկերոջ ու գործակցին՝ լուսաւորութեան գործավար Դրաստամատ Սիմոնեանին.

«Խորհրդային իշխանութիւնը կատաստրոֆի ենթարկուելու դէպքում, Դաշնակներն են այն միակ ուժը, որ կարող է անցնել իշխանութեան գլուխը:

«Ի հարկէ, մի որեւէ բան պատահելիս՝ ես ու դու կը փախչենք եւ հայ ժողովուրդի տէրը կը դառնայ Դաշնակցութիւնը»*):

Այս վկայութիւնը մեր մասին իշխանութիւնը տալիս էր 1936-ին, երբ այդ թուականից 16 տարի առաջ, 1920 Նոյ. 29-ին, պաշտօնապէս նա մեզ դերեզմանած էր արդէն...

Եւ որովհետեւ մենք, իբրեւ կարողական (potential) ոյժ ու մտայնութիւն, 1936-ին այսքան կենդանի ու այս չափով ներկայ էինք երկրում, ուստի 1939-ին, «Խ. Հայաստանի» վկայութիւնից երեք տարի յետոյ, Խ. Միութեան ԺողկոմԽորհին կից գործող այն Կոմիտէն, որ վարում էր միութենական բարձրագոյն դպրոցներին վերաբերող գործերը, «Խ. Միութեան պատմութեան ծրագրի նախագիծ»ը հրապարակելով, այդ Նախագծի մէջ, երկու դասդասերում (XVI եւ XXII), իբրեւ նիւթ երկու անջատ դասախօսութեանց համար (13-րդ եւ 8-րդ), մատնանշում էր, ի միջի այլոց, նաեւ Դաշնակցութիւնը: Անշուշտ մեզ ոչ թէ փառաբանելու, այլ նաեւ իր ուսուցչապետների բերնով եւ իր համայնարանների ամբիոնից մեզ հայհոյելու համար:**)

---

*) «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 30 Հոկտ. 1936:

**) «ՆԱԽԱԳԻԾ Խ. ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ», 1939, Մոսկուա, էջեր՝ 44 եւ 63:

Կայ, սակայն, շատ աւելի ուշադրաւը:

1947 Յուլիս 11–ին, որոշ փոփոխութիւններով ու լրացումներով, ընդունուեց Խ. Հայաստանի «Հիմնական Օրէնք»ը՝ մեր երկրի «Կոնստիտուցիա»ն:

1922–ից այս կողմ թուով 4–րդ Սահմանադրութիւնն է այս՝ վերամշակուած ու ամբողջական:

Այս Սահմանադրութիւնն ընդունուեց այն ժամանակ, երբ Խ. Միութիւնը, երկրորդ մեծ պատերազմի մէջ յաղթանակելով, հզօրապէս ամրացրած էր իր դիրքը թէ՛ դուրսը եւ թէ ներսը:

Թւում էր, թէ Դաշնակցութեան մասին այլեւս կարելի էր չխօսել. կարելի էր նրա գոյութիւնը խսպառ մոռացութեան տալ:

Այդպէս չեղաւ, սակայն:

Մեր երկրի անդրանիկ Սահմանադրութիւնը (1922 Փետր. 2ի), խօսելով Խորհրդային Իշխանութեան հաստատման մասին Հայաստանում, իր առաջին Յօդուածով յայտնում էր.

«ՅՕԴՈՒԱԾ 1.— Հայաստանի ապստամբ բանուորների եւ գիւղացիների կամքով Հայաստանը 1920 թ. Նոյ. 29–ին յայտարարուած է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն»*):

Այս նոյն Յօդուածը նոյնութեամբ կրկնուած է նաեւ 1926–ի Սահմանադրութեան մէջ:

Սակայն վերջին՝ 1947–ի Սահմանադրութեան մէջ նախորդ (առաջին) Յօդուածը՝ թուով 2–րդը դառնալով՝ հետեւեալ կերպարանքը առած է.

«ՅՕԴՈՒԱԾ 2.— Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի հիմքն են կազմում աշխատաւորների դեպուտատների Սովետները, որոնք աճել ու ամրապնդուել են կալուածատէրերի ու կապիտալիստների իշխանութիւնը տապալելու, հայ ժողովուրդը ցարիզմի եւ ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի ազգային ճնշումից ազատագրելու, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆՏՐ–ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԶԱԽԶԱԽԵԼՈՒ եւ պրոլետարիատի դիկտատուրա նուաճելու հետեւանքով»*):

---

*) «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ (1920–1925, *Հինգ Տարի*)», *հրատ. ժողկոմխորհի*, 1926, Երեւան, էջ 443:

*) «ՀԱՅԿԱԿԱՆ Ս. Ս. Ռ. ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱ», 1947, Երեւան, էջ 2:

**) Մեզ, տարաբախտաբար, յայտնի չէ, թէ միւս Հանրապետութեանց «Կոնստիտուցիա»ների մէջ նման որեւէ յիշատակութիւն կա՞յ արդեօք. գիտենք, սակայն, որ Խ. Միութեան «Կոնստտուցիա»յի մէջ որեւէ յիշատակութիւն էս–էրների եւ Մենշեւիկների մասին չկայ:

Ընդդիմությունները մե՛նք կատարեցինք։

Զգոհանալով մեր մասին տուած իր հանդիսաւոր վկայութեամբ «Ա. Հայաստան»ի մէջ, չգոհանալով նաեւ այն բանով, որ «Ա. Հայաստան»ի էջերից մեզ փոխադրել է իր համալսարանական ամբիոնները, Բոլշեւիզմը այժմ մեզ տեղ էր տալիս իր «Կոնստիտուցիա»յի մէջ...

Զուր է ասել, որ Դաշնակցութիւնը եթէ այսքան «ջախջախուած» լինէր, իր մասին այսքան երբեք պիտի չխօսուէր։

* * *

Ինքնատիպ ու ստեղծագործ ժողովուրդ է Հայը։

Նոյնութեամբ ընդօրինակումը՝ ընտանի չէ իր նկարագրին։

Իր բովանդակ մշակոյթի վրայ — ինքնաստեղծ թէ փոխառութիւն — կայ ցեղային հանճարի կնիքը։

Այս կնիքը կայ նաեւ Դաշնակցութեան վրայ։

Նա ամբողջութեամբ Հայաստանի եւ Հայութեան ծնունդ է։

Հայոց Աշխարհի «քաղաքական մեղու»ն է նա, որ դիտէ այլեւայլ ծաղիկներից հիւթ ամբարել՝ իր ուրոյն ու սեփական բարիքը՝ հայկական «քաղաքական մեղրը» պատրաստելու համար։

Այդ «մեղրը»՝ եօթը դարերի տառապանքից ծնած իր լոյս իդէալն է՝ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ։

Նա մէկէն չծնաւ։

Դէպքից դէպք ու պայքարից պայքար, ահեղ ու արիւնալի մարտերի մէջ, ձեւ ու կերպարանք առաւ այդ իդէալը՝ Մայիս 28-ի անմեռ դրօշով պսակուելու համար։

Մի դրօշ, որի շուրջ խմբուած է այսօր բովանդակ ազատատենչ հայութիւնը, ոչ իբրեւ դորշ զանգուած, այլ իբրեւ քաղաքականապէս հասուն ու նպատակագիտակից մի ժողովուրդ, որ յոյսով ու հաւատքով, լի խանդով ու կորովով, շարունակում է ապրել ու գործել 60-ամեայ ամբակուռ Դաշնակցութեան դաղափարական հզօր շունչի տակ։

Հ. Յ. Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

1894 թ. կէսերին, Դաշնակցութեան ղեկավար շրջանակները-ում պահանջ է զգացուում Ընդհանուր Ժողովի գումարման։

Երկու տարի էր անցել Առաջին Ընդհանուր Ժողովից ի վեր։ Որոշ չափով փոխուել էին արտաքին պայմանները. աւելի ճիշդ՝ կուսակցութեան ղեկավար ուժերի վերաբերումը դէպի այդ պայմանները։ Հասարակութեան մէջ նորից սկսել էր նկատուիլ հետաքրքրութիւն դէպի յեղափոխական շարժումը։ Առհասարակ, մթնոլորտը այն չէր՝ ինչ որ 1892-ին։

Միւս կողմից՝ երկու տարուայ գործունէութեան փորձը նոր-նոր կազմակերպական եւ ընդհանուր հարցեր էր առաջ բերել, որոնք պէտք է լուծուէին, որպէսզի գործը անարգել զարգանար։ Ամենէն ստիպողականը կազմակերպական ձեւի, «գործող խմբեր»ի փոխադարձ յարաբերութեան, նիւթական միջոցների հայթայթման ու բաշխման, ընդհանուր ղեկավարութեան հարցերն էին։ Առաջին Ընդհանուր Ժողովի սկզբունքը, թէ՝ «յեղափոխական գործում չի կարող լինել իրաւունքի եւ պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան եւ բաւարարութեան խնդիր»՝ այլեւս չէր բաւարարում կեանքի պահանջներին. անհրաժեշտ էր յստակ կերպով գծել գործիչ անհատների, խմբերի եւ մարմինների իրաւունքների եւ պարտականութիւնների սահմանները եւ կարգ ու կանոնի տակ դնել կուսակցութեան գործունէութիւնը։

Բացի այդ՝ գործունէութեան ձեւերի ու սահմանների մասին էլ Առաջին Ընդհ. Ժողովի որոշումները նոյնպէս անբաւարար էին։ Կարիք էր զգացուում աւելիքի նոր ծրագիր մշակել՝ նոր պայմանների եւ կուսակցութեան ընդարձակուած միջոցների եւ ուժերի համեմատ։

Այս պատճառով՝ Բիւրօն, ընդառաջ երթալով «ամէն կողմից» ներկայացուած պահանջի, Ընդհանուր Ժողով հրաւիրեց 1895 թ. սկիզբը, Թիֆլիսում։

Ընդհանուր Ժողովի կազմի եւ հրաւիրման մասին Առաջին Ընդհ. Ժողովի սահմանած կանոններում որեւէ ձեւ չէր նախատեսուած։ Բիւրօն, իր հասկացողութեամբ, այլեւ աչքի առաջ ունենալով գաղտնապահութեան պահանջը, հրաւիրեց միայն «այն կոմիտէների ներկայացուցիչներն, որոնք գործի տեսակէտից աւելի նշանաւոր դեր ունին կատարելու»։ Երկրից ներկայացուցիչ չկար, որովհետեւ «ներկայ հանգամանքներում ցանկալի չէր, որ Տաճկահայաստանից ուժեր հեռանային Ժողովին մասնակցելու համար»։ Բիւրօն աւելի օգտակար համարեց բաւականանալ դրանցից մի քանիսի գրաւոր կարծիքը առնելով եւ պայման դնելով, որ Ժողովի «որոշումները Տաճկաստան գտնուող խմբերի համար կարող են միայն խորհրդակցական եւ ոչ պարտադիր նշանակութիւն ունենալ»։ Չէին հրաւիրուած եւ «օժանդակող խմբեր»ի ներկայացուցիչները։ Ժողովին չմասնակցեց եւ «Դրօշակ»ի խմբագրութիւնը, թէեւ հրաւիրուած էր։ Ժողովին մասնակցում էին «12 շրջանների ներկայացուցիչները», որոնք «աշխատում էին խնդիրները որոշել ո՛չ թէ ձայների բազմութեամբ, այլ ձգտում էին բոլոր հարցերում գալ միաձայն որոշումների»։

Դժբախտաբար, այս ժողովից արձանագրութիւն կամ որեւէ փաստական նիւթ չի պահպանուել։ Մնացել է միայն Ժողովի ընդհանուր պատկերը ներկայացնող մի ամփոփում՝ որ ուղարկուած է մարմիններին եւ Ռոստոմին, Ժընեւ։ Այս վերջին օրինակը պահուել է Հ. Յ. Դ. կենտր. Դիւանում։ Այդ ամփոփման վերջը ասուած է. «Ի վերջոյ, Ժողովը կարեւոր համարեց իր նիստերի մասին կազմուած արձանագրութիւնը հրատարակել՝ ի գիտութիւն բացակայ եղող յեղափոխական ընկերների եւ, առհասարակ, ամբողջ հայ հասարակութեան»։ Այս որոշումը չգործադրուեց, հաւանաբար, Ժողովի դէմ յարուցուած առարկութիւնների հետեւանքով։

Ստոյգ յայտնի չէ նոյնպէս, թէ ով է ներկայ գտնուել այդ Ժողովին։ Որոշ է, թէ Քրիստափորն ու Զաւարեանը մասնակցել են, ինչպէս նաեւ Կարս–Բասեն–Կարին եւ Թաւրիզ–Վասպուրական գծերի վրայ աշխատող ընկերները՝ Յ. Արղութեան, Նիկոլ Դուման, Արամ Արամեան եւ ուրիշներ։

Հետագային, շատ կողմերից, բայց, մանաւանդ, «Դրօշակ»ի խմբագրութիւնից առարկութիւններ եղան Ժողովի հրաւիրման եղանակի եւ կազմի դէմ։ Այդ պատճառով որոշուեց այդ Ժողովը համարել ոչ թէ Ընդհանուր, այլ Թայոնական Ժողով, որի ո–

բոշումները պարտադիր պիտի լինէին միայն Ժողովին մասնակցող շրջանների համար։ Եւ, ինչպէս Զաւարեանը Ռոստոմին գրած 1895 թ. Մարտ 30 նամակում վկայում է, «թէեւ չի կարելի այնքան էլ յաջողակ համարել, այնուամենայնիւ տեղական գործերի վերաբերմամբ Ժողովը ունեցաւ իրա որոշ հետեւանքները — միջոցները աւելի որոշուեցին, կապերը աւելի սերտ բնաւորութիւն ստացան. նրանք, որոնք անկախ էին համարում իրենց, զգացին մի ամբողջ մարմնի մաս։ Բագուն, օրինակ, որ ունի 4–5 հազար դումար եւ բացի դորանից, որից կախ ունեն եւ ուրիշ մօտ 10 (կոմիտէներ), հիմա գուտ Դաշնակ է համարում իրան եւ ճիշտ որ ամէն ինչ կատարում է»*)։

Նոյն նամակից երեւում է, որ «ամփոփում»ը Ժողովի որոշումների ամբողջական պատկերը չէ. «միջից հանուած է այն մասը, ինչ վերաբերում է միւս տների հետ յարաբերութիւններին»։ Խօսքը, անշուշտ, Հնչակեանների մասին է։ Ի՞նչ է եղել այդ առթիւ որոշուած, յայտնի չէ։

Զաւարեանի գնահատութիւնը շատ համեստ է, բայց ինչ էլ եղած լինի Ժողովի կազմը, ինչպէս էլ կոչուելու լինի՝ «Ընդհանուր» թէ «Ռայոնական», անկասկած է, որ նա կարեւոր մի հանգրուան է Դաշնակցութեան զարգացման ուղիի վրայ եւ չափազանց դեր է կատարել Կուսակցութեան գաղափարների բիւրեղացման եւ կազմակերպութեան բարեկարգման տեսակէտից։ Ուստի՝ անհրաժեշտ ենք գտնում ներկայացնել այդ Ժողովի պատկերը հնարաւոր լրութեամբ**)։

Ժողովի նպատակը ներկայացուած է հետեւեալ ձեւով.— «Պարզել վերջին երեք տարուան ընթացքում առաջ եկած մի քանի անորոշ հարցեր, լուսաբանել ընդհանրապէս գործուած սխալները եւ ճանապարհներ գտնել խոյս տալու համար ապագայում այդպիսի սխալների կրկնութիւններից. ներկայացուցիչների երես առ երես տեսակցութեամբ աւելի սերտ կապ հաստատել գործող խմբերի մէջ եւ, որ գլխաւորն է, գալ համաձայնութեան այն ընթացքի վերաբերմամբ, որ հարկաւոր է բռնել ներկայ բարդ հանգամանքներում, որպէսզի բոլոր խմբերի գործողութիւնների մէջ լինի ներքին համերաշխութիւն՝ Դաշնակցութեան վերջնական նպատակին — Տաճկահայաստանի ազատութեանը աւելի կատարելութեամբ հասնելու համար»։

Վերջին կէտը՝ համերաշխութիւն բոլոր խմբերի գործողութիւնների միջեւ՝ առանձնապէս հրատապ խնդիր էր։ Հակառակ

---

*) «Դիւան Հ. Յ. Դ.», Ա., էջ 175։

**) Տե՛ս «Դիւան Հ. Յ. Դ.», Ա., էջ 161–166։

Առաջին Ընդհ. Ժողովի տրամադրութեան՝ ներդաշնակելու առանձին խմբերի ու շրջանների «ապակենտրոն» ուժերը, փաստօրէն շրջաններն ու խմբերը զգում էին իրենց գրեթէ անկախ, եւ Բիւրոյի հեղինակութիւնը, շատ անգամներ անուանական էր։ Այս հարցին Ս. Զաւարեանը, Բիւրոյի կողմից գրած նամակներում, յաճախ, անդրադառնում է եւ դառն դանգատներ է անում, որ կոմիտէներից եւ ընկերներից ոմանք ապակենտրանացումը հասցընում են անիշխանութեան։

Ժողովը նախ՝ «ընդհանուր ակնարկ» նետեց «գործերի դրութեան» վրայ։«Առաջին մի քանի նիստերում ներկայացուցիչները հաշուի հետ միասին ամփոփ կերպով պատկերացրին իրանց ռայոնի (շրջան) յեղափոխական գործի դրութիւնը, ցոյց տուին թէ՝ գործուած սխալները եւ թէ այն դրական քայլերը, որոնց շնորհիւ գործը ունեցել է այս կամ այն յաջողութիւնը։ Նախկին երկու Բիւրոների*) ներկայացուցիչները ընդհանուր հայեացք ձգելով գործի ամբողջ պատկերի վրայ՝ աւելացրին նաեւ տեղեկութիւններ այն խմբերի գործունէութեան մասին, որոնց ներկայացուցիչները պակասում էին Ժողովում։ Այս տեղեկագրից կարելի է դալ այն ուրախալի եզրակացութեան, որ գործը այսօր աւելի հաստատ հիմքի վրայ է դրուած, քան էր 92 թ. Ժողովից առաջ, որ մեր անելիքները ու միջոցները աւելի գործնական են, քան թէ երկու եւ կէս տարի առաջ եւ Հայ Յեղափոխականների**) Դաշնակցութեան գործունէութիւնը այս չորս տարուան ընթացքում ապարդիւն չէ անցած մեր յեղափոխական զարգացման տեսակէտից։ Չէ կարելի չուրախանալ, որ հասարակութեան մէջ վաղուց տիրող անտարբերութիւնը դէպի յեղափոխական գործը օր ըստ օրէ պակասում է, ոչնչանում է եւ, ընդհակառակը, շատերի մէջ հաստատւում է այն համոզմունքը, որ յեղափոխական ծածուկ գործունէութիւնն է այն միջոցը, որով ներկայ հանգամանքներում կարելի է դրական կերպով նպաստել Տաճկահայաստանում յեղափոխութիւն առաջ բերելու գործին»։

Այսպէս բաւական լաւատես գոյներով ներկայացնելով կացութիւնը՝ Ժողովը այնուհետեւ անցնում է օրակարգի ամենահիմնական հարցին — կազմակերպական ձեւին — որ, ըստ երեւոյթին, մտքերի տաք փոխանակութեան առարկայ է եղել։ Վէճը

---

*) Թիֆլիսի եւ Ատրպատականի։

**) Բնորոշ է, որ դեռ շարունակւում է գործածուել Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն անունը, թէեւ Առաջին Ընդհ. Ժողովից յետոյ այլեւս անիմաստ էր դարձել այդ անունը. կուսակցութիւնը դարձել էր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն։

դառնում էր կենտրոնացման եւ ապակենտրոնացման միջեւ «մի-ջին ճանապարհը» գտնելու շուրջ, մի խնդիր, որ Առաջին Ընդհ. Ժողովում էլ բուռն վէճերի առարկայ էր եղել:

Ըստ երեւոյթին, այս անգամ, սկզբունքի լուրջ տարակարծութիւն չի եղել. ապակենտրոնացումը ընդունուած էր իբրեւ հիմնաքար կուսակցութեան կազմակերպութեան, քանի որ «հաշուի վերստերի վրայ տարածուող գործունէութեան շրջանում կենտրոնականութիւնը պիտի ստեղծէր մի ահագին տէրութեան նման կազմ, բայց դաշտնի կազմակերպութիւն ինքն ըստ ինքեան անկարելի բան է: Բացի այդ՝ կենտրոնացումով կը ճնշուէր զանազան խմբերի շատ անգամ անհրաժեշտ ինքնուրոյնութիւնը, կը սահմանափակուէր նրանց զարգացումը, կը հեռացուէր նրանցից գործի համար անհրաժեշտ պատասխանատուութիւնը: Վերջապէս, որեւէ պատճառով կենտրոնին հասած վտանգը մեծ հարուած կը լինէր ամբողջ կազմակերպութեան համար եւ նոյնիսկ պատճառ՝ գործի ընդհատման»:

Միւս կողմից, սակայն, «չէր կարելի չհամաձայնուել, որ բուն ապակենտրոնացումը կարող է հասցնել նոյնիսկ միմեանց հակասող գործողութիւնների զանազան խմբերի մէջ, կարող է ոչ ցանկալի մրցումն առաջ բերել միեւնոյն կազմակերպութեան պատկանող եւ գործին ծառայող խմբերի եւ անձնաւորութիւնների մէջ. կարող է ուժերը ու միջոցները բաժանել բոլորովին աննպատակայարմար կերպով, եւայլն»:

«Ուստի անհրաժեշտ էր մի միջին ճանապարհ գտնել, պահպանելով մի կողմից խմբերի եւ ռայոնների ազատութիւնը եւ ինքնուրոյնութիւնը, միւս կողմից՝ ապահովել գործնական ներդաշնակութիւն եւ համերաշխութիւն բոլոր խմբերի միջեւ»:

«Ընդունելով սկզբունքով կազմակերպութեան նախկին ձեւը», այսինքն՝ ապակենտրոնացումը եւ գիտակցելով, որ «կազմակերպութիւնը ինք ըստ ինքեան նպատակ չէ, այլ միջոց հասնելու մեր նպատակին — Տաճկահայաստանի ազատութեան», Ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեան.—

«Ապակենտրոնացումը, որով իւրաքանչիւր ռայոն գործում է ինքնուրոյն կերպով, Ժողովս անհրաժեշտ է համարում, որ մասնաւոր խմբերը սերտ կապ պահպանեն իրանց ռայոնական կոմիտէների հետ, իսկ ռայոնական կոմիտէները՝ Բիւրոյի հետ: Երբ հարցը ընդհանուր է, վերաբերում է աւելի լայն շրջանին, կամ դրա ազդեցութիւնը կարող է տարածուել գործող խմբի կամ ռայոնական կոմիտէի շրջանից դուրս, գործի յաջողութիւնը պահանջում է, որ այդ դէպքում գործող մարմինը խորհրդակցէ եւ աշխատէ համաձայնուել այն խմբերի եւ շրջանի հետ, մինչեւ ուր

հասնում է կատարուելիք գործի ազդեցութիւնը։ Իսկ աւելի ընդհանուր բնաւորութիւն ունեցող հարցերում կոմիտէները գործում են Բիւրոյի դիտութեամբ եւ խորհրդակցութեամբ։ Նոյնը պիտի լինի, մանաւանդ, կազմակերպութեան ուժերն ու միջոցները գործածելու հարցում»...

«Կոմիտէները Բիւրոյի հետ ունենալիք «խորհրդակցութիւնները» արդիւնաւէտ դարձնելու եւ, առհասարակ, անհամաձայնութիւնների եւ դժգոհութիւնների տեղիք չտալու նպատակով, Ժողովը որոշեց, որ «Բիւրոն ընտրողական լինի եւ մինչեւ միւս Ընդհանուր Ժողովը բաղկացած լինի 6 ընտրուած անձնաւորութիւններից՝ երեքը Բիւրոյի գտնուած քաղաքից, իսկ մնացեալ երեքը այն նշանաւոր երեք կենտրոններից, որոնց ցոյց է տուել Ընդհանուր Ժողովը»։

Որով՝ «կոմիտէների ներկայացուցիչներից կազմուած Ընդհանուր Ժողովը մնում է գործի հիմնական ընթացքի ղեկավար, իսկ Բիւրոն մի կապ պահպանող, ներդաշնակութիւն տուող եւ ուժերը նպատակայարմար բաժանող մի մարմին՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը կազմող ազատ եւ ինքնուրոյն կերպով գործող մարմինների եւ կոմիտէների մէջ»։

Այս հիման վրայ, Ժողովը լուծեց Պարսկաստանի Բիւրոն՝ տալով նրան «ինքնուրոյն խմբի անուն ու նշանակութիւն։ Լինելով ազատ իր գործունէութեան մէջ՝ Պարսկաստանի խումբը սերտ յարաբերութիւններ պիտի պահպանէ Բիւրոյի հետ, պիտի ներկայացնէ վերջինիս իր կարծիքներն ու պահանջները, որոնք Բիւրոն պարտաւոր է կատարել իր միջոցները ներելուն չափ»։

Այս որոշման դէմ բողոքել է Պարսկաստանի ներկայացուցիչը՝ ի նկատի ունենալով, որ «Պարսկաստանի Բիւրոն կազմուել է գլխաւորապէս Վասպուրականի գործիչների ցանկութեամբ», որոնք բացակայում էին Ժողովից, եւ, հետեւաբար, Ժողովը «ձեռընհաս չէր այդպիսի մի խնդիր լուծելու»։

Պէտք է ենթադրել, որ Ժողովում շատ բուռն վէճեր են եղել կազմակերպական հարցերի շուրջ, քանի որ, իբրեւ եղրակացութիւն, Ժողովը անհրաժեշտ է համարել սրտագին կոչ ուղղել ընկերներին եւ մարմիններին.— Տաճկահայաստանի «ազատութիւնը պահանջում է անթիւ արիւնաշաղախ զոհեր, անասելի մեծ ոյժ, անյողդողդ կամք, ծանր եւ վտանգալի ձիգ տարիների անխոնջ գործունէութիւն... Ժողովրդական ազատամբութիւնը երկնքից չի իջնում եւ ոչ էլ դեռնից սունկի պէս բուսնում, այլ նախապատրաստւում, կնքւում, սրբագործւում է նոյն ազգի բոլոր մաքուր զաւակների տասնեակ տարիների ընթացքում գործ դրած անընդհատ դառնագին աշխատանքով... Հայկական դրամայի ա-

ռային գործողութիւնն է միայն, որը, անշուշտ, տեղի կը տայ շուտով միւս գործողութիւններին... Պէտք է պատրաստ լինել, պէտք է զինուել, պէտք է լարել մեր բոլոր ուժերը գործը յաջողութեամբ պսակելու համար... Ճակատագրական կռիւը յայտարարուած է, յետ դառնալը կամ դանդաղկոտութիւնը՝ ամօթալի, մահաբեր, նոյնիսկ անկարելի է»:

Յետոյ, Ժողովը ցանկութիւն յայտնեց, որ «բոլոր խմբերը, բոլոր յեղափոխականները իրենց ամբողջ ուժերը գործ դնեն հաւկընելու, համոզելու ժողովուրդին, թէ որքան անհրաժեշտ է այս գործում, մանաւանդ, իրերի ներկայ դրութեան ժամանակ, հաստատակամութիւնը, տոկունութիւնը, հետեւողականութիւնը»: «Ներկայ հանգամանքներում, այս կամ այն անյաջողութիւնը, չպէտք է մեզ յուսահատեցնէ, նոյնիսկ այս կամ այն յաջողութիւնը, մասնաւոր յաղթութիւնը չպէտք է մեզ գլխից հանէ. մեզ պէտք է ոգեւորէ ընդհանուր գործի վսեմութիւնը, ջերմ հաւատը, սուրբ գործի տանելիք յաղթանակը եւ ուստի, առանց մազաչափ հիասթափման, առանց շփոթման, հերոսական սառնասրտութեամբ եւ անսայթաք հետեւողականութեամբ, յամառ տոկունութեամբ պէտք է ձեռք առնել բոլոր յեղափոխական միջոցները, որ նպատակայարմար կը գտնուին, որ կը զօրացնեն մեր ուժերը»:

Պէտք է արձանագրել նաեւ, որ, հակառակ այսպիսի վճռական տրամադրութեան, «անիշխանութիւնը» կազմակերպութեան մէջ չվերացուեց Ժողովից յետոյ էլ, մինչեւ որ յաջորդ Ընդհ. Ժողովը վերջնականապէս կազմակերպական ձեւ ու կերպարանք տուեց Դաշնակցութեան: Այս Ժողովը, սակայն, նպաստեց, որ խնդիրները աւելի որոշ ու յստակ ձեւով տրուին: Երկրորդ Ընդհ. Ժողովի մշակած կազմական կանոնների մէջ ներկայ Ժողովում արծարծուած հարցերից շատերը բիւրեղացան ու վերջնական ձեւ ստացան:

Ժողովի դրաղման յաջորդ հարցերը եղան կեանքի պահանջներից թելադրուած մի շարք գործնական խնդիրներ: Ամենից առաջ՝ կազմակերպութեան զօրացման եւ յեղափոխական ուժերի բաշխման մտահոգութիւնը.— «Ամենկարեւոր մեր անելիքներից մէկն է շատացնել Տաճկաստանում ղեկավարող, կազմակերպող ուժերի քանակութիւնը: Ձեղած տեղերը հարկաւոր է որ լինին դրանք. եղածներում անհրաժեշտ է, որ ընկնողներին փոխարինեն նորերը: Այս պատճառով Ժողովը որոշեց. «Ներկայացուցիչները իրենց ռայոնները վերադառնալուն պէս անմիջապէս կոմիտէի խնդիր դարձնեն կազմակերպող ուժեր ուղարկելու հարցը եւ համաձայնութիւն տուողների մասին առանց ուշացնելու լուր տան

Բիւրոյին»։ Բիւրոն, տեղական ուժերի հետ համախորհուրդ, իսկ ուր չկային ներկայացուցիչներ, սեփական հայեցողութեամբ ու միջոցներով պէտք է գործիչներ մտցնէր Երկիր եւ կազմակերպութիւն ու յեղափոխական գործ առաջ բերէր։

Յաջորդ կարեւոր խնդիրը ճանապարհների եւ կայանների հարցն էր՝ յեղափոխական գործի վայրերի եւ արտասահմանի միջեւ։ Ժողովը ամենից աւելի կարեւոր է գտնում հաղորդակցութեան երեք գծերը՝ 1) դէպի Մուշ, 2) դէպի Վասպուրական, 3) դէպի Ալաշկերտ–Վան։ «Ժողովը պարտք դրեց սահմանակից ռայոնների վրայ կանոնաւորել յիշեալ ճանապարհները, պակաս տեղերը լրացնել կայանները, նշանակել հարկաւոր մարդիկ»։

Փաստօրէն այդ ճանապարհները արդէն գոյութիւն ունէին։ Դաշնակցութեան կեանքի առաջին օրերից հէնց լուրջ աշխատանք էր թափուել ապահով ճանապարհներ ստեղծելու՝ կապուելու համար երկրի զանազան շրջանների հետ — Կարսի շրջանից՝ Բասէն ու Կարին, Սուրմալուից՝ Բայազէտ, Ալաշկերտ, Մուշ եւ յարակից վայրերը, Պարսկաստանից՝ դէպի Վասպուրական եւ աւելի հեռուները։ Այդ ճանապարհները երբեմն վտանգաւոր էին. հաղորդակցութիւնը խանգարուում էր նաեւ ուժերի պակասի հետեւանքով։ Այժմ, գործի ընդարձակումով, պահանջ էր զգացուում միշտ բանուկ գաղտնի ճանապարհներ ունենալ, որի համար անհրաժեշտ էր զօրացնել կայանները, ամէն տեղ մարդիկ դնել, զէնքի ու ռազմամթերքի պահեստներ հաստատել, պահել մնայուն վալատներ։ Այդ ճանապարհները կազմում էին յեղափոխական գործի արիւնատար երակները, որոնց գործունէութիւնից եւ ապահովութիւնից էր կախուած յեղափոխական շարժման անսայթաք զարգացումը։

Նոյնքան կարեւոր էր, ի հարկէ, եւ զէնքի ու նիւթական միջոցների հայթայթման հարցը։ Զէնքի գործի վրայ աշխատում էին արդէն յատուկ մարդիկ, որոնք Բագուից, Ռուսաստանի զանազան քաղաքներից զէնք էին գնում եւ փոխադրում Պարսկաստան կամ սահմանամերձ միւս շրջանները։ Թաւրիզում հիմնուած էր Դաշնակցութեան զէնքի արհեստանոցը Գալուստ Ալոյեանի եւ Արիստակէս Զօրեանի ղեկավարութեան տակ։ Բայց զէնքի պահանջը օրէցօր մեծանում էր, եւ Դաշնակցութիւնը պարտաւոր էր նոր միջոցներ գտնել։ Ժողովը այդ մասին եկաւ հետեւեալ եզրակացութեան.—

«Հեռու լինելով այն կարծիքից, թէ Ընկերութիւնը կարող է լինել ամբողջ ժողովուրդը, նոյնիսկ նրա մէկ տասներորդ մասը, Ժողովը մնում է համամիտ 92 թուի ժողովի հետ, հետեւեալ պատճառներով. Առաջին՝ ներկայ պայմաններում շատ դժուար

է տեղացիների համար զէնք դնել մոլեռանդ մահմեդականներից։ Երկրորդ՝ շատ անգամ գործին նուիրուած մարդիկ աղքատ լինելով՝ անկարող են ձեռք քցել կռուելու պարագաներ։ Մենք չենք խօսում բուն յեղափոխական խմբերի մասին, որոնց օգնելը արդէն Ընկերութեան ուղղակի պարտքն է։ Միւս կողմից, օժանդակ հանդիսանալով զէնք տարածելում, դրանով մեծ զարկ տուած կը լինինք եւ նրան, որ ժողովուրդը ինքը կը ձգտի զինուել, որից յետոյ արդէն գալիս է զէնքից օգտուելու խնդիրը — պաշտպանողական եւ յարձակողական դիրք բռնելը։ Ի նկատի ունենալով անցեալի փորձը՝ ժողովը կարծում է, որ երկրում յեղափոխական գործը առաջ տանողները պիտի ձգտին ինչքան կարելի է զէնքը ձրի չբաժանել եւ տալ, հարկաւ, գործին շատ մօտ կանգնած մարդկանց։ Ինչ վերաբերում է զէնք ձեռք բերելու հարցին՝ դա վերապահւում է ամէն մէկ գործող խմբի, որ, հարկաւ, հետամուտ կը լինի թէկուզ քիչ, բայց լաւ զէնքեր դնելու ձեռնհաս եւ փորձուած մարդկանց միջոցով, որպիսի գործունէութեան մէջ կարող է օգտակար լինել եւ Բիւրօն՝ տեղեկութիւններ տալով այն մասին, թէ ո՞րտեղ եւ ի՞նչպիսի գներով կարելի է դնել լաւագոյն զէնքեր։ Ինչքան անհրաժեշտ է զէնք ձեռք բերելու գործը ընդարձակել, նոյնքան էլ կարեւոր է, որ բոլոր խմբերը ձգտին դրամի հարցը հաստատուն եւ տեւողական հիմքերի վրայ դնել»։

Դրամական հարցի մասին ժողովի որոշումն է։—

«Բացի զանազան ժամանակաւոր ձեռնարկութիւններից, նաեւ կարեւոր նշանակութիւն են ստանում ամսական վճարները, որոնցով, եթէ կանոնաւոր տարուի դրամ հաւաքելու այդ եղանակը, յեղափոխական գործունէութիւնը չի ընդհատուի եւ չի ենթարկուի պատահական տատանումների, այլ առաջ կը տարուի կանոնաւոր տեւողականութեամբ անընդհատ։ Որպէսզի Բիւրօն կարողանայ այս կամ այն ընդհանուր բնաւորութիւն ունեցող ձեռնարկութիւնները անել, անհրաժեշտ է, որ խմբերը շուտ-շուտ տեղեկութիւններ տան իրենց ունցածի մասին։ Ամենաուշը խմբերը 4 ամիսը մի անգամ եւ Բիւրօն տարին մի անգամ հաշիւ են ներկայացնում՝ առաջինները Բիւրոյին, երկրորդը՝ բոլոր ռայոնական կոմիտէներին։ Դրամ ժողովելու համար չդիմել այնպիսի միջոցների, որոնք կարող են այսպէս կամ այնպէս վիրաւորել գործիչների զգացմունքը։ Յեղափոխական մեծ գործի համար զոհողութիւն անողը ողորմութիւն չէ տալիս, որ հարկ լինի նուաստանալ, վիզ ծռել նրա առաջ։ Նա իր ամենատարրական եւ ամենասրբազան պարտքն է կատարում եւ, հետեւաբար, առանց գործիչների կողմից զանազան խոստումների, երշխաւորութիւնների, ճարտար լեզուի, պարտաւոր է օժանդակել գործին ինչքան

կարող է, ինչով ձեռնհաս է. նա հաւատ պիտի ընծայի յեղափոխական գործիչներին... Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ուղղակի գործում չմասնակցող խմբերը, որոնք ծախսի զգալի պահանջներ չունին, իրանց միջոցները գործ են դնում կամ Բիւրոյին յանձնելով, կամ, ըստ ցուցման Բիւրոյի, ուղարկելով իրանց միջոցները ուրիշ գործող խմբերի»:

Ժողովը քննութեան է առնում եւ գրաւոր պրոպագանդի խնդիրը եւ «լուրջ նշանակութիւն տալով ճշմարիտ ագիտացիային՝ հրաւիրում է բոլոր խմբերին, կազմելով խմբագրական մասնաժողովներ, միշտ նիւթ մատակարարել Բիւրոյի միջոցով Ընկերութեան օրգան «Դրօշակ»ին, եւ բարձրացնել զանազան հարցեր, որոնք ունին այս կամ այն յեղափոխական նշանակութիւն: Շտապողական դէպքերում տեղական խմբերը պիտի աշխատին թռուցիկ թերթերով «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան այսինչ ճիւղ» ստորագրութեամբ վառ պահել հասարակութեան հետաքրքրութիւնը դէպի յեղափոխական գործը: Որպէսզի այդ թռուցիկների մասին տեղեակ լինին միւս խմբերը, լաւ կը լինէր Բիւրոյի միջոցաւ յաջողակները դրանցից տարածել ռայոնից դուրս»:

Ժողովը զգում է նաեւ «մի գիտնական-լուրջ պարբերականի հրատարակութեան կարեւորութիւնը» եւ «որոշեց դոնել ձեռնհաս խմբագիր եւ աշխատակիցներ այդ գործը գլուխ բերելու համար: Կոմիտէները պարտաւոր են ձեռք բերել նիւթական միջոցներ»:

Այս որոշումը, սակայն, մնաց միայն թղթի վրայ: Դաշնակցական մտաւորականութիւնը, սակաւ բացառութեամբ, յափշտակուած էր յեղափոխական կենդանի գործով. նոյնիսկ ամենէն որակեալ դէմքերը, ինչպէս Քրիստափոր, Զաւարեան, աւելի գերադասում էին յեղափոխական-կազմակերպական անմիջական գործը, քան թէ մամուլն ու գրականութիւնը: Փիչ յետոյ՝ Բիւրոն Ռոստոմին էլ կանչում է Ժընեւից Երկիր ուղարկելու համար՝ անսոյդ վիճակի մատնելով «Դրօշակ»ի խմբագրութիւնը: Բացի «Դրօշակ»ից, ուր Դաշնակցութեան սկզբունքները պարզաբանող քիչ-շատ լուրջ յօդուածներ էին լոյս տեսնում, թղթակցութիւններ Երկրից եւ որոշ տեղեկութիւններ կուսակցութեան գործունէութեան մասին, առանձին հրատարակութիւններ շատ քիչ են եղել: Եւ այնուհետեւ էլ, երկար ժամանակ, գրաւոր պրոպագանդը մեծ տեղ չի գրաւել Դաշնակցութեան գործունէութեան մէջ. նախապատուութիւն է տրուել գործի պրոպագանդին: Տասը տարուայ ընթացքին, 1890–1900, հազիւ 10–12 գրքոյկ է հրատարակուել, մեծ մասամբ վտիտ տետրակներ: Հետաքրքրական է այդ հրատարակութիւնների ցանկը.— «Ապստամբական Ոգի», «Ցե-

դափոխական կեանքից», «Գաղտնի տպարան», «Գիտական Սոցիալիզմ», Ֆ. Էնդէլս, «Հ. Յ. Դաշնակցութեան Ծրագիր» արեւելեան եւ արեւմտեան բարբառներով, «Կուկունեանի խմբի արշաւանքը», «Կարնոյ յիշատակին», "Homo homini lupus", Վարդգէս, «Երիտասարդներին», Կրապոտկին եւ «Ազատութեան Ճանապարհին», Ղարիբ։ Մի գրքոյկ էլ հրատարակել է Ժընեւի հայ ուսանողական միութիւնը՝ «Սոցիալիզմ եւ Սոցիալիստական շարժումը 19-րդ դարում», Վ. Զոմբարտի։

Ի վերջոյ, Ժողովը քննեց Հայկական Հարցի դիւանագիտական պաշտպանութեան միջոցները եւ «մի կողմից համոզուած լինելով, որ Թուրքիայում կատարուող ամենայն մի փոփոխութիւն եւրոպական պետութիւնները միշտ կապում են իրենց շահերի հետ եւ, հետեւաբար, հայկական խնդրի այս կամ այն կերպ լուծելը լինելու է այդ պետութիւնների համաձայնութեամբ, եւ միւս կողմից՝ ի նկատի առնելով, որ, օրինակ, Անգլիայում, բացի հասարակական կարծիքի եւ կառավարութեան շրջանների նպաստաւոր տրամադրութիւնից, գոյութիւն ունին նոյնիսկ ամբողջ միութիւններ (Անգլո-Հայկական Միութիւնը եւ Հայկական Դաշնակցութիւնը), որոնք ներգործական դեր են վերցրել իրենց վրայ հայկական խնդրին նպաստելու համար, այս հանգամանքների վրայ հիմնուելով՝ վճռուեցաւ կազմակերպութեան կողմից, ըստ կարելւոյն ագենտներ ուղարկել Եւրոպա, որոնք աշխատէին օգտուել հանգամանքներից՝ եւրոպական հասարակական կարծիքի վրայ ազդել, որոշ գործունէութեան հրաւիրէին Եւրոպայի զանազան անկիւններում եղած հայկական ուսանողական թէ այլ կոլոնիաները, կապէին դրանց իրար հետ եւ, որ գլխաւորն է, անմիջապէս լիակատար տեղեկութիւններ հաղորդէին Բիւրոյին՝ եւրոպական քաղաքական շրջաններում տիրող տրամադրութեան եւ, մասնաւորապէս, Անգլիայում եղող միութիւնների վերաբերմամբ։ Վերջինը կարեւոր է, նամանաւանդ, այն պատճառաւ, որ մեր հասարակութիւնը բոլորովին գաղափար չունենալով, օրինակ, Անգլո-Հայկական Միութեան մասին՝ շատ անգամ հարց է դնում նրանց նիւթապէս օգնելու նկատմամբ, թէեւ մինչեւ այժմ դեռ ոչ ոք չգիտէ՝ ի՞նչ է աւելի կարեւոր ներկայումս յիշեալ Միութեան. արդեօք դրա՞մ, թէ, օրինակ, լոկ փաստական տեղեկութիւններ Հայաստանում կատարուող բարբարոսութիւնների մասին եւ կամ որոշ գործունէութիւն Մայր հողի վրայ»։

Ցաւախ կրկնուած մեղադրանք է Դաշնակցութեան հասցէին, հայ հակառակորդների եւ որոշ օտար շրջանակների կողմից, թէ նա գործել է անգլիական դիւանագիտութեան դրդումով, նոյնիսկ գործիք դառնալով նրա ձեռքին։ Այս, ինչպէս եւ ուրիշ փաստե-

րից, պարզ երեւում է, որ Դաշնակցութիւնը թէ՛ սկզբնապէս եւ թէ այնուհետեւ ոչ միայն ոչ մի կապ չի ունեցել Անգլիայի կամ ուրիշ որեւէ պետութեան հետ, այլ նոյնիսկ մօտից տեղեակ էլ չի եղել, թէ ինչ է կատարւում այնտեղ ի նպաստ Հայկական Հարցի։ Եթէ անպատճառ անհրաժեշտ է մեղադրել, աւելի ճիշդ եւ արդար կը լինէր մեղադրել ա՛յն օրերի Դաշնակցական ղեկավարներին այն բանի համար, որ նրանք քիչ են հետաքրքրուել արտաքին հարցերով, քաղաքական աշխատանք չեն կատարել արտասահմանում եւ ամբողջապէս կլանուել են յեղափոխական գործի ներքին կազմակերպութեամբ եւ մարտական ձեռնարկներով, երբեմն առանց բաւարար չափով ներդաշնակելու ներքին աշխատանքը արտաքին պայմանների հետ։ Շուտով, սակայն, այս թերութիւնը դիտակցուեց, եւ Երկրորդ Ընդհ. Ժողովից յետոյ Դաշնակցութիւնը իր գործունէութեան կարեւոր մէկ մասը դարձրեց արտաքին պրոպագանդն ու քաղաքական աշխատանքը արտասահմանում՝ այդ գործին յատկացնելով իր ամենահեղինակաւոր ոյժը՝ Քրիստափորին։

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Հ. Յ. Դաշնակցութիւնը հիմնուեց 1890 թ. ամառը, Թիֆլիսում։ Դրանից առաջ, Մայիսին, Պետերբուրգից Թիֆլիս էր եկել ուսանող Սարգիս Կուկունեանը երկու ընկերների՝ սղնախեցի Կոստ. Լիսինեանի եւ Ռուբ. Յովհաննիսեանի հետ, որոնք գործակատարներ էին մի վաճառատան մէջ եւ հայրենասիրական գաղափարներով տոգորուած՝ ընկերացել էին Կուկունեանին։ Այս վերջինի նպատակն էր զինուած խումբ կազմելով Կովկասում՝ մտնել Թրքահայաստան կռուելու համար թուրք բռնակալութեան դէմ։

Սարգիս Կուկունեանը ծնուել էր 1866 թ. Նուխի գաւառի Նիժ գիւղում, ուտիացի մի չքաւոր ընտանիքում։ Տարրական կրթութիւնը ստացել էր գիւղում, իր հօրեղբօր տէր-Թոդիկեան դպրոցում։ Ապա յաջողել էր ընդունուել Էջմիածնի Գէորգեան ճեմարանը։ Ընդունակ, աչքաց եւ ուսումնատենչ տղայ էր, ճեմարանի յառաջադէմ աշակերտներից, բայց նրան չէր վիճակուած աւարտել ճեմարանական դասընթացքը. 1883 թ., երբ նա 6-րդ դասարանում էր, տեղի են ունենում աշակերտական մեծ խռովութիւններ, որոնց հետեւանքով ճեմարանից արտաքսւում են շուրջ 80 աշակերտներ. դրանց թւում էր եւ Կուկունեանը։ Ապա՝ նա մտնում է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, որ եւ աւարտում է 1884-ին։

Այնուհետեւ, Բագուի Մարդասիրական Ընկերութեան աջակցութեամբ, Կուկունեանը մեկնում է Պետերբուրգ, ուր մըտնում է համալսարանի իրաւաբանական բաժինը, իբրեւ ազատ ունկնդիր, որտեղից շուտով փոխադրւում է Արեւելեան Լեզուների բաժինը։

Պետերբուրգում Կուկունեանը մտնում է ընդհանուր յեղա-

ԿՈՒԿՈՒՆԵԱՆ ԽՈՒՄԲԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՀԱՑԴՈՒԿՆԵՐԸ

փոխական խմբակների մէջ, մտերիմ յարաբերութիւններ է հաստատում լեհ ու բուլգար յեղափոխական երիտասարդութեան հետ, միեւնոյն ժամանակ մխրճւում է հայ ուսանողական կեանքի մէջ։ Պետերբուրգի հայ ուսանողութիւնը, ութսունական թուականների վերջերը, տարուած էր հայրենասիրական դաղափարներով. ինքնաղարգացում, աղդային դատ, Հայկական Հարց, յեղափոխական խմբակներ, պատրաստութիւն ապագայ հայրենասիրական գործունէութեան համար — այս հարցերն էին յուղում երիտասարդութեան մտքերը։ Կուկունեանը շուտով դառնում է հայ ուսանողութեան կենտրոնական դէմքերից մէկը։ Վերակազմում է ուսանողական գրադարանը։ Նրա ջանքերով հիմնւում է ուսանողների փոխադարձ օգնութեան ընկերութիւն։ Արծարծում է հայերէն չիմացող ուսանողների մէջ մայրենի լեզուն սովորելու միտքը։ Այժ է տալիս հայերէն գրքոյկների հրատարակութեան ու տարածման ժողովրդի մէջ։ Կապ է հաստատում նաեւ ոչ-ուսանող հայ երիտասարդների եւ հարուստների ու մայրաքաղաքի ազդեցիկ հայերի հետ։ Առանձնապէս մտերմանում է Կարո. Եղեանի հետ եւ օգնում նրա «Պետրոս Մեծի Յարաբերութիւնները Հայոց հետ» ռուսերէն մեծ հատորի պատրաս-

տութեան։ Պարապում է նաեւ զինավարժութեամբ, իբրեւ անհրաժեշտ պայման իր ապագայ գործունէութեան։

1890 թ. սկիզբը գերագրգիռ վիճակ էր տիրում հայութեան մէջ։ Ամենքի մտահոգութեան առարկան էր Թրքահայոց հարցը։ Ամէն կողմից յեղափոխական գործունէութեան պահանջ էր դրուում։ Կուկունեանը այլեւս չի կարողանում հանդիստ մնալ Պետերբուրգում։ Առնելով հետը իր մտերիմ ընկերներ Լիսինեանին եւ Յովհաննիսեանին՝ նա մեկնում է Թիֆլիս՝ այնտեղից Երկիր անցնելու նպատակով։

Թիֆլիսում Կուկունեանը ջերմ ընդունելութիւն է գտնում Դր. Արծրունիի շրջանակի եւ, առհասարակ, հայութեան բոլոր խաւերի կողմից։ Մեծահարուստ Մանթաշեանը, Ծատուրեանը եւ ուրիշներ ապահովում են նրա համար պահանջուած դրամը, եւ Կուկունեանին յաջողւում է իր շուրջը հաւաքել մի քանի տասնեակ երիտասարդներ, ձեռք բերել նրանց համար զէնք ու ռազմամթերք։ Յունիսին խումբը փոխադրւում է Կարսի շրջանի սահմանամերձ գիւղերը, ուր սկսում են, ամէն կողմից, հաւաքուել նոր ուժեր եւ պատրաստութիւններ են տեսնւում սահմանը անցնելու համար։

Երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը հիմնուեց, Կուկունեանի ձեռնարկը արդէն իր ընթացքի մէջ էր։ Որոշուած էր եւ արշաւախմբի գործունէութեան ծրագիրը. Կուկունեանը մտադիր էր իր խմբով մտնել Թրքահայաստան, այնտեղ խումբը բաժանել զանազան մասերի եւ տեղաւորել ռազմագիտական յարմարութիւններ ունեցող վայրերում. ապա տեղական ուժերով զօրացնել խմբերը, մարզել ու կազմակերպել եւ ձեռնարկել յեղափոխական կռիւների Թրքական վարչաձեւի եւ Թուրք ու քիւրտ հարստահարիչների դէմ։ Կուկունեանը ինքը իրեն էր վերապահում ընդհանուր ղեկավարութիւնը այդ շարժման։

Իր ձեռնարկին աւելի ոյժ ու հեղինակութիւն տալու համար, Կուկունեանը դիմում է Հ. Յ. Դաշնակցութեան Կենտրոնին, որ նա ստանձնէ արշաւախմբի վերին հովանաւորութիւնը եւ աջակցէ իրեն արշաւանքը շուտով դլուխ բերելու։ Կենտրոնը ընդառաջ է գնում եւ լրացնում է խմբի կազմն ու զէնքերը։ Ողեւորութիւնը Կուկունեանի խմբի շուրջ անսահման էր։ Երիտասարդութիւնը ամէն կողմից աղերսում էր ընդունուելու խմբի մէջ։ Ժողովուրդը ոչինչ չէր խնայում, ուտելիք ու հագուստ էր հասցնում խմբի անդամներին, պատսպարում ու հիւրասիրում էր նրանց։ Կուկունեանի անձի շուրջ առասպելներ ու երգեր էին հիւսւում։ «Ամէնքը համոզուած էին, պատմում է խմբի անդամներից Ստ. Յարութիւնեանը, որ Հայաստանը շատ շուտով պիտի փըր-

կըսի, եւ բոլոր դասակարգերը միացած էին «Սուրբ գործ»ի շուրջը։ Գիւղացիները մեծ անպատուութիւն էին համարում, երբ մենք դրամ էինք առաջարկում որեւէ բանի համար։ Բնորոշ է, որ կանայք աւելի ոգեւորուած էին, աւելի ջերմ մասնակցութիւն էին ցոյց տալիս, քան տղամարդիկ, թէեւ սրանք էլ անվերապահ համակիր էին մեր գործին։ Ի՞նչ հրաշալի տեսարանների ենք ներկայ եղել, ի՞նչ գուրգուրանք, խանդակաթ սէր ու յարգանք տեսել ամէն կողմ»...

Եւ մինչ տեղի էր ունենում խմբի կազմակերպութեան այս ցուցական աշխատանքը, այն վստահութեամբ, որ ռուս կառավարութիւնը համակիր է Թրքահայոց ազատագրական շարժման, ռուսական իշխանութիւնը աչալրջութեամբ հետեւում էր կատարուող քայլերին եւ, ի վերջոյ, միջոցներ ձեռք առաւ արգիլելու։ Ռուս քաղաքականութիւնը, Աղեքսանդր Երրորդ Ցարի գահակալութիւնից յետոյ, սկսել էր փոխել իր բարեացակամ վերաբերումը դէպի հայերն ու Հայկական Հարցը։ Նա չէր ուզում Թրքահայաստանից ստեղծել «երկրորդ Բուլգարիա»։ Կովկասի կառավարչապետ Շերեմետիեւը յայտնել էր Գր. Արծրունիին, երբ վերջինս նրա միջոցով խնդրել էր ռուս կառավարութեան պաշտպանութիւնը Թրքահայերին.— «Այդ բանը, ներկայ վայրկեանիս, չի համապատասխանում ռուս կառավարութեան դիտաւորութիւններին»։

Շերեմետիեւի այս պատասխանից յետոյ, Գր. Արծրունին այլեւս բոլորովին քաշուեց քաղաքական գործերից։ Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ ստիպուած էր հաշուի առնել ռուս կառավարութեան բացասական վերաբերումը եւ ըստ այնմ ուղղութիւն տալ իր գործունէութեան։ Որքան էլ Կուկունեանի ձեռնարկը հրապուրիչ երեւոյթ էր, իբրեւ գործունէութեան առաջին քայլ, Դաշնակցութեան Կենտրոնը նպատակայարմար չգտաւ մեծ խմբով ցուցական արշաւանքը, որից կարող էին բարդութիւններ ծագել եւ դժուարութիւններ ստեղծուել ապագային։ Կենտրոնը փորձեց կասեցնել արշաւանքը. այդ նպատակով Կոստ. Խատիսեանին, ապա իշխ. Արղութեանին եւ Սիմ. Զաւարեանին ուղարկեց Կուկունեանի մօտ, որ արդէն անցել էր խմբի դլուխը, Սարիղամիշի շրջանում, բայց այլեւս ուշ էր. խումբը կազմ ու պատրաստ էր, արշաւանքի բոլոր պատրաստութիւնները տեսնուած էին, յետաձգումը կարող էր խորունկ հիասթափութիւն առաջ բերել հասարակութեան մէջ. Կուկունեանն էլ յամառ կերպով պնդում էր արշաւանքի անհրաժեշտութեան վրայ։

Կենտրոնը, հաշուի առնելով բոլոր հանգամանքները, ի վերջոյ, տուեց իր համաձայնութիւնը, եւ Սեպտ. 23-ին, սահմանա-

մերձ Զուրուկ գիւղից արշաւախումբը շարժուեց դէպի Թրքահայաստան։ Խումբը բաղկացած էր 125 հոգուց, որոնցից 15 ձիաւոր։ Դրանց մէջ էին նաեւ, ապագային Պարսկաստանի յեղափոխութեան հերոս Եփրեմը եւ կամաւորական չորրորդ դնդի հրամանատար Ֆեռին։ Խմբի անդամները կրում էին Մ. Հ. տառերով կարմիր ուսադիրներ՝ Մայր Հայաստան։ Դատավարութեան միջոցին դատախազը այդ տառերը ներկայացրեց «Միացեալ Հայաստան» նշանակութեամբ եւ այդ հիման վրայ պնդում էր, թէ Կուկունեանը հետապնդում էր Ռուսահայաստանի անջատումը ռուսական կայսրութիւնից եւ միացեալ ու անկախ Հայաստանի ստեղծումը։ Խմբի առջեւից տարուում էր դրօշակը, որ Կարսի օրիորդներն էին նուիրել։ Դրօշակի մէկ կողմը նաշխուած էր 5 աստղ եւ մէջտեղը, խոշոր տառերով «61»՝ հայկական հինգ նահանգները եւ Բերլինի դաշնագրի 61–րդ յօդուածը խորհրդանշող։ Միւս երեսը՝ մի մեծ դանկ եւ «Վրէժ», «Վրէժ» բառերը։

Արշաւախումբը շարժուեց քահանայի օրհնութեամբ եւ գիւղացիների ցնծագին բարեմաղթութիւններով։ Կովկասահայութիւնը անսահման յուզումով եւ անձկութեամբ հետեւում էր Կուկունեանի հետ կապուած լուրերին։

Կուկունեանի ձեռնարկը, սակայն, չարդարացրեց իր վրայ դրուած յոյսերը։ Թէ՛ հրամանատարութիւնը եւ թէ խմբի անդամները անփորձ ու անվարժ երիտասարդներ էին եւ ռազմարուեստից ու զոհաբերութեան պատրաստակամութիւնից զատ ոչինչ չունէին։ Առաջին իսկ քայլերից խումբը նկատուում է շրջակայ քրտերից ու սահմանապահ զինուորներից։ Իր հետքը ծածկելու համար խումբը սպանում է մի քանի քրտեր։ Հրամանատարի եւ վալադների անփորձութեան հետեւանքով խումբը չեղուում է ճանապարհից եւ երկար թափառումներից յետոյ, լեռներում ու ձորերում, խմբի մի մասը հասնում է Խառ գիւղը, Կաղզուանի շրջանում, եւ տեղաւորուում է հանգստանալու գիւղի այգիներում։ Միւս մասը ցրուում է զանազան ուղղութեամբ։ Մի քանի հոգի էլ, որոնց թւում եւ Եփրեմը, ճանապարհին ձերբակալուում են սահմանապահ զինուորներից։

Մինչ Կուկունեանն ու իր զինակիցները հանգստանում էին Խառ գիւղի այգիներում, վրայ է հասնում գաւառապետի օգնական Գուդուշովը 15 զինուորներով։ Տեղի է ունենում ընդհարում ռուս զինուորների եւ արշաւախմբի անդամների միջեւ, որի ժամանակ սպանուում է մի կողակ։ Գուդուշովը օգնական զօրք է բերել տալիս Կաղզուանից, ձերբակալում է Կուկունեանին եւ ընկերներին եւ, ըստ խմբի անդամների վկայութեան, «հրէշային տանջանքների ենթարկելով», տանում նրանց Կաղզուան, ուր 25

օր պահում են բանտում։ Ձերբակալուածների թիւը հասնում էր մօտ 50 հոգու. միւսները ցրուելով՝ ազատուում են կառավարական հետապնդումից։

25 օր անցած, բանտարկեալներին չղթայակապ փոխադրում են Կարս։ Հակառակ պահակների ձեռք առած խիստ միջոցների, բանտարկեալները ցուցական կերպով «Մեր Հայրենիք» են երգում, որ խորունկ տպաւորութիւն է գործում փողոցներում հաւաքուած հայերի վրայ, որոնք լացով եւ համակրական ու խրախուսական խօսքերով ճանապարհ են դնում «նահատակներին»։

Բանտարկեալները աւելի ջերմ ցոյցերի են արժանանում Կարսի հայութեան կողմից։ Ամբի անդամներից մէկը, որ կարողացել էր ազատուել Խառից, իբրեւ ականատես, այսպէս է նկարագրում դէպքը.— «Սարգիս Կուկունեանի Կարս բերած օրը Կարսի հայութիւնը բոլոր խանութները գոցած էր։ Ժողովուրդը խռնուած էր ճանապարհին, փողոցներում, տանիքների վրայ։ Կառավարութիւնը թոյլ չէր տալիս, բայց նրան լսող չկար։ Շատերը խումբ-խումբ կ'երթային Կաղզուանի ճանապարհը, որտեղէն պիտի բերէին բանտարկեալները։ Կէսօրէն յետոյ, հեռուէն երեւցան բանտարկեալները։ Կուկունեանը կը քալէր առջեւէն։ Տղերքը բոլոր չղթայակապ էին, շրջապատուած էին ոստիկաններով, կոզակներով ու հետեւակ զինուորներով։ Երբ խումբը մօտեցաւ, ժողովուրդը շատ տրտում ու տխուր էր, բայց տղերքը ուրախ էին։ Ու, յանկարծ, բազմութիւնը օդը թնդացուց «կեցցէ՛»ներով եւ այդպէս «կեցցէ՛» աղաղակելով՝ հետեւեց մինչեւ բանտ»։

Եւ միայն Կաղզուանում ու Կարսում չէր. ամբողջ Կովկասի հայութիւնը ցնցուած ու վրդովուած էր ռուս կառավարութեան տմարդի վերաբերումից։ Կուկունեանն ու իր ընկերները ազգային հերոսներ ու նահատակներ էին ամենքի աչքին։ Գիւղերում ու քաղաքներում, հարսանիքների եւ քէֆերի ժամանակ, առաջին բաժակը պարպւում էր «մեր նահատակների» կենացը։ Ամենքը սրտատրոփ՝ հետեւում էին բանտարկեալների գործին եւ անհամբեր սպասում դատավարութեան։

Մինչեւ 1893 թ. Ապրիլ, Կուկունեանն ու ընկերները պահուեցին Կարսի բանտում։ Նրանց գործը նախ քննուեց ժանդարմական վարչութեան կողմից, ապա յանձնուեց Երեւանի Նահանգային Դատական Ատեանին, որ իր յատուկ նիստում, ձեռնարկեց դատավարութեան 1893 թ. Ապրիլ 7-ին։ Դատարանը ամբողջ կազմով եկել էր Կարս եւ մօտ մէկ ամիս զբաղուեց Կուկունեանի խմբի գործով։ Դատախաղութիւնը կանչել էր 350 վկաներ, մեծ մասը քիւրտեր ու թուրքեր, նոյնիսկ Թուրքիայից։ Դատավա-

բութիւնը դռնփակ էր։ Դատախազի կազմած ամբաստանագիրը եւ վկաների մեծ մասի ցուցմունքները ակնյայտնի կերպով խեղաթիւրուած ու միտումնաւոր էին։ Դատախազը գործին տուել էր քրէական բնոյթ եւ որպէս այդպիսին էլ ընդունուեց դատարանի կողմից։ Պաշտպան փաստաբանի ու մեղադրեալների բողոքները եւ առաջ բերած փաստերը մնացին անլսելի։ Ակներեւ էր, որ կառավարութիւնը որոշել էր դաժան կերպով վարուել հայ յեղափոխականների հետ։ Եւ դատավճիռը, որ արձակուեց Մայիս 7-ին, իրօք որ դաժան էր։

Սարգիս Կուկունեանը դատապարտուեց 20 տարուայ տաժանակիր աշխատանքի։

19 հոգի, որոնց թւում Ստ. Յարութիւնեան (Բալաջան), Երեւանցի, Կոստ. Լիսինեան (սղնախեցի), Ռուբ. Դերձակեան (պոլսեցի), Յովս. Մովսիսեան (Թաւրիզեցի)՝ 15-ական տարի տաժանակիր աշխատանքի։

2 հոգի՝ 8-ական տարի տաժանակիր աշխատանքի։

4 հոգի, իբրեւ անչափահասներ՝ նոյնպէս 8-ական տարի տաժանակիր աշխատանքի։ Սրանց մէջ էր եւ ապագայ Եփրեմ Խանը։

Եւ, վերջապէս, մի հոգի էլ՝ 3 տարուայ բանտարկութեան։

Բանտում, մինչեւ դատավարութիւն, մեռան երկու հոգի։ Մնացեալները ազատ արձակուեցին։

Սեպտ. 20-ին, բանտարկեալներին շղթայակապ Կարսից ճանապարհ են դնում դէպի Թիֆլիս, ուր Դատաստանական Պալատը պիտի վերաքննէր նրանց գործը։ Ճանապարհին, ամէն տեղ, հայ ժողովուրդը սրտառուչ ընդունելութիւն ցոյց տուեց նրանց։ «Ալեքսանդրապոլ քաղաքի ամբողջ հայ բնակչութիւնը, պատմում է Կուկունեանի խմբից Բալաջանը, դուրս էր եկել ընդառաջ։ Արփաչայի ափին խռնուած էր անհաշիւ բազմութիւն կառքերով, ձիաւոր ու ոտով։ Ալեքսանդրապոլցիք բնաւ չէին վախենում ռուսիկաններից։ Մօտենում էին մեզ, համբուրւում, զրոյց անում մտերմօրէն։ Իրենց եղբայրական վարմունքով մեզ մոռացնեցուին ճանապարհին քաշած նեղութիւնները»։

Եւ այսպէս՝ ամէն տեղ, ճանապարհին։

Թիֆլիսի բանտում պահեցին մինչեւ 1894 թ. Յունուար։ Դատաստանական Պալատը մերժեց վերաքննել դատը, որով մնաց ի զօրու Երեւանի Նահանգային Դատարանի վճիռը։ Դրանից յետոյ, բանտարկեալներին մաս-մաս, բանտից-բանտ չարչարելով, ուղարկեցին տաժանավայրերը՝ Սիբիր ու Սախալին կղզին։ Նրանցից ոմանք չդիմացան հիւսիսի սառնամանիքներին ու մեռան, ոմանց յաջողուեց փախչել ու հետագային կարեւոր դեր կա-

տարել Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում, ինչպէս Եփրեմը, Բալաջանը, Ռուբ. Դերձակեանը (Փայլակ) եւայլն: Մնացածներն էլ ազատ արձակուեցին 1905 թ. ռուսական յեղափոխութիւնից յետոյ: Այս վերջինների մէջ էր եւ ինքը՝ Ս. Կուկունեանը, որ, սակայն, երկար չվայելեց ազատութիւնը եւ, երկու-երեք տարի անցած, Հ. Յ. Դաշնակցութեան դէմ յարուցուած ընդհանուր հալածանքների շրջանում, որպէս Դաշնակցական, նորից ձերբակալուեց եւ մեռաւ Օրեոլի բանտում, 1913 թ. Նոյեմբերին:

Այսպէս տմարդի ու դաժան եղաւ ցարական կառավարութիւնը հայ ազատագրութեան ռահվիրաների հանդէպ: Սա մի շառաչուն ապտակ էր նրանց երեսին, որոնք Թրքահայաստանի ազատութիւնը սպասում էին Ռուսաստանից: Միեւնոյն ժամանակ նախազգուշացում նորածագ հայ յեղափոխութեան, որի դրօշակիրներից շատերը որոշ յոյսեր էին կապում ռուսական քաղաքականութեան հետ: Ցարական Ռուսաստանը միտք չունէր, իր սահմանին կից «երկրորդ Բուլգարիա» ստեղծելու եւ անողոք էր հայութեան ազգային տենչերի վերաբերմամբ:

Կուկունեան արշաւանքը թէ՛ որպէս յղացում եւ թէ, մանաւանդ, որպէս իրագործում ձախողեց, բայց, իբրեւ յեղափոխական առաջին ձեռնարկ, զարմանալի աղդեցութիւն արաւ հայ հասարակութեան մտքերի վրայ: Ժողովուրդը նկատեց այն, որպէս յաղթանակ եւ ապրեց ու ոգեւորուեց նրանով: Կուկունեանը դարձաւ ժողովրդի համար հերոսական մի դէմք՝ նահատակի լուսապսակով պսակուած: Կուկունեան արշաւանքը, Հայ Ազատամարտի պատմութեան էջերում, արձանագրուեց, իբրեւ լուսաւոր մի երեւոյթ, որպէս գաղափարական ներշնչումների աղբիւր յաջորդ սերունդների համար:

ԲԱՆԿ ՕԹՈՄԱՆ

Հնչակեանների անյաջող ձեռնարկը 1894–ին Սասունում, որի հետեւանքով ծանրապէս վնասուեց Տարօնի հայութիւնը, բայց, մանաւանդ, 1895 թ. համատարած կոտորածը եւ Եւրոպայի անտարբեր վերաբերումը, ընդհանուր յուսահատութիւն եւ բարոյալքում առաջ բերին հայ հասարակութեան մէջ: Ամբոխային հոգեբանութիւնը պատահած աղէտի պատասխանատուութիւնը ձգում էր յեղափոխականների վրայ. եթէ նրանք հանդիստ մնային, կոտորածներ տեղի չէին ունենայ: Ամէն կողմ գլուխ էին բարձրացնում յեղափոխութեան հակառակորդ տարրերը, դաւաճաններն ու մատնիչները:

Իր հերթին, օգտուելով առիթից, Թուրք կառավարութիւնն եւս աւելի եւ աւելի խստացրեց հալածանքները յեղափոխականների եւ, առհասարակ, հայութեան դէմ: Սուլթանի պահանջով Հայոց Պատրիարքարանն էլ դուրս եկաւ հրապարակով բանադրելու յեղափոխականներին: Համատարած բնոյթ ստացան խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները: Սահմանների վրայ զինուորական նոր ուժեր դասաւորուեցին՝ արգիլելու համար զինուած խմբերի մուտքը եւ ռազմամթերքի փոխադրութիւնը Կովկասից: Թուրք կառավարութիւնը, քաջալերուած մեծ պետութիւնների միջեւ տիրող անհամաձայնութիւններից եւ կոտորածների անպատիժ անցնելուց, ծրագրել էր մահացու հարուած հասցընել հայ յեղափոխութեան եւ դրա հետ միասին՝ Հայկական Հարցին:

Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարութիւնը չէր կարող չգիտակցել տագնապի ծանրութիւնը: Եւ ահա նրա մէջ հասունանում է հարուածին հարուածով պատասխանելու միտքը, որ շուտով գործնական ծրագրի է վերածւում: Մի շարք գրաւոր եւ բանա-

ւոր խորհրդակցութիւններից յետոյ, Հ. Յ. Դ. Բիւրոյի, Երկրի եւ Պարսկաստանի մարմինների ու գործիչների միջեւ, որոշւում է 1896–ին, միաժամանակ, Պոլսում եւ Երկրի ներսը՝ Պարսկաստանից ու Կարսի շրջանից կատարել ընդհանուր յեղափոխական ձեռնարկներ, որոնց բնոյթը թողնւում էր որոշել տեղական մարմիններին. Կովկասեան մարմինները պիտի բերէին իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը:

Այդ երեք կէտերում էլ արդէն որոշ պատրաստութիւններ տեսնուած էին, զէնք, ռազմամթերք եւ մարտական ուժեր համախմբած: Կարսի դծով, օրինակ, դեռ 1895–ին, Երկիր էին մտել Սերոբ Աղբիւրի խումբը, Բիթլիս, Հրայր–Դժոխքի երկու խմբերը եւ Արամ Աբրամեանի խումբը՝ բոլորը զինուած: Վերջին խմբերը կենտրոնացած էին Բասէնում եւ իրենց գործունէութիւնը տարածել էին շրջակայ գիւղերի վրայ, մինչեւ Կարին, Ալաշկերտ եւ Խնուս՝ կազմակերպելով ու զինելով տեղական երիտասարդութիւնը ինքնապաշտպանութեան եւ յեղափոխական նպատակների համար: Միեւնոյն ժամանակ, Կարսի նահանգի հայկական գիւղերում կազմուած էին զէնքի պահեստներ եւ հաւաքուած մարտիկներ՝ Երկիր մտցնելու համար: Ծրագրուած էր զինուած ուժեր կենտրոնացնել որոշուած վայրերում Երկրի մարմինների հետ համախորհուրդ ընդհանուր գործողութեան սկսելու:

Ներքին եւ արտաքին դէպքերը, սակայն, աննպաստ էին, եւ ծրագրի գործադրութիւնը օր օրի վրայ յետաձգւում էր: 1896–ի ամառը, Վանի «Մեծ Դէպք»ի լուրը առնելուց յետոյ, Կարսում, գումարւում է զինուորական խորհուրդ՝ Բիւրոյի ներկայացուցչի, Արիստակէս (Կարօ) Զօրեանի, Ղարա–Մելիքի, Աբամելիքի, Երկրից յատուկ այդ նպատակով եկած Արամ Աբրամեանի, Հրայր–Դժոխքի եւ ուրիշների մասնակցութեամբ, որ հանդամանօրէն քննում է ստեղծուած կացութիւնը, Երկիր զինուած ուժեր մտցնելու հնարաւորութիւններն ու հետեւանքները, միջազգային քաղաքական պայմանները, կուսակցութեան եւ ժողովրդի հոգեբանութիւնը, տրամադրելի ուժերը եւ, մասնաւորապէս, Վանի դրութիւնը եւ ձայների մեծամասնութեամբ որոշւում է, քանի օրուայ ընթացքում պատրաստ լինել անցնելու սահմանը, բայց ակներեւ էր, որ բոլորի մէջ էլ տիրում էր վարանում Վանի դէպքերի կապակցութեամբ — նոր կոտորածների առիթ տալու վախը:

Ցաջորդող դէպքերը թոյլ չտուին այս որոշման գործադրութիւնը. խորհրդակցութիւնից վերադառնալով, Ցուլիս 2–ին, Բասէնի Փէոփրիքոյ գիւղում, մատնութեամբ, ձերբակալուեցին եւ Կարինի բանտը փոխադրուեցին Արամ Աբրամեանը եւ Հրայր–Դժոխքը, որով շրջանի կազմակերպութիւնն ու մարտական

խմբերը մնացին առանց ղեկավարութեան, եւ Հրայրի ու Արամեանի խմբերի անդամների մեծ մասը վերադարձաւ Կովկաս։ Թուրք կառավարութիւնը աւելի եւս ուժեղացրեց հսկողութիւնը սահմանամերձ վայրերի վրայ՝ ռուս սահմանապահ զօրքի աջակցութեամբ։ Մինչ Թուրք իշխանութիւնները դաժան միջոցներ էին գործադրում Տրապիզոն–Կարին–Բասէն–Ալաշկերտի շրջանները մաքրելու համար հայ յեղափոխականներից, ռուս կառավարութիւնն էլ իր հերթին, նոյնպիսի խստութեամբ պահում էր սահմանագիծը՝ ձերբակալելով Կարսի, Բաթումի եւ Սուրմալուի շրջանների Դաշնակցական առաջնորդներին։ 1896ի ամառը, ռուս-թրքական սահմանը փաստօրէն դարձել էր անանցանելի, մանաւանդ, խմբերի համար։

Յուլիս 21–23–ին, Կարսում, դումարւում է մի նոր զինուորական խորհուրդ քննելու համար նոր կացութիւնը։ Խորհուրդը՝ հաշուի առնելով Վանում կատարուած ծանր դէպքերը, Հրայրի եւ Արամեանի ձերբակալութեան հետեւանքով մարտական խմբերի քայքայումը, Բաթումի եւ Տրապիզոնի շրջանի նոր ձերբակալութիւններին յաջորդած դժուարութիւնները, միջազգային աննպաստ հանգամանքը, այլեւ, արշաւանքի հետեւանքով, կոտորածների հաւանականութիւնը՝ գրեթէ միաձայնութեամբ որոշում է ձեռնարկը յետաձգել եւ խմբերը ցրել։ Մէկը միայն քուէ տալիս է ի նպաստ արշաւանքի, բայց դրա մասին էլ Զաւարեանը իր նամակներից մէկում ասում է. «Ներքուստ կարծեմ դէմ էր»։

Վիճակը աւելի լաւ չէր եւ Պարսկաստանի սահմանի վրայ, որտեղ արդէն պատրաստութեան մէջ էր արշաւախումբը դէպի Վասպուրական։ Պետոյի, Աւետիսեանի, Մարտիկի եւ ընկերների եղերական մահը եւ Վանի ժողովրդի տուած կորուստը անդրադարձան եւ Սալմաստում համախմբուած ուժերի եւ ղեկավարութեան վրայ։ Տուեալ պայմաններում ոմանք անհնար, ոմանք էլ անիմաստ էին դտնում ծրագրուած եւ արդէն նախապատրաստուած արշաւանքը, որի համար առատ զէնք ու ռազմամթերք էր կենտրոնացուած Թաւրիզում եւ Սալմաստում։ Միայն Թաւրիզի պահեստներում կար 50,000 փամփուշտ եւ համապատասխան քանակութեամբ ատրճանակ ու հրացան։ Մի քանի հարիւր մարտիկներ հաւաքուած ու տեղաւորուած էին Սալմաստի գիւղերում։ Նիւթական միջոցներ էլ կային բաւարար չափով։ Ապահովուած էր նոյնիսկ Բաֆֆիի հերոս Խենթի մասնակցութիւնը արշաւանքին։ 1896 թ. Ապրիլ 10–ին, Երեւանում, պայմանագրութիւն էր ստորագրուել Դաշնակցութեան Կոմիտէի եւ Խենթի (Սամսոնի) միջեւ, որի համաձայն Խենթը, «պատուաւոր խոստում արեց ինքը

իր քաջերի խմբով անցնել Մայր Հայրենիք, նրա ազատութեան ուրբ գործի համար զէնք բարձրացնել եւ որպէս Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան ազնիւ զինուոր, մինչեւ կեանքի վերջին րոպէն պաշտպանել իր օգնութեան կարօտ քոյրերին եւ եղբայրներին», իսկ Դաշնակցութիւնը յանձն առաւ տալ նրան մօտ հարիւր հրացան 200-ական փամփուշտներով, 3000 ռուբլի դրամ եւ հոգալ նրա Գիմնազիայում սովորող փոքր որդու ուսման ծախսը:

Արշաւանքի ամէն պատրաստութիւն տեսնուած էր արդէն, երբ վրայ եկան Վանի կռիւները եւ Պետոյի ու ընկերների նահատակութիւնը: Ստեղծուած պայմաններում այլեւս հնարաւոր չէր ծրագրի իրագործումը, եւ արշաւանքը յետաձգուեց յաջորդ տարուան:

Այսպիսով՝ 1896 թուականի համար նախագծուած յեղափոխական երեք մեծ գործերից երկուսը յետաձգուեցին: Մնում էր երրորդը՝ Պոլսի ձեռնարկը:

Արդէն նախորդ տարի, 1895-ի ամառը, Բիւրոյում միտք էր ծագել Պոլսում մի մեծ ցոյց կազմակերպելու՝ փութացնելու համար բարենորոգումների գործադրութիւնը: Նոյնիսկ ներկայացնելիք պահանջների հարցն էլ քննութեան էր դրուել: Ս. Զաւարեանի կարծիքով, օրինակ, պէտք է պահանջուէր, որ՝ «1) վարչութիւնը եւրոպական տէրութիւնների հսկողութեան (կոնտրոլի) տակ լինի, 2) զինուորական տուրքի ոչնչացնելը հայերի համար եւ պարտաւորութիւն զինուորական (հայ միլիցիայի) ծառայութեան, 2) միքանի փոփոխութիւններ ժողովուրդի տընտեսական վիճակում, որը վերապահել ժողովուելիք խորհրդին, 4) ամնիստիա քաղաքական յանցաւորների»: Այս կէտերը առաջարկւում էին, իբրեւ յաւելում պետութիւնների կողմից Թուրք կառավարութեան ներկայացրած բարենորոգումների Մայիսեան ծրագրի: Զաւարեանը արտայայտում էր Բիւրոյի մէջ տիրող մտայնութիւնը:

Ցոյցի կազմակերպութեան մասին առնուած էր եւ Պոլսի Կենտր. Կոմիտէի հաւանութիւնը: Բայլեր էին առնուած նաեւ պահանջուած նիւթական միջոցները ապահովելու համար: Միեւնոյն ժամանակ, Պոլսի Կենտր. Կոմիտէն բանակցութիւնների մէջ էր մտել Հնչակեանների հետ միասնաբար դլուխ բերելու համար ցոյցը: Վերջիններս, սակայն, որոշ խոստումներ տալուց յետոյ, դաղտնի կերպով, առանձին, կազմակերպեցին Բաբը Ալիի ցոյցը, Սեպտ. 18-ին՝ ազէտաւոր հետեւանքներով հայութեան համար: Այսպիսով Դաշնակցականների ծրագիրը ջուրն ընկաւ:

1895 թ. Հոկտ.-Նոյեմբերին տեղի ունեցած ընդհանուր կո-

տորածները եւ բարենորոգումների ձգձգումը մեծ պետութիւն-
ների կողմից, Պոլսի ընկերների մէջ նորից առաջ են բերում ու-
ժեղ հակահարուածով ցնցելու Սուլթանի կառավարութիւնն ու
եւրոպական դիւանագիտութիւնը՝ փութացնելու համար բարե-
նորոգումների գործադրութիւնը։ Բարգէն Սիւնի եւ մի քանի ու-
րիշ ընկերներ առաջարկում են ահաբեկել Սուլթան Աբդուլ Հա-
միդին։ Շատեր ոգեւորուած էին այդ ծրագրով եւ պատրաստա-
կամութիւն էին յայտնում զոհելու իրենց անձը։ Պատրաստ էին
եւ միջոցները. կենտր. Կոմիտէն ունէր բաւարար քանակութեամբ
ուժանակ եւ ռումբեր՝ մակեդոնական յեղափոխականներից ստաց-
ուած։ Հրացանի եւ ատրճանակի, ինչպէս եւ դրամի էլ պակա-
սութիւն չկար։ Ձեռնարկը ներշնչում էր յաջողութեան ամէն հա-
ւանականութիւն, եւ յաջողութեան պարագային ամենքը յուսա-
լից էին, որ պայմանները հիմնովին կը բարեփոխուին Թուրքիա-
յում, ի հարկին, առաջ բերելով եւ եւրոպական միջամտութիւն։

Այսու հանդերձ, ղեկավար ընկերները վարանումի մէջ էին.
հապա՞ եթէ Սուլթանի սպանութեան յաջորդէին նոր կոտորած-
ներ, այս անգամ, Թերեւս, աւելի լայն ծաւալով եւ աւելի վայ-
րագ ձեւերով։ Գաւառներից, մասնաւորապէս, Կարինից տեղե-
կութիւններ էին հասնում, որ մահմետական խուժանը ծայր աս-
տիճանի գրգռուած է եւ առիթ է փնտրում յարձակուելու հայերի
վրայ։ Պոլիսն իսկ ապահով չէր այդ տեսակէտից։ Ղեկավար ըն-
կերներից շատերը վախենում էին որեւէ պատրուակ տալ Թուրք
կառավարութեան ձեռքը արդարացնելու կոտորածները Եւրո-
պայի առջեւ։ Բնորոշ է այս տեսակէտից Պոլսի Կենտր. Կոմիտէի
կողմից, 1896 Թ. Փետր. 1-ին, Վռամեանի «Դրօշակ»ի խմբա-
գրութեան ուղղած նամակում արտայայտուած տեսակէտը.

Սուլթանի մահափորձի մասին, գրում է Վռամեանը, հիմա
տարաձայնութիւն կայ մեր մէջ. մեր ընկերները կը պնդեն, թէ
շատ անխոհեմ գործ է այդ... Կը պնդեն, թէ հիմա, երբ դեռ
պատրաստութիւնները առաջ տարուած չեն լիովին, ծանր մեղք
է ժողովուրդը նոր փորձանքի ենթարկել. չէ՞ որ 100,000 մըն ալ,
եւ այն ատեն ի՞նչ կրնանք վաստկիլ։ Ճիշդ է, որ հոս վախնալու
բան մը չունինք, մեր ռումբերը միայն կը բաւեն մեզ պաշտպա-
նելու, բայց գաւառներու մէ՞ջ։ Չէ՞ որ, ամէն պարագայի մէջ,
Խալիֆէն, որուն դէմ պիտի ըլլայ այդ փորձը, նոյնիսկ այն վա-
լիները, որ հիմա կը զսպեն, իրենք այս անգամ առաջին նշանը
պիտի տան նոր ջարդերուն։

«Ենթադրենք, թէ մինչեւ անգամ եւրոպական զօրքը գրաւէ
քաղաքը, բայց մինչեւ այդ ըլլալը, մինչեւ նորի մը գահակալու-
թիւնը, չէ՞ որ այդ բոլորը կրնան կոտորուիլ. ո՞վ պիտի զսպէ
խուժանը. համը բերանը մնացած է աւարներէն. դեռ շատերը

կ՝ափսոսան, որ հոն չէին, որ պէտք եղած կերպով օգտուէին առիթէն։

«Աւելի լաւ է, կ՝ըսեն, քանի որ ամէն կողմ Դաշնակցութիւնը լուրջ ձեռնարկներ կ՝ընէ ընդհանուր գործի համար, ինչո՞ւ մէկ անխոհեմ քայլով այդ բոլորը վտանգել։ Այդ առարկութիւններն անտեղի չեն, եւ իրաւ որ ես ինքս ալ հակուած եմ այդ կարծիքին»։

Պոլսի գործիչները, անշուշտ, իրաւունք ունէին տատանուելու, հակառակ որ թէ՛ Բիւրօն, թէ՛ «Դրօշակ»ի խմբագրութիւնը, թէ՛ Պարսկաստանի, Վասպուրականի եւ ուրիշ վայրերի մարմինները անհրաժեշտ էին համարում նման մի ցնցող ձեռնարկ կատարել մայրաքաղաքում, մեծ պետութեանց դեսպանների աչքի առջեւ, այն յոյսով, թէ հետեւանքը կը լինի եւրոպական միջամտութիւն, եւ Հայկական Հարցը կը լուծուի այս կամ այն ձեւով. ոմանք նոյնիսկ երկու չարեաց փոքրագոյնն էին դտնում Հայկական նահանգների դրաւումը ռուսների կողմից։ Պոլսի գործիչները աւելի մօտից ծանօթ էին մայրաքաղաքի պայմաններին, կառավարութեան տրամադրութեան եւ իսլամ ամբոխի հոգեբանական վիճակին եւ իրաւամբ սարսափում էին կոտորածների նոր առիթ տալուց թուրք կառավարութեան ձեռքը։

Հարցը բաւական երկար քննելուց, դրսի մարմինների եւ գործիչների կարծիքներն էլ առնելուց յետոյ, Պոլսի Կենտր. Կոմիտէն, ի վերջոյ հրաժարուեց այդ, ինչպէս ասում է Վռամեանը, «գեղեցիկ առիթից»։

Հիմնական միտքը, սակայն, մի ուժեղ ցնցումով բարենորոգումների գործը մեռած կէտից շարժելու պահանջը, շարունակեց գրաւեցնել Պոլսի Դաշնակցականներին։ Կենտր. Կոմիտէն, համախորհուրդ Բիւրոյի եւ միւս մարմինների հետ, ի վերջոյ, կանգ առաւ Բանկ Օթոմանի ծրագրի վրայ։

Բանկ Օթոմանը թէեւ Կայսերական դրամատուն էր, բայց իրապէս գտնուում էր եւրոպական դրամատէրերի ձեռքին։ Ամբողջ դրամագլուխը, ինչպէս նաեւ վարչութիւնը եւրոպական էր՝ գլխաւորապէս ֆրանսական եւ անգլիական։ Հարուածել այդ հաստատութեան՝ պիտի նշանակէր վնաս հասցնել Ֆրանսայի եւ Անգլիայի շահերին եւ միւս կողմից՝ վարկաբեկել առանց այն էլ վարկը կորցրած թրքական իշխանութիւնը յաչս Եւրոպայի։ Մի ուժեղ հարուած, մտածում էր այն օրերի Դաշնակցական ղեկավարութիւնը, առաջ պիտի բերէր անիշխանութիւն մայրաքաղաքում եւ առիթ պիտի ստեղծէր մեծ պետութիւնների միջամտութեան եւ, հետեւաբար, նաեւ Բարենորոգումների հարցի արծարծման։ Այս նկատումներով՝ Պոլսի Կենտր. Կոմիտէն որոշեց գինուած խմբով դրաւել Բանկ Օթոմանը՝ ստիպելու համար Սուլ-

թանին ու պետութիւններին գործադրել խոստացուած բարենորոգումները։

Բանկ Օթոմանի ձեռնարկի կազմակերպութեան եւ նախապատրաստական աշխատանքների մասին, դժբախտաբար, քիչ նիւթ է մնացել Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանում։ Մամուլի մէջ հրատարակուած տեղեկութիւններն էլ թերի են — մի քանի թռուցիկներ միայն, Արմէն Գարոյի եւ Հրաչի յուշերը եւ հատ ու կտոր թղթակցութիւններ «Դրօշակ»ում եւ հայ ու եւրոպական թերթերում։ Դրանց մէջ ամենէն լրիւն ու արժէքաւորը Արմէն Գարոյի յուշերն են իր «Ապրուած Օրեր»ում եւ Հրաչի տեղեկատուութիւնը «Դրօշակ»ում։ Այդ բոլորի հիման վրայ՝ կարելի է գծել Բանկ Օթոմանի գործի ընդհանուր պատկերը։

Պոլսի Կենտր. Կոմիտէի որոշումն էր ջինուած ուժով դրաւել Բանկ Օթոմանը եւ Սուլթանին ու մեծ պետութեանց Պոլսի դեսպաններին ներկայացնել հայկական բարենորոգումները անմիջապէս գործադրելու պահանջը՝ մերժումի պարզային սպառնալով ուժանակով յօդս հանել դրամատունը իր շուրջ 150 եւրոպացի պաշտօնեաների հետ միասին։ Միաժամանակ որոշուած էր ռմբային ցոյցեր կատարել Իզմիրում եւ, Պոլսի որոշ թաղերում, յատկապէս՝ Սամաթիայում, ուր Դաշնակցութիւնը շատ ուժեղ էր զգում իրեն։ Դրամատան գրաւումը եւ ռմբային գործողութիւնները Օսմանեան Կայսրութեան երկու գլխաւոր կենտրոններում առաջ պիտի բերէին ընդհանուր անիշխանութիւն ու շփոթ եւ պիտի փութացնէին պետութիւնների միջամտութիւնը Թուրքիայի ներքին գործերին, ի պահանջել հարկին, նաեւ եւրոպական զօրքի ցամաքահանում։ Վերջ տալու համար թրքական քաոսին, որ մշտնջենական սպառնալիք էր եւրոպական դրամագլխին եւ Մերձաւոր Արեւելքի խաղաղութեան, մեծ պետութիւնները պիտի ստիպէին Սուլթանին գործադրել բարենորոգումների ծրագիրը։

Փետրուար–Մարտից սկսած՝ Կենտր. Կոմիտէն արդէն անցնում է նախապատրաստական աշխատանքի։ Պոլսի ընկերներին աջակցելու համար Բիւրոյի կողմից գալիս են Վարդ Պատրիկեանը եւ Սմբատ Խաչատրեանը (Բորիս), որոնք այդ տարիներին գործօն դեր էին կատարում կուսակցութեան մէջ։ Դրսից եկել էին եւ Նանսիի ուսանողներից Դարեգին Փաստրմաճեանը՝ Արմէն Գարօն, Հրաչ Թիրեաքեանը եւայլն։ Ձեռնարկին մասնակցում էին Կենտր. Կոմիտէի բոլոր անդամները եւ Պոլսի աշքի զարնող ընկերները՝ Բարկէն Սիւնի, Ա. Վռամեան, Գնունի, Արտ. Անդրէասեան, Արտ. Միսաքեան եւ ուրիշներ՝ մեծ մասով Յ. Իսուֆեանի առաջ քաշած գաղափարական երիտասարդները, լը-



ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ

տեսներով վխտացող քաղաքում գաղտնի գործունէութեան վարժ, անձնուէր մարդիկ։ Բոլորի մղիչ ոյժն ու ղեկավարը Բաբկէն Սիւնին էր՝ Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսի կազմակերպութեան ոգին։

Բանկի գրաւման օր նշանակուած էր Օգոստոս 10-ը, բայց վերջին պահուն պէտք եղաւ յետաձգել Օգոստ. 14-ին։ Մինչեւ այդ՝ մշակուել էր ձեռնարկի յատակագիծը, հաւաքուել էին կամաւոր մարտիկներ՝ Դաշնակցական խմբերից։ Կատարուել էր ուժերի դասաւորում եւ աշխատանքի բաժանում. պատրաստուել էր մեծ պետութեանց դեսպաններին ներկայացուելիք յայտարարութիւնը, ինչպէս նաեւ ձեռնարկի նպատակը ժողովրդին բացատրող թռուցիկներ։ Եւ, վերջապէս, ձեռնարկից չորս-հինգ օր առաջ, գիշեր-ցերեկ հեւ ի հեւ աշխատանքով, պատրաստուեցին եւ նշանակուած վայրերում դեռեղուեցին ուժանակն ու ռումբերը։

Նախավերջին խորհրդակցական ժողովում, Օգոստ. 13-ին, որոշուեց, որ յաջորդ օր ժամը 12-ին տեղի ունենայ յարձակումը Բանկ Օթոմանի վրայ՝ 75 հոգիով եւ 200 ռումբերով։ Ընդհանուր ղեկավար նշանակուեց Բաբկէն Սիւնին, Հրաչը՝ օգնական։ Ամէն Գարոյին յանձնուեց Բանկի ներքին կարգի եւ պաշտօնէութեան պահպանութիւնը։ Բանկի գրաւումից անմիջապէս յետոյ՝

Լեւոն Նեւրուզը մեծ պետութեանց դեսպաններին առանձին-առանձին պիտի յանձնէր Հ. Յ. Դաշնակցութեան յայտարարութիւնը։ Օրուայ կարգախօս ընդունուեց «Ազատութիւն» բառը։

Բանկի գրաւման ժամին, Սամաթիայում, Գնունիի, Անդրէասեանի եւ Միսաքեանի առաջնորդութեամբ, տեղի պիտի ունենար ռմբային յարձակում զօրանոցի վրայ, որպէսզի զօրքը հնարաւորութիւն չունենայ զսպողական գործողութիւնների դիմելու։ Հինգ ընկերներ Ղալաթիայի կամուրջի վրայ ռումբ պիտի նետէին Սատրազամի կառքի վրայ՝ վարչապետի սպանումով քայքայելու համար կառավարութիւնը։ Եւ, վերջապէս, երկու հոգի մի մեծ ռումբ պիտի նետէին Ղալաթիա-Սարայի վրայ, եթէ զինուորները փողոց դուրս գային։ Ռմբային այս յանդուգն գործողութիւնները մայրաքաղաքում խուճապ եւ անիշխանութիւն պիտի ստեղծէին եւ պիտի փութացնէին եւրոպական միջամտութիւնը։ Այս ծրագիրը, սակայն, գործադրուեց միայն մէկ մասով։

Այս կարգադրութիւններից յետոյ, տեղի ունեցաւ հրաժեշտի ընթրիք։ «Ի՜նչ գեղեցիկ գիշեր էր, վերյիշում է Արմէն Գարօն։ Տասնեւհինգ հոգի հաւաքուած էինք Օր. Իսկուհիի համեստ սեղանին շուրջը. մեզմէ տասը հոգի կարող էին վաղը երեկոյեան կենդանի չլինել եւ կամ, եթէ մեր յուսացածին պէս, ձեռնարկը յաջող դուրս գար, 24 ժամէն Պոլիսը գրաւուած կը լինէր եւրոպական զինուորներով, եւ Հայկական Հարցը կը ստանար իր ցանկալի լուծումը... Զէ՞ որ նոյն տարին, Մայիս ամսին, եւրոպական մեծ պետութեանց դեսպանները պաշտօնապէս յայտարարած էին Սուլթանին, որ առաջին առթիւ, երբ Պոլսոյ մէջ նորէն խառնակութիւններ ծագէին, իրենք իրենց 12 մարտանաւերու զինուորները ցամաք պիտի հանէին կարգը վերահաստատելու համար։ Եւ այդ իսկ նպատակաւ մենք ընտրեր էինք Բանկ Օթոմանի գրաւումը, իբրեւ միջոց ստեղծելու դեսպանները իրենց սպառնալիքը ի գործ դնելու»*)։

Քրիստոնէական առաջին դարերի նահատակների անձնուիրութեամբ ու երկիւղածութեամբ, բայց կուռում մեռնելու աներկիւղ վճռականութեան տոգորուած ընկերներ։ Համեստ սեղանի շուրջ, յուզուած խօսում են վաղուայ «հարսանիք»ի մասին։ Սրբատառուչ է Բարկէն Սիւնիի խրախուսանքը. «Ընկերներ, դիտեմ, որ պիտի մեռնինք, սակայն, միակ փափաքս է, որ ողջ մնացողները աւելի կատաղի կերպով շարունակեն մեր սուրբ գործը, լուծեն մեր հարիւր հազար սրախողխող եղած եղբայրներուն ու քոյ-

---

*) Արմէն Գարօ. «Ապրուած Օրեր», 1948, Բոստոն, էջ 108։



ԱՐՄԷՆ ԳԱՐՕ ԵՒ Ա. ՎՌԱՄԵԱՆ

ներուն վրէժը եւ ազատեն մեր դժբախտ հայրենիքը. այն ժամանակ մեր ոսկորներն ալ հանդիստ կը մնան»:

Յաջորդ օր, Հ. Յ. Դ. Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի կողմէն հրապարակուեցան հայ եւ թուրք հասարակութեան ուղղուած երկու թռուցիկ-յայտարարութիւններ, որոնց մէջ բացատրուում էր տեղի ունենալիք ցոյցի նշանակութիւնը: Հայերէն թռուցիկը ասում էր.

«Մենք անդուլ բողոքեցինք Եւրոպային թուրք բռնապետութեան դէմ, բայց մեր բողոքները, որ օրինական էին, սիստեմաբար մերժուեցան:

«Սուլթան-Համիտ արիւնահեղ վրէժխնդրութեամբ պատասխանեց մեզ:

«Տեսաւ Եւրոպան այս ահռելի ոճիրը եւ լռեց:

«Ոչ միայն դահճի ձեռքը չբռնեց, այլեւ մեզ լրբաբար համակերպութեան հարկադրեց:

«Մեզ նախատեցին՝ մեր մարդկային իրաւունքը պլանալով մեզ եւ մեր ազգային պատիւը ցմահ խոցեցին՝ մեր արեան մէջ մեր բողոքի ձայնը խեղդել ջանալով:

«Մեր արիւնով սրբագործուած մեր պահանջներուն կուգայ հիմա միանալու եւ սրբազան վրէժի սեւեռուն դաղափարը, որ սեւ ուրուականի պէս արձանացած է մեր աչքերուն առջեւ:

«Իրաւունքը զօրաւորինն է» ըսաւ մեզի Եւրոպան՝ իր մահառիթ անտարբերութեամբ, եւ մենք՝ տակաւներս, մարդկային իրաւունքներէ զրկուածներս, հարկադրուած ենք դիտութեան դիմելու՝ որոնելով ամէն միջոց փշրելու համար Սուլթանի դարշելի լուծը. ա՛լ չենք կրնար հանդուրժել:

«Դիւանագիտական խաղերու ժամանակն ա՛լ անցած է։

«Մեր հարիւր հազար նահատակներուն թափած արիւնը իրաւունք կուտայ ազատութիւն պահանջելու։

«Մեր թշնամիներուն տարածած բոլոր նենգամիտ զրոյցներուն հակառակ՝ մենք խնդրած ենք եւ հիմա կը խնդրենք միմիայն անհրաժեշտը, այսինքն.

1. Նշանակել ծագումով եւ ազգութեամբ եւրոպացի բարձագոյն կոմիսար մը Հայաստանի համար՝ ընտրուած վեց մեծ պետութիւններու կողմէն։

2. Վալիները, միւթէսարիֆները եւ գայմագամները պիտի նշանակէ բարձր կոմիսարը եւ Սուլթանը պիտի վաւերացնէ։

3. Եւրոպացի սպաներու հրամանատարութեան ներքեւ պիտի կազմակերպուի տեղական ազգերէն միլիցիա, ժանտարմա եւ ոստիկանութիւն։

4. Դատական բարենորոգումներ՝ վարչական սիստեմով։

5. Կրօնի, կրթութեան եւ մամուլի կատարեալ ազատութիւն։

6. Երկրի հասոյթներու երեք-քառորդ մասը պիտի յատկացուի տեղական պէտքերուն։

7. Ցետնեալ հարկերը ջնջել։

8. Հինգ տարի հարկէ ազատել եւ հետեւեալ հինգ տարիներու պետութեան վճարելիք հարկը գործածել վերջին խռովութեանց պատճառած վնասները փոխարինելու։

9. Հայերէն գրաւուած անշարժ գոյքերը անմիջապէս վերադարձնել տէրերուն։

10. Բոլոր հայ գաղթականներուն ազատ վերադարձ։

11. Ընդհանուր ներում հայ քաղաքական յանցաւորներուն։

12. Եւրոպական տէրութիւններու ներկայացուցիչներէն առժամեայ յանձնաժողով մը կազմել, որ Հայաստանի գլխաւոր քաղաքներէն մէկուն մէջ հաստատուելով՝ պիտի հսկէ վերոյիշեալ յօդուածներու գործածութեան։

«Կը կրկնենք՝ ո՛չ մէկ զոհողութեան առջեւ կանգ պիտի առնենք մեր նպատակին հասնելու համար։

«Այնուհետեւ ազատ կը համարենք ինքզինքիս ամէն պատասխանատուութենէ։

«Կանխաւ կ՚ողբանք ամէն անոնց կորուստը — տեղացի թէ օտարական — որոնք զոհ պիտի ըլլան ընդհանուր շփոթութեան։ Կը ցաւինք, սակայն՝ ընդհանուր դժբախտութեան առջեւ մասնաւոր սուգը իմաստ չունի։

«Մենք կը մեռնինք, դիտենք, բայց յեղափոխութիւնը, որ հայ ժողովրդի մինչեւ ոսկորները թափանցած է, պիտի շարունակէ սպառնալ Սուլթաններու գահին, ցորչափ մեր մարդկային

իրաւունքները ձեռք չբերենք եւ ցորչափ կենդանի մնայ վերջին հայը»։

Այս պահանջները, հիմնական դծերով, ամփոփուած են եւ այն յայտարարութեան մէջ, որ Բանկի գրաւումից անմիջապէս յետոյ ներկայացուեց մեծ պետութիւնների Պոլսի դեսպաններին։

Թուրք ժողովրդին ուղղուած թուրքերէն թռուցիկը, գրուած Վռամեանի ձեռքով, հետեւեալ բովանդակութիւնը ունէր.

«Քե՛զ ենք դիմում սրանով, տաճիկ ժողովուրդ, ո՛չ թէ այն պատճառով, որ երկիւղ ենք կրում քեզանից, կամ այլեւայլ մի-տումներ ունինք, ո՛չ. մենք արհամարհանքով ենք նայում մահ-ուան երեսին — քո կառավարութիւնն է մեզ այդ սովորեցրել։ Մենք դիմում ենք քեզ միայն մէկ նպատակով՝ յայտնել քեզ, որ քո դէմ մենք ոչինչ ունենք։

Դարերից ի վեր մեր հայրերն ու պապերը ապրում էին քեզ հետ հաշտ ու խաղաղ՝ ունենալով մէկ հայրենիք եւ ընդհանուր նպատակներ։ Սակայն, այս վերջին ժամանակները ոճիրներով ւսեղծուած քո կառավարութիւնը սկսեց խռովութիւններ սերմա-նել մեր մէջ, որպէսզի աւելի մեծ դիւրութեամբ խեղդէ ե՛ւ քեզ եւ մեզ։ Դու չհասկացար, ժողովուրդ, որ այս դիւական քաղա-քականութեամբ, մեր եղբայրների արեան մէջ թաթախուած, դու մեղսակից դառնուեցար այդ զարհուրելի ոճրագործութեան։ Բայց թող քաջ յայտնի լինի քեզ, որ մեր կռիւը ոչ թէ քո դէմ է, այլ քո կառավարութեան. դրա դէմ են կռւում եւ քո լաւագոյն զա-ւակները, որոնք կառավարական ներկայ ձեւերում իրենց հան-դիստութիւնը միմիայն Բոսֆորի սրընթաց ալիքների մէջ են գտնում։

«Մտածի՛ր, ժողովուրդ, ով է քո թշնամին եւ ով է քո բա-րեկամը»։

Նոյն օրը, Օգոստոս 14-ին, առաւօտուանից, Բանկի գործին մասնակցողները սկսում են հաւաքուել Ղալաթիոյ անգլիական դպրոցում, որ ժամադրավայր էր նշանակուած։ Այդ տեղից Բան-կի հսկայ շէնքը մի քանի քայլի վրայ էր։ Սակայն, փոխանակ 75-ի, մինչեւ կէսօր միայն 26 հոգի են գալիս։ Այդ ուժերով էլ անցնում են գործի։ Ծրագրուած էր այնպէս, որ Արմէն Գարօն առաջ պիտի մտնէր Բանկը հետախուղելու համար, թէ ի՞նչ է կա-տարւում այնտեղ։ Ապա վեց նախայարձակներ պիտի բռնէին դու-ռը՝ չէզոքացնելով պահակներին։ Միւսները՝ ռումբերի պաշա-րով պիտի խուժէին ներս յետնապահ ունենալով Բաբկէն Սիւնիին եւ դուռը ամուր դոցելով՝ ռազմական դիրքեր պիտի բռնէին։ Ար-մէն Գարօն պիտի հոգար, որ պաշտօնեաները դուրս չփախչեն, եւ պահէր նրանց հսկողութեան տակ։ Հրաչը պիտի բռնէր վերին



ԱՐՄԷՆ ԳԱՐՕ
(Բանկ Օթոմանից յետոյ)

յարկը եւ այնտեղից թաշկինակով նշան տար դուրսը, անգլիական դպրոցի տանիքի վրայ սպասող Լեւոնին, որ անմիջապէս դեսպաններին հասցնէր յայտարարութիւնը: Այնուհետեւ դէպքերը պիտի որոշէին անելիքը: Ցարձակումը պիտի սկսուէր ճիշդ ժամը 1-ին:

Մէկին տասը րոպէ պակաս Արմէն Գարօն մտնում է Բանկը, սպասում է քառորդ ժամ, բայց տղաները չեն երեւում: Կասկածելով, թէ մի դուցէ նրանց հետ վտանգ է պատահել, դուրս է գալիս: Ֆիշ վերջը տեսնում է, որ վեց նախայարձակները շարժւում են Բանկի ուղղութեամբ: Դրան մօտ նրանք ընդհարւում են պահակների հետ, որի ժամանակ սպանւում է տղաներից Բաբերդցի Յովհաննէսը եւ պահակ զինուորներից երեք հոգի: Ցարձակուողները անմիջապէս մտնում են, նրանց հետեւում է եւ Արմէն Գարօն: Բռնում են դուռը: Դպրոցից դէպի Բանկն են շտապում մնացած տղաներն եւս՝ Հրաչը առջեւից՝ ուժանակով լեցուած պայուսակը կախուած վզից, Բարկէն Սիւնին յետեւից: Այդ պա-

հուն վրայ են հասնում Բանկի պահակ ժանտարմները՝ վեր ու վար կրակելով։ Նրանց մէկ գնդակից Բանկի սանդուխքի վրան ընկնում է Բարկէնը եւ ձեռքի ռումբի պայթիւնից կտոր կտոր է լինում։

ՀՐԱՉ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Ծանր գնով, իրենց առաջնորդին կորցնելով՝ տղաները դրաւում են Բանկը, որի ներսն ու դուրսը սկսւում է աննկարագրելի իրարանցում։ Փողոցում բարձրանում է աղմուկ ու ժխոր. մարդիկ խելակորոյս փախչում են ամէն ուղղութեամբ։ Ներսի պաշտօնեաները սարսափահար, գործն ու դրամը երեսի վրայ ձգած, իրենց կեանքի փրկութեան մասին են մտածում։

Բարկէն Սիւնիի կորուստից յետոյ, ընդհանուր ղեկավարութիւնը իր վրայ է առնում Արմէն Գարօն։ Մեծ դժուարութեամբ յաջողւում է փակել դրսի դուռը։ Տղաները դասաւորւում են ռազմական դիրքերում՝ պատուհանների մօտ, որպէսզի ռումբերով թոյլ չտան, հետզհետէ փողոցում հաւաքուող զօրքերին մօտենալ անխնայ գնդակահարուող չէնքին։ Հաւաքում եւ հսկողութեան տակ են առնում ահաբեկուած պաշտօնեաներին։

Մինչ այդ՝ Հրաչը մի քանի տղաներով բարձրացած է լինում երրորդ յարկը։ Այնտեղից նա նշան է տալիս Լեւոնին, որ շտապում է հասցնել զեսպաններին Դաշնակցութեան պահանջ-յայտարարութիւնը՝ տպագրուած ֆրանսերէն, հայերէն եւ թուրքերէն լեզուներով եւ ստորագրուած Բանկը գրաւող ղեկավար չորս ընկերների կողմից՝ Բարկէն Սիւնիի, Արմէն Գարոյի, Հ. Թիրեաքեանի եւ մէկ ուրիշի։

Ինչպէս ասացինք, այդ յայտարարութեան մէջ ներկայացուած էին հայերէն թուրքերէնում ամփոփուած պահանջները։

Բանկ Օթոմանի գրաւման լուրը շշմեցուցիչ տպաւորութիւն գործեց պալատում եւ Պոլսի դիւանագիտական շրջաններում. այդպիսի յանդգնութիւն հայերից ոչ ոք չէր սպասում։ Սուլթանի իշխանութեան համար այդ անորակելի խայտառակութիւն էր. եթէ մայրաքաղաքում, կենտրոնական կառավարութեան աչքի առջեւ «աւազակները», օրը ցերեկով, կարող էին գրաւել Կայսրութեան ամենակարեւոր մէկ հաստատութիւնը, ի՞նչ էր հապա ներքին դաւառների վիճակը։ Աբդուլ Համիտը, դայրացած, հրա-

ման է տալիս, առանց միջոցների առջեւ կանգ առնելու, նոյնիսկ թնդանօթի բռնելով, մաքրել Բանկը բռնագրաւիչներից։ Եւ ոստիկանութիւն ու զինուորական իշխանութիւն անմիջապէս անցնում են գործի։ Բայց այդ պահուն՝ վրայ է հասնում ռուս դեսպանատան թարգման Մաքսիմովը, որ բոլոր դեսպանների անունից սպառնում է Սուլթանին ռազմանաւերից ռմբակոծել պալատը, եթէ Բանկում գտնուած եւրոպացիներից մէկն ու մէկին վնասանգ պատահի։ Սուլթանը տեղի է տալիս եւ յանձնարարում է Մակսիմովին իր յարմար նկատած ձեւով կարգադրել խնդիրը։

Մակսիմովը շտապում է խորհրդակցել եւ միւս դեսպանների հետ ու նրանցից էլ լիազօրութիւն ստանալով, լսելով նաեւ Օբինոյի բերած տեղեկութիւնները Բանկից, անցնում է գործի։ Եթէ չլինէր Մակսիմովի այս միջամտութիւնը եւ Սուլթանի հրամանը գործադրուէր, եւրոպական զինուորների ցամաքհանումը կարող էր դառնալ անխուսափելի։

Մինչ Բանկի շուրջ կենտրոնացած զինուորական ուժերը փորձում էին վերադրաւել շէնքը եւ մահմեդական խուժանը գըրդռուած՝ սկսել էր յարձակուել հայերի վրայ, ներսը Բանկում, ռազմական դիրքերը ամուր բռնելուց յետոյ, Արմէն Գարօն եւ Հրաչը, հաւաքելով պաշտօնեաներին, տեղեկացնում են նրանց Բանկի գրաւման նպատակն ու դեսպաններին ներկայացուած պահանջների մասին։ Պաշտօնեաները պատրաստակամութիւն են յայտնում աջակցելու, եւ դրամատան երկրորդ տնօրէն Օբինոն յանձն է առնում անձամբ տանել դեսպաններին Բանկը գրաւողների պահանջները՝ արագացնելու համար նրանց միջամտութիւնը։ Անմիջապէս Բանկի վեց քարտուղարներին թելադրում է ֆրանսերէն հետեւեալ գրութիւնը՝ ուղղուած վեց դեսպաններին՝ Հ. Յ. Դ. Պոլսի Կենտր. Կոմիտէի անունից.

«Բանկ Օթոմանը մեր ձեռքն է, եւ մենք անկէ դուրս չենք գալու, մինչեւ որ մեր հետեւեալ պայմանները չկատարէք.

«1. Դադրեցնել Պոլսոյ մէջ սկսուած կոտորածը անմիջապէս։

«2. Դադրեցնել Բանկային վրայ զինուած յարձակումը, հակառակ պարագային, երբ մեր ռազմամթերքը հատնի, ուժանակով բանկը օդն ենք հանելու։

«3. Գրաւոր երաշխիքներ տալ մեզ հայկական բարենորոգումներու գործադրութեան մասին այն բարեխոսութեամբ, զոր Հ. Յ. Դ. Կեդր. Կոմիտէն առաջարկեր է ձեզ առանձին գրութեամբ։

«4. Ազատ արձակել այս դէպքերուն առիթով բռնուած բոլոր հայ յեղափոխականները։

«Հակառակ պարագային՝ մենք ստիպուած պիտի լինինք Բանկի շէնքը օդը հանելու մէջի բոլոր եղածներով»։

Ժամը վեցն էր արդէն, երբ Օբինոն եւ դրաւման վայրկեանին պատահաբար Բանկում գտնուող Պալատի թարգմաններից Հադդը բէյը (ապագայ վարչապետ Հադդը փաշան), շէնքը պաշարող զօրքերի հրամանատարի համաձայնութեամբ, դուրս են գալիս Բանկից՝ դրութիւնը տեղ հասցնելու նպատակով։ Դրա վրայ հաստատուում է մի տեսակ զինադադար, որին պիտի յաջորդէին բանակցութիւնները կամ նորից կռիւը։

Բանկում տեղի էին ունենում ընթրիքի եւ դիշերելու պատրաստութիւններ, երբ ժամը 7-ի մօտերը դրսից լսուում է անասելի մի աղմուկ ու ոռնոց։ Թէպէտ Բաշիի կողմից ահագին մի ամբոխ, մոլեռանդ փաթթոցաւորների առաջնորդութեամբ, հեղեղի պէս, խուժում էր դէպի Բանկը։ Զինուորները անզօր էին նրանց առաջն առնել։ Խուժանը աղմուկ-ժխորով մօտենում է շէնքին։ Կացինաւորները փորձում են կոտրել դուռը։ Այդ պահուն ներսից սկսում են տեղալ ռումբերը։ Ամբոխը, ահագին ոռնոցով, խելակորոյս դիմում է փախուստի՝ փողոցում թափելով բազմաթիւ սպանուածներ ու վիրաւորներ։ Եւ այնուհետեւ այլեւս փորձ չի լինում խաղաղութիւնը վրդովելու։

Մի պահ տիրում է անդորրութիւն Բանկի ներսը։ Պաշտօնեաներին կերակրելուց յետոյ՝ փակում են սենեակներում։ Տղաները, ատրճանակներով եւ ռումբերով զինուած, պահում են դիրքերը։ Եւ Արմէն Գարօն ու Հրաչը, ժամը 10-ին, նստում են «զինուորական խորհրդի» որոշելու համար հետագայ անելիքները։ Բանկ էին մտեր 26 ընկերներով, որոնցից չորսը սպանուել էին եւ հինգը վիրաւորուել։ Հաշուում են եւ մնացած զէնքերը. մնացել էր 18 ռումբ. ատրճանակների համար կար բաւարար չափով փամփուշտ։ Ունէին նաեւ մօտ երկու ու կէս քիլօ ուժանակ Հրաչի պայուսակում. ուժանակի մեծ պաշարը մնացել էր դուրսը կամ դրուել էր ռումբերի մէջ։ Այսքան ուժով ոչ հնարաւոր էր շէնքը պայթեցնել, ոչ էլ երկար ժամանակ դիմանալ, եթէ դրսից յարձակումները վերսկսուէին։ «Զինուորական խորհուրդը» ծանր մտահոգութեան մէջ էր...

Գիշերուայ ժամը 1-ին փողոցից լսուում են սուլիչի ձայներ։ Պարզուում է, որ դեսպանների կողմից պատուիրակներ են գալիս բանակցելու բոլոր դեսպանների լիազօր ներկայացուցիչը՝ ռուսական դեսպանատան թարգման Մակսիմովը, Բանկ Օթոմանի տնօրէն անգլիացի Էդդար Վէնեէնը՝ օգնական Օբինոյի ընկերակցութեամբ, Բերայի զինուորական հրամանատարը եւ Սուլթանի թիկնապահներից մէկը՝ սպիտակ դրօշակը ձեռքին։

Սկսուում է բանակցութիւնը՝ պատուիրակների վարից, փողո-

ցում, եւ Արմէն Գարօն ու Հրաչը վերը՝ պատուհանից։ Մակսիմովը ասում է.

«— Այս բոպէիս պալատէն կուգամ. Նորին Կայսերական Մեծութիւնը ինձ իրաւունք տուաւ ձեզ առաջնորդելու նաւահանգիստի մէջ գտնուած եւրոպական նաւերէն մէկը, որպէսզի վաղը եւ եթէ հեռանաք Պոլսէն. շուտ ըրէք, հաւաքուեցէք՝ ժամանակ չկորսընցնելու համար։

«— Բայց, Պ. Մակսիմով, առարկում է Արմէն Գարօն, մենք այստեղ չմտանք անոր համար, որ դուք նեղութիւն կրէիք մեզ ազատելու մասին մտածելու։ Դուք մեր նամակները չստացա՞ք։ Ի՞նչ ունիք մեզ ըսելու մեր պահանջներու մասին։ Եւ նորից յիշեցնում է գրաւոր կերպով ներկայացուած պայմանները։

«— Ձեր պայմաններէն առաջին երկուքը կատարուած են արդէն, պատասխանում է Մակսիմովը. քաղքին մէջ այլեւս կոտորած չկայ, իսկ բանկին վրայ զինուած յարձակումը դադրեցուած է ժամը 7-էն ի վեր... Գալով ձեր երրորդ պահանջին՝ բարենորոգումներու գործադրութիւնը, մենք մեր ձեռքէն եկածը պիտի ընենք գոհացում տալու համար, իսկ ձեր չորրորդ պահանջը ձերբակալուած հայ յեղափոխականներու մասին, ուրախութեամբ պիտի կատարենք»։

Գարօն եւ Հրաչը պահանջում են լուրջ երաշխիքներ, որ իրենց հեռանալուց յետոյ կոտորածները չեն վերսկսի եւ բարենորոգումները կը գործադրուին։ Մակսիմովը առարկութիւններ է անում եւ պնդում է անմիջապէս բանկից հեռանալու պահանջի վրայ։ Մէկ ժամ տեւող բանակցութիւններից յետոյ, Մակսիմովը, ի վերջոյ, անում է հետեւեալ առաջարկները.

Եթէ մինչեւ լուսանալը յեղափոխականները հեռանան բանկից, ինքը երդումով խոստանում է, վաղը եւրոպական նաւի վրայ, յանձնել նրանց մեծ պետութեանց դեսպանների կողմից ստորագրուած թուղթ, որ վեց ամսուայ ընթացքում բարենորոգումների ծրագիրը գործադրութեան պիտի դրուի։ Իր պատուի վրայ խօսք է տալիս, նաեւ, որ Պոլսի մէջ հայերի կոտորածներ տեղի չեն ունենայ։ Յանձն է առնում նաեւ խնամել բանկում վիրաւորուածներին եւ առողջանալուց յետոյ՝ ուղարկել արտասահման, իսկ սպանուածների մարմինները յանձնել Հայոց Պատրիարքարանին։

Վերջնական այս պայմանները ստանալուց յետոյ՝ Հրաչը եւ Արմէն Գարօն առանձնանում են խորհրդակցելու։ Հրաչը պնդում է, որ բանկից դուրս չգան, մինչեւ որ դեսպաններից գրաւոր խոստմնագիր չստանան կենտր. Կոմիտէի ներկայացրած պահանջների մասնի։ Բայց ի՞նչ երաշխիք, առարկում է Գարօն, որ

մերժումի պարագային առաւօտեան զօրքը յարձակումի պիտի չանցնի. 17 հոգիով ու 18 ռումբով ինչպէ՞ս պիտի կարողանան պահել բանկի հսկայ շէնքը: Պարտութեան պարագային թէ՛ դատը պիտի կորցնէին, թէ իրենք բոլորը եւ բանկի պաշտօնեաները պիտի կոտորուէին եւ Եւրոպայի աչքին պիտի ներկայացուէին, իբրեւ աւազակ ոճրագործներ: Երկար մտածելուց յետոյ, ի վերջոյ, որոշում են. «աւելի լաւ էր, Մակսիմովի խօսքին վստահած, պատուով դուրս գայինք այս նեղ դրութենէն, քան թէ մեր ամբողջ գործը վտանգէինք նոր յարձակման մը սպասելով եւ մեր վրայ առնէինք յաջորդ օրուայ կոտորածներուն պատասխանատուութիւնը»:

Ժամը երկու եւ կէսին Մակսիմով ստանում է դրական պատասխանը այսպիսի յայտարարութեամբ.

«Մենք կը համաձայնինք այս գիշեր դուրս գալ ձեր առաջարկած պայմաններով, միայն այն հասկացողութեամբ, որ դուք եւ ձեզ հետ եղած երկու եւրոպացի պաշտօնեաները ձեր անձովը պատասխանատու պիտի լինիք մեր աղատութեան համար: Մենք մեր զէնքերը չենք յանձնելու մինչեւ Պոլսէն ճամբայ ելնելնիս, եւ դուք մեզ հետ գալու էք մինչեւ նաւը: Եթէ ուեւէ փորձ լինի մեզ ձերբակալելու եւ զինաթափ ընելու, դուք ձեր կեանքովը պիտի վճարէք այսպիսի քայլի մը համար»*):

Մակսիմովը ուրախութեամբ յայտնում է իր համաձայնութիւնը: 14 ժամ Օսմանեան կայսրութեան կեդրոնական դրամական հաստատութիւնը իրենց իշխանութեան տակ պահելուց յետոյ 17 յեղափոխականները դուրս են գալիս բանկից՝ զարմանք եւ ապշութիւն պատճառելով Մակսիմովին եւ նրան ընկերացողներին. թուրք իշխանութիւնները նրանց հաւատացրել էին, որ 200 հոգի էին բանկը գրաւողները:

Մակսիմովի, Վէնսէնի ու Օրինոյի եւ երկու փաշաների ուղեկցութեամբ տղաները, առաւօտեան ժամը 4-ի մօտ, հասնում են Վէնսէնի զրօսանաւը, ուր նաւապետը սիրալիր հիւրասիրութիւն է ցոյց տալիս նրանց:

Յաջորդ օր, կէսօրից յետոյ, զրօսանաւ են գալիս Մակսիմովը եւ անգլիական ու ֆրանսական դեսպանների թարգմանները: Պարզւում է, որ Մակսիմովի երդումով տուած խոստումները չեն յարգուած՝ ոչ դեսպանների դրաւոր երաշխաւորութիւնը եւ ոչ ապահովութիւնը կոտորածներից: Տղաների ձեռքից առնում են սուրճանակները եւ փոխադրում ֆրանսական «Ժիրոնդ» նաւը, ուր նրանք ենթարկւում են խուզարկութեան եւ անարգանքի:

---

*) Տե՛ս Արմէն Գարո, «Ապրուած Օրեր», էջ 137–40:

Մասնաւորապէս կոպիտ վերաբերում է ցոյց տալիս Ֆրանսական դեսպանատան թարգմանը։

Նոյն վերաբերումը եւ Մարսէյլում. փոխանակ ազատ թողնելու, ինչպէս խոստացուած էր Պոլսում, ոստիկաններով շրջապատած տանում են նրանց Սէն Փիէրի բանտը, ուր նորից խուզարկում են՝ ամենքին մերկացնելով։ Առնում են վրաներից ժամացոյցներն ու դրամները եւ 17 օր պահում են բանտում ամենախիստ հսկողութեան տակ։

Բանկ Օթոմանի դէպքը լայն արձագանգ գտաւ եւրոպական մամուլում։ Բոլոր երկրների ազդեցիկ թերթերը դրուատեցին հայ յեղափոխականների խիզախ գործը՝ դատապարտելով նաեւ Սուլթանի բարբարոս վարչաձեւը։ Հանրային կարծիքի ճնշման տակ, այլեւ «Դրօշակ»ի խմբագրութեան թափած ջանքերի շնորհիւ՝ Ֆրանսական կառավարութիւնը յանձն առաւ, բանտարկեալների յայտնած ցանկութեան համաձայն, Հրաչին եւ Արմէն Գարոյին ազատ թողնել Եւրոպայում, իսկ մնացած 15 հոգուն փոխադրել Նիւ Եորք։ Բանտարկութեան 17-րդ օրը, Հրաչն ու Արմէն Գարօն, երկու ոստիկանների հսկողութեան տակ, ուղարկուեցին Ժընեւ, իսկ յաջորդ օրը միւսները, փոխանակ Նիւ Նորքի, տմարդի խաբէութեամբ, ապրանքատար նաւով ճամբուեցան դէպի Բուէնոս Այրէս։ Այստեղից նրանք վերադարձան Լոնդոն, ուր մնացին որոշ ժամանակ Դաշնակցութեան հոգատարութեան տակ եւ հետզհետէ փոխադրուեցին Բալկանեան եւ այլ երկիրներ՝ շարունակելու համար յեղափոխական աշխատանքը Դաշնակցութեան շարքերում։

Մակսիմովի խոստումներից միայն մէկը գործադրուեց ճըշդութեամբ. բանկում վիրաւորուածները, որոնցից երկուսը ծանրը, ռուսական դեսպանատան դաւազների հսկողութեան ներքոյ փոխադրուեցին ռուսական հիւանդանոցը, ուր նրանց ցոյց տրուեց հոգածու խնամք եւ պաշտպանութիւն։ Սուլթանի կառավարութիւնը մի քանի անգամ փորձեց ձեռք դնել իր «հպատակների» վրայ, կերակուր եւ թուրք բժիշկ ուղարկեց նրանց դարմանելու համար, բայց ռուս դեսպանատան կողմից հանդիպեց մերժումի։ Բժշկուելուց յետոյ, վիրաւորուածները ռուսական նաւով տեղափոխուեցին արտասահման։

Բանկի դէպքը արձագանգ գտաւ եւ Սամաթիայում։ Ինչպէս յիշեցինք, որոշուած էր այստեղ ռմբային գործողութեան դիմել զօրանոցի դէմ՝ զուգընթաց բանկի գրաւման։ Մրագրուած եւ ամէն պատրաստութիւն տեսնուած էր արդէն՝ փորձուած յեղափոխականներ՝ Խաչիկ Գնունիի, Արտաշէս Անդրէասեանի եւ Արտաշէս Միսաքեանի ղեկավարութեամբ։

Ըստ երեւոյթին, մատնութեան հետեւանքով, ոստիկանութիւնը լուր էր առել պատրաստուող ձեռնարկի մասին։ Օգոստ. 14-ին, առաւօտուանից, Սամաթիայի փողոցներում պահակներ են երեւում, որոնք անցուդարձողներին ենթարկում են խուզարկութեան եւ կասկածելիներին ձերբակալում են։ Զինուորական պահակներով շրջապատուում է եւ Գնունիի բնակարանը, բայց Գնունին նախորդ օրուանից Միսաքեանների տանն է լինում։ Զինուորական ուժեղ շղթայի տակ են առնուում նաեւ Միսաքեանների եւ ուրիշների կասկածելի համարուած տներն ու հայկական դպրոցը՝ յեղափոխական պարագլուխներին ձերբակալելու նպատակով։

Երբ արդէն բանկը դրաւուած էր, կռիւներ են սկսուում եւ Սամաթիայում։ Մէկը միւսի յետեւից, զանազան տներից կրակ է տեղում շրջապատող զօրքերի եւ ոստիկանների վրայ։ Սրանք էլ պատասխանում են համազարկներով։ Յեղափոխականների նետած ռումբերը ահ ու սարսափ են տարածում ամէն կողմ։ Մասնաւորապէս բուռն է լինում դիմադրութիւնը Միսաքեանների տնից։ Երկուստեք էլ ծանր կորուստներ են ունենում, բայց ուժերը անհաւասար էին։ Սամաթիան մինակ չէր կարող երկար դիմադրել կառավարական զերազանց ուժերին եւ, ի վերջոյ, 18 ժամ կռուելուց յետոյ, պարտուեց։ Հերոսի մահով ընկան Խաչիկ Գնունին, Արտաշէս Անդրէասեանը (Սուրէն), Արտաշէս Միսաքեանը եւ ուրիշ թանկագին ընկերներ։

Ընդհանուր ծրագրի լրիւ գործադրութեան պարագային, Սամաթիան իր ուժեղ պատրաստութեամբ եւ անձնազոհ ու անվախ գործիչներով կարող էր մեծ նպաստ բերել Պոլսի ձեռնարկին։ Դժբախտաբար, ծրագիրը մէկ մասով միայն իրագործուեց եւ Սամաթիայի դիմադրութիւնը մնաց միայն Բանկ Օթոմանի դիւցազնամարտի հետ կապուած հերոսական մի դրուագ։

Բանկի եւ Սամաթիայի հերոսները պատրաստ էին զոհելու իրենց կեանքը ազգային դատի համար։ Հետեւանքը կարող էր լինել բոլորովին ուրիշ, եթէ Կենտր. Կոմիտէի դծած ծրագիրը գործադրուէր ամբողջութեամբ, եթէ, մանաւանդ, տեղի չունենար Մակսիմովի միջամտութիւնը եւ գործադրութեան դրուէր Սուլթանի հրամանը։ Այդ դէպքում, ամենայն հաւանականութեամբ, եւրոպական նաւերի զինուորները Պոլիս կը մտցուէին եւ դէպքերը կարող էին տարբեր ընթացք ստանալ։

Բանկ Օթոմանի դէպքը մեծ տպաւորութիւն գործեց Եւրոպայի մամուլի եւ հանրային կարծիքի վրայ։ Թրքահէր եւ Սուլթանից կաշառուած թերթերի ճիդերը «աւազակներ» կամ «անիշխանականներ» ներկայացնելու Բանկը գրաւողներին ո՛չ մի յաջո-

ղութիւն չունեցան։ Ընդհակառակը, Բանկի հերոսների ասպետական վերաբերումը դէպի պաշտօնէութիւնը եւ այն փաստը, որ Բանկի դրամներից ոչ մէկ սանտիմի ձեռք չէին տուել, ընդհանուր համակրանք ստեղծեց նրանց շուրջ։ Մայրաքաղաքների ազդեցիկ թերթերը միաբերան դրուատում էին հայ յեղափոխականներին, արդարացնում էին նրանց ընթացքը եւ միաժամանակ դատապարտում թրքական վարչութիւնը։ Ցայտնուած շատ կարծիքներից միայն մէկը առաջ բերենք, իբրեւ նմոյշ. «Մի բուռն կըտրիճներ, դրում էր Բրիւսէլի «Էտուալ Բելժ» օրաթերթում «Ժիրոնդ» նաւի բժիշկը, օրը ցերեկով, կատարեալ անձնազոհութեամբ, մայրաքաղաքի կենտրոնում դրաւեցին Օսմանեան կարեւորագոյն հաստատութիւնը, 18 ժամ մնացին այնտեղ՝ առանց մի սանտիմի ձեռք տալու եւ, ի վերջոյ, ամենապատուաւոր եւ յաղթական կերպով թողին բանկը։ Եւ այդ հերոսները, այդ առաքեալները մեզ հետ էին (նաւի վրայ) վեց օր շարունակ։ Մենք կարողացանք քննել եւ դնահատել նրանց. սպաներ եւ ուրիշ պաշտօնեաներ՝ մենք ամենքս հիացած էինք նրանցից, պատուում ու սիրում էինք նրանց»։

Հանրային կարծիքի ճնշման տակ՝ դիւանագիտութիւնն էլ մի պահ նորից զբաղուեց Թուրքիայով ու հայերով՝ դարձեալ վերադառնալու համար իր պիղատոսեան դիրքին։

Աւելացնենք նաեւ այն, որ Բանկ Օթոմանի դէպքից յետոյ, մի պահ թուաց, թէ Ռուսաստանը մտադիր է լուրջ կերպով ձեռք առնել թրքական խնդիրը։ Ցարի տխրահռչակ նախարարը՝ Լոբանով, որ երազում էր «Հայաստանը առանց հայերի» տեսնել, Վիեննայից վերադարձին, երկաթուղու վագոնում, Բանկ Օթոմանի դրաւման հեռագրալուրը կարդալուց յետոյ՝ յանկարծամահ էր եղել սրտի կաթուածից։ Պոլսի դեսպան Նելիդովը, որ համամիտ չէր Լոբանովի թրքական քաղաքականութեան, ֆրանսական դեսպան Ֆամբոնի հաւանութեամբ, Բանկի դէպքից անմիջապէս վերջը, հաղորդում է Պետերբուրգի կառավարութեան, թէ Թուրքիայում ընդհանուր անիշխանութիւն է տիրում եւ հաւանական է, որ հայ յեղափոխականները նոր ձեռնարկներ կատարեն։ Այս անիշխանութիւնից կարող է օգտուել Անգլիան եւ դրաւէ նեղուցները։ Ուստի, անհրաժեշտ է, որ նման մի հաւանականութիւն կանխելու նպատակով, Ռուսաստանը ստանձնէ թրքական գործերին միջամտելու նախաձեռնութիւնը։

Նելիդովի այս առաջարկը հաւանութիւն է գտնում Պետերբուրգում, եւ Ցարի կառավարութիւնը հրաման է տալիս Սեւ ծովի նաւային ուժերին շտապով նախապատրաստուել։ Միեւնոյն ժամանակ՝ Խրիմում զօրամասեր են համախմբւում, ի հարկին,

ցամաք հանելու համար Փոքր Ասիայում։ Այս շարժումը, սակայն, երկար չտեւեց. տեսնելով Եւրոպայի անտարբերությունը եւ վախենալով միջազգային բարդություններից՝ ցարը հրաժարուեց այդ ծրագիրներից։

Անգլիայում էլ, ուր հասարակական միտքը չափազանց գրգռուած էր Պոլսի դէպքերից, Գլադստոնը փորձեց եւրոպական միջամտություն առաջ բերել յօդուտ հայերի։ 1896 թ. Սեպտ. 21-ին արտասանած իր նշանաւոր ճառով, որ նրա կարապի երգը եղաւ, նա անողոք խօսքերով դատապարտեց Թուրքիայի վատթար կարգերը, իբրեւ հետեւանք մեծ պետությունների վարած քաղաքականության։ «Հարիւր հազարաւոր սպանուած հայեր, ասաց նա, եւ ո՛չ մէկ երաշխիք, որ նման վայրագություններ պիտի չկրկնուին, անհաշիւ շահ, որ ձեռք բերին ջարդարարները — եւ այս ամէնը եւրոպական համերգի պատճառով, այսինքն՝ մեծ պետությունների փոխադարձ արհամարհանքի եւ ատելության հետեւանքով»։

Քաղաքակիրթ մարդկության խիղճը պէտք է ըմբոստանայ այս անհանդուրժելի չարագործության դէմ, աղաղակում էր Գլադստոնը։ Եւրոպան պէտք է խզէ իր յարաբերությունները Կարմիր Սուլթանի հետ եւ արագ ու կտրուկ միջոցներ ձեռք առնէ ի նպաստ հայերի։ Բայց ո՞վ էր լսողը։

Նոյն կարգի վրդովում եւ աղաղակներ լսուեցին նաեւ Եւրոպայի ուրիշ կենտրոններից։ Հանրային խիղճը, սակայն, անզօր էր ազդելու գաղտնի հաշիւներով առաջնորդուող դիւանագիտության վրայ։ Տարբեր կը լինէր նրա վերաբերումը, թերեւս, եթէ Բանկ Օթոմանի ոսկիները լուրջ վտանգի ենթարկուէին, եթէ եւրոպական գիշատիչ դրամատէրերը պէտք տեսնէին իրենց շահերի ապահովության համար միջամտելու Թուրքիայի գործերին։

Հայերի համար Բանկ Օթոմանը եղաւ ու մնաց, իբրեւ ազգային բողոքի եւ կուտակուած ցասումի ու վրէժի տարերային ու խիզախ մի պոռթկում։ Եւ որպէս այդպիսին, նա կատարեց իր պատմական դերը եւ այսօր էլ դեռ շարունակում է ներշնչել ու ոգեւորել աղատատենչ հայ սրտերը։

ՓԵՏՐՈՒԱՐ 18

Գրեց՝ Ց. ԻՐԱԶԵԿ

Հայ ժողովուրդը, իր բազմադարեան գոյութեան ընթացքում, Ազատասիրութեան, Ջերմ Հայրենասիրութեան, այլեւ արդար Ցասումի եւ Ըմբոստութեան բազմաթիւ դրուագներ է հրաշակերտել՝ մէկը միւսից շքեղ ու հոյակապ, պատմութեան ասպարէզը թեւակոխելու հենց առաջին օրից սկսած։

Նման դրուագներից են, օրինակ, մեր սքանչելի նախահօր՝ Հայկի դիւցազնամարտը Բէլի դէմ, մեր ազգի դարաւոր պայքարը, փոփոխակի յաջողութիւններով, գոռոզ Ասորեստանի եւ Հին Աշխարհի մի շարք զօրաւոր ազգութիւնների դէմ, Վարդանանց ճակատամարտը Աւարայրի դաշտում, Սասունցի Դաւիթի խոյանքն ու յաղթանակը լեռնանման Մսրամելիքի դէմ, Դաւիթ Բէկի հերոսական կռիւներն ու յաղթութիւնները ժամանակի երկու հզօր աշխարհակալ պետութիւնների՝ Պարսկաստանի ու Տաճկաստանի դէմ եւայլն։ Եւ, վերջապէս, մեր օրերի Հայ Ազատագրական պատմութեան էջերում արձանագրուած անթիւ ու անհամար հերոսամարտերն ու հերոսութիւնները՝ նորից երկու հզօր պետութիւնների դէմ եւ նրանց սահմանների ներսում՝ վիթխարի Ռուսաստանի եւ արիւնախանձ Տաճկաստանի։

Փետրուար 18 եւս, իր բովանդակ արտայայտութեամբն ու խորհրդովը, մէկն է այդ հոյակապ դրուագներից եւ հայ կեանքի ու մեր նորագոյն պատմութեան ամենափայլուն, ամենալուսաւոր մէկ էջը։ Բայց միայն մի խոշոր տարբերութեամբ, որ հետեւեալն է.

Բոլոր միւս դէպքերում շարժումն սկսուել ու ղեկավարուել է, ինչպէս ցոյց են տալիս վկայութիւնները, վերեւից, այսինքն՝

ժողովրդի վերին խաւերից, բարձր ու ղեկավար դասակարգերից։ Բուն ժողովուրդը, կրաւորական մի կամակատարութեամբ, կամայ թէ ակամայ, միայն հետեւել է նրանց։

Այսպէս, օրինակ, Վարդանանց պատերազմում գլխաւոր դերակատարներն էին՝ կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ, աւագերէց, քահանայ, նախարար, սեպուհ, իշխան, ազնուականներ։ Իսկ ժողովուրդ կոչուած հոծ հաւաքականութիւնը՝ բոլորովին երկրորդական դերում, ստուերի մէջ, կարելի է ասել՝ մոռացուածի, արհամարհուածի վիճակում։

Փետրուարեան ապստամբութեան մէջ միանգամայն հակառակն ենք տեսնում։ Այստեղ դերերը փոխուած են, եւ գլխաւոր դերակատարը ինքը ժողովուրդն է։ Շարժումը ծնունդ է առնում վարից, բուն ժողովրդի ծոցից, այլեւ, գոնէ սկզբնական շրջանում, նրա՝ ղեկավարութեամբ։

Սակայն, գնալով եւ աւելի ու աւելի զօրանալով՝ իր յետեւից նա քաշում-տանում է ազգաբնակութեան միւս տարրերին եւս՝ ղեկավարութիւնն ու մտաւորականութիւնը։ Որով շարժումը դառնում է ընդհանուր եւ ստանում է համազգային, համաժողովրդական բնոյթ ու կերպարանք՝ այդ դաղափարների ամենաընդարձակ իմաստով։

Դրա հետ միասին՝ մի կարեւոր հանգամանք եւս. Փետր. 18-ը անմիջապէս թելադրուած չէր, բառի նեղ իմաստով, անկախութեան, հայրենիքի, ազատութեան, ընկերային հասարակակարգի եւ կամ նման որեւէ դաղափարի պաշտպանութեան պահանջից, ինչպէս սովորաբար լինում են բոլոր յեղափոխութիւնները, ազգային-հասարակական շարժումները։ Ո՛չ, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք, նա ծնունդ էր դերազանցօրէն մի շատ տարրական, բայց եւ շա՜տ արդար պահանջի՝ ապրելու իրաւունքի կամ ապրելու պահանջի — այս խօսքերի բառական հասկացողութեամբ — որից փաստօրէն զրկուած էր մեր ժողովուրդը բոլշեւիկ բռնակալութեան աննախընթաց լծի տակ։

Ուրեմն, այս տեսակէտից եւս Փետր. 18-ը հանդիսանում է մի խիստ ուշագրաւ ու եզակի երեւոյթ մեր պատմութեան մէջ։

ԲՈԼՇԵՎԻԿ-ՌԵՄԱԼԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ

Համաշխարհային մեծ պատերազմի յորձանքների մէջ, «իւր քաջ որդոց սուրբ արիւնով», վեհօրէն բացուեց Մայիս 28-ի լուսապայծառ արշալոյսը եւ մի օրից միւսը, դարերի ստրկութեան ներքոյ հիւծուած եւ ծուէն-ծուէն եղած հայ հայրենիքը, վերջապէս, իր անկախութիւնը գրկեց, թէեւ, դժբախտաբար, մէկ շատ

փոքրիկ հողաշերտի վրայ, հազիւ ընդամէնը 12,000 քառ. կիլոմետր տարածութեամբ եւ կեանքի ու գոյութեան չափազանց ծանր, ողբալի պայմաններում։

Ժողովուրդը՝ աննշան, որպէս քանակ, հազիւ մէկ միլիոն չունչ համրանքով, այն էլ կէս առ կէս որբերից ու դաղթականներից բաղկացած։ Դրա հետ միասին, աշխարհաւեր պատերազմի հետեւանքով, բոլորովին կքած, տնտեսապէս, ֆիզիքապէս ու հոգեպէս՝ վերջին ծայր քայքայուած ու թշուառ, սովի, համաճարակ հիւանդութիւնների ու մերկութեան ճիրաններում մահուան դուռը հասած եւ իր հաւասարակշռութիւնը կորցրած։

Աւելացրէ՛ք նաեւ՝ ներքին ու արտաքին թշնամիներով օղակուած, դրսի աշխարհից միանգամայն կտրուած եւ առանց օգնութեան ամենափոքրիկ յոյսի։

Իսկ որ ամենից դլխաւորն է եւ ամենից ահաւորն ու սոսկալին՝ մեր դարաւոր թշնամին էլ եկած, բանակ դրած ու չոքած Երեւանի պատերի տակ, 7–8 կիլոմետր հեռաւորութեան վրայ, հայի արեան վերջին կաթիլին ծարաւի, եւ թնդանօթների փողերն ուղղած մէկ կողմից՝ երկրի մայրաքաղաքի՝ Երեւանի, միւս կողմից՝ հայութեան սրտի ու հաւատքի ամրոց Էջմիածնի վրայ։

Սակայն, ո՞վ զարմանք, կատարուեց հրաշքը։ Նկուն ու գերեղմանի եզրին դտնուող Հայոց Աշխարհը անսպասելիօրէն ո՛չ միայն անխուսափելի մահից փրկուեց, յարութիւն առաւ, այլեւ սկսեց կամաց–կամաց չունչ քաշել, աճել, զօրանալ ու զարգանալ եւ ընդարձակուել։ Յաջորդ տարին արդէն բոլորովին կազդուրուած ու ոտքի՝ խորունկ հաւատով ու վստահ աչքերով իր լուսաւոր ապագային էր նայում...

Բայց, դժբախտաբար, շաբաթն աւելի շուտ եկաւ, քան ուրբաթը։ Հայոց յոյսերը չարդարացան եւ Հայաստանի մանուկ Հանրապետութիւնը երկար կեանք չունեցաւ։ Դէպքերը յայտնի են ամենքին ու հրապարակի վրայ։

Հիւսիսից՝ «Կարմիր յեղափոխական» բոլշեւիկեան Ռուսաստանը, հարաւից՝ քեմալական ազդայնամոլ Թուրքիան, իրար հետ եղբայրացած ու ձեռք–ձեռքի, արշաւեցին ու միացեալ ուժերով խորտակեցին հայ ժողովրդի դարաւոր երազը՝ Հայաստանի նորածին անկախութիւնը։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ ԼԾԻ ՏԱԿ
ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԸ

Հանրապետական Հայաստանի կառավարութիւնը, աւելորդ արիւնահեղութիւնից խուսափելու եւ երկիրն աւերմունքից փրկե-

լու մտահոգութեամբ, նպատակայարմար գտաւ ընդունել Խորհ. Ռուսաստանի լիազօր-ներկայացուցիչ Լեգրանի պահանջը եւ իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներին:

Որով, ուրեմն, իշխանութիւնը յանձնուեց, օրինական բոլոր ձեւականութիւնները կատարուելով: Հայաստանը խորհրդայնացաւ եւ բոլշեւիկները երկրին տիրացան՝ բոլորովին խաղաղ կերպով, առանց մի կաթիլ արիւն թափելու: Հետեւաբար, հեքեաթ է, սին ինքնազովութիւն միայն եւ ո՛չ թէ իրականութիւն, երբ բոլշեւիկները, տեղի-անտեղի պարծանքով միշտ թմբկահարում են, որ իբր թէ Հայաստանում ապստամբութիւն է եղել Հանրապետական կառավարութեան դէմ, այն էլ՝ զոյութիւն չունեցող ինչ որ «յեղափոխական բանուորութեան» կողմից, եւ իրենք իշխանութիւնը կռուով են խլել Դաշնակցականներից:

Եւ հասկանալի է. բոլշեւիկներն ի՞նչպէս կարող էին հաշտուել, որ առանց կռուի, առանց արիւնհեղութեան իրենք ձեռք բերած լինէին իշխանութիւնը: Զէ՞ որ իրենց անգիր արած մարքսեան տարազներից մէկը բացէ ի բաց պատգամում է- «Որեւէ երկրում, որ քաղաքացիական կռուի բովից չի անցել, պրոլետարիատի մենատիրութիւնը չի՛ կարող կայուն լինել»: Եւ իրենց մենատիրութիւնը Հայաստանում, ուր իրենց փնտռած պրոլետարիատն իսկ չկար, «կայուն» դարձնելու մտադրութեամբ, իշխանութեան անցնելու հենց առաջին վայրկեանից, սկսեցին գործադրել այնպիսի բռնութիւններ ու անիրաւութիւններ, որոնց նմանը նոյնիսկ իսրայէլացիները չէին տեսել գերութեան մէջ Եգիպտոսում: Եւ այդ ամէնը միայն մէկ հրէշային նպատակով, որ ժողովուրդը, վերջ ի վերջոյ, համբերութիւնից դուրս գալով՝ դիմէր ըմբոստութեան, եւ իրենք էլ քաղաքացիական կռուի արիւնով մկրտէին իրենց մենատիրութիւնը:

Այդ յանցագործ ճանապարհի վրայ իրենց առաջին քայլն եղաւ ուրացումը 1920 թ. Դեկտ. 2-ի համաձայնութեան, որով որոշ չափով ապահովւում էին Հայաստանի եւ հայութեան գերագոյն շահերը եւ Հայոց Աշխարհը, խորհրդայնանալով հանդերձ, պահում էր իր անկախութիւնը, եթէ, ի հարկէ, դաշնադիր միւս կողմը յարգէր իր ստորագրութիւնն ու յանձնառութիւնները: Սակայն, եւ յիրաւի, համաձայնագրի մելանը դեռ չցամաքած՝ բոլշեւիկներն իրենց ստորագրութիւնն էլ ուրացան, յանձնառութիւններն էլ ոտքի տակ տուին:

Համաձայնութեան ստորագրութիւնից 2-3 օր յետոյ՝ Ազըրբէջանից, Իջեւան-Դիլիջան-Քանաքեռ գծով, Երեւան մտաւ բոլշեւիկեան առաջին զինուորական ոյժը — մէկ փոքրիկ հեծեալ զօրամաս Կարմիր Բանակից — թանձրացեալ աստիճանացոյցը կամ

չափանիշը խորհրդային Ռուսաստանի ուժի, իրաւակարգի ու ամբողջ էութեան...

Ժողովուրդը հեռուից-հեռու շա՛տ բան էր լսել բոլշեւիկների եւ, մասնաւորապէս, նրանց յաղթական կռիւների մասին Կոլչակի, Դենիկինի ու Վրանգելի դէմ եւ իր երեւակայութեան մէջ հրապուրիչ պատկերացում էր ստեղծել նրանց շուրջը: Եւ հասկանալի է, ուրեմն, այն մեծ հետաքրքրութիւնը, որից մղուած մարդկային մի հսկայ բազմութիւն տներից դուրս էր թափուել՝ խորհ. Ռուսաստանի այդ իրական մանրանկարը իր աչքերովը տեսնելու համար: Հանրապետական խորհրդարանի շէնքի առջեւի քաղաքային այդին, բոլոր հրապարակներն ու փողոցները, որտեղով պիտի անցնէր «աղատարար» զօրքը, լեվ-լեցուն էին անհամբեր բազմութիւններով: Եւ սպասում էին, թէ ահա նորից պիտի տեսնեն նախկին Ռուսաստանի հզօր բանակը՝ հոծ շարքերով, մաքուր ու գեղեցիկ հագնուած, երկաթաձոյլ կարգապահութեամբ եւ ամբողջ կարմիր դէմքերով — իսկական արտայայտութիւնը իր պետութեան ուժի եւ կաղապարուած զինուորական աւանդութիւնների...

Եկա՛ւ, վերջապէս... փոքրաթիւ, խեղճ ու կրակ մի բան թէ՛ արտաքինով եւ թէ՛ կարգապահութեամբ ու գործած տպաւորութեամբ: Նիհար, գոյնզգոյն ու պատահական ձիերի վրայ նստած, անկարգ շարքերով, վոխտ մարմնով, տժգոյն, վատառողջ դէմքերով եւ որ գլխաւորն է, Հանրապետական Հայաստանի զինուորների հագուստներ հագած, որոնց վերարկուների ուսադիրների վրայ հպարտօրէն բազմել էին «Հ. Հ.» — «Հայաստանի Հանրապետութիւն» բառերի սկզբնատառերը:

Շուտով պարզուեց հանելուկը: Ճանապարհին, Սէմիոնովկա եւ Ելենովկա ռուսական գիւղերում, մեր զինուորների վրայից հանել էին հագուստները եւ իրենք հագել, իսկ իրենց ցնցոտիները նրանց տուել՝ ի նշան բոլշեւիկեան եղբայրութեան ու հաւասարութեան...

Ի՞նչ էին սպասում Հայաստանում եւ ի՞նչ տեսան... Ժողովրդի գլխին ջուր մաղուեց եւ ծովի ալիքների պէս խորհրդաւոր մի փսփսուկ անցաւ բազմութիւնների մէջ, մի ծայրից մինչեւ. միւսը: Ա՞յս է բոլշեւիկութիւնը... Այս թշուառ խլեակնե՞րը պիտի լինեն մեր փրկիչները եւ մեծ երկրի տէրերը...

Առաջին եւ բաւական խոր հիասթափութիւնն էր այս:

Դեկտ. 6-ին էլ, նոյն Դիլիջան-Ֆանաքեռ գծով, Իջեւանից Երեւան ժամանեց Հայաստանի յեղափոխական կոմիտէն՝ Յեղկոմը, այսինքն՝ բոլշեւիկ կառավարութիւնը, եւ առաջ-փառաջ

գնաց, բաղմեց այնպէս հեշտ կերպով ձեռք բերուած կառավարական աթոռների վրայ...

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐԸ

Իշխանութեան տիրանալով՝ Խորհրդ. Հայաստանի կառավարութիւնը՝ Յեղկոմը, հենց առաջին օրուանից խելագար թափով գործի անցաւ եւ իր իսկական դէմքը շատ շուտով ցոյց տուեց: Նա որդեգրեց աննախընթացօրէն դաժան մի քաղաքականութիւն՝ բռնութիւնների քաղաքականութիւնը՝ բոլշեւիկեան վարչաձեւը երկրում հաստատելու համար, մոռանալով միանգամայն, որ մարդկային բոլոր յեղափոխութիւններն ու ապստամբութիւնները, ժողովրդական շարժումները ծնունդ են բռնութիւնների:

Խիստ բազմաթիւ, բազմազան եւ չափազանց անգութ ու անմարդկային էին իր գործադրած կառավարական տմարդի ձեւերը: Նմուշի համար, այստեղ մատնանշենք միայն մէկ-երկուսը՝ մի աղօտ գաղափար տալու համար բոլշեւիկեան «իրաւակարգի» մասին նախափետրուարեան Հայաստանում:

Այսպէս, առաջին հերթին եւ առաջին վայրկեանից, ամբողջ երկրում յայտարարուեց զինուորական դրութիւն ամենախիստ պատիժներով միասին: Փողոցները լցուեցին սպառազէն ոստիկաններով ու զինուորներով՝ Գեսլէրեան խրոխտանքով եւ սպառնական ու խոժոռ դէմքերով: Սարսափի մէկ մռայլ ամպ մի անդամից իջաւ ու կապարի նման ծանրացաւ ամբողջ երկրի վրայ: Կարծէք մոդական դաւաղանի մէկ հարուածով, չքացան նախկին կենդանութիւնն ու զուարթ եռուզեռը փողոցներում, հրապարակներում եւ հասարակական վայրերում: Իսկ մութն ընկնելուն պէս՝ աւելի՛ ճնշիչ ու սոսկալի, դատարկութիւն ու ամայութիւն տիրեց ամէն տեղ: Ընկերը ընկերից, բարեկամը բարեկամից, հարեւանը հարեւանից, ամենքը ամենքից սկսեցին վախենալ ու կասկածել: Ո՛չ ոք գիտէր, թէ ի՛նչ է կատարուում հարեւան փողոցում կամ քաղաքամասում: Խզուած, կտրուած էր ամէն կապ ու յարաբերութիւն: Ամէն փողոց, ամէն ընտանիք, ամէն տուն, ինքն իր մէջ կծկուած՝ տառապում էր իր անօգնական մենակութեան մէջ:

Մի խօսքով՝ մէկ աներեւակայելի մթնոլորտ կասկածի, վախի, սարսափի եւ անթիւ հոգեմաշ մտքերի, ուր շնչել ու ապրել անհնարին էր:

Դրա հետ միասին, հենց առաջին օրերից, սկսուեցին ու շուտով սովորական երեւոյթների շարքն անցան յաճախակի բռնագրաւումները: Այսինքն՝ ազգարնակութեան ունեցուածքի ու

հարստութեան պետական թալանը՝ բոլոր քաղաքներում եւ բոլոր գիւղերում։ Եւ որովհետեւ գործը չափազանց վատ էր կազմակերպուած, իսկ գործադրողներն էլ մեծ մասամբ անբարոյ, աւազակ ու պատեհապաշտ տարրեր էին, ուստի «բռնագրաւում» կոչուած կառավարական այդ ձեռնարկութիւնը վերածուեց համատարած կողոպուտի ու դարձաւ իսկական աղէտ ամբողջ երկրի համար։

Պետական պաշտօնեաները, ոստիկանական ու զինուորական զօրեղ պահակներով գօտեպնդուած, սանձարձակօրէն խուժում էին տները եւ օրէնքի անունով յափշտակում-տանում էին՝ ինչ որ իրենց աչքին դիւր էր դալիս — ոսկի, արծաթ, մեքենայ, զարդեղէն, հաց, պարէն, կենդանի, սերմացու, գորգ, հագուստ, ճերմակեղէն, ամէն ինչ։ Եւ հետեւանքը եղաւ այն, որ տարիներով անօթութիւն, մերկութիւն ու թշուառութիւն ճաշակած մեր ժողովուրդը, որը Հանրապետութեան օրով հազիւ էր մի քիչ աչքը բաց արել, կրկին մատնուեց նախկին անմխիթար վիճակին ու դեռ մի բան էլ աւելի։ Նորից նստեց մոխրի ու չոր գետնի վրայ։ Եւ դժդոհութիւնն ու անէծքը մինչեւ երկինք բարձրացան։

Միաժամանակ կողոպտեցին ու մինչեւ վերջին շիւղը դատարկեցին նաեւ պետական բոլոր պահեստները, որ հանրապետական կառավարութիւնը այնպէս խնամքով ու սրտցաւութեամբ, այլեւ զերմարդկային դժուարութիւններով լցրել էր հացով, դեղերով, հագուստեղէնով, խտացած կաթով, սապոնով եւ ուրիշ բազմազան նիւթերով ու մթերքներով։

Եւ, որ ամենից ահաւորն է, չինայեցին մեր հոգարաւոր դժբախտ որբերին անգամ եւ նրանց բերանի հացն իսկ կտրելով, իբրեւ «եղբայրական նուէր» Ռուսաստան ուղարկեցին՝ «Նուէր ընկեր Լենինին Հայաստանից»։ Խղճի ամենայն հանդստութեամբ դատարկեցին եւ քամուն տուին որբերի պահպանութեան յատկացուած բոլոր պահեստները։

Բայց կայ եւ աւելի սոսկալին — ընտանեկան պատուի հարցը, որ մեր ժողովրդի համար ամենամեծ սրբութիւնն է եւ ամէն բանից բարձր ու թանգ, նոյնիսկ կեանքից։ Հայ ժողովրդին խորթ, եթէ աւելին չասենք, բոլշեւիկ բռնակալութիւնը հեռատես եւ զգոյշ չդտնուեց նաեւ այս շա՛տ փափուկ խնդրի մէջ։ Իր դիրքը երկրում ամրապնդելու համար, միւս կողմից էլ հարկաւոր վստահութիւնը չունենալով հայաստանեան զօրքերի հանդէպ, նա հարկ համարեց դրսից բոլշեւիկ զօրամասեր բերել տալ՝ Խորհրդ. Ադրբէջանից, ռուսական 11-րդ Կարմիր զօրաբանակից։ Գալիս էին այս զինուորները մերկ ու սանձարձակ եւ սովորա-

բար, տեղաւորուում էին մասնաւոր տներում, ընտանիքների մէջ եւ ապրում եւ սնուում նրանց հաշուին:

Ընտանիքներից շատերը տղամարդ չունէին: Նրանց այր մարդիկ կա՛մ սպանուած էին, կամ ընկած պատերազմում եւ կա՛մ գնդակահարուած, աքսորուած ու բանտ էին դրուած հենց իրենց՝ բոլշեւիկների ձեռքով: Եւ ահա հայկական տներում տեղաւորուած Կարմիր բանակայինները եւ Զէկայի զինուորներն ու պաշտօնեաները ազատ ասպարէզ էին գտնում արատաւորելու ընտանեկան սրբութիւնները՝ անհուն վրդովում ու ցասում առաջ բերելով ժողովրդի մէջ:

* * *

Այդ ամէնի հետ միասին՝ բոլշեւիկ բռնակալութիւնը նպատակ էր դրել Հայաստան ոտք կոխելու հենց առաջին րոպէից՝ թուլացնել ու քայքայել հայ ժողովրդի ֆիզիկական ոյժը, անդամալուծել նրա դիմադրական կորովը: Այդ նպատակին հասնելու համար՝ հարկաւոր էր, ամենից առաջ, գլխատել հայութիւնը, առաջին հերթին, հրապարակից վերցնել, ոչնչացնել նրա մտաւորականութիւնը, ղեկավարութիւնն ու բոլոր կենդանի ուժերը:

Եւ ահա՛, երկրի մի ծայրից մինչեւ միւսը հեղեղի պէս յորդեցին հալածանքներն ու բռնութիւնները՝ անգութ, տմարդի ու բարբարոս: Բանտ, աքսոր, գնդակահարութիւն, եւ ամէն կարգի լսուած ու չլսուած գազանութիւններ իրար յաջորդեցին չարժանկարի արագութեամբ՝ ամէն օր ու ամէն ժամ:

Հարուածն ուղղուած էր առաւելապէս Դաշնակցութեան ու Դաշնակցականների դէմ, որովհետեւ բոլշեւիկ թշնամին շատ լաւ գիտէր ու հասկանում էր, որ հայութեան վրիժառու բռունցքը, նրա ազգային շահերի արթուն պահակն ու պաշտպանը Հ. Յ. Դաշնակցութիւնն էր իր կազմակերպուած հոծ շարքերով եւ մարտական գերազանց կարողութիւններով: Եւ ամենից աւելի տուժեցին ու չարաչար կերպով պատուհասուեցին Դաշնակցութիւնն ու Դաշնակցականները: Դաշնակցականներից քչերը միայն կարողական դաժան ճակատագրից խուսափել՝ ոմանք հրաշքով երկրից դուրս գալ յաջողելով, ուրիշներ երկրում ապահով թագստոցներում փրկութիւն գտնելով:

Ու պատահեց այն՝ ինչ որ անխուսափելի կերպով պիտի պատահէր: Կարճ ժամանակի ընթացքում երկիրը վերածուեց խակական մի դժոխքի եւ կեանքը կորցրեց իր բնականոն ճանապարհն ու հրապոյրը: Իրանահայ շնորհալի բանաստեղծ Արամ-Գառօնէի գեղեցիկ արտայայտութեամբ՝

Երկիրը դառել է զնդան,
Բանտերը գերեզման են դառել.
Ի՞նչ եղան հերոսներն այնքան,
Ի՞նչ եղան...

Մէկը չէ, տասը չէ, հարիւր չէ,
Հայաստանն է, ողջ ազգն է մեր՝
Բռնել աքսորի ճամբան,
Դառել օտարին գերի...

Հայ ժողովրդի լաւագոյն զաւակներից շատերը դաժանութեամբ աքսորուեցին երկրի սահմաններից դուրս եւ 100–աւորներ ու 1000–աւորներ, զանազան պատրուակներով, բանտ նետուեցին: Մտաւորականներ, պետական–հասարակական գործիչներ, յեղափոխական դէմքեր, դրականագէտներ, զինուորականներ, գիւղացիներ, արհեստաւորներ... Ամէնքը պատուհասուեցին, իբրեւ ազգի ու հայրենիքի թշնամիներ, մի կառավարութեան ձեռքով, որի «արդարադատութեան» նախարարն էր Ֆեմալական գործակալ եւ Հայաստանի ու հայութեան «անկեղծ բարեկամ» Թուրֆ Սուլէյման Նուրի...

Ներկայացնե՛նք միայն մի քանի անուններ դաղափար տալու համար հայ ղեկավարութեան մէջ կատարուած աւերածութեան մասին.— Բժ. Հ. Օհանջանեան, Ն. Աղբալեան, Աւ. Սահակեան (Հայր Աբրահամ), Ց. Քաջազնունի, Լ. Շանթ, խմբապետ Համազասպ, բժ. Ց. Տէր–Դաւթեան, Ա. Զիլինգարեան, Վ. Նաւասարդեան, Բ. Իշխանեան, Վ. Բաբայեան, Ա. Աստուածատրեան, բժ. Ց. Մելիքեան եւայլն եւայլն:

Եւ ամիսներով, Զէքայի զնդաններում ու բանտում պահելուց յետոյ, սկսուեց կոտորածը բանտային նկուղների մթութեան մէջ: Հրազէնի հետ միասին, գործի անցաւ նաեւ կացինը. տասնեակ ազգանուէր ու թանկագին կեանքեր յօշոտուեցին վայրագօրէն, առանց դատ ու դատաստանի...

Դաժան եւ անզութ եղաւ բոլշեւիկ իշխանութեան վերաբերումը եւ զէպի հանրապետական բանակի ղեկավարութիւնը. մի չարաշուք օր հայ ազայութիւնը, 1200 մարդուց աւելի, խաբէութեամբ ու տմարդի ձեւով, մէկ անգամից, զէպի աքսոր քշուեց՝ ռուս պահակների խիստ հսկողութեան տակ: 1921 թ. Յունուարի 24–ին էր այդ, մի չարաղուշակ ու սեւ օր բովանդակ հայութեան ու Հայաստանի համար: Տուն չկար՝ որ չողբար. մարդ չկար՝ որ չսգար: Մէկը՝ իր աքսորուած հարազատի կամ հարազատների, իսկ ամենքը՝ Հայրենիքին հասած ահաւոր աղէտի համար:

Գործը ծրագրուած ու կազմակերպուած էր սատանայական

խորագիտութեամբ եւ այնպէս, որ ո՛չ ոք ոչինչ չկռահէր եւ միամտօրէն գնար՝ իր ոտքովը ծուղակն ընկնէր։

Որպէսզի աքսորի դատապարտուած սպաներից եւ ո՛չ մէկը, փախուստի եւ կամ մի այլ միջոցով, չկարողանար ճողոպրել ընդհանուր կարաւանից, երկրի բոլոր կէտերում, ուր զինուորական կայաններ կայի, աքսորի գործողութիւնը կատարուեց միեւնոյն օրը, միեւնոյն ժամին ու միեւնոյն ծրագրով։

Այսպէս, օրինակ, Երեւանում, ցուցակագրութեան պատրուակով, ամբողջ հայ սպայութիւնը, ծերունի ու վաստակաւոր գօրավարներ Նազարբէկեանի, Սիլիկեանի ու Հախվերդեանի գլխաւորութեամբ, հաւաքեցին Խորհրդարանի շէնքում եւ հենց այնտեղից, ոտքով, Քանաքեռ–Դիլիջան դծով քշեցին դէպի աքսոր՝ շրջապատուած ռուս զինուորներով եւ նրանց խիստ հսկողութեան տակ։

Մարդիկ իրենց տներից դուրս էին եկել առանց որեւէ վատ բան կռահելու, բոլորովին միամիտ, առանց որեւէ պատրաստութեան։ Առանց տաք հագուստի, ճերմակեղէնի, դրամի եւ նոյնիսկ առանց իրենց ընտանիքներին հրաժեշտ տալու։ Նրանց չթոյլատրուեց դէթ քառորդ ժամով տուն գնալ եւ գոնէ վերջին «մնաք բարով»ն ասել իրենց սիրելիներին ու հարազատներին։ Ու ամեհուայ այդ սառնամանիքին, այդպէս մերկ, անօթի ու թշուառ եւ, որ գլխաւորն է, ջախջախուած հոգով, նրանք ճանապարհ ընկան դէպի աքսոր, դէպի իրենց սպասող անյայտութեան մութ աշխարհը...

Այս եւ սրանց նման բազմաթիւ ու բազմազան վայրագութիւններով բոլշեւիկ բռնակալութիւնը, շատ կարճ միջոցում, ամբողջ երկրում ստեղծեց անօրինակ սարսափի, բանտի ու սպանդանոցի մի անտանելի մթնոլորտ, ուր շնչել այլեւս անկարելի էր։ Ո՛չ ոք ապահով չէր իր ունեցուածքի, անձի ու պատուի համար։ Գիշերը, երբ անկողին էիր մտնում, չգիտէիր, թէ առաւօտեան ո՛ւր ես լինելու՝ տա՞նը, բանտո՞ւմ, աքսորի ճանապարհի՞ն, թէ՞ գնդակահարուած եւ աղբանոցի մէջ նետուած...

Ականատեսի շատ ճիշդ, այլեւ գեղեցիկ վկայութեամբ՝ «... մեծամասնական իշխանութիւնը կառավարիչ չէր, այլ ուրական մը, թաթառ մը, որ եկաւ անցաւ հայոց աշխարհի արդէն դըժբախտ ու որբացած երկրին վրայով։ Սուղն ու թախիծը, կըսկիծն ու մորմոքը փշաքաղ կ՝ընէին ամենուն սիրտն ու հոգին։ Ժպիտը վաղուց խոյս տուած էր հայ ժողովուրդի երեսէն. անարցունք լացը բոլորին դէմքին թառած էր. ցասումն ու դժգոհութիւնը օրէ օր կ՝աճէին, կը լեռնանային։ Անկախ, ազատ հայրենիքի տենչը, ազատութեան ծարաւը, գեղեցիկ երազի նման, կուգային թրթռացնել բոլորին հոգին ու սիրտը։ Դժոխք օրեր

էին». (Ց. Սահակեան՝ «Երկու տարի հայկական բանակին մէջ», Փարիզ, 1937 թ., էջ 169)։

Ու երբ մի բոպէ մտածում էք, թէ այս բոլոր խժդժութիւնների հեղինակները հայեր էին, հայ ծնողների զաւակ ու ձեր արիւնից ծնուած, այն էլ՝ հանդէպ իրենց Մայր Հայրենիքի ու հարազատ ժողովրդի, մարդու սրտից արիւն է կաթում։ Աւելացրէ՛ք նաեւ, որ այդ մարդիկ պատկանում էին մի կուսակցութեան, որը, ո՛չ բարով, մարդկային բոլոր ազնիւ ու վեհ դաղափարներն ու առաքինութիւնները միայն ի՛ր սեփականութիւնն է համարում եւ նրանց անունից բարբառելը՝ ի՛ր մենաշնորհը։

Այս ամէնը հերիք չէր. արտաքին ճակատի վրայ էլ բոլշեւիկները ո՛չ մէկ բարիք չբերին Հայաստանին. թուրքերը շարունակեցին հարստահարութիւնը եւ հայերի բնաջնջումը իրենց գրաւած վայրերում՝ արհամարհանքով պատասխանելով Երեւանից լսուող բողոքներին։ Մոսկուան ոչ մէկ օգնութիւն չհասցրեց սովի ճիրաններում տուայտող հայերին։ Բոլշեւիկեան խոստումներից եւ ոչ մէկը չիրականացաւ, որ աւելի եւս սաստկացրեց ժողովրդի յուսախաբութիւնն ու զայրոյթը։

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑԱՍՈՒՄԸ ԵՒ ՓԵՏՐ. 18-Ը

1. ԴԷՊՔԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Խիստ ծանր ու հոգեմաշ մի վիճակ էր ապրում հայ ժողովուրդը բոլշեւիկեան բռնակալ լծի տակ։ Եղան ազնիւ ու հայրենասէր հայորդիներ, որոնք փորձեցին զգաստութեան կոչել բոլշեւիկ ղեկավարութիւնը Հայաստանում։ Բայց ապարդիւն։ Մարդիկ Մարքս-Լենինեան բանաձեւը պրոլետարիատի դիկտատուրայի մասին թութակելով, կարմրած աչքերով ու կարմիր դրօշակ պարզած, պնդում էին մոլեգին. «Մեզ քաղաքացիական կռի՛ւ է պէտք։ Անհրաժեշտ է, որ բոլոր հակախորհրդային տարրերը մերկացուեն, ջարդուեն ու արմատախիլ արուին»...

Ու իրենց այդ խենթ երազովն արբեցած՝ ամէն ինչ արին այնպէս, որ ժողովրդական զայրոյթը, վերջ ի վերջոյ, իր հունից դուրս գալով, պայթէր նրանց գլխին փոթորկի պէս եւ իրենք առիթ ունենային՝ «մեր բազմիցս խաչուած նահատակ ժողովրդին մի անգամ եւս խաչ հանելու՝ յանուն Մարքս-Լենինի, յանուն պրոլետարիատի իշխանութեան եւ համաշխարհային յեղափոխութեան» (Ցուսաբեր», 19 Փետր. 1949 թ. խմբ.)։

Եւ ահա լցուեց համբերութեան բաժակը. համատարած դըժգոհութիւնը իր ծայր-աստիճանին հասաւ։ Անգամ մեր այսօրուան «Ջերմ հայաստանեան» ու «Ջերմ հայաստանասէր» Ռամ-

կավարների քոյր կուսակցութիւնը երկրում՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւնը, որ իր մեծ եղբօր նման ընդհանրապէս անՁիՂ ու պաղարիւն մի կուսակցութիւն էր, սկսեց յուզմունքի եւ ՁղայնութԹեան նշաններ ցոյց տալ:

Նրա պարագլուխներից սա կամ նա, պատահելով իրենց ծանօթ Դաշնակցականներին, զայրոյթով ու խիստ վրդովուած, յանդիմանում էին նրանց ու ասում. «Ո՞ւր է Դաշնակցութիւնը, ինչո՞ւ է լռել, ինչո՞ւ է ձեռքերը ծալած նստել: Ժողովուրդը ձեռքից գնում է, էլ ո՞ր օրուայ համար է նա, ո՞ր օրուայ էք սպասում»:

Այսպիսի մթնոլորտում՝ ընդհանուր զայրոյթը գնալով սաստկացաւ, բորբոքուեց եւ դարձաւ սպառնական:

Բոլոր նշանները պարզ ցոյց էին տալիս, որ փոթորիկն այլեւս անխուսափելի է եւ անպայմանօրէն պիտի պայթի, արտակարգ ուժգնութեամբ, հայոց աշխարհի բռնակալների դէմին՝ ատելութեան ու վրէժխնդրութեան կատաղի ցասումով: Ցասումը համատարած էր երկրի բոլոր մասերում եւ բոլոր խաւերի մէջ: Եւ պոռթկումը անխուսափելի էր համարեա միաժամանակ, ինքնաբուխ, մէկը միւսից անիրազեկ ու անկախ եւ առանց որեւէ արտաքին ներշնչումի կամ քարոզչութեան:

Դաշնակցութիւնը, որպէս կազմակերպութիւն, թէեւ հալածական, ստորերկրեայ եւ նկուղների մէջ բանտարկուած, մեռած չէր, ի հարկէ: Նա կար եւ ապրում էր երկրում: Եւ, իրրեւ մըտայնութիւն ու ոգի, դնալով աւելի զօրանում եւ աւելի մեծ հըմայք էր ձեռք բերում ժողովրդական լայն զանգուածների մէջ: Որքան էլ ձեռնպահ ու շրջահայեաց՝ Դաշնակցութիւնը չէր կարող մնալ անտարբեր հանդիսատեսի դերում, երբ ժողովուրդը ձեռքից գնում էր: Եւ հանոյքով չէր, որ, վերջ ի վերջոյ, նա թողեց իր դիտողի դերն ու ձեռնպահութիւնը եւ ստիպուած եղաւ գործի անցնել: Ժողովրդի տարերային ընդվզումը այլեւս անխուսափելի էր, պէտք էր ղեկավարել նրան: Կային Դաշնակցական պատասխանատու ընկերներ, որոնք կտրականօրէն դէմ էին ապստամբութեան գաղափարին՝ գտնելով, որ կռիւը հսկայ Ռուսաստանի դէմ է ու եթէ անդամ յաջողուի էլ սկզբում, վերջ ի վերջոյ, պիտի պարտուի անպայման: Հակառակ նման տրամադրութեան՝ Դաշնակցութիւնը հարկադրուած էր վերցնելու մենամարտի բոլշեւիկեան ձեռնոցը՝ երկրի ու ժողովրդի փրկութեան շահերից ելնելով, որովհետեւ դէպքերն ընթանում էին գահավէժ արագութեամբ, եւ փոթորիկը պիտի պայթէր իր կամքից անկախ, տարերային թափով, անխուսափելիօրէն: Հրամայականօրէն անհրաժեշտ էր՝ ղեկավարել շարժումը, որպէսզի հա-

յոց աշխարհն ու ժողովուրդը գոնէ նուազագոյն կորուստով դուրս գային իրենց պարտադրուած այդ նակատագրական աղէտից: Դաշնակցութիւնը պարտաւոր էր այդպէս վարուելու, մանաւանդ որ, միւս կողմից, նրա լռութիւնից ու ձեռնպահութիւնից խրախուսուած՝ կարմիր բռնակալութիւնը աւելի եւ աւելի անհերես, սանձարձակ եւ ամբարտաւան էր դառնում:

Դաշնակցութիւնը չնախաձեռնեց փետրուարեան ապստամբութիւնը: Երբ Դեկտ. 2-ին նա իշխանութիւնը յանձնեց բոլշեւիկներին, համոզուած էր, որ երկրի եւ ժողովրդի շահերը այդ են պահանջում: Առաջին իսկ օրից նա ջանաց Հայաստանից հեռացնել այն տարրերը, որոնց ներկայութիւնը երկրում կարող էր կասկածի եւ բռնութիւնների առիթ տալ Խորհրդային իշխանութեան: Նա կառավարութեան միջոցով եւ յանուն Հ. Յ. Դ. Բիւրոյի հրահանգ տուեց պետական պաշտօնեաներին, բանակին եւ ընկերներին ամէն կերպ աջակցել նորեկ իշխանութեան՝ երկիրը խաղաղ պահելու եւ շինարարութեան նպաստելու: Նա համաձայնուեց նոյնիսկ, իր ներկայացուցիչների միջոցով, մասնակցելու կառավարութեան եւ պատասխանատուութեան բաժին ստանձնելու իշխանութեան մէջ: Եւ այնուհետեւ էլ, հակառակ Յեղկոմի վարած ամբարդի քաղաքականութեան, ամէն ճիգ թափեց՝ ժողովրդի յուզուած մտքերը հանդարտեցնելու եւ երկրի ներքին անդորրութիւնը պահպանելու համար: Մէկից աւելի անգամներ պատասխանատու ընկերները դիմեցին Յեղկոմին եւ Զէկայի նախագահին՝ յորդորելով վերջ տալ բռնութիւններին ու հալածանքներին: Խորհրդայնացումից յետոյ, մէկ հատիկ մարդ չկար Հայաստանում, որ յեղաշրջման մասին մտածէր: Հակառակ դրան, Խորհրդային իշխանութիւնը ամէն տեղ թշնամիներ էր փնտռում եւ ծրագրուած քայլերով երկիրը տանում էր դէպի քաղաքացիական պատերազմ:

Յունուարի կէսերին արդէն երկրի բոլոր կողմերից լուրեր էին հասնում Երեւան, որ ժողովրդի մէջ անզուսպ ատելութիւն է լեռնացած դէպի բոլշեւիկները, եւ տարերային պոռթկումները անխուսափելի են: Սպանների զանգուածային աքսորը հանդիսացաւ վերջին կաթիլը ընդհանուր ցասումի յորդացած բաժակում: Այլեւս անհնար էր զսպել ժողովրդի յուզումն ու տարերային ընդվզումը: Եւ Դաշնակցութիւնը հարկադրուած եղաւ հաշուի առնել ճակատագրական այդ փաստը: Դէպքերի ճնշման տակ մայրաքաղաքում կազմուեց մի ղեկավար մարմին, որ իր վրայ առաւ ժողովրդի գրգռուած մտքերը հանգստացնելու եւ, ի հարկին, շարժումը ղեկավարելու պարտականութիւնը:

2. ԸՆԴՎԶՈՒՄԸ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Փետրուարի սկիզբները ամբողջ երկիրը այլեւս դերագրգիռ վիճակի մէջ էր։ Զանազան գաւառներում ինքնաբերաբար կազմըւել էին տեղական մարմիններ, որոնք տենդագին պատրաստւում էին հակահարուած տալու բոլշեւիկեան բռնութիւններին։ Այդ մարմինները կապ էին հաստատել միմեանց միջեւ եւ Երեւանի մարմնի հետ։ Հաւաքում ու կազմակերպում էին մարտական ուժերը։ Տեղ-տեղ ընդհարումներ էին տեղի ունենում Յեղկոմի ու Զէկայի ներկայացուցիչների եւ տեղական խմբերի միջեւ։ Բաշդառնին փաստօրէն արդէն ապստամբել էր՝ խմբապետներ Մարտիրոսի եւ Ենկոյի առաջնորդութեամբ։ Գրեթէ նոյնն էր եւ Սասունցիների վիճակը Արագածոտնում, երբ Փետր. 9-10-ի գիշերը, Երեւանում, կատարուեցին նոր զանգուածային ձերբակալութիւններ։ Մօտ երկու հարիւր հոգի բոլորովին անմեղ մարդիկ, որոնց թւում եւ Յ. Քաջազնունին, Լ. Շանթը, Ն. Աղբալեան եւ ուրիշներ արգելափակուեցին Զէկայի զնտաններում։ Այս դէպքը

ԿՈՒՌՕ ԹԱՐԽԱՆԵԱՆ

այլեւս սպառեց ժողովրդի համբերութիւնը, եւ երկրի բոլոր մասերում պայթեց ապստամբութիւնը։

Փետր. 9–10-ի ձերբակալութիւններից յետոյ, շրջանները արագ կերպով համաձայնութեան էին եկած, որ ապստամբութիւնը սկսուի Փետր. 17-ին, աւելի ճիշդ՝ Փետր. 16 լոյս 17-ի գիշերը։ Առաջին ազդանշանը տուողը պիտի լինէր Կոտայքը։ Կուռոյի (գնդ. Թարխանեան, այժմ հանգուցեալ) հրամանատարութեամբ Կոտայքի ուժերը պիտի տիրէին Քանաքեռին ու զօրանոցներին եւ շտապով պիտի արշաւէին Երեւանի վրայ, որպէսզի բռնակալ իշխանութիւնը յանկարծակիի գալով, ժամանակ չունենար բանտարկեալներին կոտորելու։ Բայց Փետր. 16-ի երեկոյեանից սկսած Կոտայքում բարձրացաւ չտեսնուած մի ձիւնամբրիկ, որ սուսկալի բուքի ու սառնամանիքի հետ միասին, ամէն ինչ թաղեց ձիւնի հաստ ծածկոցի տակ։ Ձիւնն ու բորանը անհնար դարձրեց շարժումը։ Այդ պատճառով ապստամբութիւնը մէկ օրով ուշացաւ եւ սկսուեց Փետր. 17 լոյս 18-ի գիշերը։ Մինչեւ այդ, Արագածոտնի Սասունցիները արդէն շարժուել էին եւ գրաւել Աշտարակն ու Էջմիածինը։

Ցեղկոմի իշխանութիւնը, բնականաբար, տեղեակ էր անցուդարձերին եւ ամէն միջոց ձեռք էր առել մայրաքաղաքը պաշտպանելու եւ իր գոյութիւնը ապահովելու համար։ Առաջին հերթին նոր ուժերով ամրացրել էր Երեւանն ու Քանաքեռը, իբրեւ գլխաւոր ռազմական յենարաններ։ Միւս կողմից՝ Փետր. 16-ից սկսած՝ ձեռնարկել էր բանտարկեալների բնաջնջման։ Երկու գիշեր, Փետր. 16-ին եւ 17-ին, Երեւանի բանտում անլուր վայրագութիւններ տեղի ունեցան։ Բանտը վեր էր ածուել հսկայ սպանդանոցի։ Կոտորում էին անպաշտպան զոհերին հրազէններով, գնդացիրներով, կացիններով։ Այդ գազանութիւններին զոհ գնացին յիսունից աւելի բանտարկեալներ, որոնց թւում եւ ժողովրդական հերոս Համազասպը, գնդ. Ղորղանեանը եւ ուրիշներ։ Բարբարոսութիւնները վերջ գտան եւ հազարից աւելի բանտարկեալներ փրկուեցին Փետր. 18-ի լուսաբացին, երբ վրէժխնդրութեան արդար աստուածուհին՝ Նեմեզիսը, յանձին Կոտայքի ապըստամբ ուժերի, Քանաքեռի բարձունքներից իջաւ Երեւան։

Կարմիր բռնակալութիւնը յուսահատ՝ ամէն ճիգ թափեց իր դիրքերը պաշտպանելու համար։ Փետր. 18-ի առաւօտեան ժամը 4-ից գօտեմարտը սաստկացաւ։ Հայրենիքի Փրկութեան ուժերը՝ Երեւանի վրայ կախուած բարձրութիւններից, զինուած միայն հրացաններով, այն էլ փամփուշտը խնայելով, իսկ թշնամին՝ քաղաքամիջից, երկաթուղագծից, հին ու նոր կայարաններից, պետութեան բոլոր ռազմական միջոցներովը զրահաւորուած, կա-

նոնաւոր զօրքերով, առատ զինամթերքով, գնդացիրներով, ռումբերով, թնդանօթներով ու զրահապատ գնացքով։ Հայաստանի մայրաքաղաքը, իր ամբողջ շրջակայքով, իսկական ռազմաճակատի էր վերածուած ու դժոխք դարձած՝ ռումբերի, թնդանօթների ու հրազէնների որոտից։

Բոլշեւիկ բռնութիւնը, վերջ ի վերջոյ, տեղի տուեց, պարտուեց ժողովրդական արդար զայրոյթի ու ցասման առջեւ։ Մի վերջին անգամ էլ իր բոլոր հրազէններից կատաղի կրակ թափելով ապստամբների դիրքերի վրայ՝ ամօթահար բռնեց նահանջի ճամբան։ Ցեղկոմի անդամները, պաշտօնէութիւնը, զօրքն ու կռուող ուժերը, բոլոր կուսակցականներն ու համակիրները, նախապէս պատրաստուած գնացքներն ու զրահապատը լցուելով, ռազմամթերքով ու բոլոր պատրաստութիւններով միասին, քաշուեցին դէպի Հայաստանի թշնամի թուրք-թաթարական շրջանները՝ Շարուր ու Նախիջեւան՝ այնտեղ վերակազմուելու եւ կրկին Հայաստանի վրայ արշաւելու մտադրութեամբ։

Կրակը դադարեց եւ խաղաղութիւնը, օրհնութեան ցօղի պէս, իջաւ Երեւանի վրայ։ Հայոց աշխարհը ազատագրուած էր Կարմիր պատուհասից։ Արեւի առաջին ճառագայթների հետ ազատութեան դիցուհին ողջունում էր հայ ժողովրդի փրկութիւնը։ «Մեր Հայրենիք ազա՜տ, անկա՜խ՝ իւր քաջ որդւոց սուրբ արիւնով»..., հնչում էր ամէն կողմից։

* * *

Հայրենիքի Փրկութեան կամաւորները իրենց դիրքերից, յաղթանակով ու հպարտ, իջնում էին քաղաք՝ դիմաւորող հոծ բազմութեան ծափերի ու ողջոյնների տակ։ Ցնծութիւնը ընդհանուր էր ու խանդավառ։ Ամենքը իրար ողջագուրում, շնորհաւորում էին։ Շատերի աչքերում ուրախութեան արցունքներ էին շողում։ Հայաստանի մայրաքաղաքը տօնական կերպարանք էր ստացել։ Բոլոր տները զարդարուած էին եռագոյն դրօշակներով։ Օդը թնդում էր հաղարաւոր բերաններից դուրս թռչող «կեցցէ»-ներից եւ «Մեր Հայրենիք»ի անուշ ձայներից։ Հեռուից լսւում էր զինուորական նուագախմբի խրոխտ «Մեր Հայրենիք»ը։

Հսկայ բազմութիւնը, տարերային, բնազդական մի մղումով, շարժուեց դէպի Հանրապետական Հայաստանի Խորհրդարանի շէնքը, որի վրայ արդէն վեհօրէն ծածանւում էր նուիրական Եռագոյնը։ Ոգեւորութիւնն ու խնդութիւնը աննկարագրելի էր, զինուորութեան աստիճան։ Պատշգամբից, կեցցէների ու ծափերի որոտի տակ, նորանուաճ ազատութիւնը ողջունում էր ու շնորհաւորում Հանրապետական Հայաստանի վերջին վարչապետը՝ ընկ. Ս. Վրացեան։

Այստեղից բազմութիւնը, հեղեղի պէս, Աբովեան պողոտայով, դիմեց դէպի առաջ, դէպի կենտրոնական բանտը։ Հայկական Բաստիլի դռներն արդէն խորտակուած էին ազատաբեր ապըստամբների ձեռքով։ Բանտարկեալներին դուրս էին բերում ուսերի վրայ։ Ուրախութիւն, արցունք, գրկախառնութիւն ու համբոյր իրար էին խառնուած։ Փետրուարեան հրաշքով ստոյգ մահից փրկուել էին այդ «բախտաւոր դժբախտները»։ Աւետարանի ասածին պէս՝ «Կորած էին՝ գտնուեցան, մեռած էին՝ կենդանացան»։ «Ողջ դուրս եկածները, պլլուած իրենց սիրելիներուն՝ կուլային։ Սպանուածներու պարագաները իրենց մաղերն ու ղդեստները կը փետէին։ Սպանուածներու՝ կացիններով, բիրերով, լախտերով ջախջախուած անկերպարան դիակները դուրս բերին։ Ժողովուրդը ահ ու սարսափի բոպէներ ապրեցաւ։ Մեծամասնականների ամենավերջին դաղանութեան այս քստմնելի արարքին առջեւ մարդկային բանականութիւնը կարծես սահմռկեցաւ պահ մը»... (Յ. Սահակեան՝ «Երկու տարի»..., էջ 170)։

Բոլշեւիկների փախուստով՝ երկիրը մնում էր առանց իշխանութեան։ Անհրաժեշտ էր անմիջապէս նոր կառավարութիւն կազմակերպել։ Հենց նոյն օրը, Փետր. 18-ին, կազմուեց ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւն՝ «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ» անունով՝ ընկ. Ս. Վրացեանի նախագահութեամբ եւ եօթ նախարար-վարիչների անդամութեամբ, որոնցից հինդ հոգին՝ Դաշնակցական, իսկ երկուսը՝ Սոցիալ-Յեղափոխական կուսակցութիւնից։ Բանակի ընդհանուր հրամանատար նշանակուեց գնդ. Կուռո Թարխանեան-Սուրէն։

Երկու օր անցած, Փետր 20-ին, կատարուեց բանտում նահատակուածների մի մասի անօրինակ թաղումը՝ արտակարգ հանդիսաւորութեամբ եւ ծովածաւալ յուղարկաւորների մասնակցութեամբ։ Նահատակների այդ բոյլը բաղկացած էր 22 հոգուց, որոնց թւում՝ Դաշնակցական ականաւոր խմբապետ Համազասպ (Սրուանձտեանը), խմբապետ Մակեդոնը, Ալեքսանդրապոլի յեղափոխական-հասարակական ծանօթ գործիչ՝ Արտուշ խան Շահրիարցեանը, հայկական բանակի լաւագոյն սպաներից՝ գնդապետ Դորղանեանը, իր վայելած ժողովրդականութեամբը յայտնի բանուոր Սէրգօն եւ ուրիշներ։ Այստեղ առաջ ենք բերում ականատես ընկ. Խաչիկ Մելքումեանի յուշերից մի հատուած այդ տխուր հանդէսի մասին.

«Թաղման հանդիսաւոր արարողութեանը նախագահում էր Երեւանի թեմական առաջնորդը՝ Խորէն արք-եպիսկոպոս Մուլադրէգեանը, հետագային նոյն բորենիների ձեռքով խեղդամահ եղած եղերաբախտ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

«Պարէտի շէնքի մօտ, անհաշիւ բազմութեան առաջ, բժ. Հ. Օհանջանեանը դամբանական է խօսում: Այդ վայրկեանին քար սիրտ ունեցողը միայն կարող էր դիտել, լսել ու չարտասուել: Ներկայ եղող բազմութիւնը հեկեկում էր: Իմ կողքին ուշագնաց եղաւ Ն. Աղբալեանը:

«Դագաղները շարան-շարան հետեւում էին իրար: Պարէտի շէնքից մինչեւ ինքնավարութեան շէնքը ասեղ ձգելու տեղ չկար: Թափօրը, լուռ ու մունջ, խոր սուգի մէջ, հետեւում էր դագաղների շարքին: Հանգստարանում խօսողներ չեն լինում: Սպանուածների մարմինները լռութեան մէջ հողին են յանձնւում»... («Ցուսաբեր», 19 Փետր. 1949 թ.):

Դժբախտաբար, երկար չտեւեց հայ ժողովրդի ուրախութիւնը, ազատութիւնն ու անկախութիւնը. հազիւ 43 օր միայն: Փետրը. 18-ի լուսաշող օրուան շուտով հետեւեց չարաշուք Ապրիլ 2-ը:

Շարուր- Նախիջեւան ապաստանած փախստական բոլշեւիկները, վերակազմուելով եւ թուրք-թաթար ուժերով զօրացած, շուտով վերադարձան՝ իրենց կորցրած իշխանութիւնը կրկին ձեռք բերելու տենչով: Սկսուեց կռիւների մի երկար շարան: Ռուսաստանից օգնութեան հասան Կարմիր զօրամասեր, որոնց գերազանց ուժի ճնշման տակ հայ ժողովուրդը տեղի տուեց: Կռիւը վերջացաւ բոլշեւիկների յաղթութեամբ: Հայ ժողովրդի հարազատ կառավարութիւնը՝ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն հարկադրուած եղաւ թողնելու Երեւանը, 1921 թ. Ապրիլ 2-ին, եւ տարագրութեան ճամբան բռնելու... Տասը հազարից աւելի հսկայ մի բազմութեան հետ միասին, ընդհանուր սուգի եւ արցունքների մէջ, նա անցաւ դէպի Դարալագեազ-Զանգեզուր: Այստեղից, մի քանի ճակատագրական կռիւներից յետոյ, Ցուլիսի սկիզբներին, Արաքսն անցնելով, մտաւ հարեւան Պարսկաստանի հիւրընկալ հողը՝ իր հետ տանելով Հայաստանի անկախութեան դրօշը: Այսպիսով, բախտի մէկ անգութ հարուածով, հայոց աշխարհում կրկին վերահաստատուեց Կարմիր բռնակալութիւնը, որի դաժան լծի տակ մինչեւ այսօր էլ հեծում է մեր դժբախտ ժողովուրդը:

ԲՈԼՇԵՎԻԿ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսանք՝ բոլշեւիկները իրե՛նք պարտադրեցին մեր ժողովրդին Փետր. 18-ի ապստամբութիւնը: Ժողովուրդը համբերեց, մինչեւ որ դանակը ոսկրին հասաւ, որից յետոյ այլեւս հանդուրժել անհնար էր: Ու մեր ազնիւ ժողովուրդը պատուաւոր մահը դերադասեց անպատիւ կեանքից, եւ մէկ մարդու պէս

ոտքի կանգնեց իր կեանքն ու գոյքը, իր ազատութիւնն ու պատիւը փրկելու համար։

Հակառակ այս անհերքելի ճշմարտութեան, բոլշեւիկները, իրենց ամէն գոյնի ու ամէն պիտակի ուղեկից-խաժամուժների հետ միասին, շարունակում են հոլովել «փետրուարեան արկածախնդրութիւն», «եղբայրադաւ կռիւ» խօսքերը եւ փետրուարեան ազատութեան պատասխանատուութիւնը նետել Դաշնակցութեան դլխին։ Իբր թէ Դաշնակցութիւնը առաջ բերած լինի ապստամբութիւնը՝ կորցրած «փափուկ աթոռները» վերագրաւելու նպատակով։

Բայց համայնավարների մէջ էլ գտնւում են խելահաս եւ խղճի տէր մարդիկ, խիստ հազուադիւտ, որոնք ընդունակ են տեսնելու եւ խոստովանելու ճշմարտութիւնը։ Դրանցից մէկն է ահաւասիկ համայնավար յայտնի հրապարակագիր-պատմաբան Բ. Բորեանը, որ իր ճշմարտախօսութեան համար, ի վերջոյ, զոհ գնաց բոլշեւիկեան Մողոքին։ Երկու հատորից բաղկացած ռուսերէն իր մէկ ստուար աշխատութեան մէջ — «Հայաստան, Միջազգային Դիւանագիտութիւն եւ Ֆ. Միութիւն» — լոյս տեսած Մոսկուայում, 1928-ին, նա մի ամբողջ դլուխ նուիրել է Փետրուարեան ապստամբութեան պատճառներին եւ Ֆորհրդ. Հայաստանի համայնավար ղեկավարների պատասխանատուութեան խնդրին։ Մանրամասնօրէն քննարկելով ապստամբութեան ծնունդ տուող ներքին եւ արտաքին պատճառները՝ Բորեանը միայն իր կուսակցական ընկերներին է վերագրում ամբողջ յանցանքը՝ ձաղկելով ու դատապարտելով նրանց եւ նրանց ընդվզեցուցիչ գործելակերպը։ Ընդհակառակը, մեր ժողովրդին, հետեւաբար նաեւ Դաշնակցութեան, նա բացարձակապէս անմեղ է համարում։ Թէեւ ապստամբութեան պատճառների վերլուծման մէջ, հասկանալի պատճառներով, նա խուսափել է խօսել մի շարք ճակատագրական դէպքերի մասին, ինչպէս, օրինակ, հայ սպաների զանգուածային աքսորը, մտաւորականութեան ու ղեկավար տարրերի ընդհանուր բանտարկութիւնը, երկրում սկսուած, մասնաւորապէս մտաւորականութեան, ջարդը եւայլն — որոնք բախտորոշ դեր կատարեցին ապստամբութեան բռնկման մէջ, սակայն եւ այնպէս նրա բերած վկայութիւններն ու փաստերն էլ այնքան ծանրակշիռ են ու վաւերական, որ այլեւս որեւէ կասկած չի մնում առ այն, որ, այո՛, միակ յանցաւորը իրենք, Հայաստանի նախափետրուարեան վարիչներն են, որ իրենց անխոհեմութեամբ ու վայրագ քաղաքականութեամբ վառեցին ու արծարծեցին հրդեհը։

Բերենք այստեղ մի քանի քաղուածքներ այդ ուշագրաւ աշխատութիւնից՝ ընթերցողին որոշ գաղափար տալու համար Բ.

Բորեանի քննադատական ուղղամտութեան եւ ճիշդ եզրակացութիւնների մասին։

«Ցեղկոմը բռնեց անխնայ եւ վճռական բռնագրաւումների ու գրաւումների ուղին, գրում է նա, անխտիր եւ առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշուի առնելու գիւղացիութեան ընդհանուր տնտեսական վիճակը եւ նրա հոգեբանական դրութիւնը։ Բռնագրաւումները կատարւում էին անկազմակերպ, չունէին համաչափ-յեղափոխական, դասակարգային բնոյթ եւ աւելորդ բռնութիւններ էին կիրառւում։

«Առանց կազմակերպուած ու կարգապահ մեքենայի, առանց նախօրօք մտքերը պատրաստելու եւ երկրի իրայատուկ պայմանները հաշուի առնելու, Ցեղկոմը կարգախօս է հրապարակ նետում, թէ՝ պէտք է բռնագրաւել ու գրաւել քաղաքների մասնաւոր անձանց պարէնն ու գիւղացիութեան պաշարը։ Տեղի է ունենում անկարգ բռնագրաւում ամէն բանի՝ զինուորական հագուստ, բրինձ մաքրելու մասնաւոր եւ ամէն տեսակ գործիքներ, գիւղացիներին պատկանող մեղուի փեթակներ, սպիտակեղէն, 48 թերթից աւելի թուղթը, գրադարաններ, վառելանիւթ, տնային դոյքեր եւայլն։

«Այս ամէնը, ի հարկէ, բոլորովին դասակարգային բնոյթ կրող քայլեր չէին եւ արդիւնք էին Խորհրդային քաղաքականութեան եւ կոմունիստական դասակարգային գաղափարախօսութեան անծանօթութեան ու անդիտակցութեան։ Եւ բնական է, որ այս բռնութեամբ գործադրուող քայլերը հիմնական պատճառներն էին երկրի ապստամբութեան։

«Շնորհիւ պետական մեքենայի թուլութեան, կազմակերպական միջոցների ու կարգապահութեան բացակայութեան՝ մայրաքաղաք Երեւանում եւ գաւառներում կարմիր բանակայինները ինքնակամ ու կամայական կերպով բնակիչներից բռնագրաւում էին պարենաւորման մթերքներ ու ամէն ինչ։ Նման դրութիւնը չէր կարող բացասական հետեւանքներ չունենալ եւ առաջ էր բերում անբարեացակամ վերաբերում ազգաբնակութեան մէջ Ցեկոմի գործունէութեան հանդէպ։

«Մի երկրում, ուր բանուորութիւնը, որպէս կազմակերպուած ու կարգապահ ոյժ, ո՛չ միայն փոքրաթիւ էր, այլեւ թոյլ, իսկ գիւղացիութիւնը կազմում էր բնակչութեան ահագին մեծամասնութիւնը, ուր դրամատիրութիւնը բացակայում էր եւ հասարակական կարծիք ստեղծողը քաղքենիութիւնն էր եւ մանրբուրժուական մտաւորականութիւնը, իշխանութիւնները եւ իշխանութեան մարմինները պարտաւոր էին հաշուի առնել երկրի բոլոր առանձնայատկութիւնները, նրա քայքայուած վիճակը,

գիւղացիութեան կոտորակուած լինելը եւ այս վերջինների բոլոր ձգտումները։ Մենք այստեղ գործ ունենք ո՛չ դրամատէրերի, ո՛չ էլ կալուածատէրերի, այլ Հայաստանի գիւղացիութեան, բանուորութեան եւ որբ ու աղքատ գաղթական զանգուածների հետ»։

Այսպէս կոչուած ներքին պատճառների մատնանշումից յետոյ՝ Բորեանը անցնում է արտաքին պատճառների քննութեան եւ իրաւացիօրէն ընդգծում է նրանց կատարած վճռական դերը ապըստամբութեան հարցում։ Խօսքը տանք իրեն՝ ի՛ր իսկ գրչով պատկերացնելու համար դրութիւնը ա՛յս կողմից եւս։

«Խորհրդային իշխանութիւնը, շարունակում է նա, ո՛չ մի որոշ միջոց չէր գործադրում թուրքերին Հայաստանից հեռացընելու համար, մինչդեռ հայութիւնը հաւատացած էր, թէ Խորհրդ. Ռուսաստանի հետ բարի հարեւանական յարաբերութիւններ հաստատելուց յետոյ՝ թուրքերը Հայաստանում այլեւս անելիք չունէին եւ Ռուսաստանը թոյլ չի տայ թուրքերին գրաւել Հայաստանի հողերը ... իսկ դուրս եկաւ որ թուրքերը եկել էին որպէս նուաճողներ եւ երկրի վիճակը աւելի եւս վատացաւ, մի բան, որ ժողովուրդը չէր կարող սպասել Խորհրդ. իշխանութեան Հայաստան գալուց»։

Դրա հետ միասին՝ «ստեղծուեցին այնպիսի արտաքին պայմաններ, որոնց հետեւանքով Խորհրդային մի երկիր (այսինքն՝ Հայաստանը — Իրազեկ) մատնուեց պաշարուած վիճակի։ Վրաստանը, Թուրքիա եւ Ադրբէջանը, իբրեւ թշնամի ուժեր, առաջ բերին իշխանութեան համար ծանր կացութիւն, իսկ ժողովրդի համար՝ ճգնաժամային վիճակ»։

«Հողային խնդիրները, գաղթական զանգուածները, շրջափակումը, ցուրտը, սովը եւայլն, իբրեւ արտաքին գործօններ, առարկայօրէն անբարենպաստ դրութիւն ստեղծեցին իշխանութեան համար։ Եւ ահա այսպիսի ծանր պայմաններում Ցեղկոմը դիմեց պետականացման ու բռնագրաւման, հին հարկերի հաւաքման, բանտերում թողնելով այնպիսի մարդկանց, որոնք պէտք է որ ազատուած լինէին, չէր աշխատում կազմակերպել պետական մեքենան եւայլն։

«Բոլոր այս հանգամանքներն ահա միասին առած՝ հանդիսանում էին այն պատճառները, որոնք առաջ բերին Հայաստանի հակայեղափոխական շարժումը». (Բ. հատոր, էջ 126)։

Այսպէս, ուրեմն բոլշեւիկ Բորեանը մատը ճիշդ վէրքի վրայ է դրել. փաստերի արձանագրութեան ու գնահատութեան մէջ ընդհանրապէս նա անկողմնակալ է եւ հիմնական եզրակացութեան մէջ՝ արդար. նա չի վարանում խոստովանելու, որ բոլշե-

ւիկ դեկավարութիւնն է եղել Փետրուարեան ապստամբութեան միակ պատճառը:

Ի՞ՆՉ ՏՈՒԵՑ ՄԵԶ ՓԵՏՐՈՒԱՐ 18-Ը

Ամբոխը, կամ աւելի ճիշդ՝ ամբոխային տրամաբանութիւնը թէ՛ անհատական եւ թէ՛ հաւաքական ամէն մի գործ, սովորաբար, դատում ու գնահատում է իր անմիջական արդիւնքով *եւ ո՛չ իր* հետապնդած նպատակով: *Եթէ գործը յաջողուած է ու իր դրական արդիւնքովը հրապարակի վրայ, ամբոխը փառաբանում է գործը եւ ծափահարում նրա հեղինակին: Ընդհակառակը, եթէ գործը վերջացել է անյաջող, կատարուածը արկածախնդրութիւն է, չմտածուած ու անիմաստ մի ձեռնարկութիւն, նոյնիսկ խենթութիւն: Հետեւաբար՝ վա՜յ թէ՛ գործին եւ թէ՛ հեղինակին: Նշանակութեան սիւնին կը գամեն, եւ տեղից վեր կեցողը կը քննադատի, կը հայհոյի, կը քարկոծի անողորմաբար:*

Այս ձեւի վերաբերումը, ի հարկէ, ոչ ճիշդ է եւ ոչ արդար: Սակայն, նոյնիսկ այսպիսի վերաբերումով մօտենալով Փետրուարեան ապստամբութեան, պիտի տեսնենք, որ հակառակորդ խաժամուժը բոլորովին սխալ եւ անարդար է Փետրուարեան ապստամբութեան արդիւնքի մասին: Կարելի՞ է ասել թէ նա որեւէ դրական արդիւնք չունեցաւ եւ միայն ու միայն վնաս բերեց մեր երկրին ու ժողովրդին:

Ի հարկէ, ո՛չ: Ճիշդ է, Փետր. 18-ը, դժբախտաբար, չկարողացաւ վերջնականապէս խորտակել բոլշեւիկեան լուծը եւ Հայոց Աշխարհի ազատութիւն ու անկախութիւն պարգեւել, բայց տուեց մէկը միւսից աւելի կենսական ու բախտորոշ արդիւնքներ *մեր հայրենիքի ու ժողովրդի համար:*

Արձանագրենք այստեղ նրանցից միայն չորսը, առանց կանգ առնելու բոլոր դրական հետեւանքների վրայ:

1.— *Փետր 18-ը փրկեց մեր հազարաւոր բանտարկեալներին ստոյգ կորստից՝ գնդակահարութիւնից, աքսորից եւ չէկայական դիւային բազմազան որոգայթներից: Այլ խօսքով՝ Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ, վերահաս մահուանից ազատուեց հայ ժողովրդի ընտրանին՝ մտաւորականութիւնն ու դեկավարութիւնը, իր մեծագոյն մասով: Այսպիսով, բոլշեւիկները, տիրելով մեր երկրին, այո՛, ֆիզիքապէս ոչնչացրին Հայաստանի անկախութիւնը՝ զէթ անորոշ ժամանակով, սակայն, չկարողացան* հոգեպէս եւս ոչնչացնել, *այսինքն՝* մեռցնել անկախութեան գաղափարը, *որովհետեւ բնաջնջումից փրկուեցին մեր մտաւորականութիւնն ու դեկավար տարրերը, որոնք փաս-*

տօրէն այդ գաղափարի գլխաւոր ջահակիրն ու դրօշակակիրն են հանդիսանում։

2.— *Իր խելագար ու վայրագ ընթացքի համար, որով ժողովրդին մղեց ապստամբութեան, խստագոյնս պատժուեց Կասեանի ամբողջ կառավարութիւնը, մանաւանդ ինքը Կասեանը եւ վատահամբաւ Աւիս Նուրիջանեանը, որոնք Յեղկոմի չար ոգին էին։ Մոսկուան յետ կանչեց նրանց, զրկեց բոլոր պետական եւ կուսակցական պաշտօններից եւ այնպէս չէզոքացրեց, որ այնուհետեւ այլեւս նրանց ո՛չ ձայնը լսուեց, ո՛չ էլ անունը։*

3.— *Փետր. 18-ը, ինչպէս յայտնի է,* առաջին համաժողովրդական ազգային ապստամբութիւնն եղաւ հսկայածաւալ ու բազմացեղ խորհրդ. Միութեան մէջ, դաժան բռնակալութեան դէմ։ *Իբրեւ այդպիսին, նա մի կողմից՝ նոր ու հմայիչ փայլ աւելացրեց մեր ազնուական եւ ազատատենչ ժողովրդի անուան։ Մի-ւս կողմից՝ շատ զօրեղ կերպով ցնցեց բովանդակ Կարմիր բռնակալութիւնը, որովհետեւ իր դէմ այդպէս հերոսաբար ծառացողը անծայրածիր երկրի ամենահեռաւոր, ամենափոքրիկ եւ ամենաթոյլ կարծուած ժողովուրդն էր։*

Այդ անսպասելի ցնցումից որոշ չափով զգաստացաւ եւ կըրեմլը՝ հասկանալով, թէ կարելի չէ անպատիժ կերպով խաղալ ժողովուրդների ճակատագրի հետ։ Ուրիշ խօսքով՝ Փետրուարեան շառաչուն մտրակը դաս եղաւ նրա համար եւ ստիպեց բռնելու աւելի մեղմ ու խոհեմ ճանապարհ, մասնաւորապէս Կովկասի ժողովուրդների եւ Հայաստանի ու հայութեան հանդէպ։

Դրա մէկ պերճախօս ապացոյցն էլ այն փաստն է, որ Խորհրդային աշխարհի մեծագոյն իշխանաւորը՝ Լենինը, Փետրուարեան ապստամբութիւնից անմիջապէս յետոյ, շտապեց Հայաստան ուղարկել, կառավարութեան նախագահի պաշտօնով, Ալ. Մեասնիկեանին, որը համարւում էր շրջահայեացներից ու լրջմիտներից մէկը հայ բոլշեւիկների շարքերում։

Իր բանաւոր պատուէր-խրատների հետ միասին — մեղմ, զգոյշ ու զիջող վարուել ժողովրդի հետ — *Լենինը գրեց նաեւ մի նամակ,* 1921 *թ. Ապրիլ* 14-*ին, որի մէջ, ի միջի այլոց, ասուած էր.*

«Աւելի մեղմութիւն, զգուշութիւն, զիջողութիւն ցոյց տալ դէպի մանր բուրժուազիան, մտաւորականութիւնն ու յատկապէս, դէպի գիւղացիութիւնը։ Լինել աւելի դանդաղ, աւելի զգուշաւոր եւ աւելի սիստեմատիկ՝ փոխանցման շրջանում դէպի ընկերվարութիւնը՝ միշտ հաշուի առնելով երկրի իւրայատուկ պայմանները»։ (*Ս. Վրացեան՝ «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ»,* Բոստըն, 1941 *թ. էջ* 238-243)։

Ցիրաւի. բոլշեւիկ իշխանութիւնը, իր երկրորդ գալուն, որդեգրեց աւելի մեղմ, զգուշաւոր ու խոհեմ քաղաքականութիւն Հայաստանում:

4.— Փետրուարեան նոյն «հրաշագործ» ցնցումի հետեւանքով՝ Մոսկուան անսպասելիօրէն Հայաստան վերադարձրեց հայկական բանակի աքսորական սպաներից մեծ մասին, որոնց համար, անկասկած, բոլորովին այլ ճակատագիր էր սահմանուած:

Կարելի է դեռ շարունակել շղթան այն բարերար արդիւնքների, որ բերեց Փետր. 18–ը հայոց աշխարհին եւ բովանդակ հայութեան, սակայն այս չորս կէտերն էլ բաւական են, որպէսզի չնախապաշարուած մարդիկ տեսնեն ու համոզուին, որ Փետրուարեան ապստամբութիւնը ունեցաւ կարեւոր դրական հետեւանքներ Հայաստանի համար:

Սրանից չի հետեւում, ի հարկէ, որ Փետրուարեան ապըստամբութիւնից յետոյ, Հայաստան դրախտի վերածուեց: Այո՛, մեր Հայրենիքում նախափետրուարեան խենթութիւններն ու «քեալլաղեօզութիւնները» այլեւս չեն կրկնուում, նամանաւանդ սկզբնական շրջանում եւ համաշխարհային վերջին պատերազմի տարիներում. ու եթէ կրկնուում էլ են, աւելի զգոյշ, խորամանկ ու քօղարկուած ձեւերով, բայց ընդհանուր դրութիւնը շարունակում է մնալ ծայրայեղօրէն ողբերգական: Բռնութիւնները, դաժանութիւններն ու անարդարութիւնները նորից շարունակւում են, ինչպէս նաեւ բոլշեւիկեան հակահայ քաղաքականութիւնը թէ՛ երկրի ներսում եւ թէ՛ դուրսը:

Այս բոլորով հանդերձ, սակայն, կարելի է մի բանում վըստահ լինել — բոլշեւիզմը, յամենայն դէպս, այլեւս չի՛ յանդգնի իր սանձարձակութիւններն ու վայրագութիւնները, նախափետրուարեան չափերով, կրկնել Հայաստանում: Նա մէկ անգամ իր ձեռքը կրակին տարաւ եւ այրուեց: Հայ ժողովուրդը ցոյց տուեց, որ կարելի չէ անպատիժ կերպով խաղալ նրա հետ:

Փետր. 18–ը Հայոց Պատմութեան մէջ կը մնայ, իբրեւ լուսաւոր, հերոսական մի էջ՝ նոյն ոգիով ու խորհրդով՝ ինչ որ Վարդանանց շքախումբը հազար հինգ հարիւր տարի առաջ: Վաղը, երբ այլեւս չեն լինի այսօրուայ չար կրքերն ու շիլ հաշիները, երբ բոլշեւիկեան բռնակալութիւնն էլ պատմութեան դիրքը անցած կը լինի, Փետրուար 18–ը աւելի շքեղ երեւոյթով կը ներկայանայ գալիք սերունդների աչքին՝ իր ազատատենչ գաղափարներով ու ոգիով:

Բաղդադ

ԶՐՈՅՑ
ՀԱՄԱՅՆԱՎԱՐ ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՀԵՏ

Գրեց՝ ՕՀԱՆ ԾՈՓԵՑԻ

Դուք շատ խօսեցաք, սիրելի բարեկամ, ես չեմ հանդիպած համայնավարի մը որ քիչ մը աւելի շատախօս չըլլայ. գուցէ ինքզինք համոզելու համար միայն, որովհետեւ անոր մէջ խախտուած են մարդկային ու բարոյական բոլոր արժէքները: Փլատակ եղած է անոր մէջ այն բոլորը, որ դարերու ընթացքին մարդիկ կառուցին իրենց արիւնով, մարդկութիւնը բարձրացնելու աղնիւ ու այլասիրական աշխատանքներով: Անոնք աշխատեցան հեռանալ աստուածներէն, նաեւ Աստուծմէն՝ գտնելու համար իրականն ու մարդկայինը, իսկ դուք սկսած էք նոր աստուածներ ստեղծել, նախնականացնել մարդկութիւնը, որովհետեւ աստուածներու ստեղծագործութիւնը արդիւնք է մարդկութեան շատ նախնական շրջանի: Արդիւնք է առաւելապէս վախի եւ ապրելու տենչի: Այդ՝ շատ նախնական, քարայրներու մէջ բնակող մարդոց շրջանն է, որ այժմ գոյութիւն ունի ձեր աշխարհին մէջ:

Մարդկութիւնը շատ բան կը պարտի Յունաստանին, Հռոմին, Ասորեստանին, հրեայ ժողովուրդին, Եգիպտոսին, վերջապէս, Եւրոպային: Դուք ուզեցիք այրել այդ բոլորը եւ կամ առառաւելն թանգարան ձգել ու պայքար բանալ եւրոպական մշակոյթին եւ քաղաքակրթութեան դէմ. իսկապէս երեխայական, փայտէ շինուած խաղալիք զէնքերով եւ այնքան ծիծաղելի, որքան ելևքտրականութեան, լոյսի, անթելի, թելաւորի գիւտերը վերագրել ռուս ժողովուրդին: Դուք մոռցնել տուիք ռուս ժողովուրդի հանճարեղ ստեղծագործութիւնը գրականու-

թեան մէջ, ինչպէս Կոկոլն է, Տոստոեւսկին է եւ կամ Թոլստոյն, որոնք սկսած էին իրենց ծանր ազդեցութիւնը ձգել եւրոպական գրականութեան վրայ: Դուք մոռցնել տուիք ցարական բռնապետութեան տակ տանջուող այն բոլոր գաղափարական, յեղափոխական սուրբերը ու մէջտեղ բերիք խամաճիկներ գրականութեան եւ արուեստի մէջ, ոճրագործներ՝ մարդկային գաղափարականութեան մէջ: Ծիծաղելի է Սիմոնով մը դէմ հանդիման դնել եւրոպական գրականութեան. այնքան ծիծաղելի, որքան ըսել, որ նապաստակը էշի ընտանիքէն է, որովհետեւ երկար ականջներ ունի: Նոյնքան ծիծաղելի է նաեւ ձեր պայքարը Դաշնակցութեան դէմ, որուն արմատները այնքան իրական են եւ առողջ, որքան ժողովուրդն է, որուն գաղափարականը մարդկային է, ընկերվարական եւ առաւելապէս ազգային: Ան անհաշտ պայքարողը եղած է ոեւէ ձեւի բռնակալութեան դէմ, հետեւաբար, ան հալածուած է բռնակալներէն միայն եւ բոլոր անոնցմէ, որոնք ընդունակ են բռնակալներ ստեղծել:

Ես կը յարգեմ հաւատքը, սիրելի բարեկամ, կը յարգեմ այն ափրիկեցին, որ ծառի մը կոճղը կը տաշէ, կը շինէ ծուռ քիթ ու բերան եւ կ'ըսէ՝ «այս իմ աստուածն է»: Ան իր այդ նմանութեան մէջ կը դնէ կեանքը ապրելու եւ տեւականացնելու ազազակը: Ես պիտի յարգէի նաեւ ձեր խօսքերը, եթէ անոնց ետեւ հաւատք մը կապուած ըլլար. ըսել կ'ուզեմ՝ կապուած ըլլար առողջ կեանքը:

Դուք քանդեցիք բոլոր տեսակի հաւատալիքները ու ստեղծեցիք դաժան կուռք մը: Դուք քանդեցիք բոլոր ձեւի ազատութիւնները ու ստեղծեցիք բռնակալ մը: Ազատութեան անունով ոեւէ բռնակալ չ'արդարանար, եթէ այդ ազատութիւնը կեղծիք չէ: Դուք ոչ միայն կեղծեցիք մարդկային ու բարոյական այն բոլոր ըմբռնումները, որոնք կերտուած էին դարերու ընթացքին՝ Սոկրատէն սկսած մինչեւ Ճան Տուի, այլեւ կեղծիք դարձուցիք մարդը՝ անոր մէջ քանդելով նկարագիրն ու անհատականութիւնը:

Նոյնպէս ծիծաղելի են, սիրելի բարեկամ, նարեկական այն բոլոր աղօթքները Առաջնորդին, որ ամենազէտ է: Դուք կը կեղծէք նաեւ այդ, որովհետեւ երկիւղը ձեր հոգին դարձուցած է աւերակ. դուք կը կեղծէք ձեր օրուայ հացին ու ձեր կեանքին համար: Եւ ես կը հաւատամ, որ դուք նոյնքան կը կեղծէք ձեր պայքարներուն մէջ — պայքար եւրոպական մշակոյթին եւ Դաշնակցութեան դէմ: Դուք լուռ չէք կրնար մնալ. լռելը յանցանք է ու կասկածելի. դուք պարտաւոր էք միանալ այդ կեղծ պայքարներուն այնպէս, ինչպէս պարտաւոր էք միանալ Առաջնորդին մատուցուելիք հակումին ու աղօթքներուն:

Ձեր պայքարը Դաշնակցութեան դէմ ոչ մէկ արդարացում ունի։ Մինչեւ վերջն ալ սուտ ու կեղծ վերագրումներ ըրիք ձեր պայքարին՝ դէթ ոտքի տեղ մը չթողնելու համար։ Արդարացում չունիք, երբ, մանաւանդ, հայ էք։ Այո՛, սիրելի բարեկամ, Դաշնակցութիւնը է՛ն առաջ ազգային կուսակցութիւն է։ Անոր արմատները կուգան մեր պատմութենէն, մեր ժողովուրդէն եւ իրականութենէն։ Ան մերն է՝ մեր առաւելութիւններով եւ մեր թերութիւններով։ Անոր մէջ կան Հայկը, Սասունցի Դաւիթը, Անդրանիկը, Քրիստափորը, Մուրատը, Զաւարեանը, Ռոստոմը, Սպաղանցի Մակարը, մշակն ու վարժապետը, բայց ոչ Մարքսը, Լենինը, Սթալինը, Բերիան եւ կամ Մոլոտովը։ Անոր մէջ կայ ժառանգութիւն մը, որ ժողովուրդինն է։ Կայ աշխատանքը մեր մշակոյթին։ Առաւելապէս մեր դրականութիւնը շատ բան կը պարտի Դաշնակցական մամուլին։ Անոր մէջ կան շուարած, պարտուած ժողովուրդ մը, որպէս ազգ կազմակերպելու բոլոր տուեալները։

Հիմա կը տեսնեմ, ով իմ բարեկամ, որ կ՚ուզես պոչ շարժել եւ դիս համոզել, որ կայ ազգային շարժում Հայաստանի դրականութեան մէջ, եւ յիշել, որ դուք նոյն համայնավարն էիք ու կը հայհոյէիք մեր ազգային ոեւէ ձգտումներուն դէմ։ Կը հայհոյէիք Դաշնակցութեան, որ ազգայնական էր, ու դուք համաձայն էիք այն բոլոր վանտալութիւններուն, որոնք ոտքի տակ կ՚առնէին ինչ որ ազգային էր։ Հայաստանի մէջ հայ բանաստեղծը կը սարսափէր «Արարատ» բառը գործածելու. ազգայնականութիւնով բացատրեցիք փորձանքը հայկական հարցի մը գոյութեան, թշնամութիւնը Թուրքին դէմ, սահմաններու խնդիրը ու Սէվրը։ Դուք՝ հայ պոլշեւիկներդ, պայքարեցաք Սէվրի դէմ, դիւրացնելու համար Թուրքին աշխատանքը. Սէվրը, որ արիւնով ու հաւատքով ձեռք բերուած էր եւ մեր ազգային քաղաքական կեանքի մեծագոյն յաջողութիւնն էր։ Դուք կ՚արդարացնէիք այդ բոլորը ու արդարացուցիք կորուստը տաղանդաւոր գրականագէտներու սերունդի մը։ Դեռ երէկ էր այդ. իսկ այսօր կուգաս ինծի հետ վիճելու, որ ազգայնական են Հայաստանի արդի գրողներու ձգտումները։ Ո՞րն էր ճիշդը՝ երէ՞կ, որ ազգայնականութեան կը հայհոյէիք, թէ՞ այսօր, որ պաշտպանութեան ելած էք։ Դուք արդահատելի կերպով ձախող էք ու կեղծ թէ՛ ձեր պաշտպանութեան եւ թէ՛ ձեր ժխտումին մէջ, որովհետեւ ձեր ձեռքէն առնուած է նաեւ մտածելու իրաւունքը։ Ազգայնականութիւնը ուժ է եւ կարեւոր ուժ, անհատներու եւ ժողովուրդին հաւաքական պաշտպանութեան։ Պոլշեւիկը պայքարեցաւ քայքայելու համար այդ ուժը, ինչպէս պայքարեցաւ ուրիշ կարեւոր ուժի

մը՝ կրօնքի դէմ, մինչեւ որ կրցաւ այդ երկու կարեւոր զգացում-ները իր ձեռքին տակ առնել, որպէս պայթուցիկ գործածելու համար։ Ան օգտագործեց այդ ուժերը տաք պատերազմի ընթացքին, իսկ այսօր ցուրտ պատերազմի ընթացքին դեմոկրասի, ազատութիւն եւ խաղաղութիւն բառերն է, որ պաղարի մէջ դրած է։ Ուրիշ Ժտանովի մը մի քանի նախադասութիւնները բաւական են, որ Հայաստանի հայ դրողը դայ եւ խոստովանի ազգային ըլլալու իր մեղքը եւ կամ, յանկարծ, սերունդ մը վերցուի մէջտեղէն։

Անտարակոյս, որ այնտեղ կայ չինարարութիւն, կան տաղանդներ. այդ բոլորը մենք կը պարտինք հայ ժողովուրդին։ Դուք մոռցած էք, որ այնտեղ կայ հայ ժողովուրդ մը, որ միշտ չինած է դարերու ընթացքին, որ պայքարած է իր նկարագիրը պահելու համար, որ ստեղծած է գրականութիւն եւ արուեստ։ Երբ ծառ մը կը տնկուի այսօր, երբ առու մը կը բացուի, մեր բանաստեղծները մոռցած հայ ժողովուրդը՝ իրար կ՚անցնին դիւցազներգութիւններ հիւսելու Առաջնորդին։ Իրար կ՚անցնին հէքիաթասացներն ու աշուղները։ Հայաստանի մէջ մենք չենք ունենար գրականութիւն, մինչեւ որ այդ կեղծիքէն ու երկիւղէն դուրս չգանք։ Ռեժիմին եւ գրականութեան մէջ կը պակսի էականը — ժողովուրդը։

Դաշնակցութիւնը չեկաւ գրքերէն եւ ոչ ալ դուրսէն։ Ինչպէս բոլոր ժողովուրդները, հայ ժողովուրդը եւս, իր գոյութիւնն էր որ կ՚ուզէր ապրեցնել, որպէս «ածու փոքր», մշակելու համար իր ցորենն ու ծաղիկները։ Կեանքը ինքնին տենչ է ապրելու եւ ձգտում՝ այդ կեանքը ապրելու իրաւունքներուն տիրանալու։ Ինչպէս անհատներու մէջ, նոյնպէս ազգերու մէջ նոյն կենսատարրերն են, որ ուժեղ պայքար կը տանին ապրեցնելու համար։

Ֆրանսական յեղափոխութիւնը միշտ ալ մեկնակէտ ընդունուած է ազատական, յեղափոխական եւ բարենորոգչական բոլոր շարժումներուն։ Բռնատէրերուն դէմ ժողովուրդն է, որ իր ուժը մէջտեղ կը բերէ։ Ժողովուրդը ինքն է, որ կը ստեղծագործէ իր յանդուգն ու տաղանդաւոր զաւակներուն միջոցով։

Գրական, ընկերային, բարենորոգչական, յեղափոխական շարժումները դուցէ շատ ուշ սկսէին Ռուսաստանի մէջ, եթէ, ըսենք, Պուշկին մը իր գլխէն չթօթուէր դուրսէն եկած պայքարկանութիւնը ու չմոռնար ռուս ժողովուրդին. ժողովուրդ, արուեստ եւ գրականութիւն իրար դոտած էին։ Անջատուած էին իրարմէ ժողովուրդ եւ ցար։ Մուժիկը ինքզինքն էր որ կը դոնէր, կը դոնէր իր հոգին ու իր անհատականութիւնը։

Եթէ վանքերուն մնար, ինչքան ալ մեծ տաղանդներ ըլլային

Հիւրմիւզ, Արսէն Բագրատունի, յեղափոխութիւնը շատ պիտի դանդաղէր մեր հայ ազգային կեանքին մէջ։ Ես կը տարուիմ ըսելու, որ Նալբանտեանի մը, Ս. Նազարեանի մը, նոյնիսկ Գրիգոր Արծրունիի մէջ ազգային, յեղափոխական, բարենորոգչական ըմբռնումը աւելի շատ մարդկային էր, քաղաքակրթական ու դաղափարական։ Կը պակսէր հայ ժողովուրդը։ Մեր իսկական շարժումը սկսելու համար մենք նորէն կանգ պիտի առնենք Խաչատուր Աբովեանի մը արձանին առջեւ, նաեւ գերեզմանին առջեւ ուրիշ մեծ հսկայի մը՝ Րաֆֆիին։ Գրական քմայքի արդիւնք չէր, երբ Գարեգին Սրուանձտեան ժողովրդական հէքիաթներ կը հաւաքէր։ Սկսուած շարժումն էր, որ հետզհետէ ձեւ կը ստանար։ Մինչեւ այդ՝ տարերային շարժումը կազմաւորուեցաւ ու ծնունդ տուաւ Հայ Յեղափոխութեան։ Եթէ ան աւելի կանուխ կազմակերպուեցաւ Ռուսահայաստանի մէջ, պատճառը այն էր, որ հոն շատ աւելի կանուխ սկսած էր ժողովրդականը։

Շարժումը ինքնաբուխ էր եւ կենսաբանական։ Տկարացած, բթացած սարկութիւնով, աւելի շատ՝ անդենական աշխարհին հետ կապուած ժողովուրդն էր, որ կեանքին, իրականութեան կը կանչուէր։ Տակաւին կար հայ ժողովուրդին մէջ առողջ կենսատարրը, որ կը խլրտար։ Սուրբերուն ու վանքերուն կառչող քրիստոնեայ համայնքը արդէն վերածնութեան մէջ մտաւ ու ազատագրուեցաւ վախի քայքայող տկարութենէն։

Հայ Յեղափոխութիւնն էր, որ վերջին 60 տարիներուն ստեղծեց մեր ազգային պատմութիւնը՝ հերոսական ճիգերով։ Այդ պատմութեան մէջ մենք պիտի գտնենք, որ նաեւ կեանքի կանչը-ւած է մեր մշակութային, մեր դրականութեան պատմութիւնը։ Հայ ժողովուրդը գուցէ գոյութիւն ունենար որպէս համայնք, որպէս լուսաւորչական, որպէս բողոքական, որպէս կաթոլիկ եւ որպէս վաճառական եւ, սակայն, ան չէր կրնար տեւական ընել իր գոյութիւնը, որպէս ազգ, առանց յեղափոխական շարժման։

Ֆրանսական Յեղափոխութենէն յետոյ, պոլշեւիկները ստեղծեցին նոյնքան կարեւոր յեղափոխութիւն մը, որ կոչուած էր շատ կարեւոր դեր կատարելու ազգերու եւ աշխարհի պատմութեան մէջ, եթէ նախճիրներու պատճառով չստեղծէին այդ մեծ խրամատը ժողովուրդի եւ իրենց միջեւ՝ պատմութեան մէջ երեւցող բոլոր բռնատէրերուն նման։ Ամբողջ մարդկութիւնը կը սպասէր, որ այդ յեղափոխութեան շնորհիւ ձեռք ձգուէին նոր իրաւունքներ. ձեռք ձգուէր ազատութեան է՛ն կարեւորը՝ տնտեսական ազատութիւնը։ Շատ ժամանակ չանցաւ տեսնելու համար, որ յեղափոխութիւնը ձախողած էր եւ չարաչար ձախողած եւ անանկացած էր ինչ որ մարդկայինն էր, ինչ որ իտէալականն

էր եւ ինչ որ սուրբ, եւ է՛ն աղէտալին՝ շատ մեծ հարուած տուած էր ընկերվարութեան եւ համայնավարութեան, որ պիտի գար։

Մարդկութիւնը դարերու ընթացքին շատ մեծ զոհաբերութիւնով, արիւնով, հերոսութիւնով ձեռք ձգած էր անհրաժեշտ ազատութիւնները,— ազատութիւն մտածումի, հաւատքի, կեանքը ապրելու կատարեալ իրաւունքի, ազատութիւն քաղաքական, դատաստանական, դաստիարակչական, ազատութիւն խօսելու, գրելու։ Կար միայն մէկ ազատութիւն, որուն կը ձգտէր մարդկութիւնը. այդ տնտեսական ազատութիւնն էր, որ պիտի գար ընկերվարական, աշխատաւորական շարժումով։ Պոլշեւիկեան յեղափոխութիւնը եկաւ ոչ միայն խափանեց այդ բոլոր ազատութիւնները, այլեւ զոցեց ճամբան տնտեսական ազատութեան։ Եղածը, սիրելի բարեկամ, բարոյական սնանկութիւն է։ Անոնք սնանկացուցին Մարքսը, Նոյնիսկ Լենինը։ Տեղն է ըսել առածի կարգ անցած Լինքընի խօսքը թէ՝ չէ կարելի ժողովուրդը խաբել միշտ։ Անոնք ոչ միայն չարաչար կը խաբեն ժողովուրդը, այլեւ խաբեցին, գործակցութիւն կեղծելով, Ռուսաստանի մէջ գոյութիւն ունեցող ազատական, ընկերվարական հոսանքները։ Անոնք եւս հաւատացին, որ տեղի կ՚ունենար այն յեղափոխութիւնը, որուն համար իրենց հաւատալիքն ու աշխատանքը բերած էին։ Հետզհետէ տեղաւորուելէ յետոյ պոլշեւիկները հալածեցին նաեւ աշխատած, տանջուած, քանիցս Սիպիր աքսորուած, մարդկային բարօրութեան ու ազատութեան նուիրուած առաքելատիպ գործիչները Ռուսաստանի։

Նոյն ձեւը կիրարկեցին, երբ, պատերազմէն յետոյ, անոնք մտան ուրիշ երկիրներ՝ համաձայնութիւն կեղծելով ազատական տարրերուն հետ՝ յետոյ գիշերով անոնց դռները ծեծելու, խոշտանգելու եւ ոպաններելու համար։ Անոնք իրենց գրաւած երկիրներուն մէջ միայն սարսափ կրնային տանիլ, որովհետեւ յեղափոխութենէն յետոյ ա՛յդ միայն մշակուած էր Ռուսաստանի մէջ իր բոլոր տեսակի նրբութիւններով։ Անոնք ոչ միայն խորտակեցին ինչ որ մարդկային ու ազգային հիմքերը կը կազմէին, այլեւ յափշտակեցին մեքենաները, գերեվարեցին դիտնականները՝ շահագործելու զանոնք ուրիշ մեծ պատերազմի մը համար, ստեղծելու ուրիշ դժոխք մը ահաւոր։

Երբ դուք կը խօսիք համայնավարութեան եւ հայրենասիրութեան մասին, թոյլ տուէք ինծի ըսելու, որ դուք կը կեղծէք. այնպէս, ինչպէս արդահատելի կեղծիք է Սովետներու «խաղաղութեան» փրոփականտան, որը որպէս պատերազմական զէնք ի գործ կը դնեն, քայքայելու համար թշնամի երկիրներու բարոյական տոկունութիւնը։

Եթէ դուք մեծցած ըլլայիք երկաթէ վարագոյրին ետեւ, դուցէ հաւատայիք եւ կամ ստիպուէիք հաւատալու, որ Ամերիկայի մէջ բանուորը ծայրայեղ թշուառութեան մէջ կ'ապրի — կազի լապտերներով կը լուսաւորէ իր տունը, որ քուէարկութիւնը ազատ չէ եւ ինչե՞ր, ինչեր... Կ'ենթադրեմ, այնտեղ կայ առանձին նախարարութիւն մը, որ նման սուտեր կը յօրինէ հաւատացնելու համար իր հպատակները, որ շնորհիւ մեծ Առաջնորդին, սովիէթական տուներուն մէջ կայ հաց եւ ելեքտրականութիւն: Ու ահա բոցավառ ողջոյններ ու աղօթքներ մեծ Առաջնորդին:

Փճացած նկարագրով փոքրիկ ստահակին մէջ կարելի է գըտնել մի քիչ պարկեշտութիւն, բայց ոչ Մոլոտովներու, Վիշինսքիներու եւ Մալիքներու մէջ, որոնց միակ նպատակն է ճախողեցնել Ազգերու Ժողովը եւ խաղաղութիւնը: Անոնց նպատակն է քանդել ռեւէ տեսակի միութիւն, որ ուժ կը ներկայացնէ: Անոնք չէին կրնար տանիլ, որ կը կազմուի Ազգերու Միութիւն մը եւ մինչեւ վերջն ալ ճամարտակութիւն խաղացին ճախողեցնելու համար խաղաղութիւնը եւ օգտագործեցին այդ ժողովները իրենց փրոփականտին՝ թխածոյ ճառերով: Խաղաղութեան անունով ռեւէ տեսակի հասկացողութիւն ժողովներուն մէջ աննպաստ էր պոլշեւիկներուն համար, որովհետեւ իրենց ազդեցութեան տակ առած երկիրներուն մէջ աշխատանքներ ունէին տանելիք՝ իջեցընելով ծանր վարագոյրը: Երբ Մոլոտով խաղաղութեան ժողովներուն մէջ էր, Վիշինսքին երեք օրուայ վերջնագիր կուտար Ռումանիոյ՝ կառավարութիւնը յանձնելու պոլշեւիկներուն ու կը կազմուէր արկածախնդիրներու թափօրը Լենինի ու Սթալինի մեծադիր նկարներով դռները բախելու եւ խոշտանգելու առաջնորդները ռումանական ազգին: Խոշտանգելու «պուրժուան», մտաւորականը, ուսուցիչը, հայրենասէրը եւ, վերջապէս, մաքուր եղունգ ունեցողը:

Երբ խաղաղութեան ժողովներուն մէջ Վիշինսքին ճամարտակօրէն Ուոլ Սթրիթ կը կրկնէր ու իր կուրծքը կը ծեծէր, խաղաղութեան անունով քանդել փորձելու ամերիկեան ժողովուրդի բարոյականը, այնտեղ՝ Զեխոսլովաքիոյ մէջ, ժողովուրդի իրաւ առաջնորդը, Մասարիկ, պատուհանէն դուրս կը նետուէր շան մը պէս, կ'արդելափակէին Պենէշը, որ շատ չանցած պիտի մեռնէր: Ահա երկու առաջնորդներ՝ մարդկային ու բարոյական մեծ սկզբունքներով տոգորուած: Պենէշ, որպէս քաղաքական ելք, ցոյց տուած էր նաեւ իր համակրութիւնը համայնավարական շարժման եւ նոյնիսկ քաջալերած էր Փոլանտայի դրաւումը պոլշեւիկներու կողմէն:

Երբ խաղաղութեան ժողովներ տեղի կ'ունենային, Պուլկա-

բիոյ փողոցներուն մէջ կը գրուէին տուփեր, ուր պիտի ձգուէին կասկածելի մարդոց անունները։ Կարելի չէ երեւակայել նման ճիւաղային մտածում, ուր ժողովուրդ մը կը դառնայ իրարու լրտես, իրարու սարուկ, ժողովուրդները ոչխարներու հօտի կը վերածուին, ուր չի մնար ոչ անհատականութիւն եւ ոչ նկարագիր։ Կասկած իր կնոջ հանդէպ, իր զաւկին, իր եղբօր, իր ընկերոջ հանդէպ։ Կառափնատի նման սարսափ մըն էր նաեւ կերտել արձանը այն պատանիին, որ իր ծնողքը մատնած է։ Ահա թէ ի՛նչ փառասիրութիւններով կը դաստիարակուին պատանիները։ Փակ վարագոյրին ետեւ ան հասցուց արդէն սերունդ մը, որ կարենայ 2+2 փոխանակ 4-ի, 5 ըսել։

Ան ստեղծեց սերունդ մը ահաւոր նախապարաշումով ու մոլեռանդ՝ կազմելու համար բանակներ ու կռուելու «պատերազմի հրձիգներու» դէմ. անոնց դէմ, որոնք, իբր թէ, աշխարհի խաղաղութեան կը սպառնան, կը սպառնան ազատ, դեմոկրատիկ ու խաղաղասէր Ռուսաստանին։ Անոնց դէմ, որոնք ամբողջ մարդկութիւնը տանջանքներու ենթարկած են։ Կռիւ, մանաւանդ, Ամերիկայի դէմ, որ կը սպառնայ բովանդակ մարդկութիւնը գերեվարել եւ կը սպառնայ արեւելեան Գերմանիան սովամահ դարձնել՝ փըճացնող ոչիլ ձգելով փաթաթէսի արտերուն վրայ։

Այո՛, սիրելի բարեկամ, այդպէս կը դաստիարակուի սերունդը եւ այդ սերունդով կը կազմուին բանակները ոչ միայն Ռուսաստանի, այլեւ երկաթէ վարագոյրին ետեւ եղող բոլոր երկիրներուն մէջ։ Եւրոպան եւ Ամերիկան միամտութիւն ունեցան հաւատալու, որ կարելի է ձեւ մը գտնել խաղաղութեան համար։ Տեղական կազմակերպուած բանակներով ան կը ստեղծէ քաղաքացիական պատերազմներ եւ այդ պատերազմները կ՝օրինականացնէ, որպէս տեղական հարց։ Ժողովուրդի կամք կամ քուէարկութիւն արդէն անոնց համար դարձեր է հոթենթոթներու գործ. այդպէս ալ կը պատասխանուի։ Ահա Քորէայի պատերազմը եւ մտածել, մէկ կողմէն աշխարհի չորս ծագերէն միլիոնաւոր ստորագրութիւններ կը հաւաքուին խաղաղութեան համար, կոտրելու համար ժողովուրդներու բարոյական կորովը։ Ահա թէ որո՞ւ հետ գործ ունեցաւ չատ քրիստոնեայ, ամբողջովին դեմոկրատ եւ ազնուական մտածումներով Ռոզվելթը ու խարուեցաւ չարաչար։ Ահա թէ որո՞ւ հետ գործ ունի մարդկային ճակատագիրը եւ մեր իրականութեան մէջ գործ ունի նաեւ Դաշնակցութիւնը։

Այդ աշխարհին մէջ կարելի է ամէն ինչ Սթալինով վերլուծել. ահա մեծագոյն հրաշքը, որուն ոչ մէկ Աստուած հասաւ։ Սթալինով կարելի է վերլուծել Անծանօթը, տիեզերական գաղտնիքը, արուեստը, երգը, լեզուն, թատրոնը, գիտութիւնը, մա-

թեմաթիքը։ Գիտնական Ամառեան մը կը բանադրուի, յանկարծ, որովհետեւ լեզուաբանական հետեւութիւններ յանդգնած է հանել ու համաձայն եղած է եւրոպացի գիտնականներու կարծիքներուն։ Յանկարծ, աշխարհին կը յայտարարուի կենսաբան Լիսենկոյի հռչակը, որովհետեւ ան կը ջնջէ ժառանգութեան ուժը։ Այստեղ գիտութիւնն է, որ կը յարմարի Սթալինի քաղաքականութեան, որ ժառանգականութիւնը դեր չի կատարեր եւ կարելի է մէջտեղ բերել բոլորովին նոր մարդկութիւն մը եւ կամ մարդկութեան հետ կարելի է խաղալ, ինչպէս բրուտը կը խաղայ կաւին հետ։ Գուցէ ճիշդ է, որովհետեւ տեսնուած է, որ վախի սարսափին տակ ապրող տկար կենդանիները իրենք զիրենք պաշտպանելու համար որոշ բնազդներ զարգացուցած են. եւ կամ իրենց բնախօսական ձեւը յարմարած է իրենց ինքնապաշտպանութեան։ Աղուսէին դլխաւոր զէնքը անոր խորամանկութիւնն է, նապաստակին եռեւի երկու ոտքերը աւելի երկար են արագ վազքի համար։ Վախի ազդեցութեան ներքեւ նաեւ մարդիկ, բոլշեւիկեան աշխարհին մէջ պիտի զարգացնեն թաքուն զէնքեր՝ իրենց կեանքը տեւականացնելու համար։ Պիտի զարգացնեն խորամանկութիւն, կասկածամտութիւն, կեղծիք, մատնութիւն, ոճիր, սարկութիւն տէրերուն հանդէպ, իսկ բռնակալ՝ տկարներուն հանդէպ։ Վախը ահաւոր համաճարակ մըն է, որ երեւան կը բերէ թէ՛ սարուկը եւ թէ՛ բռնակալը. ամենամեծ բռնակալները ամենամեծ վախկոտները եղած են։ Բռնակալը կը վախնայ ոչ միայն իր թշնամիէն, այլեւ իր բարեկամէն, իր ընկերներէն, իր ընտանիքի անդամներէն։ Բռակալ մը միայն թշնամի կրնայ ունենալ։ Սթալին իր գործակիցներն իսկ վախի տակ պահած է։ Վախի տակ է, որ մարդիկ կը դառնան նենգ, խորամանկ, անվստահելի ու դաժան։ Այդ բոլորը զէնքերն են թէ՛ բռնակալին եւ թէ՛ սարուկին։ Աւելի զարհուրելի է բռնակալը, երբ անոր մէջ ստորադասութեան զգացումը կայ ու երբ ճիգ կ՝ընէ գերադաս դառնալու վախի միջոցով։ Սթալինի ամենագիտութիւնը արդիւնք է անոր թերի դաստիարակութեան։ Այնտեղ կեանքը դարձած է այնքան նախնական, որ «յարմարադոյններու վերապրում» բնազդային պայքարներու մէջ ինկած են։ Ահա թէ ինչու՝ նարեկական աղօթքները մեծ Առաջնորդին։ Ահա թէ ինչու՝ բանաստեղծը իր դիրքը պահելու եւ նոր նուաճումներ ընելու համար պէտք ունի ոտանաւորներով Դաշնակցութեան հայհոյելու։ Օ՛հ, անոնք երբեք չեն մոռնար զէթ վերջին տողերուն մէջ յիշելու մեծ Առաջնորդը, եթէ բանաստեղծութիւնը ընկոյզի ծառի մը եւ կամ այգեկութի մասին է։ Տեսնես, յանկարծ, հրաման կուգայ եւրոպական եւ ամերիկեան մշակոյթին վրայ յարձակելու. անոնք

կազմ ու պատրաստ են՝ բանաստեղծը, քննադատը, արձանագործը, վիպագիրը կը պրպտեն, կը դտնեն, թէ ով ինչ աննպաստ բան ըսած է Ամերիկայի մասին։ Ճիշդ բան ըսելու պէտք չկայ. անոնք կրնան ըսել, որ Թովմաս Լոթիսը իր գիւտերը Ռուսաստանէն գողցած է եւ, վերջապէս, կան նիկրոներու դէմ պատահած լինչեր։ Առաւելապէս այդ եղած է բանաստեղծին, քննադատին, վիպագրին, թատերագրին, արձանագործին մշակութային արժէքը։

Ու դուն, ո՛վ իմ բարեկամ, կուգաս ինծի ըսելու, որ հոն, Հայաստանի մէջ, մշակոյթ կը ստեղծեն։ Բռնակալութեան, վախի եւ ստրկային վիճակի մէջ ոեւէ ազգ մշակոյթ չի կրնար ստեղծել։ Մշակոյթը արդիւնք է ազատ պայմաններուն։ Բռնակալները միշտ ալ կասեցուցած են մարդկային յառաջդիմութիւնը։ Հայ ժողովուրդը աւելի շատ կորսնցուց վախէն, քան ջարդերէն։ Աւելի վտանգաւոր է, երբ այդ վախը կը դառնայ համայնական։ Վախին յաղթահարելու համար քաջութիւն է պէտք։ Հայ ժողովուրդը յեղափոխութիւնով եւ հերոսներով միայն կրցաւ յաղթել այդ վախին։ Եթէ շատ մեծ իրաւունքներ չկրցինք ձեռք ձգել Պանքայի դրաւումով, Խանասորի արշաւանքով, Սասունի ապըստամբութիւնով, Սուլթանի մահափորձով ու, վերջապէս, հայոց լեռներէն անցնող Ֆէտայիներով եւ, սակայն, յաղթահարեցինք վախի զգացումին ու տէր դարձանք մեր իրաւունքներուն տիրանալու դիտակցութեան։ Այդ էր, որ, վերջ ի վերջոյ, ստեղծեց, որպէս կորիզ, փոքր Հայաստանի մը սահմանները։

Ժողովուրդ մը իր լեկէնդներուն մէջ քաջերն է որ կ՝ապրեցընէ։ Վախով ոչինչ կը շինուի։ Մարգարէները յանդգնութիւնով բան մը կառուցին, ինչպէս նաեւ առաքեալները։ Յիսուս քաջութիւնով քալեց խաչի ճամբայէն։ Քաջութիւնով կարելի է պահել նկարագիրը։ Բռնակալ մը այնքան երկչոտ է, որքան ստրուկ մը։ Երկուքն ալ ընդունակ չեն ստեղծագործութեան։

Այո՛, իմ երկչոտ բարեկամս, դուն կրկնակ ստրուկ ես, երբ այս ազատ պայմաններու մէջ կը մտածես բռնութեան ներքեւ ապրող մարդոց պէս եւ կ՝ուզես շատ դիւրին ձեւով տէր դառնալ Հայրենասիրութիւն կոչուած այն հզօր զգացումին եւ հաւատքին, որ զոհաբերութիւն կը պահանջէ։ Ահա թէ ինչպէս անկիւններու մէջ կորսուած լէվանթինը եւ ծուռ նկարագրով մարդիկ, նաեւ անանկացած վաճառականներ մէջտեղ եկան, յանկարծ, ու դարձան հայրենասէրներ՝ գովաբանելով Սթալինը եւ հայհոյելով Դաշնակցութեան։

Է՛հ, ինչքա՜ն կրկնեցին, թէ Դաշնակցութեան օրով Հայաստանի մէջ կար սով, հիւանդութիւն, մահ, իսկ հիմա... Կրկնե-

ցին այդ՝ հիները, որոնք պաշտօններու վրայ էին, կրկնեցին նորելուկ աքաղաղները, նաչխուն վետուրներով թուխակները եւ, որովհետեւ պայքարի համար սուտէն եւ զրպարտութենէն զատ ուրիշ հիմնական բաներ չունէին ըսելիք, կառչեցան իրականութեան մը ու կրկնեցին։

Հրաշքը այն էր, որ այդ պայմաններու մէջ ստեղծուեցաւ Հայաստան մը, երբ համաճարակով վարակուած ժողովուրդ մը դատերուն տակ կ՚իյնար, երբ սարսափահար հալածուած ժողովուրդ մը , իր ոսկորները հաղիւ բռնած իր մարմնին վրայ, Հայաստան կը լեցուէր. երբ չորս կողմէն թշնամիները կը սպառնային, Հայաստանի սահմանները պահելու կռիւները կը շարունակէին. դարերով պետական կեանք ունեցող ու կազմակերպուած թուրք բանակներու դէմ։ Հայ ժողովուրդն էր, որ կուգար աշխարհի չորս կողմերէն ի սպաս դնելու իր զոհաբերումը եւ մեր պապերու երազներէն իրականութեան կանչելու Հայաստան մը։ Հայն էր, որ յարութիւն առած էր այն զինուորականին մէջ, որուն նախնիքները միայն հայեր եղած էին. հայ ուսուցիչը, հայ կինը, հայ մտաւորականը, տառապած ու թշուառ մայրը, որ իր զաւակը կռուի կը ղրկէր։ Այդ բոլորը ոգիով միայն կառուցուեցաւ առանց պետական պիւտճէի։ Ո՞ւրտեղէն այդ պիւտճէն, երբ պետական կազմն իսկ իր շատ նախնական շրջանին մէջ էր։ Եւ այդ ամբողջ երկուք ու կէս տարուայ մէջ եւ այդ մեծ ոգիով ժողովուրդը այդ թշուառութեան սահմանները պահելու ծանր կռիւներու ընթացքին հիմը կը դնէր նաեւ համալսարանի մը ու կը մշակէր ծրագիր՝ հողերու համայնացումի։

Երբ ինձ կը խօսիս համայնավարութեան մասին, Մարքսի եւ Էնկելսի անունները կուտաս, աւելի կը համոզուիմ, որ դուն ըմբռնած չես այդ բոլորը։ Ոչինչ սորված ես, եթէ քու բոլոր ծանօթութիւններդ առած ես արդի Հայաստանի գրականութենէն, որովհետեւ անոնք եւս ինկած են մակերեսային կրկնութիւններու մէջ։ Մարքս եւ Էնկելս մնացին միմիայն անուններ։ Լոկ զմռսուած մոմիայ դարձաւ նաեւ Լենինը։ Լենինի մահը բախտաւոր մահերէն մէկն էր, այլապէս Սթալինի գերիշխանութեան ներքեւ, որ պիտի գար, ան վաղուց գնդակահարուած կ՚ըլլար։ Մտածում եւ խմաստութիւն գոյութիւն չունենար հոն, ուր ամէն ինչ օրուայ իշխանաւորներու խօսքերով կը բացատրուի։ Հայ գրական համագումարը չէր կրնար շեղիլ Ժդանովի լոզունկէն։

Դուք երկաթէ վարագոյրին ետեւ մեծցած չէք, պէտք է լաւ գիտնաք, որ տնտեսական հաւասարութիւնը, ընկերվարական քարոզչութիւնը եւ գրականութիւնը մեր իրականութեան մէջ շատ բան կը պարտի առաւելապէս Դաշնակցութեան։ Ան որդե-

գրած է իր Ծրագրին մէջ ընկերվարութիւնը, որպէս ձգտում, որ պիտի գար քաղաքական ազատութենէն յետոյ։ Դաշնակցութեան անմիջական կոչումը առաւելապէս քաղաքական–ազգային էր, ազատագրական։ Զախ թեւն էր, որ կ'աշխատէր ընկերվարութիւնը դարձնել օրուայ գործի ծրագիր։ Այդ թեւին մէջ էին թանաք լիզողներ եւ առաւելապէս ուսանողներ եւրոպական համալսարաններու։ Անոնց համար իմաստութիւնը միմիայն գրքերէ կուգար ու գլուխները յարդի նման թէորիներով սեղմուած էին՝ հեռու հայ ժողովուրդէն եւ հայ իրականութենէն։ Անոնք նոյնիսկ գացին ծայրայեղութեան՝ ժխտելու համար հայրենիքի գաղափարը ու կրօնքը։

Բռնութեան տակ ճնշուող եւ հայրենիք չունեցող ժողովուրդի զաւակներն են, որ կը վազեն նման ծայրայեղութեան, իրենց գոյութիւնը խառնելու բովանդակ մարդերու գոյութեան՝ ազատ եւ հաւասար, ջնջելու նաեւ ստորադասութիւնը իրենց մէջ։ Նման շարժում մը միշտ ալ ուժեղ եղած է առաւելապէս հրեաներուն մէջ։ Համամարդկային դառնալու նոյն պարտուողականութիւնը կար նաեւ մեր մէջ, որ յետոյ բաժնուելով Դաշնակցութենէն, միացաւ միջազգային շարժումներուն. անոնք քննադատեցին Դաշնակցութիւնը որ չափ ունէր ու կը յամառէր մնալ ազգային ու մնաց հայ ժողովուրդին հետ իր հերոսական մարտնչումներով ու հայ մշակութային աշխատանքներով։ Ան էր, որ ժողովուրդին հետ քառսէն ստեղծեց Հայաստանի Հանրապետութիւնն ու Սէվրը։ Դաշնակցութենէն բաժնուած ձախ թեւի նոյն հատուածն էր, որ ռուս բանակը Հայաստան առաջնորդեց ու մտաւ հուրով եւ սրով քանդելու համար ինչ որ ազգային էր ու հայրենասիրական։ Նոյն մարդիկ, գուցէ հաւատաւորներ, որ բռնակալութիւնն ըստեղծեցին, իրենք դարձան առաջին զոհերը բռնակալին։

Ընկերվարութիւնը բռնակալութիւն չէ, բոլոր ազատութիւններու խափանում չէ եւ ոչ ալ կրօնական հալածանք։ Յեղափոխութիւնով կարելի է դրամատիրութիւնը ջնջել եւ, սակայն, նիւթապաշտութիւնը չէ կարելի պարտադրել։ Կրօնը կը դառնայ խղճի ու հաւատալիքի ազատութիւն, երբ դրամատէրը, որպէս դասակարգ, թաղնուած չէ անոր ետեւ։ Ընկերվարութիւնը Դաշնակցութեան համար տնտեսական ազատութիւնն է, որ պիտի գայ ու լրացնէ մարդկային բոլոր ազատութիւնները։ Եղաւ շրջան մը, որ Դաշնակցութիւնը եւս պայքարեցաւ հայ կղերականներուն դէմ։ Այդ պայքարը ունէր միայն մէկ նպատակ՝ պարտը-ած, շուարած ու երկնային կեանքին համար ապրող հայ ժողովուրդ մը զատել եկեղեցականներու ազդեցութենէն ու անոր մէջ դնել ազգային գիտակցութիւնը, յանդգնութիւնն ու իրականու–

թիւնը։ Ազգն էր, որ կը կազմակերպուէր՝ դարձնելով կրօնը հաւատալիքի ու խղճի գործ։

Ինչպէս ըսի, պոլշեւիկները քանդեցին ամէն բան. համայնավարական գաղափարականը դարձուցին զէնք՝ տիրապետելու համար։ Ստեղծեցին կուռք մը որ Մեծն Աղեքսանդր կը խաղայ ու տկար է իր փառասիրութեան մէջ։ Շուրջինները շատ լաւ ըմբռնած են անոր այդ փառասիրութիւնը, ահա թէ ինչու ծայրայեղ ուշադրութիւն կը դարձուի շոյելու անոր այդ տկարութիւնը, ու բոլորը, բոլորը՝ բանաստեղծը, արձանագործը, նկարիչը, երաժիշտը, սագանտարն ու զուռնայ փչողը գիշեր-ցորեկ կ՚աշխատին անոր փառքը տալու ու գովաբանելու։ Եթէ մտնելու ըլլաք արձանագործին աշխատանոցը, դուք պիտի տեսնէք հոն Սթալին կանգնած, ծռած, նստած, պառկած։ Արուեստագէտին ու բանաստեղծին համար գոցուած են բոլոր պատուհաններն արեւի։ Անկումն է, որ կը շարունակուի՝ մարդկային իմաստներէն ու բարոյական ըմբռնումներէն պարպուած։ Տկար փառասիրութիւնով այդ մէկն է, որ կ՚ուզէ դառնալ աշխարհակալ յանուն հուրի, սուրի եւ ջրհեղեղի։ Այնտեղ, տարիներու ընթացքին, կատարուած անհամար սպանութիւնները ինքնին ցոյց կուտան, որ անոր մէջ մարդկային ոչինչ կայ։ Ան մենակ է աշխարհին վրայ ու կ՚ուզէ իր գոյութիւնը պահել՝ շրջապատուած թշնամիներով։ Ան բարեկամ չի կրնար ունենալ նոյնպէս առանց սարսափի ու վախի ազդեցութեան տակ պահելու զանոնք։

Գեղեցիկ նպատակներու հասնելու համար չիտակ ճամբով պէտք է քալել։ Ծուռ ճամբան միշտ ալ քաոս կը տանի։ Գեղեցկութեան ճամբան միշտ ալ չիտակ է, ծաղկոտ ու ճշմարիտ։ Գեղեցիկ բաները յանդգնութենէն կը ծնին։ Քրիստոնէութեան մէջ եթէ կայ տկարութիւն մը, ան ալ դժոխքի սպառնալիքն է։ Այդ վախի ազդեցութեան ներքեւ է, որ մարդիկ կը շեղին իրական, մարդկային բարոյականութենէն ու իրենք զիրենք ձգած են դըժոխքէ խուսափելու հաշիւներուն մէջ։ Եթէ կրօնքի մէջէն վերցուի դժոխքի սպառնալիքը, այն ատեն մարդկային բարոյական ըմբռնումը կը դառնայ աստուածային։ Ան պիտի օգնէ իր նմաններուն մարդկայնօրէն ոչ թէ դժոխքէն խուսափելու համար, որ առաւելապէս եսասիրական է։

Ընկերվարութիւնն ու համայնավարութիւնը միայն չիտակ ճամբով կարելի է յաջողցնել, այսինքն՝ մարդկային բարոյական հիմքերով, որովհետեւ նպատակը ինքնին մեծ է՝ մարդկային։ Եթէ չիտակ ըլլար ճամբան, Ռուսաստանը այս երկար տարիներու ընթացքին պէտք էր դառնար իսկապէս օրինակելի երկիր մը։ Երկիրը իսկապէս կը դառնար դրախտ, եթէ բոլոր ազատութիւն-

ներու հետ ունենար նաեւ տնտեսական ազատութիւն։ Այն ատենն էր, որ այդ երկիրը իր գեղեցիկ նպատակներով ու իրականութիւնով պիտի տիրապետէր աշխարհին ոչ թէ սարսափով, սպանութիւններով, մատնութիւններով մարդկային բարոյական ըմբռնումները անկումի ենթարկելով։ Ոչ թէ շրջելով իմաստները «ազատութեան», «խաղաղութեան», «դեմոկրասիի», շրջելով նաեւ իմաստը նոյնինքն համայնավարութեան։

Զէ՛, սիրելի բարեկամ, Դաշնակցութիւնը առաւելապէս չափի կուսակցութիւն եղած է, որովհետեւ հայ ժողովուրդը անոր վստահեր է դարերու ժառանգը, իր հաւատքն ու բնազդը։ Մեր հաւատքը ազատութիւնն է, որ, որպէս նկարագիր, կապուած է նոյնիսկ ցեղային ծագման հետ. այդ հաւատքը ուժեղ է մեր լէկէնդներուն մէջ՝ Հայկէն սկսած մինչեւ Սասունցի Դաւիթ։ Հայ ժողովուրդը լաւ կ՝ըմբռնէ ազատութիւնը։ Ահա թէ ո՞ւր է դաղտնիքը ինքզինք ապրեցնելու իր յամառ կորովին։ Մեր իրականութեան մէջ Դաշնակցութիւնը եղած է, որ ճակատ բռնած է պոլշեւիկեան կեղծիքներու դէմ՝ ըսելու համար, որ ազատութիւնը երբեք բռնակալութիւն չէ, բանտ չէ, աքսոր չէ, երկաթէ վարագոյր չէ։ Ու այդ բոլորին մէջ մարդկային ոչինչ կայ։

Դաշնակցութիւնը նոյնիսկ տէր դարձաւ եւ ուղեց պոլշեւիկեան ոտնձգութիւններու դէմ պաշտպանել հայ եկեղեցին, ճակատ մը, որ երկչոտ համակերպութեամբ մը լքած էին նոյնիսկ եկեղեցականները։ Մենք ցաւով տեսանք նկարագրի աղճատումը մեր եկեղեցականներուն մէջ։ Եթէ մարդիկ ազատ են իրենց գեղարուեստական թռիչքներուն մէջ, պէտք է ազատ ըլլան նաեւ իրենց հաւատքին մէջ։

Դաշնակցութիւնը կը պայքարի, որովհետեւ հայ ժողովուրդի առողջութիւնը վտանգի տակ է, երբ աշխատանք կ՝ըլլայ խորտակելու ազգային կորովը — հայ ժողովուրդի նկարագիրը։ Առողջութիւն չէ, երբ ահարեկումի կ՝ենթարկուի անկախ մտածումն անգամ։

Մենք կը հաւատանք ազատութեան, ըլլայ այդ քաղաքական, մամուլի, խղճի ու մտածումի։ Ժողովուրդը այն ատեն ազատ է իր երկրին մէջ, երբ ինքն իր ուժերով ու կամքով կը ստեղծէ իր վարչաձեւը։ Հայրենիքի դաղափարը ինքնին նկարագիր է ու ազատութիւն։ Կը հաւատանք մեր հայրենիքի անկախութեան եւ իրաւունքներու պայքարին։ Դարեր յետոյ, հայ ժողովուրդը իր յամառ ու տոկուն կամքով ստեղծեց Հայաստան մը, որպէս կորիզ. նոյն ժողովուրդը, եթէ պէտք ըլլայ, գիտէ դարեր ալ պայքարիլ, տիրանալու համար իր պատմական իրաւունքներուն, ստեղծելու համար միացեալ Հայաստան մը։ Ան կը հասնի իր

նպատակին, եթէ ազատագրուի վախի ու ստրկութեան զգացումէն։

Մենք կը հաւատանք, որ այնտեղ, Հայաստանի մէջ, հակառակ բոլոր համակերպութիւններու, ներքին պայքար կայ ապրեցնելու համար հայ ժողովուրդի կորովն ու նկարագիրը։ Եթէ կ՝ուզես «Դաշնակցութիւն» անունը մի՛ տար այդ պայքարին, տո՛ւր ուրիշ անուն. կարեւորը ոգին է։

Մենք կը հաւատանք մեր ժողովուրդին. կը հաւատանք, որ ան կարեւոր դեր ունի կատարելիք, որպէս ազգ, ու անոր ազգային ըմբռնումին մէջ ուժեղ է մշակութայինն ու մարդկայինը։

ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ

ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏ

Հայկական Ազատամարտի ռահվիրաներից էր եւ Հ. Յ. Դաշնակցութեան առաջին շրջանի գործիչներից Մարգար Վարժապետը՝ բուն անունով Մարգար Ամիրեան, Տարօնի Վարդենիս գիւղից, ծնուած 1858-ին, ունեւոր եւ աստուածավախ մի ընտանիքում:

Հինգ տարեկան հասակում՝ ծնողները դրել էին Մարգարին գիւղի Բաղդասար քահանայի տէր-Թոդիկեան դպրոցը, ուր նա մնաց մինչեւ պատանեկութիւն: Կենդանի մաքի տէր ու հայրենասէր մարդ էր Բաղդասար քահանան. բացի Նարեկից ու Սաղմոսից՝ նա իր աշակերտներին պատմում էր գրուագներ հայոց պատմութիւնից, Հայկի ու Արամի, Արտաշէսի ու Տիգրանի, Մամիկոնեան քաջերի մասին: Եւ ուշիմ ու տպաւորուող Մարգարը ոգեւորւում ու ներշնչւում էր հայ հերոսների մեծագործութիւններով: Վաղ հասակից արթնացաւ նրա մէջ հայրենասիրական զգացումը:

1872-ին Վարդենիս է գալիս Ս. Կարապետի վանահայրը՝ պտղի հաւաքելու համար: Եկեղեցում տիրացութիւն անող պատանի Մարգարը գրաւում է նրա ուշադրութիւնը եւ համոզելով ծնողներին՝ տանում է հետը Ս. Կարապետի վարժարանում ուսում տալու համար: Այստեղ Մարգարը մնում է 7 տարի՝ վերջին երկու տարիները, իբրեւ դասատու վանքի դպրոցում: Ջանասէր ու հետաքրքիր՝ Մարգարը ժամանակի համար լաւ կրթութիւն է ստանում: Մասնաւորապէս լաւ ծանօթանում է հայոց անցեալին: Ս. Կարապետի վանքում դեռ կենդանի էր Խրիմեան Հայրիկի ոգին. վանքի մթնոլորտը յագեցած էր հայրենասիրական զգացումներով: Եւ Մարգարը խորապէս ազդւում է այդ մթնոլորտից:

1879-ին Մարգարը Վարդենիսում է՝ նուիրուած կրթական

գործին։ Գիւղում դպրոց է հիմնում եւ իր ձեռք բերած մտաւոր պաշարը փոխանցում նոր սերունդին։ Միեւնոյն ժամանակ ազգային գիտակցութիւն եւ ինքնապաշտպանութիւն է քարոզում գիւղացիութեան։ Նրա համբաւը տարածւում է Տարօնի գիւղացիութեան մէջ եւ Մուշ քաղաքում, որտեղի համակիրների նիւթական աջակցութեամբ, 1882–ին, ձեռնարկում է Արամեան դպրոցական շէնքի կառուցման, որ լրացնում է 1884–ին։ Այսպիսով՝ Վարդենիսը ունենում է կանոնաւոր դպրոց, ուր նոր սերունդը ազգային դաստիարակութիւն է ստանում Մարգար Վարժապետի հայրենասէր շնչի տակ։

Նիւթական դժուարութիւնները եւ դպրոցի վրայ ծանրացած պարտքը ստիպում են Մարգարին դիմելու արտասահմանի հայրենակիցների օգնութեան։ Նա ուղեւորւում է Կովկաս, ուր ծանօթանում է Գր. Արծրունիի եւ Բաֆֆիի հետ եւ ստանում է նրանց նիւթական ու բարոյական աջակցութիւնը։ Կովկասում շրջւում է ազգասիրական շրջանակների հետ, աղղում է կովկասահայ գրականութիւնից ու գաղափարներից։ Անցնում է Պոլիս, ուր արժանանում է Խրիմեան Հայրիկի ջերմ աջակցութեան ու քաջալերանքին։ Զինուած նոր գաղափարներով եւ նիւթական միջոցներով՝ վերադառնում է Վարդենիս եւ աւելի մեծ եռանդով նուիրւում է կրթական–հայրենասիրական գործին։ Նա այլեւս չի բաւականանում միայն դաստիարակչական աշխատանքով, այլեւ յեղափոխական քարոզչութիւն է անում։ Ցորդորում է երիտասարդութեան կազմակերպուել ու զինուել եւ դիմադրութիւն ցոյց տալ քրտական յարձակումներին։Տարօնում նոյն ուղղութեամբ գործում էին եւ առաջնորդ Ներսէս վարդ. Խարախանեանը եւ Ս. Կարապետի միաբան Վարդան վարդապետը, որոնց հետ մտերիմ յարաբերութիւն է հաստատում։ Կովկասից Ս. Կարապետի ուխտաւոր անունով Տարօն այցելող յեղափոխական «գործակալների» հետ եւս կապ է հաստատում նա։ Այսպէս, նրա հետ տեսնուել ու նրա աջակցութիւնն են վայելել Մ. Մարգարեանը, Ա. Բարխուդարեանը, Մ. Ղազարեանը, Թաւաքալեան — Զաքքին եւ ուրիշներ։

Մարգար Վարժապետի աշխատանքը ապարդիւն չի անցնում։ Երիտասարդութիւնը սկսում է ըմբոստութեան նշաններ ցոյց տալ եւ ակն ընդ ականի քաղաքականութեան հետեւել հարստահարիչ քրտերի վերաբերմամբ։ 1890–ին պատահում է մի դէպք, որի հետեւանքով Մարգար Վարժապետը ստիպուած է լինում հեռանալ հայրենի գիւղից եւ անցնել Կովկաս՝ Թիֆլիս։ Գիւղական մի հարսանիքի ժամանակ ազատում է քրտերի առեւանգումից հարսին եւ այդպիսով գրգռում է նրանց թշնամութիւնը։

Թիֆլիսում Մարգարը մեծ հեղինակութիւն է ձեռք բերում պանդուխտների շրջանում։ Մասնակցում է Քրիստափորի եւ Ռոստոմի վարած յեղափոխական խմբակների գործունէութեան։ Եւ 1891 թ. գարնան, արդէն, իբրեւ Դաշնակցական, մի խմբի գլուխն անցած, ղէնք է փոխադրում դէպի Տարօն եւ նոյն տարի աշնան վերադառնում է Կովկաս՝ յաջողութեամբ լրացնելով իր առաքելութիւնը։ Ապա, Աբաբոյի խմբի հետ, նորից անցնում է Երկիր եւ Խնուսի ու Մուշի շրջաններում քարոզչական եւ կազմակերպական աշխատանք է կատարում, իբրեւ Դաշնակցական գործիչ։ Մարգարի համբաւը տարածւում է ոչ միայն հայերի, այլեւ քրտերի մէջ, որոնց աւազակութիւնները այլեւս անպատիժ չէին անցնում։ Թուրք կառավարութիւնն եւս ուշադրութիւն է դարձնում նրա վրայ եւ միջոց է փնտրում ձերբակալելու։

1892-ին, Աւղուտ գիւղում հայերի ձեռքով սպանւում է մի թուրք սպայ։ Բաղէշից եկած հրամանի վրայ, գիւղը շրջապատւում է զինուորներով, որոնք խիստ չարչարանքի են ենթարկում գիւղացիներին՝ պահանջելով յանձնել սպանողներին։ Մատնութեան վրայ ձերբակալւում եւ Բաղէշի բանտն է նետւում եւ Մարգար Վարժապետը։ Մի ամբողջ տարի պահւում է բանտում՝ անլուր տանջանքներ կրելով։ Եւ հակառակ որ ինքը մաս չունէր սպանութեան մէջ, խոստովանւում է իր յեղափոխական լինելը եւ աներկիւղ պարզում այն պատճառները, որոնք ստիպել էին նրան կռուի դուրս գալ անարդար ու բռնակալ կառավարութեան դէմ։ Տեղի է ունենում դատական կատակերգութիւն, եւ Մարգար Վարժապետը դատապարտւում է մահուան։

Համարեա մի տարի Մարգար Վարժապետը մնաց Բաղէշի բանտում՝ ամէն վայրկեան սպասելով մահուան, բայց երբեք չկորցրեց իր բարոյական կորովը։ Բանտում էլ նա նոյն արի, հաւատաւոր եւ ըմբոստ յեղափոխականն էր եւ բախտակից բանտարկեալներին ներշնչում էր իր գաղափարները։

1893 թ. Յունուար 27-ին Մարգար Վարժապետը կախուեց Բաղէշում։ «Դրօշակ»ի ականատես թղթակիցը հետեւեալ ձեւով է նկարագրում նրա կեանքի վերջին վայրկեանները.—

«Երբ Մարգար կը հրաւիրուի ի կախաղան, երեսնամեայ երիտասարդը պարզ, անխռով կը դիմէ դէպի մահ եւ կանգնած աթոռի վրայ, կախաղանի տակ, կը դառնայ դէպի յախուռն բազմութիւնը եւ կը պոռայ.— «Հայե՛ր, մի՛ վհատիք, քաջ գիտցէք, որ այլեւս հասած ենք մեր նպատակին։ Թէեւ ես կը մեռնիմ, բայց դուք պիտի ապրիք։ Միայն այն երջանիկ ժամանակ դիս ալ չմոռ-

նաք։ Եթէ խանդակաթ այցելուներ ունենամ գերեզմանիս շուրջը, ոսկերքս ալ կը հրճուին ու կը խայտան»։

«Երիտասարդի գլուխը մտնում է օղակի մէջ, դահիճը քաշում է ոտքերի տակից աթոռը։ Մի կարճ խրխռոց, ոտքերի եւ կապած թեւերի անկանոն մի երկու թափահարութիւն եւ... ամէն բան վերջացած է արդէն»։

ԶԱԹՕ ԵՒ ՇԷՐՕ

Անբաժան զինակից ընկերներ էին Զաթօն եւ Շերօն՝ «Կաճէտայ «Ծուռը», որոնց կեանքի եւ գործունէութեան մասին, դըժբախտաբար, քիչ տեղեկութիւն է մնացել։ Նրանց անունը, սակայն, ժամանակին, մեծ հմայք էր վայելում ժողովրդի մէջ, իբրեւ հայ գիւղացիութեան բողոքի եւ վրէժխնդրութեան մարմնացում։ Պարզ եւ անուս երիտասարդներ էին, ինքնաբոյս յեղափոխականներ, որոնք չգիտեաս ինչից դրդուած՝ իրենց կեանքը նուիրել էին հայրենիքի ազատութեան «սուրբ գործին»։

Ժամանակի ընդհանուր տրամադրութիւնների ծնունդ էին, անշուշտ, Զաթօն եւ Շէրօն էլ, բողոքի արտայայտութիւն տիրող անիրաւ կարգերի դէմ։ Նրանց ըմբոստութեան մղող անմիջական պատճառը քրտական հարստահարութիւններն էին, որոնցից տառապում էր հայ գիւղացիութիւնը։ Ցայտնի չէ, թէ ինչ պայմաններում «աւազակ» էին դարձել Զաթօն ու Շերօն, բայց ութսունական թուականների վերջերը նրանք արդէն հռչակ ստացած «ղաչաղներ» էին։ Ահիթը մի ոստիկանի սպանութիւնն էր, որից յետոյ նրանք, տուն ու աշխատանք թողած՝ ապաւինել էին լեռները իրենց պէս ըմբոստների հետ միասին եւ վրէժ էին լուծում քրտերից ու կառավարական գիշատիչ պաշտօնեաներից։ Զաթօյի եւ Շէրօյի «աւազակախմբերը» ահ ու սարսափ էին ազդել հարըստահարիչների վրայ։ Նրանք երեւում էին զանազան վայրերում եւ անակնկալ հարուածներով պատուհասում չարագործներին։ Մանաւանդ, մեծ էր Շէրօյի համբաւը, իբրեւ քաջ եւ արդարամիտ ժողովրդական հերոսի։ Նրա արտակարգ քաջութեան, զարմանալի պաղարիւնութեան ու ճարպիկութեան մասին առասպելներ էին պատմւում գիւղերում։

Հ. Յ. Դաշնակցութեան երեւումից յետոյ, Զաթօն ու Շէրօն անմիջապէս մտան նրա շարքերը եւ դարձան Պետոյի, ապա Վարդանի կամաւոր զինուորներ՝ նրանց հետ մասնակցելով յեղափո-

խական ձեռնարկներին ու հայդուկային կռիւներին՝ աւազակ Շաքիրի դէմ, Բողաղ-Քէսանում, Զուխ-Գեաղուկում, Նարեկայ վանքի մօտ։ Զաթօն սպանուեց 1894-ին, Դերիկի վանքում, պատահական գնդակից, զինավարժութեան միջոցին։

Շէրօն, ընկերոջ մահից յետոյ, շարունակեց յեղափոխական գործունէութիւնը, իբրեւ հայդուկային խմբի անդամ, զէնք փոխադրող, սուրհանդակ ու վալատ։ Շէրօն հիանալի կերպով ծանօթ էր սահմանամերձ վայրերին, լեռ ու ձորերին, քարանձաւներին, ուր հայդուկները կարող էին ապաստան գտնել։ Քարայրներից մէկը նոյնիսկ կոչուեց նրա անունով — Շէրոյի քարայրը։ Իբրեւ վալատ, նա անփոխարինելի էր։ Նրա առաջնորդութեամբ, 1894-ին, Վարդանի խումբը մեծ քանակութեամբ զէնք մտցրեց Վասպուրական։ Շէրօն էր եւ Նիկոլ Դումանի 72 հոգինոց խմբի վալատը, որ 1896 թ. Մարտ 20-ին Սալմաստից մեկնեց դէպի Վան։ Դերիկում խումբը կռուի բռնուեց մեծ թուով քրտերի հետ։ Այդ կռւում սպանուեց եւ Շէրօն ու թաղուեց իր ընկերոջ՝ Զաթոյի դերեզմանի մօտ։

Ժողովուրդը դեռ երկար պաշտամունքով յիշում էր Շէրոյի անունը, պատմում ու երգում էր նրա քաջագործութիւնների մասին —

Դերկայ սարէն փչէր զով-հով,
Արեւ կշտէն կ'անցնէր ամպով,
Ես քեզ տեսնեմ երազներով —
Զարթի՛ր, Շէրօ, մեռնիմ քեզի,
Սէրն Աստուծոյ օղնէ մեզի...

ԱՐՄԵՆԱԿ ՂԱԶԱՐԵԱՆ

ՀՐԱՅՐ, ԴԺՈԽՔ

Արմենակ Ղազարեանը — Հրայր, Դժոխք — մեր այն գործիչներից էր, որոնց կեանքն ու գործը արժանի է առանձին հատորով ներկայացնելու։ Ժողովրդի ծոցից ելած, ժողովրդի մէջ ենուած եւ իմաստաւորուած, իր ամբողջ կեանքը ժողովրդին նուիրած՝ յեղափոխական բացառիկ տիպար էր Հրայրը, որ իր մէջ խտացրել էր Մամիկոնեան քաջութիւնը եւ Բագրատունեաց խոհականութիւնը։ Մարմնով վտիտ, բայց մտքով ու հոգիով



ՀՐԱՅՐ, ԴԺՈԽՔ

մեծ՝ Հրայրը իր անհատական ուրոյն դրոշմը դրեց Տարօնի եւ, ընդհանրապէս, Դաշնակցութեան յեղափոխական գործի վրայ։ Եթէ ներելի է «դրսի» եւ «ներսի» մտայնութիւն ու հոգեբանութիւն հասկացողութիւնների կիրառումը գործերի եւ գործիչների վերաբերմամբ, Հրայրը «ներսի», բուն Երկրի մտայնութեան, հայ ժողովրդի դարաւոր իմաստութեան հարազատ արտայայտիչն էր՝ իր գաղափարներով, ապրումներով ու գործունէութեամբ։

Արմենակ Ղազարեանը ծնուել էր Սասունի Խուլը գաւառակի Ահարոնք գիւղում, 1866-ին։ Դեռ մանուկ էր նա, երբ իր ծնողները տեղափոխուեցին Մուշի դաշտի Ղըզըլաղաճ գիւղը։ Հայրը

ուսումնասէր քահանայ էր եւ իր որդուն էլ ջանաց լաւ կրթութիւն տալ։ Պատանի Արմենակը իր ուսումը եւ մտաւոր-բարոյական դաստիարակութիւնը ստացաւ Ս. Կարապետի վանական դպրոցի հայրենասիրական մթնոլորտում։ Եւ երբ ութսունական թուականների վերջերը աւարտելով՝ դուրս եկաւ դպրոցից, արդէն ազգային զգացումներով տոգորուած հասուն երիտասարդ էր։

Տարօնի կեանքի յուզումնալից ժամանակաշրջանն էր։ Օդը յագեցած էր հայրենասիրական-յեղափոխական տրամադրութիւններով։ Արաբոյի, Մարգար Վարժապետի անունները ամենքի բերանին էին։ Կովկասից Ս. Կարապետ «ուխտի» էին գալիս խորհրդաւոր մարդիկ, որոնք ըմբոստ մտքեր էին յայտնում։ Գիւլիզարի դէպքը, 1889-ին, ցնցել էր բովանդակ հայութիւնը։ Տարօնը եռուզեռի մէջ էր։ Եւ երբ, 90-ական թուականների սկզբին Մուշ եկան Հնչակեան Մուրատը եւ Մ. Տամատեանը, հողը արդէն պատրաստ էր յեղափոխական գործունէութեան համար։ Արմենակը, որ մինչեւ այդ արդէն բռնել էր յեղափոխական ճանապարհը, ընկերանում է նրանց եւ օգնում կազմակերպելու համար Հնչակեանութիւնը Տարօնում։ Իբրեւ գործիչ, Արմենակը շրջում է գիւղից-գիւղ, քարոզում եւ կազմակերպում է դիւղացիութիւնը։ Նորանոր ուժեր են զինուորագրւում յեղափոխութեան, ինչպէս Գէորգ Զաւուշ եւ ուրիշներ։ Նախապատրաստւում է Սասունի ապստամբութիւնը, 1894-ին։

Հնչակեան ձեռնարկի տխուր վախճանը ծանօթ է։ Հնչակեան կենտրոնը Լոնդոնից արձագանգ չտուեց Մուրատի դիմումներին։ Դաշնակցութիւնից ստացած համեստ օժանդակութեամբ Մուրատը անզօր էր Սասունը պաշտպանելու Թրքական ուժերից, եւ արծիւների բոյնը ընկաւ թշնամու ձեռքը։ Մուրատը ձերբակալուեց։ Մարտիկ ուժերը նոյնպէս ձերբակալուեցան կամ ցրիւ եկան։ Արմենակը, որ այժմ արդէն յայտնի էր Դժոխք, Հրայր անուններով, հիասթափուած ու դառնացած՝ անցաւ Կովկաս եւ այնտեղից Ռումանիա՝ իր հետ տանելով հայրենիքի աւերման բօթը եւ անհուն ցասում՝ կուսակցութեան ղեկավարների դէմ։

Դեռ Տարօնում նա տեղեակ էր Դաշնակցութեան մասին եւ, Մուրատի պէս, իր թղթակցութիւնները ուղարկում էր հաւասարապէս «Հնչակ»ին ու «Դրօշակ»ին։ Կովկասում նա աւելի մօտից ծանօթացաւ Դաշնակցութեան, կապեր հաստատեց դաշնակցական մարմինների եւ գործիչների հետ։ Ռումանիայում իր շուրջ հաւաքեց պանդուխտ հայրենակիցներին եւ 1895-ին վերադարձաւ Կովկաս՝ հայրենիք վերադառնալու որոշումով։ Այստեղ մըտաւ Դաշնակցութեան մէջ եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի որոշումով, Ա-

բամ Արամեանի հետ, մօտ 50 հոգինոց խմբով մտաւ Բասէն, ուր նախօրօք փոխադրուած էր զէնք ու ռազմամթերք: Հրայրի նպատակն էր՝ կազմակերպելով Բասէնի շրջանը հետզհետէ անցնել դէպի Խնուս ու Տարօն՝ բոլոր այդ վայրերը պատելով յեղափոխական խմբերի ցանցով:

Բասէնում Հրայրն ու Արամեանը դարձան շրջանի յեղափոխական գործունէութեան ոգին: Մանաւանդ Հրայրը, իր համեստ բնաւորութեամբ, չարքաշ կեանքով եւ հաւատաւոր ու համոզիչ խօսքերով ջերմ համակրանք գտաւ գիւղացիութեան մէջ: Ընդհանուր կոտորածների օրերին, Հրայրի եւ Արամեանի կազմած ինքնապաշտպանութեան խմբերը փրկեցին շրջանը ջարդից:

Հրայրի այդ օրերի տրամադրութիւնը ցոյց տալու համար առաջ բերենք մի հատուած Կարսի ընկերներին գրած 1895 թ. Նոյեմբ. 28 նամակից. «Վստահ եղէք, գրում է նա, որ դիշեր ու ցերեկ անքուն կը շրջիմ. եթէ գտնեմ մի փոքր յարմարութիւն, անդադար պիտի գործեմ, մինչեւ վերջին շունչ: Եթէ գիտենամ, որ այս ժողովրդի արիւն ի զուր պիտի կորսուի, եւ այդ Արջը (Ռուսաստանը) պիտի գրաւէ, աւելի դերադաս կը համարիմ այնպէս խառնակել, որ մի հայ չմնայ կողմերս, քան թողուլ դերի այդ Արջին»*):

Անշուշտ, զայրոյթի վայրկեանին ասուած խօսքեր են. Հրայրը այն մարդկանցից չէր, որ թեթեւ սրտով վարուէր ժողովրդի հետ, որի հանդէպ անսահման սէր, գութ ու պաշտամունք ունէր: Երկրի անտանելի, յուսահատ վիճակն էր, որ այդպիսի պոռթկումների առիթ էր տալիս նրան: Նոյն յոռետեսութիւնը Հրայրը ունէր եւ Եւրոպայի հանդէպ: «Դրօշակ»ի խմբագրութեան ուղղած 1896 թ. Մայիս 6 նամակում նա գրում էր. «Հա՛յ ժողովուրդ, անգութ է Եւրոպան, աւելի արիւնածարաւ, քան մեր դարաւոր ոսոխը. չհաւատաս նրան երբեք: Նա արեան եւ անմեղ զոհերի մէջ է որոնում իրա շահերն»**):

Ռուսաստանը Թուրքից աւելի վատ. Եւրոպան՝ անգութ եւ շահամոլ — ո՞ւր է, ուրեմն, հայի փրկութիւնը: «Մեր յոյսը պէտք է լինի մեր վրայ միայն, ասում է նա, յառաջ գնալ եւ մեռնել Սուրբ նպատակի համար: Ա՛յդ է միայն մեր փառքն ու պատկը»: Հրայրի հիմնական հաւատամքն է այս, որ կարմիր գծով անցնում է նրա ամբողջ գործունէութիւնից — հայը պէտք է փրկուի հայի ձեռքով, սեփական ուժերով, երկրում ստեղծելով

*) «Դիւան Հ. Յ. Դ.», Ա., էջ 232:

**) Անդ, 357:

ուժեղ ժողովրդական կազմակերպութիւն — «օգնել միմեանց, սփոփել իրար. մեր դիակները թո՛ղ թշնամին գիրկընդխառն տեսնէ»:

Հրայրը Բասենում մնաց մինչեւ 1896 թ. ամառը: Նա կենդանի յարաբերութիւնների մէջ էր Տարօնի, Կարինի, Կովկասի մարմինների հետ, թղթակցութիւններ էր ուղարկում «Դրօշակ»ին: 1896 թ. Յունիսին, կարճ ժամանակով, անցաւ Կարս՝ մասնակցելու համար զինուորական խորհուրդին: Եւ երբ նոր վերադարձել էր Բասէն, Յուլիս 2-ին, ձերբակալուեց Քէոփրիքէոյ գիւղում, տարուեց-նետուեց Կարինի բանտը:

Հրայրը Արամեանից աւելի բախտաւոր գտնուեց. մինչ առաջինի մահուան դատավճիռը գործադրուեց, Հրայրը ներման արժանացաւ ու վերադարձաւ հայրենի գիւղը, ուր գրագրի պաշտօն ստանձնելով՝ շարունակեց յեղափոխական աշխատանքը: 1898-ին նորից ձերբակալուեցց կարճ ժամանակով, իսկ 1901-ին, տեսնելով այլեւս, որ անհնար է ազատ ապրել, կառավարական հետապնդումը օր օրի վրայ սաստկանում է, թողեց խաղաղ աշխատանքը եւ ամբողջովին նուիրուեց յեղափոխութեան: 1901-ին անցաւ Վան եւ Վարդգէսի հետ մշակեց Տարօնի եւ Վասպուրականի գործունէութեան ու կազմակերպութեան համար ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր: 1902-ին գրաղուեց Ախլաթի շրջանի կազմակերպական գործերով: Այդ հաստատուեց Սասունում, ուր համախմբուած էին մարտական ուժերը Անդրանիկի գլխաւորութեամբ: Հրայրը այլեւս կենտրոնական ղեկավար դէմք էր՝ անպայման հեղինակութիւն ամենքի աչքին եւ ժողովրդի սիրելին: Միշտ տխուր, ժուժկալ, թախծոտ ու մտախոհ, մարմնով տկար՝ անհուն ոյժ ու հզօր կամք կար այդ առաքելատիպ անհատականութեան մէջ եւ անսահման նուիրում ժողովրդին ու ազգային դատին: Այդ օրերի Հրայրի թղթակցութիւններն ու նամակները վկայում են, թէ արտակարգ միտք ու հոգի էր նա:

Վրայ հասան 1904-ի Սասունի դէպքերը: Թուրք կառավարութիւնը վճռել էր քարուքանդ անել Սասունցի արծիւների բոյնը: Սասունը պատրաստւում էր օրհասական դիմադրութեան՝ Անդրանիկի, Վահանի, Մուրատի, Հրայրի եւ ուրիշ անձնուէր քաջերի գլխաւորութեամբ: Պայթեց կռիւը, եւ առաջին զոհերից մէկը եղաւ Հրայրը, որ ընկաւ Ապրիլ 12-ին թշնամու գնդակից:

Հրայրի մահը անփոխարինելի կորուստ էր Հ. Յ. Դաշնակցութեան եւ, ի մասնաւորի, Տարօնի հայութեան համար:

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմը նոր էր սկսուած, եւ Թիֆլիսում բուռն թափով կազմակերպւում էին հայ կամաւորական զօրախմբերը, երբ, Սեպտեմբերի վերջերը, Բաղուից հեռագիր եկաւ Թիֆլիս.

«Նիկոլ Դումանը մեռած է Կիսլովոդսկում»:

Շուտով հասան եւ մահուան մանրամասնութիւնները:

Նիկոլ Դումանը, ծանր հիւանդ յօդացաւով ու թոքախտով, 1914-ի ամառը գտնւում էր Կովկասի բուժավայր Կիսլովոդսկում: Ինքը գիտակցում էր իր վիճակի ծանրութիւնը: Եւ իմանալով, որ կամաւորական խմբեր են կազմւում եւ Թիֆլիս են հաւաքուած անուանի հայդուկները՝ Անդրանիկ, Քեռի, Դրօ, Համազասպ, Սեպուհ եւ ուրիշներ, ու զգալով, որ ինքը անկարող է միանալու իր զէնքի ընկերներին, այլեւս իմաստ չի տեսնում ապրելու մէջ եւ Սեպտ. 23-ին, երեկոյեան ժամը 9-ին, ատրճանակով վերջ է տալիս իր կեանքին:

Նիկոլ Դումանի թաղումը տեղի ունեցաւ Թիֆլիսում, Սեպտ. 28-ին: Արտասովոր բազմութիւն էր ներկայ եւ ամէն կողմից անհաշիւ հեռագիրներ էին ուղարկուած Մեծ Մարտիկի յուղարկաւորութեան առթիւ: Դագաղը հողին յանձնուեց Խոջիվանքում, Սիմոն Զաւարեանի գերեզմանի կողքին:

Սեպտ. 28-ի «Հորիզոն» օրաթերթը նուիրուեց Նիկոլ Դումանի յիշատակին: Այստեղ առաջ ենք բերում այդ համարից Խանասորի Իշխանի՝ Յովսէփ Արղութեանի գրուածքը: Դեռ Խանասորից առաջ եւ Խանասորից յետոյ էլ ջերմ չէին երկսի յարաբերութիւնները՝ զուտ գաղափարական գետնի վրայ, եւ Իշխանի արտայայտած ընկերական տաք եւ անկեղծ զգացումները առանձնապէս խորունկ տպաւորութիւն գործեցին բոլորի վրայ:

Նախ քան Արղութեանի յօդուածին անցնելը, սակայն, տանք այստեղ մի քանի կենսագրական տեղեկութիւններ Նիկոլ Դումանի մասին:

Նիկոլ Դումանի բուն անունը Նիկողայոս Տէր-Յովհաննիսեան էր: Ծնուել էր 1867-ին, Ղարաբաղի Խաչէն գաւառի Ղշլաղ գիւղում: Քահանայի որդի էր: Նախնական կրթութիւնը ստանա-

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆ
ԳՈՒՐԳԷՆ

լով գիւղում, հօր մօտ, մտել էր Շուշիի Թեմական դպրոցը՝ աւարտելով նրա հնգամեայ դասընթացքը 1887-ին։ Միևնոյն տարին գրագրի պաշտօն էր ստացել Արցախի Թեմի կոնսիստորիայում, եւ կարճ ժամանակից յետոյ՝ նրան յանձնուել էր նոյն կոնսիստորիայի քարտուղարութիւնը։

Ութսունական թուականների վերջերը Շուշին, ինչպէս եւ Կովկասի միւս հայկական կենտրոնները, հայրենասիրական խըմորումներով էին բռնուած։ Թրքահայկական դատը գրաւել էր երիտասարդութեան մտքերը։ Մտաւորականութեան եւ աշակերտութեան մէջ գաղտնի ընկերութիւններ էին կազմուում։ Օրուայ հարց էր Թրքահայաստանի ազատութեան աջակցելու պահանջը։ Ղարաբաղի մայրաքաղքը առաջին ահազանգը հնչեցնողներից էր։ Եւ երիտասարդ Նիկողայոսը, բնականաբար չէր կարող անմասն մնալ այդ տրամադրութիւններից։

Երկու տարի Շուշիում պաշտօնավարելուց յետոյ, Նիկոլը որոշ ժամանակ էլ ուսուցչութիւն է անում Հիւս. Կովկասի հայկական դպրոցներում, բայց խաղաղ-մշակութային աշխատանքը նրան չի հրապուրում։ Եւ 1891-ին, նա անցնում է Պարսկաստան միանալու համար Դաշնակցական ռահվիրաններին, որոնք ձեռնարկել էի Կովկաս-Թաւրիզ-Սալմաստ-Վասպուրական յեղափոխական դծի կազմակերպութեան։ Յաջորդ տարի, 1892-ին, Արդութեանը հանդիպում է նրան Թաւրիզում։

ՅՈՒՇԵՐ ԱՆՑԵԱԼԻՑ

Գրեց՝ Յ. ԱՐՂՈՒԹԵԱՆ

Այսօր, նուիրական Սիմոն Զաւարեանի կողքին, կը կազմուի նոյնքան նուիրական մի նոր դամբարան՝ Նիկոլ Դումանինը։ Յաւիտենական հանգստի մէջ, իր սիրելի ընկերոջ կողքին, նա պիտի փսփսայ նրա ականջին վերջին տարիներում իր կրած ֆիզիքական եւ հոգեկան տանջանքների մասին։ Տանջուել, հիւծուել թոքախտի ճիրաններում եւ լսել, որ երկար տարիների ընթացքում իր փայփայած գաղափարները մօտ են իրականացման, եւ անմասն մնալ հայութեան վերջին մարտահրաւէրին՝ նա չկարողացաւ եւ արտացոլեց իր կեանքի եղերական վախճանը։ Բազմաթիւ ճակատամարտների ու փորձանքների բովից անցնելուց յետոյ, նրա հոգին չհաշտուեց այն մտքի հետ, որ պիտի ընկնի ինչ որ բացիլների ձեռքից։

Եթէ Ս. Զաւարեանը իրաւամբ համարւում է մեր ազատագրութեան չարժման խիղճը, ապա նոյնքան իրաւամբ Դումանը պիտի համարուի ամենափայլուն ներկայացուցիչներից մէկը, մեր ազատագրութեան մարտիկը։ Եւ խղճի ու քաջութեան ներ-

դաշնակութիւնը դարձաւ յենարան Զաւարեանի ու Դումանի գաղափարական գործունէութեան։ Նրանց գործունէութեան միջոցները տարբեր էին, բայց նպատակը՝ մէկ։ Զաւարեանը վտարանդիի ցուպը ձեռքին՝ քարոզում էր գաղափարը իր հոգու ամբողջ թափով, մտաւոր ու դիտական պաշարով, իսկ Դումանը բանութեան կապանքները ջախջախում էր զէնքով ու կրակով եւ հարթում ճանապարհը խղճի ու ազատագրութեան յաւիտենական յաղթանակի։

Հանդի՛ստ ձեզ, նուիրական անուններ, որ այսքա՜ն անձնուիրութեամբ եւ քաջութեամբ ձեր սիրած տաքրաբախտ ժողովրդի արդար դատը պաշտպանեցիք։ Դուք հանդիստ եւ խաղաղ կը ննջէք, եթէ համոզուէք մի բոպէ, որ նոր սերունդը կանգ չի առնելու ոչ մի դժուարութեան առջեւ, մինչեւ չ'իրականանայ Մեծ Գաղափարը, որի համար զոհաբերուեցիք։

* * *

Ներկայ յօդուածի նպատակից դուրս է տալ Դումանի կեանքի եւ գործունէութեան ամբողջ պատկերը։ Նախ՝ այդ օրը դեռեւս չի հասել, եւ երկրորդ՝ այդ գործը պահանջում է երկար ժամանակ եւ յատուկ ուսումնասիրութիւն։

Ես պիտի վերյիշեմ միայն Դումանի կեանքի մի քանի խոշոր գծերը։

1892 թ. ես հանդիպեցի նրան առաջին անգամ Թաւրիզում, ուր նա Լիլաւայի դպրոցում վարում էր ուսուցչի պաշտօն։

Մի խումբ ուսուցիչներ, վարժուհիներ եւ գործիչներ կազմել էին Թաւրիզում մի ընկերական շրջան՝ համակուած տաճկահայ ժողովրդի ազատագրութեան գաղափարով, մեր կեանքի մէջ չտեսնուած լի յարգանքով ու սիրով միմեանց հանդէպ։

Սեփականութեան գաղափարը գոյութիւն չունէր այդ ընկերական շրջանի մէջ, եւ ոչ ոք նրանցից իր ռոճիկի կամ աշխատանքի տէրը չէր։ Բոլորի հաւատարմատարը Նիկողայոս Տէր-Ցովհաննէսեանն էր՝ ապագայ Դումանը։ Նա էր, որ ստանում էր բոլորի աշխատավարձը՝ ռոճիկը եւ կատարում բոլոր ծախսերը՝ բաւարարելով ընկերների բոլոր պահանջները՝ սկսած ուտեստից մինչեւ հագուստը։ Այդպիսի կեանքը հնարաւորութիւն էր տալիս ոնտեսելու մի զգալի գումար ընդհանուր գործի վերաբերեալ ծախսերը կատարելու։ Եւ ամբողջ երկու տարուայ ընթացքում չի եղել մի դէպք, որ դիսոնանս՝ անհամաձայնութիւն մտցնէր ընկերական շրջանի մէջ։

Երկու տարի պաշտօնավարելուց յետոյ, Ն. Տէր-Ցովհաննիս-

եանը տեղափոխւում է Մալմաստի Ղալասար գիւղը ուսուցչի պաշտօնով։ Այդտեղ եւս, ինչպէս Թաւրիզում, նա ձեռք է բերում մեծ համակրանք ժողովրդի բոլոր խաւերում, որպէս ուսուցիչ եւ հասարակական գործիչ։

Մօտենում է 1894 թուականը՝ հայ ժողովրդի մարտիրոսագրութեան այդ անօրինակ շրջանը։ Վասպուրականից ամէն օր գալիս են յուզիչ լուրեր. Ջարդերի ուրուականը ծառանում է հայ ժողովրդի դլխին։ Ցնցոտիների մէջ ծածկուած գաղթականներ ու փախստականներ լցւում են Մալմաստի գիւղերը եւ Դուշմանի ձորի այն կողմից սոսկումի լուրեր բերում։

Ահա այդ օրուանից Նիկ. Տէր-Յովհաննիսեանը թողնում է ուսուցչութիւնն ու հասարակական գործունէութիւնը եւ ամբողջ թափով նետւում ազատագրութեան շարժման գիրկը։

* * *

Դերի՛կ ... Նուիրական վայր, որի անուան հետ կապուած են շատ քաղցր, նոյնքան եւ դառն յիշատակներ։ Դուշմանի ձորի բերանին, մի բլրի փեշի վրայ հինաւուրց աւերակ վանք էր դա՝ տաճկական սահմանի մօտ։ Դուշմանի ձորի եւ շրջակայքի տէր ու տիրականը քրդերն էին, եւ ո՞ր հայը կարող էր ոտք կոխել այդ վտանգաւոր ձորերում։ Բայց երբ սահմանին այն կողմը սկսւում է Համիտեան հայահալած քաղաքականութիւնը եւ Ջարդերը, իտէալիստ Բագրատ վարդապետը, նոյնքան իտէալիստ երկու քաջերի՝ Սաքոյի եւ Վարդանի հետ Դերիկի նորոգութեանն են ձեռնարկում եւ չունչ տալիս այդ վանքին։ Վարդանի եւ Սաքոյի անունը ահ ու սարսափ է տարածում եւ զսպում քրտերին, որովհետեւ հենց առաջին օրը, երբ քրդերը ցանկացան վանքը թալանել, անապատելի դիմադրութեան հանդիպեցին։ Այդ օրուանից՝ Դերիկը դարձաւ հայ փախստականների եւ հայդուկների իջեւան։ Համիտի սիրելի Բահրի փաշան, Վանի կուսակալը, ամէն միջոցի դիմեց վանքը դատարկելու հայերից, բայց անյաջող։ Զայրացած իր անյաջողութիւններից՝ նա որոշեց մի արշաւախումբ ուղարկել՝ հրամայելով քարը քարի վրայ չթողնել Դերիկում։ Արշաւախումբը բաղկացած էր մօտ 500 ծպտեալ ասկեարներից եւ քրդերից։

Եկան եւ Դերիկի պաշտպանները, թուով 17 հոգի, եւ մի քանի օրից յետոյ տեղի ունեցաւ յարձակումը։

Մի գեղեցիկ առաւօտ էր այդ, երբ 60-ի չափ ձիաւոր քրդեր երեւացին Դերիկի արեւելեան կողմից եւ բլուրների վրայ դիրքեր բռնելով՝ կրակ բացին։ Միաժամանակ բացին շրջակայ լեռների բարձրունքների վրայ դարանամուտ եղած քրդերն ու ծպտեալ

ասկեարները։ Չնայած Դերիկցիների աննպաստ պայմաններին՝ քրդերը մինչեւ երեկոյ տեւող տաք կռուի ընթացքում իրենց դարաններից չկարողացան դուրս գալ։ Նիկ. Տէր Յովաննիսեանը այդ խմբի քաջարի մարտիկներից մէկն էր. նա նեռւում էր մէկ դիրքից միւսը՝ գնդակների տարափի տակ։

Բայց Բահրի փաշայի հրամանը չէր կատարւում, եւ քրդերը չէին յանդգնում մօտենալ Դերիկին։ Նրանց ուշադրութիւնը դրաւում է վանքի տաւարը, որ արածում էր մօտակայ ձորակում։ Անյուսալի էր 14 տարեկան պատանի տաւարածի դրութիւնը, որին քրդերը սկսել էին գնդակահարել։ Նկատելով այդ՝ Նիկոլն ու Սաքօն դուրս են գալիս իրենց դիրքերից եւ դիմում դէպի մօտակայ բլուրը՝ օգնութեան հասնելու պատանի տաւարածին։ Պատանու մայրը, Աղբակցի դեղջկուհին, աղաչում է Նիկոլին եւ Սաքոյին չ'անել այդ քայլը եւ չվտանգել իրենց կեանքը։ «Իմ զաւակս արդէն կորած է», աղերսում է խելացնորութեան հասած մայրը, «իսկ դուք մի՛ արէք այդ քայլը, որով միայն կը վտանգէք ձեզ»։

Սակայն, 10 րոպէ չ'անցած՝ Նիկոլն ու Սաքօն դիմացի բլրի վրայ դիրքեր բռնած՝ գնդակի կարկուտ թափեցին քրդերի գլխին եւ յետ մղելով նրանց՝ հնարաւորութիւն տուին պատանի տաւարածին անվնաս հասնելու վանքը։

Խելակորոյս մօր ուրախութեանը սահման չկար։

* * *

Այնուհետեւ սկսւում է Նիկոլի փայլուն հայդուկային գործունէութիւնը։ Նրա առաջնորդութեամբ շատ անգամ հայդուկային խմբերը անցնում են երկիր եւ կռուի բռնւում զօրքերի եւ քրդերի հետ։ Դերիկի երկրորդ կռիւը, ուր նա 11 զինուած մարդով բազմաթիւ անգէնների կեանքը փրկեց, Պօղաս-Բեասանի փայլուն կռիւը, ուր նա վաստակեց քրդերից Դուման մականունը, Կոթուրի կռիւը, վերջապէս, Խանասորի արշաւանքը։

Քրդերը լ-լ-ներ հիւսեցին՝ դրուատելով Դումանի քաջութիւնը եւ այն սարսափը, որ թողնում է նա ամէն տեղ։

Ահա մի կտոր քրդական լ-լ-ներից.

Պօղաս-Բեասանը առանձին գիւղ է,
Նաթանեանի տունն էլ բեափրների բունն է.
Թո՛ղ Աստուած պատժի բեափր Նիկոլ Դումանին,
Որ կտրեց ձեռքը մեր Շամսիկցիների։

Այս երգը կապուած է Պօղաս-Բեասանի կռուի հետ։ Դումանը

իր խմբով իջեւանում է այդ գիւղում՝ Նաթանեանի տանը։ Քրդերը իմանալով այդ՝ շրջապատում են Նիկոլին. ցանկանալով խեղդամահ անել հայդուկներին ծխի ու մխի մէջ՝ դրանք ծածկում են տունը խոտով, փշերով ու կրակ տալիս։ Ապա սկսելով հրացանաձգութիւն՝ առաջարկում են Նիկոլին անձնատուր լինել։

Երբ կրակն ու բոցը ծածկում են տան չորս կողմը, Նիկոլը, հրացանը ձեռքին, դուրս է գալիս քրդերի մէջից եւ հենց դրան առաջ հրացանի երկու հարուածով ցած է գլորում Շամսիկցիների ցեղապետներին՝ Շաուշին եւ Ջնդիին։ Ապա մեն-մենակ հրացանի է բռնում նրանց դոլամներին եւ 10 քիւրդ նորից սպանում։ Մնացած քրդերը սարսափահար՝ փախուստի են դիմում։

— Ավա մրով ֆիֆա, ավա դիւմաֆ ա (սա մարդ չէ, սա դուման-փոթորիկ է) ասում են քրդերը եւ երդեր են հիւսում Դումանի քաջութեան մասին։

* * *

Դումանը անծանօթ չէր նաեւ Կովկասահայերին։ Նրա կատարած դերը հայ-թաթարական անմիտ եւ եղբայրասպան ընդհարումների շրջանում երկար չի մոռանայ Բագուի եւ Երեւանի հայութիւնը։ Ուր վտանգ է սպառնացել հայութեան եւ զգացուել Դումանի ներկայութիւնը, նա հասել է օգնութեան եւ կատարել իր պարտականութիւնը։ Եւ այժմ, աւելի քան երբեւիցէ, չափազանց ծանր է Դումանի կորուստը։

Այժմ, երբ հայութիւնը ամենուրեք լարելու է իր բովանդակ բարոյական եւ նիւթական ուժերը՝ նպաստելու տաճկահայերի ազատագրութեան Մեծ Դատին, մեծ է այն կորուստը, որի առաջ կանգնած ենք ամենքս։ Եւ ո՞վ գիտէ՝ արդեօք այդ գիտակցութիւնը եւ ներքին հոգեկան մեծ կռիւը չէ՞ր, որ արագացրեց Դումանի կեանքի եղերական վախճանը։

Ննջի՛ր հանգիստ, անզուգական մարտիկ, որ այդքան վեհութեամբ եւ արիութեամբ կատարեցիր քո պարտքը։

Խորին յարգա՛նք, վաստակաւոր, տանջուած եւ նուիրական անձինին։

ԳԵՂԱՄ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՏԱՏՐԱԿ, ԱՍՈՂԻԿ

Տարօնի զաւակ էր Գեղամը, Մշոյ Դաշտի Խէյրիան գիւղացի Կարապետ քահանայ Տէր-Կարապետեանի որդի, ծնուած 1865 թուին։ Նախնական կրթութիւնը ստացել էր ծննդավայրում, հօր խնամքի տակ, որ ջերմեռանդ հաւատացեալի եւ ուսումնասէր



ԳԵՂԱՄ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

մարդու համբաւ ունէր շրջանում։ Այնուհետեւ, չուրջ եօթը տարի, մինչեւ 1883 թ. ուսել էր Սուրբ Կարապետ վանքի Ժառանգաւորաց դպրոցում եւ որոշ ժամանակ էլ Մուշում՝ Միացեալ Ընկերութեան վարժարանում։ Եւ, վերջապէս, երկու տարի, 1885-87-ին, աշակերտել էր Էջմիածնի Գէորգեան Ճեմարանում։

Ի ծնէ ուշիմ, ուսումնասէր, յամառ աշխատող՝ Գեղամը դպրոցական տարիներին կարողացաւ ձեռք բերել բաղմակողմանի մտաւոր պաշար եւ լուրջ ծանօթութիւն հայոց պատմութիւնից ու մատենագրութիւնից։ Վաղ պատանեկութիւնից նրա մէջ արմատացել էր սէրը դէպի գրականութիւնը, առհասարակ, դէպի գիրքն ու դպրութիւնը, սէրը դէպի մտաւոր կեանքը։ Գէորգեան Ճեմարանից վերադառնալով հայրենիք՝ նա արդէն մտքով ու

նկարագրով կազմաւորուած անհատ էր։ Հօր ցանկութիւնն էր իրեն յաջորդ ունենալ որդուն, իբրեւ քահանայ, բայց Գեղամին հոգեւորականի սքեմը այլեւս չէր դրաւում։ Եւ 1888–ին նա հաստատուեց Մշում՝ Առաջնորդարանի քարտուղարի պաշտօնով։

Ութսունական թուականներին, ինչպէս ամէն տեղ, Տարօնն եւս հայրենասիրական խմբումների շրջան էր ապրում։ Խրիմեան Հայրիկի, Մկ. Սարեանի, Կովկասից եկող «առաքեալների» ազդեցութեան տակ հայրենասիրական մի ըմբոստ սերունդ էր պատրաստւում, որ այլեւս չէր ուզում համակերպուել թուրք եւ քիւրտ հարստահարիչներին։ Մարդար Վարժապետ, Ներսէս վարդ. Ղարախանեան, Հայրիկի հասցրած ճէտերը՝ լուսաւորութեան սերմեր էին ցանում հայ գիւղացիութեան խոպանացած դաշտում եւ վառում ազատութեան ու հայրենասիրութեան կրակը երիտասարդութեան սրտերում։ Հայոց լեռներում սկսում էին երեւալ հայ «աւազակներ», որոնք անողոք կռիւ էին մղում շահատակող քրտերի դէմ։ Արաբոյի անունը թնդում էր ամէն կողմ։

Այս շարժումին հաղորդակից էր եւ Գեղամը, որ Կովկասից վերադարձել էր յեղափոխական գաղափարներով համակուած։ Իբրեւ Առաջնորդարանի քարտուղար, նա յարաբերութեան մէջ էր ամենքի հետ եւ լաւատեղեակ բոլոր գործերին։ Հայ ժողովրդի անմխիթար վիճակը նրա սիրտն էլ լեցնում էր ցասումով դէպի տմարդի կառավարութիւնը եւ դէպի աւազակարարոյ քիւրտ բռնակալները։

1889–ին պատահեց Գիւլիզարի դէպքը։ Իր շահատակութիւններով հռչակուած քիւրտ Մուսա բէգը առեւանգեց Ղարս գիւղացի Մերոյի աղջիկ Գիւլիզարին։ Այս դէպքը անսովոր վրդովում առաջ բերեց հայութեան մէջ՝ Պոլսից մինչեւ Կովկաս՝ արձագանգ գտնելով նաեւ եւրոպական մամուլում։ Ամէն կողմ բարձրացաւ բողոք եւ ոճրագործին պատժելու պահանջ։ Մշում այդ շարժման գլուխը անցաւ Գեղամը։ Կառավարութիւնը ստիպուած եղաւ տեղի տալ եւ Մուսա բէգին ձերբակալած փոխադրեց Պոլիս դատելու համար։ Մօտ 50 հայ գիւղապետներ էլ մեկնեցին Պոլիս հետապնդելու համար Գիւլիզարի դատը։ 1890–ին Գեղամն էլ հետեւեց նրանց եւ Պոլսում, Պատրիարքարանի եւ ազգային շրջանակների աջակցութեամբ աշխատեց Գիւլիզարի դատի յաջողութեան համար։ Այս առթիւ ծանօթացաւ եւ շփում ունեցաւ նաեւ մայրաքաղաքի մտաւորական ու գրական դէմքերի հետ։

Գիւլիզարի դատը վերջացաւ Մուսա բէգի դատապարտութեամբ, որ մեծ խանդավառութիւն առաջ բերեց հայ հասարակութեան եւ, մասնաւորապէս, Տարօնի ժողովրդի մէջ։ Գեղամը յաղթական վերադարձաւ Մուշ։ Այլեւս ժողովրդի աչքին բարձր

հեղինակութիւն վայելող գործիչ էր նա եւ պայքարող երիտասարդութեան առաջնորդ։ 1892–ին նա ամուսնացաւ Գիւլիզարի հետ, բայց երկար չկարողացաւ մնալ Մշում։ Շուտով Մուշ վերադարձաւ բանտից «փախած» Մուսա բէգը՝ լեցուած վրէժով հայերի եւ յատկապէս, Գեղամի դէմ։ Եւ Գեղամը ստիպուած եղաւ հեռանալ Տարօնից եւ 1894–96 տարիներին վարեց Տիգրանակերտի Առաջնորդարանի քարտուղարի պաշտօնը։

1896–ին Գեղամը վերադարձաւ Մուշ եւ Առաջնորդարանի քարտուղարութիւնը վարեց մինչեւ Սահմանադրութիւն՝ միաժամանակ, 1900–1906, ուսուցչութիւն անելով Մխիթարեանների վարժարանում։ Այժմ արդէն նա Դաշնակցութեան մէջ էր՝ յայտնի Տատրակ եւ Ասողիկ անուններով։

Գեղամը, Հրայրի, Վարդան վարդապետի եւ դրսից եկած գործիչների հետ դարձաւ Տարօնի շրջանի Դաշնակցութեան սիւներից մէկը։ Տեւական անդամ կենտր. Կոմիտէի, «Դրօշակ»ի մնայուն թղթակից, գործօն մասնակից ազգային եւ յեղափոխական գործերին, անսահման սիրով նուիրուած հայ ժողովրդին ու հայութեան դատին, աննկուն աշխատող՝ Գեղամը ժողովրդական գործիչի լայն համբաւ ու համակրանք ձեռք բերեց ժողովրդի բոլոր խաւերում։ Տարօնում պատահած ամէն երեւոյթ, ապօրինութեան եւ հարստահարութեան ամէն դէպք, նա օրը օրին տեղեկագրում էր «Դրօշակ»ի խմբագրութեան, ժրնեւ։ Առանձնապէս կարեւոր եղաւ նրա դերը Սասունի կռիւների եւ նրանց յաջորդող դէպքերի ժամանակ, 1904–ին։ Նրա պատրաստած տեղեկագիրները, օրինակ, եւ ներկայացրած վկաների ցուցմունքները հիւպատոսական քննիչ յանձնախմբին մեծապէս նպաստեցին Սասունի եւ Մշոյ դաշտի հայութեան վիճակի թեթեւացման։

Առաջնորդարանի գրաղումներից եւ կուսակցական գործերից դուրս Գեղամը ահագին եռանդ էր յատկացնում եւ տնտեսական ու կրթական խնդիրներին։ Նրա ջանքերով բացուել են նորանոր դպրոցներ գիւղերում։ Նա անդուլ պայքար էր մղում հայ գիւղացիների հողերի բռնագրաւիչների դէմ։ Հողային հարցին նուիրուած բազմաթիւ տեղեկագիրներ, ուսումնասիրութիւններ եւ լրագրական յօդուածներ դուրս են եկել նրա գրչի տակից։ Հետագային, Խորհրդարանում էլ հողային ցաւոտ հարցը ամենից շատ էր զբաղեցնում նրան։ Հողային հարցի մասին մի գրքոյկ էլ հրատարակեց 1911–ին։

Բեղուն եղաւ Գեղամի եւ գրական գործունէութիւնը։ Վաղ երիտասարդութիւնից սկսած նա արդէն գրական փորձեր էր անում, հետեւողութեամբ Գար. եպ. Սրուանձտեանի։ Հետզհետէ սկսեց թղթակցել Պոլսի թերթերին ու պարբերականներին։ Բացի

ընթացիկ նիւթերից, նա ունի բազմաթիւ գրուածքներ ժողովրդական բանահիւսութիւնից, պատմուածքներ, նորավէպ ու վէպ, պատմական, ազգագրական, բանասիրական ուսումնասիրութիւններ, տեղագրութիւն, յիշատակարաններ ու յուշեր, որոնց մի մասը միայն հրատարակուած է զանազան թերթերի եւ պարբերականների մէջ. մեծ մասը — մի քանի պատկառելի հատոր — մնում է անտիպ: Տարօնի Հայրենակց. Միութեան նիւթական աջակցութեամբ «Հայ Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»ը, 1931-ին, լոյս ընծայեցին նրա երկերից մի հատոր՝ «Տարօնի Աշխարհը—Պատկերներ ու Պատմուածքներ»:

Սահմանադրութիւնից յետոյ, 1908-ին, Գեղամը ընտրուեց Օսմանեան Խորհրդարանի անդամ եւ մինչեւ 1915-ի սեւ օրերը արժանապատուութեամբ ներկայացրեց իր բնաշխարհը պետութեան գերագոյն օրէնսդիր ժողովում: Եթէ մի կողմից այդ ընտրութիւնը գնահատութեան եւ յարգանքի արտայայտութիւն էր իր հայրենակիցների կողմից, միւս կողմից Տարօնը ունեցաւ իր իղձերի ու պահանջների աննկուն, անձնուէր եւ անկաշառ պաշտպանը Խորհրդարանում եւ կառավարութեան մօտ: Նոյն տարիներին Գեղամը եղաւ եւ Ազգ. Երեսփ. Ժողովի անդամ Տարօնի շրջանի կողմից:

1915 թ. Ապրիլեան Եղեռնի օրերին Գեղամը ծանր հիւանդ էր հիւծախտով, որի պատճառով ազատուեց աքսորից եւ բռնամահից: Ազգային վիշտն ու ընկերների մահը, ազգի դլխին հասած աղէտը աւելի եւս ծանրացրին նրա առողջական վիճակը: Հիւանդութեան շրջանին նա գրի առաւ ձեռագիր վիճակում մնացած «Ապրիլեան Կոտորածը» տետրակը Թալէաթի եւ Էնվէրի նիւթած դաւադրութիւնների մասին, որ նրա վերջին գործը եղաւ: Մեռաւ 1918 թ. Նոյեմբ. 28-ին, ընդհանուր զինադադարից քիչ անցած՝ վշտաբեկ, բայց եւ մխիթարուած, որովհետեւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումով, նա տեսաւ նրա պատուիրակներին Պոլսում:

ՍԻՄՈՆ ՇԽԵԱՆ

Սիմոն Շխեանը — Շէյխ, Ամերիկայում Սուրէն ծածկանունով — Հ. Բ. Դաշնակցութեան առաջին տասնամեակի ականաւոր գործիչներից էր: Ե՞րբ է մտել Դաշնակցութեան շարքերը, մեզ յայտնի չէ: Գիտենք միայն, որ 1890-ին, Շխեանը Պապաչայի

հետ ուսուցիչ էր Գանձակում եւ պաշտօնից հեռացուեց, իբրեւ յեղափոխական։ Իսկ 1892–ի վերջերը, երբ Ռոստոմը հասաւ Ժընեւ, նա ուսանող էր Նեւշատելում, արդէն իբրեւ Դաշնակցական։ Ազնիւ եւ համեստ նկարագրով երիտասարդ էր եւ մեծ համակրանք էր վայելում ուսանողութեան շրջանում, իբրեւ անկեղծ ընկեր, լաւ մարդ եւ սրտանց նուիրուած հայ ազգային գատին։

Շխեանը Նուխեցի էր։ Իր ծննդեան ճիշդ տարին յայտնի չէ։ Լըժինի դատական գործերի մէջ նշանակուած է 43 տարեկան։ Ուրեմն, ծնուած պէտք է լինէր վաթսունական թուականների կէսերին։

Նախնական կրթութիւնը ստացել էր Նուխիում։ Ապա աւարտելով Թիֆլիսի Ուսուցչական Ինստիտուտը՝ 1888–ից ուսուցիչ էր Գանձակի քաղաքային դպրոցում։ 1892–ին ուսանող էր Նեւշատելի համալսարանում, որտեղից 1894–ին տեղափոխուեց Ժընեւի համալսարանը։ Իրենից յետոյ մնացած թղթերից երեւում է, որ ջանասէր ուսանող է եղել, միեւնոյն ժամանակ հետաքրքրուել է ընկերային գիտութիւններով եւ հայկական հարցերով։ Ժընեւի հայ ուսանողական խմբակի սիրուած եւ ազդեցիկ անդամներից էր։ Շխեանը դարձաւ Ռոստոմի աջ բազուկը, թէ՛ որպէս «Դրօշակ»ի աշխատակից եւ թէ կուսակցական ընթացիկ գործերի մէջ։ Առհասարակ, Ռոստոմի հետ կապուած էր ընկերական կապերով։



ՍԻՄՈՆ ՇԽԵԱՆ

1895 թ. աշնան, «Դրօշակ»ի խմբագրութեան կողմից Շխեանը, Սուրէն անունով, ուղարկուեց Ամերիկա՝ Դաշնակցական կազմակերպութիւն առաջ բերելու եւ նիւթական միջոցներ հայթայթելու նպատակով։ Ամերիկահայութիւնը այդ օրերին գրեթէ ամբողջովին Հնչակեան կուսակցութեան ազդեցութեան տակ էր։ Շխեանը — ընկեր Սուրէնը — մեծ դժուարութիւններով յաջողում է հիմք դնել Դաշնակցութեան եւ շուրջ մէկ ու կէս տարուայ ընթացքին կազմակերպում է մօտ 15 կոմիտէներ, գլխաւորապէս Նիւ Ինկլէնտի շրջանում։

Սակայն, եթէ որպէս կազմակերպիչ Սուրէնը ցոյց է տալիս ընդունակութիւն, իբրեւ հրապարակային պայքարի մարդ ու բեմախօս նա ոչ մի կարողութիւն չունէր. նոյնիսկ դժուարանում էր բեմի վրայ երեւալ։ Այդ պատճառով՝ ստիպողաբար խնդրում է Ժընեւից, որ իրեն փոխարինող մէկը ուղարկուի, որ ընդունակ

լինի հրապարակային ժողովներ գումարելու եւ հանգանակութիւններ անելու։ Եւ 1896–ին, իբրեւ գործիչ Ամերիկա է անցնում Յ. Իւսուֆեանը — Տ. Վահանեան, իսկ Շխեանը վերադառնում է Ժընեւ։

Ուսանողութեան վերջին տարին Շխեանը անց է կացնում Նեւչատելում, հեռու կուսակցական գործերից։ Յամառ աշխատանքով աւարտում է ուսման դասընթացքը, 1897–ին, բայց վարանում է վերադառնալ Կովկաս։ Նրա մէջ ինչ որ հոգեկան բեկում է առաջ գալիս, որ մեծ վիշտ ու մտահոգութիւն է պատճառում Ռոստոմին։

Շխեանի յաջորդ տարիների կեանքի եւ գործունէութեան մասին շատ տեղեկութիւններ չունինք։ Յայտնի է միայն որ այլեւս նախկին ոգեւորութիւնն ու եռանդը ցոյց չի տալիս յեղափոխական գործի վերաբերմամբ։ Այնուհետեւ նրան տեսնում ենք Կովկասում, իբրեւ ուսուցիչ Թիֆլիսի Ներսիսեան եւ պարտիզպանական դպրոցներում։ Մնալով հանդերձ Դաշնակցական, նա գործում է հանրային–կրթական ասպարէզներում։ Հանրապետութեան տարիներում գիւղատնտեսի պաշտօնը ունէր Հայաստանում, բայց կուսակցութեան մէջ գործօն դեր չէր կատարում այլեւս։ Մեռաւ խորհրդայնացումից յետոյ. մահուան ճիշդ տարեթիւը յայտնի չէ մեզ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՀՐԻԿԵԱՆ

Յարութիւն Շահրիկեանը, յեղափոխական անունով Նիթրա, ղրական ծածկանունով Ատոմ, ծնուել էր Շապին–Գարահիսարում, 1860–ին։ Երջանաւարտ Պոլսի Գալատա Սէրայի Լիսէի, մասնագիտութեամբ իրաւաբան։ Իննսնական թուականների սկզբին փաստաբանութիւն էր անում Տրապիզոնում եւ միեւնոյն ժամանակ եռանդով մասնակցում էր ազգային հասարակական կեանքին. Թաղական Խորհրդի անդամ էր, Ուսումնական Խորհրդի քարտուղար, Առաջնորդարանի խորհրդատու իրաւագէտ։ Հակառակ իր երիտասարդական տարիքին՝ արդէն լուրջ ազդեցութիւն եւ հեղինակութիւն էր ձեռք բերել հանրային շրջանակներում։

Ութսունական թուականների վերջերին Տրապիզոնում հաստատուած էր Հնչակեան Կուսակցութեան Երկրի Կենտր. Վարչութիւնը, որին գործակցում էր եւ Յ. Շահրիկեանը։ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնումով, ինչպէս յայտնի է, Հնչակեան կուսակ-



ՑԱՐՈՒԹԻՒՆ ՇԱՀՐԻԿԵԱՆ

ցութիւնն էլ մտաւ նրա մէջ, եւ Հ. Յ. Դ. կենտր. Վարչութեան որոշումով, ուսուցչի պաշտօնով Տրապիզոն անցան Ս. Զաւարեանը եւ Յ. Արղութեանը, որոնք Յ. Իւսուֆեանի հետ միասին միանալով Հնչակեան կենտր. Վարչութեան, պիտի կազմէին Հ. Յ. Դաշնակցութեան Երկրի Վարչութիւնը: Հնչակեանները շուտով դուրս եկան Դաշնակցութիւնից, որով այդ ծրագիրը ի դերեւ ելաւ, բայց Շահրիկեանը մտաւ Դաշնակցութեան մէջ եւ հետզհետէ դարձաւ նրա ականաւոր ղեկավար դէմքերից մէկը:

Շահրիկեանի Տրապիզոնի գործունէութեան մասին քիչ տեղեկութիւն ունինք, դժբախտաբար: Յայտնի է, որ նա, իբրեւ վաստակաւոր, գործօն մասնակցութիւն է բերել Ս. Զաւարեանի եւ Յ. Արղութեանի ձերբակալութիւնից յետոյ, Զաւարեանի դատավարութեան մէջ: Ուրիշ բանտարկեալների պաշտպանութիւնն էլ, յաճախ, ստանձնում էր Շահրիկեանը: Իբրեւ Ուսումնական Խոր-

հերդի անդամ աշակցել է Իսուֆեանի կրթական ծրագիրների գործադրութեան եւ, առհասարակ, մտերիմ յարաբերութեան մէջ է եղել Իսուֆեանի հետ։ Դաշնակցութեան գործերում նրա դերը սահմանափակուել է առաւելապէս խորհրդատուի դերով։ Եղել է Դաշնակցութեան ներկայացուցիչ ազգային մարմիններում։ Ցամենայն դէպս, փաստ չունինք հաստատող, որ նա աշխատելիս լինէր խմբերում կամ ժամանակի յեղափոխական ձեռնարկների մէջ։

1895-ի կոտորածներին յաջորդող ձերբակալութիւնների ժամանակ Շահրիկեանն էլ բանտարկուեց եւ դատապարտուեց ցմահ բերդարգելութեան, բայց կարողացաւ բանտից փախչել եւ 1897-ին նա արդէն Կովկասում կուսակցական գործի վրայ էր։ Այսպէս, Մայիսին, Բիւրոյի յանձնարարութեամբ նա մեկնում է Սալմաստ եւ յաջողութեամբ լուծելով ընկերների մէջ ծագած տարակարծութիւնները՝ արագացնում է Խանասորի արշաւանքը։

Այնուհետեւ, Շահրիկեանը պաշտօն է ստանում նաւթաշխարհում եւ դառնում է Դաշնակցութեան Բագուի կազմակերպութեան ղեկավար ուժերից մէկը՝ կենտր. Կոմիտէի անդամ, Շրջանային ու Ռայոնական ժողովների մասնակից, դասախօս, կուսակցական կարեւոր յանձնարարութիւններ կատարող։

Բագուն — Ոսկանապատի կենտր. Կոմիտէութիւնը — առանձնայատուկ տեղ ունէր մեր կուսակցութեան մէջ։ Իբրեւ նաւթարդիւնաբերական խոշոր կենտրոն, այստեղ համախմբուած էր մեծ քանակութեամբ ամէն ազգի գործաւորութիւն, որի մէջ հայ բանուորութիւնը պատկառելի թիւ էր կազմում։ Բագուում մեծ թուով հաւաքուած էին եւ հայ դրամատէրեր ու մտաւորականներ։ Դրամագլխի եւ աշխատանքի յարաբերութիւնները ծայր աստիճանի սրուած էին Բագուում, եւ դասակարգային պայքարը բուռն ձեւերով էր արտայայտւում։ Դասակարգային փոխյարաբերութիւնները, յաճախ, ազգամիջեան բախումների բնոյթ էին ստանում։ Դաշնակցութեան համար Բագուն նիւթական առաջնակարգ նշանակութիւն ունեցող կենտրոն էր, միեւնոյն ժամանակ եւ իր ընկերային սկզբունքների գործադրութեան կարեւոր վայր։ Բագուի հայ բանուորութիւնը, գրեթէ ամբողջութեամբ, կազմակերպուած էր Դաշնակցութեան դրօշի տակ։ Եւ բնական է, որ ընկերային-տնտեսական հարցերը այստեղ աւելի սուր ձեւերով էին դրւում եւ աւելի բուռն կերպով արտայայտւում կուսակցական կեանքում։ Երիտասարդութիւնը, մանաւանդ, համակուած աշխատաւորական- ընկերվարական զաղափարներով, ստիպում էր, որ կուսակցութիւնը աւելի ուշադիր վերաբերուի եւ աւելի գործօն մասնակցութիւն ցոյց տայ աշխատանքի եւ դրա-

մագլխի դասակարգային պայքարում։ Միւս կողմից՝ հասուն ղեկավարութիւնը գիտակցում էր, որ տնտեսական խնդիրը այնքան պարզ հարց չէ Բաղում, ինչպէս պատկերացնում էր երիտասարդութիւնը։ Պայքարը զուտ դասակարգային բնոյթ չէր կրում, այլեւ ազգային։ Ուղղակի կամ անուղղակի ձեւերով պայքարը ուղղուած էր եւ հայ դրամատիրութեան դէմ, որի տկարացումով շահագրգռուած էին ռուս կառավարութիւնը եւ օտար դրամատէրերը, որոնց համար ուժեղ մրցակից էր հայ դրամատէրը։ Մի կողմից անհրաժեշտ էր պաշտպանել հայ բանուորութեան աշխատաւորական իրաւունքները, միւս կողմից՝ պէտք էր զգուշանալ հայ դրամագլխին մահացու հարուած տալուց։ Ի վերջոյ, հայ դրամագլուխն էլ կարեւոր գործօն էր հայ ազգային կեանքում։

Բախումներով եւ հակասութիւններով հարուստ այս տարօրինակ միջավայրը, բնականաբար, չէր կարող չազդել եւ Շահրիկեանի մտքի վրայ։ Թուրքիայից նա եկել էր պարզ հասկացողութիւններով, իբրեւ արդիւնք թրքահայկական պայմանների, ուր դասակարգային խնդիր գոյութիւն չունէր եւ ազգովին քաղաքական ազատութեան պայքարն էր դրուած անխտիր ամէնքի առջեւ։ Իբրեւ խուզարկու-քննադատող կարողութիւններով օժտուած մարդ, որի միտքը բաց էր նորամուտ գաղափարների առջեւ, Շահրիկեանն էլ շուտով համակւում է նոր միջավայրի ոգորումներով եւ սկսում է ապրել ընկերային եւ ընկերվարական հարցերով։ Եւ խառնուածքով տրամադիր ծայրայեղութիւնների՝ նա առանձնապէս գրաււում է ընկերային գաղափարախօսութեան ձախ հոսանքներով։ Նրան առանձնապէս հրապուրում է ռուս անիշխանական-ընկերվարական Կրապոտկինը, որի երկերը կարդում է անյագօրէն եւ որի գլխաւոր գործերից մէկ մասը թարգմանել է հայերէնի։ Գործնական կեանքում, սակայն, մասնաւորապէս, կուսակցութեան ընկերային քաղաքականութեան խնդրում, նա մնում է կանգնած չափաւոր գետնի վրայ։ Եւ այս հարցի շուրջ սուր տարակարծութիւններ ու վէճեր էին ծագում նրա եւ Բաղուի երիտասարդ ընկերների միջեւ։ Շահրիկեանը, սակայն վէճերից վախեցող չէր։ Նա պայքարի մարդ էր՝ աննկուն եւ յամառ կամքով։

Ուժեղ կամք երեւան բերեց Շահրիկեանը եւ հայ-թաթարական ընդհարումների օրերին։ Ցարական նենգ կառավարութիւնը, Կովկասի իր տիրապետութեան սպառնացող յեղափոխական հրդեհը մարելու նպատակով, հայերի դէմ էր հանել խաւարակուռ մահմեդական ամբոխը։ 1905 թ. Փետրուարին անսպասելի կերպով սկսուեցին հայ-թաթարական բախումները։ Անհրաժեշտ էր արագ եւ կտրուկ հակահարուած կազմակերպել։ Անհրաժեշտ էին

նիւթական մեծ միջոցներ։ Ի միջի այլ ձեռնարկների, Դաշնակցութիւնը Շահրիկեանին ուղարկեց Հիւս. Կովկաս դրամ հաւաքելու հայ հարուստներից, որոնք շատ էլ տրամադիր չէին բանալու դրպանները։ Զինուած Հ. Յ. Դաշնակցութեան կարմիր կնիքով, իր հետ ունենալով մի քանի փափախաւոր կտրիճներ՝ Շահրիկեանը այնպիսի սարսափ ազդեց հայ Զիմզիմոմների վրայ, որ սրանք «յօժար կամքով» փութացին վճարել իրենց բաժին հանուած գումարները։ Եւ կարճ ժամանակում Դաշնակցութիւնը ի վիճակի եղաւ մեծ քանակութեամբ զէնք հասցնել Կովկաս եւ ի դերեւ հանել ցարական կառավարութեան եւ թաթար բէգերի ու աղալարների նիւթած դաւերը։

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, Շահրիկեանը անցաւ Պոլիս։ Այստեղ նրա առջեւ բացուեց գործունէութեան լայն ասպարէզ, եւ շուտով նա դարձաւ օրուայ մարդը։ Կովկասում չափաւոր՝ պահպանողական նկատուելու աստիճան, Պոլսում Շահրիկեանը երեւան եկաւ, իբրեւ ծայրայեղ դաղափարների եւ յախուռն գործելակերպի ջատագով։ Յայտնի է նրա «մատը» Աղդ. Երեսփ. եւ Բաղաք. Ժողովներում, ուր դեկավար դէմք եղաւ մի որոշ ժամանակ։ Յայտնի են նրա արտայայտած ծայրայեղ մտքերը եւ վարած բանավէճերը մամուլում, ինչպէս եւ հրապարակային դասախօսութիւնների ու ժողովների մէջ։ Ոմանք նոյնիսկ ամբոխավարութեան էին վերագրում նրա այս ընթացքը, որ, ի հարկէ, արդար չէր։ Նա անկեղծ էր իր ծայրայեղութիւններով Պոլսում, ինչպէս անկեղծ էր չափաւորութեամբ Բագուում։

Սահմանադրութեան տարիներին Շահրիկեանը բուռն գործունէութիւն ցոյց տուեց Պոլսում, որպէս ազգային եւ կուսակցական գործիչ, իբրեւ հրապարակագիր ու դասախօս՝ ազգային եւ ընդհանուր պետական ասպարէզում։ Նա բաւական եռանդ թափեց նաեւ յաջողացնելու համար երկաթուղագծի շինութիւնը Արեւելեան Նահանգներում, բայց, ինչպէս Արմէն Գարոյի, նրա ծրագիրն էլ ձախողեց Թուրք կառավարութեան հակառակութեան հանդիպելով։

Պատերազմի սկզբին, Շահրիկեանը հնարաւորութիւն ունէր հեռանալու Պոլսից, բայց, ինչպէս մեր միւս դեկավար ընկերները, նա եւս բարոյական իրաւունք չհամարեց իր անձը բաժանելու ժողովրդից։ Մնաց Պոլսում, տառապալից օրեր ապրեց եւ զոհ գնաց Ապրիլեան Եղեռնին։

Իր կեանքով, գործունէութեամբ, մտաւոր կարողութիւններով եւ անհատական յատկութիւններով ինքնատիպ, չնչուած նկարագիր էր Շահրիկեանը։ Խստակրօն դաղափարական ու բա-

լոյական ըմբռնումներով, անդիջող եւ դաժան սկզբունքային հարցերում, անողոք հակառակորդների հանդէպ, միեւնոյն ժամանակ քաղցրաբարոյ եւ ընկերական մտերիմ շրջանակում, անդուլ աշխատող, նոր մտքերի հետամուտ, սուր բանավիճող ու հարցերի խորքը թափանցելու ձգտող։ Իբրեւ մարդ եւ հասարակական գործիչ Շահրիկեանը ցցուն եւ ուժեղ անհատականութիւն էր։ Բնաւորութեան այդ գծերը երեւան են գալիս եւ նրա գրական գործերում՝ դաշնակցական մամուլում ցանուցիր յօդուածների, ինչպէս եւ առանձին հրատարակութիւնների մէջ։

ՅՈՆԱՆ ԵՒ ՀՈՐՏԱՆՍ ԴԱՒԹԵԱՆ

Յոնան Դաւթեանը, կուսակցական անունով Նանոյեան, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին սերնդի ականաւոր դէմքերից էր՝ Քրիստափորի, Զաւարեանի եւ Թոստոմի մտերիմ ընկեր ու գործակից։ Ծնուել էր 1865 թուին, Շուշիում։ Տեղական թեմական դպրոցի դասընթացքը լրացնելով, 1886-ին աւարտել էր նաեւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, որից յետոյ մի տարի ուսուցչութիւն էր արել Հաշտարխանում, ապա մեկնել էր Ժընեւ՝ ուսանելու ընկերային-քաղաքական գիտութիւններ։

Ժընեւը այդ տարիներին ռուս եւ ամէն ազգի քաղաքական տարագիրների եւ ուսանողների կենտրոնն էր։ Համալսարանական դրաղումներից դուրս՝ Յոնանը եռանդով մասնակցում է այդ շրջանակների կեանքին, ժողովներին ու քաղաքական վէճերին։ Իր նիւթական միջոցները, սակայն, թոյլ չեն տալիս երկար մնալու համալսարանում։ 1891-ին նա վերադառնում է Կովկաս եւ հրաւիրւում է Թաւրիզի Լիլաւայի երկսեռ դպրոցի տեսչի պաշտօնին։ Նրա հետ, իբրեւ ուսուցիչ, Թաւրիզում պաշտօնավարում են եւ Յովսէփ Արղութեանը, Օր. Սաթենիկ Մատինեանը (Մաղիկ), Սարգիս Օհանջանեանը (Ֆար-հատ), Նիկողայոս Տէր-Յովհաննիսեանը (Նիկոլ Դուման) եւ ուրիշներ, որոնք միաժամանակ եւ Հ. Յ. Դաշնակցութեան Թաւրիզի կոմիտէի անդամներ էին։ Թաւրիզը սկսել էր դառնալ Դաշնակցութեան գործունէութեան կարեւոր վայրերից մէկը, իբրեւ հաղորդակցութեան կայան Կովկասի եւ Վասպուրականի միջեւ։ Յոնանը եւ ընկերները մի կողմից բարեկարգում են կրթական գործը, միւս կողմից ոյժ են տալիս հանրային-յեղափոխական կեանքին։ Թէ՛ որպէս մանկավարժ եւ թէ իբրեւ հանրային գործիչ Յոնանը մեծ հեղինակու-

ՑՈՆԱՆ ԴԱՒԹԵԱՆ ԵՒ ՀՈՐՏԱՆՍ

թիւն է ձեռք բերում հասարակութեան եւ ընկերների աչքին։

1892–ին Ցոնանն է լինում Դաշնակցութեան Ընդհ. Ժողովի գումարման նախաձեռնողներից մէկը։ 1892 թ. Ապրիլին, նրա եւ Տիգրան Օքոնեանի խմբագրութեամբ հրաւէր է ուղղւում «Հայ յեղափոխականներին», որով շեշտւում է Ընդհ. Ժողովի անհրաժեշտութիւնը եւ պարզաբանւում են օրակարգի հիմնական հարցերը՝ «1) Յեղափոխութեան նպատակը, 2) Կազմակերպութիւնը, 3) Միջոց–տակտիկան»։ Ընդհ. Ժողովում, 1892 թ. ամառը, Ցոնանը առանձին ուժով պաշտպանում է կուսակցութեան կազմակերպութեան ապակենտրոնացման գրութիւնը։ Ապակենտրոնացման, ինչպէս եւ ընկերվարութեան հարցում, Ցոնան եւ Զաւարեան համախորհուրդ էին եւ բուռն կերպով պաշտպանեցին իրենց տեսակէտները Ժողովում։

Ընդհ. Ժողովից յետոյ, Ցոնանը մի տարիով եւս վերադարձաւ Թաւրիզ եւ եռանդով շարունակեց սկսած աշխատանքը։ Ցովս. Արղութեանը, որ նոյնպէս մասնակից էր Ընդհ. Ժողովին եւ Ցոնանի հետ վերադարձաւ Թաւրիզ, հետեւեալ կերպով է նկարագրում նրա գործունէութիւնը այդ օրերին.

«Թաւրիզի Լիլաւայի թաղամասում, ուր աշխատում էր Ցոնան իր ընկերներով, սկսուել էր մի չտեսնուած, անսովոր նոր

կեանք։ Դասախօսութիւններ, կիրակնօրեայ ձրի դասընթացներ, երեկոյթներ, վերջապէս, մի շարք կուլտուրական ձեռնարկներ մի թարմ հոսանք էին մտցրել Թաւրիզի քարացած կեանքում։

«Ո՞վ էր տեսել, որ Պարսկաստանի հարեմական կեանքի ենթակայ հայ կինը յանձախէ թատրոն, ներկայ լինի դասախօսութիւններին եւ երեկոյթներին։ Սակայն, Ցոնանին յաջողուեց խորտակել այդ կապանքները եւ հայ կնոջ մասնակից անել կուլտուրական բարիքներին։ Այդ ուղղութեամբ Ցոնանը ուղղակի պայքար էր մղում տղամարդկանց հետ։ Այդպիսի միջավայրում հանդէս գալ եւ կնոջ իրաւունքներին պաշտպան հանդիսանալ հեշտ բան չէր. մի ուրիշին գուցէ քարկոծէին, բայց չէ՞ որ քարոզիչը ամէնքից սիրուած Ցոնանն էր, եւ ժողովուրդը լի վստահութեամբ կատարում էր նրա խորհուրդները։

«Քանի գնում էր, աւելի եւ աւելի խորանում էր ժողովրդի լայն խաւերի համակրանքը դէպի Ցոնանը եւ նրա ընկերները, եւ այդ բանին մեծապէս նպաստում էր այն գաղափարական համերաշխութիւնը, որը գոյութիւն ունէր Ցոնանի կազմած ուսուցչական խմբի մէջ։

«Խումբը բաղկացած 8–10 հոգուց՝ ապրում էր մի բնակարանում միասին։ Կազմել էին մի փոքրիկ Կոմունա եւ վերացրել սեփականութիւնը։ Բոլորի ռոճիկները ստանում էր մէկը — ընդհանուր ծախսարարը։ Նա էր հոգս տանում ընկերների ուտեստի, հագուստի, ծխախոտի եւ այլ պէտքերի մասին։ Ոչ ոք մի շահի ծախսել չէր կարող, որովհետեւ դրամ բացարձակապէս չունէր։ Եւ այսպէս՝ ամբողջ երկու տարի»1)։

Խմբի ոգին էր Ցոնանը. ընդհանուր ծախսարարը՝ Նիկոլ Դումանը։ Ուսուցիչների ստացած ռոճիկներով հոգացւում էին նաեւ կուսակցական կարիքները եւ եկող-գնացող ընկերների՝ Պետոյի, Սաքոյի, Վարդանի, Զաթոյի, Շէրոյի, Կարոյի եւ ուրիշների ապրուստը։ Գաղափարական մի եզակի համայնք էր այդ խումբը։

1894–ին Ցոնանը վերադառնում է Ժընեւ շարունակելու համար կիսատ ձգած ուսումը եւ 1895–ին, երբ Թոստոմը մեկնում է Կարին, ստանձնում է «Դրօշակ»ի խմբագրութիւնը եւ կուսակցութեան արտաքսմանի գործերի ղեկավարութիւնը։ Որոշ ժամանակ «Դրօշակ»ը գրեթէ ամբողջապէս ծանրացած էր նրա ուսերի վրայ։ Նրա գրչին է պատկանում «Ռէֆորմներ» խմբագրականների շարքը, ուր մանրակրկիտ եւ սուր քննադատութեան է ենթարկուած բարենորոգումների Մայիսեան ծրագիրը։

---

*) «Հորիզոն», Թիֆլիս, 1918 թ., Սեպտ. 1։

Այստեղ Ցոնանը ամուսնանում է Ժընեւցի մի կրթուած եւ դաղափարական օրիորդի՝ Հորտանսի հետ, որ դառնում է նրա անբաժան դաղափարակից եւ գործակից ընկերը՝ կատարելապէս հայանալով։ Հայի պէս տիրապետում է հայերէն լեզուին եւ նուիրումով աշխատում է, իբրեւ վարժուհի հայկական դպրոցներում, հայ մամուլի աշխատակից եւ հասարակական գործիչ։

1896–ի վերջերը, երբ, Բանկ Օթոմանից յետոյ, Պոլսի գրեթէ բոլոր աչքի ընկնող ընկերները հեռացել էին արտասահման, կուսակցութիւնը կարիք էր զգում մի հեղինակաւոր գործիչ մոցնելու Պոլիս։ Ցոնանը, հակառակ տկար առողջութեան, դնում է իր թեկնածութիւնը, եւ 1897 թ. սկիզբը արդէն նա Պոլսում ոգեւորութեամբ լծուած է կուսակցական աշխատանքի։ Առողջական վիճակը, սակայն, թոյլ չի տալիս երկար մնալու, եւ մի քանի ամսից յետոյ նա թողնում է Պոլիսը։

1898 ուսումնական տարւոյ սկզբին Ցոնանը նորից պաշտօնի է կոչւում Թաւրիզ, այս անդամ նորաբաց Թամարեան դպրոցում։ Նրա հետ է եւ Հորտանսը՝ վարժուհի նոյն դպրոցում։ Այր ու կին խանդավառ մթնոլորտ են ստեղծում աշակերտութեան մէջ եւ դուրսը՝ հասարակութեան շրջաններում։

1900–ին Ցոնանը վերադառնում է Զուիցերիա, որ նրա համար երկրորդ հայրենիք էր դարձել։ Ցաջորդ տարուանից, Թիֆլիսում, Հորտանսը պաշտօնավարում է Ցովնանեան օրիորդաց դպրոցում, իսկ Ցոնանը զբաղւում է կուսակցական աշխատանքներով։

1905–6 յեղափոխութեան տարիներին Ցոնանը Հ. Ց. Դ. Բիւրոյի պաշտօնաթերթ «Ցառաջ»ի խմբագրութեան անդամ է եւ գործում է կուսակցական ղեկավարութեան կազմի մէջ։

Հայ–Թաթարական կռիւների օրերին մեկնում է իր ծննդավայրը՝ Շուշի, ուր մեծապէս նպաստում է երկու հարեւան ժողովուրդների լարուած յարաբերութիւնների մեղմացման։

1908–ին Ցոնանը հրաւիրւում է Թաւրիզի նոր հիմնուած Կենտրոնական Դպրոցի տեսչի պաշտօնին, ուր դասաւանդում է եւ Հորտանսը, եւ այդ պաշտօնում մնում է մինչեւ 1913 թ., երբ մեկնում է Ժընեւ եւ այնուհետեւ մինչեւ մահ մնում է «Դրօշակ»ի խմբագրատունը։ Թոքախտը, որ բոյն էր դրել նրա կրծքում, երթալով զարգանում եւ ուժաթափ է անում նրան։ Վարակւում է եւ Հորտանսը։ Այդ զարմանալի զոյգը, ինչպէս յաջողութեան, այնպէս եւ դժբախտութեան օրերին կարծես մէկ մարմին, մէկ հոգի լինէր։ 1917–ին, Թոքախտից վախճանուեց Հորտանսը, իսկ մի տարի անցած, 1918 թ. Օգոստոսին, վերջին շունչը փչեց եւ Ցոնանը։

Ցոնանը բառի ամենաազնիւ իմաստով գաղափարական մտաւորական էր եւ անձնուէր հայրենասէր ու ժողովրդասէր գործիչ։ Լրջախոհ, հասուն մտքի եւ ջերմ սրտի տէր, անանձնական եւ անշահախնդիր, գիտակից եւ համոզուած հետապնդած նպատակին՝ նա Դաշնակցական եւ, ընդհանրապէս հայ մտաւորականութեան յաւագոյն տիպարն էր։

Նրա նման էր եւ իր կեանքի ընկերը՝ Հորտանը։ Ծագումով դուիցերիացի՝ նա ապրեց ու գործեց իբրեւ հայ։

Յովսէփ Արղութեանը, Ցոնանի մտերիմներից մէկը, գրում էր նրա մահուան առթիւ. «Մի եզակի մտերմութիւն եւ գաղափարական զգացմունք կարծես միացրել էր այդ զոյգին եւ կազմել մի ամբողջութիւն՝ հակումների, բնաւորութեան եւ ձգտումների։ Այդ է պատճառը, որ չի կարելի խօսել Ցոնանի մասին եւ չյիշել Տիկ. Հորտանին. նրանք անբաժան էին։ Որքան Հորտանը սիրում էր Ցոնանին, նոյնքան տածում էր անկեղծ սէր դէպի այն ժողովուրդը, որի արժանաւոր զաւակներից մէկն էր Ցոնանը։ Երեուան էլ վերջին ծայր համեստ ու բարի»*)։

ԿԱՐՕ ԵՒ ՄԱՐՕ

(ԱՐԻՍՏԱԿԷՍ ԶՕՐԵԱՆ ԵՒ ՄԱՐԻԱՄ ՄԱԿԱՐԵԱՆ)

Սրտառուչ վէպի կամ թատերգութեան նիւթ կարող է լինել այս երիտասարդ զոյգի կեանքի պատմութիւնը՝ այնքա՜ն յուզիչ ու ողբերգական իր վախճանով։

Կարօն — Արիստակէս Զօրեան — Ռոստոմի կրտսեր եղբայրն էր, ծնուած 1871 թուին Գողթն գաւառի Ցղնա գիւղում։ Ուսումը ստացել էր Զաքաթալայում, որի մօտ, Կախ աւանում, հայրը առեւտրական գործ ունէր։ Ապա սովորել էր Թիֆլիսի ռէալական դպրոցում, բայց առանց աւարտելու դուրս եկել՝ յեղափոխական ալեծուփ կեանքի ասպարէզը նետուելու համար։ Նրա վրայ մեծ ազդեցութիւն էին գործել ժամանակի հայրենասիրական տրամադրութիւններն ու Բաֆֆիի հերոսները, բայց, մանաւանդ, եղբայրը՝ Ռոստոմը։

Ռոստոմից շատ բան կար եւ Կարոյի մէջ՝ մարմնով ու հոգեպէս։ Միջահասակի մօտ, ամրակազմ, թիկնեղ, արտաքինով

---

*) «Հորիզոն», Թիֆլիս, 1918 թ., Սեպտ. 1։

գրաւիչ եւ բնաւորութեամբ մեղմ ու քաղցրաբարոյ երիտասարդ էր։ Գործնական մտքի տէր, աշխոյժ ու եռանդուն։

Ռէալական դպրոցից հեռանալով՝ Կարօն, եղբօր խորհրդով, մտաւ Գ. Ալոյեանի «Կովկաս» արհեստանոցը, ուր մէկուկէս տարի սովորեց զինագործութիւն՝ նպատակ դնելով, իբրեւ զինագործ վարպետ, ծառայել յեղափոխութեան։ Ալոյեանը եւ սրա ընկերակից Քաթանեանը եղան Կարօյի վարպետները։ Ալոյեանի հետ նա կապուեց մտերմութեան ջերմ կապերով եւ մինչեւ իր կեանքի վերջը գործեց նրա հետ ձեռք-ձեռքի եւ սիրտ-սրտի։

1891-ին, Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնի կողմից, Կարօն եւ Քաթանեանը ուղարկուեցին Թաւրիզ զէնքի արհեստանոց հիմնելու համար։ Քաթանեանը շուտով հեռացաւ ու քաշուեց յեղափոխական ասպարէզից։ Արհեստանոցի կազմակերպութեան եւ ղեկավարութեան գործը մնաց Կարօյի վրայ, որ ձեռնհասութեամբ գլուխ բերեց։ Եւ երբ, 1895-ին, Ալոյեանն էլ եկաւ Թաւրիզ, Դաշնակցութեան արհեստանոցը արդէն կազմակերպուած ու գործօն վիճակի մէջ էր։ Նոյնիսկ 1892 թ. խիստ քոլերայի շրջանին Կարօն չլքեց արհեստանոցը, որ Դաշնակցական խմբերին հրացաններ եւ ատրճանակներ էր մատակարարում։ Նա էլ բռնուեց քոլերայից, բայց իր երկաթէ կազմուածքի շնորհիւ յաղթեց հիւանդութեանը։

Դեռ Թիֆլիսում Կարօյի հսկողութեան յանձնուած էին Դաշնակցական զէնքի պահեստները, որտեղից նա զէնք էր ուղարկում Պարսկաստան։ Այնուհետեւ նա մի քանի անգամ Թաւրիզից անցաւ Կովկաս արհեստանոցի համար զէնք եւ ռազմանիւթ հասցնելու նպատակով։ Նրա հետ նոյն գործով զբաղւում էին եւ մի շարք ուրիշ ընկերներ, ինչպէս Մածուն Խէչօն, որոնց պաշտօնն էր զէնքի փոխադրութիւնը սահմանագլուխ, ապա՝ դէպի Երկիր, զանազան գծերով։

Ալոյեանի Թաւրիզ գալուց յետոյ, Կարօն երկար ճամբորդութիւն արաւ դէպի Թիֆլիս, Շուշի, Նուխի, Բագու, Ջուլա եւ Մոսկուա զէնքի հայթայթման գործով եւ արհեստանոցի համար ապահովեց նիւթ ու գրական միջոցներ։ 1896-ի սկիզբը նա նորից Թաւրիզում էր, գործի գլուխ արհեստանոցում, Գալուստ Ալոյեանի եւ տասնից աւելի զինագործ արհեստաւորների հետ։ Միաժամանակ եւ կենդանի մասնակցութիւն ունէր Թաւրիզի կուսակցական եւ հանրային կեանքում։

Ատրպատականի մայրաքաղաքը, ինչպէս եւ Սալմաստի շրջանը, 1892 թ. Ընդհ. ժողովից յետոյ, դարձել էին Դաշնակցութեան գործունէութեան կենտրոնական վայրեր։ Այնտեղ հաւաքուած էին մտաւորական եւ մարտական ուժեր — ուսուցիչներ,



ՄԱՐՕ ՄԱԿԱՐԵԱՆ

վարժուհիներ, զինագործներ, ֆէտայիներ, զէնք ու ռազմամթերք փոխադրողներ։ Այնտեղ պատրաստուում եւ Երկիր էին մտնում զինուած խմբեր եւ անհատ գործիչներ։ Իշխանը, Վարդանը, Նիկոլ Դումանը, Սաքօն, Զաքքին, բժ. Ֆ. Օհանեանը, Գ. Ալոյեանը, Ցոնան Դաւթեանը, Օր. Սաթենիկ Մատինեանը եւ շատ ուրիշներ տեղաւորուած էին, զանազան պաշտօններով, Թաւրիզում ու Սալմաստում եւ սահմանամերձ այլեւայլ վայրերում։ Պաշտօնները ապրուստ հոգալու եւ քօղարկուելու միջոց էին. իրօք՝ նրանց գլխաւոր գործը յեղափոխութիւնն էր, որպէս Դաշնակցութեան անդամներ։

Այդ խմբի մէջ էր եւ Օր. Մարիամ Մակարեանը — Մարօն, ակիզբը Թաւրիզում, ապա՝ Սալմաստում վարժուհի։

Մարօն Դերբենտ քաղաքից էր, ծնուած 1872-ին։ Մանկութիւնից որբացած՝ նա եղբայրների խնամքով մեծացաւ եւ ուսում ստացաւ տեղական Գիմնազիայում։ Աշակերտական հասակից ընկել էր հայրենասիրական շրջանակների մէջ։ Ցափշտակուած էր Բաֆֆիի վէպերով։ Աշակերտական խմբակներում ղեկավարի դեր էր կատարում՝ ընկերուհիներին էլ ներշնչելով հայրենասիրական զգացմունքներ։

Փխրուն կազմուածքով, բայց ուժեղ կամքի տէր աղջիկ էր։ Գեղեցիկ դիմագիծ, խոշոր, թափանցող աչքեր, աննման ժպիտ շրթունքներին եւ, հակառակ կաղութեան, խանդավառ, շէնչող ու զուարթ բնաւորութիւն — Մարօն աշխոյժ կեանք էր ստեղծում ամէն տեղ։ Նրա երազն էր անցնել Երկիր՝ յեղափոխական գործօն կեանքի ասպարէզը։

Եւ այդպէս էլ արաւ։ 1892-ին անցաւ Թաւրիզ, իբրեւ վարժուհի։ Եւ առաջին օրից իսկ իր վրայ դրաւեց ամէնքի ուշադրութիւնը։ Դպրոցում եւ դուրսը նա եռանդով աշխատում էր՝ թէ՛ կուսակցական խմբերում եւ թէ՛ կանանց շրջանում։ Ընդունուեց Դաշնակցութեան կոմիտէի կազմի մէջ։ Հոգածու քոյր դարձաւ

երկիր մեկնող ու վերադարձող հայդուկների համար։ Մասնակցեց եւ սահմանադրուխ դէնք փոխադրելու գործին։

Նոյն եռանդն ու ոգեւորութիւնը ցոյց տուեց Մարօն եւ Սալմաստում, որտեղ փոխադրուեց 1894–ին, վարժուհու պաշտօնով։ Իր հետը Սալմաստ տարաւ եւ մի ջերմ զգացմունք, որ խնամքով գաղտնի էր պահում ամէնքից։ Սիրոյ զգացմունքը նրա եւ Կարոյի միջեւ։ Երկու սիրող սրտեր՝ գաղափարակից ու հոգեկից։ Բնականոն պայմաններում այդ սէրը երջանկութիւն պիտի խոստանար երկուսին էլ։ Մեր նզովեալ կեանքում նա վերջացաւ ողբերգութեամբ։

1896–ին, Թիֆլիսում գումարուած Ռայոնական Ժողովը որոշեց զինուած խմբով մեծ արշաւանք կազմակերպել դէպի Վասպուրական, ի միջի այլոց, նաեւ պատժելու համար Խանասորի շրջանի քրտական Մազրիկ ցեղին, որ դլխաւոր ջարդարարը եղաւ Վանի «Մեծ Դէպքից» յետոյ դէպի Պարսկաստան նահանջող յեղափոխականների ու ժողովրդի։ Շատերը, ինչպէս Իշխանը, Վարդանը, Վանի ընկերները, հակառակ էին այդ ձեռնարկին։ Համամիտ չէր եւ Կարօն։ Բայց որոշումը որոշում էր եւ պէտք է գործադրուէր։ Կարօն մի պահ հրաժարուեց եւ անցաւ Կարսի շրջանը՝ մի այլ վայրում գործելու նպատակով, բայց, ի վերջոյ, Քրիստափորի եւ ուրիշ ընկերների ստիպումի վրայ վերադարձաւ Պարսկաստան։

Ըստ երեւոյթին, Կարոյի հակառակութիւնը արշաւանքին Մարոյին մտածել էր տուել, թէ նրանց սէրն էր Կարոյի այդ վարմունքի պատճառը։ Անշուշտ, դիւրին չէր զոհել սիրոյ զգացումը եւ երթալ դէպի մահ, բայց Կարօն այն մարդկանցից չէր, որ անհատական ապրումներով պայմանաւորէր յեղափոխական գործը. նա, ինչպէս եւ ուրիշներ, օգտակար չէր դտնում արշաւանքը։ Յամենայն դէպս, Մարօն այդպէս էր զդում ու մտածում եւ տառապում էր հոդեպէս։ Ցայտնե՞լ է արդեօք նա իր մտածումները Կարոյին. գիտէ՞ր վերջինս Մարոյի ապրած տանջանքների մասին — որեւէ փաստ չկայ։ Գիտենք միայն, որ Մարօն դարձել էր վըշտահար, թախծոտ ու խորհրդաւոր։ Անհետացել էր նախկին զուարթութիւնն ու կենսուրախութիւնը։ Կարոյի վրայ էլ ընկերները նկատում էին տխրութիւն, մելամաղձոտ տրամադրութիւն։

Սէր եւ հայրենիք իրար էին բախում։ Ո՞ւր էր ելքը։ Ելքը Մարոյի համար պարզ էր։ Նա չէր կարող թոյլ տալ, որ սիրած երիտասարդը իր պատճառով դաւաճանի հայրենիքին։ Եթէ ինքն էր խոչընդոտը, ապա պէտք էր մէջտեղից վերցնել այդ խոչընդոտը։ Եւ 1896 թ. Դեկտ. 2–ին, ընկերները դտնում են նրան անշունչ՝

ԿԱՐՕ—ԱՐԻՍՏԱԿԷՍ ԶՕՐԵԱՆ

անկողնի վրայ. կողքին ընկած էր իր սիրած ատրճանակը, որի գնդակը ծակել էր նրա սիրտը...

Մահուանից առաջ Մարօն գրել էր առանց հասցէի մի նամակ, որի մէջ ասուած էր. «Դո՛ւ, որ Հայաստանի ազատութեան գործը գերադասեցիր, քան իմ եւ քո անձնական երջանկութիւնը, դո՛ւ, որ սէրդ զոհեցիր աւելի բարձր գաղափարական սէրի, կատարիր խօսքդ՝ անձդ զոհ դիր հայրենեաց սուրբ սեղանի վրայ: Լեցուի՛ր թունաւոր վրէժխնդրութեամբ Բարկէն Սիւնիի նման: Կատարի՛ր վերջին կռակս. դրանով միայն կը հանգստանան ոսկորներս գերեզմանի մէջ: Ես այնքան քաջութիւն ունեցայ, որ կարողացայ կրակի տալ քո եռեւից բոլոր նաւերը. այսուհետեւ դու բոլորովին ազատ ես. գործի՛ր. ների՛ր ինձ: Բիւր համբոյրներ: Վերջին բարեւներս բոլոր ընկերներին»:

Ընկերները չիմացան, թէ ում են ուղղուած այս խօսքերը, բայց կարօն գիտէր: Եւ հնազանդուեց նրա պատուէրին — հետեւել Բարկէն Սիւնիի օրինակին: Բարկէն Սիւնին Մարօյի պաշտամունքի առարկան էր. նրա պատկերը միշտ կախուած էր իր սեղանի գլխին:

Սրտառուչ յուղարկաւորութիւն կատարեցին ընկերները:

«Պարզ օր է, գրում էր «Դրօշակ»ի թղթակիցը: Արեւը այրելու չափ տաքացնում է՝ չնայած, որ ամէնուրեք ձեան ապիտակ սաւանը ծածկած էր հասա չերտով: Զանգակները տխո՛ւր հնչում են: Գիւղի տղամարդիկ ու կանայք շրջապատել են մի կարմիր գազաղ, որը հայդուկները տանում են դէպի բլուրի գագաթը՝ գերեզմանատուն: Սկսած հսկայ Արտօսից մինչեւ Կովկաս ներկայացուցիչ կար նրանց մէջ՝ քէոլոգաւոր, չուր-քեազախաւոր, փաստակաւոր, չուխաւոր՝ յուղարկաւորում են իրենց սիրելի «Դադոյին», որն այնքան քրտինք է թափել եւ նեարդեր մաշել Հայրենիքի հայդուկ-գինուորների համար: Սրանք զգում են, որ իրենց զոհուած քրոջ տեղը ոչ ոք չէ բռնելու: Աբցունքն առատ թափւում է խորշոմած երեսների վրայ, եւ կոշտացած բռունցքն անկարող է սրբել»:

«Դրօշակ»ն եւս ջերմ խօսքեր նուիրեց Մարօյին՝ այդ «խելացի, խոշոր, սեւ աչքերով» աղջկան, որի «կրակոտ խօսքերը լսողների մէջ եռանդ էին յարուցանում»: Ռոստոմն էր գրողը, որն անտեղեակ էր, թէ ինչ ողբերգութիւն ապրեցին այդ «խելացի աղջիկը»եւ իր սիրելի ու գժբախտ եղբայրը:

Իր յուշատետրում Մարօն գրել էր. «Աղջկայ կոչումն է համեստութիւն, քաղցրութիւն եւ պարզութիւն»: Այդ բոլորը նա ունէր, բացի խաղաղութիւնից: Խաղաղութիւն չտեսաւ նա կեանքում. անխաղաղ եղաւ եւ իր վախճանը:

Կարօն ներկայ չէր Մարոյի յուղարկաւորութեան։ Նա Թաւրիզում էր, գործի վրայ։ Եւ չգիտենք, թէ ինչպէս ազդեց նրա վրայ Մարոյի մահուան լուրը։ Ընկերները, սակայն, վկայում են, որ նա, Մարոյի եղերական մահից յետոյ, բոլորովին տարբեր մարդ դարձաւ. ամփոփուեց ինքն իր մէջ եւ այլեւս առաջուայ չէն եւ ուրախ Կարօն չէր։ Բայց մի վայրկեան իսկ չթերացաւ իր գործերի մէջ։ Արհեստանոցը բուռն թափով ղէնք էր պատրաստում, Խանասորի արշաւանքի համար, եւ Կարօն մղիչ ոյժն էր աշխատանքի։

Մայիսի սկիզբը, երբ արդէն բաւականաչափ զէնք ու ռազմամթերք ուղարկուած էր, Սալմաստ է մեկնում Գ. Ալոյեանը, իսկ երկու շաբաթ անցած՝ նաեւ Կարօն։ Սալմաստում արդէն հաւաքուած էին մի քանի հարիւր մարտիկներ ու ղեկավարներ՝ արշաւանքին ձեռնարկելու համար։ Միեւնոյն ժամանակ բուռն վէճեր էին տեղի ունենում արշաւանքին կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ։ Կարօն կարծիքը չէր փոխել. նա էլ հակառակորդների մէջ էր եւ պնդում էր, որ փոքր խմբերով զինուած հայդուկներ մտցուին Երկիր՝ տեղական ուժերի հաւանութեամբ ու մասնակցութեամբ յեղափոխական գործողութիւններ անելու համար։ Պնդում էր, որ, առաջին հերթին ինքը ուղարկուի Երկիր։ Բայց Թիֆլիսից եկած Բիւրոյի ներկայացուցիչ Ց. Շահրիկեանը յաջողում է վերջ տալ տարակարծութիւններին եւ ընդհանուր համաձայնութեամբ գլուխ բերել արշաւանքը։

Արշաւանքը կազմակերպւում է։ Կարօն նշանակւում է հարիւրապետի օգնական։ Յուլիս 25-ի լուսաբացին, Արաուլի բարձունքներից, տեղի է ունենում յարձակումը Խանասորի դաշտի վրանաբնակ մազրիկ ցեղի վրայ։ Արագ եւ կտրուկ հարուածից յետոյ, արշաւախումբը յաղթական վերադառնում է Պարսկաստան՝ զոհ տալով 19 թանգագին ընկերներ, որոնց մէջ էր եւ Կարօն։ Նա դանւում էր նահանջը պաշտպանող վերջապահ խմբում եւ շատերի կեանքը փրկեց, բայց ինքը զոհուեցաւ։ Նրա զինակիցների վկայութեամբ՝ տարապայման հոգեկան վիճակում էր ամբողջ ժամանակ եւ կարծես մահ էր փնտրում...

ՍԵՐՈԲ ԱՂԲԻՒՐ

Սերոբ Աղբիւրը Ախլաթ գաւառի Սոխորդ գիւղացի Վարդանեան հարուստ եւ անուանի ընտանիքի չորս եղբայրներից կրտսերն էր՝ ծնուած 1864 թուին։ Մեծ եղբայրը՝ Մխոն գիւղի ռէսն էր՝ յարգուած եւ ազդեցիկ մարդ։ Սոխորդում դպրոց չկար այն ժամանակները, եւ Սերոբը իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անցկացրեց ազատ բնութեան ծոցում։ Առողջ, բնաւորութեամբ անվախ ու քաջ՝ նա սիրահար էր ձիու, զէնքի եւ որսորդութեան, իսկ 20–21 տարեկան հասակից սկսում է հետաքրքրուել եւ ազգային խնդիրներով՝ Պոլսից վերադարձած եւ այնտեղի հայրենասիրական շարժումներից տպաւորուած հօրեղբօր՝ Առաքելի ազդեցութեան տակ։ Մի օր, Նեմրութի անտառներում, որսի ժամանակ, Սերոբը հանդիպում է երկու քիւրտերի, որոնք ուզում են խլել նրա ձին։ Սերոբը սպանում է մէկին եւ ոստիկանական հետապնդումներից ազատուելու նպատակով, եղբօր օգնութեամբ, անցնում է Պոլիս։ Այնտեղից էլ տեղափոխւում է Ռումանիայի Սուլինա քաղաքը, ուր մեծ թուով հայ պանդուխտներ էին համախմբուած։

ՍԵՐՈԲ ԱՂԲԻՒՐ

Սուլինայում Սերոբը բաց է անում սրճարան, որ ժամադրավայր է դառնում հայրենակարօտ պանդուխտների համար։ Հընչակեան–Դաշնակցական սուր պայքարի տարիներ էին. Սերոբի

ՍԵՐՈԲԻ ԶԻՆՈՒՈՐ ԲԱԼԱԲԵԽ ԿԱՐԱՊԵՏԸ

սրճարանում էլ կուսակցական վէճերը անպակաս էին։ Սերոբը ուշադրութեամբ հետեւում էր բանավէճերին, երբեմն իր կարծիքն էր յայտնում՝ բնածին ուշիմութեամբ եւ սրամտութեամբ։ Եւ նրա համակրանքը հետզհետէ թեքւում էր դէպի Դաշնակցութիւնը։

1894-ին, Տարօնից, Կովկասի վրայով, Սուլինա է գալիս Հրայր-Դժոխքը, ուր շրջապատւում է պանդուխտ հայրենակիցներով։ Նա պատմում է Սասունի դէպքերի մասին եւ յորդորում զէնք ձեռք բերել եւ զինուած վերադառնալ հայրենիք։ Հրայրի խօսքերի ազդեցութեան տակ սկսւում է պանդուխտների վերա-

դարձի շարժում, որին նպաստում է եւ այդ օրերին բորբոքուած քոլերայի համաճարակը։ 1895 թ. աշնան 27 հոգինոց զինուած խմբով Կովկաս է մեկնում նաեւ Սերոբը եւ այնտեղից, Դաշնակցական մարմինների աջակցութեամբ, անվտանգ հասնում է Ախլաթ։

Ախլաթը Վանի լճի եւ Նեմրութի, Գրգուռի ու Ռահվա անապատի միջեւ ընկած, 35 գրեթէ զուտ հայաբնակ գիւղերից բաղկացած, համեմատաբար, բարեկեցիկ եւ քաջ բնակչութեամբ մի գաւառ էր՝ շրջապատուած մոտկանցի, խութցի, չուխուրցի ու խիզանցի քրտերով եւ մանազկերտցի ու բուլանըխցի չէրքէսներով։ 1895-ի կոտորածների օրերին սրանք փորձեցին ասպատակել ու թալանել Ախլաթի հայ գիւղերը։ Սերոբի խումբը ճիշդ ժամանակին էր հասել։ Նրա ղեկավարութեամբ արագ կերպով կազմակերպուեց շրջանի ինքնապաշտպանութիւնը։ Բոլոր գիւղերում, Սերոբի հայդուկների շուրջ համախմբուեցաւ տեղական երիտասարդութիւնը, իսկ ինքը Սերոբը մի քանի ընկերներով շրջում էր գիւղից գիւղ՝ հսկելով ապահովութեան վրայ։ Քիւրտերի եւ չէրքէսների բոլոր ճիգերը աւարի եւ աւերի մատնելու Ախլաթի հայ գիւղերը, անցան ապարդիւն չնորհիւ Սերոբի ձեռք առած միջոցների։ Ախլաթը չենթարկուեց այն աղէտին, որին ենթարկուեցին հայկական ուրիշ շրջաններ։

Այդ օրերից սկսուեց եւ Սերոբի հերոսական համբաւը։ Ուսեալ մարդ չէր նա. հազիւ կարդալ-գրել գիտէր, բայց օժտուած էր ուժեղ մտքով եւ հզօր կամքով։ Առնական եւ քաջ էր, տաղանդաւոր կազմակերպիչ ու ղեկավար։ Բնութիւնից ստեղծուած էր, կարծես, մարդկանց առաջնորդելու համար։ Դաժան լինելու աստիճան խիստ էր կարգապահական հարցերում։ Ահարկու եւ անողոք էր մատնիչների, վաշխառուների, կեղեքիչ պաշտօնեաների հանդէպ։ Մարդաճանաչ էր եւ գիտէր լաւ գործակիցներ եւ հաւատարիմ զինակիցներ ընտրել։ Նրա խմբի մէջ էին, հռչակաւոր շատ ֆէդայիներ, ինչպէս Ճարտարը, Բիթլիսցի Մուշեղը, Բալաբեխ Կարապետը, Զուլումաթը, Առիւծ Աւագը, Առաքելը, Նատոն եւ ուրիշներ։ Կարճ ժամանակով Սերոբի զինուոր է եղել եւ Անդրանիկը։

Շրջանը կոտորածի վտանգից փրկելուց յետոյ՝ Սերոբը անցնում է կազմակերպական աշխատանքի։ Նրա ջանքերով ստեղծուում է Սալնոյ Զորի Կենտր Կոմիտէութիւնը, որի կազմի մէջ էին մտնում Ախլաթի, Կիւղէլտէրէի եւ Բաղէշի շրջանները։ Բոլոր գիւղերում կազմուում են ինքնապաշտպանութեան մարտական խմբեր։ Սերոբը մեծ ուշադրութիւն է դարձնում շրջանի զինման

վրայ. յաճախ բռնութեամբ ստիպում է ունեւոր գիւղացիներին գէնք գնել եւ Կովկասից էլ գէնք է ստանում մարտական խմբերի եւ ժողովրդի զինման համար: Եւ Սերոբի հմուտ ղեկավարութեան տակ Ախլաթ-Բաղէշում ուժեղ կազմակերպութիւն է ըստեղծուում:

Կառավարութիւնը, բնականաբար, չէր կարող հանդուրժել Սերոբի ներկայութիւնը Ախլաթում: Նա մի քանի անգամ փորձեց ձեռք ձգել Նրան, Սոխորդ գիւղը ենթարկուեց խուզարկութիւնների ու թալանի. Սերոբի ոէս եղբայրը եւ կինը ձերբակալուեցին եւ Մուշի բանտը նետուեցին, քար ու քանդ եղաւ Վարդանեան չէն տունը, բայց կառավարութիւնը իր նպատակին չհասաւ: Սերոբը մնաց ազատ լեռներում՝ ահ ու սարսափ տարածելով բռնակալ իշխանութեան, քիւրտ հարստահարիչների եւ ամէն տեսակ մատնիչների ու դաւաճանների վրայ: Նրա ղեկավարութեամբ, իրար յետեւից, շարաչար պատժուեցին մի շարք մատնիչներ, ժողովրդին կեղեքող ոստիկաններ ու պաշտօնեաներ: Նրա հովանաւորութիւնը վայելում էին ոչ միայն հայ, այլեւ մահմեդական աշխատաւոր գիւղացիները, որոնց մէջ եւս մեծ էր Սերոբի հըռչակը: Անպատիժ չէին մնում եւ հայ գիւղերի վրայ յարձակում գործող քիւրտ աշիրէթները: Այսպէս, 1907-ին, Թեղուտ գիւղը թալանելու եկած հասնանցի քիւրտերը հանդիպեցին Սերոբի բուռն դիմադրութեան եւ շարաչար պարտուած փախան: Նման դէպքեր պատահեցին եւ ուրիշ գիւղերի վերաբերմամբ:

1897-ի սկիզբները դժգոհութիւն առաջ եկաւ հայդուկների մէջ: Սերոբը իր կնոջ՝ Սօսիին էլ պահում էր իր մօտը, լեռներում, մինչ հայդուկներից շատերի ընտանիքները մնացել էին իրենց գիւղերում՝ վտանգի ենթակայ: Ընտանիքի ներկայութիւնը, յաճախ, դժուարացնում էր Սերոբի խմբի շարժումները. հայդուկները պահանջում էին, որ Սերոբը իր ընտանիքը հեռացնէ ուրիշ՝ ապահով մի վայր, բայց Սերոբը չէր համաձայնուում: Այս դեռնի վրայ սուր տարակարծութիւններ ստեղծուեցին: Այս անհամաձայնութիւնները հարթելու եւ, առհասարակ, Ախլաթ-Բաղէշ-Տարօնի շրջանում աշխատելու համար, 1897-ի ամառը Ախլաթ եկաւ, իբրեւ կուսակցութեան ներկայացուցիչ, Գուրգէնը: Թէեւ դժգոհութիւնները բոլորովին չվերացուեցին, բայց Գուրգէնի ներկայութիւնը որոշ չափով մեղմացրեց կրքերը եւ նոր թափ տուեց շրջանի կազմակերպական աշխատանքին: Սերոբն ու Գուրգէնը, սիրով ու համերաշխ, վերակազմում եւ ամուր հիմքերի վրայ են դնում Բաղէշի շրջանը: Սերտ գործակցութիւն են հաստատում Տարօնի հետ, ուր կենտրոնական ղեկավար դէմք էր դարձել Հրայրը: Սերոբ Աղբիւր, Գուրգէն, Հրայր գործում են

ձեռք–ձեռքի՝ փոխադարձաբար այցելելով նաեւ երկու շրջանները։

Գուրգէնը Ախլաթ–Բաղէշի շրջանում իր գործը լրացնելուց յետոյ՝ անցնում է Սասուն։ Սերոբը շարունակում է յեղափոխական աշխատանքը Ախլաթի շրջանում։ Գուրգէնի հեռանալուց յետոյ, նորից, աւելի սուր ձեւով, արծարծւում են դժգոհութիւնները հայդուկների մէջ, որոնց մի մասը բաժանւում է նրանից։ Սերոբի համար ստեղծւում է դժուար կացութիւն։ Միւս կողմից՝ կառավարական հետապնդումներն էլ երթալով սաստկանում են։ Բաբշէն գիւղի մեծ կռուից յետոյ, 1898 թ. Հոկտեմբերին, ուր թշնամին ծանր կորուստներ ունեցաւ, Սերոբը այլեւս չկարողացաւ մնալ Ախլաթում եւ ընտանիքով ու մի քանի մարտիկներով անցաւ Սասունի լեռները, ուր 1899–ին, Գէլիգուզան գիւղում, կառավարութեան ձեռքին գործիք դարձած մի քանի դաւաճան հայերի կողմից թունաւորուեց եւ սպանուեց գիւղը պաշարած ասկեարների ձեռքով։ Սպանուեցին նաեւ իր մէկ եղբայրը եւ հեռը եղած մի քանի ընկերները։ Կինը՝ Սօսին վիրաւոր՝ գերի տարուեց։ Սերոբի գլուխը կտրուեց եւ տարուեց Մուշ ի ցուցադրութիւն ամբոխին։ Կառավարութիւնը եւ մահմեդական խուժանը հանդէս ու խրախճանք սարքեցին Սերոբի մահուան առթիւ, մինչ հայերը սգի մէջ էին։

Սերոբի սպանութիւնից յետոյ՝ նրա գործակից հայդուկների մի մասը ցրուեց զանազան կողմեր. ոմանք էլ մնացին Ախլաթում, շարունակեցին գործել եւ հետզհետէ զոհուեցին կռիւներում. Ճարտարը մի շարք ընդհարումներից յետոյ, ընկաւ Գրգուռի բարձունքներում. Մուշեղը, որ քաջութիւնների մասին երգեր էին յօրինել քիւրտերը, երկու ընկերների հետ դաւադրաբար սպանուեց քիւրտերի ձեռքով, երբ հիւր էր դաւաճան հայ ընտանիքիքում։

Ինքնարոյս տաղանդ էր Սերոբը՝ աւելի նպաստաւոր պայմաններում մեծ առաջնորդ լինելու սահմանուած։ Ուժեղ անհատականութիւն, կազմակերպական բարձ կարողութիւն, հզօր ու վճռական կամք, աներեր բազուկ, միեւնոյն ժամանակ զգայուն սիրտ ու մեծ սէր դէպի իր ազգը, եւ, առհասարակ, դէպի ճնշուած ու հարստահարուած ժողովուրդը, բուռն ատելութիւն բռնութեան եւ բռնակալների հանդէպ — ահա Սալնոյ Զորի առիւծ Սերոբ Աղբիւրը, որին մեծարելու համար ժողովուրդը «փաշա» տիտղոսն էր տուել եւ որին բանաստեղծը այնպիսի՛ ջերմ տողեր էր նուիրել.

Նեմրութայ սարը հաղար ակ ունի,
Հաղարն էլ Մշու դաշտն ի վար կ'երթայ.

Մենակ Աղբուրի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կ'երթայ —
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ վաթանի սրտի մէջ կ'երթայ...

ԱՆԴՐԱՆԻԿ

Մայր բնութիւնից եւ բախտից պարգեւատրուած բացառիկ անհատներից էր Անդրանիկը եւ բացառիկ վիճակի արժանացաւ նա հայոց պատմութեան մէջ: Եթէ ժողովրդական կամ ազգային հերոս բառը որոշ իմաստ ունի, Անդրանիկը եղաւ բառիս ամենալայն մտքով ազգային հերոս, որի ճակատը դափնէ պսակով զարդարեցին «Հայոց Կուսանք» եւ հայ աշուղները փառքի երգեր ձօնեցին նրան:

Ինչպէս մեր բոլոր հերոսները, Անդրանիկն էլ համեստ ծագում ունէր. ծնուած էր1866 թ., Շապին Գարահիսարցի ատաղձագործի մի ընտանիքում: Տարրական ուսում առնելով՝ ինքն էլ հետեւեց ատաղձագործութեան արհեստին: 17 տարեկան հասակին ամուսնացաւ եւ հազիւ մի տարի անցած այրիացաւ: Այնուհետեւ պսակուեց հայրենիքի հետ:

Պատանի հասակից սկսած Անդրանիկը աչքի էր ընկնում ուշիմ եւ ըմբոստ բնաւորութեամբ: Խաղընկերների հետ միշտ առաջնորդողի դերում էր. մեծ տենչ ունէր նախաձեռնելու, իշխելու եւ հրամայելու:

Իննսնական թուականների սկիզբը արդէն Անդրանիկը յեղափոխական խմբակի մէջ էր՝ Վռամշապուհ քահանայի (հետագային եպիսկոպոս Փարիզում) գլխաւորութեամբ: Մատնութեան հետեւանքով, սակայն, ձերբակալւում է եւ բանտից ազատուելով՝ մեկնում է Պոլիս, ուր շարունակում է իր ատաղձագործական արհեստը: Պապը Ալիի ցոյցից յետոյ, անցնում է Կովկաս՝ Երկիր մեկնող հայդուկային խմբերին միանալու նպատակով: 1897 թ. Յուլիսին, Վաղդէնի խմբի հետ, Սալմաստից մտնում է Վան, այնտեղից՝ Ախլաթ ու Տարօն, ուր մի քանի տարի, իբրեւ պարզ զինուոր, գործում է Սերոբ Աղբիւրի եւ Գուրգէնի խմբերում՝ մասնակցելով բազմաթիւ կռիւների, մասնաւորապէս, Առաքելոց վանքի պատմական կռուին: Ի միջի այլոց, Անդրանիկի եւ մի քանի հայդուկների գործն էր Աղբիւր Սերոբի սպանիչ Պշարա Խալիլի ահաբեկումը:



ԱՆԴՐԱՆԻԿ

Անդրանիկի անունը, սակայն, առանձնապէս լայն հռչակ ստացաւ 1904–ին, երբ նա իր զինակիցների կողմից ընտրուեց Սասունի ազատամարտի ղեկավար: Իր հետ էին անուանի հայդուկներ՝ Սեբաստացի Մուրատը, Գէորգ Չաուշը, Սեպուհը, Կայծակ Առաքելը, Սէյտօ Պօղոսը, Կիւմիւշխանեցի Աւօն եւ այլ կըտրիճ մարտիկներ, ինչպէս նաեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ Վահանը, Հրայր Դժոխքը եւ ուրիշներ: Անդրանիկը արժանացաւ ընդհանուր խմբապետութեան մեծ պատուին իր մարտական եւ կազմակերպական շնորհքների պատճառով: Նա զինուորական էր ծնած եւ հայդուկային–խմբական կռիւները նրա բնական տարերքն էին կազմում: Անվախ, յանդուգն, նախաձեռնող, ուժեղ կամքի եւ երկաթէ բազուկի տէր, պաղարիւն եւ տեսանող ու պայմաններին արագ յարմարուող եւ անհնարին կացութեան մէջ իսկ շուտով ելք գտնող՝ Անդրանիկը ստեղծուած էր պատերազմի եւ հրամանատարութեան համար: Իր վագրանման արտաքինն էլ նպաստում էր այդ դերին: Դաժան ու երկաթէ կարգապահութիւն պահանջող կռիւներում եւ ընկերական՝ խաղաղութեան օրերին:

Սասունի ազատամարտը ճնշուեց. շատ մարտիկներ, որոնք չտապեցին «օգնելու Անդրանիկին», նահատակուեցան: Եւ եթէ Սասունի կռուող ուժերն էլ չոչնչացան, Անդրանիկի արտակարգ հնարամտութեան պէտք է վերագրել նրանց ազատութիւնը:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ

ճեղքելով թշնամու շղթան, Անդրանիկը եւ ընկերները անցան դէպի Ախլաթ, նաւ նստան եւ ապաստանեցան Աղթամար կղզին, որտեղ կռիւ ունեցան թուրք զինուորների հետ եւ, խաբելով թշնամուն, նաւով հասան Վան ու այնտեղից՝ Պարսկաստան ու Կովկաս:

Սասունի հերոսական կռիւները արտասովոր հմայք առաջ բերին ժողովրդի մէջ Անդրանիկի անուան շուրջ: Նա դարձաւ մի տեսակ խորհրդանիշ՝ յեղափոխական մարտիկների բոլոր առաքինութիւնների ու քաջագործութիւնների: «Անդրանիկը քաջ» Դաշնակցական հայդուկի տիպար էր ժողովրդի աչքին: Նրա արեւով երդւում էին. նրա անունն էին տալիս նոր ծնուած մանչերին:

Կովկասից Անդրանիկը անցաւ արտասահման՝ ապրելով մերթ Ժընեւում, մերթ Եգիպտոսում, մերթ Բուլգարիայում՝ մասնակցելով Դաշնակցութեան կարեւոր ժողովներին ու ձեռնարկներին: Ժընեւում նա թելադրեց իր յուշերը, որոնք յետոյ լոյս տեսան «Հայրենիք» ամսագրում: Ֆիլիպէում, Ռ. Զարդարեանի աջակցութեամբ, կազմեց «Մարտական Հրահանգները», որոնք հրատարակուեցին «Դրօշակ» մատենաշարում: 1907-ին մասնակցեց Հ. Յ. Դ. Զորրորդ Ընդհ. Ժողովին, Վիեննայում, Վարդանի, Նիկոլ Դումանի, Մուրատի, Սեպուհի, Սաքոյի եւ ուրիշ խմբապետների հետ միասին:

Օսմանեան Սահմանադրութիւնը չոգեւորեց Անդրանիկին. նա չէր հաւատում թուրքերի անկեղծութեան, ոչ էլ նրանց բարենորոգուելու ընդունակութեան: Կարճատեւ այցելութիւնից յետոյ Պոլիս՝ նա վերադարձաւ Բուլգարիա, ուր, 1912-ին, Բալկանեան պատերազմի օրերին, կազմեց կամաւորական խումբ եւ մասնակցեց պատերազմին թուրքերի դէմ:

1914-ի ամառը, երբ սկսուած էր համաշխարհային պատերազմը, Անդրանիկը, պատասխանելով Հ. Յ. Դ. Բիւրոյի հրաւէրին, փութաց Թիֆլիս, ուր դործօն մասնակցութիւն ունեցաւ կամաւորական դնդերի կազմութեան մէջ եւ ստանձնեց առաջին դնդի հրամանատարութիւնը՝ անցնելով պարսկական ճակատ, ուր մասնաւորապէս մեծ հմտութեամբ վարեց Դիլմանի ճակատամարտը եւ հետապնդեց Խալիլ փաշայի նահանջող զօրամասերին: Այնուհետեւ, նահանջի ու յառաջխաղացման օրերին, մերթ ռազմաճակատում, մերթ թիկունքում, մերթ ոգեւորուած ու դործօն, մերթ դժդոհ ու հոգեկան խռովքի մատնուած, շարունակեց մնալ հայ կեանքի առաջաւոր դիրքերում, մինչեւ կամաւորական դնդերի լուծումը եւ մինչեւ ցարական դահի խորտակումը, 1917 թ. Փետրուարին:

Հայ ժողովրդին բաժին հասած աղէտները չափազանց ծանր

աղղեցին Անդրանիկի մտքի ու հոգու վրայ։ Եղան պահեր, երբ նա կորցրեց հոգեկան հաւասարակշռութիւնը, բայց հայրենիքի սէրն ու զօրաւոր կամքը թոյլ չտուին, որ հեռանայ ու քաշուի ազգային գործերից։

Կամաւորական գնդերի լուծումից յետոյ, որոշ ժամանակ անցած, Անդրանիկը նորից անցաւ գործի՝ զբաղուելով առաւելապէս արեւմտահայութեան վերաբերող կազմակերպական, հոգատարական եւ պաշտպանութեան հարցերով։ Իրեն յայտարարեց հրաժարուած Դաշնակցութիւնից, ձեռնարկեց «Հայաստան» թերթի հրատարակութեան, մասնակցեց արեւմտահայ համագումարներին եւ Ազահովութեան Խորհրդի աշխատանքներին, իբրեւ Հայկական Զօրաբաժնի հրամանատար, զօրավարի աստիճանով գնաց ճակատ, բայց տարերային թափով զարգացող դէպքերը այլեւս վեր էին մարդկային ուժերից։ Կարինի անյաջող պաշտպանութիւնից յետոյ, Անդրանիկը նահանջեց Կովկաս եւ մերժելով նորաստեղծ Հանրապետութեան ճանաչումը, իր զօրամասով, անցաւ դէպի Պարսկաստան՝ կամենալով միանալ անգլիական բանակի հետ։ Այս ձեռնարկում էլ ձախողեց. վերադարձաւ Զանգեզուր եւ պաշտպանեց այս շրջանը, մինչեւ անգլիացիների երեւումը, որոնց ստիպումով հեռացաւ Էջմիածին։ Այստեղ իր զօրամասը ցրեց, զէնքն ու ռազմամթերքը յանձնեց կաթողիկոսին եւ չկամենալով ապրել նորազատ Հայաստանում՝ մեկնեց արտասահման, ի վերջոյ, հաստատուելով Քալիֆորնիայի Ֆրէզնօ քաղաքում, ուր եւ վախճանուեց 1927 թ., Օգոստ. 31-ին։ Իր վերջին խօսքը եղաւ՝ «Գործս կէս մնաց»...

Տխուր եղան Անդրանիկի կեանքի վերջին տարիները։ Արծիւը չէր կարող երջանիկ լինել հաւանոցում։ Անքաւելի վրիպումներ ունեցաւ հայրենիքի եւ իր իսկ անձի հանդէպ։ Ժողովուրդը, սակայն, ներեց այդ ամէնը եւ շարունակում է ու պիտի շարունակէ նուիրումով ու պաշտամունքով յիշել նրա հերոսական անունը։ Ու երգել—

Իբրեւ արծիւ սաւառնում ես սարէ-սար...

Անդրանիկի աճիւնները այժմ հանգչում են Փարիզի Փէր Լաշէզ գերեզմանատանը, Գրիգոր Օտեանի, Ա. Ահարոնեանի, Ա. Խատիսեանի դամբաններից ոչ հեռու։ Նրա փափաքն էր թաղուել Հայաստանում, բայց Հայաստանի նոր վարիչները մերժեցին կատարել նրա բաղձանքը՝ «յիւրսկն եկ եւ իւրքն զնա ոչ ընկալան»...

ՏԻԳՐԱՆ ՏԷՐՈՅԵԱՆ

ՎԱԶԳԷՆ

Վազգէնը, բուն անունով Տիգրան Տէրոյեան, ծնուել էր Վանում, 1873-ին, արհեստաւորի ընտանիքում։ Ցանկոյների նախակրթարանը աւարտելուց յետոյ, մտել էր Փորթուգալեանի Հայկազեան-Կենտրոնական դպրոցը, որ հայրենասիրական-յեղափոխական խմբումների հնոց էր այն օրերին։ Այստեղ հասունացաւ այն սերունդը, որ ծնունդ տուեց Արմենականութեան։ Վազգէնն էլ դաստիարակուեց նոյն միջավայրում։

1885-ին կառավարութիւնը փակեց Փորթուգալեանի դպրոցը։ Վազգէնը, առանց աւարտելու, նետուեց կեանքի ասպարէզ՝ նախ, իբրեւ դերձակի աշկերտ, ապա՝ ուսուցիչ։ Զգայուն սրտի եւ ըմբոստ բնաւորութեան տէր, տոգորուած ազգասիրական դաղափարներով՝ Վազգէնը դպրոցում թէ դուրսը հետեւում էր հայրենասիրական խմբումներին եւ պատրաստւում յեղափոխական գործունէութեան։ Նրա վրայ ցնցող տպաւորութիւն գործեց Գոլոշեանի եւ Ադրիպասեանի նահատակութիւնը 1889-ին։ Իր հոգեկան զեղումները, այդ առթիւ, նա արտայայտեց «Հառաչանք Ադրիպասեանի» ընդարձակ մի ոտանաւորով, ուր, ի միջի այլոց, կան հետեւեալ տողերը.

Թո՛ղ, թող որ հոսի կողերէս արիւն,
Եւ ներկուին այս դաշտք անմշակ հայուն.
Մինչեւ որ այս հողը կարմիր չդառնայ,
Հայու սիրտը անոր վրան չի տաքնայ։

Գրում է եւ ուրիշ ոտանաւորներ, հաւաքում է ազգային յեղափոխական երգեր, որոնք յետոյ լոյս տեսան առանձին հատորով՝ «Վազգէն Երգարան»՝ Բոստոնի «Հայրենիք»ի տպագրութեամբ։

Վազգէնը դեռ որոնումների մէջ էր, երբ Վանում սկսում է իր գործունէութիւնը Պետոն՝ հիմք դնելով Դաշնակցութեան։ Պետոն ապրում էր Վազգէնենց տունը եւ Վազգէնը շուտով մտերմանում է նրա հետ, մտնում է Դաշնակցութեան շարքերը եւ դառնում Պետոյի հաւատարիմ գործակիցը։ Արդէն իր տարերքի մէջ էր նա՝ ուսուցիչ ու միաժամանակ յեղափոխական գործիչ։ Կազմակերպում ու վարում է երիտասարդական խմբեր, օգնում է Պետոյին կուսակցական աշխատանքներում։ Տէրոյենց տունը դառնում է Դաշնակցական ընկերների ժամադրավայր։

1893-ին Վազգէնը ձերբակալւում է եւ մի տարի պահւում

բանտում։ Բանտից ազատ արձակուելով՝ այլեւս զրկւում է ուսուցչութիւն անելու իրաւունքից։ Նա դառնում է գաղտնի գրավաճառ, յեղափոխական գրականութիւն տարածող եւ Դաշնակցութեան քարոզիչ ու կազմակերպող՝ քաղաքում եւ շրջակայ գիւղերում։ Պետոյի եւ Վազգէնի ջանքերով Դաշնակցութիւնը հետզհետէ դրաւում է քաղաքի եւ գիւղերի երիտասարդութիւնը։ Ինքնապաշտպանութիւն եւ զինում ու զինավարժութիւն, Պարսկաստանից զէնքի փոխադրութիւն, մարտական խմբերի կազմակերպում եւ յեղափոխական գաղափարների տարածում ժողովրդի մէջ — այս է լինում Վազգէնի գլխաւոր գործը՝ Պետոյի առաջնորդութեամբ։ 1895 թ. աշնան նա անցաւ Սալմաստ եւ այնտեղից 60 հոգինոց հայդուկային խմբով վերադարձաւ Վան՝ բերելով հրացան ու փամփուշտ։ Ճանապարհին ունեցաւ ընդհարում քիւրտերի հետ, բայց ապահով հասաւ տեղ։ Այս դէպքը առանձնապէս բարձրացրեց Վազգէնի հմայքը ընկերների եւ ժողովրդի աչքին։

1896 թ. Մայիսին Դաշնակցութիւնը Վանում, ըստ Պետոյի, արդէն ունէր մօտ 50 այրերի եւ 20-ի չափ կանանց խմբեր*)։ Կարճկան, Մոկս, Ռշտունիք, Սպարկերտ, Կարկառ, Շատախ, Հայոց Ձոր եւ այլ վայրեր եւս կազմակերպուած էին։ Կենդանի յարաբերութիւն կար Վանի եւ Բաղէշ-Ախլաթի (Սերոբ Աղբիւր), Տարօնի ու Բասենի (Հրայր), Կարինի (Ար.Արամեան) եւ ուրիշ շրջանների հետ։ Պետոյի եւ Վազգէնի ջանքերով Դաշնակցութիւնը այլեւս պատկառելի ոյժ էր Վասպուրականում. «ընդհանրապէս, կարելի է ասել, գրում էին Պետոն ու Վազգէնը 1896 թ. Մայիսին, Դաշնակցութիւնը բացարձակ տարածուած է Վասպուրականում. 9 դաւառ կապուած է մեզ հետ»**)։ Կազմակերպուած խմբեր ունէին եւ Արմենականներն ու Հնչակեանները։

1896 թ. Յունիսին տեղի ունեցաւ Վանի «Մեծ Դէպքը»։ Թուրք կառավարութիւնը փորձեց կոտորել Վանի հայութիւնը։ Երեք կուսակցութիւնները միացած, ամբողջ մի շաբաթ, բուռն դիմադրութիւն ցոյց տուին։ Վազգէնը ինքնապաշտպանութեան ղեկավարներից էր, Շան թաղի կռիւների ոգին։ Պատմութիւնը ծանօթ է. յեղափոխականները, հիւպատոսների միջամտութեամբ, հեռացան քաղաքից եւ Պետոյի, Արմենական Աւետիսեանի եւ Հընչակեան Մարտիկի գլխաւորութեամբ նահատակուեցան Պարսկաստանի ճանապարհին։ Վազգէնը, Վարագի սարից, վերադարձաւ Վան եւ անտանելի պայմաններում առանց ընկճուելու, շարունակեց Դաշնակցութեան գործը։ Նրա յամառ ջանքերով յու-

*) «Դիւան Հ. Յ. Դ.», Ա., էջ 369։

**) Անդ, էջ 372։



ՎԱԶԳԷՆ ՏԷՐՈՅԵԱՆ

ուլքումը հետզհետէ մեղմացաւ եւ քայքայուած կազմակերպութիւնը վերականգնուեց։ Պետոյի աշակերտ Վազգէնը դարձաւ նրա արժանաւոր յաջորդը։ Նրա գրած թղթակցութիւնները «Դրօշակ»ին, զեկուցումներն ու նամակները ցոյց են տալիս, որ յանձին Վազգէնի Դաշնակցութիւնը ունէր հասուն մտքի եւ անընկուն կամքի տէր կազմակերպիչ ու զեկավար Վասպուրականում, ռազմիկ ու քարոզիչ եւ անձնուէր ժողովրդական գործիչ։ Թէեւ

Պեռոյի, ապա Վարդգէսի ու Կոմսի եւ Արամի պէս, նա էլ այն տեսակէտին էր, որ յեղափոխութիւնը պէտք է լինի տեղական զանգուածային շարժում՝ ժողովրդից բխած ընդհանուր գործ, բայց միեւնոյն ժամանակ անհրաժեշտ էր համարում եւ յարատեւ կռիւը ցոյցերի, ահաբեկումների եւ խմբական գործողութիւնների միջոցով։ Ընդհ. ժողովի գումարման առթիւ, Վասպուրականի կենտր. Կոմիտէի կողմից, 1896 թ. Դեկտ. 23, Վազգէնի ձեռքով գրուած նամակում ձեւակերպուած են նրա մտքերը.

«Գործունէութեան մասին մեր կարծիքն է. եղած պատրաստի ուժերով կռիւը շարունակել անընդհատ։ Ցոյցեր, շարժումներ անպակաս անել թէ՛ քաղաքներու եւ թէ՛ գաւառներու մէջ։ Նոր շարժումներու համար պատրաստուիլ է՛ւ Պոլսի մէջ, որտեղի շարժումները ամենէն աւելի արձագանգ կը գտնեն աշխարհի մէջ։ Փորձերը ցոյց տուած են այս։

«Ամէն ջանք թափել ռումբեր եւ դինամիտ ներմուծել գաւառները, որոնք ապստամբական մեծ շարժումներու ժամանակ շատ գործ կարող են կատարել։

«Տեռորը, անհատական գործունէութիւն, որ շատ տեղեր աւելորդ համարուած է, մեր շրջանակի համար անհրաժեշտ է միշտ իր բարոյական բարձր ազդեցութեան համար»։

Առաջարկւում է զինուորական կենտրոնացումներ անել լեռնային շրջաններում, «ժողովուրդը իր դրամով զինել», գործակցութիւն հաստատել ասորիների եւ երիտասարդ Թուրքերի հետ, պատրաստուիլ ընդհանուր ապստամբութեան համար*)։

Թէ ի՞նչ պայմաններում էր աշխատում Վազգէնը, երեւում է Թագատոցից գրած նրա 1896 թ. Նոյ. 4 նամակից.— «Մինչեւ այսօր յարաբերութենէ բոլորովին զրկուած եմ, որովհետեւ անձնական տկարութիւնս եւ վէրքերս չափազանց կը տանջէին ինձ։ Խոնաւութեան սարսափելի ազդեցութիւնը ամբողջ մարմինս վնասեց, առաջացաւ քանի մը տեսակ հիւանդութիւն, որոնց մէջ կը տառապիմ ցարդ եւ, ինչպէս կ՚երեւի, ամբողջ ձմեռ արուեստական միջոցներով պիտի պահպանեմ կեանքս, թէ կրցայ։ Իսկ վէրքերս բոլորովին անխնամ մնալէն՝ ահագին ուռեցքներ առաջացան, որոնք վերջէն բոլորն ալ վէրքեր դարձան։ Այսօր միայն առաջին անգամ հանդիստ կը զգամ եւ կը գրեմ այս նամակը»**)։

Վազգէնին մեծ վիշտ ու տառապանք էր պատճառում նաեւ մօր եւ իր գործակից քրոջ՝ Զարուհիի բանտարկութիւնը իր պատճառով։ Սակայն եւ այնպէս, նա անվհատ շարունակեց յե-

---

*) «Դիւան Հ. Յ. Դ.», Բ., էջ 324–26։

**) Անդ, էջ 296։

գաղտնական գործը եւ հրճուանքով հաղորդում էր արտասահմանի ընկերներին, որ 1897 թ. գարնան Դաշնակցութիւնը արդէն վերակազմուած է քաղաքում եւ գաւառներում։

1897-ի գարնան եւ ամառը Պարսկաստանում պատրաստւում էր Խանասորի արշաւանքը, որի շուրջ սուր տարակարծութիւններ կային։ Վազգէնն էլ Վարդանի, Իշխանի եւ ուրիշների հետ համամիտ չէր մեծ արշաւանքին դրսից։ Յունիսի վերջերը նա անցնում է Սալմաստ, ծանօթանում է գործերի դրութեան ու կատարուած աշխատանքներին եւ համաձայնութեան է գալիս կատարուելիք ձեռնարկի շուրջ։ Որոշւում է մարտիկների եւ ռազմամթերքի մի մասը մտցնել Վասպուրական, իսկ մնացածով կազմակերպել արշաւանքը։ Վազգէնը ինքն էլ, Յուլիս 15-ին, 30 ընկերներով եւ որոշ քանակութեամբ զէնքով, մեկնեց Վան։ Նրա հետ էին արդէն հռչակ ստացած հայդուկներ Միքոն, Բազիկը եւ Գուրգէնը։ Ճանապարհին, Սպահան լճի մօտ, բուռն ընդհարում ունեցաւ քիւրտերի հետ եւ ապահով հասաւ Վան։

Խանասորի արշաւանքից յետոյ, Վասպուրականի վիճակը նորից ծանրացաւ։ Կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք առաւ յեղափոխականների եւ, մասնաւորապէս, Վազգէնի դէմ։ Այլեւս անհնար էր մնալ Այդեստանում։ Եւ տեսնելով, որ իր պատճառով կարող է տուժել ժողովուրդը, Վազգէնը երկու զինակից ընկերների՝ Մուքոյի եւ Արշակ Զալկադրեանի հետ, ձմրան ձիւն ու ցրտին, հեռացաւ քաղաքից՝ շարունակելու համար աշխատանքը գաւառներում։ 1898 թ. Յունուար 2-ին, երբ նրանք ապաստանած էին Կուռուպաշ գիւղի մի ջրաղացում, յանկարծ, պաշարուեցին թուրք զօրքերով։ Վազգէնը, Մուքոն եւ Արշակը փորձեցին խուսափել դէպի Վարագ, եւ երեքն էլ ապանուեցին զինուորների գնդակներից։

Վազգէնի մահը ծանր հարուած եղաւ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Վասպուրականի հայութեան, որոնք դառնօրէն ողբացին նրա կորուստը։

ՎԱՐԴԳԷՍ

Ծնուած էր Կարինում, 1871–ին։ Բուն անունն էր Յովհաննէս Սէրէնկիւլեան։ Դաշնակցութեան մէջ սկզբի տարիներին յայտնի էր Գիսակ եւ Զարմայր անուններով, ապա՝ Վարդգէս։ Ուսումը ստացել էր Սանասարեան դպրոցում, որը աւարտելուց յետոյ, ուխտաւորական թուականների վերջերին, մտել էր ուսուցչական ասպարէզ։

Վաւրուն, բնաւորութեամբ ըմբոստ՝ Վարդգէսը արդէն աշակերտական նստարաններից սկսել էր հետաքրքրուել ազգային-յեղափոխական հարցերով։ Հակառակ տիրող խիստ կարգերի՝ հայրենասիրական դաղափարները եւ արգելուած գրականութիւնը Սանասարեան դպրոցի պարիսպներից ներս էլ թափանցում էին, եւ աշակերտութիւնը ագահութեամբ կարդում էր Րաֆֆիի, Գամառ Քաթիպայի, Ալիշանի, Խրիմեան Հայրիկի գործերը։ Շատերի հետ Վարդգէսն էլ վառուած էր հայրենասիրական կրակով։ 1890 թ. Յունիսի ցոյցին նա էլ մասնակցեց ու ձերբակալուեց։ Եւ ներումով ազատ արձակուելով՝ ուսուցչութեան պաշտօնով փոխադրուեց Պոլիս։

1892–ի վերջերը Պոլիս անցաւ Յ. Իւսուֆեանը, իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչ եւ հիմք դրեց Պոլսի Դաշնակցական կազմակերպութեան։ Շուտով նրա շուրջ համախմբուեց դաղափարական երիտասարդութիւնը՝ Բարկէն Սիւնի, Վռամեան, Անդրէասեան, Գնունի, Ա. Մխսաքեան, Եդիպտացի եւ ուրիշ շատեր։ Դրանց թւում էր եւ Սէրէնկիւլեանը՝ Զարմայր եւ Գիսակ կեղծանուններով, որ, մասնաւորապէս, երիտասարդ սերնդի մէջ, մեծ հմայք էր վայելում՝ շնորհիւ իր դիւրահաղորդ, հրապուրիչ ու համարձակ բնաւորութեան։ Միաժամանակ յեղափոխութեան նուիրուած լուրջ ու եռանդուն գործիչ էր։

Բանկ Օթոմանի ցոյցի նախապատրաստական աշխատանքներում Վարդգէսն եւս բաժին ունեցաւ, բայց դէպքից առաջ մատնութեամբ բանտարկուեց եւ բանտում պահուեց մինչեւ 1897 թ. սկիզբները, որից յետոյ ներումով ազատ արձակուեց։ Համիտի բռնակալութեան տակ սովորական երեւոյթ էր հարիւրներով մարդիկ ձերբակալել, ամիսներով ու տարիներով առանց դատ ու դատաստանի բանտում պահել եւ յետոյ՝ այս կամ այն մեծ պետութեան ճնշման տակ ազատ թողնել։

Վարդգէսը որոշ ժամանակ էլ մնաց Պոլսում, գործեց Յոնան Դաւթեանի հետ, որ մի քանի ամիս մնաց Պոլսում, կուսակցական աշխատանքի համար։ 1899–ի վերջերը Վարդգէսը անցաւ Բուլգարիա, ուր շարունակեց կուսակցական աշխատանքը, եւ այն-



Վ. ՏԱԹԵՒԵԱՆ, ՎԱՐԴԳԷՍ, ԲԱՐՍԵՂ ՇԱՀԲԱԶ

տեղից էլ մեկնեց Կովկաս՝ Երկիր մտնելու նպատակով։ Դեռ Պոլիս եղած ժամանակ նա լայն յարաբերութեան մէջ էր Երկրի կոմիտէների եւ ընկերների հետ։ Մշտական թղթակցութեան մէջ էր նաեւ Կարինի եւ Վանի ընկերների, մասնաւորապէս, Արամ Արամեանի եւ Վազգէնի հետ։ Երկիրը հրապուրում էր նրան արկածալից, յանդգնութիւն ու ճարպիկութիւն պահանջող գործերով, որոնք լիովին համապատասխանում էին նրա խառնուածքին եւ ապրումներին։

Շուրջ տարի ու կէս Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում եւ Կարսում անցնելուց յետոյ, 1901 թ. գարնան, իբրեւ կուսակցութեան ներկայացուցիչ, Վարդգէսը անցաւ Վան։ Պոլսի եւ Բալկանների կազմակերպական փորձառութեամբ զինուած, գործնական մտքերի տէր, բարեհամբոյր եւ ջերմ վերաբերումով դէպի շրջապատը, խիստ կարգապահութեան հետեւող, ապրելակերպով պարզ ու շարքաշ, խանդավառօրէն նուիրուած յեղափոխական գործին՝ Վարդգէսը կարճ ժամանակում հաւաքեց ու կազմակերպեց Վազգէնի սոլանութիւնից յետոյ ցրուած ու բարոյալքուած ուժերը։ Քաղաքի խմբերը վերակազմելուց յետոյ՝ ջանաց վերականգնել նաեւ գաւառական խմբերը։ Մօտիկ յարաբերութիւն եւ սերտ գործակցութիւն հաստատեց Տարօնի գործիչների՝ Հրայրի, Վահան Տողրամաճեանի եւ ուրիշների հետ։ 1902-ին Վան եկաւ Հրայրը՝ Վարդգէսի հետ խորհրդակցելու ընդհանուր գործունէ-

ութեան մասին։ Նրանք միասին կազմեցին ապագայ աշխատանքների ծրագիր եւ կազմակերպական ընդհանուր կանոններ երկու շրջանների համար։

Վարդգէսի կարճատեւ շրջանում Վանի Դաշնակցութիւնը, Պետոյի եւ Վազգէնի սպանութեան հետեւանքով առաջացած քայքայումից յետոյ, վերակազմուեց եւ զօրացաւ։ Վարդգէսը առանձնապէս աշխատեց առաջ քաշել տեղական ուժերը եւ ժողովրդական հիմքերի վրայ դնել կուսակցութիւնը։ Եւ այդ ուղղութիւնը ջերմ համակրանք գտաւ ընկերական շրջաններում։

Դժբախտաբար, Վանում երկար չկարողացաւ մնալ Վարդգէսը։ Մասնութեան հետեւանքով, ձերբակալւում է 1903 թ. Յունուարին։ Մատնիչը՝ Յովհ. Սէմէրճեան, ձերբակալութիւնից ութ օր վերջը, ահաբեկուած է Մուռ Դաւոյի ձեռքով, որ ցնցող տպաւորութիւն գործեց հասարակութեան եւ կառավարութեան վրայ։

Մօտ տարի ու կէս Վարդգէսը մնաց Վանի բանտում՝ եւ բանտից մասնակցելով կուսակցական աշխատանքներին։ Իբրեւ Կենտր. Կոմիտէի անդամ։ Շնորհիւ իր մտաւոր զարգացման, շէնշող բնաւորութեան եւ ուրիշների վրայ ազդելու կարողութեան, Վարդգէսը՝ ժողովրդականութիւն եւ մեծ հեղինակութիւն ձեռք բերեց բախտակից բանտարկեալների մէջ՝ վայելելով նաեւ բանտապահների յարգանքը. «Վարդգէսը, գրում է իր յուշերում Վահ. Փափազեանը, բացառիկ հեղինակութիւն դարձած էր անխտիր բոլոր բանտարկեալներու եւ բանտային պաշտօնէութեան մէջ, բացի Ֆէտայիներու «մեծ»ի տիտղոսէն, որ ինքնին մեծ արժէք էր, ան հազուադիւտօրէն օժտուած էր մարդկանց յարգանք ներշնչելու, իրեն ենթարկելու կարողութեամբ. ինքն եւս չէր խնայեր իր բարոյական եւ նիւթական օժանդակութիւնը բախտակիցներուն. աներկիւղ պաշտպան էր անոնց եւ վերին դատաւոր միանգամայն»։

Վահ. Փափազեանի Վան գալուց յետոյ, 1904-ի ամառը, Վանի Կեդր. Կոմիտէն, Վարդգէսի համաձայնութեամբ, որոշեց փախցնել նրան բանտից։ Այդ նպատակով ձեռնարկուեց ական փորելու դէպի Վարդգէսի գտնուած նկուղը։ Գործը յաջողուելու վրայ էր, երբ Վան հասան Սասունից Անդրանիկը եւ ընկերները։ Դրա վրայ գործը մի առ ժամանակ յետաձգուեց։ Յորդահոս անձրեւի հետեւանքով ականը բացուեց, եւ խիստ կարգեր հաստատուեցին բանտում։ Վ. Փափազեանը «Իմ Յուշերում» մանրամասնօրէն նկարագրել է այդ դէպքը (էջ 338–346)։

1896-ին Վարդգէսին եւ բանտարկեալների մի մասին Վանից փոխադրեցին Տիգրանակերտի բանտը, որ աւելի ապահով վայր էր

կառավարութեան աչքին։ Վարդգէսը այստեղ էլ շուտով կապ հաստատեց դրսի հետ եւ բանտից մասնակցեց քաղաքի Դաշնակցութեան գործերին։ Սկսեց թղթակցել արտասահմանի հետ՝ աջակցութեամբ դրսի ընկերների եւ, առանձնապէս, Տիգրանակերտի բողոքականներին հովուութիւն անող եւ ամերիկեան շրջանակին մօտ պատուելի Տէր-Մկրտչեանի հետ, որ ամէն կերպով օգնում էր նրան։ 1908-ին, դուրս գալով բանտից, պատուելիի յարկի տակ հիւրընկալուեց Վարդգէսը։

Սահմանադրութիւնից յետոյ՝ Վարդգէսը խանդավառ ցոյցերով ընդունուեց հայրենի քաղաքում։ Կարինի հայ եւ թուրք ժողովուրդը նրան ընտրեց Օսմանեան Խորհրդարանի անդամ, եւ այնուհետեւ, յաջորդաբար, նա ընտրուեց Կարինի երեսփոխան՝ գրաւելով Խորհրդարանում եւ Պոլսի ազգային շրջանակներում ազդեցիկ դիրք։ Վարդգէսը ստեղծուած էր պետական եւ հանրային գործերի համար։ Գործնական եւ համարձակ միտք, անոյշ ու գրաւիչ լեզու, խիզախ խօսքով ու գործով, համակրանքով ընդունուած անխտիր բոլոր շրջաններում, իր լայն ծանօթութիւններով եւ ազդեցութեամբ՝ Վարդգէսը յարգուած եւ ազդեցիկ դէմք էր ոչ միայն հայերի, այլեւ օտար հասարակութեան եւ պետական շրջանակների մէջ։ Հմայք եւ հեղինակութիւն էր վայելում եւ Դաշնակցութեան մէջ, որի ներկայացուցիչն էր կառավարութեան մօտ։ Մտերիմ յարաբերութիւն ունէր Իթթիհատական պետերի՝ Թալէաթի, Խալիլի եւ միւսների հետ։ Եւ, սակայն, այդ մտերմութիւնը չփրկեց նրան։ Թալէաթը համբուրելով մատնեց նրան՝ Զոհրապի հետ ուղարկելով դէպի մահ՝ Ապրիլեան Եղեռնի սեւ օրերին...

ԲԱԲԿԷՆ ՍԻՒՆԻ

Բանկ Օթոմանի դիւցազնավէպի յղացողը, կազմակերպող ոգին եւ առաջին գոհը եղաւ այս սքանչելի երիտասարդը՝ Բաբկէն Սիւնի, բուն անունով Պետրոս Փարեան, ծնուած եօթանասնական թուականներին Ակնի Բինկեան գիւղացի չքաւոր մի ընտանիքում: Իր ընտանիքի եւ պատանեկան կեանքի մասին տեղեկութիւն չունինք: Յայտնի է միայն, որ մանուկ հասակից նա պանդխտել էր Պոլիս եւ նախնական ուսումը ստանալով թաղային դպրոցում, 1887-ին մտնելով Կեդրոնական վարժարանը՝ յաջողութեամբ աւարտել: Կենտրոնականում ուսանելիս վեց ամիս բանտ էր նստել փախստական մի ընկերոջ պատճառով: Միջնակարգ կրթութիւնը լրացնելուց յետոյ՝ մէկ տարի ծառայել էր նաւի վրայ, ապա մտել էր ուսանելու Ազգապ Գափուի նաւային վարժարանը՝ նպատակ դնելով նաւապետ դառնալ եւ այդ միջոցով ծառայել յեղափոխութեան:

Դեռ Կենտրոնականի աշակերտ՝ Բաբկէնը արդէն տարուած էր հայրենասիրական-յեղափոխական գաղափարներով: Բարձր իմացականութեամբ եւ ուժեղ կամքով օժտուած, խանդավառ ու տպաւորուող, բայց եւ գործնական մտքի տէր, յամառ աշխատող, պարզ ու ժուժկալ, ընկերական եւ անկեղծ երիտասարդ՝ նա ամբողջ էութեամբ նուիրուեց հայրենիքի ազատութեան «սուրբ գործին»: Իր միջավայրը, մեծ մասամբ, գաւառական պանդուխտները եւ երիտասարդութիւնն էին, որոնց մէջ մեծ հմայք եւ ազդեցութիւն ունէր եւ իր քաղցր բնաւորութեամբ սիրուած էր ամէնքից: Անհուն ատելութիւն էր տածում դէպի թուրք բռնապետութիւնը՝ այդ «հոտած լէշը», որի հանդէպ լեցուած էր անսահման վրէժի զգացմունքով:

1892-ի վերջերը Պոլիս էր եկել Յ. Իւսուֆեանը, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ: Շատերի հետ նրա մոգական ազդեցութեան տակ ընկաւ եւ Բաբկէնը: Շուտով նա արդէն ղեկավար էր նաւային ուսանողներից կազմուած «Սիւնիք» խմբի, իսկ 1895-ին՝ Պոլսի Կենտր. Կոմիտէի անդամ եւ Իւսուֆեանի անմիջական գործակից՝ Ա. Վռամեանի հետ: Նա այլեւս հանգիստ չունէր. աշխատում էր գիշեր ու ցերեկ. կազմակերպում էր, քարոզում, զբաղուած էր զէնքի գործով, դրամի հանգանակութեամբ, վառանդաւոր ահաբեկումների ղեկավարութեամբ, Կենտր. Կոմիտէի թղթակցութիւններով արտասահմանի եւ գաւառական մարմինների հետ, կազմակերպական ներքին աշխատանքներով: Այլեւս մինչեւ մահ նա մնաց ղեկավար դիրքերում, իբրեւ Պոլսի Դաշնակցութեան ոգին ու շարժիչ ոյժը: Մինչեւ Բանկ Օթոման,

Պոլսի Հ. Յ. Դաշնակցութեան մէջ ո՛չ մէկ կարեւոր գործ տեղի չէ ունեցած, որին մասնակից եղած չլինէր Բաբկէն Սիւնին։

Յ. Իւսուֆեանը բարձր կարծիք ունէր Բաբկէնի մասին։ «Դրօշակ»ի խմբագրութեան գրած իր 1895, Նոյեմբ. նամակում, օրինակ, նա հիացումով է խօսում նրա մասին. «Բաբկէն Սիւնի Ազատորդիի (Սարգիս Մինասեանի) ընկերն է, բայց բոլորովին հակառակ նկարագրի տէր։ Համարձակ, մարտնչող, յանդուգն, կրակոտ եւ բաւական զարգացած, առողջ գաղափարներու տէր, ամենալաւ գործիչ կարող է լինել մօտ ապագային։ Շատ համակրելի տիպ է, բնիկ գաւառացի, ամենամաքուր երիտասարդ մը։ Բայց ափսոս որ աւելի չէ կարդացած. այժմ կարդալու ժամանակ չունի, որովհետեւ ամբողջապէս վլանուած է գործունէութեամբ»։

Իւսուֆեանը հեշտութեամբ մարդկանց հաւանող մէկը չէր. ընդհակառակը, խիստ էր եւ անողոք ինչպէս իր անձի, այնպէս եւ ուրիշների հանդէպ։ Եւ եթէ վարպետը իր աշակերտին այսպիսի գովեստ էր շնորհում, նշանակում է, որ Բաբկէնը լիովին արժանի էր դրան։

Նա «ամբողջապէս կլանուած է գործունէութեամբ»։ Բայց առաւելապէս նրան գրաւում էին մարտական գործերը՝ զէնք, ռումբ, ահաբեկում։ Մանաւանդ՝ ահաբեկումը։ Նա ոգեւորուած էր ոստիկանութեան պետ Նազըմին «ճամբելու» որոշումով։ Եգիպտացիի հետ ուսումնասիրում էր «հրէշի»՝ Սուլթանի ահաբեկման ծրագիրը։ Նա եղաւ գլխաւոր ընդվզողը Արփիարեանի դէմ, իբրեւ թրքական գործակալի։ Մի շարք ահաբեկումներ կատարուեցին նրա անմիջական ղեկավարութեամբ։ Կեանքի հետ էր խաղում, եւ կեանքը այլեւս արժէք չունէր նրա համար։

«Ամէն անգամ, երբ խորհուրդ կուտայի իր առողջութեանը հոգ տանիլ, գրում է նրա մասին Վռամեանը, «էհ, կ՚ըսէր, պ. նախագահ, ապրածս մէկ կամ երկու տարի է, ոչ աւելի»։ Ինքզինքը միշտ կը կարծէր յառաջապահ գունդին մէջ եւ իր մահը միշտ անխուսափելի կը կարծէր»։

Իբրեւ «յառաջապահ գունդի» զինուոր, 1896 թ. գարնանից Բաբկէնը բուռն թափով նետուեց Բանկ Օթոմանի գործի մէջ։ Առաւելապէս նրա ջանքերի շնորհիւ իրականացաւ այդ հերոսական ձեռնարկը։ Նրա սրտակից ու գործակից Վռամեանը վկայում է, որ «առանց անոր Պանքայի գործն ալ դժուար կը յաջողէր»։

Բաբկէն Սիւնիի անունը կապուած է Բանկ Օթոմանի դիւցազնամարտի հետ։ Նա եղաւ այդ վիպական գործի կազմակերպիչ ոգին, ընդհանուր ղեկավարն ու ներշնչողը։ Եւ նա եղաւ առաջին զոհը, երբ Օգոստ. 14-ին ատրճանակներով եւ ռումբերով զին-

ուած Դաշնակցական մարտիկները մտան Օսմանեան Կայսրութեան կենտրոնական դրամատունը։ Բարկէն Սիւնին, իբրեւ վերջապահ, քաջալերում եւ առաջնորդում էր ընկերներին։ Թշնամու մի գնդակ զգետնեց նրան եւ ձեռքի ռումբերի պայթիւնից կտոր-կտոր եղաւ նրա մարմինը, Բանկի սանդուխների վրայ։ Թշնամին խուճապի մատնուած՝ յետ քաշուեց՝ որ հնարաւորութիւն տուեց բոլոր տղաներին ներս մտնելու։

Բանկի գործի ղեկավարներից Հրաչը տուել է վերջին պատկերը Բարկէնի նահատակութեան. «Դիմացս կը տեսնեմ Բարկէն Սիւնին սոսկալի վիճակի մէջ՝ զգեստները պատառոտած, այրուած, երկու ձեռքերը դաստակներէն կախուած, մսերը փրթած, դէմքը արիւնած, եւ մարմինը ընկած էր... Երեք ժամ առաջ ողջառողջ էր եւ տղայոց հրահանգներ կուտար. դեռ կը զգայի երկար գրկախառնութեան անուշ տպաւորութիւնը։ Դեռ քիչ առաջ էր, որ «Աղատութիւն» կը պոռար ներս մտած ատենը»...

Բարկէն Սիւնիի եղերական մահը մեծ կորուստ եղաւ ոչ միայն Պոլսի, այլեւ ընդհանուր Դաշնակցութեան համար. նա «ամենալաւ գործիչ կարող էր լինել մօտ ապագային»...

ԱՐՏԱՇԷՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՍՈՒՐԷՆ

Խաչիկ Գնունիի մտերիմ ընկեր, գաղափարակից ու գործակից, Սամաթիայի հերոսներից էր Արտաշէս Անդրէասեանը, որ Պոլսի Դաշնակցական շրջաններում ծանօթ էր Սուրէն անունով։ Բնիկ Պոլսեցի էր՝ Սամաթիա թաղից։ Ծննդեան թուականը, դժբախտաբար, յայտնի չէ։ Նա էլ պատանիների այն խմբից էր՝ Վռամեանի, Լեւոն Շանթի եւ ուրիշների հետ, որ ութսունական թուականներին Պոլսից ուղարկուեց Էջմիածին աշակերտելու համար Գէորգեան ճեմարանում։

Ուշիմ եւ յառաջադէմ աշակերտ էր Արտաշէսը՝ սիրուած ուսուցիչներից եւ դասակից ընկերներից։ Օրինակելի էր վարք ու բարքով եւ դպրոցական պարապմունքներով։ Բայց ժամանակի հայրենասիրական-ազատատենչ գաղափարներն էլ, որոնցով տարուած էր ճեմարանի աշակերտութեան մեծ մասը, օտար չէին նրա հոգուն։ Արտաշէսը եռանդով մասնակցում էր աշակերտական շարժումներին վանական-կղերական մթնոլորտի դէմ։

1891-ին ճեմարանում տեղի ունեցան բուռն խռովութիւններ ճնշիչ կարգերի դէմ։ Մի ստուար խումբ աշակերտներ՝ դժգոհ հեռացաւ ճեմարանից։ Դրանց մէջ էր եւ Անդրէասեանը։ Վերադառնալով ծննդավայր՝ նա նուիրուեց ուսուցչութեան՝ Պոլսում եւ մի տարի էլ Ռոտոստոյում։

ԱՐՏԱՇԷՍ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Պոլսում Արտաշէսը ծանօթացաւ Իւսուֆեանի հետ եւ նրա աղդեցութեան տակ մտաւ Դաշնակցութեան շարքերը։ Մի քանի ընկերների հետ կազմեց «Զոհ» խումբը, որ աչքի ընկնող գործունէութիւն ունեցաւ։ Լուրջ ու խոհուն՝ Արտաշէսը դարձաւ նրա վարիչ միտքը, մինչ Գնունին նրա խանդավառ ոգին էր։

Բանկ Օթոմանի նախապատրաստական աշխատանքներում Արտաշէսը ցոյց տուեց արտակարգ եռանդ եւ կազմակերպական կարողութիւն։ Խաչիկ

Գնունիի եւ Արտաշէս Միսաքեանի հետ նա ստանձնեց Սամաթիայի ցոյցի պատրաստութիւնը։ Կառավարութիւնը, սակայն, կանխեց յեղափոխական ձեռնարկը։ Ինչպէս կը տեսնենք Գնունիի կենսագրութիւնից, Օգոստ. 14–ին, Անդրէասեան, Գնունի, Միսաքեան եւ ուրիշներ զօրքի կողմից պաշարուեցին Միսաքեանների տանը եւ 18 ժամ դիմադրելով զօրքի յարձակումներին, փամփուշտ եւ ռումբ ամբողջովին սպառելուց յետոյ, ընկան հերոսի մահով։

Արտաշէս Անդրէասեանը մտաւորական աշխատանքի համար պատրաստուած մարդ էր։ Խառնուածքով ու հակումներով նա ուելի մեծ դեր կարող էր կատարել հայ մշակոյթի ասպարէզում։ Ժամանակի ոգին եւ Թուրքիայում տիրող նեղվեալ կարգերը, սակայն, նրան եւս մղեցին յեղափոխական մրրիկի մէջ։ Շատերի պէս նա էլ մահացաւ կեանքի շեմքում՝ իր հետ տանելով տարիների տքնաջան աշխատանքով ձեռք բերած մտաւոր պաշարը։

ԱՐՏԱՇԷՍ ՄԻՍԱՔԵԱՆ

Սամաթիայի երրորդութեան մէկ անդամը՝ Արտաշէս Միսաքեանը ծնուել է 1879–ին, Պոլսի Բոյուքդէրէ թաղում։ Ընդհանուր յարգանք վայելող, ազգային գործերին մասնակից ընտանիքի զաւակ էր նա։ Ուսումը ստացել էր Սանուց Վարժարանում, բայց նրա դաստիարակութեան վրայ մեծ ազդեցութիւն էր ունեցել իր մայրը, որ բանիմաց, ազգասէր եւ հանրային հակումների տէր կին էր։

Ընտանեկան եւ դպրոցական հայրենասիրական ջերմ մթնոլորտում կազմակերպւում է Արտաշէսի անհատականութիւնը։ Վաղուն եւ հայրենասէր, ուսումն աւարտելուց յետոյ, նա որոշում է մտնել հոգեւորական ասպարէզ՝ ազգին լաւագոյնս ծառայելու դիտաւորութեամբ։ Այդ նպատակով մտնում է Արմաշի դպրեվանքը, բայց չդիմանալով այնտեղի մթնոլորտին՝ հիասթափուած վերադառնում է Սամաթիա, ուր գործունէութեան ասպարէզ է ընտրում դպրոցն ու յեղափոխութիւնը։ Խաչիկ Գնունին արդէն գրաւել էր նրան Դաշնակցութեան շարքերը։



Սամաթիայում Միսաքեանը դառնում է Դաշնակցական ղեկավար դէմքերից մէկը՝ Գնունիի եւ Անդրէասեանի հետ, իբրեւ յեղափոխական խմբերի կազմակերպիչ, ճարտար քարոզիչ ու մարտական գործերի վարիչ։

1895-ին, Ազգ. Սահմանադրութեան տարեդարձի օրը, Ազգային Հիւանդանոցի պարտէզում, հանդիսականների խուռն բազմութեան ներկայութեամբ, Միսաքեանը կրակոտ ճառ է խօսում կառավարութեան դէմ, Սասունի կոտորածների առթիւ եւ յեղափոխութեան ու վրէժի կոչ է ուղղում ժողովրդին։ Ոստիկա-

նութիւնը փորձում է նրան ձերբակալել, բայց ժողովրդի պաշտպանութեամբ՝ նա խուսափում է նրանց ձեռքից եւ անցնում Զմիւռնիա։

Վերադառնալով Սամաթիա՝ Միսաքեանը գործօն կերպով մասնակցում է Բանկ Օթոմանի եւ Սամաթիայի ցոյցի նախապատրաստութեան՝ իր մտերիմ ընկերներ Գնունիի եւ Անդրէասեանի հետ միասին։ Նրանց հետ միասին էլ նահատակուեց, Օգոստ. 15-ին, առաւօտեան, 18 ժամ ռումբով եւ ատրճանակով թուրքոսոխի դէմ օրհասական պայքար մղելուց յետոյ։

ԽԱՉԻԿ ԳՆՈՒՆԻ

ՇԱՀԷՆ

Սամաթիայի հերոսներից էր Գնունին՝ Պոլսի Դաշնակցութեան ինքնակամ թուականների խանդավառ սերնդից։ Նրա կեանքի մասին էլ, դժբախտաբար, լրիւ տեղեկութիւն չունենք, ինչպէս չա՛տ-չատերի։ Յայտնի է միայն, որ Վասպուրականի դիւղերից էր՝ ծնուած 1865-ին։ Ութսունական թուականների սկզբին, նա մտնում է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, բայց առանց աւարտելու, աչքի ցաւի պատճառով, 1886ին, վերադառնում է ծննդավայր, ուր դպրոց է բաց անում դիւղի երեխաների համար։ Հայրենի դիւղում, սակայն, երկար չի կարողանում մընալ. տարին չլրացած, ընդհարուելով հոդաբարձութեան հետ, հեռանում է Պոլիս եւ մի քանի տարի ուսուցչութիւն է անում Գասը դիւղի եւ ուրիշ թաղային դպրոցներում։ Այստեղ էլ բախումներ է ունենում հոդաբարձու էֆէնտիների հետ եւ 1893-ին, ճեմարանական ընկեր Արտաշէս Անդրէասեանի հետ Ռոտոստո է հրաւիրուում ուսուցչական պաշտօնով։

Պոլսում Գնունին մտնում է Դաշնակցութեան շարքերը՝ Շահէն անունով եւ դառնում է Իւսուֆեանի հաւատարիմ գործակիցներից մէկը՝ Բարկէն Սիւնիի, Վռամեանի, Զարմայրի (Վարդգէս Սէրէնկիւլեան), Եգիպտացիի հետ։ Բնաւորութեամբ անհանդարտ, յանդուգն եւ անվախ, աղատասէր՝ Գնունին Ռոտոստոյում, Արտաշէսի, Նեւրուզի եւ ուրիշների հետ, Դաշնակցական երիտասարդութեան գլուխն անցած, սկսում է պայքարել պահպանողական-աղայական դասի դէմ։ Բախումներ է ունենում առաջնորդ Դիմաքսեան եպ.-ի հետ, որից հալածուելով եւ կա-

ռավարութեան ձեռքը չընկնելու համար, Անդրէասեանի հետ, գիշերով, փախչում-վերադառնում է Պոլիս:

Պոլսում Գնունին եւ Անդրէասեանը նորից ուսուցչական պաշտօն են ստանձնում, աշխատում են Դաշնակցական խմբերի մէջ եւ ղեկավար դէմքեր են դառնում Սամաթիայի շրջանում: Գնունին, մասնաւորապէս, մեծ հմայք էր վայելում աշխատաւորական խաւերի եւ երիտասարդութեան մէջ: Հմուտ կազմակերպող ու քարոզիչ էր, համարձակ ու խանդավառ գործիչ՝ մոլեռանդօրէն նուիրուած Հ. Յ. Դաշնակցութեան:

1895-ին, Գնունին ձերբակալւում եւ 6 ամիս պահւում է բանտում: Բանտից դուրս գալով՝ որոշում է վերադառնալ Վասպուրական հրոսակային խումբ կազմելու նպատակով, բայց ընկերները չեն թողնում. Պոլսում էլ շատ գործ կար, լուրջ դէպքեր էին նախապատրաստւում եւ նրա ներկայութիւնը կարեւոր էր: Գնունին, իբրեւ «Զոհ» մարտական խմբի անդամ, ողջ էութեամբ տարւում է յեղափոխական աշխատանքներով: Զոյգ Արտաշէսների՝ Անդրէասեանի ու Միսաքեանի հետ նա պատրաստում է Սամաթիայի ցոյցի ծրագիրը՝ իր վրայ առնելով ընդհանուր ղեկավարութիւնը:

1896 թ. Օգոստ. 14-ին, երբ Բանկ Օթոմանի շուրջ որոտում էին ռումբերը, Գնունին, Անդրէասեանի եւ Միսաքեանի հետ, պաշարուեցին Միսաքեանների տանը: Թուրք ոստիկաններն ու զինուորները եկել էին ձերբակալելու նրանց: Ցամաք կռիւ է եկսում ներսից ու դրսից, որ տեւում է 18 ժամ: Գնունին եւ ընկերները բուռն դիմադրութիւն են ցոյց տալիս՝ ռումբերով սարսափ ազդելով թշնամու վրայ: Եւ պարպելով վերջին փամփուշտը՝ ընկնում են հերոսի մահով, անհաւասար ճակատամարտում:

ԵԳԻՊՏԱՑԻ

Բուն անունը Արտաշէս Մինասեան էր: Մանօթ էր նաեւ Դեւեան, Յովսէփ, Հայկ, Մուստաֆա յեղափոխական անուններով: Ծնուած էր Տրապիզոնում, 1868-ին, ուր յայտնի էր Դեւ Եաւրուսիի Արտաշ անունով:

Մինչեւ երիտասարդական հասակը անց էր կացրել ծննդավայրում: Տարրական դրագիտութեան տէր՝ արհեստով ոսկերիչ էր: Հնարամիտ, ճարպիկ, ուտող-խմող, չէնչող երիտասարդ էր: Յ. Իւսուֆեանը, Տրապիզոնում ուսուցիչ եղած միջոցին,

1890–92 թ., նրան էլ մտցրեց Դաշնակցական խմբերի մէջ, որից յետոյ Արտաշէսի ամբողջ կեանքը նուիրուեց յեղափոխութեան: Իւսուֆեանի Պոլիս անցնելուց յետոյ Արտաշէսն էլ հետեւեց նրան, ուր դարձաւ զինական–մարտական գործունէութեան ոգին:

Գործնական խելքի, սուր դիտողութեան, անսասան կամքի ու յանդգնութեան, արտակարգ պաղարիւնութեան եւ ճարպիկութեան տէր, աղնիւ նկարագրով, անձնուէր ու յանդուգն երիտասարդ էր Եգիպտացին: Անկեղծ ու հաւատարիմ ընկեր եւ անդաւաճան գործակից: Սահման չճանաչող ատելութեամբ լեցուած դէպի թուրք բռնապետութիւնը: Ամէն վայրկեան պատրաստ յեղափոխական գործի համար զոհելու իր անձը: Յանդուգն ծրագիրներ յղացող եւ անվախ գործադրող: Ամենավտանգաւոր ձեռնարկների մէջ նետուող, երբեք չյուսահատուող եւ ամէն դժուարութիւնից ճարպիկութեամբ դուրս եկող:



ԱՐՏԱՇԷՍ ԴԵԻԵԱՆ
(ԵԳԻՊՏԱՑԻ)

1892–1897 թուականներին Պոլիս եւ Պոլսի վրայով Երկիր մտած զէնքերի մեծ մասը Եգիպտացին դնեց ու տեղափոխեց շուրջը վխտացող լրտեսների քթի տակ: Բանկ Օթոմանին յաջորդած դաժան օրերին նա փոխադրեց սընտուկներով եւ գաղտնի պահեստներում ապահով տեղաւորեց կուսակցական ռումբերն ու ռազմամթերքը: Մի շարք վտանգաւոր ահաբեկումներ կազմակերպուեցին նրա ձեռքով: 1895–ի Սուլթանին ահաբեկելու ծրագիրն էլ նրա ծրագիրն էր. ինքը յանձն առաւ ռումբերով սպանել Սուլթանին Ռամազանի օրը: Վերջին պահուն, սակայն, կենտր. Կոմիտէն փոխեց իր որոշումը: Ռամազանի օրը Սուլթանը անցաւ ճիշդ այն կէտերից, որտեղից, Եգիպտացիի ծրագրով ռումբ պէտք է նետուէր նրա վրայ:

Բանկ Օթոմանի նախապատրաստական աշխատանքների շըր-

Ջանին Եգիպտացին Պոլսում չէր. թոքախտով հիւանդ, ընկերների ստիպումով, մեկնել էր ծննդավայրը դարմանուելու։ Բայց լսելով Բանկի գործի մասին՝ շտապեց վերադառնալ։ Պոլիս հասնելով դէպքի նախօրեակին՝ պնդեց, որ ինքն էլ մասնակցի Բանկի գրաւման, եւ պատահական դիպուածով միայն զրկուեց այդ բախտից։ Բանկի դէպքից յետոյ էլ, չնայած որ վտանգուած էր, չհեռացաւ Պոլսից. մնաց եւ անվարան շարունակեց կուսակցական աշխատանքը, իբրեւ Կենտր. Կոմիտէի անդամ։

Զինական-մարտական գործերից դուրս էլ, իբրեւ կազմակերպող ու քարոզիչ, Եգիպտացին ուր որ երեւում էր՝ իր շուրջը ստեղծում էր ջերմ համակրանք ու խանդավառութիւն։ Կենտր. Կոմիտէի յանձնարարութեամբ նա այցելեց Սամսոն, Տրապիզոն, Բալկաններ, Եգիպտոս, Ցունաստան եւ Պոլսի հետ կապուած մի շարք ուրիշ վայրեր՝ կազմակերպական ու զինական-մարտական գործերով։ Եւ ամէն տեղ կատարեց յաջող աշխատանք։

Եգիպտացիի համարձակ գործունէութիւնը չէր կարող վրիպել թուրք իշխանութիւնների ուշադրութիւնից։ Լրտեսներից հետապնդուելը սովորական երեւոյթ էր նրա կեանքում, բայց դրեթէ միշտ էլ կարողանում էր ազատուել նրանց ճանկերից։ Թրքական բանտի համն էլ ճաշակել էր նա։ Վերջին անգամ բանտարկուեց Բանկ Օթոմանից յետոյ, բայց, ինչպէս միշտ, այս անգամ էլ կարճ ժամանակից յետոյ ազատուեց։ Ոստիկանութիւնը երբեք չյաջողեց բռնել նրան գործի վրայ։

Զարքաշ, վտանգներով լեցուն յուզումնալից կեանքը հետզհետէ սպառեց Եգիպտացիի ուժերը։ Թոքախտը, որ բոյն էր դրել նրա կրծքում, երթալով սաստկացաւ ու մաշեց նրա յոգնել չգիտցող մարմինը։ Բանկի դէպքից յետոյ, վեց ամիս էլ նա դիմացաւ Պոլսի շնչահեղձ, մշտայոյզ գործունէութեան եւ ընկերների ըստիպման վրայ մեկնեց Եգիպտոս դարմանուելու եւ այլեւս չվերադարձաւ։ 1897 թ. Ցունիսի 1-ին Եգիպտացին մեռաւ Ալեքսանդրիայում։

ԳՈՒՐԳԷՆ

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԱԼԵԱՆ

Բաղդասար Մալեանը — յեղափոխական անունով Գուրգէն — ծնուել էր 1873 թուին, Գողթն գաւառի Վերին Ադուլիս գիւղաւանում, ուր եւ ստացել էր իր կրթութիւնը։ 1894-ին կանչուել էր զինուորական ծառայութեան։

ԳՈՒՐԳԷՆ

Պատանի հասակից արդէն Բաղդասարը տարուած էր հայրենասիրական գաղափարներով։ Ագուլիսը, որի դպրոցում պաշտօնավարել են Բաֆֆին ու Քրիստափորը, յեղափոխական խմբակների կենտրոն էր։ Բնական է, որ ուշիմ եւ արի Բաղդասարն էլ պիտի ազդուէր տիրող ընդհանուր տրամադրութիւնից։ Զինուորութեան մէջ էլ նա հետեւում է յեղափոխական շարժումներին եւ 1896-ին լուր առնելով, մի քանի զինուոր ընկերների հետ՝ լքում է զօրամասը եւ փախչում-անցնում է Պարսկաստան ու մտնում Դաշնակցական խմբերի մէջ։

1896 թ. Սեպտեմբերին, Սալմաստից Վան մեկնեց Պետրոս Սէրէմճեանի — Բուլդարացի Պետոյի զինուած խումբը՝ միանալու համար Վազգէնի եւ Վարդանի ուժերին։ Բաղդասարն էլ, այժմ արդէն Գուրգէն անունով, այդ խմբի մէջ էր։ Նա մնում է Վանում, մասնակցում է ինքնապաշտպանութեան կռիւներին, ապա, Կէմ գիւղի կռուից յետոյ, Վարդանի խմբի հետ, անցնում է Շատախ՝ իր կազմակերպական ընդունակութեամբ եւ զինուորական հմտութեամբ կարեւոր բաժին ունենալով Շատախի ինքնապաշտպանութեան գործում։

Տարուայ վերջը Գուրգէնը վերադառնում է Սալմաստ, ուր արշաւանքի պատրաստութիւններ էին տեսնւում։ Նա էլ կողմնակից չէր մեծ խմբով արշաւանքին եւ գտնում էր, որ կուսակցութիւնը Երկրում զէնք ու մարտական ուժեր պէտք է համախմբէ եւ յեղափոխական ձեռնարկները Երկրի ներսի ուժերով պէտք է կատարէ։ Ուստի, Խանասորի արշաւանքից մէկ շաբաթ առաջ, միացաւ Վազգէնի 35 հոգինոց խմբին եւ անցաւ Վան, ուր, սակայն, երկար չմնաց։ Տարօնից մտահոգիչ լուրեր էին հասնում։ Սերոբ Աղբիւրի խումբում էլ ներքին դժգոհութիւններ էին ծագել։ Տարակարծութիւններ կային եւ Մուշ-Սասունի ղեկավար ընկերների մէջ։ Անհրաժեշտ էր, որ դրսից մի հեղինակաւոր ընկեր միջամտէր՝ վերականգնելու համար համերաշխութիւնը։ Այդ պարտականութիւնը դրուեց Գուրգէնի վրայ։

Եւ, իսկապէս, Գուրգէնը յարմարագոյն անձն էր այդ դերի համար։ Բնածին իմացականութեամբ օժտուած, բաւական պար-

գացած, յեղափոխական գործում փորձուած, լրջմիտ, լայնախոհ, ընկերական, մեղմ, բայց երբ գործը պահանջում էր՝ արագ ու վճռական, զինուոր ու գործիչ՝ Գուրգէնը, ամէն տեսակէտից, վայրկեանի պահանջած մարդն էր: Նա էլ, Հրայրի եւ Վաղդէնի պէս, համոզուած էր, որ յեղափոխութիւնը պէտք է լինի Երկրի ժողովրդի գործ: Արտասահմանը պէտք է օժանդակէ նիւթական միջոցներով, զէնք ու ռազմամթերքով, ղեկավար ու մարտիկ ուժերով, բայց յեղափոխական ուժերի եւ շարժումների կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը պէտք է գտնուի Երկրի ներսը: Դրա համար անհրաժեշտ էր Դաշնակցութիւնը Երկրում դարձնել զանգուածային, զինուել՝ զգուշանալով մասնակի բռընկումներից՝ ապագային, երբ քաղաքական պայմանները յարմար նկատուին, ընդհանուր ապստամբութեան անցնելու համար: Այս համոզումներով եւ մոլեռանդ սիրով դէպի հայ ժողովուրդն ու Հայ Դատը, Գուրգէնը մեկնեց նախ Ախլաթի շրջանը, ապա Բաղէշ եւ այնտեղից Սասուն-Մուշի շրջանը:

Հազիւ մէկ ու կէս տարի ապրեց Գուրգէնը Ախլաթ-Բաղէշ-Տարօնում, բայց անջնջելի հետք թողեց ժողովրդի սրտում իր արդարամիտ, անձնուէր եւ արդիւնաւոր գործունէութեամբ: Ճիշդ է, նրա ճիգերը հաշտեցնելու իրերամերժ տարրերը լիակատար յաջողութեամբ չպսակուեցին, բայց կրքերը զգալի չափով մեղմացան եւ համերաշխ ու շինարար գործունէութեան հնարաւորութիւն ստեղծուեց:

Ախլաթ-Գիւզալդարայի շրջանում նա գործեց Սերոբի հետ համախորհուրդ՝ կազմակերպական լուրջ աշխատանք կատարելով: Բոլոր գիւղերում ստեղծուեցին կուսակցական մարմիններ եւ մարտական խմբեր: Ամուր հիմքերի վրայ դրուեց ինքնապաշտպանութեան գործը: Կանոնաւորեց կապը Երկրի եւ արտասահմանի մարմինների հետ: Այն ուժերը, որոնք Սերոբից դժգոհ՝ քաշուել էին ասպարէզից, նորից գործի անցան:

Բարերար եղաւ Գուրգէնի այցելութիւնը եւ Բիթլիս, որտեղի հայութիւնը արիւն էր լալիս ոստիկանապետ Հիլմիի ու իր գործակիցների դաժան բռունցքի տակ: Գուրգէնի նախաձեռնութեամբ ահաբեկումի ենթարկուեց այդ հրէշը, որ ցնցող տպաւորութիւն գործեց քաղաքի եւ շրջանի բնակչութեան վրայ: Այնուհետեւ դիւրացաւ նաեւ այդ շրջանի կազմակերպութիւնը: Ախլաթ-Բաղէշ միացուեցին մէկ՝ Սալնոյ Զորի Կենտր. Կոմիտէութեան մէջ: Գուրգէնը անողոք կռիւ մղեց նաեւ ամէն կարգի մատնիչների, վաշխառուների, կաշառակեր պաշտօնեայի եւ քիւրտ աւազակների դէմ:

Սալնոյ Զորի Կոմիտէութիւնը ամուր հիմքերի վրայ դնելուց

յետոյ, Գուրգէնը անցնում է Տարօն եւ կենտրոն ունենալով Սասունի Սպաղանք գիւղը՝ իր գործունէութիւնը տարածում է Սասունի եւ դաշտի գիւղերի վրայ։ Այստեղ իր մտերիմ գործակիցն է Հրայր-Դժոխքը, որի հետ բնաւորութեան եւ համոզումների այնքա՛ն մտերմութիւն ունէր Գուրգէնը։ Հրայրն էլ հակառակ էր ցուցական գործերի, անժամանակ բռնկումների։ Նա էլ ընդհանուր հիմնական կազմակերպութեան եւ լուրջ պատրաստութեան էր ձգտում։ Եւ երկուսը միասին, ձեռք-ձեռքի, աշխատեցին մաքրել շրջանը անհանդարտ տարրերից, զանգուածային ուժեղ կազմակերպութիւն ստեղծել եւ յեղափոխական շարժումը վերածել համաժողովրդական գործի։

Այստեղ էլ Գուրգէնը աշխատեց կազմակերպել ժողովրդի պաշտպանութիւնը ամէն տեսակ հարստահարիչների՝ վաշխառուների, հարկահանների, գիւղացիութիւնը շահագործող աղաների ու բէգերի, կեղեքիչ պաշտօնեաների, աւազակ քրտերի դէմ։ Մեծ ճիգ թափեց շրջանը խաղաղ պահելու, կռիւներից խուսափելու համար, որպէսզի յեղափոխական-կազմակերպական աշխատանքը չխանգարուի։ Իրեն, ինչպէս եւ Հրայրի եւ տեղական ուրիշ պատասխանատու ընկերների համար ամենէն կարեւորը ժամանակ շահելն էր եւ ընդհանուր յեղափոխական շարժման նախապատրաստուելը։

Եւ, յիրաւի, Գուրգէնի օրով լուրջ ցնցումներ տեղի չունեցան Տարօնում, եթէ չհաշուենք Քոփ գիւղի կռիւը քրտերի հետ՝ վերջիններիս ջախջախիչ պարտութեամբ։ Երկրորդ մեծ կռիւը Ցրոնք գիւղում ճակատագրական եղաւ Գուրգէնի համար։ Ցրոնքի մի մարագում հանդստանալիս Գուրգէնը եւ 7 մարտիկ ընկերներ, յանկարծ, պաշարուում են թուրք զօրքից։ Թշնամին կրակի է տալիս մարագը։ Գուրգէնը եւ ընկերները դուրս են թռչում եւ օրհասական կռուում թուրք զինուորների գերազանց բազմութեան հետ՝ բոլորն էլ նահատակուում են։ Լուրջ կորուստ է ունենում եւ թշնամին։ Սպանուում են, ի միջի այլոց, հայակեր Թալիպ եւ Հասան էֆէնտի արիւնարբու ճիւաղները։

Գուրգէնի մահը ծանր հարուած էր յեղափոխութեան։ Մեծ եղաւ նրա դերը Ախլաթի, Բիթլիսի, Սասունի եւ Մուշի դաշտի հայութեան մէջ։ Բառի լայն իմաստով յեղափոխական-ժողովրդական գործիչ էր։ Հայ, քիւրտ, թուրք աշխատաւոր գիւղացիութիւնը յարգանքով, իսկ աւազակաբարոյ հարստահարիչ տարրերը երկար ժամանակ վախով էին յիշում նրա անունը։

ԽԱՆ

ԲԱՐՍԵՂ ԹԻՐԵԱՔԵԱՆ

Յեղափոխական շարժումը մի հրաշագործ երեւոյթ եղաւ ազգային գիտակցութեան արթնացման եւ ազգային միութեան վերականգման՝ մէկ հայութիւն ստեղծելու տեսակէտից։ Ի սիրուս աշխարհի ցրուած, յարանուանութիւնների բաժանուած, տարբեր լեզուներ խօսող Հայկի զաւակները, յանկարծ, սկսեցին զգալ ու գիտակցիլ, որ իրենք միեւնոյն ընտանիքի անդամներ են՝ հողով եւ արիւնով կապուած իրարու հետ։ Դոնից մինչեւ Նեղոս եւ Միսիսիպիից մինչեւ Գանգէս, ուր որ բախտը նետել էր հայութեան բեկորներին, Յեղափոխութիւնը վառեց նրանց սրտերում ազգասիրութեան ու հայրենասիրութեան կրակը եւ համախմբեց աղատագրական պայքարի համազգային դրօշակի տակ՝ փոյթ չէ, թէ բաժան-բաժան դորձելակերպով։ Մասնաւորապէս, Հ. Յ. Դաշնակցութեան մարտական դրօշի ներքեւ հաւաքուեցին և՛ լուսաւորչական, կաթոլիկ ու բողոքական, եւ հայախօս, ռուսախօս, թրքախօս ու պէսպէս այլ լեզուներ խօսողներ՝ զմայլելի ոգեւորութեամբ եւ համերաշխութեամբ՝ ազգային միութեան եւ հայրենիքի ազատութեան նշանաբանով։

Լեզուով օտարացած հայկական բեկորի զաւակ էր եւ Խանը՝ բուն անունով Բարսեղ Թիրեաքեան, Կեսարիայի թրքախօս շրջանի Տէրէվէնք գիւղացի, ծնուած 1863 թուին։ Առնական, յանդուգն եւ ըմբոստ՝ երիտասարդ Բարսեղը չի կարողանում հաշտուել թրքական անիրաւ կարգերի եւ հայութեան ճնշուած վիճակի հետ։ Յաճախ կռուի է բռնւում հայերին անարգող կամ հարբստահարող թուրքերի հետ եւ, ի վերջոյ, ստիպուած է լինում թողնել ծննդավայրն ու պանդխտել Պոլիս։ Այստեղ նա յարում է Հնչակեան կուսակցութեան, մասնակցում է Գում Գափուի եւ Բաբը Ալիի ցոյցերին՝ աչքի ընկնելով, իբրեւ անվախ ու համարձակ մարտիկ։

Պոլիսը, սակայն, չի գոհացնում Բարսեղի երիտասարդ եւ բուռն խառնուածքին։ Շարժում ու կռիւ էր տենչում նրա ըմբոստ սգին։ Երկրից հասնող լուրերը նրան քաշում են դէպի Հայաստանի լեռներն ու ձորերը՝ հայդուկային փոթորկայոյզ կեանքի։ Եւ թողնելով թրքական մայրաքաղաքը, անցնում է Կովկաս մարտական խմբերի մէջ մտնելու նպատակով։ Այստեղ տեսնում է, որ Հնչակեանութիւնը դրեթէ գոյութիւն չունի. Հնչակեան համարուած Հրայր Դժոխքը, Դերսիմի Քեռին եւ ուրիշներ գործում են Դաշնակցութեան մէջ, եւ ինքն եւս միանալով Դաշնակցութեան՝ անցնում է Պարսկաստան, ուր պատրաստւում էր Խանասորի ար-



ԽԱՆ

շաւանքը։ Խանասորի արշաւանքին նա մասնակցում է իբրեւ ասնապետ եւ աչքի է ընկնում, որպէս անվախ եւ քաջ կռուող։

Այնուհետեւ, Բարսեղ Թիրեաքեանը, այլեւս իբրեւ Խան, դարձաւ նշանաւոր հայդուկ ու խմբապետ եւ մասնակցեց ֆէդայական բազմաթիւ գործերում։ Նշանաւոր է նրա վարած կռիւը 1899 թ. Հոկտ. 26–ին, Ալաշկերտի Խաստուր գիւղում։ Մեծ զինատար խմբի գլուխ, Կարսի կողմերից սահման անցնելով, Խանը հասնում է Խաստուրի մօտ։ Բուքն ու բորանը թոյլ չեն տալիս որոշուած ապահով տեղը հասնելու։ Խումբը ստիպուած է լինում ցերեկել Խաստուրցի Խաչիկ վարժապետի գոմում։ Խաչիկ վարժապետը, յեղափոխութեան համակիր, ամէն հոգ է տանում, որ յոգնած հայդուկները կերակրուին ու հանգստանան։ Առաւօտը, սակայն, լուր է ստացւում, որ խումբը մատնուած է, եւ շուտով համիդիէներն ու զինուորները պաշարում են գոմը՝ նախօրօք կտրելով գիւղի ճամբաները։ Սկսւում է տաք կռիւ՝ գոմից, ապա գիւղի փողոցներում, վերջը՝ շրջակայ բլուրների վրայ։ Հայդուկները, Խանի ճարտար ու յանդուգն առաջնորդութեամբ, յաջողում են, թշնամուն ծանր կորուստ պատճառելով եւ իրենց

կողմից էլ զոհեր տալով, տեղատարափ գնդակների տակ, կռուով քաշուել մօտակայ բլուրները։ Այնտեղ էլ կռիւը շարունակւում է. հայդուկները յետ մղելով թշնամու կատաղի յարձակումները՝ անհետանում են դիշերուայ մթութեան մէջ։

Հազարից աւելի կանոնաւոր զօրք ու համիդիէ մասնակցեցին Խաստուրի կռուին մի քանի տասնեակ հայ ֆէդայիների դէմ։ Ծանր հարուած կրեց ու մարդկային կորուստ ունեցաւ թշնամին, բայց հայերն էլ թանգագին զոհեր տուին։ Խաստուրի կռուում նահատակուեցին տասնապետներ Կեսարացի Միհրանը՝ 28 տարեկան, Սիփանցի Գրիգորը՝ 26 տար., Տիգրանակերտցի Հաճին՝ 50 տ., Խնուսցի Պեսոն՝ 30 տ.։ Հայդուկներից՝ Կարնեցի Աւետեանը՝ 37 տարեկան, Կարճկանցի Ցարօն՝ 26 տ., Հաւթուանցի Կարապետը՝ 27 տ., Խլաթցի Ջնդօն՝ 22 տ., Բուլանըղցի Լեւոնը՝ 23 տ., Մակուեցի Մեսրոպը՝ 23 տ., Բուլանըղցի Սարգիսը՝ 23 տ., Բուլանըղցի Յովհաննէսը՝ 25 տ., Խաստուրցի Ղուկասը՝ 23 տ., Սիփանցի Խաչօն՝ 29 տ. եւ Կովկասցի Համբարձումը՝ 23 տ.։ Սպաննուեց նաեւ Խաչիկ վարժապետը եւ իր եղբայրը։

Խաստուրի կռիւը մեծ տպաւորութիւն գործեց, մասնաւորապէս, քիւրտ աշիրէթների վրայ, որոնք առասպելներ էին պատմում հայ ֆէդայիների քաջագործութիւնների մասին։ Լայն ժողովրդականութիւն ստացաւ եւ Խանի անունը։

Նոյնպիսի համբաւութեամբ եւ քաջութեամբ Խանը վարեց եւ «Կայծակ» ձիաւոր խմբի գործողութիւնները Բասենում։ Բոցիկի եւ Գոմաձորի կռիւները տարածեցին Խանի համբաւը ամէն կողմ։ Բասենի կռիւներից վերադառնալիս, սահմանագլխին, Խանի խումբը կռուի բռնուեց թշնամու գերազանց ուժերի հետ։ Հայդուկների փամփուշտները սպառուել էին, իսկ թշնամին՝ անողոք էր։ Բուռն ճակատամարտի մէջ, 1903 թ. Սեպտ. 17-ին, վերջին փամփուշտը կրակելով, հերոսի մահով ընկան Խանը եւ իր զինակից ընկերները։

Խանը, Դաշնակցական այդ անվեհեր մարտիկը, հեռաւոր Կեսարիայի թրքախօս, բայց հայաշունչ հայութեան անձնուէր զաւակը, մեր ամենէն ժողովրդական հերոսներից էր, որի անուան շուրջ առասպելական պատմութիւններ հիւսուեցին։ Եւ մինչեւ այսօր էլ ժողովուրդը ոգեւորութեամբ երգում է—

Լուսին չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ-արագ.
Տեսայ, որ քաջ Խանի խումբն էր,
Զինուած էին մոսիններով...

ԱՐՄԵՆԱԿ ԼԵՒՈՆԵԱՆ

Արմենակ Լեւոնեանը, Դաշնակցութեան մէջ յայտնի Աշոտ Երկաթ կամ Երկաթ անունով, ծնուած է 1872 թ. Մարտ 10-ին, Բաղէշի Շէխեակուղ գիւղում: Աւարտել էր Բաղէշի ամերիկեան վարժարանը, որից յետոյ նուիրուել էր ուսուցչութեան Սասունում: Շնորհիւ իր ընկերական ու դպրոցական դաստիարակութեան եւ անձնական յատկութիւնների՝ Արմենակը պատանի հասակում արդէն տոգորուած էր հայրենասիրական եւ ազատատենչ գաղափարներով: Մարդար վարժապետների եւ Արաբոների գործունէութեան ժամանակաշրջանն էր: Մթնոլորտը յագեցած էր յեղափոխական ոգիով: Արմենակն էլ ազդւում է ժամանակի տրամադրութիւններից: Սասունում նա կապեր է հաստատում թուրք բռնակալութեան եւ քրտական շահատակութիւնների դէմ պայքարող ըմբոստների եւ յեղափոխական անհատների հետ եւ ուխտում է իր կեանքն էլ տրամադրել հայ ժողովրդի ազատագրութեան գործին:

1892-ին Արմենակը մեկնում է Ամերիկա իր մտաւոր պաշարը ճոխացնելու եւ յեղափոխական գործի համար փորձառութիւն ձեռք բերելու նպատակով: Այստեղ նա թէ՛ ուսանում է եւ թէ՛ աշխատում միաժամանակ, բայց իր ժամանակի մեծ մասը յատկացնում է յեղափոխութեան գործին: Իւսուֆեանի Ամերիկա հասնելուց յետոյ, մտնում է Դաշնակցութեան շարքերը եւ շուտով դառնում է Ամերիկայի կազմակերպութեան սիւներից մէկը՝ եռանդուն, անձնազոհ գաղափարական գործիչ: Մասնակցում է Հ. Յ. Դ. Ամերիկայի շրջանի պաշտօնաթերթ «Հայրենիք»ի հիմնադրութեան եւ մնայուն կերպով աշխատակցում է նրան: Վերամեանի գալուց յետոյ՝ դառնում է նրա մտերիմ գործակիցը:

Ամերիկայի գործունէութիւնը, սակայն, Արմենակին չի գոհացնում: Նրան հրապուրում էր Երկրի յեղափոխական աշխատանքը: Մարմնով Ամերիկայում՝ հոգեպէս նա հայրենիքում էր, որի հետ պահում էր կենդանի յարաբերութիւն: Եւ 1902-ին թողնում է Ամերիկան եւ Կովկասի ու Պարսկաստանի վրայով անցնում է Վան: Ճանապարհին ծանօթանում է Դաշնակցութեան գործունէութեան եւ կապեր է հաստատում Կովկասի եւ Պարսկաստանի ընկերների հետ:

Վանը չէր, սակայն, իր նպատակակէտը: Այնտեղից շուտով մեկնում է Սասուն, իր երազների աշխարհը, եւ բուռն ոգեւորութեամբ լծւում յեղափոխական աշխատանքի՝ Հրայրի, Գէորգ Զաւուշի, դրսից եկած եւ տեղական ընկերների հետ: Շրջում է գիւղից գիւղ, քարոզում, կազմակերպում եւ զինում է ժողովուր-

ԱՐՄ. ԼԵՒՈՆԵԱՆ ԵՒ ՅՈՎՀ. ՇԱՀԻՆԵԱՆ (նստած)

դին ինքնապաշտպանութեան համար։ Երկրի վիճակի մասին թղթակցութիւններ է ուղարկում «Դրօշակ»ին եւ Բոստոնի «Հայրենիք»ին։ Եւ կարճ ժամանակում դառնում է ժողովրդական սիրուած գործիչներից մէկը։

Միայն Սասունով չէր սահմանափակուած Արմենակի գործունէութեան տարածքը։ Նա իջնում է եւ Մուշի դաշտ, շրջում է բոլոր գիւղերը՝ Դաշնակցութեան գաղափարներն ու կազմակերպական ցանցը տարածելու համար։ 1903-ին, 12 հոգինոց խմբով, Արմենակը գործում է Ախլաթի շրջանում՝ միաժամանակ կապ հաստատելով Տարօնի եւ Վասպուրականի միջեւ։ Հրայրի ընկերակցութեամբ անցնում է Վան՝ Վարդգէսի հետ խորհրդակցելու եւ ներդաշնակելու համար երկու շրջանների գործունէութիւնը։

1903-ի վերջերը Պարսկաստանի վրայով Արմենակը անցնում է Կովկաս եւ այնտեղից Բուլգարիա, իբրեւ Հ. Յ. Դ. ԵՐՐՈՐԴ ԸՆԴՀ. ժողովի Տարօնի պատգամաւոր։ Այդ ժողովում լայնօրէն քննւում են երկրին վերաբերուող հարցերը եւ մշակւում գոր-

ծունէութեան նոր ծրագիր։ Արմենակը կարեւոր մասնակցութիւն է ունենում այդ հարցերի քննութեան մէջ։

Ժողովի ընթացքում լուրեր են հասնում Տարօնից, որ Թուրք կառավարութիւնը զինուած գործողութիւնների է պատրաստւում Սասունի դէմ, ուր կենտրոնացած էր Անդրանիկը զինակից ընկերներով։ Արմենակը շտապում է վերադառնալ Տարօն։ Հասնում է Կովկաս, ուր արտակարգ շարժում էր սկսուել օգնութիւն հասցնելու Սասունին։ Երեւանի կենտր. Կոմիտէի որոշումով Արմենակն եւս, զինուած խմբի գլուխը անցած, մտնում է Երկիր։ Յաջողութեամբ հասնում է Արճէշի մօտերը, բայց այստեղ, Խոջալլու կոչուած ձորակում, մի քարայրի մէջ, պաշարւում է Թուրք զօրքերից եւ քիւրտ աշիրէթներից։ Տեղի է ունենում տաք կռիւ։ Խմբի մի մասը ազատւում է, իսկ Արմենակը եւ մի քանի ընկերներ նահատակւում են, 1904 թ. Յունիս 2-ին։ Տարօնը կորցնում է իր անձնուէր գործիչներից մէկին. մի խնկելի անուն եւս աւելանում է Հ. Յ. Դաշնակցութեան հայրենանուէր հերոսների ցանկի վրայ։

Արմենակի խմբում էր եւ անուանի հայդուկ Քղեցի Պօղոսը, որ նոյնպէս նահատակուեց քիւրտերի ձեռքով։

ԱՐՄԵՆԱԿ ՕԽԻԿԵԱՆ

(ՍԼԱՔ)

Արմենակ Օխիկեան ծնած է 1874ին, Բաղէշի մէջ։ Աւարտած է Բաղէշի կեդրոնական դպրոցը։ Քսան տարեկան հասակին թողած է առեւտրական ասպարէզը՝ նուիրուելով յեղափոխական գործին։

Սասունի առաջին կոտորածին (1894 թ.), երբ եւրոպական քննիչ հիւպատոսները եւ օգնութեան հասնող ամերիկացիները Սասուն մեկնեցան, Արմենակը ընկերացաւ անոնց, իբրեւ հաղորդակցութեան կենդանի կապ ծուատուած ժողովրդի, հալածական հայդուկներու եւ եկողներու միջեւ։ 1895ին, Մուշի մէջ, Բաղէշէն լուր առնելով, որ հայրը բանտարկուած է, միւս կողմէն ալ կառավարութիւնը հաշտ աչքով չի նայիր իրեն վրայ, քննիչ հիւպատոսներու պաշտպանութեան տակ անցաւ Կարին։ Հոս Թուրք կառավարութեան կողմէ արդէն պաշտօնապէս հետապնդուելով՝ փախաւ Կովկաս։

Կովկասի մէջ Արմենակը կը յարի Դաշնակցութեան եւ մինչեւ

ՍԼԱՔ

96–ի վերջերը կը գրաղի սահմանամերձ վայրերու մէջ — զէնքի ու յեղափոխական գործիչներու փոխադրութեան գործով։

1897–ին, կուսակցութեան որոշումով կ'անցնի Պարսկաստան եւ իրը վիրաբոյժ սահմանի երկու կողմը գտնուող հայտարանցի ու Ջալալցի քիւրտ աշիրէթներուն մօտ, զէնքի տեղափոխութեան եւ հայ – քիւրտ բարեկամութիւն ստեղծելու լուրջ գործի կազմակերպութեան համար կ'աշխատի, Սլաք անունով։ Իր այս գործունէութեամբ անգնահատելի ծառայութիւն կը մատուցանէ Դաշնակցութեան։

1904ի ամառը, Սլաքը դաւադրաբար կը ձերբակալուի, թուրքական յիսնեակ մը զինուորներու կողմէ հետապնդուելով, Ալատաղի (Մաղկանց լեռներ) վրայ, երբ փոխադրական նոր գծեր ուսումնասիրելու համար մեկնած էր հոն։ Ուշ ատեն բարեկամ քիւրտերը՝ Մուստաֆա բէկի ձիաւորները օգնութեան կը հասնին, երբ արդէն զինքը Բայազէտի բերդը հասցուցած էին։ Եւ կարճ քննութիւն կատարելէ ետք՝ Վան կը տեղափոխեն բազմաթիւ ժանդարմաներու խիստ հսկողութեան տակ։

Վանի բանտի մէջ Արմենակը մշտական կապ կ'ունենայ դրսի ընկերներու հետ եւ բանտէն կ'ազատի 1907–ի աշնան վերջերը, իբրեւ պարսկահայ բժիշկ, Վանի պարսկական հիւպատոսի եւ հայտարանցի ցեղապետներու վկայութեամբ, ու պարսկաստան կ'արտաքսուի թուրք ժանտարմներու հսկողութեան ներքոյ։ Եւ Պարսկաստանի մէջ քիչ կազդուրուելէ ետք, կազմակերպութեան կարգադրութեամբ կը մեկնի Թիֆլիզ, երկրի մասին Բիւրոյին զեկուցանելու համար։

Շուտով կը հոչակուի Օսմանեան Սահմանադրութիւնը։ Երկրի դռները կը բացուին պանդուխտ ու հալածական հայերու առաջ, եւ Արմենակը կը մեկնի Իգդիր ներգաղթի գործը կազմակերպելու համար եւ վերջէն ինքն ալ երկիր կը մտնի՝ հոն շարունակելու համար կազմակերպական աշխատանքները։

Վրայ կը հասնին Օսմանեան խորհրդարանի ընտրութիւնները։ Դաշնակցութեան կողմէ Բաղէշի շրջանի համար Արմենակ Օ-

խիկեանը պաշտօնական թեկնածու կը յայտարարուի, բայց քուէներու չնչին տարբերութեամբ մահմետական թեկնածուն կ՚ընտրուի։

Զմեռը Արմենակ Բաղէշ կը մեկնի եւ անկէ Մուշ, ուր կը գտնուէին իր ծնողները, եւ 15 տարի հալածական կեանք ապրելէ ետք հազիւ երեք օր տեսակցութիւն կունենայ ծնողներու հետ։ Հայ ժողովուրդը ամէն տեղ խանդավառ ընդունելութիւն ցոյց կուտայ անոր։

Վերադարձին, շարք մը գաւառներ շրջելէ ետք, Բայազէտի վրայով կ՚ուղեւորուի Կովկաս՝ կազմակերպական գործով։ Մինչ այդ, ցարական բռնապետութիւնը հալածանք սկսած էր հայ յեղափոխականներու դէմ։ Արմենակը Եղիշէ Թովչեանի հետ միասին, փախստական ճամբայով, անվտանգ կանցնի Կարին։ Հոս քանի մը ամիս գործելէ ետք, գաւառը կազմակերպելու կ՚ելնէ եւ իբր կեդրոնական յարմար վայր Բայազէտը կ՚ընտրէ, ուր կը մընայ մինչեւ 1911ի վերջերը։ Ապա կը մեկնի Բաղէշ՝ իր ծննդավայրը, ուր իր վրայ կը վերցնէ հանրային եւ կուսակցական գործերու ամբողջ ծանրութիւնը։

Օսմ. պարլամենտի երկրորդ շրջանին (1913), իբրեւ Դաշնակցական թեկնածու, պատգամաւոր կ՚ընտրուի, բայց կառավարութիւնը, ինչպէս շատ վայրերու Բաղէշի մէջ ալ ժողովուրդի քուէները կ՚արհամարհէ եւ բռնի միջոցներով պատգամաւոր կը նշանակէ Մինաս Զիրաղը։

1914–ի Փետրուարին Բաղէշի շրջանին մէջ սկիզբ կ՚առնէ քրտական ապստամբութիւնը, որ քաղաքական աստառ ունենալով հանդերձ՝ կրօնական բնոյթ կը կրէր եւ հայերու գոյութեան կը սպառնար։ Սլաքը կարճ ատենի մը մէջ կը կազմակերպէ ժողովրդի ինքնապաշտպանութեան գործը եւ նրբամիտ քաղաքականութեամբ մը պայքարող կողմերու համար հայերը անխտիր անկեղծ բարեկամներ կը ճանչցնէ, որով կռուի ամբողջ ընթացքին մէկ հայի քիթ չ՚արիւնոտեցաւ։ Այնքան վստահութիւն ձեռք բերաւ, որ Թուրք կառավարութիւնը հայերու ինքնապաշտպանութեան համար 150 նոր հրացան եւ փամփուշտ տրամադրեց։

Համաշխարհային պատերազմի սկզբին, Կարնոյ մէջ գումարուած Հ. Յ. Դաշնակցութեան Ը.–րդ ընդհանուր ժողովին Արմենակ նոյնպէս իր մասնակցութիւնը բերեց եւ նոր հրահանգներով Բաղէշ վերադարձաւ։

Հայկական Մեծ Եղեռնին, Թուրք կառավարութիւնը յանձինս իր ճիւաղ՝ Խալիլ եւ ձէվտէթ փաշաներու, տմարդի միջոցներով ձերբակալեց Արմենակ Օխիկեանը եւ կախաղանի միջոցաւ վերջ տուաւ անոր բեղուն կեանքին, Բաղէշի մէջ։

ՍԱԼՆՈՑ–ՁՈՐՑԻ

ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Արեւմտահայ գրականութեան կոթողներից մէկը, գրագէտ, հրապարակագիր, դաստիարակ, հանրային եւ Դաշնակցական ակնաւոր գործիչ՝ Ռուբէն Զարդարեանը ծնուել է 1874 թուին, Սեւերեկ գաւառում: Հազիւ երկու տարեկան՝ ընտանիքի հետ փոխադրւում է Խարբերդ, ուր եւ անցնում են նրա մանկութեան ու պատանեկութեան տարիները եւ երիտասարդութեան առաջին շրջանը:

Զարդարեանը իր կրթութիւնը ստանում է Խարբերդ քաղաքի ազգային դպրոցում, ապա ամերիկեան հաստատութեան մէջ եւ, ի վերջոյ, Թլկատինցիի վարժարանը, ուր եւ ձեւաւորւում է նրա մտաւոր–բարոյական նկարագիրը: Թլկատինցիի ազդեցութիւնը հետագային պիտի արտայայտուէր եւ նրա գրականութեան մէջ:

Դպրոցական շրջանում արդէն պատանի Զարդարեանի մէջ նկատւում է հակում ու սէր գրականութեան եւ գիտութեան: Ինքնամփոփ, իր խոհերով տարուած, մի գիծ, որ անբաժան մնաց նրա բնաւորութիւնից ամբողջ կեանքում, Զարդարեանը իր ամբողջ ոյժն ու ժամանակը յատկացնում էր ինքնազարգացման: Եւ երբ, 1892–ին, լրացրեց ուսման ընթացքը եւ մտաւ ուսուցչական ասպարէզ, շուտով աչքի ընկաւ, իբրեւ հմուտ ու սիրուած դաստիարակ եւ բանիմաց ու լուրջ հանրային գործիչ:

1897–1903 թուականներին Զարդարեանը վարեց Մէզրէի կեդրոնական վարժարանի տնօրէնի պաշտօնը՝ իրեն գործակից ունենալով կարող եւ նուիրուած ուսուցիչների մի խումբ: Ինքը դասաւանդում էր հայերէն եւ ֆրանսերէն լեզուներ, պատմութիւն եւ գրականութիւն: Այս 5–6 տարիների ընթացքում, նրա ձեռքի տակից դուրս եկան մտաւոր լայն պաշարով օժտուած գաղափարական երիտասարդներ, որոնք, իբրեւ ուսուցիչ, գրագէտ կամ հանրային գործիչ, արդիւնաւոր դեր կատարեցին ո՛չ միայն Խարբերդի ու շրջանի մէջ, այլեւ ընդհանուր ազգային կեանքում:

Սակայն, միայն կրթական–դաստիարակչական աշխատանքով չէր սահմանափակւում Զարդարեանի գործունէութիւնը. նա եռանդով մասնակցում էր եւ հասարակական գործերին, եւ աւելի մեծ եռանդով՝ յեղափոխական աշխատանքին: Արդէն Դաշնակցութեան մէջ էր եւ շրջանի ղեկավարներից մէկը: Նրա շնչի տակ կազմակերպւում եւ յեղափոխական դաստիարակութիւն էր ստանում երիտասարդութիւնը քաղաքում թէ գիւղերում: Նա վարիչ դեր էր կատարում եւ շրջանի կուսակցական կեանքում, յարաբերութիւն էր պահում դրսի մարմինների հետ եւ թղթակցութիւններ գրում «Դրօշակ»ին:



ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Զարդարեանը իր գործունէութեամբ անջնջելի հետք թողեց Խարբերդի Դաշնակցական կազմակերպութեան, մասնաւորապէս երիտասարդ սերնդի վրայ։ Այդ գործունէութիւնը, բնականաբար, չէր կարող վրիպել կառավարութեան ուշադրութիւնից, մանաւանդ որ, նախանձողներ ու հակառակորդներ էլ քիչ չէին հայերից։ Պատահական մի առիթից օգտուելով, 1903–ին, կառավարութիւնը ձերբակալում է Զարդարեանին Թլկատինցիի եւ մի քանի ուրիշ մտաւորականների հետ։ Մի տարի բանտում մնալուց յետոյ, 1904–ին, տեղի է ունենում դատավարութիւնը, եւ Զարդարեանը արձակւում է անպարտ, բայց այլեւս չի կարողանում պաշտօնավարել Խարբերդում։

Նոյն տարին, 1904–ին, Իզմիրի ազգային վարժարանի հոգաբարձութեան հրաւէրով՝ Զարդարեանը ընտանիքով մեկնում է Իզմիր, բայց արդելքի հանդիպելով Իզմիրի դպրոցում պաշտօն առնելու՝ ստանձնում է մերձակայ Մանիսայի ազգային վարժարանի տնօրէնութիւնը, ուր, սակայն, հազիւ մէկ տարի է մընում։ Վրայ են հասնում 1905–ի դէպքերը. Սուլթանի մահափորձի պատրաստութեան զուգընթաց Իզմիրում եւս յեղափոխական աշխատանքներ են կատարւում, որոնց լուրը հասնում է կառավարութեան ականջին։ Տեղի են ունենում խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ։ Խուզարկւում է եւ Զարդարեանի բնակարանը, եւ Զարդարեանը բանտարկւում է երկու շաբաթով։ Այլեւս Մանիսայում էլ անկարելի է լինում մնալ։ Ընկերների պնդումով եւ աջակցութեամբ նա, իբրեւ փախստական, ընտանիքով մեկնում է Բուլգարիա եւ հաստատւում Ֆիլիպէ քաղաքում։

Այստեղ Զարդարեանի առջեւ բացւում է գործունէութեան մի նոր ասպարէզ։ 1906–ին նա ձեռնարկում է «Ռազմիկ» եռօրեայ թերթի հրատարակութեան, որ դառնում է Դաշնակցութեան Բալկանի շրջանի ազդեցիկ պաշտօնաթերթը։ Խմբագրական աշխատանքներից ազատ ժամանակը Զարդարեանը յատկացնում է դրա–

կանութեան եւ Դաշնակցութեան կազմակերպական գործերին։ Որպէս Բալկանի շրջանի ներկայացուցիչ, նա մասնակից Հ. Յ. Դ. Զորրորդ Ընդհ. Ժողովին, Վիեննայում, ուր կովկասեան եւ ընկերվարական գործունէութեան հակառակորդներից մէկն էր, Վռամեանի, Աւ. Իսահակեանի, Սարգիս Մինասեանի եւ ուրիշների հետ։

Օսմանեան Սահմանադրութեան հռչակումից յետոյ, Զարդարեանն էլ անցաւ Պոլիս, ուր սկսուեց նրա կեանքի եւ գործունէութեան երրորդ՝ այնքան նշանակալից շրջանը։ 1909-ին, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն հիմնեց «Ազատամարտ» օրաթերթը. Զարդարեանը դարձաւ նրա մնայուն խմբագրապետը՝ շրջապատուած օգնականների եւ աշխատակիցների փայլուն մի հոյլով։ Որպէս խմբագիր եւ հրապարակագիր՝ Զարդարեանը ցոյց տուեց արտասովոր հմտութիւն եւ աշխատունակութիւն։ «Ազատամարտ»ը նրա ղեկավարութեան տակ եղաւ եզակի երեւոյթ հայ մամուլի տարեգրութեան մէջ։

Խմբագրական զբաղումներից դուրս՝ նա ժամանակ էր գտնում յատկացնելու եւ գրականութեան, հանրային ու կուսակցական աշխատանքի եւ թղթակցութեան Բոստոնի «Հայրենիք»ին, որին տարիներ շարունակ ուղարկեց շաբաթական տեսութիւններ Աչք Եհովայի ծածկանունով։ Դասախօսում էր Հայրիկեանի «Արդի Վարժարաններ»ում եւ Կեդրոնական Վարժարանում։ Անդամ էր Ազգ. Երեսփ. Ժողովի։ Գործօն մասնակցում էր «Գրական Ասուլիս»ներին եւ ազգային, գրական, կուսակցական ձեռնարկներին՝ ամէն տեղ բերելով լրջութիւն ու հեղինակութիւն։

1914-ի ամառը Զարդարեանն էլ մասնակցեց Հ. Յ. Դ. 8-րդ Ընդհ. Ժողովին, Կարլինում՝ լի յոյսերով ու ոգեւորութեամբ։ Բայց Ժողովը դեռ չէր վերջացած, երբ սկսուեց համաշխարհային պատերազմը, եւ Զարդարեանը ընկճուած շտապեց վերադառնալ Պոլիս։ Յաջորդեցին մռայլ օրեր։ Զարդարեանը մինչեւ վերջ մնաց իր դիրքում, «Ազատամարտ»ի գլխին՝ անյողդողդ պաշտպանելով հայութեան դատը։ Ապրիլ 24-ին նա էլ աքսորուեց հարիւրաւոր ուրիշ մտաւորականների հետ նախ՝ Այաշ, ապա՝ Գոնիա, վերջը Հալէպ։ Եւ Հալէպից յետոյ — ո՛չ մէկ լուր... Գերեզման իսկ չունեցաւ, ինչպէս եւ իր բախտակից ընկերները...

Զարդարեանը իր պատուաւոր տեղը ունի հայ մամուլի եւ հանրային-յեղափոխական կեանքի պատմութեան մէջ, բայց անհամեմատ աւելի մեծ է, իբրեւ գրագէտ։ Գրական հետաքրքրութիւնը նրա մէջ զարգացաւ դեռ աշակերտական նստարանների վրայ, Թլկատինցիի ազդեցութեան տակ։ 1890-ին լոյս տեսաւ նրա առաջին գրութիւնը Պոլսի «Ծաղիկ»ում։ 1891-92-ին աշխա-

տակցում էր Գ. Զոհրապի եւ Հ. Աստուրի «Մասիս»ին։ 1895–ին՝ Ա. Զոպանեանի «Մաղիկ»ին։ Ապա՝ «Արեւելեան Մամուլ»ին, «Արեւելք»ին, «Շիրակ»ին, Ն. Ադոնցի «Բանբեր Գրականութեան եւ Արուեստի»ի հանդէսին եւայլն, ինչպէս եւ «Դրօշակ»ին թղթակցութիւններով Երկրի կեանքից։ «Մաղմիկ»ում եւ «Շիրակ»ում ստորագրում էր Էժտահար։ Զարդարեանը հրատարակել է նաեւ դասագրքեր՝ «Մեղրաղետ»ների շարքը եւ թարգմանութիւններ օտար գրականութիւնից, ինչպէս Սելմա Լակէլոֆի «Երուսաղէմը Տալէքարլի մէջ» եւայլն։ Գրել է նաեւ Գէորգ Զաւուշի կենսագրութիւնը Ասլան Ծածկանունով «Դրօշակ»ի մատենաշարի մէջ։

Սկզբնական շրջանին Զարդարեանը գրում էր առաւելապէս գաւառական պատկերներ, ժողովրդական հեքեաթներ, զանազան նիւթերի մասին առօրեայ կեանքից։ Հետզհետէ նրա գրական հորիզոնը լայնանում է, փիլիսոփայական, բարոյական ու հայրենասիրական հարցեր են յափշտակում նրա միտքը եւ մէկը միւսի յետեւից ստեղծագործում է անմահ մնալու սահմանուած գրական գոհարներ, ինչպէս «Պահակները Արթուն են», «Եօթը Երդիչները»ը, «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մէջ» եւայլն։ 1912–ին, «Ադգակ Մատենաշար»ի հրատարակութեամբ լոյս տեսաւ նրա երկերի հատորը,՝ «Ցայդալոյս» եւ 1930–ին «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»ի հրատարակութեամբ «Ամբողջական Երկեր»ի հատորը՝ Արձակ էջեր եւ Հէքեաթներ։ Զարդարեանի երկերի լրիւ հրատարակութիւն, դժբախտաբար, չկայ դեռ։

ԼԵՒՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՊԱՊԱՇԱ, ԶՈՓՈՒՌԵԱՆ

Լեւոն Թադէոսեանը, ընկերական շրջանում յայտնի աւելի Պապաշա (Հայրիկ) անունով, Քրիստափորի քրոջ որդին էր, Գողթն գաւառի Հ. Յ. Դաշնակցութեան պարզեւած ազնուական զաւակներից մէկը։ Ծնուել էր Ագուլիսում, 1865 թ. Փետր. 2–ին, առեւտրական մի ընտանիքում։ Հայրը խանութ ունէր Զաքաթալայի շրջանում եւ ամէն երեք տարի մէկ անգամ այցելութեան էր գալիս ընտանիքին Ագուլիս, որով Պապաշայի երեք եղբայրներն ու մէկ քոյրը երեք տարով տարբերւում էին իրարից։ Լեւոնը երէցն էր. միջնակը Սամսոն, կրտսերը՝ Յովսէփ։ Երեքն էլ՝ նշանաւոր հանրային եւ յեղափոխական գործիչներ։

ԼԵՒՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ — ՊԱՊԱՇԱ

Նախնական կրթութիւնը Լեւոնը ստացաւ Ծննդավայրի ծխական դպրոցում, ուր ուսուցիչ էր եւ Բաֆֆին, որ մեծ ազդեցութիւն ունէր Ագուլիսի երիտասարդութեան վրայ։ 1879-ին, աւարտելով դիւղական դպրոցը, Լեւոնը մեկնում է Թիֆլիս եւ մօրեղբօր՝ Քրիստափորի աջակցութեամբ մտնում է Ներսիսեան դպրոցը, որ յաջողութեամբ աւարտում է 1884-ին։ Թիֆլիսի նրա կեանքը անցնում է Քրիստափորի շնչի տակ։

1884-85 ուսումնական տարում Լեւոնը ուսուցչութիւն է անում Ագուլիսի ծխական դպրոցում, բայց 1885-ին կառավարութիւնը փակում է հայոց ծխական դպրոցները, եւ Լեւոնը մեկնում է Թիֆլիս, ուր ամառը անցնում է Քրիստափորի մօտ, որ նրան յանձնում է զէնքի եւ զրականութեան դաղտնի պահեստի պահպանութիւնը։

Աշնան Ագուլիսի դպրոցը վերաբացուեց. Լեւոնը վերադարձաւ իր պաշտօնին եւ մնաց Ագուլիսում մինչեւ 1888 թ.։ Այստեղ նա աշխատում է նաեւ երիտասարդութեան մէջ, դասախօսութիւններ է տալիս, զրական-զեղարուեստական երեկոյթներ ու ներկայացումներ է կազմակերպում երիտասարդների եւ օրիորդների մասնակցութեամբ։

1888–90 թուականներին, Լեւոնը, Քրիստափորի օգնութեամբ, պատրաստւում է պետական միջնակարգ դպրոցի քննութեան Մոսկուայի Գիւղատնտեսական ճեմարանը մտնելու նպատակով, բայց երբ Բաքւում քննութեան պիտի ներկայանար, ծանր հիւանդութիւն է ստանում եւ հրաժարւում է բարձրագոյն կրթութեան մտքից:

Հ. Ց. Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ, 1890 թ. ամառը, Քրիստափորը ուղարկում է նրան Անդրկասպեան երկիրը կոմիտէներ կազմելու եւ դրամական հանգանակութեան համար: Լեւոնը յաջողութեամբ կատարում է իր վրայ դրուած պարտականութիւնը: Իր յուշերում նա հետեւեալ ձեւով է ներկայացնում այդ օրերի իր տպաւորութիւնները.

«Մերվից վերադառնալիս՝ տեղական հայերը չէին թողնում, որ հեռանամ. շատերն ուզում էին ինձ հետ ղէնքով գալ Թիֆլիս՝ Երկիր անցնելու համար, բայց ես հրահանգ ունէի միմիայն կամաւորներ արձանագրել, յորդորել, որ պատրաստուին, զինավարժուին, ի պահանջել հարկին, Երկիր անցնելու համար: Ամէն հայաբնակ վայրերում կազմուեցին կոմիտէները, որոնց նպատակն էր խմբեր կազմել, կարգալ նրանց հայրենասիրական բովանդակութեամբ գրքեր, կազմակերպել երեկոյթներ եւ ներկայացումներ, իբր դրամական հասոյթի եւ պրոպագանդի միջոց, կազմել մարտական խմբեր եւ զինավարժել նրանց: Մեր կազմակերպութեան մէջ մտնում էին, մեծ մասամբ, արհեստաւորներ. տեղական հարուստները խուսափում էին, թէեւ դրամ տալիս էին»:

Անդրկասպեան երկրից վերադառնալով, 1890 թ. աշնան, Քրիստափորի յանձնարարութեամբ մեկնում է Տրապիզոն ուսուցչական պաշտօնով: Այնտեղ էին արդէն Ս. Զաւարեանը, Ց. Իւսուֆեանը եւ Ց. Արղութեանը: Թուրք կառավարութիւնը, սակայն, թոյլ չի տալիս նրան Տրապիզոնում մնալու, վերադառնում է Կովկաս եւ հրաւիրւում է ուսուցչութեան Գանձակում: Այստեղ էլ, սակայն չի կարողանում երկար մնալ: Դպրոցի հոգաբարձութիւնը եւ ուսուցչութիւնը կազմուած էր ազատական տարրերից: Հակառակորդ պահպանողականները բուռն պայքար են սկսում նրանց դէմ՝ մեղադրելով ուսուցիչներին անաստուածութեան մէջ: Յատկապէս Լ. Թադէոսեանին ամբաստանում են, որ նա դասի ժամանակ հերքել է սատանաների գոյութիւնը, մահմեդականութիւն է քարոզել եւ այլ անհեթեթութիւններ: Յարուցուած աղմուկի վրայ Էջմիածնից ուղարկւում է պահպանողականներին կողմնակից մի քննիչ, որի զեկուցման վրայ Մակար Կաթողիկոսը փակում է Գանձակի երկսեռ դպրոցը, լուծում է հոգաբարձութիւնը, պաշտօնից հեռացնում է ուսուցիչները, իսկ Լ. Թադէոս-

եանին զրկում է հայկական դպրոցներում ուսուցչութիւն անելու իրաւունքից։ Այդ առթիւ տեղի են ունենում աշակերտական եւ ժողովրդական յուզումնալից ցոյցեր. Լեւոնը ձերբակալութիւնից խուսափելու համար հեռանում է Գանձակից եւ ընդմիշտ թողնում ուսուցչական ասպարէզը։

Այնուհետեւ, Ս. Զաւարեանի յանձնարարութեամբ, Լեւոնը, մինչեւ 1898 թ., աշխատում է հակաֆիլոկսերային խմբերում Թիֆլիսի եւ Փութայիսի նահանգներում, եւ ինչպէս Գանձակում, այստեղ եւս ազատ ժամանակը նուիրելով Դաշնակցութեան՝ խմբեր է կազմում, «Դրօշակ»ներ է տարածում, թղթակցում է Փրիստափորի եւ ուրիշ պատասխանատու ընկերների հետ։ Նրա մասնակցութեամբ 1898–ին, Թելաւում կազմւում է Կարմիր Խաչի մի խումբ։

1898 թուի վերջերը Լեւոնը տեղափոխւում է Բաքու, ուր զանազան պատասխանատու պաշտօններ է վարում նաւթարդիւբերական հաստատութիւնների մէջ, մինչեւ Բաքուի գրաւումը Թուրքերից՝ 1918 թ. Սեպտեմբերին։ Այստեղ նա ամբողջ էութեամբ նետւում է կուսակցական աշխատանքի մէջ՝ շուտով դառնալով Ոսկանապատի (Բաքուի) Կենտր. Կոմիտէի մնայուն անդամը եւ կազմակերպութեան ողնասիւնը։ Այստեղից սկսւում է եւ նրա Պապաշա անունը, իսկ կուսակցական գործերում՝ Զոփուռեան ծածկանունը ունէր։

Պապաշա (Հայրիկ) այնքա՜ն համապատասխանում էր նրա բնաւորութեան։ Համեստ, սակաւախօս, ընկերական ու ջերմ սրտի տէր՝ նա սիրուած էր բոլորի, բայց, մանաւանդ, երիտասարդութեան եւ բանուորների կողմից։ Մայրայեղօրէն զաղտնապահ, նախանձախնդիր խիստ կարգապահութեան՝ գերազանցապէս գործի մարդ էր նա։ Հաշիւ, ծածկագրութիւն, զէնքի եւ դրականութեան գաղտնի պահեստներ, անցաղիրների հայթայթում, վտանգուած ընկերների պահպանութիւն — ուր գործնական հմտութիւն եւ գաղտնապահութիւն էր պահանջւում, այնտեղ էր Պապաշան։ Եւ ոչ միայն գործնական աշխատանքներում, Կենտր. Կոմիտէի ղեկավարութեան մէջ էլ, նրա բարոյական հեղինակութիւնը շատ մեծ էր։

1907–ին, Պապաշան պատգամաւոր էր Բաքուի կողմից Վիեննայի Հ. Յ. Դ. Զորրորդ Ընդհ. Ժողովում։ Հիւանդոտ աչքերը սեւ ակնոցի տակ՝ նա ժամերով լուռ հետեւում էր վիճաբանութիւններին, բայց բոլորովին այլափոխւում էր յանձնաժողովներում, ուր գործ, փաստ, թիւ էր պահանջւում։ Բժ. Յ. Տէր-Դաւթեանի հետ, որի համեմատութեամբ Պապաշան պերճախօս

հռետոր էր, յանձնաժողովների ոգին եւ շարժիչ ոյժն էր կազմում։

Անջատական եւ միհրանական շարժումների տարիներին եւս Պապաշան բուռն աշխատանք թափեց պահելու համար կուսակցութեան միասնականութիւնը։

Վիեննայի Ընդհ. Ժողովից յետոյ, ռուսական բանտերը լեցուեցին Դաշնակցականներով։ Պապաշան բաւական ժամանակ մընաց ազատ։ Մասնակցեց Կովկասեան Ռայոնական Ժողովին, 1908 թ. Մայիսին։ Ամօթ էր զգում, որ իրեն չեն ձերբակալում.

— Ամէնքը բանտումն են, իսկ ես ազատ մարդ եմ գալիս. մարդիկ ի՞նչ կ'ասեն...

Բայց 1909 թ. Մայիսին հերթը նրան էլ հասաւ. ձերբակալուեց եւ մինչեւ 1911 թ. ամառը մնաց արդելափակուած Նովոչերկասկի բանտում, որից յետոյ ազատ ձգուեց 5000 ռուբլի երաշխաւորութեամբ։ Հոկտեմբերին նորից բանտարկուեց եւ անպարտ արձակուեց 1912 թ., մեծ դատավարութիւնից։

Այնուհետեւ, նոյն եռանդով, շարունակեց կուսակցական աշխատանքը Բագուում՝ միշտ մնալով Կենտր. Կոմիտէի կազմում։ Բագուի Հերոսամարտի օրերին, Պապաշան անյողդողդ մնաց Ռոստոմի եւ Ա. Գիւլխանդանեանի կողքին՝ վարելով կուսակցական գործերը նրանց հետ եւ միասին բաժանելով նահանջի եւ տարագրութեան դառն ճակատագիրը։ Պարսկաստանում նրան յանձնուեց գաղթականների խնամատարութեան գործը։

1919 թ. Յունիսին Պապաշան վերադարձաւ Բագու եւ այնտեղից՝ Երեւան, ուր ընտրուած էր Խորհրդարանի անդամ, եւ եռանդով նուիրուեց պետական աշխատանքի։ Խորհրդարանում նա ելեւմտական յանձնաժողովի տեղեկաբեր էր։ 1919 թ. աշնան, Հ. Յ. Դ. 8-րդ Ընդհ. Ժողովի կողմից ընտրուեց Գերագոյն Դատական Ատեանի անդամ։ 1920-ին Խորհրդարանի կողմից ուղարկուեց Կարսի շրջանը քննական գործով։

Փետրուարեան յեղաշրջումից յետոյ, Պապաշան էլ տարագրուեց Պարսկաստան։ Ապա Ժընեւ ու Փարիզ, իբրեւ Հ. Յ. Դաշնակցութեան Կենտր. Դիւանի վարիչ։ Մեռաւ 1936 թ. Դեկտ. 19-ին, Փարիզում։

ՍԻԱՄԱՆԹՕ

Որքան բարդ էր ու ռազմաշունչ գրականութեան մէջ, Սիամանթօն այնքան պարզ էր ու մեղմ անհատական կեանքում։ Իր կենսագրութիւնը, կարելի է ասել, նշանաւոր ոչինչ ունի իր մէջ։

Իսկական անունով Ատոմ Եարճանեան էր՝ ծնուած 1878-ին

ՍԻԱՄԱՆԹՕ

Ակնում։ Կրթությունը ստացել էր Պոլսի Պէրպէրեան վարժարանում։ Դպրոցում սովորական ընդունակությունների տէր ու սովորական վարքով, բայց գրական հակումներով ու բանաստեղծական խառնուածքով օժտուած աշակերտ էր։ Տակաւին դպրոցական նստարանների վրայ սկսել էր գրական յաջող փորձեր անել։

Պէրպէրեան վարժարանը աւարտելուց յետոյ, Սիամանթօն

անցաւ Եւրոպա ուսանելու նպատակով, բայց նիւթական բաւարար միջոցներից զուրկ՝ չարքաշ կեանքի ու ծանր զրկանքների մատնուեց։ Մինչեւ Օսմ. Սահմանադրութիւն մնաց Փարիզ եւ Ժընեւ։ Հետեւեց Սորբոնի գրականութեան բաժնի եւ Ժընեւի համալսարանի դասախօսութիւններին։ Ապրեց Փարիզի եւ Ժընեւի հայ մտաւորական շրջանակում։ Ֆրանսական մշակոյթի մթնոլորտում մշակուեցին նրա միտքն ու ճաշակը, իսկ Հ. Յ. Դաշնակցութեան մէջ՝ նրա քնարի ռազմաշունչ ոգին։

Փարիզում Սիամանթօն հրատարակեց իր բանաստեղծութիւնների առաջին տետրակը, իսկ նախ քան այդ, արդէն երեւացել էր Զոպանեանի «Անահիտ»ում։ Բայց միայն «Դրօշակ»ով սկսուեց նրա գրական համբաւը։

1899–ին «Դրօշակ»ի խմբագրութիւնը ստանձնեց Քրիստափորը, որ ուրիշ տաղանդաւոր երիտասարդների հետ՝ Սիամանթոյին էլ կապեց Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական պաշտօնաթերթի հետ։ Քրիստափորի շնչի տակ ու քաջալերանքով Սիամանթօն, 1899–ից սկսած, «Դրօշակ»ին տուեց իր հերոսական քերթուածների նշանաւոր շարքը, որոնք յետոյ, լոյս տեսան առանձին պրակներով։

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ՝ Սիամանթօն վերադարձաւ Պոլիս՝ խառնուելով այդ օրերին տիրող ընդհանուր ոգեւորութեան ու եռուզեռին։ Պոլիսը, սակայն, նրան չհրապուրեց։ Գործնական՝ հանրային կամ կուսակցական աշխատանքի մարդ չէր նա, իսկ միայն բանաստեղծութեամբ ապրելը անհնար էր։ Երկար տարիներ եւրոպական կեանքին վարժուելով՝ Պոլսի այն օրերի մթնոլորտում նա չէր կարողանում հոգեկան բաւարարութիւն գտնել։ Ուստի, օգտուելով Ամերիկայի ընկերների հրաւէրից, 1909–ին, մեկնեց Ամերիկա՝ ստանձնելով Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագրութիւնը, թէեւ, ի հարկէ, ինքն էլ գիտակցում էր, որ այդ գործն էլ իր խառնուածքին ու կոչումին հարազատ չէր։ Ամերիկայում Սիամանթօն մնաց շուրջ մէկ տարի՝ ձեւականօրէն վարելով խմբագրութիւնը, բայց աւելի ապրելով բանաստեղծութեան աշխարհում։ Այստեղ, ընկերների աջակցութեամբ, նրան յաջողուեց լոյս ընծայել իր քերթուածների դեղեցիկ հատորը։

1910–ի վերջերը Սիամանթօն վերադարձաւ Եւրոպա, ապա՝ Պոլիս, ուր մնաց որոշ ժամանակ՝ մասնակցելով այնտեղի գրական կեանքին, առաւելապէս «Աղատամարտ»ի շրջանակում։ Ս. Զաւարեանի մահից յետոյ, ուղեկցեց նրա դագաղին դէպի Կովկաս եւ այդ առիթով մօտ շփում ունեցաւ կովկասահայ մտաւորականութեան եւ գրական դէմքերի հետ։ Այդ օրերին լոյս տե-

սաւ եւ իր «Սուրբ Մեսրոպ»ը՝ հայ տառերի դիւտի 1500–ամեակի առթիւ։

1914–ի ամառը Սիմանթոն նորից Ժընեւում էր։ Եւրոպական երկնակամարի վրայ արդէն կուտակւում էին չարագուշակ ամպերը։ Եւ հակառակ ընկերների յորդորներին, համաշխարհային պատերազմի նախօրեակին, նա վերադարձաւ Պոլիս՝ բաժնելու համար իր գրական եւ կուսակցական ընկերների սեւ ճակատագիրը։ Վարուժանի, Զարդարեանի, Զոհրապի եւ հարիւրաւոր ուրիշ մտաւորականների հետ նա էլ զոհ գնաց Ապրիլեան Եղեռնին՝ տակաւին իր տաղանդի երիտասարդ ու ստեղծագործող տարիքին։

Սիմանթոյի մահով հայոց գրականութիւնը կորցրեց իր անզուգական ներկայացուցիչներից մէկին եւ Հայ Յեղափոխութիւնը՝ իր մեծ երգչին։ Իր տեղը բռնող չգտնուեց։ Սիմանթոն հայութեան կեանքի հերոսական շրջանի արտայայտիչն ու փառաբանողը եղաւ՝ իր դիւցազնական հզօր քնարով։ Ինչպէս Ահարոնեանը արձակով, Սիմանթոն բանաստեղծութեամբ փառաբանեց Հայ Ազատամարտը։ Իր «Դիւցազնօրէն»ը, «Հայորդիները», «Հոգեւարքի եւ Յոյսի Զահեր»ը, «Կարմիր Լուրեր Բարեկամէս»ը, իր ամբողջ գործը, հզօր երեւակայութեամբ եւ լեզուի ու պատկերների աննման զեղեցկութեամբ յաւերժացումն են հայոց պատմութեան Դաշնակցական դարաշրջանի եւ կը մնան անմահ մեր գրականութեան մէջ։

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(1884–1915)

Դանիէլ Վարուժանը Սեբաստիայի նահանգի Բրգնիկ գիւղից էր, ծնուած 1884–ին։ Հայրենի գիւղում էլ անցել էր իր մանկութիւնը։

«Դեռ հապիւ թիթեռնիկներ որսալու հասակիս մէջ, գրում է նա իր մասին, հայրս պանդխտած է Պոլիս, իսկ մայրս՝ ձմեռնային երկար երեկոները թոնրատանը նստած՝ երեւակայութիւնս օրօրած է ենիչէրիներու եւ գայլերու պատմութիւնով, երբ Մէյրեղումի հովը կուգար բուխերիկին մէջ ոռնալ եւ մերթ դեւի ձաղի մը նման լալ։

«Գիւղին դպրոցը հապիւ սկսած էի ժամագիրքը կարդալ սովորել, դիս տարած են Պոլիս, 1896–ի կոտորածի օրերուն, ուր

հայրս արեան սարսափի մէջ փնտռելէն յուսահատ՝ բանտին մէջ գտած եմ այն տխուր օրերուն ստօրէն ամբաստանուած»։

Պոլսում Վարուժանը յաճախում է Սաղըզ Աղաճի Մխիթարեան դպրոցը, ապա՝ Քալկեդոնի վարժարանը, ուր, ասում է ինքը, «երկար ատեն պատանեկութիւնս երազած է Մոտայի ծովափին եւ Դուրեանի ոսկորներուն յիսկիւտար»։

«Արձակուրդներս ընդհանրապէս անցուցած եմ հօրս քով, Խավիար խանը, հայ պանդուխտներու հառաչներու եւ վէրքերու արոփիւնին ունկնդիր»։

Դպրոցական նստարանի վրայ արդէն պատանի Վարուժանը սկսում է գրել ոտանաւորներ եւ, առհասարակ, մեծ սէր է ցոյց տալիս դէպի գրականութիւնը եւ, ինչպէս յատուկ է պատանիներին, յօրինում է սիրահարական ոտանաւորներ։ Դպրոցի տեսուչ Հ. Արիստակէս Գասպանտիլեանը առաջնորդում է նրան գրական փորձերում եւ տեսնելով նրա ընդունակութիւնները, 1902-ին, ուղարկում է Վենետիկ՝ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, ուր մնում է չորս տարի։

Մխիթարեան դպրոցում Վարուժանը ստանում է իր հիմնական կրթութիւնը եւ խորապէս ծանօթանում հայ մատենագրութեան, դասական ու նոր գրականութեան։ Նրա վրայ ուժեղ ազդեցութիւն են թողնում Ալիշանի երկերը։ Այստեղ է ձեւակերպւում եւ նրա լեզուն ու գրական ոճը։ Նրա լեզուի վրայ, մասնաւորապէս, զգացւում է Մխիթարեան աղդեցութիւնը։ Բնականաբար, Վենետիկում էլ — «քաղաք մը, ուր առանց պատկերի մտածել կարելի չէ» — Վարուժանը շարունակում է երազել ու բանաստեղծութիւններ յօրինել։ «Հոն է որ կը դրեմ «Սարսուռները», վկայում է ինքը։ Վենետիկում զարդացաւ նրա բանաստեղծական ճաշակն ու երեւակայութիւնը։

Մխիթարեան վարժարանում, դարձեալ ինքն է վկայում, «առիթ եմ ունեցեր ուսումնասիրելու իտալական գրականութիւնը եւ յետոյ մեծամոլ խոկումներ ունեցած եմ միշտ գունածփիկ ու հրաշափառ քաղաքին մէջ, ուր վերջալոյսները ժամերով սոկի ու արիւն կը հոսին լռանիստ ջրանցքներուն մէջէն»։ Անկասկած, իր ստեղծագործութիւնների մէջ Վարուժան որոշ մաս ունի եւ Դանթէի շնչից, առհասարակ, իտալական դասական գրականութիւնից։

Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի կէս-վանական անձուկ մթնոլորտը չէր կարող բաւարարութիւն տալ Վարուժանի ըմբոստ ոգուն։ Նա լաւ յիշողութիւններ չունի այնտեղից։ «Մխիթարեանները սիստեմատիկ աղդեցութիւն չեն ներդործած հոդիս վրայ, գրում է նա։ Հոն ունեցած եմ ոչ կարող ու ոչ աշխատող հայերէնի



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ուսուցիչ։ Կարդացած եմ Ալիշանը ու տեսած եմ իր գերեզմանը, եւ այսքան»։

Հոգեւոր դպրոցների մթնոլորտը ամէն տեղ էլ գրեթէ միեւնոյնն է։ Եւ ուսուցիչներն էլ, աւելի կամ պակաս, մեծ մասամբ նման տիպարներ են, քանի որ նրանց պարտականութիւնը ոչ թէ ազատ մտքով զարգացած անհատներ պատրաստելն է, այլ եկեղեցական ասպարէզի համար ատուածավախ, խոնարհ, որոշ մտայնութեամբ կաղապարուած սպասաւորներ դաստիարակելը։ Եւ հասկանալի է, որ Վարուժանը չէր կարող գոհ լինել Մխիթարեան վարժարանից. «Այդ չորս տարիները, ասում է նա, ինձի համար եղած են նաեւ ըմբոստացումներու տարիներ ընդդէմ վարժարանական անմիտ վարչութեան մը, զոր վերջ ի վերջոյ կրցած ենք տապալել կարդ մը ռուսահայ եւ թրքահայ ընկերներու հետ»։ Դաշնակցականի հոգի ունեցող երիտասարդի համար բնական էր խորշանքը վանական մթնոլորտից, որ բացի իր ընդհանուր անհրապոյր կերպարանքից, սովորաբար լեցուն էր նաեւ ներքին մանր-մունր խարդաւանքներով, եսերի բախումներով, նախանձով եւ պայքարով՝ ատիճանի ու դիրքի համար։

Բայց միւս կողմից, պէտք չէ ուրանալ, որ Վարուժանը, հա-

կառակ իր պնդումին, ի հարկէ, մեծապէս օգտուել է Մխիթարեան հայագիտութիւնից, հարուստ մատենադարանից եւ հայկական ազգային միջավայրից։ Մխիթարեանների շնորհիւ էր, որ նա կարողացաւ կրթութիւն ստանալ եւ իր բնածին տաղանդը զարգացնել, այլապէս գաւառացի մի պանդուխտ՝ նա ի՞նչ կարելիութիւն պիտի ունենար մինչեւ բարձրագոյն կրթարան հասնելու եւ դառնալու հայոց ազգի մեծ բանաստեղծներից մէկը։

Դեռ Մխիթարեան վարժարանում էր Վարուժանը, որ «Բազմավէպ»ի մէջ առաջին անգամ հրատարակեց իր մի քերթուածը՝ «Ալիշանի շիրմին առջեւ»։

1906–ին Վարուժանը աւարտում է Մուրատ–Ռաֆայէլեան դպրոցը։ Աբդուլ Համիտի իշխանութեան ամենամռայլ օրերն էին։ Նա վարանում է վերադառնալ Պոլիս, մանաւանդ որ միշտ երազել էր բարձրագոյն կրթութիւն ստանալ եւրոպական որեւէ կենտրոնում։ Եւ Հ. Արսէն Ղազիկեանի եւ ուրիշների աջակցութեամբ յաջողում է անցնել Բելգիա, ուր Կանտի համալսարանում ուսանում է գրականութիւն եւ քաղաքական ու տնտեսական գիտութիւններ։ Չորս տարի էլ մնում է Կանտում, որ Բելգիայի Ֆլամանտական մասում գործարանային մի քաղաք է։ Ֆլաման ժողովուրդը իր կենսուրախ ու դեղարուեստասէր բնաւորութեամբ եւ բանուորական միջավայրը, անշուշտ, ուժեղ տպաւորութիւն են թողնում Վարուժանի մտքի եւ արուեստի վրայ։ Նա ինքն էլ է խոստովանում, թէ՝ «Ֆլաման կեանքն ու դեղարուեստը թերեւս եղան պատճառ, որ արուեստս հակէր դէպի իրապաշտութիւն»։

Դիւրին չէր Վարուժանի կեանքը Կանտում — աղքատ ուսանողի կեանքը։ Նա շատ ծանր օրեր է անցկացնում, բայց կարողանում է տոկալ բոլոր նեղութիւններին։ Նրան օգնութեան են հասնում բարեկամներն ու համակիրները, որոնց աջակցութեամբ յաջողում է աւարտել համալսարանը։

Ցամաքօրէն հետեւելով գիտութեան՝ միեւնոյն ժամանակ Վարուժանը չի լքում քնարն ու գրիչը, շարունակում է ստեղծագործել։ Այստեղ էր, որ նա գրեց իր սարսռազդեցիկ «Զարդը», որ լոյս տեսաւ 1908–ին, Փարիզում։ Դրանից երկու տարի առաջ, 1906–ին, Վենետիկում «Սարսուռներ» քերթուածը։ Կանտում է յօրինուել եւ հրատարակուել «Ցեղին Սիրտը» հատորի մեծ մասը։

Իր կեանքի այդ շրջանի մասին Վարուժանը գրում է. «Կրնամ ըսել, թէ ամենէն խոր անձնական տառապանքները ես կրեցի Կանտի մէջ։ 1904–7 շրջանն էր, երբ հայութիւնը կը խեղդուէր սուրի եւ սովի մղձաւանջին մէջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ ան-

հատական ցաւերուս, գրեթէ բոնի լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել Ցեղին Սիրտը, որուն բախիւնները կը զգայի իմ մէջս, իմ սեփական արիւնիս խորը։ Հայութիւնը կուլար ու կը մռնչէր իմ մէջս, եւ երգերս դուրս կուգային օտար երկնքի տակ կարօտի լարովը միայն կապուած մեր երկրի հողին եւ մարդուն հետ։

«Սակայն, տեսած էի Եւրոպան։ Օգտուելով տեղւոյն հսկայ գրադարանէն՝ կարդացեր էի Հնդիկներէն մինչեւ Հոմեր եւ Հոմերէն մինչեւ Մեսերլինկ։ Հոգիս վրայ բոցի մը լեղուին պէս զգացած էի բանուորներուն աղաղակները մէկ կողմէն եւ միւս կողմէն շուայտ եւ արբեցող կեանքը, ի զուր թաղնուող բոզացումները բարոյիկ համարուած փարթամ ընտանիքներուն։ Եւ ահա ասոնք բոլորը, ստորագծուած յիշողութեանս մէջ եւ միացուցած հին յունական ու հռոմէական կեանքին վերյիշումներուն, յանկեցայ գրել «Հեթանոս Երգեր»ը երբ որ Երկիր, իմ դիւղս վերադարձայ»։

Իր բարձրագոյն ուսումը լրացնելուց յետոյ, 1909–ին, Վարուժանը վերադարձաւ հայրենիք եւ երկու տարի ուսուցչութիւն արաւ Սեբաստիայի Ազգային Արամեան վարժարանում։ Այստեղ նա կազմեց իր ընտանեկան բոյնը՝ ամուսնանալով սիրած օրիորդի մը հետ։ Մտերմացաւ Սեբաստացի Մուրատի հետ եւ դպրոցից դուրս գործօն մասնակցութիւն ունեցաւ նաեւ հանրային եւ Հ. Ց. Դաշնակցութեան կուսակցական կեանքում՝ ջերմ սէր եւ անջինջ յիշատակ թողնելով Սեբաստացի հայրենակիցների սրտում։ 1910–ին, Պոլսում լոյս տեսաւ նրա «Ցեղին Սիրտը» բանաստեղծութիւնների հատորը։

Մի տարի էլ (1911–12 թ.) Վարուժանը ուսուցչութիւն արաւ Եւդոկիայում։ Եւ նոյն տարին, 1912ին, Պոլսում, լոյս տեսաւ նրա «Հեթանոս Երգեր» հատորը։

1912 թ. ամառուանից սկսած Վարուժանը ընտանիքով փոխադրուեց Պոլիս՝ ստանձնելով Բերայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ վարժարանի տնօրէնութիւնը։

Պոլիսը Սեբաստիա կամ Եւդոկիա չէր։ Այստեղ էր կենտրոնացած արեւմտահայութեան մտաւոր կեանքն ու արուեստը, նաեւ մտաւորականութեան ընտրանին։ Վարուժանն էլ, բնականաբար, հոգեկան աւելի մեծ դոհացում գտաւ Պոլսում, աշխոյժով ու եռանդով լեցուեց։ Նա իր ազատ ժամանակը անց էր կացնում «Ազատամարտ»ի շուրջ համախմբուած մտաւորականութեան շրջանակում։ Մասնակցում էր մշակութային ձեռնարկներին։ Հրատարակեց «Նաւասարդ» տարեգիրքը Ց. Ճ. Ս. Սիրունիի հետ։ Գրեց «Հացին Երգը» բանաստեղծութիւնների շարքը, որի

հրատարակութիւնը, աւա՜ղ, չվիճակուեց իրեն տեսնելու։ «Այդ հատորին մէջ, գրում է նա, երգուած պիտի ըլլան հայրենի հողը, մշակներու աշխատութիւնը եւ գիւղական կեանքի խաղաղ մեծութիւնները»։ «Հային Երգը» լոյս տեսաւ 1921-ին, Պոլսում։

Հազիւ երեսուն տարիները լրացրել էր Վարուժանը, բայց իր ստեղծագործութեամբ արդէն իսկ գրականութեան առաջնակարգ դէմք էր դարձել։ Այդքանը, սակայն, նրան չէր բաւարարում։ Արդար իրաւունքով նա ձգտում էր աւելին։ «Բաղձանքս էր, գրում էր նա իր նամակներից մէկում, ապագային մարդերուն նուիրել հզօր երգ մը, որ հայրենիքը ինծի պէս արարած մը ծնած ըլլալուն գոնէ չզղջայ»։

Հայրենիքը, ի հարկէ, առանց դրան էլ չի զղջացել, բայց, անշուշտ, Վարուժանը դեռ նոր էր ոտք կոխում հասունութեան շրջանը եւ, եթէ ողջ մնար, տակաւին ի՞նչ «հզօր երգեր» պիտի նուիրէր իր ազգին, որի հանդէպ հաւատացեալի պաշտամունք ունէր։

Վրայ հասաւ համաշխարհային առաջին պատերազմը։ Ապա, 1915 թ. ապրիլեան Մեծ Եղեռնը։ Հարիւրաւոր հայ մտաւորականների հետ Վարուժանն էլ ընկաւ ոճրագործ դազանների ձեռքը։ Զանկըրիի դժոխքից նրան ազատելու բոլոր ճիգերը անցան ապարդիւն։ Վարուժանը ոչ միայն հայ մտաւորական էր, այլեւ անուանի Դաշնակցական. բոբենի թալէաթ չէր կարող հրաժարուել նրա արիւնը խմելու հաճոյքից էլ։ Եւ իրեն զաղափարակից ու բախտակից միւս բոլոր մտաւորականների հետ Վարուժանն էլ նահատակուեց։ Ե՞րբ, ո՞ւր, ինչպէ՞ս — ո՞վ կարող է ասել։

Դահիճները բնաջնջեցին Վարուժանի մարմինը, բայց նա իր գործով անմեռ կը մնայ հայ ժողովրդի հոգում։ Իրաւ է բանաստեղծ Սողոմոն Տարօնցին՝ ոգեկոչելով Վարուժանի հանճարը.—

Դու մեզ հետ ես, ըմբո՛ստ, երիտասա՛րդ Վարպետ,
Թէեւ քո շիրիմը անապատում անհետ—
Կորաւ ընդմիշտ — անհոգ, անգիր, անյիշատակ,—
Սակայն, ժողովրդիդ բաբախուն կրծքի՛ տակ—
Կա՛յ շիրիմդ — ահա — կանա՜չ եւ ցօղաթուրմ,
Օ՜, Դանիէլ Վարուժան, դուսանապետ դու քուրմ։

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Եթէ Բաֆֆին եղաւ Հ. Յ. Դաշնակցութեան հոգեհայրը, ի լինելութեան գաղափարների, յեղափոխական գործերի եւ տիպար հերոսների տեսանողն ու երեւակայութեամբ մարմնացնողը, Աւ. Ահարոնեանը Դաշնակցութեան արդէն բիւրեղացած գաղափարների եւ կենդանի գործի ու կենդանի հերոսների երգիչն ու ջատագովն էր: Այդ իմաստով Ահարոնեանը Բաֆֆիի անմիջական ժառանգն է եւ նրա գործի շարունակողը՝ արուեստի տարբեր ձեւերով եւ արտայայտութեան տարբեր եղանակով: Սիմանթօն, որպէս բանաստեղծ, եւ Ահարոնեանը արձակով Հայ Յեղափոխութիւնը, ի մասնաւորի, Հ. Յ. Դաշնակցութիւնը պանծացնող մեծագոյն դէմքերը հանդիսացան: Եւ եթէ Սիմանթօն չտեսաւ Հայաստանի արեւածագը, Ահարոնեանը տեսաւ ու գործով էլ մասնակից եղաւ Ազատ եւ Անկախ Հայաստանի ծնունդին եւ վերելքին եւ, աւա՜ղ, ճաշակեց նաեւ անկման դառնութիւնները:

Աւ. Ահարոնեանը ծնուել էր 1866 թ. Յունուար 4-ին, Արարատեան Դաշտի, Սուրմալու գաւառի Իգդիրմաւա գիւղում, համեստ աշխատաւորի մի ընտանիքում, Մասիսի հովանու ներքեւ: Իր յուշերում նա ասում է. «Երբ աչքս բացի, Մասիսը տեսայ մեր դրանը եւ իր ստուերն իմ գլխին»: Կամ՝ «Մասիսն է եղել իմ առաջին ուսուցիչը». այդ «հրաշք լերան անդիմադրելի կախարդանք»ով է սնուել նրա մանուկ հոգին:

Նախնական կրթութիւնը Իգդիրի ծխական դպրոցում ստանալով, իր ուսուցիչ Դ. Քալանթարեանի միջնորդութեամբ, 1881 թ. Սեպտեմբերին, պատանի Աւետիսը ընդունւում է Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որի վեցամեայ դասարանական բաժինը աւարտելով 1886-ին՝ վերադառնում է գիւղը: Եւ յաջորդաբար, իբրեւ վերակացու կամ ուսուցիչ, պաշտօնավարում է Գէորգեան ճեմարանում (1887 թ.), Իգդիրի ծխական դպրոցում (1888-92), Նոր Բայազէտի ծխական դպրոցում (1893), կրկին Իգդիրի ծխական դպրոցում (1894-96): Դպրոցից դուրս Ահարոնեանը մեծ եռանդով մասնակցում է հանրային կեանքին. իր շուրջ համախմբում է երիտասարդութիւնը, պարապում է նրանց հետ, երեկոյթներ ու ներկայացումներ է կազմակերպում գիւղի հասարակութեան համար: Շփւում է Երկիր գնացող-եկող «առաքեալ»ների, յեղափոխական շրջանակների եւ Դաշնակցական«գործակալ»ների հետ: Առանձնապէս մտերմանում է Զաքրիի (Բագրատ վարդ. Թաւաքալեանի) հետ, աջակցում է նրան Երկրի համար կատարած ձեռնարկներին: 1887 թուից սկսած աշխատակցում է Թիֆլիսի «Արձագանգ»ին, ապա «Մշակ»ին, 1895-96 թ. կոտորածների օ-



ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

ներին, երբ Ջարդից մազապուրծ գաղթականութիւնը թափւում է Սուրմալու, Ահարոնեանը ցերեկը գիշերին խառնած զբաղւում է նրանց հոգատարութեան գործով եւ սրտայոյզ թղթակցութիւններ է ուղարկում Թիֆլիսի հայ մամուլին:

Հայկական դպրոցների փակումից յետոյ, Ահարոնեանը երկու տարի եւս, մինչեւ 1898 թ. մնում է Ծննդավայրում՝ ամբողջապէս նուիրուած գրականութեան: Այդ տարիներին «Մշակ»ում լոյս տեսան նրա պատմուածքները թրքահայ գաղթականների կեանքից՝ «Ցալաղ վուրղունի», «Փշուր ըմ խաց», «Պուտ ըմ կաթ», «Բաշօ» եւայլն, որոնք նրա վրայ գրաւեցին հասարակութեան ուշադրութիւնը: 1898-ին, Բաղուի մի խում գրասէրների, բայց առաւելապէս Ատ. Վաչեանցի տրամադրած թոշակով, Ահարոնեանը մեկնում է Զուիցերիա ուսումը շարունակելու նպատակով: Մտնում է Լոզանի համալսարանի պատմա-փիլիսոփայական բաժինը, եւ Ֆրիստափորի աղջեցութեան տակ, «Դրօշա-

կ»ում շուտով սկսում է նրա յեղափոխական պատմուածքների շարքը, Ղարիբ ստորագրութեամբ, որոնք յետոյ լոյս տեսան առանձին հատորով՝ «Ազատութեան ճանապարհին»: Միաժամանակ առանձին Ահարոնեանը աշխատակցում էր եւ «Մշակ»ին ու Թիֆլիսի «Մուրճ»ին՝ վերջինում Կուրբաթ-Հարունի ծածկանունով:

1901-ին աւարտելով Լոզանի համալսարանը եւ մի տարի էլ հետեւելով Սորբոնի դասախօսութիւններին Փարիզում, 1902-ին Ահարոնեանը մեկնում է Թիֆլիս, ուր, մինչեւ 1905 թ., վարում է «Մուրճ»ի խմբագրութեան գրական բաժինը եւ զբաղւում գրականութեամբ՝ լոյս ընծայելով «Խեղճերը» եւ «Արազը» պատմուածքների եւ նորավէպերի հատորները: 1905-ին նորից Եւրոպայում է՝ քաղաքական աշխատանքով: Ռուսական առաջին յեղափոխութիւնից յետոյ՝ վերադառնում է Թիֆլիս եւ մտնում նոր հիմնուած «Յառաջ» օրաթերթի խմբագրական կազմի մէջ: «Յառաջ»ում եւ նրան յաջորդող թերթերում Ահարոնեանը ունի բազմաթիւ խմբագրականներ, հրապարակախօսական յօդուածներ, գեղարուեստական գրուածքներ: Ահարոնեանը գործօն մասնակցութիւն ունէր եւ հանրային ու կուսակցական կեանքում: Պատգամաւոր եղաւ Էջմիածնի Ազգային-Եկեղեցական Ժողովում, որ ցարական իշխանութեան կողմից ցրուեց 1906 Օգոստ. 29-ին: Հայ-թաթարական ընդհարումների եւ նրանց յաջորդող միհրանական պղտոր շարժումի օրերին Ահարոնեանը ոգի ի բուին պաշտպանեց Դաշնակցութեան սկզբունքներն ու գիրքերը: Մասնակցեց Հ. Յ. Դ. Զորրորդ Ընդհ. Ժողովին, Վիեննայում, իբրեւ Կարսի պատգամաւոր եւ իր հեղինակութեամբ մեծապէս նպաստեց կուսակցութեան միասնականութիւնը պահպանելուն: Դրանից առաջ, 1907 թ. դարնան, իբրեւ կաթողիկոսական պատուիրակ, Գէորգ եպ. Իւթիւճեանի հետ, Ահարոնեանը Լահէի խաղաղուխաղաղութեան խորհրդաժողովին ներկայացրեց հայկական պահանջները:

1907 թ. աշնան Ահարոնեանը հրաւիրւում է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի տեսուչ: Դպրոցական գործին զուգընթաց՝ Ահարոնեանը շարունակում է եւ գրական աշխատանքը՝ լոյս ընծայելով ««Արցունքի Հովիտը» եւ «Ուխտուածներ» թատերախաղերը եւ ուրիշ գործեր:

1908-ից Ռուսաստանում սկսուեցին Դաշնակցականների զանգուածային ձերբակալութիւնները: 1909 թ. Մայիսին, Թիֆլիսում, բանտարկուեց նաեւ Ահարոնեանը եւ ամառը փոխադրուեց Բաքուի բանտը՝ այնտեղից Նովոչերկասկ ուղարկուելու համար: Բաքւում, սակայն, հիւանդացաւ եւ մինչեւ 1910 թ. ձմեռը պահ-

ուեց հիւանդանոցում, ուր արտադրեց մի շարք գեղարուեստական երկեր*)։ Ապա փոխադրուեց Նովոչերկասկի բանտը, 1911 թ. Փետրուարին, մի քանի բարեկամների հայթայթած 20,000 ռուբլի երաշխաւորութեամբ, ազատ արձակուեց եւ նոյն տարուայ ամառը խոյս տուեց դէպի Բայազէտ, Ալաշկերտ ու Կարին եւ այնտեղից Պոլիս, Աւ. Իսահակեանի եւ Գ. Խաժակի հետ, ուր նրանց խանդավառ ընդունելութիւն ցոյց տրուեց։

Մի քանի ամիս Պոլսում անցկացնելուց եւ դասախօսութիւններով ու հրապարակային ելոյթներով պոլսահայ կեանքում մեծ եռուզեռ ստեղծելուց յետոյ, Ահարոնեանը անցաւ Եւրոպա, Լոզան, ուր մնաց մինչեւ 1916 թ. աշխատակցելով Կովկասի եւ Պոլսի մամուլին եւ իր ամբողջ ժամանակը տրամադրելով գրականութեան։

Համաշխարհային առաջին պատերազմի եւ ապա՝ ռուսական յեղափոխութեան հետեւանքով բոլոր Դաշնակցական աքսորեալները ու տարագիրները ազատութիւն ստացան վերադառնալու հայրենիք։ 1916 թ. Փետրուարին Ռուսաստան վերադարձաւ եւ Ահարոնեանը։ Մի տարուց աւելի նա մնաց Հիւս. Կովկասի հանքային ջրերում, որտեղից աշխատակցում էր «Հորիզոն»ին։ Ցարական իշխանութեան անկումից յետոյ, բայց, մանաւանդ, 1917 թ. երկրորդ կիսին, «Հորիզոն»ում լոյս տեսան նրա հայրենաշունչ, ցնցող յօդուածները, որոնք յետոյ ամփոփուեցին «Հայրենիքիս համար» հատորում։

Վերադառնալով Թիֆլիս, արդէն ազատութեան օրերին, Ահարոնեանը ամբողջ էութեամբ նետուեց ազգային գործերի մէջ։ 1917 թ. աշնան նա նախագահեց Ռուսահայոց Ազգային Համագումարին եւ ընտրուեց Համագումարի կազմած Ազգային Խորհրդի նախագահ։ Ազգային Խորհուրդը դարձաւ Կովկասի հայերի անպաշտօն կառավարութիւնը եւ այնուհետեւ, մինչեւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը, վարեց հայկական գործերը։ Որպէս Ազգ. Խորհրդի նախագահ, Ահարոնեանը երեւան բերեց մեծ հմտութիւն ու եռանդ եւ կարողացաւ համադրել

---

*) 1910-ին, Պետերբուրգի Դաշնակցական ուսանողութիւնը հրատարակեց «Պսակ» անունով մի ստուար ժողովածու՝ նուիրուած Եղիշէ Թոփչեանի յիշատակին։ Ժողովածուն, 3000 օրինակ, տպուեց Մոսկուայում. լոյս տեսած օրը գրաւուեց գրաքննութիւնից եւ ամբողջութեամբ այրուեց։ Մի օրինակ միայն կարելի եղաւ ազատել. այն էլ անհետացաւ Ամերիկայում։ Այդ ժողովածուում մի գեղեցիկ գրուածք ունէր եւ Ահարոնեանը բանտային կեանքից, որի ձեռագիրն էլ, դժբախտաբար, կորել է։

կուսակցական հակամարտ տարրերը։ 1918-ի գարնան ողբերգական օրերին, Ազգ. Խորհուրդը Ահարոնեանի ղեկավարութեան տակ, համագործակցութեամբ Արեւմտահայ Խորհրդի, փրկարար դեր կատարեց հայութեան կեանքում։

Հայաստանի Հանրապետութեան կազմութիւնից յետոյ, Ահարոնեանը գլխաւորեց այն պատուիրակութիւնը, անդամակցութեամբ Ա. Խատիսեանի եւ Մ. Պապաջանեանի, որ ուղարկուեց Պոլիս բանակցելու Թուրք կառավարութեան հետ Բաթումի դաշնագիրը փոխարինող նոր դաշինք կնքելու համար։ Կարելի՞ է երեւակայել աւելի դժնդակ պարտականութիւն, քան հայերի ջարդարար Թալէաթներից բարեկամութիւն խնդրելը մէկի համար, որի ամբողջ կեանքը անցել էր անհաշտ պայքարի մէջ այդ ջարդարարների դէմ։ Ամիսներ տեւող բանակցութիւնները դրական արդիւնք չտուին։ Վրայ հասած ընդհանուր զինադադարը, Դաշնակիցների յաղթութեամբ, աշխարհի եւ հայերի համար ստեղծեց նոր կացութիւն, նոր հեռանկարներ ու նոր յոյսեր։

Պատուիրակութիւնը վերադարձաւ Երեւան, ուր Ահարոնեանը մնաց կարճ ժամանակ՝ ակնատես լինելով հայ ժողովրդի կրած ահաւոր տառապանքներին ու նաեւ պետական կազմաւորման հզօր ճիգին։ Նա նորից նշանակուեց պատուիրակութեան նախագահ, այս անգամ Դաշնակիցների մօտ, ներկայացնելու համար Հայաստանը Խաղաղութեան Վեհաժողովի առջեւ։ Հայաստանի Խորհրդի կողմից նրան տրուեց հրահանգ, Ազգ. Պատուիրակութեան հետ համախորհուրդ, պահանջելու Թրքահայ եւ ռուսահայ տողերի միացումը մէկ պետութեան մէջ։ Խորհուրդը չնորհեց նաեւ Խորհրդարանի նախագահի տիտղոսը՝ աւելի հեղինակաւոր դիրք տալու համար նրան պետութիւնների աչքին։

1919 թ. Յունուարին, Թիֆլիսի վրայով, Ահարոնեանը մեկնեց Փարիզ. ճանապարհին, ամէն տեղ, արժանանալով հայ ժողովրդի ցնծագին ընդունելութեան։ Փարիզում, Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարի հետ միասին, Ահարոնեանը ներկայացրեց հայ ժողովրդի պահանջները Դաշնակիցների Վեհաժողովին՝ Միացեալ եւ Անկախ Հայաստան Սեւ Ծովից մինչեւ Միջերկրական Ծով սահմաններով։ Ինչպէս յայտնի է, Հայաստանի Հարցը, Վերսայլից յետոյ, աւելի քան մէկ տարի յետաձգուեց։ Ահարոնեանը այդ ժամանակաշրջանում յուզումնալից գործունէութիւն ունեցաւ եւ, կարելի է ասել, դուռ չմնաց, որ չբախէր պաշտպանելու համար Հայ Դատը։ Ներքին՝ ազգային կեանքում էլ դժուարութիւնների բախեց՝ անվհատ եւ արժանապատուութեամբ ներկայացնելով ու պաշտպանելով Հայաստանի շահերը։ Դժբախտաբար, կարելի չեղաւ հայութեան բոլոր ճիգերը միա-

ցընել մէկ հունի մէջ. կուսակցական կիրքերը աւելի զօրաւոր դուրս եկան, քան ազգային–պետական դիտակցութիւնը: Երկու Պատուիրակութիւնները գործեցին առանձին–առանձին, երբեմն նոյնիսկ՝ հակամարտ: Ահարոնեանը անվհատ առաջ տարաւ քաղաքական աշխատանքը, մինչեւ որ, 1920 թ. Օգոստ. 10–ին, Սեւրում, ստորագրուեց խաղաղութեան դաշնագիրը Թուրքիայի հետ, որով ճանաչւում էր Միացեալ եւ Անկախ Հայաստանի իրաւական գոյութիւնը՝ Միացեալ Նահանգների նախագահ Ուիլսընի սահմանագծումով: Ահարոնեանը, յանուն Հայաստանի Հանրապետութեան, ստորագրեց դաշնագիրը Դաշնակից պատգամաւորների հետ միասին: Այդ առթիւ նա իր յուշամատեանում արձանագրել է.

«Կեանքիս ամենաերջանիկ օրն է այս: Երեսուն տարուայ պայքարս, բողոքս, տառապանքս եւ յոյսերս պսակուեցին փառաւոր յաջողութեամբ: Թուրքական դաշնագիրը ստորագրուեց, եւ բոլոր Դաշնակից պետութիւնների Համաժողովն այսպիսով հռչակեց Միացեալ, Անկախ, Ազատ Հայաստանը Սեւրի սրահում»:

Սեւրին յաջորդեցին ողբերգական օրեր Հայաստանի համար — պատերազմ Թուրքիայի հետ, խորհրդայնացում, անկախութեան վերացում, հայկական իրաւունքների ուրացում Հայաստանի բոլշեւիկ վարիչների կողմից, ապա՝ Լոզանի խայտառակ դաշինքը... Ահարոնեանը, իբրեւ Հ. Հ. Պատուիրակութեան գլուխ, շարունակեց ներկայացնել Հայաստանը արտաքին աշխարհի առջեւ՝ անընդհատ եւ, դժբախտաբար, ապարդիւն բախելով մեծ պետութեանց եւ Ազգերի Դաշնակցութեան դռները: Լոզանի Դաշնագրի առթիւ Դաշնակիցներին եւ Խորհրդային արտաքին գործավար Չիչերինին ուղղած պատմական բողոքագրերը կարապի երգը եղան Ահարոնեան քաղաքական գործչի համար:

Քաշուելով քաղաքական ասպարէզից՝ Ահարոնեանը նորից ձեռք է առնում գրիչը: 1916–ից ի վեր նա գրեթէ գրական–գեղարուեստական գործ չէր արտադրել: Հիմա նոր թափով, իբար յետեւից, նրա գրչի տակից դուրս են գալիս գործեր, որոնց մի մասը, ինչպէս «Ղեղոյի Արտը», Ահարոնեանի թողած գրական ժառանգութեան մէջ առաջնակարգ տեղ է գրաւում: Պարբերականներում եւ առանձին հատորներով լոյս տեսան, յիշելու համար միայն մի քանիսը, նրա «Ճամբորդը», «Ղեղոյի Արտը», «Կաթուշքը», «Իմ Գիրքը» երկու հատոր եւայլն: Պատկառելի է Ահարոնեանի այս շրջանի գրական վաստակը թէ՛ քանակով եւ թէ՛ որակով: Ահարոնեանի ամբողջական երկերի ժողովածուն, 10 հատորով, լոյս տեսաւ 1947–50–ին, իր որդու՝ Վ. Ահարոնեանի հրատարակութեամբ:

1930–ին, Ֆրանսայում եւ գրեթէ ամբողջ արտասահմանում տօնուեց Ահարոնեանի քառասնամեայ գրական գործունէութեան յոբելեանը եւ այդ առթիւ հիմնուեց Ահարոնեանի անունով Մշակութային Հիմնադրամ, որի արդիւնքից պիտի օգտուէր յոբելեարը, իսկ նրա մահից յետոյ՝ վաստակաւոր հայ մտաւորականները։

Որքան եւ զբաղուած լինէր գրականութեամբ, Ահարոնեանը չէքեց եւ հասարակական գործունէութիւնը. նա իր խորհուրդներով աջակցում էր Կուսակցութեան քաղաքական ձեռնարկներին, մասնակցում էր Դաշնակցութեան աշխատանքին, ինչպէս եւ ազգային–մշակութային կեանքին։ Մասնաւոր դուրդուրանք էր ցոյց տալիս դէպի 1928–ին կազմուած Համազգային Ընկերութիւնը եւ նրա հիմնած Բեյրութի ճեմարանը Լ. Շանթի եւ Ն. Ադրալեանի ղեկավարութեան ներքոյ։

1934–ին Ահարոնեանը հրաւէր ստացաւ բանախօսելու Համազգայինի Մարսէյլի մասնաճիւղի մեծ հանդէսին, փետր. 11–ին։ Չնայած որ դեռ 1928–ին, նա թեթեւ կաթուած էր ստացել, եւ լ ժիշկները թելադրել էին յուզումի չենթարկուել, հակառակ ընկերների ընդդիմութեան, Ահարոնեանը ընդունեց հրաւէրը, եւ հազարաւոր բազմութեան առջեւ, բանախօսութեան կէսին, կաթուածահար ընկաւ։ Հարուածը հասած էր ուղեղին...։ Եւ այնուհետեւ, անդամալոյծ, մտաւոր աշխատանքի անընդունակ, տառապալից տարիներ անցկացրեց, մինչեւ որ 1948 Ապրիլ 20–ին փչեց վերջին շունչը, 82 տարեկան հասակում։

Համազգային աննախընթաց յուղարկաւորութեամբ Ահարոնեանի դագաղը փոխադրուեց Փարիզ եւ հողին յանձնուեց Փէր Լաշէզ գերեզմանատանը, ուր հանգչած են նաեւ Գրիգոր Օտեանը եւ Անդրանիկը։

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ զերազանցապէս գործի կուսակցութիւն, համեմատաբար քիչ է զբաղուել տեսաբանական հարցերով։ Ռոստոմի խօսքը՝ «յեղափոխութիւնը նախ՝ գործ է, յետոյ՝ գաղափար... Աւելի ճիշդ՝ յեղափոխութիւնը գործ է գաղափարի համար» ծառայել է, որպէս ղեկավար սկզբունք Դաշնակցութեան կեանքում, ուր տեսաբանութիւնը ստեղծուել է գործի ընթացքում։ Հա՞ւը հաւկիթից, թէ հաւկի՞թը հաւից ա-

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ռեղծուածը, որի համար այնքան ոյժ ու մելան, եւ աւա՜ղ, նաեւ արիւն է սպառուել մարքսեան դաւանամոլների բանակում, երկրորդական նշանակութիւն է ունեցել Դաշնակցականների համար, որոնք մեկնել են «հաւի» եւ «հաւկիթի» դոյութեան փաստից։ Գաղափա՞րն է ծնողը գործի, թէ՞ գործից է բխում գաղափարը — Դաշնակցութեան համար նոյնարժէք հասկացողութիւն է. «յեղափոխութիւնը գործ է գաղափարի համար»։

Եւ զարմանալի չէ բնաւ, որ Դաշնակցութիւնը տուած է աւելի գործի հերոսներ քան մտքի հերոսներ։ Եւ վերջիններիս շարքում, անկասկած, առաջնակարգ տեղն է գրաւում Միքայէլ Վարանդեանը, որ իր ամբողջ կեանքը նուիրեց Դաշնակցութեան մըտաւոր-գաղափարական արտը մշակելուն եւ, իրաւամբ, համարւում է նրա աշխարհահայեացքի, սկզբունքային-տեսական հարցի մշակողը, ձեւակերպողն ու ժողովրդականացնողը։ Ապրելով լուսաւոր կենտրոններում, եւրոպական առաջաւոր մտքի մթնոլորտում, երկար տարիներ՝ «Դրօշակ»ի խմբագիր եւ կուսակցութեան ներկայացուցիչ Ընկերվարական Միջազգայնականում, հը-

մուտ լեզուների եւ գիտութեանց, Վարանդեանը միակ անձը եղաւ Դաշնակցութեան մէջ, որ, ընթացիկ գործերից ազատ, ամբողջովին զբաղուեց իր մտաւոր աշխատանքով եւ այս մարզում իր կատարած դերը եւ թողած գրական ժառանգութիւնը պատկառելի են:

Միքայէլ Վարանդեանը, բուն անունով Միքայէլ Յովհաննիսեան, Ղարաբաղի Վարանդա գաւառից էր. այստեղից եւ նրա ծածկանունը՝ Վարանդեան, որ հետագային դարձաւ իսկական անուն: Ծնուել էր 1874-ին: Միջնակարգ կրթութիւնը ստացել էր Շուշիի ռէալական դպրոցում եւ աշակերտական տարիքից արդէն տարուած էր ժամանակի յառաջադիմական-յեղափոխական գաղափարներով: Ութսունական թուականների վերջերին անցաւ Զուիցերիա ուսանելու եւ շուտով դարձաւ Ժընեւի հայ ուսանողական շրջանակի գործօն անդամներից մէկը: Համալսարանում հետեւում էր ընկերային-քաղաքական գիտութիւններին: Առանձնապէս նրան հետաքրքրում էին ընկերվարութեան հետ կապուած հարցերը: Նա դասախօսութիւններ լսեց եւ գերմանական համալսարաններում, յատկապէս, ժամանակի նշանաւոր ընկերաբաններից:

Երբ, 1892-ին, Ժընեւ եկաւ Ռոստոմը եւ հիմնեց «Դրօշակ»ը, Վարանդեանը, Սիմոն Շխեանի հետ, դարձաւ նրա սերտ գործակիցը՝ համալսարանական պարապմունքներից դուրս ազատ ժամանակը տրամադրելով գրական աշխատանքի: Միեւնոյն ժամանակ աշխատակցում էր Արասխանեանի «Մուրճ»ին, եւ «Մշակ»ին EGO ծածկանունով:

1895-ին Ռոստոմը հեռացաւ Ժընեւից, եւ «Դրօշակ»ի խմբագրութիւնը վարեց Յոնան Դաւթեանը: Վարանդեանը աւելի գործօն կապերով կապուեց «Դրօշակ»ի հետ՝ երբեմն նաեւ փոխարինելով Յոնանին, որպէս խմբագիր: Այժմ այլեւս նա կատարում էր եւ կազմակերպական աշխատանք՝ խմբագրութեան կողմից թղթակցելով արտասահմանեան մարմինների եւ ընկերների հետ:

1897-ին, լրացնելով ուսման շրջանը, Վարանդեանը, այդ օրերին Բուլղարիայում եռուն գործունէութեան լծուած՝ Ա. Վրոամեանի առաջարկութեամբ, անցաւ Ռումանիա, որպէս Դաշնակցական գործիչ, բայց երկար չկարողացաւ մնալ այնտեղ. մատնութեան հետեւանքով ձերբակալուեց ռումանական կառավարութիւնից եւ հեռացուեց երկրի սահմաններից դուրս:

Վերադառնալով Ժընեւ, Վարանդեանը, 1898-ին, որոշ ժամանակ վարեց «Դրօշակ»ի խմբագրութիւնը, մինչեւ Քրիստափորի հասնելը Ժընեւ, նոյն տարուայ վերջերը: Քրիստափորը նրան մնայուն կերպով կապեց «Դրօշակ»ի հետ, եւ այնուհետեւ, մին-

չեւ առաջին համաշխարհային պատերազմը, փոքրիկ ընդհատումներով, Վարանդեանը մնաց «Դրօշակ»ում, մերթ, իբրեւ խմբագրութեան անդամ եւ մերթ խմբագրական ամբողջ աշխատանքը տանելով մենակ։ 1899 թուից սկսած «Դրօշակ»ի գրեթէ ամէն համար բովանդակում է Վարանդեանի այս կամ այն բնոյթի գրուածքներ՝ խմբագրական, տեսութիւններ, ուսումնասիրութիւններ, կենսագրականներ, բանավէճ հակառակորդի հետ, երկրի թղթակցութիւնների վերամշակում, ընթացիկ տեղեկութիւններ։ Քրիստափորի մահից յետոյ՝ «Դրօշակ»ը լեցնող ու խմբագրող, երբեմն եւ միակ ոյժը եղաւ Վարանդեանը։ «Դրօշակ»ում տպուած նրա գրուածքների կարեւոր մէկ մասը յետոյ լոյս տեսաւ առանձին հատորներով, ինչպէս «Հայկական Շարժման Նախապատմութիւնը», «Հոսանքներ» եւայլն։

Խմբագրական եւ գրական գործերից զատ Վարանդեանը աշխատում էր եւ հայկական պրոպագանդի մարզում՝ դասախօսութիւններով, յօդուածներով եւրոպական մամուլում ու «Pro-Armenia»յում, համաժողովներում ներկայացնելով Դաշնակցութիւնը, որպէս Արեւմտեան Բիւրոյի անդամ՝ մասնակցելով կուսակցութեան ընթացիկ կեանքին։

1905 թ. ռուսական յեղափոխութիւնից յետոյ, Վարանդեանը մեկնեց Կովկաս եւ որոշ ժամանակ աշխատեց «Ցառաջ» եւ յաջորդող թերթերի խմբագրական կազմի մէջ։ Այս օրերին նրա գրչի տակից դուրս եկան «Կովկասեան Վանդէա», «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները» գրքոյկները եւ մի շարք սուր բանավիճային յօդուածներ, որոնք այնքա՛ն ուժեղ տպաւորութիւն գործեցին հասարակութեան մտքերի վրայ։ Մանաւանդ, երիտասարդութիւնը յափշտակութեամբ կարդում էր նրա գրուածքները։

1907-ին, մեկնելով Վիեննա, Հ. Յ. Դ. Զորբորդ Ընդհ. Ժողովին, Վարանդեանը այլեւս չվերադարձաւ Կովկաս։ Ակնունիի եւ Արարատեանի հետ նա խմբագրեց Դաշնակցութեան նոր ծրագիրը Զորբորդ Ընդհ. Ժողովի կողմից ընդունուած սկզբունքների համաձայն։ Ապա յաջողացրեց Դաշնակցութեան ընդունելութիւնը Ընկերվարական Միջազգայնականի մէջ եւ մասնակցեց Ընկերվարական Միջազգային Համագումարին, Շտուտգարտում, իբրեւ Դաշնակցութեան պատգամաւոր։ Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, կարճ ժամանակով, այցելեց Պոլիս՝ իր բաժինն եւս բերելով նորաստեղծ Թուրքիայի հայութեան մտաւորական կեանքին։

Այնուհետեւ, Վարանդեանը, մինչեւ 1915 թ., մնաց Եւրոպայում, որպէս «Դրօշակ»ի խմբագիր, Դաշնակցութեան ներկա-

յացուցիչ, ապա, իբրեւ գործակից Պօղոս Նուպարի պատուիրակութեան։ 1915-ին, որոշ ժամանակի համար, անցաւ Կովկաս եւ վարեց «Հորիզոն»ի խմբագրութիւնը։ Վերադարձաւ Եւրոպա եւ գործակցեց Աղզ. Պատուիրակութեան, մինչեւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը, որից յետոյ նշանակուեց Հայաստանի դեսպան Հռոմում։ Թէ՛ որպէս դեսպան եւ թէ՛ իբրեւ Ընկերվարական Միջազգայինի ներկայացուցիչ Վարանդեանը շարունակեց քաղաքական աշխատանքը Եւրոպայում՝ համագործակցաբար Հ. Հ. Փարիզի պատուիրակութեան հետ։

Հայաստանի անկախութեան խորտակումը եւ, մանաւանդ, Լոզանի չարաղէտ դաշնագիրը ծանր կերպով ազդեցին Վարանդեանի հոգեկան վիճակի եւ առողջութեան վրայ։ Թէեւ նա շարունակեց կուսակցական գրական աշխատանքը, բայց այլեւս նախկին կորովը չէր մնացել։ Նա լոյս ընծայեց Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան առաջին հատորը, Մուրատի եւ Զաւարեանի կենսագրութիւնները, անընդհատ աշխատակցում էր մեր մամուլին, բայց ոչ առաջին շրջանի ուժով ու փայլով։

Վարանդեանի համար առանձնապէս ծանր հարուած եղաւ Ահարոնեանին պատահած դժբախտութիւնը Համազգայինի Մարսէյլի հանդէսում։ Ահարոնեանի հետ նա կապուած էր ընկերական մտերիմ կապերով, եւ մասամբ իր խորհրդով Ահարոնեանը ընդունել էր բանախօսելու հրաւէրը։ Ահարոնեանի կաթուածից յետոյ, Վարանդեանը այլեւս երկար չապրեց. մեռաւ 1934 թ. Ապրիլ 22-ին սրտի կաթուածից։

Ընդարձակ էր Վարանդեանի հետաքրքրութեան սահմանը, բայց նրա գլխաւոր եւ մնայուն արժէքը գրականութեան մէջ է, յատկապէս, հրապարակագրութեան։ Նրա պատմական հատորներն էլ, մեծ չափով, հրապարակագրական բնոյթ են կրում։ Նա գերազանցապէս քարոզիչ էր, բանավիճող ու պայքարող։ Դիւրասահ եւ թեւաւոր ոճով, խանդավառ թռիչքներով ու վիպապաշտ ոգով համակուած նրա երկերը ամբողջ սերունդներ են ոգեւորել։ Եւ այսօր էլ դեռ մեր երիտասարդութիւնը, մեծ չափով, Վարանդեանի գործերով է Դաշնակցական դաստիարակութիւն ստանում։ Ինչպէս Ահարոնեանը գեղեցիկ գրականութեան միջոցով, Վարանդեանը իր հրապարակագրութեամբ փառաւորեց Հայկական Ազատամարտը եւ յատկապէս Դաշնակցութեան մեծագործութիւնները։ Քնարերգակ-հրապարակագիր էր Վարանդեանը՝ մտքով գիտուն՝ եւ սրտով՝ բանաստեղծ, հայրենապաշտ ու հերոսապաշտ։ Եւ, որպէս այդպիսին, մնայուն տեղ ունի հայ յեղափոխական դարաշրջանի պատմութեան մէջ։

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ՄԻՆԱՍ ՏՈԼՊԱՇԵԱՆ, ԴՐԱԽՏ

Բուն անունով Մինաս Տոլպաշեան, Դաշնակցութեան մէջ յայտնի էր Դրախտ եւ Գայլ Վահան անուններով։ Ծնուած էր 1872 թ., Բալուի Հաւաւ գիւղում։ Կահագործ արհեստաւոր էր։ 16 տարեկան հասակում պանդխտում է Պոլիս, ուր անդամագրւում է Հնչակեան կուսակցութեան։ Այնտեղից անցնում է Բուլգարիա, ապա՝ Ամերիկա եւ հաստատւում է Փրավիդենս քաղաքում։

Փրավիդենսում արդէն գոյութիւն ունէր Դաշնակցութեան գործօն մի կոմիտէ, որին մասնակցում էին Բալուցիներից շատերը։ Մինաս էլ հետեւում է նրանց եւ հետզհետէ կարեւոր տեղ է գրաւում կուսակցութեան մէջ։ Ամերիկայի կեանքը, սակայն, նրան չի հրապուրում։ Եւ 1902-ին թողնում է Փրավիդենսը ու մեկնում Կովկաս՝ այնտեղից Բալու անցնելու յուսով։

Կովկասում Մինասը ընկնում է Դաշնացական մարտիկների շրջանը եւ յափշտակւում այնտեղի գործունէութեամբ։ Նրա փընտրրածն էլ հէնց այդ էր։ Դեռ Ամերիկայում՝ նա երազում էր հայդուկային արկածալից կեանքի մասին։ Եւ ահա երազը իրականանում էր։ Երեւանի կենտր. կոմիտէն յանձնում է նրան զէնք ու ռազմամթերք, գաղտնի գրականութիւն եւ յեղափոխականներ փոխադրելու գործը դէպի Երկիր, եւ նա հմտութեամբ ու նուիրումով կատարում է իր վրայ դրուած պարտականութիւնը։ Հաստատւում է Արաքսի ափի հայ գիւղերից մէկում, Մասիսի ստորոտը, կազմակերպում է կայաններ ու հաղորդակցութեան ճանապարհներ, հաւաքում է իր շուրջը յանդուգն հայդուկներ ու վալատներ եւ մեծ յաջողութեամբ փոխադրութիւններ է կատարում։ Ինքն եւս 4–5 անգամ զինակիր հայդուկների գլուխն անցած, մըտնում է Երկիր՝ ապահով տեղ հասցնելով զէնքերը։ Վահան Փափազեանը իր «Իմ Ցուշեր»ում նկարագրել ու ջերմ խօսքերով դըրուատել է Գայլ Վահանի այդ շրջանի գործունէութիւնը։

Վրայ է հասնում 1904 փոթորկալից տարին։ Սահմանի բոլոր կողմերից Դաշնակցութիւնը օգնական ուժեր է ուղարկում մարտընչող Սասունին։ Միւս կողմից, թուրքերը ուժեղացնում են սահմանագծի պաշտպանութիւնը՝ արգիլելու համար հայ յեղափոխական խմբերի ներխուժումը Կովկասից։ Երեւանի կենտր. Կոմիտէն կազմակերպել էր երկու մարտական խումբ՝ «Մասիս» եւ «Արտաւազդ», Սասունին օգնութեան հասնելու համար, բայց վերջին պահուն ստիպուած է լինում փոխել ծրագիրը եւ խմբերը ուղարկել դէպի Ալաշկերտ՝ պաշտպանելու համար Ալաշկերտի հայութիւնը քրտական յարձակումներից, այլեւ բնաջնջելու սահ-

Թիւ 1· ԳԱՑԼ ՎԱՀԱՆԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑՆԵՐՈՎ

մանամերձ թրքական զօրակայանները, որոնք վտանգել էին հաղորդակցութիւնը Երկրի հետ։

Երկու խմբերը, Յուլիս 11-ի գիշեր անցնում են Զինգիլի լեռնանցքը եւ մտնում Բայազէտի գաւառը։ «Մասիս» 60 հոգինոց խումբը, Գայլ Վահանի հրամանատարութեան ներքոյ, ռումբերով ու մոսիններով յարձակւում է Մոսուն գիւղի զօրանոցում եւ տներում տեղաւորուած շուրջ 250 ասկեարների վրայ, որոնց մի

մասը կոտորուում է, միւսները փախչում են։ Փախուստի են դիմում եւ մերձակայ Քորուն գիւղում գտնուող Թուրք զինուորները։

Առաւօտեան օգնութեան են հասնում Թրքական նոր ուժեր եւ քրտական աշիրէթներ։ Սկսւում է կատաղի կռիւ, որի միջոցին սպանուում են խմբի պետ Գայլ Վահանը, նրա օգնական սպայ Բարկէնը, յայտնի վալատ Սէթօն եւ մի քանի ուրիշ հայդուկներ։

Մոսունի յարձակման հետ միաժամանակ «Արտաւազդ» 40 հոգինոց խումբը դրոհ է տալիս Զոր գիւղի զօրանոցի վրայ։ Թուրք զինուորների մի մասը կոտորուում է, միւսները ազատուում են փախուստով։ Այս խումբն եւս տաք կռուի է բռնուում օգնութեան հասած ասկեարների եւ քիւրտերի հետ։

Երկու խմբերի կռիւը տեւում է մինչեւ երեկոյ, երբ յետ մղելով թրքական զօրքին ու քիւրտ աշիրէթներին՝ նրանք նահանջում են դէպի Զինդիլի բարձունքները հանգստանալու եւ յաջորդ անելիքը որոշելու նպատակով։ Երկու խմբի կորուստը հասնում էր 15 հոգու, որոնց մէջ ամենէն ծանրը Գայլ Վահանի մահն էր։

Խորհրդակցելու ժամին, յանկարծ, խմբի վրայ սկսում են տեղալ գնդակներ, որոնք խլում են 5–6 զոհ հայդուկներից։ Ռուս սահմանապահ զինուորներ ու կոզակներ էին երեք սպաների առաջնորդութեամբ։ Հայդուկների Խորհուրդը որոշում է չդիմադրել նոյն նկատումներով ինչ նկատումներով որ չդիմադրեց «Ոռսկան» խումբը։ Անձնատուր լինելու նշան է տրուում, բայց ռուսները կարեւորութիւն չեն տալիս եւ շարունակում են հրացանաձգութիւնը։ Հայդուկները, առանց պատասխանելու, ցրիւ են գալիս զանազան ուղղութեամբ։ Մի մասը, սակայն, ձերբակալուում է։ Այս անգամ էլ հայ յեղափոխականները զոհ գնացին ցարական նենգ ու դաւադիր քաղաքականութեան։

ԹՈՒՄԱՆ ԹՈՒՄԵԱՆՑ

ԹՈՐԳՈՄ

Ղարաբաղի գաւակ էր Թուման Թումեանց, Դաշնակցական Թորգոմը — դարերի ընթացքին ազատութեան համար իր բեղմնաւոր արգանդից այնքան հերոսներ ծնած Սիւնեաց աշխարհից, որ Հ. Յ. Դաշնակցութեանն էլ պարգեւեց Նիկոլ Դումաններ, Խանասորի Վարդաններ եւ բազմաթիւ ուրիշ մտաւորականներ ու մարտիկներ։

ԻՍԱԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ
ԵՒ
ԹՈՒՄԱՆ ԹՈՒՄԵԱՆՑ (ԹՈՐԳՈՄ)

Թումանը ծնուել է 1879-ին եւ աւարտել Շուշիի թեմական Դպրոցը: Հանդակակից էր, ընկեր եւ դաղափարակից այն սերնդի, որից դուրս եկան Արամը, Իշխանը եւ շատ-շատեր, որոնք անուանի մարտիկներ ու գործիչներ դարձան Դաշնակցութեան: Դեռ դպրոցում՝ Թումանը աշակերտական յեղափոխական խմբակների մէջ էր եւ իր մտաւոր պատրաստութեամբ, լուրջ ու քաղցր բնաւորութեամբ, ջանասիրութեամբ ու եռանդով սիրելի դարձած էր ընկերական շրջաններում:

Դպրոցն աւարտելուց յետոյ՝ Թումանը անցաւ Մոսկուա եւ համալսարանում, իբրեւ ազատ ունկնդիր, հետեւեց բնական գիտութիւններին՝ նպատակ դնելով, գիտական պաշարով զինուած, ամբողջապէս նուիրուիլ յեղափոխական գործունէութեան: Ժամանակները, սակայն, գիտութիւնից աւելի պահանջում էին ռազմական հմտութիւն: Դաշնակցութիւնը պէտք ունէր զինուորական ղեկավարների: Եւ Թումանը թողնելով համալսարանը՝ մտաւ զինուորական ծառայութեան, որտեղից դուրս եկաւ պահեստի սպայի աստիճանով:

Վերադառնալով Կովկաս՝ Թումանը նշանակուեց գործիչ Կարսի շրջանում, որ առաջնակարգ կարեւորութիւն էր ստացել, որպէս Երկրի ռազմաւորման եւ մարտական ուժերի կենտրոնացման ու փոխադրութեան վայր: Մինչեւ 1903-4 թուականները գլխաւորապէս Ալեքսանդրապոլի եւ Կարսի վրայով էր կատարւում զէնք ու ռազմամթերքի եւ հայդուկային խմբերի փոխադրութիւնը դէպի Բարձր Հայք ու Տարօն: Այստեղից էին անցել Արամ Արամեանի, Հրայր-Դժոխքի, Սերոբ Աղբիւրի եւ ուրիշ մարտական ու զինատար խմբերը: Սեբաստացի Մուրատը եւ այլ անուանի մարտիկներ տարիներ շարունակ զէնքի փոխադրութեամբ են զբաղուել այստեղ: Այժմ Կարսի շրջանում էին Արամը, Իշխանը, Իսաջանը, Մենակը, որոնք տեղական ընկերների հետ զէնք էին հասցնում Սասուն, ուր զինուորական կենտրոնացում էր կատար-

ում Անդրանիկի լիխաւորութեամբ։ Անդրանիկի հետ էին Մուրատը, Գեդին, Սեղուհը, Կայծակ Առաքելը եւ Տարօնի գործիչների եւ հայդուկների հոյլը՝ Հրայր, Գէորգ Զաւուշ, Կոտոյի Հաճի եւ ուրիշներ։

Թումանը միացաւ իր ընկերներին՝ ոգեւորութեամբ լծուելով կուսակցական կազմակերպական աշխատանքի եւ շնորհիւ իր կազմակերպական ընդունակութեան ու գինուորական հմտութեան, իր անապատ եւ անկուն կամքին եւ ընկերական խառնուածքին՝ շուտով պարձաւ դեկավար դէմք շրջանում։

Թիկունքի խաղաղ աշխատանքը, սակայն, Թումանին չէր հրապուրում։ Նրա հոգին տենչում էր փոթորկալից պայքար, մանաւանդ որ օրերն էլ մրրկոտ էին։ Կովկասի հայութիւնը խռովայոյզ վիճակի մէջ էր։ Երկրում մեծ դէպքեր էին նախապատրաստւում եւ ամէն կողմից լսւում էր «Դէպի Երկիր», Երկրի ընկերներին օգնութեան հասնելու կոչը։ Թումանն էլ որոշեց անցնել Սասուն։ Նրա ջանքերով կազմակերպուեց «Մրրիկ» ձիաւոր խումբը՝ Սասուն զէնք ու ռազմամթերք փոխադրելու համար։ «Մրրիկ» խմբի գլուխը անցած, առատ ռազմամթերքով, Թուման-Թորգոմը ապահով հասաւ Սասուն եւ խանդավառութեամբ ընդունուեց Անդրանիկի եւ ընկերների կողմից։ «Մրրիկ»ի յաջող արշաւը անսահման ոգեւորութիւն առաջ բերեց եւ Կովկասի հայութեան մէջ։

Ամառ էր։ 1904 թ.։ Սասունը պաշարուած էր, եւ ամբողջ հայութեան ուշադրութիւնը բեւեռուած էր նրա վրայ։ Կովկասից սահմանամերձ վայրերում փոքր խմբեր էին կազմակերպւում։ Հայդուկները խումբ-խումբ, փոքր խմբապետների առաջնորդութեամբ՝

Գնում էին գէպի Սասուն՝ օգնելու Անդրանիկին։

Ցունիսի վերջերը, Օլթիի շրջանում, կազմ ու պատրաստ էր 61 հոգինոց «Որսկան» խումբը՝ զրահաւորուած ու պարենաւորուած եւ զէնքի առատ պաշարով։ Խումբը բաժանուեց երկու մասի. մէկի հրամանատար նշանակուեց Թումանը, միւսի՝ Որսորդը։ Իւրաքանչիւր հայդուկ զինուած էր հրացանով, ատրճանակով, ձեռնառումբերով։ Եւ մէջքի պայուսակում ունէր սպիտակեղէն, հալուայ, վիրակապեր եւ այլ իրեր։ Ամէն մի խումբ բաղկացած էր երկու տասնեակից՝ տասնապետների առաջնորդութեամբ։ Տասնեակը կազմուած էր 14 գինուորներից եւ 2 բեռնակիրներից։ Խումբը ունէր նաեւ երկու բժիշկ եւ մէկ քահանայ՝ յիսնամեայ Տէր Ղազարը։ Ամէնքը որատորոի սպասում էին մեկնումի ժամին։

Յունիս 30-ի գիշերը, գիւղական եկեղեցում, Տէր Ղազարը պատարագ է մատուցանում, հաղորդութիւն է տալիս մարտիկներին եւ օծում՝ խմբի դրօշակը: Հայդուկները երդւում են դրօշակի վրայ: Ապա, գիւղացիների ջերմ համբոյրներով եւ խրախուսիչ բարեմաղթութիւններով, խումբը շարժւում է դէպի սահմանագլուխ՝ դրօշակակիր քահանայի առաջնորդութեամբ: Յաջողութեամբ անցնում է ռուսական սահմանը եւ լուսաբացին կանգ է առնում հանգստանալու Թրքական հողի վրայ, Զարդանիս աւերակ գիւղի մօտ, ոչ հեռու ռուսական սահմանից:

Մի պատահական միջադէպի հետեւանքով խումբը նկատւում եւ հետապնդւում է ռուս սահմանապահներից: Ռուսների հետ ընդհարումից խուսափելու նպատակով՝ խումբը խորանում է Թրքական հողի վրայ եւ ամրանում բարձր դիրքերում: Թումանն ու Որսորդը արգելում են հայդուկներին կրակել ռուսների վրայ, որոնք անընդհատ գնդակահարում էին հայդուկների դիրքերը, առանց կարեւորութիւն տալու այնտեղից լսուող ձայներին, թէ՝ «մենք ձեզ հետ գործ չունենք. մեր գործը Թուրքերի հետ է»:

Քիչ անցած, Թիկունքից, Որսորդի դիրքերի վրայ կրակ են բաց անում Թուրք զինուորները, որոնց ռուս հրամանատարը շտապով լուր էր ուղարկել: Հայդուկները պարզում են դրօշակը եւ «Կռուեցէ՛ք, տղերք» երգելով՝ կատաղի կռուի են բռնւում Թուրքերի հետ, որ տեւում է մինչեւ կէսօր: Ռուսներն էլ, իրենց հերթին, աշխատում են շրջապատել հայդուկների դիրքերը:

Թումանը, տեսնելով, որ երկու կրակի մէջ անկարելի պիտի լինի դուրս գալ պաշարման շղթայից, տասնապետ Անուշաւանին ուղարկում է ռուս զօրքի հրամանատար գնդ. Բրկովի մօտ յայտնելու, թէ իրենք ռուսական սահմանից դուրս են, ռուսների դէմ ոչինչ չունեն, գնում են օգնելու Թրքահայ եղբայրներին եւ խնդրում են յետ քաշել ռուսական զօրքը: Անուշաւանը գնում եւ այլեւս չի վերադառնում: Ռուսները շարունակում են անընդհատ կրակել հայերի դիրքերի վրայ:

Թումանը երկրորդ պատգամաւոր է ուղարկում՝ Լեւոն Քալանթարեանին: Սա էլ ռուսներին հաղորդում է նոյն բանը եւ խնդրում վերջ տալ կռուին: Ռուսները լսում են նրան եւ աւելի ուժեղ թափով յարձակւում հայկական դիրքերի վրայ: Միւս կողմից էլ Թուրքերն են սաստկացնում դրոհները:

Երրորդ անգամ, խաչը ձեռքին, քահանան է գնում ողոքելու ռուսներին, բայց տեղ չհասած՝ ընկնում է կողակների գնդակներից:

Հակառակ այս բոլորի՝ հայերի կողմից ոչ մէկ գնդակ չի ար-

ձակուում ռուսների դէմ։ Խմբապետները խստիւ արգիլած էին։ Այդպէս էր այն օրերին Դաշնակցութեան կամքը՝ Ռուսաստանը թշնամի չնկատել եւ ոչ մէկ առիթ չտալ գրգռելու նրա թշնամութիւնը։



ՀԱՄՕ ՁԱՆՓՈԼԱՏԵԱՆ

Բայց հետզհետէ կացութիւնը դառնում է անհանդուրժելի։ Մի կողմից, Որսորդի ճակատի վրայ, Թուրքերն են յամառ յարձակումներ գործում, առանց կանգ առնելու մեծ կորուստների առջեւ, միւս կողմից, հակառակ Թորգոմի թափած ճիգերի, ռուսներն են յառաջանում՝ անխնայ փամփուշտ կրակելով հայերի ուղղութեամբ։ Ժամը 4–5–ին, ռուս–Թրքական միացեալ ուժերը շրջապատում եւ սպառնում են գրաւել հայերի բռնած ամրութիւնները։ Թումանը անձնատուութեան ազդանշան է տալիս. դրօշակ պարզած, 10–12 ընկերներով շարժւում է ռուսների ուղղութեամբ եւ սպանւում է ռուսների գնդակներից ...

Արիւնահեղ կռիւը շարունակւում է մինչեւ երեկոյ Որսորդի ղեկավարութեամբ։ Ժամը 7–ին, Թուրքերի եւ ռուսների միացեալ զրոհով, գրաււում են հայկական դիրքերը։ Հայդուկների մի մասը ապաւում է փախուստով, միւսները կոտորւում են։ Սպանւում է Որսորդը, նոյնպէս ռուսական գնդակից։

«Որսկան» խմբի այս տմարդի, հրէշային բնաջնջումը «խաչապաշտ» ռուս կոզակների եւ Թուրք ասկեարների համերաշխ գործակցութեամբ՝ ցնցեց հայութեան բոլոր խաւերը։ Վրդովումը անսահման էր ռուսական իշխանութեան դէմ։ Ամէն կողմից «վրէժ, վրէժ» էր լսւում ու հատուցում պահանջում Թանգադին զոհերի արեան համար։ Եւ հատուցումը չուշացաւ։ Կարսի կենտր. Կոմիտէի որոշումով, Յուլիս 31–ի երեկոյեան, Օլթի քաղաքում, Դաշնակցական ահաբեկիչ Համօ Ջանիոլադեանի երեք գնդակներից չանսատակ եղաւ «Որսկան» խմբի Ջարդարարը՝ գնդ. Բրկովը։ «Տեռորիստը ազատ է», յայտարարում էր կենտր. Կոմիտէի Թռուցիկը...

ԹՈՒՄԱՆ ԹՈՒՄԵԱՆ

(ԹՈՐԳՈՄ)

Գրեց՝ ԱՐԱՄ

Հ. Յ. Դ. կենտր. Դիւանի թիւ 1784 թղթածրարում պահուած է Արամ Մանուկեանի ձեռագիր կենսագրականը Թուման Թումեանի — Թորգոմի մասին, որ առաջ ենք բերում ստորեւ։ Թումանը Արամի մտերիմ ընկերներից էր. Կարսի շրջանում նրանք գործում էին միասին։ Կենսագրութիւնը գրուած է Թու-

մանի նահատակութիւնից անմիջապէս յետոյ: Մեր կողմից աւելացնում ենք «Որսորդ» խմբի կռուի եւ Թումանի ու ընկերների նահատակութեան պատմութիւնը:

Թորգոմը ծնուել է 1879 թ. Մայիս 11-ին, Շուշի քաղաքում: Ծնողները, բնիկ շուշեցի, սովորական կարողութեան տէր մարդիկ էին, բայց Թումանին փոքր հասակից արհեստի տալու փոխարէն դպրոց ուղարկեցին:

Շուշուայ թեմական դպրոցի լաւ օրերն էին: Թորգոմը դըպրոցում ամենաառաջադէմ եւ ընդունակ աշակերտ էր. ոչ ոք նրա հետ չէր կարող մրցել ընդունակութեան եւ յաջողութեան մէջ: Ընկերները նախանձում էին նրա ընդունակութիւններին, իսկ ուսուցիչները ուրախանում:

Բացի աշակերտական պարապմունքներից, Թորգոմը ամենայն ճշդապահութեամբ յաճախում էր եւ ընկերական ժողովներ եւ ուրիշ հաւաքումներ. պարապում էր դրսի խմբերի հետ:

1897 թուին աւարտելով դպրոցը, Թորգոմը գնում է Մոսկուա՝ ուսումը շարունակելու համար. մտադիր էր Գիմնազիոնի քննութիւն տալ եւ մտնել բժշկական բաժինը. շատ էր սիրում բնագիտական առարկաները: Բայց Ռուսաստանի սառնամանիքները վատ են ազդում առողջութեանը վրայ: Թորգոմը հիւանդանում եւ ստիպուած է լինում վերադառնալ հայրենիք:

Թորգոմի հասարակական գործունէութիւնը սկսւում է հէնց այդ տարուանից, 1898-ից, երբ նա ձեռնարկում է աշակերտութեան կազմակերպութեան եւ կարողանում է որոշ ուղղութիւն տալ: Նրա նախաձեռնութեամբ է, որ հրատարակւում է «Կոկոն» թերթը: Նա է լինում նրա անմիջական խմբագիրը եւ արտագրողն ու յօդուածները կանոնաւորողը:

Թումանը չի բաւականանում միայն աշակերտութեան շըրջանով. նա պնդում է, որ աշակերտութիւնը պէտք է մնայ աշակերտութիւն, իսկ հասարակական գործով պէտք է զբաղուի դրսի երիտասարդութիւնը: Բայց ո՞ւր է Շուշում երիտասարդութիւնը. Բաղուն եւ այլ քաղաքները բոլորովին դրաւել-տարել են: Թումանը եղածով էլ բաւականանում է. կազմում է գործակատարներից մի խումբ, ամենաբարեխիղճ կերպով պարապում է նրանց հետ: Մի տարի յետոյ, նրա աշխատանքն արդէն այնքան բեղմնաւոր արդիւնք է տալիս, որ ամբողջ գործակատարութիւնը կազմակերպւում եւ մտնում է Դաշնակցութեան դրօշակի տակ: Այդ խմբերից վերջը կանոնաւոր տղաներ դուրս եկան եւ մի քանիսն էլ մտան կոմիտէական կազմի մէջ:

Այդ ժամանակները Շուշում, ինչպէս եւ ամէն տեղ, թա-

գաւորում էր հակայեղափոխական ըէակցիան, բայց շնորհիւ Թումանի եւ մի շարք ուրիշ ընկերների թափած ջանքերի, յեղափոխական կրակը բորբոքուած է պահւում եւ հետագային այդ կրակը կլանել է ողջ Շուշին եւ գաւառները...

Թումանը դեռ Շուշում էր, երբ Մենակը (Գէորգ Աստամեան)՝ գնաց Բաղու, Թումանը հակառակ էր Բաղու գնալուն. նապնդում էր, որ Բաղուն գերեզման է. այնտեղ ընկնողը է՛լ յարութիւն չի առնում:

Բաղուից կամաց-կամաց լուրեր են հասնում, թէ այնտեղ է եկել արտասահմանից մի նոր մարդ եւ կանոնաւոր կազմակերպութիւն է առաջ բերում, ու յեղափոխական տրամադրութիւնը բաւական բարձրանում է... Լուրեր հաղորդողը Մենակն էր, սակայն, Թումանն ու ընկերներ էլի չեն հաւատում եւ սպասում են, որ Շուշիում աւելի վստահելի տեղեկութիւն ստացուի: Բայց փոխանակ տեղեկութեան, ահա մի դեղեցիկ օր Շուշի է վերադառնում Մենակը:

Մի փոքր, խոնաւ խուցում, քաղաքի յետ ընկած փողոցներից մէկում, ընկերական ժողով է: Մենակը բան ունի ասելու. ընկերները հաւաքուել են, բոլորը դասընկերներ եւ վերջին տարին՝ կեանքի ընկերներ: Մռայլ եւ մառախլապատ երեկոյ է. մի համեստ սեղանի շուրջը բոլորած, առանց ուշադրութիւն դարձնելու ցրտին, լսում են Մենակի զեկուցումը:

Իսկ զեկուցումը կարճ է. ըէակցիան Կովկասում եւ երկրում անցել է, հարկաւոր է կանոնաւոր գործի ձեռնարկել. գործի գըլուխ պիտի անցնի թարմ երիտասարդութիւնը. հները կամ ընկել են կռուի դաշտում, կամ հիասթափուել... Պատմում է Բաղուում տեղի ունեցած խառն ժողովների մասին, Սոցիալ Դեմոկրատ կուսակցութեան կազմակերպուելու մասին, եւ այն մասին, որ ինքը վճռել է անցնել Երկիր, որ խնդիրը անցել է, որ ինքը եկել է Շուշի, իր ընկերների տրամադրութիւնը իմանալու, ա՛յն ընկերների, որ միշտ խոստացել են միասին գործել...

Խնդիրը պարզ է. բոլոր ընկերները բաժակ են բարձրացնում Մենակի յաջողութեան համար եւ խոստանում են, որ հէնց առաջիկայ գարնանից իրենք եւս կը հեռանան Շուշուց՝ հետեւելու համար Մենակի օրինակին...

Ամբողջ գիշեր խոստովանութիւնների եւ փոխադարձ խոստումների զգացմունքների ազդեցութեան տակ լուսացնում են ու Մենակին «Խաղաղ Դաշտի» ներդաշնակ երգով ճանապարհ են ձգում՝ իրենք էլ գնալու պայմանով...

Եւ գնում են: Գնացողներից առաջինը Թորգոմն էր: Նա արդէն մտել էր կամաւոր զինուորական ծառայութեան եւ ստացել

էր պահեստի սպայի աստիճանը։ 1901 թ. ամառը նա, իբրեւ սպայ, պէտք է դնար փորձնական ծառայութեան։ Ծառայութեան տեղ դիտմամբ ընտրում է Ալեքսանդրապոլը՝ Մենակին եւ սահմանին մօտենալու համար։ Ծառայութիւնը տեւում է միայն 3 ամիս։ Վերջացնելուց յետոյ, դեռ զինուորական համազգեստը հագին՝ Թորգոմը ներկայանում է Զրաբերդի (Կարսի) կենտրոնական Կոմիտէին եւ բերանացի կերպով առաջարկութիւն է անում ամբողջապէս նուիրուելու յեղափոխական գործին։ Ի՞նչ ասել կ՝ուզէ, որ կենտր. Կոմիտէն գրկաբաց ընդունում է երիտասարդ սպայի եւ մտաւորական մարդու առաջարկութիւնը։ Այդ օրուանից էլ սկսւում է Թորգոմի յեղափոխական-մարտական գործունէութիւնը։ Նա միշտ ասում էր, թէ սիրողի դերը իրեն համար ատելի է, որոշ չափով, նոյնիսկ յանցանք է. անթոյլատրելի է, որ յեղափոխական գործիչը ուրիշներին ուղարկէ կրակի գիրկը, իսկ ինքը հեռուից միայն դիտողի դեր կատարէ։

Բէակցիայից յետոյ, Զրաբերդը նոր էր վերակազմւում. հին ու փորձուած բոլոր ընկերները կամ հեռացել էին, կամ հիասթափուած չէզոքացել էին։ Նոր կենտրոնական Կոմիտէն կազմըւած էր նոր եւ անփորձ մարդկանցից, որոնք դեռ նոր էին սկսում յեղափոխական գործունէութեան։ Բնականաբար, Թորգոմը իրեն ուժեղ կը զգար այդ նոր եւ թարմ շրջանում, ուր կուսակցական գործը սահմանափակուած չէր պաշտօնական նեղ շրջանակներով։

Մենակը դեռ Զրաբերդում էր եւ Երկիր անցնելու պատրաստութիւններ էր տեսնում։ Մենակի գործունէութիւնը Զրաբերդի շրջանում քարոզչական-նախապատրաստական էր. նա դեռ խօսում էր, զգացմունքների վրայ էր ազդում։ Թորգոմը արդէն կազմակերպող էր, կենդանի գործի մարդ։ Զրաբերդի շրջանում չմնաց մի գիւղ, ուր Թորգոմը մտած չլինէր։ Մինչեւ Թորգոմը Զրաբերդի շրջանում կար մասնակի եւ անկանոն կազմակերպութիւն. Թորգոմի օրով էր, որ խմբական կազմակերպութիւնը դառնում է համայնական. գիւղի ամբողջ համայնքն է մասնակցում կուսակցական գործին։ Գիւղերում ստեղծւում են գիւղական ենթակոմիտէներ, գիւղի զգայուն տարրերը առաջ են քաշւում եւ կազմում են տեղական ու շարժական զինուորական խմբեր։

Քաղաքներում եւս կանոնաւոր խմբերի կազմակերպութիւնը սկսւում է Թորգոմի օրով։ Նրա օրով է սկսւում կանոնաւոր երեկոյթների եւ ընկերական հաւաքոյթների շրջանը։ Նրա օրով է, որ, 1901–902-ին Զրաբերդում հրատարակւում են մի շարք թռուցիկներ։

Բայց, Զրաբերդի շրջանի գործունէութիւնը ինչքան էլ հեռաքրքիր եւ օգտակար լինէր, չէր կարող Թորգոմին կապել ու պահել։ Նա Զրաբերդ էր եկել Երկիր անցնելու նպատակով եւ ոչ թէ Զրաբերդում մնալու համար. Զրաբերդը փորձառութեան վայր էր սոսկ՝ Երկիր մտնող անփորձ յեղափոխականների համար, որոնք այնտեղ կարող էին անցնել յեղափոխական գործի դպրոցը։ Թորգոմը արդէն անցել էր այդ շրջանը, հարկաւոր էր տնել երկրորդ քայլը։ Մենակը յաջողութիւն էր գտել Բասենում եւ նամակներով առաջարկութիւն էր անում զէնք եւ մարդ ուղարկելու Երկիր։ Թորգոմը պատրաստակամութիւն է յայտնում անցնելու Երկիր։ Զրաբերդի Մարմինը խորհրդակցելով Կովկասի ընկերների հետ՝ որոշում է Թորգոմին մի թեթեւ խմբով ճամբել Սասուն։

Սկսւում է «Մրրիկ» խմբի պատրաստութիւնը։ Զրաբերդում միայն Թորգոմը չէր, որ ցանկանում էր Երկիր մտնել. այնտեղ վաղուց հաւաքուել էին մեր հին, փորձառու զինուորները, որոնք անդադար դիմումներ էին անում Երկիր անցնելու։ Այդ ընկերների խումբը ընդհանուր անունով կոչւում էր «Սվազցիների խումբ»։ Թորգոմը իր շուրջն է հաւաքում այդ ընկերներին, եւ քիչ յետոյ, «Մրրիկ» ձիաւոր խումբը արդէն կազմ եւ պատրաստ էր։

«Մրրիկ» խմբի մէջ մտան այն զինուորները, որոնք Սասունի վերջին ապստամբութեան ժամանակ այնքա՜ն հերոսական կերպով բարձրացրել էին հայ ֆիտայու անունը։ Դրանք ոչ թէ պարզ զինուորներ էին, այլ մէկ-մէկ խմբապետներ — Ֆարհատ, Մուրատ, Սեպուհ, Որսորդ Գէորգ, Առաքել եւայլն։ Վերջին դէպքերի հերոսներ էին սրանք, որոնց անունները բերնէ բերան էին պտտում հայութեան մէջ։

Ընկերների ընդհանուր համաձայնութեամբ Թորգոմը ընտրւում է խմբապետ, հակառակ իր ցանկութեան։ Նա առարկում էր, թէ խմբապետութեան համար իրենից աւելի փորձառու եւ արժանաւոր ընկերներ կային, բայց ընկերները գաղտնի քուէարկութեամբ միաձայնութեամբ ընտրում են նրան խմբապետ։

«Մրրիկ»ի յաղթական մուտքը Սասուն, յայտնի է ամենքին։ «Մրրիկ»ի հասցրած օգնութիւնը Սասունի ընկերներին՝ անդնահատելի էր։ Ընկերների յանկարծական եւ անսպասելի մուտքը Սասուն, յուզեց ամբողջ ժողովուրդը։ «Մրրիկ»ի իւրաքանչիւր անդամ ամենալաւ յիշողութիւններն ունի սասունցիների ցոյց տուած ջերմ ընդունելութիւնից. նախ քան բարեւելը պատարագ է կատարւում Սերոբի գերեզմանի վրայ, զէնք ու զրահով, զինուորական յարգանք է տրւում հերոսի յիշատակին, ապա սկսւում է ընկերական գրկախառնութիւնը եւ «բարով եկաք»ները...

Թորգոմը Սասունում մտնում է Պատասխանատու Մարմնի մէջ եւ զբաղւում է կազմակերպողի, պրոպագանդիստի ու թղթակցի դերով։ Նրա քաղցր ու հետաքրքիր նամակները ձեռքէ ձեռք պտտում են Կովկասում...

1904 թ. դարնան Սասունի Պատասխանատու Մարմինը ստանում է արտասահմանի ընկերներից Ընդհանուր ժողովին մասնակցելու հրաւէր։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, երբ անյարմար է դտնւում Վահանի եւ Հրայրի գնալը, վճռւում է ուղարկել Թորգոմին եւ Կայծակին՝ առաջինը Բարձրաւանդակի ներկայացուցիչ, իսկ երկրորդը Տարօնի։ Թորգոմը աղաչում է ընկերներին, որ իրեն Կովկաս չուղարկեն, բայց այդ անհնար է լինում. Թորգոմը եւ Կայծակը հարուստ տեղեկագրերով ու տպաւորութիւններով, ահագին դժուարութիւններով, անցնում են Կովկաս...

Կովկասեան նախապատրաստական ժողովը վճռում է, որ ընկերներից մէկը մնայ Կովկասում՝ Սասունի պահանջներին բաւարարութիւն տալու համար։ Թորգոմը յանձն է առնում, մնում է Կովկասում եւ ձեռնարկում է աշխատանքի։ Երբ Ընդհանուր ժողովի դնացող ընկերները վերադառնում են արտասահմանից, նորից վճռւում է, որ Թորգոմը մնայ եւ վերջին խմբի հետ ներս մտնէ Երկիր։

Ներս դնալու փորձերի անյաջող անցնելու պատճառով, Թորգոմը անցնում է «Որսորդ» խմբի գլուխը եւ այնքան եղերական կռուով մեռնում է Օլթիի բարձունքների վրայ, ռուս կողակներից...

Անժամանակ գնդակը վերջ տուեց այն կեանքին, որ այնքա՜ն յոյսեր էր ներշնչել ընկերներին եւ ժողովրդին։ Ժողովուրդը բազմաթիւ երգերով անմահացրել է սիրելի դործչի յիշատակը։

Սիրելի ընկե՛ր, քո եւ ընկերների ճիւնները ա՛յն ժամանակ հանդիստ կը դտնեն, երբ սահմանի անդին եւ ասդին բռնակալ քաղաքական ռեժիմները խորտակուին յեղափոխական անյաղթելի ուժով եւ Թալանի ու բռնակալութեան վայրերում սկսի խաղաղ քաղաքակրթութեան նոր դարաշրջան։

ՎԱՂԱՐՇԱԿ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԿԱՑԾԱԿ

Մուշ քաղաքից էր Վաղարշակը։ Ծնուած 1875 թուին։ Ուսումը ստացել էր Միացեալի Ներսէսեան վարժարանում, որ աւարտել էր 1892-ին, «ոսկի խաչի» մրցանակով։ Դպրոցական



ԿԱՑԾԱԿ

յաջողութիւնները, սակայն, նրան չէին գրաւում։ Յաղթանդամ, ուժեղ եւ աշխոյժ՝ նա աւելի սիրում էր զէնքն ու որսորդութիւնը, քան գիրքն ու գիտութիւնը։ Եւ արդէն պատանի հասակից, հրացանը ձեռքին, թափառում էր լեռներում ու ձորերում, յաճախ, ընդհարուելով հասակակից քրտերի հետ։

Այդպիսի թափառումների ժամանակ մի օր, անտառում, նա հանդիպում է Արարատի գործակից, նոյնպէս հռչակաւոր «աւազակ» Լեւոնին, որից լսում է Արարատի քաջագործութիւնների մասին։ Լեւոնը ներշնչում է նրան հայութեան թշնամիների դէմ կռուելու գաղափարը։ Հողը արդէն պատրաստ էր. Վաղարշակը ինքն էլ բռնուած էր ազգասիրական կրակով։

Դպրոցն աւարտելուց յետոյ, Վաղարշակը այլեւս իրեն զգում է Ֆէտայի։ Զէնքից անբաժան՝ նա ընկերանում է երեք նման ուրիշ տաքգլուխ երիտասարդների եւ սկսում է համարձակ գործել Արարատի եւ Լեւոնի օրինակով։ Շուտով նրա համբաւը տարածւում է քրտերի մէջ, որոնք պատկառանքով են վերաբերւում դէպի հրացանաւոր քաջ հայը։ Երբ Տամատեանը գալիս է Տարօն,

Վաղարշակը ընկերանում է նրան։ Մեծ կոտորածների օրերին Վաղարշակը զէնքը ձեռքին, ընկերների հետ, պաշտպանում է հայկական գիւղերը։

Դաշնակցութեան երեւումով Տարօնում՝ Վաղարշակը յարում է Դաշնակցութեան եւ գործակցում Հրայրին ու Գէորգ Զաւուշին, իբրեւ զինավարժ ու զինակիր խմբերի անդամ։ Կենդանի յարաբերութիւն է պահում Աղբիւր Սերոբի հետ եւ աջակցում նրան։ Սերոբի մահից յետոյ, ընկերանում է Անդրանիկին եւ մասնակցում Սասունի ու դաշտի կազմակերպական եւ մարտական աշխատանքներին։ Ի միջի այլոց՝ նրան է պատկանում Առաքելոց վանքի յանդուգն ձեռնարկի գաղափարը։ Անդրանիկի հետ Վաղարշակը վարեց Առաքելոց վանքի դիւցազնական կռիւը, բանակցութիւնները թուրք իշխանութեան հետ եւ ազատութիւնը պաշարուած վանքից։

Իբրեւ Տարօնի հեղինակաւոր գործիչ, 1904-ին, Վաղարշակը պատգամաւոր է ուղարկւում Հ. Յ. Դ. Երրորդ Ընդհ. Ժողովին, Սոֆիա, ուր նա ընդարձակ զեկուցում է ներկայացնում Երկրի եւ, ի մասնաւորի, Մուշ-Սասունի վիճակի եւ գործերի մասին։ Ընդհ. Ժողովին երթ ու դարձը նրան հնարաւորութիւն է տալիս նաեւ ծանօթանալու Դաշնակցութեան ընդհանուր գործերին եւ զեկավար ընկերների հետ։

Ընդհ Ժողովից վերադարձին, 1904 թ. Մայիսին, Սասունը արդէն ճգնաժամային օրեր էր ապրում։ Վաղարշակն էլ, Երկաթի պէս, շտապում է զինուած խմբով օգնութեան հասնել Սասունին։ Նա անցնում է Կարսի շրջանում կազմուած 29 հոգինոց «Դիժոխք» ձիաւոր խմբի գլուխը եւ հետը առած ռազմամթերք ու ռումբեր, Յունիս 6-ի երեկոյեան, կտրում է ռուսական սահմանը Բասենի ուղղութեամբ։ Առաւօտեան, Խորում եւ Զիվին գիւղերի մէջտեղը, խումբը կռուի է բռնւում մեծ թուով քիւրտերի եւ թուրք զինուորների հետ։ Կռիւը տեւում է ամբողջ օր։ Հայդուկների մոտիններից թշնամին ծանր կորուստի է ենթարկւում, բայց ուժերը անհաւասար էին. երեք տասնեակ հայդուկները շրջապատուած էին հազարաւոր քիւրտերով ու կանոնաւոր զօրքով։ Հետզհետէ նոսրանում են նրանց շարքերը։ Սպանւում է եւ խմբի հրամանատարը՝ Վաղարշակ —Կայծակը։ Վրայ է հասնում գիշերը, եւ ով կարողանում է ազատւում է. հայդուկների մեծ մասը, իրենց խմբապետի հետ, նահատակւում է Խորում-Զիվինի միջեւ, պատմական հին բերդի աւերակների մօտ։

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Բուն անունը Սարգիս էր կամ Սերգէյ Յովհաննիսեան, Վանում դարձաւ Արամ Մանուկեան։ Ծնունդ էր Ղափանի Զէյվա գիւղում, արհեստաւորի մի համեստ ընտանիքում, 1879-ին։ Ծնողների չքաւորութեան պատճառով դաւն մանկութիւն ունեցաւ։ Շուշիում դերձակութիւն անող մեծ եղբօր օգնութեամբ աւարտեց Ադուլեաց ծխական ուսումնարանը եւ 1890-ին մտաւ Շուշիի Թեմական դպրոցը։

Աշխատասէր, ուշիմ եւ ընդունակ տղայ էր Արամը։ Սիրուած է ուսուցիչներից եւ ընկերներից։ Աչքի էր ընկնում մտաւոր զարգացումով եւ եռանդով մասնակցում էր աշակերտական խմբակների աշխատանքներին։ Շուշիի Թեմական դպրոցը, այդ տարիներին, յեղափոխական խմորումների կենտրոններից էր։ Դաշնակցութեան ազդեցութիւնը տիրական էր աշակերտութեան մէջ, հակառակ որ տեսչութիւնը դնում էր պահպանողականների ձեռքին։ Արամի դպրոցական ընկերներն էին ապագայ Իշխանը, Մենակը, Իսաջանը եւ ուրիշ ըմբոստ գաղափարական եռիտասարդներ։ Բախումը աշակերտութեան եւ տեսչութեան միջեւ անխուսափելի էր։ Ի վերջոյ, մի խումբ աշակերտներ, որոնց թւում եւ Արամը, խռովայոյզ ցոյցերից յետոյ, ոստիկանական ուժով վտարուեցին դպրոցից։

Արամ, Իշխանը եւ մի քանի ուրիշներ ընդունուեցին Երեւանի Թեմական դպրոցը, ուր իրենց հետ բերին Դաշնակցական գաղափարներն ու ոգեւորութիւնը։ 1901-ին, աւարտելով Երեւանի Թեմական դպրոցը, Արամը անցաւ Բաղու՝ աշխատելու համար բանուորութեան մէջ, ուր շուտով աչքի ընկաւ, իբրեւ եռանդուն Դաշնակցական գործիչ։ 1903-ին, եկեղեցական կալուածների գրաւման օրերին, Արամը, Բաղուի Կենտր. Կոմիտէի կողմից ուղարկուեց Գանձակ՝ ինքնապաշտպանութեան գործով, ապա անցաւ Կարսի շրջանը, որ Դաշնակցական գործունէութեան եռուն վայր էր այն օրերին։ Այնտեղից զէնք ու ռազմամթերք էր փոխադրւում Երկիր, խմբեր էին կազմակերպւում՝ Երկիր մտցնելու համար։ Այնտեղ էին Սեբաստացի Մուրատը, Թորգոմը, Իշխանը, Իսաջանը, Մենակը եւ ուրիշ գործիչներ ու հայդուկներ։ Աննկարագրելի եռուզեռ եւ ոգեւորութիւն էր տիրում շրջանում։

Արամը ամբողջ թափով փարեց յեղափոխական խմբերի պատրաստութեան։ Ինքն էլ մտադիր էր մտնել Երկիր, բայց տկար առողջութիւնը արգելք եղաւ։ Իրար յետեւից խմբերը անցան սահմանը՝ փութալով Սասունի օգնութեան եւ ճանապարհին



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

շատերը բնաջնջուեցին ռուսների եւ Թուրքերի ձեռքով։ Սպանուեցին եւ Արամի մտերիմները՝ Թորգոմը, Իսաջանը, Մենակը։ Կարսի շրջանը այլեւս դարձաւ անտանելի նրա համար։ «Ինձ տանջում էր, գրում է նա իր յուշերում, որ ամենքը գնացին եւ նահատակուեցին, իսկ ես կարծես մի խորամանկութեամբ յետ մնացի»։

Արամը հեռանում է Կարսից Սասուն անցնելու մտադրու-

թեամբ, բայց Թիֆլիսում իմանում է, որ Սասունը ընկել է, եւ Հ. Ց. Դ. Բիւրոյի առաջարկութեամբ, 1904 թ. աշնանը, մեկնում է Վան, ուր գտնւում էին արդէն Իշխանը եւ Վահան Փափազեանը (Բժիշկ)։ Այսպիսով սկսուեց նրա գործունէութիւնը Վասպուրականում, որից դուրս եկաւ Վանի Արամը։

Արամի կեանքն ու գործունէութիւնը Վանում, մինչեւ 1906 թ., երբ նա, Իշխանի հետ, մեկնեց արտասահման Հ. Ց. Դ. Զորբորդ Ընդհ. Ժողովին մասնակցելու համար, պատմուած է իր յուշերում*)։

Արտասահմանում Արամ մնաց մօտ կէս տարի։ Ընդհանուր Ժողովից յետոյ, նորից վերադարձաւ Վան, ուր հետզհետէ կենտրոնական դիրք գրաւեց։ Այդ շրջանի դէպքերը մանրամասնօրէն նկարագրուած են Վ. Փափազեանի վերջերս լոյս տեսած «Իմ Յուշերը» Ա. հատորում։

Սահմանադրութիւնից յետոյ, Արամը մի տարի ուսուցչութիւն արաւ Օրդուում։ 1911 թուականը անցկացրեց Ժընեւում։ Եւ դարձեալ մի տարի Օրդուում ուսուցչութիւն անելուց յետոյ, վերադարձաւ Վան։ Ու այնուհետեւ, Արամը եղաւ Վասպուրականի Դաշնակցութեան ղեկավար ու մղիչ ոյժը՝ Իշխանի, ապա Ա. Վռամեանի հետ։ Ինչպէս Ռոստոմը բովանդակ Դաշնակցութեան մէջ, Արամը ամէն ինչ էր Վասպուրականում. դպրոց, ազգային հաստատութիւններ, մամուլ, Ժողով ու հանդէս, երիտասարդական շրջաններ, գաւառ, Աղթամար, յարաբերութիւններ կառավարութեան հետ — ամէն բանի վրայ տիրական էր Արամի միտքն ու հոգին։

Վրայ հասաւ համաշխարհային պատերազմը։ Վռամեանն ու Իշխանը զոհ գնացին նենգ դաւադրութեան։ Արամը մնաց մենակ ղեկավար դիրքերում՝ անօրինակ աղէտի առջեւ։ Եւ հերոսամարտը, որով փրկուեցաւ Վանը, կաղմակերպուեց ու վարուեց Արամի ուժեղ բազուկներով։ Եւ երբ 1915-ին Վասպուրականը ազատուեց մահացու վտանգից, բնական կերպով Արամը կոչուեց նահանգապետութեան։ Նա միակ մարդն էր, որի հեղինակութիւնը այդ օրերին ճանաչում էին ամենքը — ե՛ւ նրանք, որ այսօր երկիւղածութեամբ ու պաշտամունքով արտասանում են նրա անունը, ե՛ւ նրանք, որ կրքից կուրած՝ սեւացնում են նրա յիշատակը։

Արամի նահանգապետութիւնը կարճ տեւեց — ընդամէնը չորս ամիս։ Այնուհետեւ յաջորդեցին աղէտաւոր նահանջներ ռուս բանակի, եւ Վասպուրականի հայութիւնը տեղահան ու

*) «Հայրենիք» ամս., 1922 թ. թիւ 2-ից սկսած։

հողմավար եղաւ։ Բայց Արամը երբեք չդաւաճանեց նրան, մնաց նրա մէջ ու նրա հետ, եւ գերմարդկային ճիգ թափեց մեղմացնելու համար նրա տառապանքը։

1916–17 թուականները Արամը անցկացրեց Թիֆլիսում։ Մասնակցում էր Ազգ. Բիւրոյի եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի աշխատանքներին, բայց առաւելապէս զբաղուած էր Վասպուրականի եւ այլ վայրերի դաղթականների գործերով։ Մի պահ ծանր յօդացաւը անկողին ձգեց նրան ,եւ ընկերների ստիպման տակ անցաւ Խրիմ՝ դարմանուելու համար Սաքիի հանքային բուժարանում, ուր, դարձեալ ընկերների ստիպումով, գրի առաւ իր յուշերը։ Ապաքինած վերադարձաւ Թիֆլիս ցարական վարչաձեւի անկման նախօրեակին եւ ամբողջ էութեամբ նետուեց յեղափոխական թոհուրոհի մէջ։ Թրքահայ դրաւուած վայրերի առանձին նահանգապետութեան վերածուելը եւ դաղթականների վերադարձը նոր թափ ու ոգեւորութիւն ներշնչեցին նրան։ Մասնակցեց Արեւմտահայ եւ Ռուսահայ Ազգային ժողովներին, որոնց մէջ ղեկավար դեր կատարեց։ Այդ բաղուկը եղաւ Թրքահայաստանի նահանգապետի օգնական բժ. Զաւրեանի։ 1917–ին Ազգ. Խորհրդի կողմից, իբրեւ լիազօր ներկայացուցիչ, ուղարկուեց Երեւանի նահանգը, ուր նրան վիճակուեց պատմական դեր, Դրոյի հետ միասին, հայութեան պաշտպանութեան եւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման գործում։ Այս շրջանում էր, որ առանձնապէս երեւան եկաւ նրա արտակարգ կարողութիւնը, յեղափոխական, կազմակերպական եւ պետական տաղանդը։ Ի զուր չէ, որ հանրային կարծիքը նրան է համարում Հայաստանի Հանրապետութեան հիմնադիր։

Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ կառավարութեան մէջ Արամը ստանձնեց ներքին գործոց եւ պարենաւորման նախարարի պաշտօնը։ Միակ մարդն էր, որ այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել երկրում եւ պետական շինարարութեան սկսել։ Աւա՜ղ, սակայն, կարճատեւ եղաւ նրա պաշտօնավարութիւնը։ 1918 թ. Դեկտեմբերին, երբ բծաւոր տիֆը աւեր էր գործում Երեւանում, Արամն էլ վարակուեց եւ անկողին ընկաւ։ Տանջալից հիւանդութիւնը տեւեց մինչեւ 1919 թ. Յունուար 29–ը, երբ նա փչեց վերջին շունչը։ Վերջին օրերի զառանցանքների մէջ նա, յաճախ, յիշում էր Ռոստոմի անունը, որ արդէն հեռացել էր այս աշխարհից...

Հայ ժողովուրդը Արամին արաւ մի յուղարկաւորութիւն, որպիսին չէր տեսել Երեւանը. ամբողջ քաղաքը լալիս էր եւ երկիւղածութեամբ հետեւում նրա դագաղին։ Արամի մարմինը թաղուեց Երեւանի հասարակաց գերեզմանատանը, Հ. Յ. Դաշ-

նակցութեան Պանթէոնի բաժնում, յաւերժական Մասիսի առջեւ։ Այդպիսի սրտաշարժ յուղարկաւորութեան արժանացել էին մի-այն Ս. Զաւարեանը Պոլսում եւ հետագային՝ Աւ. Ահարոնեանը Մարսէյլում ու Փարիզում։

ՎԱՆԻ ԻՇԽԱՆԸ

ՆԻԿՈԼ ՊՕՂՈՍԵԱՆ

Հազիւ տասը տարեկան տղեկ էր Իշխանը, երբ Դաշնակցութիւնը հիմնուեցաւ եւ երկրի մէջ ու սահմանագլուխներու վրայ առաջին անգամ թափուեցաւ հայ յեղափոխականի արիւնը։ Եւ, երկրի թէ Կովկասի մէջ, Դաշնակցութիւնը արդէն կենդանի գործի ու բազմաթիւ նահատակներու կազմակերպութիւն էր, երբ պատանի Իշխանը ուխտաւորը դարձաւ անոր դրօշակին։ Իշխանն, ուրեմն, կը պատկանի Դաշնակցութեան այն սերունդին, որուն վիճակուած էր մեր յեղափոխական ազատագրական գործը դարձընել ժողովուրդի սեփականութիւնը, իսկ մեր կուսակցութիւնը վերածել կուռ շարքերու, գիտակից զանգուածներու եւ լայնածաւալ գործի կազմակերպութեան մը։

Ինչպէս մեր բազմաթիւ ռազմիկ ու մտաւորական գործիչներու, Իշխանի մանկութեան ու պատանեկական օրերու մասին ալ գրեթէ ոչինչ գիտենք։

Ծնած է Շուշի, 1883 թուին, եւ կրթութիւնն առած է տեղական Թեմական դպրոցին մէջ, ուրկէ, իբրեւ ըմբոստ, վտարուելով՝ իր ուսումը շարունակած է Երեւանի Թեմական դպրոցին մէջ։

Տակաւին դպրոցական պատանի՝ Իշխանը անդամ էր տեղական աշակերտական Զարգացողական անունով խմբակին, որ վերջը մկրտուեցաւ Ցեղափոխական անունով եւ ենթարկուեցաւ Դաշնակցութեան գաղափարական ղեկավարութեան։ Արամն էր որ ամբողջ երեք տարի կը ղեկավարէր խմբակի պարապմունքները, ինչպէս որ Արամի միջոցով էր կրկին, որ Իշխան կը մտնէր այդ խմբակին մէջ, որու անդամներու մեծ մասը հետագային նուիրուեցաւ յեղափոխական գործին։

Դեռ պատանութեան օրերէն, կը պատմէր Արամ, Իշխանի բնաւորութեան յատկանշական գիծը ըմբոստութիւնն էր. ըմբոստ՝ դպրոցական կարգերու, պարտադրուած օրէնքներու, չըն-

չին հեղինակութիւններու, քմահաճ հովանաւորութիւններու դէմ։ Միեւնոյն ատեն ընկերներու համար տակաւ յայտնի կը դառնային Իշխանի կարգ մը ցայտուն գիծերը՝ ընդունակ, ճարպիկ, սրամիտ, ընկերական։ Դեռ այդ օրերէն ան ոչ միայն համակրելի էր իր շրջապատին, այլեւ սէր եւ յարգանք կը պարտադրէր իր անձին շուրջ։ Ընկերները ոչ միայն կ՝ակնածէին անկէ, այլեւ կը վախնային...

Դարձեալ դպրոցական, պատանութեան օրերուն է, որ Իշխան կը փորձէ անգամ մը փախչիլ դպրոցէն եւ ընտանեկան օճախէն՝ Հայաստան նետուելու համար, բայց կը ձախողի եւ հնարաւորութիւն կ՝ունենայ ուսումը շարունակելու։

Դպրոցը չաւարտած՝ Իշխանը կը բորբոքուի ամէն գնով Երկիր մտնելու եւ կենդանի գործի ծարաւով։ Բայց ատոր համար հարկ էր առնել համաձայնութիւնը Դաշնակցական ղեկավար Մարմիններուն, որոնք տակաւին անծանօթ էին իրեն, եւ առհասարակ Երկիր մտնողէ մը կը պահանջուէր ունենալ պողպատի տոկունութիւն, անպայման կարգապահութիւն, բարոյական կատարելութիւն, յանդգնութիւն եւ ֆիզիքական ու բարոյական բոլոր այն առաքինութիւնները, որոնք կ՝ամբողջացնէին ֆէտայիի դիւթական տիպարը։

Հարկադրուած՝ Իշխան կը գործէ պահ մը Աղեքսանդրապոլի եւ աւելի երկար ատեն մը Կարսի շրջաններուն մէջ։ Հոն էին կուսակցական պատասխանատու գործիչներ եւ հոն կը կազմակերպուէին ու կը մարզուէին Երկիր մտնող մարտական խումբերը։ Հոն կը պատրաստուէին յեղափոխական ռումբն ու ուժանակը։ Հոն տեղի կ՝ունենային անվերջ ժողովներ, ղեկուցումներ, պայքար ու պրոպագանդ, տենդ ու տուպ, իրական եռուզեռ մը՝ երբ բոլոր ուղեղները մէկ նպատակի կը ձգտէին ու բոլոր սրտերը կը բաբախէին մէկ հայրենիքի համար։ Այդ բորբոքուն կեանքի ու եռուզեռի մէջ է ահա որ կը թրծուի Իշխանի հոգին եւ հոն է որ կը կազմակերպուի ապագայ ռազմիկը։

1903 թուին Դաշնակցութիւնը կը նախապատրաստուէր Սասունի դիմադրութեան Կարսէն Երկիր մտցնելով շարք մը զինակիր եւ մարտական խումբեր։ Իշխանը այդ խումբերէն մէկուն մէջ էր, նշանաւոր Նեվրուզի հետ, իբրեւ առաջնորդող եւ իբրեւ մասնակից Ուզունվէրանի եւ Բասենի կռիւներուն, ուր առաջին անգամ կը սպաննէ թուրք սպայ մը։ Ռումբը, ինչպէս յայտնի է, անհաւասար կռուի կը բռնուի, կը ջարդէ թշնամին ու ինքն ալ կը ջարդուի։ Կ՝ազատին փոքր թիւով մարտիկներ միայն, որոնց մէջ եւ Իշխան։ Բայց այդ ազատութիւնը աւելի ծանր էր Իշխանի համար, քան մահը։ Հայրենասէր յեղափոխականի անոր հոգին չէր

կրնար հաշտուիլ իր անձնական ազատութեան հետ, երբ անդին, անիծեալ սահմանին վրայ, նահատակուած էին հայկական ազատամարտի լաւագոյն մարտիկները, բոլորն ալ Իշխանի մտերիմ, դաղափարակից ընկերներ, ինչպէս Թորգոմ, Նեվրուզ, Խան, Որսորդ Գէորդ, Կայծակ Վաղարշակ, Թոխմախ եւ այնքան ուրիշներու հետ իր «սրտանց սիրած» ընկեր Մենակը (Ե. Առստամեան), որուն Իշխանը նուիրած է իր գողտրիկ, մարգարէաշունչ բանաստեղծութիւններէն մէկը: Իշխանը հիմա տոչորուն ծարաւն ունէր վրէժխնդրութեան եւ անձնական նահատակութեան: Սահմանը, Հայաստան դժոխքը, նահատակ ընկերներու արիւնը կը կանչէին դինքը: Զգայուն բանաստեղծ եւ հպարտ ոգեմիկ՝ ան անպատուութիւն, բարոյական մահ կը համարէր մէկ օր ուշանալ Երկիր մտնելէ եւ սրբազան վրէժխնդրութեան ու իրական նահատակութեան նուիրուելէ:

Իշխանի հոգեկան տառապանքը ամբողջ ամիսներ տեւեց, մինչեւ որ, վերջապէս, ան յաջողեցաւ, 1904–ին, Կոմսի հետ, Ապաղայի դիծով, մտնել Վան, որ իսկական յեղաշրջութեան մը օրեր կ՚ապրէր եւ ուր ամէն բան պէտք էր ստեղծել սկիզբէն: Այսպէս, կուսակցութիւնը անհնարին զրկանքներով եւ հերոսական յամառութեամբ մը կը պահէին քանի մը տեղացի հին ու փորձեալ մարտիկներ՝ Թէոս, Ալէս, Արմենակ, Փանոս, միակ՝ դրսեցի ընկեր ունենալով Պանք Օթոմանի հերոսներէն Վարդան Շահպազը: Գիսակը (Վարդգէս), բանտարկուած էր. կազմակերպութիւնը քայքայուած, յարաբերութեան դիծերը վտանգուած, բոլոր կապերը խզուած արտաքսահմանի հետ. հասցէները կառավարութեան ձեռքն անցած կամ փճացուած. չկային մարտական խումբեր, զէնքեր, վստահելի ընկերներ, ժողովրդական համակրութիւն, ոչ ալ, մանաւանդ, կուսակցութեան կամ յեղափոխութեան նախկին հեղինակութիւնը: Ասոր հակառակը՝ բազմաթիւ լրտեսներ, անպատիժ մնացած մատնիչներ, հիասթափուած երիտասարդութիւն, արիւն արցունք լացող գաւառ եւ գիւղացիութիւն՝ ենթակայ կառավարական հարստահարութեանց եւ քրտական աւազակախումբերու աւարին: Ու, մանաւանդ, կառավարական խստացուած հալածանքներ յեղափոխականներու դէմ եւ Վանի տականք աղաներու եւ ստրկահոգի էֆէնտիներու դեռնամած խոնարհութիւնը ուղղուած «բարեխնամ կառավարութեան»...

Առաջին իսկ օրէն, հոգիւ 21 տարեկան, յեղափոխական Իշխանը կը գծէ իր աշխատանքի ուղին, որ կը ձգուէր դէպի Վանի հարաւ–արեւմտեան լեռնաշխարհը՝ Լեռնապար: Ան իր յեղափոխական բեղուն գործունէութեան շրջանին մէջ կ՚առնէր տառապող հայ գիւղաշխարհը, ընդարձակ ու լեռնոտ այն երկրամասը,

որ կը սկսի Վան քաղաքի անմիջական սահմաններէն եւ կ՚ընդգրկէ Վերին եւ Վարին Հայոց-Զորի, Գաւաշի, Կարկառի, Կարճկանի, Շատախի, Մոկսի, Սպարկերտի, Մամրտանքի, Խիզանի, Ոզմի գաւառները, Վանէն մինչեւ Սղերդի ու Բաղէշի տակ։

Այս սահմաններուն մէջ է, որ Իշխան կը հաստատէ իր «թագաւորութիւնը» եւ, շնորհիւ իր լայն ու բեղուն գործունէութեան, ի վերջոյ, կը կազմուի հոն առանձին Կ. Կոմիտէութիւն մը Լեռնապար անունով։

Առաջին հերթին Իշխանը իր շուրջը կը հաւաքէ դեղջուկ հինաւուրց մարտիկները՝ Կարկառցի Եղիշ, Վըրըշիկ Գալօն, Նորդեղցի Հաճին, Ցովսէփ, եւայլն։ Կարճատեւ շրջանի մը մէջ եւ եռանդուն աշխատանքով ան կը պատրաստէ իր համբաւաւոր Թռուցիկ խումբը, որ Դաշնակցութեան մարտական լաւագոյն խումբերէն մէկն էր իր հրաշալի կազմակերպութեամբ, ներքին երկաթեայ կարգապահութեամբ եւ քաջ ու անձնազոհ տղաներով։ Մէկը այն խումբերէն, որոնք սարսափն էին թուրք բռնաւոր պաշտօնեաներուն եւ քիւրտ աւազակ տարրերուն, ահաբեկիչը՝ գաւառաններուն, զարգանդը՝ վաշխառուներուն եւ գիւղական ցեցերուն, ժողովրդական զանգուածներու հիացումի առարկան եւ անոնց ապաւէնը, Դաշնակցութեան զինուած եւ արդար բռունցքը։

Միւս կողմէ, Իշխանի նպատակն էր յեղափոխական գաղափարը տարածել եւ խորացնել ժողովրդի լայն զանգուածներուն մէջ եւ գիւղացիութիւնն ու երիտասարդութիւնը մղել դէպի փրկարար ինքնապաշտպանութիւնը, զինման, դաստիարակութեան եւ ինքնակառավարման ճանապարհով։ Սուլթանական բռնապետութեան մշտարթուն աչքին եւ անխնայ պատժիչ բռունցքին տակ, գերմարդկային տոկունութեամբ, պաշտելի յամառութեամբ, բացառիկ զգուշաւորութեամբ, ապառաժեայ կամքով ու անսասան հաւատով, անհնարին զրկանքներով, ամէն օր վտանգ մը դիմադրաւելով եւ մահուան պատանքը շալկած՝ Իշխանը կը յաջողի Լեռնապարի ամբողջ շրջանին մէջ ստեղծել գիւղական ինքնատիպ կազմակերպութիւններ եւ ընտիր մարտական խումբեր, որոնք գիւղացիութեան պահապան հրեշտակը կը դառնան՝ պատրաստ կռուի ու նահատակութեան։

Իշխանի ստեղծած այդ կազմակերպութիւնները ամէն բան էին հայ գիւղի համար, գիւղի ներքին կառավարութիւնը՝ բառի ամենալայն առումով։ Արդարեւ, գիւղի բոլոր հողերը, բոլոր վէճերը, բոլոր դատերը կը լուծուէին Իշխանի կամ իր ստեղծած կազմակերպութեան միջոցաւ միայն։ Շնորհիւ այդ կազմակերպութեան, Լեռնապարի հայ խոպան գիւղացին տակաւ կը գի-

տակցէր իր ազգային ու դասակարգային շահերն ու իրաւունքները, մէկդի կը նետէր չարաշուք ստրկամտութիւնն ու համակերպութիւնը, կը բորբոքուէր իր եւ իր հայրենիքի ազատութեան սիրով, առնական կը դառնար, կ՚արիանար, կը մղուէր գիտակցական զոհաբերութեան, ձեռներէցութեան, հաւաքական աշխատանքի, ինքնակառավարութեան։

Կեղտի ու ոջիլի մէջ ապրելով, երբեմն դարի ու կորեկ հացով, վայրի խնձորով սնուելով, միշտ վտարանդի, հալածական վիճակի մէջ, իբրեւ էշկիա (աւազակ) ցմահ բանտարկութեան դատապարտուած, ի բացակայութեան, Իշխանը, սակայն, իրական իշխան մըն էր իր Լեռնապարի շրջանին մէջ՝ հայ գիւղացիութեան սրտին մէջ հաստատած իր գահը։ Ամէնքը, հարազատ թէ թշնամի՝ կ՚ակնածէին անկէ։ Ամէնքը գիտէին, որ աւազակը անպատիժ չէր կրնար մնալ, ոչ ալ դաւաճանը կրնար չահաբեկուիլ Իշխանի թագաւորութեան սահմաններուն մէջ։ Ամէնքը գիտէին անունները դաւաճաններուն եւ աւազակներուն, ցեցերուն եւ բռնաւորներուն ,որոնք հոս ու հոն կ՚ինային Իշխանի վճիռովը կամ գնդակովը, եւ ամէնքը հէքիաթի պէս կը պատմէին կռիւներն ու ընդհարումները, որ կը մղէր Իշխանը իր արծուային խումբով՝ միշտ ու հրաշքով անվնաս պրծնելով։ Ահա՛ թէ ինչու ճարակող սարսափի պէս կը հնչէր անոր անունը բերնէ-բերան, ոգեշարժիչ հրապոյր ունէր անոր անձնաւորութիւնը եւ կ՚երգուէր ան հայ եւ քիւրտ ժողովրդական երգերուն մէջ... Անոր անունի սարսափն ու հմայքը առասպելական չափերու հասան, այլ, մանաւանդ, փրկարար եղան, 1908-ի Դաւոյի դաւաճանութեան մը-ոայլ օրերուն։ Բարեբախտութիւն մըն էր, Վասպուրականի հայութեան եւ Դաշնակցութեան պատուի տեսակէտով, որ սոսկումի այդ օրերուն Իշխանն իր արծուային խումբերն ունէր ու կազմակերպուած Լեռնապարը։ Կոմսի, Սարգիսի եւ խումբ մը մարտիկներու հետ Իշխան յոյսի միակ փարոսն էր քայքայուող կազմակերպութեան, միակ պատուհասող բազուկը դաւաճաններուն եւ միակ սարսափը թուրք կառավարութեան համար։ Եւ եթէ թուրք կառավարութիւնն այդ օրերուն չհամարձակեցաւ գործադրութեան դնել եթէ ոչ ընդհանուր, այլ դէթ մասնակի ջարդերու իր ոճրային ծրագիրը, ոչ ալ յանդգնեցաւ, Ցունուարէն մինչեւ Ցուլիսի կէսերը, իր բանտերուն մէջ գտնուող Արամը եւ հարիւրաւոր յեղափոխականներէն մէկն ու մէկը մահուամբ պատժել, այդ պէտք է բացատրել նաեւ Իշխանի եւ ընկերներու կեանքի գործով, անոնց զինուած բռունցքով ու անոնց անուններու եւ հմայքի իրական սարսափով։ Դարձեալ ատոր, Իշխանի եւ ընկերներու բարոյական հեղինակութեան ու տարածած սարսափին

պէտք է վերագրել, որ գիւղական կազմակերպութիւնները որոշ շրջաններու մէջ չքայքայուեցան, ու գաւառը գրեթէ զերծ մնաց Վանի դաւաճաններու համաճարակէն։ Ի զուր չէր, որ Թրքական Սահմանադրութեան խոստումի եւ յոյսի օրերուն, երբ Իշխան, Կոմսի եւ Սարգիսի հետ, հպարտ ու յաղթական, վար կ'իջնէր իր ըմբոստ լեռներէն, ժողովուրդը կը դիմաւորէր զայն անհուն խանդավառութեամբ, իսկ Թուրք կառավարութիւնը ակներեւ ու գլխահակ յարգանքով...

Եւ, սակայն, ի՞նչ մեծ էր զարմանքը շատ շատերուն, երբ հսկայի ու ժգահայի տարազին մէջ իրենց պատկերացուցած Իշխանը կը տեսնէին պարզ քաղաքացիի հագուստներով, գրեթէ կարճ հասակով, վտիտ մարմնով, քիչ մը ծաղկատար դէմքով, կիրթ մտաւորականի իր շարժուձեւերով եւ այդ բոլորին իբրեւ միակ հակադրութիւն՝ բոցեղէն, անհանգիստ, սուր, թափանցող եւ կտրող–անցնող իր հայեացքով, ուր կուտակուած եւ ամէն րոպէ ժայթքելու պատրաստ էր կարծես անոր անօրինակ անհատականութիւնը՝ անսասան կամքով եւ խիզախութեամբ...

Ոչ նուազ բախտորոշ դեր կատարած է Իշխանը Վանի եւ Վասպուրականի խաղաղ–ստեղծագործական, մշակութային կեանքին մէջ։ Դաշնակցական բոլոր մեծանուն գործիչներուն նման եւ հաւատարիմ Դաշնակցութեան աւանդութիւններուն, Իշխանն ալ մեր ժողովուրդի կատարեալ վերածնութեան եւ քաղաքական ազատութեան հասնելու համար, անհրաժեշտ նախապայմաններէն մէկը կը համարէր անոր տնտեսական եւ հոգեւոր–մշակութային կեանքի զարգացումն ու բարձրացումը։ Արդարեւ, ի՞նչ աւելի բնորոշ Հ. Յ. Դաշնակցութեան եւ Իշխանի կենդանի գործին համար, քան այն, որ ստորերկրեայ– յեղափոխական ամենաբուռն շրջանին, կառավարական հետապնդումներու եւ ամէնժամեայ կռիւի ու մահուան սպառնալիքներուն տակ, Իշխանի նման իր ամբողջ էութեամբ վառօդ ու մահ բուրող ռազմիկ մը ժամանակ, կորով ու ցանկութիւն կ'ունենար մինչեւ անգամ քառաձայն խմբերգ սորվեցնելու Վանի դպրոցական 10–12 տարու պզտիկներուն, Այգեստանի այս ու այն դեռնափոր հիւղակին մէջ, Թրքական ոստիկանատուներէն հաղիւ քանի մը քայլ հեռու...

Մեծ եղած է Իշխանի դերը Լեռնապարի գաւառական կրթական կեանքին մէջ։ Ան առաջինը իր եւ ժողովրդական հակակշիռին տակ առաւ կաթողիկոսանիստ Աղթամարը, սանձահարեց ծոյլ, կակղամորթ հոգեւորականները եւ ցեց ու վաշխառու տարրերը, արդիւնաւորեց թեմի եկամուտները, ստեղծեց Աղթամարի մինչնակարգ դպրոցը՝ վերածելով զայն տիպար ուսուցչանոցի մը։ Սահմանադրութենէն ետք Վանէն եւ հեռաւոր Կովկասէն կարող

ԻՇԽԱՆ

ուսուցիչներ եւ թեմական տեսուչներ հրաւիրեց այդ շրջանին համար, գիւղական դպրոցներու ցանցեր ստեղծեց ամէն տեղ, գիւղի փողոցներէն ու արտերէն դուռ ու ջակեց գեղջուկ տղաներ՝ մարզելով ու կրթելով զանոնք իր մարտական եւ Աղթամարի դպրոցին մէջ։ Եւ այդ տղեկները հետագային դարձան Իշխանի գաղափարակիցներն ու զինակիցները, Աղթամարի եւ Լեռնապարի լաւագոյն ուսուցիչները, դաւառական գործիչները, Դաշնակցութեան գիւղական կազմակերպութեան սիւները եւ Վանի ու Վասպուրականի 1915-ի Ապրիլեան ճակատամարտական կռիւներուն ամենէն պատասխանատու դիրքերու վրայ կռուողները եւ նահատակները...

Նոյնքան գործօն իր մասնակցութիւնը բերաւ, մանաւանդ, Սահմանադրութեան համեմատաբար խաղաղ օրերերուն, երբ Վանի եւ Վասպուրականի մէջ կը զարգանար ու կը թեւաւորուէր իրական հանրային-մշակութային կեանք մը։

Այդ օրերուն տենդոտ ու հսկայ թափով մը Դաշնակցութիւնը կը տարածուէր ու կը ծաւալէր Վանէն մինչեւ հեռաւոր դաւառները եւ իր քարոզով ու կազմակերպութեամբ կը մտնէր իւրաքանչիւր մէկ գիւղ, գիւղական ամէն մէկ խրճիթ։ Գիւղացիական, Արհեստակցական, Ուսուցչական, Աշակերտական, Կանանց եւ Կարմիր Խաչի Միութիւններ, Մարտական, Ինքնապաշտպանողական, Մշակութային, Գրաէրներու, Թատերական ընկերութիւններ — բոլորը, բոլորը Դաշնակցութեան անմիջական ղեկավարութեան տակ էին, եւ Իշխանն անձնապէս մասնակից էր այդ ղեկավարութեան։ Ու նաեւ որքա՜ն դպրոցներ, դրադարաններ, թերթեր, դասախօսութիւններ, դասընթացքներ, լսարաններ, ժողովներ, աղգային եւ քաղաքական (պարլամենտական) ընտրութիւններ ու թեւաւոր պայքարներ, որոնց մէջ Իշխանը միշտ իր գործիչի կամ ղեկավարի բաժինն ունէր։ Ա՛լ աւելի լուրջ հարցերու — հողային, ազգային-կալուածային, զինուորագրութեան, աւազակախումբերու պատժումի, ծանր եւ անուղղակի տուրքերու վերացման, հայ-քրտական եւ թուրք-հայկական յա-

բարերութիւններու — բարդ ու պատասխանատու հարցերուն մէջ Իշխանի խօսքն ու բաժինը մեծ էր ու անգնահատելի։

Վանի «Աշխատանք»ը, մէկը Երկրի ամենէն կարեւոր թերթերէն, հիմնուեցաւ Իշխանի ջանքերով եւ նախաձեռնութեամբ։ Ամբողջ տարի մը Իշխանն ինքը խմբագրեց թերթը։ Տպարան ալ ձեռք ձգեց. ներզօր աջակցութիւն ցոյց տուաւ Աշխատանքի կուսակցական-ժողովրդական հսկայ ու գեղեցիկ շէնքի կառուցման եւ, մանաւանդ, Ազատութեան Լոյս մեծ դրադարանի կազմակերպման. նախագահեց ազգային-թեմական մարմիններուն, առանձին գուրգուրանքով ղեկավարեց Վանի նորաբողբոջ երիտասարդութիւնը, նոյնիսկ երեկոյթներ ու ներկայացումներ կազմակերպեց՝ երգելով կամ դերեր ստանձնելով։ Մասնակցեցաւ Վանի հուշակաւոր ընտրական պայքարներուն, քաղաքական միթինկներուն եւ հրապարակային դասախօսութիւններուն ու երեւան բերաւ տաղանդաւոր ու միշտ փնտռուած հռետորի անվիճելի արժանիքներ։ Դժոխային ու աղքատիկ այդ պայմաններուն մէջ Իշխանը, որ համալսարանի երես տեսած չէր, բայց բնածին տաղանդ մըն էր, մտքի եւ գիտութեան պաշարով կը ներկայանար միշտ իր շրջապատին։ Արդարեւ, սոսկալի այդ պայմաններուն մէջ անգամ, ան անվերջ կարդացող մըն էր, պրպտող մը, ուսումնասիրող մը, ինքնատիպ եզրակացութիւններ հանող մը։ Անգամ ւտորերկրեայ յեղափոխական շրջանին իր անձնական դրադարանն ունէր։ Ան նոյնիսկ ժամանակ եւ հնարաւորութիւն կը գտնէր ուսումնասիրելու Վասպուրականի հայ ժողովրդական երգն ու բանահիւսութիւնը։ Անգիր գիտէր քրտական բազմաթիւ երգեր ու աւանդավէպեր եւ լուրջ, բայց, տարաբախտաբար, անտիպ ու հիմա կորսուած ,աշխատութիւններ ունէր քիւրտ բանահիւսութեան մասին։ Դեռ պատանի հասակին՝ հրատարակած էր ինքնուրոյն բանաստեղծութիւններու հատորիկ մը, ուր զգալի է տաղանդն ու ինքնատպութիւնը։ Ազդել, թելադրել, ներշնչել՝ Իշխանի խօսքի ու գրչի ակներեւ առանձնայատկութիւնն էր։ Ոճը ինքը մարդն էր...

Հարկ է, սակայն, ընդգծել, թէ Իշխանն առաւելաբար զէնքի ու մարտական կազմակերպութեան տաղանդաւոր գործիչ էր։ Անոր անհանգիստ հոգին կարծես դժուարութեամբ ու ինք իր վրայ մեծ ճիգ դնելով միայն կը հաշտուէր խաղաղ, հանրային-մշակութային գործերու եւ հոգերու հետ։ Ան միշտ ծարաւի մնաց զէնքի ու վառօդի, կռուի ու փոթորիկներու, լեռներու եւ ըմբոստութեան, հայրենի երկրի եւ աշխատաւորութեան վերջնական ու անպայման ազատութեան։ Ատոր համար ալ, սկիզբէն մինչեւ իր եղերական վախճանը, ան մնաց Վասպուրականի Դաշնակցութեան

մարտական կազմակերպութիւններու եւ ամէն տեսակ զինուորական ձեռնարկներու ծրագրողը, հրահանգիչը, վարիչն ու պատասխանատուն։

Ցետոյ, սկիզբէն մինչեւ վերջը, անհաւատ մնաց դէպի Օսմ. Սահմանադրութիւնը, դէպի հայկական բարենորոգումները, դէպի հայ-թուրք գործակցութիւնը, դէպի օսմանեան վերածնութիւնը, դէպի օտար միջամտութիւններն ու հովանաւորութիւնները եւ, իբրեւ այդպիսին, ամենէն կորովի աշխատողներէն եւ ամենէն մոլեռանդ նուիրուածներէն մէկն էր հայկական ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման։ Ահա թէ ինչու, թրքական Սահմանադրութեան ընթացքին եւս, Իշխանի մարտական խումբերը գոյութիւն ունէին եւ լաւագոյն ազդակն էին ոչ միայն քիւրտ աւազակախումբերու սանձահարման, ոչ միայն սպառնալիքն ու զսպող ուժը թրքական ջարդարար քաղաքականութեան, այլեւ Վասպուրականի հայութեան քաղաքական-յեղափոխական մշտարթուն դիտակցութեան պահպանման եւ ամէն վտանգ ու փորձութիւն դիմագրաւելու կարողութեան։ Միշտ, ամէն առիթով, ամենէն թեւաւոր յոյսերու եւ ամենէն խաղաղ ու ապահով համարուած օրերուն իսկ, Իշխանն աշխատեցաւ խումբ մը աւելի կազմել, զէնք մը աւելի ձեռք ձգել, զինել ու զինել ժողովուրդը։ Եւ, ինչպէս տխուր փաստը ցոյց տուաւ, Իշխանի տեսակէտը յաղթանակեց. թուրքը ջարդեց հայութիւնը, եւ ազատեցաւ կամ պատուով մեռաւ այն հայութիւնը միայն, որ զէնք ունէր ձեռքին...

Իշխանի անհանգիստ հոգին կրկին գտած էր իր իսկական տարերքը, մանաւանդ, 1914-ի Օգոստոսի թրքական զօրաշարժի օրերուն, երբ Վասպուրականի հայութեան գլխուն նորէն մռայլ ամպեր կը կուտակուէին։ Հին ու փորձուած, բայց տակաւին շատ երիտասարդ ու աշխոյժ ռազմիկը նորէն մարտական գործի դարբինն էր, դիրքերու վրայ, ստորերկրեայ աշխատանքներու մէջ։ Աւելի ու աւելի մեծ թափով եւ նուիրուածութեամբ փարած ինքնապաշտպանութեան փրկարար գործին, գիւղի ու քաղաքի զինումին եւ, սակայն, կուսակցութեան հետ, Իշխանն ալ, խորապէս կռահելով հանդերձ ահաւոր գալիքը, կը գիտակցէր նաեւ կացութեան բովանդակ լրջութիւնը՝ հայութեան ողբերգական մինակութիւնը եւ թշնամու ուժի գերազանցութիւնը։ Ուստի, շարունակելով հանդերձ ժողովուրդի զինման ու ինքնապաշտպանութեան գործը, Իշխանն ու Վասպուրականի Դաշնակցութիւնը հարկադրուած էին անվերջ զիջումներ ընել թշնամիին, ժամանակ շահելու, կամ դէթ նուազագոյն զոհերով դիմաւորելու համար փոթորիկը։ Սակայն, հակառակ բոլոր ճիգերուն եւ զիջում-

ներուն, այդ փոթորիկը եկաւ եւ անոր առաջին գիտակից զոհերէն մէկը Իշխանը եղաւ։

1915 Ապրիլ 3-ին Թուրք նենգամիտ ու ոճրագործ կառավարութիւնը, կուսակալ Ճէվտէթի անունով, պաշտօնապէս դիմեց Հ. Յ. Դ. Վասպուրականի Կեդր. Կոմիտէին եւ թախանձագին խնդրեց անոր աջակցութիւնը Շատախի մէջ «թիւրիմացութեամբ» ծայր տուող հայ-թրքական միջադէպը հարթելու եւ խաղաղութիւնն ու երկու ժողովուրդներու միջեւ բարի-դրացիական յարաբերութիւնները վերականգնելու համար։ Ճէվտէթ անձամբ կը թախանձէր, որպէսզի հաշտութեան համար Շատախ երթայ, մանաւանդ, Իշխանը, որու անձնական հեղինակութեան վստահ էր ինք։ Իշխան ասպետօրէն յարդեց կառավարութեան հաշտութեան առաջարկը եւ նոյն օրն իսկ, երեք զինուած եւ հեծեալ կուրիւններու հետ (Միհրան, Վահան եւ Քոթոթ Պօղոս), ընկերակցութեամբ Վանի Թուրք ոստիկանապետին եւ տասնեակ մը ոստիկան զինուորներու, ճամբայ ելաւ։ Կէս ճամբուն, Հայոց Ձորի հայ-քրտախառն Հիրճ գիւղին մէջ, Իշխանը եւ երեք ընկերները ստիպուած կ'ըլլան գիշերել ծանօթ քիւրտի մը տունը, բայց ահա կուսակալ Ճէվտէթի կողմէ ծրագրուած դաւադիր չէրքէզներու խումբ մը, ճամբայ ելած Իշխանի ետեւէն, երկչոտ ու տմարդի մարդասպաններուն յատուկ ձեւով, կը սպաննեն Իշխանն ու ընկերները, երբ անոնք խաղաղօրէն կը քնանային...

Յաջորդ առաւօտը անլուր կոտորածի ենթարկուեցաւ Հիրճի հայ անպաշտպան գիւղացիութիւնը, Վանի մէջ նոյնքան ստոր դաւադրութեամբ մը ձերբակալուեցաւ Վռամեանը, Արամը հրաշքով միայն փրկուեցաւ, Այդեստանն ու Քաղաքամէջը պաշարուեցան, կոտորածն ու յուսահատ կռիւները շղթայազերծուեցան ամբողջ Վասպուրականի մէջ եւ... կառավարութիւնը սկսաւ ջարդել իր քաղաքացին։

Սակայն, Իշխան իր եղերական մահուամբ նոյնիսկ ազդեց հետագայ դէպքերու՝ Վանի հերոսամարտին վրայ։ Հարկ եղաւ, որ Իշխանը նահատակուի, որպէսզի Դաշնակցութիւնն ու հայութիւնը Վասպուրականի մէջ ցնցուին մինչեւ իրենց էութեան խորունկ արմատները, այլեւս ընդմիշտ փակուած տեսնեն պատրանքի, յոյսի եւ զիջումի բոլոր ճամբաները, դան կեդրոնական համերաշխութեան փրկարար գետնին վրայ, ապաւինին իրենց բազուկին ու հանճարին, զինուին Իշխանի վրէժով եւ զայրոյթով եւ մահը որոնելով անմահութեան մէջ՝ կերտեն Վասպուրականի Ապրիլեան Գոյամարտը, փշրեն պաշարման ու բռնութեան շղթաները, վտարեն թշնամին հայրենի հողէն եւ ողջունեն Հայաստանի ազատութեան առաջին արեւը 1915 Մայիս 3-ին...

Իշխանի յօշոտուած դիակը, որ ամբողջ ամիս մը դատապարտուած էր գերութեան՝ Հիրճի համայնական փոսին մէջ, Վանի երիտասարդութեան կողմէ, թանկագին աւանդի մը պէս, քաղաք բերուեցաւ եւ ամփոփուեցաւ Արարքի գերեզմանատունը, ուր կը հանդչին Իշխանի ուսուցիչներն ու զինակիցները Վաղդէնէն մինչեւ Ռաֆայէլ։ Փառահեղ ու յուզիչ էր թափօրն ու յուղարկաւորութիւնը ներկայութեամբ խոր սուգով համակուած եւ հեծկլտացող Արամին եւ Կովկասի ու Վանի բազմաթիւ զինակից եւ գաղափարակից ընկերներուն, Վանի ամբողջ ժողովուրդին՝ առանց դասի եւ կուսակցութեան խտրութեան, Լեռնապարի գիւղացիութեան, Իշխանի մարտական զինուած դասակներուն, կամաւորական գունդերուն, ռուսական վաշտերուն եւ թնդանօթին, Իշխանի սգաւոր այրիին եւ միակ ու պզտիկ զաւակին...

Ց. ՎԱՆԵԱՆ

ՓՐՈՖ. Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆ

«Հայ Ազատագրական Պայքարը եւ Եւրոպական Դիւանագիտութիւնը» աշխատութեան մէջ, որ 1923 թուականից ի վեր մնացել է անտիպ, փրոֆ. Ա. Խաչատրեանը հետեւեալ կենսագրական տեղեկութիւններն է հաղորդում իր մասին.

«Ծնած եմ 1861-ին, Բագրեւանդ գաւառի Բագաւան Աւանը (Իւշ-Քիլիսէ), բայց հայրս ու պապս բնիկ Դիատինցի են։ Բայազետ եւ Դիատին մինչեւ 1829 զուտ հայաբնակ շրջաններ եղեր են։ Նոյն թուի ռուս-թրքական պատերազմին այս երկու գաւառները (Կոգովիտ եւ Ծաղկոտն) ու շրջակայ գաւառները ամբողջութեամբ կը գաղթէին ռուս բանակի հետ անոնց նոր գրաւած գաւառները։ Պապս Յովան (Յովհաննէս) Դիատինի Դերէ-բէյ Մահմուտ փաշայի տան դերձակն ըլլալով՝ փաշայի կողմէն արգիլուեր է գաղթելու։

«Պապս միեւնոյն ժամանակ հռչակաւոր թիրախահար՝ հրացանաձիգ մ'ըլլալով՝ դաստիարակ-մարզիչն է եղեր փաշայի որդի եւ ժառանգ Մեհմետ բէյին՝ վերջը իր քաջութեամբ յայտնի «Սիւրմելի Մեհմետ փաշան», որ Թանզիմաթի գործադրութեան շրջանին Կ. Պոլիս կը բերուի եւ յետոյ կ'աքսորուի Եգիպտոսի կղզիներէն մէկը, ուր եւ կը մեռնի։

«Հայրս, իբր տարեկից ընկերը Մեհմետ բէյին, անոր հետ



ՓՐՈՖ· Ա· ԽԱՉԱՏՐԵԱՆ, նստած

միասին մարդուեր է պապիս ձեռքին տակ հրացանաձգութեան ու որսորդութեան մէջ եւ տարիներով որսակից ընկերն է եղեր Մեհմետ բէյին։ Շատ ազէկ կը յիշեմ հանդիպում մը, որ Մեհմետ բէյն ունեցաւ հօրս հետ մեր դիւղին մէջ· իրր հին ընկերներ։ Շատ սիրալիր տեսակցութենէ մը յետոյ, հայրս բաւական տեղ անոր ընկերացաւ ճամբու դնելու համար· ես ալ, իրր մանկիկ, քովերէն կը վազէի։

«... Մինչեւ 1877 ապրած եմ ծննդավայրս, ուստի եւ դիտակ Հայաստանի հայու կեանքին։ 1877–ի ռուս–թրքական պատերազմին տեսած եմ Բայազիտի եւ Բագրեւանդի աւերն ու կոտորածը եւ ապրած նոյն միջոցին կատարուած գաղթականական կեանքը։ Այս առթիւ ալ Էջմիածին ինկած եւ հոն Գէորգեան ճեմարան մտած։ Ամրան արձակուրդներս կ'անցնէի ծննդավայրս եւ այդպէս միշտ դիտակ մնացեր եմ հայ դիւղացիի թշուառ վիճակին։

«1885–ին, աւարտելով Ճեմարանը՝ կը վերադառնայի մեր գիւղը, ուրկէ կը հրաւիրուէի Կարին, իբր ուսուցիչ Սանասարեան վարժարանին։ Հոս, իբր կեդրոն, ա՛լ աւելի լայն շրջան մը կ՚ունենայի ուսումնասիրելու Թուրք վարչաձեւը ու հայերու վերաբերմամբ անոնց ունեցած քաղաքականութիւնը։

«1892–ի աշնան կը մեկնէի Գերմանիա։ Հոն ունեցած չորս տարիները Հայաստանի համար եղան յոյսերու եւ յուսախաբութեան, խնդումի եւ սուգի տարիներ։ Նախ՝ 1895–1896–ի բարենորոգումներու շրջանը եւ յետոյ՝ 1895–96–ի կոտորածները։

«Գերմանիայէն կը վերադառնայի նորէն Կարին նոր գաղափարներով ու ծրագրով եւ այնուհետեւ կեանքիս գնովը հաւատարմօրէն ծառայեցի ընտրածս դրօշին։ 1908–ի Սահմանադրութիւնը կուգար վերցնելու այն անթափանց քողը, որու տակ տասնեակ մը տարի լուին կը գործէի։

«1912–ի ամրան տեղափոխուելով Կ. Պոլիս՝ աւելի լայն ասպարէզ մը կը բացուէր ինծի մասնակցելու ազգային–քաղաքական գործերուն։

«Շատ մօտէն մասնակցած եմ 1914–ի բարենորոգումներու շուրջ կատարուած գործունէութեանը եւ ծանօթ՝ բոլոր անցուդարձերուն։

«1915–1918–ի սարսափի տարիներու ապրումներս ամենուն ծանօթ ըլլալով (իմ «Ցուշապատում»–ը հրատարակուած Ամերիկայի «Հայրենիք»–ի մէջ)՝ աւելորդ է հոս կրկնելը։ Այս աղէտները զրկեցին զիս այն բոլոր անձնուէր գործիչներէն, որոնց հետ տարիներով պայքարած էի հայ ազատագրութեան համար։

«1918–ի Յունիսին Միջագետքի անապատէն անցնելով՝ կ՚ապաստանէի Բաղդատ, ուրկէ նոյն թուի Դեկտեմբերին, Պօղոս Նուպարի մէկ հեռագրով, կը հրաւիրուէի Պարիս մասնակցելու Հայ Ազգային Համագումարին։ 1919–ի աշնան կ՚անցնէի Հայաստան, ուր պատեհութիւն կը տրուէր ինծի ուսումնասիրել հայ եւ տաճիկներու միջեւ կատարուած դիւանագիտական յարաբերութիւններու վերաբերեալ պաշտօնական գրութիւններն եւ գրել այս շրջանի պատմութիւնը»։

Արտասահմանից Կարին բերած «Նոր գաղափարներ»–ը Դաշնակցութեան գաղափարներն էին։ Փրոֆ. Խաչատրեանը արդէն համոզուած Դաշնակցական էր եւ, որպէս այդպիսին, Կարինում էլ — դպրոցում թէ դուրսը — «կեանքի գնով հաւատարմօրէն ծառայեց ընտրած դրօշին»։ Եւ զարմանալի չէ, որ դպրոցի վարչութիւնը, Մատաթեանների գլխաւորութեամբ, խէթ աչքով էր նայում նրա վրայ, մինչ աշակերտութեան մէջ յարգանք ու սէր էր վայելում նա։ Խաչատրեանը չէր բաւականանում միայն դպրոցական

գործով. նա շարունակում էր եւ հայագիտական աշխատանքները։ 1907–ին լոյս տեսաւ նրա եւ Ե. Դոլէնսի «Հին Հայերի պատմութիւնը» Ֆրանսերէն հատորը՝ գիտութեան նորագոյն տուեալների վրայ հիմնուած համադրական մի գործ հին Հայաստանի աշխարհագրութեան, պատմութեան եւ մշակոյթի մասին։ 1909–ին այս գիրքը լոյս տեսաւ նաեւ հայերէն թարգմանութեամբ։

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, յայտնի դարձաւ եւ Խաչատրեանի կատարած հասարակական եւ կուսակցական դերը համիտեան մռայլ վարչաձեւի տակ։ Խաչատրեանը ոչ միայն հմուտ մանկավարժ էր ու հայագէտ, այլեւ պայքարի մարդ՝ Դաշնակցութեան գաղափարների ջատագով ու քարոզիչ, մանաւանդ նոր սերնդի մէջ։ Սանասարեան վարժարանից դուրս եկած երիտասարդութիւնը ամենից աւելի կրած էր Փրոֆ. Խաչատրեանի գաղափարական ազդեցութիւնը։

Հ. Յ. Դաշնակցութեան 9–րդ Ընդհ. ժողովին մասնակցելուց յետոյ, 1919 թ. վերջերը, փրոֆ. Խաչատրեանը պաշտօն ստացաւ Հայաստանի կառավարութիւնից մեկնելու Փարիզ, գործակցելու Հ. Հ. Պատուիրակութեան, յատկապէս, Հայաստանի սահմանագծման աշխատանքներում։ Փարիզից, 1920–ին անցաւ Պոլիս, ուր մնաց մինչեւ քեմալականների մուտքը։ Այդտեղ գրեց եւ յօդուածի սկզբում յիշուած աշխատութիւնը, որ յոյս ունէր լրացնել Հայաստանում։

Հայաստանի խորհրդայնացումը ծանր հարուած էր ինչպէս ամբողջ հայութեան, փրոֆ. Խաչատրեանի համար էլ։ Այդ, սակայն, արգելք չեղաւ, որ նա վերադառնայ Երեւան՝ երկրի շինարարութեան մասնակցելու ցանկութեամբ։ Եւ առաջին օրերին, որոշ հնարաւորութիւն ստացաւ իր ուժերն ու գիտական պատրաստութիւնը տրամադրելու հայրենիքին։ Նշանակուեց համալսարանի դասախօս, ապա՝ աշխատանքի կոչուեց Պետական Մատենադարանում։ Միաժամանակ աշխատում էր եւ Հայաստանի հնագոյն պատմութեան ուսումնասիրութեան վրայ։ Արտասահմանի հայրենակիցների եւ բարեկամների աջակցութեամբ նոր հրատարակութիւններ ստացաւ Հայաստանի հին պատմութեան մասին։ Օգտագործեց Հայաստանում ճարած աղբիւրները՝ եւ 1933–ին, Երեւանում, լոյս տեսաւ նրա «Հայաստանի Սեպագրական Շրջանի Քննական Պատմութիւնը» ծաւալուն եւ մեծարժէք գործը որի մէջ լուսաբանուած է Հայաստանի պատմութիւնը Քրիստոսից առաջ 3000 թուականներից սկսած մինչեւ 600–ական թուականները։ Զանազան պարբերականներում ունի նաեւ մենագրութիւններ Հայաստանի հին պատմութեան այլ եւ այլ հարցերի մասին։

Հայաստանի դժբախտ պայմանները չխնայեցին եւ փրոֆ. Խաչատրեանին, որ բոլորովին հրաժարուած քաղաքականութիւնից ու հանրային գործերից՝ բացառապէս նուիրուած էր գիտութեան։ Նրան էլ «մաքրագործեցին», զրկեցին ապրուստի միջոցներից եւ աշխատելու հնարաւորութիւնից։ Եւ պատերազմի տարիներին նա մեռաւ բոլորովին անյայտութեան մէջ։

Ե՞րբ է տեղի ունեցել նրա մահը, ի՞նչ պայմաններում — ոչինչ յայտնի չէ։

ԱԲՐԱՀԱՄ ԳԻԼԽԱՆԴԱՆԵԱՆ

Աբրահամ Գիւլխանդանեան ծնուել է 1875 թ. Օգոստ. 13-ին, Էջմիածին-Վաղարշապատ աւանում։ Ուսել էր Գէորգեան ճեմարանում՝ լրացնելով դասարանական բաժինը։ Տասնեակ տարիներ յետոյ, երբ արդէն ծանօթ հասարակական գործիչ էր եւ Բաղուի Դաշնակցութեան ղեկավար դէմքերից մէկը, աւարտեց Ռուսաստանի Եարօսլաւ քաղաքի իրաւաբանական ճեմարանը։

1894-ին, 19 տարեկան հասակին, Աբրահամը մտնում է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը եւ յաջորդ տարի, 1895-ին, արդէն Վաղարշապատ կոմիտէի անդամ էր։ 1898-ին փոխադրւում է Բաղու, մտնում է ծառայութեան նաւթային մի հիմնարկութեան մէջ՝ եւ ազատ ժամանակը ամբողջապէս նուիրում է կուսակցական աշխատանքի։ Նոյն տարի ընդունւում է Բալախանիի Կոմիտէի անդամ։ 1902-ից մինչեւ 1908 թ. Ոսկանապատի Կենտր. Կոմիտէի անդամ է։ 1908-ից շարունակաբար ընտրւում է Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի անդամ։ Մասնակցում է այդ տարիների Բաղուի շրջանային ժողովներին եւ Կովկասի Ռայոնական ժողովներին։ Նիկոլ Դումանի, Պապաշայի, Գր. Աղաջանեանի եւ ուրիշների հետ Գիւլխանդանեանը դառնում է Բաղուի շրջանի Դաշնակցութեան կենտրոնական ղեկավար ուժերից մէկը։ Առանձնապէս նա մեծ հմայք էր վայելում Նաւթաշխարհի հայ բանուորութեան ու երիտասարդութեան, ինչպէս եւ մարտական ուժերի մէջ։ Աղեցութիւն եւ հեղինակութիւն ունէր նաեւ Բաղուի մտաւորականութեան եւ ունեւոր դասակարգի շրջաններում։ Գործնական մտքի տէր, կազմակերպչական կարողութիւններով օժտուած, բնաւորութեամբ դիւրահաղորդ, չնորհիւ անձնական գործի նիւ-



ԱԲՐԱՀԱՄ ԳԻԻԼԽԱՆԴԱՆԵԱՆ

թապէս անկախ, բաւական զարգացած, ամուր իր համոզումների եւ գործունէութեան մէջ, ամբողջ էութեամբ նուիրուած Դաշնակցութեան՝ Աբրահամը յարգուած գործիչ էր հասարակական բոլոր խաւերի կողմից։

Դժուար է ցոյց տալ որեւէ հանրային կամ կուսակցական գործ Բագուի շրջանում, որին մասնակից կամ ղեկավար եղած չլինէր Գիւլխանդանեանը։ Գործաւորական շարժումների թէ յեղափոխական ձեռնարկների մէջ նա առաջին դիրքերի վրայ էր։ Մասնակից եղաւ Քրիստափորի դլխաւորած «Փոթորիկ»-ի ձեռնարկներին։ Ազգային-եկեղեցական կալուածների պաշտպանութեան օրերին, ապա ձախից եւ աջից ծայր տուած հակադաշնակ պայքարների շրջանում Աբրահամը բուռն գործունէութիւն ցոյց տուեց։ Երբ, 1905-ին, սկսուեցին հայ-թաթարական կռիւները, նրան վստահուեց Գանձակի շրջանի պաշտպանութեան գոր-

ծը, որ նա տարաւ փայլուն յաջողութեամբ։ Հետագային, հայ-թաթարական կռիւներին պատմութիւնը նա լոյս ընծայեց առանձին հատորով։

Գանձակի ինքնապաշտպանութեան գործով Գիւլխանդանեանը դառնում է հաւակովկասեան չափանիշով գործիչ։ Եւ, բնականաբար զերծ չի մնում եւ ցարական ոստիկանութեան ուշադրութիւնից։ Դաշնակցականների զանգուածային ձերբակալութիւնների առաջին շրջանում նա կարողացաւ ազատ մնալ, շարունակեց կուսակցական գործունէութիւնը՝ զեկավար դիրքերում, բայց 1910 թ. Ապրիլ 1-ին ընկաւ ցարական որսկան շների ձեռքը եւ բաժանեց Դաշնակցութեան մեծ դատավարութեան ենթարկուած ընկերների ճակատագիրը։

Դատարանից անպարտ արձակուելով, 1912-ին, Գիւլխանդանեանը շարունակեց կուսակցական եւ հանրային աշխատանքը Բագուում։ 1914 թ. աշնանից նա փոխադրուեց Թիֆլիս, ապա՝ Երեւան, իբրեւ Հայ Կամաւորական զնդերի Կարգադրիչ Մարմնի անդամ։ Կամաւորական զնդերի լուծումից յետոյ, վերադարձաւ Բագու։ Ցարական զահի տապալման յաջորդող օրերին ընտրուեց Բագուի Հայոց Ազգ. Խորհուրդի նախագահ, եւ երբ Բագուն անջատուեց Անդրկովկասից, Գիւլխանդանեանը, Ռոստոմի եւ ուրիշների հետ, վարեց Բագուի ինքնապաշտպանութիւնը։ Բագուի անկումից յետոյ, մարտիկների եւ ժողովրդի հետ տարագրուեց Պարսկաստան, որտեղից վերադարձաւ ընդհանուր զինադադարից յետոյ։

1919-ին, շատերի հետ Գիւլխանդանեանն էլ անցաւ Հայաստան եւ շուտով պաշտօնի կոչուեց կառավարութեան մէջ, իբրեւ ներքին գործոց, ապա՝ ելեւմտական նախարար։ 1920 թ. Նոյեմբերին նշանակուեց հաշտարար պատուիրակութեան անդամ, Ա. Խատիսեանի գլխաւորութեամբ, որ կնքեց Ալէքսանդրապոլի դաշինքը Թուրքերի հետ։

Խորհրդայնացումից յետոյ, Գիւլխանդանեանը անցաւ Պոլիս, ապա մի քանի տարի ապրեց Ռումանիայում եւ, ի վերջոյ հաստատուեց Փարիզում, ընտրուելով Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմնի անդամ։ 1933-ից սկսած զբաղուած էր գլխաւորապէս գրական աշխատանքով. դասաւորեց Հ. Յ. Դ. Դիւանի նիւթերը, լոյս ընծայեց «Հայ-Թաթարական կռիւները», «Կովկաս» հատորները եւ մի քանի գրքոյկներ, ինչպէս նաեւ յօդուածներ ու յուշեր մամուլում Դաշնակցութեան պատմութիւնից։

Վերջին պատերազմի տարիներին Գիւլխանդանեանն եւս ենթարկուեց ծանր զրկանքների, բայց չընկճուեց եւ անտանելի

պայմաններում աշխատեց մեղմացնել պատերազմի արհաւիրքները հայ ժողովուրդի վերաբերմամբ։ Փարիզի ազատագրումից յետոյ, հայ բոլշեւիկների մատնութեամբ, ձերբակալուեց Ֆրանսական իշխանութիւնների կողմից, անասելի զրկանքներ կրելով բանտում։ Պարզուեց, ի հարկէ, որ զրպարտութեան զոհ էր դարձել եւ անպարտ արձակուեց, բայց բանտում կրած նուաստացումը եւ հոգեկան ու մարմնական տառապանքները անհետեւանք չէին անցել։ 1946 թ. Յունուար 1-ին Աբրահամը փչեց իր վերջին շունչը, Փարիզի արուարձան Ինդիէն-լէ-Բէնում։

Բժ. ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Համօ Օհանջանեանը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներին անմիջապէս յաջորդող սերնդից էր՝ նրանց գաղափարներով եւ աւանդութիւններով ներշնչուած, նոր սերունդներին հիմնադիր սերնդի հետ միացնող կուռ շղթայի ամուր օղակներից մէկը։ Նա իր մէջ տարրեր ունէր ե՛ւ Քրիստափորից, ե՛ւ Զաւարեանից եւ Ռոստոմից. ուրոյն անհատականութիւն էր — տիպար մտաւորական եւ տիպար Դաշնակցական՝ օժտուած մտաւոր ու բարոյական բարձր առաքինութիւններով։

Օհանջանեանը ծնուած էր Ախալքալաքում, 1873-ին։ Մկրտութեան անունը Համազասպ էր, բայց Համօ անունով էր յայտնի։ Կուսակցական անունն էր Մհերեան։ Թիֆլիսի պետական գիմնազիան աւարտելուց յետոյ, ուսել էր բժշկութիւն Զուիցերիայում եւ Մոսկուայում։ Աշակերտական տարիներից սկսած՝ Դաշնակցութեան մէջ էր, Քրիստափորի շնչի տակ։ Ուսանողական շրջանում արդէն փայլուն ապագայ խոստացող Դաշնակցական գործիչ էր՝ առանձնապէս մտերիմ կապերով կապուած Քրիստափորի հետ թէ՛ Կովկասում եւ թէ Զուիցերիայում։ Լեւոն Թադէոսեա՛նը (Պապաշան) իր յուշերում պատմում է, թէ 1898-ին, Համօյի հետ միասին Դաշնակցական Կարմիր Խաչի մասնաճիւղ են կազմել Թելաւում, հակաֆիլոքսերային արշաւախմբում աշխատելիս։

Համալսարանական շրջանը լրացնելուց յետոյ, Համօն հաստատուեց Թիֆլիսում, իբրեւ բժիշկ, եւ ամբողջ էութեամբ նուիրուեց հանրային-կուսակցական գործունէութեան՝ շուտով դրա-



ԲԺ. ՀԱՄՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

ւելով դեկավար դիրքեր։ Բարեկազմ, վայելչատեսիլ, բնաւորութեամբ՝ բարեհամբոյր, լրջախոհ, յարաբերութիւնների մէջ՝ նուրբ եւ ասպետական, ամուր իր համոզումներով եւ չափազանց բծախնդիր դէպի բարոյական սկզբունքները՝ Համօն հաւասա-

բապէս յարգուած ու սիրուած էր հասարակական բոլոր խաւերի եւ ընկերների, նոյնիսկ հակառակորդ կուսակցականների կողմից։ Գործի եւ անձնական մտերիմ յարաբերութիւնների մէջ էր եւ ռուս յեղափոխականների հետ։

Իր անսպառ եռանդով ու գաղափարական պայքարի թափով՝ Համօն առանձնապէս աչքի ընկաւ 1905 թ. ռուսական յեղափոխութեան յաջորդող տարիներին։ Իբրեւ Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի անդամ եւ կուսակցութեան ներկայացուցիչ արտաքին աշխարհի առջեւ՝ Ե. Թոփչեանի, Գ. Խաժակի եւ ուրիշների հետ նա ղեկավար եւ պայքարող դէմք էր հրապարակի վրայ՝ թէ՛ ներքին կեանքում եւ թէ յարաբերութիւնների մէջ օտարների հետ։ Եւ մասնաւորապէս՝ մեծ հեղինակութիւն էր վայելում երիտասարդութեան, մարտական ուժերի եւ աշխատաւորութեան շրջաններում։ Համոյի եռանդին ենք պարտական մեծ չափով նաեւ «Յառաջ» օրաթերթի եւ «Յառաջ» մատենաշարի հրատարակութեան համար։ Անգնահատելի եղաւ նրա դերը եւ «անջատական» ու «միհրանական» շարժումների ժամանակ, իբրեւ բարոյական հեղինակութիւն ամէնքի աչքին։ Իր համոզումներով ու խառնուածքով Համօն կենտրոնական տեղ էր գրաւում Դաշնակցութեան մէջ եւ մի տեսակ միութեան կապ էր աջ ու ձախ կողմերի համար։

Այդ դիրքի եւ «հաշտարար» ոգու շնորհիւ Հ. Յ. Դ. Զորբորդ Ընդհ. Ժողովում էլ Համօն, Ռոստոմի կողքին, եղաւ մէկը այն աղդեցիկ դէմքերից, որոնք վիժեցրին Դաշնակցութեան դէմ լարուած դաւերը եւ աւելի եւս ամրապնդեցին կուսակցութեան միասնական զօրութիւնը։ Ժողովից յետոյ էլ նոյն եռանդով շարունակեց կուսակցական աշխատանքը ղեկավար դիրքերում։ Եւ երբ սկսուեց հալածանքը Դաշնակցութեան դէմ, 1908–ին, ցարական ժանտարմների առաջին հարուածը իջաւ Համոյի գլխին։ Հարիւրաւոր ականաւոր մտաւորականների հետ նա եւս նետուեց բանտ, ուր պահուեց մինչեւ դատավարութիւն։

1912 թ. Փետրուարին, Պետերբուրգի Կայսերական Սենատի յատուկ բաժնում, տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան մեծ դատավարութիւնը։ 150 հոգի քաշուած էին դատարանի առջեւ Դաշնակցութեան անդամակցութեան ամբաստանութեամբ։ Ռուսաստանի ամենայայտնի փաստաբանները ստանձնած էին Դաշնակցականների պաշտպանութիւնը։ Զորս տարուայ ընթացքում բազմահատոր մեղադրական նիւթ էր հաւաքուած, որի մէկ խոշոր մասը ուղղուած էր Համոյի դէմ։ Պաշտպան փաստաբանների որոշումով մի քանի հոգի միայն պէտք է խոստովանէին Դաշնակցութեան անդամ լինելը, եւ Համօն առաջինն էր դրանց մէջ։ Դատարանի մէջ նրա արտասանած ճառը Դաշնակցութեան

մասին խորունկ տպաւորութիւն գործեց ոչ միայն ունկնդիրների, այլեւ դատական կազմի վրայ։ Արդիւնքը — տաժանակիր աշխատանքի դատավճիռ Սիբիրում։

Պատերազմի եւ կամաւորական շարժման հետեւանքով, 1915-ին, շատերի հետ, Համօն էլ ազատ արձակուեց, վերադարձաւ Կովկաս եւ, կարճ ժամանակից յետոյ, պաշտօն ստանձնեց Քաղաքների Միութեան ռազմաճակատի բժշկա-առողջապահական բաժնում՝ նպատակ ունենալով, առաջին հերթին, օգնութիւն հասցնել պատերազմից աղէտահար հայերին։ Վասպուրականի ազատագրութիւնից յետոյ, օրինակ, նա փութաց Վան բժշկա-խնամատարական մեծ խմբի գլուխն անցած եւ նահանջին, իր խմբով, շարունակեց խնամատարութեան գործը էջմիածնում։

Ցարական դահի տապալումից յետոյ, 1917-ին, Համօն նորից նետուեց կուսակցական գործունէութեան ասպարէզ, ընտրուեց Սահմանադիր Ժողովի անդամ եւ մեկնեց Պետրոգրատ, ուր, 1918 թ. Փետր. 5-ին, պիտի բացուէր Սահմ. Ժողովը։ Վրայ հասաւ, սակայն, բոլշեւիկեան յեղաշրջումը, Հոկտեմբերի վերջերը, ու նա մնաց կէս ճանապարհին, Ռոստովում, ուր իր հեղինակաւոր մասնակցութիւնը բերեց հայկական գործերում։ Թիֆլիս վերադարձաւ հայութեան կեանքի ամենաճգնաժամային օրերին։ Ռազմաճակատը փլել էր։ Թուրքերը անցել էին սահմանը եւ սպառնում էին նաեւ Կովկասի հայութեան բնաջնջման։ Բաթումում տեղի էին ունենում անպտուղ բանակցութիւններ Կովկասեան Սէյմի եւ Թրքական պատուիրակութիւնների միջեւ։ Կովկասեան ազգերի միութիւնը փլչելու վրայ էր։ Հայ ժողովուրդը մնում էր մենակ, անօգնական մահացու վտանգի առջեւ։ Միակ իրական ոյժը այդ օրերին, որ, թերեւս, կարողանար աղէտի առաջն առնել, Գերմանիան էր։ Եւ Հայոց Ազգ. Խորհուրդը շտապեց պատուիրակութիւն ուղարկել Բերլին. ծովում խեղդուողը օձին էր փաթաթւում։ Այդ առաքելութիւնը յանձնւում է Համոյին եւ Սոց.-Դեմոկրատ Արշակ Զոհրաբեանին։

Բարեբախտաբար, վրայ հասաւ ընդհանուր զինադադարը 1918 թ. Նոյեմբ. 11-ին։ Ահաւոր սպառնալիքը հեռացաւ հայկական հորիզոնից։ Փարիզ մեկնեց Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը Ահարոնեանի գլխաւորութեամբ, որի մէկ անդամ նշանակուեց Համօ Օհանջանեանը։ Այդ պաշտօնում նա մնաց մինչեւ 1920 թ. սկիզբը՝ մասնակից լինելով Պատուիրակութեան բոլոր աշխատանքներին։

Վերադառնալով Հայաստան՝ Համօն մտաւ Ա. Խատիսեանի դահլիճի մէջ, իբրեւ արտաքին գործերի նախարար։ Բոլշեւիկների մայիսեան ապստամբութեան հետեւանքով՝ Խատիսեանի

դահլիճը հրաժարուեց, եւ Մայիս 5–ին իշխանութիւնը անցաւ բիւրո–կառավարութեան ձեռքը։ Համօն, որ, 1919–ի աշնան, Հ. Յ. Դ. 9–րդ Ընդհ. Ժողովից ընտրուել էր Բիւրոյի անդամ, նշանակուեց վարչապետ։

Բիւրո–կառավարութիւնը պաշտօնի կոչուած էր կարճ ժամանակի համար, բայց մայիսեան խռովութիւնները դսպելուց յետոյ էլ դէպքերը հարկադրեցին նրան մնալու իշխանութեան գլուխը։ Այնուհետեւ վրայ հասաւ պատերազմը. Հայաստանը ճղմըւեց Թուրք–բոլշեւիկեան միացեալ ուժերի ճնշման տակ։ Համոյին վիճակուեց այս դէպքերի դառնութեան բաժակը քամել ցմրուր, մինչեւ որ, Նոյեմբերի վերջերը, իշխանութիւնը փոխանցեց նոր կառավարութեան։

Խորհրդայնացումից յետոյ, երբ Համօն մի խումբ ընկերների հետ հեռացաւ Հայաստանից, վրացական սահմանին չհասած՝ ձերբակալուեց բոլշեւիկներից եւ փոխադրուեց Երեւանի բանտը, որտեղից, հազարաւոր ուրիշների հետ, ազատուեց միայն Փետր. 18–ի յեղաշրջման շնորհիւ։ Ապա՝ տարագրուեց Պարսկաստան եւ այնտեղից Եգիպտոս՝ Գահիրէ, ուր եւ մնաց մինչեւ վերջ՝ զբաղուելով բժշկութեամբ, բայց ժամանակի եւ ուժերի մեծ մասը յատկացնելով հանրային–կուսակցական գործունէութեան, իբրեւ Դաշնակցութեան ղեկավար մարմնի անդամ եւ «Համազգայինի» նախագահ՝ յարգուած ու սիրուած բոլորի կողմից։

Մեռաւ Համօն 1947 թ. Յուլիս 31–ին, եւ Գահիրէի հայութիւնը համազգային յուղարկաւորութեամբ ճանապարհ դրեց նրան դէպի յաւիտենականութիւն։

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

Նիկոլը ինքը թողել է մեզ հետեւեալ կենսագրական տեղեկութիւնները իր մասին.

«Ծնած եմ 1875 թ. Մարտ 24–ին, Թիֆլիսում։ Ուսել եմ Ներսիսեան դպրոցում, Գէորգեան Ճեմարանում երկու տարի, Մոսկուայի համալսարանում մէկ տարի եւ Լոզանի համալսարանում մէկ տարի։

«Զբաղումս եղած է ուսուցչութիւն։ Դասատու եմ եղել Կաղզլեան, Ագուլիս, Շուշի, Ներսիսեան վարժարան։ Տնօրէն եմ եղել Թեհրանի վարժարանի 3 տարի։ Տնօրէն Աղեքսանդրիայի վարժարանի 5 տարի։

«Հանրային–պետական պաշտօններում՝ նախագահ Թեհրանի



Համայնական Խորհրդի, անդամ Ազգային Բիւրոյի եւ Կամաւորական Խմբերի Կարգադրիչ Մարմնի, փոխ-նախագահ Հայ Գրողների Ընկերութեան՝ Թիֆլիսում: Անդամ Հայաստանի Պարլամենտի: Հայաստանի Հանրապետութեան լուսաւորութեան նախարար, նախագահ Կարսի Մայիսեան ապստամբութիւնը վերաքննող մասնախմբի, Շարուրի ցանքերի բաշխման եւ օգտագործման վարիչ:

«1904 թուից ի վեր գործօն անդամ եմ Հ. Յ. Դաշնակցութեան: Բիւրոյի ներկայացուցիչ Կարսում (1904–5), Բիւրոյի ներկայացուցիչ Եգիպտոսում 1905–ին եւ 1907–8–ին: Անդամ Շուշուայ կոմիտէի 1908–1909–ին: Անդամ Շահստանի Կ. Կոմիտէի 1909–12: Կամաւորական շարժման վարիչներից մէկը 1914–17: Կամաւորական պահեստի գնդի պետ 1915–17:

«Մասնակցած եմ (Հ. Յ. Դ.) Երջանային ժողովին Ղարաքիլիսէ 1908–ին, Ընդհանուր ժողովին 1913–ին (Կարին), Երջանային ժողովին 1917–ին (Թիֆլիս), Եգիպտոսի բոլոր Երջանային ժողովներին 1923–28:

«1905–ին, Եաֆայում, բանտարկուել եմ մի քանի ժամ: Հայաստանում բանտարկուել եմ բոլշեւիկների օրով, 1921, Փետր. 9–18:

«Աշխատակցել եմ «Մուրճ»ին (հին եւ նոր), «Նոր Հոսանք»ին, «Հայրենիք»ին (ամսագիր), «Ցուսաբեր»ին, «Ռազմիկ»ին (Բալկան), «Հանդէս Ամսօրեայ»ին, «Բազմավէպ»ին, «Արարատ»ին, «Լումայ»ին, Թիֆլիսի մեր թերթերին, Թեհրանի եւ Թաւրիզի մեր թերթերին (անունները չեմ յիշում):

«Խմբագիր եմ եղել «Նոր Հոսանք»ի, «Հորիզոն»ի, «Գործ»ի, «Հայաստանի Աշխատաւոր»ի (իբրեւ անդամ խմբագրութեան), «Ազատամարտ»ի (Թիֆլիս):

«Առանձին գրքեր, կարելի է ասել, չունեմ: Միայն մի գրքոյկ — «Սոցիալիստ-Յեղափոխականների Ծրագիրը»:

«Կոչումս ի՞նչ է — ես էլ չգիտեմ: Ոմանք ասում են՝ քննադատ եմ: Ուրիշների կարծիքով մատենագիր եմ: Ուրիշ բաներ էլ են ասում: Իմ գիտցածովս ես էլ, շատերի պէս, ամէն բան եմ եւ ոչինչ եմ: Այս է հայ մտաւորականի ճակատագիրը: Գլխի՞ ես»:

Աւելացնենք նաեւ, որ այս տողերը գրելուց յետոյ, Աղբալեանը, Լ. Շանթի հետ, հիմնեց Բէյրութի Հայ Ճեմարանը ու մինչեւ մահ դասաւանդեց այնտեղ, հրատարակեց «Բանասէրի յուշագիրը» պրակները, գրեց «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին» գիրքը, «Հայ Գրական պատմութիւնը» հատորը, գործօն կերպով մասնակցեց Սիւրիա-Լիբանանի Դաշնակցութեան կեանքին, շարունակեց աշխատութիւնը հայ մամուլին, հրապարակային դասախօսութիւններ տուեց, որոնք անջնջելի կը մնան Բէյրութի հասարակութեան յիշողութեան մէջ:

Մեռաւ 1947 Օգոստոս 15-ին:

Այս հակիրճ ու համեստ փաստական տուեալները, սակայն, չեն պատկերացնում լրիւ կերպով Աղբալեանի բազմակողմանի եւ մեծարժէք կեանքն ու գործը: Արտասովոր կարողութիւններով օժտուած եւ մտքի արտասովոր պաշարով զինուած մարդ էր նա՝ բազմատաղանդ ու բազմահմուտ, հետազօտող եւ երեւոյթների խորերը թափանցող, հայոց գրականութեան մէջ մրցորդ չունէր նա. հայկական մատենագրութիւնը գիտէր, ինչպէս իր հինգ մատները: Իբրեւ քննադատ, եզակի երեւոյթ էր հայ կեանքում, գրականութեան եւ արուեստի ըմբռնումը բնազդական էր նրա մէջ՝ կատարելագործուած գիտութեամբ եւ յամառ ինքնազարգացումով: Տաղանդներ յայտնագործող ու դաստիարակող էր: Հիանալի ուսուցիչ էր եւ դասախօս — սերունդներ կերտող: Անձնուէր հասարակական գործիչ էր եւ հաւատաւոր Դաշնակցական: Անոնման, մարդոց սրտերը հմայող եւ միտքը ճոխացնող բեմբասաց: Նարեկացիի խմորից խորախորհուրդ երգող էր եւ միաժամանակ յաշխարհէ, որին ոչինչ օտար էր մարդկային ապրումներից: Իբրեւ մարդ-անհատ՝ համեստ էր, սակաւապետ, ընկերական, կենսուրախ, լաւատես...

Բազմահանճար հայ մտաւորական էր Աղբալեանը՝ կեանքի բոլոր ասպարէզների համար պահանջուած կարողութիւններով ու հմտութեամբ օժտուած եւ, սակայն, տեսէք, թէ ինչպէ՞ս է գնահատում նա իրեն. «Կոչումս ի՞նչ է — ես էլ չգիտեմ... Ամէն բան եմ եւ ոչինչ եմ»: Եւ, իրօք, նա «ամէն բան» եղաւ՝ ուսուցիչ, քննադատ, խմբագիր, Դաշնակցական գործիչ, կամաւորական խմբերի վարիչ, հայագիտութիւն ուսումնասիրող, հրապարակախօս, Հայաստանի Խորհրդարանի անդամ, նախարար, նոյնիսկ ... «Շարուրի ցանքերի բաշխման եւ օգտագործման վարիչ»: Ամէն գործի փարեց ոգեւորութեամբ ու նուիրումով, բայց երբեք յարատեւ չմնաց միեւնոյն գործի վրայ, չմասնագիտացաւ եւ չտուեց այն՝ ինչ որ կարող էր եւ պէտք է տար իր մտքի եւ սրտի անսահման հարստութիւնից:

Քիչ են Աղբալեանի չափ լայն հետաքրքրութիւն ունեցող եւ շատ կարդացած մարդիկ: Հին ու նոր հայ մատենագրութիւնն իւրացրել էր սպառիչ կերպով: Քաջածանօթ էր եւ եւրոպական գրականութեան: Անվերջ կարդում էր ուշադիր մտքով. սպունդի պէս ծծում էր գիտութեան եւ գրականութեան հիւթերը՝ այդ ամէնը, սակայն, մեծ մասամբ պահելով իր մէջ եւ փշրանքներ միայն բաժին հանելով ուրիշներին: Բայց այդ փշրանքներն էլ, եթէ հաւաքուին եւ ամփոփուին հատորների մէջ, թանգագին զարդ կը կազմեն Հայ Մշակոյթի շտեմարանում: Մասնաւորապէս, նրա գրական-քննադատական վերլուծումներն ու դիմագծերը: Ո՞վ կարող է մոռանալ, օրինակ, Աղբալեանի խօսած դամբանականը Արամի դագաղի վրայ, կամ նրա ճառը Հայաստանի Խորհրդարանի ամբիոնից՝ բոլշեւիկների մայիսեան ապըստամբութեան առթիւ, նրա ցասումի հրեղէն խօսքերը հիւսիսից հեղեղող բոլշեւիկութեան հասցէին.—

«Մարդկային կերպարանքը կորցրած խելագար մի ամբոխ, կանանց վարտիքները դրօշակ դարձրած, գալիս է մաբելու դարերի մոխիրներից ոտքի կանգնած ազատ Հայաստանի լոյսը»...

Եւ հասկանալի է, որ հայ բոլշեւիկները երբեք չներեցին նրան. Զարենցը միայն, վերջին պահուն, մեղայի եկաւ իր մեծ ուսուցչի առջեւ:

Աղբալեանը մեռաւ տարագրութեան մէջ՝ մտքով ու հոգիով ապրելով միշտ Հայաստանում եւ Հայաստանի համար:

ՀԱՄԱԶԱՍՊ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆ

Համազասպը ծնուել էր Վանում, 1873–ին։ Իր մանկութեան եւ կրթութեան մասին եւս տեղեկութիւն չունինք։ Պատանի հասակից մտել էր Դաշնակցութեան շարքերը եւ այնտեղ ստացել մտաւոր ու յեղափոխական դաստիարակութիւնը։ Արհեստով ոսկերիչ էր։ Բարեկազմ, առողջ եւ կեանքոտ երիտասարդ էր՝ դիւրահաղորդ եւ մարդամէջ։ Դաշնակցական մարտիկների շարքում՝ յանդուգն էր եւ նախաձեռնող՝ սիրուած ընկերների կողմից։

Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում էր հեռացել Վանից, յայտնի չէ, բայց հայ–թաթարական ընդհարումների օրերին Համազասպը արդէն Կովկասում էր, խմբապետ Ղարաբաղում, ուր անուն հանեց իր խիզախ կռիւներով ու յաղթանակներով։ Առանձնապէս նշանաւոր են նրա վարած կռիւները Մաչէնի եւ Ասկերանի շրջաններում։ Ժողովուրդը կոչեց նրան Ասկերանի հերոս, իսկ աշուղները երգում —

Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ
Համազասպը պանծալի։

Ցարական հալածանքների տարիներին Համազասպն էլ խիստ հետապնդման ենթարկուեց եւ շատերի հետ խուսափեց Թուրքիա՝ Պոլիս, ուր գործօն դեր կատարեց Դաշնակցութեան մէջ։ Շնորհիւ իր դիւրամատչելի բնաւորութեան եւ հրապուրիչ լեզուին, նա լայն ժողովրդականութիւն ձեռք բերեց ընկերների եւ հասարակութեան շրջանում։ Հակառակ տարբական ուսման, Դաշնակցութեան մէջ ստացած դաստիարակութեան եւ համարձակ լեզուի շնորհիւ Համազասպը սիրուած քարոզիչն էր Դաշնակցութեան գաղափարների եւ հանրային հաւաքոյթների ու խընջոյքների ոգին։

Հ. Յ. Դ. Ութերորդ Ընդհ. Ժողովին, 1914–ին, Կարինում Համազասպը պատգամաւոր էր Պոլսի շրջանից։ Ժողովում նա բուռն հակառակորդ էր գործակցութեան Թուրքերի հետ եւ պատերազմի յայտարարութիւնից անմիջապէս յետոյ մեկնեց Կովկաս, ուր փարեց կամաւորական շարժման։ Դեռ Աղդ. Բիւրոյի որոշումից առաջ նա արդէն սկսել էր քարոզել կամաւորական խմբերի կազմութեան անհրաժեշտութիւնը։ Եւ երբ Աղդ. Բիւրոն ձեռնարկեց խմբերի կազմութեան, նրան յանձնուեց կամաւորական երրորդ գնդի հրամանատարութիւնը։ Համազասպը իր գնդով վարեց բազմաթիւ ճակատամարտներ՝ միշտ արժանանալով վերին հրամանատարութեան ջերմ գնահատութեան։ Արարատեան ջոկատի մէջ, Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ, Քեռիի, Դրոյի եւ Խէչոյի հետ նա էլ Վանը ազատող



ՀԱՄԱԶԱՍՊ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆ

հերոսների շարքում էր, երբ Վանի հայութիւնը խելայեղ խանդավառութեամբ դիմաւորեց ազատարար կամաւորներին։

Այնուհետեւ էլ երբորդ գունդը շարունակեց կռիւը մինչեւ կամաւորութեան լուծումը, որից յետոյ Համազասպը անցաւ Թիֆլիս, այնտեղից Հիւս. Կովկաս, ապա Բագու, ուր նրան վիճակուեց առաջնակարգ դեր Բագուի Հերոսամարտում։ Բագուի անկումից յետոյ, Ռոստոմի եւ Բագուի ժողովրդի ու մարտիկների հետ միասին անցաւ Պարսկաստան եւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ, երբ ճանապարհները բացուեցին, փութաց մեկնել Երեւան։

Հայաստանում Համազասպի առջեւ բացուեց գործունէութեան լայն ասպարէզ եւ նա ոգեւորութեամբ նետուեց գործի մէջ։ Իբրեւ զօրամասի հրամանատար՝ նա մասնակցեց Հայաստանի պաշտպանութեան զանազան ճակատներում, ինչպէս նաեւ բոլշեւիկների մայիսեան ապստամբութեան ճնշման եւ թաթար ըմբոստ տարրի սանձահարման։

1920-ի վերջերը նա Նոր Բայազէտի շրջանի զօրամասերի պետ էր, երբ տեղի ունեցաւ Հայաստանի խորհրդայնացումը։ Զինուորական Կոմիտար Աւիս Նուրիջանեանի հրաւէրով, որի հետ մըտերմացել էր Բագուում, նա շտապեց անցնել Երեւան՝ յուսալով,

որ կարող կը լինի գործակցել նոր իշխանութեան եւ օգտակար դառնալ հայրենիքին։ Ընկերները ստիպում էին նրան չհաւատալ բոլշեւիկներին եւ անցնել արտասահման, բայց նա վստահեց Աւիսի «աղնիւ խօսք»ին։

Աւիսը համբոյրով եւ սիրալիր խօսքերով ընդունեց Համազասպին, խոստացաւ նրան պաշտօն Հայաստանի բանակում եւ ճամբու դրեց, որ «մի քանի օրով հանգստանայ ընտանիքի հետ»։ Եւ քաղցր խօսքերով ճանապարհ դնելուց յետոյ, հրամայեց ձերբակալել նրան...

Համազասպը երկու ամիս պահուեց բանտում, ամենօրեայ մահուան սպառնալիքի տակ։ Եւ, ապա, Փետրուարեան Ապըստամբութեան նախօրեակին, շատերի հետ կացինահար սպանուեց գազանացած ոճրագործների ձեռքով...

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՐՃԻԿԵԱՆ

(1882–1918)

Խաչատուր Կարճիկեանը ծնուել էր 1882–ին, Վաղարշապատում։ Մեր գործիչների շատերի պէս, նա էլ չքաւոր մի աշխատաւորի ընտանիքից եւ անհատական ճիգերով ու մեծ զրկանքներով հասել էր մտաւորական բարձր դիրքի։

Իր նախնական ուսումը ստանալով դիւղական ծխական դպրոցում, ապա աւարտելով Գէորգեան Ճեմարանի դասարանական մասը՝ հասունութեան վկայական էր ձեռք բերել Երեւանի Գիմնազիոնից եւ մտել Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական բաժինը։

Նիւթական աննպաստ պայմանները, սակայն, թոյլ չտուին նրան անընդհատ շարունակելու ուսումը։ Այդ ստիպուած՝ վերադարձաւ Կովկաս եւ նուիրուեց ուսուցչութեան նախ՝ Ախալցխայում, յետոյ՝ Ալեքսանդրապոլի հայկական դպրոցներում՝ ջանալով որոշ դումար խնայել ուսումը շարունակելու համար։ Զուտ դպրոցական պարտականութիւններից դուրս նա զբաղւում էր եւ Դաշնակցութեան գործերով, որի մէջ մտել էր դեռ աշակերտական տարիներից։ Եւ, իբրեւ Դաշնակցական գործիչ, շատ աւելի նշանաւոր եղաւ ու ժողովրդականութիւն ձեռք բերեց, քան որպէս դպրոցական դասատու։ «Խաչիկ վարժապետը» սիրելի էր

Դաշնակցական երիտասարդութեան շրջաններում. նրա խօսքը՝ հեղինակաւոր էր։

Նիւթական որոշ միջոց ապահովելուց յետոյ, Խաչիկը դարձեալ մեկնեց մայրաքաղաք ու նորից նուիրուեց ուսանողական կեանքին եւ կուսակցական աշխատանքին՝ զբաղուելով, յատկապէս, Զիֆոնի գործերի հաշուեյարդարով։ Նա եռուն գործունէութիւն ունեցաւ, մանաւանդ ուսանողական կեանքի վերջին տարիներին։ Համալսարանական դասախօսութիւնները, սովորաբար քիչ էին զբաղեցնում նրան, բայց իր մասնագիտութեան վերաբերուող գրքեր կարդում ու լուրջ պարապում էր եւ քննութիւնները տալիս էր յաջող։ Ուսանում էր մեծ դժուարութեամբ. ժամանակի մեծ մասը դնում էր մասնաւոր դասերի, որով ապրում էին ինքը եւ կինն ու երեխաները, որոնք հետն էին միշտ եւ սիրում էր անսահման սիրով։ Դասերից ազատ ժամանակը նուիրում էր Դաշնակցութեան եւ Ուսանողական Միութեան — «Ժողով»ին, որի գործօն անդամներից էր։

1908–10 թուականներին Պետերբուրգում կար եռուն ուսանողական կեանք. Դաշնակցական ուժեղ խմբի կողքին ունէր եւ սոցիալ-դէմոկրատական մի խմբակ, որի մէջ մտնում էին Ս. Սրապիոնեանը (Լուկաշին), Ա. Կարինեանը եւ ուրիշներ։ Ցաճախ տեղի էին ունենում հանդիպումներ, ուսանողական ժողովներ, բանավէճեր, եւ Կարճիկեանն ամէն տեղ բերում էր իր կենդանի ու հեղինակաւոր մասնակցութիւնը։ Հանդարտ, հաւասարակշռուած, ուժեղ ու սուր իմացականութեան ու կամքի տէր՝ նա յաջողութեամբ յետ էր մղում հակառակորդների փաստերն ու յարձակումները եւ ապահովում մեր «յաղթանակը»։

1910-ին Խաչիկը աւարտեց համալսարանը եւ հաստատուեց Թիֆլիսում, իբրեւ երդուեալ-հաւատարմատար Եակուլեանի օգնական։ Այստեղ նրա առաջ բացւում էր գործունէութեան ընդարձակ ասպարէզ, եւ նա համաչափ քայլերով եւ արագօրէն բարձրացաւ հասարակական գործունէութեան աստիճաններով։ Իբրեւ յաջող փաստաբան, նա շատ շուտ իրեն համար ստեղծեց նիւթական բարեկեցիկ վիճակ եւ չարունակեց լայնօրէն զբաղուել հասարակական կեանքով։ Դպրոցների հոգաբարձու, զանազան միութիւնների անդամ, կուսակցական մարմինների ղեկավար, ապա Արեւելեան Բիւրոյի անդամ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի իրաւասու, իրաւաբանների միութեան անդամ, «Հորիզոն» թերթի վարիչներից մէկը եւ պէսպէս ուրիշ պաշտօններ — Խաչիկը ամէն տեղ հասնում էր, ամէն տեղ բերում իր հմտութիւնը, շնորհալի վարուելակերպը, միտքն ու սիրտը։

1912 թ., Հ. Յ. Դաշնակցութեան մեծ դատավարութեան ժա-

մանակ նրան յանձնուեց կուսակցութեան նիւթերի հաւաքումն ու հայերէն մասի կազմակերպումը մի քանի ուրիշ փաստաբան ընկերների հետ։ Եւ նա ամենայն ձեռնհասութեամբ կատարեց իր վրայ դրուած պարտականութիւնը։ Ներկայ եղաւ դատավարութեան եւ դործակցեց ռուս նշանաւոր փաստաբաններին՝ Զարուդնիին, Ֆէրէնսկիին, Մանդէլշտամին եւ ուրիշներին։

Վրայ հասաւ համաշխարհային պատերազմը։ Կովկասահայութեան կեանքը տակն ու վրայ եղաւ։ Սկսուեց մի չտեսնուած եռ ու դեռ։ Ցղացուեց ու կազմակերպուեց կամաւորական շարժումը։ Կարճիկեանը այդ շարժումը դլխաւորողներից էր։ Ինչպէս հանդուցեալ Աւետիք Շահխաթունեանը, բժ. Ց. Զաւըրեանը, Ա. Զամալեանը, Արմէն Գարօն, Իշխան Ցովս. Արղութեանը եւ ուրիշներ, նա եւս պատմական անհրաժեշտութիւն էր համարում կամաւորական խմբերի կազմակերպումը, իբրեւ Թրքահայ դատի լուծման մի միջոց։ Բայց կամաւորական շարժման նա վերապահում էր նախ եւ առաջ ինքնապաշտպանութեան դեր։ Խմբերը, նրա ծրագրով, պէտք է երթային ռուսական բանակի առաջին շարքերում եւ պաշտպանէին հայ ժողովուրդը ջարդերից թէ՛ թուրքերի եւ թէ՛ ռուս զօրքերի կողմից — մի դեր, որ, ինչքան եւ անիրագործելի համարուէր պատերազմական պայմաններում, մեր խմբերը կատարեցին շատ անդամներ։

Պատերազմի տարիներին Խաչիկը բոլորովին լքեց իր անձնական գործերը եւ ամբողջապէս նուիրուեց Ազգային Բիւրոյի ու կամաւորական խմբերի գործին։ «Կարդադրիչ Մարմնի», փաստօրէն եւ Ազգային Բիւրոյի ամենագործօն անդամներից մէկն էր։ Այն անվերջ ու յուզումնալից կուսակցական ժողովներում, որոնք տեղի էին ունենում, մեծ մասամբ, նրա բնակարանում, կամ Ազգային Բիւրոյի նիստերում, Խաչիկը միշտ աչքի էր ընկնում իր խելացի ու գործնական դատողութիւններով։ Ազգային Բիւրոյում քննւում ու մշակւում էր «ապագայ ինքնավար Հայաստանի» սահմանադրութիւնը. Խաչիկը հիացնում էր ամենքին իր հմտութեամբ. նա դուրս էր գալիս պետական իրաւունքից ցուցմունքներ անելու Ս. Ցարութիւնեանի ու Մ. Պապաջանեանի պէս փորձուած փաստաբաններին։ Ո՞րտեղից էր նրա այդ պաշարը, երբ, կարծես, բնաւ գիրք կարդալու ժամանակ էլ չէր ունենում...

Զարմանալի էր նրա սէրն ու մտերմութիւնը բժ. Ց. Զաւըրեանի հետ։ Երկու հակոտնեաներ.— մէկը համակ թռիչք՝ ինչ որ մշուշոտ դիւանագիտական ծրագրների յետեւից ընկած, միւսը գործնական միտք, այդ բոլորին նայում էր վերեւից, կէս-հեգնանքով ու հաւատում էր միայն հայ ժողովրդի սեփական կարո-

ղութեան։ Բայց եւ այնպէս, նրանք սիրով գործում էին միասին՝ կապուած ընկերական մտերիմ կապերով։

Առհասարակ, Խաչիկը հաղուագիւտ ընկեր էր։ Նրա հետ մարդ զգում էր առանձին ջերմութիւն։ Քնքոյշ ու փափկանկատ, անչափ դիւրազգած եւ ուշադիր, միշտ բաց սրտով, դժուար է ասել՝ ունէ՞ր արդեօք նա անձնական թշնամիներ։ Ընկեր էր այս բառի լաւագոյն իմաստով։ Մարդն ու գործիչը նրա մէջ զուգորդուած էին բացառիկ ներդաշնակութեամբ եւ կազմում էին մի կատարեալ ամբողջութիւն։

Բժ. Ց. Զաւրեանի պնդումով էր, որ, 1915-ի վերջերին, Կարճիկեանը թողեց Թիֆլիսը եւ, իբրեւ Քաղաքների Միութեան ներկայացուցիչ, անցաւ ռազմաճակատի անմիջական թիկունքը՝ Բասէնի շրջանը՝ վերաղարձող գաղթականութեան տեղաւորման եւ երկրի վարչական-տնտեսական կազմակերպութեան գործով։ Եւ այնտեղ էլ երեւան բերեց մեծ վարչական ձիրք ու վարուելակերպ, որի շնորհիւ ապահովեց ռուս զինուորական իշխանութեանց բարեացակամ վերաբերմունքը։ Հետագային, ժամանակաւոր Կառավարութեան շրջանում, երբ բժ. Ց. Զաւրեանը նշանակուեց գրաւուած վայրերի ընդհանուր կոմիսարի օգնական, Կարճիկեանը նրա գլխաւոր խորհրդատուն ու գործակիցը դարձաւ։

Ռուսական յեղափոխութեան առաջին շրջանում, Խաչիկը ըղբաղուած էր գլխաւորապէս ռազմաճակատի ու գրաւուած վայրերի կարգաւորման գործերով։ Ամէն անգամ, երբ մի քանի օրով գալիս էր Թիֆլիս, հրճուանքով պատմում էր, թէ թրքահայկական հողերը լեցւում են հայ բնակչութեամբ, քանդուած գիւղերը վերաշինւում են, արտերը ցանւում — «Հայաստան է ստեղծւում»։ Եւ, իրօք Հայաստանն էր ստեղծւում։ Ով յիշում է Բասէնի, Ալաշկերտի եւ միւս տեղերի վիճակը ռուս յեղափոխութեան առաջին ամիսներին, նա կը հասկանայ այն անխառն ուրախութիւնը, որով համակուած էր հայ մտաւորականութիւնը Կովկասում։ Սակայն, դժբախտաբար, այդ օրերը երկար չտեւեցին։ Յեղափոխական Ռուսաստանի հորիզոնը պղտորուեց, եւ վրայ հասաւ մի նոր փոթորիկ՝ սարսափելի իր գործած աւերով։ Կարճիկեանն այդ օրերին դարձաւ Կովկասեան կեանքի կենտրոնական դէմքերից մէկը։

1917-ի Հոկտեմբերին Խաչիկը մի ընկերոջ հետ Հ. Ց. Դաշնակցութեան կողմից ներկայացուցիչ էր «Անդրկովկասի Ապահովութեան Խորհրդում», որը բոլշեւիկեան յեղաշրջումից եւ Անդրկովկասի Առանձին Կոմիտէի փաստական կազմալուծումից

յետոյ դարձել էր երկրի բարձրագոյն իշխանությունը — մի իշ-
խանություն, սակայն, որի աղդեցությունը Թիֆլիսի պալատից
դէնը չէր անցնում: Կեանքը քանի դնում խառնակւում եւ խճճը-
ւում էր: Անհրաժեշտ էր կտրուկ միջոց ձեռք առնել: Եւ մի նիս-
տում, ինքնաբերաբար, դրուեց կովկասեան կենտրոնական կա-
ռավարության կազմակերպման անհրաժեշտության հարցը:

Ժողովը երկար քննությունից յետոյ, որոշեց կազմել Անդրը-
կովկասեան Կոմիսարիատ, որը պիտի փոխարինէր Առանձին Կո-
միտէին եւ պիտի բաղկանար ռուսներից, վրացիներից, ազրբէ-
ջանցիներից ու հայերից: Հայ անդամները պէտք է առաջարկ-
ուէին Դաշնակցության կողմից: Դրությունն այնպէս էր, որ ան-
հրաժեշտ էր նոյն իրիկուն եւ եթ կազմել կառավարությունը, եւ
ժամանակ չկար խորհրդակցելու Բիւրոյի հետ: Քառորդ ժամ-
ուայ դադարի միջոցին Խաչիկը եւ ընկերը փորձեցին հեռախօսով
կանչել ընկերներին, բայց չյաջողուեց: Ապա՝ երկուսով «ժողով»
դումարեցին՝ որոշելու համար անելիքը:

Խաչիկը սաստիկ տատանւում էր եւ չէր կարողանում վճռել՝
ի՞նչ անել: Տանջւում էր հոգեպէս, մանաւանդ թեկնածուների
խնդրում: Դրությունը, սակայն, պարզ էր. մեր թեկնածուները
որոշ էին — ինքը՝ Կարճիկեանը եւ Համո Օհանջանեանը: Համոյի
մասին նա էլ տարակոյս չունէր, բայց իր թեկնածությունը վրճ-
ռապէս հրաժարւում էր դնել: Պատճառաբանում էր անփորձու-
թեամբ եւ անկարողությամբ, բայց, անշուշտ, քիչ դեր չէր կա-
տարում եւ այն հանգամանքը, որ դուրսը չարամիտ մարդիկ կա-
րող էին մեկնել այնպէս, որ, իբր թէ, ինքն է անցկացրել իր թեկ-
նածությունը: Եւ մեծ դժուարությամբ համաձայնուեց:

Բաւական դժուար եղաւ եւ պաշտօնի ընտրությունը: Կառա-
վարություն կազմելը յանձնուել էր Ե. Գէղէչկորիին, որ միա-
ժամանակ պիտի վարէր եւ արտաքին գործերը. զինուորական
գործերը պիտի ստանձնէր մի ռուս, ներքին գործերը՝ տրւում
էին վրացու: Մնում էր ընտրություն կատարել միւսների մէջ:
Ազրբէջանցիք պահանջում էին հաղորդակցության միջոցների
կամ ֆինանսների ու խնամատարության կոմիսարությունները:
Հայերի համար առաջնակարգ կարեւորություն ունէր խնամա-
տարության գործը, որովհետեւ հայ դաղթականությունը ամե-
նից աւելի կարիք ունէր նպաստի, եւ այս կէտում Խաչիկի տեսա-
կէտը պարզ էր: Բաւական դժուար եղաւ, սակայն, երկրորդ տե-
ղի ընտրությունը. Խաչիկը պնդում էր առեւտրական գործավա-
րության վրայ՝ նկատելով, որ առեւտրական գործը ամենից ա-
ւելի զարգացած է հայերի մէջ: Ի վերջոյ, որոշուեց պահանջել
խնամատարության եւ ֆինանսների կոմիսարության պաշտօնը:
Ազրբէջանցիք տեղի տուին, եւ Անդրկովկասեան Կոմիսարիատի

մէջ Դաշնակցութեան կողմից մտան Ա. Կարճիկանն ու Համօ Օ-հանջանեանը։ Վերջինիս բացակայութեան ժամանակ (մեկնել էր Սահմանադիր Ժողովին մասնակցելու), գործերը վարում էր ընկ. Կորիւն Ղազազեանը։

Կարճիկեանն էր, որ իբրեւ Ֆինանսների կոմիսար, մտցրեց անդրկովկասեան դրամանիշները (բոները) եւ, առհասարակ, ձեռընհասօրէն վարեց ֆինանսական գործը։ Հետզհետէ կառավարութեան մէջ էլ ձեռք բերեց աղդեցիկ դիրք ու նշանակութիւն։ Ու այնուհետեւ դարձաւ Կոմիսարիատի, յետոյ Սէյմի գլխաւոր ղեկավար ուժերից մէկը։ Հայ ժողովրդի մասնակցութիւնը համապետական գործերին նա դրեց վայելուչ բարձրութեան վրայ, եւ մեղքը նրանը չէր, ի հարկէ, որ դէպքերի տարերային ընթացքը մեր երկիրն ու ժողովրդին անջատեց եւ առանձնացրեց համակովկասեան կեանքից։

Կառավարութեան մէջ եւ Սէյմում Կարճիկեանը հանդէս եկաւ իբրեւ հեռատես ու հմուտ պետական գործիչ։ Նրա բնաւորութեան գլխաւոր դիծն էր տակտն ու չափի զիտակցութիւնը։ Նա ունէր հաւասարակշռուած միտք եւ ուժեղ կամք։ Պետականութեան դաղափարն եւ օրէնքի յարդանքը նրա համար դատարկ ու սին խօսքեր չէին։ Կովկասեան ժողովուրդների համակեցութեան մասին ունէր յստակ ու որոշ տեսակէտ — շահերի համաձայնեցումը փոխադարձ զիջումներով եւ ներդաշնակ միութեան ստեղծումը։ Կովկասի ժողովուրդների կեանքը կապուած է իրար հետ հազար ու մի թելերով, եւ մարդկային առողջ բանականութիւնը պէտք է ստիպէր դտնելու կենակցութեան այնպիսի ձեւեր, որոնք բոլորի համար էլ կարողանային ապահովել առաւելագոյն բարիք։

Ինչպիսի՜ յուզումով խօսում էր Կարճիկեանը Սէյմի ամբիոնից Երեւանի նահանգում սկսուած աղդամիջեան ընդհարումների առթիւ, ինչպիսի՜ ցաւում կար նրա խօսքերի մէջ ա՛յն մարդկանց հասցէին, որոնք հրահրում էին այդ ընդհարումները. «փոթորիկ մի՛ հանէք հրդեհի ժամանակ։ Այստեղ չպէ՛տք է կորցնենք մեր սառնասրտութիւնը։ Այս ահաւոր վայրկեանին, երբ մենք կանգնած ենք անդունդի ծայրին, քաղաքական մարմինը իրաւունք չունի կորցնելու իր պաղարիւնութիւնը եւ միմեանց դէմ մեղադրականներ յօրինելով զբաղուելու։ Մեզանից իւրաքանչիւրը պատասխանատու է ո՛չ միայն ի՛ր համար, այլեւ հայերի, մահմետականների, վրացիների — մենք պատասխանատու ենք ամբողջ աղդաբնակութեան համար։ Մենք չպէ՛տք է դուրս գանք, իբրեւ կողմեր միմեանց մեղադրելու նպատակով. մենք պարտաւոր ենք հանդէս դալ, իբրեւ դաղափարական քաղաքական մի մարմին, որն այս յուզումնալից վայրկեանին կոչուած է փրկե-

լու երկի՛րը։ Ես կոչ եմ անում ձեզ սառնասրտութեան եւ պարտաճանաչութեան»*)։

Պետական մարդն էր խօսում, բայց ժամանակները պետական չէին։ Խելացնոր բազմութիւնները ծառացել էին մէկ-մէկի դէմ եւ յօշոտում էին միմեանց։ Անհրաժեշտ էր ուժին ոյժ հակադրել, պաշտպանուել արտաքին ու ներքին դաւերից եւ յարձակումներից։ Եւ Կարճիկեանը մէկն էր նրանցից, որոնց համար պետականութեան գաղափարը միայն սրտազեղ քարոզների նիւթ չէր, այլ նախ եւ առաջ՝ ոյժ ու զոհեր պահանջող գործ։ Նա շատ լաւ տեսնում էր, թէ ինչ է կատարւում շուրջը, թէ ինչպէ՛ս Թուրք ու վրացի ազգայնականները փորում են այդ պետականութեան հիմքը՝ ջանալով արագացնել Կովկասի միութեան քայքայումը, բայց նոյն այդ միութիւնը Կարճիկեանի համար հրամայական անհրաժեշտութիւն էր ո՛չ միայն հայ ժողովրդի, այլեւ բովանդակ կովկասցիների ապահովութեան եւ բարգաւաճման համար։ Կարճիկեանի համար ո՛չ միայն ազգային աղէտ էր, այլեւ անձնական ողբերգութիւն այն փլուզումը, որ տեղի ունեցաւ Կովկասում 1918-ի գարնանը, Բրեստ-Լիտովսկի դաշնագրից յետոյ։

Պատկերացնենք մի պահ այն սարսափելի օրերը.— Վէհիբ փաշայի զօրքերը գրաւել էին Երզնկան ու Կարինը եւ ամէն կողմ աւեր ու հրդեհ սփռելով՝ շարժւում էին դէպի Կովկաս, դէպի ամբողջ աշխարհից կտրուած մեր հայրենիքը՝ պահանջելով Բրեստ-Լիտովսկի դաշնագրի պայմանների իրագործումը։ Սէյմի պատուիրակութիւնը Տրապիզոնում՝ պառակտուած ինքն իր մէջ՝ համամիտ էր Թուրքերին յանձնելու Կարսն ու Արտահանը՝ պահելով միայն Բաթումը։ Պատուիրակութեան նախագահ Զիմէնկէլին հեռագրում էր. «Սէյմը պարտաւոր է վճռական կերպով հարց դնել, թէ արդեօք կարո՞ղ է զէնքի ուժով պաշտպանել Բաթումը, Արտահանն ու Կարսը... Ես հաւատացած եմ, որ Թուրքերը Բաթումն էլ չեն զիջի։ Վէհիբ փաշան կտրական կերպով ասաց այդ։ Բայց տարբերութիւնն այն է, որ նրանք դէթ սակարկում են Բաթումի համար։ Իսկ ինչ վերաբերում է Կարսին, ո՛չ մի հնարաւորութիւն չկայ պահել նրան դիւանագիտական ճանապարհով. Թուրքերն ուղղակի չեն ուզում խօսել նրա մասին»։

Կարճիկեանն այդ ժամանակ Ալեքսանդրապոլում էր, ուր գումարուած էր Ազգային Խորհրդի ուժեղացուած կազմի ժողովը։ Մարտ 30-ի առ. ժամը 3-ին, ամբողջ գիշեր Ազգ. Խորհրդի յուզումնալից նիստին մասնակցելուց յետոյ, նա գնաց ուղիղ հե-

---

*) Անդրկովկասեան Սէյմի արձանագրութիւններ. 8-րդ նիստ։

ռադրաթելի մօտ եւ հեռագրեց Թիֆլիս. «Զխէնկէլիի առաջարկը անընդունելի է ըստ էութեան: Գործելակերպի տեսակէտից մեծ սխալ կը լինի, տրուած վերջնագիրից յետոյ, սակարկութիւն անել՝ առաջուց համոզուած լինելով, որ այդ դիմումն էլ չի գոհացնելու Թուրքերին: Ընդհակառակը, վերջնագրի կտրուկ մերժումը ցոյց կը տայ Թուրքերին, որ մենք ո՛չ միայն կամենում ենք, այլեւ կարող ենք պաշտպանել մեր դիրքերը եւ հենց դրանով էլ, դուցէ, կը կարողանանք ստիպել Թուրքերին, որ աւելի գիջող լինեն»... Եւ նոյն օրը հեռագրեց կոմիսարութեան նախագահ Գէգէչկորիին, որ եթէ Զխէնկէլիի առաջարկն ընդունուի, ինքը եւ իր ընկերները դուրս կը գան կառավարութիւնից:

Մի քանի օրից յետոյ, Ալեքսանդրապոլ հասան Տրապիզոնի պատգամաւորութեան հայ անդամները: Քաջազնունին ներկայացրեց մի ընդարձակ զեկուցում, ուր իրեն յատուկ տրամաբանական բանավարութիւններով՝ ապացուցանում էր հաշտութիւն կնքելու անհրաժեշտութիւնը, թէկուզ Բրեստ-Լիտովսկի սահմաններով: Նրան համակարծիք էին եւ սոցիա-դէմոկրատներն ու ժողովրդականները: Թւում էր, թէ հաշտութիւն կնքելուց զատ ուրիշ ելք չէր մնում. Թուրքերը մի կողմից արդէն Կարսի տակն էին, միւս կողմից գրաւել էին Բաթումը եւ առաջ էին շարժւում երկաթուղագծով: Կովկասեան թաթարները դէմ էին պատերազմին եւ ուրախանում էին Թուրքերի յաղթութիւններով: Վրացիները թէեւ ռազմաշունչ ճառեր շատ էին խօսում, բայց փաստօրէն չէին կռւում: Ռուսներ չկային: Հայերս մնացել էինք մենակ. ի՞նչ կարող էինք անել մենք Թուրքերի հետ:

Ընդհանուր տրամադրութիւնը, սակայն, պատերազմը շարունակելու կողմն էր: Եւ Կարճիկեանը, որ կառավարական գործերով հարկադրուած մեկնել էր Թիֆլիս, իր դրաւոր զեկուցումով եւ ուղիղ հեռագրաթելերով ուղարկած կարծիքներով՝ մաքառում էր Բրեստ-Լիտովսկի պայմաններն ընդունելու դէմ: Եւ նաեւ նրա առարկութիւնների հետեւանքով էր, որ Ալեքսանդրապոլում կարելի չեղաւ վերջնական եզրակացութեան յանգել, եւ Ազգ. Խորհուրդը Թիֆլիսում միայն, երբ պարզուեց, որ աղրբէջանցիներից յետոյ վրացիներն էլ ընդունել են Զխէնկէլիի տեսակէտը, որոշում կայացրեց կանգնելու Բրեստ-Լիտովսկի պայմանների վրայ: Կարճիկեանը բողոքեց դրա դէմ վրդովուած ու հրաժարուեց Ազգ. Խորհրդի փոխ-նախագահի պաշտօնից: Նա չէր կարողանում ըմբռնել այդ, չէր ուզում հաշտուել գիջման քաղաքականութեան հետ, որովհետեւ ո՛չ մի հաւատ չունէր դէպի Թուրքերը. քանի որ մահը անխուսափելի է, աւելի լաւ է պատուով մեռնել — այս էր նրա սկզբունքը: Պետական մարդը նրա մէջ այդ

պահուն կռուում էր յեղափոխականի հետ. յաղթութիւնը մնաց վերջինին...

Քիչ յետոյ, Կարճիկեանը հեռացաւ եւ Կոմիսարիատից։ Գէ-դէչկորիի «պատերազմասէր» կառավարութեան յաջորդեց Զիէն-կէլիի «հաշտարար» կառավարութիւնը, որ իր կեանքը սկսեց Կարսի ողբերգական յանձնումով։ Կարճիկեանը ծայր աստիճանի ընկճուած էր։ Ապրում էր հոգեկան սուր ճգնաժամ։ Տանջւում էր անսահման։ Նա տեսնում էր փլուզումը իր բոլոր յոյսերի։ Ի՞նչ էր սպասում — ինչ դուրս եկաւ։ «Առաջին խնդիրը, ասում էր նա իր Յունիս 17-ի զեկուցման մէջ, որ դրել էր կուսակցութիւնը, այդ էր՝ դուրս բերել հայ դէմոկրատիային այն կդզիացումից, որի մէջ դրուել էր նա հին ռէժիմի ժամանակ»։ Այդ ձգտումով նա ստիպուած էր մտնել Կովկասեան Սէյմի մէջ եւ հաշտուել Սէյմի հետ, սկսել աղատ բանակցութիւններ Տաճկաստանի հետ՝ նախ զինադադարի եւ ապա խաղաղութեան վերաբերմամբ, ենթարկուել Թուրք եւ վրացական դէմոկրատիայի ցանկութեանը Կովկասը անկախ յայտարարելու... Մասնաւորապէս, Դաշնակցութիւնը ձգտեց վերացնել այն պատնէշը, որ կար հայ դէմոկրատիայի եւ ազրբէջանցի Թրքութեան միջեւ եւ անմիջական շփման մէջ մտնել վերջինի հետ ու վերացնել այն միջնորդի դերը, որ ստանձնել էր վրաց Սոցիալ-Դէմոկրատիան, որի շնորհիւ այդ անջրպետը աւելի էր խորանում...

Կարճիկեանը խօսում էր Դաշնակցութեան անունից, բայց այդ տեսակէտները, աւելի շուտ, իր անձնական ցանկութիւններն էին, ա՛յն ուղին, որով ինքն էր գնում, իր քաղաքական դաւանանքը։ Այդ դաւանանքի համար էր տքնել ու պայքարել նա։ Եւ իր այդ դաղափարների պատճառով վաստակեց մոլեռանդ հակառակորդներ հէնց իր ընկերների շարքերում։ Նրան համարում էին կուրօրէն վրաց մենշեւիկների յետեւից գնացող, հայկական շահերը վրաց շահերին ստորադասող. նրան մեղադրում էին — տգիտութեամբ կամ չարամտօրէն, — որ դործիք է եղել Կարսի յանձման խնդրում.— մի ստայօդ բանսարկութիւն, որ եւ պատճառ եղաւ նրա մահուան։ Սակայն, չարաչար սխալւում էին այդպէս մտածողները։ Փաստերը մէջտեղն են. Կարճիկեանը ո՛չ մի բաժին չունէր Կարսի յանձնման խնդրում։ Նա որեւէ կերպով չի ծառայել եւ վրացական առանձին շահերին, այն էլ ի վնաս սեփական ժողովրդի։ Այսպէս կարող էին մտածել կրքից կուրացած եւ կատաղուող դէպքերի մէջ դլուխ կորցրած մարդիկ։ Ընդհակառակը, Կարճիկեանն իր հմուտ վարուեցողութեան եւ ուժեղ կամքի շնորհիւ՝ ինքն էր ազդում, յաճախ, կառավարութեան եւ, մասնաւորապէս, նախագահի վրայ։ Կարճիկեանի քաղաքակա-

նութեան արդիւնք էր Սէյմի որոշումը՝ ճակատն ամրացնելու եւ Թուրքերի Տրապիզոնի պայմանները մերժելու ու պատերազմը շարունակելու մասին։ Եւ մեղքը նրանը չէր, որ կովկասեան ժողովուրդների քաղաքական եւ զինուորական հասողութիւնն այն ժամանակ ա՛յդքան էր։

«Դուրս բերել հայ դէմոկրատիան կղզիացումից» — Կարճիկեանի կեանքի նպատակն էր այդ։ Եւ նա սեփական աչքերով տեսաւ այդ նպատակի խորտակումը։ Ի՞նչ վիշտ, հոգեկան ի՞նչ խորը տառապանք կար իր զեկուցման մէջ, Յունիս 17-ին, ընկերական լայն ժողովում, ուր նա ասում էր՝ «Մերձեցնել երկու դէմոկրատիաներին չյաջողուեց չնորհիւ այն դլխաւոր պատճառի, որ հայութիւնը գտնուում էր պատերազմի մէջ եւ կատաղի կռիւ էր մղում Տաճկաստանի դէմ, իսկ Թուրք զանգուածը, տաճկական ու բէգական քարոզչութեան հետեւանքով, ձգտում էր դէպի Տաճկաստան։ Նպատակների հակադրութիւնը եւ պատերազմը անհնարին դարձրին մերձեցումը։ Այլ էր Թուրք զանգուածի վերաբերմունքը դէպի վրացիութիւնը, որովհետեւ վերջինը կրաւորական էր պատերազմի մէջ փաստօրէն եւ ճիդ գործ չէր դնում երկրի դիմադրութիւնը կազմակերպելու»*)։Այսպէս, նպատակների եւ օրիէնտացիաների տարբերութիւնը քանդեց-կործանեց Կովկասի միութիւնը եւ սաստկացրեց թշնամանքն ու փոխադարձ յօշոտումը կովկասեան ժողովուրդների միջեւ։

Կովկասեան միութեան քայքայումից յետոյ, Կարճիկեանի համար հայ ժողովրդի վարելիք քաղաքականութիւնը պատկերանում էր հետեւեալ ձեւով. ««Վրաստանում, Ազրբէջանում պաշտպանել հայութեան, իբրեւ ազգային փոքրամասնութեան, քաղաքական իրաւունքները եւ սանձահարել տիրող ազգերի շովէն ու իմպէրիալիստական ձգտումները։ Այդ պետութիւնների մէջ ձգտել մէկ ընդհանուր պետական-դէմոկրատական ճակատ պահպանել»։ Հայաստանի նկատմամբ՝ աշխատել ստեղծել դէմոկրատական պետական հաստատուն հիմքեր, զսպել տարամերժ հակապետական ուժերը, սանձել շովէն ազգայնականներին, որոնք ճնշում էին բանեցնում ոչ-հայ տարրի վրայ, համերաշխութիւն, համակեցութիւն հաստատել հարեւանների հետ եւ ջանալ երկիրը դուրս բերել քառասային վիճակից։ Հայաստանը նրա համար այն կենտրոնն էր, որի մէջ եւ որի շուրջ պիտի համախմբուէր հայ դէմոկրատիան։ Եւ, սակայն, Հայաստանը մենակ անզօր էր ապահովելու հայ դէմոկրատիայի խաղաղ եւ անկաշկանդ զարգացումը։ Դրա համար պէտք էր հասկացողութեան լեզու գտնել հա-

---

*) «Աշխատաւոր», 1918 թ., 24 Նոյեմբ.

բեւան ժողովուրդների հետ եւ ջանալ հիմքը դնել կովկասեան միութեան։ Անկախ Հայաստանը պէտք է լինէր մէկ օղակը կովկասեան հանրապետութիւնների շղթայի մէջ։

Գործնականում ինչպէ՞ս էր պատկերացնում նա այդ միութիւնը, ժամանակ ու հնարաւորութիւն չունեցաւ ձեւակերպելու։ Սակայն, նրա հիմնական միտքը պարզ էր. Անկախ Հայաստան որոշ կապերով միացած Կովկասի միւս անկախ հանրապետութիւնների հետ։ Այս գաղափարներով էլ գնաց Հայաստան եւ աշխատեց նորակազմ կառավարութեան մէջ։

Պէտք է ասել, որ վերին աստիճանի դժուարութեամբ ընդունեց նա իրեն առաջարկուած նախարարական պաշտօնը։ Տեղի տուեց միայն ընկերների խիստ ճնշման տակ։ Գործից խուսափող չէր ամենեւին, բայց զգում էր գալիք դժուարութիւնները։ Իբրեւ խորաթափանց մարդ՝ տեսնում էր նաեւ իր շուրջ եղած դժգոհութիւնները։ Պատմական փլուզումների օրերին միշտ քաւութեան նոխազներ են փնտրւում, եւ նրան վիճակուած էր նոխազի դերը։ Տեսնում էր այդ եւ ուզում էր իր ուժերը խնայել ուրիշ օրերի համար։ Ընկերները չհասկացան նրա այդ արդար ցանկութիւնը, կամ հասկացան ու չյարգեցին։ Կարճիկեանը նշանակուեց Հայաստանի անդրանիկ կառավարութեան ելեւմտական նախարար եւ գնաց Երեւան։

Եւ այստեղ նա դարձեալ ցոյց տուեց անսպառ եռանդ, կազմակերպչական ու վարչական բարձր կարողութիւն։ Ոչնչից ստեղծեց ելեւմտական նախարարութիւն։ Կարճ ժամանակում Խորհրդարանում անցկացրեց եւ գործադրութեան դրեց մի շարք կարեւոր օրէնքներ՝ հողային, հարկային դրութեան, բամբակի մենաշնորհի, քաղաքային անշարժ գոյքերի հարկի, պետական դանձարանների ու մաքսատների հիմնարկութեան, ակցիզի եւայլնի մասին։ Միաժամանակ գործօն մասնակցութիւն ունէր կառավարութեան ընդհանուր քաղաքականութեան եւ գործունէութեան մէջ, ի միջի այլոց, նաեւ նրա պնդումով էր, որ 1918-ի Հոկտեմբերին որոշուեց կառավարութիւնը վերակազմել կոալիցիոն հիմունքներով, եւ նոր կառավարութեան մէջ ստանձնեց խնամատարութեան նախարարութիւնը՝ ամենադժուարը այն ժամանակուայ պայմաններում։

Այստեղ էլ Կարճիկեանը երեւան բերեց իր կազմակերպչական շնորհքը՝ ձեռնարկելով խնամատարական գործի հիմնական վերակազմութեան։ Եւ, սակայն, գործի հէնց սկզբին զոհ գնաց անողոք դնդակի։ Երբ Նոյեմբ. 14-ին (1918 թ.) նստած աշխատում էր իր առանձնասենեակում, ներս է մտնում սպայ Եղոր Տէր-Մինասեանը եւ ատրճանակը ուղղելով նրան՝ սկսում է կրակել։

— Եղո՛ր, ի՞նչ ես անում... Լինում է Խաչիկի վերջին խօսքը։

Մի քանի բոպէ անցած, այլեւս չկար։

Եւ սարսափելին այն է, որ սպանողն էլ իր մօտիկ մարդն էր. գաղափարական եւ անձնական Դաշնակցական մարտիկ եւ Խաչիկի էլ անձնական ընկերը... Նա զոհ եղաւ այն օձի ֆչչոցների ու գաղտասուքների, որոնք լսւում էին Կարճիկեանի անուան շուրջը։ Դիւրագրգիռ ու մոլեռանդ, խելագարութեան աստիճան նուիրուած հայ ժողովրդին, որի ազատութեանը տուել էր իր ամբողջ կեանքը եւ որի թշուառութիւնից տանջւում էր չարաչար, Եղորը յաճախ էր լսել ամբաստանութիւններ Խաչիկի հասցէին, կրքոտ յարձակումներ անգամ ամենապատասխանատու ընկերների բերանից, եւ իր մէջ ստեղծուել էր այն համոզումը, թէ Կարճիկեանն էր բոլոր չարիքների աղբիւրը. նա էր յանձնել Կարսը, գործիք էր դարձել վրացիների ձեռքին։ Եւ որոշել էր վրէժ լուծել հայ ազգի կողմից. սպանել Կարճիկեանին, Զիխնկէլիին եւ ուրիշներին։

Առաջինը ընկաւ Կարճիկեանը։ Զոհ էր պէտք — ահա եւ զոհը։

Արդարներից ամենաարդարը...

ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

1940 թ., Դեկտ. 27-ին, տառապալից հիւանդութիւնից յետոյ, Փարիզում, իր վերջին շունչը փչեց Արշակ Ջամալեանը։

Բնատուր բարձր շնորհքներով օժտուած, բազմատաղանդ հայ մտաւորական էր Ջամալեանը։ Մարմնով բարեկազմ ու գրաւիչ, ճոխ ու մշակուած, գիտելիքների հարուստ պաշարով հմտացած, արթուն եւ աշխոյժ մտքի տէր, բնաւորութեամբ՝ շէն ու կենսուրախ, առինքնող ու դիւրահաղորդ՝ մտաւորականի օրինակելի տիպար էր նա։ Պերճախօս բեմբասաց, արուեստասէր, հանրային ու քաղաքական գործիչ, ճարտար հրապարակագիր ու սուր բանավիճող, դրագէտ, հմուտ տեսաբան ընկերային հարցերի, կազմակերպող ու խանդավառող ոգի — յաճախ չեն պատահում մեզ մօտ այսպիսի բազմակողմանի տաղանդով օժտուած անհատներ։ Եւ զարմանալի չէ, որ մինչեւ այսօր էլ մեր կեանքում ցաւագին կերպով զգացւում է Ջամալեանի կորուստը. նրա տեղը դեռ մնացել է բաց։

Արշակ Ջամալեանը, բուն անունով Իսահակեան, ծնուել էր

ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ

Գանձակում, 1882 թ. Սեպտ. 22-ին, ոսկերիչ-արհեստաւորի բարեկեցիկ մի ընտանիքում։ Նրա հօր անունը Ջամալ էր, եւ այդ անունով Արշակը հետագային դարձաւ Ջամալեան։

Իր նախնական կրթութիւնը ստացել էր ծննդավայրի ծխական, ապա ռուսական դպրոցներում։ 1897-ին նա ընդունուեց Էջմիածնի Գէորգեան ճեմարանի երրորդ դասարանը. 1901-ին աւարտեց ճեմարանի 6-րդ դասարանը եւ 1902-ին հեռացաւ առաջին լսարանից։

Գէորգեան ճեմարանը ժամանակի հայկական միակ բարձրագոյն վարժարանն էր։ Անունով հոգեւոր՝ փաստօրէն տալիս էր ընդհանուր կրթութիւն, խորունկ եւ բազմակողմանի ծանօթութիւն հայոց պատմութեան, լեզուի եւ մշակոյթի բոլոր ճիւղերի ու նաեւ հիմնական ազգային դաստիարակութիւն։ Եկեղեցու համար հոգեւորականներ պատրաստելուց աւելի՝ ճեմարանը արտադրում էր ուսուցիչներ, մտաւորական գործիչներ, գիտական-գրական եւ հանրային ասպարէզների համար հմուտ մշակներ։ Ո՛չ մի դպրոց հայութեան չի տուել այնքան մեծ թուով եւ բարձր կարողութեամբ ազգային գէմքեր, որքան Գէորգ Դ. Կաթողիկոսի ճեռակերտը։ Բաւական է յիշել միայն այնպիսի անուններ,

ինչպէս Աւ. Ահարոնեան, Լ. Շանթ, Ն. Աղբալեան, Մ. Աբեղեան, Աւ. Իսահակեան, Ա. Վռամեան, Կոմիտաս վարդապետ, Կար. եպ. Տէր-Մկրտչեան, Գարեգին Կաթ. Ցովսէփեան, Գէորգ Կաթող. Զէորէքչեան, փրոֆ. Ն. Ադոնց, Գ. Խաժակ, Դ. Դեմիրճան եւ բազում ուրիշներ, որոնք Գէորգեան Ճեմարանի մտաւոր աւազանում են մկրտուել:

Արշակ Զամալեանն եւս դաստիարակուեց եւ իր մտաւոր անհատականութիւնը մշակեց հոգեւոր այդ ակութում: Ճեմարանից նրան ճանաչողները կարող են վկայել, թէ նա աչքի ընկնող աշակերտ էր: Դասերի մէջ առաջիններից էր, ինչպէս եւ խաղերի ու աշակերտական ձեռնարկների մէջ: Զուարթ ու կենսուրախ՝ անզնահատելի ընկեր էր: Երբ պէտք էր լինում աշակերտների դատը պաշտպանել Ճեմարանի վարչութեան առջեւ, նրան էին, սովորաբար, առաջ մղում: Նա յաջողութեամբ մասնակցում էր դրպրոցական ներկայացումներին: Առանձնապէս յիշատակելի է նրա խաղը Գոգոլի «Քննիչ»ի քաղաքապետի աղջկայ դերում: Այն երանելի օրերին Ճեմարանի տղաներն էին կատարում նաեւ կանանց դերերը...

Ճեմարանի դռները թէեւ ամուր փակուած էին արտաքին աշխարհի առջեւ, բայց վանքի պարիսպները այնքան բարձր չէին, որ դրսի հովերը ներս չթափանցէին. աշակերտութիւնը ճարում եւ աղահօրէն կարդում էր արգելուած գրականութիւնը, մասնաւորապէս «Դրօշակ»ը: Ամէն դասարան գրեթէ ունէր իր ձեռագիր թերթը: Զամալեանը խմբագիր էր իրենց դասարանի «Նաւակ» թերթի, որ լաւագոյններից էր համարւում: Արշակը նաեւ քաջ հռետոր էր: Թարգմանչաց տօնի առթիւ, ճեմարանական հանդէսում, նրա խօսած մէկ փայլուն ճառը երկար ժամանակ խօսքի առարկայ էր աշակերտութեան մէջ:

Երբ 1902-ին Արշակը ձգեց Ճեմարանը, արդէն համոզումով Դաշնակցական էր: Գանձակում նա երեք տարի զբաղուեց Դաշնակցութեան կազմակերպական ու պրոպագանդի գործով եւ մեծ հմայք էր վայելում տեղական երիտասարդութեան մէջ: 1903-ին ձերբակալուեց եւ 7 ամիս պահուեց Գանձակի բանտում:

1905-ի ամառը Արշակը մեկնեց Գերմանիա ուսանելու համար եւ փայլուն յաջողութեամբ աւարտեց Բերլինի համալսարանի ընկերային գիտութիւնների բաժինը: Ուսանողութեան ընթացքին նա գործօն մասնակցութիւն ունեցաւ Հ. Յ. Դ. Եւրոպայի Ուսանողական Միութեան մէջ, կարելի է ասել՝ նրա ոգին էր: «Ուսանող» պարբերականի գլխաւոր խմբագիրներից էր: Հմտալից յօդուածներ էր գրում Արիսեան ծածկանունով, մեծ մասամբ, ընկերային-տեսական հարցերի մասին:

Դաշնակցութեան Զորբորդ Ընդհ. Ժողովին, 1907 թ., Վիեննայում, Զամալեանը պատգամաւոր էր Եւրոպայի ուսանողութեան կողմից։ Միհրանական եւ անջատական շարժման յուզումնալից օրերն էին։ Ռուսաստանի Դաշնակցական ուսանողութիւնն էլ վարակուած էր անջատական տրամադրութիւններով, եւ նրանց ներկայացուցիչ Աւ. Շահխաթունեանը նրանց մտքերի թարգմանն էր Ընդհ. Ժողովում։ Եւրոպայի ուսանողութիւնը աւելի չափաւոր էր։ Բացի Զամալեանից, Ընդհ. Ժողովին ներկայ էին եւ Գերմանիայի ուսանողներ Մարտ. Յարութիւնեանը եւ Երւ. Ֆրանգեանը նաեւ։ Սրանց, բայց, մանաւանդ, Զամալեանի թափած ջանքերով Ժողովին մասնակցող փոքրաթիւ անջատականները մնացին կուսակցութեան շարքերում։

Ընդհ. Ժողովից յետոյ, ինչպէս վկայում է Համօ Օհանջանեանը, Զամալեանը յանձնում է նրան մի ընդարձակ ուսումնասիրութիւն՝ Դաշնակցութեան տեսաբանութեան մասին, որ պիտի հրատարակուէր «Յառաջ» Մատենաշարի կողմից։ Խուզարկութեան ժամանակ, ժանտարմները գտնում են ընկ. Օհանջանեանի մօտ այդ ձեռագիրը, որ յետոյ, քննիչ Լըժինի կողմից թարգմանուել տրուեց ռուսերէնի եւ նիւթ ծառայեց Դաշնակցութեան դատավարութեան միջոցին, 1912-ին։ Ձեռագրի հայերէն բնագիրը այլեւս երեւան չեկաւ, բայց ռուսերէն բնագիրը տպուած է դատական գործի հատորներում եւ այսօր էլ դեռ չի կորցրել իր թարմութիւնը։

Համալսարանն աւարտելուց յետոյ, Զամալեանը հաստատուեց Թիֆլիսում, իբրեւ Ներսիսեան դպրոցի պատմութեան դասատու եւ «Հորիզոն» օրաթերթի խմբագիր Նիկ. Աղբալեանի եւ բժ. Ա. Ղազարեանի հետ։ Այդ պաշտօններում նա մնաց մինչեւ 1914 թ. աշունը։

Թիֆլիսում նրա առջեւ բացուեց գործունէութեան ընդարձակ ասպարէզ։ Դպրոցում նա սիրուած էր աշակերտութեան կողմից։ Իբրեւ խմբագիր՝ նրա առաջնորդողներն ու յօդուածները փնտրուում էին ընթերցողներից։ Միաժամանակ դասախօսութիւններ էր կարդում երիտասարդութեան եւ բանուորների համար, ինչպէս նաեւ գրական շրջանակներում։ Եռանդով մասնակցում էր գրական-հասարակական կեանքին։ Մասնակցեց Ընդհ. Ժողովին Կարինում եւ այդ առթիւ ճամբորդութիւն կատարեց Երկրի զանազան վայրերում, ու ծանօթացաւ ժողովրդի նիստ ու կացին։ Եւ 1912-ից սկսած Դաշնակցութեան ղեկավար դէմքերից մէկն էր Կովկասում։ 1914-ի Կարինի Ընդհ. Ժողովին թէեւ ներկայ չէր, բայց ընտրուեց Բիւրոյի Կովկասեան հատուածի անդամ Խ. Կարճիկեանի հետ միասին։

Կամաւորական շարժման հենց սկզբից Զամալեանը ձգեց դպրոցն ու խմբագրութիւնը եւ ամբողջապէս նուիրուեց կամաւորական գնդերի կազմակերպութեան գործին։ 1914-ի աշնան, մի խումբ աշակերտների եւ ուսանողների գլուխը անցած, որոնց մէջ էր եւ ապագայ Պոլիտ Բիւրոյի անդամ Անաստաս Միկոյեանը, նա անցաւ Պարսկաստան միանալու Անդրանիկի կամաւորական գնդին։

Նահանջից յետոյ, Արշակը այլեւս անհատական գրաղում չունեցաւ. ամբողջապէս նուիրուեց Դաշնակցութեան գործին։ Մասնաւորապէս, բուռն գործունէութիւն ցոյց տուեց ցարական իշխանութեան փլուզումից յետոյ, 1917-ին։ Նա օրուայ ժողովրդական դէմքն էր այդ օրերին, որպէս հռետոր հրապարակային ժողովներում, որպէս յեղափոխական մարմինների անդամ, որպէս բանուորական զանգուածների կազմակերպիչ ու ղեկավար, որպէս կուսակցութեան ներկայացուցիչ արտաքին յարաբերութիւնների մէջ։

Բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ, երբ Անդրկովկասը անջատուեց Խորհրդ. Ռուսաստանից, Զամալեանը Դաշնակցութեան ներկայացուցիչներից մէկն էր Անդրկովկասեան յեղափոխական-պետական մարմինների մէջ։ Նա պատուիրակ էր այն յանձնախմբի, որ յանուն Անդրկովկասեան իշխանութեան զինադադար կնքեց Թուրքերի հետ, Երզնկայում։

Հայաստանի անկախութեան հռչակումից յետոյ, Զամալեանը եղաւ Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ դեսպանը Վրաստանի կառավարութեան մօտ։ Միաժամանակ՝ Հայաստանի ներկայացուցիչ Կովկասի գերման հրամանատարութեան մօտ։

Ապա՝ Զամալեանը Երեւանում է. Խորհրդարանի անդամ, Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհ. ժողովի ազդեցիկ դէմքերից մէկը, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ եւ պետական ու քաղաքային զանազան պաշտօնների մէջ։ 1920, Մայիսին՝ կառավարութեան անդամ՝ հաղորդակցութեան նախարարի պաշտօնով։ Բոլշեւիկեան ապստամբութեան դէմ բուռն պայքար մղողներից մէկը։

Նոյն տարի, Օգոստ. 10-ին, Հայաստանի կառավարութեան յանձնարարութեամբ, Թիֆլիսում, զինադադար կնքեց Մոսկուայի ներկայացուցիչ Լբդրանի հետ՝ վերջ տալու համար կռիւներին Կարմիր Բանակի հետ Շարուր-Նախիջեւանի ուղղութեամբ։

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ Զամալեանը որոշ ժամանակ պահուած մնաց Երեւանում։ Ապա՝ գաղտնի անցաւ Թիֆլիս եւ այնտեղից՝ Պոլիս, ուր շարունակեց գործել, իբրեւ Դաշնակցութեան ղեկավար մարմնի անդամ։ 1921 թ. գարնան, որպէս Դաշնակցութեան պատուիրակութեան անդամ, բանակ-

ցութիւններ վարեց Լատուիայի մայրաքաղաք Ռիգայում Մոսկուայի պատուիրակութեան հետ, Փետրուարեան ապստամբութեան հետեւանքով ստեղծուած դրութիւնը կարգաւորելու եւ Ռուսաստանի ու Հայաստանի յարաբերութիւնները ճշդելու համար:

1923 թ. Վիեննայի Խորհրդաժողովից յետոյ՝ Զամալեանը անցաւ Ամերիկա գործիչի պաշտօնով, ուր մնաց մէկ տարի եւ եռանդուն գործունէութիւն ցոյց տուեց: Մասնաւորապէս մեծ եղաւ նրա դերը Հայ Կարմիր Խաչի վերակազմութեան գործում: Առհասարակ, Հայ Կարմիր Խաչը (ներկայիս Հայ Օգնութեան Միութիւնը) բոլոր երկրներում շատ բանով պարտական է Զամալեանին. նա անհատնում եռանդ ու սիրտ դրեց այս մեծարժէք կազմակերպութեան մէջ:

1925-ին Զամալեանը մասնակցեց Փարիզի Ընդհանուր ժողովին եւ նորից ընտրուեց Բիւրոյի անդամ: Միաժամանակ՝ Բիւրոյի կողմից նշանակուեց Ընկերվարական Միջազգայինի ներկայացուցիչ եւ, որպէս այդպիսին, գլխաւորեց Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորութիւնը Մարսէյլի Ընկերվարական Միջազգային Համագումարում: Այստեղ էր, որ Դաշնակցութիւնը առաջին անգամ դրեց քրտական հարցը ընկերվարական աշխարհի առջեւ:

Մինչեւ 1933 թ. Զամալեանը մնաց Բիւրոյի կազմի մէջ եւ գործօն մասնակցութիւն ունեցաւ կուսակցութեան ղեկավարութեան մէջ: 1925-ից սկսած անդամ էր նաեւ «Դրօշակ»ի խմբագրութեան եւ բազմաթիւ մեծարժէք յօդուածներ ունի նրա մէջ: Միաժամանակ աշխատակցում էր մեր կուսակցական մամուլին: Այդ տարիներին գրեց նաեւ մի քանի թատերախաղեր՝ «Տարերքի Ընդվզումը», «Նահապետ Նահապետեան», «Գծից Դուրս», որոնց մէջ արծարծում էր ընկերային եւ հոգեբանական հարցեր: «Հայրենիք» ամսագրում հրատարակեց մի շարք լուրջ ուսումնասիրութիւններ պատմական խնդիրների մասին, ինչպէս եւ մի կուռ պատասխան Յ. Քաջազնունիին, որոնք, դժբախտաբար, մեծ մասով մնացին անտարտ: Իր բնաւորութեան գծերից մէկն էլ այդ էր. արտակարգ եռանդով լծուել որեւէ աշխատանքի, առատ եւ անգնահատելի գործ կատարել եւ մէկ էլ, յանկարծ ձգել, յաճախ, առանց աւարտելու: Շատ անդամ մէկ շաբաթում նա ընդունակ էր այնքան գործ արտադրելու, որքան ուրիշը մէկ ամսում չէր կարող գլուխ բերել: Ուրիշ անդամ էլ՝ մէկ ամսում չէր կարող անել այն՝ ինչ որ սովորական մարդը մէկ շաբաթում կ'անէր:

1933-ից յետոյ, Զամալեանը ազատ գործիչ էր կուսակցու-

թեան տրամադրութեան տակ։ Զանազան յանձնարարութիւններով նա, յաճախ, ճամբորդում էր։ Լայն կապեր եւ ծանօթութիւններ ունէր հայ եւ օտար շրջանակների հետ։ Նրա միտքը առանձնապէս զբաղեցնում էր կովկասեան ժողովուրդների համերաշխութիւնը, յատկապէս հայ-վրացական յարաբերութիւնների բարելաւումը։ Այդ ուղղութեամբ նա անսպառ եռանդ թափեց եւ մեծ հմտութիւն երեւան բերեց։ Վրաց շրջաններում մեծ յարգանք եւ վստահութիւն էր վայելում։

Երկրորդ համաշխարհային պատերազմը Զամալեանի ծրագիրներն ու յոյսերն էլ խորտակեց։ Ճամբորդութեան ընթացքին, 1940 թ. Սեպտեմբերին, նա ծանր կերպով հիւանդացաւ։ Ինչպէս միշտ անփոյթ դէպի իր առողջութիւնը, այս անգամ էլ կարեւորութիւն չտուեց։ Հիւանդութիւնը բարդացաւ։ Թոքատապին չդիմացաւ նրա տկարացած մարմինը։ Եւ, Դեկտ. 27-ին ընդմիշտ հեռացաւ այս աշխարհից։

Նրա զաւակը, մասնաւոր մի նամակով, հետեւեալ կերպով է նկարագրում հօր վերջին վայրկեանները. «Մինչեւ վերջին վայրկեանները նա հարցումներ էր տալիս իր բոլոր ընկերների մասին՝ անհանգիստ նրանց վիճակով։ Իսկ երբ բժ. Յովսէփը (Տէր-Դաւթեան) խնդրում է, որ հանգիստ լինի եւ առայժմ իր առողջութեան մասին մտածէ, փորձում էր վեր կենալ եւ նորից գործի գնալ՝ մտահոգուած մեր ժողովրդի վիճակով։ Այդ մտահոգութիւնը նա պահեց մինչեւ վերջին ժամ։ Իր մասին ո՛չ մի խօսք, ո՛չ մի փափաք ամբողջ ծանր հիւանդութեան տեւողութեան ընթացքին։ Բոլորից էլ հրաժեշտ առաւ՝ ասելով, թէ միւս աշխարհում կը տեսնուենք։

«Ծնունդի գիշերը տաքութիւնը սաստիկ նեղեց նրան. չէր կարողանում շնչել։ Այդ գիշեր նա, զարմանալի յիշողութեամբ, առանց մէկ բառ սխալուելու, ծայրից-ծայր ամբողջութեամբ արտասանեց Յովհ. Թումանեանի Սասունցի Դաւիթ-ը»...

ԱՒԵՏԻՔ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ

1918. Հոկտ. 19-ին, Թիֆլիսում, Թոքատապից վախճանուեց Աւետիք Շահխաթունեանը, հայ մտաւորականութեան ընտիր ներկայացուցիչներից մէկը, որ հետզհետէ սկսում էր տիրական դէմք դառնալ ոչ միայն հայ, այլեւ համակովկասեան մտաւորա-

կանութեան մէջ, իբրեւ հմուտ մասնագէտ կովկասեան իրականութեան։

Աւ. Շահխաթունեանը ծնուել էր 1883 թ. Յունուար 12-ին, Սուրմալու գաւառի Իգդիր աւանում, ուր նրա հայրը գաւառապետի պաշտօն էր վարում։ Հինգ տարեկան հասակում հիւանդանալով թոքատապով՝ Աւետիքը ամբողջ կեանքում մնաց կուզ եւ առողջութեամբ՝ տկար։

Շէն, ամէն բարիքով լի էր Շահխաթունեանների տունը, ուր տիրողը հայկական ոգին էր։ Ուշիմ եւ աշխոյժ տղայ՝ Աւետիքը շրջապատուած էր ծնողական գուրգուրանքով։ Նախնական կրթութիւնը ստացաւ ընտանիքում մասնաւոր դասատուների եւ մօր խնամքի տակ։ 7–8 տարեկան հասակին արդէն կարդում էր Բաֆֆին։ «Սամուէլ»ը գրեթէ գոց գիտէր։

1893-ին Շահխաթունեան ընտանիքը հաստատւում է Երեւանում, եւ Աւետիքը մտնում է պետական Գիմնազիոն, որ աւարտում է 1904-ին՝ առաջին կարգի մրցանակով։ Դպրոցում եռանդուն մասնակցութիւն է ունենում աշակերտական խմբակներին, որոնց մէջ ղեկավար դիրք է գրաւում. նախագահ էր «Մայր Ամրի», որ միացնում էր բոլոր միւս խմբակները։

Գիմնազիոնը աւարտելուց յետոյ՝ մտնում է Կիեւի համալսարանը, որտեղից փոխադրւում է Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժինը։ Դեռ Երեւանից արդէն Հ. Յ. Դաշնակցութեան շարքերում էր։ Մոսկուայում էլ շարունակում է գործօն ու ղեկավար դեր կատարել ուսանողական եւ յեղափոխական շրջաններում։ Աշխատակցում է ռուս եւ հայ թերթերին՝ երեւան բերելով հասուն եւ զարգացած միտք եւ բաղմակողմնի ծանօթութիւն, մասնաւորապէս, կովկասեան հարցերին։ 1906–7 թուականների «երիտասարդ Դաշնակցական» խմբագրութիւններ ունէր եւ, որպէս այդպիսին, երիտասարդական թեւի ներկայացուցիչն էր Հ. Յ. Դ. Զորբորդ Ընդհ. Ժողովում։ Ժողովից յետոյ, սակայն, մնաց Դաշնակցութեան շարքերում։ Նոյն տարին, 1907-ին, «Յառաջ» մատենաշարի հրատարակութեամբ լոյս տեսաւ նրա «Ֆէտէրալիզմ եւ Դէմոկրատիզմ» գրքոյկը։

Հ. Յ. Դաշնակցութեան դէմ յարուցուած հալածանքների հետեւանքով, Շահխաթունեանը, 1909-ին, մի պահ թաղնուած մնաց Բաքւում. ապա, կեղծ անցագրով, վերադարձաւ Մոսկուա եւ աւարտական քննութիւն տուեց։ 1909-ի աշնան դրականութեան դասատու նշանակուեց Երեւանի թեմական դպրոցում։ Յաջորդ տարի Մարտին ձերբակալուեց եւ Օգոստոսին ազատ ձգուեց՝ արտասահման անցնելու պայմանով։ Երկու տարի Գերմա-

նիայում մնալուց յետոյ, 1912–ին վերադարձաւ Երեւան եւ կարճ ժամանակ փաստաբանութեամբ զբաղուելուց յետոյ, ուսուցչութեան կոչուեց Թեմական եւ Օրիորդաց Գայեանեան դպրոցներում: 1914–ին, վերջապէս, կառավարութիւնը արտօնեց նրան ապրելու Թիֆլիսում, ուր հաստատուեց, իբրեւ «Հորիզոն»ն խմբագրութեան անդամ:

Թիֆլիսում լայն ասպարէզ բացուեց Շահխանութեանի առջեւ, եւ նա շուտով առաջնակարգ տեղ գրաւեց հայկական եւ անդրկովկասեան գործերում. անդամ Հ.Յ.Դ. Բիւրոյի, խմբագիր «Հորիզոն»ի եւ ապա ռուսերէն «Մոլոտ» թերթի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ, Սահմ. Ժողովի ու Կովկասեան Սէյմի պատգամաւոր, երկրագործական գործավարի օգնական. գործօն անդամ կուսակցական, ազգային, անդրկովկասեան համագումարների, խորհրդաժողովների ու յանձնաժողովների, դասախօս եւ աշխատակից հայերէն ու ռուսերէն թերթերի:

Բայց Աւ. Շահխաթունեանի բուն կոչումը դիտնական հրապարակագրութիւնն էր: Նա գերազանցապէս տեսական միտք էր: Անդրկովկասի եւ հայ տնտեսական, ազգագրական ու վարչական գործերի ծանօթութեան տեսակէտից գրեթէ մրցակից չունէր: Նրա դրչի տակից դուրս են եկել մի շարք, մինչեւ այսօր էլ իրենց այժմէութիւնը չկորցրած, յօդուածներ: Նրան է պատկանում եւ ռուսերէն «Անդրկովկասի Վարչական Վերաբաժանումը» թանկարժէք աշխատութիւնը: Վերջապէս, նա է հեղինակն ու հիմնաւորողը Անդրկովկասի զեմստուոյական, ապա ազգային-քաղաքական սահմանագծման ծրագիրների:

Աւ. ահխաթունին մեռաւ, կարելի է ասել, իր դիտնական-հասարակական գործունէութեան սկզբին, առանց իրեն փոխարինող թողնելու:

Աւ. Շահխաթունեանի բնութագիրը անգերազանցելի վարպետութեամբ գծել է Նիկոլ Աղբալեանը իր հետեւեալ յօդուածով*):

ԱՒԵՏԻՔ ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ

Մի խոշոր գլուխ, որ հանգչում էր նեղ ու վտիտ ուսերի վրայ. չէկախառն չագանակ մազեր՝ գռուզ ու հիւթեղ, որ հաղիւ ամփոփւում էին գլխարկի տակ. ներհայեաց ու կայուն աչքեր ոսկրուտ ճակատի տակ, որոնց սքօղում էր ոսկեպատ ակնոցը. սառն ու չոր դիմագիծ, որ խստանում էր սեղմ շրթունքից. լարուն ու մանր քայլ, լրագիրների մի կոյտ ձեռքին ու գրպանում, մի կարճ ձեռնափայտ թեւիցը կախ,— նա անցնում էր ինքնամ-

*) «Հորիզոն», Թիֆլիս, 1918 թ., 27 Հոկտ.:

փոփ, փողոցի ժխորին անհաղորդ եւ թւում էր ոգեկան ուժերի շարժուն խտացում՝ պատկառանք ազդելով դիմացի մարդուն։

Բարոյական ու մտաւոր խոշոր ուժ կար ամբարուած այդ փոքրիկ մարմնի մէջ։ Լրջմիտ էր, խոհուն ու խելօք. մտերիմների շրջանակից դուրս՝ անհաղորդ ու զուսպ, մինչեւ իսկ անհրապոյր ու խիստ։ Նոյնն էր նաեւ մտերիմների հետ «պաշտօկան» ժամերին — ժողովներում — միշտ մտահոգ դրուած խընդրի յաջող քննութեամբ, նեարդօրէն հոգածու իր մտքերի յաղթանակին եւ վիճաբանութեան արդիւնաւէտ կարգի հետամուտ։

Աշխատանքը վերացաւ՝ նա դառնում էր հաճելի զրոյցընկեր, լուրջին խառնելով բանդէտ ու փորձ մարդու դաւառաբոյր սրամտութիւն եւ մի հայացի հեգնանք՝ բարեացակամ եւ անդիտաւոր։

Իր միտքը գաղափարների հետ գործ ունէր միայն, ինչպէս եւ իր զգացումը։ Իր զայրոյթը միշտ պոռթկում էր մտքերի, երբ՝ անձի դէմ, եւ մինչդեռ հակառակորդի գաղափարները հերքում էր ջղուտ ու հատու՝ հոգին մնում էր իր մրցորդին մտերիմ։ Թշնամիներ չունէր եւ չէր կարող վաստակել։ Իր տարամտութիւնը չէր իջնում կրքերի եւ գործի աշխարհը, որ դարբնում է անհաշտ ոսոխներ։ Գործնականի հակում նա չունէր։ Մտքերի եւ զգացումների ուղին շտկելով՝ կարծում էր գործնականի արատները դարմանել։

Թանձրացեալը, ընթացիկը նկատելու անկարող՝ կեանքը նրան պատկերանում էր իբր հանրային ուժերի մրցարան, ուր կանգնած են իրար դէմ տարբեր գաղափարներ ու միտումներ։ Պարզելով մրցորդ գաղափարների եւ միտումների բնոյթն ու արժէքը՝ նա կարծում էր, որ պարզել է կեանքի ընթացքը։ Տրամաբանականը թւում էր նրան իրաւացի եւ անհետեւողականը՝ դատապարտելի եւ ժխտելի։ Գրամարտի ընթացքում նա ջանում էր հակառակորդի դիրքին տիրանալ՝ սեղմելով նրան քայլ առ քայլ կուռ դատողութեանց աքցանով։ Մտքին տիրելով, գաղափարները հերքելով՝ նա համարում էր իր դատը շահած եւ թշնամուն յաղթահարած։ Կեանքի անբանաւոր (իռացիոնալ) ընթացքը անմատչելի եւ անհանդուրժելի էր նրան։ Նրա մտքի միջից դատողութիւններն անցնում էին խիտ շարքով, զինուորների պէս, տեղ չտալով ոչ մի պատկերի, ուստի իր ոճը անպարզ էր, մտալից ու ծանրընթաց եւ հազիւ ուրեք ջերմանում էր զայրոյթից կամ մեղմանում հեգնանքից։

Նրա միտքը գործում էր ընթացիկ կեանքի ժխորից վեր, թէեւ այդ կեանքից դրդուած։ Ապրելով գաղափարների եւ ոչ գործի աշխարհում, մտքերի եւ ոչ կրքերի մրցարանում՝ նրա սիրտը

մնացել էր մանկական եւ բնաւորութիւնը անաղարտ։ Ունկնդիրների, ընկերների եւ ընթերցողների մտքերը պարզելուն հետամուտ՝ նա միշտ մնաց ուսուցանող, բնաւ առաջնորդ։ Ուր պէտք էր ձեւակերպել մի խնդիր, պարզաբանել մի գաղափար, սահմանել մի կացութիւն, բանաձեւել մի վերաբերում — նա դառնում էր անհրաժեշտ։ Դրանով նա հանդիսանում էր իր կուսակցութեան մտածումի թարգմանիչը, նրա ծրագրի մեկնիչը, նրա ընթացքը գծողը։ Այս տեսակէտով, իբրեւ հանրային գործիչ, նրա արժէքը զուգահեռ էր իր կուսակցութեան արժէքին, եւ որքան Դաշնակցութիւնը հայ ճակատագրի վարիչն է եղած, այնքան խառն է այդ գործում Ա. Շահխաթունեանի մատը։

Իր հետաքրքրութիւնը սահմանափակ էր, բայց լուրջ ու խոր։ Իր «Անդրկովկասի Վարչական Վերաբաժանումը» գիրքը հմտալից մի աշխատանք է, շատ արժէքաւոր մեզ ու Կովկասի համար եւ անուշադիր չէր մնայ նաեւ ռուս հասարակութեան կողմից։ Գիրքը մատնանշում էր մի հասուն խելք, որ կարող է խօսել շատ աւելի կիրթ եւ պատրաստի հասարակութեան, քան մեր Կովկասի մտաւորական դասը։

Նա արդէն հեղինակութիւն էր կուսակցութեան մէջ տեսական խնդիրների ոլորտում եւ դառնում էր հեղինակութիւն նաեւ լայն հասարակութեան համար իբր Կովկասի հանգամանքներին հմուտ մի գիտուն։ Նոր միայն պիտի կարողանար խօսել տիրաբար ոչ միայն իր կուսակցութեան, այլեւ իր ազգին, երբ մահը վերջ տուաւ իր կեանքին։ Զարքաշ պայմանները թոյլ չտուին նրան շահեցնել այն գիտութիւնը, փորձն ու հմտութիւնը, որ ձեռք էր բերել ինքնուրոյն աշխատանքով, եւ Դաշնակցութիւնը զրկուեց առաջնակարգ մի ուժից, իսկ հայութիւնը՝ մի սրտացաւ ու հմուտ զաւակից։

Հայաստանի եւ հայ ժողովրդի ապագան — այս էր նրա կենտրոնական մտահոգութիւնը. ներկան քննում ու դատում էր այդ ապագայի նկատումով եւ այդ չափանիշով։ Մեր քաղաքական եւ հանրային շարժման իմաստը բանաձեւողներից մէկն էր նա, մեր հանրային կեանքի շաւղին մի ճրագ, որ հաղիւ սկսել էր լոյս արձակել, երբ մահուան հողմը հանգցրեց նրան։ Նրա մահից մի քանի օր առաջ դրախօսելով իր գիրքը՝ մենք ասում էինք. «Մեր քաղաքական ինքնագիտակցութիւնը շարունակում է աճել. Ա. Շահխաթունեանի գիրքը այդ գիտակցութեան զարգացման մի որոշ աստիճանն է ձեւակերպում եւ միաժամանակ ազդակ է դառնում նրա հետագայ զարգացման»։ Սրանով որոշւում է նրա տեղը մեր քաղաքական մտքի զարգացման պատմութեան մէջ։ Նա մի ալիքն էր այն հոսանքի, որ Մ. Նալբանդեանի օրերից Գ.

Արծրունու եւ Բաֆֆու վրայով Դաշնակցութեան միջով հասնում է մեզ։ Ու թէեւ Ա. Շահխաթունեանը չէ պատկանում գրականութեան, բայց մեր քաղաքական մտքի պատմութեան մէջ նա իր շատ որոշ ու պատուաւոր տեղն ունի։ Մահը չթողեց որ նա դրաւոր ձեւակերպում տայ տաճկապատկան Հայաստանի մասին, ինչպէս արել էր իր գրքով ռուսապատկան Հայաստանի վերաբերմամբ, բայց նրա մտքերը որոշ էին եւ իր կուսակցութեան միջոցով շրջանառութեան մէջ են մեր կեանքում եւ ազդում են մեր ճակատագրի վրայ։ Նրա հիմնական դաղափարները մարմին կ՚առնեն մեր աշխարհում եւ կը դառնան հայի քաղաքական մտածութեան տարերքը, որով եւ կ՚անմահանայ նրա անունը։ Մեր քաղաքական կեանքի զարգացման շաւիղն անցնում է Ա. Շահխաթունեանի դերեզմանի մօտով, եւ հետագայ ոչ մի պատմագիր չի կարող անտես առնել այդ դերեզմանը եւ նրա մէջ հանգչողին։

ՌԱՖԱՅԷԼ ԵՐԷՑԵԱՆ

Ռաֆայէլը ծնուած է Գաւաշի Բողոնիս գիւղի մէջ։ Քահանայի որդի էր եւ երեք տղաներէն միջնակը։ Պարզ գրագիտութիւն իր հօրմէն սորվելէն վերջ, կը մտնէ Աղթամարի դպրանոցը, ուր այդ ժամանակ կ՚ընդունուէին բացառապէս այնպիսիները, որոնք հետագային պիտի դառնային հոգեւորական։ Հայրը կը սիրուէր Աղթամարի կաթողիկոս Խաչատուրի կողմէ, այդ պատճառով ալ կը նշանակուի Ս. Թովմա վանքի վանահայր։

Ռաֆայէլը իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անցուց Աղթամարի եւ յիշեալ վանքի մէջ՝ ստանալով կրօնական կրթութիւն եւ դաստիարակութիւն կղերական միջավայրի մը մէջ։ Բայց, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, չարդարացուց իր վրայ դրուած յոյսերը։

Գաւաշի մէջ, այդ թուականներուն, 1903–1904–ին, յեղափոխութիւնը թէեւ ժողովրդական լայն զանգուածներու հետաքրքրութեան եւ ոգեւորութեան առարկայ չէր, բայց չէր կարելի ըսել, թէ քանի մը անհատներու շուրջ կը դառնար։ Կար ենթակոմիտէութիւն, որ նշան էր, թէ կար նաեւ կանոնաւոր կազմակերպութիւն, եւ արհամարելի թիւ չէին կազմեր շարքային կուսակցականները։ Գաւառի մէջ կային եռանդուն, բաւական եփուած, կուսակցական անցեալ ունեցող անդամներ ու գործիչներ, որոնք այլ շրջաններու մէջ ալ, ինչպէս նաեւ երկրէն դուրս եղած էին

Դաշնակցական շարքերու մէջ եւ մասնակցած նոյնիսկ յեղափոխական բոլոր գործերու, ինչպէս Խանասորի արշաւանքը։ Այս գործերը եւ անոնց հետ կապուած անունները, իր ժամանակին ու դեռ շատ յետոյ ալ, ոգեւորութիւն ու հմայք կը պարտադրէին շրջապատի վրայ՝ թէ՛ կուսակցականի եւ թէ՛ անկուսակցականի մէջ։ Հաւաքական եւ անձնական հերոսութիւնները միշտ եւ ամէն տեղ փառաբանուած եւ ընդօրինակութեան առարկայ են եղած արդէն։

Ռաֆայէլը, զանազան առիթներով չփում կ՚ունենայ ժամանակի գործիչ ընկերներու հետ եւ իր հոգին ու մտածումները կը կաղապարուին Դաշնակցական մթնոլորտին մէջ։

1904–ին ան արդէն ուսուցիչ էր Գաւաշի ամենաբազմամարդ գիւղերէն, Նոր Գիւղի մէջ։ Այս թուէն սկսեալ Լեռնապարի, ուրեմն եւ Գաւաշի կուսակցական գործունէութիւնը, ապրեցաւ վերելքի փայլուն շրջան մը։ Դաշնակցութիւնը կը դառնայ ուժեղ մաղնիս մը, որուն կը ձգուին բոլոր եռանդուն, գործունեայ եւ լրջմիտ մարդիկ, մանաւանդ երիտասարդութիւնը, որու մէջ ամենէն շատ յեղափոխական տարր կար։ Ռաֆայէլը մէկն էր վերջիններէն, որ փութաց արձանագրուիլ Դաշնակցութեան շարքերուն մէջ։

1905 թէ 1906–ին Ռաֆայէլը կը թողնէ իր ծննդավայրը ու կը մեկնի Կովկաս ուսումը շարունակելու նպատակով, բայց յեղափոխական խառնուածքը թոյլ չի տար իրեն երկար ժամանակ ընկեր դառնալու Ներսիսեան դպրոցի դրասեղաններուն. դուրսը կատարած յեղափոխական գործերուն համար, կասկածելի կը դառնայ կառավարութեան աչքին ու շատ չանցած ձերբակալուելով Մետեխի բանտը կը նետուի, ուր եւ կը քայքայուի անոր առողջութիւնը։ Դաշնակցութեան ձեռք առած միջոցներու շնորհիւ բանտէն կ՚ազատուի եւ կ՚ուղարկուի Բագու, ուր իբրեւ քարոզիչ ու կազմակերպիչ կը գործէ բանուորներու մէջ։

1910 թուականը Աղթամարի թեմի կրթական տեսակէտէն նշանակալից է։ Ընդամէնը երկու տարի էր անցեր Սահմանադրութեան հռչակման օրէն, բայց հայ ժողովուրդը նիւթապէս շատ խոշոր փոփոխութեան էր ենթարկուած։ Քրտական ալան–թալանը եւ կառավարութեան անօրինակ ու անհարկի տուրքերն ու պահանջները չափով մը վերջ էին գտած։ Հայ ժողովուրդը իր անհատնելի կորովն ու եռանդը անվերապահօրէն գործի դրած էր։ Կրթական վիճակն ալ համընթաց կ՚երթար տնտեսականին։ Եւ ահա թեմի երեսփոխանական ժողովի որոշումով կը փակուի թեմի կեդրոնական դպրոցը Աղթամարի մէջ եւ բիւտճէով կ՚որոշուի,

անոր դրամով տարրական դպրոցներ բանալ գաւառի մէջ։ Առաջին ուսումնական տարին (1910–1911) իսկ թեմը կը համբէր 56 տարրական դպրոց։

Այդ թուին Կովկասէն իր ծննդավայրն էր վերադարձեր Ռաֆայէլը։ Ուսումնական ժողովը կը հրաւիրէ զինքը թեմական տեսուչութեան։ Պաշտօն ստանձնելէն անմիջապէս յետոյ ան կը շրջի իրեն վստահուած բոլոր գաւառները, կ՚այցելէ գրեթէ բոլոր գիւղերն եւ մօտիկէն կը ծանօթանայ ժողովրդի տնտեսական վիճակին։ Ապա տեղական մտաւորական եւ կուսակցական ուժերու հետ համախորհուրդ յարմար դատուած գիւղերու մէջ կը բանայ դպրոցներ, որոնց ծախքը մաս մը Աղթամարը պիտի հոգար, իսկ մնացածը՝ գիւղը, համաձայն իր նիւթական կարողութեան։

Ռաֆայէլը, իր կարճատեւ տեսչութեան ընթացքին, կրցաւ կրթական գործը ժողովրդի բոլոր խաւերու համար հետաքրքրութեան ու սիրոյ առարկայ դարձնել եւ ապահովել համաժողովրդական աջակցութիւնը։ Կարճ ժամանակի մը մէջ ան դարձաւ ժողովրդի սիրուած ու հեղինակաւոր գործիչը եւ Դաշնակցութեան ղեկավար դէմքը։

Ռաֆայէլը ոչ միայն կրթական գործը կը վարէր, իբր տեսուչ, այլ նաեւ կը ներկայացնէր կուսակցութիւնը այդ գաւառներու մէջ՝ յաչս կառավարութեան։ Իր հպարտ ու ինքնավստահ ընաւորութիւնը եւ ինքզինք իր դիրքի բարձրութեան վրայ պահելու կենցաղագիտութիւնը լայն ժողովրդականութիւն եւ հմայք ստեղծեցին անոր անձի շուրջ։ Այնպէս որ նշանաւոր աշիրաթապետներէն ոմանք անձկութեամբ կ՚ուզէին տեսնել զինքը եւ վայելել իր բարեկամութիւնը։ Այսպէս անգամ մը, Սպարկերտ գաւառի գիւղերէն մէկուն մէջ, երբ Ռաֆայէլ դպրոցական գործերու կարգադրութեամբ էր զբաղած, յայտնեցին թէ՝ Ալկանցի քիւրտ աշիրաթի ցեղապետը կ՚ուզէ զինքը տեսնել։ Անմիջապէս ճամբորդական հագուստները կը փոխէ քաղաքացիական մաքուր համազգեստով եւ շքախմբի մէջ առած քանի մը բարձրահասակ երիտասարդներ մաուզէրներով զինուած ինքը կ՚ընդունի ցեղապետը եւ տպաւորիչ տեսակցութիւն մը կ՚ունենայ հետը։

1912–13 ուսումնական տարեշրջանին, Ռաֆայէլը դուրս էր եկած իր սովորական պտոյտը կատարելու ու դպրոցական գործերը կարգի դնելու համար։ Մոկսէն պիտի անցնէր Մամբռանք եւ ապա Սպարկերտ գաւառները։ Մոկաց միւտիր Մուրթուլլահ պէկը խորհուրդ էր տուեր անոր չ՚անցնել Մամբռանք եւ նոյնիսկ վերադառնալ Աղթամար։ Պէկի ականջին հասեր էր Սայիտ Ալիի

որոշումը Ռաֆայէլը սպաննելու իրրեւ փոխվրէժ գործի մը, որ կատարեր էր Ռաֆայէլը տարի մը առաջ։

1911–12–ի իր տեսչական շրջագայութեան ժամանակ, Սպարկերտի Ներքին Հիւրինք գիւղին մէջ, Ռաֆայէլը կանչել տուեր էր Սայիտ Ալիի ազգական ականաւոր շէյխերէն մէկուն եւ ասեր էր մօտաւորապէս հետեւեալը։— «Գնա եւ ըսէ Սայիտ Ալիին, որ ձեռք քաշէ աւազակութիւններէն ու մարդասպանութիւններէն, որովհետեւ եթէ ան չհրաժարուի եւ շարունակէ նման գործեր, Դաշնակցութիւնը, որու անուամբ կը խօսիմ, հարկադրուած պիտի ըլլայ համապատասխան միջոցներու դիմել եւ արժանի դասը տալ անոր։ Ան պէտք է լաւ գիտնայ, որ մենք կարող ենք մէկի փոխարէն 10 սպաննել, բայց եթէ չենք ըներ, սոսկ անոր համար է, որ չենք ուզեր դարաւոր հարեւաններու յարաբերութիւնը վատթարացնել»։

Այս ազդարարութիւնը ժամանակին հասեր էր Սայիտ Ալիին ու անոր որոշումը տեղական ընկերներուն համար աւելի քան պարզ էր։ Ուստի անոնք նախազգուշական միջոցներ ձեռք առին ու զգուշացուցին Ռաֆայէլը։ Վերջինս ման եկաւ Սպարկերտ եւ Շէնձոր գաւառները, ապա անցաւ Կարկառ։ Գաւառի հոգին՝ Գալօն, կը բացակայէր։ Ռաֆայէլը կը հարկադրուի երկու անփորձ ուսուցիչներու հետ միայն Մկորէն մեկնիլ Խրորտենց գիւղը։ Ճամբան կ՚անցնէր ձորակի մը միջով, Կարկառ քիւրտ գիւղի կողքովը։ Ռաֆայէլ կը մօտենայ գիւղին, դիմացի մարգէն կ՚ենթարկուի համաղարկի մը։ Առաջին հարուածէն իսկ ծանր կը վիրաւորուի, վար կ՚ընկնի ձիէն ու հեղեղատի մը մէջէն կը սկսի կռուիլ քիւրտերու դէմ։ Շատ չանցած՝ կը ստանայ այլ վէրքեր ու կը մեռնի։ Ոճրագործները կը խոշտանգեն անոր մարմինը, կը հանեն աչքերը եւ կը կտրեն լեզուն Սայիտ Ալիին տանելու համար։

Սպաննութեան լուրը մէկ–երկու օրէն Գաւաշ եւ ապա Վան կը հասնի։ Կուսակցութիւնը կը խռովի։ Արամ անմիջապէս կը մեկնի դէպի ոճրատեղը, բայց մինչեւ անոր հասնիլը՝ Կարկառի եւ Գաւաշի ընկերները դիակը հասցուցեր էին Նարեկ գիւղը։ Այստեղ Արամ լացակումած ու յուզուած՝ վրէժաշունչ ճառ մը կը խօսի՝ երդուելով Ռաֆայէլի դիակի վրայ շուտով լուծել տալ անոր վրէժը։ Ռաֆայէլի լեզուն, ըսեր էր Արամ, Դաշնակցութեան լեզուն է եւ անոնք որ կը համարձակուին կտրել այդ լեզուն, պէտք է գիտնան, որ անպատիժ չեն կարող մնալ։

Սպաննութեան լուրը մէկ քանի օրուայ մէջ հասեր էր գաւառները եւ Մոկսէն մինչեւ Շէնձոր, Կարկառէն մինչեւ Հայոց Ձոր ժողովուրդը ամէն տեղ յուզուած ոտքի ելաւ բողոքելու կա–

տարած ոճիրին դէմ։ Դիակը հաղարաւորներու ընկերակցութեամբ փոխադրուեցաւ Վան եւ առաջին անգամ դրուեցաւ կուսակալի պալատին առջեւ։ Գաւառէն եկած ժողովրդի կողմէ մէկ քանի աչքառու մարդիկ ներկայացան վալիին և պահանջեցին կըտրուկ կերպով վերջ դնել այսպիսի գազանութիւններուն եւ պատժել յանցագործները։ Կուսակալը, չփոթուած ի տես այդ ծովածաւալ բազմութեան, կը ջանայ հանդարտացնել ժողովուրդը եւ կը խոստանայ կարճ ժամանակուայ ընթացքին խստիւ պատժել ոճրագործները։

Դիակը մէկ օր յետոյ տասնեակ հաղարաւոր բազմութեան ներկայութեամբ թաղուեցաւ Արարքի գերեզմանատան մէջ, հին հայդուկներուն կողքին։ Գերեզմանի վրայ խօսեցան Իշխանը, մէկ–երկու գաւառացիներ, ինչպէս նաեւ Վռամեանը՝ իր կրակոտ ճառերէն մէկը։

Շատ չանցած՝ Լեւոն Շաղոյեան իր խմբով լուծեց Ռաֆայէլի վրէժը՝ սպաննելով Կարկառ գիւղի նշանաւոր Հաջի Աղկուրը իր ընկերներով։ Այս յանդուգն գործը ահաբեկեց այդ շրջանի քրտութիւնը։ Այդ առթիւ յօրինուեցաւ քրտերէն երգ մը Շաղոյեանին նուիրուած։ Աղթամարի թեմի ժողովուրդն ալ իր խիզախ տեսչի յիշատակը անմահացուց երգով մը, որ կ'երգուէր այնքան յուզումով։

Ա. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԳԷՈՐԳ ԽԱՏԻՍԵԱՆ

1935 թուի սկիզբները, Մոսկուայից Կովկաս անցնելիս, երկաթուղային արկածի զոհ գնաց Դաշնակցական մտաւորականութեան ակնառուր ներկայացուցիչներից մէկը՝ Գէորգ Խատիսեանը։

Գէորգը Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Աղեքսանդր Խատիսեանի եղբայրն էր։ Ծնուած էր 1879 թ. Օգոստ. 31–ին, Թիֆլիսում։ Տարրական կրթութիւնը ստացել էր Տիկ. Սոֆիա Արղութեան–Երկայնաբազուկի յայտնի դպրոցում։ 1896–ին, ոսկի մէդալով, աւարտել էր Թիֆլիսի երրորդ Գիմնազիան եւ նոյն տարին մտել էր Մոսկուայի Գիւղատնտեսական ճեմարանը, որտեղ ուսել էին Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից շատերը, բայց մի տարի վերջը փոխադրուեց Մոսկուայի իրաւաբանական բաժինը։ Մարմնով դիւրաբեկ՝ չարաչար աշխատանքից հիւանդանալով 1899–ին՝ նա ստիպուած եղաւ մտնել գերմանա–

կան բուժաբաններից մէկը՝ Հռենոսի ափին։ Մէկ տարի յետոյ, ապաքինած, աւարտական քննութիւն տուեց Մոսկուայի համալսարանում, վերադարձաւ Թիֆլիս եւ նուիրուեց փաստաբանութեան՝ մասնագիտութիւն ընտրելով առաւելապէս հանրային-քաղաքական բնոյթ կրող դատերի պաշտպանութիւնը։

Շնորհիւ իր բաղմակողմանի զարգացման, ուղղամիտ եւ ազնիւ նկարագրի, դիւրահաղորդ ու չէն բնաւորութեան՝ Գիդան — այդպէս էին կոչում նրան ընկերական շրջանակում — շուտով աչքի զարնող տեղ գրաւեց Թիֆլիսի մտաւորական եւ հասարակական շրջաններում։ Հմտացաւ, մասնաւորապէս, Կովկասագիտութեան մէջ. հողային, տեղական ինքնավարութեան, ժողովրդական տնտեսութեան վերաբերող հարցերում նա անվիճելի հեղինակութիւն էր Ա. Սահակեանի, Յ. Փիրալեանի, Ա. Շահխաթունեանի, Ս. Կամսարականի հետ, որոնց հետ միասին մշակեց կովկասեան զէմստուոյի (տեղական ինքնավարութիւնների) օրէնքի հայկական նախագիծը, ինչպէս նաեւ, հետագային, Կովկասի վարչական վերաբաժանման ծրագիրը։

Իբրեւ հմուտ փաստաբան քաղաքական գործերի՝ Գիդան մասնակից էր գրեթէ բոլոր խոշոր Դաշնակցական դատերի պաշտպանութեան եւ այդ առթիւ, յաճախ, ճամբորդում էր Կովկասի քաղաքները՝ Բաղու, Երեւան, Գանձակ, Շուշի եւայլն։ Դատական գործերի հետ միասին նա ուսումնասիրում էր եւ երկրի պայմաններն ու ժողովրդի նիստ ու կացը։ Նաեւ զբաղւում էր Դաշնակցութեան վերաբերուող խնդիրներով։ Դաշնակցութեան մեծ դատավարութեան նիւթը, 1912-ին, պատրաստուեց Գ. Խատիսեանի, Յ. Կարճիկեանի եւ մի քանի ուրիշ իրաւաբանների ձեռքով։

Գ. Խատիսեանը մեծ եռանդով մասնակցում էր եւ հասարակական գործերում — դպրոցական հոգաբարձու, զանազան միութիւնների անդամ, թերթերի աշխատակից — եւ ամէն տեղ ցոյց էր տալիս հմտութիւն ու սրտցաւ վերաբերում դէպի ստանձնած պարտականութիւնները։ 1912-ին, իբրեւ Դաշնակցութեան թեկնածու, ընտրուեց Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ, 1914-ին, իբրեւ առեւտրական իրաւունքի հմուտ մասնագէտ, նշանակուեց Թիֆլիսի սակարանի քարտուղար։ Անդամ էր «Հորիզոն» օրաթերթի խմբագրական եւ հրատարակչական մարմինների։ Մօտիկ աշխատակից՝ Աղգ. Բիւրոյի, ապա՝ Աղգ. Խորհրդի։

Ցարական կառավարութեան անկումից յետոյ, 1917-ին, Գիդան, իր անձնական գործերը ձգած, ամբողջապէս նուիրուեց հասարակական գործունէութեան։ Որպէս Դաշնակցութեան ներկայացուցիչ, աշխատում էր Կովկասեան պետական-յեղափոխական մարմիններում՝ ամէն տեղ պաշտպանելով հայկական իրաւունք-

ԳԷՈՐԳ ԽԱՏԻՍԵԱՆ

ները։ Նրան առանձնապէս զբաղեցնում էր Կովկասի վարչական վերաբաժանման հարցը, ա՛յն ձեւով, որ հայկական շրջանները միացուին ազգային շրջանակի մէջ։ Այդ նպատակով նա գնաց Պետրոգրատ՝ մասնակցելու համար ներքին գործոց նախարարութեան կից կազմուած կովկասեան գործերի յանձնախմբի աշխատանքներին՝ վրացի եւ ազրբէջանցի ներկայացուցիչների հետ միասին։ Շնորհիւ անձնական բարեկամութեան Կերենսկիի հետ՝ նրան յաջողուեց մի շարք հարցերում անցկացնել հայկական տեսակէտը։

Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ, Գ. Խատիսեանը, իրաւագէտ-խորհրդականի պաշտօնով, անդամակցեց կառավարութեան կողմից Պոլիս ուղարկուած պատուիրակութեան Ա. Ահարոնեանի եւ Ա. Խատիսեանի հետ։ Դրանից առաջ, հայ-վրացական պատերազմի օրերին եւ նրանից յետոյ, մասնակցել էր հայկական իրաւունքները պաշտպանելու համար կատարուած բոլոր աշխատանքներին։ Ի միջի այլոց, Վ. Նաւա-

սարդեանի հետ կազմել էր ռուսերէն լեզուով մի գրքոյկ պարզաբանելու համար հայկական տեսակէտը հայ-վրացական բախումի մասին։

1919-ին Գիգան ընտանիքով փոխադրուեց Երեւան (ամուսնացած էր Ցոլհ. Թումանեանի աղջկայ հետ եւ ունէր մէկ մանչ զաւակ) եւ ստանձնեց կառավարութեան դիւանապետի պաշտօնը, որից հեռացաւ, երբ ընտրուեց Խորհրդարանի անդամ։ Ի միջի այլոց, նրա կազմածն է 1919 թ. Մայիս 28-ի «Միացեալ եւ Անկախ Հայաստանի» յայտարարութեան բնագիրը։

Խորհրդարանում Գիգան լայնօրէն օգտագործեց իր իրաւագիտական եւ տնտեսագիտական հմտութիւնը։ Կարելի է ասել, Խորհրդարանի Յանձնաժողովներում, նա ամենէն հեղինակաւոր պատգամաւորն էր իրաւական, տնտեսական, ազգագրական եւ միջազգային հարցերում։ Խորհրդարանի հաստատած օրէնքներից շատերի նախագծերը նրա պատրաստածն են։ Միեւնոյն ժամանակ եւ իրաւական խորհրդատու էր կառավարութեան, մասնաւորապէս կովկասեան խնդիրներում։

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ՝ Գիգան մնաց Երեւանում հայրենիքին ծառայելու դիտաւորութեամբ, բայց հայ բոլշեւիկները չկամեցան օգտուել նրա ուժերից։ Վրացիները աւելի լայնախոհ եւ իմաստուն գտնուեցան։ 1925-ին նրան իրաւագիտութեան դասախօսի պաշտօն տուին Թիֆլիսի համալսարանում, ապա նշանակեցին Պոլիտեխնիկումի տնտեսագիտութեան պրոֆէսոր։

1932-ին, Գիգան տեղափոխուեց Մոսկուա։ Իր կեանքի այս շրջանի մասին ոչինչ յայտնի չէ, դժբախտաբար։ Վերջին տեղեկութիւնը երկաթուղային արկածի եւ նրա մահուան լուրն է, Խարկովի մօտ, 1935-ին։

Բացառիկ անհատականութիւն էր Գէորգ Խատիսեանը թէ՛ իբրեւ մարդ եւ թէ որպէս հասարակական գործիչ։ Համեստ ու լրջամիտ, բայց եւ կենսուրախ, ընկերական կեանքում զուարճախօս ու ջերմ՝ Գիգան ամենալայն մտքով մտաւորական անձնաւորութիւն էր, դիտական խոր հմտութեամբ օժտուած, անհուն հաւատարմութեամբ նուիրուած հայ ժողովրդին ու Հայկական Դատին։ Նա դեռ շատ բան ունէր տալիք Հայաստանին եւ հայ ժողովրդին, բայց՝ «յիւրսն եկ, իւրքն զնա ոչ ընկալան» ...

ՄԻՀՐԱՆ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ

Հայ ազատագրական շարժման մատուցած ծառայութիւններով նշանաւոր Թէրլէմէզեան գերդաստանից էր Միհրանը՝ ծնուած 1883-ին, Վանում։

Նախնական կրթութիւնը ծննդավայրում ստանալուց յետոյ, Միհրանը մտաւ Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որի լսարանական բաժինը աւարտեց 1907-ին։

Ճեմարանի աչքի ընկնող աշակերտներից էր։ Շիկահեր, գեղեցկադէմ, առողջ ու շէնչող՝ նա առաջիններից էր թէ՛ դասերի եւ թէ խաղերի մէջ։ Իննհարիւր թուականների առաջին տասնամեակին, Խրիմեան Հայրիկի քաջալերանքով, ճեմարանում կային մօտ երկու տասնեակ վանեցի աշակերտներ, որոնք վայելում էին Հայրիկի հովանաւորութիւնը։ Դրանց մէջ էին Համազասպ Բաղէշցեանը, Մկրտիչ Մելքոնեանը (Գարմէն), Հայկակ Կոսոյեանը, Ղեւոնդ Մելոյեանը, ապագայ Լեո Կամսարը, Վաղէն Տէրոյեանի եղբայր Վարազդատը, Խոսրով Փախչանեանը, որի երաժշտական ընդունակութիւնների հետ առանձին յոյսեր էր կապում Կոմիտասը, Միհրանը եւ ուրիշներ։

Ճեմարանի աշակերտութիւնը այդ տարիներին համակուած էր յեղափոխական տրամադրութիւններով։ Հայդուկային շարժումները Երկրում, Սասունի ապստամբութիւնը, ընդվզումը ցարական բռնակալութեան դէմ եկեղեցական կալուածների գրաւման հետեւանքով, Սուլթանի մահափորձը, հայ-թաթարական կռիւները եւ, վերջապէս, Ռուսաստանի առաջին յեղափոխութիւնը ուժեղ արձագանգ էին գտնում եւ ճեմարանի աշակերտութեան մէջ, որ ճնշիչ մեծամասնութեամբ գտնւում էր Հ. Յ. Դաշնակցութեան ազդեցութեան տակ եւ զանազան առիթներով արտայայտում էր իր այդ տրամադրութիւնը։ Մասնաւորապէս 1905-6 թուականներին ճեմարանը թատերաբեմ էր աշակերտական ըմբոստ շարժումների։

Միհրանն եւս մասնակից էր այդ շարժումներին, բայց, առհասարակ, աչքի զարնող դեր չէր կատարում՝ իր ժամանակն ու ոյժը տրամադրելով աւելի դպրոցական պարապմունքներին։ Իբրեւ Դաշնակցական, նա աւելի գործօն դարձաւ Եւրոպայում, ուսանողութեան շրջանին։

1907-ին աւարտելով ճեմարանը՝ Միհրանը վերադարձաւ Վան, ուր ուսուցչութեան պաշտօն ստանձնեց Հայկազեան-Կենտրոնական եւ Սանդխտեան վարժարաններում՝ միաժամանակ ըզբաղուելով եւ կուսակցական-կազմակերպչական գործերով՝ Աբրամի եւ Կոմսի շնչի տակ։ Թէ՛ որպէս ուսուցիչ ու դասախօս եւ

թէ, իբրեւ կուսակցական գործիչ, Միհրանը կարճ ժամանակում ջերմ համակրանք եւ ազդեցութիւն ձեռք բերեց ընդհանուր հասարակութեան, բայց, մանաւանդ, երիտասարդութեան եւ աշխատաւորական խաւերի մէջ: 1908-ի գարնան, շատերի հետ նա էլ ձերբակալուեց եւ բանտից ազատ արձակուեց միայն Սահմանադրութեան հռչակումից յետոյ:

1909-ի ամառը Միհրանը մեկնեց Եւրոպա բարձրագոյն կրթութիւն ստանալու նպատակով: Իբրեւ Վասպուրականի պատգամաւոր մասնակցեց Հ. Յ. Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովին, Բուլգարիայում: Ապա անցաւ Գերմանիա, ուր մի տարի ենայի եւ երեք տարի Լայպցիգի համալսարաններում հետեւելով մանկավարժական եւ փիլիսոփայական գիտութիւնների՝ 1913-ին փայլուն յաջողութեամբ լրացրեց ուսման ընթացքը: Ուսանողական տարիներին նա գործօն մասնակցութիւն ունեցաւ Հ. Յ. Դ. Եւրոպայի Ուսանողական Միութեան կեանքին, Վահան Խորէնի հետ միասին, որի հետ դեռ ճեմարանից մտերիմ էր:

Գիտական հարուստ պաշարով զինուած՝ Միհրանը վերադարձաւ Վան եւ նշանակուեց Կենտրոնական Վարժարանի տեսուչ: Քաղցր եւ դիւրահաղորդ բնաւորութեան տէր, անսպառ եռանդով լի, բարեխիղճ իր պարտականութեանց մէջ՝ նա դարձաւ Վանի հեղինակաւոր դաստիարակներից մէկը՝ սիրուած անխտիր բոլորից:

Եռանդով ու խանդավառութեամբ Միհրանը նետուեց եւ Դաշնակցութեան գործի մէջ, իբրեւ երիտասարդութեան կազմակերպիչ ու դասախօս, աշխատակից «Աշխատանք» թերթի, անդամ կենտր. Կոմիտէի եւայլն: Եւ զարմանալի չէ, որ երբ 1914-ի ամառը, Կարինում, գումարուեց Հ. Յ. Դ. Ութերորդ Ընդհ. Ժողովը, Վանի Դաշնակցութիւնը Միհրանին ուղարկեց պատգամաւոր իր կողմից: Նա մենակ ներկայացնում էր Վասպուրականի շրջանը այդ Ժողովում:

Ընդհանուր Ժողովում Միհրանը երեւան եկաւ, իբրեւ պատրաստուած եւ հասուն գործիչ: Նա եռանդով ու ձեռնհասօրէն մասնակցեց Ժողովի աշխատանքներին եւ առանձնապէս արժանացաւ Ռոստոմի ուշադրութեան ու գնահատանքին, որ ինքնին արդէն մեծ արժանիք էր: Իր մտքերը առողջ էին եւ բխում էին Երկրի իրականութեան դիտակցութիւնից: Հակառակ իր երիտասարդութեան՝ նա զգոյշ ու չափաւոր էր քաղաքական հարցերում: Հակառակ էր ծայրայեղութիւնների՝ աջից կամ ձախից: Ռոստոմի պէս՝ կողմնակից էր ժամանակ շահելու քաղաքականութեան. խուսափել ցնցումներից եւ ջանալ, որ ժողովուրդը զարգանայ եւ ամրանայ մտաւորապէս ու տնտեսապէս: Այն կարծիքին էր, որ պետութեան հանդէպ պէտք է մնալ օրինապահ դիր-

քում եւ առիթ չտալ հալածանքների։ Համոզուած էր, որ 5–10 տարիների ընթացքում, մանաւանդ, եթէ իրականան բարենորոգումները, հայութիւնը կը վերածնուի մարմնով ու հոգեպէս եւ այլեւս կը դառնայ անխոցելի։

Դէպքերը, սակայն, տարբեր ընթացք ստացան։ Վրայ հասաւ համաշխարհային պատերազմի փոթորիկը, եւ բոլոր յոյսերը ի դերեւ ելան։

Պատերազմի յայտարարութիւնից յետոյ, Միհրանը ամէն հնարաւորութիւն ունէր վերադառնալու Վան, ինչպէս հեռացան Տարօնի, Սեբաստիոյ, Պոլսի եւ միւս վայրերի ներկայացուցիչները։ Նա, սակայն, մնաց Կարինում եւ զօրակոչի առաջին խակ հրաւէրին՝ փութաց արձանագրուել բանակի զինուոր։ Վանից պնդում էին, որ շտապէ վերադառնալ, բայց նա չէր համաձայնւում։ Կարինը դատարկւում էր կուսակցական ղեկավար ուժերից. կառավարութիւնը աշխատում էր զանազան պատրուակներով հեռացնել աչքի ընկնող գործիչներին՝ գլխատելու համար Դաշնակցութիւնը։ Այդպիսի պայմաններում Միհրանը դասալքութիւն էր համարում Կարինը թողնելը։ Եւ մնաց Կարինում, իբրեւ բուժակ զինուորական հիւանդանոցում։ Գերմաններէն լեզուի հմտութեան շնորհիւ նա կատարում էր եւ թարգմանի դեր գերման զինուորականների հետ։

Առաջին շրջանում՝ Միհրանը համեմատաբար ապահով էր եւ ժամանակ ու հնարաւորութիւն ունէր նաեւ կուսակցական գործերով զբաղուելու։ Մանաւանդ, Փիլոսի ձերբակալութիւնից յետոյ՝ նա դարձաւ կենտրոնական դէմք Կարինի Դաշնակցական կազմակերպութեան մէջ։ Նրա միջոցով էին կատարւում արտաքին յարաբերութիւնները Պոլսի, Վանի, Տարօնի եւ միւս շրջանների միջեւ։ Նա օրը օրին տեղեկութիւններ էր հաղորդում կուսակցական ղեկավար մարմիններին Կարինում եւ ուրիշ գաւառներում տեղի ունեցող դէպքերի մասին։ Այդ օրերին Միհրանին տեսնողները՝ հիացումով են խօսում նրա անձնուէր եւ անվախ գործունէութեան մասին։

Վանի ընկերները ջանք չխնայեցին վերադարձնելու Միհրանին Վան, բայց նա անյողդողդ մնաց իր որոշման վրայ, թէեւ դէպքերի ընթացքից չէր կարող չտեսնել, թէ ինչ է լինելու վախճանը։ Երբ ծայր տուեց հայերի տեղահանութեան ու բնաջնջումի եղեռնը, Միհրանը եղաւ առաջին զոհերից մէկը։ Ե՞րբ, ո՞ւր, ի՞նչ պայմաններում ոճրագործ ճիւաղները վերջ տուին նրա կեանքին, աղօտ լուրեր միայն հասան նրա ընկերներին։ Ստոյգը այն է, որ նա էլ նահատակուեց բազմահազար ուրիշ անմեղների հետ՝ հաւատարիմ Դաշնակցութեան դաւանած «մահ իմացեալ անմահութիւն է» բարձր սկզբունքին։

Ձախ՝ ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԻ — աջ՝ ՄԻՀՐԱՆ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ

ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԻ

1920 թ. Օգոստ. 2-ին, Զանգեզուրի կենտրոն Գորիսում. բանտի մէջ, բոլշեւիկները խուժադուժ մահով վերջ տուին 14 Դաշնակցական ընկերների կեանքին:

Սպանուածների մէջ էին եւ Հայաստանի Խորհրդարանի երկու անդամներ՝ Արշակ Շիրինեան եւ Վահան Խորէնի, երկուսն էլ զանգեզուրցի, որոնք Երեւանից մեկնել էին այն հաւատով, որ պիտի կարողանան ազդել Զանգեզուրին նոր տիրացած հայ բոլշեւիկների վրայ եւ փրկել գաւառը աւերից ու քայքայումից: Այդպէս էին մտածում, որովհետեւ Զանգեզուրը գրաւող հայ բոլշեւիկ ղեկավարներից շատերը ծանօթ էին նրանց, ոմանք նոյնիսկ մտերիմ ընկերներ եղած: Այդ հաւատն ունէին նաեւ այն պատճառով, որ իրենք էլ պատկանում էին Հ. Յ. Դաշնակցութեան ձախ թեւին եւ, ուրեմն, ենթադրում էին, թէ կարող են լեզու գտնել բոլշեւիկների հետ: Վերջիններս, սակայն, Պապից աւելի պապական, զնդակով եւ կացինով պատասխանեցին նրանց այդ լաւատեսութեան:

Հայ հասարակութեան վրայ առանձնապէս ցնցող տպաւորութիւն գործեց Վահան Խորէնիի սպանութիւնը: Եւ իրաւամբ. Խորէնին ժողովրդական լայն համակրանք վայելող եւ փայլուն ապագայ խոստացող երիտասարդ Դաշնակցական գործիչներից էր:

Վահան Խորէնին, բուն անունով՝ Վահան Տէր-Գէորգեան,

ծնուած էր 1885 թ., Զանգեզուրի Բռնակոթ գիւղում։ Գիւղի Տէր Խորէն քահանայի որդին էր. այդ տեղից՝ եւ նրա Խորէնի ազգանունը։

Բռնակոթը Զանգեզուրի չէն եւ անուանի գիւղերից էր՝ հռչակուած դեռ Իսրայէլ Օրիի օրերից, իբրեւ Ղարաբաղի մելիքների գործունէութեան կենտրոններից մէկը։ Նոր ժամանակներում այնտեղից էին դուրս եկել Ներսէս Աբք. Մելիք-Թանգեանի եւ փրոֆ. Ն. Ադոնցի պէս հռչակաւոր դէմքեր։

Վահանը իր մանկութիւնը անցկացրեց հայրենի գիւղում, որտեղի ծխական դպրոցն աւարտելուց յետոյ, ընդունուեց Էջմիածնի Գէորգեան Ճեմարանը, որի լսարանական բաժինը աւարտեց 1907-ին։

Ճեմարանում Վահանը համեստ եւ ուշիմ աշակերտներից էր՝ ամբողջապէս կլանուած դպրոցական պարապմունքներով։ Ցաչող էր իր դասերի մէջ։ Կարդում էր անյագ։ Աշակերտական խաղերին եւ շարժումներին ընդհանրապէս չէր մասնակցում։ Իր քաղցր, թէեւ ինքնամփոփ բնաւորութեամբ, սիրուած էր ամէնքից, բայց հանրային բնոյթ կրող գործերից, առհասարակ, հեռու էր մնում։ Որեւէ կուսակցութեան չէր պատկանում։ Երբեմն յօդուածներ էր գրում «Մշակ»ում Վ. Սիրտ ծածկանունով։ Ուշադրութիւն գրաւեց, յատկապէս, նրա մէկ յօդուածը Սուքիասեաց. Պարզեանի դէմ կատարուած ժողովրդական ցոյցի առթիւ, եկեղեցական կալուածների դէպքերի առթիւ, որով Վահանը խիստ խօսքերով դատափետում էր ժողովրդի անարդական վերաբերումը ծերունի եկեղեցականի հանդէպ։

Ճեմարանը աւարտելուց յետոյ՝ Վահանը անցաւ Գերմանիա՝ ուսանելու Լայպցիկի համալսարանի պատմա-փիլիսոփայական բաժնում։ Արդէն Ճեմարանից նրան հետաքրքրում էին փիլիսոփայական հարցերը։ Ուսանողութեան տարիներին նա ձեռք բերեց պատմագիտական եւ փիլիսոփայական հիմնական կրթութիւն՝ որոշ ժամանակ հետեւելով նաեւ ընկերային գիտութիւններին։ Աւարտեց փայլուն յաջողութեամբ՝ աւարտական շարադրութիւն ներկայացնելով Նիցշէի մասին։

Նիցշէն Վահանի նախասիրած փիլիսոփաներից էր։ Նիցշէական որոշ տարր կար եւ նրա բնաւորութեան մէջ։ Դեռ Ճեմարանում նրա սիրած խօսքերն էին՝ «Այսպէս խօսեց Զարատուստրան» կամ՝ «Լսի՛ր, ո՛վ արածող նախիր»։ Խորապէս անհատապաշտ՝ նա, անգամ չափազանցելով, վճռական նշանակութիւն էր տալիս «գաղափարապաշտ մտաւորականութեան», որ բարձր է կանգնած ժողովրդական զանգուածներից եւ կոչուած է առաջնորդելու «արածող նախիրին»։

Ուսանողութեան տարիներին Վահանը մօտեցաւ եւ յեղափոխական շրջաններին, մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան Ուսանողական Միութեան շարքերը, թէեւ այստեղ էլ առանձնապէս աչքի ընկնող գործունէութիւն չունեցաւ: Նրան հետաքրքրողը գլխաւորապէս գիտութիւնն էր: Նա աշխատում էր որքան կարելի է շատ մտաւոր պաշար ձեռք բերել եւ վերադառնալով Կովկաս՝ նուիրուել կրթական գործին: Գրում էր նաեւ, մեծ մասամբ, պատմա-փիլիսոփայական յօդուածներ Կովկասեան հայ մամուլում:

Ուսանողական շրջանին առանձնապէս մտերիմ էր իր ճեմարանական դասընկեր Միհրան Թէրլէմէզեանի հետ, որ նոյնպէս ուսանող էր Գերմանիայում եւ որոշ չափով նաեւ վերջինիս ազդեցութեան տակ մտաւ Դաշնակցութեան շարքերը: Միհրանը արդէն ճեմարանից Դաշնակցական էր Վանեցի աշակերտների խմբակում եւ հետագային դարձաւ Վանի առաջնակարգ մտաւորականներից մէկը, որպէս մանկավարժ եւ Դաշնակցական գործիչ:

Համալսարանական դասընթացքը լրացնելուց յետոյ, Վահանը ուսուցչական պաշտօն ստացաւ Թիֆլիսում եւ իր մտաւոր ճոխ պաշարով ու մանկավարժական ընդունակութիւններով շուտով աչքի զարնող տեղ գրաւեց հայ ուսուցչութեան շարքերում՝ միեւնոյն ժամանակ՝ շարունակելով գրական աշխատանքները իր մասնագիտութեան սահմաններում: Թւում էր, թէ այդ էր նրա կեանքի ասպարէզը:

Բայց հայ մտաւորականներից քանի՞ հոգի կարողացել է մընալ եւ կատարելագործուել իր բնական կոչման սահմաններում: Հայ իրականութեան նեղվեալ պայմանները անողոք եղան ինչպէս դէպի բովանդակ հայ ժողովուրդը, այնպէս եւ դէպի մտաւորականութիւնը: Վահանն էլ չխուսափեց այդ ճակատագրից, թէեւ յամառ կերպով պայքարեց նրա դէմ:

1914-ին, առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանին, Կովկասի հայութիւնը արտասովոր եռուզեռի մէջ էր: Կազմւում էին կամաւորական գնդերը: Թիֆլիս էին հաւաքուած ականաւոր խմբապետները՝ Անդրանիկ, Քեռի, Դրօ, Համազասպ: Դաշնակցական մտաւորականութիւնը՝ համախմբուած Ազգային Բիւրոյի եւ Հայ Կամաւորական Գնդերի Կարգադրիչ Մարմնի շուրջը, մոռացել էր ամէն գործ եւ ողջ էութեամբ կլանուել պատերազմով եւ կամաւորական շարժումով: Ն. Աղբալեան, Ս. Կարճիկեան, Աւ. Շահխաթունեան, Ա. Ջամալեան, առանց խօսելու երէցների մասին, իրենց ամբողջ ժամանակը տրամադրել էին կամաւորական գործին:

Կամաւորական հարցի շուրջ որոշ խմորումներ կային Թիֆլիսի մեր երիտասարդութեան մէջ: Մի մասը, ինչպէս Կորիւն

Ղազարեան, Տիգրան Աւետիսեան, Սահակ Թորոսեան եւ ուրիշներ, հակառակ էին կամաւորական շարժման։ Հ. Յ. Դ. Ռայոնական Ժողովում նրանք բուռն պայքար մղեցին այդ շարժման դէմ, բայց մնացին համեստ փոքրամասնութեան մէջ։

Վահան Խորէնիի կուսակցական շրջանակը գլխաւորապէս երիտասարդութիւնն էր։ Նրան առաջ էին քաշում երիտասարդ ընկերները, բայց նա ամէն կերպ խուսափում էր կազմակերպական գործօն աշխատանքից։ Կամաւորական շարժման հանդէպ էլ գաղջ վերաբերում ունէր. բացայայտ կերպով հակառակ չէր, բայց եւ չէր խանդավառուած։ Իր ուժերը աւելի յատկացնում էր մտաւորական գործերի — դասախօսութիւններ երիտասարդութեան ու բանուորների մէջ եւ գրական աշխատանք ու դպրոց։ Կուսակցական շեշտուած դէմք չէր դեռ։

Բայց ահա վրայ հասաւ Ռուսաստանի յեղափոխութիւնը։ Խորտակուեց ցարական բռնապետութիւնը։ Ազատութեան հմայիչ ալիքները տարածուեցին ամբողջ երկրում։ Աննկարագրելի ոգեւորութիւն համակեց եւ Թիֆլիսի բոլոր խաւերին։ Կապուած լեզուները արձակուեցին։ Ստորերկրեայ յեղափոխական կազմակերպութիւնները հրապարակ եկան։ Դաշնակցութիւնը նորից տիրական ոյժ էր Անդրկովկասի մայրաքաղաքի հայութեան մէջ։ «Հորիզոն» օրաթերթը դարձաւ կուսակցութեան պաշտօնական բերան՝ համախմբելով իր շուրջը յառաջադէմ մտաւորականութիւնը։

Խորէնին, առաջին օրերին, շուարած ու մտամոլոր վիճակ ունէր։ Դէպքերը նրան ստիպում էին նետուել գործօն կեանքի ասպարէզ, իսկ իր ներքին ձայնը հրամայում էր դուրս չգալ մասնագիտութեան սահմաններից։ Նա տարիներով պատրաստուել էր գիտութեան եւ մշակոյթին ծառայելու համար. դժուար էր այժմ հրաժարուել սիրած ու փայփայած գործից։ Եւ մեծ դժուարութեամբ կարելի եղաւ համոզել նրան, որ ստանձնէ Հ. Յ. Դ. Կեդր. Կոմիտէի նախաձեռնած «Աշխատաւոր» թերթի խմբագրութիւնը։ Բայց մէկ անգամ որ յանձն առաւ, իր խառնուածքին յատուկ անկեղծութեամբ եւ անձնուիրութեամբ փարեց գործին։ Դպրոց եւ կրթութիւն այլեւս երկրորդական տեղ բռնեցին նրա կեանքում. նա ամբողջ էութեամբ նուիրուեց թերթին եւ կուսակցական աշխատանքին։

«Աշխատաւոր»ը դարձաւ Դաշնակցութեան ձախ թեւի բերանը։ Ըստ էութեան՝ ձախութեան եւ աջութեան խնդիր չկար։ Աւելի շատ կար միայն խառնուածքի, արտայայտուելու ձեւի տարբերութիւն։ «Աշխատաւոր»ը, օրինակ, իրեն համարում էր աւելի «միջազգայնական», զտարիւն ընկերվարական. յախուռն

քննադատութեան էր ենթարկում երբեմն եւ կուսակցական կեանքի երեւոյթները, բայց հիմնական հարցերում «Աշխատաւոր»ն էլ, «Հորիզոն»ն էլ միեւնոյն գծի վրայ էին կանգնած։ Թիֆլիսի միջազգային մթնոլորտը, ազգային եւ ընկերային սուր փոխյարաբերութիւնները, բնականաբար, երիտասարդութեան մտքերի վրայ տարբեր տպաւորութիւն էին գործում, քան աւելի հասուն, կեանքի փորձով հմտացած մարդկանց։

1919-ի ամառը տեղի ունեցան Հայաստանի Խորհրդարանի ընտրութիւնները։ Դաշնակցութեան ցանկի վրայ էր եւ Վահան Խորէնիի անունը։ Ընտրուելուց յետոյ՝ նա փոխադրուեց Երեւան եւ գործօն մասնակցութիւն ունեցաւ օրէնսդրական աշխատանքներում։ Միեւնոյն ժամանակ ստանձնեց Հ. Յ. Դ. Երեւանի կենտր. Կոմիտէի պաշտօնաթերթ «Հայաստանի Աշխատաւոր» երկօրեակի խմբագրութիւնը։

Թիֆլիսից եկած էր «ձախութեան» ու «միջազգայնական» հովերով եւ այդ մակդիրները մնացին վրան թէ՛ Խորհրդարանում եւ թէ իր խմբագրած թերթում, բայց իրապէս՝ անունով միայն։ Հայաստանի մթնոլորտը, մանաւանդ, երկրի առարկայական պայմանները չէին կարող չազդել նրա տպաւորուող մտքի եւ հոգու վրայ։ Եւ նա արագ կերպով կերպարանափոխուեց, եւ Թիֆլիսեան «ձախութիւնից» նրա մէջ մնաց միայն արտաքին կեղեւը՝ անունը եւ խօսքը։ Նա դեռ շարունակում էր «ձախ» ճառեր արտասանել Խորհրդարանում, «ձախ» յօդուածներ գրել թերթում, բայց գործնական կեանքում, շատ անդամներ, աջից աւելի աջ էր։ Այսպէս, օրինակ, նա մոլեռանդ ջատագովն էր անմիջական եւ արագ ազգայնացման պետական կեանքի բոլոր ասպարէզներում, ուրիշ խօսքով՝ օտար պաշտօնէութեան վտարման։ Հայաստանի այն ժամանակուայ պայմաններում այդ նշանակում էր քաոս մտցնել մի շարք հաստատութիւնների մէջ, քանի դեռ հմուտ հայ պաշտօնեաներ պատրաստուած չէին։ Նա պահանջում էր կտրուկ միջոցներ ձեռք առնել Հայաստանի օտարացեղ բնակչութեան դէմ, որպէս հակապետական տարրի։ Բոլշեւիկների յարուցած մայիսեան ապստամբութեան օրերին նա անխնայ խարազանեց «մոնղոլական սոցիալիստներին»։ Մի խօսքով՝ Հայաստանի հողն ու օդը Խորէնուն էլ վերամկրտեց, դարձրեց հայրենի իրականութեան հարազատ զաւակ։

Միակ «ձախութիւնը», կարելի է ասել, որ Խորէնին երեւան բերեց Հայաստանում, այդ պետութեան եւ եկեղեցու բաժանման օրէնքն էր, որ նրա նախաձեռնութեամբ եւ պաշտպանութեամբ ընդունուեց Խորհրդարանի կողմից, թէեւ քիչ չէին մարդիկ կա-

ռավարութեան եւ կուսակցութեան մէջ, որոնք գտնում էին անժամանակ այդ քայլը։

Մայիսեան ապստամբութեան շրջանին էր, որ Խորէնին Արշակ Տիրինեանի հետ, որպէս Խորհրդարանի անդամներ, կառավարութեան յանձնարարութեամբ, մեկնեցին Զանգեզուր, ինչպէս յիշեցինք վերեւ, Զանգեզուրի ժողովրդին քաղաքացիական կռիւների աղէտից փրկելու յուսով։ Այդ առաքելութեան բուն հեղինակը Երեւանում գտնուող զանգեզուրցիներն էին, որոնք աւելի ծանօթ էին իրենց գաւառի բոլշեւիկներին եւ վախ ունէին, որ արիւնահեղ եւ կործանարար դէպքեր կարող էին տեղի ունենալ։ Երկուսն էլ՝ Խորէնին եւ Տիրինեանը, Զանգեզուրում յարգուած անձնաւորութիւններ էին. նրանց ներկայութիւնը կարող էր աղէտի առաջն առնել։

Տիրինեանը Շնհէր գիւղից էր։ Շնհերցիների մի մասը այդ օրերին թեքուած էր բոլշեւիկների կողմը։ Խորէնին եւ Տիրինեանը, Վայոց Ձորի վրայով մտնելով Զանգեզուր՝ անցնում են Շնհեր, որտեղից նրանց գալու մասին իսկոյն լուր է տրւում Ցեղկոմին Գորիս։ Ցեղկոմի կողմից վրայ է հասնում չէկիստ Մաշուրեանը զինուած խմբով եւ ձերբակալելով Խորէնուն ու Տիրինեանին՝ տանում-նետում է Գորիսի բանտը, ուր արդէն արգելափակուած էին տեղական Դաշնակցականներից 12 հոգի, որոնց մէջ եւ Սիբիրի աքսորից վերադարձած յեղափոխական Սաքո-Եապոնը։

Օգոստ. 2-ի գիշերը, մարդակերպ բորենիները ներս են խուժում բանտը եւ ատրճանակներով ցրիւ են տալիս բանտարկեալների ուղեղը...

Ուրիշ պայմաններում Վահան Խորէնին կը դառնար իր ժողովրդի յառաջադիմութեան ու բարօրութեան ծառայող, նրա մշակոյթը զարգացնող, նրա կեանքը բարձրացնող, նրա հպարտութիւնը հանդիսացող մի դէմք. մեր անազորոյն իրականութեան մէջ նա դարձաւ զոհ ու նահատակ եւ հնձուած ծաղիկի պէս՝ թոշնեց հաղիւ բացուած։ Ոչ ոքին չարիք չկամեցող, ո՛չ մէկին չարիք չգործող, բիւրեղի պէս մաքուր եւ ազնիւ՝ նա ամենադառն ճակատագրի արժանացաւ. սպանուեց դաւադրօրէն իր հայրենակիցների ձեռքով, որոնց բարիք էր ցանկանում իր ամբողջ էութեամբ...

ՎԱՀԱԳՆ ՏԱԹԵՒԵԱՆ

Հ. Ց. Դաշնակցութեան նուիրուած, հաւատաւոր եւ անձնազոհ գործիչներից էր Վահագնը: Բարձրահասակ, թիկնեղ, լայն ճակատով, թաւ յօնքերի տակ խորունկ ու թափանցող աչքերով, մարդամօտ ու կենսուրախ բնաւորութեամբ տղամարդ էր: Պարզ ու գործնական միտք ունէր, ուժեղ կամք եւ հայ ժողովրդին ծառայելու անսահման վճռականութիւն: Բարձր կրթութեան տէր չէր. իր մտաւոր զարգացումը ստացել էր կեանքի պայքարում եւ Դաշնակցութեան դպրոցում: Գերազանցապէս գործի մարդ էր:

Սեբաստիա քաղաքից էր, ծնուած 1875-ին: Մինչեւ 16 տարեկան հասակը անցրել էր ծննդավայրում՝ նախնական կրթութիւնը ստանալով քաղաքի Մայր Վարժարանում: 90-ական թուականների սկզբին փոխադրուել էր Պոլիս եւ շուտով ընկել Բարկէն Սիւնիի շրջանակը: Բարկէն Սիւնիի ազդեցութեան տակ մնդամադրուել էր Հ. Ց. Դաշնակցութեան, մասնակցել էր Բանկ Օթոմանի ձեռնարկի նախապատրաստական աշխատանքին, իբրեւ զէնք ու ռումբ փոխադրող ու պահող, բայց Բանկի գրաւման գործում բաժին չէր ունեցել, հակառակ իր կամքին: Բանկի դէպքից յետոյ, շատերի հետ նրան էլ սպառնում էր ձերբակալուելու վտանգը, եւ ընկերների ստիպումի վրայ յաջողել էր անցնել Բուլգարիա եւ այնտեղից Ամերիկա:

Ամերիկայում Վահագնը մնաց մօտ տասը տարի, գլխաւորապէս Նիւ Ինգլընտի շրջանում: Զարքաշ աշխատանքով ապրում էր ինքը եւ պահում հարազատներին Սեբաստիայում: Միեւնոյն ժամանակ՝ գործօն անդամ էր Դաշնակցութեան եւ հետզհետէ աչքի ընկաւ, իբրեւ եռանդուն աշխատող եւ ժողովրդական քարոզիչ: Եղաւ Կենտր. Կոմիտէի անդամ եւ մի քանի տարի գործիչ՝ շրջելով քաղաքից քաղաք կազմակերպելու համար ամերիկահայ աշխատաւորութիւնը Դաշնակցութեան դրօշակի տակ: Իր միտքը, սակայն, միշտ հայրենիքում էր, յեղափոխական կենդանի գործի վայրերում: Եւ տուիթը շուտով ներկայացաւ մեկնելու յեղափոխական գործի վայր:

1907-ին, Հ. Ց. Դ. Ամերիկայի Պատգամաւորական Ժողովը Վահագնին, Թովմաս Ճէլալեանի հետ, ընտրեց պատգամաւոր Զորրորդ դնդհ. Ժողովին, Վիեննայում, ուր պիտի լուծուէին մի շարք հրատապ հարցեր, ինչպէս Կովկասեան գործունէութեան նախագիծը, ընկերվարութիւն եւայլն: Վահագնը իր գործնական մտքով, անկեղծ վերաբերմունքով դէպի դրուած հարցերը եւ քաղցր բնաւորութեամբ Ընդհ. Ժողովի բոլոր պատգամաւորների համակրանքին արժանացաւ: Մասնաւորապէս նրան սիրե-

ՎԱՀԱԳՆ ՏԱԹԵՒԵԱՆ

ցին մարտական ուժերը՝ Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ։ Ռոստոմի եւ Վռամեանի առաջարկով Վահագն էլ մտցուեց Պատասխանատու Մարմնի մէջ, որ Բալկաններից պիտի վարէր Սուլթանի վարչաձեւի տապալման գործը։ Եւ մինչեւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը Վահագնը գործեց այդ մարմնի մէջ՝ ըզբաղուելով առաւելապէս զէնքի եւ մարտական գործերով։

Սահմանադրութիւնից յետոյ անմիջապէս Պատասխանատու Մարմնի անդամները փութացին Պոլիս։ Վահագնը Պոլսում էլ շարունակեց նոյն աշխատանքը՝ լայն համակրանք եւ ազդեցութիւն ձեռք բերելով ոչ միայն հայկական, այլեւ թուրք պետական շրջանակներում։ Առանձնապէս 1909 թ. Մարտի յեղաշրջման օրերին Վահագնը անսպառ եռանդ եւ ձեռնհասութիւն ցոյց տուեց՝ պաշտպանելու համար Սահմանադրութիւնը։ Այլեւս հասուն քաղաքական գործիչ էր. նրան հաշուի էին առնում եւ թուրք ղեկավարները, որոնց մէջ լայն ծանօթութիւններ ունէր։

1909–ին, Վահագնը Ամերիկայի Կեդր. Կոմիտէի կողմից մասնակցեց Հ. Յ. Դ. Հինգերորդ Ընդհ. Ժողովին, Վառնայում։ Ապա, Ատանայի կոտորածներից յետոյ, ստանձնեց Ատանայի պետական որբանոցի տնօրէնի պաշտօնը։ Մօտ 600 հայ որբեր պատսպարուած էին այդ հաստատութեան մէջ, եւ Վահագնը դարձաւ ճշմարիտ հայր ու հոգատար կեանքից հարուածուած այդ թշուառ բեկորների համար։ Նա ոչ միայն որբանոցի տնօրէն էր, այլեւ Դաշնակցութեան ականաւոր գործիչ այդ շրջանում, ընդհանուր համակրանք վայելող դէմք հայ եւ թուրք հասարակութեան մէջ։

1915–ին, երբ սկսուեցին թրքական վայրագութիւնները հայերի դէմ, Պոլսից հրաման եկաւ Տաթեւեանին էլ ձերբակալելու։ Վահագնը կարող էր իր անձը փրկել. գտնուեցին նոյնիսկ թուրք բարեկամներ, որոնք պատրաստ էին օգնելու նրան, որ հեռանայ ապահով մի վայր, բայց նա վատութիւն համարեց լքել որբերին իր անձը ազատելու համար եւ մնաց պաշտօնի գլխին։ «Ես իմ կեանքը ապրիս նուիրած եմ. հիմա մէկ հոգիս համար չեմ կարող լքել որբերն ու հայութիւնը», եղաւ նրա պատասխանը՝ պահուել յորդորող բարեկամներին։

Շատ չանցած Վահագնը ձերբակալուեց ու նետուեց բանտ։ Բանտում էլ նա մնաց աննկուն։ Անդամ պատերազմական ատեանի արձակած մահավճիռը նրան չընկճեց։ Եւ 1916 թ. Նոյեմբ. 27–ին, Կիլիկիայի Հայոց Կաթողիկոսարանի շէնքի առաջ, հրապարակի վրայ, Վահագնը կախաղան հանուեց։ Ասում են, թէ նախորդ օրը Ատանա էր եկել Սիւրիայի կուսակալ Ճէմալ փաշան, որ Վահագնի «մտերիմ» բարեկամներից էր։ Վահագնը նամակով դիմել էր նրա միջամտութեան։ Ճէմալ փաշան հանգստացրել էր նրան ու հեռացել Ատանայից։ Յաջորդ առաւօտ Վահագնը կախուել էր...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

Ալեքսանդր Խատիսեանը միայն ռուսական յեղափոխութիւնից յետոյ, 1917-ին, մտաւ Դաշնակցութեան շարքերը, բայց դրանից առաջ էլ գաղափարներով ու համակրանքներով Դաշնակցութեան հետ էր: Դեռ 1905-ին նա ուզում էր անդամագրուել Դաշնակցութեան, բայց Ռոստոմի, Համօ Օհանջանեանի եւ ուրիշ ընկերների խորհրդով մնաց դուրսը. որպէս անկուսակցական, համազգային դէմք կարող էր աւելի ծառայութիւն մատուցանել հայ ժողովրդին եւ Դաշնակցութեան: Եւ իր կեանքով ու գործով նա արդարացրեց այդ կարծիքը:

Ալեքսանդրը Թիֆլիսի Խատիսեան համբաւաւոր ընտանիքի զաւակ էր: Նրա հայրը պետական բարձր պաշտօնեայ էր՝ յարգուած հեղինակաւոր հայ եւ օտար շրջաններում: Մայրը կրթուած, հասարակական ջիղի տէր հայուհի էր: Սիրում էր հայ մշակոյթը եւ Մարիսեան ծածկանունով վէպեր ունի հրատարակած: Մեծ եղբայրը՝ Կոստանտինը Դաշնակցութեան հիմնադիրներից էր: Այսպիսի ընտանիքում ծնուեց Ալեքսանդրը 1874 թ. Փետր. 17-ին: Իր մանկութիւնն ու պատանեկութիւնը անցաւ կիրթ, հայասիրական միջավայրում: Աւարտելով Թիֆլիսի պետական Գիմնազիան՝ նա բժշկական կրթութիւն ստացաւ Մոսկուայի (3 տարի) եւ Խարկովի (2 տարի) համալսարաններում. ապա մասնագիտութիւնը զարգացրեց Գերմանիայում եւ վերադառնալով Թիֆլիս՝ նուիրուեց բժշկութեան:

Բժշկական ասպարէզը, սակայն, նեղ էր Խատիսեանի կարողութեան ու խառնուածքի տէր մի անհատի համար. նա բնածին հասարակական գործիչ էր՝ բարձր թռիչքներով եւ բազմութիւնները վարելու ձգտումներով: Պերճախօս հռետոր, բազմազան հետաքրքրութիւններ ու ծրագիրներ հետապնդող, արտասովոր կերպով աշխատունակ, ցոյց ու ժողովրդականութիւն սիրող, ազատախոհ եւ լաւ իմաստով պատեհապաշտ, կենդանի գործը վերացական տեսութիւններից գերադասող, հասարակական բոլոր խաւերի լեզուն հասկացող, հանրութեան ծառայելու պատրաստակամ, դիւրահաղորդ եւ ամենքին մատչելի, ազնիւ նկարագրի տէր՝ Խատիսեանը ստեղծուած էր հասարակական-քաղաքական գործունէութեան համար: Եւ զարմանալի չէ, որ նա շուտով լքեց այնպէս փայլուն կերպով սկսուած բժշկական ասպարէզը եւ ամբողջապէս նուիրուեց հասարակական գործունէութեան:

1902-ին Խատիսեանը ընտրուեց Թիֆլիսի քաղաքային խորհրդի անդամ: 1906-ին նա արդէն Թիֆլիսի քաղաքագլխի օգնականն էր: 1909-ից մինչեւ 1917՝ Թիֆլիսի քաղաքագլուխ: 1914-17-



ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

ին՝ Կովկասեան 44 քաղաքների միութեան նախագահ։ Աղդեցիկ եւ յարգուած դէմք նաեւ պետական շրջանակներում, մանաւանդ, փոխարքայ Վորոնցով–Դաշկովի օրով։ Քաղաքային գործերին զուգընթաց՝ նա կենդանի կերպով մասնակցում էր եւ համակովկասեան կեանքի զանազան ասպարէզներում։ Սիրուած ժողովրդական դասախօս էր։ Յօդուածներ էր գրում թերթերում։ Հրատարակեց զանազան գրքոյկներ հանրային առողջապահութեան, տեղական ինքնավարութեան, տնտեսական ու մշակութային հարցերի մասին։ Թարգմանութիւններ էր անում հայ գրականութիւնից։

Ինչքան համակովկասեան ու համառուսական, նոյնքան եւ հայ կեանքում Խատիսեանը լայն ու գործօն դեր էր կատարում։ Հայ–թաթարական կռիւների շրջանում, օրինակ, ամէն միջոցով օգնեց Դաշնակցութեան՝ ինքնապաշտպանութիւնը յաջողութեամբ տանելու եւ վճռական դեր կատարեց կռիւներին վերջ տալու գործում։ Երբ ցարական կառավարութիւնը հալածանք սկսեց Դաշնակցութեան դէմ, Խատիսեանը ոգի ի բռին աշխատեց թեթեւացնելու ձերբակալուածների վիճակը։ Առհասարակ, անիրաւուածների պաշտպան էր նա կառավարութեան մօտ։ Իր խորհուրդներով եւ միջամտութիւններով օգնում էր էջմիածնին՝ կառավարութեան հետ ունեցած դժուարութիւնների ժամանակ։ Անդամ էր եւ փոխ–նախագահ Ազգային Բիւրոյի եւ կամաւորական գունդերի կազմութեան նախաձեռնողներից մէկը։ Իբրեւ քաղաքների միութեան նախագահ՝ անգնահատելի եղաւ նրա դերը պատերազմից ազէտուած հայ գաղթականների խնամատարութեան գործում։

Ցարական վարչաձեւի խորտակումից յետոյ, Խատիսեանի հասարակական կեանքը տարբեր ընթացք ստացաւ: Թիֆլիսը անցաւ վրացիների ձեռքը: Անդրկովկասը փաստօրէն անջատուեց Ռուսաստանից: Եւ Խատիսեանը ամբողջ էութեամբ նետուեց հայ ազգային գործունէութեան մէջ: Այլեւս իրագործելի էր նրա վաղեմի փափաքը՝ մտնել Դաշնակցութեան շարքերը: 1917–18–ին նա Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ է: 1917 թ. աշնանը մասնակցում է Ազգային Համագումարին: Անդրկովկասի անջատումից յետոյ՝ Սէյմի անդամ է եւ ելեւմտական նախարար Դաշնակցութեան կողմից: 1918 թ. Փետրուարին՝ Տրապիզոնի եւ Մայիսին Բաթումի հաշտարար պատուիրակութիւնների անդամ: Հայաստանի անկախութիւնից յետոյ՝ Քաջազնունիի հետ ստորագրեց հաշտութեան դաշնագիրը Թուրքերի հետ: Ապա՝ Ահարոնեանի հետ Հայաստանի Հանրապետութեան կողմից մեկնեց Պոլիս՝ նոր դաշինք կնքելու համար:

Ընդհանուր զինադադարից յետոյ, Խատիսեանը վերադարձաւ Հայաստան եւ ստանձնեց արտաքին գործոց նախարարութեան պաշտօնը: 1919 Փետր.–1920 Մայիս՝ վարեց Հայաստանի վարչապետութիւնը: 1920 թ. ամառը կառավարութեան կողմից ուղարկուեց արտասահման փոխառութեան ու Ոսկու Ֆոնտի կազմակերպութեան համար: Այցելեց Պոլիս, Եգիպտոս, Ֆրանսա, Անգլիա, Բելգիա, Ցունաստան, Ռումանիա, Բոլգարիա, Իւգոսլաւիա՝ ամէն տեղ հայութեան մէջ աննման խանդավառութիւն առաջ բերելով: Եւ վերադառնալով Երեւան՝ պատերազմի օրերին, նրան վիճակուեց Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրութիւնը, 1920 թ. Դեկտ. 2–ին:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Խատիսեանը անցաւ Փարիզ եւ շարունակեց քաղաքական գործունէութիւնը, որպէս Հ. Հ. Պատուիրակութեան անդամ, ապա փոխ–նախագահ եւ վերջը՝ նախագահ՝ ներկայացնելով եւ պաշտպանելով հայկական շահերը պետութիւնների եւ Ազգերի Դաշնակցութեան առջեւ: Տարագրութեան տարիներին աշխատակցեց հայ մամուլին եւ լոյս ընծայեց «Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը» արժէքաւոր հատորը:

Անհնար է սեղմ յօդուածի մէջ ամփոփել Խատիսեանի բազմաճիւղ ու բեղուն գործունէութիւնը: Նա մինչեւ մահ մնաց իր կոչման բարձրութեան վրայ եւ անշահախնդիր նուիրումով ծառայեց հայ ազգին: Մանր ու տառապալից ապրումներ ունեցաւ վերջին պատերազմի տարիներին, երբ ստիպուած էր պաշտպանել վտանգի ենթարկուած եւրոպահայութիւնը: Եւ հատուցումը եղաւ դաժան. այն մարդիկ, որոնց կեանքը նա փրկել էր բռնութեան ճիրաններից, տմարդօրէն բանտարկութեան եւ չարչա-

բանքների մատնեցին նրան։ Արդարութիւնը շուտով յաղթանակեց, բայց բանտային տառապանքները վերջնականապէս խորտակեցին նրա արդէն իսկ տկարացած առողջութիւնը։ Խատիսեանը մեռաւ 1945 թ., Մարտ 10-ին, Փարիզում՝ անջնջելի յիշատակ թողնելով Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ։

ԱՐԱՄ ԵՐԿԱՆԵԱՆ

Արամը ծնուել էր Կարինում, 1900-ին։ Նոյն քաղաքում էլ ստացել էր նախնական կրթութիւնը։ 1915-ի եղեռնից բախտ էր ունեցել ազատուելու՝ ապաստանելով Կովկաս, ուր հնարաւորութիւն էր ստացել շարունակելու ուսումը։

Բայց արդէն պատանի հասակից Արամի միտքն ու հոգին վառուած էին հայրենիքին ծառայելու տենչով։ 1917-ի վերջերը, երբ ռուսական բանակը լքեց ռազմաճակատը եւ երկրի պաշտպանութեան գործը ամբողջապէս ծանրացաւ հայերի վրայ, Արամն էլ, շատերի պէս, շտապեց արձանագրուել կամաւոր եւ կարճատեւ մարզանքից յետոյ՝ մեկնել ճակատ։

1918-ի սկիզբը Արամը արդէն ռազմակայանի պետ էր Մամախաթուն-Կարին ճամբու վրայ։ Պահպանում էր ռուս զօրքի լքած դոյքերը եւ կապ էր պահում ճնապարհի միւս կայանների հետ։ Պաղարիւն, անվեհեր, վախը արհամարհող՝ Արամը շուտով աչքի ընկաւ իր քաջութեամբ՝ փոթորկայոյզ այդ օրերին։

Սկսուեց մեծ նահանջը։ Իրար յետեւից ընկան Երզնկան, Մամախաթունը, Բաբերդը։ Հերթը հասնում է եւ Կարինին։ Արամին յանձնուեց Կարինի թուրքերին հակելու եւ անվտանգ դարձնելու պարտականութիւնը։ Եւ նա փայլուն կերպով կատարեց այդ գործը։

Նահանջից յետոյ Արամը մտաւ Դրոյի զօրամասը, Արարատեան դաշտում։ Բաշ Աբարանի հերոսական ճակատամարտում, Զեմլեակի ձիաւոր ջոկատում գնդացիրային դասակի պետ էր՝ միշտ առաջին գծի վրայ՝ վտանգն ու մահը արհամարհելով։

Հանրապետութեան տարիներին Արամը անցաւ կուսակցութեան տրամադրութեան տակ յատուկ գործերի համար։ Խորհրդայնացումից յետոյ մեկնեց Թիֆլիս, ապա՝ Պոլիս եւ այլ վայրեր, իբրեւ վրէժխնդիր ու պատուհասող բազուկ հայասպան ոճրագործների։ Նրա անվրէպ գնդակին կեր եղաւ Կովկասի չար ոգիներից մէկը՝ Խան Խոյսկին, որ հայերի գլխին այնքա՜ն չա-

ԱՐԱՄ ԵՐԿԱՆԵԱՆ

րիք գործելուց յետոյ՝ Վրաստան էր փախել խորհրդայնացած Ադրբէջանից։ Նրա եւ իր ընկերոջ գնդակներից ընկաւ Բերլինի փողոցում նաեւ ճիւաղ Բէհաէդդին Շաքիրը՝ հայկական ջարդերի գլխաւոր կազմակերպիչը 1915-ին։

Պոլսի պարպումից յետոյ, Արամը անցաւ Ռումանիա, ուր մնաց մինչեւ 1927 թուականը, երբ տեղափոխուեց Արժանթին՝ Բուէնոս Այրէս։ Այստեղ, 1931-ին ամուսնացաւ, բայց իրեն չվիճակուեց հանգիստ կեանք վայելելու։ Ռումանիա թէ Արժանթին՝ Արամը միշտ մնաց Դաշնակցական գործօն ընկերների առաջին շարքերում՝ եռանդուն աշխատանքով եւ զոհաբերութեամբ, սիրուած եւ յարգուած ամէնքից։ Մասնաւորապէս՝ նիւթական ու բարոյական մեծ ջանք թափեց Բուէնոս Այրէսի «Արմենիա» թերթի վրայ։ Եւ տարիներ շարունակ վարեց տեղական կազմակերպչական գործերը՝ նուիրումով ու զոհաբերութեամբ։

1931-ին յայտնի դարձաւ, որ Արամը հիւանդ է թոքախտով, իրրեւ հետեւանք անհանդարտ եւ չարքաշ կեանքի։ Ընկերների պնդումով նա փոխադրուեց մեղմ կլիմայ ունեցող Կորդոբա քաղաքի նահանգային բուժարաններից մէկը, բայց, դժբախտաբար, այլեւս ուշ էր։ Երկու եւ կէս տարի նա մաքառեց դաժան մանրէների դէմ. ընկերները ոչ մի զոհողութեան առջեւ կանգ չառին՝ փրկելու համար նրա կեանքը, սակայն, անողոք հիւանդութիւնը չխնայեց նրան։ Արամը մեռաւ 1934 Օգոստ. 2-ին՝ երիտասարդ հասակում։

Դեռ ժամանակը չէ եկած լրիւ կերպով ներկայացնելու Արամ Երկանեանի եւ իր զինակից ընկերների կատարած գործը։ Բայց հայ ժողովուրդը գիտէ, որ նրանք եղան հայութեան վրէժը լուծող այն հզօր բազուկը, որոնց հարուածներից ընկան մարդակեր հրէշները։

ՍՏԵՓԱՆ ԾԱՂԻԿԵԱՆ

Սպերի եւ Լազիստանի միջեւ, Պարխարեան լեռներու մէկ հովտին մէջ, շրջան մը կար տասնեակ մը զուտ հայաբնակ գիւղերով, որ կը կոչուէր Խոտորջուր: Անոր լեռներու մէկ գոգին մէջ սեղմուած պատմական բերդի մը փառաւոր աւերակներուն առընթեր, ծուարած էր Մոխրկուտ (Մոխրակոյտ) գիւղը, որ դաւանական նոյնութեամբ կապուած՝ հայ-կաթոլիկ Խոտորջուրի անբաժան մասը կը կազմէր:

Մոլեռանդ հռոմէադաւան բնակչութիւն ունէր այս շրջանը: Ամփոփուած ինքն իր մէջ՝ Խոտորջուրը բոլորովին կտրուած էր ցահմանակից այլադաւան հայութենէն եւ կը փափաքէր անջրպետ մը տեսնել իր եւ լուսաւորչական-էջմիածնական հայութեան միջեւ: Խոտորջուրցիք հայ չէին ուզեր կոչուիլ, այլ՝ Ֆրէնկ կամ հայ Ֆրէնկ՝ ի մեծ զոհունակութիւն Թուրք կառավարութեան: Զբաղումով հացագործ էին. գրեթէ իրենց մենաշնորհ էին դարձուցած այդ գործը՝ Հարաւային Ռուսաստանի եւ Կովկասի մէջ:

Ահա այդ շրջանի՝ Մոխրկուտ գիւղի մէջ, 1886-ին, աշխարհ եկաւ Ստեփան Ծաղիկեանը: Անոր մեծ հայրը՝ Ֆուրունճի Միքէլ պատկառազդու եւ համբաւաւոր հացագործ էր Տրապիզոնի մէջ: Հացագործ էր եւ Ստեփանի հայրը:

Ստեփանը իր մանկութիւնը անցուց ծննդավայրի գեղեցիկ բնութեան մէջ: Կրթութիւնը ստացաւ Տրապիզոնի Ֆրերներու դպրոցը, բայց դեռ չաւարտած, 14 տարեկան հասակին, ծնողքը ամուսնացուցին զինքը համագիւղացի հասակակից աղջկան մը հետ: Խոտորջուրցիները ընդհանրապէս երիտասարդութիւնը կ'անցնէին պանդխտութեան մէջ եւ դրամ շահելով, յողնած ու պարտասած, կը վերադառնային տուն՝ կերուխումով ապրելու համար կեանքի մնացած մասը: Ստեփանի ծնողներու փափաքն էր՝ ամուսնացնելով իրենց զաւակը զերծ պահել պանդխտութենէ:

Մեղրալուսինը հազիւ բոլորած — եթէ կարելի է մեղրալուսին ըսել 14 տարեկան պատանիի մը համար — Ֆուրունճի Մուքէլը Թոռնիկի ձեռքէն բռնած՝ կը տանէ Տրապիզոն՝ Ստեփանէն ապագայ հացագործ մը պատրաստելու մտօք: Բայց չարաչար սխալած էր մեծ հայրիկը. Ստեփանը չէթէլէներ կտրելու սահմանուած պատանին չէր: Հացի փուռէն աւելի՝ ան հետաքրքրուած էր Տրապիզոնի ազգային կեանքով, որ ամբողջապէս գրաւեց իր միտքն ու հոգին:

Տրապիզոնի հայութիւնը նշանաւոր էր իր ազգային-հայրենասիրական խմբորումներով: Իննսնական թուականներէն սկսած



ՍՏԵՓԱՆ ԾԱՂԻԿԵԱՆ (աջ)

այստեղ մուտք գործած էին Հնչակեաններն ու Դաշնակցականները: Զաւարեանի եւ Իւսուֆեանի շունչը կենդանի էր տրապիզոնցի երիտասարդութեան մէջ: Բնորոշ է, որ Տրապիզոնի յեղափոխական շարժման առաջին շարքերու վրայ կը գտնուէին կաթոլիկները: Իրրեւ կաթոլիկ, Ստեփանն ալ ընկաւ անոնց շրջանակը ու վարակուեցաւ անոնց հայրենասիրական ըմբոստ ոգիով: Եւ երբ, 1908-ին, հռչակուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը եւ Տրապիզոն հասան Դաշնակցական գործիչներ, Դաշնակցութեան շարքերու մէջ մտնող նորադիր զինուորներու առաջիններէն եղաւ Ստեփանը՝ կուսակցութեան տրամադրելով ոչ միայն իր անձը, այլեւ Ֆուրունճի Միքէլի հարստութիւնը:

Առաջին գործը, որուն լծուեցաւ Ստեփանը Դաշնակցութեան մէջ, պայքարն էր «Հայ Ֆրէնկ» արատին դէմ՝ կաթոլիկ մտայնութիւնը հայկականի վերածելու համար: Եւ կկոցի նման սկսաւ երթեւեկել Տրապիզոնի ու Խոտորջուրի միջեւ՝ քարոզելով ազգային միութիւն ու համերաշխութիւն: Ու շատ չանցած՝ բան մը փոխուեցաւ հայ Ֆրէնկներու աշխարհին մէջ:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Ստեփանը կը դտնուէր Ռուսաստան, Խարկով՝ իր մօրեղբայրներուն քով։ Բախտորոշ օրեր էին, եւ ան չէր կրնար հանդիստ նստիլ հարուստ ազգականներու տունը։ Ուստի փութաց Կովկաս՝ միանալու համար կամաւորական խումբերուն։

Անդրանիկի գունդին մէջ ծանօթացայ Ստեփանի հետ, Տիլմանի ճակատամարտի նախօրեակին։ Մեր հուչակաւոր Աւօն ծանօթացուց։ Անոնք մտերիմ գործակից եղած էին Տրապիզոնի մէջ։ Ստեփանը խոնարհագոյն կամաւորներէն էր, կը խուսափէր ուշադրութիւն գրաւելէ. համեստ էր ծայր աստիճան։ Իր կրակի կնքահայրը Աւօն եղաւ, որուն ձեռքին տակ դարձաւ մեր լաւագոյն մարտիկներէն մէկը։ Դեռ ա՛յդ օրերէն կը նշմարուէր ապագայ հերոսը Ստեփանի մէջ։

Ցոյսերու եւ յոյզերու այդ վսեմ օրերուն սկսաւ նաեւ մեր մտերմութիւնը, եւ վեց տարի, մինչեւ Հայաստանի Հանրապետութեան անկումը, Ստեփանի հետ միասին գործեցինք, միասին ուրախացանք ու տխրեցանք՝ մեր մեծ խմբապետներու՝ Դաշնակցութեան պանծալի մարտիկներու՝ Մուրատի, Սեպուհի, Աւոյի ու Կայծակի մտերիմ ընկերակցութեան մէջ։

Կամաւորական շարքերուն մէջ Ստեփանը զոհաբերութեան եւ յանդգնութեան անհամար օրինակներ ցոյց տուաւ։ Աւօն սքանչացումով կը պատմէր յատկապէս Սորբ–Ախլաթի կռիւներուն մէջ անոր կատարած մէկ քաջագործութեան մասին, որով մեծ վըտանդէ մը փրկուած էր ամբողջ զօրամաս մը։ Ստեփանը եղաւ եւ այն վրիժառու բազուկը, որ անձամբ կազմակերպեց Խոտորջուրի տեղահանութիւնն ու ջարդը կատարող ոճրագործներու մահապատիժը։ Ստեփանի հետեւորդներէն ընտիր խումբ մը, Կարնոյ նահանջէն վերջը, 1918–ին, պաշարուեցաւ Մոխրկուտի բերդին մէջ, ամիսներով դիմադրեց՝ ահագին զոհեր խլելով թշնամիէն, բայց դուրսէն օգնութիւն չստանալով՝ ամբողջովին բնաջնջուեցաւ հայրենի բերդի աւերակներուն մէջ։ Հերոսամարտ մը, որ բոլորովին անծանօթ մնացած է։

Հայաստանի Հանրապետութեան շրջանին Ստեփանը անբաժան դինակիցը դարձաւ Սեպուհին։ Մասնակցեցաւ Շիրակի եւ Իջեւանի շրջաններու Մայիսեան խելագարութեան հաշուեյարդարին։ Ոգեւորուած էր մեր հայրենիքի վերելքով։ Անհուն ատելութեամբ լեցուած էր դէպի դաւաճան հայ բոլշեւիկները, որոնք քէմալական թուրքերու գործակցութեամբ դաւեր կը լարէին Հայաստանի եւ հայ ժողովրդի դէմ։ Կ՚որոճար յանդուգն ծրագիր մը ճարխէշ դիւղի մէջ որջացած Ցեղկոմի դէմ, որուն գործադրողը ինք պիտի լինէր, բայց վրայ հասաւ խորհրդայնացումը, եւ մենք ստիպուած եղանք հեռանալ Հայաստանէն։

Ստեփանը մերժեց թողուլ հայրենի սահմանները։ Հակառակ մեր յորդորներուն՝ ան որոշեց մնալ Խորհրդային դժոխքին մէջ ու պատուհասելու Մոսկուայի սիրալիր բարեկամութիւնն ու հիւրասիրութիւնը վայելող Ինվէրն ու Ճէմալը։ Զէկայի գուրգուրալից պաշտպանութեան շնորհիւ Ինվէրը ազատեցաւ իր ձեռքէն, բայց Ճէմալ փաշան, Զէկայի քթի տակ, չանսատակ ընկաւ Դաշնակցութեան վրիժառու դնդակէն։ Ստեփան Մաղիկեանի կազմակերպած հարուածն էր այդ։

Այնուհետեւ՝ գործունէութեան նոր դաշտ մը բացուեցաւ Ստեփանի առջեւ։ Ռուսաստանի բանտերն ու աքսորավայրերը, Սոլովկի կղզին Սպիտակ ծովի մէջ, Սիպերիոյ սառնարանները լեցուած էին հայ բազմաչարչար ժողովրդի ընտիր զաւակներով՝ դատապարտուած սովամահութեան։Ստեփանը լծուեցաւ անոնց օգնութեան գործին՝ իր ստեղծած ստորերկրեայ կազմակերպութեան միջոցով, որ նախախնամական փրկարար դեր կատարեց։ Ստեփանը կարողացաւ կապ հաստատել ամենահեռաւոր վայրերը աքսորուած բանտարկեալներու հետ եւ անոնց սնունդ ու հագուստ հասցուց։ Հաշիւը չկայ Զէկայի զոհերու, որոնք ստոյգ մահէ ազատեցան Ստեփանի անձնուէր աշխատանքի շնորհիւ։ Ի վերջոյ, ինքն ալ ընկաւ Զէկայի որսկան շներու ճանկերը։ Ո՞ւր տարին, ի՞նչ ճակատագիր ունեցաւ — Ստեփանը անհետ կորաւ։

Հերոսական պայքարով սկսաւ Ստեփանը իր կեանքը եւ բարի Սամարացիի դերով վերջացուց։ Առիւծի հոգի ունէր ան եւ գթառատ քրոջ սիրտ։ Այսպէս էր Ստեփանը՝ Հայոց Աշխարհի անհամար հերոսներէն ամենէն համեստը եւ ամենէն անվեհերը։

ԴՐ. ԱՄԻՐԵԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

1915 թ. Հոկտ. 1-ին, Թիֆլիսում, վախճանուեց Օր. Սաթենիկ Օհանջանեանը։ Եւ չկար նրան ճանաչող մի մարդ, որ չզար այս կորուստը։ Իսկ Կովկասում կամ Պոլսում ո՞վ չէր ճանաչում Սաթոյին՝ սուրբերի կարգը դասուելիք այդ զարմանալի աղջկան, որի կեանքը եղաւ համակ զոհաբերութիւն, ինքնամատոյց եւ անձնուէր ծառայութիւն հայ ժողովրդին։

Սաթենիկը բժ. Համօ Օհանջանեանի քոյրն էր։ Ծննդեան ըստոյգ թուականը յայտնի չէ մեզ. ծնուած պիտի լինէր ութսունական թուականների կէսերին։ Ստացել էր նախնական ու միջնակարգ լաւ կրթութիւն եւ արդէն պարմանի հասակից տոգորուած

ՍԱԹՕ ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

էր հայրենասիրական գաղափարներով։ Ընտանեկան միջավայրն ու եղբօր օրինակն էլ նպաստաւոր էին նրա զարգացման այդ ուղղութեամբ։

Կոչումով վարժուհի էր Սաթենիկը, բայց իր ամբողջ կեանքը անցրեց հասարակական գործունէութեան մէջ։ Համոզուած եւ գործօն Դաշնակցական էր։ Թիֆլիսի իգական սեռի կազմակերպիչ եւ գործի մղող։ Ուժեղ մտքի եւ կամքի տէր, համոզուած յեղափոխական, հանդարտամիտ եւ ծայր աստիճանի գաղտնապահ՝ նա հաւատարմութեամբ կատարում էր իրեն յանձնուած գաղտնիք պահանջող պատասխանատու գործերը։ Մեծ հմայք եւ ազդեցութիւն ունէր երիտասարդութեան մէջ, մանաւանդ, կանանց շրջանում։

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, երբ Դաշնակցութիւնը հալածւում էր Կովկասում, Սաթենիկը անցաւ Պոլիս, ուր գործունէութեան լայն ասպարէզ բացուեց նրա առջեւ։ Մասնա-

ւորապէս, նա մեծ դեր ունեցաւ Հայ Կարմիր Խաչի եւ Աշխատանքի Տան հիմնադրութեան եւ գործունէութեան մէջ։ Առանձին աղէտի օրերին Սաթենիկը անսպառ եռանդ թափեց կոտորածի զոհերին եւ որբերին օգնելու համար։ Պոլսի Դաշնակցականները եւ, առհասարակ, ժողովուրդը մեծ յարգանք ունէին նրա հանդէպ։

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին Սաթենիկը Կովկասում էր։ Այստեղ էլ, մոռացած իր անձը, նա նուիրուած էր հանրային գործին. տարագիր ընտանիքներին օգնութիւն, կամաւորական գնդերին օժանդակութիւն, Դաշնակցական աշխատանք, կանանց կազմակերպութիւն, բարեսիրական ձեռնարկներ — Սաթօն ամէն տեղ էր եւ ամէն գործի մէջ։ Ցողնել չգիտէր, մեծ ու փոքր գործ չկար նրա համար։

1915–ից սկսած Սաթենիկը ամբողջապէս տարուեց գաղթականների եւ որբերի խնամատարութեան գործով։ Իբրեւ բժշկախնամատարական խմբի անդամ, Վանի ազատագրութիւնից յետոյ, անցաւ Վան։ Ապա, ժողովրդի հետ միասին, նահանջեց՝ ճանապարհին օգնելով գաղթականներին։ Այնուհետեւ Իգդիրում զբաղուեց խնամատարութեան աշխատանքով։ Վերջը, նոյն գործով, անցաւ Էջմիածին, ուր խռնուած բազմութիւնը բռնուած էր համաճարակ հիւանդութիւններով՝ անհուն թշուառութեան մէջ։ Պէտք էր տեսնել Սաթենիկին այդ օրերին. գիշեր ու ցերեկ հանգիստ չունէր. գթառատ քոյր էր դժբախտ գաղթականների, հարազատ մայր՝ որբ երեխաների։ Ցովհ. Թումանեանը, որ այդ օրերին Էջմիածնում էր, նոյն գործով, Սաթենիկի մասին ասում էր. «Էս աղջիկը հողեղէն չէ, սուրբ է, հրեշտակ է»։

Ինչպէս եւ պէտք էր սպասել, Սաթենիկն էլ վարակուեց եւ, ծանր հիւանդ, փոխադրուեց Թիֆլիս։ Բժշկական խնամքը չկարողացաւ փրկել նրան։ Մեռաւ՝ անջնջելի յիշատակ թողնելով իրեն ճանաչողների սրտերում։

ՆԵՐՍԷՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՆԵՐՍՕ—ԽԱՉԱՏՈՒՐ

Կիլիկիա, համեմատաբար, ուշ մուտք գործեց Դաշնակցութիւնը։ 1904–ից յետոյ միայն, երբ Ս. Զաւարեանը եւ Վարդանը մտան Կիլիկիա, Դաշնակցութիւնը լայն արմատներ ձգեց նաեւ այս շրջանում, թէեւ մինչեւ այդ էլ արդէն կային Դաշնակցական

ՆԵՐՍԷՍ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ընկերներ ու մարմիններ։ 1896–ին, Այնթապում, կազմուած էր Դաշնակցական մի խումբ Նազարէթ Եմէնիճեանի գլխաւորութեամբ։ 1898–ին, Այնթապ էր եկել Դաշնակցական գործիչ ա-բարկիրցի Միսաք Վարդանեանը եւ Ամերիկեան Կոլէջի ուսանող-

ներից եւ քաղաքի աչքի զարնող երիտասարդներից կազմել Հ. Ց. Դ. Այնթապի կոմիտէ։ Ուսանողների թիւում էր եւ Ներսէս Խաչատուրեանը։

Ներսէսը ծնուել էր 1879-ին, Այնթապում, բողոքական ընտանիքի մէջ։ Հազիւ վեց ամսական էր, երբ մեռաւ հայրը, եւ ինքը մեծացաւ եղբայրների խնամքի տակ։ Նախնական կրթութիւնը ստացաւ հայ-բողոքական դպրոցում, ապա մտաւ Այնթապի Ամերիկեան Կոլէջը։

Աչքբաց եւ խելացի տղայ էր Ներսէսը, ազատասէր եւ ըմբոստ։ Զէր հաշտւում բողոքական մտայնութեան հետ եւ, յաճախ, իր վրայ էր հրաւիրում դպրոցի ղեկավարների զայրոյթը։ Գրեթէ ամէն տարեվերջին հեռացւում էր դպրոցից իր անհանդարտ վարքի պատճառով եւ նոր տարեսկզբին վերընդունւում ազդու միջնորդութեանց շնորհիւ։

Դպրոցից դուրս իր սիրած զբաղումն էր որսորդութիւնը եւ արկածալի խաղերը ընկերների հետ, որոնց մէջ նախաձեռնող էր ու յանդուգն։ Արձակուրդներին ճամբորդութիւններ էր կատարում բեռ փոխադրող ջորեպան եղբայրների հետ մինչեւ Կարին, Վան, Տիգրանակերտ եւ ականատես ու մասնակից էր լինում ընդհարումներին աւազակների հետ։ Վարժ ձի նստող ու զէնք բանեցնող, մարմնով առողջ ու գեղատեսիլ, անաղարտ հոգու տէր երիտասարդ էր։

Պատանի հասակից սկսած Ներսէսը վառ հետաքրքրութիւն էր ցոյց տալիս դէպի ազգային հարցերը։ Գրքերից աւելի՝ նա կեանքից ստացաւ իր յեղափոխական դաստիարակութիւնը, մանաւանդ, 1896 թ. Զէյթունի ապստամբութեան տպաւորութեան տակ։ Եւ երբ 1898-ին Այնթապ եկաւ Մ. Վարդանեանը, յանձին Ներսէսի, դտաւ իրեն ջերմ աջակից. Վարդանեանից ազդուած՝ Ներսէսը եօթը ընկերներով մտաւ Դաշնակցութեան շարքերը։ Սրանց ազդեցութեամբ յեղափոխական խմբորումներ ծայր տուին եւ Կոլէջի միւս ուսանողութեան մէջ, որի հետեւանքով, 1899-ին, տեսչութիւնը դպրոցից վտարեց 50-ից աւելի ուսանողներ։ Սրան յաջորդեցին նոր վտարումներ։ Ներսէսն էլ միշտ վտարուողների մէջ էր, բայց եւ ամէն անգամ էլ ազդու միջնորդութիւններով վերընդունւում էր, մինչեւ որ 1902-ին վերջնականապէս արտաքսուեց Կոլէջից եւ յաջորդ տարի, 1903-ին, մեկնեց Բէյրութ եւ քննութիւն տալով՝ ընդունուեց ամերիկեան բժշկական համալսարանը։

Համալսարանն աւարտելը, սակայն, վիճակուած չէր Ներսէսին։ Դաշնակցութիւնը այն օրերին ծրագրել էր ուժեղացնել կազմակերպութիւնը Կիլիկիայում։ Որոշել էր Ս. Զաւարեանին, Խանասորի Վարդանին, Մար Շիմոնին ուղարկել Կիլիկիա՝ երկի-

ը եւ գործունէութեան պայմանները ուսումնասիրելու եւ կազմակերպական աշխատանքներ կատարելու համար։ Հարկաւոր էին տեղական ուժեր եւս գործի համար։ Ներսէսը առանց վարանումի ձգեց համալսարանը եւ դարձաւ Դաշնակցութեան գործիչ։ Երկու տարի, իբրեւ բեռ փոխադրող ջորեպան, ոտքի տակ տուեց ամբողջ Կիլիկիան եւ հաստատեց փոխադրական գծեր ու կայաններ։ Ինքը անձամբ, կամ իր հսկողութեան տակ փոխադրում էին զէնք ու ռազմամթերք, գաղտնի գրականութիւն, յեղափոխական գործիչներ։ Ի միջի այլոց, Ս. Զաւարեանն ու Վարդանն էլ Կիլիկիա մտան եւ Կիլիկիայից հեռացան Ներսէսի առաջնորդութեամբ։ Հանդարտաբարոյ, վերին աստիճանի գաղտնապահ, յանդուգն նախաձեռնութեան տէր, վախ եւ յոգնութիւն չզգացող՝ Ներսէսը կատարելութեան հասցրեց կապի եւ փոխադրութեան գործը։ Նրանից յետոյ էլ, իր աշակերտները, անընդհատ շարունակեցին այդ աշխատանքը, մինչեւ Սահմանադրութիւն։

1906-ին Ներսէսը անցաւ Ամերիկա եւ ցերեկը աշխատանքով ու երեկոյեան ուսանելով՝ դարձաւ դեղագործ։ Գործ եւ ընտանեկան բոյն հաստատեց ու բարեկեցիկ վիճակ ձեռք բերեց։ Եւ չարունակեց գործօն մասնակցութիւն ունենալ կուսակցական կեանքում, մինչեւ 1914 թ.։

Առաջին համաշխարհային պատերազմի յայտարարութիւնը Ներսէսի սիրտն էլ թունդ հանեց։ Նա դիմեց անգլիական ներկայացուցչին, որ իրեն ուղարկեն Կիլիկիայի ճակատը. անգլիացին պատասխանեց, թէ ծրագիր չկայ կիլիկեան ճակատ բանալու։ Ներսէսը, առանց յուսահատուելու, 1915 թ. Մայիսին, իր մտերիմ ընկերոջ՝ Ներսէս Յակոբեանի հետ մեկնեց Կովկաս։ 24 օրից զոյգ Ներսէսները հասան Թիֆլիս եւ մտան Իշխանի 7-րդ կամաւորական գունդը։ Ներսէսը նշանակուեց պարենակիր ջոկատի պետ եւ հիանալի կերպով վարեց այդ գործը՝ միշտ կողքին ունենալով միւս Ներսէսին։

1915 թ. Սեպտ. 19-ին 7-րդ գունդը Երեւանից շարժուեց դէպի ռազմաճակատ։ Ներսէսը ոչ միայն վարեց պարէնակիր խումբը, այլեւ քաջութեամբ մասնակցեց կռիւներին՝ Ատրպատականից սկսած մինչեւ Ռեւանտուզ։ Վերջին ճակատամարտը Ռեւանտուզում, 1916 թ. Մայիս 15-ին, եղաւ առանձնապէս արիւնահեղ. այդտեղ սպանուեց Քեռին։ Սրունքից ծանրապէս վիրաւորուեց եւ Ներսէսը։ Թիֆլիսում նրան ցոյց տրուած բժշկական բոլոր միջոցները անցան ապարդիւն. պէտք եղաւ կտրել ոտքը։

Կամաւորական գնդերի լուծումից յետոյ, 1916 թ. աշնան. երկու Ներսէսները վերադարձան Ամերիկա։ Ներսէս Խաչատուրեանը վերագտաւ իր ընտանիքը եւ ծանր ու չարքաշ աշխատանքով ջանաց վերականգնել նախկին վիճակը, բայց Բոստոնի

վատառողջ կլիման ստիպեց նրան փոխադրուել Քալիֆորնիա։ Այստեղ էլ յամառ պայքար մղեց ճակատագրի դէմ, բայց, ի վերջոյ, յուսահատ, ինքնասպանութեամբ մաքրեց իր հաշիւները աշխարհի հետ, 1920 թ. Սեպտեմբերին։

Կիլիկիա եւ Հայաստան՝ աշխարհագրական տարբեր վայրեր, բայց հայութեան սիրտը ամէն տեղ բաբախում է միեւնոյն նպատակի համար, միեւնոյն զգացումներով եւ գաղափարներով տոգորուած։ Ներսէսը իր կեանքով ու գործով փայլուն օրինակ հանդիսացաւ հայ ոգիի ընդհանրականութեան։

ԹՈՎՄԱՍ ՃԵԼԱԼԵԱՆ

Պարթեւ հասակ, համաչափ մարմին՝ պսակուած մեծ ու բարեձեւ գլխով մը, ուր կը բացուէին երկու մեղոյշ եւ իմաստուն աչքեր։ Տիպար կազմ մը, որ առաջին տեսութեամբ դիտողին կը հարկադրէր համակրանք եւ վստահութիւն։ Ահա՛ առաջին տպաւորութիւնը Թովմաս Ճելալեանէն։

Դժուար, գրեթէ անկարելի է ստուգել իր ծննդեան ճշգրիտ թուականը, սակայն բանաւոր է դնել իր ծնունդը 1860–ի եւ 1870–ի միջեւ։ Ըսենք, ուրեմն, թէ Թովմաս լոյս աշխարհ եկաւ 1865–ին, ի Մեծկերտ, Զարսանճագ։

Մեծցաւ Հաւաւի մէջ, եւ իր ստանդական կեանքի բոլոր կայաններուն՝ Հաւաւցիք կազմեցին իր շրջանակը։ Դեռ միամեայ երախայ՝ կ՝որբանայ հօրմէն եւ մայրը, Նազելի, վերամուսնանալով ի Հաւաւ կը բերէ զայն իրր եկամուտ անդամ Ճելալեան ղերդաստանին։ Այսպէս հաւաւցի կը դառնայ Թովմաս՝ Ճելալեան մականունով։ Հաւաւի մէջ կը ստանայ իր դպրոցական նախակրթութիւնը եւ կարճ ժամանակ կը զբաղի ուսուցչութեամբ։ Այնուհետեւ կ՝ամուսնանայ եւ անձնատուր դէպ ի Պոլիս հոսանքին, որ ամէն դարնան կ՝առնէր կը տանէր բազմաթիւ համագիւղացիներ, յաջորդաբար կ՝ապրի Պեշիկթաշի, Զուգուր Զէշմէի եւ Վէզիր խաներուն մէջ, որպէս աշկերտ հիւսնութեան արհեստին՝ վարպետ դալֆաներու հսկողութեան տակ։ Եւ արդէն հաւաւցի պանդուխտ պատանուոյն համար բաց էին տնաշինական երկու կցորդ արհեստները միայն՝ որմնադրութիւն եւ հիւսնութիւն, որոնք զիրար կը լրացնէին եւ որոնց կատարեալ տիրապետումով հաւաւցին կանգնած է անհամար ապարանքներ, եկեղեցիներ, մզկիթներ, բաղնիքներ եւ կամուրջներ Պոլիս եւ այլուր։

Խանը լոկ բնակավայր չէր։ Երեկոյին, ընթրիքէն յետոյ, սենեակը կը փոխուէր դասարանի, ուր ոմանք կը զբաղէին շինութեանց յատակագծեր կարդալով կամ գծելով՝ միշտ ենթակայ վարպետին սրբագրութեանց կամ թելադրութեանց։ Յետոյ, գրոց-բրոցներէն մին կը կարդար օրուան թերթերը եւ կուտար ամփոփումը կարեւոր լուրերուն։ Այսպէս կը մեծնար պատանին խիստ, բայց բարեացակամ ռեժիմի մը տակ եւ դիւղ կը վերադառնար «ոսկի ապարանջանը բազկին»՝ վարժ արհեստաւոր, եւ միտքն ալ այլապէս բաւական լայնցած ու մշակուած։

Ահա այդ մթնոլորտին մէջ իր պատանեկան տարիներն անցուց Թովմաս, եւ շատերէն աւելի ուսումնասէր, աւելի հետաքրքիր հանդէպ ազգային հարցերու, կը կարդար ոչ միայն օրուան թերթերը, այլ նաեւ՝ արտասահմանեան հրատարակութիւններ, դորս իրեն կ'ընձեռէին պոլսեցնակ հաւաւցի գրադէտներ, ինչպէս Լեւոն Փաշալեան, Գասպար Նեմցէ, Մելքոն Կիւրճեան եւ Համբարձում Կարեան։

Շատերուն նման՝ Թովմաս եւս Հնչակեան կ'արձանագրուի Պոլսոյ մէջ, Գում Գափուի ցոյցի նախօրեակին, ըստ վկայութեան ընկ. Սեպուհի, որ կ'ընկերանար իրեն, բայց ընդհուպ կը յարի Դաշնակցութեան՝ չգտնելով «Մայր Կուսակցութեան» մէջ այն կարգապահ ոգին եւ իմաստուն ղեկավարութիւնը, որոնք անհրաժեշտ էին յեղափոխական շարժման, մանաւանդ, համիտեան Թուրքիոյ մէջ։

Պոլիսէն Պալքանեան երկիրներ եւ ապա Փրովիտէնս, հաւանաբար 1898-ին, ուր հաստատուած էին եւ հետզհետէ կը հաստատուէին Հայերը։ Իր կինը մեռած էր արդէն եւ դիւղին հետ իր ընտանեկան միակ կապը կը մնար մայրը՝ Նազելին, որուն վրայ կը դուրդուրային ինք ու եղբայրը Կարապետ՝ ուղարկելով անոր բաւականաչափ դրամ պարբերական կանոնաւորութեամբ, որպէսզի ապրէր բարեկեցիկ։ Նազելի, հպարտ էր իր երկու որդիներով, բայց իր պարծանքին առարկան կը կազմէր, մանաւանդ, իր տիտան Թովմասը, եւ իրաւամբ։

Երբ Թովմաս ուրք կը դնէր ամերիկեան ցամաքամասին վրայ, կացութեան տէրն էր Հնչակեան կուսակցութիւնը։ Յետոյ հրապարակին պիտի տիրանային Վերակազմեալները։ Թովմասին եւ անոր գործակիցներուն համար այս առաջին տարիները կազմեցին պայքարի, շարունակական վազքի եւ բոլորանուէր ջանադրութեան շրջան մը, մինչեւ որ Դաշնակցութիւնն իր արմատները հաստատեց ամէն տեղ եւ պաշտպանողական դիրքերէն անցաւ յարձակողականի։

Կը պատմէին, թէ Վերակազմեալները փորձած են խանգա-

րել Փրովիտէնսի կոմիտէին մէկ հրապարակային ժողովը, որուն կ'ատենապետէր Թովմաս։ Բացումը կը կատարուի աղմուկի եւ պոռչտուքներու մէջ։

— Կը խնդրեմ, լռեցէք, որպէսզի շարունակենք ժողովը։

Աղմուկը կը սաստկանայ։

— Կը թելադրեմ բոլորիդ որ լռէք։

Զայն բարբառոյ յանապատի։

— Ցանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կը հրամայեմ լռել։

Եւ սրահին մէջ կը տիրէ մեհենական լռութիւն։

Թովմաս, 1909-ին, գնացած էր Սոֆիա՝ մասնակցելու Կուսակցութեան Ընդհանուր Ժողովին որպէս պատգամաւոր Ամերիկայի շրջանին։ Երկու տարի առաջ ալ, 1907-ին, նման առաքելութեամբ մասնակցած էր Վիեննայի Ընդհանուր Ժողովին։ Սակայն, իր գործունէութիւնը կեդրոնացած էր առաւելապէս Ամերիկայի մէջ.— այցելութիւն կոմիտէներուն, լուծում եւ յարդարում ներքին վէճերու եւ թիւրիմացութեանց, դասախօսութիւն, ատենախօսութիւն։ Քանի՞ անգամ անգամ եղած է Կեդրոնական Կոմիտէին,— չեմ գիտեր, բայց ընտրեալ անդամ կամ ոչ, Թովմաս միշտ ալ մաս կը կազմէր շրջանիս վերին մարմնոյն։ Պաշտօնական հանգամանքով թէ անպաշտօն՝ միշտ ալ գործիչ մ'էր նոյնչափ հեղինակաւոր, որչափ այն ընկերները, որոնք կ'ուղարկուէին Բիւրոյին կողմէ։ Փրովիտէնսի մէջ Թովմաս հեղինակութիւն մ'էր ոչ միայն ընկերներու համար, այլ նաեւ ամբողջ գաղութին։ Դաշնակցական, Հնչակեան, Ռամկավար, Վերակազմեալ կամ չէզոք, բոլորն անխտիր կը յարգէին զայն՝ իբր անաչառ դատաւոր, ողջամիտ մարդ եւ անբասիր հայրենասէր։

Մանուկ հասակին բարեկամացած էր Մինաս Տոլպաշեանի հետ եւ հետագային վերանուանած զայն Գայլ Վահան։ Անոր մէջ վաղուց նկատած լինելով քաջութեան, հայրենասիրութեան եւ անձնուրացութեան սաղմերը՝ ջանաց մշակել զանոնք։ Ի՛ր թելադրութեամբ Մինաս ստանձնած է Հնչակեան ահաբեկչի պարտականութիւնն ի Պոլիս եւ կատարած զայն ձեռնհասօրէն. ի՛ր թելադրութեամբ նաեւ լքած Հնչակեան կուսակցութիւնը եւ միացած Հ. Յ. Դաշնակցութեան։ Մենտորի մը պէս առաջնորդած էր զայն կայանէ կայան՝ սկսեալ Հաւուէն, փոթորկալից տարիներու ընթացքին։ Սակայն Փրովիտէնսի մէջ անկախութիւն կը յայտարարէ Մինաս՝ յայտնելով, թէ որոշած է Երկիր երթալ գէնն ի ձեռին սատարելու ազատագրութեան դատին, եւ թէ՝ անդառնալի է այս որոշումը։

Եւ գնաց։ Զէնքերու փոխադրութիւնը վստահած էին իրեն



ԹՈՎՄԱՍ ՃԷԼԱԼԵԱՆ

եւ անուանած զինք խմբապետ։ Իր խումբը յաջողեցաւ քանիցս զէնք անցընել Թուրքիա՝ առանց որեւէ կորուստի։ Ապա Մինաս միացաւ Մօսուն–Զօռի արշաւին եւ նահատակուեցաւ Բաղրեւանդի կռուին մէջ։

1909–ին թէ 10–ին Թովմաս բացած էր նպարեղինաց խանութ մը, որովհետեւ, ինչպէս կ՚ըսէր, այժմ պտրտաւոր էր խնամել ոչ միայն մայրը, այլ նաեւ՝ թոքախտաւոր եղբայրը, անոր կինն ու զաւակը։ Ցաջող էր խանութին առեւտուրը։ Մերձաբնակ բոլոր հայերն ալ, առանց կուսակցական եւ տեղացիական խտրութեան, իրմէ կ՚ընէին գնումները։ Երեք տարիէն տնտեսած էր կոկիկ գումար մը եւ այլեւս պատրաստ վերադառնալու Հաւաւ, որուն կարօտովը կ՚այրէր երկար առենէ ի վեր։

Հաւաւի մէջ կ՚ամուսնանայ կարնեցի օրիորդի մը հետ, որ իբր վարժուհի կը ծառայէր աղջկանց դպրոցին մէջ, եւ որ այժմ կը գտնուի Պրազիլ։

Իսկ իր մահը, անաղորոյն ու քստմնելի, մէկ մասնիկն է ա-

հաւոր մարտիրոսութեան, որուն առարկայ եղաւ Թուրքիոյ հայ ընտրանին 1915–ին։

Խօսքը կուտամ ականատես եւ իրաղեկ հաւաւցի կնոջ մը՝ Տիկին Վարդուհի Նեմցէի, այժմ Տէր–Մխսեան, որ գիւղին զանգուածային տեղահանութենէն առաջ կը յաջողի խոյս տալ եւ ապաստանիլ Տերսիմ, յետոյ անցնիլ Երիզա, Կարին, Կովկաս եւ, վերջապէս, Փրովիտէնս։

— «Գայմագամը, բազմաթիւ հետեւորդներով, Հաւաւ եկած էր զէնքերը հաւաքելու եւ ձերբակալած գիւղին ականաւորները։ Իսկ շրջակայ քիւրտ գիւղերէն շատեր սպառազէն կը թափառէին փողոցներուն մէջ՝ յուսալով, թէ պիտի կրկնուի 95–ի դէպքը՝ պատեհութիւն տալով իրենց կողոպուտի, սպանութեան եւ բռնաբարումներու։ Տունն էի միս մինակ, երբ դուռը զարնուեցաւ։ Նայեցայ պատուհանէն։ Մանօթ արիւնկզակ քիւրտ մ'էր։ Եռեւի զոնէն դուրս ելայ սարսափահար եւ Մուխթարին տունը գնացի բողոքելու եւ պաշտպանութիւն խնդրելու։ Վերնայարկի մէկ ւենեակէն կը լսուէին լացի եւ վայնասունի ձայներ, աղիողորմ կանչեր եւ հոնդիւններ։ Վեր ելայ։ Կիսաբաց էր դուռը։ Տասնեակ մ'անձեր՝ գիւղին երեւելիները հոն էին՝ ոմանք գետնատարած, ոմանք պատին կոթնած։ Մէկուն եղունգները քաշուած էին, միւսին քիթը ճզմուած։ Բոլորն ալ սրտամորմոք վիճակի մէջ։ Հոն էր եւ պարոն Ճելալեան՝ դունատ, գրեթէ նուաղած, երկու ձեռքերն արիւնլուայ։ Նոյն երեկոյին քաղաք փոխադրուեցան բոլորն ալ եւ բանտարկուեցան։ Քանի՞ օր կը մնան արդեւլիակ, չեմ գիտեր, որովհետեւ հեռացած էի Հաւաւէն եւ կը գտնուէի Խարապորք, մօրաքրոջս մօտ, բայց տեղեկութիւնները կը հասնէին օրէ օր։ Կը սկսի արուներու ջարդը եւ բազմաթիւ կիներ, ընդ որս եւ Տիկին Ճելալեան, կ'ապաստանին քաղաքը՝ ոմանք ծանօթներու տունները, ոմանք եկեղեցիները։ Բանտարկեալներուն ամէն օր ծրարներ կը տանին անոնց մայրերը կամ կիները, բայց երբեք թոյլ չի տրուիր իրենց տեսնել զանոնք։ Օր մ'ալ բարապան զապթիէներէն մին կ'ըսէ Տիկին Ճելալեանի, թէ այլեւս աւելորդ է ուտեստեղէն եւն. բերել բանտարկեալներուն, որովհետեւ անոնց գործը լրացած է։ Տիկինն այսահար՝ առաջնորդարան կը փութայ եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակին մէջ ծնունդ կուտայ վիժածի մը։ Թոմաս եւ իր ընկերները, շաբաթներ առաջ, դիշեր ատեն, բանտէն հանուած, կամուրջին վրայ փողոտուած ու նետուած էին դեռը՝ Արածանին»...

ՏԻՐԱՆ ՓԱՇԱԼԵԱՆ

Հ. Յ. Դ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՆԵՐԸ

Հ. Յ. Դաշնակցութիւնը հիմնուեցաւ 1890 թ. ամառը, Թիֆլիսում: Դաշնակցութեան ծնունդ տուող ժողովները պէտք է նըկատել Հիմնադիր ժողով:

Հ. Յ. Դաշնակցութեան գերագոյն հաստատութիւնը Ընդհանուր ժողովն է, որ կուսակցութեան վերին իշխանութիւնն է եւ որի որոշումները անառարկելի են եւ պարտադիր բոլոր մարմինների եւ բոլոր անդամների համար:

Առաջին Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1892 թ. ամառը, Թիֆլիսում: Այս ժողովում մշակուեցան Դաշնակցութեան ծրագիրը եւ կազմակերպական ընդհանուր սկզբունքները:

Երկրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1898-ի ամառը, նոյնպէս Թիֆլիսում: Այս ժողովում որոշուեց, Երկրի յեղափոխական գործունէութեան զուգընթաց, լայն տեղ տալ եւրոպական պրոպագանդին: Այդ նպատակով Քրիստափորը նշանակուեց «Դրօշակ»ի խմբագիր եւ եւրոպական պրոպագանդի ղեկավար:

Նոյն ժողովում մշակուեցան նաեւ Դաշնակցութեան կազմական կանոնները:

Երրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1904 թ. Փետր.-Մարտին, Սոֆիայում: Այս ժողովում որոշուեցաւ Սուլթան Աբդուլ Համիտի ահաբեկումը, եւ Քրիստափորը ստանձնեց այդ ձեռնարկի իրագործումը: Որոշուեցաւ նաեւ զօրացնել Կիլիկիայի կազմակերպութիւնը, որի համար Կիլիկիա ուղարկուեցան Ս. Զաւարեանը եւ Վարդանը:

Չորրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1907 թ. Փետր.-Ապրիլին, Վիեննայում: Դաշնակցութեան ամենէն կարեւոր Ընդհանուր ժողովներից մէկը: Այս ժողովում որոշուեց թրքահայ դատին կցել նաեւ ռուսահայ դատը եւ ընդունուեց ընկերվարութիւնը, իբրեւ գործնական նպատակ: Մշակուեցաւ Դաշնակցութեան նոր ծրագիրը: Որոշուեցաւ մասնակցիլ Պարսկաստանի յեղափոխական շարժման, այլեւ համագործակցութիւն Օսմանեան ընդդիմադիր տարրերի հետ:

Այս ժողովից յետոյ Դաշնակցութիւնը ընդունուեց Ընկերվարական Միջազգայինի անդամ:

Հինգերորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ Օսմանեան Սահ-

Հ. Յ. Դ. 8-րդ Ընդհանուր ժողովը

մանագրութիւնից յետոյ, 1909 թ. Սեպտեմբերին, Վառնայում։ Այս ժողովում որոշուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան վարելիք քաղաքականութիւնը սահմանադրական Թուրքիայում։

Վեցերորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1911 թ. Օգոստոս–Սեպտեմբերին, Պոլսում։ Ժողովի օրակարգը կազմում էին առաւելապէս Թուրքահայոց ազգային–մշակութային–քաղաքական հարցերը։

Եօթերորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1913 թ. Օգոստոսին, Կարինում։ Առաջին Ընդհ. ժողովն էր, որ գումարւում էր Մայր Երկրում։ Ժողովը զբաղուեցաւ գլխաւորապէս ազգային եւ պետական հարցերով։

Ութերորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1914 թ. Յուլիս–Օգոստոսին, դարձեալ Կարինում։ Այս ժողովը զուգադիպեց առաջին համաշխարհային պատերազմի սկզբնաւորութեան։ Բարենորոգումների, պատերազմի եւ ինքնապաշտպանութեան հարցերն էին օրակարգի գլխաւոր նիւթը։ Պատերազմի պատճառով ժողովը փակուեցաւ առանց օրակարգի հարցերը սպառելու։

Իններորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1919 թ. Հոկտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երեւանում։ Ժողովը զբաղուեցաւ նորազարդ հայրենիքի կառուցման հարցերով եւ որոշեց նուազագոյն ծրագրում մտցնել Անկախ եւ Միացեալ Հայաստանի կէտը՝ ժողովրդավար կարգերով։ Որոշ փոփոխութիւններ մտցրեց նաեւ կազմակերպական ձեւի մէջ՝ հաստատելով մէկ Բիւրոյի դրութիւնը եւ նրան տալով գործադիր մարմնի իրաւունքներ։

Տասներորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1925 թ. Յունուարին, Փարիզում։

Տասնեւմէկերորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1929 թ. Մարտ–Ապրիլին, Փարիզում։

Տասնեւերկրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1933 թ. Փետր.–Մարտին, Փարիզում։

Տասնեւերրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1938 թ. Յուլիս–Սեպտ.–ին, Գահիրէում։

Տասնեւչորրորդ Ընդհ. ժողովը գումարուեցաւ 1947 թ. Սեպտ.–Հոկտեմբերին, Գահիրէում։

ԱՀԱԲԵԿՈՒՄՆԵՐ

Յայտնի է, որ հայ յեղափոխական շարժումը մեծապէս ազդուած է Բալկանեան ազատագրական պայքարից եւ Ռուսաստանի յեղափոխական կազմակերպութիւններից, որոնց գործելակերպի մէջ կարեւոր տեղ էր գրաւում նաեւ քաղաքական ահաբեկումը։

Ահաբեկումը, մարդկութեան զարգացման ներկայ աստիճանի վրայ, ազատ աշխարհում, ի հարկէ, քաղաքական պայքարի միջոց չէ այլեւս, բայց պատմութեան ընթացքին եղել է անհրաժեշտութիւն, հզօր զէնք՝ սանձահարելու համար չարագործներին եւ բարձրացնելու բռնութեան ճիրաններում դալարուող, յուսահատ բազմութիւնների բարոյական կորովը։ Ժամանակի պայմանները այնպէս էին, որ Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ չէր կարող հրաժարուել այդ զէնքից, ինչպէս իրենից առաջ նրանից օգտուել էին եւ Արմենականներն ու Հնչակեանները։

Հ. Յ. Դաշնակցութեան անդրանիկ ծրագրի «Միջոցներ» բաժնի 8-րդ կէտում ասուած է. «Կռիւ մղել եւ տեւորի ենթարկել կառավարչական մարդկանց, մատնիչներին, դաւաճաններին, վաշխառուներին եւ ամէն տեսակ հարստահարիչներին»։ Եւ իր գրեթէ երեսնամեայ գոյութեան ընթացքին, մինչեւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը, շատ բռնաւորներ ու ոճրագործներ ընկան իրենց կեանքից ձեռք քաշած անձնուէր ահաբեկիչների հարուածների տակ՝ ժողովրդական լեռնացած ցասումի ու վրէժխնդրութեան պոռթկումի հետեւանքով։

Հայ յեղափոխութեան պատմութեան այս գլուխը հարուստ է վիպական դրուագներով ու հերոսական դէմքերով։ Այստեղ կ'արձանագրենք մի քանի դէպքեր միայն, որոնք առանձնապէս ուժեղ տպաւորութիւն գործեցին ժամանակակիցների մտքերի վրայ։

Առաջին շրջանում ահաբեկումը գործադրւում էր գլխաւորապէս կառավարութեան ձեռքին կոյր գործիք դարձած լրտեսների ու մատնիչների վերաբերմամբ, երբ այլեւս սպառւում էին բոլոր միջոցները՝ խրատով եւ յորդորով՝ յետ կեցնելու նրանց չարագործութիւններից։ Այդ դէպքում, կենտր. Կոմիտէն, բոլոր փաստերը հանդամանօրէն ստուգելուց յետոյ, դատում էր յանցաւորին եւ վճիռ արձակում։ Վճիռը պէտք է տրուէր միաձայնութեամբ։ Կարեւոր դէպքերում պէտք է ստացուէր նաեւ

հարեւան Կենար. Կոմիտէի հաւանութիւնը։ Վճռի գործադրութիւնը թռուցիկով կամ մամուլի միջոցով յայտարարւում էր ի գիտութիւն հասարակութեան։

Այս կարգի ահաբեկուածներից էին, օրինակ, Բաղէշի կուսակալ Թահսին փաշայի աջ բազուկ Խաչիկ Բախալեանը, 1895-ին, կամ, Պոլսում, նախկին վարդապետ դաւաճան Մամբրէն, նոյն տարուայ Օգոստ. 3-ին, կամ մատնիչ Կոմիտաս քահանան, Վանում, 1896 թ. Հոկտ. 2-ին, կամ, Տարօնի Ս. Կարապետ վանքի նախկին միաբան վարդ. Եսայեանը, 1899 թ. Օգոստ. 24-ին, եւ կամ Արամ Արամեանին մատնող դաւաճան Տիգրան Գէորգեանը (Ազրայէլ), 1903 թ. Նոյեմբ. 14-ին, Խնուսում եւայլն։

Սակայն, աւելի նշանակալից ու ցնցող էին կառավարական բարձր պաշտօնեաների կամ անհատ չարագործների դէմ ուղղուած ահաբեկումները։ Այդպիսիներից յիշենք հետեւեալները.

1901-ի գարնան Անդրանիկի եւ ընկերների ձեռքով ահաբեկուեցին Աղբիւր Սերոբի սպանիչ Պշարայ Խալիլ աղան եւ իր թիկնապահները։

1904 թ. Օգոստ. 31-ին, Օլթիում գնդակահարուեց Թումանի խմբի կոտորածի գլխաւոր ղեկավար գնդ. Բրկովը։

Եկեղեցական կալուածների գրաման եւ հայ-թաթարական կռիւների տարիներին, 1903-1905, կազմուեց Կովկասեան Ահաբեկիչ Մարմինը, որի վրայ դրուեց չարիք դարձած կառավարական պաշտօնեաներին եւ յեղափոխութեան դէմ դաւաճանողներին պատժելու պարտականութիւնը։ Սրա որոշումով, 1904-5-ին ահաբեկուեցան՝ Գանձակի փոխ-նահանգապետ Անդրէյեւը, Իգդիրի դատաստապետ արիւնարբու Բոգուսլաւսկին, Կարսի ժանտարմական թարգման Դրոզդովը, Շուշիի ոստիկանապետ Սախարովը, նոյն տեղի հարկային վերատեսուչ Շչերբակովը, Թիֆլիսի թաղային վերահսկիչ Տէր-Սահակովը, Գուրիայի ջարդարար Զօր. Ալիխանովը եւ ուրիշներ։

1905 թ. Մայիս 11-ին, Բաքւում, օրը ցերեկով, ռումբի խիզախ մի հարուածից ընկաւ նահանգապետ իշխան Նակաշիձէն՝ Բաքուի հայոց ջարդերի գլխաւոր պատասխանատուն։

1907 թ. Սեպտ. 27-ին, Պոլսի ճամբու վրայ, Բաթումում, ահաբեկուեց Վանի նախկին կուսակալ Ալի բէյը, Վասպուրականի հայութեան դէմին իր գործած անհաշիւ չարիքների համար։

1910-ին, Երեւանում, ահաբեկուեց ժանտարմական ռոտմիստր Բուրգացկին։

Այլ կարգի ահաբեկում էր, առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, Իթթիհատական ոճրագործների պատիժը։ Պատերազմի ընթացքին, Դաշնակից կառավարութիւնները յայտարարել էին, թէ Թուրք կառավարութեան անդամները անձնա-

պէս պատասխանատու են եւ պիտի պատժուին հայկական ջարդերի համար։ Սակայն, պատերազմը վերջացաւ, եւ Դաշնակիցները ոչ միայն չպատժեցին յանցաւորներին, այլեւ, զանազան միջոցներով, հովանաւորեցին նրանց։ Հայութեան վրդովուած խիղճը չէր կարող հաշտուել նման տմարդութեան հետ եւ ջանաց սեփական ձեռքով լուծել վրէժը։ Եւ ահա մէկը միւսի յետեւից, ահաբեկիչների դնդակներից, թաւալգլոր ընկան հայկական կոտորածների հեղինակները։

1921 թ. Մարտ 16-ին, Բերլինում, Սողոմոն Թէհլէրեանի դնդակին զոհ գնաց Մեծ Եղեռնի գլխաւոր պատասխանատուն՝ Իթթիհատի պարագլուխ Թալէաթ փաշան։

1921 թ. Յուլիս 19-ին, Պոլսում, Միսաք Թորլաքեանի դնդակից ընկաւ մի ուրիշ հայակեր ճիւաղ, Ազրբէջանի կառավարութեան անդամ Ջիւանշիրը՝ Բաղուի հայերի կոտորածի գլխաւոր հեղինակներից մէկը։

1921 թ. Դեկտ. 6-ին, Հռովմում, մի յանդուգն երիտասարդի ձեռքով ահաբեկուեց Թուրքիայի վարչապետ Սայիտ Հալիմ փաշան, որի օրով տեղի ունեցան հայկական կոտորածները։

1922 թ. Ապրիլ 17-ին, Բերլինում, Արամ Երկանեանի եւ իր ընկերոջ դնդակներից իրենց արժանաւոր պատիժը ստացան հայկական տեղահանութիւնների եւ ջարդերի կազմակերպիչ բորենիներ Բէհաէդդին Շաքիրը եւ Զէմալ Ազմին։

Նոյն 1922 թ. Յուլիս 21-ին, Թիֆլիսում, ահաբեկուեց Իթթիհատական եռապետութեան անդամ Զէմալ փաշան։ Այդ առթիւ, բոլշեւիկեան Զէկան հարիւրաւոր անմեղ մարդկանց ձերբակալեց եւ առանց դատ ու դատաստանի, տարիներով չարչարեց բանտերում ու աքսորավայրերում։

Նոյն տարիներին տեղի ունեցան եւ ուրիշ, երկրորդ կարգի ոճրագործների ահաբեկումներ, որոնց թւում Հնչակեան դաւաճաններ Հմայեակ Արամեանի եւ Եասեանի մահապատիժները։

Թալէաթի եւ Ջիւանշիրի ահաբեկիչները՝ Սողոմոն Թէհլէրեանն ու Միսաք Թորլաքեանը դատուեցան գերման եւ անգլիական դատարաններում։ Երկուսի դատավարութիւնն էլ, Բերլինում ու Պոլսում, տեղի ունեցաւ հրապարակով եւ լայն արձագանգ գտաւ ամբողջ աշխարհում՝ հայերի վրայ հրաւիրելով հանրային համակրանքը։ Երկուսն էլ անպարտ արձակուեցին։

Քառորդ դար անցած, Նիւրէնբերգի միջազգային դատարանը նացիների վերաբերմամբ կիրառեց արդարութեան օրէնքը՝ ինչ որ պաշտօնական Եւրոպան զլացաւ կիրառել հայկական կոտորածների հեղինակ Թուրքերի վերաբերմամբ։ Հայութեան ջարդարարներին պատուհասողը հայ ժողովուրդը ինքը եղաւ։ Եւ քաղաքակիրթ մարդկութիւնը իրաւունք տուեց հայերին։

Հ. Յ. Դ. ՄԱՄՈՒԼ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանակով եւ բովանդակութեամբ Հ. Յ. Դաշնակցութեան մամուլն ու հրատարակութիւնները պատկառելի տեղ կը գրաւեն հայ իրականութեան մէջ։ Զարմացանցութիւն չըլլար, եթէ ըսենք, թէ Դաշնակցական մամուլը, վերջին կէս դարուն, առաջնորդող դեր կատարած է հայ ազգային կեանքին մէջ, եւ առաւելապէս Դաշնակցութեան գրականութեամբ սնած է ու կը սնանի հայ նոր սերունդը։

Մեր պայմաններու մէջ անհնար է ճշդորոշել եւ լրիւ կերպով ներկայացնել Հ. Յ. Դաշնակցութեան պարբերական եւ ոչ-պարբերական հրատարակութիւններու ցանկը։ Գրեթէ ոեւէ տեղ գոյութիւն չունին հայ մամուլի եւ հրատարակութիւնների ամբողջական հաւաքածոներ։ Բացի այդ, քաղաքական պայմաններու հետեւանքով, լոյս տեսած են բազմաթիւ թերթեր անկուսակցական անուան տակ, մինչդեռ իրապէս Դաշնակցական հրատարակութիւններ են եղած։ Եղած են եւ կան նաեւ անհատական նախաձեռնութեամբ կատարուած հրատարակութիւններ, որոնք իրապէս կուսակցական բնոյթ կը կրեն։

Յամենայն դէպս, օգտուելով գլխաւորապէս Հ. Յ. Դ. Կեդրոնական Մատենադարանի հաւաքածոներէն ու նիւթերէն, որոնք, դժբախտաբար, նոյնպէս լրիւ չեն, կարելի է մօտաւոր կերպով ամբողջական պատկերը ներկայացնել Հ. Յ. Դաշնակցութեան մամուլի եւ հրատարակութիւններու։

Հ. Յ. Դաշնակցութեան առաջին հրատարակութիւնը պէտք է նկատել «Մանիֆէստ» թռուցիկը, որ ուղղուեցաւ հասարակութեան Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութենէն անմիջապէս յետոյ՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն ստորագրութեամբ։ Անոր յաջորդեցին թիւ 1 եւ 2 «Թռուցիկ թերթեր»ը։ Թէ՛ «Մանիֆէստ»ը, թէ՛ «Թռուցիկ թերթեր»ը եւ թէ անոնց յաջորդող «Դրօշակ»ի առաջին երկու թիւերը հրատարակուեցան Թիֆլիս Մոսկուայի «Ազատութեան Աւետարեր»էն ստացուած տառերով։

1891-էն սկսած Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'ունենայ իր պաշտօնաթերթը՝ «Դրօշակ», որու առաջին թիւը լոյս կը տեսնէ 1891 թ. Մայիսին, Թիֆլիսի մէջ։ Երկրորդ թիւն եւս լոյս տեսաւ Թիֆլիսի մէջ, 1891 թ. Սեպտեմբերին։ Երրորդը՝ Քոնստանցայի մէջ


ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱՅ ՄԱՄՈՒԼԸ
1890-1950

(Ռումանիա)։ Զորրորդ թիւէն սկսած՝ «Դրօշակ»ը հաստատուեցաւ Ժընեւի մէջ։ «Դրօշակ»ը լոյս կը տեսնէր, իբրեւ ամսագիր, երբեմն՝ ամիսը երկու անգամ։

«Դրօշակ»ը ունեցաւ նաեւ իր յեղափոխական –ընկերվարական հրատարակութիւններու մատենաշարը։

Ժամանակագրական կարգով, Դաշնակցական մամուլի ընտանիքին մէջ, երկրորդ տեղը կը պատկանի Ամերիկայի «Հայրենիք»ին, որ սկսաւ լոյս տեսնել 1899–ին, Նիւ Եորքի մէջ եւ շուտով փոխադրուեցաւ Պոսթըն, ուր եւ կը մնայ մինչեւ այսօր, որպէս Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի պաշտօնաթերթ։ «Հայրենիք»ը սկսաւ հրատարակուիլ, իբրեւ շաբաթաթերթ, Թ. Զարշաւճեանի խմբագրութեամբ։ Կարճ ժամանակէ մը վերջ, անոր խմբագրութիւնը ստանձնեց Ա. Վռամեանը եւ վարեց մինչեւ 1906 թ.։ Այնուհետեւ, յաջորդաբար, «Հայրենիք»ի խմբագրութիւնը վարած են Արամ Աշոտ, Յ. Զագմաղչեան, Ն. Թաշճեան, Սիամանթօ, Ս. Վրացեան, Մ. Համբարձումեան, Ռ. Դարբինեան, Մ. Օղանեան, Վ. Ահարոնեան։

1913 թ. Յունիս 24–ին «Հայրենիք»ը սկսաւ հրատարակուիլ, իբրեւ երկօրեայ եւ նոյն տարուայ վերջերը ունեցաւ սեփական տողաչար մեքենայ։ 1915 թ. Դեկտ. 6–էն ի վեր օրաթերթ է։

1922–ին սկսաւ լոյս տեսնել «Հայրենիք» ամսագիրը, որու 25–ամեայ յոբելեանը տօնուեցաւ 1947–ին եւ այդ առթիւ հանգանակութեամբ կազմուեցաւ Հայրենիքի Գրական Հիմնադրամը, որու արդիւնքով 1948–էն ի վեր կը հրատարակուի «Արմինեան Ռեվիու» անգլիերէն պարբերաթերթը։

1934–ին հիմնուեցաւ եւ կանոնաւոր կերպով կը շարունակէ լոյս տեսնել ամերիկահայ նոր սերունդին նուիրուած «Հայրենիք» անգլիերէն շաբաթաթերթը — Հայրենիք Ուիքլի։

«Հայրենիք»ներու կողքին կայ նաեւ հայերէն եւ անգլիերէն հրատարակութիւններու մատենաշար մը։

«Հայրենիք»ները կը հրատարակուին Հ. Յ. Դաշնակցութեան սեփական տպարանին մէջ, որ օժտուած է արդիական մեքենայութեամբ եւ տպարանական ամէն տեսակ յարմարութիւններով։

Փալիֆորնիոյ մէջ Դաշնակցութեան մամուլը կը ներկայացնէ «Ասպարէզ»ը՝ հիմնուած 1908–ին, որպէս շաբաթաթերթ, ապա՝ եռօրեայ, 1923–24–ին երկօրեայ, վերջը նորէն շաբաթաթերթ, այժմ եռօրեայ։ Կը հրատարակուի սեփական տպարանին մէջ։

Այնուհետեւ, այստեղ ու այնտեղ, կը սկսին երեւալ Դաշնակցական թերթեր՝ մարմիններու եւ անհատներու նախաձեռնութեամբ։ 1900–1910 տասնամեակին լոյս կը տեսնեն 50–էն աւելի

Դաշնակցական թերթեր։ Ցիշենք ատոնցմէ ամենէն կարեւորները։

Ռուսական առաջին յեղափոխութենէն յետոյ, Թիֆլիսի մէջ, իբրեւ Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի պաշտօնաթերթ, սկսաւ հրատարակուիլ «Յառաջ» օրաթերթը, որու առաջին թիւը լոյս տեսաւ 1906 թ. Յունուար 17–ին։ Պաշտօնական արտօնատէրն էր Աւ. Սահակեանը (Հայր Աբրահամ)։ Թերթը կը խմբագրուէր յատուկ մարմնի մը կողմէ, որուն կ'անդամակցէին Աւ. Ահարոնեան, Յոնան Դաւթեան, Եղիշէ Թոփչեան, Գ. Խաժակ, Լիպ. Նազարեան, Յովհ. Իւսուֆեան եւ Մ. Վարանդեան։ Մօտիկ աշխատակիցներ էին՝ Ս. Զաւարեան, Լ. Ակնունի (Եւրոպայէն), Յ. Թումանեան, Լէօ, Աւ. Իսահակեան, բժ. Լ. Աթաբէգեան (վերջը անջատուած), Ս. Տիգրանեան, Յ. Քաջազնունի, Ն. Աղբալեան, Յ. Շահրիկեան, Տ. Յովհաննիսեան, Տ. Ռաշմաճեան, Յ. Տէր-Միրաքեան, Ստ. Լիսիցեան, Ա.–Դօ, Մ. Յարութիւնեան, Ե. Ֆրանգեան, Գ. Խատիսեան, Աւ. Շահխաթունեան եւ բազմաթիւ ուրիշ երէց ու երիտասարդ գրողներ ու հրապարակագիրներ։

«Յառաջ»ը, իր երեք տարուայ գոյութեան ընթացքին, բազմաթիւ անգամներ խափանուեցաւ կառավարութեան կողմէ՝ «վնասակար ուղղութեան» պատճառով եւ մօտ 15 անուանափոխութիւն ունեցաւ — «Յառաջ», «Ալիք», «Զանգ», «Երկիր», «Ժամանակ», մինչեւ 1907–ի վերջը. «Փայլակ», «Ժայռ», «Խարիսխ», «Կովկասեան Առաւօտ», «Նոր Ալիք» եւ «Վտակ»՝ 1908–ին. այնուհետեւ՝ «Զանգ» եւ «Գործ»։

Օրաթերթին կից՝ կը հրատարակուէր «Յառաջի Գրադարան»ի շարքը։

Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ռուս կառավարութեան յարուցած հալածանքներու հետեւանքով՝ 1909–ին Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի պաշտօնաթերթի հրատարակութիւնը դադրեցաւ։ Անոր փոխարէն, 1909–ի վերջերը, սկսաւ լոյս տեսնել «Հորիզոն»ը, որպէս անկուսակցական օրաթերթ՝ խմբագրութեամբ եւ մերձաւոր աշխատակցութեամբ Լէոյի, Յովհ. Թումանեանի, Ղ. Աղայեանի եւ ուրիշներու՝ արտօնատիրութեամբ Համբ. Մելիքեանի, որու սեփականութիւնը դարձաւ թերթը։ Այնուհետեւ, «Հորիզոն»ի խմբագիր կամ խմբագրութեան անդամ եղած են Ն. Աղբալեանը, Ա. Ջամալեանը, Աւ. Շահխաթունեանը, Մ. Վարանդեանը։ Կ'աշխատակցէին «Յառաջ»ի գրեթէ բոլոր աշխատակիցները եւ անկուսակցականներէն ոմանք, ինչպէս Շիրվանզատէն։ «Հորիզոն»ը ունեցաւ նաեւ իր գրական ամսօրեայ յաւելուածը «Հորիզոն» անունով (1914–15)։

1917 թ. յեղափոխութենէն յետոյ, «Հորիզոն»ը դարձաւ Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյի պաշտօնաթերթ եւ շարունակեց լոյս



«Դրօշակ»ի սեփական շէնքը, Ժընեւում

տեսնել Ս. Վրացեանի եւ Աւ. Շահխաթունեանի, ապա՝ Վ. Նաւասարդեանի խմբագրութեամբ։

Միաժամանակ հիմնուեցաւ Հ. Յ. Դ. Ար. Բիւրոյի ռուսերէն պաշտօնաթերթ «Молот»ը՝ Աւ. Շահխաթունեանի խմբագրութեամբ եւ Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոյի պաշտօնաթերթ՝ արեւմտահայոց կեանքին նուիրուած «Ազատամարտ»ը՝ Նիկ. Աղբալեանի խմբագրութեամբ։

Շարունակուեցաւ նաեւ «Յառաջ Գրադարան» մատենաշարի հրատարակութիւնը։

Իբրեւ Հ. Յ. Դ. Վրաստանի Կեդր. Կոմիտէի պաշտօնաթերթ, Թիֆլիսի մէջ, 1917–21 թ., հրատարակուեցաւ «Աշխատաւոր» օրաթերթը Վ. Խորէնիի, Կ. Ղազարեանի եւ այլոց խմբագրութեամբ։

Բագուի մէջ, 1915–19–ին, կը հրատարակուէր «Արեւ» օրաթերթը, իբրեւ Ռսկանապատի Կեդր. Կոմիտէի պաշտօնաթերթ։

Օսմանեան Սահմանադրութենէն յետոյ Թրքահայկական դաւառները ողողուեցան այլազան հրատարակութիւններով՝ սկիզբը մեծ մասամբ՝ խմորատիպ։ Ատոնց մէջ ամենէն տեւականը եւ տարածունը եղան Կարնոյ «Յառաջ»ը (1909–14)՝ յաջորդական խմբագրութեամբ Ե. Թուիչեանի, Ս. Վրացեանի, Շ. Միսաքեանի եւ Փիլոսի։ Վանի «Աշխատանք»ը (1909–15)՝ յաջորդական խմբագրութեամբ Իշխանի, Ա. Մաքսապետեանի եւ Հմ. Մանուկեանի։ Իզմիրի «Աշխատանք»ը (1910–14)՝ խմբագրութեամբ Ս. Թոքաճեանի։

Պոլսոյ մէջ հիմնուեցաւ Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրոյի պաշտօնաթերթ «Ազատամարտ»ը, որուն առաջին թիւը լոյս տեսաւ 1909 թ. Յունիս 10/23–ին։ «Ազատամարտ»ը կը խմբագրուէր խմբագրական մարմնի մը միջոցով՝ գլխաւորութեամբ Ռ. Զարդարեանի։ Խմբագիրներն եւ աշխատակիցները եղած են Ս. Զաւարեան, Է. Ակնունի, Ա. Վռամեան, Յ. Շահրիկեան, Գ. Խաժակ, Լիպ. Նազարեան (Լեւնեան), Ռ. Դարբինեան, Գեղ. Բարսեղեան, Հ. Համբարձումեան, Ն. Փափազեան, Դ. Վարուժան, Սիամանթօ, Գ. Զոհրապ, Մ. Վարանդեան, Աւ. Ահարոնեան, Աւ. Խահակեան, Վ. Փափազեան, Զ. Եսայեան, Արտ. Յարութիւնեան, Մ. Կիւրճեան, Բարսեղ Շահպազ, Մար, Շ. Միսաքեան, Ս. Վրացեան, Կ. Փաշայեան եւ բազմաթիւ ուրիշ արեւմտահայ եւ արեւելահայ երէց ու կրտսեր մտաւորական ուժեր։

Մինչեւ 1912 թ. ազատ եւ անարգել հրատարակուելէ յետոյ, «Ազատամարտ» եւս ենթարկուեցաւ կառավարութեան խափանարար քաղաքականութեան, պարբերաբար փակուեցաւ եւ յաջորդաբար ունեցաւ անունի փոփոխութիւն՝ «Առաջամարտ», «Բագին»,

«Բիւթանիա», կրկին «Առաջամարտ», «Բիւթանիա», «Ազդակ», «Մեղու», «Շանթ», «Ճակատամարտ»։ Վերջին թիւը (1815 թիւ) լոյս տեսաւ 1914, Ապրիլ 11/24–ին։

«Ազատամարտ»էն առաջ ու ետքը խափանուեցան բոլոր գաւառական թերթերը, բացի Վանէն։

1910–11–ին «Ազատամարտ»ը ունեցաւ նաեւ Գրական–Գիտական «Ազատամարտ» ամսօրեայ յաւելուած։

1918–ի զինադադարէն վերջը, իբրեւ շարունակութիւն «Ազատամարտ»ի, յաջորդական անուանափոխութիւններով, հրատարակուեցան «Ճակատամարտ», «Արիամարտ», «Արդարամարտ»՝ խմբագրութեամբ Յ. Ճ. Սիրունիի, Շ. Միսաքեանի եւ Մ. Ասլանեանի։ Եւ անոնց իբրեւ յաւելուած՝ «Ճակատամարտ» մանկավարժական եւ գիւղատնտեսական ամսագիր։

Պոլսի դրաւումէն ետքը քեմալականներու կողմէ՝ այս հրատարակութիւնները դադրեցան։

Հայաստանի Հանրապետութեան շրջանին, 1919–ին, Երեւանի մէջ հիմնուեցաւ Հ. Յ. Դ. Բիւրոյի պաշտօնաթերթ «Յառաջ» օրաթերթը՝ Ս. Վրացեանի խմբագրութեամբ, որ շարունակուեցաւ մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը։ Վերջին շրջանին «Յառաջ»ի խմբագրութիւնը վարեցին Վ. Նաւասարդեանը, Ռ. Դարբինեանը եւ Օզանեանը։ «Յառաջ»ը միեւնոյն ժամանակ եւ կառավարութեան կէս–պաշտօնաթերթն էր։

Հանրապետութեան տարիներուն, Հայաստանի մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը դրեթէ բոլոր կարեւոր կեդրոններու մէջ ունեցաւ իր թերթերը։ «Յառաջ»էն զատ, Երեւանի մէջ, կը հրատարակուէր «Հայաստանի Աշխատաւոր»՝ Վ. Խորէնիի խմբագրութեամբ, «Արարատեան Աշխատաւոր» (Էջմիածին)՝ Գ. Քեալաշեանի խմբագրութեամբ, «Շիրակի Աշխատաւոր» (Ալեքսանդրապոլ)՝ Հ. Զոլաղեանի եւ Հ. Սարգսեանի խմբագրութեամբ եւայլն։

Պարսկաստանի մէջ եւս — Թաւրիզ ու Թէհրան — Հ. Յ. Դաշնակցութիւնը ունեցաւ իր թերթերը, որոնք իրենց գաղափարական նպաստը բերին ոչ միայն տեղական կեանքին, այլեւ Դաշնակցութեան ընդհանուր գործին։ Յիշենք Թաւրիզի «Առաւօտ»ը (1909–12)՝ Հ. Պանիրեանի խմբագրութեամբ։ Նոյն տեղի «Այգ»ը (1912–22)՝ Գ. Յակոբեանի խմբագրութեամբ։

Հայաստանի խորհրդայնացումով եւ Պոլսոյ քեմալացումով Հ. Յ. Դաշնակցութեան մամուլը զարգացաւ արտասահմանի մէջ։ Հ. Յ. Դաշնակցութեան մամուլի գլխաւոր կեդրոններ դարձան Փարիզը, Գահիրէն, Պոսթընը եւ Սիւրիա–Լիբանանը։

Փարիզի մէջ, 1925–ին, սկսաւ վերհրատարակուիլ «Դրօշակ»ը, իր մատենաշարով։

Նոյն թուականին սկսաւ լոյս տեսնել «Ցառաջ»ը՝ Շ. Միսաքեանի խմբագրութեամբ։

1938–էն ի վեր, պատերազմի տարիներու ընդհատումով, կը հրատարակուի նաեւ «Հայաստան» հայերէն–ֆրանսերէն ամսօրեակը, իբրեւ նոր սերունդի պաշտօնաթերթ։

Գահիրէի մէջ, 1912–ին հիմնուած համեստ «Ցուսաբեր»ը 1921–էն ի վեր, Վ. Նաւասարդեանի խմբագրութեան տակ, դարձաւ մեծածաւալ եւ ազդեցիկ օրաթերթ մը։

Պատերազմի ընթացքին, անոր կողքին, լոյս տեսաւ «Ցուսաբեր» գրական ամսագիրը Գ. Միսիթարեանի խմբագրութեամբ։

«Ցուսաբեր»ը ունի նաեւ առանձին հրատարակութիւններու մատենաշար մը։

Պէյրութի մէջ, եռօրեայ «Փիւնիկ»էն յետոյ (1924–25) 1927–էն ի վեր կը հրատարակուի «Ազդակ» օրաթերթը եւ անոր կողքին՝ «Ազդակ» գրական շաբաթաթերթը։

Հալէպի մէջ, 1945–էն ի վեր, կը հրատարակուի «Արեւելք» օրաթերթը։

Թեհրանի մէջ կը հրատարակուի «Ալիք» օրաթերթը՝ հիմնուած 1930–ին, իբրեւ շաբաթաթերթ։

Աթէնքի մէջ, վերջին պատերազմէն յետոյ, լոյս կը տեսնէ «Ազատ Խօսք» օրաթերթը, իբրեւ շարունակութիւն «Նոր Օր»ի, որ հիմնուեցաւ 1923–ին Գ. Լազեանի խմբագրութեամբ եւ պատերազմի հետեւանքով դադրեցաւ 1941–ին։

Հարաւ. Ամերիկայի Հ. Ց. Դաշնակցութեան մամուլը ներկայացուած է Պուէնոս Այրէսի «Արմենիա» եռօրեակի միջոցով՝ հիմնուած 1931–ին հանդուցեալ ընկերներ Ց. Թախթաճեանի, Արամ Երկանեանի, Ց. Միրաքեանի եւ Ս. Թոփչեանի ջանքերով։

Իր դաղափարներով մեր մամուլի ընտանիքին կը պատկանի եւ «Գոյամարտ» շաբաթաթերթը, որ 1948–էն ասդին կը հրատարակուի Բաղտադի մէջ։

Պուքրէշի «Արազ»ը (խմբ. Ց. Ճ. Սիրունի) եւ Սոֆիայի «Արաքս»ը (խմբ. Օն. Միսիթարեան) դադրեցան վերջին պատերազմի հետեւանքով, պատերազմէն վերջ, այլեւս չվերհրատարակուեցան Խորհրդային իշխանութեան դրած արգելքի հետեւանքով։

1947–48 թուականներուն, Շտուտկարտի հայ ճամբարի մէջ, հրատարակուեցաւ «Բանբեր» շաբաթաթերթը, իբրեւ հայ տարագիրներու ապրումներու թարգմանը։

Իրականութեան դէմ մեղանչած չենք ըլլար, եթէ Դաշնակցական մամուլի ընտանիքի անդամներու կարգին դնենք եւ Պէյրութի Հայ Ճեմարանի Ընթացաւարտներու երկամսեայ «Ակօս»ը եւ Հալէպի Գրական–Գեղարուեստական «Նայիրի»ի պարբերականը՝ Ա. Ծառուկեանի խմբագրութեամբ։

«ԻՍԿՕ ՎՅՈՓՈՏՈՎՅԽ՝ ՈՒՍՈՒՑԻՉԻ՝ ՊՐԱՎԱՍՏՈՒՅՏՈՎՈՒ ՎԽՈՒՇՕՎՅԽ»

Այս շարքին պէտք է դասել եւ Փարիզի հայ պատմութեան եւ մշակոյթին նուիրուած «Վէմ» երկամսեայ հանդէսը (1933–38)՝ Ս. Վրացեանի խմբագրութեամբ։

Վերջապէս, նոյն ընտանիքէն է տարեգիրքերու շարքը՝ Համազգայինի Տարեգիրքը, Արմէն Սեւանի «Մասիս»ը, Յ. Ճ. Սիրունիի «Արաղ»ը, Շ. Միսաքեանի «Հայկաշէն»ի եւ «Արածանի»ի թիւերը, Ս. Վրացեանի «Հայրենիք Տարեգիրք–Տօնացոյց»ներու 5 հատորը (1943–47), «Արեւելք»ի տարեգիրքը, Յ. Խաչմանեանի, Մելիք Շահի տարեգիրքերը եւայլն։

Ներկայիս, ուրեմն, արտասահմանի հայաբնակ բոլոր երկիրներու մէջ, ուր ազատ խօսքը բռնաբարուած չէ, Հ. Յ. Դաշնակցութիւնը ունի իր սեփական մամուլը — օրաթերթ, երկօրեակ, եռօրեակ, շաբաթաթերթ, ամսագիր, երկամսեայ ու եռամսեայ պարբերականներ։ Անոնք բոլորը նուիրուած են միեւնոյն գաղափարին եւ նոյն գործին ու կը հետեւին միեւնոյն ուղղութեան։ Անոնք կը ծառայեն Հայաստանի ազատութեան, հայ ժողովրդի պաշտպանութեան ու անկաշկանդ զարգացման եւ ազատ ու ժողովրդավար սկզբունքներու յաղթանակի դատին՝ Միացեալ, Անկախ եւ Ազատ Հայաստան նշանաբանով։

Մամուլին զուգընթաց՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը հրատարակած է եւ կը շարունակէ հրատարակել գիտական, գրական, հասարակական, ընկերային, տնտեսական ու գեղարուեստական բազմաթիւ մեծ ու փոքր հատորներ՝ «Դրօշակ», «Յառաջ», «Հայրենիք», Յուսաբեր »եւ այլ մատենաշարերու միջոցով, կամ մարմիններու եւ անհատներու կողմէ։

Թէ ի՞նչքան է թիւը, սկիզբէն մինչեւ այսօր, Դաշնակցական թերթերու, պարբերականներու եւ առանձին հրատարակութիւններու, ատոյգ կերպով կարելի չէ ըսել։ Ստորեւ կը դնենք ցանկը Դաշնակցական մամուլի եւ մատենաշարներու միջոցով լոյս տեսած գիրքերը։ Այդ ցանկը, ի հարկէ, լրիւ չէ, բայց մօտաւոր գաղափար կուտայ այն հսկայ աշխատանքի մասին, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը կատարած է եւ նոյն թափով կը շարունակէ կատարել նաեւ հայ ժողովրդի քաղաքական, հասարակական ու մշակութային դաստիարակութեան մարզին մէջ։

Հ. Յ. Դաշնակցութեան հրատարակած միայն թերթերու եւ պարբերականներու թիւը ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐԸ կ'անցնի...

ՑԱՆԿ

Ազատամարտ	Պոլիս, 1909–14	Օրաթերթ. խմբագիր՝ Ռ. Զարդարեան եւ խմբագրական Մարմին:
Ազատամարտ	Պոլիս, 1910–11	Յաւելուած Ազատամարտ օրաթերթի:
Ազատամարտ	Թիֆլիս, 1917–18	Օրաթերթ. օրգան Հ.Յ.Դ. Արեւմտ. Բիւրոյի: Խմբ. Ն. Աղբալեան եւ Խմբ. Մարմին:
Ազատ Հայաստան	Երեւան, 1921	Օրաթերթ, Խմբ. Ա. Զիլինգարեան, Մ. Օզանեան:
Ազատ Օր	Աթէնք, 1944–էն	Օրաթերթ. Խմբ. Մարմին:
Ազդակ	Պոլիս, 1908–9	Շաբաթաթերթ. Խմբ. Շ. Միսաքեան, Գ. Բարսեղեան, Վ. Թաթուլ եւ Զ. Եսայեան:
Ազատ Սիւնիք	Գորիս, 1921	Շաբաթաթերթ:
Ազատ Խօսք	Սոֆիա, 1932–35	Օրաթերթ. Խմբ. Մարմին:
Ազդակ	Պէյրութ, 1927–էն	Օրաթերթ. Արտօնատէր Հայկ Բալեան:
Ազդակ	Պէյրութ, 1943–էն	Շաբաթաթերթ. Յաւելուած Ազդակ–ի:
Ազդակ	Պոլիս, 1912–13	Օրաթերթ. Ազատամարտ–ի փոխարէն:
Ազդարար	Պոլիս, 1927–31	Օրաթերթ. Խմբ. Մանուկ Աւլանեան:
Ալիք	Թիֆլիս, 1906	Յառաջ–ի շարունակութիւնը:
Ալիք	Կարին, 1914	Օրաթերթ. «Յառաջ»–ի շար. Վերջին թիւն է 1914, Յուլիս 19:
Ալիք	Սելանիկ, 1923–27	Օրաթերթ. Խմբ. Կարօ Գէորգեան եւ Լեւոն Մօղեան:
Ալիք	Թէհրան, 1930–էն	Շաբաթաթերթ. կը շարունակուի որպէս օրաթերթ: Խմբ. Մարմին:
Այգ	Թաւրիզ, 1912–22	Եռօրեայ թերթ. Խմբ. Գ. Յակոբեան:
Այգ	Թէհրան, 1930	Շաբաթաթերթ. Խմբ. Մարմին:
Աշխատանք	Վան, 1909–15	Շաբաթաթերթ. Խմբագիրներ յաջորդաբար՝ Մաքսապետեան, Իշխան, Հմ. Մանուկեան:
Աշխատանք	Իզմիր, 1910–14	Շաբաթաթերթ, Եռօրեայ. Խմբ. Ս. Թոքաճեան:
Աշխատանք	Երեւան, 1916–19	Եռօրեայ. Խմբ. յաջորդաբար Հմ. Մանուկեան, Բարունակ Կապուտիկեան
Աշխատաւոր	Թիֆլիս, 1917–20	Շաբաթաթերթ, եռօրեայ եւ օրաթերթ Խմբ. Վահան Խորէնի:

---

*) Դաշնակցական մամուլի ցանկը, քաղելով Հ. Յ. Դ. Կեդր. Մատենադարանէն եւ այլ աղբիւրներէ, պատրաստուած է ընկ. Սահակ Տէր Թովմասեանի աջակցութեամբ: ԽՄԲ.

Ապառաժ	Շուշի, 1917–19	Կիսամսեայ. խմբ. Հայրապետ Մուսայէլեան։
Առաջամարտ	Պոլիս, 1912	Օրաթերթ Ազատամարտի փոխարէն։
Առաւօտ	Թաւրիզ, 1909–12	Շաբաթաթերթ. խմբ. Հ. Պանիրեան։
Ասպարէզ	Ցրէզնօ, 1908–էն	Շաբաթաթերթ, երկօրեայ 1923–24ին, եռօրեայ 1948–էն։ Յաջորդական խմբագիրներ՝ Սէքլէմեան, Յ. Գապատայեան, Ա. Միքայէլեան, Մ. Օզանեան, Յ. Ամատունի, Մ. Վերածին, Մ. Համբարձումեան, Ա. Խտրեան, Մելիք Շահ։
Ասպարէզ	Շուշի, 1917	Կիսամսեայ. խմբ. Հ. Մուսայէլեան։
Արազ	Պուքրէշ, 1933–44	Եռօրեայ. խմբ. Յ. Ճ. Սիրունի։
Արագած	Ալէքսանդրապոլ, 1912	Եռօրեայ. խմբ. Պ. Այվազեան։
Արաքս	Պուքրէշ, 1915	Շաբաթաթերթ
Արաքս	Սոֆիա, 1926	Օրաթերթ. խմբ. Յ. Տէվէճեան։
Արեւ	Ալէքսպոլ., 1914	Շաբաթաթերթ. խմբ. Մարմին։
Արեւ	Պաքու, 1915–19	Օրաթերթ. խմբ. Մարմին։
Արդարամարտ	Պոլիս, 1918	Օրաթերթ. խմբ. Շ. Միսաքեան, Յ. Ճ. Սիրունի։
Արիամարտ	Պոլիս, 1918	Օրաթերթ. Շաբ. Արդարամարտ–ի։
Արմենիա	Պ. Այրէս, 1931–էն	Եռօրեայ. օրգան Հար. Ամերիկայի Հ. Յ. Դ. Մեկուսի Կոմիտէի։
Armenian Bulletin	Նիւ Եորք, 1946–47	Հրատ. Հայ Դատի Յանձնախումբի։ Խմբ. Տ. Յակոբեան։
Armenian Review	Պոսթըն, 1948–էն	Եռամսեայ. խմբ. Ռ. Դարբինեան։
Armenian Quarterly	Նիւ Եորք, 1947	Եռամսեայ. Հրատ. Հայ Դատի Յանձնախումբի։ Խմբ. Կ. Զարեան, Եդ. Սահակեան, Վ. Գալէնտէրեան։
Արձագանգ	Եկատերինոդար, 1918–19	Եռօրեայ. խմբ. Յ. Թորգոմեան։
Արցախ	Շուշի, 1919	Շաբաթաթերթ. խմբ. Մարմին։
Արօր	Թիֆլիս, 1907	Օրաթերթ. շարունակութիւն Ցառաջի։
Արեւելք	Հալէպ, 1946–էն	Օրաթերթ. Արտօնատէր՝ Հր. Փափազեան։
Արօր	Երզնկա, 1909–14	Ամսագիր. խմբ–տպագիր։ Խմբ. Արմ. Մելիքեան։
Արդի	Երզնկա, 1919	Շաբաթաթերթ։
Արարատեան		
Աշխատաւոր	Էջմիածին, 1919	Եռօրեայ. խմբ. Գ. Քեալաշեան։
Բագին	Պոլիս, 1912	Օրաթերթ. շար. Առաջամարտ–ի։

Բագուի Ձայն	Պաքու, 1913–15	Օրաթերթ. խմբագիր. Մարմին:
Բամբիռ	Պոլիս, 1913	Ցաւելուած Ազատամարտ-ի փոխարէն:
Բանբեր	Թիֆլիս, 1920	Ամսագիր. խմբ. Սիմոն Մկրտիչեան:
Բանբեր	Շթութկարտ, 1948	Շաբաթաթերթ. խմբ. Մարմին:
Բիւրանիա	Իզմիր, 1910	Տասնօրեայ թերթ:
Բիւրանիա	Աղտապազար, 1911	Տասնօրեայ. խմբ. Յ. Մարգիսեան:
Բիւրանիա	Պոլիս, 1912	Օրաթերթ. Ազատամարտ-ի շաբ.:
Բօրբա	Թիֆլիս, 1907	Ամս. ռուսերէն, օրգան Հ.Յ.Դ. Կովկ. Աշակ. Միութեան:
Գեղջուկ	Տրապիզոն, 1909–10	Նախ՝ խմորատիպ:
Գոյամարտ	Իզմիր, 1920	Օրաթերթ:
Գործ	Թիֆլիս, 1908–9	Օրաթերթ. շաբ. Ցառաջ-ի:
Գործ	Պաքու, 1917–18	Ամսագիր. խմբ. Մարմին:
Գրոհ	Պաքու, 1906–7	Կիսամսեայ. խմբագրական Մարմին:
Գոյամարտ	Պաղդատ, 1948–էն	Շաբաթաթերթ. խմբ. Մարմին:
Դիրքերում	Կարս, 1920	Շաբաթ. զինուորներուն համար: խմբ. Ս. Վրացեան եւ Արշ. Աւագեան:
Դրօշակ	Թիֆլիս, ժընեւ, 1891–1914 եւ Փարիզ, 1925–33	Օրգան Հ. Յ. Դ.
Եռանդ	Սան Փաւլօ, Պրազիլ 1928–29	Ամսագիր, ապակատիպ:
Երկիր	Թիֆլիս, 1906–7	Օրաթերթ. շաբ. Ցառաջ-ի:
Երկիր	Կարին, 1914	Եռօրեայ. շաբ. Ցառաջ-ի:
Երկիր	Երեւան, 1914	Կիսամսեայ. օրգան Աշակերտ. Միութ.
Երկիր	Մանչուրիա, 1919–20	Ամսագիր. խմորատիպ: խմբ. Արմ. Մելիքեան:
Երկունք	Պոլիս, 1912–14	Ամսագիր. օրգան Հ.Յ.Դ. Ռուս. Միութեան:
Երկունք	Վան, 1906–7	Երկշաբ. խմորատիպ: Օրգան Վանի Կեդր. Կոմիտէի:
Զանգ	Թիֆլիս 1906	Օրաթերթ. շաբ. Ցառաջ-ի:
Զանգ	Երեւան, 1917–19	Երկօրեայ. խմբ. Փ. Յակոբեան, Ս. Թորոսեան, Ս. Վրացեան:
Զանգակ	Թիֆլիս, 1908	Օրաթերթ. շաբ. Ցառաջ-ի:
Թռուցիկ	Պաքու, 1906	Պարբերաթերթ Հ.Յ.Դ. Պաքուի Աշակերտական կազմակերպութեան:
Ժայռ	Թիֆլիս, 1907	Օրաթերթ. շաբ. Ցառաջ-ի:
Ժամանակ	Թիֆլիս, 1906–7	Օրաթերթ. շաբ. Ցառաջ-ի:
Ժայռ	Ալէքսոլ. 1907–17	Երկօրեայ. խմբ. Յ. Բուդաղեան, Եփրեմ Գրիգորեան:
Ժայռ	Ալէքսոլ. 1917	Եռօրեայ. խմբ. Արշ. Ղազարեան:
Իրաւունք	Իզմիր, 1919	Օրաթերթ. խմբ. Բ. Միլտոնեան:

Լոյս	Թիֆլիս, 1919	Շաբաթաթերթ. օրգան Հ.Յ.Դ. Աշակ. Միութեան:
Լոյս	Թեհրան, 1943–44	Ամսագիր. խմբ. Տաճ. Պօղոսեան, Հ. Գրիգորեան:
Լրաբեր	Թիֆլիս, 1918	Շաբաթաթերթ. խմբ. Ս. Մկրտիչեան:
Խարիսխ	Թիֆլիս, 1907	Օրաթերթ. շար. Ցառաջ-ի:
Խարիսխ	Տրապիզոն, 1909	Կիսամսեայ. խմբ. Մալխաս:
Կեանք	Թուրիզ, 1925–26	Կիսամսեայ. ձեռագիր: Օրգան Աշակ. Միութեան:
Կիլիկիա	Ատանա, 1919–21	Եռօրեայ. խմբ. Մամհուր, Լ. Մոզեան
Կոկոն	Շուշի, 1895	Ամսագիր. խմորատիպ: Օրգան Հ.Յ.Դ. Աշակ. Միութեան:
Կովկասի-Առաւօտ	Թիֆլիս, 1907	Օրաթերթ. շար. Ցառաջ-ի:
Կոհակ	Վան, 1909	Պարբերաթերթ. խմորատիպ:
Կոտոշ	Դաւաշ, 1908–9	Պարբերաթերթ. խմորատիպ:
Կռիւ	Աղթամար, 1908	Պարբերաթերթ. խմորատիպ:
Կռունկ	Շուշի, 1898–900	Պարբ. խմորատիպ: Օրգան Հ. Յ. Դ. Աշակ. Միութեան:
Հայաստան	Սոֆիա, Ֆիլիպպէ, 1915–1924	Եռօրեայ. օրգան Պալքանի Կ.Կ.-ին:
Հայաստան	Պուքրէշ, 1928–30	Շաբաթաթերթ:
Haiastan	Փարիզ, 1938–40	Շաբաթաթերթ. Ֆրանսերէն. խմբ. Արմ. Ջամալեան, Նուպար Նիկողոսեան, Յովիկ Եղիազարեան:
Հայաստան	Փարիզ, 1948–50	Ամս. ֆրանս. օրգան «Նոր Սերունդ»-ը. Միութեան: Խմբ. Հ. Բալուեան:
Հայաստանի Աշխատաւոր	Երեւան, 1919–20	Երկօրեայ: Խմբ. Վ. Խորէնի:
Հայաստանի Ձայն	Փարիզ, 1922–23	Շաբաթաթերթ. խմբ. Ս. Վրացեան, Վ. Ահարոնեան, Տոքթ. Նէվրուզ:
Հայեացք	Վան, 1906	Խմորատիպ: Խմբ. Դ. Փափազեան, Գ. Խլղաթեան:
Հայրենիք	Պոսթըն, 1899–էն	Շաբաթաթերթ, եռօրեայ եւ վերջը օրաթերթ: Խմբ. Թ. Զարչաֆճեան, Ա. Վռամեան, Արամ Աշոտ, Յ. Զագմագճեան, Ն. Թաշճեան, Սիմանթօ, Ս. Վրացեան, Մ. Համբարձումեան, Ռ. Դարբինեան, Մ. Օղանեան, Վ. Ահարոնեան:
Հայրենիք	Պոսթըն, 1923–էն	Ամսագիր. խմբ. Ռ. Դարբինեան:
Hairenik Weekly	Պոսթըն, 1933–էն	Շաբաթաթերթ. Անգլերէն: Օրգան Հ. Ե. Դաշնակցութեան: Խմբ. Ճ. Մանտալեան:

Հոդդար	Սեբաստիա, 1912–14	Շարաթաթերթ. խմբ. Մարմին:
Հորիզոն	Թիֆլիս, 1909–18	Օրաթերթ. յաջորդական խմբագիրներ Ն. Աղբալեան, Լ. Նազարեան, Յով. Թումանեան, Վ. Վալատեան, Ա. Ջամալեան, Ա. Շահխաթունեան, Մ. Վարանդեան, Ս. Վրացեան, Վ. Նաւասարդեան:
Հորիզոն	Թիֆլիս, 1914–15	Յաւելուած Հորիզոն օրաթերթի:
Հորիզոն	Իզմիր, 1919–21	Օրաթերթ. խմբ. Ս. Թոքաճեան:
Հորիզոն	Սելանիկ, 1928–31	Օրաթերթ. խմբ. Կ. Գէորգեան:
Հրազդան	Երեւան, 1908–9	Խմբ. Պօղոս Կանդուբալեան:
Հրազդան	Վառնա, 1923–24	Շաբաթաթերթ. խմբ. Վ. Գէորգեան:
Հրազդան	Պուքրէշ, 1927	Ամսագիր. խմբ. Վ. Գէորգեան:
Ղարադաղ–Աղաղան	Թաւրիզ, 1912–14	Ամսագիր: Վերջին թիւերը՝ Աղաղան անունով:
Ճակատամարտ	Պոլիս, 1918–22	Օրաթերթ. խմբ. Յ. Ճ. Սիրունի, Շ. Միսաքեան, Մ. Ասլանեան:
Ճակատամարտ	Պոլիս, 1919–29	Մանկավարժական ամսագիր. յաւելուած Ճակատամարտ օրաթերթի:
Ճակատամարտ	Պոլիս, 1919–20	Գիւղատնտեսական ամսագիր. յաւելուած Ճակատամարտ օրաթերթի:
Մասիս	Սոֆիա, 1931–32	Ամսագիր. խմբ. Յ. Տէվէճեան:
Մեղու	Պարտիզակ, 1912–14	Շաբաթաթերթ. նախ խմբագրապետ: Խմբ. Յ. Զալբքեան, Տ. Ծամհուր, Ս. Սրենց:
Մեր Ձայնը	Գանձակ, 1918	Եռօրեայ. Խմբ. Մարմին:
Մունետիկ	Իզմիր, 1909	Շաբաթաթերթ. խմբ Ս. Պապիկեան:
Մոլոտ	Թիֆլիս, 1917–18	Ռուսերէն օրգան Հ. Յ. Դ. Ա. Բիւրոյի: Խմբ. Ա. Շահխաթունեան:
Մտրակ	Աղեքսանդրիա, 1909	Կիսամեայ. խմբ. Բարսեղ Շահրազ:
Մտրակ	Շ. Գարահիսար 1919	Պարբերաթերթ. խմբագրապետ:
Ցառաջ	Թիֆլիս, 1905	Շաբաթաթերթ. Արտօնատէր Ա. Սահակեան: Լոյս տեսած 1–5 թիւ:
Ցառաջ	Թիֆլիս, 1906	Մեծ Օրաթերթ. օրգան Հ. Յ. Դ. Ա. Բիւրոյի: Առաջին թիւը կը կրէ 17 Յունուար, 1906 թուականը: Անխափան լոյս կը տեսնէ 1–76, որմէ ետք կը շարունակուի հրատարակուիլ մինչեւ 1909 զանազան անուններով, Խմբագրական Մարմնի կողմէ:

Ցառաջ	Կարին, 1909–14	Եռօրեայ։ Առաջին թիւը լոյս կը տեսնէ 31 Մայիս 1909ին. կը շարունակուի զանազան անուններով։ Ցաջորդական խմբագիրներ՝ Ե. Թոփչեան, Ս. Վրացեան, Շ. Միսաքեան, Փիլոս։
Ցառաջ	Պաքու, 1917	Շաբաթաթերթ. խմբ. Մարմին։
Ցառաջ	Երեւան, 1919–20	Օրաթերթ։ Օրգան Հ.Ց.Դ. Բիւրոյի։ Ցաջորդական խմբագիրներ՝ Ս. Վրացեան, Ա. Զիլինգարեան, Վ. Նաւասարդեան։
Ցառաջ	Թիֆլիս, 1919–20	Օրաթերթ. օրգան Հ.Ց.Դ. Վրաստանի Կ.Կ.-ի։ Խմբ. Մարմին։
Ցառաջ	Փարիզ, 1925–էն	Օրաթերթ. խմբ. Շ. Միսաքեան։
Ցեղափոխական-Դարբնոց	Երեւան, 1929	Ամսագիր. ապակատիպ։ Խմբ. Գ. Գրիգորեան, Հ. Տէր Թովմասեան։
Ցորձանք	Թիֆլիս, 1920	Շաբաթաթերթ. օրգան Հ.Ց.Դ. Ռուս. Միութեան։
Ցուսաբեր	Գահիրէ, 1912–էն	Օրաթերթ. նախապէս եռօրեայ։ Ցաջորդական խմբգր. Ս. Պարթեւեան, Ս. Եսայեան, Ա. Հանըմեան, Վ. Նաւասարդեան։
Ցուսաբեր	Գահիրէ, 1943–48	Ամսագիր. Ցուսաբեր-ի յաւելուած։ Խմբ. Գ. Մխիթարեան։
Նաիրի Աշխարհ	Փարիզ, 1931–33	Պատկերազարդ ամսագիր. խմբ. Ս. Թորոսեան։
Նայիրի	Հալէպ, 1944–49	Ամս. Ա. Մառուկեան։
Նոր Հոսանք	Թիֆլիս, 1913–15	Ամսագիր. խմբ. Ն. Աղբալեան, Բժ. Ա. Ղազարեան։
Ներ Սերունդ	Վան, 1906–7	Խմորատիպ. խմբ. Հ. Մանուկեան, Խոսրով Խանճեան, Տէր Պօղոսեան, Շալճեան։
Նաւասարդ	Թեհրան, 1937–39	Հանդէս, Ց. Թադէոսեան, Տաճ. Պօղոսեան։
Նաւասարդ	Պուքրէշ, 1923–24	Ամսագիր. խմբ. Ց. Ճ. Սիրունի։
Նոր Ալիք	Թիֆլիս, 1907	Օրաթերթ. շար. Ցառաջ-ի։
Նոր Աշխատաւոր	Թիֆլիս, 1919–20	Օրաթերթ. օրգան Հ. Ց. Դ. Թիֆլիսի Քաղաք. Կոմիտէի։ Խմբ. Մարմին։
Նոր Արաքս	Սոֆիա, 1930	Օրաթերթ. օրգան Հ. Ց. Դ. Պալքանի Կ.Կ.-ին։ Խմբ. Օ. Մխիթարեան, Արամ Ցակոբեան։
Նոր Սերունդ	Երեւան, 1920	Օրգան Հ.Ց.Դ. Աշակ. Միութ.։
Նոր Օր	Աթէնք, 1923–41	Օրաթերթ. օրգան Ցունաստանի Հ.Ց.

		Դ. Կ.Կ.-ին։ Խմբ. Գ. Լազեան։
Նոր Փիւնիկ	Գէյրութ, 1925	Եռօրեայ։
Նոր Կեանք	Նոր Նախիջեւան, 1906–7	Շաբաթաթերթ. խմբ. Յ. Խլէպնիքեան եւ Ս. Վրացեան։
Նոր Կեանք	Թեհրան, 1922–27	Շաբաթաթերթ։
Նոր Հորիզոն	Թիֆլիս, 1918	Օրաթերթ Հ.Յ.Դ. Բիւրոյի։ Խմբ. Վ. Նաւասարդեան։
Շանթ	Երեւան, 1918–19	Պարբերաթերթ Հ.Յ.Դ. Աշ. Միութ.։
Շանթ	Պոլիս, 1913–14	Օրաթերթ. շաբ. Ազատամարտ-ի։
Շարժում	Տրապիզոն, 1910	Ամսագիր. լոյս տեսած 1–2 թիւ։
Շարժում	Ախալցխա, 1917–18	Շաբաթաթերթ. խմբ. Ա. Աւագեան եւ Մ. Զարիֆեան։
Շիրակի Աշխատաւոր	Ալէքսոլ. 1919–20	Օրաթերթ. օրգան Հ.Յ.Դ. Կոմիտէի։ Խմբ. Հ. Սարգիսեան եւ Հ. Զոլոդեան։
Շեփոր	Կեսարիա, 1910	Պարբերաթերթ ձեռագիր. խմբ. Մարգպետ։
Որոտան	Գորիս, 1918–19	Պարբերաթերթ. օրգան Հ.Յ.Դ. Զանգեզուրի Կոմիտէի։
Ուսանող	Ժընեւ, 1909–14	Պարբերաթերթ. օրգան Հ.Յ.Դ. Ուս. Միութեան։
Պայքար	Շուշի, 1914–17	Պարբերաթերթ։
Պարտիզակ	Պարտիզակ, 1909–12	Վեցամսեայ. խմբ. Բժ. Յ. Տէր Ստեփանեան։
Պիծակ	Տրապիզոն, 1911–12	Երգիծական Շաբաթաթերթ։
Պոնտոս	Տրապիզոն, 1910–12	Կիսամսեայ, վերջը՝ Շաբաթաթերթ։
Ռազմիկ	Ֆիլիպպէ, 1905–10	Շաբաթ., խմբ. Ռ. Զարդարեան։
Ռազմիկ	Թիֆլիս, 1917–18	Պարբերաթերթ. օրգան Հայ Զին. Միութեան. խմբ. Ն. Աղբալեան։
Ռահվիրայ	Շումլա-Ֆիլիպպէ, 1906–7	Ամսաթերթ. օրգան Պալքանի Ուսանող. Միութեան։
Սապան Իլ Խայր	Վան, 1907	Կիսամսեայ, խմորատիպ։ Խմբ. Արամ, Կոմս, Սլաք, Դ. Փափազեան եւ ուրիշներ։
Սիրտ	Կարին, 1911	Ամսաթերթ, խմորատիպ։ Օրգան Աշ. Միութ. խմբ. Հրաչեայ Լուսապարոնեան։
Սիւնիք	Գորիս, 1918–20	Երկշաբաթ. Խմբ. Մարմին։
Սուրհանդակ	Թիֆլիս, 1918	Շաբաթաթերթ. խմբ. Ս. Վրացեան, Ս. Մկրտիչեան։

Վէմ	Փարիզ, 1933–38	Հանդէս Մշակոյթի եւ Պատմութեան։ Լոյս տեսած Ա–ԻԴ թիւեր։ Խմբ. Ս. Վրացեան։
Վտակ	Թիֆլիս, 1907–8	Օրաթերթ. շաբ. Յառաջ–ի։
Տարագիր	Հալէպ, 1918–19	Օրաթերթ. խմբ. Բ. Միլտոնեան։
Տարագիր	Մարսէյլ, 1923	Շաբաթաթերթ. խմբ. Մ. Գուլումճեան
Տիգրիս	Շուշի, 1908–9	Ամսագիր, խմորատիպ. խմբ. Տ. Բաղդասարեան, Դ. Թումանեան, Յ. Զոլոյեան, Խ. Մկրտիչեան։
Transcaucasian Review	Թիֆլիս, 1918	Շաբաթաթերթ անգլերէն. խմբ. Վ. Նաւասարդեան եւ Յ. Քոչարեան։
Փայլակ	Թիֆլիս, 1907	Օրաթերթ. շաբ. Յառաջ–ի։
Փեթակ	Կիրասոն, 1910–11	Կիսամսեայ. սկիզբը խմորատիպ. խմբ. Վահան Նարլեան։
Փիւնիկ	Պէյրութ, 1924–25	Եռօրեայ. խմբ. Ա. Աբչակունի։
Pro Armenia	Փարիզ,	Հ.Յ.Դ. պրոպագանդի օրգան, ֆրանսերէն։ Խմբ. Մարմին՝ Փիէռ Քիյատ, Քլէմանսօ, Անատոլ Ֆրանս, Տընի Քոչէն, Ֆր. տը Փրեսանսէ։
Քառախ	Աւտարակ, 1919	Պարբերաթերթ։ Խմբ. Մարմին։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԴՐՕՇԱԿ»-Ի ՄԱՏԵՆԱՇԱՐ

Հ. Յ. Դաշնակցութեան ոչ-պարբերական հրատարակութիւններու շարքը սկսաւ «Դրօշակ»-ի Մատենաշարով, որի առաջին գրքոյկը՝ «Ապստամբական Ոգի» լոյս տեսաւ 1894-ին: Այնուհետեւ, յաջորդաբար, լոյս տեսան հետեւեալ գիրքերն ու գրքոյկները.—

1. *Ապստամբական Ոգի*
2. *Յեղափոխական Կեանքից*
3. *Գաղտնի Տպարան*
4. *Գիտական Սոցիալիզմ*, Ֆ. ԷՆԳԼՍ
5. *Հ. Յ. Դաշնակցութեան Ծրագիրը*
6. *Կուկունեան Խմբի Արշաւանքը*
7. *Կարնոյ Յիշատակին* (4 հատուած)
8. *Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհ. Ժողովի Ատենագրութիւնը*
9. *Գրքիչներ*, Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ
10. *Երիտասարդներին*, Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ
11. *Ազատութեան Ճանապարհին*, ՂԱՐԻԲ Ա.
12. *Ազատութեան Ճանապարհին*, ՂԱՐԻԲ Բ.
13. *Ամբոխային Տրամաբանութիւն*, ԷՎՎԷՆ
14. *Ազատութեան Ճանապարհին*, ՂԱՐԻԲ Գ.
15. *Հայաստան եւ Մակեդոնիա*
16. *Կովկասեան Վէրքեր*, Է. ԱԿՆՈՒՆԻ
17. *Հայրենիքի Գաղափարը*, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ
18. *Կաղմակերպական Կանոններ*
19. *Դէպի Կռիւ*, Է. ԱԿՆՈՒՆԻ
20. *Յեղափոխականներ*, Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ
21. *Նախագիծ Կովկասեան Գործունէութեան*
22. *Պոդվիդի Ցարիզմա*, Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ (*ռուսերէն*)
23. Les tueries de Bakou, A. ARAZI
24. *Յեղափոխական Դաշն.*
25. *Հ. Յ. Դ. Ե-րդ Ընդհ. Ժողովի Ատենագրութիւնը*
26. *Կոչ Մահմեդականներին* (*Թուրքերէն*)
27. Les Plaies du Caucase, AKNOUNI
28. *Ազատութեան Ճանապարհին*, ՂԱՐԻԲ Դ.

29. Մեծ Մարդասպանի Դէմ (Դատավարութիւն)
30. Վիթօշի Բաղէն, ՎՏԱՐԱՆԴԻ
31. Յեղափոխականի Մտքեր, Ֆ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
32. Հայորդիներ, ՍԻԱՄԱՆԹՕ
33. Սասուն–Մուշի Կռիւները
24. Հայոց Տանջանքները եւ Եւրոպա, Է. ԲԷՐՆՇՏԷՅՆ
35. Մարտական Հրահանգներ, ԱՆԴՐԱՆԻԿ
36. Միացէ՛ք (Կոչ Թուրքիոյ բոլոր ազգերին. Թուրքերէն)
37. Թիւրքական Բանտերը, ՄԱՐ
39. Հայաստան եւ Եւրոպա, Գ. ԲՐԱՆՏԷՍ
40. Աղբիւր Սերոբ (Կենսագրական), Ս. Մ.
41. Եւրոպացիների Կարծիքը Հայ Դատի մասին
42. Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան (1907 թ.)
43. Հ. Յ. Դ. Ե.–րդ Ընդհ. Ժողովի Որոշումները (1907)
44. Հ. Յ. Դ. Ծրագիրը (1907 թ.)
45. Programme minimum, Հ. Յ. Դ.
46. Rapport՝ Ներկայացուած Շտուտգարտի Կոնգրէսին
47. Գէորգ Զաւուշ
48. Déclaration du Congrés des partis d'opposition de lEmpire Ottoman
49. Le criminel sur le trône, E. AKNOUNI
50. Յայտարարագիր Օսմ. Կայսրութեան Ընդդիմադիր Տարրերու Կոնգրէսին
51. Հ. Յ. Դ. Ծրագիրը (Ռուսերէն)
52. Սոցիալիստի Նամակներ, Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ
53. Նախագիծ Ժող. Ինքնապաշտպանութեան
54. Ընդհ. Կրթութեան Թերութիւնները, ԴՐ. Ժ. ՕԼԻՎԻԷ, Թարգ. Ատոմ
55. Ուղեցոյց Ընկերներին, Վ. ԱՐԱՐԱՏՍԿԻ
56. Համաժողովրդական Բանակ, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ
57. Հ. Յ. Դ. Ծրագիրը (1909 թ.)
58. Որոշումներ Հ. Յ. Դ. Ե.-րդ Ընդհ. Ժողովի
59. Rapport՝ Ներկայացուած Կոպէնհագէն Սոցիալիստական Կոնգրէսին
60. Նոյնը, Գերմաներէն
61. Վերածնող Հայրենիքը եւ Մեր Դերը, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ
62. Հոսանքներ, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ
63. Հայկ. Շարժման Նախապատմութիւն, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ, Ա. Հատոր
64. Հայկ. Շարժման Նախապատմութիւն, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ, Բ. Հատոր
65. Աւգուստ Բէբէլ, Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

66· Բողոքը Նորագոյն Պատմութեան մէջ, Մ· ՎԱՐԱՆԴԵԱՆ
67· Հայ Քաղաքական Մտքի Զարգացումը, Գ· ԳԻԻԶԱԼԵԱՆ
68· Ընկերվ· Միջազգայնականը եւ ճնշուած ժողովուրդները, ԼԵԻԻՆՍԿԻ
69· Մտածումներ Հ· Յ· Դաշնակցութեան Մասին, Ն· ՀԱՆԳՈՅՑ
70· Հ· Յ· Դաշնակցութեան Պատմութիւն, Մ· ՎԱՐԱՆԴԵԱՆ

«ՑԱՌԱՋ» ԳՐԱԴԱՐԱՆ

1·— Հարուստներ եւ Աղքատներ — ԲԱԽ
2·— Հայց, Լոյս եւ Ազատութիւն — ՊԷՇԵԽՕՆՕՎ
3·— Ինչպէ՞ս են ժողովւում եւ Ծախսւում ժողովրդական Փողերը — Ա· ՖԷՕԴՕՐՕՓ
4·— Նոր Լերան Քարոզը — ԿԱՐՄԵԼԻԻՍԿ
5·— Գիւղացին եւ Բանուորը — Վ· ՁԵՐՆՈՎ
6·— Ազգային Հարցը եւ Սոց·—Դէմոկրատեան — ՊԵՐՆԵՐՍՏՈՐՖԵՐ
7·— Գիւղացիներին — ՊՐԱՄՊՈԼԻՆԻ
8·— Արհեստակցական Միութիւններ — Ե· ԹՈՓՁԵԱՆ
9·— Ի՞նչ է Իրաւական Պետութիւնը — ՆՈՎՈՏՐՈՅՍԿԻ
10·— Հողային Հարցը Նոր Զելանդիայում — Ն· ԿԱԲԱՆՈՎ
11·— Բուրժուական Սեփականութիւնը եւ Նրա Ապագայ Գրաւումը — Ժ· ԺՈՐԷՍ
12·— Դէմոկրատական Ընտրութիւններ — Ա· ԱԲԵՂԵԱՆ
13·— Ազգութիւնների Հարցը Ռուսաստանում — ԿԱՐԼ ԿԱՈՒՑԿԻ
14·— Ազատութեան Ճանապարհին — Ա· ԱՀԱՐՈՆԵԱՆ (ՂԱՐԻԲ)
15·— Սահմանադրութեան Էութեան Մասին — Ֆ· ԼԱՍԱԼ
16·— Ի՞նչպէս Կարելի է Լուծել Հողային Հարցը — Ա· Ն·
17·— Ի՞նչ է Ժողովրդապետութիւնը — Վ· ԳՈԼՈՒԲԵԻ
18·— Վիճակագրական Տեղեկ· Գիւղ· Աղդաբնակութեան — Ս· ՁԱԻԱՐԵԱՆ
19·— Ժողովրդական Օրէնսդրութիւնը Դաշնակց· Զուիցերիայում — ԱԼՖՕՆՍ ԴԻԻՆԱՆ
20·— Ո՞վ Ինչով է Ապրում — ԴԻԿՇՏԷՑՆ
21·— Մի Զրոյց Հողի Մասին — Ա· Ն·
22·— Ազգային Ծրագրի Հարցը եւ Գիտական Սոցեալիզմի Տեսութիւնը — Լ· ՇԻՇԿՕ
23·— Կոօպերացեա — Ա· ՆԻԿՈԼԱԵՒ
24·— Շտապեցէք Օգտուել Ձեր Իրաւունքից
25·— Երկու Ծրագիր — Լ· ՊԵՏՐՈՎ
26·— Պետական Կազմակերպութեան Հիմքերը Արեւմուտքում — Ա· ՎՇՈՍԷԿ
27·— Գիւղացիական Հարցը Ֆրանսիայում — Ա· Ան·

28.— Դաշնակցութիւնը եւ Նրա Հակառակորդները — Մ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
29.— Տնտեսական Զարգացումը եւ Սոցիալիզմը — Ժ. ԳԻՏ եւ Պ. ԼԱՖԱՐԳ
30.— Ազգ. Հարցը. Աւտոնոմիա եւ Ֆէդէրացեա — ՆՈՎՈՏՈՐԺՍԿԻ
31.— Խորամանկ Կարգեր
32.— Գորդեան Հանգոյցը. Թրքահայոց Հարցի Վերջին Շրջանը — Մ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
33.— Հրահանգներ Գաւառների համար
34.— Դասակարգային Կռուի Թէորեայի շուրջ — Վ. ՁԵՐՆՈՎ
35.— Նուաղագոյն Մրագիրը — Լ. ՇԵՇԿՕ
36.— Ինչպիսի՞ Կարգեր են Հարկաւոր Ժողովուրդին — Ս. ՆԵԿՐԱՍՈՎ
37.— Ֆէդէրալիզմ եւ Դէմոկրատիզմ — Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ
38.— Վնասակարը — ԱՐԱՄԱՑԻՍ
39.— Մի Քանի Գլուխ Հայ-Թուրքական Ընդհարումներից — ԱՐԱՄԱՑԻՍ
40.— Կովկասեան Վանդէա (Հայ Թրքական Ընդհարում) — Մ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
41.— Ինչպէ՞ս Իրականացնել Ազգութիւնների Հաւասարութիւնը — Շ. ԳՕՐՑԷԵԻ
42.— Դէպի Ֆէդէրացիա — Գ. ԽԱԺԱԿ
43.— Պրոլէտարիատը եւ Աշխատաւոր Գիւղացիութիւնը — Վ. ՁԵՐՆՈՎ
44.— Գիւղացին եւ Բանուորը — ԱԲՐԱՄՈՎԱ
45.— Բանուոր Դասակարգի Դրութիւնը Բէլգիայում — Է. ՎԱՆԴԷՐՎԵԼԴ
46.— Հող եւ Կապիտալիզմ — Ս. ՁԱԿ
47.— Անջատուածները — ՎԱՀԷ
48.— Փիլիսոփայ Սոցեոլոգ — Մ. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
49.— Ժողովրդական Փողերը (Թուրքերէն) — ՖԷՕԴՕՐՈՎԻՉ
50.— Մի Քանի Գլուխ Հայ-Թրքական Ընդհարումներից — ԱՐԱՄԱՑԻՍ
51.— Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը — Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
52.— Յիշողութիւն Մօտաւոր Անցեալից — ԳՆԹՈՒՆԻ
53.— Յիշողութիւն Մօտաւոր Անցեալից, 2-րդ — ԳՆԹՈՒՆԻ
54.— Տնտեսագիտական Զրոյցներ — Հ. ԿԱՐԻՇԵԻ
55.— Ազգային Հերոս, — Յ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
56.— Դաշն. Պատգամ. Երկր. Պետ. Դումայում — Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆ
57.— Հարուստներ եւ Աղքատներ, Բ. Մաս — Ա. ԲԱԽ.
58.— Ազգ. Հարց եւ Սոցիալիմ — Լ. ԲԱԲԱՑԵԱՆ
59.— Վիշապ — Ն. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

60.— Հարուստներ եւ Աղքատներ, Բ. Տպ. Ա. ԲԱԽ.
61.— Հ. Յ. Դ. Ծրագիր, Հայերէն
62.— Հ. Յ. Դ. Ծրագիր, Ռուսերէն
63.— Հ. Յ. Դ. Նուազ. Ծրագիր, Հայերէն
64.— Հ. Յ. Դ. Նուազ. Ծրագիր, Ռուսերէն
65.— Հ. Յ. Դ. Նուազ. Ծրագիր, Վրացերէն
66.— Հ. Յ. Դ. 1917, Ապր. 6–12, Ռայոն. Ժողովի Որոշումները
67.— Նոյնը, Ռուսերէն
68.— Ի՞նչ է Իրաւ. Պետութիւնը, Բ. տպ., ՆՈՎՈՏՈՐԺՍԿԻ
69.— Ժողովրդ. Ընտրութիւններ, Բ. տպ. Ա. ԱԲԵՂԵԱՆ
70.— Ազգ. Հարց, Աւտոնոմիա եւ Ֆէտէրացիա ՆՈՎՈՏՈՐԺՍԿԻ
71.— Սահմանադրութիւն Իւրթեան Մասին, Բ. տպ. ԼԱՍՍԱԼ
72.— Սահմանադիր Ժողով, Վ. ՎՈՐՈՎՈՋՈՎ
73.— Կովկասի Վարչական Բաժանումը, ռուս.
Ա. ՇԱՀԽԱԹՈՒՆԵԱՆ

ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅՈՒՍԱԲԵՐ»

1.— Լռած Ջրաղացը Հ. ԶՈՒՏԷՐՄԱՆ
2.— Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինէր մեր Ուղին Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
3.— Հայ–Թրքական Կնճիռը ՌՈՒԲԷՆ
4.— Հ. Յ. Դաշնակցութեան Անելիքը Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
5.— Երկու Ամիս Բոլշեւիկեան Բանտում Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
6.— Դաշնակցութեան «Լիկուիդացիան» Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
7.— Էջեր Իմ Օրագրէն Գ. ՆԺԴԵՀ
8.— Ընկերվարութիւնը եւ Դեմոկրատիզմը Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
9.— Թերէզ Ռաքէն ԷՄԻԼ ԶՈԼԱ
10.— Դաշնակցութեան Քաղաքական Ուղին Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
11.— Կայսրը Լ. ՇԱՆԹ
12.— Հայ Միտքը Ե. ՖՐԱՆԳԵԱՆ
13.— Սահմանադրական Վէճ «ՅՈՒՍԱԲԵՐ»
14.— Կաթուղիկը Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
15.— Համայնավարութիւնը եւ Համաշխարհային Յեղափոխութիւնը Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ
16.— Կարմիր Աստղի տակ, վէպ Վ. ՎԱԼԱԴԵԱՆ
17.— Հայաստանի Խորհրդ. Իշխանութեան բնոյթը Ա. ԱՐՇԱԿՈՒՆԻ
18.— Կարկեհանէ Ապարանջանը Ա. ԿՈՒՊՐԻՆ
19.— Հայ Հասարակական Միտքը Ե. ՖՐԱՆԳԵԱՆ
20.— Սամսոն Շղթայուած Լ. ԱՆՏՐԷԵԻ
21.— Պատմա–Հասարակագիտական Խնդիրներ ԴՈԿՏ. ՓԻԼ. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

22.— Ա. Ահարոնեանի Ճառը (գրական քառասնամեակի առթիւ)
23.— Ամբան Գիշերներ, ՎԱՉԳ. ՇՈՒՇԱՆԵԱՆ
24.— Թուրքիոյ Անդամահատութիւնը,
Ո՞ւր Կ'երթայ Թուրքիա Ռ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՌՈՒԲԷՆ
25.— Եաքը, վէպ Է. Մ. ՌԵՄԱՐՔ
26.— Մնայորդաց, Ա. հատոր Ց. ՕՇԱԿԱՆ
27.— Մնացորդաց, Բ. հատոր Ց. ՕՇԱԿԱՆ
28.— Մնացորդաց, Գ. հատոր Ց. ՕՇԱԿԱՆ
29.— Հ. Ց. Դաշնակցութիւն ՌՈՒԲԷՆ
30.— Աշխարհի Նոր Բաժանումը Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
31.— Գէորգ Մարզպետունի ՄՈՒՐԱՑԱՆ
32.— Երկունք ԾԵՐԵՆՑ
33.— Թէոտորոս Ռշտունի ԾԵՐԵՆՑ
34.— Անդրէաս Երէց ՄՈՒՐԱՑԱՆ
35.— Ռուզան ՄՈՒՐԱՑԱՆ
36.— Վարժապետին Աղջիկը ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
37.— Ամիրային Աղջիկը ԵՐՈՒԽԱՆ
38.— Նեղուցները ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
39.— Անդրադարձ ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
40.— Բոլշեւիզմը եւ Դաշնակցութիւնը ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
41.— Մեր Անմոռան Տղաքը ՎԱՀԱՆ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
42.— 19-րդ Դարու Հայ Գրականութիւն Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
43.— Եղիշէի Վարդանանց Պատմութիւնը, աշխարհաբար

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1.— Անդրոնիկէ, վէպ Ս. ՔՍԷՆՈՍ
2.— Արշալոյս, տրամա ՎԱՐԴԳԷՍ
3.— Մոսուն եւ Զօրի Արշաւանքները ՕՆՆԻԿ
4.— Ցեղափոխական Վիպակներ ՄԻՐ-ՀԱՉՕՐ
5.— Սահմանադրական Կառավարութիւններ Ց. Ց. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ
6.— Հայրենիք Երգարան
7.— Ռուս Սոց.-Ցեղափոխականների Ծրագիրը Ն. ՀԱՆԳՈՑՑ
8.— Միութեան կամ Համերաշխութեան Խնդիրը Ն. Տ. Ս. Թ.
9.— Սոցիալիզմը եւ Դրական Գիտութիւնները ԷՆՐԻԿՕ ՖԷՐՐԻ
10.— Իմ Եղբայր Գիւղացին ԷԼԻԶԷ ՌԸՔԼԻՒ
11.— Երկրագործութիւնը, Որպէս Ուղիղ Ճանապարհ
ՄԻՔ. ՆԱԼԲԱՆՏԵԱՆՑ
12.— Քրիստոսի Սոցիալական Ուսմունքը, Վ. Խորէնի
13.— Կրէնօպիլ (վէպ) ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ
14.— Զայրոյթի Օրը ԼԷՈՆԻԴ ԱՆԴՐԷԵՒ

15.— Իզմիրլեան Աքսորավայրին մէջ — Կ. ԲԱՍՄԱՋԵԱՆ
16.— Երազս — Ց. ԱՐԹՈՒՆ
17.— Դէպի Երկիր — Է. ԱԿՆՈՒՆԻ
18.— Այդպէս էր — ԼԷՈՆԻԴ ԱՆՏՐԷԻ
19.— Մ. Նահանգներու Սոցիալիստ Կուսակցութեան Ծրագիրը
20.— Բողոքի Ձայն — Է. ԱԿՆՈՒՆԻ
21.— Ընկերվարութեան Էութիւնը — ՃՈՆ ՍՊԱՐԿՕ
22.— Բառարան Հայերէնի մէջ գործածուող օտարազգի բառերու — Ա. Բ.
23.— Political Persecution — E. AKNOONI
24.— Ի՞նչ է Կրօնը — ՐՈՊԸՐԴ Կ. ԻՆԿԸՐՍՈԼ
25.— Զօրաւորին Ուժը — ՃԷՔ ԼԸՆՏԸՆ
26.— Երուսաղէմ Տալէքարլիի մէջ — ՍԷԼՄԱ ԼԱԿԷՐԼՈՖ
27.— Մեծ Իշխան Սէրգէյի Գործը — Բ. ՍԱՎԻՆԿՈՎ
28.— Տուփական կամ Ափրոդիտեան Ախտեր — ՏՈՔԹ. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ
29.— Աշխարհի Ցեղափոխութիւնը — Է. ԸԹԸՐՄԷՆ
30.— Զէնքերը Վար — ԲԵՐԹԱ ՖՈՆ ԶՈՒՏՆԷՐ
31.— Դրուագներ Հ. Ց. Դաշնակցութեան Գործունէութիւնից — Ա. ՆՈՐԵԱՆ
32.— Աւերուածներ — ԷՈԺԷՆ ՊՐԻԷՕ
33.— Մեղրագէտ, Բ. Տարի — Ռ. ՁԱՐԴԱՐԵԱՆ
34.— Why Armenia Should Be Free — DR. G. PASTERMADJIAN
35.— Հայկ. Հարցը Խաղաղութեան Ժողովին Առջեւ — ԲԵՐՈՒՆԻ
36.— Այն Սեւ Օրերուն — Ա. ԱՆՏՈՆԵԱՆ
37.— Բանակցութիւններ Ազգ. Պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Միջեւ — Ս. ՎՐԱՑԵԱՆ
38.— Մուրատի Ճամբորդութիւնը — Զ. ԵՍԱՑԵԱՆ
39.— Անկախ եւ Միացեալ Հայաստան — Ս. ՎՐԱՑԵԱՆ
40.— Մեր Պատասխանը Ց. Քաջազնունիի — Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ
41.— Խարխափումներ — Ս. ՎՐԱՑԵԱՆ
42.— Քրիստափոր Միքայէլեան — Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
43.— Սիմոն Զաւարեան — Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ
44.— Հայաստանի Հանրապետութիւն — Ս. ՎՐԱՑԵԱՆ
45.— Դիւան Հ. Ց. Դաշնակցութեան, հատ. Ա. — Ս. ՎՐԱՑԵԱՆ
46.— Հայ Եկեղեցւոյ Տաղնապը — Ա. ՊԱՐՏԻԶԵԱՆ
47.— Դիւան Հ. Ց. Դաշնակցութեան, հատ. Բ. — Ս. ՎՐԱՑԵԱՆ
48.— Հայաստանը Բոլշեւիկեան Մուրճի եւ Թրքական Սալի Միջեւ — Ս. ՎՐԱՑԵԱՆ
49.— Սարտարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան — Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
50.— Հայրենիք Տարեգիրք, 1943 — Ս. ՎՐԱՑԵԱՆ

51.— *Իմ Բանը — Երազներիս Աշխարհը* — *Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ*
52.— Armenians and the Armenian Question — S. VRATZIAN
53.— *Հայրենիք Տարեգիրք*, 1944 — Ս. ՎՐԱՑԵԱՆ
54.— *Երկունք* — *ԾԵՐԵՆՑ*
55.— *Հայրենիք Տարեգիրք*, 1945 — *Ս. ՎՐԱՑԵԱՆ*
56.— *Հայրենիք Տարեգիրք*, 1946 — Ս. ՎՐԱՑԵԱՆ
57.— *Հայրենիք Տարեգիրք*, 1947 — *Ս. ՎՐԱՑԵԱՆ*
58.— *Հայ ժողովուրդի Պատմութիւնը* — *ԺԱԳ ԴԸ ՄՈՐԳԱՆ*
59.— *Հայրենիք Տարեգիրք*, 1948 — *Ս. ՎՐԱՑԵԱՆ*
60.— The History of the Armenian People — J. DE MORGAN
61.— The Outline of the Economic History of Armenia — H. PASDERMAJIAN
62.— A Searchlight on the Armenian Question — J. MISSAKIAN
63.— *Նաւը Լերան Վրայ* — *Կ. ՋԱՐԵԱՆ*
64.— *Հ. Բ. Դ. Վաթսունամեակ* — *Ս. ՎՐԱՑԵԱՆ*

«ԴՐՕՇԱԿ»–ՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

(1891–1914)

«Դրօշակ»ի առաջին թիւը լոյս է տեսել 1891 թ. Մայիսին, Թիֆլիսում: Դրանից առաջ, 1890 թ. հրատարակուել են Հ. Յ. Դ. Մանիֆեստը եւ «Դրօշակ»ի թռուցիկ թերթ» թիւ 1, իսկ 1891 թ. սկզբին լոյս է տեսել «Դրօշակի թռուցիկ թերթ» թիւ 2–ը: Թիւ 1 թռուցիկ թերթը կորած է, դժբախտաբար: Թիւ 2–ից կայ միայն մէկ օրինակ, Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանում:

«Դրօշակ»ի առաջին եւ երկրորդ համարները տպուել են Թիֆլիսում, Հ. Յ. Դ. գաղտնի տպարանում: Երրորդ համարը՝ Ռումանիայում: Չորրորդ համարից սկսած, մինչեւ 1914 թ., «Դրօշակ»ը հրատարակւում էր Ժընեւում: 1914 թ. մինչեւ 1925 թուի «Դրօշակ»ի հրատարակութիւնը ընդհատւում է: 1925 թուից սկսած լոյս է տեսնում Փարիզում, մինչեւ 1933 թ.:

1891 թ. Մայիսից մինչեւ 1933 թ. Յունուար լոյս է տեսել ընդամէնը 326 համար «Դրօշակ»:

Զանազան ժամանակներ «Դրօշակ»ի խմբագիր կամ խմբագրութեան անդամ են եղել՝ Ռոստոմ, Ս. Շխեան, Յոնան Դաւթեան, Ա. Վռամեան, Քրիստ. Միքայէլեան, Ս. Զաւարեան, Տ. Յովհաննիսեան, Գ. Խաժակ, Մ. Վարանդեան, Է. Ակնունի, Ա. Ահարոնեան, իսկ 1925 թուից սկսած «Դրօշակ»ը լոյս է տեսնում Փարիզում, Հ. Յ. Դ. Բիւրոյի անմիջական ղեկավարութեան տակ: Խմբագիր են եղել Ս. Վրացեանը եւ Ա. Զամալեանը:

Այստեղ առաջ կը բերենք համար առ համար «Դրօշակ»ի բոլոր թուերի բովանդակութեան գլխաւոր նիւթերը: Սկզբի շրջանի «Դրօշակ»ների յօդուածների մեծ մասը անստորագիր էր: Ապա՝ ստորագրում էին Է. Ակնունին, Ղարիբը, Սիամանթօն, Հայ–Գուսանը, մասամբ Մ. Վարանդեանը եւ մի քանի ուրիշներ: Մենք փակագծի մէջ կը դնենք եւ հեղինակների անունը, որքան որ հնարաւոր է եղել ճշդել նրանց ինքնութիւնը:

1891 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի երկու համար:

Թիւ 1–ի բովանդակութիւնն է. Առաջնորդող յօդուածում բացատրւում է «Դրօշակ»ի կոչումը: Ապա ամբողջութեամբ առաջ

է բերուած Վարժապետեանի ծրագիրը Թիւրքահայաստանի ինքնավարութեան. արտաքին տեսութիւն. ներքին տեսութիւն եւ թղթակցութիւններ Կարնից եւ Ալաշկերտից։

Թիւ 2–ի Առաջնորդողը նուիրուած է պարտիզանական կռուին։ Առաջնորդողից անմիջապէս յետոյ, բացատրութիւն է տրուում թիւ 1–ի առաջնորդողի հետեւեալ կէտի մասին. «Մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյնն են, ինչ որ յայտնուած են Ներսէս Պատրիարքի ծրագրում»։— «Մենք կարեւոր ենք համարում յայտնել, որ մենք այդ դրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, որ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի Տաճկա–Հայաստանում Ներսէս Պատրիարքի ծրագրում պահանջուած բարեկարգութիւնները, որ շատ անհաւանական է»։ Ապա՝ «Մի ընդհանրական անձնական դիտողութիւնները ժողովրդի տրամադրութեան մասին»։ Նամակ Պարսկաստանից։ Լուրեր Տաճկաստանից։ Արտաքին տեսութիւն։

1892–ին հրատարակուել է «Դրօշակ»ի մէկ թիւ՝ թիւ 3–ը։

Առաջնորդողում՝ «Մեր ծրագիրը»՝ Ս. Զաւարեանն ու Քրիստափորը միասին սկսում են պարզաբանել Հ. Յ. Դ. ծրագիրը։ Ապա լուրեր Տաճկաստանից — Արաբոյի ձերբակալուելը եւայլն։ Նամակներ Ալաշկերտից, Կարնից, Վանից, Խնուսից, Տրապիզոնից։ Ներքին տեսութիւն։ Յայտարարութիւն՝ Դաշնակցութեան Կանոնադրութիւնից՝ մահուան պատիժի մասին։

1893–ին լոյս է տեսել «Դրօշակ» ի երկու թիւ՝ թիւ 4 եւ 5–ը։ Թիւ 4–ի առաջնորդողը խօսում է 1892 թուին յաջորդած ռէակցիոնի ու տրամադրութիւնների անկման մասին եւ վեր է հանում յեղափոխութեան անհրաժեշտութիւնը։ Ապա — Տեսութիւն Վասպուրականի՝ գրուած Ս. Զաւարեանի ձեռքով։ Լուրեր Ալաշկերտից, Մշից, Սասունից, Վանից, Թաւրիզից, Թիֆլիսից։ Թիֆլիսից Ս. Զաւարեանը գրում է Գր. Արծրունու յուղարկաւորութեան մասին։ Արտաքին տեսութիւն։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Այր ու բէն», որի մէջ Քրիստափորն ու Զաւարեանը բացատրում են յեղափոխական այրուբենի առաջին տառը — «Հայ ժողովուրդը ազատութիւն է ուզում»։ Նամակներ Կարնից, Վանից (Պետո), Երզնկայից, Պոլսից եւայլն։ Հաղորդւում է Արաբոյի, Գ. Արխանեանի, Մ. Տամատեանի, Պ. Շատախցեանի մասին եւայլն։ Վերջը՝ «Հայ յեղափոխականը տաճկական բանտում» (Պետոյի գրած)։

1894–ին լոյս է տեսել «Դրօշակ»ի 9 թիւ՝ թիւ 6–14 եւ թիւ 6–ի յաւելուած։

Այսուհետեւ առաջ կը բերենք միայն դլխաւոր նիւթերը.

Թիւ 6. Առաջնորդողում Զաւարեանն ու Քրիստափորը շա–

բունակում են «Այբ ու Բեն»ը — «Ի՞նչ կարգեր կարող են ապահովել ժողովրդի արդարացի պահանջները»։ Արաբոյի խմբի կռիւը. Արաբոյի մահը։ Լուրեր Երկրից։

Թիւ 6–ի «ՑաւելուածՍ»ով հաղորդւում են լուրեր Երկրի զանազան վայրերից։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Սով եւ գաղթականութիւն» (Ցոնան)։ Լուրեր Երկրից։ «Այբ ու բեն»ի շարունակութիւնը՝ գրուած Ռոստոմի կողմից։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Վերջին դէպքի առթիւ» Աշըգեանի մահափորձը, (Խաժակ), լուրեր Երկրից։ «Այբ ու բեն»ի շարունակութիւնը (Ռոստոմ)։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Ժողովուրդը կը յաղթի» (Ցոնան)։ Լուրեր Երկրից։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Մեր ծրագիրը» — Հ. Ց. Դ. ծրագրի բնագիրը։ Լուրեր Երկրից։

Թիւ 11. Առաջնորդող՝ «Մեր ծրագիրը»՝ շարունակութիւն եւ վերջ։ Լուրեր Երկրից։

Թիւ 12. Առաջնորդող՝ Սասունի ապստամբութեան առթիւ (Ցոնան)։ Լուրեր Երկրից։ Մարդար Վարժապետի կախուելը Բաղէշում։

Թիւ 13. «Սասնոյ ապստամբութիւնը եւ կոտորածը» (Ազրայէլ)։ Լուրեր Երկրից։ Ժիրայրի կախուելը։

Թիւ 14. Առաջնորդող՝ «Սասունի դէպքի առթիւ»։ Տեղեկութիւններ Սասնոյ ապստամբութեան մասին։ Լուրեր Երկրից։

1895 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի 22 թիւ՝ թիւ 1–22։

Թիւ 1. Առաջնորդող՝ Նախորդ տարուայ ընդհանուր տեսութիւն։ Մանրամասնութիւններ Սասնոյ կռիւների մասին։ Լուրեր Երկրից։

Թիւ 2. Առաջնորդող՝ Տաճիկներ, քիւրդեր, քիւրդեր եւ սուլթանական կառավարութիւնը։ Լուրեր Երկրից։ Հայկական հարցը արտասահմանում։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Զէնք»։ Լուրեր Երկրից։ Եւրոպական մամուլը։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Ո՞վ է մեղաւոր»։ Լուրեր Երկրից։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Պատմութիւնն է ուսուցիչ»։ Լուրեր Երկրից։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Իրերի Դրութիւնը նոյնն է» (Ցոնան), Երկրի վիճակի մասին։ Լուրեր Երկրից։ Գ. Արխանեանի, բժ. Կ. Փաշայեանի դատավարութիւնը։ Հայկական հարցը արտասահմանում։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Սասուն» (Ցոնան), Մայիս 11-ի ժողովրդային ցոյցը Պոլսում: Լուրեր Երկրից:

Թիւ 8. Առաջնորդող՝ «Ռէֆորմներ» (Ցոնան): Լուրեր Երկրից:

Թիւ 9. Առաջնորդող՝ «Ռէֆորմներ» (շարունակութիւն): Լուրեր Երկրից: Ապստամբութիւն Մակեդոնիայում: Ցաւելուած՝ Դժոխքի նամակը. «Հնչակ» եւ «Դրօշակ»:

Թիւ 10. Առաջնորդող՝ «Ռէֆորմներ» (շարունակութիւն): Լուրեր Երկրից: Մակեդոնական ապստամբութիւն:

Թիւ 11. Սասունի տարեդարձը. Սասուն (Թաթուլ), «Մի տարի է» (Ս. Շիսեան), «Ազատութիւն կամ Մահ» (Ցոնան):

Թիւ 12. Առաջնորդող՝ «Աւերում են, կոտորում են» (Ցոնան). «Ռէֆորմներ» (շարունակութիւն). Մամբրէ վարդ.ի դատապարտութեան տեղեկագիրը: Խարախանեան Ներսէս վարդ.: Նամակներ Երկրից:

Թիւ 13. «Ռէֆորմներ» (շարունակութիւն). Խոստովանութիւն Մամբրէ վար.ի. Խարախանեան Ն. վ. (շար.). Երզնկայի Տագնապը:

Թիւ 14. Առաջնորդող՝ «Կամախի կռուի առթիւ» (Ս. Շբիեան). Երզնկայի տագնապը: Ռէֆորմներ (վերջ): Խոստովանութիւն Մամբրէ վ.ի (վերջ): Լուրեր Երկրից:

Թիւ 15–16. Առաջնորդող՝ «Նոր Սարսափներ» (Ցոնան): Երզնկայի տագնապը (Ղարա Մելիք): Տեղեկութիւններ Երկրից:

Թիւ 17–18. Առաջնորդող՝ «Կռուե՛նք, կոտորում են» (Ցոնան): Տրապիզոնի ջարդը: «Սուլթանական ռէֆորմներ» (Ցոնան): Շաքիր փաշայի ընդունելութիւնը Կարնում (Ռոստոմ): Կոտորածներ: Լուրեր Երկրից: Բահրի փաշայի մահափորձը:

Թիւ 19. Կոչ Տրապիզոնի կենտր. Կոմիտէի: Առաջնորդող՝ «Ներկայ բապէն» (Ցոնան): Ջարդի լուրեր Երկրից: Հայդուկային խմբի կռիւը Քէոփրի-Քէոյում:

Թիւ 20. Առաջնորդող՝ «Կը հրդեհուի» (Ցոնան): Կոտորածներ Բաբերդում, Երզնկայում: Լուրեր Երկրից:

Թիւ 21. Առաջնորդող՝ «Պիտի ոչնչանայ» (Ցոնան): Նամակ Կարինից (Ռոստոմ): Կոտորածներ:

Թիւ 22. Առաջնորդող՝ «Զէյթուն»: Զէյթունի ապստամբութիւն: Կոտորածներ:

1896 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի 28 թիւ. թիւ 1–28:

Թիւ 1. Առաջնորդող՝ Տեսութիւն նախորդ տարուայ: Հայդուկային խմբի կռիւը Դէլի-Պապայում: Կոտորածի լուրեր Կարնից, Խարբերդից, Տրապիզոնից: Լուրեր Երկրից:

Թիւ 2. Առաջնորդող՝ «Տմարդի պայմաններ» (Զէյթունի առթիւ)։ Կոտորածի լուրեր։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Ցարի կառավարութիւնը»։ Պարսկա-Տաճկական սահմանագլխից։ Կոտորածներ։ Լուրեր Երկրից։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Վճռողը կռիւն է»։ Կոտորածներ, կողոպուտ, աւերում։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Մահմեդական ամբոխի դերը»։ Պարսկա-Տաճկական սահմանագլխին։ Կոտորածներ ու բանտարկութիւն։ Լորդ Սոլսբիւրիի ճառը։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Մահմեդական ամբոխի դերը» (շար.)։ Ինքնապաշտպանութեան կռիւներ։ Կոտորածներ։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Զէյթունը անձնատուր»։ Հայդուկային կռիւներ։ Կոտորածներ։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Առաջն առնել» (դաղթականութեան)։ Կոտորածներից յետոյ կարնում։ Կոտորածներ։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Զվհատենք կռուել»։ Կոտորածից յետոյ կարնում (Թաթուլ)։ Պարսկա-Տաճկական սահմանագլխից։ Կոտորածներ։ Լուրեր Երկրից։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Ցեղափոխական գործիչը» (Ցոնան)։ Կոտորածներ։

Թիւ 11. Առաջնորդող՝ «Նոր դիմակը» (կոտորածների առթիւ) (Ցոնան)։ Կոտորածներ։ Լուրեր Երկրից։

Թիւ 12. Առաջնորդող՝ «Վնասակար տարրեր» (Ռոստոմ)։ Թղթակցութիւններ Երկրից։ Կոտորածներ։

Թիւ 13. Առաջնորդող՝ «Բարոյական նեցուկ» (Օր. Շահնազարեան — Տիկ. Եղ. Զօրեան)։ Թղթակցութիւններ Երկրից։ Կոտորածներ։

Թիւ 14. Առաջնորդող՝ «Ո՞ւր բարով» (Պետո)։ «Հետեւանքը ի՞նչ եղաւ» (Ռոստոմ)։ Թղթակցութիւններ Երկրից։ «Թիւրքիոյ շուրջը (Ս. Մինասեան)։

Թիւ 15. Առաջնորդող՝ «Ցեղափոխական գիտակցութիւն» (Մ. Վարանդեան)։ Թղթակցութիւններ Երկրից։ Պարսկա-տաճկական սահմանագլխից Ա.։ Թուրքիոյ շուրջը (Ս. Մինասեան)։

Թիւ 16. Առաջնորդող՝ «Ոչինչ չի վախեցնիլ» (Ցոնան)։ Կռիւ Վանի մէջ։ Պարսկա-տաճկական սահմանագլխից, Բ.։ Թուրքիոյ շուրջը (Ս. Մինասեան)։

Թիւ 17. Առաջնորդող՝ «Ի զէ՛ն» (Լ. Սարգսեան)։ Արրո (կենսագրական)։ Նամակներ Երկրից։

Թիւ 18. Արրо (Ռոստոմ)։ Կռիւներ Վանում։ «Զինուած ընդդիմադրութիւն» (Լ. Սարգսեան)։ Լուրեր Երկրից։ Շէրо, Զաթо։

Թիւ 19. Մարտիրոս Բաղուճեան։ Առաջնորդող՝ «Դիպլոմատ–հրէշներ» (Ռոստոմ)։ Վանի դէպքերը։ Լուրեր Երկրից։ «Թիւրքիոյ շուրջը» (Ս. Մինասեան)*)։

Թիւ 20. Առաջնորդող՝ «Սասնոյ երկրորդ տարեդարձը Պոլսում» (Մ. Վարանդեան)։ Տեղեկութիւններ Բանկ Օթթոմանի դրաւման մասին։

Թիւ 21. Բանկ Օթթոմանի գրաւումը։ Առաջնորդող՝ «Ժողովրդի Ոյժը» (Սմբատ)։ «Օսմանեան բանկի պաշարումը» (Հրաչ)։

Թիւ 22. Պետո (Ռոստոմ)։ Տերորիստական գործողութիւն Վանում (Սմբատ)։ Նամակներ Երկրից։

Թիւ 23. Առաջնորդող՝ «Մի՛ արատաւորէք» (Մ. Վարանդեան)։ «Երեք մահ» (Բարկէն, Գնունի, Սուրէն) (Սմբատ)։ Սամաթիոյ կռիւը։

Թիւ 24. Առաջնորդող՝ «Զէ՛նք, զէ՛նք»։ Բանկի դրաւման մանրամասնութիւնները (Գարօ)։

Թիւ 25. Առաջնորդող՝ «Ճամբից չշեղուենք» (Վարդ)։ Խասդիւղի կոտորածը։ Բանկի դէպքի մանրամասնութիւնները։

Թիւ 26. Աւետիս Մալոյեան (Ան. Քալանթար)։ «Ամէն բան թողէք» (Վարդ)։ Լուրեր Երկրից։ «Նոր հարկեր մահմեդականների վրայ» (Ռոստոմ)։

Թիւ 27. Բարկէն–Սիւնի (Ս. Մինասեան)։ «Կը շարունակենք» (Ցոնան)։ Լուրեր Երկրից։

Թիւ 28. Առաջնորդող՝ «Անդունդից Անդունդ» (Վարդ)։ «Թո՛ղ յիշեն» (Ս. Մինասեան)։ Դաշնակցական խմբի կռիւները Վանում։ Լուրեր Երկրից։

1897 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի 16 թիւ՝ թիւ 1–16։

Թիւ 1. 1896–97 թ. տարեկան տեսութիւն։ Հայդուկներ։ Հայդուկային խմբի կռիւը Հայոց Ձորում։ Լուրեր։

Թիւ 2. Օսմ. Ցեղափ. կուսակցութեան առաջին շրջաբերականը։ Առաջնորդող՝ «Վերջապէս» (այս շրջաբերականի առթիւ)։ Հայդուկ. խմբի կռիւը Ախուռկայ լեռներում։ Կրետական հարց։ Լուրեր։

Թիւ 3. Արտաշէս Անդրէասեան (Վռամեան), Առաջնորդող՝ «Դիւանագիտութիւն»։ Լուրեր Երկրից։ «Եւրոպական վերջին համաձայնութիւն» (բարենորոգումների ծրագրի առթիւ)։

Թիւ 4. Մարտ (կենսագրութիւն)։ Առաջնորդող՝ «Կրետէն ազատում է»։ Նամակներ Երկրից։ Կրետէի մասին։

---

*) Յաջորդ համարներում շարունակւում է «Թիւրքիոյ Շուրջ» բաժինը Ս. Մինասեանի կողմից։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Կեցցէ՛ Ցանդգնութիւնը» (Ցունաստան ու Կրետէ). Նամակներ Երկրից։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Դարձեալ կոտորած»։ Նամակներ Երկրից։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Ցոյն–Տաճկական պատերազմը»։ Նամակներ Երկրից։ Հնչակ–դաշնակցական միութեան առթիւ։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Քալէ՛» (Վռամեան)։ Թղթակցութիւններ Երկրից։ Թուղթիկ թերթ Հ. Ց. Դ. Վասպուրականի Կ. Կ.ի թիւ 2։

Թիւ 9. Արտաշէս Միսակեան (կենսագրութիւն)։ Առաջնորդող՝ «Կրետէի ինքնավարութիւնը»։ Նամակներ Երկրից։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Խա՞ղ, թէ յեղափոխութիւն» (երիտասարդ թիւրքերի մասին)։ Նամակներ Երկրից։

Թիւ 11. Խանասորի արշաւանք։ Առաջնորդող՝ «Պատի՛ւ Հայաստանին»։ Ռմբային գործողութիւններ Պոլսում։ Խաչիկ Գնունի (կենսագրութիւն)։ Լուրեր։

Թիւ 12. Առաջնորդող՝ «Աստուած, Ֆէտայիներն եկան» (Խանասորի առթիւ)։ Խանասորի արշաւանքի մանրամասնութիւնները։ Կռիւներ Վանում։

Թիւ 13. Արտաշէս Մ. Դեւեան — Եգիպտացի (Ա. Վռամեան)։ Առաջնորդող՝ «Վե՛րջ այս դրութեան»։ »Հայոց մի յաղթութիւնը» — Խանասորի առթիւ, Հանս–Ֆիշէր։ Նամակներ Երկրից։

Թիւ 14. Առաջնորդող՝ «Յեղափոխական նէյնիմներ»։ Խանասորի կռիւը (շար.)։ Նամակներ Երկրից։

Թիւ 15. Յակոբ Գարակէոզեան — Զաւէն (կենսագրութիւն)։ Առաջնորդող՝ «Դէպքերը Թո՛ղ խօսեն» (Ա. Վռամեան)։ Նամակներ Երկրից։

Թիւ 16. Արիստակէս Զօրեան — Կարօ (կենսագրութիւն)։ Առաջնորդող՝ «Հիւանդ Մարդը»։ Խանասորի կռիւը — նահանջ։ Լուրեր։

1898 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի 11 թիւ՝ թիւ 1–11։

Թիւ 1. 1897–98 թ. տարեկան տեսութիւն։ «Թուրքիան եւ իր ներքին թշնամիները, Ա. «Հելլէնականութիւն»։ Քաղաքական տեսութիւն։ Նամակներ Երկրից, Փարիզից։

Թիւ 2. Սաղաթէլ Խան Մ. Զոհրաբեան (կենսագրութիւն)։ Առաջնորդող՝ «Ժողովուրդը եւ Աղաները»։ «Թիւրքիան եւ իր ներքին թշնամիները, Բ.։ «Մակեդոնական խնդիրը»։ Քաղաքական տեսութիւն։ Նամակներ Երկրից։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Հայաջինջ խաղաղութիւնը» (Մ. Վարանդեան)։ Տեղեկագիր Տարօնի եւ շրջակայքի։ Թղթակցութիւններ Երկրից։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Մեր ներքին թշնամիները» (Մ. Վարանդեան)։ Թղթակցութիւններ Երկրից։ «Թալանի քաղաքականութիւնը եւ հետեւանքը» (Ս. Վարանդեան)։ «Կապոյտ Գիրքը 1896–1897». Կրեակ։

Թիւ 5. Կարապետ Դաւթեան — Խան (կենս.)։ Առաջնորդող՝ «Երիտասարդ Թիւրքիան» (Մ. Վարանդեան)։ Թղթակցութիւններ Երկրից։ Կլատստոն (Ս. Մինասեան)։ Մակեդոնիա։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Ակն ընդ Ական»։ Քիւրդլերէ Խիթապ» (քիւրդերէն), Տր. Ս.։ «Կոչ քիւրդերուն» (հայերէն)։ Եմէնի եւ Ալբանիայի խռովութիւնները։ «Պրոլետարիատի յաղթանակը» (Բելգիայի, Ֆրանսայի եւ Գերմանական խորհրդարաններու ընտրութիւնների առթիւ)։ «Առաջին Քայլ» (համագործակցութիւն թիւրքերի հետ)։ Լուրեր Երկրից։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Յեղափոխութեան Զօրավիդը». Պիսմարք։ Նամակներ Երկրից։

Թիւ 8. Աստ. Միրզայեան — Կրետացի (կենսագրութիւն)։ Առաջնորդող՝ «Տարեդարձը» (Խանասորի առթիւ)։ «Նիկոլա Բ.ի շրջաբերականը» (Լահէի Խաղաղութեան Վեհաժողով)։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Աւելորդ դաս մը» (Կրետէի առթիւ)։ «Մեր նշանաբանը» (Մաբ)։ Նամակներ Երկրից։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Պարտքի հերոսները»։ «Զինակիր խումբի մը յաղթական շուն Բագրեւանդէն Խլաթ»։ «Ուժերի համադրութիւն» (Մ. Վարանդեան)։ Լուրեր Երկրից։

Թիւ 11. Գրիգոր Գլըճեան — Պարոյր–Հայկազն (կենս.)։ Առաջնորդող՝ «Խելագարը» (Արդիւլ Համիդը)։ Սալմաստի 9 նահատակները։ Նամակներ Երկրից։

1899 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի 10 թիւ՝ թիւ 1–12 եւ Ապր. 15, Յուլիս 15, Նոյեմբ. 15 եւ Դեկտ. 15 ընդարձակ յաւելուածներ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան եւ Արփ. Արփիարեանի մասին։

Թիւ 1. 1898–99 թ. տարեկան տեսութիւն (Քրիստափոր)։ Այս համարից «Դրօշակ»ը լոյս է տեսնում Քրիստափորի խմբագրութեամբ։ «Նոր Տարի»։ «Ազիզ Մէրիկ» (Հայ Գուսան) — Այս համարից սկսւում է Հայ Գուսանի աշխատակցութիւնը։ Մահլամի նահատակների յիշատակին։ «Կովկասեան Խարբիկներ» (Է. Ակնունի) — ա՛յս համարից սկսւում է Է. Ակնունու «Կովկասեան Խաբրիկներ»ի շարքը։ Քաղաքական տեսութիւն։ «Մեծ մարդկանց փոքրիկ դատախաղը» (Ա. Զոպանեանի մասին) (Քրիստափոր)։ Լուրեր։

Թիւ 2. «Յայտարարագիր Հ. Յ. Դաշնակցութեան՝ ուղղուած Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների»։ 1898–99 թ.

տարեկան տեսութեան շարունակութիւնը (Քրիստափոր)։ «Կովեասեան Խարրիկներ (Է. Ակնունի)։ Նուբար Փաշա Նուբարեան (մահուան առթիւ)։ «Մեծ մարդկանց փոքրիկ դատախաղը» (շար.)։ «Խայը» (Ղարիբ)։ Այս համարից սկսւում է Ղարիբի աշխատակցութիւնը։

Թիւ 3. Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկական Խնդրի մասին։ Առաջնորդող՝ «Ցաղթանակը կռիւով»։ «Երկու կրակի մէջ»։ Կուռուբաշի նահատակները։ Նամակներ Երկրից։ Քաղաքական տեսութիւն — Կրետէ, Մակեդոնիա, Ֆինլանդիա։ Մամուլի տեսութիւն։ Գրախօսական — «Ի խաչ հան զդա», Գ.-եան եւ Գալիքաճեան, 1899։

Թիւ 4. Նշանաւոր եւրոպացիների կարծիքները Հայկական Խնդրի մասին։ Առաջնորդող՝ «Քաղաքական դրամա՞ թէ ֆարս» (Լահէի Խաղաղութեան Վեհաժողովի առթիւ)։ Ջէյմս Բրայս՝ «Հայոց Հարցը վերջին 20 տարում»։ «Կովկասեան Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «Թիւրք կառավարութեան դիմումները Դաշնակցութեան հետ բանակցելու»։ «Պատիւը» (Ղարիբ)։ Լուրեր։ Ցաւելուած — «Միութեան կամ համերաշխ գործակցութեան խնդիրը Նոր Հնչ. Կուսակցութեան հետ»։

Թիւ 5. «Հայաստան եւ Մակեդոնիա» — Ցայտարարութիւն Հ. Յ. Դաշնակցութեան եւ Մակեդոնական Գերագոյն Կոմիտէի։ Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամաբանութիւն» (Քրիստափոր)։ «Կովկասեան Խարրիկներ (Է. Ակնունի)։ «Թիւրք կառավարութեան դիմումները Դաշնակցութեան հետ բանակցելու» (վերջ)։ «Կռուե՛նք» (Ա. Թեւերեան)։ Լուրեր։

Թիւ 6. Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկական Խնդրի մասին։ Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամաբանութիւն, Բ. (Քրիստափոր)։ Գուրգէնի եւ իր խմբի նահատակութիւնը։ «Կովկասեան Խարրիկներ» (Է. Ակնունի)։ «Էլ մի՛ աղօթիր» (Ղարիբ)։ Լուրեր Երկրից եւ արտասահմանից։ Ցաւելուած Ցուլ. 15. — «Վերակազմ. Հնչ. Կուսակցութեան տեսական հայեացքները»։

Թիւ 7. Արամ Արամեանի մահը։ Առաջնորդող՝ «Եղբայր ենք մենք» (Հայ–մակեդոնական գործակցութիւն)։ «Կովկասեան Խարրիկներ» (Է. Ակնունի)։ Նամակներ Երկրից, Յովսէփ Աստուրեան (կենս.)։ «Մայրը» (Ղարիբ)։

Թիւ 8. Արամ Արամեան (կենս.)։ Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկ. Խնդրի մասին։ «Ամբոխային Տրամաբանութիւն, Գ.» (Քրիստափոր)։ «Բաց նամակ հայ ինտելիգենցիային» (Հայ Ինտելիգենտ)։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խարրիկներ» (Է. Ակնունի)։

Թիւ 9 — Առաջնորդող՝ «Մենք եւ մեր հակառակորդները»։

Կախաղանից առաջ (Արամ Արամեանի նամակը)։ Կովկասեան Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Կիցо». Թարգ. Ամ. Զիպրիանիից։ Լուրեր։ Ցաւելուած 15 Նոյեմբերի — «Վերակազմ. Հնչ. գործիչների բարոյականը»։

Թիւ 10. Սերոբ–Աղբիւր (կենս.)։ Առաջնորդող՝ «Ազատութեան կրակը»։ Սերոբի մահը (նամակ Մուշից)։ «Կովկասեան Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Ազատութեան ճանապարհին — «Բանտապետը», «Ընկերը» (Ղարիբ)։ Ցաւելուած 15 Դեկտեմբերի — Արփ. Արփիարեանը»։

1900 թ. լոյս է տեսել «Դրօշակ»ի 10 թիւ՝ թիւ 1–10։

Թիւ 1. 1899–1900 թ. տարեկան տեսութիւն։ «Մեր քաղաքական համակիրները Թիւրքիայում» (Մակեդոնիա, Երիտասարդ Թիւրքիա, Ֆիւրդեր)։ «Հայդուկի Նոր Տարին» (գրական)։ «Խաստուրի կռիւը»։ Անգլօ–Տրանսվալեան պատերազմը։ «Արիւնոտ Թթխմոր» (Ղարիբ)։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամաբանութիւն, Դ.» (Ֆրիստափոր)։ Կիլիկեան կաթողիկոսական հարցը։ Եւրոպ. Հայ Ուսանող. Միութիւն։ «Կովկասեան Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Լուրեր Երկրից։

Թիւ 3. Գուրգէն (կենս.)։ «Ամբոխային տրամաբանութիւն, Ե.»։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «19–րդ դար» (քաղաքական. տեսութիւն) (Մ. Վարանդեան)։ «Մշեցի Կարինէ (Պեսо, գրական)։ Լուրեր Երկրից։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Ամբոխային Տրամաբանութիւն, Զ.» — վերջ (Ֆրիստափոր)։ Պարսկա–Տաճկական սահմանագլխից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Ջաւօն» (Ղարիբ)։ Այլ եւ այլ լուրեր։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Դէպի՛ Երկիր» (Է. Ակնունի)։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «19–րդ դար» (շար.)։ «Մաթէօ Ֆալկոնէ», Պր. Միրիմէ (գր.)։ Նամակներ Երկրից։

Թիւ 6. Նշանաւոր եւրոպացիների կարծիքը Հայկ. Խնդրի մասին։ «Պատմական Զարիքը» (Ֆրիստափոր)։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «19–րդ դար» (շարունակութիւն)։ «Աշուղը» (Ղարիբ)։ Լուրեր։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Ոճրագործը դահի վրայ» (Արգիւլ Համիդ)։ «Մոլորեցնողներ» (յեղափոխութիւն եւ ներքին թշնամիները)։ Բաց նամակ հայերուն (Տամատ Մահմուտ փաշա)։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Կռիւ դաշտում» (Ղարիբ)։ Լուրեր։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Միութիւն Թիւրքերի հետ» (Ֆրիստափոր)։ 19–րդ դար» (շար.)։ Հայկական Հարցը Փարիզի համաժողովներում։ Լուրեր։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Պրօ Արմենիա»։ «Պատմական Զարիք» (Քրիստափոր)։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «19-րդ դար» (շար.)։ «Պրօ Արմենիա»յի առաջին համարի բովանդակութիւնը։ Եւայլն։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Անվերջ դասեր»։ «Կով. Խաբրիկներ» (Է. Ակնունի). «Պրօ Արմենիա» (Թիւ 2 եւ 3)։ Տիրացու Գրիգոր» (Ղարիբ)։ Նամակներ Երկրից։

1901 թ. լոյս է տեսել 9 թիւ «Դրօշակ«. թիւ 1-9։

Թիւ 1. Հ. Յ. Դ. տասնամեակին նուիրուած բացառիկ թիւ, ճոխ, պատկերազարդ։ Առաջնորդող՝ «Տասնամեակ — 1890-1900» (Քրիստափոր)։ «Դաշնակցութեան Տասնամեակին» — քերթուած (Հայ-Գուսան)։ «Անցած Օրեր, Գալիք Օրեր» (Է. Ակնունի)։ «Վերջին Ժպիտը» (Արմէն Գարօ)։ «Տասնամեակին առջեւ» (Վար. Վահեան)։ «Հայկական Կարմիր Խաչ» (Ն. Ս. — Ռոստոմ)։ «Պաշտօնական տեղեկագիր (Բաբկէն վարդ.ի տեղեկագիրը Պատրիարքին Տարօնի մասին)։ «Ազատութեան Ոգին» (Ղարիբ)։ «Դրօշակ»ի 10 տարուայ նիւթերի ցանկը։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Կռուող հայրերի դիպլոմատ որդիքը»։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Սերոբ-Աղբիւր (կենս.)։ «19-րդ դար» (շար.)։ «Պրօ Արմենիա» (Թիւ 5, 6, 7, 8)։ Լուրեր։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Պատմական Զարիք» (Քրիստափոր)։ Սերոբ-Աղբիւր (շար.)։ «Պրօ Արմենիա» (Թիւ 9, 10, 11, 12)։ «Ուխտաւորներ» (Ղարիբ)։ Պուլկարիոյ Ապրիլեան յեղափոխութիւնը։ Թղթակցութիւններ Երկրից։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Հայ-քրդական յարաբերութիւններ» (Քրիստափոր)։ «Կոչ Քիւրդերին», Պէտէր խան-պէյի որդի Ապտիւլրահման։ «Մայիսի 1-ը Թիֆլիսում»։ Սերոբ-Աղբիւր (շար.»։ «19-րդ դար» (շար.)։ Պուլկարիոյ Ապրիլեան յեղափոխութիւնը» (շար.)։ Նամակներ Երկրից։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Հայ-քրդական յարաբերութիւններ. Բ.» (Քրիստափոր)։ Հայաստանի վիճակը։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Սերոբ-Աղբիւր (շար.)։ «19-րդ դար» (շար.)։ «Պրօ Արմենիա» (Թիւ 13, 14, 15, 16)։ «Դարբնի Երգը» (Ղարիբ)։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Սասունի եօթնամեակը»։ «Մրրկահաւը» (Մ. Գորկի)։ «Խեղճ հայեր»։ Վերջին դէպքերը — Սասուն, Մուշ։ Թղթակցութիւններ Երկրից։ «Պրօ Արմենիա» (Թիւ 17, 18)։ «Դարբնի Երգը» — շար. (Ղարիբ)։ Թիւ 6-ի յաւելուած՝ Վերջին շարաթուայ լուրեր։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Արթուն լինենք»։ «Հայաստանի վի-

ճակը — Մուշ»։ Թղթակցութիւններ Երկրից։ Սերոբ–Աղբիւր (վերջ)։ Պուլկարիոյ Ապրիլեան յեղափոխութիւնը։ Խաղաղութեան 10–րդ համաշխ. կոնգրեսը Գլասկովում եւ Հայկական Հարցը։

Թիւ 7–ի յաւելուած՝ «Վերջին Շաբաթ»։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Սպասողական վիճակում», Հայկ. Հարցը Ֆրանս. Խորհրդարանին մէջ։ Թղթակցութիւններ Երկրից — Մուշ, Վասպուրական։ «19–րդ դար» (շար.)։ Ֆրանսիայի սոցիալիստները եւ Հայկական Հարցը։ «Կեանքի դիմաց» (Մ. Գորկի)։

Թիւ 9. Զորս կախաղան — Պետրոս Սէրէմճեան եւ ընկերներ։ Առաջնորդող՝ «Բանականութեան Ձայնը»։ Ալիշան (մահուան առթիւ)։ «Հայերը» (Ամ. Զիպրիանի)։ Թղթակցութիւններ Երկրից — Սղերդ, Խարբերդ։ Կովկ. Խարբիկներ» (Է. Ակնունի)։ «19–րդ դար» (շարունակութիւն)։ «Խեղդեցէ՛ք Ձայնը» (Ասլան — Ռ. Զարդարեան)։ «Դարբնի Երգը» Ղարիբ)։

1902 թ. լոյս է տեսել 11 թիւ «Դրօշակ». թիւ 1–11։

Թիւ 1. 1901–1902 թ. տարեկան տեսութիւն։ Պետրոս Սէրէմճեանի եւ ընկերների կախումը։ Իլդէ Ֆրապանի նամակը «Դրօշակ»ին։ Թղթակցութիւններ Երկրից — Պոնտոս, Բէյրութ, Թիֆլիս։ «Պրօ Արմենիա» (թիւ 22, 23, 1, 2)։ Հայկ. Հարցը Ֆրանս. խորհրդարանում։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Նոր շրջան»։ Հայկ. Հարցը Ֆրանս. խորհրդարանում։ Օսմանցի ազատականների համաժողովը։ Թղթակցութիւններ — Տարօն, Վան։ Ֆր. դը Պրէսանսէի բանախօսութիւնը ժընեւում Հայկ. Հարցի մասին։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Ցաւիտենական խարխափումը»։ «Եւրոպան Եւրոպայի դէմ»։ Հայկ. Հարցը Ռայխստագում։ Թղթակցութիւններ — Խարբերդ, Գաղատիա, Տիվրիկ, Պարսկա–տաճկական սահմանագլուխ։ «Կովկ. Խարբիկներ» (Է. Ակնունի)։ «Պրօ Արմենիա» (թիւ 4, 6, 7, 8)։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Ցոյցեր»։ Թղթակցութիւններ — Տարօն, Տիգրանակերտ, Մերսին, Վան, Բաթում, Բաղու, «Գործ, ոչ խօսք» (Վասպուրականից)։ Խաչ. Ասլանեան (կենս.)։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Մեր ներքին չարիքներից»։ Թղթակցութիւններ — Մերսին, Տրապիզոն, Կիրասոն, Սղերդ։ «Կովկ.. Խապրիկներ» (Է. Ակնունի)։ «Զինակցութիւններ» (քաղաքական)։ Հայասէր պրոպագանդը Գերմանիայում։ Բրիւսելի համաժողովը։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Ցայտնչակուենք»։ Բրիւսելի կոնգրեսը։ «Գրիչը քաղաքագէտների ձեռքում»։ Թղթակցութիւններ

— Ախլաթ, Բուլանըդ, Երզնկա, Ալաշկերտ։ Քաղաքական տեսութիւն։ Հայասէրների կոնգրեսը։ «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Հնչակեան կուս. կենտրոնի միացեալ կոչը Բրիւսելի հայասէրների կոնգրեսին։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Մեր ներքին չարիքներից, Բ.»։ Հայկական Մոնտենեգրոն (Զէյթունի մասին)։ Հայաստանի վիճակը 1901-ին։ Տեղեկագիր Բագրեւանդի։ Թղթակցութիւններ — Մուշ, Կիլիկիա, Բալկաններում։

Թիւ 9.— Առաջնորդող՝ «Պատմական դաւաճանութիւն»։ Հայ դաղթականների դիմումը մեծ պետութիւններին։ Հայաստանից թղթակցութիւններ — Իւշ-Քիլիսա, Վասպուրական, Խարբերդ։ Ախպէր (կենս.)։ Պետրոս Սէրէմճեան (յուշեր)։ Ռումանացի հրեաները եւ Ամերիկան։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Թիւրքիայի ուժը»։ Թղթակցութիւններ — Ալաշկերտ, Բասէն, Կարին, Վասպուրական։ Քրդական բարքերէն։ Տեղեկագիր Տիգրանակերտի ճիզրէ դաւառակի ներքին վիճակի մասին։

Թիւ 11. Առաջնորդող՝ «Ճակատագրական Ուղին»։ «Հայ դաղթականների խնդիրը»։ «Պրէսանսէի դիմումը հայ դաղթականների համար»։ Թղթակցութիւններ — Կարին, Բայազիտ, Վան, Կիրասոն, Մերսին։ Տեղեկագիր ճիզրէի մասին (շար.)։ Երկու զոհ (Խաչատուր վարժապետ եւ հայդուկ Ցարութիւն)։

1903-ին լոյս է տեսել 10 թիւ «Դրօշակ». թիւ 1-10։

Թիւ 1. 1902-1903 թ. տարեկան տեսութիւն։ Թղթակցութիւններ — Պոլիս, Էրզրում։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Հայկ. Խնդիրը Աւստրո-Հունգարիայում։ Տեղեկագիր ճիզրէի մասին (շար.)։ 1902 թ. քաղաքական տեսութիւն։ «Խորտակուած կապանքներ» (Մ. Գորկի)։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Հաւաքական պարտաճանաչութիւն»։ Թղթակցութիւններ — Էրզրում, Մուշ, Տրապիզոն, Բաղէշ, Սղերդ։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Հայկ. պրոպագանդը Եւրոպայում։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Դարերի Խաբը»։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Տիգրանակերտի վիլայէթի Նփրկերտ շրջանի վիճակը։ ճիզրէի վիճակը (շար.)։ Էդ. Բէրնշտայնի հարցապնդումը Ռայխստագում։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Ցեղափոխութեան հնոցը»։ «Հայորդիներ. Ա.», Սիամանթօ (այս համարից սկսւում է Սիամանթոյի աշխատակցութիւնը)։ «Ցեղափոխութիւնը եւ Եւրոպան»։ Թղթակցութիւններ Երկրից։ ճիզրէի վիճակը (շար.)։ Հայկ. Հարցը Իտալիայում։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Պարտութի՞ւն թէ Զինադադար»։ «Արիւնի իրիկուններ» (Սիամանթօ)։ Թղթակցութիւններ Երկրից։ Դաշն. եւ Հնչ. միութեան բանակցութեանց վախճանը։ «Արիւնի Զայնը» (Ղաբիբ)։ Գար. Զթչեանի սպանութիւնը։

Թիւ 6. «Սպառնալից դրութիւն» խմբ.։ Թղթակցութիւններ։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Կովկասահայի տաղնապը»։ «Ատելութիւն» (Վտարանդի)։ Մուշ–Սասուն։ Հայկական ցոյցեր Կովկասում։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Երիտասարդ զինուորը» (Լամբնէ)։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Պատճառաբանութիւնները»։ Հայկական ցոյցեր Կովկասում։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Վրաստան»ը եւ ազգ. ինքնավարութեան հարցը Կովկասում։ Հայաստան եւ Մակեդոնիա։

Թիւ 9. «Մակեդ. շարժումը» խմբ.։ Բասենի ընդհարումները։

Թիւ 10. Դինամիտի զոհերը Կարսում։ Թղթակցութիւններ Երկրից։ «Վրաստան»ը եւ ազգ. ինքն. հարցը Կովկասում, շար.։

1904 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. 1903–1904 թ. տարեկան տեսութիւն։ Թղթակցութիւններ Երկրից — Վան, Մուշ եւայլն։ «Վրաստան»ը եւ ազգ. ինքնավարութեան հարցը Կովկասում (վերջ)։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Տարօնը արեան մէջ»։ Թղթակցութիւններ Երկրից։ Սուլուխցի Սերոբ (կենս.)։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Պատրաստ եղէ՛ք»։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Բասէնի եւ Դալիբաբայի կռուի զոհերը։

Թիւ 4–5. Կռուող Սասունը։ Սասունի ապստամբութիւնը։ (Սասունի քարտէսով)։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Հրայր–Դժոխքի մահը։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Դատարկման ծրագիրը» (Սասունի մասին)։ Տեղեկութիւններ Սասունի ապստամբութեան մասին։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Վրէժի սերունդ»։ Զիւինի կռիւը։ Սասունի դէպքերը։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Սասունի հարցը Ֆրանս. պարլամենտում։

Թիւ 8. Բէֆորմների պահանջները ներկայացրուած 3 մեծ պետութեանց հիւպատոսներին։ Առաջնորդող՝ «Տեսորը Ռուսաստանում»։ «Ոսկան» խմբի կռիւը։ Մոսուն Զօրի ընդհարումը։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Սասունի հարցը Ֆրանս. պարլամենտում (շար.)։ Շաւրօ (կենս. եւ նամակը)։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Կռուի տենդը»։ Բաղրեւանդի կռիւ–

ները։ Իգդիրի բոլենին։ Թղթակցութիւններ Երկրից։ Սասունի հարցը Ֆրանս. պարլամենտում (վերջ)։ Վաղարշակ Բաղդասարեան — Կայծակ (կենս.)։ Ամստերդամի կոնգրեսը։ Պլեւէի ոպանութիւնը։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Ցարիզմի դէմ»։ Յեղափոխական հայուհիներ։ Աղթամարի կռիւը։ Սահմանագլխի ընդհարումը։ Բռնութիւնները Տարօնում։ Հրայր–Դժոխք (կենս.)։ Ամստերդամի կոնգրեսը, Բ.։

Թիւ 11. Առաջնորդող՝ «Պլեւէից յետոյ»։ Կոչ Կովկասի զօրակոչի առթիւ։ Թղթակցութիւններ Երկրից։ Վահան Մանուէլեան (կենս.)։ Ամստերդամի կոնգրեսը, Գ.։ «Ճերմակ Գիրք» հայկ. հարցի մասին։ Լեհական շարժումներ։

1905 թ. լոյս տեսաւ 13 թիւ «Դրօշակ». թիւ 1–13։

Թիւ 1. Առաջնորդող՝ «Ցիշատակելի թուական (1904–1905)»։ Յեղափոխական շարժումը Ռուսաստանում։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Մակեդոնիա։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Կարմիր Սուլթան–Կարմիր Ցար»։ Սասունի եւ Մուշի կռիւների մանրամասն նկարագրութիւնը (շար.)։ Թղթակցութիւններ Երկրից։ «Վաղրիկ» (Ղարիբ)։ Յեղափոխական շարժումը Ռուսաստանում։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Ե՞րբ արդեօք կը խրատուենք»։ Սասունի եւ Մուշի կռիւների մանրամասն նկարագրութիւնը (շար.)։ Հայ–թաթարական ընդհարումները Բագուում։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ Արմենակ Լեւոնեան — Երկաթ (կենս.)։

Թիւ 4. Քրիստափորի մահը։ Առաջնորդող՝ «Քրիստափոր Միքայէլեան»։ «Ողբի նամակ Հ. Յ. Դաշնակցութեան» (Սիամանթօ)։ Սասունի եւ Մուշի կռիւների մանրամասն նկարագրութիւնը (շար.)։ Թղթակցութիւններ Երկրից։ Աղթամարի կռիւը։ Բագուի դէպքերը։ Ռուսական տագնապը։

Թիւ 5. Յեղափոխական կուսակցութիւնների դաշն ցարիզմի դէմ։ Սասունի եւ Մուշի կռիւների մանրամասն նկարագրութիւնը (շար.)։ Բագուի դէպքերը։ Լուրեր Ռուսաստանի յեղափոխութեան մասին։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Համիդիականութիւնը Կովկասում»։ Սասունի եւ Մուշի կռիւների մանրամասն նկարագրութիւնը։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովս. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Անդրկովկասի ժողովուրդների պահանջը»։ Յեղափոխութիւնը Ռուսաստանում։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Քաղաքական Վրաստանը»։ Հայ–թաթարական ընդհարումները։ Նակաշիձէի ահաբեկումը։ Սասունի եւ Մուշի կռիւների մանրամասն նկարագրութիւնը (վերջ)։

«Ցարդա՝նք քեզ» (Ղարիբ)։ Հ. Ց. Դ. հրամանը կովկասեան ռուս վարչութեան։

Թիւ 8. Սուլթանի մահափորձ։ Առաջնորդող՝ «Բարի խորհուրդներ»։ «Հայորդիներ, Զ.» (Սիամանթօ)։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։ Նամակ Ֆրանսիայից կովկասեան դէպքերի մասին։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Խոնարհուող թագը»։ Ապիկարներ» (կովկասեան դէպքերի առթիւ)։ Նամակ Վասպուրականից։ Հայ-թաթարական ընդհարումները։ «Օտար հորիզոնների տակ» (Ղարիբ)։

Թիւ 10 Առաջնորդող՝ «Դարաւոր պայքարը»։ Հայկ. կալուածների վերադարձը։ Հայ-թաթարական ընդհարումները։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Հաղրէն» (Ղարիբ)։

Թիւ 11. Առաջնորդող՝ «Տասնամեակին» (1895 թ. Ջարդերի առթիւ)։ «Կովկաս» (Սիամանթօ)։ «Դրօշակ»ի խմբագրութեան կոչը եւրոպական մամուլին եւ ականաւոր գործիչներին Կովկասի դէպքերի առթիւ։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։

Թիւ 12. Առաջնորդող՝ «Յեղափոխութեան առաջին յաղթանակը» (կալուածների վերադարձի առթիւ)։ Ցարիզմի հոգեվարքը։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։ Մարգար Ժամհարեան — Մռաւ (կենս.)։

Թիւ 13. Առաջնորդող՝ «Նաւային ցոյցը» (Թիւրքիայի դէմ)։ «Հոգեվարքի ցնցումները» (ռուսական յեղափոխութիւնը)։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կարմիր նամակ» (Սիամանթօ)։

1906 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. 1905–1906 թ. տարեկան տեսութիւն։ «Դարերու վրէժ» (Սիամանթօ)։ Հայ-թաթարական ընդհարումներ։ «Կաղանդի ընծան» (Մար)։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Սուլթանական Երազներ»։ «Մենախօսութիւն» (Սիամանթօ)։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։ Մոսկուայի ապստամբութիւնը։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Դահիճների դահլիճում»։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Վիթոչի Բաղէն» (Վասպանդի)։ Ստեփան Ստեփանեան (կենս.)։ Լահէյի ժողովը եւ թիւրքահայ խնդիրը։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Դժուարն անցանք»։ «Հայկ. Հարցը եւ Իտալիոյ պարտականութիւնը» (Վիտտորիո Ր. դի Օլիվիէրի)։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ-թաթարական ընդհարումնե-

ը։ «Քաղաքական կուսակցութիւնները Ռուսաստանում. Ա.» (Վ. Արարատսկի)։ «Կենդանի թաղուածների աշխարհում — թիւրքական բանտեր, Ա.» (Մաբ)։ Խորէն Սարգսեան — Պետրոս Աղիղով (կենս.)։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Ցարմաբ բոպէն»։ «Ֆրանսա եւ Ռուսական փոխառութիւնը» (Պիէր Քիար)։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ-թաթարական ընդհարումները։ «Կովկ. Խաբրիկներ» (Է. Ակնունի)։ «Քաղ. կուս. Ռուսաստանում, Բ.» (Վ. Արարատսկի)։ «Կենդանի թաղուածների աշխարհում, Բ.» (Մաբ)։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Միրանակիր խրտուիլակը»։ «Դէպքի՛ գործ» (Իլդէ Ֆրապան)։ «Ցորդորներ եւ խրատներ հայդուկներին. Ա.» (Անդրանիկ)։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ-թաթարական ընդհարումները։ «Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց ներկայացուած առ Բ. Դուռն յանուն Աղդային Ժողովոյ ի 11 Ապրիլի, 1872 թ.»։ «Կենդանի թաղուածների աշխարհում. Գ.» (Մաբ)։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Դուման մեռաւ, կեցցէ՛ Սահմանադրութիւնը»։ «Նախատինք Եւրոպային» (Էլիզէ Բըկլիւ)։ Վանի արիւնոտ տասնամեակը։ «Ցորդորներ եւ հրահանգներ հայդուկներուն, Բ.-Գ.» (Անդրանիկ)։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ-թաթարական ընդհարումները։ «Դումանն» (Վ. Արարատսկի)։ «Կենդանի թաղուածների աշխարհում, Դ.» (Մաբ)։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Գեաւուրները կուում են»։ Հայկական խնդիրը միջպարլամենտական ժողովում։ Օսմ. Բանկի գրաւման 10-ամեակը։ «Ցորդորներ եւ հրահանգներ հայդուկներուն, Դ.» (Անդրանիկ)։ Թիւրք ազատախոհների կոչը։ Հայ-թաթարական ընդհարումները։ Թղթակցութիւններ Երկրից։ «Քաղ. կուս. Ռուսաստանում, Գ.» (Վ. Արարատսկի)։ Սահմանադրութեան սկիզբը Պարսկաստանում։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Մեծ մարդասպանի վերջալոյսը»։ «Հրաւէր համերաշխութեան» (Պ. Քիյար)։ «Ցորդորներ եւ հրահանգներ հայդուկներուն, Ե.» (Անդրանիկ)։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ-թաթարական ընդհարումները։ Բաղուի գործադուլի շուրջ։ «Բ. Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց»։ «Թիարաններու խորքէն» (Սիամանթօ)։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Դիմադիր տարրերու համախմբում»։ Հայոց Հարցը խաղաղութեան համաշխ. 15-րդ կոնգրէսի առջեւ։ Թղթակցութիւններ Երկրից։ «Քաղ. կուս. Ռուսաստանում, Դ.» (Վ. Արարատսկի)։ «Բ. Տեղեկագիր գաւառ. հարստահարութեանց» (վերջ)։

Թիւ 11. Առաջնորդող՝ «Համերաշխութեան ձեռքը»։ Էրզրու-

մի ցոյցը։ Թղթակցութիւններ Երկրից։ «Քաղ. կուս. Ռուսաստանում, Ե.» (Վ. Արարատսկի)։ «Կախաղաններու կատարէն» (Սիմանթօ)։ «Արեան էջեր» — Մատթ. Իզմիրլեանի 1905 թ. Դեկտ. 4 թուագրերը։ Սասունի նահատակները։

Թիւ 12. Առաջնորդող՝ «Ցարիզմը Ցարի դէմ»։ Թղթակցութիւններ Երկրից։ «Քաղ. կուս. Ռուսաստանում, Զ.» (Վ. Արարատսկի)։ «Արեան էջեր» — Մ. Իզմիրլեանի 1905 թ. Դեկտ. 4 թուագրերը (շար.)։ «Դաշնակցութիւն» (Վտարանդի)։ Սասունի նահատակները (շար.)։

1907 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. Առաջնորդող՝ «Աստուածները գլորուած»։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ–թաթարական ընդհարումները։ «Արեան էջեր» —Մ. Իզմիրլեանի 1905 թ. Դեկտ. 4 թուագրերը (վերջ)։ Սասունի նահատակները (շար.)։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Հակահարուածը»։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ–թաթարական ընդհարումները։ «Որբերուն ճակատագրէն» (Սիմանթօ)։ Սասունի նահատակները։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Նոր տագնապը»։ «Հայ բանտարկեալներուն համար» (Պ. Քիյար)։ Երկրորդ Դուման։ Թղթակցութիւններ Երկրից։ Հայ–թաթարական ընդհարումները։ Ռուսական ճգնաժամը։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Աղէտի հանդէպ»։ Թղթակցութիւններ Երկրից։ Կովկասի ընդհանուր տեսութիւն։ Ռուսաստանի յեղափոխութիւնը եւ հայկական խնդիրը։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Զորրորդ Ընդհանուր Ժողովը»։ «Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Սոցիալիզմը» (Պ. Քիյար)։ «Զկայ անջատում» (Մ. Վարանդեան)։ 4–րդ Ընդհ. Ժողովի որոշումները։

Թիւ 6–7. Առաջնորդող՝ «Սուլթանական ցասումն». «Հայ–Թրքական համերաշխութիւն»։ Գ. Զաւուշի մահը։ Աղթամարի կռիւը։ «Սոցիալիստի նամակներ, Ա.» (Վ. Արարատսկի)։ Թղթակցութիւններ Երկրից։ Կովկասեան լուրեր։ Գարիբալդի. Ա.։ Զանազան տեղեկութիւններ։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Վայրկեանի պահանջը»։ Հաւադայի խաղ. Բ. կոնդրեսը եւ հայկ. խնդիրը։ Է. Միջազգ. Սոց. Կոնդրեսը։ Գէորգ Զաւուշ — Սարհատ (կենս.)։ Գարիբալդի, Բ.)։

Թիւ 9. Առաջնորդող՝ «Խաղաղութեան կոնդրեսներ եւ հակամիլիտարիզմ»։ Դաշնակցութեան ծրագիրը (տեսական մաս, հաստատուած Վիէննայում)։ «Սոց. նամակներ, Բ.» (Վ. Արարատսկի)։ Լուրեր Երկրից։ Գանձակի կռիւները։ Հ. Յ. Դ. Շտուտկարտի տեղեկագիրը։ Գէորգ Զաւուշ (շար.)։

Թիւ 10. Առաջնորդող՝ «Գործի պրոպագանդը»։ Թղթակցու-

թիւններ Երկրից։ «Սոց. նամակներ, Գ.» (Վ. Արարատսկի)։ Գէորգ Զաւուշ (շար.)։ Թիւրք–պարսկական վէճը։

Թիւ 11–12. Առաջնորդող՝ «Վտանգալի հեռանկարներ»։ «Ո՞ւր է վախճանը» (Ռուսաստանի քաղաքը)։ Խրիմեան Հայրիկ (կենս.)։ Բորիս Սարաֆով (կենս.)։ «Սոց. նամակներ, Դ.» (Վ. Արարատսկի)։ Լուրեր Հայաստանից։ Պարսկաստան։ Գերմանիա եւ լեհերը։

1908 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. Առաջնորդող՝ «Միջկուսակցական կոնգրէս»։ Ցայտարարագիր Օսմ. կայսրութեան ընդդիմադիր տարրերի կոնգրէսի։ «Սոց. նամակներ. Ե.» (Վ. Արարատսկի)։ Թղթակցութիւններ Երկրից։ Սպիտակ տեռորը Էրզրումի մէջ։

Թիւ 2. Առաջնորդող՝ «Փոթորիկից առաջ»։ «Կենտրոնացում եւ ապակենտրոնացում»։ «Սոց. նամակներ. Զ.» (Վ. Արարատսկի)։ Թղթակցութիւններ Երկրից։ «Երկու գերեզման» (ցարիզմ, սուլթանութիւն)։ Արեւելեան ճգնաժամը։

Թիւ 3. Առաջնորդող՝ «Վանի դէպքերը»։ Վանի զէնքերի գրաւումը։ «Երկու ցեղ» (մարդաբանական դրծօնը)։ «Սոց. նամակներ. Է.» (Վ. Արարատսկի)։ Սայդօ Պօղոս, Ջնդօ (կենս.)։

Թիւ 4. Առաջնորդող՝ «Արջի թաթը»։ «Կէս ճանապարհին» (Պ. Դուման)։ «Սոց. նամակներ. Ը.» (Վ. Արարատսկի)։ «Հակասական թռիչքները մարքսիզմի էվոլիւցիայի մէջ»։ Բաղէշի վիլայէթի վիճակը 1907 թ.։ Լուրեր Երկրից։ «Դաւաճաններ» (Սիամանթօ)։ Եւրոպայի Դաշն. Ուս. առաջին համագումարը։

Թիւ 5. Առաջնորդող՝ «Բարբարոս ըէժիմը»։ Վանի դէպքերը։ «Կոտորածի ծրագիրներ» (մի թիւրքի մերկացումներ)։ Հանրագրութիւն Վանայ ժողովրդին։ «Սոց. նամակներ, Թ.» — վերջ (Վ. Արարատսկի)։ Պարլամենտարիզմ եւ օրինականութիւն։ Բաղէշի վիլայէթի վիճակը (շար.)։ Եւրոպա, Ասիա (քաղաք. տեսութիւն)։

Թիւ 6. Առաջնորդող՝ «Տիեզերական ըէակցիան եւ սոցիալիզմը»։ Վանի դէպքերը։ «Սկզբունք եւ տակտիկա» (սոցիալիստական տեսութիւն)։ Բաղէշի վիլայէթի վիճակը 1907 թ. (շար.)։ Զաւէն (կենս.)։ «Կամքի մէջ դիւցազն» (Սիամանթօ)։ Արեւելեան ճգնաժամը։

Թիւ 7. Առաջնորդող՝ «Թիւրքիան — Սահմանադրական»։ «Յեղափոխական շարժումը Թիւրքիայում»։ Վանի դէպքերը։ Բաղէշի վիլայէթի վիճակը (շար.)։ Լուրեր Երկրից։

Թիւ 8. Առաջնորդող՝ «Այժմէական պահանջը»։ Օսմ. Սահմանադրութիւնը եւ հայերը։ «Ողջո՛յն» (Մար)։ Շրջաբերական

Հ. Յ. Դ. Պոլսի Պատ. Մարմնի։ «Վերջապէս» (Հ. Յ. Դ. Բիւրօ)։ «Յեղափոխական Սինդիկալիզմ, Ա.»։

Թիւ 9–10. Հ. Յ. Դ. պահանջները։ Ծրագիր Օսմ. Միութեան եւ Յառաջ. Կոմիտէի։ Առաջնորդող՝ «Տեղատուութիւն»։ Ռուս. յեղափոխութիւնն ու կուսակցութիւնները։ Թիւրքիա — ներքին կացութիւն, արտաքին կացութիւն։ Պարսկ. յեղափոխութիւնը։ Միջազգ. Սոց. Բիւրոյի 10–րդ համագումարը։

Թիւ 11–12. Սաքօ (կենս.)։ Առաջնորդող՝ «Մեծ կնճիռների հանդէպ»։ Թիւրքա–Ազգային ճիգը։ Ռուսաստան—Արեան ըէժիմը։ Պարսկաստան—արիւնոռուշտ յետադիմութիւնը։ Յով. Աչըգկէոզեան (կենս.)։ Կարօ (կենս.)։ «Յեղափոխական Սինդիկալիզմը, Բ.»։

1909 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. 1908–1909 թ. տարեկան տեսութիւն։ Թիւրքիա — Երկաթուղիներու կարեւորութիւնը։ Աղէթ։ «Յեղափոխական Սինդիկալիզմ, Գ.»։

Թիւ 2–3. «Ստոլիպին–վորոնցովեան ըէժիմը եւ Դաշնակցութիւնը»։ «Ո՞ւր են» (կոչ երիտասարդութեան)։ Թիւրքիա։ Փոքր–Հայքի հայերը, Ա.։ Տաղնապը Սոց.–Յեղափ. կուս. մէջ։ Պարսկաստան — Յեղափոխութեան ալիքները։ «Յեղափոխ. Սինդիկալիզմ, Դ.»։ Սոցիալիստական ինտելիգենցիան եւ յեղափոխութիւնը, Ա.»։

Թիւ 4. «Մեծ Մարդասպանը դահընկէց։ Առաջնորդող՝ «Երկրորդ յեղափոխութիւն»։ Կիլիկիան արիւնաւէր։

Թիւ 5. «Պաշտպանուինք»։ Կիլիկեան սարսափներ»։ «Աղէտի շուրջը» (Կիլիկիա)։ Կովկասեան տագնապը։ Պարսկաստան — Սահմանադրութիւնը վերահաստատուած։

Թիւ 6. «Աղէտէն ետքը»։ Ռուսաստան — Վեհապետի ուղեւորութիւնը եւ երկիրը։ Աղէթ։ Սոց.–Յեղափ. կուս. Ե. խորհուրդը։ Լուրեր Թիւրքիայից։ Փոքր–Հայքի հայերը, Բ.։ Ժամանակակից կնճիռներ — ազգային նշանաբանը։

Թիւ 7. «Կացութիւնը եւ մեր պարտաւորութիւնները, Ա.»։ Փոքր–Հայքի Հայերը, Գ.։ Համաժողովրդական բանակ, Ա., Բ.։ Պարսկաստան — Բռնակալութեան անկումը։ Ժամանակակից կնճիռներ — Գաղափարը եւ նրա արտայայտութիւնները։

Թիւ 8. «Կացութիւնը եւ մեր պարտաւորութիւնները, Բ.»։ Արտագաղթը։ Համաժողովրդական բանակ, Գ.։ Երկու յիսնամեակ։ Ազգային ընկերվարութիւնների ծագումը։

Թիւ 9. Յայտարարագիր Հ. Յ. Դ. Ե. Ընդհ. Ժողովի։ «Կացութիւնը եւ մեր պարտաւորութիւնները, Գ.»։ Թիւրքիա — Ներքին վիճակը։ Համաժողովրդական բանակ, Դ.։ Եղիշէ Թուփչեանի մահը։

Թիւ 10–11. Հ. Յ. Դ. Ե. Ընդհ. Ժողովի որոշումները։ Առաջնորդող՝ «Ե. Ընդհ. Ժողով»։ Պարսկաստան — Մուջահիդների սրբազան կուսակցութեան ծրագիրը։ Համաժողովրդական բանակ, Դ.։ Ժառանգականութիւնը ազգ. զարգացման պրոցեսում։

Թիւ 12. «Դրօշակի շուրջը»։ Պատմական մենամարտ (Լորդերի Պալատը)։ Բնութիւնը եւ աշխատանքը ազգ. զարգացման պրոցեսում։

1910 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. Եղիշէ Թոփչեան։ 1909–1910 թ. տարեկան տեսութիւն։ Լեզուն եւ պատմութիւնը ազգերի էվոլիւցիայի մէջ։

Թիւ 2. «Մի մեծ շարժման ստուերները, Ա.» (ռուս. յեղափոխութիւն)։ Ներքին պայքարը թիւրքահայ կեանքի մէջ։ Ռուսիա։ Ազգային արժէքներ։ Պատմական զարգացում եւ տեսական ընդհանրացումներ, Ա.։

Թիւ 3–4. «Մի մեծ շարժման ստուերները, Բ.»։ «Ցուշեր ապրիւնոտ օրերից» (Ալ. Մամիկոնեան)։ Նոր Թիւրքիան, Ա.։ Պարլ. ընտրութիւնները Ֆրանսիայում։ Պատմ. զարգացում եւ տես. ընդհանրացումներ, Բ.։

Թիւ 5–6. Մարտիրոս Զարուխչեան (կենս.)։ Վարագի յիշատակը։ Նոր Թիւրքիան, Բ.։ Պատմ. զարգացում եւ տես. ընդհանրացումներ, Գ.։

7–12. «Մի մեծ շարժման ստուերները, Գ. (վերջ)։ Նոր Թիւրքիան, Գ.։ Ը. Միջազգ. Սոց. կոնգրես։ «Միջկուսակցական խորհրդաժողով» (Ռուս. սոց. կուս.)։

1911 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. Առաջնորդող՝ «Հովեր»։ Տոլստոյ։ Նոր Թիւրքիա, Ե.։ Մի էջ պարսկ. յեղափ. պատմութիւնից (Ալդա)։ Իրմիրլեան։ Պատմ. զարգացում եւ տես. ընդհանրացումներ, Գ.։

Թիւ 2. Կովկասեան Բասթիլը եւ հայ հասարակութիւնը։ Նոր Թիւրքիա, Զ.։ Սոց.–յեղափ.–ները եւ զինուած ապստամբութեան խնդիրը։ Պատմ. զարգացում եւ տես. ընդհանրացումներ, Դ.։

Թիւ 3–4. «Գերմանական արշաւը եւ Թիւրքիոյ ճակատագիրը, Ա.»։ Նոր Թիւրքիան, Է.։ «Հաղուագիւտ տօն» (Իտալիոյ վերածնութիւնը)։

Թիւ 5–6. «Գերմ. արշաւը եւ Թիւրքիոյ ճակատագիրը, Բ.»։ Նոր Թիւրքիան, Ը.։ Գնուններան (Մ. Վ.)։ Պատմ. զարգացում եւ տես. ընդհանրացումներ, Ե.։

Թիւ 7–12. Հ. Յ. Դ. Զ. Ընդհ. Ժողովի որոշումները։ «Ճգնաժամ»։ Նոր Թիւրքիան, Թ.։ Պատերազմը եւ մենք։ «Գերմ. ար-

շաւը եւ Թիւրքիոյ ճակատագիրը, Գ.»։ Սպանդարեանի գործը։

1912 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ»։ թիւ 1–12։

Թիւ 1. Մահ Պիէռ Քիյառի։ 1911–1912 թ. տարեկան տեսութիւն։ Սոցիալիստական տարրը Ռուսահայ գրականութեան մէջ (ներածութիւն)։ «Սեպարատիզմը» աշխատ. շարժման մէջ, Ա.։ Պարլ. ընտրութիւնները Գերմանիայում։ «Ուսանող», «Նոր Խօսք», «Նոր Կեանք», «Փրկիչներ» (գրախօս.)։

Թիւ 2. Պ. Քիյառ (կենս.)։ Լեհաստանը եւ նրա դրօշակակիր կուսակցութիւնը։ Ճակատամարտները Պարսկաստանում։ Լաւրովի պատմափիլիսոփայութիւնը (ներածութիւն՝ Սնար)։ Սեպարատիզմը աշխ. շարժման մէջ, Բ.։ Հայկ. շարժման նախապատմութիւնը (Մ. Վարանդեան)։

Թիւ 3. «Դաշնակցութեան» Դատը։ Մի հատուած դատախազի ճառից։ Հռետորը Գերիներուն (Սիամանթօ)։ Զուլումաթ (կենս.)։ Սոցիալիստական տարրը ռուսահայ գրականութեան մէջ, Ա.։ Լաւրովի պատմափիլիսոփայութիւնը, Ա. (Սնար)։ Գերման. արշաւը եւ Թիւրքիոյ ճակատագիրը, Դ.։ Հայկ. շարժման նախապատմութիւնը, Բ.։ Ռուսաստան — Ծանուցումն Լենինի։

Թիւ 4. Եփրեմ։ Ճակատամարտները Պարսկաստանում (շար.)։ Ալեքս. Հերցէն (Մ. Վ.)։ Գերմ. արշաւը եւ Թիւրքիոյ ճակատագիրը, Ե. (վերջ)։ Լաւրովի պատմ. Բ. (Սնար)։ Հայկ. շարժմ. նախապատմութիւնը, Գ.։

Թիւ 5. «Տարրալուծում եւ միութեան ճիգ»։ Նոր «հերձուած» (սոց. յեղափ. ներքին վէճեր)։ Տիրան Մինասեան — Հայրիկ (կենս.)։ Գուրգէնի եւ իր ընկերների նահատակութիւնը։ Լաւրովի պատմ. Գ. (Սնար)։ Եփրեմի հաւատամքը (Ս. Ար–եան)։ Ցուշեր Եփրեմի կեանքից (Թփիկ)։ Հալածական ազգերի դատը։ Հայկ. շարժմ. նախապատմութիւնը, Դ.։

Թիւ 6. «Վայրկեանը»։ Օսմանեան քաղաքացիներուն (Հ. Ց. Դ. Արեւմտ. Բիւրոյի կոչը)։ Միջազգային կացութիւնը։ Դաւիթ Թումանեան — Ծուռ Դաւիթ (Արամ)։ «Որպէս հէքիաթ» (Տարազիր)։ «Վարդանի յիշատակարանը», Ա.։ Կուկունեանի խմբի դատավարութիւնը (ամբաստանագիր)։ Ժան–Ժակ Ռուսօ։

Թիւ 7–8. «Կրքերը լո՞ւռ»։ Դէպի նոր Դումա։ Յակոբ Զիլինկարեան — Աշոտ Հայկունի (Արամ)։ «Վարդանի յիշատակարանը», Բ.։ Կուկունեանի խմբի դատավարութիւնը (շար.)։ Թէ ինչպէ՞ս մեռաւ Սերոբ։ Լաւրովի պատմ. Դ. (Սնար)։ Ժան–Ժակ Ռուսօ (շար.)։ Հայկ. շարժմ. նախապատմութիւնը, Ե. «Որպէս հէքիաթ» (Տարազիր)—Ա.Հարոնեան։

Թիւ 9. «Պատերազմը»։ Մի՞շտ դէպի յետ (Ռուսաստան)։ Ռուսական զնդաններում (Մ. Գորկի)։ Սարբաղ Խէչօ (Դաշ–կան Խէ–

չօ)։ «Վարդանի յիշատակարանը», Գ.։ Ժան–Ժակ Ռուսօ։ Թիւրքիոյ եւ Բալկանեան երկիրներու ընկերվարականներու յայտարարութիւնը։ Հայկ. շարժմ. նախապատմութիւնը, Զ.։ Երկրի վիճակը։

Թիւ 10. «Մենք ծովը կը նետուենք»։ Հայոց հարստահարութեանց տեղեկագիր — Տալուորիկի եւ Սասունի մէջ (Վարդան վարդ.)։ Լաւրովի պատմ. Դ.։ Էջեր Բալկանեան ազատագրութեան պատմութիւնից (Մ. Վ.)։ Հայկ. շարժմ. նախապատմութիւն, Է.։

Թիւ 11–12. «Վճռական ժամը»։ Օսմ. Հայաստանի բարենորոգումների ծրագիրը՝ ներկայացուած 1901 թ. Սեպտ. 13–ին Դէլկասէին յանուն Հ. Ց. Դ.։ «Անխուսափելին» (Թիւրքիայի ներքին դէպքերը)։ Հմ. Զանփոլադեան — Համօ (Հայ–Գուսան)։ Հայկ. շարժմ. նախապատմութիւն, Է. (Մ. Վարանդեան)։ Աւերակների ժպիտը (Տարագիր)։

1913 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. «Ամենազարհուրելին»։ Ցեղերի բախում։ Մալաթիայի աղէտը (1895)։ Լաւրովի պատմ. Ե.։ Հայկ. նախապատմութիւն, Թ. (Մ. Վարանդեան)։

Թիւ 2–3. «Խելագարները» (Հ. Ց. Դ. դատի առթիւ)։ «Ո՞ւր է հայ տղամարդը» (Տարագիր — Ա. Ահարոնեան)։ Հայերու կացութիւնը Թիւրքիոյ մէջ, 1908–1912 թ. (Ներկայացուած վաւերաթղթերով։ Վաթսունական թուականներ (Մ. Վարանդեան)։ «Իմ բանտը, Ա. (Տարագիր)։

Թիւ 4. «Մահաբեր Պատրանք»։ Բաֆֆի (Տարագիր)։ Բաֆֆի (Մ. Վարանդեան)։ Բաֆֆիի յիշատակին (Բ. Շահպազ)։ Կացութիւնը եւ մենք (քաղք.)։ Իթթիհատը հանրային դատաստանի առջեւ։ Հայկական խնդրի ծագումը (Մ. Վարանդեան)։ «Իմ բանտը, Բ.» (Տարագիր)։ Նամակ Կարինէն (Ֆար–Հատ)։

Թիւ 5. «Դիլեմմը»։ «Ցոգնած ենք» (Տարագիր)։ Նեվրուզ (Ժակ–Լեւոն)։ Տարբերի համերաշխութիւն, Ա.։ Ներքին Ոսոխը (Մ. Վարանդեան)։ «Իմ բանտը, Գ.» (Տարագիր)։ Հայաստանի սուրհանդակը։

Թիւ 6. «Ճգնաժամը»։ Աղէտներ եւ հակահարուածներ (Մ. Վ.)։ Խուճապը (Տարագիր)։ Սիւրիա–արաբական հարցը (Բ. Շահպազ)։ Քրդական պատուհասը (Մ. Վարանդեան)։ Գ. Զաւուշի մահը (Ա. Ջնդի)։ «Իմ բանտը, Դ.» (Տարագիր)։

7–8. «Աչալուրջ»։ «Անյոյս խաղաղութիւն»։ Պատերազմի զարհուրանքներից։ Աւդ. Բէրէլ (Մ. Վ.)։ «Իմ բանտը» (Տարագիր)։ Մեծ Հանդիսավայրից — Ս. Կարապետ (Արշէս)։

Թիւ 9–10. Սիմ. Զաւարեանի մահը Հ. Ց. Դ. Է. Ընդհ. Ժո-

զովի որոշումները։ «Լոյսի համար» (տառերի գիւտի 1500–ամեակ)։ «Մեծ յոբելեանի առթիւ» (Բ. Շահպազ)։ Ո՞ւր է Հայաստանը (Տարագիր)։ Ցար. Միքայէլեան (Արամ)։ Վիժումը (Մ. Վարանդեան)։ Միջկուս. համերաշխութիւն Իզմիրում։ Շահբատանի Ա. Երջ. Ժողովը։ «Իմ բանտը» (Տարագիր)։

Թիւ 11–12. Տիպար Ռահվիրա (Ս. Զաւարեան)։ Ընկերոջ յիշատակին» (Վարդան)։ «Քչերից Մէկը» (Վ. Լունկեվիչ)։ «Հոյակապ Տէրվիշը» (Ա. Զոպանեան)։ «Գեղեցկագոյն պսակը» (Բ. Շահպազ)։ «Զաւարեանի Շիրիմին առջեւ» (Ա. Զնդի։ «Զահակիրը» (Տարագիր)։ «Խարազանող Մարդարէն» (Դոկտ. Զավրեան)։ «Օրհասի ժեստեր»։ Ցայտագիր հայ կուսակցութեանց համերաշխութեան։ Պարսկաստան — Ցարատեւող տագնապը։ Հայ ըմբոստացման Յոբելեանը — Մկ. Փորթուգալեան։

1914 թ. լոյս է տեսել 12 թիւ «Դրօշակ». թիւ 1–12։

Թիւ 1. 1913–1914 թ. տարեկան տեսութիւն։ Վրէժխնդրական գործադրութիւններ Վասպուրականի մէջ» (Գեղջուկ)։ Խարբիկներ Երկրէն — Կարին (Ա. Զնդի)։ «Զաւարեան» (Դարվիշ)։ «Դրուագներ Զաւարեանի կեանքէն» (Ա. Զնդի)։ Դաշնակցութեան Նահատակները (Ա. Զնդի), Ատրպատականում զոհուած մարտիկների ցանկը։ Կուկունեանի մահը։ Պրեսանսէ։ Պարսկաստանի շարժումները։ «Իմ բանտը» (Տարագիր)։

Թիւ 2–3. «Պոլիսը եւ դաւառները»։ «Ցանուն ազգային շահերի»։ «Հայկական Արեւը» (Տարագիր)։ Թիւրքիա — հաշուեյարդար (Իրիս)։ Պարսկաստան — Քաղաք. տեսութիւն։ Ըմբոստացումի հովեր (Մ. Վարանդեան)։ «Իմ բանտը» (Տարագիր)։ «Հայրենիք» (Շահ Արմէն)։

Թիւ 4. «Հատուցումներ»։ Երզնկայի զոհերը։ Ցակ. Աբրահամեան — Վարդ Մանուշակ (Վիկթոր)։ Խարբիկներ Երկրէն — Կարին (Ա. Զնդի)։ Անդրանիկի յիշատակներէն. Ա. եւ Բ. մաս։ «Իմ բանտը» (Տարագիր։ «Ո՞ւր է վախճանը» (Դումանի ձերբակալութեան առթիւ)։

Թիւ 5–6. «Անվերջ պատրանքներ»։ «Զաւարեանի հոգին» (Սիամանթօ) Ցարութիւն Կիրակոսեան — Տուրբախ (Զ.)։ Անդրանիկի յիշատակարանը, Բ.։ Արեւմտեան կեանքը (Մ. Վ.)։ «Իմ բանտը» (Տարագիր)։

Թիւ 7–8. «Կատաստրոֆի առջեւ»։ «Քարը գնդակի դէմ» (Ռուսաստանի գործադուլների առթիւ)։ Մկ. Աղամալեան — Սարհատ (Դարվիշ)։ Երզնկայի զոհերը (Դիտող)։ Բուլանըգի եւ Խնուսի շրջանի զոհերը (Ա. Զնդի)։ Վահանի գործն եւ եղերական մահը (Նորայր — Լաճ Սասնոյ)։ Հրայրի նամակներից։ Միխ. Բակունին (Մ. Վ.)։ Միխայլովսկի (Ս. Ց.)։ Ժողէսը ըսպանուած։

Թիւ 9–12· Նիկոլ–Դուման (մահուան առթիւ)։ Գալուստ Ա-լոյեան (սպանութեան առթիւ)։ Պատերազմը։ Հայութիւնը ռուս-տաճկական պատերազմի հանդէպ։ Գարիբալդիաններ։ Գէորգ Զաւուշ (ինքնակենսագրութիւն)։

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

(1925–1933)

1925–ին, Յուլիսից սկսած, լոյս է տեսել 6 թիւ «Դրօշակ»։

Թիւ 1· «Դրօշակ»ը (Խմբագրական, Ս· Վրացեան) — Հ· Յ· Դ· 10–րդ Ընդհ· ժողովը (Ս· Վրացեան)։— «Ընկերվարական Միջազգայինը եւ Խորհրդ· Իշխանութիւնը» (Ա· Զամալեան)։ — Քրդական Շարժումը (Ռուբէն)։— Կուսակցական կեանք։— Թուրքիոյ Շուրջ *)։ — Թղթակցութիւններ։

Թիւ 2· Ափ մը հողի համար (խմբ· Շ· Միսաքեան)։— Մե-ղադրանքներ եւ Իրողութիւններ (Ս· Վրացեան)։— Քրդերը եւ Հայերը (Ռուբէն)։— Միջազգ· Կապիտալի ճանկերում (Ա· Զա-մալեան)։— Ա· Ը· Ինտերնասիոնալի Հիմնադիր ժողովը (Ա· Ա-բիսեան — Զամալեան)։— Արիւնոտ Հնգամեակ։— Վահ· Խոբե-նի։— Թուրքիոյ Շուրջը։— Կ· Կաուցկին եւ Ռուսական Խնդիրը (Ա· Զ·)։— Ռուսաստանը Արտասահմանում։— Գրախօսական Ա· Մանդելշտամի «Աղդերի Դաշնակցութիւնը եւ Պետութիւնները Հայկական Հարցի Հանդէպ» (Ս· Վ·)։

Թիւ 3· Դանդաղ, բայց Ապահով (խմբ· Ա· Զամալեան)։— Հայաստանը եւ Հարեւանները (Ս· Վրացեան)։— Շաբուր–Նախի-ջեւան (Ռուբէն)։— Համաշխարհային Ցեղափոխութիւնն էլ··· (Ա· Զամալեան)։— Հայաստանի Կոմկուսը (Ս· Վրացեան)։— Մարսէյլի Համագումարը (Ա· Զամալեան)։— Թուրքիոյ Շուր-ջը։— Կուսակցական կեանք։

Թիւ 4· «Դաշնակցութեան Օրը» (խմբ· Շ· Միսաքեան)։— Հ· Յ· Դաշնակցութիւնը եւ Սոց·–Ցեղափ· կուսակցութիւնը (Վ· Զերնով)։— Ինչո՞ւմն է Հ· Յ· Դաշնակցութեան Ուժը (Կոմս)։— Հանրային կեանքի զարգացումը (Կ· Սասունի)։— Նախկրայը եւ անոր նշանակութիւնը Հայաստանի համար (Ռուբէն)։— Պետու-թիւն, Ազգութիւն, Անկախութիւն (Վ· Նաւասարդեան)։— Դէ-մոկրատիայի վերելքը (Ա· Զամալեան)։— Թուրքիոյ Շուրջը։— Քրտական շարժումը (Թղթակցութիւն)։— Կուսակցական կեանք։

---

*) «Թուրքիոյ Շուրջը» գրեթէ բոլոր համարներում գրել է Շ· Միսաքեանը։

Թիւ 5. Իշխանը (խմբ., Ս. Վրացեան) :— Հայաստանի հողագրկութիւնը եւ բոլշ. ներքին քաղաքականութիւնը (Ռուբէն) :— Ո՞ւր է գնում Թուրքիան (Ս. Վրացեան) :— Ատլանտեանի Ափերէն (Մ. Օզանեան) :— Բանտից Բանտ (Բուլղարացի Ցարութիւն) : — Լոքարնո (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Կուսակցական կեանք :— Ինտերնացիոնալի Գործ. Կոմիտէի Գումարումը (Ա. Ջամալեան) :— Հայաստանի Կրթական Գործը (Թղթ. Երեւանի, Տեղեակ) :— Թղթակցութիւններ :

Թիւ 6. Ինքնորոշման Իրաւունքը եւ Հայաստանի Ցոշոտումը (խմբ. Ա. Ջամալեան) :— Վերաշինութեան Խնդիրը (Ա. Ջամալեան) :— Զանգեզուրի Պայքարը (Ռուբէն) :— Բանտից Բանտ (Բուլղ. Ցարութիւն) :— Քրտական Ապստամբութիւնը (Իսմայիլ Հաղդը) :— Թուրքիոյ Շուրջը :— Կուսակցական կեանք :— Նատալիա Մատինեան (բժ. Տէր-Դաւթեան), Հ. Ց. Դ. Օրը :— Թղթակցութիւններ Թիֆլիսից եւ Ռոստովից :

1926-ին լոյս է տեսել 10 թիւ : Վերջին չորսը՝ միացեալ :

Թիւ 1925-1926 (խմբ., Ս. Վրացեան) :— Ախալքալաքի Պայքարը (Ռուբէն) :— «Ինտենսիֆիկացիա» եւ Սահմանների Ընդարձակում (Ս. Վրացեան) :— Բանտից Բանտ (Բուլղ. Ցարութիւն) :— Քրտական Ապստամբութիւնը (Իսմայիլ Հաղդը) :— Անդրկովկասի Կոմկուսը եւ Գիւղը Կոմկուսի իշխանութեան տակ (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Ծրագրային Խնդիրներ (Ա. Ջամալեան) :— Ինտերնասիոնալը :

Թիւ 2. Դարձեալ Ներգաղթի Խնդիրը (խմբ., Ս. Վրացեան) : — Փետր. 18 (Ս. Վրացեան) :— Թուրք-Խորհրդային Ցաբաբերութիւնները (Ս. Վրացեան) :— Գանձակ-Ղարաբաղի Վէճը (Ռուբէն) :— Վիէննայի Թուրք դեսպանութիւնը եւ քրտական խնդիրը (Ա. Ջ.) :— Կոմկուսը եւ Ազգային Հարցը (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Կուսակցական կեանք :— Աշխատաւորական կեանք (Ա. Արիսեան) :— Ինտերնասիոնալը :— Թղթակցութիւններ :

Թիւ 3. Վաղուան Մղձաւանջը (խմբ.) :— Տաշիրի դաւառին բռնագրաւումը (Ռուբէն) :— Հայկական Ազատամարտի վերջին դրուագը (Կ. Սասունի) :— Գիւղացին Խորհրդ. Դրախտում (Բանուոր Հրանտ) :— Խորհուրդների վերընտրութիւնները (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Ծրագրային խնդիրներ (Ա. Ջամալեան) :— Հողային Հարցը եւ Աւստրիական Սոց.-Դէմոկրատիան (Վ. Նաւասարդեան) :— Կուսակցական կեանք :— Աշխատաւորական կեանք (Ա. Արիսեան) :— Ինտերնասիոնալը :— Թղթակցութիւններ :

Թիւ 4. Զուր յոյսեր եւ Զուր Ջանքեր (խմբ., Ա. Ջամալ-

եան) :— Ստրկական համակերպութիւնը (Ա. Զամալեան) :— Հայաստանը Անդրկովկ. Դաշնակցութեան մէջ (Ռուբէն) :— Քրտական շարժումները (Ց. Ամատունի) :— Ֆաշիզմը (Ս. Վրացեան) : — Թուրքիոյ Շուրջը :— Ծրագրային խնդիրներ (Ա. Զ.) :— Թղթակցութիւններ :

Թիւ 5. Երկունքը (խմբ., Շ. Միսաքեան) :— Հայաստանի Անկախութիւնը (Ս. Վրացեան) :— Անճարակ Ցերիւրանքներ (Ա. Զամալեան) : — Հայաստան Անդր. Դաշնակցութեան մէջ (Ռուբէն) :— Ծրագրային խնդիրներ (Ա. Զ.)— Կուսակցական կեանք : — Ինտերնասիոնալը :— Թղթակցութիւններ :

Թիւ 6. Ընդհանուր Գործադուլը (խմբ., Ս. Վրացեան) :— Սպանդանոց եւ Դպրոց (Հէնրի. Երեւանից) :— Երկրում (Տեղեկութիւններ Հայաստանից) :— Մուսուլի խնդիրը (Վահագն) :— Խնայողութեան Ռեժիմ (Ս. Վրացեան) :— Ընկերվարական շինարարութիւն (Ա. Աստուածատրեան) :— Ռուսաստան. Մոսկովեան մոգայիկներ :— Ծրագրային խնդիրներ (Վ. Աստղունի) :— Ընկերվարութիւն եւ հայրենասիրութիւն (Անդրէ) :— Ինտերնասիոնալը :

Թիւ 7. Անրուժելի Թուրքիան (խմբ. Շ. Միսաքեան) :— Թուրքիայի տապնապը (Ս. Վրացեան) :— Միացեալ Հայաստան (Ռուբէն) :— Դաշնակցութեան «ինքնակազմալուծումը» (Ա. Զամալեան) :— Ֆաշիզմի դէմ (Վազգ. Շուշանեան) :— Պրագայի Տարադրութիւնը (Ս. Վրացեան) :— Կուսակցական կեանք (Ղափանցի Գերասիմի մասին) :— Նէպլից Նօպ (Ս. Մասուրեան — Վրացեան) :— Ինտերնասիոնալը :

Թիւ 8–10. Արթուն եւ Ամուր (խմբ. Շ. Միսաքեան) :— Ռոստոմի Ճառը :— Գ. Խաժակի Նամակը :— Հ. Ց. Դաշնակցութեան Ծնունդը (Գ. Ղազարեան) :— Կենսունակութեան Գաղտնիքը (Իրազեկ — Ցակ. Տէր-Ցակոբեան) :— Զայն մը անցեալէն (Ս. Տէր-Թումասեան) :— Հ. Ց. Դ. Օրուայ առթիւ (Ա. Շարաֆեան) :— Հայ Ժողովրդի Բարեկամը (Ե. Ա.) :— Ռոստոմը (Խ. Եղանեան) : — Բեկոր մը Ռոստոմի Կեանքէն (Սաթ. Տէր-Դաւթեան) :— Աւ. Շահխաթունեան (Վ. Նաւասարդեան) :— Մուրատ (Վ. Համբարձումեան) : Սարգիս Մինասեան (Արս. Աճէմեան) :— Ծամհուր (Մ. Պարսամեան) :— Սարգ. Մինասեան (Բէնօ) :— Մեր Զինուորական զոհերը (Հայ Գնդունի) :— Մ. Սարգսեան :— Մ. Գիւլնազարեան :— Վասպուրականի զոհերը :— Տարօնի զոհերը :— Բարձրը Հայք (Կայծակ) :— Տրապիզոնի զոհերը :— Կիրասոնի զոհերը :— Շապին-Գարահիսարի զոհերը :— Խարբերդի զոհերը :— Սեբաստիոյ զոհերը :— Կիլիկիոյ զոհերը :— Փետրուարեան ապըստամբութեան զոհերէն :

Թիւ 11–12. Նոր վտանգի հանդէպ (խմբ. Ս. Վրացեան) :— Վասպուրականը իբրեւ անկիւնաքար Միացեալ Հայաստանի (Ռուբէն) :— Բամբակի մենաշնորհը Հայաստանում (Հ. Բամբակեան. Երեւանից) :— Խորհրդ. տնտեսութեան զարգացման ուղիներ (Ս. Վրացեան) :— Ռուս–անգլիական հակամարտութիւնը Արեւելքում (Արտ. Աբեղեան) :— Հատուցումներն ու պատերազմական պարտքերը (Ա. Աստուածատրեան) :— Պայքարը Լոզանի Դաշնագրութեան դէմ (Մ. Օզանեան) :— Կոմկուսի քայքայումը շարունակւում է (Ս. Մասուրեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Թղթակցութիւններ Թիֆլիսից, Երեւանից, Վաղարշապատից :— Կուսակցական կեանք :— Մեր զոհերը — Վ. Վարդապետեան, Մոնիկ Օհանջանեան, Յակ. Զարիֆեան, Արտ. եւ Անահիտ Յովհաննիսեան, բժ. Հայկ Գրիգորեան, բժ. Գր. Սայեան, Փիթարցի Մանուկ, բժ. Հայկ. Նալպանտեան, բժ. Եդ. Տէր–Ստեփանեան, Լուս. Բայբիչեան, Ներս. Աւագեան, Մուր. Պօղոսեան, Պօղոս Պօղոսեան, Գ. Գէորգեան, Զ. Մանուկեան :— Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պարսկական շարժումը (Հ. Պանիրեան) :

1927–ին լոյս է տեսել 12 թիւ :

Թիւ 1. 1926–1927 (խմբ. Ս. Վրացեան) :— Ռուս–անգլիական հակամարտութիւնը Արեւելքում (Արտ. Աբեղեան) :— Ֆրանսայի Ընկերվ. կուսակցութիւնը (Վ. Շուշանեան) :— Ուկրայինայի տարաբաղութիւնը (Ս. Վրացեան) :— Միջազգային Կեանքը 1926–ին (Ս. Վրացեան) :— Վերջին Աղօթքը (Շահան) :—Մեր զոհերը— Բաղիկ Պետրոսեան (Ս. Տէր–Թովմասեան) :— Թղթակցութիւններ — Հ. Յ. Դաշնակցութիւնը Երկրում (Գ. Մարտիկեան) եւ ուրիշներ : Կուսակցական կեանք :

Թիւ 2. Արջք Օրհասականք (խմբ. Ս. Վրացեան) :— Թուերի Լեզուն (Սլաք. Երեւանից) : — Կովկասեան Միութեան շուրջ (Ս. Մասուրեան) :— Ֆրանսական Ընկերվ. կուսակցութիւնը (Վ. Շուշանեան) :— Լոզանի Դաշնագիրը եւ Զէստրը Ստանդարտ Օյլ (Շահան) :— Թղթակցութիւններ Հայաստանից :— Մեր զոհերը : — Գրախօսական՝ Ա. Ահարոնեանի «Քրիստափոր Միքայէլեան» (Ս. Վր.) :

Թիւ 3. Մթնոլորտը Յագեցած (խմբ. Ս. Վրացեան) :— Տօնական Թէզիսներ (Միծեռնակ. Երեւանից) :— Լոզանի Դաշնագիրը եւ Զէստրը Ստանդարտ Օյլ (Շահան) :— Ընկերվարական Տարին (Վ. Շուշանեան) :— Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պարսկական շարժումը (Հ. Պանիրեան) :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ Հայաստանից :

Թիւ 4. Աւելի քան հաստատակամ (խմբ. Շ. Միսաքեան) :— Ճերմակ Զարդը (Ս. Վրացեան) :— Միջնակարգ կրթութիւնը Հա-

յաստանում (Մանկավարժ. Երեւանից) :— Գիւղացիութիւնն ու Խորհրդ. իշխանութիւնը (Ա. Աստուածատրեան) :— Իրան եւ Թուրան (Ռուբէն) : — Մի էջ «մարքսիստական» գործերից (Ն. Բաղալեան) :— Թուրքիոյ շուրջը :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ Հայաստանից :— Գրախօսական՝ «Փետրուար 18» (Ս. Վ.) :

Թիւ 5. Հող եւ Ազատութիւն (խմբ. Ս. Վրացեան) :— Պրոլետարականութիւն (Ս. Երկիրեան. Երեւանից) :— Բանուորների Դրութիւնը Խորհրդ. Գործարաններում (Ա. Հրաժին. Երեւանից) :— Գիւղացիութիւնը եւ Խորհրդ. իշխանութիւնը (Ա. Աստուածատրեան) :— Աշխատանքի Միջազգային Գրասենեակը (Վ. Շուշանեան) :— Անդրկովկաս (Ն. Բաղալեան) :— Մեր զոհերը : — Թղթակցութիւններ Հայաստանից :— Ինտերնասիոնալը :

Թիւ 6. Ցարաբերութիւնների Խզումը (խմբ. Ս. Վրացեան) : — Բոլշեւիկեան ազգ. քաղաքականութեան բնաշրջումը (Ս. Վրացեան) :— Մեր Ցաւերից (Մին-Սար. Երեւանից) :— Թուրքիոյ Շուրջը :— Ընկերվարական քրոնիկ (Վ. Շուշանեան) .— Լորթօ (Մասիս) :— Թղթակցութիւններ Հայաստանից :— Կուսակցական կեանք :— Գրախօսական՝ Զարեւանդի «Միացեալ, Անկախ Թուրանիա» (Ս. Վրացեան) :

Թիւ 7. Խորհրդային Տաղնապը զարգանում է (խմբ. Ս. Վրացեան) :— Նոր Թուրքիան եւ մենք (Հ. Գնդունի) :— Վարագոյրը բացւում է (Ս. Մասուրեան) :— Ընկերվարական քրոնիկ (Վ. Շուշանեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Մեր զոհերը .— Թղթակցութիւններ Հայաստանից :

Թիւ 8. Կազմալուծումը Շարունակւում է (խմբ. Ս. Վրացեան) :— Վրաց Մենշեւիկութեան տագնապը (Ս. Մասուրեան) :— Ն. Ժորդանիայի եւ Ն. Ռամիշվիլիի հրահանգ-դրութիւնները :— Ընկերվարական քրոնիկ (Վ. Շուշանեան) :— Մեր զոհերը — Բալչան եւայլն :— Թղթակցութիւններ Հայաստանից եւայլն :— Նոր Արեւելքի Ընկերվ. Միութիւնը (Պրագացի — Ն. Բաղալեան) :

Թիւ 9. Պատմութեան Դատավճիռը (խմբ. Ս. Վրացեան) :— Դերեվաճառութիւն (Ս. Վրացեան) :— Իտալիայի Արեւելեան քաղաքականութիւնը (Ս. Վրացեան) :— Ընկերվ. Քրոնիկ (Վ. Շուշանեան) :— Թղթակցութիւններ Հայաստանից եւայլն :— Կազմալուծումը լայնանում ու խորանում է (Ս. Մասուրեան) :

Թիւ 10. Անդրանիկ (խմբ. Շ. Միսաքեան) :— Հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը (խմբ. Ս. Վրացեան) :— Նոր ձերբակալութիւններ Հայաստանում (Թղթ. Երեւանից) :— Մանկութեան Յիշողութիւններէն (Ս. Զաւարեան) : — Ս. Բարսեղեան (բժ. Յ. Տէր-Դաւթեան) :— Արամի մասին (Ա.

Աստուածաստեան) :— Խաչ. Կարճիկեան (Ս. Վրացեան) :— Գեղ. Տէր-Կարապետեան: Սլաք: Սուրէն Մելիքեան (Ս. Վ.): Հասրաթ :— Բուրկացկու ահաբեկումը (Բէնօ) :— Զանգեզուրի զոհերը: Թիւ 1. Տարեդարձը (խմբ. Ս. Վրացեան) :— Հայկ. Հարցը եւ հայ բոլշեւիկները (Կ. Սասունի) :— Ձերբակալութիւններ, բանտ, աքսոր (Աշոտ) :— Նրանք էլ են տօնում (Գ. Մարտիկեան) :— Ազատ Նամակներ (Վ. Սուխոմլին) :— Ռուս-անգլիական հակամարտութիւնը Արեւելքում (Ա. Աբեղեան) :— Վրաց մենշեւիկութեան տագնապը (Ս. Մասուրեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Մեր զոհերը — Տրապիզոնի շրջան :— Թղթակցութիւններ: — Քաղաք. տրամադրութիւնները Լեհաստանում (Թ. Նիկոլովիչ) :— Էջեր իմ Օրագրից (Աշոտ):

1928-ին լոյս է տեսել 12 թիւ: Երկու թիւ՝ միացեալ:

Թիւ 1. 1927-1928 (խմբ. Շ. Միսաքեան) :— Թուրքիոյ մարդահամարը (Կ. Սասունի) :— Խորհրդային քաղաքը (Աշոտ) :— Ռուս-անգլիական հակամարտութիւնը Արեւելքում (Ա. Աբեղեան) :— Քաղքենի Ազգ. Դաշնակցութիւնը եւ Միջազգային Ընկերվարութիւնը (Վ. Շուշանեան) :— Թուրքիոյ շուրջը :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ :— Քիւրտ-Թրքական պայքարը:

Թիւ 2. Նոր Ազգակ մը (խմբ. Շ. Միսաքեան) :— Փետրուար 18 :— Արարատի կռիւները (Ե. Սրխեան) :— Ռուս-անգլիական հակամարտութիւնը Արեւելքում (Ա. Աբեղեան) :— Փոքր Ազգերի ազատութեան խնդիրը (Վ. Շուշանեան) :— Էջեր իմ Օրագրից (Աշոտ) :— Համազործակցութեան մէկ դարը (Շ. Ժիդ) :— Ահաւոր Գիշերը (Բ. Իշխանեան) :— Թուրքիոյ Շուրջը :— Թղթակցութիւններ:

Թիւ 3. Ազգային Հարցի մասին (խմբ. Ս. Վրացեան): — Մերձ. Արեւելքի կնճիռները (Վ. Փափազեան) :— Բաֆֆի (Ե. Ֆրանգեան) :— Փոքր Ազգերու ազատագրութեան խնդիրը (Վ. Շուշանեան): Էջեր իմ Օրագրից (Աշոտ) :— Կախարդական շրջան (Ս. Վերիշչակ) :— Թուրքիոյ շուրջը :— Բոլոր ազգերի աշխատաւորներին (Նոր Արեւելքի Ընկերվ. Լիդա) :— Ընկերվարական քրոնիկ :— Թղթակցութիւններ :— Մօտիկ անցեալից :— Զէկիսատ յիշողութիւններ:

Թիւ 4. Քրտական շարժումը եւ Իրան (խմբ.)— Հայ բոլշեւիկներու հողային քաղաքականութիւնը (Ռուբէն) :— Բոլշեւիկները եւ Ռոզա Լիւքսեմբուրգ (Ռ. Լեռնեան — Լիպ. Նազարեանց) :— Բաֆֆի (Ե. Ֆրանգեան) :— «58» եւ «107» յօդուածները (Աշոտ) :— Թուրքիոյ շուրջը :— Ինտերնասիոնալ :— Մեր զոհերը — Լեռնապարի շրջան :— Թղթակցութիւններ:

Թիւ 5. Անկախութեան Տասնամեակը (խմբ.) :— Մայիս 28

(Ա. Ջամալեան) :— Հայկական Թերմոպիլէ (Հ. Կոսոյեան) :— Անկախութեան Սերունդը (Կ. Սասունի) :— Մայիս 28 Հայաստանում (Ա.) :— Առաջին քայլեր (Ս. Վրացեան) :— Բաֆֆի (Ե. Ֆրանգեան) :— Թուրքիոյ շուրջ :— Քրտական շարժումը Խորհրդային ակնոցով (Աշոտ) :— Եր. Ֆրանգեան (Ա. Հ.) :

Թիւ 6–7. Ուրուագծուող Նոր Կացութիւնը (խմբ. Ս. Վրացեան) :— Ց. Բուդաղեան (Ց. Տէր-Դաւթեան) :— Հակախորհրդային քաղաք. պայքարի յատուկ առաջադրութիւնները Հայաստանում (Ա. Ջամալեան) :— Ինքնաքննադատութիւն (Աշոտ) :— Ազգ. Հարցը մարքսիզմի քուրայում (Կ. Սասունի) :— Մշակութային խնդիրներ (Դոկտ. Ա. Գասպարեան) :— Թուրքիոյ շուրջ :— Հայաստանի անկախութեան տասնամեակի տօնակատարութիւններ : — Ինտերնասիոնալ :

Թիւ 8–9. Ընկերվ. Բանուոր. Միջազգայինի կոչը (խմբ. Ա. Ջամալեան) :— Պրիւսելի համագումարի աշխատանքները (Վ. Շուշանեան) :— Գ. Համագումարի բանաձեւերը :— Հ. Ց. Դաշնակցութիւնը Գ. Համագումարում :— Հ. Ց. Դաշնակցութեան հետքով (Ա. Ջամալեան) :— Հ. Ց. Դաշնակցութեան եւ Խորհրդ. իշխանութեան միջեւ համաձայնութեան փորձեր (Լ. Ն. — Լիպ. Նազարեանց) :— Թուրքիոյ Շուրջը :— Համառօտ տեղեկութիւններ Միջազգայինի մասին (Վ. Շ.) :— Կուսակցական կեանք :

Թիւ 10. Դաշնակցութեան Օրը (խմբ. Շ. Միսաքեան) :— Քելլոգի Դաշինքը (Ս. Վրացեան) :— Հակառակորդի Բանակում (Աշոտ–Արծրունի) :— Թուերի լեզուով (Ա. Ջամալեան) :— Մշակութային խնդիրներ (Դոկտ. Ա. Գասպարեան) : — Թուրքիոյ շուրջը :— Մեր զոհերը — Ռոստոմի կեանքէն (Սաթ. Տէր-Դաւթեան) :— Վայոց Ձորի զոհերը : Ուրֆայի զոհերը : Արմաշի զոհերը : Վասպուրականի զոհերը եւայլն :— Իրենց իսկ բերանով (Ս. Վրացեան) :

Թիւ 11. Ազգային Ցարաբերութիւնները Կովկասում (խմբ. Ս. Վրացեան) :— Թուրքիայի մասին (Ս. Վրացեան) :— Տնտեսական Ճակատում (Ա. Արծրունի) :— Հակահրէութիւնը Խորհրդ. Ռուսաստանում (Ա. Աստուածատրեան) :— Տարեդարձի առթիւ (Ա.) :— Թուրքիոյ շուրջ :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ : — Իրենց իսկ բերանով :— Գրախօսական՝ Ֆր. Նանսէնի «Հայաստանը եւ Մերձ. Արեւելքը» (Ս. Վրացեան) :— Քերենսկիի «Դնի» երկշաբաթաթերթը (Ս. Վր.) :

Թիւ 12. Սիւրիահայ Արտադրքի առթիւ (խմբ. Ս. Վրացեան) :— Հայաստանի վարչական բաժանումը (Ս. Վրացեան) :— Քեմալական Թուրքիոյ ապագան (Կ. Սասունի) :— Ժամանակը լաւագոյն դատաւորն է (Ա. Արծրունի) :— Մեծ պետութիւնների

քաղաքականութիւնը Բալկաններում (Զ. Թոփալովիչ) :— Թուրքիոյ շուրջ :— Մեր դոհերը :— Թղթակցութիւններ :— Իրենց իսկ բերնով (Ս. Վրացեան) :

1929-ին լոյս է տեսել 9 թիւ : Երեք թիւ՝ միացեալ :

Թիւ 1–2. Ռոստոմ եւ Արամ (խմբ. Շ. Միսաքեան) :— «Դիպլոմատ Հրէշներ» (Ռոստոմ) :— Ռոստոմ (Ս. Վրացեան) :— Ռոստոմի ուսանողական կեանքից (Ց. Տ.-Դ. — բժ. Ցովս. Տէր-Դաւթեան) :— Իմ հանդիպումները Ռոստոմի հետ (Ա. Ջամալեան) :— Ցուշեր Ռոստոմի մասին (Վ. Մաղմանեան) :— Մի էջ Թաւրիզի կեանքից (Ղազար) :— Ռոստոմէն տպաւորութիւններ (Կ. Սասունի) :— Ռոստոմի վերջին օրերից (Ց. Տէր-Դաւթեան) :— Արամը (Ս. Վրացեան) :— Արամի մասին (Թադէ) :— Ուրուանկար (Օհան Կարօ) :

Թիւ 3. Ի՞նչ են ասում թուերը (խմբ. Ս. Վրացեան) :— Անդրիկովկասի աղգագրական կազմը (Վ. — Ս. Վրացեան) :— Հ. Ց. Դաշնակցութիւնը Եր կրում (Ա. Արծրունի) : Արեւելեան Նահանգները (Հրանդ-Սամուէլ) :— Երեխաները Խորհրդ. Ռուսաստանում (Ա. Աստուածատրեան) :— Զէկիստի ցուցմունքները (Դումբաձէ — գրի է առել Ս. Վրացեանը) :— Ռոստոմը Պուլկարիոյ մէջ (Պերճուհի Բարսեղեան) :— Իմ հանդիպումները Ռոստոմի հետ (Ա. Ջամալեան) :— Արամի մահը (Արշալոյս Աստուածատրեան) :— Իրենց իսկ բերանով (Ս. Վրացեան) :

Թիւ 4–5. Ցայտագիր Հ. Ց. Դ. ԺԱ. Ընդհ. Ժողովի :— Հ. Ց. ԺԱ. Ընդհ. Ժողովը :— Կազմակերպական Խնդիրները Հ. Ց. Դ. ԺԱ. Ընդհ. Ժողովում (Ա. Ջամալեան) :— Քաղաքական Խնդիրները Հ. Ց. Դ. ԺԱ. Ընդհ. Ժողովում (Ս. Վրացեան) :— Արեւելեան Նահանգները (Հ. Սամուէլ) :— Ծրագիր եւ Իրականութիւն (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջը :— Միջազգային կեանք :

Թիւ 6–7. Աշխատաւորական Կառավարութիւնը Անգլիայում (խմբ. Ս. Վրացեան) :— Փոթորկաձայն Մարդարէն — Բաֆֆի (Մ. Վարանդեան) :— Գաղութային Խնդիրներ (Ս. Վրացեան) :— Երիտասարդ Սերունդի յեղափոխական Դասակարգութիւնը (Կ. Սասունի) :— Անդրկովկասի շրջայնացումը (Ս. Մասուրեան) :— Արեւելեան Նահանդները (Հ. Սամուէլ) :— Թուրքիոյ շուրջ :— Խնկո (Ս. Վրացեան) :— Թուրք-Պարսկական Սահմանավէճը (Ս. Վրացեան) :— Երկու մահ :

Թիւ 8. Զին-Խորհրդային բախումը (խմբ. Ս. Վրացեան) :— Մտածումներ Հ. Ց. Դաշնակցութեան մասին (Ն. Հանդոյց — Նիկ. Աղբալեան) :— Կազմակերպական Խնդիրներ Հ. Ց. Դ. ԺԱ. Ընդհ. Ժողովում (Ա. Ջամալեան) :— Կոմսոմոլի Ծոցում (Ս. Մասուրեան) :— Արեւելեան Նահանդները (Հ. Սամուէլ) :— Թուր-

քիոյ շուրջ։— Արարատի կռիւները (Ե. Ի.)։— Մեր զոհերը — Մ. Մուսինեան (Ա. Աստուածատրեան)։— Թղթակցութիւններ Հայաստանից։— Արձագանգներ (Ս. Վրացեան)։— Իրենց իսկ բերանով (Ս. Վրացեան)։

Թիւ 9. Լահէի Խորհրդաժողովի առթիւ (խմբ. Ս. Վրացեան)։ — Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին (Ն. Հանդոյց)։ — Տնտեսական քաղաքականութեան խնդիրներ (Ն. Բաղալեան)։ — Եընդի Ծրագիրը (Մ. Տէրպէտէրեան)։— Զտում (Ա. Արծրունի)։— «Լիման Ֆոն Զանտերս (Շ. Սուրէն)։— Հ. Յ. Դ. Դիւանէն — Գէորգ Զավուշի ինքնակենսագրութիւնը։— Մեր զոհերը։ — Թղթակցութիւններ։— Հայաստանի վարչական նոր բաժանումը (Ս. Վրացեան)։— Արձագանգներ (Ս. Վրացեան)։

Թիւ 10. Դաշնակցութեան Օրը (խմբ. Շ. Միսաքեան)։ Քրիստափոր Միքայէլեան (Ս. Վրացեան)։— Քրիստափորի մոքերից։ — Քրիստափոր Միքայէլեանի մահը (Յ. Տէր-Դաւթեան)։— Թռուցիկ յուշեր Քրիստափորի կեանքից (Ռ. Սեւեան — Ա. Գիւլխանդանեան)։— Առաջին հանդիպումս Քրիստափորի հետ (Ֆարհատ — Սարգ. Օհանջանեան)։— Յաւելեալ արիւնը (Ա. Արծրունի)։— Մի էջ Քրիստափորի կեանքից (Ս. Վրացեան)։— Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին (Ն. Հանդոյց)։— Թղթակցութիւններ։

Թիւ 11. Մի ծրագրի տխուր վախճանը (խմբ. Ս. Վրացեան)։ — Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին (Ն. Հանդոյց)։— Թռուցիկ յուշեր Քրիստափորի մասին (Ռ. Սեւեան)։— Տնտեսական քաղաքականութեան խնդիրներ (Ն. Բաղալեան)։— Նիկոլ Դուման (Յ. Ստեփանեան)։— Թուրքիոյ շուրջ։— Գեբասիմ Սաթաջանեան (Ա. Արծրունի)։— Թղթակցութիւններ։

Թիւ 12. Մերթ ձախ, մերթ աջ (խմբ. Ս. Վրացեան)։— Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակի առթիւ (Հ. Յ. Դ. Բիւրօ)։ — Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին (Ն. Հանդոյց)։— ՋՈՄ-ը (Ս.Վրացեան)։— Խորհրդ. իշխանութիւնը եւ Թուրանական շարժումը (Ա. Արծրունի)։— Հ. Յ. Դ. Դիւանէն — Սեւ-Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը։— Թուրքիոյ շուրջ։— Թղթակցութիւններ։

1930-ին լոյս է տեսել 11 թիւ։ Մէկը՝ միացեալ։

Թիւ 1. 1929-1930 (խմբ. Ս. Վրացեան)։— Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին (Ն. Հանդոյց)։— Մոսկուայի հրահանգով (Ս. Վրացեան)։— Սեւ-Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը։— Թուրքիոյ շուրջ։— Մեր զոհերը — Մոկացի Գրիգոր, Խնկո։— Թղթակցութիւններ։

Թիւ 2. Փետրուար 18 (խմբ.)։— Մտածումներ Հ. Յ. Դաշ-

նակցութեան մասին (Ն. Հանդոյց) :— Բոլշեւիկեան «Դասակարգային Պայքար»ի իմաստը (Կ. Սասունի) :— Խորհրդային տնտեսական քաղաքականութիւնը (Ա. Արծրունի) :— Ֆրանսայի Ընկերվարութեան ներքին տագնապը (Հրանդ–Սամուէլ) :— Բիբլիսցի Մուշեղ (Ղազար) : Լոլաձէի ահաբեկումը (Բէնօ) :— Թուրքիոյ շուրջ :— Թղթակցութիւններ :

Թիւ 3. Վիտոշի Խորհուրդը (խմբ. Շ. Միսաքեան) :— Կաղմակերպիչ Ոգին — Քրիստափորի մասին (Մ. Վարանդեան) :— Աղէտաւոր մահը (Է. Ակնունի) :— Օտար Հորիզոնների տակ (Ղարիբ — Ա. Ահարոնեան) :— Աւ. Ահարոնեան (Ռ. Սեւեան) :— Ա. Ահարոնեան յեղափոխական դրօշին տակ (Կ. Սասունի) :— Սեւ-Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը :— Աւալիանու Ահաբեկումը (Բէնօ) :— Թուրքիոյ շուրջ :— «Համատարածը» Հայաստանում (Հայմաթլոս) :— Թղթակցութիւն :

Թիւ 4. Խարխափումներ (խմբ.) :— Ապրիլեան Եղեռնը քննական ակնոցով (Կ. Սասունի) :— Ով հաւատաց՝ փրկուեցաւ (Օհան Կարօ) :— Ռուսական անցուդարձ — Ուկրայինա (Մ. Վ. — Մ. Վարանդեան) :— Ընկերվարական շարժումը Ֆրանսայի մէջ (Հրանդ–Սամուէլ) :— Բարշէնի կռիւը (Ղազար) :— Թուրքիոյ շուրջ :— Քրտական շարժումը :— Թղթակցութիւններ :

Թիւ 5. Անկախութեան Տօնը (խմբ.) :— Դաւադրութեան մը տասնամեակը (խմբ.) :— Կէյր Հարտի (Մ. Վարանդեան) :— Ապրիլեան Եղեռնը քննական ակնոցով (Կ. Սասունի) :— Կուկունեանի արշաւանքի մասին (Հ. Յ. Դ. Դիւան) :— Արդի Ռուսիոյ ընկերային ուժերը (Վ. Լեպետեւ) : Թուրքիոյ շուրջ :— Ինտերնասիոնալ :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ :

Թիւ 6–7. Նահանջը եւ իր պատճառները (խմբ. Ա. Զամալեան) :— Հերթական խնդիրներ (Ա. Զամալեան) :— Ապրիլեան Եղեռնը քննական ակնոցով (Կ. Սասունի) :— Խորհրդ. Հայաստանի տնտեսութիւնը (Ա. Արծրունի) :— Հ. Յ. Դ. Դիւան — Կուկունեանի արշաւանքի մասին :— Ինտերնասիոնալ :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ :

Թիւ 8. Քրտական Հարցը (խմբ. Ա. Զամալեան) :— Քրտական Ռազմաբեմից :— Քրտական ապստամբութիւնը (Կ. Սասունի :— Դարալագեազի ապստամբութիւնը (Արսէն Վայոց Զորեցի) : Եզրակացութիւններ (Ա. Զամալեան) :— Թուրքիոյ շուրջ :— Թղթակցութիւններ :

Թիւ 9. Բանդիտիզմ (խմբ. Ա. Զամալեան) :— Երկրի իրադարձութիւնները (Տիրոսեան. Հայաստանից) :— Քրտական ապստամբութիւնը (Կ. Սասունի) :— Քրտական Հարցն Ինտերնասիոնալում :— Տրոցկիզմն արտասահմանում (Վ. Վրիժակ) :— Թղթակցութիւններ :

Թիւ 10 Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակը (խմբ.) :— Գնդեւազի ապստամբութիւնը (Ս.) :— Մեր պատմութեան ամենատխուր էջը (Իրազեկ — Յ. Տէր-Յակոբեան) :— Քրտական ապըստամբութիւնը (Կ. Սասունի) :— Թուրքիոյ շուրջ (Հ. Ս.) :— Հ. Յ. Դ. Դիւանէն — Քառասուն տարի առաջ :— Քրտական Հարցն Ինտերնասիոնալում (Ա. Ջամալեանի զեկուցումը) :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ :

Թիւ 11. Բացառիկ թիւ Հ. Յ. Դ. 40-ամեակի առթիւ :— Հ. Յ. Դ. Մարմիններին եւ Ընկերներին (Հ. Յ. Դ. Բիւրո) :— «Դրօշակ»ն էր դիրքի վրայ :— Մեր Քառասնամեակը (Հ. Յ. Դ. Լեռնավայրի Կեդր. Կոմիտէ) :— Պիտի ապրի Դաշնակցութիւնը (Հ. Յ. Դ. Ատրպատականի Կ. Կ.Ը :— Միշտ նոյն նպատակին համար, միշտ նոյն կորովով (Հ. Յ. Դ. Եւրոպայի Կ. Կ.) :— Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեակը (Հ. Յ. Դ. Կարպատի Կ. Կ.) :— Յարգանք գաղափարիդ, յարգանք հերոսներուդ (Հ. Յ. Դ. Ովասիսի Կ.Կ.) :— Հ. Յ. Դաշնակցութեան Ա. Մանիֆէստը :— Կռիւն սկսուած է («Դրօշակ» Թռուցիկ թերթ) :— «Դրօշակ»ի 1892 թ. թիւ 3-ի խմբագրականը :— Վերջին դէպքերի առթիւ (Գ. Խաժակ) :— Ռեֆորմները (Յ. Դաւթեան) :— Հրայրի յայտարարութիւնը :— Վնասակար Տարրեր (Ռոստոմ) :— Նամակ Վանից (Վազգէն) :— Բարկէն Սիւնի (Ս. Մինասեան) :— Քալէ (Ա. Վրամեան) :— 1898-1899 (Քրիստափոր) :— Կախաղանից առաջ (Արամ Արամեանի նամակը) :— Դէպի Երկիր (Է. Ակնունի) :— Դաշնակցութեան Արշալոյսին (Մ. Վարանդեան) :— Մեր քառասնամեայ պայքարի էութիւնը (Ռ. Սեւեան) :— Քառասնամեայ տիտանը (Ա. Ջամալեան) :— Դաշնակցութեան փառքն ու ողբերգութիւնը (Գ. Նժդեհ) :— Դաշնակցութեան էութիւնը (Ռէն) :— Քառասնամեակի առթիւ (Օ. Մխիթարեան) :— Հներից մէկը հին օրերի մասին (Յովս. Մովսէսեան) :— Հ. Յ. Դաշնակցութեան ծագումը Բուլգարիայում (Վ. Մազմանեան) :— Սամսոնի խորհրդաւոր վաճառականը (Կարէն — Արամ Յակոբեան) :— Հ. Յ. Դ. «Խարիսխ» դորձարանը (Սամսոն) :— Եփրեմի արշալոյց (Quidam :— Յ. Թադէոսեան) :— Ընդհ. ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (Կ. Սասունի) :— Քառասնամեակ (Ն. Աղբալեան) :— Քառասուն տարի (Հ. Օհանջանեան) :

1931-ին լոյս է տեսել 11 թիւ՝ մէկը միացեալ :

Թիւ 1-2. «Երկու տասնամեակ» (խմբ. Ս. Վրացեան) :— Փետրուարեան ապստամբութեան պատճառները (Ս. Վրացեան) :— Եմտական միջազգային տագնապը (Մ. Տէրպէտէրեան) :— Քրտական շարժումը (Կ. Սասունի) :— Բոլշեւիկեան աքսորավայրում :— Թուրքիոյ շուրջ :— Հայաստանում — Տնտեսական ճա-

կառում (Ս. Վրացեան) :— Այնտեղ, ուր սոցիալիզմ են կառուցում (Ս. Վրացեան) :— Ինտերնասիոնալ (Ա. Զամալեան) : Զէկիստի խոստովանութիւնները — Ազաբէգով (Ս. Վրացեան) :

Թիւ 3. «Դաշնակ–Հոյպուն» (խմբ. Շ. Միսաքեան) :— Այնտեղ, ուր սոցիալիզմ են կառուցում (Ս. Վրացեան) :— Քրտական Հարցն Ինտերնասիոնալում (Ա. Զամալեան) : — Թուրքիոյ շուրջ։ — Ռիկովիից յետոյ (Ա. Աստուածատրեան) :— Հայաստանում — դպրոց, ընտանիք, եկեղեցի :— Սեւ–Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը— Ինտերնասիոնալ (Ա. Զամալեան) : Մեր զոհերը :— Գրախօսական՝ Ե. Երամեանի «Ցուշարձան Վան–Վասպուրականի» (Ս. Վ.), «Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց»՝ Մ. Գ. Ճիզմէճեան (Ս. Վ.) :

Թիւ 4. Գաղութահայ կազմակերպութեան խնդիրը (խմբ. Ս. Վրացեան) :— Տնտեսական տագնապը (Ս. Վրացեան) :— Մենշեւիկների դատավարութիւնը (Ա. Արծրունի) :— Քրտական Հարցն Ինտերնասիոնալում (Ա. Զամալեան) :— Թուրքիոյ շուրջ։ — Հայաստանում — աքսորականներ :— Սոցիալիզմ ենք կառուցում (Ս. Վրացեան) :— Սեւ–Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը :— Մեր զոհերը :— Թղթակցութիւններ :— Կազմակերպական կեանք :— Գրախօսական՝ «Ցուշարձան» Սոց.–Դէմ. Հնչ. կուսակցութեան 40–ամեակի (Ս. Վ.) :

Թիւ 5. «Դրօշակ»ի քառասնամեակը (խմբ. Ս. Վրացեան) :— Կովկասահայերը եւ հարեւանները (Ռոստոմ) :— Զօր. Նազարբէգեան (Ս. Վրացեան) :— Մարքսիզմը եւ ազգային հարցը (Գ. Գիւզալեան) :— Թուրքիոյ շուրջ :— Սոցիալիզմ են կառուցում (Ս. Վրացեան) : Բռնութիւնների աշխարհում (Հայաստանի աքսորականների վիճակը) :— Սեւ–Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը :— Մեր զոհերը :— 40 տարուայ Դրօշակների բովանդակութիւնը :

Թիւ 6. Այսպէս է գրուած խնդիրը (խմբ. (Ս. Վրացեան) :— Մայիսեան ապստամբութեան հետեւանքները (Կ. Սասունի) :— Գժանոցի զառանցանքներ (Ս. Վրացեան) :— Խորհրդ. արդիւնաբերութեան առաջամարտիկը (Ա. Արծրունի) :— Սոցիալիզմ են կառուցում (Ս. Վրացեան) :— Սեւ–Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը :— Հայաստանում — Հալածանք մտաւորականութեան դէմ (Ս. Վրացեան) :— Խորհրդային աշխարհից :— «Դրօշակ»ի բովանդակութիւնը :

Թիւ 7–8. Վիէննայի համագումարը (խմբ. Ս. Վրացեան) :— Ստալինի ճառը (Ս. Վրացեան) :— Հնդամեակն առանց դիմակի (Ն. Բաղալեան) :— Համաթուրանականութիւն եւ Թիւրքութիւն (Սիգմա — Ս. Վրացեան) :— Գերմանական տագնապը (Ս. Մ. —

Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Սեւ-Քարեցի Սաքոյի ինքնակենսագրութիւնը :— Բոլշեւիզմը անելի մէջ (Կ. Սասունի) :— Մեր զոհերը :— Ինտերնասիոնալ) :

Թիւ 9. Ներդաղթ (խմբ.) :— Կովկասեան կոնֆէտէրացիա (Սիզմա — Ս. Վրացեան) :— Անգլիական տագնապը (Ս. Մաս. — Վրացեան) :— Ընկերվարական շարժումը Թիւերով (Ա. Արիսեան — Ջամալեան) :— Մարքսիզմը եւ ազգային հարցը (Գ. Գիւզալեան) :— Թուրքիոյ շուրջ :— Ինտերնասիոնալ (բանաձեւեր) :— Թղթակցութիւններ Արեւելեան Նահանգներէն :

Թիւ 10. Ինքնամփոփում եւ աշխատանք (խմբ. Ս. Վրացեան) : — Քրիստափորը՝ բանաստեղծ :— Հպարտ եւ յաղթական (Ա. Արծրունի) :— Դաշնակցութեան դերը գաղութներու մէջ (Աստուր) : — Բանուժի հոսունութիւնը (Ս. Վրացեան) :— Անգլիական տագնապը (Ս. Մաս.) :— Թուրքիոյ շուրջ :— Սոցիալիզմ են կառուցում (Ս. Վրացեան) :— Լուրեր Հայաստանէն :— Մեր զոհերը — Մար. Մածուն Խէչօ, Զինագործ Մարդար :

Թիւ 11. Անգլիական ընտրութիւնները (խմբ. Ս. Վրացեան) : — Դաշնակցութեան բարոյականը (Կ. Սասունի) :— Հայաստանի ազգաբնակութեան խնդիրը (Ա. Արծրունի) :— «Իդէոլոգիական Ցրոնտում» (Ս. Վրացեան) :— Համաշխարհային տագնապը (Աստուր) :— Թուրքիոյ շուրջ :— Ինտերնասիոնալ — Հ. Ց. Դ. Պատգամաւորութիւնը (պատգամաւոր — Ա. Ջամալեան) : — Կուսակցական կեանք :— Թղթակցութիւններ :— Մեր զոհերը :

12. Թուրքական ճակատում (խմբ. Ս. Վրացեան) :— Համկոմկուսի Կենտկոմի որոշումը (Ս. Վրացեան) :— Հայաստանն լրաւազուրկ (Ա. Արծրունի) :— Սա. Նազարեանի քաղաքական գաւանանքը (Գ. Գիւզալեան) :— Թուրքիոյ շուրջ :— Թուրքիան եւ ազրբէջանցի ազգայնականները (Սիզմա — Ս. Վրացեան) :— Ինտերնասիոնալ :— Սոցիալիզմ են կառուցում (Ս. Վրացեան) :— Կուսակցական կեանք :— Մեր զոհերը : «Նախկին Զէկիստի խոստովանութիւնները»՝ Գ. Աղաբէգով (Ս. Վրացեան) :

1932–33–ին լոյս է տեսել 10 թիւ : Երկուքը՝ միացեալ :

Թիւ 1. 1931–1932 (խմբ. Ս. Վրացեան) :— Կուսակցութեան ըմբռնումը (Աստուր) :— Մարքսիզմ–Լենինիզմի Ինստիտուտը (Ս. Վր.) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Թղթակցութիւններ :— Մեր զոհերը — Հոճի Կարապետ : — Գրախօսական՝ «Ալբումներ»՝ Մալխաս (Ս. Վր.) :

Թիւ 2. Թուրք մամուլի արշաւանքը (խմբ. Ս. Վրացեան) :— Նշանակալից տասնամեակ (Ա. Արծրունի) : Օտար Դրամագլուխը Թուրքիայում (Վ. — Ս. Վրացեան) :— Բաղուի Թրքագիտական Հանդէսը (Ն. Բաղալեան) :— Ա. Ը. Ինտերնասիոնալը 1931–ին

(Ա. Ջամալեան) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Զանգեզուրի լեռներում (Գուրգէն) :— Լորէնս, Դիսդերդինգ եւ Դաշնակները (Ս. Վր.) :— Վասպուրականի վիճակը :— Ինտերնասիոնալ (Ա. Ջամալեան) :— Մածուն Խէչոյի մասին (Սամսոն) :— Գրախօսական՝ «Մուրատ»՝ Մ. Վարանդեան (Ս. Վր.) :

Թիւ 3 Խաղաղութեան հրեշտակները ժընեւում (խմբ. Ս. Վրացեան) :— Քաղաքական դաւանանքը եւ չէզոք մտաւորականութիւնը (Կ. Սասունի) :— Նոր ուղիներ Ընկերվարութեան մէջ (Ս. Վրացեան) :— Բաուէրը եւ Ադլէրը բոլշեւիկների մասին (Ս. Վրացեան) :— Հիւսուածեղէնի ճարտարարուեստը Թուրքիայում (Ս. Վրացեան) :— Թիւ 428 Որոշումը (Ս. Վրացեան) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Ինտերնասիոնալ :

Թիւ 4. Պատերազմի Խնդիրը (խմբ. Ս. Վրացեան) :— Գասպ. Յակոբեան (Ա. Ա.) :— Զակֆէդէրացիայի տասնամեակը (Ս. Վրացեան) :— Այսօրուան Գերմանիան (Ա. Աբեղեան) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Հնգամեակը եւ համաշխարհային տնտեսութիւնը (Ս. Վրացեան) :— Այնտեղից (Նամակ Հայաստանից) : Ֆ. Տուրատի :

Թիւ 5. Թուրքիան եւ Ազգ. Դաշնակցութիւնը (խմբ. Ս. Վրացեան) :— Եփրեմ (Է. Ակնունի) :— Մեծ Անհատները (Ռ. Զարդարեան) :— Ընկած զինուորի յիշատակին (Ս. Զաւարեան) :— Մեռաւ (Գ. Զոհրապ) :— Մ. Զարուխչեան (Ռ. Սեւեան) :— Քաղաքական հոսանքները Պարսկաստանում (Յ. Հախնազարեան) :— Տնտեսական տագնապը Թուրքիայում (Դ. Զաւրիեւ) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Հեռ. Արեւելքի դէպքերը եւ ռուս տարագրութիւնը :— Գրախօսական՝ «Հնգամեակ»՝ Իւղով (Ս. Վրացեան) :

Թիւ 6. Ընդհանուր չփոթի մէջ (խմբ. Ս. Վրացեան) :— Գէորգ Զաւուշ (Կ. Սասունի) : — Անոր մասին. Գ. Զաւուշի յիշատակին (Վ. Փափազեան) :— Քաղաք. հոսանքները Պարսկաստանում (Յ. Հախնազարեան) :— Թուրքիոյ շուրջ (Հր. Սամուէլ) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Ինտերնասիոնալ :— Մ. Շառոյեան (Բիճա) :— Թղթակցութիւններ :

Թիւ 7. Ազգերի Դաշնակցութիւնը եւ Թուրքիան (խմբ. Ս. Վրացեան) :— Հ. Հ. Պատուիրակութեան դիմումը Ազգ. Դաշնակցութեան :— Լեզուի խնդիրը Ստ. Նազարեանի երկերում (Գ. Գիւզալեան) : Այրուբենի բարենորոգումը Թուրքիայում (Կ. Իւսա) :— Ցերանսայի դրամական պահանջները (Գ. Սաղեան) : — Թուրքիոյ շուրջ (Հ. Սամուէլ) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Մեր զոհերը — Հրաչ Աւետիսեան, Մահտեսի Գր. Յովհաննիսեան :

Թիւ 8. Ժընեւի եւ Լոզանի Դասը (խմբ. Ս. Վրացեան) :— Հայաստանի տնտեսական խնդիրները (Զանգի) :— Ամերիկեան ընտրապայքարը (Աստուր) :— Այբուբենի բարեռորոգումները Թուրքիայում (Կ. Իւստ) :— Թուրքիոյ շուրջ (Հ. Սամուէլ) :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— «Քարի դարը» Թուրք գիւղերում (Դ. Զաւրիեւ) :— Մեր զոհերը :

Թիւ 9–10. Դաշնակցութեան Օրը (խմբ. Շ. Միսաքեան) :— Հայ եւ Հայաստանցի (Աստուր) :— Տնտեսական նուաճումներ Պարսկաստանում (Ց. Հախնազարեան) : Խորհրդային փոխառութիւնը (Գ. Սազճեան) :— Այբուբենի բարենորոգումը Թուրքիայում (Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Մեր զոհերը :— Լուրեր Երկրից :— Կեանքը Արեւելեան Նահանգներուն մէջ :

Թիւ 11. Սիւրիան եւ Մենք (խմբ. Ս. Վրացեան) :— Հայաստանի տնտեսական խնդիրները (Զանգի) :— Լատինական այբուբենը (Ս. Վր.) :— Սիւրիոյ հոգատար իշխանութեան 1932 թ. նախահաշիւը (Գ. Սազճեան) :— Իւզօսլաւիայում (Ա. Աստուածատրեան) :— Թուրքիոյ շուրջ :— Կարմիր Գծից Ներս (Ս. Վրացեան) :— Թէ ինչպէս Ազրբէջանը բաժան-բաժան կը դառնայ : — Մեր հարեւանների մօտ (Ս. Վրացեան) :— Արեւելեան Նահանգներում :— Նամակ Հայաստանից :— Օ. Ս. Մինոր :

Թիւ 12–1. 1932–1933 (խմբ.) :— Հնգամեակը չորս տարում (Ս. Վրացեան) :— Երկու ճափ եւ երկու կշիռ (Ս. Վրացեան) :— Սիւրիոյ արտաքին վաճառականութիւնը (Գ. Սազճեան) :— Անդլեւպարսիկ վէճը (Վ. — Ս. Վրացեան) :— Թուրքիոյ շուրջ :— Կրթութիւնը եւ դաստիարակութիւնը Խորհրդ. աշխարհում (Ս. Վրացեան) :— Հ. Ց. Դ. Դիւանից — «Խենթ»ը եւ Հ. Ց. Դաշնակցութիւնը :— Էդուար Բերնշտայն :

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ, ԻԲՐԵԻ ՎԵՐՋԱԲԱՆ

Ներկայ «Յուշամատեան»-ը լոյս է տեսնում Հ. Յ. Դ. Բիւրոյի հրատարակութեամբ՝ Հ. Յ. Դաշնակցութեան վաթսունամեակի առթիւ:

Անհնար է նոյնիսկ այսքա՜ն ծաւալուն հատորով անգամ մօտաւոր լրութեամբ պատկերացնել Դաշնակցութիւնը իր փոքրկալից կեանքով եւ բազմազան գործերով: Դրա համար մէկից աւելի հատորներ են հարկաւոր:

Ներկայ հատորում, որ յոբելեանական յուշամատեան է սոսկ, մենք առանձնապէս ծանրացել ենք Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական շրջանի կեանքի եւ գործունէութեան վրայ — ի՞նչ պատճառների հետեւանք է Հայ Յեղափոխութիւնը, ինչպէ՞ս ծնունդ առաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, ովքե՞ր էին եւ ի՞նչ գաղափարներով էին տոգորուած նրա հիմնադիրները, ի՞նչ սկզբունքների վրայ կառուցուեց Հ. Յ. Դաշնակցութեան շէնքը, եւ մի քանի դրուագ մարտական գործունէութիւնից:

Այնուհետեւ ներկայացուած է Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարաբանութիւնը՝ իր նախնական ձեւով, ինչպէս ըմբռնուած է առաջին շրջանի տեսաբանների՝ նրա հիմնադիրների կողմից: Ապա՝ աստիճանական զարգացումն ու բիւրեղացումը եւ այսօրուայ վիճակը: Հ. Յ. Դաշնակցութիւնը միակ հայ կուսակցութիւնն է, որ մշակել է սեփական աշխարհահայեացք եւ գաղափարաբանութիւն, որը հզօր, անջնջելի կնիք է դրել հայ քաղաքական մտքի եւ մշակոյթի վրայ:

Հատորի մէկ կարեւոր մասը յատկացուած է Դաշնակցական մտաւորական, մարտական եւ հասարակական գործիչների կեանքին ու գործունէութեան: Ոմանց մասին խօսուած է կարճ, ուրիշների մասին՝ երկար, այն մտածումով, որ աւելի տեղ տրուի նուազ ծանօթ կամ «մոռացուած» դէմքերին: Դաշնակցական դէմքերի պատմութիւնը Դաշնակցութեան պատմութիւնն է, եւ, ի հարկէ, փափաքելի էր աւելի մեծ թուով կենսագրականներ տալ, բայց անհնար է Դաշնակցութեան Պանթէոնը լրիւ կերպով ներկայացնել մէկ հատորում: Մենք առինք, առանց յատուկ քնտրութեան, որոշ թուով անուններ՝ յուսալով, որ ապագային միս-

ներն էլ իրենց կենսագրողները կ'ունենան, ինչպէս մէկ մասը արդէն ունեցած է ուրիշ հրատարակութիւնների մէջ:

Վերջապէս, հատորում զետեղուած են տեղեկատու բնոյթ կրող նիւթեր՝ Հ. Յ. Դաշնակցութեան կեանքի եւ գործի այս կամ այն կողմը պատկերացնող, առաւելապէս, իբրեւ հում ատաղձ: Թուերի եւ փաստերի լեզուն, յանախ, աւելի պերճախօս է, քան ամենապերճաբան հռետորութիւնը:

Մենք լիայոյս ենք, որ այս հատորը առաջինը եւ վերջինը չի լինելու: Յուսանք՝ պայմանները կը ներեն, որ ուրիշ հատորներով, ներկայացուին Դաշնակցութեան կեանքի եւ գործունէութեան միւս էջերն եւս, մինչեւ որ մի օր գրուի նաեւ Դաշնակցութեան լրիւ պատմութիւնը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը մինչեւ այժմ պատմութիւն է կերտել, եւ պատմութիւն կերտելը նրա համար աւելի դիւրին է եղել, քան պատմութիւն գրելը: Հ. Յ. Դաշնակցութեան տասնամեակից սկսած, 1900 թ., գրեթէ բոլոր Ընդհանուր ժողովներում, արծարծուել է Կուսակցութեան պատմութեան հարցը, նշանակուել են նոյնիսկ մարդիկ, ինչպէս Ռոստոմը, Վարանդեանը եւ ուրիշներ, գրելու համար Դաշնակցութեան պատմութիւնը, բայց միշտ էլ կեանքի նզովեալ պայմանները արգելք են հանդիսացել: Եւ մինչեւ այսօր Դաշնակցութիւնը սպասում է իր խորհնացուն, որ «խոյզ խնդրոյ առաջի արկեալ», «երկար եւ շահաւոր գործով» տայ մեր «քաջ եւ արգասաւոր» Կուսակցութեան պատմութիւնը «ի մեծամեծ եւ ի բազում գործս արժանապատուս»:

Եւ այդ պատմութիւնը կը լինի ոչ միայն Հ. Յ. Դաշնակցութեան, այլեւ հայոց ժողովրդի կէս դարու պատմութիւնը, որովհետեւ, ինչպէս իրաւամբ նկատում է Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմինը.—

«Գրել Հ. Յ. Դաշնակցութեան վաթսունամեայ պատմութիւնը՝ գրեթէ պիտի նշանակէր գրել այդ ժամանակաշրջանի Հայոց պատմութիւնը» — «այսքան սերտօրէն եւ այսքան գործօն կերպով Դաշնակցութիւնը միաձուլուած ու շաղախուած է իր ժողովրդի պատմութեան, անոր կեանքին ու ճակատագրին»:

Սպասելով այդ օրուան՝ այս համեստ հատորով Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն, թարգման հանդիսանալով բոլոր Դաշնակցական ընկերների ապրումների, վաթսունամեայ Յորելեանի առթիւ, գալիս է իր անհուն մեծարանքի եւ անսահման յարգանքի ու նուիրումի զգացումները յայտնելու Քրիստափորի, Զաւարեանի, Ռոստոմի ձեռակերտ մեր Փառապանծ Կուսակցու-

թեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, նրա անմեռ գաղափարներին, նրա մեծագործութեան, նրա պաշտելի հերոսներին ու նահատակներին, բանտերում եւ աքսորավայրերում տառապող նրա հաւատարիմ զաւակներին, մրրիկներ ու կայծակներ տեսած նրա մարտական դրօշին, նրա լուսաւոր ապագային:

Այս հատորը, Հ. Յ. Դ. Բիւրոյի յանձնարարութեամբ, պատրաստել է Ս. Վրացեանը, որին պատկանում են հատորի բոլոր անստորագիր գրութիւնները:

Հրատարակուած է 3500 օրինակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմնի խօսքը 1
Հ. Յ. Դ. Վաքսունամեակի առթիւ 7
Հայոց Յեղափոխութիւնից Առաջ, Գ. ԳԻԻԶԱԼԵԱՆ . . . 14

Հ. Յ. Դ. Ծնունդը եւ Հիմնադիրները, Ս. ՎՐԱՑԵԱՆ . . .
I. Հայ Յեղափոխութիւնը եւ Դաշնակցութեան Ծնունդը 61
II. Հիմնադիր Երրորդութիւնը 87
III. Միւս Հիմնադիրները 113

Հ. Յ. Դ. Սկզբունքների եւ Կազմ. Ձեւի Հիմնաւորումը . . 141

Հ. Յ. Դ. Գաղափարաբանութիւնը, Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ . .
I. Մի քանի Լուսաբանութիւններ 167
II. Ընկերվարութիւն 177
III. Անկախութիւն 187
IV. Ժողովրդավարութիւն 197
V. Ազգ եւ Հայրենիք 203
VI. Դաշնակցութիւն 216
VII. Անհատը 228
VIII. Ազատութիւն 238
IX. Կազմակերպութիւն 244
X. Եզրափակում 249

Հ. Յ. Դ. Ընդհանուր—Ռայոնական Ժողովը 260
Կուկունեան Արշաւանքը 272
Բանկ Օթոման 280
Փետրուար 18, Յ. ԻՐԱԶԵԿ 302
Զրոյց Համայնավար Բարեկամի մը հետ 327

ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ
Մարգար Վարժապետ 345
Զաթօ եւ Շէրօ 348
Հրայր Դժոխք 349
Նիկոլ Դուման 354
Յուշեր Անցեալից 356
Գեղամ Տէր Կարապետեան 360
Սիմոն Շխեան 364
Յար. Շահրիկեան 366

Ցոնան եւ Հորդանան Դաւթեան 371
Կարօ եւ Մարօ 375
Սերոբ Աղբիւր 381
Անդրանիկ 387
Տիգրան Տէրոյեան 392
Վարդգէս 397
Բաբկէն Սիւնի 401
Արտաշէս Անդրէասեան 404
Արտաշէս Միսաքեան 405
Խաչիկ Գնունի 407
Եգիպտացի 408
Գուրգէն 410
Խան 414
Արմենակ Լեւոնեան 417
Արմենակ Օխիկեան 419
Ռուբէն Զարդարեան 422
Լեւոն Թադէոսեան 425
Սիամանթօ 429
Դանիէլ Վարուժան 432
Աւետիս Ահարոնեան 438
Միքայէլ Վարանդեան 444
Գայլ Վահան 449
Թուման Թումանց 451
Թուման Թումեան, գրեց՝ Արամ 456
Վաղարշակ Բաղդասարեան 461
Արամ Մանուկեան 464
Վանի Իշխանը 468
Փրոֆ. Ա. Խաչատուրեան 478
Ա. Գիւլխանդանեան 482
Բժ. Հ. Օհանջանեան 485
Նիկոլ Աղբալեան 489
Համազասպ 492
Խաչատուր Կարնիկեան 495
Ա. Զամալեան 506
Ա. Շահխաթունեան 512
Ռափայէլ, Ա. Աբրահամեան 517
Գ. Խատիսեան 521
Մ. Թէրլէմէզեան 525
Վ. Խորէնի 528
Վ. Տաթեւեան 534
Ալ. Խատիսեան 537
Արամ Երկանեան 540

Ստ. Ծաղիկեան . . . . . Գր. Ամիրեան . . . 542
Սաթ. Օհանջանեան 545
Հ. Խաչատուրեան 547
Թովմաս Ճէլալեան 451
Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողովները 556
Ահաբեկումներ 560
Հ. Յ. Դ. Մամուլ եւ Հրատարակութիւններ 562
Հ. Յ. Դ. Հրատարակութիւններ 580
«Դրօշակ»-ների Բովանդակութիւնը 588
Վերջաբան 627

ՑԱՆԿ ՆԿԱՐՆԵՐԻ

Քրիստափոր Միքայէլեան 3
Միքայէլ Նալբանտեան 39
Խրիմեան Հայրիկ 46
Բաֆֆի 51
Ներսէս Պատր. Վարժապետեան 57
Մկրտիչ Փորբուզալեան 70
Գրիգոր Արծրունի 82
Սիմոն Զաւարեան 97
Ռոստոմ 104
Մարտին Շաքիրեան 115
Յակոբ Քոչարեան 118
Ա. Սահակեան 119
Յովհաննէս Իւսուֆեան 122
Իշխան Յովսէփ Արղուբեան 125
Թաւրիզի Հայուհեաց Բարեգործ. Ընկ. 129
Նատ. Մատինեան 130
Նիկ. Մատինեան 130
Տիգ. Օհոնեան 132
Արամ Արամեան 134
Է. Ակնունի 137
Հ. Յ. Դ. 9–րդ Ընդհ. Ժողով 195
Կուկունեանի խումբը 273
Բարկէն Սիւնի 287
Արմէն Գարօ եւ Ա. Վռամեան 289
Արմէն Գարօ 292
Հրաչ Թիրեաբեան 293
Կուռօ Թարխանեան 315
Հայրենիքի Փրկ. Կոմիտէի բանակի հրամ. կազմը 319
Հրայր Դժոխք 350
Նիկոլ Դուման 355
Գեղ. Տէր Կարապետեան 361
Սիմ. Շխեան 365

Յար· Շահրիկեան 367
Յոնան եւ Յորտանս Դաւթեան 372
Մաթս Մակարեան 377
Կարս—Արիստ· Զօրեան 379
Սերոբ Ադբիւր 382
Բալաբեխ Կարապետը 383
Անդրանիկ 388
Առաքելոց Վանքի Թարգմանչաց Գերեզմանները 389
Վազգէն Տէրոյեան 394
Վ· Տաթեւեան, Վարդգէս, Բ· Շահբազ 398
Արտ· Անդրէասեան 404
Խաչիկ Գնունի, Արտ· Միսաքեան, Արտ· Անդրէասեան . . 406
Արտաշէս Գեւեան 409
Գուրգէն 411
Խան 415
Արմ· Լեւոնեան 418
Արմ· Օխիկեան 420
Ռուբէն Զարդարեան 423
Լեւոն Թադէոսեան 426
Սիամանթօ 430
Դանիէլ Վարուժան 434
Աւ· Ահարոնեան 439
Միհ· Վարանդեան 445
Գայլ Վահան իր գինակիցներով 450
Խաչան Առաքելեան եւ Թուման Թումեանց 452
Համօ Զանփոլատեան 455
Վաղ· Բաղտասարեան 462
Արամ Մանուկեան 465
Վանի Իշխանը 474
Փրոֆ· Ա· Խաչատուրեան 479
Աբր· Գիւլխանդանեան 483
Բժ· Համօ Օհանջանեան 486
Ն· Ադբալեան 490
Համազասպ 494
Ա· Զամալեան 507
Գ· Խատիսեան 523
Մ· Թէրլէմէզեան, Վ· Խորէնի 528
Վ· Տաթեւեան 535
Ալ· Խատիսեան 538
Ա· Երկանեան 541

Ս. Ծաղիկեան 543
Սաք. Օհանջանեան 546
Ն. Խաչատուրեան 548
Թ. Ճէլալեան 554
Հ. Ց. Դ. 8-րդ Ընդհ. ժողով 558
Հ. Ց. Դ. 60-ամեայ Մամուլը 563
«Դրօշակ»-ի սեփական շէնքը 566
«Դրօշակ»-ի խմբագրատունը ժընեւում 570